Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format
**Adapt** — remix, transform, and build upon the material

| | | | |
|---|---|---|---|
| II A 3934 | Մեծ Ցուցակ հայոց հայրիկ | | |
| 1 VII 70 | 10/IV | | 2010 |
| | 26/IX-70 | | II-78 |



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՄԱՐԳԱՐ ՅԱԿՈԲԵԱՆԻ (ԹԱԻՐԻՋ)

ՀԱՅԿ ԱՃԷՄԵԱՆ

# ՀԱՅՈՑ ՀԱՅՐԻԿ

„ՆՈՒԱԳՈՂ ՎՇՏԻՆ ՀԱՅՐՆՆԱՑ ՀԱՅՈՑ"

ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐ

ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ



„ԵՐԿՈՒ ԴԱՐԱՒՈՐ ԿԱՂՆԻՆԵՐ ԿՐՆԱԿ ԿՐՆԱԿԻ"

ԹԱԻՐԻՋ 1927

ՀԱՅԿ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ
ՀԱՄԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՄԱՐԴԱՐ ԱԱԳՈՒԵՑՒՆ

ՀԱՅԿ ԱՃԷՄԵԱՆՑ

281.6
Ա50

ԸՆԹԵՐՑԱՄՐԱՀ

A II 3934

# ՀԱՅՈՑ ՀԱՅՐԻԿ

„ՆՈՒԱԳՈՂ ՎՇՏԻՑ ՀԱՅՐԵՆԵԱՑ ՀԱՅՈՑ“

ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐ

ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ

ՀԱՅՐ ՍԻՄՈՆ ԵՐԵՄԵԱՆ—ԱՏՐՈՒՇԱՆԻ ՑԱՌԱՋԱԲԱՆՈՎ

ԹԱՒՐԻԶ
Աւետարանական Հայոց Թեմական Տպարան
1929

ՀՅՍԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՄՈՒ ՊԱՍԵՆՅԱԼ
ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ

با اجازهٔ نمره ۳۲۱ ادارهٔ جلیلهٔ معارف ایالتی آذربایجان بطبع رسید

۱۱ بهمن ماه ۱۳۰۶

ԱՄԷՆ ԻՐԱՒՈՒՆՔԸ ՎԵՐԱՊԱՀՈՒԱԾ Է ՀԵՂԻՆԱԿԻՆ

*Մեծարգոյ*

*Պրն. Մարգար Յակոբեան*

*Յարգելի բարեկամ*

*Ձեր ինքնաբերաբար եւ սիրայօժար կերպով փոխարինաբար տրամադրած դրամական միջոցները հնարաւորութիւն տուին ինծ լոյս ընծայելու՝ ՀԱՑՈՑ ՀԱՑՐԻԿ ի մեծ կեանքն ու ազգանուէր գործունէութիւնը պատկերացնող այս հատորը։*

*Առ այդ, սրտագին պարտականութիւն կը սեպեմ այսու եւ հրապարակաւ յայտնելու Ձեզ իմ երախտագիտական զգացումներս եւ խորին շնորհակալութիւնս։*

*Ձերդ՝ ՀԱՑԿ ԱՃԷՄԵԱՆ*


*Թաւրիզ*
16 *Յունիս* 1929

*Համազգային երախտագիտութեան, խորին պատկառանքի եւ ջերմ պաշտամունքի մշտավառ զգացումները կը մարմնաւորէ*

## ՀԱՅ ՄԾԱԿՈՅԹԻ ՕՐԸ,

*որուն իւր այս հատորը սիրով-սրտով կը նուիրէ*

*ՀԵՂԻՆԱԿԸ*



. Մանուկ և հսկայ, հեշ և վիթ-
խարի. ահա Արխմեանի պատկերը։
Հաւատալ խօսքի ոյժին, հաւատալ
մտքի անյաղթելի ազդեցութեան-
նը, հաւատալ ճշմարտութեան. ահա
Մկրտիչ Արխմեանի նշանաբանը։

ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Արխմեանը հոգով բանաստեղծ
է իսկ սրտով առաքեալ։ Նա սի-
րում է գործել, ընկնել, կանգնել
և միշտ պատերազմել վտանգների
մրրկածուփ խռովութեան հետ։

ՐՈՖՖԻ

Արխմեան—այս անօրինակ հո-
գեւորականը մեն-մենակ մի խո-
րունկ խորհուրդ էր։ Նրա կեանքը,
նիստուկացը, հագուելու, խօսելու
եղանակը, նրա կերակուրներն
անգամ՝ հռչակաւոր թանէ ապու-
րը անսահման ու երկիւղած հե-
տաքրքրութեան նիւթ էր։ Նրա ա-
մէն մի խօսք անքննադատելի
ու վեմ պատգամ։

ՈՒ. ԱՒԱՐԱՆԵԱՆ

«Վասպուրականի Արծիւը» գու-
ցէ միակ յեղափոխական իրողու-
թիւնն էր հայկական հորիզոննե-
րում, միակ օրգանը հայրենիքի
մէջ, որ նրա անհամար փլատակ-
ները ողբալով հանդերձ, կռուի,
ըմբոստացման հրաւէր էր կար-
դում նոր սերունդին։

ՄԻՓ. ՎԱՐԱՆԴԵԱՆ

Ես հաւատացած եմ, որ մին-
չև մահ անջինջ և անաղարտ կը
մնայ նա ~ՀԱՅՈՑ ՀԱՅՐԻԿԸ~ այդ
մեծ, պատմական մարդը, երբէ՛ք
չեմ կարող մոռանալ նրա հայ-
եացքը, նրա ձայնը, այնպէ՛ս,
այնպէ՛ս խորն է ազդել նա իմ
հոգու վրայ։

ՈՒ. ԽՍԱՀԱԿԵԱՆ

Հայրիկը մեր ցեղին ընկերական
ու քաղաքական պատմութեան
հետ կապուած խոշոր յիշատակ
մ՛ունէր։ Ծողովրդական մեծ, և
սուրբ յաւիտենականացուց իւր
հռչակը խանդակաթէ։

Հ. ՍԻՄՈՆ ԵՐԵՄԵԱՆ

Մի սիրտ, որի խորքերում ազգը
կանգնել էր իւր դարերը հայրե-
նասիրութեան, դարերը ըղձերի
նուիրական սեղանը։ Երանի Հայ
ազգին, հալ ու մաշ Հայ ազգին,
որ համարձակ կարող է մարդկա-
յին պատմութեան առաջարկել
իւր կրծքին մնացած Հայրիկի
պէս մի մեծ անձնաւորութեան
անունը։

ԱԼ. ՇԱՀՈՒԲԵԱՆ

Ջեմ յիշեր տեսած ըլլալ աւելի
սիրուն և դրաւիչ դէմք մը, որուն
իւրաքանչիւր գիծին վրայ գըր-
ուած է մտացիութիւնն և նրբութ-
իւնն։ Արխմեանը երկար տարիներ
եղած է Հայկական շարժումին
յառաջապահը։ Այն դասը զոր Ար-
խմեանը կը պաշտպանէր, ամե-
նէն արդարն էր դատերուն։

Հ. Ֆ. Պ. ԼԻՆՋ

Արխմեան Հայրիկն է հիանա-
լիօրէն կատարեալ տիպը ԱՐՄԵ-
ՆԱԿԱՆ Հայուն, այսինքն տիպը
մեր բնիկ նախնեաց, և անցեալ
ու ներկայ Հայ զանգուածին, շի-
նական Հայուն, ԲՈՒՆ ՀԱՅՈՒՆ։
Լայն գլուխ է ան, լայն կամ հաս-
տակամ մարմին, լայն երես,
լայն բայց բարձր ու արծուային
քիթ և լայն սիրտ։ Մարմնացումն
է անխիկ գորովի, բարութեան,
պարզութեան, տեսլապաշտու-
թեան, ոչ-դրամապաշտութեան, հո-
գասիրութեան, և նոյնիսկ կենցա-
ղագիտական նրբութեանց հան-
դէպ արհամարհանքի կամ տեսակ
մը բրտութեան։

ՊՐՈՖ. ՄԻՓ. ՄԻՆԱՍԵԱՆ.

Աւգար դասի մը աւկեղծ ճուխ-
եալլը։ Այդ դասը իր ցեղին գա-
ղափարն էր։ Մեծ գաղափարի մը
ջահակիրն ըլլալ։ Այս էր իր կո-
չումը։

ԹԱՐԳՄ ԱՐՓԵՊ. ԳՈՒՇԱԿԵԱՆ

Հայ աշխարհում, մեր կեանքի
և գրականութեան մէջ չկայ մէկ
ուրիշը, որին ԻՄԱՍՏԱՍԷՐ որոշի-
չը այնքան յատկանշական լինէը,
որքան Արխմեանին։

ՍՐ. ՏՐԱՆԴԵԱՆ

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հեղինակի Ցառաջաբանը. էջ՝ 13.— Վրթ. Փափազեանի նամակը. էջ՝ 18.— Հայր Սիմոն Երեմեանի Ցառաջաբան—Ներածութիւնը, էջ՝ 19.— Վասպուրական. էջ՝ 27—80։

ԱՌԱՋԻՆ ՏԱՍՆԱՄԵԱԿ. 1820—1830. էջ՝ 81—106.— Ա. Խրիմեան Գերդաստանը. 81.—Բ. Ծնունդ և մանկութիւնը. 90։

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՍՆԱՄԵԱԿ. 1830—1840. էջ՝ 109—128.—Ա. Վան-Ցանկոյսների թաղամասը. 109.—Բ. Պատանի Խալիֆա Մըկըր-Տիրացու Մկրտիչը. 116։

ԵՐՐՈՐԴ ՏԱՍՆԱՄԵԱԿ. 1840—1850. էջ՝ 129—188.— Ա. Վանքերու միջավայրը և ազդեցութիւնը. 129.— Բ. Ուղևոր և ուխտաւոր Տիրացու Մըկրտիչը. 136.— Գ. Նշանդրէք և ամուսնութիւնը. 139.— Դ. Զօրահաւաք և Մկրտիչ Խրիմեանի փախուստը Վանէն. 148.— Ե. Արարատեան Աշխարհի հայրենաթօս ճամբորդը. 159.— Զ. Մկրտիչ Խրիմեանն ի Կոստանդնուպոլիս. 162.— Է. Մկրտիչ Վարժապետ Խրիմեան. 166.— Ը. Մուտքն ի գրական ասպարէզ. 171.— Թ. Երուսաղէմի Ուխտաւորը. 187։

ՉՈՐՐՈՐԴ ՏԱՍՆԱՄԵԱԿ. 1850—1860. էջ՝ 189—284.— Ա. «Հրաւիրակ երկրին Աւետեաց». 189.— Բ. Մկրտիչ Վարժապետ Խրիմեանն ի Կիլիկիա. 193.— Գ. Դէպի Հայրենիք. 196.— Դ. Ազգանուէր մեծ ուխտը. 199.— Ե. Մկրտիչ Վարդապետ Խրիմեան. 202.— Զ. «Հայաստանցի Վարդապետ»ն ի Կոստանդնուպոլիս. 212.— Է. «Արծուի Վասպուրականը». 217.— Ը. Ազգային և Գրական Վերածնունդը. 221.— Թ. «Վասպուրականի Վէնեետիկը». 228.— Ժ. Վարագայ վանքը. 240.— ԺԱ. Խրիմեան՝ Վանահայր Վարագայ. 249.— ԺԲ. «Ժառանգաւորաց Անդրանիկ Վարժարանը». 252.—ԺԳ. «Արծուի Վասպուրականն»ն ի Վան-Վարագ. 265.—ԺԴ. Դաւեր և մահափորձ՝ Խրիմեանի դէմ. 280։

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՍՆԱՄԵԱԿ. 1860—1870. էջ՝ 287—400.— Ա. Ազգային Սահմանադրութիւն և Խրիմեան. 287.— Բ. Ուղևորութիւն դէպի Կովկաս և Ատրպատական. 291.— Գ. Անդրանիկ շրջանաւարտները. 311.— Դ. «Ողջոյն Հայրենեաց». 313.— Ե. Ողջոյն Աշխարհաբարին. 319.— Զ. Խրիմեան՝ Առաջնորդ Հայոց Տարօնոյ. 324.— Է. Խրիմեան՝ « ՀԱՅՐԻԿ . . . ». 333.— Ը. «Արծուիկ Տարօնոյ». 341.— Թ. Մատնութիւններ, դաւեր և մահափորձեր. 350.— Ժ. Հայր Արծիւ Խրիմեանն ի Վան-Վարագ. 367.—ԺԱ. Խրիմեան Մկրտիչ Եպիսկոպոս Տանն Տարօնոյ. 373.— ԺԲ. Խրիմեան Հայրիկ՝ Պատրիարք Հայոց Թուրքիոյ. 376.— ԺԳ. Խրիմեան Պատրիարքի մուտքն ի Կ. Պոլիս. 389.—

ԺԴ. Խրիմեան Պատրիարքի ուխտը. 394.— ԺԵ. Խրիմեան Պատրիարքի առաջին գործերը. 398։

ՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՍՆԱՄԵԱԿ. 1870—1880. Էջ՝ 401—524.— Ա. «Հայաստանի ցաւոց պատկերն» ու Հայկական Հարցը. 401.— Բ. Փուշէ պսակ. 409.— Գ. Վշտապատում տեղեկագրի քննութիւնը. 415.— Դ. Դրուագներ՝ Խրիմեան Պատրիարքի կեանքէն. 421.— Ե. Ազգային Սահմանադրութեան վերաքննութիւնը. 435.— Զ. «Երթ՝ աս բարեաւ, Արծուի՛ . . . » 443.— Է. Նախկին Պատրիարքն իբրև Խրիմեան Հայրիկ. 449.— Ը. Գրամշակ-Հեղինակ Հայրիկի երկերը. 466.— Թ. «Վանդոյժ». 474.— Ժ. «Հայդոյժ» 481.— ԺԱ. Բերլինի Վեհաժողովի նախօրեակին. 488.—ԺԲ. Բերլինի Վեհաժողովն ու Հայկական Հարցը. 493.— ԺԳ. «Ծարիսայի կաթսան և երկաթեայ Շերեփը». 511.—ԺԴ. Բերլինի Վեհաժողովէն յետոյ. 515.— ԺԵ. Խրիմեան Հայրիկ՝ Առաջնորդ Հայոց Վասպուրականի. 518։

ԵՕԹՆԵՐՈՐԴ ՏԱՍՆԱՄԵԱԿ. 1880—1890. Էջ՝ 527—596.— Ա. Վասպուրականի սովն ու Խրիմեան Հայրիկը. 527.— Բ. Հայրիկի ներքին կեանքը Վանի մէջ. 535.— Գ. Վարագայ երկրագործական Վարժարանը. 540.— Դ. Հայրիկ՝ Դպրոցներու հիմնադիր և հովանաւոր. 544.— Ե. Խրիմեան Հայրիկն ու Վասպուրականի Ոսկեդարը. 547.— Զ. «Վանի Հայ Ի՛շխանաց ծեծը». 561.— Է. Խրիմեանն իբր «կասկածելի և վտանգաւոր». 566.— Ը. Մեծ Աքսորականը. 572.— Թ. Աքսորական Հայրիկն ի Կ. Պոլիս. 584։

ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՍՆԱՄԵԱԿ. 1890—1900. Էջ՝ 597—716.— Ա. Յեղափոխական քարոզիչը. 597.— Բ. Հայոց Ազատագրական Շարժուձեռներու ահազանգը. 601.— Գ. Մեծ Աքսորականը դէպի Երուսաղէմ. 607.— Դ. Աքսորական Հայոց Հայրիկը Երուսաղէմի մէջ. 613.— Ե. Խրիմեան Հայրիկ՝ Կաթուղիկոս Ամենայն Հայոց. 639.— Զ. Երուսաղէմէն-Էջմիածին. 654.— Է. Հայրապետական օծումը. 672.— Ը. Հայոց Հայրիկը Էջմիածնի Գահին վրայ. 678։

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՍՆԱՄԵԱԿ. 1900—1910. Էջ՝ 719—856.— Ա. Հայոց Հայրիկի ծննդեան ութսունամեակը. 719.— Բ. Դէպի Արարատեան և Շիրակի դաշտերը. 722.— Գ. Զուարթնոցի Ցիշատակները. 728.— Դ. Ծերունազարդ և երիտասարդ բանաստեղծները. 732.— Ե. Բանաստեղծ Հայրիկի վերջին մրմունջները. 736.— Զ. Շինարարութիւններն ու նորոգութիւնները. 746.— Է. Ռուսական դաւերը Կովկասի Հայութեան դէմ. 752.—. Ը. Ազգային-եկեղեցական կալուածներու գրաւումը. 757.— Թ. Նոր դէպքերն ու Հայոց Հայրիկը. 800.—Ժ. Հայոց Հայրիկի վերջին օրերը և մահն ու թաղումը. 827։

# ՊԱՏԿԵՐՆԵՐՈՒ ՑԱՆԿԸ


էջ

1. Արխմեան Հայրիկ—Նօթանատունամեայ, 1890, Կ. Պոլիս . . 6
2. Հեղինակի նկարը . . . . . 17
3. Վան—Ցանկոյսներէ Թաղի Ս. Աստուածածին եկեղեցւոյ ձորակը . 108
4. Վան—Հայ կտաւագործի գործանոցը . . . . . 108
5. Արարատն ու Արաքսը . . . . . 160
6. Սիս քաղաքն ի Կիլիկիա . . . . . 195
7. Վարագայ վանքը (համայնապատկեր) . . . . 242
8. Վարագայ վանքի և յարակից շէնքերու յատակագիծը . . 248
9. „Արծուի Վասպուրական“ թերթի նմանահանութիւնը . . 272
10. Վան—Աղթամարի կղզին ու վանքը . . . . . 286
11. Մուշ – Ս. Կարապետի վանքը . . . . . 286
12. «Հայրիկեան Թանգարան»ի շէնքը Էջմիածնի մէջ . . . 286
13. „Արծուի Վասպուրական“ի երկաթեայ մամուլն ի Վան-Վարագ . 323
14. „Արծուիկ Տարօնոյ“ թերթի փայտեայ մամուլն ի Մուշ-Ս. Կարապետ 341
15. „Արծուիկ Տարօնոյ“ի նմանահանութիւնը . . . . 343
16. Մկրտիչ Վարդապետ Արխմեան՝ Վանահայր Վարագայ . . 388
17. Մկրտիչ Եպիսկոպոս Արխմեան՝ Առաջնորդ Տարօնոյ . . 388
18. Մկրտիչ Արքեպիսկոպոս Արխմեան՝ Պատրիարք Հայոց Թուրքիոյ 388
19. «Վասպուրականի Սովելոց Ցանձնաժողովը» . . . . 526
20. Մկրտիչ Փորթուգալեան . . . . . 553
21. Արխմեան Հայրիկ—Աքսորական յերուսաղէմ . . . . 615
22. Երուսաղէմ—Հայոց Ս. Յակովբայ Մայրավանքը . . . 615
23. Աքսորական Արխմեանի խուցը Հայոց Մայրավանքին մէջ . . 615
24. Հայրիկ-Պապիկ, Թոռնիկ և Հայրենի տեսարաններ . . . 630
25. Վան-Վարագայ վանքը մոխիրներու մէջ՝ աւերակ և ամայի . 630
26. Արխմեանի կաթողիկոսական ընտրութեան պատգամաւորները . 646-7
27. Արխմեան Հայրիկ—Կաթողիկոս Ամենայն Հայոց . . . 679
28. Էջմիածնի վանքը . . . . . 679
29. Հայոց Հայրիկ—«Երկու դարաւոր կաղնիները կռնակ-կռնակի» . 718
30. Հայոց Հայրիկը Արարատեան Դաշտին մէջ . . . . 811
31. Հայոց Հայրիկը զագաղին մէջ . . . . . 846
32 Հայոց Հայրիկի գերեզմանը . . . . . 846
33. Հայոց Հայրիկի շիրմաքարն ու տապանագիրը . . . 855
34. Արխմեանի տորոտգրութիւնները (չորս տեսակ) էջ՝ 6, 388, 679 և 700

# ՅԱԻԵԼՈՒՄ

*Վասպուրականի մեծ սովի ժամանակ (1880), Թիֆլիսի մէջ, ի նպաստ սովեալներուն կատարուած ղրամական հանգանակութեան գումարը սալմաստեցի Հայ վաճառականներու միջոցով ուղարկուեցաւ Վան՝ «Վասպուրականի Սովելոց Յանձնաժողով»ի Նախագահ Արիմեան Հայրիկին։*

*Այդ հանգանակուած գումարի մասին ձեռք բերածս փաստաթուղթը, թիւրիմացութեան մը հետեւանքով, իւր յարմար տեղին վրայ (էջ 532) չը տպուեցաւ։*

*Այս էջին վրայ լոյս կ'ընծայեմ այդ փաստաթուղթ, որուն արտագրութիւնը կատարած եմ կէտ առ կէտ։*

*№ 194* *ի Թիֆլիզ 1880 թիւ. 21 յունիսի*

*Փոխանակագիր վաճառ, 450 մանեթի ոլ է 5 հատ րուսաց ասպասիր միւ մանեթ հաշիւելով։*

*Թվականէս 31 օրից հետ հաճեսցիք վճարել սուեն միւնուճ փոխանցկագրով լատ հրամանի Արիմեան Հայրիկի, գումար է չորս հարիւր ինգսուն մանեթ. որուսաց միւ ասպասի, որոյ փոխարենն առատ շիօվին ստացայ Պրն. Կապրասկոտ Մ. Էնեմանեանցեն եւ անցուցեք ի հաշիւ ժամուցելոյս։ Ստորագրեմ։* *Ա. Ս. Արզումանեանց*

*Բազմերախտ*

*Աղայ Ստեփան Արզումանեանց*

*ի Սալմաստ*

*Այս փոխանակագրի վրա Աղայ Ստեփան Արզումանեանցի որդին՝ Սողոմոնը մակագրած է հետեւեալը.*

*Սրբայգրօնի Հայրիկ, դուք այս բարաթի գումարն Աղայ Պաղիրիցն ստացեք 60 շիրայ. մանեթ տեղս չիշեալ բարաթի փոխարենն տուած եմք 57 շիրայ. կի կամենաք 3 շիրայն հետ տուէք Աղայ Պաղիրին, չէք կամենայ հենց բոլոր 60 շիրայն հետ տուէք. մեր պարտքն է այս բարաթին 450 մանեթ արժանի փողի. կիրճին ոմ հետս կի ուզէք բարաթ արէք մանեթ տեղս կի վճարեմք. այսքան.*

*Սօղոմոն Արզումանեանց*

Երիմեան Հայրիկը յիշեալ գումարը ստանալէ յետոյ իւր իսկ ձեռքով փոխանակագրի վրայ մակագրած է.

*Սոյն փոխանակագրի գումարը, որ 450 մանէթի է եւ տնդրոյս հաշուով 60 վաթսունի լիրայ եւ տասն դրշ կընէ ամէողջ ստացայ Հաճի Հասանի տղայ Պաղրէճ, ոյոյ ի հաստատութիւն կատարագրեմ։*

ԽՐԻՄԵԱՆ

*Ի Վանա 1880 Յունիս 25*

*Ապա Երիմեանը յիշեալ փոխանակագիրը Պաղրի միջոցով կը ղրկէ Արզումանեաններուն՝ Սալմաստ։*

## ՎՐԻՊԱԿՆԵՐ ԵՒ ՈՒՂՂՈՒՄՆԵՐ

| Է՛Ջ | | | |
|---|---|---|---|
| 39 | վարէն, 8 դր | տող, տպուած է | վարագայ լերան, կարդալ կայսերան գիւղի |
| 40 | վերէն, 13 դր | ,, ,, ,, | կը պարուրեն ,, կը պարարեն |
| 49 | վարէն, 13 դր | ,, ,, ,, | հոգեպարուր ,, հոգեպարար |
| 77 | ,, 8 դր | ,, ,, ,, | Մայիս 4\|17 ,, Մայիս 3\|16 |
| 96 | ,, 6 դր | ,, ,, ,, | եղբօր որդին ,, եղբօր թոռը |
| 130 և 132 | վանքերու | մօտ տպուած | թուանշաններն աւելորդ են |
| 141 | վարէն, 12 դր | տող տպուած է | Ակջիկտես կարդալ Աղջիկտես . |
| 173 | վերէն, 14 դր | ,, ,, ,, | 1848 Թուի Հոկտ. ,, 1849 Թուի Հոկտ. |
| 286 | Աղթամարի նկարի տակ. | | Բաֆֆին 1857-ին ,, Բաֆֆին 1858-ին |
| 322 | վերէն, 6 դր | տող տպուած է | առաջ. ,, առած |
| 324 | վարէն 13 դր | ,, ,, ,, | Առաքելոց վանքի ,, Աշտիշատի վանքի |
| 341 | եւ յաջորդ էջերուն | վրայ՝ | «Արծուիկ Տարոնոյ» «Արծուիկ Տարօնոյ» |
| 148 | վերէն, 11 դր | տող տպուած է | 1864 Օգոստոս 15 ,, 1865 Օգոստոս 15 |
| 449 | ,, 14 դր | ,, ,, | ,, աւերածոց ,, աւերածոյ |
| 521 | ,, 4 դր | ,, ,, | ,, անպիտ ,, անսիպ |
| 604 | վարէն, 7 դր | ,, ,, | ,, նակոխ ,, ոտնակոխ |
| 758 | վերէն, 12 դր | ,,.—հազիւ թէ | որևէ մասնակցութիւն ցոյց տուած է մեր ազատագրական պայքարին՝ նախաղասութենէն յետոյ շարունակել կարդալ (խօսքս 1870—1900 երեսունամեակի մասին է)։ |

*Քիչ քանակութեամբ կան կարգ մը անխուսափելի, բայց աննշան վրիպակներ (օրինակ իլ-ի տեղ ել, ցիցմի տեղ ցեցմ և այլն), որոնք չը նշանակեցինք։*

# ՅԱՌԱՋԱԲԱՆ

*Այս հատորի աշխատանքներուս պատմութիւնն է, որ իբր յառաջաբան կը ներկայացնեմ ընթերցողներուս։*

*Վանի ,,Երամեան Դպրոց''ին աշակերտ եղածս ժամանակ (1909—1915), ես քանկցս, իբր դասարանական շարադրութիւն գրեցի Երիմեան Հայրիկի կենսագրութիւնը, օգտուելով ոչ միայն գրաւոր աղբիւրներէն, այլև Երիմեանի անձն ու գործը ճանչցող բանիմաց և գրասէր անհատներէն, որոնցմէ հանդուցեալ Մեսրոպ Աւ. Քահնյ Ճանիկեանն ու Վանի վաստակաւոր կրթականդործիչ Համբարձում Երամեանը սիրով կը հաղորդէին խնդրածս տեղեկութիւնները և կը քաջալերէին իմ աշակերտական աշխատանքը։*

*Վասպուրականը ռուսաց տիրապետութեան տակն անցնելէն (1915 Մայիս) տարի մը յետոյ, մեծանուն ռուս դիտնական և հայագէտ Պրոֆ. Նիկոլայ Մառը իր դիտական արշաւախումբով 1916-ի Յունիսին ժամանեց Վան՝ պատմագիտական պեղումներ և ուսումնասիրութիւնները կատարելու համար։ Պրոֆ. Մառի յատուկ յանձնարարագրով, թէ քաղաքին և թէ գիւղերուն մէջ ես կը հաւաքագրէի աղդագրական նիւթեր, Հայ հնագոյն պատմութեան ղէպքերու, դէմքերու և վայրերու մասին՝ ժողովրդական զրոյցներ, աւանդութիւններ, առասպելներ և այլն։ Այս հանգամանքով ես առիթ ունեցայ շրջելու բազմաթիւ գիւղեր, վանքեր և պատմավայրեր՝ հաւաքագրելով ոչ միայն յարգելի գիտնականի ցանկացած նիւթերը, այլև կաղմելի մանրամասն տեղեկագիր մը «բնակեալ և բնակազուրկ վայրերի մասին» ինչպէս շեշտուած էր յանձնարարագրին մէջ։*

*Այս շրջագայութեանց ընթացքին, Յուլիսի 12-ին, գացի Վարագայ վանքը, որուն աւերակներուն մէջ կ'ապրէր ու կ'աշխատէր Ծերունի Պետրոսը։ Վարագայ այս հինաւուրց վերակացուն պայծառ յիշողութեամբ և հիացմունքով խօսեցաւ Հայր Արծիւ Երիմեանի մասին. անոր կեանքէն պատմեց բազմաթիւ նոր և թանկագին էջեր ու դրուագներ, որոնք նոյն օրն իսկ գրի առի։ Պարոն Պետրոսը ինձ նուիրեց նաև Երիմեանի իրեն գրած անտիպ նամակները։ Վերադառնալով քաղաքը ես շարունակեցի աշխատանքներս և հաւաքեցի Վան-Վասպուրականի գրական դէմքերու վերաբերեալ նիւթեր-յուշեր, նամակներ, գրութիւններ, լուսանկարներ ևայլն։*

*Յուլիսի 25-ի դիշերը տեղի ունեցաւ Վանի երկրորդ մեծ նահանջը։ Պրոֆ. Մառի արշաւախումբը նոյն դիշերն իսկ ճամբայ ելաւ դէպի Կովկաս։ Յաջորդ առաւօտ, Յուլիսի 26-ին, խուճապային գաղթի ժամանակ, հաւաքածս նիւթերը տոպրակի մը մէջ լեցնելով շալկեցի և գաղթող ժողովուրդին հետ քալելով շաբաթ մը յետոյ հասայ Իգդիր և ապա Էջմիածին, ուր իբր ուսանող, Սեպտ.-ին մտայ «Գեորգեան Ճեմարան»ը։ Էջմիածնի մէջ ես առիթ ունեցայ վանքի և Ճեմարանի հարուստ մատենադարաններէն լիովին օգտուելու, միակ նպատակ ունենալով գրելու Երիմեան Հայրիկի ընդարձակ*

կենսագրութիւնը։ Վանքին մէջ, իբր կենդանի վկայ և աղբիւր ունենալով միաբանները, կարգ մը բանիմաց անձեր և մինչև անգամ հօտաղ-մշակներն ու դռնապանները՝ Էրիմեանի մասին գրի առի բազմաւեսակ յուշեր, մանրավէպեր և փաստական տեղեկութիւններ։ Կորիւն Վալտպ. Սահակեանի (այժմ հանգուցեալ) միջոցով օգտուեցայ Հայրապետական Դիւանաւտան փաստաթուղթերէն, որոնցմէ կրցայ ձեռք բերել արժէքաւոր մանրամասնութիւններ՝ Աղգային-եկեղեցական կալուածներու գրաւման (1903) դէպքերու մասին։ Այս բոլորը ձեռքիս տակ ունենալով, 1917-ի ամրան գրեցի Էրիմեան Հայրիկի մանրամասն կենսագրութիւնը, որ առաջին անգամ կարդացի Երևանի մէջ, խումբ մը վանեցի երիտասարդ դրօղներու (Հմայեակ Մանուկեան, Օննիկ Մըխիթարեան, Վէսպեր և ուրիշներ) կազմակերպած «Գրական Առաւիւտներ»ուն մէջ։

Նոյն թուի աշնան, Էրիմեանի մահուան տասնամեակին առթիւ (1907-Հոկտ. 29-1917), Էջմիածնի մէջ կազմակերպեցինք ժողովրդական մեծ սգահանդէս մը, ուր խումբ մը հայրենակիցներու ջանքերով հանգանակուեցաւ մօտ 500 րուբլիի (ներկայ հաշուով 250 դոլար) գումար մը, որով պիտի լոյս տեսնէր իմ «ՀԱՅՈՑ ՀԱՅՐԻԿ» աշխատութիւնը, բայց հետագայ դէպքերն ու ցարական դրամի անկումը արգիլք եղան այդ ձեռնարկին։ Այս աշխատութեանս սկզբնական շրջաններուն, Էջմիածնի մէջ, ինձ շատ օգտակար եղաւ գրական քննադատ և պատմաբան ողբացեալ Գիւտ Եպիսկոպոսը (այն ատեն վարդապետ), որը իւր խորհուրդներով ու քաջալերանքով հանդերձ ուղղութիւն կուտար ինձ Էրիմեանի լուսակատար և բազմակողմանի կենսագրութիւնը պատրաստելու համար։

Հայաստանի օրհասական օրերուն և ազատագրական պայքարի ընթացքին (1918) չը կրցայ շարունակել աշխատանքս։ Էջմիածնի «Հայրիկեան Թանգարան»ի կառավարիչ գիտնական և բանասէր Գարեգին Արքեպ. Յովսէփեանին օգնական նշանակուելով (1919), թանգարանի լուռ և խաղաղ յարկին տակ կ'աշխատէի։ Այնտեղ, Հայոց Հայրիկին վերաբերեալ պահարաններուն մէջ դասաւորուած «հայրիկապատկան» նիւթերն ու իրերը աչքիս առջև ունենալով, կրցայ հաւաքել բազմաւեսակ հետաքրքիր տեղեկութիւններ, որոնք Էրիմեանի համահայկական ժողովրդականութիւնը և վայելած սէրն ու համակրանքը կը հաստատեն։

Հայոց Հայրիկի ծննդեան հարիւրամեակը (1820-Ապրիլ 4\17-1920) կը լրանար 1920-ի Ապրիլ 4\17-ին։ Այս թուէն ճիշտ տարի մ'առաջ, 1919 Ապրիլի 4\17-ին, Էջմիածնի մէջ հրատարակեցի կոչ մը, ուղղելով ամէն անոնց, որոնք ճանչցած էին Հայրիկը և կրնային անոր մասին տալ ինձ յուշեր, անտիպ նամակներ, լուսանկարներ, մանրավէպեր և այլն։ Միաժամանակ Հայաստանի Հանրապետութեան կիսապաշտօնաթերթ «Յառաջ»ի մէջ յօդուած մը գրեցի, կոչ-առաջարկ ընելով, որ 1920 թուի ընթացքին համահայկական բնոյթով և մեծ շուքով տօնուէր Հայոց Հայրիկի ծննդեան հարիւրամեակը։ Իմ կոչին արձագանգ տուին Հայաստանի և Թիֆլիսի Հայ թերթերը։ Ապա 1919-ի

Հոկտ. 29-ին, յատուկ գրութեամբ մը դիմեցի Հայաստանի Հանրապետութեան «Հանրային Կրթութեան և Արուեստից» Նախարար Նիկոլ Աղբալեանին, խընդրելով, որ իմ աշխատանքը քննութեան ենթարկուի և եթէ արժանի է հրատարակութեան, ապա ուրեմն նախարարութիւնը ծող հոգայ տպագրութեան ծախքերը: Աղբալեանը աշխատութեանս քննութիւնը յանձնեց յայտնի գրագէտ Վրթ. Փափազեանին (որը այն առեն էջմիածնի միջնակարգ դպրոցի տեսուչն էր)։ Փափազեանն ու Գիւտ Վարդապետը միասին քննեցին աշխատութեանս ձեռագիրը։ Քննութեան արդիւնքի մասին Վրթ. Փափազեանը ինձ գրեց նամակ մը (տես էջ 18) շեշտելով, որ «կեճսագրականը կազմւած է յաջող»։

Հայոց Հայրիկի ծննդեան հարիւրամեակը մեծ շուքով տօնեցինք էջմիածնի մէջ, Ապրիլի 4|17-ին (1920)։ Նոյն թուի Ապրիլի վերջերը Երևանի մէջ մեռաւ Վրթ. Փափազեանը։ Մայիսին Հայաստանի մէջ պայթեցաւ բոլշևիկեան ապստամբութիւնը, ամրան և աշնան Հայ-տաճկական պատերազմը և ապա Հայաստանն ընկաւ բոլշևիկեան կարմիր լուծին տակ և ամէն ինչ տակն ու վրայ եղաւ։ Բնական է, որ այս թոհ ու բոհին մէջ պիտի վիժէր աշխատութեանս հրատարակութեան ծրագիրը, ինչպէս որ եղաւ։ Հայաստանի փետրուարեան (1921) համաժողովրդական ապստամբութենէն յետոյ, երկու ամիս (Ապրիլ-Մայիս) Արագածի լանջերուն վրայ թափառելէ վերջ, բախտի բերումով մը, Ցունիսի սկզբին անցայ Պարսկաստան-Թաւրիզ, հետս բերելով «Հայոց Հայրիկ»ի ձեռագիրը աշխատութիւնս՝ իւր փաստաթուղթերու, նամակներու և պատկերներու հետ։

Թաւրիզի մէջ հաստատուելէ յետոյ, տարիներու ընթացքին, ես կրցայ նոր նիւթերով ու յուշերով հարստացնել աշխատութիւնս։ Նամակները գրեցի արտասահման՝ Խրիմեանի անձին ու գործին ծանօթ անձերուն, որոնցմէ խընդրեցի յուշերը, տպաւորութիւնները հայրն։ Որոնց, որ դիմեցի խնդրանքս կատարեցին։ Հանգուցեալ Մինաս Չերազը խոստացաւ գրել Բերլինի վեհաժողովի և Խրիմեանի մասին իւր յուշերը, բայց հիւանդութիւնը վրայ հասնելով չը կրցաւ կատարել իւր խոստումը։ Կը ցաւիմ, որ իմ փութկոտութեանս պատճառով չը կրցայ ունենալ մեր տաղանդաւոր գրագէտ Աւետիս Ահարոնեանի յուշերը՝ Հայոց Հայրիկի մասին։ Նամակ մը գրեցի (1927 Դեկտ. 1) Ահարոնեանին և խնդրեցի իւր յուշերը գրքիս համար, ժամանակը նշանակելով մինչև Ցունուարի 5-10-ը (1928)։ Ահարոնեանը իւր Դեկտ. 19 թուակիր նամակով պատասխանեց.— «Ինձ համար մասնաւոր հաճոյք պիտի լինէր մեծ Խրիմեանի եւ Հայոց Հայրիկի փառաւոր կեանքի օրեւէ դրւագը պատմել իր պատշած ժողովրդին: Ցաւէ ինձ սակայն, որ անկարող եմ Ձեր բարի ցանկութիւնն իրագործել Ձեր սահմանած ժամանակի համար (Ցունւ. 5-10-ը)»։ Սակայն կը յուսամ թէ մեր սիրելի Ահարոնեանը պիտի կատարէ իւր խոստումը «Հայոց Հայրիկի փառաւոր կեանքի որևէ դրւագը պատմելով» գրքիս Բ. հատորին մէջ։

Պատահական խօսակցութեան մը ժամանակ (Թաւրիզ 30 Սեպտ. 1926) Մարգար Ցակոբեանը խոստացաւ վոխարինաբար տրամադրելու ինձ այս

հատորին հրատարակութեան դրամական ծախքերը։ Իմ յարդելի բարեկամը լիովին կատարեց իւր խոստումը, որով և լոյս տեսաւ այս գիրքը։ Կրկին շնորհակալութիւնս իւր պատրաստակամութեան համար։

Անհուն շնորհակալութիւն վաստակաւոր դրագէտ Հայր Սիմոն Երեմեանին, որուն գրած գեղեցիկ յօդուածը Հայոց Հայրիկի մասին՝ իբր յառաջաբան-ներածութիւն դրի գրքին սկիզբը։

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ վերնագիրը կրող մասով (էջ 27-80) նկարագրած եմ Հայոց Հայրիկի երբեմնի շէն ու պայծառ, իսկ այժմ աւերակ ու ամայի ծննդավայր-հայրենիքի չքնաղ բնութիւնը, պատմավայրերն ու սրբավայրերը, գաւառներն ու գիւղերը, յիշած եմ քանի մը պատմական դէպքեր ու դէմքեր, ժողովրդական ղրոյցներ, աւանդութիւններ, ուրուագծեր եմ վանի Հայութեան վարք ու բարքը, աղգագրական քանի մը սովորոյթներ, կենցաղական բնորոշ պատկերներ, տիպեր և այլն՝ բոլորն ալ համառօտ և թռուցիկ ակնարկներով, որոնց խառնած եմ իմ մանկական-պատանեկան յուշերն ու տպաւորութիւնները։

Երիմեանի ծնունդը և նշանդրէքն ու հարսանիքը պատմած եմ վանի ժ-րդ դարու ժողովրդական սովորութեանց համաձայն, աղբիւր ունենալով այժմ 87 տարեկան ծերունազարդ մայրիկ Մարանոս Պէյլէրեանի հաղորդած մանրամասն տեղեկութիւնները։

Գրաւոր և բերանացի աղբիւրները (գիրք, հանդէս, պարբերաթերթ, առօրեայ մամուլ, նամակ, յուշեր և այլն) մանրամասնութեամբ յիշատակած եմ ամէն մէկը իր տեղին։ Երիմեանի բազմաթիւ գործակիցներու լուսանկարներու հրատարակութիւնը այս գրքին մէջ նպատակայարմար էր, բայց մեր նիւթական միջոցները չը ներեցին այդ գործն ընելու։

Նուիրական պարտք կը սեպեմ յիշել անուններդը ամէն անոնց, որոնք իրենց բարոյական և սիրայօժար աջակցութիւնը ցոյց տուին ինձ՝ ուղարկելով յուշեր, անտիպ նամակներ, լուսանկարներ, հաղորդելով զանազան տեղեկութիւններ, տպաւորութիւններ, մանրավէպեր (անեկտոտ) և այլն։ Այսպէս.

(* Աստղանիշ անուններու տէրերը մեռած են). Ամեն. Տէր Եղիշէ Արքեպ. Դուրեան, Տէր Ներսէս Արքեպ. Մելիք-Թանգեան, Եղիշէ Եպիս. Չիլինկիրեան*, Կորիւն Եպիս. Սահակեան*, Գիւտ Եպիսկոպոս*, Հմայեակ Վարդպ. Արշարունի*, Յակիմ Ծ. Վարդպ. Դադեան, Յովէն Վարդպ. Լազարեան, Հայր Ներսէս Ակինեան և Հայր Սիմոն Երեմեան (Մխիթարեան միաբաններ), Մեսրոպ Աւ. Քահնյ Ճանիկեան*, Կարապետ Աւ. Քահնյ Մանուկեան, Յակիմ Քահնյ. Գուզեան, Համբարձում Երամեան, Մարկոս Նաթանեան, Յակիմ Յան Սարաճեան*, Վարագայ Պարոն Պետրոս*, Յովհաննէս Թումանեան*, Կարապետ Նաթանեան, Մարտիրոս Ներսեանեան*, Վահան Երիմեան, Տիկին Իսկուհի Երիմեան, Պօղոս Նաթանեան*, Ենովք Տէր Աբրահամեան, Մինրան Բաղդասարեան*, Լևոն Ամիրխանեան, Մուղսի Մուրադ Ռշտունցի, Մուշեղ Թէրզեան, Արմենակ Շահ-Մուրատեան, Սուրէն Աֆթանդիլեան, Դաւիթ Փափազեան, Մինրան Գրիգորեան, Եղնիկ Քաջունի, Լուսանկարիչ Մելիք, Հացապան Աւետիս* և ուրիշները։

Անոնք, որոնք մեզմէ անդարձ մեկնեցան, անոնց յայտնի և անյայտ չիրխճներուն վրայ կը դնեմ հայրենի լերանց և հովիտներու ծաղիկներէն հիւսուած պսակները և յարգանքի խօսքս կը նուիրեմ իրենց անմեռ յիշատակին։ Իսկ միւսները, որ կ'ապրին, անոնց կ'ուղղեմ երախտապիտութեան և շնորհակալութեան սրտագին զգացումներս։

Գիրքս ներկայ տպագրական պահանջներու ճաշակին ու գեղեցկութիւնը չ'ունի։ Թերութիւնները շատ են, վասնզի Թաւրիզի տեղական, տպարանական ներկայ անհնարին պայմաններուն մէջ, հակառակ թափածս ջանքերուն, անկարելի եղաւ աւելին ընել։ Թուղթը միջակ որակով, ձևն ու ծաւալը անյարմար, տառերը քիչ մը մեծ և 25 տարի անդադար գործածութեամբ մաշուած կամ կոտրտուած են (վերջերս միայն նոր և յարմար տառեր ստացուեցան)։ ընտիր թանաք չ'ունէինք։ Այսպէս ըլլալով հանդերձ ոչ մէկ հնարաւորութեան և զոհողութեան հանդէպ կանգ չ'առինք։ Տպարանական աշխատանքները կատարեցին՝ դրաշար Վահրիճ Քալֆաեանին, տպագրիչ Աւետիս Յարութիւնեան, կազմարար Սոկրատ Մելիք-Գեարոսեան և ուրիշները։ Տպարանի կառավարիչները՝ Յովսէփ Յարութիւնեան և Երուանդ Միրզայեան՝ ամէն տեսակ դիւրութիւն տուին ինձ օգտուելու տպարանական յարմարութիւններէն։ Վենետիկի Մխիթարեան Տպարանի տեսչութիւնը խնամքով և բարեխղճութեամբ պատրաստել տուաւ գրքիս գունաւոր շապիկն ու լուսատիպ պատկերները։ Այս բոլորին հրապարակաւ կը յայտնեմ խորին շնորհակալութիւնս։ Սրտագին գոհունակութեան խօսք ունիմ նաև Հ. Ց. Դաշնակցութեան «Վրէժ»ի, «Ռոստոմ»ի Թ. Հ. Կուլտուրական Միութեան և ազգային դպրոցներու գրադարանային վարչութեանց, որոնք դիւրութեան տուին ինձ օգտուելու իրենց ունեցած թերթերէն ու գիրքերէն։

A 3934




Ա՛րդ, հրապարակ հանելով այս հատորը, կը խնդրեմ, որ Հայ մամուլն գրական քննադատները, ինչպէս նաև խստապահանջ ընթերցողները ներողամիտ ըլլան ամէն տեսակ թերութեանց հանդէպ, վասնզի տնտեսական ներկայ աննպաստ պայմաններուն մէջ, ընտանեկան հոգսերով, դպրոցական և այլ գործերով ծանրաբեռնուած, մեն-միևնակ, անհատական յամառ և յարատև ջանքերուս խաւնելով ամէն տեսակ սէր ու ծանր աշխատանք, ըրի այն ինչ որ կրցայ, համոզուած ըլլալով, որ Հայ ժողովուրդը սիրով պիտի կարդայ «ՄԵԾ ԽՐԻՄԵԱՆ ԵՒ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԻԿ» վաւերաւոր կեանքին այս անփառունակ յուշարձանը։

Թաւրիզ 1 Սեպտեմբեր, 1929

Էջմիածին 10 Յունուար 1920

Յարգելի

Պ. Հայկ Աճէմեան

Կատարելով Հանրային կրթութեան Պ. Նախարարի յանձնարարութիւնը կարդացի Ձեր աշխատութիւնը Ղրիմեանի մասին:

Կենսագրականը կազմուած է յաջող. Շատ քիչ բան է մնում կցելու: Հայրիկի գրական անտիպ էջերից նմոյշներ, յետոյ՝ նրա երգիծական ոգու արտայայտութիւններից մի բուռը, որից շատերը դեռ պահած ունեն իրենց յիշողութեան մէջ: Ապա՝ աւելորդ չի լինիլ նաեւ համառօտակի պատմել 19-րդ դարու այդ մեծ Հայի կաթողիկոսանալու մի քանի պարագաները եւ վերջապէս՝ նրա թաղման օրերի նշանակալից հանդէսներն ու այլ հանգամանքները:

Այդ ամէնը, ինձ թւում է, պիտի կարողանայ ցայտուն կացուցանել մեր հանճարեղ հայրենակցի անմոռաց դէմքը:

Այս Ձեր ուղարկած մասը պատրաստ կարող է համարուել տպագրութեան համար: Պիտի զեկուցեմ նրա մասին Պ. Նախարարին անձամբ:

ՂՐԹ. ՓԱՓԱԶԵԱՆ

# ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

## ,,ՀԱՅՈՑ ՀԱՅՐԻԿ"-Ի Հեղինակ

## տռ. Տիար ՀԱՑԿ Ա.ՃԵՄԵԱՆ

ՀԱՅՐԻԿԻ կենսագրութիւնը, հայ կեանքի և մտքի թանգարանին հաւասար ձեռնարկ մըն է: Դուք, սիրելի բարեկամ, ապահով եմ որ ամէն ճիգ թափած կ'ըլլաք պերճօրէն ցուցադրելու այդ թանգարանը, ուր ամենէն աւելի ուշագրաւ պիտի ըլլան՝ քաղաքական, պատմական և գրական բաժինները:

Վահան Ջարդարեանի «*Ծիշատակարան*»ը հայոց Հայրիկի կենսագրականովը կը բացուի. այդ կոթող գործը մտքի յուշարձան մը համարելու ենք յիշատակ հայոց Հայրիկին:

Ես վստահ եմ որ դուք Հայրիկի գեղեցիկ միտքը և զմայլելի հոգին դրուագելով, պիտի չի մոռնաք անոր վեհափառ կենդանագիրը պատկերը նկարէն բառերով նկարելու: Այն հայկական պատկառելի դէմքը, ամբողջ մեր հայ գեղեցիկ ցեղին ամենէն կատարեալ գեղեցկութիւնը կը ներկայացնէր: Դուք գիտէք անշուշտ որ 1878-ին երբ Հայրիկ իբր պատուիրակ Փարիզ կը գտնուէր, հոն Աւստրիական դեսպանը զայն տեսնելով զմայլած կ'ըսէր.—Ա՛խ, ըրքան կ'ուզէի պատկերահան մը ըլլալ, նկարելու համար այս հիասքանչ դէմքը:

Ընդհի՛ծ էր այդ ձակատը. բայց անխիղճ գրիչներ զայն արատաւորեցին: 1877-ի Օգոստոսին, Պօլսոյ «Լրագիր» թերթը չի վարանեցաւ գրելու. «Ո՛վ է մատնիչը», խենթեչօրէն մօլեգնոտ յօդուածագիրը, հայոց Հայրիկը կ'անուանէր մատնիչ և դաւաճան: Եւ այդ «Լրագիր»-ի խմբագրապետն էր Նիւկողոս Թիւլպէնճեան:

Եւ ինչո՞ւ Հայրիկ դաւաճան, մատնիչ կը համարուէր...: Վասն զի ան դիմած էր Պաթրիարք Գարժապետեանին և հարցուցած էր թէ.—Համիտ ինչ միջոցներ ձեռք՞ առած էր հայերու կոտորածը չի կրկնուելու համար: Այս հարցումը կատաւարութեան դէմ դաւաճանութիւն համարուեցաւ:

Մեծ մարդիկ ընդհանրապէս չարաչար զրպարտուած են: Ընդհանուր հայութեան պաշտելին էր Հայրիկ: Սուլթանէն կը հալածուէր. Երուսաղէմի աքսորավայրէն Կաթողիկոսական աթոռին կ'արժանանար: Արփիար Արփիարեան կ'ըսէր.

— «Դարերէ ի վեր առաջին անգամն էր որ հայութեան Սրտին մէջ հայկական վեհաշուք ժողով մը կը գումարուէր: Պատգամաւորութիւնը՝ հայրենիքի

սուրբ հոգիէն ներշնչեալ՝ Հայրիկը Կաթողիկոս ընտրեց միաձայնութեամբ։

Բայց տարաձայնութիւնը չուտով կը սկսի. մեր սկեպտիկ Արփիարը կ'ըսէր։

— Տօ, ինչ արացինք, սկսան քրքթմընջել Գովկասցիները։

Ճիտակ թէ ծուռ, այս մասին ժամանակակից պատմութիւնը արձանագրած է։ Դուք, յարգելի Ճէմեան, դուք կարող էք այս մասին վերջին վճիռը տալ։ Ես կարծեմ ս. Էջմիածնի պարիսպներէն ներս Գովկասցիները աւելի աւելի ունեցան Հայոց Հայրիկի դիւցազնական գործերուն վրայ աքանչանալու, քան թէ քրքթմընջելու։

* * *

Բանասէրը բարեկամ, իմ այս ներածութեան հաւասար նամակիս մէջ, ներեցէք որ չի ծանրանամ Հայոց Հայրիկին շուրջ դարձած կարգ մը պատմական և դիւանագիտական խնդիրներուն վրայ. մերթ ընդ մերթ եթէ յիշեմ զանոնք, այդ պարզապէս ներածութեան մը պահանջին լրացուցիչ պայմաններն են։ Հայոց Հայրիկը դասական դէմք մըն է, դասական ողբերգութիւն մը միշտ նախերգանքով մը սկսի, ուր թատերգութեան էական խազերը և գլխաւոր եղանակները (motif) կը խտանան։ Ասկէ զատ աւելի կարեւորութիւն կու տամ այն անծանօթ մանր դրուագներուն որ այդ Մեծ Դէմքին մանրանկարին շուքն և ցոլքերը կը ներդաշնակեն։

Դուք տակաւին դասարանի աւտանող պատանի էիք, երբ Վենետիկէն՝ Սիմոն Նահապետեան «Ազգային Հայ գործիչներուն» խմբանկարը կը հրատարակէր։ Գիւտ քահանայն որ բծախնդրութեանց մէջ շատ գիւտաւոր էր՝ գայթակղեցուցիչ պայքար մը մղեց այդ նկարին դէմ. որուն արձագանգ տուաւ Դահիրէի «Արշալոյս» լրագիրը։ Ի՞նչ էր պատճառը, մեկնութիւնը այդ օրագիրը թող տայ.— «Վահափառ Հայրիկը՝ («Հայ գործիչներու» խմբանկարին մէջ) իր պատկառելի դիրքով, իր հայրապետական գլխու Խաչովն ու Տարազովը. Հայր Ալիշանի ձախ կողմը, իբրև քղանցարարձր կը ներկայանայ անոր՝ որ բաղմած է աթոռի մը վրայ՝ իր աջ կողմը ունենալով «Մշակ»-ի ողբացեալ խմբագրապետը՝ Արծրունին և, աջուձախ, նաև ուրիշներ՝ որոնք հայ գործիչները կը ներկայացնեն, ամէնքն ալ բազմած, բացի եթէ կը հաճիք տեսնել, Ն. Ս. Օծութենէն...»

Այդ տան Վենետիկի մէջ, Արփիար Արփիարեան այդ քննադատութեան կը պատասխանէր (*Հայ Հանդէս* 1 հատ. 1902).—«Ամէն հայ որ գեղեցիկին զգացումը ունի, և քչիկ մըն ալ եթէ բանասիրտ է անմիջապէս կը զգայ այդ պատկերին մէջ Հայրիկին տրուած *բացառիկ դիրքին վեհութիւնը*։ Ամէնքը մեռած, ու միայն Հայրիկ ողջ։ Բարձրաբերձ կը բարձրանայ ամէն դլուխներուն վրայ, և գրագէտ, բայց նաև՝ Ազատաւածարեալ—Հայրապետ, վերէն իր օրհնէնքը կը բաշխէ ամէնուն։ Այդ վեհ դէմքը գեղեցկագոյն և վսեմագոյն պիտի փայլէր, եթէ նստուկ։ Իսկ աջ ու ձախ կայնելը պարզապէս արուեստի պահանջն է։»

Ծակայն ըստ խմբանկարի հեղինակին՝ ինչ որ ինքը անձամբ յայտնած է, իրականը այս է, որ Հայոց Հայրիկ կու գայ ժողովքի նստող գործիչներուն խմացնելու՝ թէ ձեռք ձգած է Հայկական Անկախութիւնը։

Առ Հայոց Հայրիկ մամուլի յարգանքը այնքան զեղուն, այնքան բեղուն եղած է, որ երբեմն անգիտակցաբար կամ միամտաբար այդ Մեծ Դէմքը փոխանակ դնե աւելի վսեմանալու, կը նսեմանայ: Ահա մէկը այդ դրուագներէն ուր բնաւ չարամտութիւն չկայ: Հոս գրիչս փոխ կու տամ Տիար Հրանտ Ասատուրին:

— 1874-ին Գրիգոր Օտեան Հիւկոյի *Ներքին ձայները* հատորին *Առ Օլիմբիա* քերթուածը կը թարգմանէ հայերէն արձակի և Կ. Իւթիւճեանի կը դրկէ հրատարակութելու համար, իր թարգմանութիւնը Խրիմեանին ձօնելով· Կ. Իւթիւճեան կը կարծէ թէ Հիւկօ է որ այդ քերթուածը Խրիմեանին ուղղած է և թարգմանութեան վրայ, զոր անտարագիր հրատարակած է *Մասիսի* մէջ, *Առ Խրիմեան ի Վիքթօր Հիւկոյէ* կը նշանակէ: Բայց Օտեան՝ իսկոյն գրով մը սխալը կ'ուղղէ. ոչ թէ Վիքթօր Հիւկօ իր ոտանաւորը այլ թարգմանիչ է որ իր թարգմանութիւնը Խրիմեանին ձօնած է՝ Պատրիարքին բարոյական հանգամանքին և վիճակին ճշդելիս նկարագիրը մը համարելով այդ գրուածքը: Կ. Իւթիւճեան իր վրիպակը արդարացնելու համար, հետևեալ տողերը կը գրէ *Մասիսի* մէջ.—«Ստոյգ է որ Խրիմեանի *Հրաւիրակ Արարատեան* և *Հրաւիրակ Երկրին Աւետեաց* անուանով յօրինած պատուական քերթուածներէն ընտիր հատուածներ ժամանակաւ թարգմանուած և Լամարթինի և Վիքթօր Հիւկոյի ներկայացուելով, երկուքին ալ հաւանութեան արժանացած են: Այս պատճառաւ անտեղի չէր կասկածիլ թէ Վիքթօր Հիւկօ Խրիմեանի հետ ալ յարաբերութիւն ունեցած ըլլայ, ինչպէս որ ունեցած է Ռուսինեան էֆէնտիի հետ»:

Կ. Իւթիւճեանի այդ կարկատան մեկնութիւնը անտարակոյս ոչ մէկ լուրջ նշանակութիւն ունի: Այդ թուականներուն Հայրիկ տակաւին դրական մեծ համբաւ մը չունէր: «Մասիս»-ի խմբագրապետը և ոչ իսկ կը յիշատակէ այն պատառիկները որոնք թարգմանուած և ցոյց տրուած են Լամարթինի և Հիւկոյի: Ո՛վ թարգմաներ, ով ցոյց տուեր է: Անուն չկայ:

Խրիմեան Հայրիկ նոյն թուականներուն պարզապէս հետևող մըն էր Վենետիկի Մխիթարեան մեծ հանճարներուն: Հ. Արսէն Բագրատունի և Հ. Ալիշան վարդապետներուն· Օտար լեզու չէր գիտեր· Եւրոպա իբրև պատուիրակ գնացած ատեն, Փարիզ երբ առանց Մինաս Չերազի կը դբտնուի, ֆրանսերէն չգիտնալով, կ'ուզէ պանդոկ վերադառնալ, և կառապանը «Cocher»-ի տեղ «Cochon» կը կանչէ...: Այս դրուագը արձանագրուած է L' Arménie *ամսական* լրագրին մէջ:

*
* *

Հայոց Հայրիկը ոչ իր գրչով, այլ իր հայկական և հայրական արտովը իշխեց հայ հայրենիքի սրտին վրայ: Ահա կէտ մը, որուն նշանակութիւնը, դուք պարոն Ածէմեան, ուրախ եմ որ ըմբռնած կ'ը և պիտի չանաք ըմբռնել տալ ձեր ընթերցողներուն:

Հայոց Հայրիկը պատրիարքի և կաթողիկոսի գահին վրան իսկ հայատանէն հետը բերած փուչէ պռակը գլխէն բնաւ չվար չառաւ: Հայկական խնդիրը իր պայուսակին մէջ գրած, իրեն հետ կը ճամբորդէր Վասպուրականէն Պոլիս, Փարիզ, Լոնտոն, Պերլին և մինչև գերեզման:

Հայրիկ Լօրիս-Մելիքովի դիւանագիտութիւնը չունէր, բայց անոր պէս Հայ ռուսասէր մը չէր ըլլար, այն ծնած էր Հայ Հայրանասէր և այնպէս ալ կ'ապրէր և կը վախճանէր։

Պոլսոյ Հայութիւնը ազգասիրութեամբ գինովցած, 1860-ին Սահմանդրութեան դրօշակը կը պարզէր, և Հայրիկ մինոյն ատեն մահմետական սուրին գործած ոճիրները կը ցուցադրէր։ «Արիք հայկազունք յառաջ ընթանանք» երգելով, Հայաստանը դրախտ չէր դառնար։ Ընդհակառակն այդ Սահմանադրութիւնը մահմետականին մոլեռանդութիւնը կը գրգռէր և ճիշտ այդ ատեն թուրքերը Հայ մշակները կառքերուն լծելով գրաստի պէս զանոնք կը խարազանէին։ Եւ անդին միայն Զէյթունցի Հայը կրնար գիւցազնօրէն երգել։

«Թուրքաց մայրիք թող լան, ու դուն
Ուրախ լուրեր տար ի Զէյթուն։»

Պոլսեցի բանաստեղծ Մկրտիչ Պէշիկթաշլեանը՝ նոյնպէս խանդավառ Սահմանադրականներուն հետ կ'երազէր Հայաստանի անկախութիւնը, բայց Հայրիկ լաւատես ըլլալու ապացոյց մը չուննալով. տեսէք ինչպէս կը հեգնէր Սահմանդրութիւնը։ Ան իր «Արծուի» մէջ կը գրէր.

— Ահա Սահմանադրութեան տախտակները պատրաստ, այլ Մովսէս պէտք է, որ զանոնք Պոլսոյ կեդրոնական լեռնէն իջուցանէ Հայաստանի գաւառները։

Այդ Մովսէսը երբէք չի յայտնուեցաւ։

Հայոց Հայրիկ ի դուր ինքնապաշտպանութեան ըմբոստ շեփորը կը հնչեցնէր։ Նահապետ Ռուսինեան պահպանողական Սահմանադրութեան մէջ կը խեղդէր անոր ձայնը։ «Դիմաստուերներ»-ու հեղինակը՝ Հրանտ Ասատուրը, Ռուսինեանի մասին լաւ էր ըսած թէ ան—«գործնականը զոհած է միշտ տեսականին»։ Վարագայրի ճգնաւորը Արծիւը տակաւին հեղինակութիւն չունէր դիմադրելու Պալեաններու և Նիկողոսեաններու մեռելական շրջահայեցութեան։

*
* *

Հայոց Հայրիկ երբ Վասպուրականէն Պոլիս կը հասնէր, երբ պարիաքքարանի գահին վրայ բազմած կ'երազէր իր Հայաստանի քարուքանդ վիճակը, իր ականջին մէջ երբէք չէր լսեր հայաստանցի մշակներուն սրտաճմլիկ պաղատանքը. —*Հայրիկ մեզ չի մոռանաս...*։ Եւ Հայրիկ չէր մոռնար. Ազգային ծողովին մէջ ան կ'ըսէր ժողովականներուն.

— Ես ուխտ կ'ընեմ Ազգին ծառայելու, դուք ալ հետս պէտք է ուխտ ընէք...։ Մշոյ դաշտի և Վանայ ժողովուրդը իր վիճակի թեթևացումը կը սպասէ. ես խոստացած եմ անոր, պէտք է աշխատինք...։

Աշխատեցաւ Հայրիկ իր խոստումին համաձայն։ Ան իր ժողովականներուն կը կանխէր, կ'իմացնէր որ իր վրայ պատրիարքի մը պէս չը նային...։ *Ես Հայաստանի ցաւոց պատկերն եմ*, կ'ըսէր ան։

Դուք, պ. Աճէմեան, ցոյց տուէք, թէ ինչու՞ ամիրայական պոլսեցի Հայու-

թիւնը կը վախնար Հայաստանի այդ ցաւոտ պատկերը Սուլթանին մատնանիշ ընելու։ Դուք Ձեր գրքին մէջ բացատրեցէք այն պատճառները որով Հայրիկ կը ստիպուէր ըսելու հետեւեալ խօսքերը.

— Ձիս նաւապետ կոչեցիր ազգային ալեկոծեալ նաւուն և նաւն ինձ յանձնելէ ետև ամենքնիդ ալ փախչելով, զիս միայնակ թողուցիք. կը նայիմ չորս կողմս, բայց նաւաստի մը չեմ գտներ։ Եթէ դուք կը փախչիք, միթէ ես չեմ կրնար. իմ թևերս աւելի ազատ են. վարդապետ ինչու եղեր ենք. ազատութեան համար...։

Դարձեալ բացատրեցէք թէ ինչու Հայրիկ ըմբոստացումի շեփորը կը հնչէր. ինչու կը ստիպուէր աւելի յեղափոխական յայտնուելու քան Աւարայրի դիւցազները։ Արդեօք Պարթև Մեծն Ներսէսն էր որ անոր կը ներշնչէր ըսելու.

— Հայաստանի մէջ հարստահարութիւնը միշտ կայ և պիտի չարունակէ, բանի որ հոն երկու եղբայր, երկու ժողովուրդ կը բնակին. որոնց մէկի ձեռք Աւետարան և միւսին ձեռք Ղուրան կայ...։ Անկարելի է, որ քիւրտն ու Հայը իրարու հետ հաշտուին, մանաւանդ որ մէկը սուր ունի և կը հալածէ, միւսն Աւետարան ունի և միայն կը չարչարուի...։

Կացութիւնը կնճռոտ էր. Խրիմեան Հայրիկ անբուժելի հիւանդին ըմբոստութեան դեղահատ կ'ապսպրէր։ Ան առանց յուսահատելու կ'ըսէր.

— Ազգը բարակացաւի մէջ դրած են...։

Սահմանադրականները պարպելուխ ունենալով այնքան պաշտուած ազգասէր Մատթէոս Իզմիրլեան սրբազանը, պահպանողական ջրվէժի մը մէջ կը մաբէին Խրիմեան ըմբոստութեան հրեղէն ներշնչումները։ Ու երբ հակառակորդները անոր հակասահմանադրական կ'ըսեն. ան կը պատասխանէ.

—Խրիմեան սահմանադրական ծնած է...։ Խիստ դժուարին է զանի իբր հակասահմանադրական ամբաստանել։ Ես Սահմանադրութիւնը գրկել կ'ուզեմ, բայց չեմ ուզեր զանի այնչափ ճզմել ու սեղմել, մինչև գրկիս մէջ մեռնի...։

Բայց, դուք պ. Աճէմեան, գիտէք թէ ի՞նչ դժոխային կացութեան մէջ կը մատնէին Հայոց Հայրիկը, որ կը ստիպուէր ձանձրացած, պատրիարքի ծիրանին ծալած հրաժարականը տալու։ Արծիւը Պոլսոյ Հայութեան մեռաք բարով կ'ըսէր և վարագ իր խուցը կը քաշուէր, իր գրչով և համեստ թանապուրով կը զոհանար, իբրև նաւ խոովեալ կը փութար իր նաւահանգիստը։ Ի զուր ժողովուրդը հանրագրութեամբ, Ազգային ժողովքն կը խնդրէր որ չընդունուի հրաժարականը։ Հայրիկ կ'ըսէր.

— Թոյլ տուէք, եթէ իբրև Պատրիարք չկրցայ, իբրև Խրիմեան վարդապետ գործել...։

*
* *

Իբրև վարդապետ աւելի ազատօրէն կարելի էր գործել։ Հայրիկի գործելու առպարէզը կ'ընդարձակուէր։ Հայրենիքի սարսափեցուցիչ պատմութեան լեզուն Ազգային Ժողովին անլսմբռնելի էր. Հայրիկ թարգման կ'ըլլար. իր ձայնը, որ բո-

ղոքի ձայնն էր կը հասնէր մինչև Սուլթանին: Թշուառութեան ճիրաններուն մէջ հայը կը բզըքտուէր: Այդ քաոմնելի պատկերը Պերլինի Վեհաժողովի դատաւոր-Հայրիկին աչուըններուն մէջ կարդացին: Եւրոպայի խղճին անխիղճ մարզպանները Հայրիկէն իմացան, թէ անդին հին աղնուական ցեղ մը, Հայ սիրտը՝ մէզարներու ագռաւներէն կացահար բարակացուէն կը մեռնէր: Հայրի՛կ ինչ խօսեցաւ, ինչպէս վաստաբանեց, ինչ կրցաւ ձեռք բերել, այս ամենուն պատասխանը դուք պիտի արձանագրէք, պ. Ազէմեան, սըսվ հոս, այս ներածութեան մէջ, ես Ձեր գրիչը փոխ չեմ առներ:

*
* *

Հայոց Հայրիկի կեանքին հետ կապուած Վեհաժողովէն Հայուն լսածը, նոյն ժողովին խոստումները, Հայրիկին հետ՝ ամեն հայուն երազները օրօրեցին: Մինաս Ձերազ, Միքայէլ Վարանդեան և Ա. Սարուխան այս մասին երկարօրէն գրած են. անոնց գրքերուն մէջ Հայրիկի քաղաքական դէմքը շատ որոշ շրջանակի մը մէջ առնուած է, պատկերին ամբողջութեան համար աշխատակցեր են այդ երեք վարպետները. և քանի որ Հայրիկի դէմքով ամէն Հայ օքանչացած կը հետաքրքրուի, հարկ է որ դուք այդ ամբողջական պատկերը ցուցադրէք Ձեր գրքին մէջ: Դիւրք մը որ Խրիմեան Թանգարան մըն է, բնականաբար այդ պատկերը առաջին տեղը գրաւելու է:

Դուք, պ. Ազէմեան գիտէք որ այդ պատկերին առջև՝ Պերլինի դաշնադրութեան 61-րդ յօդուածէն յետոյ, վանեցին կ'երգէր իր հետևեալ ամենօրեայ երգը.

Թուրքը հասաւ... էլեմ էլթամ
Եղնուկներըս հաւաքեմ,
Տանիմ ընդար անկուշտ աչքից
Մի խալուաթ տեղ պինդ պահեմ:

Տասը-քըսան ջուխտ եղներից
Մընացեր էր երկու հատ.
Ընդանց էլ, հա՛, չուտ իմ ձեռքից
Կառնի քուրդը—անհաւատ:

Հերու կըլակ տուեց—վառեց
Տուն ու տեղըս, դէզերըս.
Մալ ու միւլքըս բիւթիւն խըլեց
Տարաւ կոյս աղջիկներըս:

Արսէնիս էլ (ախ, բալա-ջան...)
Անօրէնը բսպաննեց,
Չարևանիս մենծ աղջըկան
Աչքը ճամպում նա թողեց...:

Հօ-հօ-հօ, չուտ, եղներ,
Հեռանանք, կորչինք էս տեղէն,
Հըրէն Թուրքը... հրրէն քըրդեր
Կըգան ուղիղ մեր վրէն...:

Չէ եղնուկնե՛ր, էստեղ կայնէ՛ք,
Թող ձեզ տանի Օսմանլին.
Ըստանց եաև էլ ո՛ւմ հըմար
Պիտի վարէք դուք գետին...

Խեղճ Արսէնի՛ս... աղջիկների՛ս...
Թէ տանըս չորս պատերուն...
Ընդանք մեռան, տունս էրուեց,
Ղազարի՛ գայ Օսմանլուն...

Հայո՛ւ Աստուած-անգութ Աստուած,
Էլ ինչ վախտ տուն պիտ լըսես
Մեր աղօթքը, մեր ողբ ու լաց,
Մեր աղաղակ աղեկէզ...:

Այս երգը 1878-ին կը գրէր «Ինչ էլ իմ սազը»-ի հեղինակ Սիմէօն Սաֆարեանցը: Պերլինի Վեհաժողովի մեզի եղած խոստումներուն ողբերգութեան նախերգանքն է այն:

*
* *

Գրագէտ Հայոց Հայրիկն անմոռանալի է մեր մատենագրութեան մէջ։ 1877 Հոկտեմբերին Պոլսէն Արծրունիի «Մշակ»ին կը գրէին.

—Խեղճ Խրիմեան Հայրիկ, հայրենիքի այս անձնանուէր կենդանի նահատակը բանաստեղծութիւններ գրելով և տպել տալով և Հայաստանի վրայ լալով, ողբալով ժամանակ կ'անցունէ։

Երջանիկ ժամանց. յօդուածագիրը գուցէ չէ կրցած չափել այդ ժամանցին թանգ արժէքը։

*
* *

Տիար Հայկ Աճէմեան, գուք կը փափաքիք խտացնել հին ու նոր գրիչներու կարծիքները Հայոց Հայրիկի անձի և գործի մասին։ Գնահատելի է ձեր դիտումը։ Աղբիւրները սիրայօժար ձեզի պիտի ցոյց տայի, եթէ համոզուած չըլլայի որ արդէն անոնք ամբողջովին ձեզի ծանօթ են, և արդէն Ձեր նամակներէն կը հասկնամ որ յայտնի գրողներու Խրիմեան յուշեր-նիշերը, յիշեր ու նշանակեր էք ձեր այս հատորին մէջ։ Եւ շատ լաւ մտածեր էք։ Չի մէկ մարք կարծիքն արժէք մը չունի այնքան՝ որքան բազմութեան ձայնը։ Անհատական գրչի մը տեսութիւնները միշտ անհատական են։ Հանրութեան գաղափարին հանդէպ անհատը շատ անգամ սխալած է։ Սոսկական անհատ մըն է նաև այն որ վերջերս մէկ քանի էջերու մէջ չանաց խտացնելու Խրիմեանի գրական արժանիքը։ Բայց կ'ապահովցնեմ Ձեզ, որ ինչպէս ես, նոյպէս Ձեր յիշած գրադատ նոր հեղինակը, հաւատարապէս իրրև անհատ՝ չենք կրցած կշռել Պատպուրականի Սրծիւին գրական արժանիքը։ Ինչպէս ըսի՝ հրատարակելով Խրիմեանի մասին ամէն հեղինակներու կարծիքը, հանրութիւնը ինքնին դիւրաւ, ուղիղ և ընդհանուր գաղափար մը պիտի կազմէ անոր վրայ։

Ըը վերջացնեմ գրութիւնս, ապահով եմ որ Հայրիկի պատկերն Ձեր վարպետի վրձինովն արդէն պատրաստ՝ կարժանանայ ամէնուս գնահատումին. իսկ եթէ անոր անյարմար չըլլար իմ այս նիրածութեանս շրջանակը։

Հ. Ս. ԵՐԵՄԵԱՆ

ASOLO (Prov. Treviso, Italie)
10 Յուլիս 1927

*«... ԵԿԵԱԼ հասի այժմ ատ քեզ, ո՛վ դուռ տեղի ծնընդեան իմոյ,*
*Գահատ Վաստպուհրական եւ հրոչակեալ քաղաքդդ Վանի:*
*Ըզքեզ արդ ատնուում ՚ի յերգ եւ գեղգեղեմ երկար ձուագօք,*
*Գամ այսպէս ուխտ ոգոյս ձեմիմ ՚ի վայրդդ գեղեցիկ.*
*Գոնէ ասիցեն ինձ այսոր ատից ՚ի քեզ զանձուկ սրբոտիս».*

„ՀՐԱՒԻՐԱԿ ԱՐԱՐԱՏԵԱՆ“ *ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ*

# ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ

ՎԱՆԻ ծովը նազելաշուք և շքեղազարդ հարսի մը պէս, բազմեր է Վասպուրական մեր աշխարհի մէջ, շրջապատուած ձիւնածածկ և անտառազարդ լեռներով, որոնք կուտակ-կուտակ կամ շղթայակապ, կողք-կողքի բազմած կամ դէմ-դիմաց՝ իրար կը դիտեն դարեր-դարեր շարունակ։

Վասպուրականի լեռներն են անոնք, մէկ քան զմիւս գեղեցիկ, բոլորն ալ ջրառատ, ծաղկազարդ և կանաչաշատ։

Սէգ Սիփանը սիգապանձ, յաւերժական ձիւնագդակը գագաթին, բազմեր է մէջ բզնունեաց երկրին։

ՆԵՄՐՈՒԹ լեռը հեթանոսական ու կուսական գրգիռներով լի, Աստղիկ դիցուհիի փառք ու անունը կը պահէ միշտ յիշելի։

ԵՂԵՐՈՎ լեռը բնութեան ու պատմութեան եղեռներով ծանրաբեռ, Մոկաց երկրի լեռնորդիներու պաշտպան ու ապաստանն է եղեր։

ԱՐՏՕՍԸ արտասուազօծ՝ Հայ արցունքով, Ռշտունեաց երկրի զարդն ու պարծանքն է։ Անոր լանջին վրայ կը հանգչին նշխարները՝ Ոսկեղենիկ և մեղրածորան Եղիշէի, որուն «հոգեկան քաղցրազրուցիկ» կր սաւառնի Արտօսի ձորերուն և հովիտներուն մէջ։

ՎԱՐԱԳԸ արծուաբնակ և երկգագաթ բարձունքով. Աստծու օր բարիլուսին ողջոյն ու համբոյր կուտայ Վանի ծովին, երբ արևի շողերը կիյնան Սիփանի սէգ սարի ձիւնազարդ կատարին։

ՉՈՒԽ և ԳԱՐՁԱՀԻՕԱՐ լեռները աղբիւրաշատ Աղբակի մէջ լի են՝ ահաւոր և անանց կապաններով ու կիրճերով, բոլորն ալ հարուստ մահուան և արիւնի դէպքերով։

ԾԱՂԿԱՆՁ ԼԵՌԸ (Ալա-դաղ) զարուն-զարդարուն, ծաղկունք քաղցրաբոյր, սառն ու վճիտ հազար լիճեր — Բին-Գէօլ և բիւրակներ — առատ

ջուր, բազմերանգ ծաղկունք և կանաչախիտ լեռնալանջեր։ Ահա Ծաղկանց լեռները, որոնց բնական շարունակութիւնը կը կազմեն ՋԻԼԱՆԻ լեռները՝— Ոսկէ լեռներ, դէմ-դիմաց, շարէ շար շարուեր են և իրենց ծոցին մէջ գրկեր ու պարուրեր են Ororաճ գետը, որ կուգայ Ծաղկանց լեռներու հազար ու բիւր ակներէն ու աղբիւրներէն և կեանք ու առատութիւն կուտայ Քաջբերունեաց երկրի քաջարի զաւակներուն։

Մտնենք Ջիլանի Ձորը և Օրօրան գետի ափերն ի վար յառաջանալով հասնենք Արճէշը և կանգ առնենք Վանի ծովի ափին, ուր Բլուրմակ գիւղին մօտ նստենք առագաստանաւը։

Արևը գացեր է մայրամուտի իր վերջին համբոյրը դրոշմելու բարձր լերանց կատարներուն ու լանջերուն, երբ իրիկուան զով հովը կը փչէ, նաւը կը բանայ իւր առագաստը և ճամբայ կ'ելլենք, շրջագայելու Վանի ծովի վրայ։

Մեր նաւը կը սուրայ պատռելով կուրծքը ծփան ծովի ջրերուն, որոնց վրայ ընկեր են լուսնակի շողերը և ծովը համակ արծաթի դարձեր է, փայլուն ու վէտվիտուն։

Ո՛րքան գեղեցիկ է այստեղ ծովի տեսքը, երբ հեռուէն, Բերկրիի առջև, Բէնդի-Մահու գետը կուգայ ծովը թափուելու։ Ծովն ու գետը իրար կը գրկեն, կ'ողջունեն։ Ողջոյն քեզ գետ, որ ձուկ ու ջուր կուտաս ծովին։

Արդէն հասեր ենք Լիմ-Անապատ կղզիի մօտերը։ Հեռուանց մեղմիկ քամին կը բերէ Անապատի Ս. Գէորգ մենաստանի գիշերային ժամերգութեան ազդարար զանգերու անուշ ղօղանջները, որոնք կը շոյեն մեր ականջները և կը թրթռացնեն մեր սիրտերը։

Լիմ-Անապատ... Հայ դպրութեան և գրչագրութեան կարևոր կեդրոններէն մէկն է այս վանքը, ուր հաւաքուած կրօնաւորները խստակեաց, ճգնաւորական և աշխարհուրաց բոլոր օրէնքներով, օրական եօթն անգամ ժամերգութեամբ կ'անցունեն իրենց դժգոյն ու տխուր կեանքը։

Լուսաստղը կը ցուցնէ իւր դէմքը, մինչ մեր նաւը կը սուրայ արագօրէն և ահա հասեր ենք Կտուց-Անապատ կղզիի դիմաց։ Կտուց Անապատ վանք-մենաստանն ալ, Լիմի նման, հնուց ի վեր Հայ գրչագրութեան և դպրութեան նշանաւոր կեդրոններէն մէկը եղած է։ Այստեղն ալ անապատականները խիստ ու ճգնազգեաց կեանք մը

կը վաբեն։ Աղօթարանը կը բացուի, լոյսը կը պատռէ խաւարի արգանդը և Վարագի սարի կողմէն պարզ ու պայծառ լուսածագը ողջոյն կուտայ արար աշխարհին։

Նաւի մէջէն կը դիտենք ԳՆՈՒՆԵԱՑ երկիրը, (Թիմար գաւառը), որուն ծովափնեայ գիւղերու մէջ արդէն կեանքը և եռուզեռը ըսկսեր է, երբ արևն ալ շիջելավառ ու վեհափառ տեսքով Վարագի սարի կատարէն համբոյր կուտայ Սիփանի գագաթին ու կ'ողջագուրուի ծովի կաս-կապոյտ ջուրերուն հետ։

Ողջոյն քեզ «հայրենիք սրբազան, իմ սիրուն աշխարհ», ողջոյն քեզ ծով հայրենի, որ կը ծփաս ու կը խշշաս արևուն տակ։ Ողջոյն ձեզ հայրենի լեռներ, որ արշալոյսի շաղին ու շողին տակ, գեղազարդուեր ու պճնուեր էք շքեղագարդ հարսի մը պէս։

Ահա և Մարմետ գիւղը, որուն առջև Սև գետը, բարձուած սպիտակ և վէտվիտուն Տաուխ ձուկերով՝ կը թափի Վանի ծովը։

Նաւը կը փոխէ իւր ընթացքը և կը սուրայ դէպի ծովի արևմուտքը։ Խաղաղ ջուրերը կը խշշան նաւուն բոլորտիքը, կը ճղփան անոր կողերուն տակ, կը հեծեծեն ու կը հառաչեն։ Աչքս անծայր հորիզոնին յառած, կը խորհրդածեմ խորին խորհուրդներով, որ այս ծովը իմ նախնեաց, հին Հայոց պաշտմունքի և հաւատքի ընդունարանն եղած է դարեր շարունակ և այսօր ալ Հայ ժողովուրդը, սուրբ հաւատաւորի մը նման կը պաշտէ իւր հայրենի ծովը։

Ծրվ, կը սիրեմ լսել քո ջուրերու խշշոցը, ճողփիւնն ու վայնասուն, ծփանքն ու շօրօրանքը, ծրվ, երբեմն ամեղ ու ժպտուն, երբեմն ամեհի ու խռով, ծրվ կապուտիկ ու աչագեղ, կը սիրեմ պիշ պիշ նայել քու ջուրերուն մէջ, ուր Հայ սիրտը կը ծփայ հայրենի սիրով մ' անշէջ։

Նաւը հասեր է ԲԶՆՈՒՆԵԱՑ երկրի մօտերը ու կը քերէ ծովափնեայ գիւղերը և շուռ կուգայ դէպի հարաւ։ Ահա կը մօտենանք ՌԾՈՒՆԵԱՑ երկրին, երբ արդէն վերջալոյս է, ծովը խաղաղ ու անուշ, ծովի հաւքերու ձայնն ալ մեղմ ու քնքուշ։

Նաւը եկեր ու խարսխեր է ԱՌՏԷՓ կղզեակի դիմաց։ Լռութիւն, լռութիւն։

Մտեր ենք Նարեկայ վանից վանական հանճարեղն Գրիգոր Նարեկացիի օրհներգութեան ու պաշտմունքի սահմանները։

Նայեցէք, քիչ հեռու ծովափէն կ'երևի Նարեկայ մենաստանը, մօտիկ է նաև Նարեկացիի աղօթատեղին իր իննքարափոր խցիկներով, որոնց մէջէն Նարեկացին իւր աղօթքն ու մրմունջը կառաքէր երկինքը, երբ օր մըն ալ հրաշալի տեսիլք մը իւր աչքին ներկայացուց, Աստուածամայրը՝ Քիսուսը գրկին, երկնային լոյսով իջաւ ծովափին մօտիկ կղզեակի վրայ և աղաղակեց.— «Գրիգորէ, ար անձկալիդ ար Տէր» Նարեկացին եկաւ ու արձանագրեց—«Այն զոր տեսի աչօք իսկ իմովք» երբ «ծով ծիծաղախիտ ծաւալանայր յառաւօտուն», եւ այս տեսիլքէն յետոյ կղզին կոչուեցաւ Առտէր։

Կը մտնենք Առտէր կղզին, որուն աւերակ մատուռը, իւր խորախորհուրդ կամարներով յաւերժօրէն անմահ կը պահէ անուն ու յիշատակը աքանչելի հեռատես Գրիգոր Նարեկացիին։ Անոր հոգին կը սաւառնի սա ամայի կղզիի խաղաղութեանը մէջ, որ կը խանգարուի միայն բազմացեղ ծովային թռչուններու ձայներով ու ճռուողիւններով։

Ահա և ԱՂԹԱՄԱՐԸ, որ իւր հսկայ բարաժայռով ցցուերէ ծովուն մէջ և իրը դարերու պատմութեան անխօս վկայ, կը խոկայ իր անցեալի վրայ։

Նաւը կը մօտենայ փոքրիկ նաւամատոյցին և դուրս կուգանք կղզիի ափը։ Մեծ դարպասէն ներս կը մտնենք և ահա Աղթամարի Գազիկաշէն Ս. Խաչ տաճարը, իւր հոյակապ կառուցուածքով, գեղարուեստական ու հայկական ճարտարապետական ցայտուն ու բնորոշ գրաւչութեամբ կ'արձանանայ մեր աչքերուն առջև։

Աղթամար... երբեմն էր քաղաք ապաստանի Արծրունեաց թագաւորներուն և իշխաններուն։ Գագիկ Արծրունի թագաւորը իւր ամբողջ խորագիտութիւնն ի գործ դրաւ Աղթամարը ամրացնելու և գեղեցկացնելու համար։ Հայ մարտական ոգին, ստեղծագործող միտքը, Հայ մուրճն ու բրիչը, վրձինն ու գրիչը, իւրաքանչիւրն իր բաժինն ունեցաւ Աղթամարի փառքի և պատմութեան մէջ։ Գագիկ Արծրունին Աղթամարի տաճարին կառուցման ծրագիրը յղացաւ, Մանուէլ ճարտարապետը զայն իրագործեց, Թովմա Արծրունի վարդապետը Արծրունեաց պատմութիւնն աթձանագրեց, իսկ Գրիգորիս Աղթամարցի Կաթողիկոսը իւր գահին վրայ նստած սիրոյ, վարդի կեանքի և վայելքի տաղերը բանահիւսեց։

Աղթամարը դարձաւ նաև Հայ ազատագրական ու յեղափոխա-

կան շարժումներու ապաստան-կայան և Ռշտունեաց գաւառի կրթական կեդրոնը, իւր միջնակարգ դպրոցով, որուն մէջ բազմաթիւ գաւառներու զեղջուկ երիտասարդութիւնը կրթուեցաւ ազգային, յեղափոխական շունչով և մտաւոր յոյսով։

Կը բարձրանանք Աղթամարի քարաժայռն ի վեր և կ'երթանք համբուրելու այն քարը, որուն վրայ անմահ Րաֆֆին նստած երգեց իւր «Զայն տուր ով ծովակ» անդրանիկ երգը։ Րաֆֆիի fա՛r... որքան յուզում ու յիշատակ կարթնցնէ մեր սրտին մէջ այդ լուռ վրկան, որ լսեր է Րաֆֆիի հառաչանքն ու ձայնը.

«Ռէդեօf գալո՛ւ է մի օr ժամաճակ,
Մասիսի գլխին տեսնել մի դրօշակ։
Եւ ամեն կողմից պաճդուխս Հայազգիf,
Դիմեն դէպ իւրեանց հաղցր հայրենիf...»։

Կը մեկնինք Աղթամարէն «հին հին դարուց յիշատակ»-ներով աւլցուն։ Մեր նաւը կը մօտենայ ՀԱՑՈՑ ԶՈՐԻ ծովափնեայ գիւղերուն, որոնց վրայ մենք կարօտագին նայուածքներ կը ձգենք, մինչ Խուրզում գիւղին մօտ, Խօշաբի գետը կը թափի ծովը, որ լայն բացեր է իւր կուրծքը ու կը հիւրընկալէ Վասպուրականի արևելեան լեռներէն հոսող այս քաղցր ու անուշ ջուրը—Խօշ աբ։

Հայոց Ձորը Հայութեան անդրանիկ բնակավայր ու նախահայրենիքն է—չէ՞ որ Խորենացին կ'աւանդէ, թէ Հայկ նահապետը, այդ նոյն ձորին մէջ պայքար մղեց ամեհի Բէլին դէմ ու յաղթեց։

Հայութեան անկախ և ազատ հայրենիքի և ազգային յաղթական պայքարի աւանդավէպը Հայոց Ձորէն ծնունդ կ'առնէ, քաջակորովն Հայկ նահապետի անունով ու անձով։

Կը մեկնինք այս պատմաբոյր վայրէն, որը հնագոյն դարերու և պատմութեան մշուշին մէջէն մեր առջև կը հանէ Հայկն ու Բէլ, Արամն ու Նիւբար, Սրայ Գեղեցիկն ու Շամիրամը և դեռ ինչ հին և նոր դէպքեր ու դէմքեր։

Այլևս կը թողունք նաւը, ու կ'ընտրենք ցամաքի ճամբան, ուրկէ փոքրիկ շեղում մ'ընելով կ'երթանք ՌՇՏՈՒՆԻՔ, կը մտնենք Զաղար Ս. Նշանի տաճարը ու կը համբուրենք անմահ Եղիշէի գերեզմանը, մութ կամարներով հովանաւորուած և մեղրամոմերով լուսաւոր։

Ահա և Ոստանը, Արծրունեաց թագաւորներու ամառանոցը,

Վանի ծովափին, սքանչելի բուսականութեամբ, անմահական ջուրերով և զով օդով։

Արագ քայլով կը յառաջանանք ու քանի մը ժամէն յետոյ կը հասնինք Նարեկայ Վանքը, սիրուն ձորակի մը մէջ, բլուրի մը գագաթին կառուցուած։ Կը մտնենք տաճարը, որ մթին, լուին և խորհրդաւոր է։ Կերթանք դէպի Նարեկացիի շիրիմը, որուն վրայ կը հանգչի գմբէթազարդ մատուռ մը։

Խունկանուշ բուրումով լեցուած է այս սուրբ դամբարանը, որուն մէջ դարերէ ի վեր կը ննջէ Նարեկայ Վանից վանականը— «Հրեշտակ ի մարմնի սքանչելի հռետոր»։

Նարեկացի՛, հանճարդ հայկեան «կը համբուրեմ քոյդ փոշին, կը համբուրեմ շիրիմդ, գերեզմանդ, քնարանդ ուր կը ննջես արթուն, ուր կը հսկես անլռելի, ուր քնարդ Աստուածախօս կը նուագէ միշտ ի բարբառ կենդանի։ Գերեզման չկայ քեզ համար, դու հոգիներու մէջ կը հանգչիս, անմահդ ի մահկանացուս»։ Դու «ի խորոց սրտի խօսք ընդ Աստուծոյ» մրմնջեցիր, և «Ձայն հառաչանաց հեծութեան սրտի ողբոց աղաղակի» առ մեզ հասցուցիր։ Պաշտմունք փետուրեայ գրչիդ և փառք քեզ՝ որ «Մատեան Ողբերգութեան»ը իբրև աւանդ ու հանճարիդ ծնունդ թողիր մեզ։

Վերին Ռշտունիքի հարաւ-արևմտեան ճամբաներով կը բարձրանանք եղերով լեռն ի վեր և կը հասնինք զառիվայրի մը վրայ շինուած Փութկու (փոթորկի) Ս. Գէորգայ վանքը, որ ամառ ձմեռ իր իջևան և կայան կը ծառայէ Հայ և այլազգի ճամբորդներու, որոնք եղերով լերան բնական, տհաւոր և մահասփիւռ եղեռներէն (ձիւն, փոթորիկ, ձիւնի հիւսերու փլզումները) ազատուելու համար կ'ապաստանին այս վանքը և հիւրընկալութիւն կը գտնեն։ Փութկու վանքը Վասպուրականի մէջ նման է Ս. Բեռնարդոսի վանքին, Ալպեան լեռներուն վրայ շինուած։

Կը մտնենք ՄՈԿԱՑ երկիրը, ահա և «Մոկաց սարերը, պէտ պէտ քարեր. դեռ չի լուսցեր արևն առեր...»։ Մրկս... Վասպուրականի պատմական և պատուական գաւառն է այդ, որուն իւրատիպիկ գեղջուկ հայութիւնը իւր վառ երևակայութեամբ, բնատոհմիկ վարք ու բարքով, ինքնուրոյն հայաբարբառով անուանի է մեր պատմութեան ու մատենագրութեան մէջ։

Մոկաց Հայութիւնը իւր հոգեկան ստեղծագործութիւններով միշտ յիշելի և սիրելի կը մնայ։ Մոկացիք տուին մեզ Հայ ժողովրդական վէպի դուռէ գործոցը—Սասունցի Դաւիթ—որուն ամեհի և մարտահրաւէր ձայնը թշնամուն ուղղուած, կարծես կը թնդայ ու մենք կը լսենք անոր արձագանգները, Սասունի լեռներէն։

—Ով fճած էf՝ արթուց կացէ՛f
Ով արթուց էf՝ եկէf կեցէ՛f
Ով կեցեր էf՝ գէճf կապեցէ՛f,

Ջէճf էf կապել՝ ձի թամբեցէ՛f,
Ձի էf թամբել՝ եկէf ճեծէf.
. . . . . .

Հապա Մոկաց Միրզէն... որուն խաբեցին թշնամիք ու տարան ձրզիրէն, թոյն խմցուցին, «թափաւ մօրուս ինկեաւ լամէն (կզակ) ափսոս, հազար ափսոս Մոկաց Միրզէն, չը կէր (կար) քու նըման տղնգի դիւնիէն» (հինգ աշխարհ)։

Հապա Կարօս Խա՞չը... Հայ ժողովրդական բանահիւսութեան այդ գեղեցիկ ու գոհար հովուերգութիւնը, որ Հայ ժողովուրդի քաղաքական պայքարի մէկ մարգարտաշար էջը կը կազմէ, կրօնական մելանուշ աւանդութեամբ մը գեղազարդուած։

«Մէկ շաբաթ օր՝ լուս կիրակի, քառասուն հօտաղ իրար ժողվան, կարօսէ խաչ մը շինեցին, տարան դրին մէջ իրենց գեղի տաճարին»։ Այս բան տեսաւ «գեղի գզիրը, գնաց ասաց Քիւրդ Պարոնին»—«բանըմ կայ մեր Հայոց ազգին, էն չի վէլե (վայելեր) Հայոց ազգին, էն կը վէլի Քիւրդ Պարոնին»։ Քիւրդ Պարոնը «ասքհար արաց, (զօրք բերաւ) վէր էն գեղին» և պահանջեց Կարօս Խաչին։

Գիւղի քահանան և իշխանները, «արծաթ ոսկին ժողվին բերին, էկան յառջև Քիւրդ Պարոնին—աղաչելով լալով ասին—Ա՛ռ քեզ արծաթ, ա՛ռ քեզ ոսկին, դայմիշ մէլնեը Կարօս Խաչին. խաչ կը վէլի խաչապաշտին, խաչ չի վէլի մուսուլմանին»։

Քիւրդ Պարոնը ականջ չը դրաւ Հայոց աղաչանքին, ժողովուրդն ալ ապաստանեց Կարօս Խաչին։—«Կարօս Խաչին մեռնեմ իր զօրութինին, հրաշք նշանց (ցոյց) ի տուր անօրէնին»։

«Կատղաւ (խենթացաւ) Ալին (Քիւրդ Պարոնը) մէջ դիւանին, կատղաւ խանում մէջ իր օդին (սենեակին) կատղաւ մանուկն օրօրոցին»։ Այս որ տեսաւ Քիւրդ Պարոնը «փոշման էլաւ իր ասածին, փոշման էլաւ իր արածին, էկաւ չօքուեր (ծունկեր) զարկեց յառջև Կարօս

Խաչին, խնդիք արաց, դիլաք արաց կարօս Խաչին»— ասաց.— «Քառասուն կիւկիւմ ոսկի ունեմ, խաչխամբուր տամ կարօս Խաչին՝ դայմիշ չէլնի իմ խանումին։ Քառասուն կտիր (հօտ) ոչխար ունեմ, կուրպան (մատաղ) կանեմ կարօս Խաչին՝ դայմիշ չէլնի իմ մանուկին։ Քառասուն լծկան գոմէշ ունեմ, կուրպան կանեմ կարօս Խաչին՝ դայմիշ չէլնի Քիւրդ Պաբոնին»։

Կարօս Խաչը լսեց զղջացող Քիւրդ Պարոնի աղերսանքը և կատարեց անոր դիլաքն ու խնդրանքը, և պատժեց «էն շուն ու մատնիչ գզիրին» որ խենթացաւ և իր ատամներով քրքրեց իւր «թեի կաշին» յետոյ «սատկաւ, շներ էկան պատառեցին պիղծ լէշը՝ շուն մատնիչին»։— Է՛յ ժողովուրդ, Հայ ժողովուրդ, եկէք բոլորս միասին «քառասուն ղոռմի տանք էն լուս հոգի քառասուն հօտին, որ սաբիր էլան կարօս Խաչին, քերին տուին Հայոց Ազգին...»։

Այս ալ «Կարօս Խաչը» երգող Հայ աշուղի անմեղ ու մուրբ ցանկութիւնն է, որ մենք սիրով, հազար սիրով կը կատարենք։

Եւ վերջապէս կը մնանենք Մոկաց «քաղաքը» որուն մէջտեղէն հոսող սառն ու վճիտ գետակը երկու մասի բաժներ է «քաղաք»ը, որ զարդարուած է ծառերով և այգիներով։ Ահա նշանաւոր Աբրահամեանց քաղը, որուն ծայրէն կուգայ հայկական հարսանիք մը, նաղարա-զուռնայի առաջնորդութեամբ։ Գեղջուկ և գեղջկուհի մոկացիք իրենց տոհմիկ տարազներով շուք ու զարդ կուտան հարսանիքին։ Ուրախ աղաղակներ, հրազէնի ձայներ լիցուցեր են ձորը։ Այր ու կին, ձեռք ձեռքի տուած կը պարեն ու կ'երգեն խնդագին.

Էսօր ուրբաթ է պաս է, դէ՛ զրնգ, զրնգ դէ՛ ջան
Սրտիկս ատծրքէ բասէ » » » » »
Սրտիկ մալուլ մի՛ մրնա » » » » »
Աշխարհ գիկ-էե չի մրնա » » » » »

Հարսը մալուլ— տխուր է, այս երգը կ'երգեն որ ուրախանայ։

Մոկս... Մոկս... սուրբ երկիր, սուրբ տեղիք՝ համով հօտով լիք, անուշ, սիրասուն հայրենիք, մնաք բարով Մոկաց իշխան և մելիք, խաթուն և մամիկ, լեռնական, քաջակորով Մոկացիք մնաք բարով։ «Լուսնակն անուշ, հովն անուշ, շինականի քունն անուշ» գիշեր էր, երբ թողինք Մոկսը ու ճամբայ ելանք դէպի ՁԱՏԱԽ—պատմական Ջերմաձորը, Վասպուրականի լեռնապարեան դաւառներու աննման

և հիասքանչ երկիրը, որուն սիրտը կ'ուռդուի Տիգրիս գետի վերին հոսանքներու մէկ գետակով:

Ջատախը լեռներու, կիրճերու, կապան-կածաններու, անանց և անել ճամբաներու երկիր մըն է, ուր Հայութիւնը դարեր շարունակ կրցած է կառչիլ իր լեռներուն և ապրիլ տեսակ մը կիսանկախ կեանքով, ամենադաժան և բռնակալ լուծերու տակն անգամ:

Ջատախ... ինչ կոչում, արդեօք, մարդկային բռնութեան և բնութեան արհաւիրքները ծնած են cus ախ և Հայ ժողովուրդը այդ cus ախ-երու մէջն անգամ միշտ հպարտ ու յաղթական մնացեր է իր երկրին մէջ՝ դիմադրելով բռնակալներու հուրին ու սուրին և բարձր լերանց կատարներէն գահավիժող լեռնանման ձիւնի հիւսին: Ցիրաւի որ Ջատախը cus ախ-երու երկիր եղած է, բայց եկուր տես, որ լեռնական, վեհանձն ու ազնիւ, յաղթամարմին և հուժկու շատախցիք, իրենց cus ախ-երու երկրին մէջ հաճոյք և վայելք գտած են հայրենի սիրով մ'անշէջ:

Ահա Թաղը—գաւառի կեդրոնը, ուր Հայութիւնը կը ծփայ իր երջանիկ ու նահապետական կեանքով: Ահա կուգան Թաղեցիք, մարդ ու կնիկ, զարուն-զարդարուն, ուրախ ու ժպտուն: Մարդերը՝ լայնաթիկունք, երկարահասակ, սպիտակ քօղօզները գլուխնին կը զարդարեն սև փոշի-ներով (փաթթոց) պճնուած: Ձուխ քեազախիկն սև սաթ մազերով, սարի նման ծածկեր է անոնց թիկունքն ու մէջքը: Նաշխուն գոյնզգոյն բրդեայ շապիկը անոնց լայն կուրծքի զարդն է և եօթ-մաֆուֆ (եօթ գոյնով) լայն շալւարը կ'իջնէ մինչև ոտքի երեսը: Հաստ մահակը ձեռքերնին բռնած, իսկ կանեփակար ուշիկ կօշիկները թրխկ-թրխկ կը թըրխկան քարերու վրայ: Բոլորն ալ հպարտ են, ուրախ և գոհ, կը զրուցեն, կը կատակեն ու կ'երթան, ուր— դէպի գործատեղ, զի բոլորն ալ գործի տէր են: Շատախի նշանաւոր շալը անոնց ջուտ բազուկերու և շնորհալի մատներու արդիւնքն է:

Շատախի շալը, մանիշակագոյն, կապտագոյն, սպիտակ, ազնիւ բուրդէ գործուած նուրբ և դիմացկուն, ալեծածան ու սիրուն:

Երթանք Թաղի արուարձանները: Ահա Թլորան, ահա և Ծառնոց, որ ծառախիտ ու ծաղկազարդ, հովասուն ու ջրառատ վայր մըն է, ուր նստեր են Շատախի ջահել-ջիւանները և էջ կ'ընեն: Ուրախ ձայները յանկարծ կը դատրին և Ծառնոցի ծառերու զով ու

հով քամին մելանուշ գեղջուկ երգի մը թրթիռներով կը շոյէ մեր ականջները։ Լսեցէ՛ք, լսենք, Շատախի Հայերու սիրային յայտնի ողբերգը։

Սիրտըս ճմաճ էր էճ փլած տըճեր,
Կոտէր էր գերըճճեր, խախտեր էր սըճեր,
Էրթամ զիս բաղեմ գարճաճ *քէօշ* գետեր,
Ըլճեմ էճ ձկաճց ձագերուճ յրճկեր...։

Սեւ ծովճ եմ տիսեր՝ սիպտակճ ի բոլոր, *)
Ալիճ կը զարկէր չէր խառուեր յուրոր,
Էճ վա՛վճ ի տիսեր մէկ ծովճ էրկու բաւոր,
Ա՜խ, առուճ կուլայ սիրտս սեւաւոր...։

Լռութիւն... սիրող սիրտերը սեաւոր՝ արիւն կուլան։ Ո՛չ մէկ ձայն, քամին է միայն որ կը խշշացնէ Ծառնոցի ծառոց տերևները, որոնց սօսափիւնը սարսուռ կ'ազդէ մեր սիրտերուն ու մենք արագ քայլերով կը յառաջանանք դէպի արևելք, միշտ լուռ ու գլխահակ և քանի մը ժամ յետոյ կը մտնենք լեռնաստանը ԱՆՁԵՒԱԾԵԱԾ երկրին, (Նորդուզ) և վերջապէս կը հասնենք Հոգոց վանքը, որուն հովանիին տակ, ըստ աւանդութեան, թաղուած է Հայոց Տրդատ թագաւորը. գերեզմանն ալ ցոյց կուտան ու կը համբուրեն։

Երեք լեռներ բարձրագագաթ, դէմ-դիմաց, իրենց գրկին մէջ ծուարեր ու պահեր են այս հնամեայ մենաստանը—Հոգոց վանքը—որուն տեղ, քրիստոնէութենէն առաջ, հեթանոս Հայութիւնը իր մեհեան ու բագինն ունէր, ուր կրակը անշէջ կը պահուէր և ամէն արշալոյսին կրակի և արևու օրհներգութիւնը կը թնդար։ Սակայն, աւանդութիւնը կըսէ, եկան զոյգ առաքեալները—Թադէոսն ու Բարդուղիմէոսը—կործանեցին հեթանոսական մեհեաններն ու բագինները և անոնց տեղ հիմնեցին քրիստոնէական այդ տաճարը—Հոգոց վանքը—որուն կամարներուն տակ Հայ վանականներն ու ճգնաւորները լաց ու ողբ իրար խառնելով, աղօթելով ու շարականներ երգելով երկար դարեր անշէջ պահեցին Հայուն լոյս հաւատքը։

Հոգոց վանք... չը գիտենք ինչպէս բնորոշենք այս կոչումը։ Այստեղ ապրողը հոգսերու, ցաւերու մէջ կ'իյնայ, ինքզինքն ու աշ-

*) Այս երկու տողի բացատրութիւնը հետևեալն է. աչքի պտուղի սև մասը նմանցուցեր են սև ծովին, որ չրջապատուած է սպիտակ ծովով։ Արցունքի ալիքները այս երկու ծովերուն կը զարնեն, բայց անոնք չեն «խառուեր յուրոր» (իրար)։

խարհը կը մոռանայ, թէ, նոր հոգի, նոր կեանք ու աւիւն կը ստանայ։

Այս մենաստանը ուխտի եկէք, ձեր հին հոգսերն ու ցաւերը այստեղ թողէք, և նոր հոգի ու կեանք առնելով գացէք։ Օ՜ն ուրեմն ճամբայ ելնենք Հոգոց վանքէն։

Վասպուրականի արևելեան սահմաններուն կը մօտենանք։ Կը մտնենք ջրառատ և աղբիւրաշատ ԱՂԲԱԿ գաւառը, ուր լեռներն ու ձորերը, հովիտներն ու ծմակները, անտառներն ու պուրակները, գետերն ու գետակները, ահաւոր՝ բայց գրաւիչ գեղեցկութեամբ մը իրար խառնուելով բնութեան հիասքանչ պատկեր մը կը պարգեն մեր աչքին առջև։

Ելէք, ելնենք սա բարձունքն ի վեր, որուն կատարին, բազմեր է դարերու լուռ հսկան ու վկան, Ս. Բարդուղիմէոսի վանք-մենաստանը, որուն տաճարը կաս-կապոյտ երկինքն ունի իբր հորիզոն իր ետին և խողխոջացող գետակ մըն ալ իբր զարդ՝ բլուրի տակին։ Գիւզել-Դէրէյի (Գեղեցիկ-Ձոր) բնութեան համն ու հոտը, հաճոյքն ու վայելքը, բերքն ու բարին՝ աւելի ևս կը գեղազարդեն այս պատմական և հնադարեան մենաստանը Ս.Բարդուղիմէոս Առաքեալին։ Օ՜հ, ինչ ահաւոր ու փառաւոր ձեռակերտ, ինչ հսկայ և քարակառոյց տաճար՝ որուն զարդն ու պսակը գմբէթն է՝ խաչն ի կատար։

Ս. Բարդուղիմէոսի մենաստանը կ'ուզէք պրպտել։ Անոր իւրաքանչիւր քարն ու կամարը 19 դարերու պատմութեան հաւաքարան մըն է։ Ս.Բարդուղիմէոսի վանքի ձորերն ու բլուրները կ'ուզէք պեղել։ Մի՛ դպչէք այդ արիւնոտ ու արցունքոտ վայրերուն որոնք՝ «հհ գերեզմանք են Հայոց թաղուած ի խոր խաւարի», գերեզմանք, դամբարանք Հայ նահատակներու, որոնք ընկան յանուն Հայ ազգի ու հայրենիքի ազատութեան և իրենց «վարդագոյն արեամբ» ներկեցին հայրենի հողը և իրենց ճակատը լուսաշող։

«Սև գիշերն անցաւ ու լոյսն արևուն ծագեց կարմրագարդ Հայոց լեռներուն», երբ մենք հեռացանք Ս. Բարդուղիմէոսի մենաստանէն, դարերու յիշատակներով բեռնաւոր և սրտերնիս տխուր ու սևաւոր։

Բարձրաբերձ լեռներ, զառիվեր ու զառիվայրեր, խոր ձորեր և կանանչ հովիտներ, գետ ու գետակներ, անանց կիրճեր ու կածան-

նեք, կապաններն ու կատարներ, գիշեր-ցերեկ կտրեր անցեր ենք, քալելով միշտ դէպ արևելք և ահա հասեր ենք ԱԲԱՂԱՑԻ ԴԱՇՏԸ.

Աբաղայի դաշտը Վասպուրականի դրախտն է, կաթի և մեղրի երկիր, որուն կուրծքը կ'ուռճանայ Բէնդի-Մահի (Թումբ Ձկանց) գետի կենսատու ջուրով. Աբաղայի դաշտին մէջ, կար ժամանակ, որ 400 Հայ գիւղեր կողք-կողքի շէն ու պայծառ կեանք մ'ունէին, սակայն թշնամին դարերու ընթացքին զանոնք մոխրակոյտի վերածեց.

Ի՜նչ մարգագետիններ, որքան առատ բոյս ու ծաղիկ, ջուրի և հողի որպիսի՜ առատութիւն, որոնց մէջ ոչխարներու հօտերը և ձիերու երամակները կը յղփանային. Այս անծայրածիր դաշտին մէջ ապրող Հայ և քիւրդ բնակչութիւնը բնութեան ոչ միայն բարիքները այլև հրաշալիքները կը վայելէին.

Տեսէք Բէնդի-Մահին, որ օրօրուելով, սողոսկելով ծանր ու խոհուն կ'ուգայ հեռուներէն. Դաշտին մէջ նա լուռ է և հանդարտ, բայց երբ երկու լեռներու արանքէն կ'անցնի կը դառնայ ահեղամռունչ, կատաղի և անզուսպ.

Աբաղայի դաշտը ոտնակոխ ընելէ յետոյ Բէնդի-Մահիի ափերն ի վար յառաջանալով կը բարձրանանք Տէր Յուսկաւի Որդւոյ Վանէքը, որուն տաճարին դուռը դարաւոր ընկուզենիի մը ճիւղերով խճճուած, զով ու շուք կուտայ տաճարին. Որքան քաղցր ու հաճելի էր այն գիշերը, որ լուսցուցինք այս մենաւոր վանքի բակին մէջ.

Լուսացայ լուսն ի բարին, արևը կեանք տուաւ արար աշխարհին, երբ ճահճայ ելանք և ամբողջ օր քալելէ յետոյ, հասանք ԱՐՃԱԿ գաւառակի Խառակոնիս գիւղը, Արճակի լճակի ափին.

Կը համբուրենք սուրբ հողը այս գիւղին, որուն ծոցին մէջ դարեր առաջ ծնած ու կեանք առած է Հայ միջնադարեան մեծանուն սիրերգու-բանաստեղծ Ասուղ Նահապետ Քուչակը, որ երբ խորին ծերութեան հասաւ օր մը բարձրացաւ գիւղին Ս. Թէոդորոս եկեղեցիին տանիքը և ըսաւ գիւղացոց.

«Ես Քուչակս եմ վաճեցի,
Ի գեղջէն Խառակոնիսայ,
Լցեր եմ հարիւր տարիճ,
Էլ չի գար միտս ի վերայ...»:

Այս խօսքերէն յետոյ Աշուղն աւելցուց—«Ժողովուրդ, ես, հիմայ ժամին տանիքէն ինքզինքս վար պիտի ձգեմ, ուր որ իյնամ, անկասկած պիտի մեռնիմ, ուստի ինկածս տեղը փորեցէք գերեզմանս և մարմինս թաղեցէք հոն»։

Աշուղն ընկաւ տանիքէն և ընկած տեղն ալ թաղուեցաւ։ Երախտապէտ ժողովուրդը իր սիրած Քուչակի գերեզմանի վրայ դրաւ պարզ տապանաքար մը, անպաճոյճ արձանագրութեամբ մը—«Ցիեցէք գնահապես Քուչակ...», որուն թանաքն եղաւ Արճակի լճակը, իսկ շամբուտի եղէգն ալ գրիչ և անիկա երկնեց ու կերտեց իր հանճարեղ սիրերգութիւնը, որ լուսապսակ հիւսեց անոր հոյակապ ճակատին։

Արճակի լճակը լուսեղէն ու հրեղէն հեքեաթներու և տեսիլքներու շտեմարանն է։ Կուզէք լսել զարմանազան հէքեաթներ և զրոյցներ այդ լճակի ոսկեկոտոշ գոմէշներու և հրեղէն ձիերու մասին, ապա ուրեմն գացէք գտէք արճակեցի և խառակոնիսցի պապիկ-մամիկները, բանալ տուէք անոնց օրհնեալ բերաններըը և լսեցէք թէ անոնք պիտի պատմեն ինչ հրաշալի բաներ։

Արճակէն ճամբայ կ'ելլենք և չորս ժամ քալելէ յետոյ կը մօտենանք քեզ, քո արուարձաններուն և սահմաններուն, հվ իմ սիրասուն հայրենիք, բնութեան և պատմութեան սքանչելի քաղաքդ ՎԱՆ։ Ահա հասեր ենք Ֆառուղ գիւղը և շուտով պիտի մտնենք Վարագայ երկկատար լերան հովիտը։

Կ'երթանք տեսնելու Քէբե-Կէօլը (Ցէրտէրի-լիճը), որուն ջուրը Վարագայ լերան աղբիւրներէն ու հալուող ձիւներէն կը գոյանայ։ Ես ըսեմ ջուր, դուն հարցուր ինչ ջուր—անմահական ջուր։

## ՎԱՆԻ ԱՐՈՒԱՐՁԱՆՆԵՐԸ

ՎԱՐԱԳԱՑ սար, ողջոյն քո երկգագաթ բարձունքներուն և համբոյր քո ջրառատ ու ծաղկաշատ լանջերուն։ Ահա եկանք ուրախ ու խնդագին՝ տեսնելու համար Վարագիդ դրախտանման հովիտ-Գեալիճն։

Սալճապատի Ս. Գրիգոր Վանքի հովիտը մտած ենք։ Դարաւոր ընկուզենիներու հովանիներու տակէն, խշշան գետակի ափերն ի վեր

յառաջանալով կը հասնինք Մալնապատի վճիտ ու սառն անմահական աղբիւրին, որուն ջուր խմող մարդ արարածը նոր կեանք ու թափ կ'առնէ. Ա՛խ Մալնապատի սառն աղբիւր....

Թէև մեր առջևն են լեռներու և լպրծուն ժայռերու բազմապիսի վերելքներ և անանց ճամբաներ, սակայն մենք կը բարձրանանք սիրով, սրտով, կը տանջուինք՝ բայց չենք տրտնջար։

Կէսօր է երբ կը հասնինք Վերին Վարագը, որուն կիսաւեր վանքի սրբատաշ քարերու բեկորներուն վրայ կը հանգչինք։ Այստեղ են Քրիստոսի Աղբիւր, Կաթնաղբիւր, Անմահական Աղբիւր, որոնց ջուրերը մէկ քան զմիւս քաղցր ու վճիտ, սառն ու մաքուր։

Այս ջուրերով ոռոգուած մարգերու և կանանչներու մէջն է, որ հասակ առած է Գիներբուկ մանուշակագոյն ծաղիկը, որուն անմահական բոյրը և գեղեցիկ տեսքը կը պարուրեն մարդուս սիրտն ու հոգին։

Հապա Մեռուցածաղի՞կը կապոյտ-սպիտակ թերթիկներով անմեղ ու ժպտուն, հոտաւէտ ու գողտրիկ։ Հապա Կարմիր Կակա՞չը՝ որուն պսակը կը կազմեն՝ թերթերը կանաչ։

Դէ, բաւ է որքան հանդիստ առինք, եկէք բարձրանանք բանձրիկ կատարը Աստղկաց Բերդին։ Ճամբան հաճելի է, մարգերու վրայէն քալելով կըսկսինք բարձրանալ առապարները, որոնք առատ են Խաւրծիլով։ Խաւրծի՛լ... թթուաշ, ջրալի, համեղ ու դալար այդ բոյսը, արևին տակ թափառող և յոգնած ճամբորդին բնական և հաճելի զովացուցիչն է։ Ծաղկունք քաղելով, աչ ու ահեակ խոտորելով, միշտ դէպի վեր բարձրանալով, կը հասնինք Աստղկան Բերդի կատարը ուր հպարտ ու յաղթական կանգնած կը դիտենք Վասպուրական Աշխարհի ամէն կողմեր։ Դէպի հիւսիս նայելով կը տեսնենք վեհափառ ու հսկայ ձիւնապատ գագաթը՝ քան Հայոց զամէն լերինք բարձր ու գեղեցիկ լեռնապապն Արարատ-Մասիսին։

Օ՛, Վարագայ սարը—բնութեան հրաշալիքները և բարիքները ունիս բիւր ու հազար։ Բնաշխարհի ժողովուրդը կ'աւանդէ, որ օր մը Վարագայ սարն ու Վանի Ծովը վիճեցին։ Սարն ըսաւ—«Ծո՛վ, դու շատ մեծախօս և հպարտ ես, բայց գիտցիր, որ ես յանկարծ կը փլչեմ և իմ քարերն ու հողերը քո ծոցդ թափելով կը ցամքեցնեմ քեզ և դու կը դառնաս չոր ձոր»։

Ծովը ժպտաց, ծփաց ու պատասխանեց—«Վարագայ սա՛ր,

Վարագայ քա՛ր, շա՛տ առաջ կ'երթաս, դու դեռ չահէլ-չիւանն ես, տաք կլուխ տղայ ես, գիտես արդեօք, որ օր մըն ալ կը բարձրանամ ու կ'ուզամ գագաթդ կը համբուրեմ ու քեզ կը թաղեմ ջուրերուս տակ...»։

Ծովի այս խօսքին վրայ Վարագայ սարը սարսափահար եղաւ, մէջտեղէն երկու գագաթի վերածուեցաւ և լայն ու խոր ձոր-հովիտ մը բացաւ իւր կուրծքին մէջ, որ ծովը եթէ զինք կլանելու գայ պիտի թափուի այդ հովիտին մէջ ու երթայ հեռուներ։

Այդ հովտին - Վարագայ Գեալիին մէջն ենք մենք, Կօտ քարի տակ, ուր նստած կ'երգենք Վարագայ սարի բազմաթիւ երգեր.

«Արի՛, արի՛ ով սիրելի, երթանք ի լեառն, ինչ հրաշալի,
Վերէն ի վար ջուր հոսելով, պաղ աղբիւրներ՝ բոլոր ծաղկով,
Խոտն անուշ կ'ուգէյր Վարագայ սարէն, ծաղկաւէտ քարէն»։

Ահա Ապարանցւոյ Աղբիւրը, որուն համար կ'աւանդուի թէ Արծրունեաց Սենեքերիմ թագաւորը, իւր Շուշանիկ աղջկան խնդրանքի վրայ, արքայադստեր զոյգ ապարանջաններու բացուածքներու չափով ջուր տուաւ իր Շուշանին, որը Վարագայ լերան լանջին վրայ գիւղ մը շինեց՝ անունը Շուշան (ց)։

Վարագայ լերան Գալիլիա կոչուած բարձրունքի վրայ Ս.Հռիփսիմէ կոյսը պահեց խաչափայտի մէկ նշխարը, որ դարեր շարունակ հանգչեցաւ այնտեղ և Վարագայ սարը դարձաւ սրբավայր, երբ Արծրունեաց թագաւորներն ալ հոն հիմնեցին Վարագայ Եօթն Ցաճաքը, եօթն գմբէթով հսկայ մենաստանը, որ հազար տարիներէ ի վեր դարձաւ Հայ գրչագրութեան ու մատենագրութեան նշանաւոր մէկ կեդրոնը և ապա Հայ մտաւոր, գրական ու յեղափոխական պատկառելի հաւաքարան մը, իր բազմաթիւ զաւակներով։

Վարագը աւանդական, պատմական և բնական բազմատեսակ վայրերով ու զրոյցներով հարուստ է, գեղեցիկ, սակայն մենք որ մէկ տեսնենք, որ մէկի մասին պատմենք, Դրախտ այգին նկարագրենք, ծառախիտ անտառը մտնենք, սառն ու զուլալ աղբիւրներու ջուրերէն գոյացած լճակ-աւազաններու երգերքնեը նստենք, Բէրատեղը երթանք, դարաւոր ընկուզենիներու հովանիներու տակ

հանգչելու ժամանակ ունինք, կարկուտ Խաչի բլրակին կանգնելով Վանի ծովի շիջելավառ և ծիրանի վերջալոյսը դիտենք, թէ Վասպուրականի լերանց մութ-կապոյտ հորիզոնները քննենք։

Սակայն կրնանք չ'երթալ Շուշացց գիւղը։ Ի հարկէ ոչ։ Վարագայ սարալանջին հանգչող այս ջրառատ գիւղը եթէ մտնենք, ապա ուրեմն պարտաւոր ենք երթալ ու համբուրել գերեզմանը Շուշան Խաթունին, խունկ ծխել, մոմ վառել ու հեռանալ դէպի հիւր, ետ չը դառնանք զի մօտ է Կարմրուորի մենաւոր մենաստանը իւր սպիտակ գմբէթով ու քաղաքահայեաց, ծովատեսիլ դիրքով։

Կ'իջնենք այժմ Կարմրուորի բարձրունքէն և դաշտակոտրիկ կը յառաջանանք դէպի Կուռուպաս գիւղը և անկից ալ կերթանք Ս. Խաչի Վանքը, որու բլուրներու և ձորերու մէջ, Հռոմէն փախած քառասուն կոյսերն ապաստան գտան և ուլնիկ ու վզնոց շինելով ապրեցան ու քրիստոնէութիւն քարոզեցին։

Ս. Խաչի Վանքէն դէպի հարաւ-արեւմուտք քալելով, երեք ժամ յետոյ կը հասնինք Կուռնկ Վանքը։ Սակայն ինչու կռունկի անունով է կոչուած այդ վանքը։ Ծերունի մը իւր պապերէն լսած էր հեհետևեալ զրոյցը այդ վանքի մասին, որ առաջ Ծովահայեաց Ս. Աստուածածնի վանք կը կոչուէր։

Օր մը երբ վանահայրը պատարագի կը պատրաստուէր և արդէն հանդերձեալ կանգներ էր, լուր կը բերեն որ ս. խորհուրդի համար գինի չկայ վանքի մէջ։ Վանահայրը երկու ձեռները կը տարածէ ու կ'աղօթէ, երբ յանկարծ գմբէթի լուսամուտէն մեծ կռունկ մը կտուցին բռնած խաղողի կուռ ողկոյզ մը «կը՛ռ կը՛ռ» կանչելով տաճարը կը մտնէ և խաղողը կը դնէ սեղանի վրայ, սկիհի մէջ։ Պատարագիչը կը քամէ խաղողը և գինին պատրաստ կ'ըլլայ։

Այդ օրուընէ վանքը կոչուեցաւ Կռունկ Վանք։

Այդ օրուընէն կռունկը դարձաւ Հայութեան սիրուած ու Հայ-քրիստոնեայ թռչունը. — «Կռունկ ուստի կուգաս, ծառայ եմ ձայնիդ...»։

Ահա և Շրուստաց գիւղը հարուստ այգիներով ու ծառերով, բերրի հողով ու առատ ջուրով։ Բնակիչները բոլորն ալ, այր ու կին, ծիր ու մանուկ, դաշտ ու այգի գացեր են և արդար վաստակի ու սուրբ քրտինքի արդիւնքը հողէն կը բերեն։

Եւ վերջապէս կը հասնինք Վասպուրականի գիւղերու թագուհի ծովափնեայ Արտամետ գիւղը, որուն համբաւը պատմական, օդն ու ջուրն անմահական, կարմիր խնձորը պատուական։

Հայոց Արտաշէս թագաւորը Ալանաց արքայադուստր Սաթենիկին կնութեան առնելէ յետոյ, անցաւ Վասպուրական և Վանի ծովի ափին որոշեց շինել ամարանոց մը. «...Եւ հաճոյ թուեալ յաչս նորա, շինէ զբաբաբլուրն ապարանս արքայանիստ, աշնանայինս, պայծառայարդարս, գեղեցկայարմար, պարսպաւորս ընդ դէմ ծիծաղելով ծովուն՝ ի հիւսիսոյ նայեցուածով, արեգակնային՝ ի վերայ խաղալով ճառագայթաձիգ ճեմականացն... ընդ դէմ նայեցածն ունելով մեծ լճառնն Մասիք կոչելով բարձրագագաթն ձիւնալիր սպիտակափառ, իբր զթագաւոր մեծավայելուչ պատուական ալեօք զուարճացեալ՝ ի մէջ ճոխ նախարարութեանց, առաջի տեսանելով զկապուտակ ծիրանափայլ դաշտաձև ծովն, դաստակերտս մեծամեծս շուրջ զեղերբն անտառախիտ ծառովք և գիւներբ որթովք և զանազան պտղովք. զշէնս պատրաստեալ և շուրջ զամրոցաւն տնկախիտ բուրաստանս ծաղկաւէտ և անուշահոտ՝ ի զանազան ծաղկանց...։ Եւ ածեալ զտիկինն Սաթինիկ զբօսնուլ յաշնանային յեղանակս յամարաստուն գեղեցկաշէն յապարանս զարդարեալ բերդին։ Իսկ զանուն քաղաքին կոչեցին Արտամատ՝ որ թարգմանեալ ստուգաբանի Արտաշէսի ձեռակերտ, կամ թէ Արտաշէսի եկք...»։*)

Ահա պատմական Արտամատը, որ իւր հին փառքերէն զուրկ է այժմ, բայց բնութեան սքանչելիքներով հարուստ ու շքեղ է արդի Արտամետը՝ իբր ամառանոց։

Երթանք Արտամետի այգինները, որոնք խնձորենիներու անծայրածիր և խիտ շարքերով զարուն-զարդարուն, կը ծփան կանաչ ծովի նման, Վանի ծովի ափին դէմ-յանդիման։ Արտամետի խնձորը... Դալատալի, Իշխանի խնձորները, կաս-կարմիրը, վարդագոյն, քաղցր ու նրբակեղև, համով - հոտով լիք, Արտամետի այգիներու այս չքնաղ բարիքը։

Հապա՛ տեսէք ծովափնեայ այն այգին, որուն մէկ մասը ծովակուլ եղած է։ Կապոյտ ջուրերը ծեծեր, խփեր են փխրուն հողե-

*) Թովմա Արծրունի. «Պատմութիւն Տանն Արծրունեաց» Կ. Պոլիս. Տպրթագիւղ. ի տպարանի Պողոսի Արապեան. 1852. էջ՝ 56-57։

րուն և խնձորենիները բարձուած կարմիր խնձորներով, կայներ են կապոյտ ջուրերու մէջ ու կը տարուբերուին ալիքներուն զարկերով։

Զարհճճի մանուկները լող տալով կը բարձրանան այդ տխուր ծառերու վրայ, կ'ուտեն քաղցր խնձորը և մէկ ալ տեսար ծառերու վրայէն շփ-ճլփ ցատկեցին ծովը ու դուրս եկան ափը՝ լող տալով։

Արտամետի ընդարձակ այգեստաններըը կ'ոռոգուին զիւղին առատ աղբիւրով և մանաւանդ Շամիրամայ Առուի յորդահոս և մեծաքանակ ջուրով, որ կ'ուպայ Հայոց Ձորի Վերին Բրժնկերտ գիւղէն։

Շամիրա՜մ... ուրկէ՞ց, ո՛ւր։ Դո՛ւ տարփատենչ թագուհի, Ասորիքէն եկար, մեր Արայ Գեղեցիկ արքային սիրովդ վառեցիր, բայց անիկա երես դարձուց քեզմէ և սուրբ սիրով կապուած մնաց իւր վարդ Նուարդ Թագուհիին։

Արտամետը հարուստ է Շամիրամի առասպելներով։ Շամիրամը իր յուռութքներով-թալիսմաններով գրաւեր էր երիտասարդներու սիրտերը և զանոնք խելքէ ու արևէ կը հանէր։ Օր մը երբ թագուհին կը լողանար, ծերունի Առնակը գողցաւ անոր յուռութք-յուլունքներն ու ծամթելերը և տարաւ «Թալեց Վանայ ծով» — «Ցուլունք Շամիրամայ ի ծով...» կ'ըսէ պատմահայր Մ. Խորենացին։

Շամիրամը կիսամերկ՝ վազեց դէպի ծովափը և տեսաւ, որ իր յուռութքներն ու ծամթելերը կը ծփան ծովի մէջ, ուր երիտասարդ լողուրը մըն ալ կը լողար ու կը զուարճանար։ Շամիրամը քաղցր ձայնով ձայն տուաւ լողուրին.— «Իմ մէյդան ճակատ կուտամ, դէ՛, խանա Ծամթելն ի ծովէն».— լողուրը հպարտութեամբ և անհոգ պատասխանեց.— «Լողուրի մէկն էլ ես եմ չեմ խանա Ծամթելն ի ծովէն».— «Ջինչ ու զինչ տամ լողուրչուն...»։

Է՛հ, թողունք որ Շամիրամն ու լողուրը շարունակեն իրենց երգը, իսկ մենք ալ շարունակենք մեր երթը, Արտամետէն դէպի Աւանց, ուր կը հասնինք երկու ժամէն, քալելով ծովափի աւազներու մէջէն։

Աւանցը Վանի ծովի մեծ նաւահանգիստն է, ուր ամեն օր ծովափնեայ գաւառներէն բազմաթիւ առագաստանաւեր կուգան բերք ու բարիք բերելով կամ բերք ու բարիք տանելու։

Նաւահանգիստը եռ ու զեռի, խառնիճաղանչ աղմուկներու կեդրոնի վայր մըն է. նաւ կը բեռցունեն, նաւ կը դատարկեն, ուրախ

երգեր, բարձր ձայներ, պոռչտուքներ անպակաս են և շատ անգամ ականջ ծակող։ Երանի՛ ձեզ, ծովի՛ մարդիկ, ծովի՛ որդիք։

Երկար չը մնանք հոս, երթանք Աւանուց այգիները լիք-լիք խաղողի որթերով ու ողկոյզներով, որոնց անուշ գինին կեանք ու բէֆ կուտայ Աւանուց կենսուրախ ժողովուրդին։

Դուրս կուգանք Աւանցէն և կանգ կ'առնենք Վայ-վայ Թաղլասիի՝ Լաց ու կոծի Արտի մօտ։ Հայրենիքէն հեռացող պանդուխտները իրենց հրաժեշտն ու համբոյրը այս արտին մէջ կուտան մնացող սիրելիներուն ու կը բաժնուին։ Բաժանման րոպէին լաց ու կոծով կը լեցուի այս արտը, որ այդ տխուր կոչումով կը ճանչցուի։

— Չէ՞ որ պանդխտութիւնը կէս մահ է, երթալ կայ, իսկ գալն Աստուած գիտէ...։

Կը մօտենանք Լէսկ գիւղին, որուն համար կ'երգուի՝ «Լէսկայ քարեր դէն կենան, Լէսկայ տներ շէն կենան...»։ Կը մտնենք գիւղամէջ ու կը դիտենք Ամենափրկիչ մատուռը, բարձր քարաժայռի գագաթին կառուցուած։ Գիւղացիք ըսին, որ Արայ Գեղեցիկի մարմինը սիրատենչ Շամիրամ թագուհին գտնել տուաւ և այս քարաժայռի վրայ դնելով հրամայեց իւր կուռքերուն որ լիզեն Հայոց արքայի դիակը և վերակենդանացնեն զայն։ Արայի մարմին լիզող կուռքերը—Արալէզները—չը կրցան յարութիւն տալ գեղեցիկ Արային։ Կուռքերու անունով այդ քարաժայռը կոչուեցաւ Արալէզ—և ապա Լէսկ։

Ասկէ կ'ուղղուինք դէպի Շահբաղի գիւղը—Վասպուրականի խաղողի և ազնիւ գինիի այս շրջանակը, ուր կարմիր-ճերմակ գինիները կը փրփրան լայն ու հաստափոր կարասներու մէջ։

Եկէք երթանք Օվկանց տունը։ Դացինք ու մտանք մառան և շարէ-շար շարուեցանք կարասներու առջև։ Հիւրասէր տան տէրը գինու պոզիկը աջ ձեռքին և հողէ կուճուռիկը (բաժակ) ձախ ձեռքին բռնած կը լեցնէ ու կը հրամցնէ կարմիր գինին։ Ինքն ալ կը կոնծէ ու կ'երգէ խնդագին.

«Ծով քե գինի, գետին քե կըթղա, (գաւաթ)
Դու լից դու խմի, Աստուած քե կուտայ...»։

Այս անուշ խօսքին ինչ ըսես, երբ տանտէրն իր գինիի կարասները կը նմանցնէ Վանի ծովին և ձեռքի բաժակն ալ՝ նաւին։ Մեզ ինչ կը մնայ, եթէ ոչ կատարել անոր ցանկութիւնը՝ որ Աստուած

մեզ ալ տայ, մեր սրտի մուրազն ու դիլաքը կատարէ։

—Խմողաց անուշ կը ձայնէ տանտէրը լիասիրտ և ժպտուն։

—Ո՛ղջ մնաս, անուշ կենաս, շէն մնան ձեր այգին ու տուն—կը պատասխանենք և արագ քայլերով ու տաք գլուխով դուրս կուգանք մառանէն։ Երբ տան տէրը մեր զիկ-զակ քայլերը կը նկատէ քահ-քահ կը խնդայ ու կը ձայնէ.

—Ջան, Շահբաղու կարմիր գինի, քե վրէ խըմի շուտ կ'իյնի։

Իսկ մենք ուրախ զուարթ կ'երգենք—«Գնացինք Շահբաղի, շէն մրնէր էն գեղ, գինին բանցուցին ջրի տեղ...»։

Կը թողունք Շահբաղի գիւղը, երբ արդէն Վանի ծովը, արևմուտի շողերով ծիրանի հագեր է ու կը ծփայ ծաղրաճեմ, շոյելով իր ափերը։

Դաշտերու, արտերու մէջէն քալելով կատակելով ու երգելով կ'ուղղուինք դէպի քաղաքը—դէպի ՎԱՆ, ուրկէ ամիսներէ ի վեր բացակայեր էինք։

Մութն ընկաւ երբ մենք հասանք Վանի բերդի պարիսպներու տակ և Թաւրիզի դուռէն*) ներս մտնելով գացինք Քաղաքամէջը և բարեկամի մը հիւրընկալ յարկին տակ հայրենի յուշ-յիշատակներով անմոռաց և անուշ՝ ննջեցինք մուշ-մուշ։

## ՎԱՆ

Կ'ուզէք տեսնել Վան-Վասպուրական մեր աշխարհի արշալոյսն ու արևածագը, ապա ուրեմն եկէք բարձրանանք Վանի բերդի բանձրիկ կատարը և վայելենք բնութեան այդ հիասքանչ տեսարանը։

Ծայգալոյս է Ծովին քամին կը փչէ ուժգին ու մեղմիկ ցուրտը թեթև սարսուռ մը կուտայ մեր մարմնին։ Վանի ՔԱՂԱՔԱՄԷՋի նեղ ու խոր փողոցներէն անցնելով կը հասնինք Թաւրիզի դուռը որուն զոյգ դարբասները կը ճռան իրենց ճրեխանի վրայ և պատէ պատ կը բացուին մեր առջև։ Եկեղեցիներու արշալուսային ժամահրաւէրի կոչնակներու տրկլկոցները և ապա զանգակներու ղօղանջները իրենց անուշ ու մեղմ արձագանգներով կը լեցնեն Քաղաքամէջի փողոցները, զարնուելով ահաւոր բերդի ժայռերուն ու պարիսպներուն։

---

*)Պարսկաստանէն և գլխաւորաբար Թաւրիզէն եկած կարաւանները բերդի այդ դրան առջևը տարածուղ հրապարակին վրայ կանգ կ'առնեն և այդ պատճառով ալ, բերդի այդ դուռը կը կոչուի Թաւրիզի դուռ (Թաբրիզ կափուսի)։

Մէջ մութ մէջ լուս, երբ աղօթարանն ալ կը ճօղճօղուի Վարդայ սարի դիհէն, կը սկսինք մեր վերնելը դէպի բերդի բարձունքները, որոնց վրայ քաքակառոյց և ատամնաւոր հսկայ պարիսպները դարեր շարունակ անխախտ ու հպարտ բազմեր են թխագոյն ու կարմրորակ ժայռերու թիկունքին ու կոզքին։ Արդէն լուսաբաց է, երբ աչքերով կը չափենք բերդի ահեղ նստուածքը՝ արևելքէն արևմուտք երկարաձգուած, Վանի ծովափէն քիչ հեռու։

Վանի բերդը...։ Մարդկային ուժն ու ձիռքը արդեօք կրնային կերտել ու կառուցել այդ ահաւոր ու փառաւոր բերդը, որուն ծննունդը միայն բնութիւնը կրնար տալ, այլապէս մարդիկ անզօր պիտի ըլլային Վանի ծովափին բերել ու կուտակել այդքան ամուր ու տոկուն քարեր, երկաթէ ժայռեր, հսկայ քարանձաւներ, քարակարկառ բարձունքներ, որոնք բնութեան մատով ու կամքով զուգարդուած ու շաղկապուած են իրար քով, կազմելով ամբողջութիւն լեռնանման բարձրութեան մը, որ բազմեր է բաց դաշտին մէջ, ազատ ու համարձակ և գլուխը դէմ տուեր է դարերու պատմութեան մշուշին և բնութեան արհաւիրքին։

Արդէն բերդի գլուխը կանգներ ենք և կը նայինք դէպի արևելք—դէպի Վարագայ սարի գագաթը, որուն վերևն ու ետևը կապոյտ երկինքը յանկարծ ծիրանի գոյնով կը պնճուի և արեգակն արդար իւր լոյս-ոսկի շողերը կը ցոլացնէ։

Ողջոյն քեզ արև, քեզ հազար բարև, որ մեզ կուտաս կեանք ու արև։ «Առաւօտ լուսոյ, արեգակն արդար, առիս լոյս ծագեա...»։

Դէ, շուռ եկէք և նայեցէք դէպի ծով, շէշտ ի ծով, որ հանդարտ կը ծփայ, կ՚ուռի, կը տարուբերուի և իր լուրթ-կապոյտ դէմքը ցոյց կուտայ երկնքին ու երկրին։ Ծովափնեայ լեռները բոլորն ալ մութ-կապոյտ գոյնով ողողուած են։ Երկինքը կապոյտ, երկիրը կապոյտ։

Ողջոյն քեզ, կապուտաչեայ հայրենիք, իմ հինաւուրց հայրենիք, որ արշալոյսի շողով ու շաղով, համակ արծաթ ու ադամանդ դարձեր ես քու սէգ լեռներով ու ծփան ծովով։

Օ՜հ, արշալոյսը Վանի ծովի վրայ—տեսնողը կը հիանայ, չը տեսնողը՝ տեսնողին երանի կուտայ։

Այժմ երթանք շուռ գանք Վանի բերդի վրայ։ Ահա հիւսիսա-

կողմը, շրջապատուած բարձր, ամրակառոյց և ատամնաւոր պարիսպներով, որոնք տասնեակ դարեր կանգուն ու հպարտ են մնացեր, ծաղրելով ու ճամբու դնելով արևելքի և արևմուտքի մեծ ու փոքր ազգեր, ցեղեր, բռնակալներ, բռնութիւններ, դէպքեր և դէմքեր, աւանդական դարերէն մինչև մեր օրերը։ Նայիրիի և Ուրարտուի մշուշապատ պատմութեան բևեռագիր արձանագրութիւնները կը կազմեն բերդի գաղտնիքներու գանձերը։

Բերդի լերկ ապառաժ կուրծքին մէջ շինուած քարափոր սենեակները հիացում և սարսուռ կ'ազդեն ականատեսին։ Ձամիրամ թագուհին, Նայիրիի, Բիանայի արքաները և Ասորեստանի բռնակալները կերտեցին այդ քարափոր սենեակները, որոնք իրենց հարաւահայեաց նայուածքով ու տեսարաններով որքան հոգեպարուր և զմայլելի են։ Նախահայաստան, Ասորեստան, Պարսկաստան, Հռոմ, Բունաստան, Մեծն Հայաստան, արաբն ու թաթար, մոնկոլն ու քիւրդ, տաճիկն ու ռուս բոլորն ալ իրենց հետքն ու դրոշմը թողեր են այս բերդին վրայ ու անցեր գացեր են, բայց Վանի բերդը կեցեր է անսասան և անյաղթ, արհամարհելով ու հեգնելով բնութեան արհաւիրքներն ու պատմութեան և դարերու անցքերն ու անձերը։

Առասպելական խորհրդաւորութիւններով, դևերու, քաջքերու, աժդահաներու, ոգիներու և տիտաններու զարմանալի ու զարհուրելի զրոյցներով, աւանդութիւններով հարուստ է Վանի բերդը, որ ուն տակէն, խոր-խոր անդունդներէն—կ'լսեն—գոռալով ու որոտալով կ'երթայ Կօպալ*) գետը։ Օ՜, Կօպա՛լ գետ, գաղտնի՛ գետ, որ սարերու խոր կուրծքերէն կուգաս ու բերդի տակէն անցնելով անտես ու անհետ կ'երթաս։

Ահա բերդի կուրծքին մէջ, նեղ ու գետնափոր անցք մը, ուրկէ ահով վախով ներս կը մտնենք և խաւարի մէջէն յառաջանալէ յետոյ կը կծկուինք անկիւն մը։ Ականջ արէք—ինչ, ես լսեմ անդունդներէն, դուն լսէ, ո՛չ սանդարամետքէն կուգան խուլ ձայներ, խշշոցներ, ահազդեցիկ որոտումներ։ Ոգիներու, քաջքերու ձայներն են, որ կ'արձագանգեն—ո՛չ, կ'լսէ ժողովուրդը, Կօպալ գետն է, կը զարնուի

*) Կօպալ՝ Վանի ժողովրդական բարբառով կը նշանակէ հասա ու տակուն մահակ ձեռնափայտ։

ժայռերուն, քարերուն, կը խշշայ, կը գոռայ, կը ծեծէ իւր ապառաժ ափերը ու բերդի տակէն, գետնի տակէն սրընթաց անցնելով, Վանի ծովի կուրծքին մէջ կ'առնէ իւր հանգիստը։

Փախէք. փախչինք այս ահաւոր և մահաբոյր քարանցքէն, ուր կարծես ոգի առած մեր առջև կ'ելլեն քաջքերն ու տիտաններն իրենց հսկայ և ամեհի մարմիններով և բազուկները տարածած կը ջանան գրկել մեզ և դէպի խորքերը տանելով ձգել հօպալ գետը, որ մահակի նման կը զարնուի ստորերկրեայ քար ու ժայռերուն, առաջ բերելով աղմուկ և թնդիւն։ Այս ահազդեցիկ քարանցքէն դուրս կուգանք, կ'ուղղուինք դէպի բերդին կատարը ու կը դիտենք Վասպուրական մեր աշխարհը։

Օրը վաղուց կոտրուեր է, արևը հազար նազով կը թեքուի դէպի Սիփանայ սարի կողմերը և կը ցցուի ձիւնապատ գագաթին վրայ։ Վանի ծովը հանդարտ ու հպարտ կը ծփայ, կը շօրօրայ։

Մայրամուտը մօտ է։ Արեգակը շիջելավառ, հուր հերով ու ծիրանի վարսերով, փռուեր է ծովի ծփան երեսին և իւր շողերը թրւռուն ու զառվառ կ'ոստոստեն դարձդարձիկ և համբոյր ու հրաժեշտ կուտան ծիծաղկուն ու ժպտուն Վանի ծովին։

Անդին՝ Սիփանայ սարը սիգանք ու շքեղանք է առեր արևի ծիրանի շողերուն տակ և իւր ձիւնազարդ գագաթին ու լանջերը հուր ու ոսկի թափանցիկ ծածկոց են հագեր։ Այս հոգեպարուր սարի լայնկեկ գագաթին վրայ, ջրհեղեղի ժամանակ, եկաւ հանգչելու Նոյ Նահապետի տապանը։

—Սիփան, Սիփան ահ զիս, ըսաւ տապանը։

—Գնա ի Մասիս, որ բարձր է քան զիս, համեստութեամբ պատասխանեց Սիփանը։

Հեռուն կ'երևի Նեմրութայ սարը, որ «հազար ակն ունի, հազարն էլ Մշու դաշտն ի վար կ'երթան»։

«Ոսկէ գագաթը բանձրիկ Նեմրութայ
Վառ վառ կը շողայ մէջ Վանայ ծովուն...»։

Հապա Գրգուռ լճերը, Նեմրութայ սարի այդ եղբայրը կրտսեր։ Գրգուռի սառն ու վճիտ աղբիւրներու և ակներու մէջ երբ Աստղիկ չքնաղ դիցուհին լողանալու կ'երթար, դաշտի տարփատենչիկ

երիտասարդները գաղտագողի կուգային դիտել Աստղիկի լոգանը ու ծովածին մարմինը։ Այս անառակ տղաները պատժելու և անոնց աչքին անտեսանելի մնալու համար, Աստղիկը հրամայեց, որ իր լոգանքի ատեն, այդ դաշտը պատուի մշուշով։ Թանձր ու անթափանց մշուշը ծածկեց այդ դաշտը, որ յետոյ կոչուեցաւ Մշուշ, ՄՈՒՇ —Մշու Դաշտ...

«Մշու Աշխարհ մշուշ է,
Իր ճողճ ու ջուրճ աճուշ է,
Հիւսիս համիճ հեհ զիս,
Իր ծոցին մէջ քաղէ զիս...»։

Արևն իր վերջին համբոյրն ու հրաժեշտը կուտայ Վասպուրականի լերանց կատարներուն ու կանչազարդ լանջերուն, որոնց ձորերն ու ծմակները կը ծածկուին խաւարի մէջ, մինչ ասդին ծովը կը ծփայ ծաղրաճեմ և կը շոյէ իր լեռնազարդ ու աւազապատ ափերը։

Ծանկարծ կը փչէ ուժգին հովը և ծովը կը դառնայ ալեկոծ ու խռով։ Երկինքն ու ծովն իրար կը խառնուին, այս ատենն է ահա —կ'աւանդեն մեր պապերը— որ երկինքէն հրեշտակները կ'իջնեն ծովի երեսին ու կը կռուին հօմն գլխանի վիշապներու հետ, երբ յանկարծ հրեշտակներուն օգնութեան կուգայ Հայոց հին աստուած Վահագն դիւցազն, որ կը չափուի վիշապներու հետ, կը հալածէ զանոնք և ասոր համար ալ կը կոչուի Վիշապաքաղ Վահագն—շիկամուրուս, հուր հեր գլխին, աչքերը զոյգ արեգակունք, բերանը հնոց ծուխ ու բոցի, թևերը հրացայտ, մատները սուր-թուր, ոտները պողպատ, մէջքը քար երկաթ, երկնի և երկրի, ծիրանի ծովի ծնունդ, անյաղթ ու տիտան Վահագն Հին Հայոց։

Դեռ մենք բերդի վրայ ենք և կէս մէջքէն կախուած կը դիտենք հարաւակողմի բարձրաբերձ և սեպուղօրդ լերկ-ապառաժ պատը, որ վերևէն վար միասլաղաղ և զարհուրելի կեցուածք մը ունի։ Բերդի այս կողմի վրայ, լերկ քարաժայռի մէջտեղ, փորագրուած է ուրարտական փառքի ու յաղթանակի երկարապատում բեւեռագիր արձանագրութիւն մը։ Բևեռագիր, հայկական, պարսկական և տաճկական արձանագրութիւնները պատմութեան յաջորդականութեամբ տեղ գրաւած են բերդի այս ու այն մասի վրայ, անջինջ պահելով պատմական հին ու նոր դէպքերը, որոնք կատարուած են այս բերդի մէջն ու շուրջը։

Այս բարձունքէն դէպի վար նայեցէք, միայն զգոյշ, մարդուս գլուխը կը պըտտի, աչքերը կը սենան և վայ, եթէ ոտքն ալ սահի, մինչև վարը կ'երթայ և փոքր կտոր ականջը կը մնայ։

Մարդ-գազան, արիւնարբու թաթար Լէնկ-Թէմուրը, երբ իւր վայրագ և մարդակեր խուժանով Վանին մօտեցաւ, Հայ բնակչութիւնը կէն ի ձեռին դիմադրեց արևելքի այդ մահաբաշխ բռնակալին, որ սակայն յաջողեցաւ ճնշել դիմադրութիւնը։ Ազատատենչ՝ բայց պարտուած ու յուսահատ Հայութիւնը փախաւ և այս բերդի մէջն ու վրան ապաստան գտաւ։ Սակայն Լէնկ-Թէմուրը կրցաւ գրաւել բերդը և տասնեակ հազարաւոր Հայեր այս ժայռերու բարձունքներէն գլորել տուաւ դէպի վարը։ Այս անօրինակ Հայ նահատակներու դիակները այնքան շատ էին, որ գրեթէ բերդին հաւասարեցան և վերջի հերթին ձգուած մարդիկ, դիակներու կոյտերու վրայ իյնալով, ողջ կը մնային։ Այդ բիւրաւոր նահատակաց եղբայրական գերեզմաննոցը ցարդ կը մնայ իբրև ամօթ ու նախատինք՝ Լէնկ-Թէմուրի և իւր ցեղի անուան ու ճակատին։

Մուրթը վրայ կը հասնի և մենք կ'աճապարենք իջնել բերդէն, որ մահաբոյր և արիւնալի պատմութեանց անսպառ շտեմարան մըն է։ Արևմտակողմի դարբասէն դուրս կուգանք ու կ'իջնենք վարը, ուր բերդի հիմքերը հսկայական տաշուած ու կոփածոյ քարերով կառուցուած են։

Հիմնաքարը... ինչ քարեր, որոնք, ո՛վ գիտէ, քանի՛ հարիւր մարդոց բազուկներով վերցուած ու հաստատուած են այստեղ, մինչդեռ ժողովուրդը կըսէ, որ այդ քարերը ոչ թէ այր մարդիկ դրած են հոն, այլ մայր ու աղջիկը։ Աղջիկը բերաւ քարեր իսկ մայրն առաւ ու շարեց այս բերդի հիմքերը, որոնց տակէն անսպառ կերպով աղբիւրներ ու ջուրեր կը հոսին. արդեօք անոնք առուակներ են, որ Կօպալ գետէն փախչելով, խաւարէն ազատուելով եկեր այս լոյս աշխարհի մէջ կը հոսին ու կեանք կուտան մարդոց և բոյսերուն։

Այս կողմէն եթէ հայեացք մը ձգենք բերդին վրայ, կարծես թէ հսկայ ուղտի մը նստուածքն ունի արևելքէն արևմուտք և մենք այս վերջին կողմէն ալ կ'երթանք բերդի ստորոտին նշանաւոր Խոռխոռ Այգին, որ դարեր շարունակ եղած է Վանի յայտնի և անյայտ

արքաներու, տէրերու և իշխաններու զբօսատեղին, ուր ծառն ու ծաղիկը, ջուրն ու պտուղ և հազար բերք ու բարիք միշտ անպակաս եղած են. Արդեօք, Խորխոռունեաց Հայ նախարարները տնկեցին և վայելեցին այս այգին, որ մինչև այժմ կը մնայ իբր յիշատակ մը թանկագին.

Մնաս բարով Վանի բերդ, Շամիրամակերտ թէ Հայկազն Վան թագաւորի ձեռակերտ, մեզ համար մէկ է, Նայիրեան արքաները քեզ ամրացուցին թէ Արծրունեաց թագաւորներն ու նախարարները, այդ միևնոյն է, փաստն այն է, որ դուն, դարերու հոլովոյթին մէջէն կանգուն մնացեր ես և քու հովանիին տակ, քու մէջն ու վրան, առեր պաշտպաներ ես, զաւակները այն ազգին — Հայ ազին — որուն արիւնով ձեռք բերուած այս երկիրը՝ էր, եղած է եւ պիտի ըլլայ աճառ այսօրուան ու վաղուան Հայրենիքը.

Այժմ երթանք պտտել Վանի Քաղաքամէջը, քուն և հին Վան քաղաքը, շրջապատուած քար ու կիր բարձր պարիսպներով. որոնց առջև հին տեսններ փորուած լայն ու խոր խրամները ջուրով լեցուցեր են, յարդ սփռած են ջուրի երեսին, իսկ բարակ խաւ մըն ալ հող հարթի վրայ ցաներ են. Այդ դաւադրութեան անտեղեակ թշնամի բանակները երբ քաղաքի վրայ յարձակում գործած են, բոլորն ալ թափուեր են խրամներու մէջ և խեղդուեր են.

Վանի Հայ, պարսիկ, քիւրդ և տաճիկ իշխողները և հպատակները դարեր առաջ այս պարիսպներով և խրամներով փրկած են քաղաքի բնակչութիւնը իրար յարձակումներէն և արհաւիրքներէն.

Մտնենք Քաղաքամէջի նեղ ու խոր, տխուր և մռայլ փողոցները, որոնք մանուածապատ, ոլորապտոյտ, գաղտնի և յայտնի անցքերով իրար միացած են. Բնակչութեան բացարձակ մեծամասնութիւնը կը կազմեն Հայերը, որոնք հին դարերէն աւանդ մնացած տասնեակ մը հին ու նոր եկեղեցիներ ունեն — Ս. Սիօն, Ս. Պօղոս-Պետրոս, Ս. Նշան կամ Էջմիածին, Ս. Սահակ (Պարթև), Ս. Ստեփաննոս, Ս. Ծիրանաւոր, Ս. Կարդան և Ս. Յովհաննէս.

Քաղաքամէջը արևելեան հինաւուրց քաղաքի մը և հնագոյն դարերու բերդաւանի մը տպաւորութիւն կը թողու. Վանի բերդի հարաւակողմի ամբողջ տարածութեան վրայ, կանգուն կամ կիսափուլ պարիսպներէն ներս սփռուած են Քաղաքամէջի հողաշէն տուները

տափակ տանիքներով, միայարկ, երկյարկ և անգամ եռայարկ։

Մեզմէ երկու երեք դար առաջ, Վանի Քաղաքամէջը ականատես եղած է հայ-տաճկական և հայ-քրդական բազմաթիւ դէպքերու և կռիւներու, երբ դեռ Վասպուրականի մէջ թուրքին թաթը անուժ և ժոյլ էր ու չէր կրնար զսպել ազատատենչ Հայութիւնը և վաչկատուն քիւրդ ցեղերն ու բէկերը, որոնք յաճախ կը ծառանային Օսմանեան լուծին դէմ։ Այդ դարերուն Հայերը տեսակ մը կիսանկախութիւն ստեղծեր էին իրենց համար, ղեկավար ունենալով քաղաքի Հայ իշխաններն ու խօջաները, մէլիքներն ու աղաները։

—«Իշխանաց Իշխան Պարոն Խօջայ Ախիջան Ղարասաֆարն», Թոխմախ Միրաք, Խօջայ Սաֆար, Թովմա Աղան, Խօջայ Զանգիլ, Պարիկ Աղան, Խօջայ Մարութ, Բէյլար-Բէյ, Խօջա Մալխաս, Մելիք Աւէտ, Աւէտ Աղան և դեռ շատ շատեր, որոնք իրենց բնածին խելքով և կամ խորագիտութեամբ ու փորձառութեամբ կը պաշտպանէին Վանի Հայութեան գոյութիւնը և նիւթական ու բարոյական իրաւունքները՝ Վանի Թուրք և քիւրդ բռնակալներու դէմ—փաշաները, բէկերը, աղաները, որոնք քաղաքի կամ բերդի վայրագ և սանձարձակ իշխողներն ու տէրերն էին։ Ահա Զահվար փաշան (ՌՃԼԴ—1685 թուին) որ «հրամայեց Հայոցս քաղաքացւոցս և գիւղացւոցս որ զքաղաքի շրջապատ խանդակն պեղեցին»։ Ահա Օմար փաշան, որուն հրամանով «զՄարդանենց Առումն և զՄիրզայն կախեցին»։ Ապա Թուրջի Մահմատ փաշան, որ «զարաղաջ (կախաղան) շինել» տուաւ։ Ապա Հասան փաշան, որ «զալալ ձայնեց ՚ի մէջ շուկային թէ՝ Քրիստոնեայ ոք մի՛ իշխեսցէ սիւտակ կապայ և գեղին սօղ հագնել, և ոչ թուր, թուանք, խանչալ, դանակ պահել»։ Մուսլի փաշան՝ որ «հրամայեց Հայոց մօրուք թողուլ»։ Զանբօլատ Օղլին՝ «հրամայեց Հայոց գօտիկ վար առնուլ և գդակ դնել»։ Չափղուն Մահմատ, Գօջա Սիւլէյման, Քիւչիւկ Հասան, Բօյին Ագրի Մահմատ, Սարխօշ Իբրահիմ, Դալի Դիլվար, Ղարա Մուստաֆա, Քօռ Օսման, Թօփալ Օմար, Դուրսուն Ահմատ, Քօսայ Խալիլ, Լէշկեր Բաքիր, Չալանկի Ալի, Զանլի Մահմատ, Կանլի Մուստաֆա, Փաչաջի Մահմատ, Չալիք Օմար, Զարար Օղլի Ֆէյզուլլահ, Խուշ Նաման, Սիլահդար Խալիլ, Խուսրէվ և դեռ քանի՛ քանի՛ նման անարգական, ահաւոր և արիւնոտ տիտղոսներով տաճիկ փաշաները, որոնք դարերու ընթացքին Վանի բերդի

վրայ կամ ի Քսղաքամէջ նստելով, իրենց բռնութեան շղթաներով, զնդաններով — և արիւնաթաթախ սուրերով ահ ու սարսափի տակ պահեցին Հայութիւնը։

Վերոյիշեալ տխրահռչակ փաշաներու արժանի յաջորդը, Սուլթան Համիտի, Թալէաթի, Էնվէրի և բոլոր հայակեր մարդ-գազաններու օրինակին հետևող Վանի վալին — կուսակալ — Ջափդուն, Սարխոշ, Դալի, Էշկինը (դիակ ուտող) և մանաւանդ ԿԱՆԼԻ (արիւնարբու) և ՆԱԼԲԱՆԴ ՋԱՎԴԱԹ փաշան*), իւր նախորդներու ըրածները գերազանցելու համար, որոշած էր բնաջնջել Վանի ամբողջ Հայութիւնը, որ բազմիցս թուրք անարգ լուծին դէմ ծառացած էր, մինչև որ օր մը, — երջանիկ ու փառաւոր օր — 1915 թուի, Ապրիլ 7(20)ին, Երեքշաբթի աբշալոյսին, երբ արևն իր ողջոյնն ու համբոյրը կուտար Վանի բերդի բարձրունքներուն, թրքական թնդանօթները դժոխային գրոհոցներով մահաբեր և պայթուցիկ ռումբեր կը թափէին, իսկ հրացաններու որոտալից համազարկերը զնդակներու տարափ կը տեղային Քաղաքամէջի Հայոց հողաշէն տուներու և ինքնապաշտպանութեան դիրքերու վրայ, որոնց ետին ապաստանած բուռ մը հայորդիները, ես ըսեմ հերոսական, դուն ըսէ՝ դիւցազնական կռիւ կը մղէին թուրք բանակներու և քիւրդ հրոսակախմբերու դէմ։ Հապա խուժանը, թալանի և արիւնի ծարաւ թուրք խուժանը...։

Վանի Քաղաքամէջի Ապրիլեան հերոսամարտն է, ահեղ և օրհասական։ Կռիւ է, հերոսական և սարսափելի կռիւ։

Ծուխն ու բոց, լացն ու կոծ, աղմուկն ու աղաղակ, երգն ու նուագ, զնդակն ու կրակը իրար են խառնուած, ստեղծելով զարհուրելի կացութիւն մը, որուն մէջէն, լսեցէք, ահա հեռուէն ազգային մարտահրաւէր երգի ձայները կ'արձագանգեն և նոր ոգի, նոր ուժ ու կորով կուտան Հայ կռուողներուն.

Մեր հայրենիք բռնաւ աճեհր,
Մեր բճնամուց ոճնակոխ,
Իւր որդիքը արդ կանչում են,
Հանել իւր վրէժ, էհե ու ախ...։

Մեր հայրենիք օղքաճերով,
Այսման տարի կապկպուած,
Իւր հազ որդոց սուրբ արիւնով
Պիտի լինի ազատուած...։

— Կեցցէ՛ Ազատութիւն, կեցցէ՛ Հայութիւն... կ'որոտան կռուողները։

— «Հանել իւր վրէժ, քէն ու ոխ...»։ Եւ քիչ յետոյ՝ կը տեսնենք ինչ — պետական զինապահեստները և դարերու բռնութեանց շէն-

*) Այս վայրագ փաշան՝ Ջավդաթը (որ այժմ ողջ է) 1908-ին Վանի գաւառներու մէջ Հայերու օգթերը նալել (պայտել) տալով նահատակեց քանի մը հոգի։

քերը կը լողան ու կը ծփան հուր ու բոցի մէջ, և կը դառնան մոխրակոյտեր։

Հայ ձեռքերը գացեր կրակ տուեր են այդ անարգ դղեակներուն, որոնց մէջ Հայութեան «Ձայն հառաչանաց հեծութեան սրբոտի», արցունքն ու տառապանքը «ձայն բարբառոյ յանապատի» մնացին՝ անտես և անարձագանգ...։

Ապրիլի վերջերը, թշնամին յուսահատ և պարտուած, ամօթահար և խուճապահար, կը փախչէր Վանէն, ուր Հայութիւն, պահ մը, ինքզինք ազատ եւ անկախ կը զգար եւ էր կը դառնար իւր Հայրենիքին։

Մայիս 4(17)-ի երկուշաբթի առաւօտեան բարի լուսին, Վանի Հայութիւնը իւր փառքի և յաղթանակի գերագոյն րոպէները կ'ապրէր, երբ Քաղաքամէջի Հայ կռուողներէն երիտասարդ մը, պարզ ու անպաճոյճ դրօշակ մը կուրծքին սեղմած, Վանի բերդի ժայռերէն սիրով սրտով վեր կը մագլցէր քրտնաթոր և կը հասնէր բերդի ամենաբարձր կատարին և հոն կը տնկէր երկար ձող մը, ծայրին՝ արեան գոյնով կարմիր դրօշակ, մէջտեղ Խաչն սպիտակ։ Վանի ծովի քամին և Վարագայ սարի զեփիւռը մեղմիկ-մեղմիկ ծածանումներ տուին Հայ Ազատութեան այդ յաղթական դրօշակին, որ Արծրունեաց արծուանշան դրօշի խորտակումէն ինն հարիւր տարի յետոյ, այժմ կը ծածանէր Վանի բերդի վրայ, մինչ միւս կողմէ Հայ ռազմիկները թնդանօթներու որոտներով Արարատեան Աշխարէն Վան-Վասպուրականին օգնութեան եկած Հայ Կամաւորական գունդերու ժամանումը կ'ողջունէին և Ղատախի ու Փէսանդաշտի անպարտելի Հայ լեռնորդիներուն քաջալերանքի ողջոյնները կ'առաքէին։ Ղատախն ու Փէսանդաշտը շարունակեցին իրենց յաղթական հերոսամարտը, պարտութեան մատնելով թշնամին։

---

Երթանք Վանի նշանաւոր շուկան, որ թէև 1876 թուի ձմրան թուրք կառավարութեան և խուժանի ձեռքով թալանուեցաւ և մոխրակոյտի վերածուեցաւ, բայց տարիներու ընթացքին, նորէն վերաշինուեցաւ և բարգաւաճ վիճակ մ'ունեցաւ։

Հայութիւնը շուկայի տէրն է, վաճառականութիւնը և արհեստ-

ները Հայոց սեփականութիւնն են։ Տաճիկը հոն ենթակայ և ապիկար տարր մըն է, աշխատանքի, արհեստներու և վաճառականութեան անընդունակ ցեղ մը, որ միայն գիտէը կեղեքելով ու կաշառքով քարշ տալ իւր գոյութիւնը։

Մտնենք շուկան, ուր երկար և ոլորապտոյտ դարձուածքներ և բաժանումներ իրար միանալով կը կազմեն ընդարձակ տարածութիւն մը, որուն մէջ պարփակուած են վաճառատուներ, խանութներ, արհեստանոցներ, և այլն թուով՝ քանի մը հազար։

Առևտրականներ և արհեստաւորները, խառն ի խուռն ցրուած չ'են ամեն կողմեր, այլ իւրաքանչիւր առևտուրի և արհեստի համար շուկայի մէջ կան յատուկ մասեր, բաժիններ։ Ոսկերչանոց, Սօլկըրնոց (կօշկակարներ) Դարզընոց (դերձակներ) Ղազանչընոց (պղնձագործներ), Բախկըլնոց (նպարավաճառներ), Բազազնոց (կտորեղէն ծախողներ), Ջալչընոց (շալ ու կտաւ գործողները) ևայլն ևայլն։

Առևտուր, եռ ու զեռ, ուրախ կեանք, ամէն մարդ գոհ՝ իր գործէն և արհեստէն։ Արևելքի և արևմուտքի բերքն ու բարիքն կարաւաններով Վան կը բերուին և Վանէն ալ կը տանին տեղական արտադրութիւններ — տառեխ ձուկ, կտաւ, Շատախի շալ, շիլա, պանիր, իւղ, մեղր, մորթիներ ևայլն։

Ահա այս է Վանի Քաղաքամէջը, ուր կը գտնուին Վասպուրականի Հայոց Թեմական Առաջնորդարանը՝ իւր պատկան ազգային մարմիններով, «Ծիրուսեան» և «Շուշանեան» դպրոցները, գրադարանները, կուսակցական և հասարակական կազմակերպութիւններ։

Քաղաքամէջէն դուրս գալով կ'ուղղուինք դէպի Հայկավանքը, որ փոքրիկ և ուրոյն թաղ մըն է, որուն բնակիչները Թիմար գաւառի Կիրաճ գիւղի բրուտ գեղջուկներու շինած նուրբ գեղեցիկ, ձևաւոր և սպիտակ հողէ ամանները կը ծախեն—կուժ, կաղալիկ, սեռիկ, տիւճիկ, քեասա, ջրածիկ, բարչ ու պոզիկ, կարաս, խամալիկ և զեռ քանի՛ քանի՛ տեսակ և անունով աման-չաման բնաշխարհիկ։

Հայկավանքէն, ուռենիներու հովանիներու տակէն քալելով կ'ուղղուինք դէպի Շամիրամայ թաղը, զուտ թրքաբնակ և ընդարձակ քաղաքամասը, որ կը կարծուի ըլլալ հնագոյն շրջաններու Վանի այգեստանները, որոնք հիմայ ալ այնքան շատ են։ Այգիներու մօտերը կը տարածուին բազմաթիւ բոստաններ (մրգաստան) և պախէզներ

(ընդեղէններու ածուներ և բանջարանոցները), ցորենի արտեր, խո
նոցներ հայլն։ Եւ այս բոլորը կ'ոռոգուին ու կուճանան Շամիր
մայ Առուի ջրով, որ ամառ-ձմեռ միշտ առատ և նոյն քանակո
թեամբ կուգայ Շամիրամայ թաղին մէջ։ Արդեօք Շամիրամ թագուհ
իւր ժամանակին այդտեղ այգիներ և ծառնոցներ տնկել տուած
և անոնց բերքն ու բարիքն կը վայելէր։ Ազօտ զրոյց մը բերնէ բ
րան կը շրջի այս մասին։ Սակայն երբ բնեռագիրներու մեռած լե
զուները յարութիւն առին անողոք գիտութիւնն եկաւ հաստատե
լու, որ Շամիրամայ Առուն, այդ երկար և հսկայ ջրանցքը, շինե
է ոչ թէ Շամիրամ, այլ Նայիրիի Մեծուաս թագաւորը, որուն ա
նունը արձանագրուած կայ ջրանցքի ափին գտնուած բնեռագիր ա
ձանագրութեան մը մէջ, ուր ըսուած է—Մեծուասպիլի (այսինք
Մէնուասի ջրանցքը)։ Սակայն ժողովուրդը միայն իւր ըսածին կ
հաւատայ և կը պնդէ, որ այդ առուի հիմնադիրը նոյն ինքն Շա
միրամ թագուհին է։

Գլխան առուակներու ափերն ի վեր քալելով, բարդի և ուռ
ծառերու անծայր շարքերու մէջէն, ծուռ և զիկզակ փողոցներէն
անցնելով, սարերու և ծովի հովն ու զովը վայելելով վերջապէս կը
մօտենանք Վանի ամենամեծ քաղաքամասին—այնքան գովուած ու
հռչակաւոր ԱՑԳԵՕՏՈՒՆԻՆ՝ որուն հարաւակողմէն կը մտնենք Կլոր-
Դար թաղը, որ բնակավայր է Հայ և Թուրք խառն ազգաբնակչու-
թեան։ Թաղէն դուրս, բաց դաշտին մէջ մեծ և կլորակ հողաբլուր
մը կայ, որուն անունով ալ թաղը կը կոչուի Կլոր-Դար։ Կ'ասանդեն,
որ ժամանակին այդ դարի գլխին հայկական եկեղեցի մը եղած է։

Հետզհետէ կը յառաջանանք, կ'անցնինք ծառազարդ փողոցնե-
րէն, որոնց երկու կողմերէն մշտահոս առուներ կ'երթան։ Հեռուէն,
կանանչ ծառերու մէջէն կ'երևի Արարք, որ մէկ երկու հարիւր տա-
րի առաջ մեծ ու շէն գիւղ մը եղած է, իսկ այժմ Այգեստանի մէկ
թաղամասը կը կազմէ։ Եւ իսկապէս բուն Արարքը, որուն վրայէն
դեռ գիւղ անունը վերցուած չէ (Արարուց գիւղամէջ ալ կ'ըսեն)
կատարեալ գիւղ մըն է։ Այնտեղ կան ձիթհաններ, կալատեղեր,
կունաբկներ (տաւարներու աղբակոյտեր) հայլն։ Տուները մէյ-մէկ
են, իրար կպած, խրճիթները բոլորն ալ մեր աչքին առջև գիւղի մը
պատկերը կը պարզեն։ Արարք գիւղը նախ՝ Հայոց Ձորի Նոր-Գիւղի

հովտի մէջ եղած է, բայց երբ քիւրդ բռնաւորները յարձակեր և գիւղը կողոպտեր են, բնակիչները փախեր են քաղաք և այս նոր գիւղը հիմնած են։ Գիւղի արևելակողմի վրայ շինուած է Արարքի երկյարկանի ընդարձակ և գեղեցիկ ծխական դպրոցը՝ յանուն Ս. Թարգմանչաց—Սահակ-Պարթևի և Մեսրոպ-Մաշտոցի։ Այս դպրոցին մէջ 800 երկսեռ փոքրիկները կը ստանան իրենց նախնական ուսումը։ Դպրոցի դիմաց մեծ և ընդարձակ քառակուսի բակի մը մէջ կառուցուած է Վանի Հայոց Մայր եկեղեցին—Արարուց (Այր-յարոյց) Ս. Աստուածածին։ Այս հսկայ և ընդարձակ եկեղեցին մօտ 6000 անձ կրնայ պարունակել։ Եկեղեցւոյ առջև կը տարածուի Արարուց հրապարակը (մէյդան), շրջապատուած հարիւրաւոր խանութներով։

Արարուց հրապարակը Վանի կիրակնօրեայ տօնավաճառն է, ուր գաւառներէն և արուարձաններէն Աստծու տուած և հողէն արդիւնաբերուած ամէն բարիք կը թափին այստեղ վաճառքի։

Մեր հրապարակն է այս, ես լաւ գիտեմ այս տօնավաճառի մանրամասնութիւնները, ապա ուրեմն երթանք ու տեսնենք, ուր պիտի առնէք հայրենեաց համն ու հոտը։

Ամառուայ կիրակի առաւօտ մըն է, արևածագէն առաջ Վանի Այգեստանի փողոցները կը լեցուին գաւառներէն ու գիւղերէն եկող գիւղացիներով, որոնք շալակով և տաւարով ամեն բերք ու բարիք կը բերեն Արարուց տօնավաճառին։ Հայ, քիւրդ, տաճիկ հև ի հև կուգան, հեռուներէն վաճառքի ապրանք բերեր են և գնումներ պիտի ընեն։

Երթանք Արարք և դիտենք այս բնաշխարհիկ տօնավաճառը։ Ամբողջ հրապարակը լեցուած է խուռներամ ժողովրդով։ Քաղաքցիք կանգներ են անհոգ և ուրախ կը զրուցեն, կը ծխեն, ապրանքներ և մթերքները աչքէ կ'անցուցեն, վեր վար կ'ընեն, թանգ էժանի մասին կը մտածեն։ Ոմանք կապոցներ ունին ձեռքերնին, ուրիշները խուրջին ձգած թևերնուն կը սպասեն, որ իրենց ուզած մթերքները հասնին։ Ուրիշ տեղ մը կայներ են գիւղացիք. շալշապիկ լայն շալվարը, սպիտակ քօղօղն ու ուրշիկը, կը զարդարեն անոնց բարեձև մարմինները։ Ապա գեղջկուհիները, զարուն-զարդարուն հագուստ են և գլուխնին ծածկող սպիտակ լաչակի ծայրերով ծածկե՞ն քիթ-բերանները, որ այր մարդիկ չը տեսնեն ու չը լսեն

անոնց ծիծաղն ու խօսքերը։ Հայ գեղջուկ նահապետական կնոջ ամօթխածութիւնը կը փայլի այդ դէմքերու վրայ։

Ո՜րքան գեղեցիկ է այս ազնաւաճառի տեսարանը։ Այստեղ դիզերը են դեղին ու կանանչ կլօրներ (սեխ), այնտեղ հասուն ու նրբակեղև ձմերուկները, քիչ անդին իրարու վրայ դիզուած են պարկերը, որոնց մէջ անուշ բոյր կ'արձակեն Արտամետի խնձորները։ Ծիրանի չիր, կարմիր աղով պանիր, տիկերով իւղ և ուրբ (դօշաբ), մեղր և չոր սեր, բանջարով ժաժիկ, ցորեն և գարի շարուած են կողք-կողքի։

Գեղջուկ կանայք բերեր կը ծախեն չորացած Սիվտկու բանջար, սուխուկ, եղրեճա, զանազան համեղ բուսեղէնները և ընդեղէնները։ Քիչ մ' անդին քիւրդերը այծ ու ոչխար, եզ և ձի կը ծախեն, մեծ աղմուկ կայ ծախողներու և գնողներու միջև. իրար կը համոզեն, կը շողոքորթեն, հազար երդում մէկ փարայ, վայ հաւատացողին, վայ խաբուողին. Այստեղ կուտակեր են հոդաշէն կանաչիկները, ամէն ձևի, ամէն տեսակ, սիրուն և նրբաճաշակ։ Դիւղացիք սայլերու վրայ բարձած բերեր են փըթիր ու տաուք, վառելափայտ։ Խեղճ էշերը յոգներ են պեսուրի, ֆակոուի, ցաճի, յարդի և չրափիկի բեռներուն տակ։

Տեղ մը կը վիճեն, ուրիշ տեղ մը կ'աղմկեն, բարձր ձայնով իրենց ապրանքները կը գովեն. Ծեծն ու կռիւը անպակաս են։ Ամբողջ հրապարակը անասելի ժխորով լեցուած է։

Ճանկարծ հրապարակի մէկ ծայրէն կը բարձրանայ զուռնայի ծանր ու հաճելի ձայնը, որուն քիչ յետոյ կ'ընկերանայ նաղարայի դրմփոցը։—Ի՞նչ կայ — կը հարցնէ բարեկամս — Օ՜, հիմայ փահլէվան կը խաղայ, այս կողմը երթանք։

Եւ ահա փահլէվանի ճոպան լարը կը բարձրանայ դիրաֆներու (գերան) վրայ և քիչ յետոյ ալ կապոյտ շալվար և կարմիր շապիկը հագին, հազար ու մի գոյնզգոյն կտորներով, ուլնիկներով, շրխկոցներով զարդերը կուրծքի, մէջքի և ուսերու վրայ, կուգայ փահլէվանը, երկար ձողը—Ճանկլի Դիւան փայտը—երկու ձեռքերով բռնած, նազով ու շօրօրով կը բարձրանայ լարի վրայ, կը խաչակնքէ և յանկարծ ուժգին ձայնով կը կանչէ.

— Եա՛ Մշու Սուլթան Ճանկլի Դիւան, Մուրատատու Սուրբ Կարապետ, դու օգնակի՛ն, պահապա՛ն կանգնես։

— Ամէն, ամէն, կ'աղաղակէ ամբոխը վարչէն, մինչ նաղարա-զուռնան բարձր ու գիլ կը նուագեն «Մշու խրոն»-ի քաղցր ու թեթև եղանակը և փահլէվանը լարի վրայ կը խաղայ համարձակ ու ներդաշնակ։

Կէսօրը կը կոտրուի, տօնավաճառը և փահլէվանի խաղը կը վերջանան և կը պարպուի հրապարակը, ուր կը մնան միայն, հրկարահասակ, լայնաթիկունք, ուրախ և անհոգ, «կռտաճ կրծող Ասարբցիք» *)։

Ալ ինչու կայներ ենք, երթանք մեր տունը ճաշենք, հանգստանանք և յետոյ շարունակենք մեր պտոյտը Այգեստանի մէջ։ Արարուց հրապարակի հիւսիսակողմէն յառաջանալով կը մտնենք մեր թաղը, իմ անմեղ մեղաւոր մանկութեան այդ սուրբ օրօրանը։

Հասեր ենք Սանդի փողոցի գլուխը, ուր հաստատուած քարափոր քառակուսի սանդի մէջ կորկոտ կը ծեծեն։ Մարդ մը դրնկը ձեռքին կը վերցնէ վեր և «սը՛, սը՛» ձայնելով կորկոտ կը ծեծէ։ Կորկոտի տէր կինն ալ, սանդի մօտ կայներ առչկաճ կը մանէ, աչքը կորկոտին վրայ պահելով։

Ահա Ալխասենց տունը, որու փողոցին դրան առջև Մուղսի Մարտիրոսը գիւղական մեծ սայլեր կը շինէ, իր եղբայրներու և աշկերտներու հետ։ Քիչ մ' անդին Զալչի Բաղսարի տունն է, ուրկից մաֆիւֆի շրխկոցներ և երգի ձայներ կուգան։ Քանի մը քայլ այս կողմ Սինամահաւքոնց (Սիրամարգենց) կտաւի գործանոցն է, ուր 14 խորերու առջև նստած վարպետներն ու խալիճաները (օգնականը) կտաւ կը գործեն, իսկ դազգեաններու մօտ և ճախրակներու առջև նստած փոքրահասակ աշկերտները մասուռ կը լեցնեն։ Մաքիւքները անտեսանելի արագութեամբ կ'երթևեկեն վարպետներու ձեռքերուն մէջ։ Թրխկոց, շրխկոց, և բարձր ձայներ, երգ և ծիծաղ իրար կը խառնուին և հաճելի մեղնոլորտ մը կը ստեղծեն մեր շուրջ։ Կը յառաջանանք, ու կանգ կ'առնենք Կապուտկանց տան առջև։ Ներսէն խուլ դրմփոցի ձայներ կուգան։ Կապուտկանց Օղլար Մուղսի Արթեն Աղան է, որ կաշի կը ծեծէ և կարմիր սօլեր ու ու կաթրներ կը կարէ։ Կապուտկանց Մուղսիի նախկին աշկերտը՝ Մուղսի Ավանէսենց Սիմոնն ալ սօլկար է և անդադար կաշի կը

*) Այսինքն տաւարի մէս ուտողներ։—

ծեծէ, իսկ իր կին Մարգրիտ Խաթուն և երկու տղաներն ալ ա-րագութեամբ կօշիկ կը կարեն։

Եւ վերջապէս ահա մեր տունը, իմ պապի պապերու և անոնց Թոռան Թոռներու այս նուիրական և պարզ ու խոնարհ հողաշէն տունը, որուն դուռը կը բացուի Նեղի Փողնի (նեղ փողոցի) վրայ։ Ներս կը մտնենք, ահա մեր դրսի բակը, ահա մեր փոքրիկ այգին իւր ծառերով ու ծաղկալից ածուներով, որոնց վրայ հովանի կ'ընէ հացի ծառը իւր տարածուած և տերևախիտ ճիւղերով։

Կը մտնենք մեր տան բակը, որուն երեսբացի տակ փռուած է գոյնզգոյն մաքուր կապերտը՝ բակմոցները վրան շարուած և բարձերն ալ պատին յենուած։ Որքան հանգստաւէտ է այստեղ, որքան անուշ ու յիշատակալից է մեր այս պապենական հայրենի տունը, որ ո՛վ գիտէ, ո՛վ շինած է։ Սակայն գիտենք որ պապս, հայրս, իր քոյրերն ու եղբայրները և վերջապէս մենք—մէկ քոյր և հինգ եղբայրներ, այս յարկին տակ ծնած, սնած և կեանք առած ենք։ Ահա մեր Տաճտուցը, թոնիրի ծուխով օծուած, սև պատերով, սև-սպիտ առաստաղով և փոքրիկ լուսամուտներով, որոնք թոնիրներու ծխնելոյզներն են։ Ա՛խ, այդ թոնիրները, հայկական այդ սուրբ օճախները՝ ամառ ձմեռ մշտավառ, մեր պաշտելի ծննդավայրը։

Քոյրս կը դնէ հացի կլոր սեղանը, որուն բոլորտիք շարէ շար կը շարուենք ծալապատիկ։ Մայրս կը բերէ թէժ կրակի վրայ եփուած Վանի տառեխ ձուկը և ապա թթու խնձորով Կիմա կերակուրը, որուն համն ու բոյրը որքան անուշ են և ախորժելի։ Հապա թանապուրը—տաք տաք, թթուաշ և հաճելի։ Կ'ուտենք, կը կշտանանք։ Սեղանն անպակաս, տունը շէն մնայ, ձեռդ կանաչ կենայ մայր, հովանիդ մեր գլխէն անպակաս ըլլայ հայր, համբոյր ձեռքիդ, համբոյր ճակատիդ։ Համբոյր և ձեզ, քոյրս և կանդ ու կլուզ եղբայրներս, իմ մանկութեան և պատանեկութեան կաթոգին և սիրասուն հարազատներս։ Եւ դեռ որքան քաղցր ու անմոռաց յիշատակներ կան իմ մանկութիւնը յիշեցնող, սակայն ես ո՛ր մէկը յիշեմ։ Խաղատեղիները,—Փողնի գլուխ, առուի ափեր, այգիները, դաշտեր, խաղընկերները—Պետօն, Աշօն, Տիգրան, Աբրօն, Արամ, Վաղօն, որոնց հետ Ծնունդի Խթման գիշեր Ալէլուիա կընէինք. Տեառնդաջին ժամին մոմէն վառուած ճրագով՝ տունէ տուն, դռնէ դուռ ման

գալով ցախ ու փայտ կը հաւաքէինք և թաղին կեդրոնը կուտակելով Տէնդառաջի—Տրընդէզի խարոյկը կը վառէինք և նաղարա-զուռնայով խարոյկի բոլորտիք շուրջ պար կը բռնէինք։ Բարեկենդանը մօտենալուն պէս թաղի չարաճճիները դիմակաւոր կը դառնայինք, ալիւր ու մուր կը քսէինք երեսնիս և ինչ զուարճալի ժամեր կ'անցունէինք, երբ մանաւանդ թաղին հալիւորներու և պառաւներու պըտպըտոցներուն և անմեղ յանդիմանութեանց կ'արժանանայինք։ Մեծ պահքի առաջին օրն է։ Լուսաբացին կ'արթնանայի և մեծ գլուխ սոխի մը վրայ 7 հատ փետուր զարնելով տանտունի երդիքէն թելով մը վար կը կախէի, որ մեծ պահքը շուտ անցնէր։ Պահոց Միջինքը կը մօտենար, կ'երթայի Պատուրի փուռը, ուր մեծ Միջ-ճապիք*) մը շինել կ'ուտայի և արծաթ 40 փարանոց մըն ալ այդ պլիթին մէջ դնելով տուն կը բերէի։ Հայրս այդ պլիթը մասերու կը բաժնէր, անգամ իր պանդուխտ եղբօրն ալ բաժին կը հանէր։ Արծաթ դրամը որուն բաժնին մէջ որ ըլլար, անիկա ընտանիքի բախտաւորը կը համարուէր։

Եւ այսպէս որքան անուշ ու անմեղ յուշեր քաղցր ու անմոռաց օրեր—«Ո՛ մանկական, երանաւէտ օրեր և ժամեր այսօր ձեզ կը հանդիպիմ վերստին...» ու կըզգամ, որ օրօրոցս մեղմիկ օրօրով կը տարուբերուի, կը լսեմ մօրս մխլանուշ ձայնը, որ օրօր ու դարդար կ'երգէ, կը տեսնեմ մեր պարտէզի ծաղկալից ածուն, ուրկից ծաղիկները կը փնջեմ գոյնզգոյն, կը բարձրանամ մեր ծիրանի ծառը և ոսկեգոյն ծիրանը կ'ուտեմ անյագաբար, կ'երթամ փողոցը և ծառի շուքի տակ, առուի ափին նստելով ջրախաղեր կը սարքենք ընկերներով։ Ա՛խ, որքան երկար և անսպառ է շարքը այս անվերջ յուշերուն, այդ անհոգ ու երջանիկ օրերուն, որոնք սակայն՝ երազի նման անցան, գնացին, ալ յաւիտեան հետ չ'են դառնար։

Չաղլի փողոցի ծառուղիներու տակէն, գլգլան առուներու ափերն ի վեր յառաջանալով կը հասնինք Չաղլի աղբիւրի ջուրի զոյգ աւազաններու մօտ, որոնց ափին, ծառերու շուքին տակ կանայք նստած կար կը կարին, խիաճն իր խիճածը կ'ընէ, իսկ հալիւորները համրիչ քաշելով ու ծխելով հին օրերը կ'երազեն և նոր օրե-

*) Այսինքն Միջինքի հաց կամ դաթա, որը կրնանք նմանցնել Բախտ Կարկանդակին։

րուն վայ կուտան։ Կ'երթանք Միրավի Զագր (ուր հին տեհններ ջուրի կառավարիչը վրան խփեր նստեր է և այդ անունով ալ կը ճանչցուի այդ խոնարհ թաղը), որուն շարունակութիւնն է Փաշի Փողան, ուր հաւանաբար ժամանակին փաշա մ'ապրած է ուստի և փողոցը կոչուեր է Փաշի փողան, որուն կը միանան Ոսպնէպասենց թաղ, Նախրի փողան, և Ենի մահլէն, որ հնուց՝ ձիարշաւի դաշտ եղած է։

Եւ վերջապէս կը հասնինք Նորաշէն թաղամասը, որուն մէջտեղը կը բարձրանայ Ս. Աստուածածնի եկեղեցին, իւր բարձր ու սպիտակ գմբէթով։ Եկեղեցիին մօտիկ է նաև ծխական ազգային երկսեռ դպրոցը։ Այս թաղամասին մէջ կը գտնուին նաև երջանկայիշատակ բարերար Մկրտիչ Սանասարեանի հիմնել տուած աղջկանց յատուկ Սանդխտեան վարժարանը, Միացեալ Ընկերութեան Վանի Վարժապետանոցը, Ամերիկեան հաստատութիւնները ու դպրոցները և հիւպատոսարանները։ Նորաշէնի թաղամասը հարուստ, բարեկեցիկ և միջին դասակարգերու կեդրոնն է, ուր կ'ապրին «Խօջա, զանգին Նորաշէնցիք»։ Վանի Այգեստանի ղուտ հայաբնակ, հայնոց թաղամասն է Նորաշէնը, որուն Ս. Աստուածածին եկեղեցին նոր շինուած ըլլալով, թաղն ալ եկեղեցիի նոր շէնքի անունով Նորաշէն կոչուած է։ Նորաշէնի թաղամասը հարուստ է ծառախիտ այգիներով, առատ ջուրերով և հովասուն փողոցներով, որոնց երկու կողմերէն կ'երթան մշտահոս և գլգլան առուակներ։ Ամէն տուն՝ կամ այգի մ' ունի իր առջև, կամ այգիին մէջտեղը շինուած է և ծառերով շրջապատուած։ Այգիներ, անվերջ և անհատնում այգիներ, բարձր կամ ցած հողաշէն պատերով սահմանուած, իրար կպած, անտառանման տարածութեամբ, անել և անանց ճամբաներով, ոլորապտոյտ և գաղտնի ուղիներով։ Այս այգիները տասնեակ տարիներ Վան-Վասպուրականի իրար յաջորդող ազատատենչ և յեղափոխական Հայ երիտասարդութեան մարզավայրերն ու թաքստոցները եղած են, զինատար և հայդուկային խումբերու համար ապահով ճամբաներ և ապաստաններ։ Ամէն այգին իր պատմութիւնն ունի, կապուած այս ու այն յեղափոխական դէմքի կամ դէպքի հետ։ Վանի հինաւուրց Քաղաքամէջը նեղ կը յոխորտայ իւր բարձր բերդով, Այգեստանն ալ համեստութեամբ մէջտեղ կուգայ իւր լայն ու երկար փողոցներով, բազմաթիւ անուշ և մշտահոս աղբիւրներով և

առուներով, իւր օդասուն և վայելուչ տուներով և մանաւանդ կանաչաւէտ ու ծառազարդ այգիներով, որոնք բազմատեսակ պտղատու ծառեր ունին, խաղողի թուփեր, ծաղկանոցներ և դեռ որքա՜ն գեղեցիկ ու հաճելի վայրեր։

Ահա Աւօի Դարը, անուանի Աշօյի մէյխանով. ուր նստած անհոգ մարդիկ գինի կը խմեն և բերաններնը ճըփճըփացնելով մազան կուլ կուտան ու Սապոնջի սարխօշ Ծակօյի երգերը կը լսեն։ Հետեցէք ինձ, որ Աւօի Դարի կողմէն ձեզ տանեմ դէպի Սօլխու մէշէն (Սօլախեանենց Ծառնոց)։ Ուղղաձիգ բարդիները, խիտ առ խիտ, կողք կողքի կը բարձրանան, տերևախիտ գագաթներն իրար միացած կ՚ողջագուրուին և կարծես շինուած է առաստաղ մը, որուն մէջէն. տեղ տեղ բացուած արանքէն կապոյտ երկինքը կ՚երևի։ Նստեցէք այս ծառերու շուքին տակ և նայեցէք դէպի արևելք։ Վարագայ սարն է մեր դիմացը, որուն լանջերու վրայ բազմեր են Կարմրուրի Վանքն ու Շուշանց գիւղը, ուրկէ կը սկսկի երկար, միապաղաղ և զառի վար ընդարձակ դաշտավայր մը, ամբողջովին ցորենի և գարիի արտերով զարդարուած։ Ծառնոցէն քիչ մը վերը. դաշտի մէջէն կ՚երթայ Ուրբաթ Առուն, որուն ափերը, կիրակի օրեր. Այգեստանի Հայոց հասարակաց զբօսավայրը կը դառնան։ Երթանք Ուրբաթ Առուն. Խուռնեբամ երկսեռ հասարակութիւն կ՚երթևեկէ, ամեն կողմ երգ, նուագ, ուրախութիւն։ Այստեղ Կանոնջի Օհաննէսը, իր նուագածուներով Զուլօի երգը կ՚երգէ խումբ մը խօվարդաներու համար, որոնք իրար կենաց գինի կը խմեն և ուրախ բացականչութիւններով անցնող դարձողին իրենց մօտ կը հրաւիրեն։ Այնտեղ Կուշօի չալկին իր երգերով ու նուագով տաքցուցեր ու եռցուցեր է խումբ մը արհեստաւորներու քէֆը։ Աւելի հեռուն մեծ բազմութիւն մը խռնուեր է. զուռնաչի Գեալհօյի Մ՚իհրանը թշերուն զօռ տալով զուռնա կը փչէ, նաղարաչին կոպալն ու ճըպօտը օդի մէջ խաղցնելով դըմփ հա՜ դըմփ նաղարան կը կոպլէ, իսկ տաք գլուխ և ջանիման տղայ մըն ալ—Անիգէօն—շալ շալվար հագին, զոյգ թաշկինակը ձեռքին գինիի շիշը գօտին խրած և խանչալը կողքէն կախ՝ ձեռնախաղի ելեր է, կը խաղայ ու կը խաղայ։ Ամբոխին մէջէն, Անիգէօյի մէկ դարդիման ընկերը, յանկարծ կը պօռայ—Տղէյնե՛ր, ծա՛փ վարկէք, վով ծափ չը

զանի՝ մէր զանի, վով ծափ չը զանի՝ մէր զանի*)։ Մէկէն ի մէկ ծուփերը կ'որոտան, Անիգէօն կ'ոգևորուի, կը հպարտանայ և միշտ կը ջանայ աւելի շնորհալի պարել։ Նաղարաչիի ճակատին շապաշ կը կպցնեն։—«Ա՛յ շաբա՛շ շա՛շ... շէն կ'ենայ Թէոս Աղէն, շէն...»։ Եւ շարաշ կպցնողներու ծայրը կը փրթնի։

Թողունք Ուրքաթ Սուն և երթանք Մեծ Քեանդրչին, այն ա-ռատահոս աղբիւրը, որուն ակն սառն ջուրին մէջ քանի մը տեղ գինիի պոզիկներ և օղիի շիշեր դրած են իսկ ակն գլխին և երկու կողմերը նստեր են խումբ խումբ մարդիկ—նարդի կը խաղան, նար-դիլէ կը ծխեն, օղի անուշ կ'ընեն, կը կատակեն, կըփկըփալէն կը ծիծաղին, մինչ միւս կողմն ալ չալկին կը նուագէ յանձնարարուած եղանակները։

Մեծ Քեանդրչիէն կը բարձրանանք Թազա Քեահրէզի (Նոր Ադ-բիւր) թաղը, որ բարձր դիրքով օդասուն և հաճելի վայր մըն է. ասկէ քիչ մը վեր խաղողի ընդարձակ այգիներն են—Նորատունկ-ները—որոնց իւրաքանչիւրի մէջ տաղաւարներ և հնձաններ կան։

Այգեկութի ժամանակէ. Առաւօտեան շատ շուտ այգիի տիրոջ դրկիցները, ազգականները և բարեկամները կ'երթան այգին և թու-փերու մէջ լեցուելով կը կթեն (կը քաղեն) խաղողի կուռ ճութերը, որոնք կողովներով կը փոխադրուին տունն կամ հնձան։ Ճաշի ժա-մանակ բոլոր հրաւիրեալները կը շարուին կանաչ խոտերուն վրայ փռուած սփռոցին շուրջ և Տառեխ ձուկը կամ խորոված կը վայե-լեն խաղողի հետ։ Ճաշէն յետոյ աշխատանքը կը շարունակեն մինչև երեկոյ։ Եթէ պրծան յաւ, իսկ եթէ ոչ՝ միւս օրն ալ կուգան ու կը վերջացնեն այգեկութը։

Թազա-Քեահրէզէն կը վերադառնանք Մեծ Քեանդրչին, ասկէ կ'իջնենք Խամուրքեասան աղբիւրին գլուխը, ապա կը մտնենք Թոխ-մախենց փողոց, ուրկէ կը շրջուինք դէպի Բայլենց փողան և ապա կը հասնինք Նալբանդեան լայն ու երկար փողոցը, որ Արարուց հրապարակէն կ'երկարի մինչև Նաչ փողան (փողոց), ուր այժմ կանգներ ենք։

---

*) Ըսել կ'ուզէ, շրջապատողները պէտք է իրենց ծափերով քաջալերեն պարողը, իսկ եթէ տղամարդիկ այդքան բան չ'են ըներ, այն ատեն մայրերը սափրուած կ'ըլլան զաւակներու փոխարէն ծափ տալ և հոգնել, ինչ որ խղճի դէմ է և անյարմար։

Խաչ-Փողանի խաչաձև հրապարակին վրայ կանգներ ենք։ Արեւելքէն արեւմուտք— Սղգայ գիւղէն մինչև Վանի ծովափը— երկարող այս լայն ու երկար փողոցը, կը կոչուի Սղգայու Ջաղդէն (այսինքն Սղգա գիւղէն ծայը առնող պողոտան) որ Գեազկէ-փոսէն սկսեալ մինչև Հայկավանք և ծովափ, ամբողջ երկու ժամուայ ճանապարհ, սքանչելի ծառուղի մըն է, որուն երկու կողմերէն հոսող առուներու և աղբիւրներու ջրափերը զարդարուած են տասնեակ հազարաւոր բարդի և ուռի ծառերով։ Հարաւէն հիւսիս երկարաձգուած փողոցը ծայը կ'առնէ Արարուց հրապարակէն և կը վերջանայ Սկրփի կոչուած տաճկաբնակ թաղի մօտ, Ծանկոյսների գետի ափին։ Վան քաղաքը չորս մասի բաժնող այս երկու լայն և երկար փողոցները իրար կը խաչաձևեն կեդրոնական և բանուկ հրապարակի մը վրայ, որ Խաչ-փողան կը կոչուի։

Խաչ փողանէն դէպի արեւմուտք յառաջանալով, կը մտնենք Սուրբ Յակոբայ թաղամասը, որուն հետաւոր ու տաճկնոց փողոցին մէջ ով գիտէ քանի՛ տասնեակ տարիներէ ի վեր կը բարձրանայ յունուն Մծբնայ Սուրբ Յակոբ Հայրապետին կառուցուած փոքրիկ, գեղակերտ և սպիտակափայլ գմբէթով եկեղեցին, որուն բակին մէջ ծխական ազգային դպրոց մըն ալ կայ։ Այդ տաճկնոց թաղերուն մէջ Հայ տուները քիչ են, բնակիչներն ալ համեստ ու խոնարհ դասակարգի մարդիկ, որոնց համար ժողովուրդը կըսէ «Պըլիկ ժողվող Սուրբ Յակոբցիք»*), որոնք շրջապատուած գայլ-գազան մարդերով ախ ու վախով անցուցեր են իրենց օրերն ու տարիները։ Որքա՜ն արհաւիրք և արիւն, տեսեր ու տանջուեր են խեղճ Սուրբ Յակոբցիք, սակայն անոնք կառչած մնացեր են իրենց պապենական օճախներուն և չ'են բաժանուած անոնցմէ։ Այս թաղամասին մէջ, երբեմն նշանաւոր էին Գոսպարենց, Թաշճեանենց, Կոլոտենց, Զրուանդանցոց, Ոսկիբակցոնց, Աղաբաբենց, Թուրշոնց, Տէրտրանց հայլն տուներ իրենց աղաներով և խաթուններով։ Դինօճենց նեղ փողոցէն անցած ատեննիս տունի մը խորքէն երգի ձայները կը լսենք։ Ծանօթէ մեզ այս տունը՝ ներս մտնենք և երթանք տանտուն, ուր ոտները թոնիրին մէջ կախած և կռնակը պատին յենած նստած է

*) Պըլիկը տաճկական 10 փարանոցի 10-երրորդ մասն էր։ Ներկայ հաշուով շատ աննշան, անգամ անարժէք է այդ պըլիկը։

Դինօճնց Հաջի Մարտիրոսը— մեր Հաջի Ալիպէրը— և ձեռքն ականջին դրած հաստ ու ահաւոր ձայնով մը երգեր կ'երգէ, զուարճացընելով տուննեցիներն ու անկոչ հիւրերը, պատմելով իւր կեանքի այնքան ծիծաղաբեր արկածները, որոնք վանէն ծայր կ'առնուն, կ'երթան Կովկաս, Կ. Պոլիս, Եգիպտոս, Երուսաղէմ, Պարսկաստան ու նորէն կը դառնան Վան, ուր օր մը մեր Հաջին, փողոցէն անցած ատեն հանդիպած է ժամ գացող երկու կանանց, որոնք անոր մեծ ու երկար քիթը տեսնելով զարմացեր ու կանգներ են, մինչ Հաջին իսկոյն իւր քիթին ծայրը թեքելով ըսած է— «Խաթուններ մի վախենաք, քիթս ձեզ շուռ չի տար, եկէք անցէք»։

Սուրբ Յակոբայ Թաղամասէն դուրս գալով շուռ կուգանք դէպի Բաղնիսի Դուռը, որուն առջև լայն փողոցը հրապարակի մը ձև ստացեր է։ Ասկէ կը բարձրանանք վերը և ահա նորէն կանգներ ենք Խաչ-Փողանի հրապարակի վրայ, ուր կան խանութներ, սրճարաններ, կազինօներ, ծառերու հովերուն տակ ու ջրափերուն հաստատուած պտղավաճառներ ևայլն։

Ո՛րքան գեղեցիկ է այստեղի տեսարանը։ Սրճարանի մը դրան առջև չալկին կը նուագուի։ Ծառերու շուքին տակ նստած յաճախորդները նարդի կը խաղան, նարգիլէ կը ծխեն ու կը զուարճանան։ Այստեղ Դհէրցի Զաքօն ամենաընտիր պտուղներ կը վաճառէ և իր խռպոտ ձայնով յաճախորդներ կը հրաւիրէ։

Առուներու ափին նստեր են ծերերը և համրիչ քաշելով քաղցը անուշ կը զբուցեն։ Պատերու տակէն ամօթխած ու համեստ տեսքով հայ կանայք կ'երթան կուգան՝ զարուն-զարդարուն իրենց տեղական տարազներով գոյնզգոյն։ Հասակաւոր կանայք ընտիր կարմիր կերպասէ երկար շապիկ հագեր են և ծանր-ծանր կ'երթան։ Ջահել կիները, սպիտակ, միակտուր ծածկոցի մը— Մըխմէլի— տակէն միայն իրենց դէմքը կը ցուցնեն, իսկ հարսերն ու աղջիկները մետաքսեայ ծոպաւոր քող մը— Մէտակ— ձգեր են իրենց գլուխներու վրայ և ծածկեր են իրենց դէմքը, բաց թողնելով աչքերը։

Ո՛ւր կ'երթան այս խաթուններն ու հարս և աղջիկները։ Ժամ կ'երթան, հիւր կ'երթան, խնդրակն ալ առջևէն կ'առաջնորդէ զանոնք։ Բարով երթան, բարով գան։

Խաչ-Փողանի հրապարակէն կըսկսինք բարձրանալ դէպի

Սրդգայու Ջաղդէճ, դէպի վեր։ Ահա Խամուր-Քեասան (խմոր կտրող) աղբիւրը, որուն ական վրայ պուպուզելով կուշ մ'երկու սառ ջուր կը խմենք և ծառերու շուքին տակէն ու առուներու ափերն ի վեր յառաջանալով կանգ կ'առնենք Թոխմախենց փողոցի գլուխը և դէպի հարաւ նայելով կը տեսնենք «Երամեան Միջնակարգ Դպրոց»ը, որուն հիմնադիրը 11 տարեկանէն աշազուրկ դարձած, իսկ այժմ պատկառելի, արդիւնաւոր և վաստակաբեկ կրթական գործիչ մըն է, նոյն ինքն Համբարձում Երամեանը, որ երկու աչքով լուսազուրկ վիճակով, և իր տոկուն, յամառ ու յարատև կամքով, ամբողջ 37 տարի կրցաւ իւր դպրոցը պահել և հետզհետէ զարգացնել արդիական և մանկավարժական նորութիւններով։

Առանց յուզումի, առանց արցունքի կրնամ հետանալ Վան-Վասպուրականի այս էն առաջնակարգ Հայ կրթական լուսոյ տաճարի առջևէն։ Ո՛, ոչ, այդ անկարելի է, չէ որ այդ դպրոցին մէջ սերունդներ դաստիարակուած են, զուտ ազգային ու հայկական ոգով, չէ որ այդ նոյն դպրոցի սուրբ յարկին տակ ես ստացայ իմ միջնակարգ ուսումն ու դաստիարակութիւնը, հապա ուրեմն ներս մըտնեմ, համբուրեմ դպրոցի շէմքը և երթամ տեսնեմ մեր ծերունազարդ ուսուցչապետը—Պարոն Համբարձումը—որ դեղին-քեաբրաբ համբիչը ձեռքին բռնած, դպրոցի հարաւակողմի պատին տակ մէնմենակ լուռ և մտախոհ կ'երթևեկէ, կը խոկայ իր ներքնաշխարհին մէջ, ամփոփուած ինքն իր մէջ։ Ա՜խ, որպիսի՛ վիշտ և թախիծ կայ անոր դէմքին վրայ, իսկ կնճիռները և տխրութեան մշուշը պատեր անոր ճակատը։ Չէ որ աչքերը չեն տեսներ, այս լոյս աշխարհը անոր համար մութ ու խաւար է։ Ողջոյն քեզ զարկուած ու զրկուած իմ Մեծ Ուսուցիչ, Վանի կրթական աբշալոյսի անխոնջ և արդիւնաւոր մշակ, որ այդ աչազուրկ վիճակովդ կրցար բարձր ու հպարտ պահել Հայ դպրոցի կոչումն ու պատիւը։ Ինձ ինչ կը մնայ հեթէ ոչ երկիւղածութեամբ և խորին երախտագիտութեամբ համբուրեմ ճակատդ ու ձեռքդ և մեր պաշտելի դպրոցի անմոռաց յուշ-յիշատակներով օրօրուն, հրաժեշտ տամ քեզ ու շարունակեմ ճամբաս։

Ահա Պատիկ-Քեանդրչին՝ պաղ աղբիւր մը, որուն ական գլուխը զարդարուած է բարդի և ուռի բազմաթիւ ծառերով։ Հովը կը փչէ մեղմիկ և ծառերու տերևներու սօսափիւնը խառնուելով աղբիւրի

գլգլան ջրաձայներու հետ մարդուս սիրտն ու հոգին կը պարուրեն։ Մեկնինք այն անմեկնելի վայրէն, այն պիտի մեկնինք դէպի վեր և կանգ առնենք Հայկազեան Կեդրոնական Դպրոցի առջև, որուն երկյարկանի ընդարձակ շէնքի բազմաթիւ դասարանները լեցուած են ծխական դպրոցներէն եկած աշակերտներով։

Ահա և Պողպատի-Դարը, որ Այգեստանի ամենագեղեցիկ վայրերէն մէկն է, իր բարձր դիրքով, ծառուղիներով և երկու կողմերէն մշտապէս հոսող սառն ու վճիտ աղբիւրներու առուներով։ Նստենք այս առուներու ափին հանգստանանք և քիչ մը քննենք Այգեստանի մօտաւոր անցեալն իր դէպքերով, որոնք շարժանկարի նման արագօրէն կ'անցնին մեր աչքի առջևէն ու կ'երթան պատմութեան գրկին մէջ թաղուելու։

Հայկական ազատագրական շարժումները դուր չ'են գար կասկածամիտ և հայակեր Հիւանդ Մարդուն—Սուլթան Համիտին, որ կը հրամայէ իր զօրքին ու խուժանին բնաջնջել Տաճկահայաստանի ներքին գաւառներու Հայութիւնը։ Այդ ահաւոր մահահրամանը կը կատարուի ամենուրեք։ Հերթը Վանին է. և ահա ինչ—«Հազար ութ հարիւր ինսուն վեց թուին, սև երկուշաբթի ճունիս երեքին» Վանի թուրք իշխանաւորներն ու բաշիբոզուկ խուժանը ոտքի կ'ելլեն Հայութիւնը բնաջնջելու համար։ Սակայն Վանի Հայութիւնը նախատեսած էր այդ ահաւոր և մահահոտ վտանգը, ուստի և երբ տաճկական թնդանօթներն ու հրացանները կրակ ու գնդակ տեղալ սկսան Հայոց թաղերու վրայ, այդ նոյն Հայութիւնը, իր ռազմունակ զաւակներով ի յայտ եկաւ և իր մէջն ունենալով անմահ Պետօի, Աւետիսեանի և Մարտիկի նման զեկավարներ, շաբաթ մ' ամբողջ կրցաւ զէնքով դիմադրել և փրկել իր կեանքը՝ թրքական եաթաղանէն, սակայն, աւա՜ղ, ով կրնար գուշակել թէ այս փառաւոր ազատամարտէն յետոյ, օտարներու ստոր միջամտութեամբ քաղաքէն հեռացող ութն հարիւր ծաղիկ և կտրիճ երիտասարդներն երբ պարսկա-տաճկական սահմանագլուխը կը հասնին, դաւադիր թշնամին կը պաշարէ զանոնք և անխնայ կը կոտորէ։ Ա՜հ, այդ նահատակներու նշխարները ցանած-ցրուած կը մնան Աղբակի լեռներու և Ս. Բարդուղիմէոսի վանքի քարքարուտներու մէջ։

Այս ահաւոր ու արիւնալի դէպքերէն քսան տարի յետոյ, Հայ

արեան ծարաւի տաճիկը նորէն կը կրկնէ պատմութիւնը։ Այս անգամ Իթթիհատի բորենիները հրապարակ կուգան և կ'որոշեն բնաջնջել Տաճկահայաստանի բովանդակ Հայութիւնը, Վան-Վասպուրականէն սկսելով այդ արիւնոտ ծրագրի գործադրութիւնը։ Սակայն Հայութիւնը պատրաստ է և զէնք ձեռին, «մահ կամ ազատութիւն» խօսքը շրթունքին կեցեր է գալիք վտանգին դիմադրելու համար։

Գարուն է—1915 Ապրիլ 7/20—Աւետման տօնին, երեքշաբթի արշալոյսին, արևն իր ծիրանի շողերը փռեր էր Վանի Այգեստանի ծառերու վրայ, երբ յանկարծ Տուշանց գիւղի դաշտի մէջէն, տաճիկ զինուորները հրացաններու զարհուրելի համազարկով մը կռւի ապղանշանը տուին։ Մէկ րոպէի մէջ բովանդակ Այգեստանը թնդանօթներու, գնդացիրներու և հրացաններու որոտումներով լեցուեցաւ։

Հայութիւնը գետնափոր խրամներու մէջ, հողէ պատերու ետև, խարխուլ տուներու ներսն ու դուրսը, փողոցներու մէջ, և վերջապէս ամէն տեղ իրեն կռուատեղ, դիրք, ապաստան ընտրեց և կռուողներն անձնուիրաբար գործի անցան։ Թշնամին յարձակողականի կը դիմէ, նպատակ ունենալով Հայոց դիրքերէն ներխուժել ու արեան բաղնիքները սարքել։ Հայերը ինքնապաշտպանութեան համար հերոսաբար կը դիմադրեն թշնամիի գրոհներուն։ Փիւրդ հրոսախումբեր և տաճիկ խուժանը թալանի և արիւնի ախորժակով զրգռուած եկեր են Նալբանդ Ջավդաթ փաշային օգնութեան։ Կռուի առաջին օրերն են։ Ջավդաթը դեռ գոհ է և յոյս ունի որ քանի մ' օր յետոյ պիտի կրնայ ճնշել ու բնաջնջել Հայութիւնը, ուստի և անհոգ է, կը յոխորտայ թէ—«Իշըմ եօք, քէյֆըմ չօք», (գործ չ'ունիմ, քէյֆս շատ է)։ Մինս կողմէ Հայութիւնը հիանալի կազմակերպութեամբ մը կը դիմադրէ թշնամիի յարձակումներուն։ Այգեստանը բաժաներ են քանի մը զինուորական Շրջանների, որոնցմէ իւրաքանչիւրն ունի իւր Շրջանապետը։ Ամէն շրջանի մէջ Հայերն ունին տասնեակ մը դիրքեր և ինքնապաշտպանութեան վայրեր, որոնց մէջ գիշեր ցերեկ անքուն և անհանգիստ, կեցեր են ու կը կռուին Վանի Հայերը՝ երիտասարդ թէ ծեր, աղքատ թէ հարուստ, առանց կուսակցական խտրութեան, վասն զի թշնամին այդ խտիրը չէր պիտի դնէ եթէ յաղթելու ըլլայ։ Ամէն մարդ—կիներն ու մանուկներն անգամ—աշխատանքի լծուած են։ Պարապ մարդ չէր կայ, ամէն ոք պիտի

գործէ իւր անձի և ընտանիքի փրկութեան համար, անգործ մնալն ամօթէ, գիշերը ցերեկին խառնել, քունն ու հանգիստը մոռնալ, գերադոյն ջանքեր թափել, աշխատիլ, կռուողներուն հաց, սնունդ, հագուստ, փամփուշտ, վառելիք, ծխախոտ հայթայթել, քանդուած դիրքերը վերաշինել, խախուտ պատերն ամրացնել, գետնի տակ խորերը (լաղմեր) և ականներ փորել, մօտենալ թշնամիի դիրքերուն կրակ տալ, հրդեհել և փախչիլ, վիրաւորները բժշկել, սպանուածները թաղել, գիւղերէն Այգեստան թափուած կիսամերկ և սովալլուկ գաղթականները կերակրել, թշնամիի դիրքերուն մօտենալ ռումբ նետել, և վերջապէս Զինուորական Մարմնի բոլոր հրահանգներն ու հրամանները անթերի կատարել։ Եւ որոնք են այս բոլոր գործեր կատարողները—ամբողջ Այգեստանի Հայութիւնը—80 տարեկան ծերերէն սկսեալ մինչև 10 տարեկան մանուկները՝ երկու սեռէն անխտիր։

Հունձի գիշեր է։ Կրակն ու գնդակը կը տեղան հեղեղի նման, իսկ այստեղ հասակաւոր մարդ մը, որմնադիր Ուսթա Սահակը փողոցի մը դիմաց պատ կը շարէ, կանայք աղիւս և շաղախ կուտան իսկ վարպետը կը շարէ։ Ահա վազէ վազ, հև ի հև կ'երթայ 12 տարեկան աշխոյժ տղայ մը։ Ծուրահանդակ է, կրակի նման կը սուրայ —Ո՞վ է, կը լսուի պահակ զինուորի ձայնը։—Կռա՞կ... կը պատասխանէ տղան, յայտնելով գիշերուայ գաղտնի անունը և կ'անհետանայ։ Այս տանտունէն ծուխ կը բարձրանայ. ներս կը մտնենք. ինչ յուզիչ տեսարան, 12 պառաւ կանայք ի մի հաւաքուեր են խմոր կ'ընեն և հաց կը թխեն իրենց կռուող զաւակներուն համար։ Անոնց դէմքերու վրայ տխրութիւն չը կայ, այլ մայրական սքանչելի յուզում և զաւակներու սիրոյ զգացումը կը շողայ այդ ցամքած այտերու վրայ և ծուխէն կարմրած աչքերու մէջ, ուր յոյսի և ազատ օրերու հուր մը կը վառուի անշէջ։ Քիչ մ' անդին, մուրճի ձայները կը լսուին. ներս կը մտնենք, դարբիններն են, որոնք քլունգ, բահ, բրիչ, երկաթեայ շիշեր, կռեր, և օղեր կը շինեն հազար ու մէկ պէտքերու համար։ Անոնց կողքին հիւսներն են, ուրիշ տան մը մէջ ճրագի աղօտ լոյսերու տակ կանայք և հարսներ նստած կռուողներու համար հագուստ կը կարեն, իսկ քիչ անդին երկու պառաւ կանայք կ'աղօթեն Հայոց ղէնքի յաջողութեան համար և անգամ կը մրմնջեն «Ձէր Ողորմեան»—«Արի Աստուած, հարցն մերոց, որ ա-

պաւէնդ ես նեղելոց, լեր օգնական Ազգիս Հայոց...»։ Սենեակին մէկ անկիւնը կուչ եկած ծերուկ մըն ալ յանկարծ կը սթափուի ու ձեռամբարձ կը բացականչէ—«Ո՛վ Նարեկացի, փրկեա զմեզ ի փորձանաց. եա՛ Մշու Օուլթան Օուրբ Կարապետ, դու օգնական կանգնես Հայ քրիստոնէից...»։ Օուրբ բերաններ, սուրբ սիրտեր, սուրբ մաղթանքներ—«Ձայն հառաչանաց հեծութեան սրտի...»։«Ձէր, փրկես, ազատ անես անօրէնի շառէն, մեր ծէթիկիկ (փոքրիկ) ձագերաց ձէնիկ դառնաս, դիւշմանի ուզածը չ'անես, աչքդ մեր վրէն պախես, մեր Ջանկայ-Ջահէլ, ծաղիկ Ջիւան տղէյներաց ուժ-կարողութիւն տաս, ով արարածոց քաղցրիկ Արարիչ, Հայ քրիստոնէի ձէն դառնաս»։ Կրնաս պահել յուզմունքդ և արցունքդ, երբ ծերուկ սրտեր ու դողդողջ շրթունքներն այս բնաշխարհիկ մաղթանքներով Արարչին և սուրբերուն կը դիմեն և անոնց օգնութիւնը կը հայցեն կռուողներուն համար։

Ձէ որ ժողովուրդի մը հոգեկան յոյսն ու հաւատքը երբ բազուկի և զէնքի ուժին կը միանան կրնան հրաշքներ գործել։

Մտնենք այս տունը, ուր Վանի Հայութեան Ապրիլեան հերոսամարտի գերագոյն ղեկավար Զինուորական Մարմինը լարուած միքենայի նման կը գործէ, րոպէ առ րոպէ հրահանգ ու հրաման կուտայ. տաս-տաս կուգան մէկ-մէկ կ'երթան, իւրաքանչիւրն իր շրջանէն լուր բերած է, հրահանգ կ'ուզէ, պահանջ մ'ունի և վերջապէս հազար տեսակ գործեր կան և բոլորն ալ կարգով ու սիրով կը կատարուին. երթանք վառօդի և փամփուշտի պատրաստութեան գործարանները, որոնց ծանր օդին մէջ տասնեակ ղէմքեր լուռ և մտախոհ կ'աշխատին: Ապա Հայթայթիչ Մարմինը, որուն անդամները արիւն քրտինք մտած՝ ուտելիք, խմելիք և ամէն տեսակ անհրաժեշտ իրեր կ'ուղարկեն կռուողներուն, հապա Ազքատախնամը, որուն դռներուն առջև հազարաւորներ թափած՝ «խա՜ց, խա՜ց...» կ'աղաղակեն, հապա Դատարան, Քաղաքապետարան, Առողջապահական Մարմին և դեռ քանի՛ քանի՛ տեսակ նման կենսական մարմիններ, որոնք ստեղծուեցան այս կռուի օրերուն և Այգեստանին տուին տեսակ մը փոքրիկ ազատ եւ անկախ հայկական իշխանութեան օրինակելի պատկեր մը, իր բոլոր մանրամասնութիւններով. Ահա եկաւ Լուսաւորիչը 70 տարեկան միջահասակ ծերուկ մը, նիհար

դէմքով, առոյգ քայլերով, կեռ սուր մը կողքէն կախած, հաստ փայտ մըն ալ ձեռքին բռնած, գիւղացիներու բազմութիւն մը կ'առաջնորդէ դէպի տեղ մը, ուր անոնք պիտի խրամները փորեն։ Լուսաւորիչը ուրախ է, կը պոռայ, գիւղացիք իրենց այս «քաջ հրամանատար»ի հրամանները կը կատարեն, և ով կրնայ չը կատարել Լուսաւորչի հրամանը, մէկ ալ տեսար շրաֆ, ձեռքի մահակն իջաւ ուսին կամ մէջքին անոր՝ որ անհնազանդ կը գտնուի։

Կրնանք մեր հիացումը չը յայտնել այս Ամերկուհիին, որ 4 շիշ կաթ դրեր է զամբիւղի մը մէջ և փողոցները շրջելով գեղջուկ ու գաղթական փոքրիկներուն կաթ կը բաժնէ և կը գուրգուրայ անոնց վրայ։

—Ձանապարհ... կը կանչէ ձայն մը և ահա հեռուէն կը բերեն պատգարակի վրայ դրուած վիրաւոր մը, որ վէրքի ցաւէն մեղմ ձայնով կը մղկտայ։—«Ո՞վ է էդ եարալուն»—կը հարցնեն հարիւրաւոր բերանները։ Սակայն միթէ Կարմիր Խաչին ենթակայ այս վիրաւոր փոխադրողները կրնան յայտնել թէ ով է, չէ որ անոնց պատուիրուած է վիրաւորի անունը ոչ ոքի չըսել, մինչև որ հասցնեն Ամերիկեան հիւանդանոցը։ Երթանք Հայոց դիրքերն ու ինքնապաշտպանութեան պատնէշները տեսնենք։ Ահա «Դարդանէլ» դիրքը, Հաջի-Բաքըրի տաճկական զօրանոցին դէմ, ուրկից թնդանօթները կրակ ու երկաթ կը թափեն քուռ մը քաջերու գլխին, սակայն անոնք հողէ պատերու ետև նստած, հատ-հատ կը կրակեն միայն։ Ահա «Դավա-Բօյուն» դիրքը, ուր կռուողները երգով ու ծիծաղով կ'անցունեն իրենց ժամերը։ Հաջի Մարխաս, Սօլխու Մէշէն, Խաք-Բարսեղ, Հիւսեան, Դրբաղ Խէրօ, Դալի Բաթման, Խաց Խամրող, Քրէշցի, Զանթիկ, Տէր-Խաչատուր, Մադօ, Շիրօ, Դօղօ, Բալաք, Ծժիկ, Զրչօ, Շահպանդար, Զանօ, Ղազօ, Խրիմեան, Շմաւոն, Վրզ-վրզ, Զրուանդանցոց, Օթէլ, Մարտիկ, Նալբանդեան, Պարիկեան, Մաքսապետեան, Տէր-Թովմաս, Սահակ-Բէյ, Զաչալ-Միրզա, Փօլիս Աբօ, Փիրումեան, Շարչի Բաղդիկ, Ֆարկուզատ, Աշօ, Պատուրի փուռ, Դրհէրցի Նէրսօ, Նախկուբ, Մանդարուռ, Դրհէրցի Սարգիս և Կում-Գալէ՝ գլխաւոր դիրքեր և կռուատեղիները, որոնց մէջ ամբացած Վանի Հայերը կրցան ամբողջ մէկ ամիս հերոսաբար դիմադրել տասնեակ հազարաւոր թշնամիներու գրոհներուն։ Այս դիր-

քերէն իւրաքանչիւրն ունի իւր հերոսապատումը, իւր դիւցազնական դրուագները, որոնց հեղինակները ժողովուրդի հարիւստ ու խոնարհ զաւակներն են. Յիշենք Արամ Բօռուզանջեանը. Հերոսաբար կռուելու ատեն Թշնամի Թնդանօթի պայթուցիկ ռումբ մը պատառ պատառ ըրաւ այդ քաջ երիտասարդի մարմինը։ Յիշենք Շահպանդարի դիրքը պահողներու հերոսական և օրհասական ճիգերը։ Հիացումի ինչ խօսքեր ուղղենք այն հերոսներուն, որոնք հայկական Թաղամասի կուրծքի մէջ բոյն դրած Համուդ-Աղենց նշանաւոր զօրանոցը ռումբերով օդ հանեցին և մոխրակոյտի վերածեցին։ Կրնանք մոռնալ Տիգրան Վարժապետը, որ Արարուց հրապարակի վրայի տաճկական ոստիկանատունը հրդեհեց և գնդակներու տարափին մէջէն ողջ-առողջ եկաւ՝ «Մեր հայրենիք»ը երգելով բարձր ու յաղթական։ Ի՞նչ ըսենք այն սև-սեաւոր Սևօ աղջկան համար, որ Թշնամիի դիակներու վրայէն զէնքեր բերաւ օրը ցերեկով և գնդակ մ'անգամ անոր փէշը չը ծակեց։ Տասնեակներով փոքրիկ սուրահանդակները աւետարեր ծիծեռնակներու նման դիրքէ դիրք կը թռչէին համբաւ ու լուր տանելով։ Հապա Թուրքիկ-օգնական խումբերը, որոնք միշտ պատրաստ էին այս ու այն դիրքին օգնութեան երթալու։ Հապա քանքաններըՙ այդ խեղճ ու կրակ մարդիկ, որոնք ամբողջ 30 օր արևի երես չը տեսան, այլ միշտ զբաղուեցան ականներ փորելով, և Թշնամիի դիրքերը վտանգելով։ Հապա անվեհեր հրձիգները, ռմբաձիգները, անձնուէր խմբապետներ, զինուորներ, զինարանի կառավարիչներ, վարպետներ, դեկավարներ, և վերջապէս Վանի Վարժապետանոցի հռչակաւոր նուագախումբը (Ֆանֆառ) որուն նուագած մարտական և ռազմաշունչ երգերը Ջավդաթ փաշայի ջիղերը կը բայքայէին և Թշնամիի սիրտը ծակելով առաւել ևս կը կատաղեցնէին։

Ահա տեսէք, Սահակ-Բէյենց տան դիրքերու վրայ Թշնամին ուժեղ յարձակում ըրած է։ Վերնայարկը Թշնամի Թնդանօթներու տեղատարափ գնդակներով քանդուած է. մեր հերոսներն իջեր են ներքնայարկը և օրհասական ու ծանր կռիւ կը մղեն։ Այդ րոպէին հեռուէն կը լսուի նուագախումբի ոգևորող և եռանդուն ձայնը, «Մեր հայրենիք»ի հոգանակը կ'արձագանգէ դիրքերուն մէջ, ուր գնդակն ու կրակ, փոշին ու բոց, աղմուկ և աղաղակ իրար խառն-

ուեր են, երբ արդէն կը մօտենայ նուագախումբը և բարձր ու որոտաձայն կը նուագէ ռազմաշունչ եղանակ մը, որուն կը միանայ նաև կռուողներու երգը.

«Կռուեցէք տղերք, կռուեցէք քաջ քաջ,
Անվեհեր կանգնած թշնամու առաջ...»։

—Կեցցէ ազատութիւն, կեցցէ Հայաստան, յաղթութիւն, կրակ, դէհ տղերք, ձեզ դուրբան, դիւշմանը փախաւ, յաղթութիւն....

Եւ ահա թշնամին խուճապի մատնուած կը նահանջէ Սահակ-Բէյենց դիրքի դիմացի տուներէն և մեր կռուողները հեղ մ' ազատ շունչ կ'առնուն։

Նորաշէնի մօտերն ենք. հեռուէն կը լսուի նուագախումբի քաղցր ու ոգևորիչ ձայնը. քիչ յետոյ բազմութիւն մը դանդաղ քայլուածքով կը յառաջանայ։ Թափօր մը կուգայ առաջնորդութեամբ նուագախումբին, որ «Մեր հայրենիք»ը կ'եղանակէ։ Բազմութեան ուսերով կը տարուի կարմիր-վարդագոյն կտորով պատուած դագաղ մը, որուն մէջ կը հանգչի թշնամիի գնդակով ընկած երիտասարդ հերոսի մը արիւնշաղախ մարմինը։ Դագաղին առջևէն կ'երթայ Տէր Աբշաւիր Քահանան՝ խաչը ձեռքին բռնած, առանց երգելու մեռելական շարականները, որոնց փոխարէն յուղարկաւորները յուզուած և բարձրաձայն կ'երգեն.

«Ամենայն տեղ մահը մի է,
Մարդ մի անգամ պիտ մեռնի,
Բայց երանի, որ իւր ազգի
Ազատութեան կը զոհուի...»։

Այո, երանի անոր՝ «որ իւր ազգի ազատութեան կը զոհուի» օրովհետև՝ «Մահ իմացեալ՝ անմահութիւն է...»։

Եւ սակայն ո՛ր մէկը յիշենք այս դրուագներէն, այս գերմարդկային հերոսամարտի ո՛ր մէկ դէմքն ու դէպքը նկարագրենք։

Եւ այսպէս պատուով ու փառքով կ'ընթանայ Վասպուրականի՝ —Վանի Քաղաքամէջի, Այգեստանի, Շատախի և Փէսանդաշտի— 1915 թուի Ապրիլեան հերոսամարտը։

Մայիս 3/16-ի արշալոյսն է։ Այգեստանի բարձր տուներու տանիքներէն և Հայ դիրքերու խուզարկիչ դիտարաններէն կռուող·

Ներն ու ժողովուրդը կը նշմարեն, որ Վանի ծովի վրայ, Աւանց գիւղի նաւահանգիստէն, բազմաթիւ բարձուած առագաստանաւեր ճամբայ կ'ելլեն դէպի ծովին բացերը և կ'ուղղուին դէպի հարաւ-արևմուտքը, դէպի Դատուան։

Այգեստանի մէջ, ամէն կողմ կայծակի արագութեամբ կը տարածուի աւետաբեր և փրկարար լուր մը— Բշնամին կը ճահճանչէ ծովի եւ ցամաքի վրայէն։

Քաղաքամէջէն դէպի Արտամետը երկարող ամբողջ ճամբան բռնուած է Վանէն խուճապահար փախչող տաճիկ խուժանով և պարտուած զօրքերով։ Նալբանդ Ջավդաթն ալ ամօթահար և պարտուած փախեր էր Վանէն, ուր մնացած յետնապահ թափթփուկ զօրքերն ու քիւրդերը՝ կէսօրէն յետոյ, հատ-հատ հրացանաձգութեամբ և անկանոն ու աննպատակ՝ «վիր դէպի՝ զիկ լէշ՝»*) թնդանօթաձգութեամբ կուգային իրենց պարտութիւնն ու փախուստը հաստատելու։

Երեկոյ է. արևը մայր մտաւ. ամբողջ Այգեստանի Հայոց թաղերուն մէջ խորհրդաւոր լռութիւն մը կը տիրէ։ Հրազէնի ոչ մէկ ձայն. ոչ մէկ աղմուկ և իրարանցում։ Սակայն տանեակ հազարաւոր Հայ սիրտերը կը ծփան ու կ'ելևէջեն գալիք մեծ անակընկալով մը, որ րոպէ առ րոպէ կըսպասուի։

Արարուց (կամ Ջինուորական Ա. Շրջանի) կողմերն ենք։ Բարձրացեր ենք Դրհէրցի Ներքօի տան տանիքը և կը դիտենք հեռուները։ Տաճկաց թաղերու մէջ մեռելային և ահաւոր լռութիւն մը կը տիրէ, իսկ Հայոց թաղերը հետզհետէ կը լեցուին խուլ ու խորհրդաւոր շշուկով մը։ Կը նայինք դէպի հիւսիս, դէպի Ցանկոյսեր, որուն Սև-Քրտայի բարձունքն ի վեր, Ջրմփ-զրմփ Մաղարայի քարաբլուրին վրայ կառուցուած տաճկական փոքրիկ պահականոցը կը ծփայ կրակի և բոցերու մէջ։ Ապա կը լսուին հրացաններու ուժեղ համազարկեր և որոտալից կանչեր ու գոռոցներ։ Ինչ յետոյ ամբողջ Այգեստանը կը լեցուի հրազէններու զարհուրելի ձայներով, որոնց

*) Այս խօսքը Վանի ժողովրդական բարբառի մէջ շատ գործածական է և կը նշանակէ,—«ինչ հարուածը, որուն դիպչելու ըլլայ նա պիտի գետին իյնայ և դառնայ ինձ համաքաղոհ կամ դիակ» (լէշ)։

մէջէն պարզ և որոշ կը լսուին – «Յարձակո՛ւմ, յաղթութի՛ւն, կեցցէ՛ Ազատութիւն, կեցցէ՛ Հայութիւն...» ձայները։

Եւ ահա քիչ յետոյ, Հայ դիրքերէն դուրս կը խոյանան մեր կռուողներն ու կը յարձակին տաճկաց թաղերու վրայ։ Կռուողներու ետեւէն կը վազէ անզէն ժողովուրդը,—մարդ, կին, ծեր, պառաւ, անգամ պատանիները հեղեղի նման կը թափուին լքուած և ամայի տաճկաց թաղերը։

Կը կատարուի անխուսափելին։ Դարերու տառապանքն ու տանջանքը, հուրն ու սուրը, արիւնի և արհաւիրքի կսկիծները սրտերնուն կուտակած Հայ ժողովուրդի այս զաւակները արդար վրէժով լեցուած կը հրդեհեն տաճկաց տուները։ Ամենակուլ կրակը ահաւոր բոցերով կը տարածուի, կը ծաւալուի և կը լափէ ամբողջ թաղերը, որոնք կը ծփան հրեղէն լեզուներու և կապոյտ ծուխ-մուխի մէջ։ Վրիժառու ամբոխը կատղած ծովի փրփրած ալիքներու նման, կը խուժէ դէպի տաճիկ թաղերը, իսկ Հայ կռուողները կը սլանան դէպի պետական զօրանոցները—Հաջի-Բաքըրի և Բաղնիսայ Քարերաց կշլանները—որոնց ընդարձակ շէնքերը իսկոյն կրակի կը մատնուին և քիչ յետոյ ծուխն ու բոցը երկինք կը բարձրանան։ Մօտիկէն և աչքերովս տեսայ Հաջի-Բաքըրի զօրանոցի այրուիլը։ Այդ հսկայ զօրանոցը կը ծփար բոցերու ծիրանի ծովի մը մէջ և կը լուսաւորէր Այգեստանի հարաւակողմի ամբողջ թաղերը։

Վանի ամբողջ հորիզոնը հրդեհներու բոցերով լուսաւորուած էր և թանձր ու կապոյտ մուխ բռներ էր երկինքը աներեսանելի դարձնելով պլպլացող աստղերը։ Հապա ծո՛վը—Վանի ծովը համակ ծիրանի գոյն հագեր էր և հանդարտ ու նազելաշուք կը ծփար և կարծես ուրախ ու հպարտ էր Հայութեան տարած յաղթանակով։

Ա՛հ, Մայիս 4/17-ի գիշերը, Հայ ազատագրական պատմութեան լուսաւոր և փառաւոր մէկ էջը կը կազմէ, էջ մը՝ զարդարուած յաղթանակի և դարերու տառապանքի արդար վրիժառութեան սքանչելի դրուագներով։

Գիշերը կոտրուեր անցեր է, սակայն ամբողջ քաղաքն արթուն և անքուն՝ լուսնալուն կրսպասէ։ Բարի լուսու աստղն երևաց, երբ ամբողջ Այգեստանի Հայութիւնն արդէն ոտքի կեցած՝ յորձանք տալով Ողգայու-Ջաղդի մեծ պողոտայով կը յառաջանայ դէպի Քաղաքամէջ։

Արագ և շնչակոտոր կը յառաջանանք, տաճկաց թաղերու մէջէն. Վառուող տուները սարսռազդեցիկ որոտումներով կը խորտակուին և կը թափուին փողոցներու աջ ու ձախ կողմեր։ Կծու ծուխը, բոցն ու կրակը այնքան ուժեղ են և զօրաւոր, որ տեղ-տեղ ճամբան անանցանելի կը դառնայ։ Վերջապէս հասեր ենք Հայկավանքը, ուրկից կը դիտենք Վանի ահաւոր ու փառաւոր բերդը, որուն ամենաբարձր կատարին վրայ, Քաղաքամէջի քաջարի Հայերու ձեռքով պարսպուած փառքի, յաղթանակի և ազատութեան կարմրագոյն դրօշակը՝ խաչն ի վրան՝ կը ծածանէր Վանի ծովի մեղմանուշ հովով։

Այգեստանի և Քաղաքամէջի կռուողներն ու ժողովուրդը իրար կը հանդիպին, կ'ողջագուրուին, կուլան, կ'ուրախանան և հարիւրաւոր բերաններ յանկարծ միաձայն կ'աղաղակեն.

—Կեցցէ ազատութիւն, կեցցէ ազատ և անկախ Վասպուրականն, փառք մեր նահատակներուն։

Իսկ բերդի բարձունքներէն խումբ մը Հայ կտրիճներ թնդանօթներու որոտումներով կ'ողջունեն Հայ Կամաւորական Գունդերու մուտքն ի Վան-Վասպուրական, որուն մարտնչող Հայութեան՝ եղբայրական ու զինական օգնութեան կը հասնէր Կովկասի և Արարատեան Աշխարհի Հայութիւնը։

Ահա կը մօտենան Հայ Կամաւորները, թէ ձիաւոր թէ ոտաւոր։ Դարալագեազցի ծերունազարդ Ցէր Գրիգոր Քահանան, խաչն ու սուրը ձեռքին բռնած կ'երթայ զօրագունդին առջևէն, իսկ կամաւորներն ալ—առյգ, ժիր, ուրախ և յաղթական, կը թնդացնեն իրենց ռազմերգը.

«Ազատութեան այն վառ սէրը՝ թունդ որոտաց իմ սրտում,
Իմ հայրենեաց սուրբ անունը՝ ինձ օգնութեան է կանչում...»։

Եւ այսպէս չորս հարիւր տարի յետոյ (1514—1915 Մայիս) տաճկական արիւնոտ և արհաւիրալից բռնապետութիւնը, Հայութեան ուժգին և վճռական հարուածներով կը ջախջախուէր Վան-Վասպուրականի մէջ, ուր կազմակերպուած ու մղուած գերազանցապէս ժողովրդական Ապրիլեան Հերոսամարտը Հայոց յեղափոխական և ազատագրական պատմութեան լուսաշող մէկ էջը պիտի կազմէ, միանալով Մուշ-Սասունի, Շաբին-Գարահիսարի, Ուրֆայի,

Արարայի և Տաճկահայաստանի այլ վայրերու հերոսամարտներուն հետ, որոնք 1915 թուի Հայկական Մեծ Եղեռնին զոհ գացած մէկ միլլիոն Հայ նահատակներու յիշատակը պիտի պահեն անմահ և միշտ յիշելի։

---

Պողպատի-Դարի վրայ, առուի ափին, ծառերու հովին տակ նստած պատմեցինք ձեզ Վան-Վասպուրականի 1915 թուի Ապրիլեան Հերոսամարտը, շատ համառօտ և արագ թռիչքներով։

Այժմ վեր կացէք, յառաջանանք դէպի վեր, երթանք դէպի ՅԱՆԿՈՑՈՆԵՐ թաղամասը, որ Այգեստանի բարձրադիր, աղբիւրաշատ և ծառազարդ վայրն է, ուր կ'ապրին՝ «Աղխաս՝ նպարs Յաճկոյսներցիէ»։

Սղգայու-Ջաղդի աջ ու ձախ կողմերու վրայ շինուած տուները հովանաւորուած են բարդի և ուռի ծառերով, որոնք կը բարձրանան առուներու ափին, խիտ առ խիտ, կողք-քողքի և կը կազմեն աննման ու հրապուրիչ ծառուղի մը, որուն տակէն կամաց-կամաց քայլելով կը մտնենք Հին-Նոր անունով յայտնի սառն ու զուլալ աղբիւրին։ Երկու ձեռքի ափերն իրար տանք, հովուական ջուրխմիկի վերածենք և կուշտ ու կուռ՝ խմենք այս անուշ ու կաթնորակ ջուրը։

Այս աղբիւրէն քիչ մը վեր, փողոցի հիւսիսակողմի տուներու առջևէն անցնելով, կանգ կ'առնենք ուռենիներու շուքին տակ ու կը դիտենք սա պարզ ու հոդաշէն տունը—ԿՐԸՄՑՈՑ-ԽՐԻՄԵԱՆ կամ ՀԱՑՐԻԿԱՆՑ տունը—որուն փողոցի դուռը կիսաչափ բաց է։ Նեղս կը մտնենք. բակին մէջ, համեստ արտաքինով և տարիքոտ տանտիկին՝ խաթուն մը կը դիմաւորէ մեզ։—Բարով, Խաթուն-Մարէ։—Աստծու բարին, խազար բարով, կը պատասխանէ Խաթուն-Մարէն։—Խաթուն-Մարէ, կը խնդրենք, որ մեզ ցոյց տաս ձեր Տանտունը։—Ձեր խնդիրը ջուխտ աչքիս վէրէն, հրամմէք էրթանք, կ'ըսէ Խաթուն-Մարէն և կ'առաջնորդէ մեզ դէպի իրենց Տանտունը։

Քառակուսի, ընդարձակ յատակի չորս կողմերէն վեր կը բարձրանան հոդաշէն հաստ ու բարձր պատեր՝ սևցած մշտավառ թոնիրներու ծուխ ու մուխով։ Առաստաղի գերաններն ու մարտակները թոնիրներէն ծխացող մուխով այնքան սևցեր են, որ սև սաթի նման կը փայլին, իսկ խոնաւ ծիւթը—մու(ն)ջկաք—կաթ-կաթ չոր-

ցած՝ սև ուլնիկներու նման կը պսպղայ։ Պատերու փոքրիկ լուսամուտները և չորս հաստ ու սև սիւներու վրայ հանգչող հոդաձածկ առաստաղի էրտիսները (երդիք) թէ լոյս կը ցոլացնեն ներս և թէ մշտավառ թոնիրներու ծուխն ու մուխը կը քաշեն դուրս։ Տանտունի գետնի մէջ հաստատուած են քանի մը հնամեայ թոնիրները, որոնք հերթով մշտավառ կը մնան ամբողջ տարին։

Սիւներու վրայ խփուած են փայտաշէն փոքրիկ ճրագակալներ, որոնց վրայ դրուած հոդէ ձիթավառ ճրագները իրենց ճոռերէն դուրս ցցեր են բամբակեայ պատրոյգի ծայրերը։

Տանտունի վերնակողմի մէկ անկիւնը տունեցիներու նստելատեղ և ճաշատեղն է, ուր փռուած մաքուր և գունագեղ կապերտի վրայ շարէշար փռեր են կակուղ մինդարներ և դրմփիկներ։ Ամէն կողմ նահապետական պարզութիւն և մաքրութիւն կը նկատուի, ամէն ինչ մեր աչքին կը պարզէ հայկական հինաւուրց գերդաստանի և մշտավառ ու շէն օճախի մը լիակատար պատկերը, օրուն վրայ աւելցընենք Տանտունի կիսալոյս խորհրդաւորութիւնն ու պատմական և յիշատակալից արժէքը, այն ատեն եկէք բոլորս միասին ծունկի իջնենք և համբուրենք այն սուրբ անկիւնը այս Տանտունի՝ որուն խոնարհ ու համեստ յարկին տակ ծնած, սնած և կեանք առած է ԿՐԿՄԱՈՑ ուրախ և թրուռուն մանուկ, կտաւագործ և ուսումնագէտ Խաչատուրի մասուռ լրացող աշխե՛rs և ուսում տվրող աշակերտ Փէտով Մրկո՛ն, կտաւագործ-խալիճա Թեոլ-Փէտ Մրկլո՛ն, երիտասարդ և նորապսակ Մրկը՛r, Հայաստանի ճամբորդ և ուխտաւոր Մկրտիչ Վարժապե՛s, գրամշակ-հեղինակ, դպիր-սարկաւագ, վանական-միաբան, վարդապետ-քարոզիչ, աւագ խմբագիր, մեծ դաստիարակ, ազգանուէր-ժողովրդասէր, անդրանիկ յեղափոխական, հովիւ-առաջնորդ, եպիսկոպոս-պատրիարք, Հայբենիքի-պագամաւոր, աքսորական - հալածական, ՀԱՑՐԱՊԵՏ - ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՑՈՑ՝ Տ. Տ. ՄԿՐՏԻՉ Ա. ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ—«Նուագող վօսից Հայրենեցաց Հայոց» Նոյն ինքն՝

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ԱՐԾԻՒԸ՝ ՀԱՑՈՑ ՀԱՑՐԻԿ...

«ՀԱՑՐԻ՛Կ, ՀԱՑՐԻ՛Կ էս հայրենիք,
Վասպուրական մեր աշխարհ...»

. . . . . .

# ՀԱՅՈՑ ՀԱՅՐԻԿ

## ԱՌԱՋԻՆ ՏԱՍՆԱՄԵԱԿ

## 1820—1830

### Ա.

### ԽՐԻՄԵԱՆ ԳԵՐԴԱՍՏԱՆԸ

Վանի Այգեստան քաղաքամասի, Ցանկոյսներ թաղամասի մէջ, Սղգայու Ջաղդի*) հիւսիսակողմի պատի տուներու շարքին, Հին-Նոր անունով յայտնի աղբիւրէն քիչ մը վեր, բարձրահասակ բարդիներու և տերևախիտ ուռենիներու տակ, գլգլան ու մշտահոս երկու զուգընթաց առուներու հպերքին պարզ և անպաճոյճ ձևով ու կառուցուածքով, հինաւուրց հողաշէն տուն մը կայ, որուն գոյութիւնը, ըստ վանեցի պապիկներու և հալիւրներու զրոյցներուն, շուրջ երկու հարիւր տարիներու տոհմական մշուշապատ պատմութիւն մ'ունի։

ԿՐԸՄՑՈՑ կամ ԽՐԻՄԵԱՆ գերդաստանի պապենական և հայրենի տունն է այդ, որուն հիմնադիրներու և նախահայրերու գերեզմանները (Ցանկոյսների Ս. Աստուածածին եկեղեցիի գերեզմանոցին մէջ) պարզ ու մաշուած տապանագիր-արձանագրութիւններով, կը հաստատեն, որ Խրիմեան գերդաստանը Վանի Այգեստանի ամենահին և յայտնի գերդաստաններէն մէկը եղած է։

---

*) Վանի Այգեստանի արևելակողմը կը գտնուի Սղգա անունով հայաբնակ գիւղ մը, որ քաղաքի արուարձաններէն մէկն է։ Այս գիւղէն կըսկսի Վանի ամենամեծ և ծառազարդ պողոտան, որ կ'երկարի մինչև Քաղաքամէջ և դէպի ծովափ, երկու ժամ (քայլելու) տարածութեամբ։ Սղգայու Ջաղդ կամ Ջաղդեն, տեղական կոչում է և կը նշանակէ, դէպի Սղգա գիւղ երկարող պողոտան։

Օսմանեան գահի 9-րդ գահակալը — Սուլթան Սէլիմ Ա. Եավուզը, իր ահարկու բանակով 1514 թուին*), Ընատոլիի խորքերէն արշաւեց դէպի արեւելք և գրաւեց Պարսից իշխանութեան ենթակայ բազմաթիւ նահանգներ, որոնց կարգին նաև Վան-Վասպուրական:

Վասպուրականը Օսմանեան լուծին տակ անցնելէ յետոյ, երկրի Հայ ազգաբնակութիւնը դարձաւ հպատակ և խաղաղ տարը, իսկ քիւրդ էլիաթները, աշիրէթները, ցեղերը, բէկերը, դարաբէյլիներ և աւատապետները Օսմանեան տիրապետութեան չ'ենթարկուելէ յետոյ, ամրացան ծայրագաւառներու, լեռներու և անառիկ վայրերու մէջ, վարելով տեսակ մ'անկախութիւն։

Քրտական շրջաններու մէջ ապրող Հայերը անլուր տառապանքի, հարստահարութեանց և արհաւիրքներու մատնուած ըլլալով, Վասպուրականի գաւառներէն, Վան քաղաքէն և մօտակայ վայրերէն, հարիւր տարուայ ընթացքին, հետզհետէ, գաղտնի և յայտնի կերպով, գաղթեցին և բնակութիւն հաստատեցին Վանի բերդաքաղաքի (այժմ Քաղաքամէջ) արեւելակողմի տարածութեան վրայ, որ կը ներկայացնէր ցած ու փոսեր, բլուրներ և բաց դաշտեր՝ խոպան և անբնակ։

Միւս կողմէ, Ընատոլիի խորքերէն տաճկական հոծ գաղթականութիւն մը կը թափէր Վասպուրական և Եաթաղանի ուժով, արիւնի և հուրի միջոցներով կը հաստատուէր Երկրի բարեբեր և գեղեցիկ վայրերու մէջ։ Երբեմնի հայաբնակ Ոստանը, Արտամետը, Թիմարի քանի մը գիւղեր, Արճէշ, Ալջաւազ և այլ վայրեր, հետզհետէ լեցուեցան տաճիկ վաչկատուն գաղթականներով, որոնք Հայ բնակչութեան գլխին կը դառնային չարիք և պատուհաս։

Վանի Բերդաքաղաքի պարիսպներէն ներս և բերդի վրայ կ'ապրէին տաճիկ փաշաներ, բէկեր, աղաներ, դարաբէյլիներ, Եճիչէրի կոչուած արիւնարբու զօրքը, զանազան տիպի «պետական պաշտօնեաները», տաճիկ շէյխեր և մոլլաներ։ Ասոնց թիւը և աճումը այնքան զգալի դարձաւ, որ բերդաքաղաքի Հայութիւնը, ստիպուած եղաւ, թողուլ իր բնակավայրը և հաստատուիլ քաղաքի արեւելակողմը։

*) Վանի կուսակալ—Վալին, Թահսին բէյը, 1914 թուի Սեպտեմբերին պաշտօնապէս կատարել տուաւ տաճիկներու կողմէ Վանի գրաւման 400 ամեակի հանդէսը, որուն սակայն Հայերը մասնակից չ'եղան։

Բերդաքաղաքին մէջ մնացին միայն Հայ աղանները, բէկերը, խոջանները և քանի մ'ազդեցիկ դէմքեր, որոնք լեզուով և խորագիտութեամբը կը պաշտպանէին և՛ իրենց և՛ Հայ ժողովուրդի բարոյական և տնտեսական շահերը։

Քաղաքամէջի և գաւառներու Հայութիւնը՝ Վանի ընդարձակ հովիտը—Կուռուպաշ գիւղէն մինչև Ակրփիի (Ակ-Քարափի) և Վարագայ լերան ստորոտէն մինչև Ծովափը—դարձուց զուտ հայկական բնակավայր մը, որ օժտուած է բարձրադիր և գեղեցիկ դիրք ու տեսարաններով, առողջարար օդով և մշտահոս ու բնական տատնեակ սառն ու վճիտ աղբիւրներով։

Հայ շինարար և ստեղծագործ ձեռները երկու հարիւր տարիներու ընթացքին Վանի հովիտը հետզհետէ բնակելի*) դարձուցին։ Ծառուղիներով փողոցներ, հաճելի վայրեր, թաղեր և մանաւանդ ընդարձակ և բազմաթիւ ծառատունկ այգիներ՝ անվերջ այգիներ և առատ ու մշտահոս աղբիւրներ իրար միացան և այսպիսով Վանի Բերդաքաղաքի արևելակողմը կազմուեցաւ գեղեցիկ քաղաքամաս մը—այսօրուան Այգեստանը,—որ Վանի զարդն ու պսակն է։

Վանի օդն ու ջուրը, ծառն ու ծաղիկ, բերրի հողն ու սքանչելի, կենսաբար բնութիւնը՝ իւր չքնաղ տեսարաններով, այնքան հիացում պատճառեցին նորեկ տաճիկ ցեղին, որը հետևեալ ժողովրդական առածով շատ գեղեցիկ բնորոշում մը տուաւ Վանին.—«Դիւնեատա Վան՝ ախիրէթտէ իման...» (այսինքն՝ «Աշխարհի մէջ Վան՝ իսկ հանդերձեալումն հաւատք» կամ արքայութիւն)։

Եւ որ ժողովուրդն էր, որ Վանը վերածեր էր բնութեան արքայութեան և դրախտի, եթէ ոչ՝ նոյն ինքն Հայ ժողովուրդը, որ հակառակ իր կրած տառապանքներուն, տնտեսապէս աւելի շէնշող ու նախանձելի վիճակ մ'ունէր, քան տաճիկ ցեղը։

Այգեստանի մէջ Հայութիւնը հաստատուած էր Վանի հովտի

---

*) Անտարակոյս, Նայիրիի և Բիանայի նախաքրիստոնէական հնագոյն դարերուն, հայկական թագաւորութեանց և Արծրունեաց իշխանութեան օրով, Վանի հովիտը միշտ բնակելի եղած է. սակայն արաբական, պարսկական, սելճուկեան, թաթարական և տաճկական յաճախակի աւերիչ և կործանարար արշաւանքներու ընթացքին, Վանի հովիտի Հայ բնակչութիւնը կամ կոտորուած կամ գաղթած է, իսկ երկիրն ալ քար ու քանդ եղած։

հարաւային և հիւսիս-արևելեան մասերու մէջ։ Ներքին Հայոց Զորի Նոր-գիւղի մօտերը և Ալարուց-Սարի լանջի վրայ, մինչև ԺԸ-րդ դարու սկիզբը գոյութիւն ունէր Ararf անունով զուտ հայաբնակ գիւղ մը, որ սակայն չը կրնալով տոկալ քիւրդերու յաճախակի յարձակումներուն և բռնութեանց քար ու քանդ եղաւ, իսկ բնակչութիւնն ալ, լքելով իւր գիւղը մօտեցաւ քաղաքին—Վանին—տաճիկ իշխանութեան աչքին տակ, աւելի ապահով ապրելու յոյսով։ Այսպիսով ահա կը հիմնուէր Վանի Արարք թաղամասը, (Այգեստանի հարաւակողմը) որ միշտ ալ պահեց իւր գիւղ կոչումն ու հանգամանքը։ Արարքի մէջ հաստատուած հայերը կը զբաղուէին հողագործութեամբ, խաշնարածութեամբ, բանջարաբուծութեամբ և գիւղական ամեն տեսակ աշխատանքներով։ Արարքցիները ունէին ձիթահանները, ջրաղացները, կալատեղերը, արօտավայրերը, վարելահողերը նայլն, և միշտ տնտեսապէս բարւոք վիճակի տէր էին։ Իբրև քաղաքին ամենամօտիկ գիւղ՝ Արարքը կը հանդիսանար Վանի Բերդաքաղաքի (Քաղաքամէջի) շտեմարանը և Հայ ու տաճիկ բնակիչները ամեն կիրակի Արարքի գիւղամէջը թափուելով գնումներ կ'ընէին։ Այսպէս էր ահա, որ շուրջ երկու դար գոյութիւն ունեցաւ Արարուց մէյդանի (հրապարակի) կիրակնօրեայ նշանաւոր տօնավաճառը։

Այգեստանի հիւսիս-արևելակողմի ուղղութեամբ կը տարածուի լայն և երկար ձորակ մը, որուն մէջ տեղէն ամառ ձմեռ խշշալով կը սուրայ և դէպի ծով կ'երթայ գետակ մը։ Այգեստանի այս հիւսիս-արևելամասը հարուստ է սառն ու վճիտ տաննեակ մ'աղբիւրներով, առատջրարբ զով օդով և բնական հոգեպարարուր տեսարաններով։

Վանի բերդապարիսպի շրջափակէն հեռացող բազմաթիւ Հայ ընտանիքներ իրենց բնակութիւնը հաստատեցին յիշեալ ձորակի գետակի ձախ ափին, պատմական Թոփրակ-Կալէի, կամ տեղական կոչումով Զրմփ-զրմփ Մաղարայի ստորոտին տարածուած տափակի վրայ։ Այգեստանի հայկական այս բնակավայրը կոչուեցաւ ՑԱՑՆԿՈՑՄՆԵՐ, այսինքն գետակի դիմացը, այն կողմը (յայն կոյս) տարածուող հայկական բնակավայրը, ուր հաստատուեր էին քաղքենի բնակիչները—Հայ երևելիներ, հարուստներ, կալուածատէրեր, վաճառականներ և արհեստաւորներ, բոլորն ալ տնտեսական բարեկեցիկ վիճակի տէր մարդիկ, որոնք ժողովրդական հանգանակութեամբ

և համայնական աշխատանքով 1761 թուին, հիմնեցին փոքրիկ եկեղեցի մը—Պսիկ Տաճար Ս. Աստուածածին—որուն հիմնարկութեան հրամանն ալ «շնորհեց» Վանի այն առենուայ տաճիկ դաժան փաշան—Զարար Օղլի Ֆէյզուլլահը:

Յանկոյսները Հայութիւնը, իւր նոր բնակավայրին մէջ հաստատուելէ յետոյ խաղաղ և ստեղծագործող աշխատանքի ձեռնարկեց: Ամայի ձորակը կարճ առենուայ մէջ ծառնոցներով, ծաղկաստաններով զարդարուեցաւ և դարձաւ հաճելի բնակավայր մը:

Այսպիսով ահա ԺԸ-րդ դարի սկզբէն, փաստօրէն, Վանը կը բաժնուէր երկու գլխաւոր քաղաքամասերու—դէպի արեւմուտք, ծովափէ արեւելակողմը և բերդի հարաւամասի ուղղութեամբ պարբսպապատ հին քաղաքն էր—Քաղաքամէջը—իսկ արեւելքը, Հայկավանքէն սկսեալ ծայր կ'առնէր Այգեստանը, որ կը տարածուէր ամբողջ Վանի հովտի մէջ, կազմելով ոչ միայն Վանի ընդարձակ քաղաքամասը, այլ և օդասուն ու հաճելի բնակավայր մը, ուր առաւելապէս հաստատուեր էին Հայերը:

Վանը տաճկաց լուծին տակ մտնելէ յետոյ, Հայութիւնը ինչպէս պարսից՝ այնպէս ալ տաճկաց իշխանութեան օրով, տէր դարձաւ երկրի առևտուրին և արհեստներուն:

Հայ վաճառականները՝ մեծաքանակ բուրդ, կաշի, զըռնեխ, տառեխ ձուկ, Շատախի ազնիւ և գոյնզգոյն շալերը, ձի, ոչխար, ոսկերչական արհեստի արտադրութիւնները, բուսական հում ներկերը հայլն, կարաւաններով կը փոխադրէին արեւելքի շուկաները: Հին-Ջուղայի (Արաքս գետի ափին) և Վանի Հայ վաճառականներու մէջ առևտրական սերտ կապերը և յարաբերութիւնները պահուեր էին հնուց ի վեր: Վաննեցի Հայ վաճառականները, իրենց սեփական կարաւաններով (ձիերու) կ'իջնէին Հին-Ջուղայի հարուստ շուկան ուր իրենց տարած ապրանքները վաճառելէ յետոյ, կը վերադառնային Վան՝ հետերնին բերելով պարսկական, հնդկական և չինական ամէն տեսակ ապրանքները—գործուածք, համեմունք, չոր միրգ, զարդեղէն հայլն: Վանի մէջ վաճառականութիւնը, ԺԸ-րդ դարին, այնքան զարգացեր էր, որ Հայ վաճառականները անձամբ կը շրջէին Եւրոպայի, Ռուսաստանի, Պարսկաստանի, Հնդկաստանի և մինչև անգամ հեռաւոր Չինաստանի խորքերը և առևտրական կապեր կը հաստատէին

յիշեալ երկիրներու Հայ և օտար վաճառականներու հետ։ Անգամ հասարակ, մանրավաճառ առևտրականները, երկրէ երկիր կը թափառէին և սեփական գործ ու վաստակ կը հետապնդէին։ Այս երևոյթէն ծնունդ առած է ժողովրդական այն խօսքը թէ՝— «Վանեցի Թոփալ չարչին՝ գնաց չուր (մինչև) Զիւնումաչին»։

Վանի Հայ վաճառականները, երկրին մօտիկ և հարևան Պարսկաստանի հետ շատ աւելի սերտ առևտրական կապեր ստեղծեր էին։ ԺԸ-րդ դարին, Թաւրիզի մէջ կային հարուստ և անուանի Հայ վաճառականներ, որոնք փոխադարձ առևտրական կապերով կապուած էին Վանի Հայ վաճառականներու հետ։ Թաւրիզէն Վան հասնող կարաւանները կանգ կ'առնէին բերդապարիսպի արևելակողմի երկաթեայ մեծ դարբասի առջև, որը կը կոչուէր Թաւրիզի Դուռ (Թաբրիզ Կափուսի)։

Վանեցի այդ հին վաճառականները—խօջա, զանգիյն, աղա, ամիր և նման որակումներով յայտնի—նաև մէկ-մէկ հարուստ կալուածատէրեր էին։ Ունէին գիւղեր, ընդարձակ հողեր, ծառնոցներ, կը պահէին ոչխարներու հօտեր և ձիերու երամակներ և ճոխ ու վայելուչ կեանք մը կը վարէին։

Հայ վաճառականները, իրենց ֆիզիքական և տնտեսական գոյութիւնն ապահովելու համար յաճախ զանազան կաշառքներով կը սիրաշահէին Վանի տաճիկ փաշաներն ու բռնակալները և ասոնց միջնորդութեամբ ալ Օսմանեաններէն ձեռք կը բերէին արտօնութիւնները և ֆէրմաններ։

Հայ վաճառականը արտօնուած էր հագնելու իւրայատուկ տարազ—կարմիր սոլ (կօշիկ) կապոյտ լայն շալվար, մէջքին կը կապէր ընտիր շալ, կուրծքն ու մէջքը կը ծածկէր ոսկեթել հիւսուածքով անթև բաճկոնը, իսկ գլխին կը դնէր յատուկ գլխարկ մը, որուն ծայրէն երկար ու թաւ մետաքսեայ կապոյտ ծոպը (պուխ) կ'իջնէր մինչև մէջքը*)։

---

*) Այն Հայ վաճառականը, որ առաջին անգամ յիշեալ արտօնեալ գլխարկը դրած և ծոպը մէջքի վրայ, պոչի նման շարժելով փողոցներէն անցեր է, ժողովուրդը ծաղրի և հեգնանքի համար այդ վաճառականին պոչով տիտղոսը տուած է, գլխարկի երկար ծոպը նմանցնելով պոչի։ Այդ պոչով Հայ վաճառականը Արտօրինեաց արքայական և ազնուական տոհմէն սերող անձ մըն էր, որուն չնորհուած

Վանի Հայ վաճառականութիւնը երկու կարգի կը բաժնուէր։ Առաջնակարգ վաճառականները կը համարուէին անոնք, որոնք արեւելքի և արեւմուտքի առևտրական աշխարհները կը շրջէին՝ ապրանք տանելով ու բերելով, իսկ երկրորդական կարգի վաճառականներն անոնք էին, որ իրենց սեփական ձեռներէցութեամբ արհեստական արդիւնաբերութիւններ կ՚արտադրէին և այդ նիւթերով ալ առևտուր կ՚ընէին գլխաւորաբար Ռուսաստանի և Պարսկաստանի հետ։

Այս վերջին տեսակի վաճառականները, իրենց ձեռքի տակ ունէին արհեստաւորներ—ոսկերիչներ, կտաւագործներ, կտաւ ներկողներ եւայլն, որոնք համեստ վարձատրութեամբ կամ իբրև մասընկեր, կը գործէին վաճառականներու մօտ, արտադրելով ոսկերչական ձեռարուեստի իրեր, զարդեր, սպիտակ, մաքուր և տոկուն կտաւ, որն ապա կարմիր գոյնով կը ներկուէր և կը կոչուէր Շիլա։

ԺԸ-րդ դարի վերջերը, կտաւագործութիւնը Վանի ամենածաղկեալ և շահաբեր գործն էր։ Վաճառականները, իրենց տուներու կողքին կը պահէին յատուկ արհեստանոց—գործանոցներ, որոնց մէջ տասնեակներով վարպետ կտաւագործներ և աշկերտներ, կտաւի խորերու առջև նստած, աշխատանքով ամէն օր մեծ քանակութեամբ

---

ժողովրդական պոչով կոչումը, դարձաւ Արծրունի վաճառականին երկրորդական ազգանուն մը—Պոչովեան—Արծրունի։ Ազգային մեծանուն գործիչ և «Մշակ» թերթի հիմնադիրը ու տաղանդաւոր խմբագիր Գրիգոր Արծրունիի պապը—Աղա Գէորգ Երեմեան-Արծրունին, ամուսնացած էր Պոչովեան-Արծրունի տոհմէն Եղիսաբեթ անունով աղջկայ մը հետ։

Աղա Գէորգ Արծրունին 1814 թուի Հոկտ. 1-ին Թիֆլիսի մէջ, գեներալ Բուիչչին յանձնեց ռուսերէնով գրուած Արծրունեաց տոհմագրութիւնը, որուն մէջ Պոչովեան կոչումը թէև ճիշտ գրուած է—Почовянъ—սակայն պատմաբան Լէօն, այդ կոչումը հայերէնի թարգմանելով դուրս բերած է «Պաչավեան», աւելցընելով՝—«ցարաբախտաբար, մեզ չաջողվեց իմանալ ճիշտ հայերէնը»։ Ռուսերէնի մէջ գրուած օ-երը, որոնք յաճախ ա-ալ կը կարդացուին, Լէօն փոխանակ օ կարդալու ա կարդացեր է և այսպիսով Պոչովեան կոչումը աղաւաղուելով դարձեր է Պաչավեան։ (Լէօ—Գրիգոր Արծրունի. Ա. հատոր. էջ՝ 2—3)։

Պոչովեան—Արծրունիներու տոհմական ժառանգները, սերունդէ սերունդ շարունակուելով հասեր են մինչև մեր օրերը։ Սիմոն և Յովսէփ Պոչովեան եղբայրները այժմ կ՚ապրին Կովկաս։

կտաւ կ'արտադրէին։ Կտաւի բամբակը կը բերէին Ռուսաստանէն և Պարսկաստանէն։

Կտաւի և շիլայի սպառման ամենամեծ և յարգող շուկան Ճաճկաստանն էր, ուր Հայերը, տաճիկները և քիւրդերը ամէն տեսակ տնային գործածութեանց համար կտաւ և շիլա կը գործածէին։

ԺԸ-րդ դարի երկրորդ կէսին, Վանի Այգեստանի Ճանկոյսներ թաղամասին մէջ, Հայ վաճառական մը կտաւագործութեան մեծ արհեստանոց մ'ունէր։ Արտադրուած կտաւները—թէ սպիտակ և թէ ներկուած, շիլայի վերածուած—ամբակապ հակեր կը կազմէին և հարիւրաւոր ձիերու կարաւաններով կը տարուէին դէպի Պարսկաստան, Կովկաս և Ռուսաստան։

Ան ծովի հիւսիսային ափերու քաղաքները և մանաւանդ Խրիմ թերակղզին՝ Վանի կտաւի սպառման լաւագոյն շուկաներն էին։ Ցիշեալ Հայ վաճառականը բազմիցս ճամբորդած էր Վանէն Խրիմ և Խրիմէն Վան և համբաւ շինած էր, իբրև Խրիմ երթեւեկող հմուտ վաճառական, որ Խրիմցու նման ծանօթ էր այդ թերակղզիի առևտրական և ներքին բազմաբովանդակ կեանքի էջերուն և միշտ Խրիմի մասին կը խօսէր, որովհետև տարուայ կէսը Խրիմի մէջ կ'ապրէր, որով և յաչս Վանի Հայ ժողովուրդին այդ վաճառականը կէս Կրիմցի—Խրիմցի – կը համարուէր։

Այդ բնիկ Վանեցի Հայ վաճառականը երբ Խրիմէն Վան վերադառնար, լուր կը տարածուէր թէ «Կրիմցին եկաւ», երբ դէպի Խրիմ մեկնելու ըլլար կ'ըսէին «Կրիմցին գնաց»։ Վերջապէս Խրիմի անունը սերտօրէն կապուած էր կտաւի այդ վաճառականի հետ, մինչև որ Կրիմցի կոչումն ալ յայն ժողովրդականութիւն ստանալէ, յետոյ դարձաւ ազգանուն և կպաւ յիշեալ Հայ վաճառականի տոհմին՝ ԿՐԻՄՑՈՑ—ԿՐԻՄԵԱՆ կամ ԽՐԻՄԵԱՆ (ԽՐԻՄԵԱՆԵՆՑ—ԽՐԻՄԵԱՆ) ժողովրդական բմածին յորջորջումով, որն այնուհետև դարձաւ այդ գերդաստանի ծանօթ ազգանունը—ԽՐԻՄԵԱՆ։

Խրիմեան գերդաստանի ազգանունի ծագումը ժողովրդական յիշեալ յաժառ զրոյցով կը պատմուի և բոլոր անոնք, որոնք ՀԱՑՈՑ ՀԱՑՐԻԿի կենսագրութիւնը հրատարակեր են, արձանագրած են յիշեալ ժողովրդական զրոյցը, որուն իրականութեան և փաստական ճշտութեան՝ իւր ժամանակին հաւատարիմ եղած է նաև ՀԱՑՈՑ

ՀՈՎՐԻԿը, պնդելով, որ իւր հայրն ու հօրեղբայրը Խաչատուրն ալ այդ ձևով պատմեր են Խրիմեան գերդաստանի ազգանունի ծագումը։

Վանի այս հին տոհմի նախահայրերու և տոհմագրութեան մասին, գրական մնէ ապրիւր չկայ, որ հնարաւորութիւն տար մեզ Խրիմեան գերդաստանի ճիւղագրութիւնը ցուցադրել։ Վանի Ցանկոյսների Ս. Աստուածածին եկեղեցիի գերեզմանատան մէկ անկիւնը, Խրիմեան գերդաստանի տոհմական հանգստարանն է, ուր թաղուած են Հայոց Հայրիկի պապը, մամը, հօրեղբայր Խաչատուրը, հայրն ու մայրը, մեծ եղբայր Մսրխան և ուրիշներ, որոնց գերեզմաններու տապանաքարերու մաշուած թուականներն ու արձանագրութիւնները իսկ անզօր են Խրիմեան գերդաստանի ճիւղագրութիւնը պատմական տուեալներով և փաստերով ի յայտ բերել։

Սակայն որոշ է, որ վարպետ կտաւագործ Խաչատուր Խրիմեանը՝ Հայոց Հայրիկի հօր՝ մեծ եղբայրն էր, որ հաւանական հաշուով մը ծնած էր 1785-ին։ Հայոց Հայրիկի հայրը, ըստ ենթադրական տուեալներու, ծնած էր 1790-ին։ Այս երկու եղբայրները—Հայրիկի հայրն ու եղբայրը—Ցանկոյսների Վանքի*) դպրատան մէջ ստացան իրենց նախնական ուսումը։ Խաչատուր Խրիմեանը յամառ և յարատև ինքնազարգացումով կրցաւ հմտանալ գրաբարի և ս. գրոց ուսման մէջ, իսկ իր փոքր եղբայրը—Հայրիկի հայրը—չափահասութեան հասնելէ յետոյ շարունակեց իր հօր կտաւի առևտրական գործերը, երթևեկելով Ցաճկաստան, Պարսկաստան, Կովկաս և Խրիմ։ Վարպետ Խաչատուրը իրենց կտաւի գործանոցը կը ղեկավարէր, իսկ փոքր եղբայրն ալ արտաքին առևտուրի պատասխանատուն էր։ Երկու եղբայրներն այսպէս սիրով, սրտով կ'աշխատէին և վառ կը պահէին իրենց պապենական ու հայրենի տունը, որ կը գտնուէր Ցանկոյսների թաղամասի մէջ, Հին-Նոր անունով աղբիւրին մօտիկ։

Խաչատուր Խրիմեանն ամուրի էր և որոշեր էր չ'ամուսնանալ։ Անոր փոքր եղբայրը, ժամանակի ընատոհմիկ և նահապետական սովորութեանց համաձայն, հնազանդելով իրենց տան մեծաւորներու կամքին ու հրամանին, համաձայներ էր ամուսնանալ անտես և ան-

*) Ցանկոյսների Պատիկ Ցաճաը Ս. Աստուածածինը, մինչև ԺԹ-րդ դարի առաջին քառորդը վանք է եղած և ապա թաղեցիներու եկեղեցին դարձեր է։

ծանօթ աղջկան մը հետ, որուն համեստութեան, գեղեցկութեան և առաքինի վարքը ու բարքի մասին գիտէին գերդաստանի աւագ անդամները։ Պահուող երիտասարդին իրաւունք չ'ունէր չը հաւնել ու չը սիրել հարսնացու աղջիկը։ Այդ անհնազանդութիւն և անգամ անբարոյականութիւն կը համարուէր, ծնողաց կամքի դէմ՝ ըմբոստացում, ինչ որ հասարակաց բամբասանքներու և վարկաբեկման առիթ կուտար երիտասարդին։ Այսպէս ահա կը կատարուէր Խաչատուրի փոքր եղբօր ամուսնութիւնն ու հարսանիքը (հաւանաբար 1817 թուին)։ Յաջորդ տարին, 1818-ին այս ամուսնութենէն կը ծնէր արու զաւակ մը և մկրտութեով Մարխաճ անունը կըստանար։

Երկու տարի յետոյ ԿՐԸՄՑՈՑ—ԽՐԻՄԵԱՆՆՆՑ հարսը նորէն «ծոցուոր» և «nsf ծաճr» էր։ Հայ կնոջ վայել ամօթխածութեամբ կ'աշխատէր հասակաւոր կանանց և հալիւորներու աչքին չ'երևալ, տաքր Խաչատուրին երեսը չ'ելնել, այլ տան անկիւնները կծկուել և թեթև աշխատանքներ կատարել։ Այսպէս անցան ամիսներ։ Ցրտաշունչ ձմեռուան յաջորդեց կենսատու գարունը։ «Մարտի քսան՝ գարնան նշան» ձիւնծաղիկն ու ծիլ-ծիլ կանաչները երևցան։

Վան-Վասպուրականի հիասքանչ ու հրաշազան գարունն էր, Ապրիլ ամսոյ սկիզբը, երբ կը կատարուէր «Խորհուրդ մեծ և սքանչելի»ն...։

## Բ.

## ԾՆՈՒՆԴ ԵՒ ՄԱՆԿՈՒԹԻՒՆ

Գարնանային պարզ ու լուսնակ գիշեր էր։

Ամբողջ Այգեստանը խոր ու անդորր քունով կը ննջէր։ Ցանկոյսներէ Ս. Աստուածածին Պտիկ Տաճար եկեղեցիի զոյգ ժամհարները երեսնին խաչակնքելէ յետոյ, տախտակեայ կոչնակնին առին և ժամին բակէն դուրս եկան։

—Տըկը՛լ-տըկը՛լ, տըկը՛լ-տըկը՛լ... կոչնակի համաչափ ու ներդաշնակ ձայնով կը լեցուէր Ցանկոյսներէ ձորը, իսկ տրկըլկոցներու արձագանգները կը մարէին Ծառնոցներու սօսափիւնի և գետի ջրաձայներու մէջ։

Կէս գիշերը կոտրուեր էր։ Վարագայ սարի բանձրիկ կատարի վերէն, լուսաստղն իւր սուր ու ցից ցոլքերը կախեր էր Վանաշխարհի վրայ։

Խրիմեաններց փողոցի դուռը իր ճրեխանի վրայ մեղմիկ ճռաց, ճռաց թէ չէ՝ պարթևահասակ մարդ մը, տարիքաւոր կնոջ մը հետ, տունէն դուրս ելան և արագ քայլերով յառաջացան դէպի Խէրանեանց փողոցը։

Այր մարդը ձեռքին նուազ լոյսով լապտեր մ'ունէր, իսկ կինը երկաթեայ երկար կեռ շիշ մը։ Երկուք միասին արագաքայլ գացին և ծառերու մութ-ստուերներուն մէջ անհետացան։ Անոնք գացին Տատմէրը կանչելու, մինչ մտդին, Խրիմեաններց տան մէջ, կանայք իրար խառնուեր են, արագ-արագ կ'երթան կուգան, իրարանցումի մէջ են։ Տանտունի վերնակօդմի մէկ անկիւն, հաւաքուեր են տունեցի և դրկից կանայք և շրջապատեր են անկողինը Խրիմեաններց հարսին, որ ցաւ կը քաշէ, երկունքի մէջ է, ամօթխածութեան և լուռ տանջանքի սառն քրտինքը պատեր է այդ գեղանի դէմքի լայն ճակատը։ Կանայք լուռ ու մունջ կ'ազօթեն, կը բարեմաղթեն, որ անփորձ ու անվնաս ազատուի ծննդկանը։ Տանտան չորս սիւներու ճրագկալներու վրայ, մեղմ լոյսերով կը պլպլան ձէթի ճրագները, որ սուրբերը բարեխօսեն և օգնութեան հասնին ծննդկանին։

Ահա ճրագը՝ Վարագայ Ս. Նշանին, ահա ճրագը՝ Գրիգոր Նարեկացուն, ահա ճրագը՝ Աղթամարայ Ս. Խաչին. ահա ճրագը՝ մայրերու մայր Աստուածածնին, որոնց օգնութեան ու բարեխօսութեան կը դիմեն ծննդկանը շրջապատող կանայքն իրենց ազօթքներով և մաղթանքներով։

Տատմէրը կը հասնի։ Տանտունի մէջ իրարանցում և երթևեկը կ'աւելնայ։ Ծննդկանի ցաւն ու երկունքը հետզհետէ կը սաստկանայ։ Լուս ազօթքանը կը բացուի, բարի լոյսը կը ճօղճօղուի Վարագայ սարի գոյգ գագաթէն, որուն վերև երկինքը կամաց-կամաց ծիրանի գոյն կ'առնէ, մինչ անդին Վանի ծովը մեղմ ու հանգարտ կը ծփայ և ջուրերը ծաղրաճեմ կը շոյեն իրենց ափերը։ Երկինքն ու ծովն ալ երկունք կը քաշեն.—«Երկնէր երկին և երկիր, երկնէր և ծիրանի ծով...»։

«Առաւօտ լուսուն, արեգակն արդար...», կը ծագի Վարագայ սարէն և Վասպուրականն ու արար աշխարհը կը ծփան արևու լոյսին մէջ, երբ Խրիմեաններց հարսն ալ կ'ազատուի և արևու լոյսին

տակ, օրը ցերեկով, 1820 թուականի Ապրիլ 4/17-ին, լոյս աշխարհ կը բերէ լաճ տղայ մը— ապագայ ՄԿՐՏԻՉ ԽՐԻՄԵԱՆը, Նոյն Ինքն՝ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԻԿը։

Ողջոյն քեզ հայրենի քաղաքդ Վան, ողջոյն և քեզ՝ աշխարհդ Վասպուրական, ողջոյն ու աւետիս և ձեզ դաշտի և լերանց չարքաշ, քրտնաթոր, մշակ հայրդիները, — ժողովուրդ Հայոց, ահա ծնաւ՝ի քէն Հայրիկ Հայոց։

—Աւո, աւո, աւո... նորածին մանուկի ճիչով կը լեցուի տանտունը։

—Ջան, ջան, ջան, ջանիդ դուրբան, կը ձայնեն սրտակից կանայք, մինչ տատմէրն ուրախ զուարթ, քրշտած փէշերը կ'արձակէ, ձեռները կը լուայ և տանտունէն դուրս գալով, կը վազէ այն խոնարհ սենեակը, որուն պատերուն տակ, դրմփիկներու վրայ լուռ ու մտածկոտ նստեր էին Խրիմեաններց այր մարդիկ և ծննդկանի անփորձ ազատուելուն կը սպասէին սրտատրոփ, ծխելով ու համբիչ քաշելով։

Տատմէրը հպարտ ներս կը մտնէ և կը ձայնէ.

— Աչքդ լոյս խէր, աչքդ լոյս խօրօխպէր, մուժդէս տուէր, մուժդէս։

—Աչքդ վէր վարդին, մուժդէդ վէր մեր ջուխտ աչքին, համա ասա խենք, լաճ ի թէ աղջիկ։

—Լա՜ճ, լա՜ճ... մէկ խուրնի խրեղէն, խօրօտ-մօրօտ ոսկի բըռչամ լաճ, կ'աղաղակէ տատմէրը և գոյդ ձեռներու մէջ թաշկինակները խաղցնելով կը պարէ ու կ'երգէ.

«Լաճու մօր տարէք իգին վարդ թող քեաղի ուրհան խոտոտայ,
լաճ ի բիրե լաճ։
Ախչկայ մօր տարէք իգին սոխ թող քեաղի քիթ կըծուրծայ,
քեաճ ի բիրե քեաճ։
Խաց գեարընցան մարու թացան բիրէք ուտեմ լաճ եմ բիրե լաճ,
Ակռաւակօ սև գեարէ խաց զրե գէօրէօմազտ բիրէք ուտեմ,
քեաճ եմ բիրե քեաճ։
Լաճն ի աղա, լաճն ամիրա, խօրօտ-մօրօտ ոսկի բըռչամ լաճ»։

Տատմէր ծափուն տալով կը հեռանայ, իսկ Խաչատուր Խրիմեանը կը բերէ, կը բանայ իրենց հայրենի տան հնատիպ Աստուածաշունչը, որուն կողքին կ'արձանագրէ.

«ի թուականութեան Հայկազեան տումարիս ՌՄԿԹ և յամի Տեառն Փրկչին մերոյ 1830 Ապրիլի 4, ծնունդն երկրորդ որդւոյն, եղբօր իմոյ»։

Տանտունի վերին անկիւնը պառկած է ծննդկան-մայրը, Նորածինի կոնդախը (խանձարուր) կողքին դրած։ Ազգական, բարեկամ և դրկից կանայք շրջապատեր են ծննդկանի անկողինը և ուրախ զուարթ խօսակցութիւններով լեցուցեր են տանտան մթնոլորտը։

Օճախի վրայ, պղնձեայ մաքուր կաթսայի մէջ ջուրը կ'եռայ քրփրը-քրփրը։ Ջահել հարս մը մատուցարանի վրայ կը շարէ չիճի և ճառճառ կըթոցները (բաժակ), և իւրաքանչիւրի մէջ, մեծ գդալով մը կը ծորացնէ ձագոց մեղրը, որուն վրայ եփուն ջուր լեցնելով մեղրով շարբաթը կը հրամցնէ խաթուններուն։ Տարիքաւոր խաթուն մը հանդիսաւոր կերպով կը ձայնէ.

— Տատմէր խաթուն, քե մեռնեմ, մատ մը մեղր քսիր վէր տղի բերնին, որ քաղցրախօս, մեղրալեզու էլնի։

Տատմէրը մատ մը մեղր կը մատէ և կը մօտենայ Նորածինի լաճու խանձարուրին ու բչիկ մը մեղր կը քսէ մանկան կարմրիկ շրթունքներու վրայ։ Այս գործողութենէն յետոյ է միայն, որ խաթունները հազար ու մի բարեմաղթութիւններով կը վայելեն մեղրով շարբաթը, քաղցր ու տնուշ խօսելով ու շաղակրատելով։

Մէկ շաբաթ յետոյ պիտի կատարուի Նորածինի մկրտութիւնը։ Ըստ տեղական սովորութեան, մանուկը ծնունդէն ութ օր յետոյ պիտի մկրտուի և արժանանայ Կանաչ Մեռոնին։

Արևածագէն առաջ Խրիմեաններց տանտան մէջ իրարանցում կը տիրէ։ Տատմէր և տան կանայքն իրար խառնուած են, Նորածինի մկրտութեան և մեռոնի համակ ճերմակ շորերը կը պատրաստեն, կարմիր-սպիտակ թելերն իրար կաներ (ոլորեր) են —Նարօտն է այդ։ Կոնդախը պատրաստ է։ Տատմէրը կը գրկէ խանձարուրը, երկու կանայք, կնքահայր և Նորածինի հօրեղբայր Խաչատուրը կ'ընկերանան տատմօր։ Այս համեստ թափօրը տունէն դուրս կուգայ և գարնան պայծառ արեգական շողերուն տակէն քալելով կ'իջնէ Ծանկոյսների ձորը։ Գետակի փայտեայ կամուրջին վրայէն անցնելով, Մեռոնի Առուն շուռ կուտան և կը մտնեն Ծանկոյսների Պատիկ Տաճար Ս. Աստուածածնին եկեղեցին, ուր պատարագ կայ։ Նորա-

ծիններու մկրտութիւնն անպայման պատարագով պիտի կատարուէր. հայկական հնաւանդ սովորութիւն էր այս, որ սրբութեամբ կը պահուէր Հայութեան մէջ։

Եկեղեցիի աջակողմեան դասի պատին մէջն է մկրտութեան քարափոր, մաքուր աւազանը, որուն մէջ ժամհարը մեղմ-տաք ջուր կը լեցնէ։ Պատարագի ընթացքին կը կատարուի Երիմեանենց ութնօրեայ մանկան մկրտութեան կարգը։ Մկրտող քահանան Մայր-Մաշտոցն ի ձեռին, ծանր ու հանդարտ կը կարդայ աղօթքները և ապա խոսքը մանկան կնքահօրն ուղղելով երեք անգամ կը հարցնէ.

—«Երախայն զինչ խնդրէ...»։

—«Հաւատք, յոյս, սէր և մկրտութիւն...» կը պատասխանէ կնքահայրը։ Ծեռոյ քահանան կանաչ մեռոնով կ'օծէ մանկան ճակատը, աչքերն ու ականջները, երեսն ու շրթունքները, կուրծքն ու կռնակը, ձեռներն ու ոտները, մինչ մանուկը բարձր ու զիլ կուլայ, կը ճչայ, տատմէրն ալ աճապարանօք, մեռոնաշաղերով կը պատէ, կը խանձարուրէ զայն և կը յանձնէ կնքահօր, որ խանձարուրը գրկած, երկու ձեռին՝ երկու մոմ բռնած, կը բարձրանայ սեղանը և խանձարուրը կուտայ պատարագիչ քահանային։ Պատարագիչը խանձարուրը գրկած, շուռ կուգայ սեղանին բոլորտիք, կը կատարէ կարգը, կ'օրհնէ մանկան ծնունդը և խանձարուրը կը յանձնէ կնքահօր։ Տատմէրը կանաչ, թափանցիկ շղարշ մը կը քաշէ մանկան երեսի վրայ և խանձարուրը գրկելով կ'ուղղուին դէպի տուն։ Եկեղեցիին մէջ կանայք կը մօտենան և մանկան կանանչ մեռոնը կը համբուրեն, կ'օրհնեն։ Նոյն բանը կը շարունակուի փողոցներու մէջ, մինչև որ հասնին տուն, ուր տղակնունքի ճաշկերոյթի սեղանն արդէն պատրաստ է։ Ազգականներ, բարեկամներ, դրկիցներ հաւաքուեր են և երբ տատմէրը տանտուն կը մտնէ բոլորն ալ հաւատքով ու ջերմեռանդութեամբ կը մօտենան ու կը համբուրեն մանկան կանաչ մեռոնը և ապա ուրախ ձայնով կը հարցնեն.

—Տատմէր խաթուն, աննուն ինչ դրին։

—Աստծուն ծառայ, ձեզ ծառայ՝ ՄԿՐՏԻՉ...։

—Անուով ծերանայ, Սիմոն Ծերունի դառնայ։

—Ամէն, ամէն, Աստուած անթառամ պսակին արժան անի։ Տղակնունքի ճաշկերոյթն է։ Տանտան մէջ, ծննդկան մօր անկողնու

կողքին դրեր են կլոր, տախտակեայ ցած սեղանը, որուն բոլորտիք շարուեր են խաթունները և հազար ու մի շաղակրատութիւններով, նազ ու տուզով, «անուշ արէք»ներով, կը վայելեն սեղանի առատ բարիքները։

Վերնայարկի սենեակին մէջն ալ, յատուկ սեղանի մը շուրջ բոլորուած են տղամարդիկ, որոնք ծնկաչոք նստած մինդարներու վրայ, լուրջ ու խոհուն խօսակցութիւններով, գինիի կըթզանները ձեռքերնին բարեմաղթութիւններ կ'ընեն ու կը վայելեն անուշ գինին, համադամ մազաներու հետ։

Մանուկ ՄԿՐՏԻՉի հայրն ու Խաչատուր հօրեղբայրը, կողք-կողքի նստած, անվերջ «հրամեցէք»ներով և «անուշ արէք»ներով կը պատուեն հիւրերը։ Սեղանին վերնակողմը նստած են մանուկ ՄԿՐՏԻՉը մկրտող և պատարագիչ քահանաները, որոնք հազար օրհնութիւններ և բարեմաղթիւններ կը տեղան՝ նորածինի արեշատութեան, ծնողաց երջանկութեան և օճախի շէն ու պայծառութեան մասին։

Այդ օր Երիմեաններց ՄԿՐՏԻՉին հայրն ու Խաչատուր հօրեղբայրը շէնշող ճաշկերոյթ մը տուին նաև իրենց կտաւի գործանոցի բոլոր վարպետներուն, բանուորներուն, աշկերտներուն և թաղի ազգատներուն ալ բաժին հանեցին տղակնունքի ճաշէն։

---

Ամենայն Հայոց Հայրապետանիստ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, Աղթամարի և Կիլիկիոյ մասնակի Կաթողիկոսութեանց և Երուսաղէմի Պատրիարքութեանց կողմէ, ըստ հնաւանդ սովորութեան, զարգացած և քարոզիչ նուիրակ վարդապետներ կամ եպիսկոպոսներ, կաթողիկոսական կոնդակներով կ'առաքուէին Հայաստանի ամէն կողմերը և անգամ հեռաւոր Հայ գաղութները—Պարսկաստան, Հնդկաստան, Չինաստան և այլուր, յօգուտ՝ յիշեալ աթոռներու «բարեզարդութեան և պայծառութեան՝ Հայոց բարեպաշտ և առատաձեռն ժողովրդեան» մէջ դրամական հանգանակութիւններ կատարելու։

ԺԹ-րդ դարի առաջին քառորդին, 1820 թուի Մարտ ամսի սկզբին, Էջմիածնէն նուիրակ եպիսկոպոս մը, Եփրեմ Կաթողիկոսի կոնդակով, կը ժամանէր Վան, ջերմ ընդունելութեան արժանանալով քաղաքի Հայութեան կողմէ։ Էջմիածնի նուիրակ եպիսկոպոսը ամէն

կիրակի հոգևոր քարոզները կը խօսէր եկեղեցիներու մէջ, յորդորելով, որ ժողովուրդը չերմ սիրով կապուի Մայր-Աթոռ Էջմիածնի հետ։

Այն օրը—1830, Ապրիլի հաւանաբար 12-ին—երբ Խրիմեանենց ութնօրեայ մանուկը Ճանկոյների Ս. Աստուածածին եկեղեցին մէջ պատարագով մկրտեր են, Էջմիածնի նուիրակ եպիսկոպոսը, իջևաներ է այդ եկեղեցին և խուցի մը մէջ պառկած քներ է։

Երիկոյեան կողմ, ժամին ատեն, երբ յիշեալ եկեղեցիի քահանաները գացեր են նուիրակ եպիսկոպոսը եկեղեցին՝ ժամասացութեան հրաւիրելու, նուիրակը լուրջ կերպով հետևեալ հարցումն ուղղած է քահանաներուն.

—Այսօր, այս եկեղեցիին մէջ նոր բան մը պատահեր է։

—Ուշադրութեան արժանի բան մը պատահած չէ—կը պատասխանեն քահանաները—միայն թէ այսօր առաւօտ պատարագով մկրտեցինք Խրիմեանենց ութնօրեայ մանուկ մը և անունն ալ ՄԿՐՏԻՉ դրինք, սակայն ինչու հարցուցիք, Սրբազան հայր, ինչ կայ։

—Ոչինչ, ես այսօր տարօրինակ երազ մը*) տեսայ։ Անա թէ ինչ։ Այս եկեղեցիի դրան առջև, մեծ ու հսկայ կաղնի ծառ մը բուսեր էր՝ հաստ ու երկար, տերևախիտ չորս ճիւղերով, որոնք Հայաստանի արևելք, արևմուտք, հարաւ և հիւսիս տարածուելէ յետոյ անցան աշխարհի չորս կողմերը։ Քահանայ եղբարք, այս երազս կը պատկանի այսօրուայ ձեր մկրտած ՄԿՐՏԻՉ մանկան, որը կը գուշակեմ թէ շատ Մեծ Մարդ պիտի ըլլայ և անոր անունն ալ երազիս կաղնի ծառի ճիւղերուն պէս, պիտի տարածուի աշխարհի չորս կողմերը։ Այսօրը ձեզ նշան թող ըլլայ, գացէք և իմ այս երազը տեղ մ՚արձանագրեցէք։

Կը պատմուի, որ նուիրակ եպիսկոպոսի այս երազը արձանագրուած էր Ճանկոյների եկեղեցիի ձեռագիր հին Ճայսմաւուրքի մը կողքին և այդ կերպով ալ յիշեալ երազ-զրոյցը ժողովրդականացեր ու տարածուեր էր Վանի մէջ։

---

*) Այս երազը ինձ պատմեցին՝ Հայոց Հայրիկի եղբօր որդին՝ այժմ ծերունազարդ Վահան Խրիմեան (Էջմիածին), վանեցի Տէր Կարապետ Աւագ Քահանայ Մանուկեան, Վարագայ «Ծաւանգաւորաց Վարժարան»ի ուսուցիչ Մարտիրոս Խէրանեան (Թաւրիզ) և ուրիշները։

Հայոց Հայրիկի մասին եղած գրականութեան մէջ, այս երազը ցարդ հրատարակուած չկայ, իսկ եթէ եղած է, մեզ անյայտ է։

Խրիմեանենց տանտունի մէկ անկիւնը դրուած էր փայտեայ օրօրոցը, որուն մէջ գիշեր ցերեկ բինդ(կապեր)ով կապուած կը ննջէր մանուկ Մկրտիչը։ Արթուն ժամանակ, անքարբառ մանուկը իւր երկու փափկիկ թեւերը կը պարզէր և օրօրոցի ճաղէն կապուած կապոյտ ուլնիկներու և շրխկիկներու հետ կը խաղար, կը ժպտար և կամ յանկարծ կուլար, յետոյ կը ծրծէր մօրկան կաթը և մրուր-մրուր կը ննջէր՝ անմեղ ու անուշ։

Գարուն, ամառ և աշուն մանուկ Մկրտիչի օրօրոցը կը տանէին այգին, ծառերու հովանիներու տակ, կանանչազարդ և ծաղկաւէտ ածուներու մէջ և բնութեան բաց ու ազատ օդն ու արև, հովն ու զեփիւռը՝ վայելել կուտային այդ սիրուն ու քնքուշ մանուկին, որ տան զարդն ու ծաղիկն էր, իւր ծնողաց պաշտելին, հօրեղբայր Խաչատուրի սիրելին-մանուկ Մկրտիչը...։

Ձմեռուայ գիշեր է։ Խրիմեանենց տանտունը լուսաւորած է ճրագի աղօտ ու պլպլուն շողերով։ Մանուկ Մկրտիչի հայրը խոր ու անդորը քուն մտած է, իսկ մայրը կէս քուն-կէս արթուն, նստեր է մանկան օրօրոցի մօտ, հանդարտ կերպով կ'օրօրէ օրօրոցը, որուն շրխկիկները շր՛խկ-շր՛խկ կը շրխկան իրենց միօրինակ ու ներդաշնակ ձայներով թմրութիւն կուտան արթուն մանկան, որուն աչքերը բացխփիկ կ'ըլլան։ Կանացի, մայրական մելանուշ ձայն մը կը տարածուի տանտունի խաղաղութեան մէջ։ Մանուկ Մկրտիչի մայրը օրօր կ'երգէ—Հայ մօր օրօրը։

Oror, բալա՛մ, oror բալա՛մ,
Ի՞արդար ասեմ fo fուն տանի,
Շուտաւ ծաղիկ՝ fo վարդ երեսին,
Զրդզդուն fամին՝ fo ororոցին.
Oror բալա՛մ, դարդա՛ր բալամ։

Գիշեր fե դնեմ ոսկի ororոց՝
Վերեդ fաշեմ մարգրեէ ծածկոց,
Ցերեկ fե դնեմ փիեէ ororոց՝
Վերեդ fաշեմ կեաւե ծածկոց.
Oro՛r բալամ, դարդա՛ր բալամ։

Գիշեր fե դարդար ասեմ
Եես լիւսնկաւ, խես ծեր-պես
ասպետաց.
Ցերեկ fե դարդար ասեմ խես
արեգական,
Եես գոյնզգոյն ծաղկներաց.
Oror բալա՛մ դարդար բալա՛մ։

Գիշեր fե դարդար ասեմ հայեվար,
Ցերեկ fե դարդար ասեմ տանկեվար,
Լուսնակ fե դարդար ասեր,
Արեգակ fե դասրական հլներ.
Oror բալա՛մ, oror բալա՛մ։

Սակայն ինչու Հայ մայրը, գիշեր իր զաւակը «ոսկի օրօրոցի» մէջ կը դնէր՝ վրանն ալ «մարգարտէ ծածկոց» կը քաշէր, իսկ ցե-

րեկը՝ «փէտէ օրօրոց» կը դնէր և վրան «կտաւէ ծածկոց» կը քաշէր։ Ի՞նչու Հայ մայրը գիշեր իր զաւակի համար «հայեվար դարպար» (օրօր) կ'ըսէր, իսկ ցերեկը՝ «տաճկեվար դարդար»։

Հայ մօր սրտալի օրօրին մէջ ի յայտ եկող այդ խօսքերը կը պատկերացնեն ամբողջ դարաշրջանի մը բռնակալ քաղաքականութեան միջավայրը, որուն մէջ կը տնքար ու կը տառապէր Վասպուրականի Հայութիւնը ԺԹ-րդ դարի առաջին քառորդին— 1820 ական թուականներուն—երբ Վանի տաճիկ բռնաւոր փաշաներն ու դարաբէյինները, իրենց արիւնոտ ու մահաբաշխ թաթին տակ ստեղծեր էին սարսափի և արհաւիրքի այնպիսի կացութիւն մը, կեղեքումի և հարստահարութեանց այնպիսի զարհուրելի վիճակ մը, որոնց մէջ Հայութիւնը կ'ապրէր իբր կենդանի նահատակ։

Տաճկական լուծն այնքան ծանր ու ճնշիչ էր, այնքան դառն ու կսկծալի, որ Հայերը դարձեր էին բոլորովին իրաւազուրկ և տրուկ տարր՝ հարկատու և արհամարհուած։ Հայերն իրաւունք չ'ունէին փողոցի վրայ պատուհաններ ունենալու, հայերէն երգեր երգելու, ձի հեծնելու, կարմիր կօշիկ հագնելու։ Երբ փողոցէն տաճիկ մը երթար, Հայը պարտաւոր էր անոր ետեւէն քայլել, յառաջ չ'երթալ։ Նոր հագուստ հագնիլ, հրապարակաւ ուրախանալ, զբօսավայրեր երթալ, հարուստ երեւալ—այս բոլորէն Հայն զուրկ էր և անիրաւուած։ Արեւը մայր կը մտնէր։ Հայը պարտաւոր էր փակել դուռները և ներս մտնել։ Լուսաբացին ամէն մարդ իր տան կամ խանութի գործով կը զբաղուէր։ Հարուստը կը ջանար աղքատ երեւալ, աղքատը՝ հարստանալու ետեւէն չ'էր իյնար, արհեստաւորը հազիւ կը ճարէր իւր օրուայ հացը։

Հայ մայրը կը վախնար իւր զաւակը օր ցերեկով «ոսկի օրօրոց»ին մէջ դնել, վրան «մարգրտէ ծածկոց» քաշել և «հայեվար դարդար» երգել։ չէ որ տաճիկ հարկահաւաքն ու արիւնարբու ենիչէրի զինուորը և կամ թաղին բռնակալն ու դարաբէյին՝ յանկարծ կրնային ներս մտնել և թալանել ու աւարի տալ «ոսկի օրօրոց»ն ու «մարգրտէ ծածկոց»ը, իսկ «հայեվար դարդար» երգող մօրն ալ կրնային, «իրաւունք ունէին?» ծեծել, քանակոծել, անգամ՝ բռնաբարել։

Հայ եկեղեցիները իրաւունք չ'ունէին զանգեր կախելու, որ զանգահարութեան ձայնը տաճիկ մոլլայի ձայնէն ուժեղ չը հնչէր, որ զանգերու ղօղանջները բռնակալներու քունն ու անդորրը չը վրդովէին կայլն։ Իւրաքանչիւր Հայ տունէն ներս տաճիկի ահն ու սարսափն էր, որ կ'իշխէր, չէ որ—«Տաճիկի ահը դէն է՝ քան մահը»։

Հայ մանուկը եթէ լար, աղմկէր, մանկական անմեղ չարաճճիութիւն ընէր և կամ անկողնի մէջ պառկած ճըլվըլար, չը քնէր՝ մայրը կը սաստէր ու կը վախցնէր զայն ըսելով—«Ծուս, տաճիկ կուգայ ականջդ կը կտրի...»։—Սարսափելի էր այս սպառնալիքը, որ կը կապէր մանկան լեզուն, կը խռովէր անոր հոգին և քիչ առաջուայ ուրախ մանուկը կը տխրէր, ահաբեկումի ենթարկուած կը թմրէր ու աչքերը կը վախէր ննջելու։ Մօրկան սիրտը սևաւոր ու դարդաւոր կը դառնար—ինչու տաճիկի անունով ու ահով ահաբեկեց իւր աչքի լոյս զաւակը։ Ի՞նչ ընէր, ժամանակը չար էր, ահաւոր և դաժան։

Սակայն տաճիկ մայրը, ինչ կ'ըսէր երբ իւր զաւակը լաց լինէր կամ չարութիւն ընէր—«Քնիր բալա ջան, կը մեծանաս, խանչալը կ'առնես ու գնավուրի (անհաւատի, Հայի) տղայի վիզը կը կտրես»։—Եւ տաճիկ մանուկը, արեան յոյսով յագեցած, կը փակէր իւր աչքերը։

Հայութիւնը ենթակայ էր ամէն տեսակ արհաւիրքներու—թալան, աւերածութիւն, ընտանեկան պատուի բռնաբարումը և նման երևոյթներ սովորական էին։ Տաճիկը իւր եաթաղանի ուժով արիւնի և մահուան սարսափի տակ կը պահէր Վասպուրականի Հայութիւնը։

Վանի Հայ հարուստ ու վաճառական դասակարգի համար, սակայն, տանելի չ'էր քաղաքական այս մթնոլորտը, ուր ոչ միայն Հայը զրկուած էր մարդկային տարրական ազատ կեանքէն, այլև խաղաղ ու ստեղծագործ աշխատանքով չէր կրնար զբաղուիլ տաճկական լուծին տակ։

Վաճառականներու վաստակը՝ յայտնի և անյայտ բռնագրաւման, երթևեկը՝ յարձակումներու և կարաւանները՝ կողոպուտի կ'ենթարկուէին։

Այս պատճառով ալ, ԺԹ-րդ դարի առաջին քառորդին, քանի մը նշանաւոր գերդաստանները կը յաջողէին իրենց ընտանիքներով

և շարժական հարստութեամբ գաղթել Վանէն և հաստատուիլ ի Կովկաս, գլխաւորաբար Թիֆլիսի մէջ*)։

Այսպէս զարհուրելի էր Վանի քաղաքական միջավայրը, անտանելի էին տաճկական զուլումներն ու սարսափները, երբ աշխարհ կուգար ՄԿՐՏԻՉ ԽՐԻՄԵԱՆԸ.

Մանուկ Մկրտիչի անմեղ և անհոգ մանկութեան շրջանն է։ Լեզուն կիցկտուր բառեր կը թօթուէ, կը ճլվլայ։ Ձեռները ծափիկ կուտան, ոտները տոտիկ-տոտիկ մանրիկ քայլեր կ'առնեն։ Կը վազէ այգին, փողոց, կտաւի գործանոց, տունէն ներս ու դուրս, տան ծաղիկն ու զարդն է ՄԸԿՕՆ, որ սիրունատես, աշխոյժ, կայտառ և թրվռուն մանուկ մըն է. Ամէնքը կը գրկեն զինք, կը գուրգուրան վրան, կարմիր-խնձոր թուշերը կը պաչպչեն, մինչ նա կուլայ, կը զայրանայ և կը չանայ փախչիլ։ Կը մտնէ այգին՝ ծաղիկներու ածուներու մէջ, ծաղկունք կը քաղէ, իբր թէ կ'երգէ՝ մինչ դեռ կը դընդրնայ, ապա յանկարծ կը վազէ փողոց, ուր իրենց դրկից և հասակակից մանուկներու հետ, առուի ափին նստած՝ ջրախազեր կը սարքեն, յետոյ, մէկ ալ, յանկարծ աղմուկ կ'իյնայ մէջերնին, կուլան, իրար կը ծեծեն, պահ մը կը խռովեն, կը հաշտուին

*) Այդ գերդաստաններն էին՝ ա) Դէորգ Աղա Երան-Արծրունին, իւր գերդաստանով։ Դէորգ Աղա Արծրունին իւր «Դարաստան Խրատուց» գրքին մէջ կը գրէ—«Էր ինձ նեղութիւն փորձանք բազմագին, 'ի հայրենիս իմ ընդ իս անցք անցին»։ Դէորգ Աղա Արծրունին 1816 թուին գնաց Եւրոպա և Ամստերդամի Հայոց եկեղեցիի մէջ պահուած տպարանը (Երևանցի Ոսկան վարդապետի) և տաւերը գնեց ու Թիֆլիս բերելով, նուիրեց Ներսէս Աշտարակեցիի հիմնած Ներսիսեան Դպրոցին։ Տպարանը կը կոչուէր «Տպարան Ուսումնարանի Հայոց ընծայեցելոյ յաղնուական Դէորգայ Երեմեան Արծրունւոյ»։ Դէորգ Աղան մեռաւ ի Թիֆլիս 1830 թուին, խօլերայով։ Դէորգ Աղայի որդին էր գեներալ Երեմիա Արծրունին (ծնեալ ի Վան 1804-ին), որ ռուսաց բանակի մէջ մտնելով մասնակից եղաւ 1827-ի ռուս-պարսկական և 1828-ի ռուս-տաճկական պատերազմներուն։ Գեներալ Արծրունին մեռաւ ի Թիֆլիս 1877-ին։ Երեմիա Արծրունիի որդին էր Դրիգոր Արծրունին, (ծնեալ 1845-ին) «Մշակ» թերթի հիմնադիրը և ազգային մեծանուն գործիչը, որ մեռաւ 1892-ի Դեկտ. 19-ին և մեծ չուքով թաղուեցաւ Թիֆլիսի Խօջիվանքի գերեզմանատուն։ Գր. Արծրունիի փոքր եղբայրն էր գիտնական պրոֆ. Անդրէաս Արծրունին (ծն. 1847 վախճ. 1898)։

բ) Մահտեսի Կոստար (Դաստար) Բարսեղեան-Շարուխչեան հարուստ վաճառականը իւր գերդաստանով Վանէն գաղթեց Թիֆլիս, ուր երկար տարիներ

և նորէն կը շարունակեն իրենց մանկական անմեղ ու զուարճալի խաղերը։

Երեկոյեան կողմն է։ Ժամին կոչնակը կը զօղանջէ և Յանկոյսների ձորը կը լեցուի անուշ ու մեղմ արձագանգներով։ Խաչատուր Խրիմեանը, երբ կոչնակի առաջին հնչիւնը կը լսէ, երեսը կը խաչակնքէ, կտաւի գործանոցէն դուրս կուգայ, գործի գոգնոցը կ'արձակէ, փոքրիկ Մրկոի ձեռքէն բռնած առուի եզերքը կուգայ, երեսը կը լուայ սառն ջուրով և ապա կ'ուղևորուի եկեղեցին, իր հետ տանելով Մրկօն, որ կը վազէ, ցատկրտուքներ կ'ընէ, կը կանչէ, կը խնդայ, հարցումներ կ'ուղղէ հօրեղբօր, մինչև որ կը հասնին եկեղեցին։ Հօրեղբայրը կը համբուրէ եկեղեցիի դրան կողքի քարերը, նոյն կ'ընէ նաև Մրկօն։ Ներս կը մտնեն, ջերմեռանդ և և բարեպաշտ Հայ քրիստոնեայ Խաչատուրը՝ անէացած՝ կ'երկրպագէ և աղօթքները կը մրմնջէ։ Մանկիկ Մրկօն լուռ և զարմացած կը դիտէ հօրեղբօր դէմքը, կը լսէ անոր աղօթքները և ինքն ալ անգիտակցաբար կ'երկրպագէ, կը խաչակնքէ, մինչև որ ժամերգութիւնը կը վերջանայ և կը վերադառնան տուն։ Երեկոյ է։ Հայ նահապետական ընտանիքը հացի սեղանին շուրջ բոլորուած՝ երեկոյեան ընթրիքը կը վայելեն։ Մանկիկ Մրկօն հօր կողքին նստած

---

ապրելէ յետոյ 1824-ի Նոյեմբերի 12-ին, իր մօտ կանչեց Աղա Գէորգ Արծրունին և Յարութիւն Վարդանեան Ջերմաղան, խնդրելով որ ասոնք ըլլան իւր կտակակատարները և անոնց համաձայնութիւն առնելէ յետոյ, գրել տուաւ իւր կտակը, ստորագրեց և 15,000 արծաթ րուբլի (որ այն ատենուայ համար հսկայական գումար էր) կտակեց Վանի և Թիֆլիսի եկեղեցիներուն, դպրոցներուն, աղքատներուն, բանտարկեալներուն, իւր ժառանգներուն և այլն։

գ) Վան քաղաքացի Աղա Սարգիս Սանասարեանը, որ ամուսնացած էր իւր հայբենակից Աղա Գէորգ Հէյրանեանի դուստր Մարիամի հետ։ Այս ամուսնութենէն 1818-ին ծնաւ Աղա Մկրտիչ Սանասարեանը—աղգային նշանաւոր բարերար, Կարնոյ Սանասարեան և Վանի Սանդխտեան վարժարաններու հիմնադիրը։

դ) Վան քաղաքացի վաճառական Աղա Գէորգ Հէյրանեանը, որ 1818-ին Թիֆլիսէն անցաւ Փարիզ վաճառականական գործերով։

Դեռ երկար է շարքը այն նշանաւոր գերդաստաններուն, որոնք ԺԹ-րդ դարի սկիզբներուն, Վանէն Գովկաս գաղթեցին չը կրնալով տակալ տաճկական արհաւիրքներուն։

անմեղ ու հաճելի խաղերը կ'ընէ, մինչև որ յոգնութիւնը կ'իջնէ վրան, մէրկան թևերուն մէջ կը թմրի և ապա կը դնեն անկողին, ուր քաղցր անուշ՝ կը ննջէ մուշ-մուշ։

Այսպէս կ'անցնին տարիները։ Մրկոն արդէն եօթ տարեկան է։ Մնողները այլևս թող չ'են տար, որ անգործ ու աննպատակ դէս ու դէն վազվզէ։ Մրկոի հայրն ու հօրեղբայր Խաչատուրը կ'որոշեն Մրկոն գործի դնել։ Ո՞րն էր այդ գործը—իրենց պապենական արհեստը, կտաւագործութիւնը։

Ահա Խրիմեաններց կտաւի գործանոցը, ուր մանուկ Մկոի հօրեղբայր Խաչատուրը, ոտները գետնափոր խորին մէջ կախած, մաքուրը անտեսանելի արագութեամբ կ'երթևեկէ անոր ձեռքերուն մէջ և շը՛խկ-շը՛խկ, կտաւը կը գործուի։ Վարպետ Խաչատուրի կողքին գետնի վրայ, ճախարակի առջև, ծնկաչոք նստեր է փոքրիկ Մրկոն և մատրա կը լեցնէ։ Կտաւի գործանոցի շըխկ-թըխկոցներու և ժխորի մէջ վարպետ Խաչատուրը ժում-ժամ կը գտնէ մանուկ Մրկոին ուսում և դաստիարակութիւն տալու։ Չէ որ քաղաքին մէջ, այդ ատեններ դպրոցներ գոյութիւն չ'ունէին։ Վանքերու մէջ—Աղթամար, Վարագ, Լիմ և Կտուց Անապատներ, Նարեկ, Մեծոփ—կային դպրատուներ և վանական դպրոցներ, որոնց մէջ սովրող աշակերտները պէտք էր հոգևորականներ դառնային։ Վանի եկեղեցիներու շրջապատի փոքրիկ խուցերու մէջ, քահանաները կը հաւաքէին քանի մ'աշակերտներ և անոնց գրել, կարդալ ու եկեղեցական շարականները կը սովրեցնէին, տիրացուները և դպիրները պատրաստելու նպատակով։

Երբ տղայ մանուկը եօթ կամ ութ տարեկան ըլլար, հայրը ձեռքէն բռնելով կը տանէր կտաւագործ, կօշկակար, ոսկերիչ, ներկարար (կտաւ ներկող, շիլաջի) և այլ արհեստի վարպետի մը մօտ —ուսթի մոս—և կը յանձնէր անոր խնամքին։

Վարպետը, կամ ինչպէս ընդհանրապէս կ'ըսէին—Ուսթաճ՝ պարտաւոր էր իւր նորեկ աշկերտին ոչ միայն արհեստ, այլև ուսում սովրեցնելու։ Վարպետները առհասարակ «ուսումնական» և «կարդացուր» էին, անոնք Ս. Գրոց պատմութիւնները, Սաղմոս, Նարեկացի, Թլուսս Որդի, անգամ քերականութիւն և Հայոց պատմութիւն դաս կուտային իրենց աշկերտներուն, որոնք տարիներու ըն-

թացքին թէ արհեստ կը սովրէին և թէ ուսում։ Ուսթանները դրամական աշխատավարձ չէին տար իրենց աշկերտներուն։ Անոնք պարտաւոր էին ձրիաբար աշխատել, արհեստի մէջ հմտանալ և ուսում սովրիլ։ այս էր աշկերտներու վարձքը։

Ահա նման ուսթաններէն մէկն ալ Խաչատուր Խրիմեանն էր, որ այդ տեսնները (1820ական թուերուն) Վանի մէջ իբրև ուսեալ և բանիմաց Ուսթայի անուն և համբաւ հանած էր։

Այս ծանօթ Ուսթա-վարժապետին աշակերտեց ՄԿՐՏԻՉ ԽՐԻՄԵԱՆը, որ ոչ միայն կտաւի գործանոցի մէջ մասրա լեցնելու ժամանակ կենդանի ուսում կը ստանար, այլև իրենց տան և ընտանիքի մէջ, ամէն րոպէ կը վայելէր իւր հօրեղբայր Խաչատուրի դաստիարակութիւնը և ուսումը։ Մանուկ Մկրտիչը այնքան տարուած էր հօրեղբայր Խաչատուրով, որ կարծես թէ մոռցեր էր իւր ծնողները, որոնք հաճոյքով իրենց զաւակը յանձներ էին այդ արդարամիտ և գորովագութ Մարդու—Խաչատուրի—խնամքին ու հոգատարութեան։ Թող մանուկ Մկրտիչը—ինքը վկայէ այս բոլորը։

«... կը յիշեմ մանկութեանս գարնան քաղցր օրերը, երբ միմիայն մանուկ Մկրտիչ քոյ սիրոյ ծաղիկն էր։ Օրրա համար ես մոռցած էի ծնողք և բոլոր Խրիմեան գերդաստանի մերձաւորները. զի դու էիր ինձ համար հայր, մայր, դաստիարակ, վարժապետ, խնամածու ևայլն։ Ամուրի կեանք ընտրեցիր ու սիրեցիր, որպէսզի քո սիրեցեալ եղբօրորդին որդեգրես քեզ»*)։

Խաչատուր Խրիմեանը Հայ Լուսաւորչական քրիստոնեայի կատարելատիպ մարմնացումն էր, որ կը ջանար Աւետարանի ոգով դաստիարակել իւր եղբօրորդին—Մկրտիչը—որուն հայրը անչափ գոհ ու երջանիկ կ'ըլլար, որ իւր զաւակը օրստօրէ թէ ուսման և թէ արհեստի մէջ կը յառաջդիմէր։ Ամբողջ օր, մանուկ Մկրտիչը, իւր հօրեղբայր Խաչատուրի հետն էր։ Լոյս բացուելուն պէս միասին եկեղեցի կ'երթային, կ'աղօթէին ու կտաւի գործանոց մտնելով կ'աշխատէին։ Իրիկուան՝ երբ ժամին կոչնակը կը հնչէր, նորէն եկեղեցի կ'իջնէին և իրենց գործէն ու կեանքէն գոհ՝ կ'երթային Արա-

*) Ցիսուսի Վերջին Շաբաթ—եաչին ձառ. Հոգեգրեց՝ Խրիմեան Հայրիկ։ Վաղարշապատ, Մայր Աթոռի Տպարան. 1894. էջ՝ Ա-Բ։ (Դ. տպագրութիւն)։

ըիչը փառաբանելու։ Հօրեղբայր Խաչատուրը ոչ թէ վերացական օրինակներով ու խօսքերով կը դաստիարակէր մանուկ Մկրտիչը, այլ իւր կեանքի գործնական օրինակներով, իւր բարի ու գթառատ գործերով, կենդանի փաստերով Մկրտիչին կը սովորեցնէր մարդկային արդարամտութեան, մարդասիրութեան և առաքինութեան դասերը, որոնք այնքան խոր և անջնջելի տպաւորութիւն թողած էին փոքրիկ Մկօի վրայ, որ հիացումով ու երախտագիտութեամբ կը յիշէ։

«Այլ քան զամէն աւելի գործնական օրինակովդ Աւետարանի գթասիրութեան հոգին թողիր ինձ ժառանգութիւն։ Երանի՛ թէ տիրապէս ժառանգէի զայն. բարեգորով մի սիրտ ունէիր և անխտրապէս կը գթայիր ամէն տառապեալ թշուառին վրայ։ Երբ աղքատ դուռը դփէր, կը կանչէիր, Մկրտի՛չ, հաց տուր, և երբ մերկ լինէր աղաչաւոր թշուառ, հրաման կանէիր որ մի քանի կանգուն կտաւ տամ»։

«Արեւուն աչքով կը հսկէիր և ոչ փոքրիկ պակասութեանս կը ներէիր դու։ Կը յիշեմ, որ մի օր ժամու պատկերի առջևէն մի փոքրիկ մոմ առնելով բերի տունը. հարցուցիր և ես առանց ժխտելու խոստովանեցայ. հետևեալ օր զիս տարիր եկեղեցին և նոյն մոմ խաչի պատկերի առաջ վառել տուիր, և քաղցրութեամբ խրատեցիր, որ այլևս սեղանակապուտ չը լինեմ»*)։

Որպիսի՛ հիացում, որպիսի՛ սէր, որ պաշտամունքի հաւասարէ։ Հօրեղբայր մը, որ ծնողքէն աւելի կքցած է սիրոյ և ուսման խոր դրոշմ ու կնիք դնել մանուկ Մկրտիչի սրտի և հոգեկան աշխարհի վրայ, ուր այդ հօրեղբայրը — նոյն ինքն կտաւագործ Խաչատուր Խրիմեանը — յաւերժ սիրելի և պաշտելի մնացեր է Մկրտիչի համար, որ ամէն առթիւ կը յիշէր այդ ճշմարիտ մարդու անունը, կապուած իւր մանկական կեանքի քաղցր ու յուզիչ օրերու հետ։

Եւ օր մըն ալ ահա մանուկ Մկրտիչը — փոքրիկ Մկօն — հիւանդ է։ Ո՞վ խնամեր է զինք այնքան սրտացաւ ու հարազատ կերպով եթէ ոչ՝ հօրեղբայր Խաչատուրը։ Սակայն թող Մկրտիչը պատմէ.

«Ծանր հիւանդացայ մի նուագ, քառասուն օր ամբողջ գլխուս վերայ կեցար, ամէն ճար և դարման կը հայթայթէիր, և մերթ ես

*) Խրիմեաց Հայրիկ — Խաչի ձառ. էջ՝ Գ—Դ։

կերթայիր եկեղեցին, լալով կը պաղատէիր Աստուծոյ, որ ապրի մանուկ Մկրտիչ։ Ապրեցայ քո հաւատով»*)։

Ասկէ աւելի յուզիչ և սրտալի պատկեր կրնար ըլլալ, որ անմեղ մանուկը քառասուն օր ծանր հիւանդ պառկած մընար, հօրեղբայրը գար զայն խնամէր և ապա, երբեմն ալ եկեղեցին երթար և լալով պաղատէր Աստուծոյ, «որ ապրի մանուկ Մկրտիչ»ը, որ իրաւամբ իւր ամբողջ սէրն ու պաշտամունքը նուիրած էր «բարեգործով մի սիրտ» ունեցող հօրեղբայր Խաչատուրին, Խրիմեան գերդաստանի այդ ամուրի և երիցագոյն պատկառելի ներկայացուցչին։

Մանուկ Մկրտիչն արդէն տաս տարեկան է։ Նա թէ իրենց կտաւի գործանոցի մասուռ լցող աշկերտն է և թէ հօրեղբայր Խաչատուրէն ուսում սովորող աշակերտը, որուն մանկութիւնը համակ անմեղութեան և ընտանեկան անդորր միջավայրի մը մէջ անցեր է։

Դժբախտաբար, հակառակ մեր թափած ջանքերուն, չը կրցանք ձեռք բերել ոևէ գրաւոր կամ բանաւոր տեղեկութիւն թէ Մկրտիչի հայրն ու մայրը ինչպիսի ծնողք եղած են, թէ Մկրտիչը անոնցմէ, որքան ազդեցութիւն կրած է։ Գիտենք միայն, որ Մկրտիչի մեծ եղբայր Մսրխանն ալ իրենց կտաւի գործանոցի մէջ, հասարակ արհեստաւոր մը եղած է և իւր հօր ու Խաչատուր հօրեղբօր մահէն յետոյ, շարունակած է կտաւագործութիւնը մինչև իւր մահը։

Վարագի «Ժառանգաւորաց Վարժարան»ի նախկին ուսուցիչներէն Մարտիրոս Խէրանեանը մեզ պատմեց, թէ իւր հօր մայրը ժամանակին ըսեր է, որ Մկրտիչ Խրիմեանի մայրը բարի, ողորմած հոգի և իսկական Հայ մայր մը եղած է, ընտանիքի ճշմարիտ կին մը, որ իր կեանքի վերջին տարիներուն, այնքան ծռեր, կուզ դարձեր էր, որ ուղիղ կանգնել չ'էր կրնար և գլուխը գետին խոնարհեցնելով հազիւ հազ կը քայլէր։ ՀԱՑՈՑ ՀԱՑՐԻԿԸ, որ այնքան հիացումով կ'արտայայտուի իւր հօրեղբայր Խաչատուրի մասին, նա իւր գիրքերու կամ նամակներու մէջ, յիշատակութեան արժանի ոևէ բան մը չի գրեր և խորհրդաւոր լռութիւն մը կը պահէ իւր ծնողներու մասին։

Մկրտիչը շատ ծնողասէր, համեստ ու պարկեշտ զաւակ մը եղած է։ Անոր հնազանդ և խոնարհ հոգին օրինակելի դարձեր է

*) Խրիմեան Հայրիկ—Խաչի ճառ. էջ՝ Դ։

թաղի մանուկներու համար. Թաղեցի ծնողներու ցանկութիւնն էր, որ իրենց զաւակները նմանէին ԿՐԿՄՑՈՑ ՄԸԿՕ-ին, որ ոչ միայն կտաւագործութեան արհեստ կը սովրէր, այլև ուսում։


Խաչատուր հօրեղբայրը կանոնաւոր և յամառ յարատևութեամբ կը ջանար կրօնական և բարոյական ներշնչումներով դաստիարակել մանուկ Մրկօն, որ սիրով կ'ընդառաջէր հօրեղբօր խրատներուն ու դասերուն։

Կապոյտ, շիլա կտաւէ թուլումը (վերնազգեստ), գլխին պարզ գդակ մը, ոտքերը՝ տեղական պարզ կօշիկ։ Թուլումի փէշերը կ'իջնէին մինչև ոտները և շրջազգեստի պէս կը կախուէին։ Ահա մանկական տարազը*) Վանի Հայ մանուկին, հարիւրամեակ մը մեզմէ առաջ (1820ական թուերուն)։ Այդ նոյն տարազը անպայման հագեր է նաև փոքրիկ Մրկօն, որուն ՓԷՇՈՎ տիտղոս մ'ալ տուեր էին թաղեցի ընկեր մանուկները։ Ուրեմն պիտի ենթադրել, որ Մրկօի թուլումի փէշերը այնքան երկար եղած են, որ իջեր են մինչև կօշիկի երեսները և այս պատճառով ալ փէշով կոչեր են զինքը։ ԹԵՈԼ-ՓԷՇ մականուն մըն ալ կապուած է մանուկ Մկրտիչ Խրիմեանի անձի հետ։ Թեոլ-փէշ Վանի բարբառով կը նշանակէ թոյլ փէշերը, թուլումի փէշերը թոյլ-թոյլ կախուած կամ ոտներու մէջ ընկած։


Տարիները յետոյ, երբ Մկրտիչն արդէն պատանի և ապա երիտասարդ եղեր է, դէտ այդ կոչումները—փէշով և թեոլ-փէշ—իրըև տիտղոս կապուած մնացին անոր անուան և անձի հետ։ Չէ որ ժողովուրդի ստեղծագործած բառերն ու կոչումները վառ և անմոռաց կը մնան։ Մանուկ Մկրտիչ Խրիմեանը ՀԱՑՈՑ ՀԱՑՐԻԿ դառնալէ յետոյ ալ, յուզումով և հաճոյքով պատմեր է իւր ժամանակակիցներուն թէ—«Իմ մանկութեանս երջանիկ տարիներուն, մեր թաղեցի հասակակից ընկերներս ինձ փէշով Մրկօ կը կոչէին»։

*) Պարսկական տիրապետութեան շրջաններէն (1514 թուէն առաջ) մնացած տարազի այս ձևը, շուրջ 400 տարի մնաց Վանի մէջ։ Հասակաւոր այր մարդկանց մէջ կային յիշեալ տարազ գործածողները, որոնց մէջ, դեռ մինչև 1915 թուականը, յայտնի էին ձմուկ Յովհաննէս, Փէշով Տիգրան և ուրիշներ։





ՎԱՆ – ՑԱՆԿՈՑՆԵՐ ԹԱՂ., Ս. Աստուածածինի հկեղեցիի ծորակը, որուն մօտն է Թրիմեանց տունը։ Այս չքնաղ ծորակի մէջ Թրիմեան հայրիկը անցուց իւր մանկութիւնն ու պատանեկութիւնը։ Վերի բարձունք նշանաւոր «Թօփրաք–դալէ»ն կամ «Զըմփ–Զըմփ Մաղարէ»ն (ֆ–բ–յբ) է։




ՎԱՆ – ՀԱՑ ԿՏԱՒԱԳՈՐԾԻ ԳՈՐԾԱՆՈՑ։ — Թիւ 1 կտաւագործը հմայադրել Թաչատուր Թրիմեանը, որ իր «դազգահ»ի գլուխը նստած, կտաւ գործելու ժամանակ, ուսում և դաստիարակութիւն տուած է «մասրա լեցնող» իւր հղօրորդի փոքրիկ Մկրտիչ Թրիմեանին, որը հմայադրել թիւ 2 նկարը։

# ՀԱՅՈՑ ՀԱՅՐԻԿ

## ԵՐԿՐՈՐԴ ՏԱՍՆԱՄԵԱԿ

## 1830—1840

### Ա.

### ՎԱՆԻ ՅԱՆԿՈՑՆԵՐԻ ԹԱՂԱՄԱՍԸ

ԱՅԳԵՍՏԱՆի*) ջրառատ, հովասուն, աղբիւրաշատ և բարձրադիր թաղամասն է ՅԱՆԿՈՑՆԵՐը, որ հարուստ է իր աւանդական, պատմական, բնական և հինաւուրց վայրերով, որոնց շուրջ և մէջն ու բոլորտիքը՝ դարերէ ի վեր հաստատուած Հայութիւնը, հայրենիքի հող ու ջուրի սիրով ու պաշտմունքով՝ բնաշխարհիկ և նահապետական պարզ կեանք մը կը վարէր։

Յանկոյսներու ձորը Վանի բնական ամենագեղեցիկ ու հրապուրիչ վայրերէն մէկն է։ Առատաջուր գետակ մ՝ամբողջ տարին խոխոջալով կը հոսի այս ձորին մէջտեղէն և դէպի արեւմուտք երթալով կը թափուի Վանի Ծովի մէջ։

Գետակի երկու եզերքներու վրայ կը տարածուին բազմաշատ ծառնոցներ՝ ուռի և բարդի մատղաշ կամ հաստաբուն ծառերով։ Ձորի հարաւակողմի բարձունքները զարդարուած են բազմաթիւ պարտէզներով և պուրակներով, որոնց մէջ կը հանգչին Յանկոյսներցի Հայոց պարզ ու անպաճոյճ հողաշէն տուները։ Ձորի այս կողմն է նշանաւոր Վոխվի Քեաճրէզը (Վանապատկան աղբիւր), որուն ական գլուխն ու առուի ափերը զարդարուած են ուռի և բարդի

*) Վանի արեւելակողմը տարածուող այս ընդարձակ և այգիազարդ քաղաքամասը—Այգեստան—տեղացի Հայերու կողմէ ԷԳԷՍՏԱՐ՝ իսկ տաճիկներու կողմէ՝ Բաղլար (այգիներ) կը կոչուէր։

տասնեակ հազար ծառերով, որոնց խիտ ճիւղերը տարուբերուելով ծովի և լերանց քամիներով՝ յառաջ կը բերեն սքանչելի հով ու զով մը, որ կը սուրայ ամբողջ ձորին մէջ՝ վերէն վար։ Վոխվի Քեահրէզը, Ծանկոյներուն կիրակնօրեայ զբօսավայրն էր, ուր թաղեցիները կուգային ընտանիքներով՝ կերուխում, ուրախութիւն, երգ ու նուագ, խաղ ու պար սարքելու և բնութեան հաճոյքը վայելելու։

Գարնան առաւօտները, Ծանկոյների ձորը, բնութեան մէկ չքնաղ ու հրապուրիչ պատկերը կը պարզէ մարդ արարածի աչքին առջև։ Արևի շողն ու երկրի շաղն ու ցօղը իրար խառնուած, ծառերու և կանաչներու վրայ կը պսպղան ու փէլէկտան։ Գետակը անուշ և մեղմիկ ջրաձայներով և խշշոցով կը սուրայ, հա՛ կը սուրայ։ Ծառերու տերևախիտ ճիւղերու մէջ, երկնից հաւքերն ու թռչունները հազար ու մի ճրուռուղիւններով ու ճլվլըլոցներով, իրենց արշալուսային երգերը կը գեղգեղեն։

Արդէն իջեր ենք Ծանկոյների ձորը և դարն ի վար քայլելով կը մօտենանք գետակի փայտեայ կամուրջին, որուն վրայէն զգուշութեամբ անցնելով կ՚իջնենք գետակի հանդիպակաց (հիւսիսակողմի) ափը։ Քանի մը քայլ յառաջ երթալով, կանգ կ՚առնենք առատաջուր և լայն առուի մ՚ափին։ Մեռոնի Առուն*) է այդ, որ ամառ ձմեռ՝ կը հոսի Ծանկոյներէն Ս. Աստուածածին Պտիկ Ցաճար եկեղեցիի արտաքին դրան առջևէն։ Ասկէ կը բարձրանանք դէպի վեր և Մեռոնի Առուի ափերէն յառաջանալով կանգ կ՚առնենք Վանից (վանքի) ջրաղացի մօտ։ Ասկէ քիչ մը վեր Բաղնիսայ-Քարերն են, ուր առատ և մշտահոս ջուրերը քարերէն և ձոր-ձորներէն հոսելով, աղմուկով ու խշշոցով կը սահին դէպի վար։ Այս ջուրերու ափին, ծառերու շուքին տակ, մեր հանգիստն առնելէ յետոյ, որքան հաճելի է վերելքը պատմական Թուխրակ-Կալէին (Հողաբերդ)—Վանի նախաքրիստոնէական և նախահայերու կեանքի և փառքի այդ հռչակաւոր գաղտնարանին, որ տասնեակ դարեր շարունակ, իր ծոցին մէջ պահեր է Ուրարտուի, Նայիրիի և Բիանայի արքաներու և տէրերու մեռած ու մոռցուած պատմութիւնը։

*) Ամէն տարի, Ս. Ծննդեան տօնի առաւօտ (Յունուար 6) Ջրօրհնէքի հանդէսի եկեղեցական արարողութիւնը մեծ շուքով կը կատարուէր այս առուի ափին և մեռոնը կը թափէին ջուրի մէջ։ Այս պատճառով ալ այդ առուն կոչուած է Մեռոնի Առու։

Արդէն Թոփրակ-Կալէի բարձունքներու վրայ կանգներ ենք ու խորհուրդ խորին մտքերով տարուած՝ կը սլանանք դէպի այս Հողաբերդի մութ ու մշուշապատ պատմութեան անդունդները, որոնց մէջ որքա՜ն ժողովրդական զրոյց, առասպել և աւանդութիւն կայ, որքա՜ն մանուածապատ խօսքեր, որոնք իրար հիւսուելով ու գուգորդուելով՝ Թոփրակ-Կալէն դարձուցեր են հէքեաթներու և առասպելներու աշխարհ մը, քաջարնակ և դիւցազնական վայր մը, որուն թագն ու պսակը ՉԱԽՐԻ ՓԱԼԱԳ (Աշխարհի Անիւ կամ Պտուտակ) կոչուած վայրն է, ուր, կ'ըսեն թէ—կը դառնայ մարդկային բախտի անիւը և ամէն տարի, Համբարձման գիշերին, ով որ այդ ահաւոր անցքէն ներս մտնէ, երթայ Չախրի-Փալագի մօտ և անոր պտտուիլն ու դառնալը տեսնէ՝ մեծ բախտի կ'արժանանայ։ Չախրի-Փալագէն դէպի հարաւ, քիչ մը վեր, սեպուղորդ ու կարծր քարաժայռի մը կուրծքին մէջ փորուած է քառակուսի քարայր մը —նշանաւոր Զրմփ-Զրմփ Մաղարան*)։ Եկէք ներս մտնենք։

Դրան նմանող մեծ բացուածք մը, որուն մուտքէն կամ շեմքէն կը սկսի վայրէջք մը—մեծաքայլ սանդուխքով, որ 60 աստիճան կ'իջնէ քարաժայռի կուրծքին մէջ և կը վերջանայ քառակուսի քարափոր մեծ այրի մը յատակի վրայ։ Ահա այս է բուն Զրմփ - Զրմփ Մաղարան,—որը մեր ձայներով ու կանչերով կ'որոտայ, ահազդեցիկ արձագանգները կը յառաջացնէ, կը զրմփզրմփայ և կարծես թէ, ամբողջ այդ քարայրը փուլ պիտի գայ և իւր քարերուն տակ թաղէ մեզ։ Վանի ժողովուրդը կ'աւանդէ, որ այդ քարայրի և Չախրի-Փալագի տակէն գաղտնի, մութ և գետնափոր անցք—ուղի մը կայ, որ կ'երթայ կը հասնի մինչև Վանի բերդի անդունդները։ Կը պնդեն, որ հին ատեններ, երբ բերդի և այս քարաբարձունքի վրայ Ուրարտական կամ Նայիրեան իշխանութիւններ եղած են, անոնք գաղտնի ճամբաներով, կռիւներու ժամանակ իրար հետ յարաբերութիւններ ունեցեր են։

---

*) Զրմփ-Զրմփ Մաղարայի բարձունքի վրայ, տաճիկ կառավարութիւնը 1900 թուին չինել տուաւ զինուորական պահականոց՝ դիտաբան մը ուրկից տաճիկ զինուորները կը հետազօտէին Վանի Այգեստանի Հայոց թաղերն ու հեռաւոր ճամբաները, Հայ յեղափոխականներու և ֆիտայիներու շարժումներն ու երթևեկները։ Այս պահականոցը 1915 թուի Մայիս 3-ի երեկոյեան, Հայերու ձեռքով կրակի մատնուելով մոխրակոյտ դարձաւ։

Օ՜, որքան ցուրտ է այս քարայրին ներսը, հովը կը փչէ, չը գիտես վերչէն թէ վարչէն, սակայն կը զգաս, որ մարմինդ կը սարսռայ, կը փշաքաղուի, ահ ու սարսափ կը պատէ քեզ և րոպէ մը առաջ կը ջանաս դուրս թռչիլ այդ ահաւոր քարայրէն — Զրմփ-Զրմփ Մաղարայէն։

Այժմ Թոփրակ-Կալէի վրայ ենք։ Այստեղ կ'երևին նախաքրիստոնէական շէնքի մը վերջին փլատակները, ամբողջովին աղիւսաշէն։ Քիչ մ'անդին քառակուսի, մեծ սպիտակ քարերով կառուցուած ուրարտական տաճարի մը հետքեր։ Դէպի վար՝ սև, քառակուսի մեծ քարերու կոյտեր, որոնք մեծ շինութեան մը փշրանքներն են։ Դիտնականներու, ուղևորներու և տեղացիներու բահն ու բրիչը, տասնեակ տարիներ շարունակ, քանդեր և տակն ու վրայ ըրեր են այստեղերու հողերն ու քարերը։ Ամէն տեղ անխնայ աւերածութիւն, «գիտական» և տգէտ պեղումներ, փոսեր, դարեր ու բլուրներ։ Մ'վ որ բրիչ խփեր է գետին՝ միակ նպատակ մ'ունեցեր է—հին իր մը, գանձ մը, պատմարժէք հնութիւն մը գտնել։ Ամէն տեղ կոտրուած կարասներու փշրանքներ, եղկաթի կտորներ և յախճապակիի փշուրներ կը նշմարուին։

Եւ գիտութիւնն այժմ որքա՜ն կ'ափսոսայ այդ պաշտօնական և անպաշտօն, յայտնի և գաղտնի պեղումներուն համար, որոնք անյայտ՝ բայց փառաւոր քաղաքակրթութեան մը ամբողջ մնացորդները, մշուշապատ պատմութեան մը բովանդակ գաղտնիքները ոչնչացուցին ու քանդեցին՝ հնագիտական իրեր կամ գանձեր գտնելու յոյսով։

Թոփրակ-Կալէի բարձունքէն իջնենք դէպի Սեւ-Քրւաճ (սև ու մոխրագոյն քարակոյտեր) և դիտենք Այգեստանի տեսարանը։ Մեր առջև կը բացուի ցանկոյսներուն ձորը *), իր աննման ու հոգեպարպար տեսարանով։

Գետիկ Տաճար Ս. Աստուածածնի սպիտակ գմբէթը, կանաչ ծառերու տերևախիտ ճիւղերու մէջէն, վեր կը բարձրանայ և խորհրդաւոր վեհութեամբ մը իր հովանին կը սփռէ աւերներուն։ Դէպի արևելք՝ Նորատուսկներն **) են, որոնց ծառերը Վարագայ սարի

*) Տես պատկեր՝ էջ 108։

**) Խաղողի և պտղատու ծառերու ընդարձակ և նորատունկ այգիներ, որոնք նշանաւոր են իրենց առողջարար օդուջրով և բարձրադիր, գեղեցիկ տեսարաններով։

հովով կը տարուբերուին ու կը ծփան։ Դէպի արեւմուտք՝ Վան ծովը իւր կապոյտ ու ժպտուն տեսքով և փրփրալի ջուրերով՝ նազելաճեմ և սիգապանծ պատկեր մը կը պարզէ մեր աչքին, մինչ Վանի բերդն ալ իւր խորհրդաւոր կեցուածքով բազմեր է ծովափին և կ'իշխէ քաղաքամէջի վրայ։ Դէպի հարաւ՝ ամբողջ Այգեստանն է, ծառնոցներու և այգիներու անծայրածիր, կանաչ ծով մը, որուն վերև՝ կապոյտ երկինքը կը ժպտայ։ Այդ ընդարձակ կանաչութեան և ծառերու շատութեան մէջ անհետացեր են Այգեստանցի Հայոց տուները։ Անծանօթ մը պիտի կարծէր թէ Այգեստանը, սոսկ այգեստան մըն է՝ անտուն և անմարդաբնակ՝ եթէ Նորաշէնի, Ս. Յակոբի և Արարուց եկեղեցիներու բարձր ու սպիտակ գմբէթները այդ ընդարձակ ծառաստաններու մէջէն դուրս չը ցցուէին, հաստատելու համար, որ այդ եկեղեցիներու բոլորտիք, տասնեակ հազարներով Հայութիւն մը՝ իւր տնտեսական, կրթական և հասարակական կեանքով կը ծփայ, շէն ու պայծառ պահելով երկրային աբքայութեան և քնութեան ու պատմութեան մայրաքաղաքը—ՎԱՆ....

Սև-Քրտայի բարձունքներէն դէպի արեւմուտք յառաջանալով, կ'իջնենք գարնանացան արտերու մէջ և առուի մ'ափերէն կամաց-կամաց կ'երթանք դէպի հանդիպակաց քարաժայռը, որուն սեպուղորդ կուրծքին վրայ, բարձրադիր և ամեհի դիրքով՝ փորուած է աւանդական և առասպելական Մհերի-Դուռը։ Ժողովուրդը կ'աւանդէ, որ Սասմայ Մհերը, իր ամեհի ձիուն վրայ նստած, այդ դրան ետևը կը սպասէ և օր մը դուրս գալով աշխարհը պիտի գրաւէ։ Վանի պապիկներն ու մամիկները, ձմրան գիշերներու կէսը անքուն կ'անցունեն և իրենց թոռնիկներուն՝ Մհերի-Դուռի մասին զրոյցներ ու հէքեաթներ կը պատմեն։ Համբարձման կէս գիշերին, երբ երկինքն ու երկիրը կ'ողջագուրեն իրար և սիրոյ ողջոյն ու համբոյր կուտան, ճիշտ այդ ատեն, Մհերի-Դուռը կը բացուի և ով որ հոն ներկայ ըլլայ, կրնայ ներս մտնել և ուզածին չափ գանձեր, անգին քարեր բերել, միայն թէ պիտի աճապարէ շուտ դուրս գալ, որ դուռը չը փակուի և մտնողը ներս չը մնայ։

Նման դէպք մը պատահեր է—կը պատմէ մամիկ մը։ Հովիւ մը, Համբարձման գիշերը Մհերի-Դուռէն ներս մտաւ, հասաւ գանձերուն, տոպրակը, քօլոզն ու չարուխները, բերնէ բերան, անգին քա-

բերով և գանձերով լեցուց և վազեց դէպի դուռ։ Ցանկարծ յիշեց, որ իւր հովուական ցուպը մոռցեր էր գանձերու մօտ։ Հովիւը աճապարանօք և շնչակոտոր վազեց հոն, վերցուց գաւազանը և երբ դրան մօտ հասաւ՝ դուռը ճռաց և շրաք փակուեցաւ։ Հովիւը ներս մնաց, լացաւ, մղկտաց, բայց Մհերի-Դուռը*) չը բացուեցաւ։ Ոչխարը մնաց դուրս, բաց դաշտի մէջ, մայեց և մալուլ-մռուլ՝ հովիւի գալուն սպասեց, բայց ի զուր։ Հովիւը մնաց անհօտ, ոչխարն անհովիւ....։

Մհերի-Դուռ, Մհերի-Դուռ, որքան առասպելներ ու զրոյցներ բանահիւսեր է քո մասին Վանի Հայ ժողովուրդը, որ կը հաւատայ թէ, օր մը դու պիտի բացուիս և Սասմայ Մհերը, հեծած իւր Քուռկու-Ջալալի ամեհի ձին, ձեռքին բռնած Թուր-Կայծակին, ամենայաղթ խաչն ի թևին, դուրս պիտի ելնէ և Հայոց Աշխարհն ազատէ բռնակալներու լուծէն....։

Այս աւանդաբոյր ու խորհրդաւոր վայրէն դէպ արեմուտք յառաջանալով կը հասնինք Ակրփի (Ակ-Քարափի) ուր հայկական փոքրիկ մատուռ մը կայ—Ծովայիճ**) Ս. Աստուածածին—հաւատացեալներու ուխտավայր մը, որուն ապաւինողները կը բժշկուին աւոր հող ու ջուրով։ Այս մատուռէն քիչ մ'անդին, քարերու ահագին բարձրութիւններ կան, ցից-ցից և մարդակերպ, կողք-կողքի շարուած կամ խառնիխուռն կանգնած։ Երկու բարձր քարեր, մարդանման կեցուածքով, կողք-կողքի կը մնան. Այս զոյգ քարերը Վանի ժողովրդական զրոյցներու և առասպելներու գեղեցկագոյն մէկ էջը կը

*) Վանի հնագոյն պատմութեան և Վանագիտութեան մէջ, Մհերի-Դուռը շատ կարեւոր տեղ կը գրաւէ։ Քարաժայռի մէջ, դրան ձեւով փորուած այս հսկայ յիշատակարանը շինել տուած են Բիանայի (Վանի) Իսպուինիս թագաւորը և իւր որդին Մինուաս (կամ Մենուաս), որոնք այդ դրան ձեւով տաշուած քարի վրայ արձանագրել տուած են Բիանայի երկրի և տասը գաւառական երկիրներու և քաղաքներու 48 տաճարներու անուանները, կանոնագրելով թէ իւրաքանչիւր տաճարը ինչ զոհեր և նուէրներ պիտի տանայ։ Այս արձանագրութիւնը Վանագիտութեամբ զբաղուող գիտնականներու կողմէ քանիցս արտագրուած և հրատարակուած է եւրոպական պատմա-գիտական հանդէսներու և կամ Նայիրիի և Ուրարտուի պատմութեանց վերաբերեալ հատորներու մէջ։

**) Այս մատուռի դիրքը ծովահայեաց ըլլալուն պատճառով, Ծովայիճ կոչուած է։

զարդարեն. Մեր պապերը կ'աւանդեն թէ, Հայ տղայ և աղջիկ մը սիրահարեր էին և հակառակ իրենց ծնողաց ցանկութեան՝ որոշեցին ամուսնանալ. Հարսնեւորներու ըմբոստ բազմութիւն մը, այս ըմբոստ զոյգի հարսանեկան թափօրին հետեւելով եկան հասան Ծովային Ս. Աստուածածնի այս մատուռը. երբէ ներս մտնէին՝ անհանգստանդ քահանայ մըն ալ պսակի արարողութիւնը պիտի կատարէր. Հարսի և փեսայի ծնողաց նզովքը և Աստուծոյ ցասումն իրար խառնուած՝ իջան այս հարս ու փեսայի և հարսնեւորներու վրայ և բոլոր միասին քարերու վրայ քարացան՝ ապառաժ քար դարձան:

Քարացած հարսն ու փեսան և հարսնեւորներու այս քարակարկառ բազմութիւնը, անյիշատակ դարերէ ի վեր, ահ ու սարսափ ազդեր են միամիտ, անմեղ երիտասարդներուն և սիրող զոյգ սիրտերուն, որոնք կը վախենային ծնողաց կամքին հակառակ՝ հարսանիք ընել. Չէ որ քարացած, քար կտրած հարս ու փեսայի զրոյցը ամէնուն ականջի և սրտի մէջն էր.

Ահա Ծանկոյսները՝ բնութեան գեղեցիկ վայրերով ու տեսարաններով հարուստ, պատմութեան և առասպելներու յիշատակարաններով զարդարուն. Ահա Վանի այն թաղամասը, ուր դարերու և աւանդութեանց հրապոյրներ կան, ուր Ծանկոյսների ձորը իւր ծոցին մէջ կը ծրարէ մշտահոս գետակը, հովասուն ծառոցները, Մեռոնի Առուն, Բաղնիսայի-Քարեր և ծառազարդ. այգինները. Ձորէն դուրս Շէն-Թաղն ու Խէրանի-Փողանն են, որոնք ծայր կ'առնեն ձորի հարաւամասէն և կ'երկարին մինչև Սղգայու-Ջաղջէն, ուր քանի մը աղբիւրներ սառն ու վճիտ և մշտահոս են, ուր ծառուղիներն խիտ առ խիտ իրար կը գրկեն և հովանի կ'ընեն թաղի տուներուն վրայ. Հապա դէմ-դիմաց զոյգ մ'աղբիւրները, որոնք մէկ անունով՝ Հին-Նոր անունը կը կրեն և հին ու նոր բազմատեսակ յուշերու և յիշատակներու ընդունարանը կը հանդիսանան.

Ծանկոյսները զուտ հայնոց, հարազատ ու բնատոհմիկ, միջավայր մըն էր: Թաղեցիները ջերմ սիրով, դրացիական ու բարեկամական կապերով իրար կապուածէին. Նահապետական վարք ու բարքին նախանձախնդիր, կրօնասէր, ջերմեռանդ և աշխատասէր Ծանկոյսներցիք ջերմ սիրով ու պաշտմունքով կապուած էին վերոյիշեալ վայրերու հետ.

Ահա այդ բնական և աւանդաբոյր վայրերուն մէջն էր, որ հայրենեաց համ ու հոտով, ջուր և օդով կ'աճէր, կը զօրանար և կեանք կ'առնէր Փէշով-Մըկօճ—ՄԿՐՏԻՉ ԽՐԻՄԵԱՆը, որ կը թևակոխէր իւր պատանեկութեան շրջանը։

## Բ.

## ՊԱՏԱՆԻ ԽԱԼԻՖԱ ՄԸԿԸՐ—ՏԻՐԱՁՈՒ ՄԿՐՏԻՉԸ

Հին-Նոր աղբիւրի մօտ, ծառերու շուքին տակ նստեր են խումբ մը թաղեցի պատանիները, որոնց մէջն է նաև Փէշով-Մըկօն։ Անոնք կը վիճեն, կը կատակեն, երկու մասի կը բաժնուին և մէկ ալ տեսար, ահա, վեր կեցան և խաղեր սարքեցին։

Եուաց-Թօփ, Կsrոց, Էշ-Բաղճիս, և Թօփով-տուշ-փէs պատանեկան խաղերն իրար կը յաջորդեն։ Խաղընկերները կը վազեն, կը սլանան, իրար բռնել կամ յաղթել կը ջանան, կ'ուրախանան։ Ծափուն կուտան, կ'աղմկեն և ի վերջոյ, բոլորն ալ յոգնած ու դադրած, կուգան առուի ափին՝ խանգ (հանգիստ) կ'առնեն։ Մէկ ալ տեսար, խաղընկերները «խօսք մէկ՝ Աստուած մէկ» ըսին և արագ քայլերով իջան Ծանկոյսների ձորը, Մեռոնի Առուի ափին կանգ առին, հագուստնին հանեցին, մերկացան և շլթփ-ճլթփ նետուեցան առուի սառն ու վճիտ ջուրին մէջ, ուր ձուկի նման լող կուտան, կ'երգեն, կ'աղմկեն, յետոյ ջուրէն դուրս կուգան, կը վազեն արեւին տակ, տաք աւազին վրայ կը պառկեն և նորէն ջուրը մտնելով կը շարունակեն իրենց լոգանքը։

Ժամին ատենն է. ժամահրաւէրի կոչնակը կը տրկըլկայ։ Ժամակըժիկները (եկեղեցասէրը) արագ քայլերով կիջնեն եկեղեցին, և լուռ մրմունջներով կ'աղօթեն։ Թաղի պատանիներու յիշեալ խումբն ալ եկեղեցին կ'իջնէ։ ՄԸԿՕՆ փոխասայ է, եկեղեցոյ խոնարհ սպասաւորը, որ առաւօտ երեկոյ պարտաւոր է ժամ երթալ և Աստուծոյ տաճարին յօժարակամ ծառայութիւն մատուցանել։ Այսպէս ըսած էր իրեն հօրեղբայր Խաչատուրը։

Առաւօտ է։ Փէշով-Մըկօն, Խիճածի փայտերը գրկած կը բերէ փողոցը. իրենց տան թաղարաջի (սահման) առջև, Պողիկով ջուր կը լեցնէ գետնի ծակերու մէջ, ապա օթակը ձեռքին 4-ական փայտեր

(մէկ մէթր երկար) դէմ դիմաց կը խփէ գետին. Փիչ յետոյ կուգայ հօրեղբայրը Խաչատուրը և բամբակեայ թելը կը խինէ (կը հիւսէ) այդ փայտերու վրայ, Խինածի ձաղ ձեռքին բռնած կ'երթևեկէ, իսկ Փէշով-Մրկօն ալ կ'օգնէ հօրեղբօր, խինածի կտրած թելերը կապելով։ Խինածը կը տնէ 2 ժամ։ Ապա կը հաւաքեն, փայտերը կը հանեն և կ'երթան կտաւի գործանոցը, ուր հօրեղբայրը Խաչատուրը կը նստէ իր կտաւի խորի գլուխը և կտաւ կը գործէ, իսկ Փէշով-Մրկօն ալ ճախարակի առջև նստելով մասրա կը լեցնէ*)։

Կ'անցնին տարիներ. Մրկօն արդէն կտաւագործ է։ Մասրա-լրցող աշկերտն այժմ դարձեր է խալիճա (վարպետի օգնական)։ Նա կտաւագործութեան արհեստի մէջ հմտութիւն ձեռք բերած է և եղած է իւր հօրն ու հօրեղբօր օգնական, վաստակ բերող տղայ մը։ Երկու եղբայր են անոնք։ Մեծ եղբայրը Մսըրխանն է, որ արդէն կտաւագործ վարպետ է, իսկ փոքր եղբայրը Մրկօն է—Մկըրտիչը, որ վարպետներու օգնականն է։ Աւագ եղբայրն, ըստ ժամանակի և տեղական սովորութեան, իրաւունքներ կը բանեցնէ փոքր եղբօր վրայ։ Խալիճա Մրկրը պարտաւոր է խոնարհ ու հնազանդ ըլլալ և կատարել իր մեծ եղբօր հրամանները։ Երբ Մրկրի հայրը առևտրական գործերով քաղաքէն հեռանար, մեծ եղբայր Մսրրխանն աւելի հրամայող ու պահանջկոտ կը դառնար Մրկրի հանդէպ։ Սակայն նման պարագաներուն, արդարամիտ և գործավարութ Խաչատուր հօրեղբայրը մէջտեղ կուգար և Մսրրխանի անդրակութեան իրաւունքները կը սահմանափակէր։ Հօրեղբայր Խաչատուրի ձեռքին տակ Մսրրխանը հմուտ կտաւագործ դարձաւ, իսկ Մրկրը ընդունակ աշակերտ և ուսումնասէր պատանի։

Կտաւի գործանոցին մէջ, Մրկրն ամբողջ օր կ'աշխատէր, միշտ հօրեղբայր Խաչատուրի ուշադրութեան և հոգացողութեան ներքոյ։ Մրկրն այժմ այլևս մասրա լրցող աշկերտ չէ, այլ կտաւագործութեան արհեստին հմտացած արհեստաւոր մը—խալիճա-օգնական,

---

*) Տես պատկերը (էջ՝ 108) որը Վանի կտաւի գործանոցի մասին լրիւ գաղափար մը կազմել կուտայ ընթերցողին։ Այդ գործանոցի մէջ երևակայեցէք տեսնել՝ Խաչատուր Խրիմեանը (թիւ 1) և իր եղբօրորդին մասրա լրցող Փէշով Մրկօն (թիւ 2)։

որ արդէն կտաւին խորին գլուխը նստած կտաւ կը գործէ և կամ Խինածի ձաղը ձեռքին բռնած խինած կ'ընէ։

Գործանոցի փոքրահասակ աշկերտներն ու մասրա լրցող մանուկները կը յարգեն ու կը սիրեն իրենց խալիճա-Մըկրը, որ բոլորի հանդէպ եղբայրական սէր կը տածէ, անոնց գործին և արհեստին վերաբերեալ թերութիւններու համար նեղող ու զիջող կ'ըլլայ և կը ջանայ, որ գործատէրերու և արհեստաւորներու միջև սէր ու համերաշխութիւնն անպակաս ըլլան։

Երեկոյ է։ օրուայ աշխատանքը վերջացեր է։ Խրիմեանենց կըտաւի գործանոցի աշխատաւորները գործի գոգնոցները կ'արձկեն, դուրս կուգան փողոցը և առուի ափին պուպուզելով ձեռքերնին ու երեսնին սառն ջուրով կը լուանան և իրենց օրուայ կամ շաբաթուայ աշխատավարձն առնելէ յետոյ կը հեռանան։ Հօրեղբայր Խաչատուրը կ'երթայ տուն, Խալիֆա Մըկրն ալ ետևէն։ Գահ մը կը հանգստանան, կ'ընթրեն, գործի մասին կը զրուցեն և վաղուայ ընելիքնին կ'որոշեն։ Հօրեղբայր Խաչատուրը գործի կ'անցնի—ուսուցման ժամն է։ Մըկր ծնկաչօք նստեր է հօրեղբօր դիմաց և Աւետարան, Նարեկ կամ Սաղմոս մը ձեռքին բռնած կը կարդայ ու կը բացատրէ։ Հօրեղբայրը կ'ուղղէ սխալները, մեկնութիւններ, բացատրութիւններ կուտայ, գրաբարի խրթնաբանութիւնները կը սովրեցնէ Մըկրին, ու Մխիթար Աբբահօր «Հայկազեան Բառարան»էն բառեր կը հարցնէ և Հ. Միքայէլ Վրդ. Ջամչեանի «Քերականութիւն»ը իբր առաջնորդ ունենալով՝ հայոց լեզուն կը դասաւանդէ։ Հերթը կուգար Գր. Նարեկացիի «Մատեան Ողբերգութեան» հատորի վերլուծման։ Ապա շարականներ կարդալ և երգել, «Ճայտմաւուրք»էն քանի մը գլուխներու պարզաբանութիւնը տալ ևայլն։

Ահա այս հայկաբանական, կրօնական և հոգեշունչ մատեաններն էին, որոնք հօրեղբայր Խաչատուրի միջոցով և առաջնորդութեամբ ուսում, դաստիարակութիւն և մտաւոր լոյս կը հայթայթէին խալիֆա Մըկրին։ Այդ ժամանակներու (ԺԹ-րդ դարի կէսին) նոր սերունդը, առաւելապէս կրօնական շունչով կը դաստիարակուէր, հոգևորականներու և կամ աշխարհիկ Վարպետ-Ուսթաներու ձեռքին տակ։

Ուսման սէրն ու ծարաւը այնքան կը լափէին խալիֆա Մըկրի սիրտը, որ նա կամաց-կամաց կտաւի գործանոցէն սառեցաւ, և հակառակ իւր հօր ու մեծ եղբայր Մսրըխանի ջանքերուն ու յորդորներուն, կտաւագործ Խալիֆա Մըկրը վերջապէս որոշեց կտաւագործութեան արհեստը թողնել և զբաղուիլ ուսումով և ինքնակրթութեամբ: Անոր այս ցանկութեանը մեծ սիրով ընդառաջ գնաց հօրեղբայր Խաչատուրը, որ համոզեց իւր եղբօր—Մըկրի հօրը—որպէսզի չը հակառակէր Մըկրի ինքնակրթութեան և ուսման ցանկութիւններուն: Այսպիսով ահա Մըկրը կը նուիրուէր ինքնազարգացման: Իւր հասակակից քանի մ'ընկերներու հետ, (որոնց մէջ յայտնի է Աfրիպպաս Դաբաղեանը*) Մըկրը ուսման և դաստիարակութեան մասին զրոյցներ և վիճաբանութիւններ կ'ընէր, ջանալով, որ անոնք ևս ինքնակրթութեամբ զարկ տան իրենց մտաւոր զարգացման:

Մըկրը աշնան և ձմրան եղանակներուն, կ'առանձնանար իրենց տան լուռ ու խաղաղ մէկ անկիւնը և կարդալ գրելով կը զբաղուէր: Եկեղեցի կ'երթար, տնային գործեր կը կատարէր և միշտ ալ կ'առաջնորդուէր հօրեղբայր Խաչատուրի հրահանգներով, այս ու այն կրօնական գիրքը՝ կարդալու կամ բացատրելու համար:

Գարնան կենսաւրախ օրերուն, Մըկրը թուղթ, թանաք, գրիչ և իւր գրքերն առած կը նստէր իրենց տան մօտիկ Հին-Նոր աղբիւրի ծառերու հովերուն տակ և ուսում կը սովրէր: Որքան յուզիչ և յիշատակալից պատանեկութիւն է այդ, պատանեկան կեանքը Մըկրի, որ աղբիւրի ական մօտ, ծառերու շուքին տակ, առուակներու մեղմիկ կարկաչիւնի և տերևներու սօսափիւնի մէջ, կը կարդայ, կը գրէ, կը խոկայ, կ'երգէ և իւր վիպական ու անուշ օրերը տարիներ, յետոյ հիացումով կը վերյիշէ:

---

*) Աբրիպպաս Դաբաղեանը (Ծապաղեան) Վանի հին սերունդի լաւագոյն և ուսեալ անձերէն մէկն էր, որ դաւադրաբար սպանուած է քիւրդի մը ձեռքով: Անոր որդին՝ Յովհաննէս Աբրիպպասեան-Դարաղեանը, ուսուցիչ և ազատասէնչ երիտասարդ մըն էր, որ 1889-ի Մայիսին, Վարդան Գօլոշեանի հետ, երբ իրը յեղափոխական նախակարապետներ Սալմաստէն Վան կը մեկնէին, պարսկատաճկական սահմանագլուխին վրայ, երկուքն ալ սպանուեցան, Չուխա-Կեադուկ կոչուած վայրին մէջ, դառնալով Հայ յեղափոխական և ազատագրական շարժման անդրանիկ զոհերը:

«...Մրտէք արդ լայնափողոց ՚ի հրապարակս հովանուտ,
Ծորըս շատ յբստակաջուր գնան վրտակունք դրդրչալով,
Առուակ առուակ բաժանեալ ոռոգանեն զողջ այգեստանս։
Ի զուարթ ափունս առուաց ուռենի ծառք ուղիշաստիւռ
Շար ՚ի շար տընկեալ են խիտ եւ ամբարձեալ սաղարթաճոխ,
Եւ աստի ու անտի շինեալ տանց և շինից ածեն ըզշուք։
Նըստարուք այսըր, մանկտիք, առ Հին և Նոր աղբիր ակամբս,
Վայրիկ մի զով առցուք մեք ընդ հովանեօքս այս ուռենեաց։
Վաշ, իբրև զի զբօսուցիկ է և զուարթատրար գլուխ այս աղբիր,
Որպէս ջուրք ՚ի յականէն գլուգրլալով բղխին ՚ի դուրս.
Եւ ընդ այդ առուաց ափունս պըճնեալ մանրիկ կանաչ քուսովք,
Ուռճազուարճ մըշտափրթիթ ընդ ջրբասէր ջրոյ կարոսս,
Եւ ՚ի գընացս պարզ վտակիդ, յոր խաղ առնուն մանր աւազունք,
Նայեցեալ զմայլեցարուք, զի հեշտալի են հայելեաց։
Այսըր, ո՛հ, նըստեալ երբեմն աշակերտիս աշխատութեան,
Ֆաղցրախօս քնարին Հայկեան ըզհարկանելն ուսանէի.
Եւ հարեալ զայն լի յուսով և անձանձիր զտիւ և գիշեր
Ուսայ ես իւրովի մատամբ հոգւոյն ամենարուեստ,
Ում զիս անդուստ միայնում ընծայեցի սըրտիւ բոլոր*)»։

Ահա այսպիսի վայրերու մէջն էր, որ Մկրտիչ Խրիմեանը կըզբաղուէր ինքնակրթութեամբ, որուն արդիւնքն են վերոյիշեալ տողերը՝ «Ծօրինեալ ի չափս Հայկականս ի Մկրտչէ Խրիմեան Վանեցւոյ»։

Մկրտիչ Խրիմեանի պատանեկան տարիներու ինքնակրթութեան և աշխատիրութեան մասին կը պատմեն**) նաև հետեւեալ իրողութիւնը։ Պատանի Մ՚ըկրը իրենց տան առջև տարածուող այգիի

---

*) Հրաւիրակ Աւարաւեաց,—Ծօրինեալ ի չափս Հայկականս ի Մկրտչէ Խրիմեան Վանեցւոյ։ Ի Կոստանդնուպօլիս, ի Տպարանի Ծովհաննու Միւհէնտիսեան. 1850—ՌՄՂԹ. էջ՝ 64։

**) Պատմողներն են՝ Վահան Խրիմեան, Մարտիրոս Խէրանեան և Վասպուրականցոց յայտնի ու ամէնքին սիրելի Վարագայ Պարոն Պետրոսը։ Այս 70-ամեայ ծերունին, 1925-ին Ալեքսանդրիոյ մէջ (Եգիպտոս), յուսահատութենէն ինքզինք ծովը նետեց և խեղդամահ եղաւ։

մէջ, կարմիր փսուս (կակուղ) և դիւրահաս խնձորի ծառին վրայ, ճիւղերուն մէջ, քանի մը տախտակներ տեղաւորելով, յարմար նստելատեղ մը շիներ է։ Ամառուայ ամբողջ ցերեկներ, Մըկրը, իւր գիրքերն առած, այդ խնձորազարդ ծառի ճիւղերու մէջ, թախտի վրայ նստելով թէ «շիկագոյն ծաղկաբերան հեշտատեսիլ» խնձորներ կերած է և թէ բարձր ձանով կարդացեր և կամ երգ ու շարական երգած է։ Կ'ըսեն. որ օր մը Մըկրը, այդ ծառի վրայէն ըսեր է.

—«Ա՜խ, երբ կ'էլնի, որ ես էրթամ Վարագայ վանք, էլնեմ վարժապետ ու վարդապետ»։

*Մկրտիչ Խրիմեանի պատանեկութեան և ինքնակրթութեան մասին բերենք նաև հետեւեալ չարամիտ և թշնամական վկայութիւնը*).*

*«...Սա էր բնիկ 'ի Վան Տոսպայ՝ յարուարձանեայց քաղաքի.*
*Որդի գոլով առն աղքատին՝ որ Գռըմցւոցըն կոչի.*
*Այն ինչ ծանեաւ զբարին և չար, լիք զբարին առ զչար.*
*Գամ քան զգամ 'ի զարգանալ գոլ չարագործ յոյժ ճարտար։*
*Մինչ հաս յարբունս պատանեկի ընկերակցաւ վատ արանց.*

---

*) Այս տողերու հեղինակն է Մահտեսի Յովհաննէս Վարժապետ, մականուանեալն Քօլօզ, բնիկ վանեցի, որ 1815 թուին, իւր հօր հետ Սրուանդէմ երթալով, աշակերտած է տեղւոյն Հայոց Պատրիարք Թէոդորոս Վանեցիին, հմտանալով հայկաբանութեան մէջ։ Քօլօզ Վարժապետը, վերադառնալով Վան, Նորաշէնի ծխական դպրոցի մէջ, ուսում կուտար թաղի մանուկներուն։ Այս վարժապետը շատ խիստ, պահպանողական և քինախնդիր մէկը եղած է։ Նա Խրիմեան Հայրիկի կատաղի հակառակորդն էր և չ'էր կրնար հանդուրժել Խրիմեանի ժողովրդանուէր գործունէութեան։

Խրիմեանի վանեցի հակառակորդները զայն վարկաբեկելու համար, 1874-ին, Կ. Պոլսոյ մէջ, հրատարակեցին «Խրիմեան եւ գործ իւր» անունով գրքոյկ մը, որուն մէջ տպուած են Քօլօզ Վարժապետի վերոյիշեալ տողերը, (էջ՝ 76—77) մէջ բերուած՝ անոր «ի Տեսարան Անցից Վասպուրականի» անունով անտիպ տաբեգրութեան Բ. Հատորի Գ. Երգէն, «Առաջին վարք Խրիմեանի» վերնագրով։

Քօլօզ Վարժապետը հին դէմքերու մէջ, պատկառելի տեղ մը կը գրաւէ։ Թողած է գրական-պատմական շատ արժէքաւոր երկեր, որոնց մեծ մասը, Վանի 1915-ի Յուլիսի գաղթի օրերուն ոչնչացան։ Իմ «Վասպուրականի Գրական Մտաւորներ» անունով անտիպ գործին մէջ, Քօլօզ Վարժապետի մանրամասն կենսագրութիւնը զետեղած եմ, անոր անտիպ գրութիւններէն քանի մը էջերով հանդերձ։

Ջհետ չոքաւ կախարդութեան և այլ պէս պէս չարութեանց.
Աշակերտեալ Թէրլէմէզեան Կարապետի**) կախարդի.
Ուսաւ անտի վեցհազարեակն եւ զաղաւէթն անթերի.
Ուսաւ նաև զուղղախօսին զարհեստն ասեմ քերական.
Եւ զայլ ուսմունս կախարդաբար յայլոց մուրայը գիշերային.
Ուստի համբաւ առ մերձաւորս հրատարակէը առանձին.
Թէ ես զուսմունս առանց վարժչի ինքնին ուսայ բնաւին»։

Այսքան ուսումնական և կարդացուած պատանին—Մկրտիչ Խրիմեանը—բնական էր, որ թաղեցիներու յարգանքին և համակրանքին պիտի արժանանար, մանաւանդ, որ նա միշտ եկեղեցի կ'երթար և աջակողմեան դասը կանգնելով տիրացութիւն ալ կ'ընէր, բան մը, որուն շատերը կը ցանկային հասնիլ այն ատենները, բայց քիչերը կը յաջողէին։ Այդ քիչերէն մէկն ալ Մկրտիչ Խրիմեանն էր։

Տիրացու-Մկրտիչը, թաղեցի ընկերներու հետ, յաճախ պտոյտի և զբօսանքի կ'երթար Վանի մօտակայ գիւղերն ու վանքերը, որոնց մէջ ամենէն աւելի սիրած էր Վարագայ վանքը։ Վանականներու կեանքն ու աշխատանքը և վանքի խաղաղ ու խորհրդաւոր մթնոլորտը, շատ խոր տպաւորութիւն թողած էին Տիրացու-Մկրտիչի վրայ։ Վարագայ լերան և հովիտի սքանչելի բնութիւնը, այդ հինաւուրց և պատմական մենաստանի յիշատակները, անցեալի փառքերը, Հայ գրչի, մտքի և հաւատքի յուշարձանները և եկեղեցիին կիսալոյս խորհրդաւորութիւնը այնքան հրապուրիչ և սիրելի երևցան Տիրացու-Մկրտիչին, որ նա շաբաթ անգամ մը, քաղաքէն ելլեր, ոտքով կտրեր անցեր է 2 ժամուայ զառիվեր՝ բայց հաճելի ճամբաները և Վարագայ վանքը հասնելով, մտերէ տաճարը, ուր իբր տիրացու մասնակցեր է ժամասացութեան։

---

*) Կարապետ Թէրլէմէզեանը (մեր վաստակաւոր նկարիչ Փանոս Թէրլէմէզեանի հօրեղբայրը) ըստ Գօլօզ Վարժապետի, եղած է Մկրտիչ Խրիմեանի վարժապետը, բայց այս կէտը սխալ է և նման բանաւոր ու գրաւոր վկայութիւն մը չկայ։ Գօլօզ Վարժապետը, ստելութեամբ լեցուած է նաև այս Կարապետ Վարժապետի դէմ, որուն «կախարդ» կոչումը կուտայ և Խրիմեանին ալ այս «կախարդ»-ին աշակերտ կը դարձնէ։ Իսկ թէ Կարապետ Թէրլէմէզեանը, յիրաւի, ԾԹ-րդ դարի առաջին կէսին, իբրև վարժապետ կամ ուսում տուող Ուսքան, փայլեր է Վանի մէջ, Խրիմեանը անոր աշակերտը եղած է, այս մասին ուրիշ ոևէ գրաւոր փաստ չը կրցայ գտնել։

Հօրեղբայր Խաչատուրը իւր նպատակին հասած էր։ Անոր հոգեզաւակ Մկրտիչը, կրցած էր ուսումնական և տիրացու դառնալ, պարծանք բերելով թէ իւր ծնողաց և թէ մանաւանդ՝ Խաչատուր Երիմեանին, որուն յարատև ու յամառ դաստիարակութեամբ, Մկրտիչը ոչ միայն Ծանկոյսների՝ այլ Վանի մէջ, համբաւ հանած էր իբր Ս. Գրոց և նախնեաց մատենագրութեան հմուտ պատանի մը։

Եւ ահա օր մըն ալ— 1836 թուին—Խաչատուր Երիմեանը հիւանդութեամբ անկողին կ'իյնար։ Երիմեաններց տունեցիք ամէն տեսակ խնամք և հոգածողութիւն ցոյց կուտային, հիւանդը առողջացնելու համար։ Քաղաքի եէֆիմներն իրենց բնատոհմիկ դեղերն ու ճարները գործածել տուին հիւանդին, որ սակայն փոխանակ ապաքինելու, օրը օրին կը մաշէր ու կը հիւծէր, կաշին կպեր էր ոսկորներու վրայ, աչքերը խոր ընկած էին։ Հիւանդը, ինքն ալ զգացեր էր, որ իր օրերը համրուած են։

Մկրտիչը տխուր էր, հոգին խռով, սիրտը կոտրած, մտածկոտ։ Ամբողջ օրը, հիւանդին մօտ նստած խնամք ու հոգ կը տանէր։ Չէ որ իւր հիւանդութեան ատենն ալ Խաչատուր հօրեղբայրը, գիշեր ցերեկ անքուն և անհանգիստ մնալով, հիւանդ Մկրտիչի հոգածողութեամբ զբաղուած էր։ Վաթսուն և վեց տարեկան ծերունի Խաչատուրը, օր մըն ալ խնդրեց, որ քահանայ կանչեն։ Եկաւ ծխատէր քահանան, աղօթք կարդաց, հիւանդը իւր բերանով «Մեղայ»ն արտասանեց, «Թողութիւն» ստացաւ և «իտին թուշակին» (հաղորդութեան) արժանացաւ։ Քանի մ'օրէն յետոյ, Խաչատուր Երիմեանը— Մկրտիչի սիրելի հօրեղբայրն ու դաստիարակը—հանգեաւ ի Տէր, խոր սուգի մէջ թողնելով ոչ միայն Երիմեաններց գերդաստանը, այլ և ամբողջ թաղեցիները։ Այդ ամուրի, հանգուցեալ ծերուկը, կին ու զաւակներ չ'ունէր, որ արցունք թափէին, սակայն տունեցիները, կտաւի գործածնոցի բանուորներն ու աշկերտները և մանաւանդ Տիրացու Մկրտիչը, բոլորն ալ լացին և ողբացին Խաչատուրի մահը։

Անոր գործած կտաւէն պատանք շինեցին, չորցած մարմինը պատանեցին, դրին ճաշի (դագաղ) մէջ և տարան Ծանկոյսների Ս. Աստուածածին եկեղեցին։ Թաղումը կատարեցին պատարագով։ Ծուղարկաւորները—ազգական, բարեկամ, հարևան, ծանօթ, աղ-

քատները—թաղումէն յետոյ եկան Խրիմեաններց տունը և հանգուցեալ Խաչատուրի հոգեհացը կ'երան. «Աստուած հոգին լուսաւորէ» ըսին ու հեռացան։

Սակայն մէկը կար—Տիրացու Մկրտիչն էր այդ—որ ամէն օր և ամէն ժամ կ'ողբար իր հօրեղբօր կորուստը։ Մկրտիչը յաճախ գերեզմաննոցը կ'երթար, հօրեղբօր շիրիմին վրայ խունկ կը ծխէր, կաթիլ մ'երկու արցունք կը թափէր և վշտահար ու սրտաբեկ կը հեռանար։ Խաչատուր Խրիմեանի մահէն, 50 տարի յետոյ—1886 թուին—երբ Տիրացու Մկրտիչը հասակն առեր ու վաթսուն վեց տարեկան Խրիմեան Հայրիկ դարձեր էր—նա խորին սիրով ու երախտագիտութեամբ կը յիշատակէր իր հօրեղբայր Խաչատուրի անունը և իր հոգեգրած «ՑԻՍՈՒՍԻ ՎԵՐՋԻՆ ՇԱԲԱԹ—ԽԱՉԻ ՁԱՌ» գիրքը անոր յիշատակին կը նուիրէր.

«Ցիշատակ եղբօր որդւոյն՝ առ հօրեղբայր իւր Խաչատուր Խրիմեան, որ ի Տէր ննջեր է»։

«ԽԱՉԻ ՁԱՌ քո յիշատակին կը նուիրեմ, ով հանգուցեալ Հոգի, զի պարտական եմ իս քեզ. յիսուն տարի կը լինի որ մեր աշխարհէն՝ յաւիտենական աշխարհ գնացեր ես. այլ քո անուն և յիշատակ մանուկ Մկրտչի հոգւոյն ու սրտին մէջ անիծ պահուեր է։

«...Դու մեռար, դեռ ողջ էին ծնողքս և երիցագոյն եղբայրս. բայց ես յայնժամ զգացի թէ՝ սիրոյ դաստիարակութեան զրկէն որբացած եմ։ Ոչինչ մեծ ժառանգութիւն աշխարհիս հարստութենէն չթողիր քո հոգեհատոր մանուկ Մկրտչին. ոչ ոսկի, ոչ արծաթ. այլ մի Աստուածաշունչ*) և մեր սուրբ նախնեաց մի քանի մատեաններ**). զորս յաճախ կարդալ տալով՝ ընտանի լեզուով կը բացատրէիր ինձ։

«...Ապրեցայ քո հաւատով, և դեռ կ'ապրիմ Աստուծոյ նախախնամութեամբ, վաթսուն և վեցերորդ տարին***) լրացուցի։ Եւ դու ես, եթէ ճիշտ յիշեմ, այնչափ տարի ապրեցար ու մեռար։

---

*) Հաւանաբար այն Աստուածաշունչը, որուն կողքի ներքնամասի վրայ, Խաչատուր Խրիմեանը արձանագրած էր Մկրտիչի ծննդեան թուականն ու ամսաթիւը (1820 Ապրիլ 4)։

**) Մանուկ Մկրտիչի դաստիրքներն էին ասոնք։

***) Այս հաշուով Խաչատուր Խրիմեանը ծնած է 1770 թուին և ոչ թէ 1785-ին, ինչ որ յիշած եմ այս գրքի 89-րդ էջի վրայ։

«Ես քո Խօսուն գառնուկն էի. բայց դու մի անխօսուն գառնուկ ևս ունէիր, զոր ամբողջ հօթն տարի պահեցիր. ուր երթայիր քո հետէն կուգար, երբէք չէր բաժանուեր։ Ո՜հ, մահուանդ օր այդ գառնուկը մորթեցին և հոգւոյդ համար ճաշ տուին աղքատներուն»*)։

Այսպէս ահա «մեր աշխարհէն յաւիտենական աշխարհ»ը գնաց Տիրացու Մկրտիչի հօրեղբայր Խաչատուր Խրիմեանը, որուն յիշատակը, սակայն, «Մանուկ Մկրտչի հոգւոյն ու սրտին մէջ անեղծ պահուեր է»։

«Սիրոյ դաստիարակութեան գրկէն որբացած» Տիրացու Մկրտիչը ժառանգած էր իւր հօրեղբօր բոլոր առաքինութիւնները, որոնց մէջ՝ մարդասիրութեան մեծ գաղափարը, այնքան խոր դրոշմ դրած էր Մկրտիչի սրտի և հոգիի վրայ, որ նա—Մկրտիչը—թէև պատանի, սակայն «սիրոյ դաստիարակութեան» վեհ և ազնիւ մրտքերու ջատագով ու տարածողը դարձեր էր։

Աւետարանի, հոգևոր դաստիարակութեան և մարդասիրութեան գաղափարներէն յետոյ, պատանի Մկրտիչի սիրտն ու հոգին՝ ջերմ ու սուրբ սիրով և մեծ յափշտակութեամբ, պաշտմունք ընծայեցին հայրենի հողին և ջուրին։ Ջէ՛ որ հայրենի հողին մէջը սրտաբուղխ ու հարազատ է, ինքնածին և մշտավառ։ Ծանկոյսների չքնաղ ձորի գրկին մէջ իւր մանկութեան տարիները անցուցած և Վան-Վասպուրականի հրաշագեղ բնութեան տեսարաններով ու վայելքներովը հիացած Տիրացու Մկրտիչը, կրնա՛ր անտարբեր մնալ դէպի հայրենի հողն ու ջուրը, որոնք անոր սրտին մէջ հայրենասիրութեան ջերմ զգացում և պաշտմունքը յառաջ բերին։

Պատանի հասակէն իսկ, Մկրտիչը հայրենի հողի և ջուրի աշխատանքներուն սիրահար էր։ Իրենց հայրենական այգիի ածուները կը փորէր, կը ցանէր, կը մշակէր, քաղհան կ՛ընէր, կը ջրէր, ծառերուն և ծաղիկներուն հոգ կը տանէր, պտուղները կը հաւաքէր։ Բահը թևին դրած՝ առուներու ջուրը դէպի իրենց այգին կ՛ա-

---

*) Խաչի Ճառ. Գ. տպագրութիւն. (Էջ՝ Ը—Թ)։ Խաչի Ճառ գրքին Ա. տպագրութիւնը կատարուած է, Կ. Պոլիս. 1876-ին, (Տպարան Ծարուխիւն Պարոնեանի). Բ. տպագր. 1887-ին, Կ. Պոլիս. (Զարդարեան Տպարան). իսկ Գ. տպագրութիւնն ալ Էջմիածին՝ 1894-ին. (Մայր Աթոռի Տպարան)։

ռաջնորդէր և այգեգործական ամէն տեսակ աշխատանքներով կը զբաղուէր։

Տիրացու Մկրտիչը, իւր մեծ եղբայր «Մարխանի դեկավարութեան ներքոյ, սովորում էր ծառեր տնկել, պատուաստել, որթ կապել, գինի շինել։ Այգեպանի պարապմունքը Խրիմեանի ամենասիրած պարապմունքներից մինն է եղել միշտ»*)։

Հայաստանի շատ մը վայրերու, ինչպէս նաև Վասպուրականի մէջ, Հայ մանուկը, երբ դեռ անխօս ու անգիտակից է, օրօրոցի մէջէն իսկ կը կապուի հայրենի հողին հետ։ Մայրերը չոր հողը կը մաղեն, խանձարուրի փոքրիկ ներքնակի վրայ կը փռեն և մանուկը կը պառկեցնեն այդ ջերմ ու փափուկ հողին վրայ**)։ Մանուկը երբ յափս երթայ, կամ քայլել սովրի, խաղայ, վազվզէ, անոր խաղատեղը այգիի փխրահող ածուներ և կամ փափուկ հողերն են։ Մանկական որքան խաղեր կապուած են հողին հետ, որուն սէրը, յետոյ կը դառնայ միս և արիւն ու կը լուծուի Հայ մանուկի էութեանը մէջ։

Եւ Տիրացու Մկրտիչը, կրնար հայրենի հողին ու ջուրին սէրէն անմասն մնալ։ Չէ որ այդ սէրը անոր մէջ ինքնածին էր և հարազատ։

Կրօնական մատենագրութեան և եկեղեցական կարգերու մէջ հմտութիւն ձեռք բերելէ յետոյ, Տիրացու Մկրտիչը, մեծ եռանդով ու բուռն սիրով ուսումնասիրութեան ենթարկեց Հայ ազգի և հայրենիքի անցեալ պատմութեան փառքերն ու յիշատակները։ Թէև երկրին մէջ կը գտնուէն հայերէն հին հրատարակութիւններ, բայց առաւելապէս, Վենետիկի Մխիթարեան պատկառելի Միաբանութեան հայրենասէր Հայրերու հրատարակած Հայ պատմագիրներն ու հնագոյն մատենագրութեան հատորներն էին, որոնք այնքան տարուած էին, անգամ Հայաստանի խուլ ծայրագաւառներու մէջ։

---

*) Խ. Մալումեաճ (Է. Ակնունի) ԽՐԻՄԵԱՆ—կենսագրական Տեսութիւն. Թիֆլիս. Կովկասեան Գլխ. Կառավարչապետի Տպարան. 1892. (էջ՝ 5)։

**) Այս մասին Խրիմեանը իւր «Հրաւիրակ Առաւտեաճ»ի Ա. տպագրութեան (1850) 25-րդ ծանօթութեան մէջ կը գրէ. «Ծօրչափ նորածին տղայն ՚ի յորօրոցի ննջէ ՚ի ներքոյ նորին զչորացեալ մանր հող ՚ի վերայ չորին տարածեալ գնեն»։ (էջ՝ 93)։

Այդ հրատարակութիւնները տարածուած էին նաև Վանի մէջ, ուր Տիրացու Մկրտիչը կրցած էր գանոնք ձեռք ձգել ու կարդալ և լիովին ծանօթանալ Հայոց պատմութեան հետ. Տիրացու Մկրտիչը մեծապէս օգտուած է, մանաւանդ, Վենետիկի Մխիթարեան Միաբան Հայր Ղուկաս Ածոռակալ Վարդապետ Ինճիճեանի «Հնախօսութիւն Աշխարհագրական Հայաստանեայց Աշխարհի» եռահատոր պատկառելի երկասիրութենէն*), որու մասին, իբր աղբիւր, յիշատակութիւններ կան, «Հրաւիրակ Արարատեան»ի Ա. տպագրութեան ծանօթութիւններու մէջ։

Վասպուրականի սրբավայրերն ու պատմավայրերը, Հայոց պատմագիրներու, Հայաստանի աշխարհագրութեան և հնախօսութեան ուսումնասիրութիւնը՝ Տիրացու Մկրտիչի սիրտը խանդավառեցին Հայրենիքի սիրով, Հայ Ազգի սիրով. և ահա քսան տարեկան, ծաղկահասակ երիտասարդ Մկրտիչը կը դառնայ Վասպուրական մեր աշխարհի ուղեւոր—ուխտաւորը։

Երկարահասակ, լայնաճակատ, սև-սաթ երկար մազերով, թաւ յօնքերով, վառվռուն և գեղեցիկ աչքերով, արծուաբիթ, կարմիր սպիտակ երեսներ, նորածիլ պիխեր, դիմագծերու սքանչելի համաչափութիւն մը, որուն մէջ կը ցոլայ համակ կենսուրախ պատկերը Տիրացու Մկրտիչ Խրիմեանին, որ հագեր է երկար Զրպուն**) մը, երկու կողերը բաց, չաֆերը կախուած, փէշերը մինչև ոտքի ճաները իջած։ Մէջքին կապեր է սպիտակ բրդեայ շալը, անթև Ալաբան կը ծածկէ մէջքը, իսկ կուրծքը կը զարդարէ դօր-իշխիկը (երեսի շապիկ)։ Հագեր է կապոյտ շիլայի շալւարը, սեւ-եամանի կոչուած կօշիկը ոտքերուն, կարմիր անծոպ ֆէսը գլխին, երկար ձեռնափայտը ձեռքին, ճամբու պաշարը մէջքին կապած, ահա տեսէք, ճամբայ ելաւ Հայրենիքի ուղեւոր-ուխտաւոր Տիրացու Մկրտիչ Խրիմեանը։

—Դուր կ'երթաս, Տիրացու, կը հարցնեն թաղեցիները։

—Լիմ և Կտուց Անապատներ ուխտի կ'երթամ, կը պատասխանէ Տիրացու Մկրտիչը ու կ'երթայ։

---

*) Ի Վենետիկ, ի Տպարանի Սրբոյն Ղազարու. 1835—ՌՄՀԴ. (Երեք հատոր միասին կը կազմեն 1295 էջ)։

**) Վանի այր մարդերու հին տարազի մէկ ձևը։

Ոտքով կտրեր անցեր է երկար ճամբաներ, գիւղերու մէջ հիւրասիրուեր է, ծովի ափերէն ծովածաւալ տեսարաններ դիտելով, գացեր կանգներ է Կոստ-Անապատ կղզիի դիմացը, ուր, ծովափին, յոգնած ու դատրած, նստեր է հանգիստն առնելու։

Վանքի նաւակը կուգայ կղզիէն. Տիրացու Մկրտիչը կը կծկուի մէկ անկիւնը և վանքի նաւաստիի հուժկու բազուկները, զոյգ թիերով, ծովին կուրծքը պատռելով, նաւակը կը մօտեցնեն կղզիի նաւամատոյցին։

Տիրացու Մկրտիչը մտեր է վանքը, որ խստակրօն և ճգնակեցաղ միաբանութեան մը խաղաղ ու անդորը մէկ վայրն է, որուն նկարագրութիւնը և Կոստ-Անապատի Հայ կրօնաւորներու կեանքը, թող Տիրացու Մկրտիչը ներկայացնէ.

«...Աղբատին յանձուկ խըցկունս մրտեալ, մանկունք արդ շրջեցուք,
Որ 'ի սոսին շինեալք են անձուկ հետց հետեւողացն։
Ջի, տեսէք, մութ և անշուք գեղատըխուր են բընաւին,
Պատեալ որմովք դուզնաքեայ, ցած և խոնարհ են առաստաղքն,
Մի և կամ երկու լուսանցս ունին միայն 'ի յարեգդէմ,
Ցոյց շողիկ կաթեն և լոյս առնեն անձանցն արգելական.
Իսկ յատակք են անպաճոյճ լոկ խըսրիկ մի արկեալ և եթ,
Զարմանամ, ի՞րը 'ի խոնաւ գետնոյն մարմինք ոչ խօթանան,
Այլ միշտ առողջ մնան և ժիր թէ եւ լինին հարիւրամեայ։
Սակայն ոչ ընդ այս յաւէտ այլ ընդ նոցին վարս հիանամ,
Որ այնչափ դաժանութեանց տանին ոգւով ժուժկալասէր.
Մարմնով մեկնահանդերձ կըռուին սաստիկ ցըրտոյն ընդ դէմ,
Բազմօրեայ պահօք յաղթեն անժոյժ մարմնոյն ախորժակաց.
Եւ արթուն հսկողութեամբ աչաց քնոյն ծանրացուցիչ։
...Անձանձրոյթ անյագ ձայնիւ զգիշերն 'ի գլուխ հաներ յաղօթս։»*)

Վանական այս մթնոլորտը և ճգնաւորական այդ տաժանելի կենցաղը, շատ խոր տպաւորութիւն թողին Տիրացու Մկրտիչի վրայ։ Էյմ և Կոստ Անապատներու մէջ, կային վանական դպրատուներ, ուր հայկաբան վարդապետները հոգեշունչ դաստիարակութիւն կուտային վանքի մոնթերուն, սարկաւագներուն և թէ դուրսէն եկող տիրացուներուն, որոնց մէջն էր նաև Տիրացու Մկրտիչ Խրիմեանը։

*) «Հրաւիրակ Արարատեան». էջ՝ 86—87։

# ՀԱՅՈՑ ՀԱՅՐԻԿ

## ԵՐՐՈՐԴ ՏԱՍՆԱՄԵԱԿ

## 1840—1850

### Ա.

### ՎԱՆՔԵՐՈՒ ՄԻՋԱՎԱՅՐԸ ԵՒ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԸ—պատմական Հայաստանի այս ամենամեծ նահանգը—հարուստ է ոչ միայն Հայ ռազմական ոգիի յուշարձանները հանդիսացող բերդերով, աւաններով և անառիկ վայրերով, այլև հարիւրաւոր պատմական և անուանի մեծ ու փոքր վանքերով, որոնք սփռուած են երկրի այս ու այն կողմերը—լերանց կատարներու վրայ, հովիտներու մէջ, անառիկ բարձրունքներու կուրծքին, լեռնալանջերու վրայ, Վանի ծովի կղզիներու մէջ և այլուր։

Այս վանքերը, առաւելապէս կառուցուած են Ժ-րդ դարի սկիզբներէն՝ Արծրունեաց թագաւորութեան շրջաններէն մինչև ԺԷ-րդ դարի վերջերը։ Այս ու այն Արծրունի թագաւորն ու թագուհին, իշխանն ու ազնուական, հարուստ մարդիկ կամ կալուածատէրեր և անգամ, գիւղերու և գաւառներու համայնքները, նիւթական մեծամեծ զոհողութիւններով և «իրենց հոգիներու փրկութեան համար» հիմներ և կառուցեր են Վասպուրականի մենաստան-վանքերը՝ Աղբակի լեռներէն սկսեալ մինչև Ծաղկանց կամ Բիւրակնեան լեռները և Մասիսի հարաւային ստորոտներէն սկսեալ մինչև Վանի ծովի հարաւակողմի Լեռնապարի ծայրագաւառները։

Այդ վանքերը ոչ միայն աշխարհուրաց Հայ վանականներու բնակավայրեր և աղօթատեղիները եղած են, ոչ միայն կրօնական

ուխտեր և սրբավայրեր, այլև, տեսակ մը բարեգործական հիմնարկութիւններ, որոնք բարոյական պարտականութիւն ունէին ապաստան տալ ճամբորդներուն և խնամք ու հոգացողութիւն՝ աղքատներուն և որբերուն։

Վանքերու մէջ ապրող վանականները, իրենց կրօնական ու բարոյական պարտականութիւնները կատարելէ, աղօթելէ, անձնախարազանութեամբ և ապաշխարելէ զատ, պարտաւոր էին վանքերու տնտեսական աղբիւրները շէն ու պայծառ պահել և նիւթական բարեկեցիկ պայմաններ ստեղծել։

Այս բոլորը այսպէս ըլլալէ յետոյ, վանքերը կը հանդիսանային իբրև Հայ դպրութեան, մատենագրութեան, գրչագրութեան և մանրանկարչութեան մէկ-մէկ լուսատու կեդրոններ և ընդունարաններ, որոնց մէջ, Հայ վանականները վանական դպրատուներու խսիրածածկ և խոնաւ գետիններու վրայ կծկուելով՝ Հայ լեզուն, մատենագրութիւն, պատմութիւն, ճարտասանութիւն, փիլիսոփայութիւն և եկեղեցական երաժշտութիւն կը սովրեցնէին «առ ոտս իւրեանց աշակերտելու» եկած Հայ պատանիներուն, որոնք յետոյ, կը դառնային տիրացու, դպիր, սարկաւագ, աբեղայ, քահանայ, վարդապետ, եպիսկոպոս և այլն։

Վասպուրականի նման վանքերու մէջ նշանաւորներն էին՝

1) Ս. Բարդուղիմէոսի վանքը Աղբակի գաւառին մէջ, կառուցուած Դ. դարի սկիզբները։ Իւր վիճակաբի և պատկառելի տեսքով և փառաւոր անցեալով, այս վանքը, դարեր շարունակ, մեր եկեղեցական պատմութեան մէջ կարևոր տեղ մը կը գրաւէ։

2) Հոգւոց վանքը Անձևացեաց գաւառին մէջ։ Խոսրով Անձեւացի և Անանիա Նարեկացի մատենագիրները այս վանքի փառապսակներն են։

3) Ջաղար Ս. Նշանի վանքը, Ոստան աւանին մօտիկ, ուր դարեր-դարեր և յաւիտեան՝ մուշ-մուշ կը ննջէ Աւարայրի ճակատամարտի քաղցրազրուցիկ վարդապետը—Եղիշէ պատմագիրը։

4) Աղթամարի կղզին Ռշտունեաց գաւառին մէջ, Գագիկ Արծրունի թագաւորը դարձուց «ապաստանի քաղաք» և 915 թուին հիմն դրաւ Ս. Խաչ տաճարին, որուն շինութիւնն աւարտեցաւ 921-ին։ Այս տաճարը, որ Հայ ճարտարապետութեան փառքի ամենաշքեղ

յուշարձաններէն մէկն է, դարձաւ Հայ գրչագրութեան և մանրանկարչութեան հռչակաւոր մէկ կեդրոնը։ Թովմա Արծրունի Վարդապետը, Աղթամարի մէջ գրեց «Պատմութիւն Տանց Արծրունեաց» թանկագին մատեանը։ Գրիգորիս Աղթամարցի Կաթողիկոսը, Աղթամարի կղզիի մենաւոր ու դիւթիչ բնութեամբ յափշտակուած՝ սիրոյ, վարդի, սոխակի և աշխարհիկ կեանքի տաղերը կը բանահիւսէր։ ԺԲ դդ. դարի սկզբին, Աղթամարի մէջ կը հիմնուէր նաև «Մեծի Տանց Աղթամարայ Կաթողիկոսութիւն»ը, որ իր գոյութիւնը պահեց ամբողջ 800 տարի։

Նարեկայ վանքը, անուանի իր դպրատունով, օրուն հանճարեղ ներկայացուցիչն է «Օքանչելի Հոնտոր» և «Նարեկայ Վանից Վանական» Գրիգոր Նարեկացին։ Անոր Աղօթատեղին և Առտէր կղզին, Նարեկացիի անուան և գործին հետ կապուած սրբավայրեր են, իսկ Նարեկայ տաճարի արևելեան պատին տակ, յատուկ մատուռի մը մէջ կը հանգչին ոսկորները հանճարեղ Բերթողին։

Ս. Սմբատ Եղեցեցի և Կեճարեր վանքերը Բզնունեաց (Ալշավազ) գաւառին մէջ՝ Հայ հաւատքի և արուեստի մէկ-մէկ գեղակերտ յիշատակարաններ են։

Արծուաբեր վանքը Քաղբերունեաց (Արճէշ) գաւառին մէջ, Հայ ճարտարապետութեան հիանալի մէկ յուշարձանն է, որ նաև ազգային սրբոցի մը դեր կը կատարէ։

Մեծոփայ վանքը, Քաղբերունեաց գաւառի այս չքնաղակերտ և հինաւուրց մենաստանը, կառուցուած է Ծաղկանց լեռներու (Ալադաղ) Հարաւակողմի ձախ թևին, անդնդախոր և մեծ ձորի մը մէջ։ Այս վանքը Հայ մատենագրութեան մէջ անուանի է իր դպրատունով, որուն տաղանդաւոր ներկայացուցիչներն են՝ Լէնկ-Թէմուրի թաթարական արշաւանքի ականատես պատմագիր Թովմա Վարդապետ Մեծոփեցին և «Տիեզերահռչակ և Գերահանճար» Գրիգոր Տաթեւացին **) և ուրիշ շարք մը մատենագիրներ, որոնցմէ յիշենք՝

*) Գրիգորը ծնած է Քաղբերունեաց Ծոփոն գիւղին մէջ, սորված է Մեծոփայ վանքի դպրատուն և ապա անցած է Սիւնեաց Աշխարհի նշանաւոր Տաթեւի վանքը, ուր իբր աստուածաբան և մատենագիր փայլած է մեր հին գրականութեան մէջ, արժանանալով «Տիեզերահռչակ և Գերահանճար» տիտղոսներուն։ Տաթեւի դպրատան այս մեծանուն դէմքին, տուին նաև Տաթեւացի տիտղոսը, որովհետև անոր օրով, Տաթեւի դպրատունը մեծ հռչակ ստացաւ (ԺԴ-րդ դարին)։

«Մեկնութիւն Պատարագի» գրքին հեղինակ՝ Յովհաննէս Վարդապետ Արճիշեցին, մականուանեալն Ոսկեբերան*).

9) Ճանկայ Ս. Աստուածածին**) կամ Տիրամայր վանքը, Գնունեաց (Թիմար) գաւառին մէջ, նշանաւոր ուխտավայր մըն է։

10) Վարագայ վանքը, Վան քաղաքին մօտիկ։ Արծրունեաց թագաւորներու և թագուհիներու այս չքնաղ մենաստանը, իր ճօթին տաճարներով և ճօթին գմբէթներով, Հայ գրչութեան, մանրանկարչութեան և մատենագրութեան համբաւաւոր մէկ հաւաքարանն էր, որ ոչ միայն Զաքարիա Վարագեցի և ուրիշ մատենագիրներ կ'ընծայէր Հայ գրականութեան, այլև հազարաւոր գրչագիր և նկարազարդ մատեաններ։

Եւ վերջապէս Վանի ծովի Կտուց և Լիմ կղզիները, որոնց մենաստանները, առաւելապէս խստակրօն և ճգնազգեաց կրօնաւորներու ապաստանավայրերն էին։

Կտուց-Անապատ կղզիի վրայ, յանուն Ս. Կարապետի կառուցուած մենաստանը, ոչ միայն աղօթող և ճգնող մենակեացներու վայր մըն է, այլև Հայ մատենագրութեան ու հայկաբանութեան կեդրոն մը, որուն փառքը կը կազմէ Օիմէոն «Րաբբունի» Եպիսկոպոսը։ Ճաճարի կողքին կը գտնուէր վանական դպրատունը, ուր դարեր շարունակ, Հայ գրիչն ու վրձինը գործեր են, արտադրելով հազարաւոր ձեռագիր մատեաններ։

Լիմ-Անապատ կղզին նշանաւոր է իր Ս. Դէորգ մենաստանով, որը շրջապատուած է աշխարհուրաց կրօնաւորներու հարիւրաւոր խցիկներով, բոլորն ալ մութ, խոնաւ, նեղ, տխուր և թմրեցուցիչ տեսքով։ Իբրև դպրութեան ու գրչութեան կեդրոն, շատ նշանաւոր էր մանաւանդ Լիմ-Անապատը, որ դարերու պատկառելի պատմութիւն և մատենագրական արժէքաւոր արտադրութիւններ ունէր։ Լիմ-Անապատը, միւս վանքերու համեմատութեամբ, դեռ կը պահէր իր հանգոյն դրոշմը, որուն լաւագոյն ապացոյցը վանական դրպրատունն էր՝ իր հայկարան և աստուածաբան վարդապետներով

*) Յովհաննէս Արճիշեցին, «Մեկնութիւն Պատարագի»ն գրելու ժամանակ, իբրև ընծայ, օրական միայն մի հատ ոսկի կերած է և այս պատճառով ալ Ոսկեբերան կոչուած է։

**) Ճանիկ անունով հայաբնակ մեծ գիւղին մօտիկ ըլլալուն պատճառով, Ճանկայ Ս. Աստուածածին կը կոչուի։

ու եպիսկոպոսներով։ ԺԹ-րդ դարի կէսին, Լիմ-Անապատը շատ ա-
ւելի գրաւիչ ու նշանաւոր դարձաւ, երբ Վանեցի Հայկաբան և
Աստուածաբան Յակոբ Վարդապետ (յետոյ Եպիսկոպոս) Թօփուզ-
եանը հայկաբանութիւն, կրօնական ուսում և դաստիարակութիւն
կուտար խումբ մը երիտասարդներուն, որոնք այնտեղ—Լիմ—հա-
ւաքուած էին Վան քաղաքէն և գաւառներէն. Վանական ուսում
ստացած այդ երիտասարդները կամ հոգևոր աստիճան կ'ընտրէին՝
դառնալով եկեղեցւոյ պաշտօնեաներ և կամ հմտանալով, մասնաւո-
րապէս հայկաբանութեան և եկեղեցական երաժշտութեան մէջ՝ կը
կոչուէին՝ Տիրացու, Դպիր և Վարժապետ, որոնք վանքէն դուրս
գալով, կ'երթային քաղաքի և գիւղերու մէջ՝ ուսում և դաստիարա-
կութիւն տալու մատաղ սերունդին։

Խաչատուր Խրիմեանին աշակերտած Տիրացու Մկրտիչը, Ս.
Գրոց և նախնեաց մատենագրութեան մէջ, թէև հմտութիւն ձեռք
բերած էր, սակայն նա հայկաբանութեան և մասնաւորապէս գրա-
բար լեզուն սովորելու և իւրացնելու համար, հմուտ հայկաբան վար-
ժապետի մը աշակերտելու խիստ պահանջը կը զգար։

Եւ ահա, 1841 թուի գարնան, Տիրացու Մկրտիչ Խրիմեանը,
դեռ 21 տարեկան երիտասարդ, իւր ծնողաց կամքով և համաձայ-
նութեամբ, Վանէն ճամբայ ելաւ դէպի Կտուց-Անապատ վանք-մե-
նաստանը, նպատակ ունենալով այնտեղի վանական դպրատան մէջ
շարունակել իւր ուսումն ու դաստիարակութիւնը։ Որոշապէս չ'ենք
կրնար ըսել թէ Տիրացու Մկրտիչը, որքան ժամանակ մնաց Կտուց
Անապատի մէջ. բայց գիտենք միայն, որ նա քիչ ատենէն հեռացաւ
Կտուց-Անապատէն, ուր, հաւանաբար իւր ցանկացած ուսումը կը
պակսէր։ Նոյն թուականին մենք Տիրացու Մկրտիչը կը գտնենք
Լիմ-Անապատի մէջ, ուր կային հայկաբանութեան և կրօնական
գրականութեան հմուտ Վարժապետ-Վարդապետներ։ Տիրացու Մկր-
տիչը սիրեց Լիմ-Անապատի միջավայրը, որ լրիւ ու կատարեալ
պատկեր մըն էր Հայ վանականութեան։ Օրական եօթն անգամ ժա-
մասացութիւն, պահք և ծոմապահութիւն, ճգնաւորներու և քրծազ-
գեացներու խումբեր, գետնախշտի անկողիններ, մարմին տանջող
ու խարազանող փայտեայ և երկաթեայ գործիքներ, մռայլ, տխուր,
ողբերգական կենցաղը, իսկ այս բոլորէն յետոյ, վանական դպրա-

տուն մը և հայկական ու կրօնական գիտութեանց հմուտ վանականներ, որոնք յարգանք կը վայելէին միաբանութեան մէջ, և արտօնեալ իրաւունքներ ունէին։ Լիմ-Անապատի այս միջավայրը շատ խոր և անջինջ տպաւորութիւն թողած էր Տիրացու Մկրտիչի վրայ։

Վանքի մէջ կ'ապրէր աստուածավախ և խստակենցաղ մարդ մը—Գէորգ Ձգնաւորն*) էր այդ, որու մասին Տիրացու Մկրտիչը կը գրէ.

«...Զողջ գիշեր իբրու զկանթեղ նա կայր անշէջ արթուն աչօք
Աղօթիւք անհատական ընդ Աստուծոյ խօսեալ 'ի սիրտ.
Բացօթեայ ճրգնէը յաւէտ 'ի մէջ կրղզոյն ուր և կամէը,
Եւ զօղեալ յոլով անգամ 'ի դարափորն իւր խորագոյն
Անճաշակ անկերակուր պահէը անդէն զեօթնեակ աւուրս։
...Ոչ միայն էը ընչատեաց, այլև չխնդրէը ըզկարևորսն,
Զըրկէը զանձն 'ի պիտոյից տայը ընկերին կարօտելոյ,
Կենդանւոյն առ աշխարհ մեռեալ էը նա բոլորովին.
...Այսպէս երանելին իբրև զարև 'ի բոյլս աստեղց
Փայլեցաւ 'ի մէջ եղբարց պայծառ լուսով ճրգնողական»**).

Գէորգ Ձգնաւորի այս անձնուրաց կեանքը շատ խոր ազդեցութիւն կը թողու Տիրացու Մկրտիչի վրայ, որ մանաւոր սէր ու յարգանք ցոյց կուտար այդ և նման կրօնաւորներու հանդէպ։ Սակայն, Տիրացու Մկրտիչը, Լիմ-Անապատը երթալով, նպատակ չ'ունէր Գէորգ Ձգնաւորի նման—«Զողջ գիշեր իբրու զկանթեղ» և «անշէջ աչօք» մնալ, կամ «Աղօթիւք անհատական ընդ Աստուծոյ» խօսիլ, և «անճաշակ անկերակուր» եօթն օր ծոմ պահել։ Անոր նպատակէն դուրս էին այս բոլորը։ Նա եկած էր Լիմ-Անապատը՝ հայկաբանութեան և գրաբար լեզուի մէջ հմտութիւններ ձեռք բերելու։ Վանքի հայկաբան կրօնաւորներու մօտ, նա քանի մ'ամիս յամառ և յարատև աշխատանքով, այնքան հմտացաւ գրաբարի ուսումնասիրութեան մէջ, որ ազատ կերպով կրնար գրաբար գրութիւններ գրել։

---

*) Այս Գէորգ Ձգնաւորի մասին, Վանի Թիմար գաւառի գիւղացիները, շատ զարմանալի և հրաշքներու նմանող զրոյցներ կը պատմեն։ Գէորգ Ձգնաւորը մեռած է 1844-ին և թաղուած է Լիմ-Անապատ կղզիի մէջ։

**) «Հրաւիրակ Արարատեան» էջ՝ 88։

Եւ այսպէս—«Միաւժամանակ նա մնաց Լիմ և Կտուց անապատներում, աշակերտեց այդտեղ և ստացաւ. թէև միակողմանի, բայց հարուստ մտաւոր պաշար, մօտիկ ծանօթանալով եկեղեցական գրականութեան և գրաբար լեզուին։ Միայնակեաց վանականների կեանքը, ինչպէս երևում է, խոր տպաւորութիւն թողեց Խրիմեանի վրայ։ Նա մի տեսակ յարգանքով էր վերաբերվում դէպի այն կուկուսակրօն վարդապետները, որոնք թողած աշխարհ, տուն ու տեղ, ազգականները և բարեկամները, առանձնացել էին վանքերի մութ խուցերը, և գիշեր ցերեկ՝ ամենայն անձնուրացութեամբ, աղօթքներ էին կարդում և շարականները երգում»։*)

Վանական միջավայրը հաճելի երևցաւ Տիրացու Մկրտիչին, որ հրապուրուած էր—մանաւանդ այն հոգևորականներով, որոնք ուսեալ և զարգացեալ էին, իրենց անձի համար «ըզկարևորսն» անկարևոր կը համարէին, և կ'օգնէին «ընկերին կարօտելոյ»։ Այս բոլոր բարոյական երևոյթները Տիրացու Մկրտիչի վանական դաստիարակութեան հիմնաքարերը կը կազմէին։ Լիմ և Կտուց Անապատներու կրօնական մթնոլորտն ու հոգևորականութիւնը, շատ խոր դրոշմ դրին անոր հոգեկան, ներքին աշխարհի վրայ, հոգեկան աշխարհ մը, որուն մէջ, Տիրացու Մկրտիչ Խրիմեանի սիրտն ու միտքը, իբար գրկած, կը սլանային դէպի ապագայի յուսատու և լուսատու ոլորտներն ու հորիզոնները։

Լիմ-Անապատի վանական դպրատունէն ստացած ուսումէն, ըստ երևոյթին, գոհ մնաց Տիրացու Մկրտիչը, որ 1842 թուի գարնան հեռացաւ այդ մենաստանէն և վերադարձաւ քաղաքը—Վան—իւր հայրական տունը, հարազատներու մօտ։ Ծանկոյսների ժողովուրդը, մասնաւոր յարգանք և պատիւ կ'ընծայէր Տիրացու Մկրտիչին, որ Լիմ-Անապատի անուանի դպրատան մէջ, աւելի կանոնաւոր ուսում ստացած էր, և այժմ քաղաքի կարգացուոր և ուսումնական անձերու դասակարգին կը պատկանէր։ Ծանկոյսների քահանաներն ու թաղեցիները, համոզեցին Տիրացու Մկրտիչը, որ իրենց Ս. Աստուածածին եկեղեցիի դպրատան մէջ վարժապետութիւն ընէ, դաստիարակելով թաղի մանուկները, բայց նա համեստութեամբ մերժեց այդ առաջարկը։

*) Խ. Մալումեան—ԽՐԻՄԵԱՆ. էջ՝ 7։

## Բ.

## ՈՒՂԵՒՈՐ ԵՒ ՈՒԽՏԱՒՈՐ ՏԻՐԱՑՈՒ ՄԿՐՏԻՉԸ

*Իւր ստացած ուսումն ու դաստիարակութիւնը և կրօնական ու պատմական մեծահատոր գիրքերու ընթերցումները, Տիրացու Մկրտիչ Խրիմեանի հոգին ու սիրտը ոգևորեցին՝ հայրենիքի սրբավայրերն ու պատմավայրերը անձամբ շրջագայելու և տեսնելու բուռն ցանկութեամբ։*

*Սակայն ԺԹ-րդ դարի կէսին, երբ տաճկական և քրդական սարսափները կը թևածէին Վասպուրականի ամէն կողմերը, Տիրացու Մկրտիչը մէն-մենակ ճամբորդելը վտանգաւոր համարեց։ Նա կրցաւ գտնել իրենց թաղեցի երկու հասակակից և գաղափարակից ընկերներ,—հաւանաբար Աբրիպպաս Տապաղեան և ուրիշ մը,— որոնք երեք միասին 1842-ի ամառը, իբրև հայրենիքի ուղեորներ և ուխտաւորներ շրջագայութեան ելան։ Անոնք անցան Թիմար, Արճէշ, Ալջավազ, Ախլաթ, Կարճկան, Կարկառ, Մոկս, Գաւաշ, Հայոց-Ձոր, Շատախ, Նորդուզ, Աղբակ և Սարա գաւառները, տեսան Հայ հին փառքերու յիշատակարանները, պատմավայրերն ու սրբավայրերը ուսումնասիրեցին։ Հայրենիքի գաւառներն ու գիւղերը, լեռներն ու գետերը, Հայ գիւղացիութեան մտաւոր ու տնտեսական վիճակը դիտեցին, տաճկական և քրդական ճնշումներու և հարստահարութիւններու մասին կրցան ճշգրիտ գաղափար մը կազմել և լիովին ծանօթացան իրենց հայրենի երկրին—Վասպուրականին։ Այս շրջագայութիւնը*) բատ զրոյցներու, տևած է շուրջ 6 ամիս։*

*Հայրենիքի Ուղեւոր-Ուխտաւոր Տիրացու Մկրտիչը,—«Վասպուրականը այնպէս էր ուսումնասիրել, ինչպէս իր հինգ մատները», կը գրէ Խ. Մալումեանը. Հայրենիքի ուսումնասիրութեան հետ, ու-*

---

**) Խրիմեանի կենսագիրներէն ոմանք կը յիշեն, որ այս առաջին շրջագայութեանց ատեն, ուղեւոր-ուխտաւոր Մկրտիչը այցելած և տեսած է նաև Աղթամարի Ս. Խաչի գեղակերտ տաճարը։ Սակայն մենք կը կարծենք, որ Խրիմեանը իր «Հրաւիրակ Առաքելական» գիրքը լոյս տեսնելէն (1850) յետոյ միայն առիթ ունեցեր է անձամբ տեսնել Աղթամարը, որու տաճարի ամբողջ նկարագրութիւնը՝ երբ «Հրաւիրակ Առաքելական»ի Չորրորդ Նուագին մէջ ի յայտ կը բերէ, այդ բոլորը ոչ թէ իւր տեսածներն են, այլ Թովմա Արծրունիի «Պատմութիւն**

զևոր-ուխտաւորը, վայելած էր նաև իւր հայրենի երկրի համն ու հոտը, ոգևորուած էր անցեալի փառքերու յիշատակներով. որոնք այնքան գրաւեր էին իւր սիրտն ու հոգին։ Տիրացու Մկրտիչը, իւր այս անդրանիկ շրջագայութեան ընթացքին, ամենուրեք տեսած էր, որ Վասպուրականի բովանդակ Հայութիւնը, մտաւոր խաւարի և տգիտութեան մէջ կը ծփար և կը տնքար ու կը տառապէր մասնաւորապէս քիւրդ բէկերու, էլ-աղասիներու (ցեղապետ) և մեծ ու փոքր տաճիկ բռնակալներու ծանր լուծին տակ՝ ենթակայ ըլլալով յարատև հարստահարութեանց, կողոպուտներու և բազմատեսակ արհաւիրքներու։

Մկրտիչ Խրիմեանը, իւր երկու ընկերներու հետ, 1842 թուի աշնան, կ'որոշէ ճամբայ իյնալ դէպի Էջմիածին։ Արդեօք նա իւր ուսումը կատարելագործելու նպատակով և կամ պարզ ուխտագնացութեան համար կուզէր Էջմիածինը երթալ—այս մասին վճռական բան մը չ'ենք կրնար ըսել, միայն որոշ է, որ Մկրտիչ Խրիմեանը «22 տարեկան հասակում վանեցի երկու ընկերների հետ ուխտի եկած է ս. Էջմիածին, Կարբեցի Յովհաննէս Կաթուղիկոսի օրով»*)։

Այս երեք երիտասարդներու համար, դիւրին էր արդեօք, Վանէն մինչև Էջմիածին ճամբորդել, երբ երկրի ամէն կողմ սարսափ կը տիրէր։ Մէկ ապահով և դիւրին միջոց հղեր է — այն էր, որ, երբ, Վանէն դէպի Երևան վաճառականները ու կարաւանները ճամբայ ելած են, Մկրտիչ և իւր երկու ընկերները, միացեր են այդ կարաւաններու հետ ճամբորդող վաճառականներուն կամ գործակատարներուն և իբրև ձի քշող կամ խանութի աշկերտ, անարգել կերպով ռուս-տաճկական սահմանէն կրցած են ներս մտնել։ Ուխտաւորական կարաւանային դանդաղաշարժ ճամբորդութիւն մըն էր՝ Վանէն Երևան, Աբաղայի դաշտով կամ Բայազիդի գծով։

---

*) Տաճիկ Արծրունեաց» հատորի, Աղթամարի մասին եղած նկարագրական էջերէն ամփոփած է։ Այս մեր ըսածին իբր ապացոյց, կարդանք Մկրտիչ Խրիմեանի հետեւեալ տողերը—«Մի այնպէս կարծեցէք ուշիմ ընթերցող, եթէ ճիշտ այսպիսի իցեն ամենայն քանդակեալ դրօշուածք յարտաքին կողմունս տաճարիս այս, թերեւս առաւել ինչ իցեն կամ պակաս 'ի նոսին, քան որում չեմք ականատես. եւ թէպէտ Թովմայ Արծրունին պատմէ զնոցանէ, այլ քան մասին եւ եթ»։ («Հրաւիրակ Առաքեաց». Ա. տպագր. 62-րդ ծանօթութիւն. էջ՝ 96)։

*) «Առաքեաց» ամսագիր. Էջմիածին. 1900. Ապրիլ. էջ՝ 165։

Մկրտիչ Խրիմեանը և իւր երկու ընկերներն արդէն հասեր էին Էջմիածին։ Եթէ ուխտի գացեր են, ուրեմն ուխտերնին կատարած են, համբուրեր են Էջմիածնի Իջման Տեղը, սրբութիւնները, մոմ վառեր և աղօթեր են. գացեր տեսեր են Ս. Հռիփսիմէի, Ս. Գայիանէի և Ս.Շողակաթի վանքերը։ Անոնց Էջմիածին երթալու մէջ այլ նպատակ եղած է արդեօք։ Մկրտիչը ցանկութիւն ունեցած է Էջմիածնի մէջ ևս ուսում և դաստիարակութիւն ստանալ. այս մասին որոշ բան մը չ'ենք կրնար ըսել, միայն գիտենք, որ 1842-ի աշնան վերջերը, Մկրտիչ Խրիմեանը, իւր ընկերներու հետ, նորէն կարաւաններուն միացած՝ Էջմիածնէն ճամբայ հլած են դէպի Վան, ուր իրենց ընտանեկան յարկերու տակ կը հանգստանան, ձօթուրքն ամիսներու տառապալից ճամբորդութիւններէ յետոյ՝ հայրենի յուշ-յիշատակներով առլցուն։

Այս երկարատև ուղևորութիւնները—Վասպուրականի և Արարատեան Աշխարհի մէջ—Մկրտիչ Խրիմեանի սիրտն ու հոգին վառեցին ճայրենասիրութեան անշէջ հուրով, որ երթալով բորբոքեցաւ և վառ զգացումներու աշխարհ մը բացաւ հայրենասէր երիտասարդի առջև։ Մկրտիչը կ'որոշէ իրրև ուղևոր և ուխտաւոր շրջագայել Հայաստան Աշխարհի ամէն կողմերը, սակայն, անոր այս ցանկութիւնը անմիջապէս չ'իրականացաւ—որովհետև 1843—45 թուականներուն (ճշտելն անհնար է) մեռաւ Մկրտիչին հայրը—կրտաւի գործանոցի տէրն ու վաճառականը—որու թաղումը պատրագով կատարեցին, մարմինը ամփոփեցին իւր եղբայր Խաչատուրի գերեզմանին առընթեր, «հոգեհաց» տուին և բոլորն ալ «Աստուած հոգին լուսաւորէ» ըսին։

Մարխանի և Մկրտիչի պառաւ մայրը թէև այրի մնաց, բայց կը մխիթարուէր իւր զոյգ կանաչ-կտրիճ, ջահել-ջիւան երիտասարդ տղաներով, որոնցմէ մեծը—Մարխան—կտաւի արհեստանոցը կը կառավարէր և տուն-տեղ կը պահէր, իսկ փոքրը—Մկրտիչ—տիրացու, կարդացուող և ուսումնական մարդ դարձեր էր, պատիւ բերելով Խրիմեան գերդաստանին։ Մարխանը, դեռ իւր հօր կենդանութեան ժամանակ, ամուսնացեր և ընտանիքի հայր դարձեր էր, կապուած էր իւր գործի և տան հետ։ Մկրտիչը ամուրի էր, ազատ երիտասարդ, որուն միակ ցանկութիւնն էր Վանէն հեռանալ և շըր-

ջագայել Հայաստանի ամէն կողմեր։ Պառաւ մայրը, սակայն, իւր արցունքով և կաթոգին սիրով կրցած էր յուզել սիրտը՝ իւր Մկրտիչ զաւակին, որ չը հեռանայ, դարիբութիւն չ'երթայ, որ մէրկան սիրտը չ'արիւնոտէ, դարդաւոր չ'ընէ։ Մօր սիրտն էր խօսողը, մօր աչքերն էին արտասուողը, մօր ձայնն էր աղաչողը, փափկասիրտ, դիւրայոյզ Մկրտիչը մի՛թէ կրնար ոտնահարել իւր որդիական զգացումները և մերժել իւր մօր խնդրանքները, որ չը հեռանայ հայրական տունէն, չը հեռանայ հայրենիքէն։

Պառաւ մայրը դեռ ուրիշ մեծ ու սուրբ ուխտ և դիլաք մըն ալ ունէր—տեսնել Մկրտիչի թագն ու պսակը, ամուսնացնել իւր զաւակը։ Նորէն մայրն էր մէջտեղը, նորէն մօր սիրտն էր խօսողը։ —«Նա որ արև տուեր էր Մկրտչին, որուն սիրտը կը շրջէր իբր ստուեր անբաժան իւր որդւոյն արևուն ետևէն, և հոգին կը հսկէր, կը դիտէր իւր զաւակի հոգւոյն-գաղտնիքը։ Նա որ ցաւ քաշած էր, կաթով տածած էր իւր հոգւոյն հատորը, իւր աչքին լոյսը, նա խնդրած էր Արարչէն ուխտիւ որ տեսնէր Մկրտչի թագն ու պսակը։ Անհնարին էր դիմադրել ծնող մօր, և նախախնամութիւնը թոյլ տուաւ որ կատարուի այդ բարի մօր ուխտը, վերապահելով կատարելու նաև Մկրտիչին ալ ուխտը»*)։

Մկրտիչի կեանքի այդ մեծ ուխտը պիտի կատարուէր։ Համեստ ու հնազանդ զաւակը չը կրցաւ մերժել իւր մօր այդ առաջարկը, որ շուտով կ'իրականանար։

## Գ.

## ՆՇԱՆԴՐԷՔ ԵՒ ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆԸ

Մկրտիչ Խրիմեանը, 1846 թուին, քսաննվեց տարեկան կանաչկտրիճ երիտասարդ մըն էր։ Ամուսնութեան կատարեալ տարիքն էր այդ։ Մկրտիչի մօր միակ ցանկութիւնն էր, որ իւր զաւակը շուտ ամուսնանայ, ընտանիքի տէր դառնայ և կապուի իւր հայրական տան ու հայրենիքի հետ, որպէսզի չը պանդխտէր, դարիբ-դուրբաթ չը դառնար, ինչ որ մեծ ցաւ և վիշտ էր ծնողներու

*) «Արեւելք» օրագիր. 1885. Կ. Պոլիս։ «Արեւելք»ի մէջ հրատարակուած Խրիմեանի կենսագրութեան հեղինակի ստորագրութիւնը—Աշակերտ—ամենայն հաւանականութեամբ Գաբրիէլ Նալբս. Սրուանձտեանին ըլլալու է։

համար։ Մայրը կը ցանկանար, որ Մկրտիչի նշանածն ու ապագայ կենակիցը սիրունատես, պարկեշտ, համեստ և տնարար աղջիկ մը ըլլար։ Նա կը ճանչնար իրենց թաղի բոլոր աղջիկները և գիտէր անոնց բարեմասնութիւններն ու թերութիւնները։

Պատմութեան և նիւթի դէմ մեղանչած չ'ենք ըլլար կարծեմ, եթէ Մկրտիչ Խրիմեանի նշանադրէքն ու ամուսնութիւնը պատմենք ու նկարագրենք Վանի հայկական–ժողովրդական սովորութիւններով,—որոնք, ափսոս, ընդմիշտ կորսուեցան մեր ներկայ սերունդին համար, ու զարձան պատմութեան սեփականութիւն։

Խրիմեաններց պառաւն արդէն իր Մկրտիչի հարսնացուն ընտրած էր, ՄԱՐԻԱՄ անունով համեստ ու սիրուն աղջիկ մը, որուն հայրն էր Յովհաննէս Մ. Սեիկեանը։ Ձը գիտենք, արդեօք, մայրը Մկրտիչի հաւանութիւնն ու ցանկութիւնը նկատի ունեցաւ, անոր կարծիքն առաւ, Մկրտիչին յայտնեց, որ Մարիամ Սեիկեանն է իր ընտրած աղջիկն ու ապագայ հարսը։ Եւ օր մըն ալ, 1846 թուի Մեծ-Պահքի մէջ, Մկրտիչին մայրը, իրենց ազգական քանի մը հասակաւոր կանանց հետ, ելան գացին Յովհաննէս Սեիկեանի տունը, աղջիկ«եսի։ Սեիկեանները պատուով, սիրով և քիչ մըն ալ նազով ընդունեցին այս «անկոչ հիւրերը», որոնց առաջնորդեցին սենեակը։ Խաթուննները առօր-փառօր, ծալապատիկ բազմեցան մինդարներու վրայ և սարէն-ձորէն, հնէն-նորէն խօսքեր բացին, մինչև որ Մկրտիչի մայրը, Մարիամին մօր յայտնեց, որ եկած են, կամօքն Աստուծոյ և երկու կողմերու համաձայնութեամբ, խնամի և բարեկամ դառնալու։ Մարիամին մայրը ունձկուտոր (անձկոտոր) եղաւ, նազ տուզ ըրաւ, չեմ-չում ըսաւ, «մեր աղջիկը ճալա պսսիկի» առարկեց, «օրը ա՜s, տարի ա՜s» պատճառաբանեց, գովեց իր աղջկայ բարեմասնութիւնները, «ձեռքի շնորհք»ը, «բերան փակ» ըլլալը (քչախօս, համեստ), «ծանտրիկ-մանտրիկ» (յուրջ) բնաւորութիւնը, բայց վերջնական խօսք չը տուաւ։ Մկրտիչին մայրն ու միւս խաթունները, իրար հերթ չը տալով, «բլբուլ դարձան» և Մկրտիչի գովքն ըրին, անոր բոլոր բարեմասնութիւնները յիշեցին, աւելցնելով, որ տիրացու, ուսումնական, կարդացուոր ու վարժապետ է իրենց «ազիզ-մազիզ տղան»։

Մարիամին մայրը, իր տեղը ծանր կը պահէ, կը ջանայ տեղի չըտալ, շուտով հաճաձայնութիւն չը կայացնել, որպէս զի Մկրտիչին մայրն ու միւս խաթունները խնդրողի և աղաչողի դերի մէջ մնան, որ Մարիամին անունն աւելի բարձրանայ և ժողովուրդն ըսէ թէ—«Աղջկայ ծնողները չ'էին ուզեր տալ, բայց տղայի ծնողները երեսին յռճեցին (ամուր պահեցին) և նշանը ղրին»։ Եւ վերջապէս Մարիամին տարան խաթուններու մօտ։ Աղջիկը համբուրեց անոնց ձեռները և ապա խոնարհ ու համեստ՝ կանգնեցաւ անկիւն մը, ձեռքերը կուրծքին դրած։ Մկրտիչին մայրն ու միւս խաթունները դիտեցին Մարիամին քայլուածքը։ Խօսեցնել տուին, հասկնալու համար թէ կլուաs (լեզուաւոր) չէ, ցած խօսեցին որ անոր լսողութիւնը փորձեն, ի վերջոյ Մկրտչին մայրը վեր ելաւ մօտեցաւ Մարիամին և ըսաւ—«Բերանդ բաց, ճօ՛օ՛օ՛ արա, տիսնամ բերնէդ գէշ ճոs չի գայ»։ Այս բոլոր քննութիւններէն յետոյ, երբ խաթունները տեսան, որ Մարիամը աճկալաs (անթերի) է, այն ատեն միայն Մկրտիչին մայրը, իր թաշկինակի ճոթին մէջ կապուած մատանին, Մարիամի աջ ձեռքին մատն անցուց և բոլոր միասին՝ —«Աստուած անթառամ պսակին արժանի անի»—ըսին։ Մարիամին մայրը գնաց գինի և չոր միրգ բերաւ և հրամցուց խաթուններուն, որոնք մէկ-մէկ բաժակ գինի անուշ ըրին, երկար-բարակ գրոյցներով զբաղեցան, աղջկայ ու տղայի գովքերն ըրին, մինչև որ խնամի խաթունները գոհ և ուրախ հեռացան։

Ակջիկեսէն երկու շաբաթ յետոյ, այժմ արդէն պաշտօնական Նշանադրէսն է։ Թէև Մեծ-Պահքն է, բայց Սեիկեանենց ընտանիքը մեծ պաս-աստուածութիւն տեսած է։ Խնամիները կուգան։ Սեղանը պատրաստ է, պահք աւուր հազար բերք-բարիներով՝ զարուն-զարդարուն։ Մսոc, խօշաբ, ձիթաիւղով փլաւ, խաշած ոսպ, լոբի, գլուլ և դեռ քանի՛ քանի՛ տեսակ ընդեղէններ և կերակուրներ բոլորն ալ համով, հոտով։ Այր մարդիկ և կանայք զատ-զատ սեղան նստած են։

Քահանան, բաւորը և երկու կոդմի խնամի այր մարդիկը, ծալապատիկ կամ ծնկաչոք, շարէ շար շրջապատեր են սեղանը, որուն տոջը նստած է նաև Մարիամին հայրը—Յովհաննէս Սեիկեանը—կողքին ունենալով փեսայ Մկրտիչը։ Ուրախ խօսակցութիւնները, բարեմաղթութիւնները և կենացները անպակաս են։

Ահա և կանանց սեղանը, որուն գլուխը բազմած է Մկրտիչին մայրը, մէկ կողմն ունենալով քաւոր կին խաթունը, իսկ միւս կողմը՝ հարսնացու Մարիամը, որ գլուխ-կախ, լուռ, խոնարհ ու համեստ, նստեր է և կեսուրի հրամանին կը սպասէ, պատառ մը բան ուտելու համար։ Մարիամին մայրը կ'երթայ կուգայ, կարգադրութիւնները կընէ, երկու սեղանները կը շարապրէ (կը կառավարէ)։ Աղջկայ կողմի խաթունները կը ստիպեն, որ խնամի խաթուններն ուտեն,— «Քաւորկին խաթուն մեռնեմ բէքնիդ, անուշ արա»— կ'ըսէ հասակաւոր կին մը։ Խնամի խաթունները թէև, հազար նազեր կը բանեցնեն, չ'են ուզեր ուտել, բայց բերաննին ճըփճըփացնելով կը վայելեն սեղանի բերքն ու բարիք։ Ինչ շաղակրատութիւններ, որքան երկար և անհատնում զրոյցներ, խնդութիւն, կատակ և հանաք իրար խառնուեր են, ստեղծելով խնամիական ջերմ մթնոլորտ մը։

Մկրտիչին մայրը իւր հարսնացուին ոսկի և արծաթ զարդեր կուտայ իբր նշան։ Այսպիսով ճեանը կը դնեն, երկու կողմի բարեկամութիւնը կ'ամրապնդեն ու կը հնուանան։

Նշանդրէքէն յետոյ, Խրիմեաններց և Սևիկեաններց ընտանիքները հարսանիքի պատրաստութիւններ կը տեսնեն։ Մեծ-Պահքը կը վերջանայ, Զատիկն ու Քառասնոցը կ'անցնին։ Կը մօտենան Թազա-Պասակի օրերը։ Երկու կողմի խնամիներու համաձայնութեամբ կ'որոշուի հարսանիքի օրը։

Վաղը հարսանիքն է։ Օր մ'առաջ, երեկոյեան կողմը, Խրիմեաններց տունէն, Սևիկեաններց տուն կ'ուղարկուի հարսի թաբախը (մատուցարան), որուն վրայ շարուած են, խիճաի տոպրակը, զոյգ մը երկար ու հաստ թրի մոմեր, նուռ, մեծ փունջ մը ծաղիկ և հարսի կօշիկները՝ երկար ճիտքով և կարմիր գոյնով։ Արդէն թաբախը բերուած է Սևիկեաններց տունը, ուր հաւաքուած են հարսանիքի հրաւիրեալները— այր թէ կին։

Կանայքը կը շրջապատեն հարս Մարիամը, որուն զոյգ ձեռքերն ալ խիճա կը դնեն, ի նշան ուրախութեան։ Սակայն Մարիամը տրխուր է, կուլայ, կը հեկեկայ, չէ որ կեանքի նոր շրջանի մը մէջ պիտի մտնէ և ծնողաց գիրկէն հեռանայ։ Հարսնեոր կանայք բոլորն ալ խիճա կը դնեն, կը զրուցեն, կը կատակեն սակայն մեծ ուրախութիւն չ'են ըներ։ Այսպէս կը վերջանայ Խիճադրէսը։

Այժմ երթանք Խրիմեաններց տունը, ուր հաւաքուած են փեսայ Մկրտիչի ջահէլ-ջիւան ընկերները, բոլորն ալ ամուրի, ազաբ։ Այս-տեղն ալ, պսակէն առաջ, Ազբաճսում (ազաբներու՝ ամուրիներու նիւ ։ կամ հաւաքոյթը) կ'ընեն։ Հաւաքուեր են տանտունի մէջտեղը, փեսայ Մկրտիչն ալ մէջերնին։ Ազաբբաշու կոպալը, (զարդարուած մահակ) մէջտեղը դրուած է։ Ամէն ոք կը ցանկայ, որ ինքն ըլ-լայ Ազաբբաշին (ամուրիներու պետը և հարսանիքի քէֆիրու դե-կավարը)։ Համաձայնութեան չ'են գար և ի վերջոյ կ'որոշեն, կո-պալը՝ գինիով աճուրդի դնել, ով որ շատ գինի տայ փեսային կամ ամուրիներու խումբին՝ նա պիտի ըլլայ Ազաբբաշին։ Համաձայնու-թիւնը կը կայանայ և Մկրտիչի ընկերներէն մէկը կը դառնայ Ազաբ-բաշին։ Երդէն եկած է չալկին (նուագախումբը) դիւճ, զուռնայ և ճեամանի նուագողները մէկ-մէկ բաժակ գինի խմելէ յետոյ կը նուագեն։ Ջահէլներու քէֆը կ'եռայ։ Փեսայ Մկրտիչն ալ քէֆին մասնակից է։ Ազաբներն ալ իրենց աջ ձեռքի ճկոյթ-մատը միայն խինա կը դնեն։ Ազաբներու կանչերով ու ձայներով կը թնդայ ամբողջ տունը։ Այսպէս կ'անցնի գիշերը։ Լուսաբաց է։ Գարնան պայծառ արևն արդէն վազուց ծագեր է և բնութիւնը պճնուեր է իր հազար ու մէկ զարդարանքներով։

Խրիմեաններց այգիի հովասուն ծառերու տակ, կանաչի վրայ փռուածքեր են։ Հարսանեկան պատրաստութիւնները լրիւ են։

Փեսայ Մկրտիչի երեսները թրաշելու հանդիսաւոր, յուզիչ և նուիրական ժամը կը մօտենայ։

Բէրբէրը (սափրիչը) եկած է։ Ծածկիկ աթոռ մը կը դնեն կա-նաչ ածուի մէջտեղը։ Քաւորն ու Ազաբբաշին փեսայի զոյգ թևերը բռնելով, կը տանեն աթոռի վրայ կը նստեցնեն։ Հրաւիրեալները բոլորն ալ—այր, կին, փոքրիկներ— կը նստին կանաչներու վրայ և կը դիտեն Վանի հայկական հարսանիքի այս յուզիչ տեսարանը։ Մկրտիչը նստեր է աթոռի վրայ, յուզուած, տխուր, աչքերը ար-տասուքով լեցուած։ Չէ որ փեսայի հարսանեկան թրաշը, առաջին քայլն է դէպի կեանքի մէկ նոր շրջանը, դէպի ընտանեկան սեփա-կան յարկը։ Սափրիչը գործի կ'անցնի և ծանր ու հանդիսաւոր կերպով կ'ածիլէ փեսայի երեսները, մինչ նուագախումբը կ'եղա-

նակէ, իսկ փեսայ Մկրտիչի մէկ ջահէլ ընկերն ալ բարձր ու զիլ ձայնով, ծանր և յուզուած կ'երգէ.

Թագուոր ի՞նչ բերեմ քեզ նման,
Քեռ կանանչ արեւն քեզ նրման,
Մեր վարդիցես որ բացուեր,
Բացուեր քեռ արեւ՝ դո՛ւ նրման։

Դէմ աղօթքաց դու կայներ ես,
Կանաչ կարմիր դու կապեր ես,
Աստուած քեզ պահի պարգեւես,
Բարով թագուհիդ վայելես։

Ջուխտ վարագայ դէմ կայներ ես,
Ալ-կարմիր կանաչ կապեր ես,
Աստուած քեզ պահի պարգեւես,
Քեռ թագն ու պսակ վայելես։

Աղքատաւոյ դէմ կայներ ես,
Քանց լուս նրեցսակ դու զուարթ ես,
Բարով թագուհիդ վայելես,
Աստուած քեզ պահի պարգեւես։

Թրաշը կը վերջանայ։ Քահանան կ'օրհնէ փեսայ Մկրտիչի հարսանեկան հագուստները, Հալաւօրճնէէն է այս։ Ապա ազարները, փեսան կը տանեն բաղնիք, կը լողացնեն և տունը վերադառնալով կը շարունակեն իրենց քէֆը։

Վաղը առաւօտ, եկեղեցիի մէջ, պատարագի ընթացքին, պիտի կատարուի փեսայ Մկրտիչի և հարս Մարիամի պսակի արարողութիւնը։ Ամէնքը կ'երթան հանգստանալու։ Կէս գիշերէն յետոյ, երբ ժամհարները, կոչնակնին տկըլկացնելով և «Առաւօտ լուսուն» շարականը երգելով փողոցները կը շրջէին, Խրիմեաններց և Օհիկեաններց—փեսայի և հարսի—տուներէն ներս, կեանք և եռուզեռ ըսկիզբ կ'առնեն։ Բոլոր հարսնեւորները արթնցեր են և գործի վրայ են։ Ջէթի ճրադները կը պլպլան ամէն կողմ և աղօտ լոյսերը կը մաղուին տան ներսն ու դուրսը։ Այստեղ հարս Մարիամի հասակակից աղջիկները ու ջահէլ հարսները հաւաքուեր են հարսի շորերը կը հագցնեն, ուրախ զրոյցներ ընելով։

Հարսի մազերը սանրեցին և ուսերն ի վար փռեցին մէջքի վրայ։ Անոր մազերէն 12 պոչիկ (հիւսք) շինեցին, ժապաւէնով զարդարեցին, կարմիր Թալմէն հագցուցին (ընտիր կտորէն երկար ըզգեստ մը) արծաթ-թասը (գլխարկ) գլխին դրին, ոսկի ճակտնոցը ճակտին կապեցին, մարգարտի շարոցն ու ոսկի ճրտնոցը (մանեակի նմանող զարդ) վիզէն կախեցին և կուրծքի վրայ փռեցին։ Ականակուռ գլուխով արծաթէ ճեամարը (գօտին) մէջքին կապեցին, երկարավիզ, կարմիր գոյնով կօշիկները՝ ոտքերն հագցուցին, ապա,

վերէն վար՝ աչքէ անցուցին և հագուստներու փոնթ-փունթն ուղղեցին։ Հարսը հագցուցին ու պրծան և արդէն պատրաստ՝ հարսնեւորներու և փեսայի գալուն կը սպասեն։

Խրիմեանենց տունն ալ, ազարները հաւաքուեր են փեսայ Մըկրտիչի հագուստները կը հագցնեն։ Մկրտիչը լուռ և խոնարհ կանգներ է. ահա կարմիր ֆէսը դրին գլխին, սև եազման ալ ֆէսի բոլորտիքը փաթթեցին, զըպուն (երկու սրունքներու կողերը բաց, երկար միաձև զգեստ) հագցուցին, սալթան ալ՝ զըպունի վրայէն և թանկագին ընտիր շալը մէջքին կապեցին։ Նախուն թաթեր (գուլպաններ) և ապա սև կունդուռաները ոտքերն անցուցին։

Լուսաբաց է։ Ծանկոյսների Ս. Աստուածածին եկեղեցոյ արշալուսային ժամահրաւէրի զանգերը, զըրնկ-զըրնկ կը զըրնկան և ղօղանջիւնի արձագանգներով կը լեցուի Ծանկոյսների ձորը։ Խրիմեաններ տան մէջ իրարանցումը կ'իյնայ։ Նարսխուրը (հարսանեկան թափօրը) ճամբայ պիտի ելնէ դէպի Սևիկեաններ տունը, որ Ծանկոյսների թաղին մէջն է։ Քաւորն ու Մկրտիչի մեծ եղբայր Մարգարը կը բռնեն փեսայի թևերը։ Փեսայի առջևէն կ'երթայ նուագախումբը, իսկ ետևէն կուգան երկսեռ հարսնեւորները, բոլորն ալ զարուն-զարդարուն, ուրախ և հպարտ։ Ազարբաշին, կոպալը ձեռքին, վառ-վառ մոմերը կոպալի ծայրին, կ'երթայ փեսայի ետևէն, կանչերով և ուրախ աղաղակներով։ Փեսան կը հեծցնեն ձիու վրայ, իսկ քաւորն ու փեսայի եղբայրը երկու կողմերէն կը քայլեն։ Եւ այսպէս հանդիսաւոր թափօրը կը շարժուի դէպի Սևիկեաններ տունը։ Ազարները և ջահէլները թափօրի առաջէն, ձեռնախաղերով և պարերով կ'առաջնորդեն փեսան և հարսնեւորները։ Թափօրն արդէն հասեր է Սևիկեաններ տունը։ Խարսխուրը ներս կը մտնէ։ Երկար նստելու ժամանակ չը կայ, պէտք է աճապարեն, որ ժամասացութեան և պատարագին հասնին։ Նուագ ծխատէր քահանան, քաւորկնոջ բերած հարսի քողը կ'օրհնէ։ Քաւորկին խաթունը քողը ձեռքին, եօթն անգամ հարսի բոլորտիքը կը ճուայ (կը դառնայ) և ապա անթափանց շալ-քողը կը փռէ հարսի գլխի վրայ, իսկ յետոյ, մանրիկ գինձ-ջահարները, բուռ բուռ կը լեցնէ հարսի գլխին, ի հրճուանս մանուկներու, որոնք աղմուկով ու հաճոյքով կը հաւաքեն մարգարիտի մեծութեամբ այդ շաքարները։ (Ուրեմն, այս գեղեցիկ

սովորոյթը, չի յիշեցներ մեզ Մ. Խորենացիի այս խօսքերը – «Տեղայը մարգարիտ ի հարսնութեան Սաթինկանն»։ – Քահանան կէսպահակը կուտայ և խարխուրը Սևիկեանենց տունէն, հարսն առնելով. ճամբայ կ'ելլէ դէպի եկեղեցին։ —«Տարա՛նք, հարսը տարա՛նք...» կ'աղաղակեն փեսայի ջահէլ-ջիւան ընկերները, որոնց աղաղակները, արցունքներ կը քամեն հարսի մօր և հարազատներու աչքերէն։

Հարսն ու փեսան կը հեծցնեն ձիերու վրայ։ Քաւոր աղան և փեսայի եղբայր Մսրխանը կը բռնեն հարսի թևերը, իսկ փեսայի ձիու առջևէն պարելով կ'երթայ Ազաբրաշին։ Նուագախումբը թափօրին մէջտեղը քայլելով կը նուագէ, երիտասարդները պարելով կը յառաջանան, հարսնեորները խառնիխուռն կը քայլեն և այսպէս ուրախ-զուարթ հարսանեկան թափօրը կ'իջնէ Ծանկոյսների ձորը, երբ արդէն աղօթարանը կը բացուի, և արևը շիջելավառ տեսքով, իւր դէմքը ցոյց կուտայ Վարագայ սարի երկգագաթ բարձունքներու վրայէն։ Թափօրը նոյն հանդիսաւոր երթով կը հասնի Ծանկոյսների Ս. Աստուածածին եկեղեցին, ուր արդէն պատարագ կը մատուցուի։ Քահանայ մը և դպրաց խումբը՝ փեսայ Մկրտիչն ու հարսնեորները կ'առաջնորդեն դէպի Ծանկոյսների գերեզմաննոցը, ուր հանգչող Խրիմեան Ննջեցեալց և մասնաւորապէս Մկրտիչի հօր և հօրեղբայր Խաչատուրի գերեզմանի վրայ հոգեհանգիստ կը կատարեն. Ո՛րքան յարգանք և որպիսի՛ երախտագիտութիւն դէպի այդ հանգուցեալները, որոնց շիրիմներու վրայ Մկրտիչը կուլայ, կը համբուրէ հողը և հոգեհանգիստէն յետոյ կ'երթան եկեղեցին։ Պատարագի ընթացքին կը կատարեն պսակի և ամուսնութեան հանդիսաւոր արարողութիւնը։

Տղամարդ հարսնեորները մէկ-մէկ կուգան, կը համբուրեն փեսայ Մկրտիչի ճակատը, մաղթելով երջանիկ օրեր և բախտաւոր կեանք։ Հարսանեկան թափօրը, եկեղեցիէն կը շարժուի դէպի Խրիմեաններց տունը։ Այս անգամ, նուագախումբի ձայնը, պարեր, աղմուկ և աղաղակներ չը կան, վասնզի քահանայից և դպրաց դասը, քաղցրաձայն շարականներով, կ'առաջնորդեն թափօրը հանդիսաւոր երթով մը։ Խաչ, աւետարան, մոմեր, կը տարուին թափօրի առջևէն, մինչ դպիրներն ու ձայնաւորները կ'երգեն.

«Արեգական արդարութեան ծագման արուսեակդ առաւօտեան.

նախընթաց ճանապարհի Որդւոյն Աստուծոյ տնօրէնութեան սուրբ Յովհաննէս...»։

Ճանապարհին քանի մը տեղ, ծանօթ ազգականներու տուներէն, արաղ-գինի և մազա կը հանեն հարսնեւորներու առջև և կը հիւրասիրեն, ի պատիւ փեսային և իւրայիններուն։ Թափօրը կը մօտենայ Երիմեանենց դրան առջև։ Հարսն ու փեսան ձիերու վրայ են դեռ, երբ, հարսանիքի խոհարարը, սպիտակ գառ մը գետին կը խփէ և մատաղ կ'ընէ հարսին ու փեսային։ Գառի կտրուած գլուխը ձեռքին բռնած, խոհարարը կը մօտենայ ձիերուն և արիւնթաթախ գլուխը կը քսէ ձիերու գլուխներուն, ապա փողոցի դրան ճակատին։ «Փեսայ Մկրտիչը, երբ տեսեր է այդ անմեղ գառնուկի մորթուիլը, շատ վատ ազդուեր է, և չը կրնալով իր յուզումը ծածկել յացեր է, ըսելով, որ ինչու մորթեցիք այդ անմեղ գառնուկը»*)։

Հարսն ու փեսան ձիերէն կ'իջեցնեն, նուագախումբը զանոնք դէպի ներս կ'առաջնորդէ, մինչ փեսայ Մկրտիչին մայրն ալ, բաղարջ, գաթայ, fաղgr և ամբրբեկ (խմորեղէն) մատուցարանով մը գլխին դրած՝ պարելով կը դիմաւորէ իր աչքի լոյս թագաւոր—փեսայ Մկրտիչին և թագուհի—հարս Մարիամին, իսկ ջահէլներն ալ ուրախ և ներդաշնակ կերգեն.

Էհ բարեւ, հէ բարեւ
Թագաւորիս շատ արեւ։
Թագաւորի մեր տիւս արեւ,
Քեզ ի՜ճչ եւ ի՜ճչ եճի բիրեւ,
Քաղgr ու բաղարջով արեւ,
Արաղի փարչով արեւ։

Թագաւորի մեր տիւս արեւ,
Քեզի ի՜ճչ եւ ի՜ճչ եճի բիրեւ,
Վարդ-մանուշակ եճի բիրեւ,
Որճաճ-շուշաճ եճի բիրեւ։

Թագաւորի մեր տիւս արեւ,
— Թոճեր վառող եմ բիրեւ,
— Տախտ աւիլող եմ բիրեւ,
— Լուացք արող եմ բիրեւ,
— Գլօխ լուացող եմ բիրեւ,
— Ծամեր իսկող եմ բիրեւ,
— Չախրակ մանող եմ բիրեւ,
— Ոչխար կթող եմ բիրեւ,
Թագաւորի մեր տիւս արեւ,
Քեռ գլօխ դրմփող եմ բիրեւ։

Փեսայ Մկրտիչի մայրը, շօրօրալով-պարով կը մօտենայ և կը համբուրէ իր զաւակի ճակատն ու երեսները, հարսի գլուխը և մատուցարանը կուտայ հարսնեւորներուն, որ վայելեն քաղցրն ու

*) Չակերտներու մէջ առնուած այս խօսքերն ըսած է ինձ Մարտիրոս Խէրքանեանը, որ ժամանակին լսեր է Վանի Ճանկոյսների թաղեցի ծերունիներէն։

բաղալջը, աղաղակելով՝ «Աստուած շատ հաց տայ, մի բարձի ծիրանան, հօթ որդու սեղան նստեն» և այլն։

Հարսը կը տանեն ներս, կանանց սենեակը և կը նստեցնեն փոքրիկ գահաւորակի մը վրայ, իսկ փեսան ալ կը տանեն այր մարդերու մօտ։ Ամբողջ գիշերը՝ կերուխում, նուագ, երգ, պար և ուրախութիւնով կ'անցունեն մինչև լուսաբացը, երբ հեռաւոր բարեկամները ցրիւ կուգան, իսկ ազգականները կը մնան։ Պատկէն օր մը յետոյ, կը բերեն հարսի ջրհէզը (օժիտ), նուագախումբը կը նուագէ, ջրհէզը կը բանան և ցոյց կուտան բոլորին։ Իրիկուն քահանան կուգայ ուրցը (նարօտ) կը կտրէ, և այնուհետև է միայն, որ առաջին անգամ ըլլալով հարսն ու փեսան իրար երեսը կը տեսնեն, կը գրուցեն և փեսան հարսին իրը գրուցելա, ոսկիներ նուէր կուտայ։ Հետուրը հարսին հացուտելա կուտայ։ Հարսը պարտաւոր էր իւր տաքրի վերարկուն հանել, և փոխարէն խալաթաճելա (նուէր) ստանալ։

Քանի մ'օր յետոյ փեսայի ընկերները կուգան և փեսան առնելով շրջագայութեան կ'երթան։ Կ'այցելէին ծանօթ ընկերներու տուները, մէկ-երկու թաս գինի անուշ կ'ընէին, և այսպիսով կը վերջանար հարսանիքը, որ կը տևէր ամբողջ երեք օր ու գիշեր։ Այնուհետև երկու խնամիներու—Խրիմեաններց և Սևիկեաններց—խնամապատիւները ծայր կ'առնեն և ամէն ինչ կը վերջանայ։

Մկրտիչ Խրիմեանը քանի մ'ամսուայ փեսայ էր և ընտանեկան ջերմ ու հաճելի մթնոլորտի մէջ իրեն անչափ երջանիկ կը զգար, երբ Վասպուրականի գլխին պայթեցաւ քաղաքական մեծ աղէտ մը, ինչ որ պատճառ դարձաւ Մկրտիչ Խրիմեանի ընտանեկան դրժբախտութեան։

## Գ.

## ՋՕՐԱՀԱՒԱՔ ԵՒ ՄԿՐՏԻՉ ԽՐԻՄԵԱՆԻ ՓԱԽՈՒՍՏԸ ՎԱՆԷՆ

Ցաճկահայաստանի արևելեան երեք մեծ նահանգներու՝ Վասպուրականի, Բիթլիսի և Տիգրանակերտի մէջ, ԺԹ-րդ դարի կէսերուն, Օսմանեան Պետութեան քաղաքական գերիշխանութեանը կը հակազդէին՝ քիւրդ ցեղապետներ, բէկեր. դարաբէյիններ և հոգևորականները, որոնք յիշեալ նահանգներու այս ու այն գաւառներու մէջ, տեսակ մը կիսանկախ իշխանութիւններ ստեղծեր էին և իրենց

անմիջական դեկավարութեան ներքոյ զօրք ու հարկ կը հաւաքէին հպատակ հայերէն և քիւրդերէն։

Վասպուրականի նահանգին մէջ, տաճիկ իշխանութեան գոյութիւնն ու ազդեցութիւնը, գլխաւորաբար, զգալի էին, Վան քաղաքին և մօտակայ արուարձաններու կամ զուտ հայաբնակ գաւառներու մէջ։ Իսկ նահանգի ծայրագաւառներու և լեռնաշխարհներու Հայ և քիւրդ ազգաբնակչութիւնը բացարձակապէս քիւրդ իշխանաւորներու ազդեցութեան ենթարկուած էր։ Քիւրդ բէկերն ու դարաբէյիները յաճախ կ'ըղհարուէին և զօրք ու զէնքով կուռի կ'ելլէին իրար դէմ, հողային, վրիժառական և այլ խնդիրներու պատճառով։ Իւրաքանչիւր քիւրդ բէկն ու դարաբէյին ունէր իր հետեւակ և ձիաւոր պատերազմիկներ, որոնց մէջ կային նաև հպատակ Հայ գիւղացիներ։ Այս քիւրդ իշխանաւորները ունէին յատուկ կրուատեղիներ, բերդեր, ամրոցներ, թաքստոցներ, որոնք կը գտնուէին գլխաւորաբար, Պօհտանի, Ձրզիրէի, Շատախի, Մոկսի, Գաւաշի, Կարճկանի, Նորդուզի և նման լեռնային գաւառներու մէջ։

Այդ քիւրդ բէկերն ու դարաբէյիները կը հետապնդէին նաև քաղաքական նպատակներ, ցանկանալով տէր դառնալ ամբողջ Վասպուրականի նահանգին և ուժեղ ու վերջնական հարուածով մը տապալել տաճկական իշխանութիւնը, որուն գոյութիւնը անուանական էր արդէն, մանաւանդ նահանգի հարաւային ծայրագաւառներու մէջ։ Քիւրդերը՝ Անկախ Քիւրդիստանի մը կազմութեան ծրագիրը կը յղանային և իրենց այս նպատակին հասնելու համար, 1840-ական թուականներու սկիզբներէն, զինական լուրջ պատրաստութիւններ կը տեսնէին, գրաւելու համար ամբողջ Վասպուրականի նահանգը և՛ պահանջել հարկին նաև Բիթլիսի և Տարօնի շրջանները։

Վասպուրականի հարաւ-արեւելեան լեռնաստաններու մէջ կը գտնուին, Պօհտան և Ձրզիրէ գաւառները՝ Հայ և քիւրդ ազգաբնակչութեամբ։ Այս զոյգ գաւառներու միահեծան և բռնակալ քիւրդ տէրերն էին՝ ԽԱՆ-ՄԱՀՄՈՒԴ և ՊԷՏՐԽԱՆ-ԲԷԿ անունով երկու նշանաւոր, մեծ գերդաստաններու և ցեղերու ներկայացուցիչները, որոնք 1847 թուի ամրան սկիզբը, ապստամբութեան դրօշը պարզիցին Օսմանեան պետութեան դէմ, և տասնեակ հազարաւոր հետեակ ու ձիաւոր կռուողներով, Ձրզիրէի և Պօհտանի սահմաններէն

դուրս եկան, յառաջանալով դէպի հիւսիս, նպատակ ունենալով գրաւել Վան քաղաքն ու բերդը և ամբողջ նահանգը։ Ինդպական այս մեծ ապստամբութեան զօրաբանակներու մէջ կային նաև հազարաւոր Հայ գիւղացիներ, (մեծ մասը Դրհէցիներ)։ Պէտրխան-Բէկն ու Խան-Մահմուտը, յաջողած էին քայքայել ու ջնջել իշխանութիւնն ու ազդեցութիւնը բազմաթիւ քիւրդ բէկերու և դարաբէյիններու, որոնք իրենց հնձեալներով եկեր միացեր էին ապստամբութեան այդ նշանաւոր դեկավարներուն։ Պէտրխան-Բէկի ծրագիրն էր գրաւել ոչ միայն Վանի, այլև՝ Բիթլիսի ու Տիգրանակերտի ամբողջ նահանգները, որոնց քրդաբնակ վայրերը պիտի դառնային սեփականութիւն՝ Անկախ Քիւրդիստանի, որուն հովանաւորն ու պաշտպանը, իբր թէ Պարսկաստանը պիտի ըլլար, իսկ հայաբնակ գաւառները, ծրագրուած էր թողուլ հայերուն, որոնք պիտի Ռուսաստանի պաշտպանութեան ապաւինէին։ Բիշեալ նահանգները գրաւելէ և Անկախ Քիւրդիստան մը ստեղծելէ յետոյ, Պէտրխան-Բէկը ինքն էր, որ պիտի դառնար միահեծան տէրն ու իշխանաւորը նորաստեղծ Քիւրդիստանին։ Այս ապստամբութենէն, քիչ առաջ, Պէտրխան-Բէկը, դիմած էր նաև Վանի հայոց բարոյական, նիւթական և ֆիզիքական օգնութեան, խոստանալով, որ եթէ ինքը յաղթանակէ և Անկախ Քիւրդիստանի ծրագիրը իրականութիւն դառնայ—«Իշխանը (Պէտրխան-Բէկ) Հայերուն պիտի տար կառավարութեան (Անկախ Քիւրդիստանի) տնտեսական բաժնի մատակարարութիւնը»*)։

Պէտրխան-Բէկի այս առաջարկութիւնը, արդեօք, ունէ վստահութիւն ներշնչեց Վանի հայերուն, անոնք խոստումներ տուին ապստամբապետին, որ օգնութեան կը հասնին, կամ ի վիճակի էին, բացէ ի բաց նման քայլ մ՚առնել (ինչ որ տաճիկ պետութեան դէմ ըմբոստութիւն պիտի ըլլար)—ասոնք հարցեր են, որոնց մասին ժամանակակից պատմութիւնը կը լռէ։ Սակայն իրողութիւն է, որ վանեցի երկու նշանաւոր հայեր—Ստեփան Մանուկեան և Մահտեսի Յովհաննէս Զալկաոըրեանը, իրենց քանի մը համախոհներու հետ, Վանէն դիշերանց, գաղտնի հեռանալով, լեռնային ճամբաներով

*) Յակոբ Ջահրապեան — Քիւրդօ - Հայ Պատմութիւն. Կոստանդնուպոլիս. 1911. Տպարան Աբաջ. էջ՝ 86։

գացեր են Պէտրխան-Բէկի մօտ, դառնալով անոր խորհրդականները, ապստամբութեան գործերը յաջող կերպով ղեկավարելու համար։ Ուրեմն քրդական այդ մեծ ապստամբութեան, իրենց մասնակցութիւնը բերած են նաև Վանի Հայ երեւելիներէն քանիները, Մանօղլիի*) և Զալկաստրի ղեկավարութեամբ։

Այս երկու ազդեցիկ Հայերը, Պէտրխան-Բէկի հովանաւորութեան ներքոյ, ապստամբութեան շրջաններու մէջ, շատ մեծ ազդեցութիւն և դիրք ձեռք բերին, միակ նպատակ ունենալով, որ Վասպուրականի հարաւակողմի լեռնային գաւառներու—գլխաւորաբար Շատախի և Մոկսի—լեռնական Հայ գիւղացիները, մեծ խմբերով մանէին Պէտրխան-Բէկի արշաւախումբերու մէջ։ Եւ պէտք է շեշտել, որ Մանօղլին և Զալկաստրը, Պէտրխան-Բէկի զօրաբանակի համար, բերին պատկառելի թուով լեռնական, քաջակորով Շատախցի և Մոկացի գիւղացիները, որոնք զինուած էին իրենց սեփական Շաբխանէ և Չախմախլի հրացաններով և սառ զէնքերով։

Այսպէս ահա, ապստամբութեան բոլոր պատրաստութիւնները տեսնելէ յետոյ, Պէտրխան-Բէկը իր ահաւոր զօրաբանակով, Ճրգիրէկի և Գօհտանի սահմաններէն դուրս գալով, կը յառաջանար դէպի Վան, նպատակ ունենալով գրաւել քաղաքն ու բերդը և տապալել տաճիկ իշխանութիւնը՝ նահանգի կեդրոնին մէջ։ Հայկական և քրդական գաւառներն ու գիւղերը, որոնք Պէտրխան-Բէկի և Խան-Մահմուդի արշաւախմբերուն կայան կամ բանակատեղ դարձան, այդ բոլոր վայրերու բնակիչները թալանուեցան և ամէն տեսակ արհաւիրքներու ենթարկուեցան։

Քրդական այս մեծ ապստամբութեան լուրը երբ մայրաքաղաքը —Կ. Պոլիս—հասաւ, տաճիկ կառավարութիւնը խուճապի և յուսա-

---

*) Ստեփան Մանօղլեանը, (Ասղ մականուանեալն) 1830-ական թուերուն, դեռ երիտասարդ, Կ. Պոլիս երթալով, տեղւոյն իտալական դպրոցին մէջ, ստացած էր կանոնաւոր ուսում և կը տիրապետէր ֆրանսերէն ու տաճկերէն լեզուներուն։

Քրդական այս մեծ ապստամբութեան մանրամասն պատմութիւնը, հիանալի կերպով գիտէը և ուսումնասիրած էր, Վանի հասարակական հին գործիչներէն Կարապետ Նաթանեանը (որն այժմ ողջ է կարծեմ և կ'ապրի Կ. Պոլիս, ծերունազարդ հասակի մէջ)։ Նաթանեանի պատմածները, 1914 ին, ես գրի առի (Վանի մէջ) և այժմ մասամբ կ'օգտագործեմ։

հատուածեան մատնուած իւր ընելիքը չ'էր գիտեր։ Վանի և Էրզրումի մէջ, կանոնաւոր բանակներ չը կային, քրդական ըմբոստութիւնը ճնշելու համար։ Վերջապէս կառավարութիւնը յաջողեցաւ Արաբիայէն 25,000 արաբ զինուորներ բերել Պոլիս և կանոնաւոր զօրաբանակ մը կազմել, վերին հրամանատարութեամբ Օսման Փաշայի, որ զօրքի գլուխն անցած, ճամբայ ելաւ դէպի Վան։ Սակայն կառավարութիւնն ասով չը բաւականացաւ։ Սուլթան Ապտիւլ-Մէջիտ և Պապը-Ալին (Բարձագոյն Դուռը) կ'որոշեն Վասպուրականի Հայերէն զինուոր հաւաքել և տաճիկ զօրավարներու ղեկավարութեան յանձնելով, Հայ զինուորները միացնել Օսման Փաշայի բանակին և ուղարկել քիւրդերու դէմ։ Որպէսզի Հայերը սիրով մասնակցէին այդ կռիւներուն և անտրտունջ կերպով զօրահաւաքի ենթարկուէին, կառավարութիւնը լուրեր տարածել տուաւ թէ՝ Պէտրխան-Բէկի ապստամբութեան նպատակն է բնաջնջել ու կոտորել Վասպուրականի և շրջակայ նահանգներու Հայութիւնը։

Այժմ խօսք տանք յիշեալ դէպքերուն ժամանակակից պատմագիր Աւետիս Վարժապետ Պէրպէրեանին.

« (1847) Քանի ամօք ինչ յառաջ անօղորմ և ապստամբ ազգն Մարաց ունելով 'ի գլուխ իւրեանց զԽան Մահմուտ և զՊէտէրխան պէյ, հարստահարէին զբնակիչս Վանայ և Տարօնոյ և շրջակայ գիւղօրէից, կողոպտէին զվանօրայս և զեկեղեցիս, կեղեքէին և սպանանէին, և կուսակալն Կարնոյ և բրդեշխն Վանայ յանգէտս լինէին զչարագործութեանց նոցա, և ոչինչ փոյթ էր նոցա, թերևս և ինքեանք առնուին զբաժինս իւրեանց յաւարէ անտի՝ զոր կողոպտէին նոքա, և ոչ զդէմ ունէին նոցա կամ պատերազմաւ և կամ ահացուցմամբ»*)։

Այս տողերէն կը հասկցուի, որ Խան-Մահմուտի և Պէտրխան-Բէկի շարժումներն ուղղուած էին ոչ թէ տաճիկ կառավարութեան, այլ Հայութեան դէմ. Այսպէս համոզուած էր նաև, Տաճկահայոց այն ժամանակուայ Պատրիարք Մատթէոս Արեպիսկոպոս (յետոյ Կաթողիկոս) Զուխաճեանը, որ «բողոքս երարձ երկիցս 'ի Բ. Դուռն, և յերրորդումն նուագի գրեաց, եթէ բնակիչք Վանայ ոչ կարելով

*) Պատմութիւն Հայոց. Աւետիս Վարժապետի Պէրպէրեան. Կ. Պոլիս. Տպագրութիւն Պօղոսի Քէշիշեան և ընկ. 1871. էջ 321։

այլեւս տոկալ անըմբռեր տառապանաց՝ զոր հասուցանեն Մարք (քիւրդեր) ՚ի վերայ նոցա, որոշեալ են ՚ի միջի իւրեանց խոյս տալ ընտանեօք հանդերձ և գաղթել ՚ի Ռուսաստան»*).

Եւ իբր թէ, Մատթէոս Պատրիարքի երկու անգամուայ բողոքի վրայ—«Բ. Դուռն, պատրաստեցաւ կազմեցաւ բանակ պատերազմող զօրաց, և սպարապետ կարգեցաւ Օսման փաշա այրն քաջ և զօրաւոր. և դիմեաց ՚ի վերայ ապստամբացն այնոցիկ ՚ի հիւսիսոյ և ՚ի հարաւոյ նուաճել զնոսա անճողոպրելի փախստեամբ։

«Ցայնժամ գրեաց և Մատթէոս պատրիարք առ առաջնորդս Տիգրանակերտի, Բաղէշու, Բալուայ, Կարնոյ, և Վանայ, զի ժողովուրդք իւրեանց ելցեն ՚ի վրէժխնդրութիւն այնչափ տառապանացն՝ զորս կրեցին մինչև ցարդ, յամենայնի օգնական լիցին և ծառայեսցեն արքունի բանակին, և զհաւատարմութիւն իւրեանց ցուցցեն իրօք առաջի արքայի»**)։

Մատթէոս Պատրիարքն ուրեմն կը հրահանգէր, որ Վանի, Կարնոյ, Բաղէշի, Տիգրանակերտի և Բալուայ Հայերը «օգնական լիցին եւ ծառայեսցեն արքունի բանակին», որուն նպատակն էր ճնշել քրդական այդ մեծ ապստամբութիւնը։

Ուրեմն, այսպիսով, հայոց Պատրիարքը կը կատարէր կառավարութեան ցանկութիւնը և յիշեալ նահանգներու հայերը (20—45 տարեկան) կ՚ենթարկուէին պետական զօրաճաւաքի և դառնալով Օսմանեան բանակի զինուորներ՝ պիտի կռուէին Պէրխան-Բէկի և Խան-Մահմուդի արշաւախումբերու դէմ։

Մինչ այս մինչ այն, Օսման Փաշան իր 25,000 բանակով կը հասնէր Վան. 1847 թուի ամրան. Քաղաքի Հայութիւնը, սիրով ընդունեց Օսման Փաշայի բանակը։ Հայոց հարիւրաւոր տուները դատարկուած և յատկացուած էին տաճիկ և արաբ զինուորներուն, որոնց համար Վանի հայերը, յետոյ, իրենց ծախսով մեծ զօրանոց (կըշլա) մըն ալ շինեցին և նուիրեցին կառավարութեան։

Օսման Փաշան երբ Վան հասաւ, առաջին գործն եղաւ կազմակերպել հայոց զօրահաւաքը։ Ըստ զրոյցներու, թէ Վանի և թէ գաւառներու մէջ, այս զօրահաւաքը բաւական յաջողութեամբ կատարուած է։ Հայ քահանաներ, երևելիներ, գիւղական տանուտէրեր և

*) Աւ. Վրժպ. Պէրպէրեան. Պատմութիւն Հայոց. էջ՝ 322։ **) Անդ. էջ՝ 322։

մելիքները լայն աջակցութիւն ցոյց տուած են կառավարութեան, որ կրցած է հայերէն մեծաքանակ զօրքեր հաւաքել, անոնց զէնք ու հագուստ տալ և խառնել տաճիկ զօրքերու մէջ։

Օսման Փաշան, իր մեծ բանակով, Վանէն կը շարժուի դէպի Ձրդիրէ և Գօհտան-Պէտրխան-Բէկն ու Խան-Մահմուտը երբ այս զօրաւոր և կանոնաւոր զօրաբանակի յառաջախաղացում կը նկատեն, սարսափի կը մատնուին։ Անոնց հաւաքած մեծաքանակ կռուողները կը լքեն իրենց դիրքերն ու կը փախչին։ Ըստ երևոյթին վասպուրականցի հայերը, Օսման փաշայի բանակին մէջ շատ կարևոր դեր կը կատարեն, ինչ որ ժամանակակից պատմագիր Աւետիս Վարժապետը թող վկայէ։

«Ժողովեցան Հայք Վասպուրական աշխարհին, և մարտ եղեալ յարձակեցան ՚ի վերայ ձէզիրէ նահանգին ուր որջացեալ ամբացեալ կային յանառիկ վայրս գլխաւորք բարբարոսաց, և այնչափ ՚ի նեղ արկին զՊէտէրխան պէյ նոցա, մինչև յոգիս լինել նմա ապաստան, և յուսահատեալ յանձնեաց զինքն սպարապետ Օսման փաշային հանդերձ իւրով գերդաստանաւն, որ իսկ և իսկ առաքեաց զամենեսին զնոսա ՚ի Կոնստանդնուպոլիս, և տիրեաց ամրոցի նորուն, և Պէտէրխան պէյ աքսորեցաւ ՚ի Կրետէ կղզին ընտանեօք իւրովք։

«Իսկ Խան Մահմուտ գլխաւորն Մարաց ըմբռնեալ ՚ի Վանեցի Հայոց և կալանաւորեալ յանձնեցաւ ՚ի ձեռս Օսման փաշային, և ածեալ ՚ի Կոստանդնուպոլիս ընտանեօք իւրովք աքսորեցաւ ՚ի Սիլիստրէ. և բազումք յապստամբացն մատնեցան ՚ի սուր, և մնացեալքն ցրուեցան ՚ի կողմանս Ռուսաց և Պարսից»*)։

Այս կռիւներու ընթացքին, Օսման Փաշայի ձեռք գերի ընկան նաև Ստեփան Մանօղեան և Մահտեսի Յովհաննէս Զալկատրեանը, որոնք անարգուեցան և շղթաներով՝ ձիերու վրայ կապուելով, աքսորուեցան նախ՝ Կեսարիա և ապա Կապան-Մաղէն։

Քրդական այդ մեծ ապստամբութիւնը, 1847-ի Հոկտեմբերին վերջնական հաշուեյարդարի կ՚ենթարկուէր, քիւրդերու պարտութեամբ և Օսման Փաշայի յաղթութեամբ։ Սուլթան Ապտիւլ-Մէճիտը, այս յաղթութեան առթիւ, նոյն թուի Նոյեմբերի 22-ին, յատուկ գրութեամբ, իր գոհունակութիւնը կը յայտնէր Մատթէոս Պատ-

*) Աւետիս Վրժպ. Պէրպէրեան. Պատմութիւն Հայոց. էջ՝ 322։

բիարքին, որուն «աղօթք և խնդրուածքը լսեց Աստուած և ընդունեց», Օսմանեան բանակը «փառաւոր յաղթութիւն» տարաւ, իսկ Հայոց ազգն ալ իւր «կատարեալ հաւատարմութեան սէրը» ցոյց տուաւ Օսմանեան «փառահեղ թագաւորութեան». Մատթէոս Պատրիարքը, Սուլթանի այս խօսքերը, յատուկ կոնդակով յայտնեց Թուրքիոյ Հայութեան, որուն կը հրահանգէր ըսել «միաբերան, կեցցէ բարեգութ և բարեյաղթ շէֆքէթլու Սուլթան Ապտիւլ Մէճիտ Խան ինքնակալ կայսր և թագաւորն մեր»*):

Քրդական ապստամբութիւնը այսպէս ուժեղ կերպով ճնշելէ յետոյ, Օսմանեան կառավարութիւնը, անմիջապէս զինաթափ ըրաւ բանակի մէջ գտնուած Հայ զինուորները և ցրեց զանոնք. Հաւանաբար կառավարութիւնը կը կասկածէր, որ եթէ Հայ զինուորները զէնքի տակ մնային, այս անգամ, կրնար Հայկական ապստամբութիւն մը ծագել և նոր բարդութիւններ յառաջ գալ. Այս պատճառով ալ, Հայ զինուորներու ցրումը շատ արագ կերպով կատարուեցաւ:

Այս նշանաւոր իրադարձութիւններէն յետոյ, Օսմանեան կառավարութիւնը, կեդրոնէն կը հրահանգէր զօրաբանակի հրամանատար Օսման Փաշային, որ իւր ձեռքի տակ գտնուած զօրքերը (արար և տաճիկ) ցրէը նահանգի (Վանի) գաւառներու մէջ և ամէն տեղ զինուորական խիստ հսկողութիւն հաստատէր. Այս հրամանն ալ կը կատարուէր. Այնուհետև Տաճկահայաստանի արևելեան նահանգներու՝ մանաւորապէս Վասպուրականի, Բիթլիսի և Տիգրանակերտի մէջ, տաճիկ կառավարութեան ազդեցութիւն և իշխանութիւնը կը զօրանար. Պետական և զինուորական ուժի ներկայութենէն օգտուելով, տաճիկ կալուածատէրերը, աղաներ և պաշտօնեաները և մինչև անգամ հասարակ ժողովուրդը կը շփանային, սանձարձակ կը դառնային և գաղտնի ու յայտնի կերպով ամէն տեսակ ճնշումներ ի գործ կը դնէին գաւառի Հայութեան վրայ. Քրդական սարսափներէն և արհաւիրքներէն հազիւ ազատուած Հայ ժողովուրդը, այս անգամ, տաճիկ ցեղի և կառավարութեան բռնութիւններու և կեղեքումներու տակ կը հեծէր, կը տառապէր, մինչ միւս կողմէ, ծայրագաւառներու քիւրդ ցեղապետներն ու բէկերն ալ, իրենց կարգին, անվերջ կը հարստահարէին և գուլումներու կ'ենթարկէին Հայ գիւղացիութիւնը:

*) Աւետիս Վրդպ. Պէրպէրեան. Պատմութիւն Հայոց. էջ՝ 326:

*
* *

Գէտրխան-Բէկի և Խան-Մահմուտի դեկավարութեամբ կատարուած քրդական այդ մեծ ապստամբութեան (1847) ժամանակ, երբ Օսման Փաշան իւր 25,000 զօրաբանակով Վան քաղաքը կը մտնէր, անոր առաջին գործերէն մէկը Հայ երիտասարդներու զինուորագրութիւնը կազմակերպելն էր։ Արդէն Վանի հայոց ժամանակակից Առաջնորդը — Գաբրիէլ Արեպիսկոպոս Շիրոյեան — և քաղաքի երեւելիները, Մատթէոս Պատրիարքէն հրահանգ ստացած էին, ոչ միայն նիւթական և բարոյական օգնութիւն ցոյց տալ Օսմանեան բանակին, այլև հայերը պիտի զինուորագրուէին և մտնէին տաճիկ և ապրաբ զօրքերու մէջ ու երթային կռուելու քիւրդերու դէմ։

Զինուորական իշխանութեան հրամանագրով և հայոց Առաջնորդի հրահանգով, Վանի Հայ երիտասարդներէն մեծաքանակ բազմութիւն մը կը ներկայանար զինուորական հրամանատարութեան կեդրոնը և իբրև զինուոր արձանագրուելով, կ'ըստանար հրացան և հագուստ։ Այս զինուորագրութեան ժամանակ, Վանի հայերու մէջ ուժեղ տարակարծութիւն մը կ'առաջանայ։ Ժողովուրդը կը բաժնուի երկու մասի։ Հարուստ և կալուածատէր հայերը, հոգևորականութեան հետ, համաձայն էին, որ Հայ երիտասարդները, իբրև Օսմանեան հրկրի հպատակներ, ենթարկուէին կառավարութեան հրամանին և զինուորագրուէին. իսկ ժողովուրդի միջին — արհեստաւոր դասակարգը, հակառակ էր, պնդելով, որ երիտասարդները զինուորագրուելով նախ՝ անոնց ընտանիքները անտէրութեան կը մատնուին և երկրորդ, քիւրդ-տաճկական կռիւներէն Հայութիւնը դրական ոևէ արդիւնք ձեռք չի բերեր։ Այս հակակարծիք տրամադրութիւնները, գոյութիւն ունենալով հանդերձ, Վանի Հայութիւնը նորէն հազարաւոր երիտասարդներ տուաւ Օսմանեան բանակին։

Այն ծնողները, որոնք հակառակ էին իրենց երիտասարդ զաւակներու զինուորագրութեան, անոնք ամէն տեսակ գաղտնի միջոցներու կը դիմէին, իրենց զաւակները Վանէն հեռացնելու համար, զանոնք փախցնել տալով Պարսկաստան և Կովկաս։

Այս տեսիլներն էր ահա, — քրդական ապստամբութեան ընթացքին — 1847 թուի ամառը, երբ ՄԿՐՏԻՉ ԽՐԻՄԵԱՆը, 27 տարե-

կան կանաչ-կտրիճ երիտասարդ մրն էր, զինուորական իսկական տարիքի մէջ։ Զօրահաւաքին չ'ենթարկուելու համար, Մկրտիչ Խրիմեանը կ'որոշէ հեռանալ Վանէն։ Արդեօք, անոր այս որոշումը—փախուստը—իր մօր և կամ մեծ եղբայր Մարքոսի խորհուրդովն եղած է, թէ՝ ինքնաբերաբար, այս մասին տուեալներ չկան. սակայն փաստն այն է, որ 1847 թուի ամառը, երբ դեռ Մկրտիչը մէկ տարուայ փեսայ էր և արդէն հայրը՝ նորածին աղջիկ զաւակի մը, (Թագուհի անունով) ստիպուած կ'ըլլայ թողուլ իր ընտանիքը, իր ծերունազարդ մայրը, հայրական տունն ու հայրենիքը և խումբ մը, հասակակից երիտասարդներու հետ—որոնց մէջն էր նաև իր անբաժան և սիրելի ընկեր Աֆրիպպաս Տապաղեանը— գիշերանց, գաղտնի կերպով, Վանէն դուրս կուգան և փախուստի ճամբան կը բռնեն։ Այս փախստական երիտասարդներու ուղեգիծը, ըստ զրոյցներու, հետեւեալը եղած է. Վանի Ցանկոյսների ձորէն դուրս գալով, կ'իջնեն Խոշ-Գեադուկ (անուշ լեռնանցք) կոչուած վայրը ու կը բռնեն գաղտնի և ամայի ճամբաներ. Այս փախստականները կը ջանան միշտ լեռնային ուղիներով երթալ և ամէն տեսակ զգուշութիւններու կը դիմեն, որ մարդոց աչքէն անտեսանելի մնան: Անոնք քանի մ'օրուայ առատ պաշար ունէին, մինչև սահման հասնիլը. Գիշերները ճամբայ կտրելով և ցերեկները լեռներու անանց և ապահով վայրերու մէջ, քուն և հանգիստ առնելով, փախստականներու խումբը Արճակ գաւառէն կ'անցնի Սարայի շրջանը (Վանի նահանգի հիւսիսարեւելք) և ապա կը մօտենայ պարսկա-տաճկական սահմանին, Գոտօլ (Կոթուր) աւանին։ Այստեղէն ծայր կ'առնու Գոտօլի հովիտը (գեալին), որուն մէջտեղէն կ'երթայ խշշան գետակ մը, սեղմուած բարձրաբերձ և դէմ դիմաց ահաւոր լեռներով.

Փախստականները, այս վտանգաւոր և ահազդեցիկ հովիտէն ապահով կ'անցնին ու կը մտնեն քուն պարսկական հողը — Խոյ քաղաքի սահմանները։ Այլևս ազատ էին։ Չէ որ Պարսկաստանը հիւրընկալ և բարեացակամ երկիր է, ուր ապաստան գտած փախստականները ոչ մէկ հետապնդման և ճնշման ենթակայ եղած չ'են։ Խոյի առջև կը տարածուի պատմական Ալաթայրի Դաշտը, որուն մէջտեղէն կ'երթայ Ջղմուտ գետը։

Ա՜հ, Ալաթայրի Դաշտը, Վարդանանց ճակատամարտի այդ խոր-

հրդաւոր և լայնարձակ դաշտը, որ 451 թուի ամրան, ներկուեցաւ 1036 Հայ նահատակներու «վարդագոյն արեամբ», Հայրենիքի բուռն սիրով ոգևորուած երիտասարդներու սիրտերը, մխիթ կրնային, այդ դաշտին մէջ, անտարբեր մնալ։ Եւ ահա Մկրտիչ Խրիմեանի աչքին առջև կը պատկերանայ Վարդանանց պատերազմի ականատես պատմագիրը— քաղցրազրուցիկ Եղիշէ Վարդապետը,—որու հոգին կարծես կ'իջնէ «ի յԱրտազ յԱւարայրին» և «անդրը կըրկին մընչել իւրով աղու ձայնիւն», որուն կը միանայ Մկրտիչի քաղցրախօս քնարի հառաչանքը.

«... Զի դաշտն արդ Աւարայրի պայծառացեալ է ծաղկալից,
Ոչ յամպոց անձրևաբեր, այլ 'ի ցօղոյ արեան քաջացն.
...Դուք 'ի սէր Վարդանայ վառեալք այդպէս, ազնիւ մանկունք,
Ելիք 'ի Շաւարշան, յորում Հայոց քաջ նահատակք
Առ հաւատոյն ճշմարիտ և հայրենի կրօնին ազատ
Կամակար նահատակեալ կատարեցան սիրով փըրկչին։
...Դուք ըզհող դաշտիս, մանկունք, անկեալ զգետնով համրուրեցէք,
Ուր կաթիլք արեան քաջին և երջանիկ նորա գընդին
Ցօղեցան և շիջուցին զբորբոքեալ հուրըն հրապաշտից»*)։

Հայրենասէր այս երիտասարդները, և մանաւանդ Մկրտիչ Խրիմեանը, արդեօք, ինչ ապրումներ ունեցան երբ մտան Աւարայրի Դաշտը, ուրկից ճամբայ ընկան դէպի Դարաշամբի Ս. Ստեփաննոս Նախավկայի (կամ Մաղարթայ) վանքը (Արաքս գետի ափին, Պարսից հողի վրայ)։ Այդ վանքի մէջ քանի մ'օր հանգստանալէ յետոյ, գիշեր մըն ալ, գաղտնի կերպով, լաստանաւով Արաքսի վրայով դուրս կուգան Ռուսաց հողը (գետափ) և ճամբաներուն ծանօթ ուղեցոյցի մը միջոցով կը հասնին Նախիջևան քաղաքը։

Մկրտիչ Խրիմեանի և ընկերներու, Վանէն, զինուորագրութեան պատճառով փախուստի մասին բերենք նաև հետևեալ վկայութիւնները.

Մկրտիչ Խրիմեանի— «...Վանէն դուրս ելնելու պատճառն կամ պատրուակն եղեր է զինուորագրութիւնը, երբ գաւառներէն հայ զինուրներ կը ժողվէին։ Մկրտիչն ճիշտ զինուորական տարիքն ունէր,

*) «Հրաւիրակ Աւարայեաց» էջ՝ 54—58։

և ինչպէս շատերը՝ նոյնպէս և Խրիմեանը փախուցին ի՛Պարսկաստան։ Իւր ընկերն էր Տապաղեան Աքրիպասն, որոյ հետ՝ մինչև մեռաւ նա, միշտ մտերմութիւն կը պահէր։ Անցնելով Խոյ քաղաքէն, Երասխի ջուրը, Մասիսին շուքն, Արարատայ հողը, Ս. Էջմիածնի տաճարն և նշանաւոր վանորայքը ու վայրերը ողջունելով, համբուրելով առաջին ջերմութեամբ, հիացումն, սէր գորով, յոյս ճառագայթալից պայծառացուցին, ընդարձակեցին և լցին իւր մտաց և սրտի հորիզոնը. այն օրէն յօրինեցաւ նորա քնարն. նա ինքնին զարձաւ քնար, որով պիտի երգէր զԱյրարատ և հրաւիրակ լինէր նորա տարածեալ որդւոց»*)։

Մկրտիչ Խրիմեանի Վանէն հեռանալու պատճառը. Խ. Մալումեանը ևս կը վերագրէ զինուորագրութեան, քանի որ «ուղիղ զինուորական տարիքի մէջ» գտնուող Մկրտիչը «զինուոր գնալ, ինչպէս և բոլոր իր երկրացիները, չէր ուզում, ուստի ստիպվեց դիմել միակ միջոցին—փախչել»։

«Այս փախուստը բաց արաւ երիտասարդի առաջ մի նոր աշխարհ։ Թողնելով հայրական տունը, նա ձեռք առաւ ճանապարհորդական գաւազանը, դուրս եկաւ Վասպուրականից, անցաւ Թիւրքպարսկական սահմանը և մտաւ Պարսկաստան։ Նոր տեղեր, նոր տպաւորութիւնները»**)։

Ե.

## ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՇԽԱՐՀԻ ՀԱՅՐԵՆԱԽՕՍ ՃԱՄԲՈՐԴԸ

Պանդուխտ, տխուր և թափառական վիճակը, ճամբու յոգնութիւնները, հայրենիքի և հարազատներու սէրը, Աւարայրի Դաշտի և Արաքսի յիշատակներու ապրումները, անորոշ ապագայի կասկածները և նոր միջավայրի մը մէջ ապրելու մտահոգութիւնները, իրար խառնուած՝ կը փոթորկեն Մկրտիչ Խրիմեանի և ընկերներու սիրտն ու հոգին, սակայն անոնք հայրենասիրութեան բոցավառ զգացումներով տոգորուած, անվհատ կերպով կը շարունակեն իրենց ճամբան, Մայր Արաքսի ափերով՝ դէպի Այրարատ.

*) «Արեւելք» օրագիր. Կ. Պոլիս. 1885. Թիւ՝ 341։

**) Խ. Մալումեան—Խրիմեան. էջ՝ 8—9։

Փախստական երիտասարդները կը մտնեն Արարատեան Աշխարհը, ուր Մկրտիչ Խրիմեանի սիրտը կը ծփայ հայրենասիրութեան ջերմ սիրով, երբ կը տեսնէ Արարատ (Մասիս) լեռը՝ իւր վեհափառ դիրքով և ալեզարդ գագաթով. Եւ ահա Մկրտիչի հայրենախօս քնարը, հրաւէր կը կարդայ հայորդիներուն թէ.



«...Պատրաստեալ եղէք յուղի արդ ելանեմք՝ ի յԱյրարատ,
«...Դէտ ակն՝ ի վեր ամբարձէք հա՛ երևի Մասեաց գագաթ»։

Հայրենասէր երիտասարդի հոգին թև ու թռիչք առած՝ կը բարձրանայ Արարատի գագաթը և ապա կ՚իջնէ «Այրարատեան դաշտն՝ ի վայր».

«...Որ պարծի քան զայլ գաւառս զոլ գեղեցիկ՝ ի Հայաստան,
Դիւք դաշտօք լայնատարած լերամբք պատեալ գեղեցկանիստ
Որպէս այգի վայելուչ ցանկափակեալ շուրջանակի.
Ի լերանց աղբիւրաբուխ յորդ վրտակունք յամէն կողմանց
Ոռոգանեն յիւր դաշտօրայս արբուցանեն ըզդալարիս.

—

Թողում ըզգետըն երասխ որ գնայ ընդմէջ ծովածաւալ
Մեծամեծ բաշխեալ զառուս ջրատուն առնէ մըշակեալ վայրըս
Զայգիս և զբուրաստանս անդս և ածուս բըբընձաբեր.
...Առ եզերօք երասխայ ճեմեալ մանկունք յուշիկ յուշիկ,
...Դարձարուք՝ի դաշտաց և յաղտօրայս Այրարատու»*):

Արարատեան Դաշտը դիտելէ յետոյ, Մկրտիչ Խրիմեանը կ'երթայ էջմիածին.

«Ի տաճարն աստուածակերտ՝ի մայրըն մեր ամենածին
Ի վեհ և գերապանծ աթոռ Հայոց Լուսաւորչին»:

Էջմիածին, շրջակայ վանքեր և Պաղարշապատը դիտելէ յետոյ, հայրենակարօտ Մկրտիչը կը շարունակէ իւր ճամբան և կ'երթայ դէպի Օշական, էջմիածնին մօտիկ այն նուիրական գիւղը, որու հողին մէջ կը հանգչին սուրբ նշխարները Հայոց Մեծ-Ուսուցիչ և տառերու գտիչ Մեսրոպ-Մաշտոցին: Ահա և շիրիմը.

«Մեսրովպայ Լուսաւորչին խաւար մըտաց Հայկեան մանկտւոյդ»:

Որպիսի հիացմունք ու պաշտմունք կ'ընծայէ Մկրտիչ Խրիմեանը, Հայ գրի այդ անմահանուն և Մեծ-Դէմքին.

«Զարժանին ըզպարտըս մեր այնպիսւմ հօր երախտամեծ
Վարժողին՝ի դրպրութիւն զմեզ՝ի տառին իւր հրաշագիւտ»:

Օշականէն, կ'անցնի Աշտարակ, ասկէ Ապարանի գաւառակը— Արագածի լերան լանջերու վրայ—ապա կ'իջնէ Շիրակի դաշտը և կ'երթայ Բագրատունեաց աւերակ և ամայի մայրաքաղաքը— Անի՛...—ուր Խրիմեանը «ի վերայ աւերակացըն» նստելով, «ձեռն՝ի ծնօտի եդեալ», «անձանձրոյթ իրը աղաւնի» կը մըրմնջայ և «դառնապէս» կուլայ «՝ի նըշխարեալ յԱնի քաղաք»ի անփառունակ և ողբալի վիճակի վրայ: Անի քաղաքը, Խրիմեանի աչքունքով ու քնարով լեզու կ'առնէ և իւր անցեալ փառքերն ու ներկայ աւերակ վիճակը կը պատմէ: Ոգի Հայաստանին է կարծես, որ Անիի աւերակներէն դուրս կ'ելլէ և կը հառաչէ.

«Ես քաղաք հրաշակերտ՝ի Շիրակայ ճոխ գաւառիս
Առ Ախուրեան գետոյդ եզերք և հուպ ձորոյդ ծաղկոցաց.

*) «Հրաւիրակ Արարատեան». էջ՝ 5—7:

...Արքունիք արքայաճեմ շինեալ էին յիս փառաւոր
Ի նոսին Բագրատունեան գահըն կազմեալ շրքեղաճոխ.
...Այլ. ես արդ ձայն արկանեմ առ ձեզ որդիք իմ անջատեալ
...Մի մոռանայք դուք իսպառ զողորմելի Անի քաղաքս».

Սակայն Խրիմեանի ողբը երկար չի տևեր. նա յանկարծ կը սթափուի, կ'ոգևորուի և յուսատու ձայնով քաջալերանք կուտայ Անի քաղաքին.

«Այդպէս եղիցի քեզ, դու ով քաղաք անզաւակեալ.
Տուր այժմիկ դուլ և դատաւոր ողբոյդ այդմիկ դառնահառաչ,
Ժամ է արդէն եւ որդւոցս առ քեզ ըզձայն յուսադրական
Արձակել ուրախալիր ծանրաթախծիդ լինել սփոփիչ.
... Առաւօտ նոր արևով ծագեսցի քեզ լուսանորոգ,
Մերժեսցէ զգիշերդ 'ի քէն և զուարճասցիս դու առ յուսով.
Ի խաւար երկրէդ ելեալ 'նդ երկնից արփւով երևեսցիս»;*)

Այսպէս ահա Արարատեան աշխարհն ու Շիրակի դաշտը շրջագայելէ յետոյ, Մկրտիչ Խրիմեանը, հայրենի յուշ յիշատակներով և անմոռաց տպաւորութիւններով՝ կը հասնէր Ալեքսանդրապօլ քաղաքը (Շիրակի մէջ). Արդէն աշուն էր (1847) և անձրևներն ու ցուրտերը անհնարին կը դարձնէին ճամբորդութիւնը, ուստի և Խրիմեանն ըստ իւր կենսագիր Աճառեան-ի («Արևելք» օրագիր. 1885) «դատաւ կ'առնու Ալեքսանդրապօլ», ուր ամիսնայն հաւանականութեամբ մնաց-վեց-եօթ ամիս. Թէ Ալեքսանդրապօլի մէջ Մկրտիչ Խրիմեանը ուր ապրած և կամ ինչ գործով զբաղուած է, այս մասին ունէ յիշատակութիւն չը կրցանք ձեռք բերել, միայն պարզ է, որ նա 1848 թուի գարնան, Ալեքսանդրապօլէն գնաց Թիֆլիս և ասկից ալ Բաթում՝ ուր նաւի կըսպասէր, կ. Պոլիս երթալու համար.

## Զ.

## ՄԿՐՏԻՉ ԽՐԻՄԵԱՆՆ Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Հայաստանի ճամբորդ և պանդուխտ Մկրտիչ Խրիմեանը, 1848 թուի Մայիսին, Բաթումի նաւահանգիստը կը հասնէր, և քանի մ'օր յետոյ, նաւ նստելով ճամբայ կ'իյնար դէպի կ. Պոլիս. Նաւը կը պատռէ կուրծքը Սև ծովին, որուն լայնատարած տեսքը, կը յու-

*) «Հրաւիրակ Արարատեան». էջ՝ 34:

զեն պանդուխտի սիրտը. Չէ որ նա կը հեռանայ Հայաստանի հող ու ջուրէն, չէ որ հայրենիքի մէջ թողած է իւր սիրասուն, պառաւ մայրը, նորահարս Մարիամը և նորածին զաւակը—Թագուհին, որուն մանկական թոթովանքն ու գրգռանքը դեռ չ'էր վայելած և հայրական սիրոյ ու զեղուն սրտի զգացումները դեռ չէը կրցած տածել իւր զաւակի հանդէպ։ Եւ ո՛վ գիտէ, Սև ծովի վրայ հայրենախօս, պանդուխտի սիրտը, որքան յուզուեր ու սևցեր է։ Ծովի ալիքներու խշշոցին մէջ, արդեօք, պանդուխտ Մկրտիչը, կը լսէր իւր կենակից Մարիամի մեղանուշ երգի արձագանգները.

«Ստամբօլ քաղաք վէր Սև ծովերաց,
Ղարիբիս մեռնեմ իր ճամխներաց...

Ու նաւը կը սուրայ Սև ծովի վրայէն, իսկ տխուր և սևսիրտ Մկրտիչն ալ, անկիւն մը կծկուած կ'ողբայ պանդուխտի իւր դառն ու մենակ կեանքը։ Ահա Տրապիզոնի նաւահանգիստը, ուր նաւը կանգ կ'առնէ. Մկրտիչը ուշի ուշով կը դիտէ քաղաքը և նորէն կը խորասուզուի իւր մտածումներու և դառն յուշերու մէջ։ Նաւը կը քերէ Սև ծովի ափերը, կանգ կ'առնէ ծովափնեայ քաղաքներու առջև և վերջապէս կը հասնի Կ. Պոլսոյ Նաւամատոյցը (Սիրքէճի)։

Դաւառացի պանդուխտ երիտասարդ Մկրտիչը ոտքը կը դնէր Օսմանեան մայրաքաղաքի հողին վրայ։ Անտես և անծանօթ դէմքեր, նոր միջավայր, նոր շրջապատ։ Նաւամատոյցին մէջ, նա ծանօթ հայրենակից մը կը գտնէ և անոր առաջնորդութեամբ կ'երթայ այն խանը*), ուր կ'ապրէին վաճառականներ և պանդուխտներ, որոնք սիրով կը հիւրընկալեն իրենց նորեկ հայրենակիցը։ Մկրտիչի առաջին գործը կ'ըլլայ ընդարձակ նամակ մը գրել իւրայիններուն, յայտնելով, որ ինքը, երկար թափառումներէ յետոյ, ողջամբ հասած է Կ. Պոլիս։

ԺԹ-րդ դարի ընթացքին, երբ բովանդակ Ցածկահայաստանի մէջ, Հայութիւնը կը տնքար ու կը տառապէր քրդական և տաճկական լուծի տակ, երբ պետական ծանր հարկերն ու հարստահարութիւնները տնտեսական քայքայման կ'ենթարկէին գաւառացի Հայ

*) Խանը՝ իջևան—կայանի և թէ առևտրական տներու և խանութներու կեդրոնատեղի եղող ընդարձակ բակի իմաստն ունի, (Caravanserai)։

ժողովուրդը, երիտասարդութիւնն առհասարակ պանդխտութեան կը դիմէր և գաղտնի ու յայտնի կերպով կը հեռանար իւր հայրենիքէն, օտար երկիրներու մէջ գործ ու բախտ որոնելով։

Գաւառացի այդ պանդուխտ երիտասարդները ընդհանրապէս կը դիմէին Կ. Պոլիս։ Քաղաքացի արհեստաւորները կը զբաղուէին իրենց արհեստներով, իսկ հողագործ գիւղացիները բեռնակիր և մշակ կը դառնային և արիւն քրտինք, մտած ամէն տեսակ սև աշխատանքներ կը կատարէին։ Այս պանդուխտ երիտասարդութիւնը չարատանջ և թշուառ կեանք մը կը վարէր Կ. Պոլսոյ մէջ։ Պանդուխտները չարաչար կերպով կ'աշխատէին, իրենց օրապահիկը կը հայթայթէին և զուրկ ու խեղճ ապրելով՝ կը տքնէին դրամ աւելցնել և օգնել իրենց հարազատներուն, որ երկրին մէջ բռնակալներու սոսկումներուն և տնտեսական տագնապին ենթակայ էին միշտ։ Ճաճկահայ կեանքի ամենաողբերգական մէկ էջն ալ, ահա, գաւառացի պանդուխտ երիտասարդութիւնն էր, որ կը մաշէր ու կը հիւծէր Կ. Պոլսոյ խաներու և մութ ու խոնաւ, լուռ և խոնարհ յարկերու տակ։

Սակայն, մինչ Մկրտիչ Խրիմեանը Կ. Պոլիս եկած էր դրամ վաստակելու և իւրայիններուն օգնելու նպատակով։ Մինչ իրենց տնտեսական վիճակը վատ էր, որ նա Կ. Պոլսոյ մէջ դառն ու ծանր աշխատանքի լծուէր և դրամ հասցնէր իւր հարազատներուն։ Ո՛չ, բարեբախտաբար այդպէս չ'էր։ Կ. Պոլիս գալու իւր նպատակը տարբեր բան էր։ Նա գիտէր, որ մայրաքաղաքը արևմտահայ կեանքի մտաւոր կեդրոնն էր, գիտէր որ այնտեղ ազգային, հասարակական կեանք կար, գիր ու գրականութիւնը, կանոնաւոր դպրոցներ և թերթեր կային, նա համոզուած էր, որ այդպիսի շրջանի մը մէջ դիւրին էր մտքի և գիտութեան լայն պաշար ձեռք բերել, զարգանալ, յառաջադիմել, ծանօթութեան շրջաններ ստեղծել, ժամանակակից ազգային դէմքերու հետ մտերմանալ ևայլն։ Ահա այս բոլոր երևոյթներն էին, որոնք Մկրտիչ Խրիմեանի աչքին առջև բացին ապագայ գեղեցիկ յոյսերու հորիզոնները և զինք՝ Արարատեան Աշխարէն տարան դէպի Կ. Պոլիսը, որտեղ գալու անոր միակ նպատակը եղած է կանոնաւոր ուսում և կրթութիւն ստանալ և օգտակար լինել իւր ազգին ու հայրենիքին։ Սակայն նիւթական ինչ միջոցներով պիտի ապրէր Կ. Պոլսոյ մէջ, դրամ ունէր, կամ Վանէն — իւր հարազատ-

ներչն օգնութիւն կը ստանար։ Անտարակոյս ոչ, որովհետև, հէնց որ Մկրտիչը Կ. Պոլիսը կը հասնէր, անոր առաջին մտահոգութիւնը կ'ըլլար հասարակ գործ մը, արհեստ մը գտնել, իւր առօրեայ համեստ ծախսերը հոգալու համար, և ահա—«Ինչպէս պատմում են իրեն ամենամօտ աշակերտները, առժամանակ պարապել է կօշկակարութեամբ, կամ աւելի ճիշտն ասած, կօշկակարի մօտ ծառայել է՝ իրեն նպատակին հասնելու համար»*)։ Կտաւագործութենէն յետոյ՝ կօշկակարութիւն, մէկը հայրենիքի, իսկ միւսը պանդխտութեան մէջ։ Կտաւագործութիւնը սովրելու ժամանակ ինքը, իւր հօրեղբայր Խաչատուրէն ուսում, կրթութիւն և «սիրոյ դաստիարակութիւն» կ'ուսանէր, իսկ այժմ, կօշկակարութեան հետեւելու ժամանակ, նա՝ ինքն էր, որ ուսում և «սիրոյ դաստիարակութիւն» կը սովրեցնէր կօշկակարանոցի աշկերտներուն։ «Խրիմեանը կօշկակարի հասարակ ծառայութեան մէջ էլ աննշան և կորած չմնաց, շուտով նա իր արհեստակիցների մէջ ձեռք բերեց ընդհանուր հռչակ, բարի անուն և գրաւեց բոլորի սէրը։ ... Իր արհեստակիցների մէջ Խրիմեանը, բացի իւր բնական ընդունակութիւններից, մի առաւելութիւն ունէր, որ կրթուած էր և դեռ այժմ էլ ճարած կոպէկներովը կրթութիւնը շարունակում էր Պօլսումը, ուստի և բացի իրեն արհեստից. նա արհեստակիցների մէջ ուսուցչութիւն էլ էր անում»։**)

Որոշ կերպով չ'ենք կրնար ըսել, թէ Մկրտիչ Խրիմեանը, որքան ժամանակ կօշկակարութեամբ զբաղեցաւ, սակայն հաւանական է, որ միայն քանի մ'ամիս տևեց այդ, վասնզի իւր արհեստակիցները, ամէն տեղ կը խօսէին, որ վաննեցի պանդուխտ Մկրտիչը արհեստի յարմար մէկը չէ, նա արժանաւոր, կարդացուոր և ուսումնասէր մարդ է, խելօք և ընդունակ։ Իւր մտաչելի, քաղցր և համեստ բնաւորութեան շնորհիւ, Մկրտիչ Խրիմեանը ծանօթներու և մտերիմներու ջերմ շրջան մը կը ստեղծէ, արժանանալով ամէնքի համակրանքին և սէրին։ Ուր որ երթար, ուր որ հրաւիրուէր, ամէն տեղ Հայաստանի մասին կը խօսէր, կ'երգէր, կ'ողևորէր ու կ'ոգեւորուէր։ Վասպուրականի բնական գեղեցկութիւնները կը նկարագրէր, պատմական և հայկական անցեալ և նոր կեանքէն դրուագներ

*) Բագրատ Մխիթարեան—ՀՈՑՐԻԿԻՆ. Թիֆլիս. Տպարան Մ. Մարտիրոսեանի և Ընկ. 1893. էջ՝ 12։ **) Անդ. էջ՝ 13։

կը պատմէր Մայր Արաքսն ու Մասիս սարը, Աւարայրի և Արարատեան դաշտերը, Արագածն ու Տիրակը—հայրենի այս պատմական ու նուիրական վայրերը—անոր զրոյցներու առանցքը կը կազմէին, դառնալով նաև ոգևորութեան և ներշնչումի աղբիւրը ամէն անոնց, որոնք Հայաստանի այս պանդուխտ երիտասարդի ճայրենասիրութեան վրայ կը հիանային և անոր անկեղծ ու խանդավառ զգացումներով կը տոգորուէին. Իւր շրջապատի մարդկանց սէրն ու համակրանքը, այնքան հարազատ և օրտաբուղխ եղած են Մկրտիչի հանդէպ, որ թէ իւր հայրենակիցները և թէ պոլսեցիները, զանազան դիմումներով, յաչողած են, որ Հայաստանի այս հայրենասէր երիտասարդը—Մկրտիչ Խրիմեանը—վարժապետ դառնայ. Եւ այս ուղղութեամբ թափուած ջանք ու ճիգերը կ'իրականանան.

## Է.

## ՄԿՐՏԻՉ ՎԱՐԺԱՊԵՏ ԽՐԻՄԵԱՆ

Կ. Պոլսոյ Խաս-Գիւղի մէջ, 1848 թուին, կը բացուէր աղջկանց անդրանիկ դպրոցը, որուն դեկավարները, միաձայնութեամբ կ'որոշեն նորաբաց դպրոցին իբր դաստատու հրաւիրել, Հայաստանէն եկած պանդուխտ երիտասարդը—Մկրտիչ Խրիմեանը. Անոր ուսումնական և ճայրենասէր ըլլալուն համբաւը արդէն շատերը լսած էին.

Եւ ահա, նոյն թուի աշնան, Մկրտիչ Խրիմեանն իբր դաստատու—վարժապետ—Խաս-Գիւղի աղջկանց դպրոցի մէջ, կը դասաւանդէր՝ Հայոց լեզու, Հայոց պատմութիւն, Հայաստանի աշխարհագրութիւն, կրօն և երգեցողութիւն. Կարճ ժամանակի մէջ, նա դպրոցական այնքան արդիւնաւոր գործունէութիւն մը ցոյց կուտայ, որ, թէ դպրոցի դեկավարները և թէ աշակերտները չափս սիրով և համակրանքի զգացումներով կը կապուին անոր հետ և բարոյապէս ու նիւթապէս կը քաջալերեն անոր աշխատանքները.

Հայաստանի այս երիտասարդը, նոյն ինքն՝ ՄԿՐՏԻՉ ՎԱՐԺԱՊԵՏ ԽՐԻՄԵԱՆը, այդ դպրոցի մէջ, իւր հայրենաբոյս ճառերով և ազգաշունչ խօսքերով, այնպիսի ջերմ և խանդավառ մթնոլորտ մը ստեղծած էր, որ աշակերտութիւնը, հայրենասիրական հարազատ զգացումներով առլցուն, երեսակայութեան թռիչքներով կը սլանար

դէպի «Հայաստան երկիր դրախտավայրը» և հին փառքերու յիշատակներով՝ նոր ոգի, եռանդ կը ստանար։ Հայրենասիրութեան և ազգասիրութեան գաղափարներու հետ, Մկրտիչ Վարժապետը, մատաղ սերունդին կը սովրեցնէր նաև առաքինութեան և մարդասիրութեան գործնական դասերը։

Աշակերտներու ծնողները, երբեմն առիթ կ'ունենային այցելել դպրոցը, կը ծանօթային Հայաստանցի Վարժապետին հետ, ներկայ կ'ըլլային անոր դասերուն և կը հիանային անոր խօսքերու վրայ։ Խաս-Գիւղի հայերը շատ ոգևորուած էին իրենց Հայաստանցի Վարժապետով, և ամէն տեղ անոր գովքը կ'ընէին։

Կ. Պոլսոյ Հայոց բարձր դասակարգերու և ամիրայական գերդաստաններու մէջ, Մկրտիչ Վարժապետ Խրիմեանի հռչակը տարածուած էր։ Օտեան, Այվատեան, Պալեան և ուրշ մեծանուն գերդաստաններու հետ, Մկրտիչ Խրիմեանն արդէն ջերմ յարաբերութիւն հաստատած էր։ Ամէնքը սիրով կը հիւրընկալէին զայն, կը լսէին անոր ազգաշունչ զրոյցներն ու հայրենասիրական կրակոտ խօսքերը, որոնք միշտ կ'անդրադառնային պոլսահայութեան անտես և անծանօթ՝ բայց սիրելի հայրենիքի՝ Խայաստանի շուրջ։ Մկրտիչ Վարժապետը, այնքան ջերմ սիրով և յարաբերութեամբ կը կապուէր այդ մեծ ընտանիքներու հետ, որ մինչև անգամ, քանի մը տեղ, տնային դաստիարակ կը հրաւիրուի և հարուստներու զաւակներուն հայեցի ուսում և կրթութիւն կուտայ։

Մանաւանդ Օտեան և Այվատեան գերդաստանները, շատ վեհանձն վերաբերմունք և բարոյական ու նիւթական քաջալերութիւն ցոյց կուտան Մկրտիչ Վարժապետ Խրիմեանին, որ յաճախ առիթ կ'ունենար, իւր արդար վաստակի դրամով օգնել իւր մօր, ընտանիքին և մինչև անգամ, 'ի Պոլիս ապրող գաւառացի պանդուխտներուն։ Մկրտիչ Վարժապետի դաստիարակչական այս յաջող գործունէութիւնը և նիւթական համեստ վիճակը, անոր չարամիտ հակառակորդներու և թշնամիներու բերանն ու ձայնը հանդիսացող Ֆօլօզ Վարժապետին կողմէ, հետևեալ տողերով բնորոշուած է.

«...Մինչև պատեալ զանձամբ նորա աղքատութեան զերթ զերկաթ,
Ականջից գոլ դաստու 'ի տունս Հայոց անընդհատ»։*)

*) Խրիմեան եւ գործք իւր. էջ՝ 78։

Իսկ Մկրտիչ Վարժապետ Խրիմեանի հայրենասիրական զգացումները, անոր թշնամիներու կողմէ այսպէս կը բացատրուէին.

«...Ինքն ուր նստէր ուր հասանէր յոգւոց հանէր հառաչէր,
Ա՛խ Հայաստան, վա՛հ Հայաստան կրկնէր ասէր, երեքկնէր։
Մինչև ինքն զինքն կեղծէր ՚ի լաց առ անձուկ սէր հայրենեաց
Ընդ ունչս ՚ի նուրբ աւաշէր կեղծ իբրև զմայլեալ խելագնաց։
Թէ ոք ցնա ինչ հարցանէր, եթէ յուղուղ թէ ՚ի տան
Նա աւաշէր յանզգայից, ոչինչ առնէր պատասխան։
Զորս ապշեցոյց զպատանեակս Բիւզանդացւոց մոգաբար,
Եցոյց զանձն իւր մեծ ոմն լինիլ Հայաստանին փրկարար»։*)

Նախանձի, ատելութեան և ստոր թշնամութեան արտայայտութիւն եղող վերոյիշեալ տողերը, մենք դիտմամբ մէջ բերինք, ցոյց տալու համար, որ մինչև անգամ անոր կատաղի հակառակորդները, ժամանակին (թէև հեգնանքի և ծաղրանքի կերպով), արձանագրած են թէ՝ Խրիմեանը «ուր նստէր, ուր հասանէր յոգւոց հանէր հառաչէր» և—«Ա՛խ Հայաստան, վա՛հ Հայաստան կրկնէր ասէր, երեքկնէր»։ Այո՛, թէև անոր թշնամիները այս տողերով, ուզած են ծաղրել Մկրտիչ Վարժապետի հայրենասիրութիւնը, սակայն, այդ խօսքերը, բացարձակ կերպով կը հաստատեն, որ յիրաւի, Խրիմեանը, Կ. Պոլսոյ մէջ, ուր որ գացեր է, որ շրջանի մէջ որ մտեր է,—«ուր նստէր, ուր հասանէր»,—«Ա՛խ Հայաստան, վա՛հ Հայաստան կրկնէր ասէր», որովհետև Հայաստանի, Մայր երկրի սիրտէն եկած էր, նա, շրջեր էր ժողովուրդին մէջ, տեսած էր Հայ Հայրենիքի հին փառքերու յիշատակները և պատմավայրերն ու սրբատեղիները, որոնք բոլորն ալ անոր սիրտն ու հոգին հրավառեր էին ազգի եւ հայրենիքի բուռն եւ սուրբ սիրով։

Կ. Պոլիս, և մանաւանդ Խաս-Գիւղի հայոց հարազատ շրջանները, այնքա՛ն ջերմ ընդունելութիւն ցոյց տուած էին Հայաստանցի այս պանդուխտ երիտասարդին, որ նա իւր սիրտն ու հոգին, իւր զգացումներու յորդաբուղխ աղբիւրը կը բանար և «Ա՛խ Հայաստան, վա՛հ Հայաստան» հառաչելով ազգի և հայրենիքի սիրոյ զգացումները կը տարածէր Խաս-Գիւղի հայկական շրջաններու մէջ։

*) Խրիմեան եւ գործ իւր. էջ՝ 79։

Խրիմեանը—«Վանէն մեկնած պահուն, անծանօթ գաւառացիի մը պէս չ'էր արդէն որ ձեռք առած էր ճամբորդի ցուպը. իբրև Հայաստանցի ուսուցիչ և գրագէտ՝ սիրուած անուն մը ունէր նա այդ միջոցին»։ *)

Քննենք նաև այս տողերը. Երբ Խրիմեանը, 1847-ի ամրան, կը հեռանար և կ'անցնէր Արարատեան Աշխարհը, նա ամէն տեղ, սոսկ, իբր վանեցի «գաւառացի անծանօթ» ճամբորդ մը նկատուած էր. Մ'չ մէկ փաստ և վկայութիւն—գրաւոր կամ բանաւոր—չ'ենք կարող գտնել, որպէսզի հաստատենք թէ Խրիմեանը «իբրև Հայաստանցի ուսուցիչ և գրագէտ սիրուած անուն մը ունէր» (որտեղ, երբ), կ. Պոլիս հասնելէ առաջ՝ Վանի կամ Արարատեան Աշխարհի մէջ. կ. Պոլիս հասնելէ, Խաս-Գիւղի հայոց դպրոցի ուսուցիչ կարգուելէ և ընտանեկան շրջաններու հետ մօտիկ յարաբերութիւնները մշակելէ յետոյ է միայն, որ Խրիմեանը «իբրև Հայաստանցի ուսուցիչ և գրագէտ սիրուած անուն մը» կ'ունենայ և իւր «պերճախօս խառնուածքը՝ իր դիւրահաղորդ նկարագրին վրայ աւելցուած, քաղցր մտերմութեան ոլորտ մը կը շինէին ամէն տեղ իր շուրջը, ուր ինք, վառվռուն ու համակրելի երիտասարդ, ճամբորդ Հայաստանի՝ օրուն բառը լոկ բաւական էր սիրտերը յուզելու համար, անոր խոցն ունէր իր հոգւոյն մէջ ու խօսքը իր շրթանց վրայ. Հայրենիքի վիշտն էր որ ճամբորդեր էր իրեն հետ...»։ **)

Այո, Խրիմեանի հետ—«Հայրենիքի վիշտն էր որ ճամբորդեր էր» կ. Պոլիս, ուր Հայրենիքին Լուռ Վիշտը ծրարող Խրիմեանի Մեծ Սիրտը, առաջին անգամ Խաս-Գիւղին մէջ կը բացուէր և մայրաքաղաքին մէջ ապրող ամիրայական և բարձր գերդաստանները, վանեցի Մկրտիչ Վարժապետի հայրենասիրական զգացումներով ու խօսքերով կ'ոգևորուէին և ամէն տեսակ յարգանք ու պատիւ կ'ընծայէին այդ հայրենախօս վարժապետին.

Ուսուցչական ասպարէզը Խրիմեանի ինքնազարգացման առաւել ևս զարկ կուտայ. Երիտասարդ Վարժապետը, դպրոցական աշխատանքներէն յետոյ, կ'երթար պոլսեցի հայկական ուսուցիչներու

*) ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ—( իր ծննդեան հարիւրամեակի առթիւ) Թ(արգմ) Ն(պիսկոպոս) Գ(ուշակեան). Փարիզ. Գեղարուեստական Տպարան. 1925. էջ՝ 16։

**) Անդ. էջ՝ 16։

մօտ, Հայ գրաբարի ուսումը խորացնելու նպատակով. Դիշերները, իւր առանձնասենեակի մէջ, կը զբաղուէր գրելով ու կարդալով. Ի Կ. Պոլիս, անոր ընթերցանութեան գիրքերն եղած են դասական գրականութեան գլուխ գործոցները (Հոմերոս, Վիրգիլիոս և նման դէմքեր), որոնք հայերէնի թարգմանուած և լոյս տեսած էին Վենետիկի Մխիթարեան Հարց ջանքերով։ Վիրգիլիոսի «Մեսակաց»ի հանդէպ, Խրիմեանը այնքան մեծ սէր և ոգևորութիւն ցոյց տուած է, որ շատ մը մասեր բերանացի սովրած և առանձնութեան ժամերուն արտասանած է եղեր.

Ուսման ծարաւը, բարձրագոյն կրթութեան սէրը, այնքան վառ եղած են Մկրտիչ Վարժապետի սրտին մէջ, որ նա անգամ, ցանկութիւն ունեցած է, Կ. Պոլսէն երթալ Եւրոպա, իւր նպատակին հասնելու համար։ Սակայն իւր նիւթական համեստ վիճակը արգելք կը հանդիսանայ անոր այդ ցանկութեան, որու մասին, Խրիմեանը ցաւ ի սիրտ այսպէս կը գրէ — «Ցաւկացայ ես, այլ բախտ ինձ չյաջողեց»*).

Խրիմեանը իւր մտաւոր զարգացումն աւելացնելու համար, յարաբերութիւն կը մշակէ Կ. Պոլսոյ ժամանակակից գրական և կրթական գործիչներու և ուսումնական շրջաններու հետ և կը ջանայ ընդլայնել իւր գիտցած ծանօթութիւնները, որոնք ձեռք կը բերէր՝ —«...Ունկն դնելով վարժապետաց, և լըսող լինելով երևելեաց խորհրդոց ու խօսակցութեանց, յորս միշտ նշանաւոր գրագէտ և ուսումնական անձինք կը գտնուէին, շատ օգուտ կը քաղէ նա իւր այս վիճակէն. իւր հետաքրքրութիւնն, իւր համակրանք ազդող դէմքն ու տարիքը, իւր քաղցր և հայրենասէր լեզուն, իւր համեստ բնաւորութիւնը սիրելի կ'ընեն զինքն բազմաց, նշանաւոր ընտանեաց մէջ կ'ընդունուի իբրև դաստիարակ և իբրև բարեկամ».**)

«... Նա իր մտաւոր զարգացմամբ այնքան առաջ էր գնացել, որ նրան ընդունում էին մասնաւոր տներում իբրև տնային վարժապետ։ ... Եռանդոտ, բարձրահասակ, արծուաքիթ, խոշոր աչքերով, գեղեցկադէմ երիտասարդը իր գրաւիչ և համեստ բնաւորութեան

*) Խրիմեան Հայրիկ—Սիրաք եւ Սամուէլ. Թիֆլիս. Տպարան Մ. Դ. Ռոտինեանց. 1893. էջ՝ 140։ **) «Աբեւելք» օրագիր. Կ. Պոլիս. 1885։

շնորհով, կարողացաւ գտնել բարեկամների լայն շրջան, ուր նրան ընդունում էին սիրով և յարգանքով»*)։

«... Խրիմեան յարաբերութեան մտաւ Պոլսոյ Հայ մտաւորական դասին հետ։ Այդ հմուտ մարդոց շրջանակին մէջ իր կրթութիւնն ընդլայնեց, իր գրական մշակումը ճոխացուց. մասնաւոր խնամքով մը կարդաց և ուսումնասիրեց մանաւանդ Մխիթարեանց հրատարակած պատմական, բանաստեղծական, բանասիրական արտադրութիւնները»**)։

Ահա մտաւոր ու գրական այն շրջանակները, որոնց հետ ջերմ յարաբերութիւն մշակած էր Մկրտիչ Վարժապետ Խրիմեանը Կոստանդնուպոլսոյ մէջ։

## Ը.

## ՄՈՒՏՔՆ Ի ԳՐԱԿԱՆ ԱՍՊԱՐԷԶ

Ինչպէս տեսանք, Մկրտիչ Վարժապետ Խրիմեանը, Խաս-Գիւղի դպրոցի ուսուցիչ ըլլալով հանդերձ, ջերմ սիրահար էր նաև գրականութեան և միշտ յարաբերութիւն կը պահէր Կ. Պոլսոյ մէջ ապրող ժամանակակից գրական յայտնի դէմքերու հետ։

Մխիթարեան Միաբանութեան գրական կաճառի լուսատու աստղերէն Հայր Առէն Կոմիտաս Բագրատունին, *1849* թուին, կ'ապրէր Վ. Կ. Պոլիս. Մկրտիչ Վարժապետ Խրիմեանը—ըստ երևոյթին—մօտիկ յարաբերութիւն ունէր այդ գրական հսկայի հետ, կ'օգտուէր անոր խորհուրդներէն և կ'առաջնորդուէր անոր ցուցմունքներով, իւր գրական աշխատանքներու կամ ընթերցումներու մէջ։ Տարակոյս չը կայ, որ Հ. Առէն Բագրատունիի տպուած և անտիպ երկասիրութիւններու հետ, Մկրտիչ Խրիմեանը ծանօթ էր։ Քան և ին տաբեկան Մկրտիչը, խորապէս ուսումնասիրած էր նաև հայկական հին տաղաչափութիւնը և կը ջանար այդ ձևով ալ գրել։ Սակայն, որ Հայ հեղինակն էր, որ «մեր նախնեաց տաղաչափութիւնը նորոգող»ը կը դառնար, եթէ ոչ՝ Հ. Առէն Բագրատունին, որուն անձին ու գրական պատկառելի գործունէութեան վրայ հիացող Մկրտիչ Խրիմեանը, այդ «Մեծիմաստ եւ բազմահմուտ մեծահռչակ Հօր»

*) Խ. Մալումեան—Խրիմեան. էջ՝ 10։

**) Ազգակ Չօպանեան—Դէմքեր. (Խրիմեան Հայրիկի մասին գրուած բաժինը՝ ամբողջ 20 էջ). Փարիզ. Գեղարուեստական Տպարան. 1924. էջ՝ 114։

մասին, «գովեստ» քերթուած մը կը գրէ և նամակով մը հանդերձ, 1849 թուի Ապրիլ 15-ին, կ'առաքէ Սկիւտար (Կ. Պոլիս) «Մեծաճաճանչ Քերթողին Բագրատունեաց»-ին, որուն հրաւէր կը կարդար.

«Հա՛յր, առաւել արժան էր ինձ ո՛չ զօսարիս ինձար հարկանել,
Այլ զքոյդ, որ վեհ հոգւով քաջ եւս ճշչի՝ հայրենասյն».

Այդ նամակն ու քերթուածը ստանալէ յետոյ, Հ. Արսէն Բագրատունին, Մկրտիչ Խրիմեանին հետևեալ նամակը կը գրէ.

Արգոյ եւ սիրելի պարոն

Զգիր քո առաքեալ առիս ի 16 ամսոյս հանդերձ քերթուածովքդ ընկալայ, ընդ ներողամիտ գովութիւնդ յոյժ ամաչեցի, իսկ խնդութիւն միայն այն եղև ինձ, զի զայդպիսի աննախանձ բարեխնդիր ոգի ծանեայ յԱզգիս և, միանգամայն այդչափ սիրատենչ և փոյթ քաջ աշակերտեալ բուն հին նախնեացն գեղեցիկ ախորժանաց, և գոհութիւն վասն այսորիկ մատուցի նախ Աստուծոյ և ապա սովին գրովք պարտ վարկանիմ մատուցանել քում Սիրելութեանդ և աղաչեմ սիրողաբար ընդունել զսերտ սրտիւ շնորհակալութիւնս, նաև զզարմանս իմ ընդ այդ քաջութիւն գրչիդ, որով ճշմարտես յանձին և ի գիր զատացեալդ ի քէն թէ՝

«Զօդ ծծեալ Հայաստանեայց շոյտ զգացի զոգի նախնեացն». վասն որոյ և ոչինչ ունիմ ասել յուղղութիւն գրելոցդ, բաց ի զեղչելոյ անտի զգովեստդ զինէն. Իսկ ըստ համեստ և ծանր բանիցն ոչ սակաւ և զուարճութիւն համամարիմ ես տեսանել ի նոսա, եթէ նախնեացն գովութիւնք և նոցին վաղեմի չափոյ ախորժակք հարկաւ և զուարճալիք իցեն հայրենասէր ոգւոց, վասն որոյ և առաջին պատեհաւ առաքեցի զամենայն տառսդ ի վանս մեր յեռուլ ի Բազմավէպն, եթէ՝ որպէս ինձ, և նոցա հաճոյ թուեսցի.

Ներեսջիր ինձ զայս և եթ յուշ առնել Իմաստութեան քում, թերևս յօգուտ առ յապա փափագելի երգոցդ ի նոյն չափս, զի քո կարի յաճախեալ է և անխտիր յայս տաղ դիւցազնական եռավանկ դնել զչորրորդ անդամն, զոր իմ

պատշաճագոյն դատեալ ի թատերական աշխոյժ զրուցատրութեան չափս կամ յայլ նման օրինակն (յոջրն, էջ 91, ծան. Որատ. քերթ. ծան. 80). վասն որոյ և դուն ուրեք խառն վարեալ է ընդ քառավանկ չորրորդ անդամն դիւցազնական տաղից. Ողջ լինել ըղձանամ քում Ազնուութեանդ՝

Ն. Ց. Ա. Կ. Բագրատունի

ի Խուրուչէշմէ 20 Ապրել, 1849. Իճատէ Իսքուտար

Առ ազնիւ պ. Մկրտիչ Խրիմեան *)

«Մեր նախնեաց տաղաչափութիւնը նորոգող» Հ. Արսէն Բագրատունին, համաձայն իւր խոստման, Մկրտիչ Վարժապետ Խրիմեանի գրած «գովեստ» – ուղերձ քերթուածքը, կ'ուղարկէ Վենետիկի Մխիթարեան Մայրավանքը, «Բազմավէպ» ամսաթերթի մէջ հրատարակուելու համար:

Եւ ահա, 1848 թուի Հոկտեմբերին, «Բազմավէպ» հանդիսարանի մէջ, լոյս կը տեսնէր Մկրտիչ Խրիմեանի քերթուածքը հետեւեալ վերտառութեամբ.

«Խրրըմեան Վանեցի Մկրտիչ Վարժապետին գովեստը մեր նախնեաց տաղաչափութիւնը նորոգող Բագրատունի Հ. Արսէն Վարդապետին»:

Այսպէս ուրեմն, Մկրտիչ Խրիմեանի գրական անդրանիկ քերթուածքը լոյս կը տեսնէր Վենետիկի Մխիթարեան Միաբանութեան «Բազմավէպ» հանդիսարանի մէջ (1849 Հոկտ. էջ՝ 308) և այդ օրուընէ սկսեալ Վանեցի Մկրտիչ Վարժապետը Հայ գրականութեան ասպարէզը կ'իջնէր:

Հ. Արսէն Բագրատունիին գրած յայտնի ուղերձ-գովեստէն առաջ, Մկրտիչ Խրիմեանը, հայկական տաղաչափութեամբ գրած էր նաև քանի մը «ընտիր ոտանաւորներ», որոնք ցարդ անտիպ**) կը մնան: Այդ գրաբար ոտանաւորները հետեւեալներն են.

---

*) «Արարատ» ամսագիր. Էջմիածին. 1900. Ապրիլ. էջ՝ 168:

**) Այս հինգ կտոր անտիպ քերթուածներու բնագիրները, 1917 թուին ես տեսայ, Հայոց Հայրիկի երբեմնի գիւանապետ Կորիւն Վարդապետ (յետոյ Եպիսկոպոս) Սահակեանի մօտ, Էջմիածին:

1. Նուագ ի յանդրանիկ դիւցազունն մեր Հայկն ֆաջազանց պարագլուխ։

2. Նուագ ի Յովնանեէս Մկրտիչն՝ Մեծն ի ծնունդս կանանց։

3. Նուագ ի հրաւալի ծնունդ եւ յաստուածայայտնութիւն Յիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ։

4. Նուագ ի չարչարանս, ի թաղումն եւ յարութիւն Յիսուսի Տեառն մերոյ։

5. Նուագ ի Մեծն Սահակ եւ ի Մեսրովբ, պանծալի թարգմանիչս մեր։

«Մեր նախնեաց տաղաչափութեամբ» ոգևորուած ու հիացած, Մկրտիչ Խրիմեանը, 1849 թուի Մայիս ամսէն սկսեալ, կը ձեռնարկէ հայկական չափով ի գիր առնել իւր հայրենասիրական և ազգասիրական ջերմ զգացումներն ու խանդավառ ապրումները, որոնց յուշարձանը պիտի հանդիսանար «ՀՐԱՒԻՐԱԿ ԱՐԱՐԱՏԵԱՆ»ը։

Կ. Պոլսոյ մէջ, սիրուած և յարգուած, Հայ գերդաստաններէն մէկն ալ, Այվատեան գերդաստանն էր, որուն հետ, շատ ջերմ սիրով կապուած էր Մկրտիչ Վարժապետ Խրիմեանը՝ իբրև տնային դաստիարակ։ Այդ գերդաստանի օրինակելի հայրը—Յովհաննէս Աղա Կարապետեան Այվատեան—իւր զաւակներու ուսման և դաստիարակութեան գործը յանձնած էր Մկրտիչ Վարժապետ Խրիմեանին, որ միաժամանակ, Խաս-Գիւղի դպրոցի ուսուցիչն էր։ Յովհաննէս Աղա Այվատեանը, այնքան ջերմ սէր և անգամ, հայրական վերաբերմունք ու խնամք ցոյց տուած է Մկրտիչ Վարժապետ Խրիմեանի հանդէպ, որ նա՝—Խրիմեանը—Այվատեաններց տան մէջ, ամիսներ շարունակ ապրած և վայելած է այդ պատուական գերդաստանի խնամքն և հիւրասիրութիւնը։

Այդ ընտանեկան և խաղաղ միջավայրի մէջ, Այվատեան գերդաստանի անդամներու և կամ ազգականներու ներկայութեան, Մկրտիչ Խրիմեանը, յաճախ խօսած է Հայաստան Աշխարհի գեղեցիկ և հաճելի բնութեան, պատմական վայրերու, սրբատեղիներու և անցեալ փառքերու մասին։ Ո՞վ գիտէ, որքան յուզումնալից զգացումներ, որպիսի հիացմունքով համեմուած ապրումներ, հայրենիքի և ազգի սիրոյ մասին որչափ անսահման և խոր գաղափարներ և խանդավառութիւն ցոյց տուած է։

Այվատեանները—և մանաւանդ Յովհաննէս Աղան,—կ'ոգևորուէին Հայաստանով և կը տոգորուէին Հայրենիքի և ազգի սիրով, որոնց արծարծողն ու հրահրողը կը հանդիսանար Մկրտիչ Խրիմեանը.

Եւ ահա, 1849 թուի ամրան, Մկրտիչ Խրիմեանը, Այվատեան գերդաստանի հիւրընկալ և խաղաղ յարկին տակ, կը սկսէր գրել «Հռաւիրակ Առաքելոց»ը՝ հայկական տաղաչափութեամբ.

Այս անդրանիկ գրական երկասիրութիւնը, Մկրտիչ Խրիմեանը կարդաց միայն իւր հայրենակից՝ Վանեցի Գրիգոր Սանասարեանին (մականուանեալն Պապ*) և անոր հաւանութիւնն ու քաջալերութիւնը ստացաւ.

Օր մը, 1849 թուի աշնան, Մկրտիչ Խրիմեանը, տետրակ մը ձեռքին բռնած, Այվատեաններէն տունէն դուրս կ'ելլէր, երբ փողոցի դռան մէջ հանդիպեցաւ Յովհաննէս Աղա Այվատեանին, որ քաղցրութեամբ կը հարցնէ.

—Վարժապետ, այդ ինչ տետրակ է։

—Իմ գրած երգերն են, կը պատասխանէ Խրիմեանը.

—Եկուր ներս երթանք, քիչ մը կարդա լսենք, ինչ գրած ունիս.

Կ'երթան ներս, կը մտնեն սենեակը, Յովհաննէս Աղան կը պարզուի թիկնաթոռին մէջ, իսկ Մկրտիչ Վարժապետը, կը բանայ տետրակը և հէնց բացուած երեսը կը կարդայ.

«...Աւռ հովտիւք ծաղկաբոյս և ընդ մարմանդս հովաշունչ
Ձեմ առեալ ելէք մանկունք արդ 'ի լերինս Այրարատոյ.
Յորս հովուացն երջանիկ քաղցր էր ճեմել երբեմն հօտիւք
Ի վերայ նորաբացիկ պէսպէս ծաղկանցդ անուշաբոյր,
Որ 'ի վերուստ գիշերի ցօղ ընդունին 'ի գլուխս իւրեանց.
Եւ ընդ այգ մինչ արևուն ցայտի զդրօսք շառագոյն շող
Ի թերթիցըն շաղանիստ փայլք հարկանին ոսկեճաճանչ»։

---

*) «Պապ» տիտղոսով յայտնի Գրիգոր Սանասարեանը, ուսեալ, խոհուն, ազդեցիկ և փորձառու մարդ մը եղած է։ Խրիմեանի երիտասարդութեան մտերիմ ընկերներէն էր այս «Պապը», որ երկար տարիներ Կ. Պոլիս ապրելէ յետոյ, կը վերադառնայ Վան, ուր և կը մեռնի 1894-ին, 64 տարեկան հասակի մէջ։ Խրիմեանի հակառակորդներն ու թշնամիները քինախնդրութեամբ և կոյր ատելութեամբ կը լեցուէին նաև այն անձերու հանդէպ, որոնք անոր մտերիմներն ու գոր-

Յովհաննէս Այվազեանը, որ գրասէր և ուսումնական մարդ մըն էր, կը հիանայ այս տողերու վրայ և կը խնդրէ.

— Վարժապետ, դուն եկուր, այդ տետրակը տպել տանք, ըլլա՛ լիք ծախքերը, ես սիրով կը հոգամ։

Բնական է, որ Մկրտիչ Վարժապետը չը պիտի մերժէր Այվազեանի այդ գեղեցիկ առաջարկը և պիտի տար իր համաձայնութիւնը։ Չը գիտենք, սրդեօք, Մկրտիչ Խրիմեանը, իր «Հրաւիրակ Արարատեան»ի ձեռագիր տետրակը ցոյց տուա՞ւ, ի ներկայութեան կարդա՞ց «Մեծահանճար Քերթողին»՝ Հ. Արսէն Բագրատունիին—այս մասին փաստեր չը կան—սակայն փաստ է, որ 1850 թուի սկիզբները, Մկրտիչ Խրիմեանի «Հրաւիրակ Արարատեան»-ի բնագիր տետրակը, Յովհաննէս Աղա Այվազեանի միջոցով, յանձնուեցաւ, Կ. Պոլսոյ Հայոց այն ժամանակուայ Պատրիարք Ծակոր Արքեպիսկոպոսին, որը հաճոյքով կարդաց հայրենասէր երիտասարդի այդ երկասիրութիւնը և հրամայեց տուաւ, որ տպագրուի։

Բնագիրը յանձնուեցաւ Յովհաննէս Միւհէնտիսեանի տպարանին, ուր կը շարուէր և կը տպուէր «Հրաւիրակ Արարատեան»ը, որուն սրբագրութիւնը հեղինակն անձամբ կը կատարէր, ուշադիր կերպով հետևելով, նաև որ տպագրութիւնը մաքուր և գեղեցիկ ըլլայ։ Տպարանի ներքին կեանքն ու գործը, Մկրտիչ Խրիմեանին շատ սիրելի երևցան և նա այդ ժամանակէն էր, որ սիրեց տպագրական մեքենան, մամուլն ու տպագրութեան գործը։

Եւ ահա, 1850 թուի ամրան, Կ. Պոլսոյ մէջ, Վոսփորի գեղածիծաղ ափերուն վրայ, լոյս կը տեսնէր Վանեցի երեսուն տարեկան երիտասարդ Վարժապետ Մկրտիչ Խրիմեանի գրական անդրանիկ երկասիրութիւնը—«Հրաւիրակ Արարատեան»ը,—որուն հեղինակը, իր հայրենասիրտ և ազգաշունչ գրիչը ձեռքին բռնած, կ'երթար

---

ծակիցները կ'ըլլային։ Եւ այս պարզ պատճառով ալ, Խրիմեանի թշնամիներու թարգմանը, քինախնդիր Քոլոզ Վարժապետը, այս «Պապ»ի մասին հետևեալ տողերը կը գրէ.—«...զարս պորտաբոյծս թափառական՝ մինն էր Գրիգոր անուն յոյժ մտերիմ իւր (Խրիմեանի) անձին, որ մականուամբ քէօթէօթ կոչիւր, այլ լեզուագար գլխովին։ Որոյ փոխեալ զմականուն՝ որ չանն ունէր նշանակ. Պապ անուանեց (իբր թէ Խրիմեանի կողմէ Պապ կոչուած) առ ընդ հեճուկս Հռովմայ Պապին ընդդիմակ»։ (Խրիմեան եւ գործք իւր. էջ՝ 78.)։ Իսկ Խրիմեան Հայրիկը «Պապ» Գրիգորին «Աբթուճ անուճ հայրենասեր» կը կոչէ։

բազմելու ժամանակակից Հայ Գրականութեան դէմքերու և գործիչներու շարքին։

Այսպէս, լոյս կը տեսնէր «Հրաւիրակ Արարատեան»ը, հայրենասիրական, ազգաշունչ և գեղեցիկ հատորը, որուն առաջին էջն ընթերցողի աչքին առջև կը պարզէր հետեւեալը.

«ՀՐԱՒԻՐԱԿ ԱՐԱՐԱՏԵԱՆ. ցօրիներայ ի չափս հայկականս ի ՄԿՐՏՉԷ ԽՐԻՄԵԱՆ ՎԱՆԵՑԻՈՑ. ի խնդրոյ եւ յարդեանց Մեծարու Ցովհաննէս Աղայի Կարապետեան Այվատեանց.

Ի Հայրապետութեան Տ.Տ. Ներսիսի Աստուածընտիր եւ Սրբազան Կաթուղիկոսի Ամենայն Հայոց։ Եւ ի Պատրիարքութեան Սրբոյ Երուսաղէմի Տ. Ցովհաննու Աւետիսեանցորն Արքեպիսկոպոսի։ Հրամանաւ Տ. Յակոբայ Արժանընտիր Արքեպիսկոպոսի եւ ազգապետ Պատրիարքի Կոստանդնուպոլսոյ։ Ի Կոստանդնուպոլիս. ի տպարանի Ցովհաննու Միւհէնտիսեան. 1850—ՌՄՂԹ»։

«Հրաւիրակ Արարատեան»ի մեկենաս—Ցովհաննէս Աղա Այվատեանց — հեղինակի սիրայօժար թոյլտուութեամբ, գրքի 5-րդ էջի վրայ արձանագրած էր.

«Ի յաւերժական յիշատակ սիրեցելոյ որդւոյն վաղամեռիկ ԳԱՐԵԳԻՆ ՄԱՆԿԱՆ կանգնէ զայս մատուռս Ցովհաննէս Աղա Կեսարացի Այվատեանց»։

Ո՛րքան գեղեցիկ, յուզիչ և յաւերժական մտարձան էր այդ— «Հրաւիրակ Արարատեան»ը— որ որդեսէր հայրը՝ Ցովհաննէս Աղան, կ՛արձանացնէր իր «վաղամեռիկ Գարեգին մանկան» յիշատակին։ Չէ որ այդ վաղամեռիկ մանկան հոգին կ՛երթար ու կը շրջէր Հայաստան Աշխարհի ամէն կողմերը, չէ որ մանկան վշտահար ծնողները խորապէս մխիթարուած էին, որ այդպիսի գրական երկ մը— համակ հայրենասիրութեան, ազգասիրութեան և Հայաստանի բնութեան գովքով զարդարուն «Հրաւիրակ Արարատեան»ը —յաւերժապէս անմահ պիտի պահէր իրենց սիրելի և վաղամեռիկ Գարեգին մանկան յիշատակը։

Ահա և «Հրաւիրակ Արարատեան»ի 7-րդ էջը, որուն վրայ տըպուած է հեղինակին ուղերձ-ձօնը՝

«Աւ՝ Մեծարգոյ եւ Ազգասիրական Հայրենասէր բարեսիրեաց» Ցովհաննէս Աղա Կեսարացի Այվատեանց.

«Ցոգի վեհ Բազդատունեան վառեալ այդպէս, իմ Մեկենաս,
Նա դիւցազանցըն Հայոց պատմել հայցեաց 'ի Մովսիսէն.

Դու ՚ի տրուպ աշակերտէս երգել զվայրացըն հայրենի։
Սիրասուն զորդւոցըդ քո և զԹորգոմեան հանուր մանկտւոյն
Կալար ըզձեռանէ միոյ՝ նոցին սիրողապէս
Զմիւսն ետուր ինձ եւ այնպէս ելեր ընդիս ՚ի յԱյրարատ.
Ի Մասեաց եւ ՚ի դրախտին վայրս ըզնոսին ճեմեցուցեալ
Ետուր բաղել իմ ձեռօք անդ ըզծաղկունս հայրենահոտ
Նազելի զորդւոյդ շիրմաւ զայս անթառամ հիւսել պըսակ.
Որ անշուշտ քան զմահարձանս և զհոյակապ կրճեայ տաճարս
Կանգնեցեր զգրչիւով նորին անմահական յիշատակ։
Ինձ այսպէս բախտ մեծ եհաս քեւ անդրանիկ զերկոյս պըտուղ
Ի ծառոյս աճեալ ՚ի ջուր եւ հող երկրին Վասպուրական
Նըւիրել մանկտւոյն Հայոց առ այս ճաշակ ախորժողացն։
Այսպէս և դու երջանիկ եղեր անանց յիշատակաւս
Կենդանի եւ ՚ի մահուն մընալ ոգւով երգոյս անմահ։

ՀԵՂԻՆԱԿՆ»։

Այս ուղերձի երրորդ տողին մէջ, հեղինակը պարզ կերպով կը յայտնէ, որ Մեկենասը — Յովհաննէս Աղան — «տրուպ աշակերտ» Մկրտիչ Վարժապետ Խրիմեանէն խնդրած էր «երգել զվայրացըն հայրենի»։

«Հրաւիրակ Արարատեան»ի Ցառաջաբանի առաջին հատուածը, խոնարհ և համեստ հեղինակի պարզ և անկեղծ խոստովանութիւնն է.

«Ի դժուարին գործս՝ որ միայն հանճարաւորացն և ճարտարագունից պահի, արդարև յանդգնութիւն է յոյժ տկարագունին ՚ի բանս եւ անվարժելոյն յարուեստս, չճանաչելով զոյժ և զկար իւրում մտաց և առ ոտն զարուեստին օրէնս տապալեալ՝ ձեռնամուխ լինի», (էջ՝ 9)։

«Հրաւիրակ Արարատեան»ի հեղինակը երեք դրդապատճառ նկատի ունեցած է, իւր այս երկասիրութիւնը գրելու ժամանակ.

«Ընդ այս ձեռնտուիթիւն՝ երեք ինչ շարժառիթք եղեն մեզ առ այս. Սէր հայրենեաց, յորդոր և երախտիք Բարերարին, և օրինակ Մեծահանճար Քերթողին Բագրատունի» (էջ՝ 10)։

Առաջին շարժառիթը «Սէր հայրենեաց»ն է.

«Զօրութիւն սիրոյ հայրենեաց այնչափ բռնացաւ յիմ վերայ, մինչև հան և յափշտակեաց յինէն ՚ի պա՛տդիս ոելոյս զոդիս իմ և

սիրտ և տարաւ այսպիսեօք, ի հայրենին, և անդ 'ի ցանկալի վայրս նորին ճեմեցուցեալ՝ զիս շատ լացոյց. և ի տեղիսն, յորում արտասուեցին իմ աչք և քոյդ արտասուելոց են, ով ընթերցող, եթէ և դու իբրև զիս ըմբռնիցիս նոյն կապանօք սիրոյ հայրենեացն և քո սիրտ և ոգին 'ի քէն հլցեն և ընդ իմոյն գնայցեն անդր։ Բայց ես աղաչեցի զսէրն այն զիս միայնակ չվարել. այլև ընդիս զհամօրէն մանկունս Արարատեան աշխարհին, որ զատեալք 'ի մայրենի ծոցոյն՝ ցան և ցիր կան ընդ քառանկիւն կողմունս տիեզերաց և կարօտ են իբրև զիս և նորին դիմաց հայրենւոյն» (էջ՝ 10)։

Երկրորդ շարժառիթը հեղինակի բարերար—Մեկենասի «երախտիքն և յորդոր»ն է.

«Իսկ երախտիք և յորդոր Բարերարին իմոյ՝ այն եղև մեզ. զի ժողովեաց զօտարս առ շրով իւրում թևոց և այնչափ սիրեաց և դիւրութիւն ետ, մինչև մոռանալ պանդխտելոյս զնժդեհութեանն թշուառութիւն և բանալ զիւր վշտօք լուեցեալ լեզուն 'ի յերգ և երգել զայս զօրէն թռչնոյ նստեալ 'ի վերայ հանգուցիչ նորին ոստոց։ Այսպիսում բարերարի և պաշտպանողի, զինչ փոխարէն վայել էր հատուցանել, ասացէք, որ ճանաչել փութայք զերախտագիտութիւն, եթէ ոչ զայս միայն, 'ի պսակել և հիւսել զնորին անուն ընդ այլ Մեկենասացն դաս և ցուցանել զնորա ոգւոյն հայրենասիրութեան չափ, որ ինեւ ոչ միայն զորդեական դաստիարակել կամեցաւ. այլ և այսու զբոլոր մանկտիս Թորգոմեան 'ի հայրենասիրութիւն վառել» (էջ՝ 11)։

Եւ վերջապէս ահա և երրորդ շարժառիթը.

«Եւ առ այս, նախաշաւիղ ընթացող եղև առաջի մեր նոյն Հայկական տաղաչափութեան հմուտ և սիրող ոգին, և ուսոյց զայս ընար ընտրել և առնուլ ընդ մեզ զոր. արդարև ընդ հնչեցուցանելն անդ՝ անոյշ թուեցաւ նոցին ականջաց։ ...Եւ մեք, որ ոգւով չափ սիրող գտաք աննախանձարար նորին իրաւացի ընտրողութեան՝ կամեցաք ընդ նմին օժանդակել առ 'ի պնդել զայս հաստատուն և տկար մատամբ մերով ընդ զօրաւորագունէն. զի մի այլևս թուլասցի մինչև 'ի յաւիտեան» (էջ՝ 12)։

«Մնայ մեզ արդ պատասխանել այնոցիկ, որ զուցէ յանկատաբէս զկատարելագոյնն պահանջել կամիցին և բերանով իսկ խոստո-

վանել զԹերութիւն անարուեստ յօրինուածոյս. զի Թերևս ազատ կացուցանեն զմեզ ներողամտութեամբ կաճառք հմտագոյն քննաբանից։ Անշուշտ խորագոյն ևս լինէր, եթէ ընդ ամենայն աշխարհ Հայաստանեայց յայն բոլոր տեղիս շրջիլ այսպիսիօք. որ արժանի էին երդոց և մանաւանդ զսիրտ և զյօժարութիւն մանկտւոյն 'ի հայրենասիրութիւն զարթուցանելոյ» (էջ՝ 12)։

Ցառաջաբանին (էջ՝ 8—14) կը յաջորդէ «Տեղեկութիւն ի վերայ ճոռոգեալ տաղաչափութեան նախնեացն» (էջ՝ 15—30) վերնագրով գլուխը, որով հեղինակը բաւական հմտալից և խղճամիտ կերպով կը ներկայացնէ Հայկական տաղաչափութեան ուսումնասիրութիւնը, օրինակներով և մեր հին մատենագրութենէն ու շարականներէն բերած մէջ բերումներով։ Ի վերջոյ ընթերցողին կը յորդորէ.

«Լեր ուրեմն ոչ միայն սիրող և հաւանող, այլ մանաւանդ հետևող ևս դոյնպիսի պերճ և սքանչելի չափոց նախնական տաղից. և եթէ ըղձալի են քեզ վաղեմի իմաստուն հարցն ոսկեղէն դարուն արձակ շարագիրք՝ առաւել ևս այդոքիկ լիցին, որ իբրու զայնս հարազատ և անդրանիկ են նոցին ազնուական ոգւոց և գիւտք ծրնունդք ամենաբուեստ և հանճարաւոր մտաց» (էջ՝ 30)։

«Հրաւիրակ Արարատեան»ը կը բաժնուի չորս մասի, կամ ինչպէս հեղինակը գրած է՝ ճուագի։ Վանեցի Մկրտիչ Վարժապետ Խրիմեանը, սիրայօժար կերպով կը դառնայ ուղեցոյց - առաջնորդ, կամ հրաւիրակ (հրաւիրող) և աշխարհի ամէն կողմի «ցան և ցիր» Հայ մանուկներն ու պատանիները կ'առաջնորդէ դէպի Հայաստան, որուն կ'ուղղէ այս խօսքերը.

«Առ քեզ արևելեան առ պերճ աշխարհդ Հայաստան
Հրաւիրեմ ըզքոյդ մանկտիս որ արդ 'ի քէն կան հեռացեալ.
Ոյց, գիտեմ, յոյժ կարօտիս որպէս ըզմայր որդիկորոյս
...Առաւել և քան ըզմայրդ քեզ կարօտին և քո մանկունք»։

ԱՌԱՋԻՆ ՆՈՒԱԳ.—Հայրենախօս և ազգասէր Հրաւիրակ-պատուիրակը՝ նոյն ինքն Մկրտիչ Խրիմեանը, կազմ ու պատրաստ էր ճամբայ իյնալու դէպի Արարատեան Աշխարհը։ Հայրենասէր և խանդավառ երիտասարդներու և պատանիներու խումբը կը հետևէր իւր առաջնորդ-Հրաւիրակին, որ—«օտար երկիրքներու տակ ծնած Հա-

յերը կը հրաւիրէ երթալ իրեն հետ այցելել նախահարց երկիրը, սքանչացմամբ դիտել անոր բնական գեղեցկութիւնները ու հինաւուրց յիշատակարանները, պատկառելի աւերակները, որ հոն կը քնանան մոռացութեան մոխիրներու տակ»*)։ Ահա Արարատեան Դաշտը—«Ի վայրըն հրաշարեր, ի դրախտն աղենական զոր տնկեցին Արարչին ձեռք»։ Հայաստանն էր այդ—«Երկիր դրախտավայր»—որուն վրայ երբ Հայ մանուկները ոտք կը կոխեն, Հրաւիրակը ձայն կուտայ անոնց—«Փունջ կապեցէք ի զուարթ ծաղկանցս անուշահոտ»։ Ահա և Արարատ Լեռը,—«Հա երևի Մասեաց գագաթ»։ Ապա երասխը—Մայր Արաքսը, որուն ափերուն մօտիկ «մանկունք յուշիկ յուշիկ» կը շրջագային և կը դիտեն «գեղեցիկ երեսք դաշտաց Այրարատայ», ուր յարութիւն կ'առնեն Հայ աւանդութիւնները, անցեալի փառքերն ու հոյակապ դէմքերը։ Ահա տապանաքարձ լեռն Արարատը, որուն ստորոտներու վրայ Հայ նահապետական ու հովուական կեանքը կը ծփայ և երկրագործներու քրտնալից աշխատանքը կը շողայ արևուն տակ։ «Լայնածիր վայելչավայր Հայոց աշխարհն է այս՝ «յորում Նոյ գերդաստանօք ի տապանէն», «էջ այսր ողջոյն երկրիս ետ»։ Ահա և Ակոռի գիւղը, որ 1840 թուին երկրաշարժով կործանեցաւ, երբ՝ «Ահագին որոտագոչ ձայնիւ գոռաց ներքուստ Մասիս» և «ի յանդընդոց ժայթքեաց անբաւ նիւթ հրաբորբոք», որ «ուխօրէն և մըրրախառն վերուստ ի վայր շառաչելով», «Եւ բախեալ սաստիկ թափով զԱկոռի գիւղըդ տապալեաց»։ Ահա Արարատեան աշխարհի «արդիւնաշատ հողոյն» բերքն ու պարգևները—«Ակաղձուն կարմըրահատ ցորեն», «Այգեաց և պարտիզաց համեղ գինիք և անոյշ միրգք», որոնց համն ու հոտը, անշուշտ, հայրենակարօտ պատանիներուն շատ հաճելի երևցաւ։

«Հրաւիրակ Արարատեան»ի այս Առաջին Նուագը 464 տողերով հիւսուած է։

ԵՐԿՐՈՐԴ ՆՈՒԱԳ.—Մինչև այժմ, մանուկները ու պատանիները, Հրաւիրակի առաջնորդութեամբ շրջագայեցան «ի տեսարանս դաշտաց լերանց և աղբերաց»։ Հրաւիրակը ձայն կուտայ մանուկներուն—«Ոչ հարցէք յինէն, մանկունք, թէ ուր են արդ մեր պերճ քա-

*) Ա. Չօպանեան—Դեմքեր. էջ՝ 116։

ղաքք Արտաշատ, Վաղարշապատ, Անի քաղաք բազմաժողով» ուր են «ազատազգեաց այն մեծ գաւառք Դաբեղեանք և Արեղեանք, Արշարունիք և Հաւնունիք, Գառնի և Բագրեւանդ, Ծաղկոտն, Ոստան, Շիրակ, Վանանդ, և ի մէջ նոցին անթիւ գեղանք աւանք դաստակերտք հուպ առ միմեանս շինեալք 'ի ծոց երկրիս մեծատարած»։

Ահա՝ «ի վեհ արքունաշէն 'ի պանծալին Վաղարշապատ», որ իւր անցեալ փառքերէն զրկուած, այժմ ունի միայն՝ «Զվեհագոյն երկնանըման Կաթուղիկէ Եկեղեցին»՝ Էջմիածին, որուն հիմքերը դիրն՝ «ձեռք Տրդատայ և Գրիգորին»։

Ուղևոր-ուխտաւորներու այս խումբը, հեղինակ-Հրաւիրակի հետ, կը մտնեն Բագրատունեաց Անի մայրաքաղաքը, կը նստին «'ի վերայ աւերակացըն հողաբլուր», ողբերգուն կը պրկէ իւր քնարի լարերը և կը նուագէ։ Անի քաղաքը լեզու կ'առնէ, և «ի խորոց սրտի»՝ ձայն կուտայ Հրաւիրակին—«Ո՞վ յոգի հայրանասէր վառեաց ըզքեզ, ա՛յ ողբերգու», դիւ, որ վաղուց ի վեր ինձմէ հեռացած սիրատուն մանուկներս այցելութեան բերած ես «տառապեալ մօրս»։ Եւ Անի քաղաքը, հառաչանքով ու լացով կը պատմէ իւր անցեալ հոյակապ կեանքի և փառքերու «առաջին չնաշխարհիկ շուք»ը և ապա, իւր անկման և ամայացման՝ «վերջին անշըքութեանց» և ողբալի վախճանի մասին «մեծահառաչ» ողբով մը կը յարէ—«Ես քաղաք բազմորդի այրիացայ լի տըրտմութեամբ»։

Անիի ամբողջ անցեալը, Բագրատունեաց թագաւորութեան դէմքերն ու դէպքերը, ազնուականներու և շինականներու կեանքը, գեղեցկակերտ և մեծավայելուչ տաճարներն ու պալատները, Անիէն գաղթած և կամ գերի տարուած Հայութեան կեանքը, Շիրակի արգաւանդ, բերրի դաշտերու տխուր տեսքը հայլն, բոլորն ալ կը պատկերանան ընթերցողի աչքին առջև։ Ի վերջոյ, Հրաւիրակ-հեղինակը, Անիի բերնով կը հառաչէ—«Մի մոռանայք դուք իսպառ զողորմելի Անի քաղաք, փութացէ՛ք, փութացէ՛ք յայց նըշխարաց այդ մեռցելոց», որովհետև՝ «ահա եկեալ եհաս դար ոսկեղէն բարենըշան, որ ըզքեզ ըստ առաջին նոր նորոգէ դարձեալ 'ի փառս»։

Երկրորդ Նուագը հիւսուած է 687 տողերով։

ԵՐՐՈՐԴ ՆՈՒԱԳ.—Հրաւիրակը իւր հայրենանուէր պատանիներու և մանուկներու խումբը կ'առաջնորդէ դէպի «սուրբ և մայր

կաթուղիկէ եկեղեցին Էջմիածնի», «ի տաճարն աստուածակերտ 'ի մայրըն մեր ամենածին ի վեհ և գերապանծ աթոռ Հայոց Լուսաւորչին»։ Էջմիածնէն կ'երթան «'ի տաճար օրիորդին Հրիփսիմեայ» որուն «քրիստոսակիր մարուր» նշխարներուն համբոյր կուտան, վասնզի Հռիփսիմէ կոյսը «փախաւ յառագաստէն», չը ցանկացաւ Տրդատ «թագաւորին լինել տիկին», այլ յանուն Քրիստոսի՝ «խաչաչարչար» եղաւ։ Կ'երթան Արտաշատը և կը տեսնեն խոր «վիրապն անդընդային դատապարտիցըն պատժարան» ուր ձգուած էր Լուսաւորիչն Հայոց «Գրիգորն անդատապարտ», որուն ձայն կուտայ Հրաւիրակը — «ե'կ 'ի դուրս, Գրիգորիէ, եկ լուսատու խաւարելոց»։ Ահա և Դարանաղեաց Սեպուհ լեռը, «քրքտնաջան մըշակին հանգըստարան»ը, ուր հանգեաւ ի Տէր՝ Հայաստանեայց եկեղեցւոյ անդրանիկ Հայրապետը՝ նոյն ինքն Գրիգոր Լուսաւորիչը, որուն փառքն ու գովքը երգելու համար Հրաւիրակը, իւր քնարը կը լռեցնէ և կը դիմէ «Պլուզ Յովհաննու» և անոր «քաղցրաձայն և անուշ» քընարը հնչեցնել կուտայ։

Ապա կ'երթան «Օշական գիւղն առ շիրիմ երանելոյն Մեսրովպայ լուսաւորչին խաւար մըտաց Հայկեան մանկտւոյդ»։

Հրաւիրակը խորին հիացմունքով կը ձայնէ։

«Այլ ես տրուպ քո աշակերտ ու աշակերտիդ քերթողահօր,
Եւ նըման նըմին այսպէս առ քո շիրմաւ նըստեալ այսօր
Ոչ նորին զկանչիւն ողբոց, այլ զաւետեաց քեզ արդ հընչեմ,
Ո՛վ դըպիր շնորհազրուատ, ով հոգեհրաշ բարուն Մեսրովպ,
Ահա քո այն ոսկեդար կըրկին դարձաւ 'ի Հայաստան»։

Կը մտնեն Աւարայրի ռազմադաշտը, ուր Հրաւիրակը, եղիշէ Պատմագրի վկայութիւններով, մանրամասնօրէն կը պատմէ Վարդանանց ճակատամարտը, Հայ քաջերու անձնազոհութիւնը և հիացումի ու պաշտամունքի ջերմ ու խանդավառ զգացումներով կը հրահրէ իւր ուղեկիցներու սիրտն ու հոգին։

Երրորդ Նուագը հիւսուած է՝ 678 տողերով։

ՉՈՐՐՈՐԴ ՆՈՒԱԳ. — Եւ վերջապէս, Հրաւիրակ-հեղինակ Մկրտիչ Վարժապետ Խրիմեանը, Հայ երիտասարդնորու առջևն ընկած, կը մտենայ Վասպուրականի սահմաններուն և լիասիրտ կը բացականչէ.

«Եկեալ հասի այժմ առ քեզ, ով դու տեղի Ծնընդեան իմոյ,
Դաւառ Վասպուրական և հրաչակեալ քաղաքդ Վան։
Հզքեզ արդ առնում ՚ի յերգ և գեղգեղեմ երկար նուագօք,
Դամ այսպէս ոտիւք ոգւոյս ճեմիմ ՚ի վայրըդ գեղեցիկ.
Դոնէ սակաւ ինչ այսու առից ՚ի քէն զանձուկ սրբտիս»։

Ահա և Վան քաղաքը, որուն արևմուտքը՝ «ծով ծածանի զեփիւռ հոգմով», արևելքը՝ «կան այգեստանք», հարաւը՝ «Եամիրամայ ու Արտամիտու ճոխ բուրաստանք» իսկ հիւսիսը՝ «Աւանուց խիտ ծառատունկք ծովեզերեայ»։ Այս բոլորի մէջտեղը բազմած է՝ «յարմարապէս հրաշակերտեալ Վան վաղաշէն»։ Ահա Քաղաքամէջը իւր «լեռնասարաս յանառիկ բերդ»ով, ահա Այգեստանը իւր լայն փողոցներով, որոնց մէջէն «յբստակաջուր գնան վտակունք դրդըչալով, առուակ առուակ բաժանեալ ոռոգանեն զողջ այգեստանս»։ Վանի Հայութեան պարզ ու նահապետական կեանքը կը պատկերանայ ընթերցողի աչքին առջև՝ տուներէն սկսեալ մինչև այգիները, արտեր, դաշտեր, հնձաններ ևայլն և ամէն տեղ, ժողովուրդի ծոցին մէջ ծնած ու սնած հեղինակի սիրտը կը ծփայ հայրենի սիրով և գրիչը թռիչք կ՚առնէ յորդառատ զգացումներով։

Ահա կը բարձրանան, «՚ի լեառն Վարագայ» ուր Հրաւիրակը «նբստեալ ՚ի գլուխ աղբերըն սառնային» կը բանայ իւր կարօտալից սիրտը և կ՚երգէ «զայն լեառըն սքանչելի»։ Ահա Վարագայ սարի և հովտի գարնանային հիասքանչ բնութիւնը, որուն նկարագրութիւնը այնքան գեղեցիկ, այնքան հարազատ և սրտաբուղխ է, որ ընթերցողը հոգւի թռիչքներով կը սլանայ դէպի Վարագայ սարն ու հովիտը, ուր «ջուրք ծաւալին զրղզրղալով» և կարկաչահոս այդ ջուրերու ափերուն բուսած ծաղիկներէն փունջեր կը կապէ—գինեբուկն անուշահոտ և կապուտափայլ, «շուշանըն երփնափայլ», «մանիշակ մանրաթերթիկ», «կակաչ կարմրաթոյր» և դեռ բազմատեսակ ծաղկունք «գունակ գունակ, ումըն սպիտակ, ումըն կարմիր»։ Վարագայ լերան պատմական ու աւանդական վայրերը, մէկ առ մէկ իրենց դէմքերով ու դէպքերով կը վերակենդանան ընթերցողին առջև և հայրենի լերան լանջերու և ստորոտներու վանքերն ու գիւղերը, նկարիչի վրձինով ՚ի յայտ կուգան։

Հրաւիրակը, իւր ուխտաւոր և հայրենաբաղձ ուղեկիցները կ'առաջնորդէ դէպի Վասպուրականի պատմական ու կրօնական վայրերը— Վարագայ լերան Գալիլիա կատար, Թոդիկ ձգնաւորի այր, Վարագայ վանք, Շուշանց գիւղ, Կարմրաւորի և Ս. Գրիգորի մենաստաններ, Կռունկ վանք, Արտամետ, Հայոց Ձոր, Շամիրամայ ջուր, Ոստան, Առնոսայ սար, Ցիգրիսի ափեր, Հոգւոց վանք, Ռշտունեաց գաւառ, Վանի Ծովի կղզիները՝ Առտէր, Աղթամար և Լիմ ու Կտուց Անապատները՝ և այս բոլորի մասին, հայրենակարօտ Մկրտիչ Խրիմեանի սիրտն է խօսողը՝ հոգին՝ սլացող, գրիչը՝ հիւսող, և լեզուն ու շրթունքները՝ հառաչող ու երգող։

Այսպէս ահա, չորս նուագով կը վերջանայ «Հրաւիրակ Արարատեան»ը, որուն վերջին տողերը (էջ 90) ցոյց կուտան հեղինակի հայրենանուէր և վշտահար սրտի ամբողջ մելանուշ ապրումները։ Թէև ինքը հրաւիրակ դարձեր է և Հայ պատանիներն ու երիտասարդները առած, հոգով-սրտով գացեր պտտեր են Հայաշխարհը, սակայն հեղինակը մրմունջով ու կսկիծով կը հառաչէ.

«Այլ որ 'ի քէն ելեալ դու սըրտիւ գնացեր 'ի հայրենիդ.
Անդ ճեմեր, աւաղ, աստէն 'Բիւզանդիոն հարեր ըզքնարդ,
Անդ ամպեալ ցօղեր արտօսր կաթիլըն իջին յերկիր պանդուխտ.
Անդ լացեր կականալի ձայնիկըդ ել յարևմըտից.
Սակայն ուր ես դու, գիտես, հէք ողբերգակ Արարատեան,
Քեզ թըւի թէ հայրենւոյդ յանուշակ ծոց հանգուցանիս,
Զի այդպէս քոյդ հրաւիրեալ մանկանց լինիս յուղարկաւոր
Զաչսըդ բո բաց, եկ 'ի միտս, ոհ, և դու կաս յօտար աշխարհ»։

Զորրորդ Նուագը հիւսուած է 889 տողերով, իսկ չորս նուագ միասին կը կազմեն 2518 տող։

«Ծանօթութիւնք» գլուխը (էջ՝ 91—96) երկսիւնակ և մանրատառ՝ կամփոփէ 65 ծանօթութիւններ, որոնց մէջ 'ի յայտ կուգան, անձեր, դէպքեր, տովորութիւններ և զանազան լրացուցիչ տեղեկութիւնները, որոնք ոևէ կերպով չիշատակուած են չորս նուագներու մէջ։

«Հրաւիրակ Արարատեան»ի այս առաջին տպագրութիւնը շատ մաքուր և խնամուած գործ է, թուղթը դեղնաւուն և դիմացկուն, մեծադիր և տպաւորիչ։

«Հրաւիրակ Արարատեան»ի երեւումը, Կ. Պոլսոյ գրական և ուսումնական շրջաններու մէջ, շատ վառ հետաքրքրութիւն առաջ բերաւ։ Ընթերցողները կը փափագէին անձամբ ծանօթանալ հեղինակին հետ, որ ամէն կողմէ բարոյական և նիւթական քաջալերանքներու կ'արժանանար։ Կ. Պոլսոյ ժամանակակից մամուլն անգամ մատենախօսական յօդուածներ կը գրէր «Հրաւիրակ Արարատեան»ի մասին։

Յովհաննէս Տէրոյենց Պատուելի Ջամուրճեանի խմբագրութեամբ հրատարակուող «Հայաստան» շաբաթաթերթը (1850, թիւ 35) հետեւեալը կը գրէր Մկրտիչ Խրիմեանի այս անդրանիկ երկի մասին.

«Ուսումնասէր հեղինակին անունը արդէն ծանօթ է Բազմավէպ ամսօրեայ տետրակները կարդացողներուն, որուն մէջ մէկ ոտանաւոր գովեստը (տպա)գրուած է առ Հ. Արսէն Վ. Բագրատունի, նախնեաց ոտանաւորները նորոգելուն և անոնց մինչև հիմայ գաղտնի մնացած չափերը երեան հանելուն համար։ Այս գրոցս սկիզբն ալ տեղեկութեանցը մէջը, հեղինակը նոյն Հ. Արսէնին Վիրգիլեայ Մշակականներուն սկիզբը նոյն նիւթոյն վրայ գրած վարդապետութիւնները կը քաղէ, և ինքն ալ ամբողջ գրքին մէջ այն ճամբովը կ'երթայ։ Այս կերպ ոտանաւորներով ազգը բանաստեղծական եռանդով մը 'ի հայրենասիրութիւն և յազգասիրութիւն կը յորդորէ։ Հեղինակը բնիկ Հայաստանցի ըլլալով՝ գործոյն մէջն ալ ազգային անգիր աւանդութիւններ կը դնէ, որով թէ բանասիրաց, թէ հնասիրաց և թէ ազգասիրաց ընդունելութեան արժանի գիրք մըն է»։

Ջմիւռնիոյ մէջ, վաստակաւոր խմբագիր Ղուկաս Պալթազարեանը, իւր «Արեւելեան Աստղ» շաբաթաթերթով (1850, թ. 376) գնահատական տողեր կ'ուղղէր «Հրաւիրակ Արարատեան»ին և հեղինակին։

Մեզ համար անյայտ է, թէ «Հրաւիրակ Արարատեան»ը քանի՞ հարիւր (կամ հազար) օրինակ տպագրուեցաւ, կամ որքա՞ն ժամանակի մէջ սպառեցաւ, սակայն պարզ է, որ Մկրտիչ Վարժապետ Խրիմեանի գրական տաղանդը յայտնագործող այդ անդրանիկ երկը, ոչ միայն շատ տարածուեցաւ Կ. Պոլսոյ, այլև ամբողջ Հայաստանի, Կովկասի, Հնդկաստանի, Պարսկաստանի և ուրիշ հայաշատ կեդրոններու և գաղութներու մէջ։

Հեղինակը իւր այս երկասիրութենէն 50 օրինակ ուղարկեց Վան և իւր եղբայր Մսրխանի ձեռքով նուիրեց՝ վանքերուն, քա-

հանաներուն, ազգականներուն և իւր մտերիմ ընկերներուն։

Մկրտիչ Խրիմեանի գրական համբաւն արդէն լայն ժողովրդականութիւն գտած էր և նա «Հրաւիրակ Արարատեան»ով, իւր վրայ հրաւիրած էր ժամանակակից գրական և ազգային գործիչներու ուշադրութիւնը։ Կ. Պոլսոյ ամիրայական և բարձր գերդաստանները մասնաւոր յարգանք կ'ընծայէին Հայաստանցի Վարժապետին, որու հայրենասիրութեան և հայրենախօս գրչի վրայ հիացած էր մանաւանդ Օտեան գերդաստանի գլխաւորը՝ ազգասէր Պօղոս Ամիրան, որ իւր բարոյական և նիւթական քաջալերութեամբ կը դառնայ Մկրտիչ Խրիմեանի հովանաւորներէն մէկը։

## ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՈՒԽՏԱՒՈՐԸ

Հայրենիքի և ազգի վառ սիրոյ և ջերմ զգացումներու հետ, Մկրտիչ Վարժապետ Խրիմեանի սիրտն ու հոգին կը տոգորուէին հոգևոր և կրօնական ապրումներով. Ջէ որ կրօնա-բարոյական դաստիարակութիւնը խոր դրոշմ դրած էր անոր նկարագրին վրայ. Հայաստանի պատմական վայրերն ու Հայութեան նախկին փառքերը հրահրած էին անոր ազգային ու հայրենասիրական զգացումները, իսկ սրբատեղիները, ուխտավայրերը և կրօնական մեծ կեդրոնները, իրենց խորհուրդ խորքին անցեալով, Հայ հաւատքի և պաշտամունքի նուիրական յիշատակներով շատ խոր ազդեցութիւն թողած էին Մկրտիչ Խրիմեանի վրայ։

Հայութեան հոգևոր մեծ կեդրոնը՝ Մայր Աթոռ Էջմիածինը և բազմաթիւ վանքերն ու սրբավայրերը տեսած Մկրտիչ Վարժապետի սիրտն ու հոգին լեցուած էին անհուն փափագով մը, որպէս զի ուխտի երթար ու տեսնէր նաև Քրիստոնէութեան մեծ ուխտավայրն ու կեդրոնը — Երուսաղէմը։

Մկրտիչ Վարժապետը հաստատապէս կ'որոշէ ուխտի երթալ Երուսաղէմ։ Արդեօք ճամբու ծախք ունէր, «Հրաւիրակ Արարատեան»ի վաճառման արդիւնքէն շօշափելի գումար մը կար իւր քով, թէ ոչ, չը գիտենք, սակայն պարզ է, որ երբ նա, Երուսաղէմ ուխտի երթալու իւր փափագը կը յայտնէ Պօղոս Ամիրա Օտեանին, վերջինս

իճճաբեւաբար կ'ըսէ թէ—«Վարժապետ դուն գնա, փափագդ առ, ճամբուդ ամբողջ ծախսերը ես կը հոգամ»։

Դէպի Երուսաղէմ, իւր այս անդրանիկ ուխտագնացութեան մասին, Մկրտիչ Խրիմեանը հետեւեալը կը գրէ։

«Մինչդեռ մանուկ երիտասարդ էի, մարմնով առոյգ և հոգւով զուարթ, անձամբ անձին գօտի ածէի և երթայի յո՛ և կամէի։ երանի՛ տամ այն աւուրն, յորս կեանք զուարթածաղիկ առաւօտ էր։ Պանդուխտ էի և նշդեհ. զի անողոք ճակատագիր և զիս վարեալ էր յօտարութիւն, բախտակից առնելով ընդ հայրենածին զաւակս։

«Որպէս՝ի բազում, նոյնպէս և յիս զօրացաւ այն սուրբ ցանկութիւն, տեսանել զԵրուսաղէմ, զաշխարհ Փրկչին մերոյ, յորում լոյսն ազաւ, բանն մարմին եղև հրաշապէս և բնակեցաւ ընդ մարդիկ։ Աչօք իսկ տեսանել զԽանձարուրն և զՄսուրն, յոր եդաւ Մանուկն Յիսուս։

«...Ես հաւատամ, թող երկմիտն տատանի, թէ Աստուած է որ յայղողէ զամենայն յամենայնի և ինձ ցանկացողիս յայղողեաց՝ի հազար ուրէ հարիւր յիսուն ամի Փրկչին, եւի և գտի զցանկալին Երուսաղէմ, երկրպագի ամենայն հրաշավայր Ս. Տեղացն»*)։

Ջերմեռանդ ուխտաւորն արդէն հասեր է Երուսաղէմ։

Երուսաղէմի Հայոց մայրավանքի միաբանութիւնը ջերմ սիրով կը հիւրընկալէ Հայաստանցի ուխտաւոր-վարժապետը, որ ոտքով շրջագայելու կ'ելլէ Երուսաղէմի սրբավայրերը—Նազարէթ, Բեթլէհէմ, Յորդանան, Լեառն Փորձութեան, Տիբերական ծով, Լեառն Թափօրական, Բեթանիա, Երուսաղէմ քաղաք, Սիօն Վերնատուն, Գեթսեմանի ձորն ու պարտէզ, Պիղատոսի պալատ, Գողգոթա, Պատանատեղ, Յիսուսի Գերեզման, Լեառն Ձիթենեաց, և նման Յիսուսաւանդ ուխտավայրեր, որոնք խոր տպաւորութիւն և կրօնական ու հոգևոր այնքան ջերմ զգացումներ և քրիստոնէական ապրումներ կը յառաջացնեն Մկրտիչ Խրիմեանի սրտին մէջ, որ նաեայդ թարմ և վառ զգացումներով տոգորուած «՛ի փոքու սենեկին ամփոփեալ ծուարեալ» կը ձեռնարկէ ի գիր առնել իւր Երուսաղէմական տպաւորութիւնները։

---

*) Խրիմեան Հայրիկ. Հրաւիրակ Երկրին Աւետեաց. Բ. Տպագրութիւն. Երուսաղէմ. ի Տպարանի Առաքելական Աթոռոյ Սրբոյ Յակովբեանց. 1892. էջ՝ Թ։

# ՀԱՅՈՑ ՀԱՅՐԻԿ

## ՉՈՐՐՈՐԴ ՏԱՍՆԱՄԵԱԿ

## 1850—1860

### Ա.

### „ՀՐԱՒԻՐԱԿ ԵՐԿՐԻՆ ԱՒԵՏԵԱՑ“



այաստանի Հրաւիրակ Մկրտիչ. Վարժապետ Խրիմեանը, Երուսաղէմ հասնելէ յետոյ, կը դառնայ, Աւետեաց Երկրին (Երուսաղէմի) Հրաւիրակը, որուն վրայ խոր տպաւորութիւն թողած էր Երուսաղէմի Հայոց Մայրավանքի միաբանութեան սրտբաց և սիրալիր ընդունելութիւնը։

«Աւ հովանեօք սուրբ Յակովբեանց Հայոց մեծահռչակ Աթոռոյն օթևանեցայ և զիս բախտաւոր համարեցի, զի վիճակեցաւ ինձ փոքրըկանս մի փոքրիկ սենեակ, շինեալ առանձին 'ի վերայ տանեաց և հայէը դուռն ընդ արևելս 'ի լեառն Զիթհնեաց։ Նախագուշակ էր արդեօք սենեակն այն. թէ տիրացու Մկրտիչն՝ վարդապետ լինելոց է. զի բնակեցայ ես թաղն և 'ի շարս միաբանական դասուն»։

Աւետեաց Երկրի—Երուսաղէմի—ամբողջ աստուածաշնչական և աւետարանական վայրերը տեսնելէ յետոյ, Մկրտիչ Վարժապետը, կրօնական և հոգևոր բարձրաթռիչ զգացումներով առլցուն, կ'առանձնանար պարզ ու անպաճոյճ վանական մենարանին մէջ և կըսկսէր ի գիր առնել իւր հոգեշունչ տպաւորութիւնները. և ահա՝

«Ցաւուր միում մինչ պարապէի և ձայնարկեալ եղանակաւ երգէի և գրէի, զի առանց երգելոյ երգ հոգի չունի. եկն եկեաց առաջի դրան սենեկին (հանգուցեալ) Տէր Յովհաննէս մեծագործ Պատ-

բիաբքն. Զայնդ առի,—ասաց,—տիրացու Մկրտիչ, զինչ երգես և գրես.— Ցէք Սրբազան, ասացի, զՀրաւիրակն Աւետեաց երկրին, գրեմ. զով հրաւիրես, ասաց. զմանկունս և զժողովուրդս Հայոց հրաւիրեմ, Ցէք հոգւոր. Գրեա, գրեա, օրհնեալ լինիս, Հրաւէր կարդա, թող յուխտ գան Հայոց ջերմեռանդ ժողովուրդ»*), կը յարէ Յովհաննէս Պատրիարքն ու կը հեռանայ, իսկ Տիրացու Մկրտիչը կը շարունակէ իր աշխատանքը, որուն արդիւնքը կ'ըլլար ձեռագիր մեծ տետրակ մը։

Թէ որքան ատեն, Մկրտիչ Խրիմեանը մնաց Յերուսաղէմ, չը գիտենք, բայց պարզ է, որ 1851 թուի սկիզբները, նա արդէն վերադարձեր էր Կ. Պոլիս։—«Իսկ ես յետ աւարտելոյ զերկ Հրաւիրակիս՝ դարձայ 'ի Բիւզանդիոն», կը գրէ հեղինակը. Մայրաքաղաքը հասնելէ յետոյ, Երուսաղէմի Հրաւիրակը, իր ձեռագիր երկը ցոյց կուտայ և կը կարդայ գրասէրներուն և բարեկամներուն, որոնք բոլորն ալ կը գնահատեն այդ երկասիրութիւնը, որ կը կոչուէր «Հրաւիրակ Երկրին Աւետեաց». Քանի մը ազգասէր և անուանի հայեր, ցանկութիւն յայտնեցին իրենց ծախքով հրատարակել այդ ձեռագիր աշխատանքը։

«Հրաւիրակ Արարատեան»ի հեղինակը, այնքան սիրուած ու յարգուած էր, որ շատերը կ'ուզէին իրենց բարոյական և նիւթական քաջալերութիւնը ցոյց տալ անոր, որ աւելի խրախուսուէր և գրական երկասիրութիւններ արտադրէր։

Եւ վերջապէս, 1851 թուի գարնան, Մկրտիչ Վարժապետ Խրիմեանի «Հրաւիրակ Երկրին Աւետեաց» երկը, տպագրութեան կը յանձնուէր Յովհաննէս Միւէնտիսեանի տպարանին և կարճ ժամանակէ մը յետոյ, լոյս կը տեսնէր հեղինակի երկրորդ գրական աշխատասիրութիւնը.

«ՀՐԱՒԻՐԱԿ ԵՐԿՐԻՆ ԱՒԵՏԵԱՑ. Յօրինեալ 'ի նոյն չափս հայկականս ի Մկրտչէ Խրիմեան Վանեցւոյ։ Սրբոյ քաղաքին Երուսաղեմ վայրէն փափագող վեհ և հեղանձն աստուածասիրի ուրուն հայցեալ ի լոյս։

չի Հայրապետութեան... եւայլն (նման *Հրաւիրակ Արարատեանի* Ա.

*) Խրիմեան Հայրիկ. Հրաւիրակ Երկրին Աւետեաց. Բ. Տպագր. էջ՝ Ժ.

տպագրութեան)։ Ի Կոստանդնուպոլիս. ի Տպարանի Ցովհաննու Միւհենթխանե. 1851—Ռճ». (Մեծադիր էջ 143) *)։

Սակայն, ո՛վ էր «Հրաւիրակ Երկրին Աւետեաց»ի հրատարակիչը, որուն անունն անյայտ կը մնար։ Այդ հրատարակիչը Արքունի ճարտարապետ Կարապետ Ամիրայ Պալեանն**) էր— «Որբոյ քաղաքին (Երուսաղէմի) քրիստոսաճեմ վայրից փափագող վեհ և հեզանձն» «աստուածասէր» Հայը, որուն խնդրանքով, «բարերար ձեռնտուութեամբ» և «արդեամբք նորին ճշմարիտ ազգասիրութեան» լոյս կը տեսնէր «Հրաւիրակ Երկրին Աւետեաց»ը։

Մկրտիչ Խրիմեանի այս կրօնաշունչ երկի բովանդակութիւնը շատ պարզ ու որոշ է։ Ճշմարիտ քրիստոնեայի և ջերմեռանդ հաւատացեալի մը հոգեկան և կրօնական առատահոս զգացումներու շտեմարանն է «Հրաւիրակ Երկրին Աւետեաց»ը, որուն մէջ ի յայտ կուգայ նաև հեղինակին աստուածաշնչական հմտութիւնը։ «Հրաւիրակ Երկրին Աւետեաց»ի ընթերցողը երբ կը սկսի կարդալ «Ծրագ Առաջին»ը, իսկոյն, բնական թռիչքով մը, կը սլանայ դէպի մեր Ոսկեդարեան և ասոր յաջորդող դարերու կրօնական և դասական մատենագրութեան շրջանները և կը զգայ, որ հեղինակը քրիստոնէական պաշտամունքի գերազանց մարմնացումը կը հանդիսանայ, իւր վերին աստիճանի հարազատ և հոգեշունչ զգացումներով։

Աւետեաց Երկրի Հրաւիրակ-հեղինակը նստեր է Երուսաղէմ և հեռուէ հեռու, հրաւէր կը կարդայ, որ Հայ մանուկներն ու երիտասարդները երթան Երուսաղէմ և տեսնեն «քրիստոսաճեմ» սուրբ վայրերը։ Յիսուսի ամբողջ կեանքը, պարզ ու պայծառ կերպով, եօթն եղգերով (գլուխ), կը պատկերանայ ընթերցողի աչքին առջև։ Կրօնական և հոգևոր ապրումներն այնքան ուժեղ և ցայտուն կերպով ի յայտ կուգան այս գրքին մէջ, որ կարծես, թէ միջնադարեան Հայ

*) «Հրաւիրակ Երկրին Աւետեաց»ի մասին մատենախօսական յօդուած մը հրատարակած է Ղուկաս Պալթազարեանը, իւր «Արշալոյս Արարատեան» շաբաթաթերթին մէջ. (Զմիւռնիա. 1852. թիւ 410)։

**) «Հրաւիրակ Երկրին Աւետեաց»ի այս առաջին տպագրութենէն քառասուն մէկ տարի յետոյ, 1892 թուին, Երուսաղէմի մէջ, արտօրական Խրիմեան Հայրիկը, լոյս ընծայեց «Հրաւիրակ Երկրին Աւետեաց»ի Բ. տպագրութիւնը, որուն յառաջաբանի մէջ (Նախաշաւիղ) հեղինակը կը գրէ.—«Ինչ եռ յետ աւար-

մենակեաց ճգնաւորի մը, կամ աշխարհուրաց կրօնաւորի մը հոգեկան աշխարհը կը պարզէ մեր աչքին առջև. Մինչդեռ «Հրաւիրակ Երկրին Աւետեաց»ի հեղինակը, ամուսնացած աշխարհական մըն էր, երեսուն տարեկան վաւղուն երիտասարդ մը, որուն սիրտն ու հոգին կը փոթորկուէին ոչ միայն հայրենիքի մշտավառ սիրով ու կարօտով, այլև հոգևոր ու միստիք կեանքի, սրտաբուղխ հաւատքի և ջերմեռանդ հաւատացեալի մը մեղանուշ մրմունջներով.

Այս պայծառ երևոյթներն էին ահա, որ պատճառ դարձան «Հրաւիրակ Երկրին Աւետեաց»ի ջերմ ընդունելութեան և տարածման, երբ դեռ հոգևոր գրականութիւնն էր, որ մտաւոր սնունդ կուտար Հայ ազգին: Մխիթարեան զոյգ միաբանութիւնները, Երուսաղէմ, Թիֆլիս, Կ. Պոլիս, Զմիւռնիան Հայ մտքի կեդրոնները էին, որոնք ոչ միայն ազգային պատմութեան և մատենագրութեան յայտնի և անյայտ երկերը կը հրատարակէին, այլև, մեծաքանակ կրօնական և հոգևոր գիրքեր, որոնց մէջ իւր արժանի տեղը կը գրաւէր նաև «Հրաւիրակ Երկրին Աւետեաց»ը.

Մկրտիչ Խրիմեանը, Երուսաղէմ հասնելէ յետոյ, ցանկութիւն ունեցած էր այնտեղ ևս ուսում և դաստիարակութիւն ստանալ, սակայն Երուսաղէմի Հայոց Մայրավանքին մէջ, «Սիոնի բարձրունքին վրայ չը կար մտաւորական այն բարձրութիւնը, որուն ծարաւը ունէը իր օժտած հոգին. և յետոյ, ժողովրդական և ազգային կեանքի յուզումներէն չափազանց մեկուսի մնացած այդ մենաստանը չէը կրնար յագուրդ տալ այլապէս կաղապարուած իր ճաշակներուն»*).

Ահա թէ ինչու Մկրտիչ Խրիմեանը, շուտով հեռացաւ Երուսաղէմէն և եկաւ Կ. Պոլիս, որ իր հոգեկան ու մտաւոր թռիչքներուն աւելի յարմար ու սիրելի միջավայր մըն էր.

«Հրաւիրակ Արարատեան»ն ու «Հրաւիրակ Երկրին Աւետեաց»ը

---

տելոյ զերկ Հրաւիրակիս՝ դարձայ ՚ի Բիւզանդիոն, ուր բարեբար ձեռնտուութեամբ Պալեան ձարտարապետ Կարապետ Ամիրային տպագրեալ ՚ի լոյս հանի ՋՀՐԱՒԻՐԱԿ ԵՐԿՐԻՆ ԱՒԵՏԵԱՑ: Այժմ կրկնակի տպագրութեան պատեհութիւնն՝ առիթ ետ ինձ ՚ի լոյս հանել և յայտնել զծածկեալ անուն բարեբարին»:

Ուրեմն ամբողջ քառասուն մէկ տարի (1851—1892) յայտնի չ'էը թէ ով էը այն անձը, որ հրատարակած էը «Հրաւիրակ Երկրին Աւետեաց»ը,

*) Թ. Ե. Տ. Խրիմեան Հայրիկ. էջ՝ 20:

կուգային գրական համբաւ մը ստեղծելու Մկրտիչ Վարժապետ Խրիմեանի անուան ու անձին շուրջ։ Առաջինը կ'արձանացնէր անոր ազգասիրութիւնն ու հայրենասիրութիւնը, իսկ երկրորդը՝ կը պարզէր անոր ջերմ հաւատքը և Հայ լուսաւորչականի հարազատ սիրտն ու հոգին։ Ազգի և հայրենիքի սէրը և դէպի կրօնն ունեցած իւր խոր պաշտամունքը բաւական էին, որ նա իւր միջավայրի մէջ, ճանչցուէր իբրև կատարեալ մարդ և ճշմարիտ Հայ։ Անոր այդ առաքինութիւններն ու առաւելութիւնները կուգային իրար զուգորդուիլ, և զայն ներկայացնել իբրև մատաղ սերունդի արժանաւոր ու վստահելի դաստիարակ մը։ Նման դաստիարակները ոչ միայն գաւառներու, այլև մայրաքաղաքին մէջ հազուագիւտ էին և այդ հազուագիւտ բացառութիւններէն մէկն ալ Մկրտիչ Վարժապետ Խրիմեանն էր։

## Բ.

## ՄԿՐՏԻՉ ՎԱՐԺԱՊԵՏ ԽՐԻՄԵԱՆՆ Ի ԿԻԼԻԿԻԱ

Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարքարանը, Ազգային մարմինները և ազգասէր անհատները, ԺԹ-րդ դարի կէսին, մասնաւոր ուշադրութիւն դարձուցին Կիլիկիաբնակ Հայոց կրթական ու մտաւոր զարգացման գործի վրայ։ Ռուբինեանց թագաւորութեան այդ հոյակապ երկիրը, դարեր շարունակ անուշադրութեան և մոռացութեան մատնուած էր։ Ամբողջ Կիլիկիայի մէջ, միայն անառիկ և քաջարի Զէյթունն էր, որ պարբերաբար ապստամբութեան դրօշը կը պարզէր տաճկական արիւնոտ լուծին դէմ և յաճախ կը վաստակէր ցաղթանակը և կ'ապրէր կիսանկախ վիճակ մը։

Կիլիկիայի Կաթուղիկոսութիւնը բարոյական մեծ հեղինակութիւն և նիւթական միջոցներ չ'ունէր իւր թեմականներու մտաւոր և կրթական մակարդակը զարգացնելու համար։

ԺԹ-րդ դարի առաջին կէսին, երբ ամբողջ քաղաքակիրթ աշխարհը կը դարբնէր մարդկային մտքի վերածնունդը, երբ գիտութիւնն ու գրականութիւնը նոր ուղիներ կը հարթէին, երբ 1848 թուի ֆրանսական յեղափոխութեան արձագանգները կը թնդացընէին ազատատենչ փոքր ազգերու սիրտն ու հոգին, այդ ատեններն էր ահա, որ կը դարբնուէր Հայկական Վերածնունդը թէ Ռուսաս-

տանի և թէ Թուրքիոյ մէջ։ Ազատ և անկախ հայրենիքի գաղափարը, մտաւոր և կրթական դաստիարակութեան կենսական պահանջը, ազգային հարազատ դիմագծի պայծառ տեսքը, գրականութեան, մամուլի և դպրոցի, բարեգործական ու հանրօգուտ ձեռնարկներու անմիջական անհրաժեշտութիւնը, այնքան արագաբար կազմակերպուեցան Հայութեան երկու մեծ հատուածներու—արևելահայոց և արևմտահայոց — մէջ, որ ազգային և հանրային իւրաքանչիւր մարմին կամ հիմնարկութիւնը, այլև ընտրեալ և անձնուէր ազգային գործիչները և անհատներ հրապարակ կուգային՝ իրենց ծառայութիւնը մատուցանելու յօգուտ ազգին ու հայրենիքին։


Ահա այս վերածնութեան շրջանի վառ օրերու մէջն էր, երբ Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարքարանը կ'որոշէ խոհուն և զարգացած պատգամաւոր մը ուղարկել Կիլիկիա, ուսումնասիրելու համար տեղւոյն Հայութեան կացութիւնը և ի պահանջել հարկին նաև Սիս քաղաքին մէջ դպրոց մը բանալ։

Եւ ահա, Պատրիարքարանի յանձնարարութեամբ, 1852 թուին, Մկրտիչ Վարժապետ Խրիմեանը կ'ուղարկուի Կիլիկիա իբր այցելու, տեղեկագրող և դաստիարակ։

Կիլիկիա՜... Հայաստանի պատմական ու պատուական այդ չքնաղ երկրամասը, իւր բազմահազար Հայ բնակչութեամբ, որքան խոր տպաւորութիւն և յուզմունք պատճառեցին արդեօք, երիտասարդ ուղեւոր-այցելու Մկրտիչ Խրիմեանին, որուն աչքին առջև կը պարզուէր երկիր մը, իւր փառաւոր անցեալի հոյակապ յիշատակներով և անառիկ ու անյաղթ բերդ-ամրոցներով։ Որպիսի՜ յուզում և վիշտ զգաց Հայաստանի այս հայրենախօս ճամբորդը, երբ ոտքը Կիլիկիայի հողին վրայ դրաւ։ Չէ՞ որ հիմայ ալ Կիլիկիայի Հրաւէրքն էր։

Մկրտիչ Խրիմեանը կը հասնէր Սիս, Կիլիկիայի հայկական թագաւորութեան այդ երբեմնի հոյակապ մայրաքաղաքը, որ իր քաղաքական անկախութենէն զրկուելէ յետոյ, դարձաւ Կիլիկիայի Հայ Կաթուղիկոսներու աթոռանիստ քաղաքը, մինչև մեր օրերը։ Սիս հասնելէ յետոյ, Մկրտիչ Խրիմեանը, ներկայացաւ Կիլիկիայի այն

ատենուայ Կաթուղիկոս Միքայէլ Սսեցիին*) և յայտնեց իւր առաքելութեան նպատակը։ Կաթուղիկոսը սիրով ընդունեց զայն, լսեց անոր կատարելիք գործերու մանրամասնութիւնները և բարոյական ու նիւթական ամէն տեսակ աջակցութիւն ցոյց տուաւ Մկրտիչ Խրիմեանին, որ առաջին առթիւ, շրջագայութեան գնաց Կիլիկիայի հայաբնակ քաղաքներն ու գիւղերը և լիակատար տեղեկագիր մը կազմեց, այդ վայրերու Հայութեան կրօնական, կրթական և տնտեսական կեանքի մասին։ Կիլիկիայի Կաթուղիկոսի խնդրանքով, Մկրտիչ Վարժապետ Խրիմեանը Սիս քաղաքի Հայոց Մայրավանքի վա-



ՍԻՍ ՔԱՂԱՔԸ Ի ԳԻՂԻԿԻԱ

նական դպրոցին մէջ կը ստանձնէր դաստիարակի պաշտօն և կարճ ժամանակի մ'ընթացքին կը բարեզարդէր այդ դպրոցի ներքին և

*) Գ. Գոլսոյ «Արեւելք» օրագրի մէջ (1885), *Աշակերտ ստորագրութեամբ* գրուած Խրիմեան Հայրիկի կենսագրութեան և Խ. Մալումեանի «Խրիմեան» գրքի մէջ՝ կը յիշատակուի, որ երբ Խրիմեանը Սիս հասաւ, այն ատենուայ Կիլիկիայի Կաթուղիկոսն էր Գիրակոս Աջապահեանցը։ Մինչդեռ սխալ է, վասնզի Գիրակոս Աջապահեանցը գահակալեց, 1853—1866, իսկ անկէ առաջ Միքայէլ Սսեցին էր, որ գահակալեց 1833—1853։ Գիրակոս Կաթուղիկոսի գահակալութենէն տարի մ'առաջ 1852 թուին էր, որ Մկրտիչ Խրիմեանը կը հասնէր Կիլիկիա և կը ներկայանար Միքայէլ Սսեցի Կաթուղիկոսին։

կրթական վիճակը։ Անոր ներկայութիւնն ի Սիս, դրական շատ մը արդիւնքներ տուաւ տեղւոյն Հայութեան, որ անչափ գոհ մնացեր էր «Վանեցի Վարժապետ»էն։

Հազիւ տարի մը Կիլիկիայի մէջ գործելէ յետոյ, «Խրիմեան կը վերադառնայ Կ. Պոլիս, ի Կիլիկիա այցելութիւնը գոհացուցիչ էր գաւառին և Առաքողներուն ու Առաքեալին» կ'ըսէ անոր կենսագիրը Աշակերտը, իսկ Խ. Մալումեանը կը գրէ, որ— «Սկզբում նրա գործերը աջող գնացին, բայց երկար չանցած Խրիմեանի յարաբերութիւնները լարվեցին Սիսի այն ժամանակվայ Կիրակոս Կաթուղիկոսի հետ, և նա ստիպվեց թողնել Կիլիկիան և վերադառնալ Կ. Պոլիս»։ Թորգոմ Եպիս. Գուշակեանն ալ կ'եզրակացնէ, որ Խրիմեանը— «տեղեկաբերի կարևոր պարտականութիւններով է, որ ղրկուած էր հոն» (Կիլիկիա)։ Արշակ Չօպանեանը կը յիշատակէ, որ— «Խրիմեան մեկնեցաւ Պոլսէն ու գնաց Կիլիկիա, յետոյ Երուսաղէմ», մինչդեռ ճամբորդութեան այս ուղեգիծը սխալ է, մենք պարզեցինք արդէն, որ Խրիմեանը նախ գնաց Երուսաղէմ (1851) և ապա Կ. Պոլիս վերադառնալէն յետոյ միայն, 1852-ին գնաց Կիլիկիա, ուրկից նորէն եկաւ Կ. Պոլիս։ Այսպէս թէ այնպէս, փաստն այն է, որ 1853 թուին, հաւանաբար ամրան, Մկրտիչ Վարժապետ Խրիմեանը Կիլիկիայէն ճամբայ ելնելով կը հասնէր Կ. Պոլիս և իր առաքելութեան ու կատարած գործերու մասին զեկուցում կուտար Պատրիարքարանին և ազգային մարմիններուն։

## Գ.

## ԴԷՊԻ ՀԱՅՐԵՆԻՔ

Մկրտիչ Վարժապետ Խրիմեանը, Կիլիկիայէն Կ. Պոլիս վերադառնալէ յետոյ, հոգեկան ծանր տառապանքի մը կ'երթարկուէր։ Անոր սիրտն ու հոգին խոր սուգի և կսկիծի սև լուրերով կը մղկտային։ Վանէն Պոլիս եկած պանդուխտները հոս ու հոն խօսեր էին թէ— «Մկրտիչ Վարժապետին մայրը և կինն ու աղջիկը մեռած են»։ Այս բերանացի լուրերը կը հաստատուէին նաև նամակներով։ Մկրտիչ Վարժապետը, երբ կը լսէ իրենց ընտանեկան այս մեծ ողբերգու-

թեան մանրամասնութիւնները, անմիջապէս ճամբու պատրաստութիւն կը տեսնէ Վան երթալու համար։ Կ. Պոլսոյ իւր բարեկամները ու համակիրները թէև շատ կը համոզեն, որ չ'երթայ և չը թաղմացնէ իւր վիշտերը, բայց Մկրտիչ Վարժապետը մխիթ կրնար իւր վշտահար սիրտը այլ կերպով մխիթարել։ Այվատեան, Օտեան և Պալեան գերդաստանները, պանդուխտ և սգաւոր Մկրտիչ Վարժապետին ցաւակից կը դառնան և կը հոգան անոր ճամբու ծախսերը։ Եւ 1863 թուի գարնանային առաւօտ մը, բարի երթի եկող համակիրներու և յարգողներու մեծ խումբով մը, Մկրտիչ Վարժապետ Խրիմեանը Այվատեաններց տունէն դուրս ելնելով կը հասնէր Սիրքէճիի նաւամատոյցը և նաւ կը նստէր։

Մկրտիչ Խրիմեանը մօտ եօթն երկար տարիներու պանդուխտ և թափառական կեանքէ մը յետոյ, այժմ հայրենիքը կը վերադառնար ոչ թէ ուրախ զուարթ, այլ տխուր ու սգաւոր։ Նաւը կը սուրայ Սև Ծովին վրայ։ Ծովը սև, պանդուխտին սիրտը սև ու վշտալի։ Քանի մ'օրէն նաւը կը հասնի Տրապիզոն. Մկրտիչ Խրիմեանը ցամաք կ'ելլէ և դէպի Վան երթացող վաճառականական կարաւանի մը միանալով, ճամբայ կ'իյնայ դէպի հայրենիք։ Երկար ու ձանձրալի ճամբորդութեամբ կը հասնի Էրզրում, ապա Արճէշ, ուր նաւ նստելով կ'իջնէ Վանի նաւահանգիստը—Աւանց։ Արդէն հասեր է իւր սիրասուն ծննդավայրը՝ Վան։ Մկրտիչը Աւանցէն ճամբայ կ'իյնայ դէպի հայրենական տուն։ Ահա Սղգայու-Ջաղդէն—Այգեստանի այդ լայն ու ծառազարդ պողոտան,—ուր կը գտնուի Խրիմեաններց տունը։ Մկրտիչը կը մտնէ իրենց օճախը, մեծ եղբայր Մսրխանը և կինն ու զաւակները, իրենց եօթն տարիներու դարիբ-դուրբէթ հարազատի անսպասելի գալուստը տեսնելով, կ'ուրախանան, սակայն Մկրտիչը դառն ու կսկծալի կերպով կ'ուլայ։ Ո՞ւրէ իւր կաթոգին մայրը, որ բազուկները տարածելով, խինդ ու լացով գրկէր ու համբուրէր իւր Մկրտիչի ճակատն ու երեսները։ Ո՞ւր է Մկրտիչի կենակիցը—համեստ Մարիամը, հապա զաւակը—փոքրիկ Թագուհիճ։ Երեքն ալ անդարձ մեկներ՝ մեռեր էին՝ Մկրտիչի սէրն ու կարօտը սրտերնուն պահած։

Բնական է, որ Մկրտիչ Խրիմեանը, Վան հասնելէ յետոյ, անմիջապէս պատարագ և հոգեհանգիստ մատուցել տուաւ իւր մօր, կնոջ և զա-

ւակի յիշատակին։ Երախտագիտութեան, սիրոյ և պատկառանքի գերազանց պարտականութիւն մըն էր այդ, որ կատարած էր Մկրտիչ Խրիմեանը։

Մենք պարզեցինք այն գէպքերն ու պարագաները, որոնք պատճառ դարձան, որ Մկրտիչ Խրիմեանը, 1847-ի ամրան, զօրահաւաքի չ'ենթարկուելու համար, խումբ մը հայրենակից ընկերներու հետ, կը հեռանայ Վանէն և կ'երթայ դէպի Պարսկաստան, Արարատեան Աշխարհը և ապա Կ. Պոլիս։ Այս պարագան արձանագրած են նաև Խրիմեանի քանի մը կենսագիրները։

Մկրտիչ Խրիմեանի Վանէն մեկնումէն քիչ յետոյ, անոր արդէն իսկ պառաւած, կուչ եկած, կուզլիկ մայրը կը մեռնի։ Մկրտիչին սէրն ու կարօտը, պանդուխտ և թափառական կեանքը և մայրական սիրոյ տառապանքը իրար խառնուած, հետզհետէ քայքայեցին այդ բարի և կաթոգին մօր աղօտ կեանքը և օր մըն ալ Խրիմեաններց պառաւը կ'աւանդէր հոգին, և բնական է, որ իւր պանդուխտ զաւակին՝ Մկրտիչին պիտի կտակէր իւր մայրական սիրոյ և պաշտամունքի վերջին և լալահառաչ մրմունջները.

«...Որդեակ, որդեակ, թէ գաս բարով ձիերով,
Մէրիկդ կանչես՝ ասեն՝ մեռաւ կարօտով,
Աստուած սիրես իմ գերեզման չը մոռնաս,
Երկու արցունք չոր հողերուս ընծայ տաս...»։

Մկրտիչը չը մոռացաւ իւր մօր գերեզմանը, գնաց օրհնել տուաւ, գրկեց, համբուրեց և երկու կաթիլ արցունքի տեղ, իւր յորդառատ արցունքով օծեց անոր չոր հողերը։

Մօր մահէն յետոյ, մեռաւ նաև Մկրտիչին ամուսինը, համեստ և նորահարս Մարիամը, որ դժբախտութիւն ունեցած էր, ամուսնութենէն քանի մ'ամիս յետոյ, զրկուիլ իւր կենակցի ներկայութենէն։ Անոր մահուան պարագաները անծանօթ են, սակայն, գիտենք, որ Մկրտիչի հեռանալէն մօտ երկու ու կէս տարի յետոյ, ուրեմն 1850 թուի վերջերը, նա այլևս չը կար, մեռած էր, որը ու անմայր թողնելով մէկուկէս տարեկան ծծկեր զաւակը—Թագուհին, որ մօր մահէն յետոյ կը հիւծէր, և օր մըն ալ կ'աւանդէր իւր ան-

մեղ ու մանուկ հոգին, ու կ'երթար հանգչելու Խրիմեանենց տոհմական գերեզմանոցի մէջ, մօրական կուրծքին վրայ։

Այս ընտանեկան մեծ ողբերգութիւնը—մօր, կնոջ և զաւակի կորուստն ու մահը—ով պիտի ողբար ու հառաչէր, եթէ ոչ վշտահար և սգաւոր Մկրտիչը, որուն անխիղճ ու քինախնդիր հակառակորդները, սակայն, կը գրեն թէ նա «յետ սակաւուց ամուսնութեան լիք զամուսինն անխնամ» և «աստանդական շրջէր գնայր անըզգամ»։ Ահա և հետևանքը?

«Ուստի և կինն իբրև զայրի նստէր ՚ի տանն անտերունչ,
Ընդ հովանեաւ տաքեր իւրում՝ ցաւն ՚ի սրտին անշշունչ։
Գնալով գնայր ցաւն փոխարկիւր յախտ յիւծական անդարման,
Ցետ երկեմնից ցաւօք սրտի հէգ կինն զհոգին փոյթ ետան»։*)

Սակայն մենք գիտենք թէ Մկրտիչ Խրիմեանը, ոչ թէ «լքեց» իւր կինը և հեռացաւ, այլ քաղաքական դէպքերն եղան պատճառը, որ նա, երևի, իւր մօր և մեծ եղբայր Մսրխանի պնդումներուն վրայ բաժնուեցաւ իւր ընտանիքէն և հայրենիքէն ու դարձաւ պանդուխտ։

## Գ.

## ԱԶԳԱՆՈՒԵՐ ՄԵԾ ՈՒԽՏԸ

Մկրտիչ Խրիմեանը տակաւ առ տակաւ կը հաշտուէր կատարուած դառն ու դժբախտ իրողութեան հետ։ Ամբողջ օր կ'առանձնանար և կարդալ գրելով կը զբաղուէր, թէև միշտ տխուր էր և վշտահար։ Իւր մեծ եղբայր Մսրխան և ազգականները կը համոզեն, որ Մկրտիչը պարապ չմնայ, գործով մը զբաղուի և մոռանայ իւր ցաւերը։ Եւ ահա, 1853 թուի աշնան սկիզբները, Վանեցի Մահտեսի Մկրտիչ Աղա Թէրլէմէզեան և Մկրտիչ Խրիմեանը, իբրև գործի ընկերները կը միանան և բամբակի առևտուրով կը զբաղուին։ Սակայն այս առևտրական գործը շատ երկար չի տևեր, վասն զի երկուստեք կը վնասեն։ Միայն Մկրտիչի բաժին վնասը 200 օսմանեան հնչիւն ոսկիի կը հասնէր, գումար մը, որ այն ատենուայ համար, Վանի նման վայրի մը մէջ, համեստ առևտրականի մը դրամագլուխ էր։

*) Խրիմեան Հ. գործք իւր. էջ՝ 78։

Խրիմեանի կենսագիրներէն շատերը, արձանագրած են, որ նա— Մկրտիչը—աղքատ ծնողքի և խեղճ ընտանիքի զաւակ էր։ Սակայն այս վերագրումը սխալ է։ Խրիմեան գերդաստանը Վանի բարեկեցիկ և ունևոր դասակարգին կը պատկանէր։ Ինչպէս մենք տեսանք, Խրիմեանի պապն ու հայրը կտաւի վաճառականներ էին, սեփական տուներ, արհեստանոց, այգի, արտեր, յաջող արդիւնաբերութիւն և տնտեսական բարեկեցիկ վիճակ մ'ունէին մինչև մեր օրերը։ Հետևաբար և սխալ են յիշատակութիւնները այն բոլոր կենսագիրներու, որոնք չը գիտենք, ինչո՞ւ կ'ուզեն ցոյց տալ, որ Մկրտիչ Խրիմեանը աղքատ ու խեղճ ընտանիքի զաւակ էր։

Տնտեսական բարւոք վիճակ ունեցող Խրիմեաններց ընտանիքի զաւակ Մկրտիչը, հակառակ իւր եղբայր Մսրխանի և ազգականներու թափած ջանք ու ճիգերուն, կ'որոշէ թողուլ առևտրական ասպարէզը։ Նա յաճախ առիթ կ'ունենար իւր մտերիմ և հարազատ ընկերներու շրջանին մէջ, ազգասիրական և հայրենասիրական խանդավառ տրամադրութիւն ստեղծել և գաղափարական անձնուիրութեան, ժողովուրդի և մայրաղ սերունդի դաստիարակութեան մասին ոգևորիչ ճառեր խօսիլ։

Արդէն նա, հայրենիք մեկնելէ առաջ, Կ. Պոլսոյ իւր համակիրներու և բարեկամներու և մանաւանդ հարուստ գերդաստաններու մէջ, հաստատապէս ըսած էր, որ հայրենիքը հասնելէ յետոյ, պիտի նուիրուէր Հայ մայրաղ սերունդի դաստիարակութեան գործին, որուն համար եթէ դրամական աջակցութեան պէտք զգացուէր, նուիրական պարտականութիւն կը դնէր մայրաքաղաքի ազգայիններու վրայ, որ օգնութեան հասնէին իր գործին, յանուն ազգասիրութեան։ Անոր այս առաջարկ-խնդրանքը սիրով կ'ընդունուէր Կ.Պոլսոյ ազգային շրջանակներու կողմէ։

Ահա թէ ինչո՞ւ, երբ Մկրտիչ Խրիմեանը Վան կը հասնէր, կարճ ժամանակէ մը յետոյ, իւր ծրագրի գործադրութեան մասին կը մտածէր։ Սակայն ինչ կերպով կրնար գործի լծուիլ, ահա՛ն էր այն ասպարէզը, որ հնարաւորութիւն պիտի տար իրեն ազատ և անկաշկանդ գործելու։ Վան քաղաքին մէջ, ԺԹ-րդ դարի մինչև կէսերը դեռ կանոնաւոր դպրոցներ չը կային։ Քաղաքի եկեղեցիներու բակերուն մէջ կային պարզ դպրատուներ, որոնց խոնաւ յատակի

վրայ պպզած մանուկները տիրացուի մը, կամ քահանայի մը փայտի և ֆալախկայի սարսափներուն տակ, հոգևոր ուսում կըստանային, բերանացի ընելով Նարեկացիի «Մատեան Ողբերգութեան», Աւետարան, Սաղմոս, Ութ Կանոն, և այլ կրօնական խրթնաբանութիւնները։

Մկրտիչ Վարժապետ Խրիմեանը տեսնելով մատաղ սերունդի դաստիարակութեան այդ կաշկանդող և բթացնող մեթոտները, ամենուրեք կը խօսէր ու կը համոզէր, որ մանուկներու կրթութեան այդ հին և ապիկար ձևերը փոխուին և դպրոցական գործը կանոնաւոր հիմքերու վրայ դրուի։ Սակայն ո՛վ էր, որ պիտի լսէր և կատարէր անոր առաջարկները։ Քահանաները արհամարհանքով կը նայէին Մկրտիչ Վարժապետի վրայ և անոր ըսածներ կը ծաղրէին, կրօնամոլ և խստաբարոյ հին վարժապետները և Խալիճա-Ուսթաները չ'էին կրնար հանդուրժել, որ երիտասարդ վարժապետ մը իրենց հրահանգ տար կամ դէմ երթար։ Եւ վերջապէս, այն ատենները, Վանի մէջ, իբրև հասարակական դէմքեր, ամէն ասպարէզի մէջ ի յայտ կուգային հարուստ Հայեր—Բէյեր և Աղաներ—որոնք կ'իշխէին քաղաքի հոգևորականութեան և հին վարժապետներու վրայ, դառնալով նաև սատարող և հովանաւոր ազգային հիմնարկութիւններուն և մարմիններուն։

Մկրտիչ Վարժապետ Խրիմեանի յոյսերն ու ձգտումները, իր հայրենի քաղաքին մէջ, հեռուէ հեռու, կը բաղխէին ժամանակակից բարւոք ուղեղներուն և հոգևոր ու հարուստ դասակարգի կամայականութիւններուն։ Սակայն Մկրտիչ Խրիմեանը չի յուսահատիր, անոր հոգին նոր ոյժեր կ'որոնէ և ապագայ գործունէութեան յոյսերն ու ծրագիրները կ'արձանանան իր աչքերուն առջև։ Անոր մէջ արդէն հասունցած և մարմին առած միտք կը դառնայ ժողովրդաճնուէր գործունէութիւնը, որուն իրականացման համար, կ'որոշէր մտնել ճոգեւոր ասպարէզի մէջ և Հայ կրօնաւորի սքեմ հագնելով, ազատ և անկաշկանդ կերպով ծառայել իր ազգին ու հայրենիքին։

Սակայն ինչո՞ւ Մկրտիչ Խրիմեանը կը ձգտէր դէպի հոգևոր ասպարէզը, ինչու կը ցանկար կրօնականի սքեմը հագնել։ Այս փափագն ու ցանկութիւնը, միայն պարագաներու բերումով կամ յանկարծակի ի յայտ եկան անոր մէջ, թէ որոշ հետևողականութեամբ և աստիճանական զարգացումով։ Վերջին հանգամանքը աւելի ճիշտ

է, քանի որ նա մանուկ հասակէն, գրեթէ ամբողջ երեսուն տարի, կրօնական և հոգևոր դաստիարակութեան շունչով ապրած ու զարգացած էր, իւր հօրեղբայր Խաչատուրէն սկսեալ մինչև Կտուց և Լիմ Անապատներու դպրատուները և Երուսաղէմի աստուածաշնչական սրբատեղիները։ Այս բոլորէն յետոյ, չէ՞ որ Մկրտիչ Խրիմեանը, տարիներ շարունակ կրօնական գրքեր և հոգևոր մատենագրութիւն կարդացեր էր և իր ամբողջ մտաւոր ուսումն ու զարգացումը այդ ուղղութեամբ ընթացեր էին։ Այս պարագան ևս, բնական է, որ անոր մէջ յառաջ բերաւ հոգևորական դառնալու ցանկութիւնը, որուն կուգար զուգորդուիլ նաև ազգին ու հայրենիքին ծառայելու բուռն սէրը և ժողովուրդի մտաւոր զարգացման նուիրուելու փափագը։

Եւ ահա օր մըն ալ, Մկրտիչ Խրիմեանը, իւր մեծ եղբայր Մարխանին կը յայտնէր, որ ինքը որոշած է հոգևոր ասպարէզի մէջ մտնել։ Մարխանը այս յայտնութիւնը լսելէ յետոյ, շատ յամառ կերպով կը ջանայ հաւատզել իւր եղբօր, որ հրաժարուի այդ նպատակէն և նորէն ամուսնանայ, ընտանիք կազմէ, առևտրական գործեր կատարէ և այլն։ Սակայն Մկրտիչը չի համոզուիր և յամառ կերպով կը պնդէ իւր որոշման վրայ։ Բարեկամները և ազգականները մէջտեղ կուգան և բոլորն ալ Մկրտչին «բարի խորհուրդ» կուտան, որ հոգևորական չը դառնայ։

Սակայն Մկրտիչ Վարժապետ Խրիմեանը, այդ բոլոր խորհուրդներն ու յորդորները անտես կ'առնէ։ Անոր նպատակը պարզ և որոշ էր։ Ազգին և հայրենիքին նուիրուելու իւր Մեծ Ուխտը, իւր Վսեմ գաղափարը ամէն բանէն գերադասած էր, խորապէս համոզուելով, որ իւր ապագայ գործունէութեան միակ և յարմար ասպարէզը կուսակրօն հոգեւորական դառնալով պիտի գտնէր։

## Ե.

## ՄԿՐՏԻՉ ՎԱՐԴԱՊԵՏ ԽՐԻՄԵԱՆ

Վասպուրականի ցրտաշունչ ձմեռն անցաւ։ Գիւնհալքէն յետոյ, ջերմ արեգակը տաքցուց արար-աշխարհը։ Բնութիւնը իւր վերնազարթնումի օրերը կ'ապրէր։ Ցեաւընդառաջը կը մօտենար,

ծիլն ու ծաղիկը, կար-կանաչ կը փթթէին և գարնան հաւքերն ու թռչունները կը շինէին իրենց բոյները։ Գարունը մօտ էր։

Եւ ահա, 1864 թուի Փետրուարի 10-ին, արևոտ և հաճելի առաւօտ մը, Խրիմեան երկու եղբայրները—Մսրխանն ու Մկրտիչը—բահ ու բրիչ ձեռքերնին, տունէն դուրս կուգան և իրենց փողոցի դրան առջևը, բաւական տարածութեամբ կը փորփրեն, կակուղ հողին մէջ, խճաքարերը կողքի կը շարեն, կ'ամրացնեն և կը պատրաստեն քարայատակ տարածութիւն մը (կալդրըմ)։ Աշխատանքէն յետոյ, Մսրխանը կ'երթայ իրենց կտաւի գործանոցը, իսկ Մկրտիչը իրենց ծառային կանչելով կ'ըսէ.

—Գնա fեռացց տուն*), ասա՝ Մկրտիչ կ'ասի ձեր ձին տուէք հեծնեմ, մէկ տեղ պիտի երթամ։ Ձին կ'առնես շուտ կը բերես։

Ծառան կ'երթայ ձին բերելու, իսկ Մկրտիչը աճապարանօք կը մտնէ տուն, սփռոցի մը մէջ առատ հացի պաշար կը կապէ, տաք հագուստները կը վերցնէ, ճամբորդութեան յատուկ պատրաստութիւնները կը տեսնէ և առանց ոևէ մէկի մը բան մ'ըսելու, տունէն դուրս կուգայ և փողոցին մէջ կը հանդիպի իրենց ծառային, որ արդէն ձին կը բերէր։

Մկրտիչը կը հեծնէ ձին, և ծառային կը պատուիրէ, որ հետևէ իրեն, որպէսզի ձին ետ բերէ։ Սղգայու-Ջաղդէն անցնելէ յետոյ, կ'իջնեն Խաչ-Փողան, կ'ուղղուին դէպի Աբարք, ապա կ'երթան Կլոր-Դար և դուրս կուգան բաց դաշտի մէջ։ Եթէ մէկը հարցնէր թէ—«Մկրտիչ Վարժապետ ուր կ'երթաս» նա պիտի ըսէր՝—«Կ'երթամ Արտամետ»։ Եւ յիրաւի, ձիաւորը բոներ էր Արտամետի ճամբան ու կ'երթար։ Երկու ժամէն յետոյ, Մկրտիչը կը հասնէր Արտամետ գիւղը, ուր քահանային տան մէջ կը հիւրընկալուէր։ Ծառան, հանգստանալէ յետոյ, ձին կը հեծնէր ու կը վերադառնար քաղաքը, յայտնելով, որ Մկրտիչը գնաց Արտամետ։

Երեկոյեան կողմ, առագաստանաւ մը կանգ կ'առնէր Արտամետի ծովափը։ Մկրտիչը նաւավարին հարցու փորձելէ յետոյ, կը հասկնայ, որ նաւը պիտի երթայ Գաւաշ (Ռշտունիք)։ Մկրտիչին

*) Մկրտիչ Խրիմեանի մայրը Յանկոյսների թաղին մէջ գտնուած Ջրբաշեան ընտանիքի աղջիկն էր, որուն հայրական տունը կ'ըլլար Մկրտիչի fեռացց տուը։

ուզածն ալ այդ էր։ Նաւավարին առատ վարձատրութիւն խոստանալով, կ'առաջարկէ, որ նաւը Աղթամարի կղզիին մօտ, ծովափին կանգ առնէ, որպէսզի ինքը դուրս գայ Աղթամար, որովհետև «Աղթամարայ Ս. Խաչի Տաճարին ուխտաւոր եմ, ուխտի կ'երթամ» կ'ըսէ։

Պարզ ու պայծառ գիշեր է։ Մկրտիչը կը համբուրէ իւր հիւրընկալ քահանային ձեռքը և ծովափն իջնելով, նաւին օրօրուող սանդուղքէն բարձրանալով, կը մտնէ ներս և անկիւն մը կծկուելով, կը խորասուզուի իւր մտքերու մէջ, մինչ նաւաստիները աղմուկ-աղաղակներով կը քաշեն նաւին առագաստը ու ճամբայ կ'ելլեն. Նաւը կը սուրայ Վանի ծովի կապոյտ ու ջինջ ջուրերուն վրայ, ալեակները անուշ ծփանքով մը կը շոյեն անոր կողերը, իսկ մեղմիկ ու սառն քամին փչէ ծովափեայ լերանց ձիւնածածկ կատարներէն։

Կէս գիշերը կոտրուեր է. ցայգալոյս է, նաւ կը մօտենայ Աղթամարի կղզիին, որ իւր ահաւոր ու խորհրդաւոր դիրքով բազմեր է ծովուն մէջ։

—Զրրը՛նգ, զրրը՛նգ... կը զօդանջեն Աղթամարի տաճարի զանգերը, որոնց արձագանգները, յանկարծ կը սթափեցնեն իւր մտքերու մէջ խորասուզուած Մկրտիչ Խրիմեանը, որ կը խաչակնքէ, և ականջ կը դնէ զանգերու զօդանջներուն։ Լուսաբաց է, նաւը մօտեցեր է Աղթամարին։ Մկրտիչը նաւէն կ'ելլէ և կղզին իջնելով կ'ուղղուի դէպի տաճարը։ Արշալուսային օրհներգութեան մեղանուշ արձագանգները կը թնդացնեն Հայ արուեստի ու հաւատքի այդ հոյակապ ու չքնաղ տաճարի կամարներն ու խորշերը։

Ծամերգութենէն յետոյ, Մկրտիչ Խրիմեանը վանականներուն կը յայտնէ. որ ինքը ուխտաւոր մըն է և տեղ մը կը խնդրէ հանգրստի համար։ Վանքի մէջ դատարկ ու պարզ խուց մը կուտան իրեն և սիրով կը հիւրընկալեն։

Կէսօրէն յետոյ, Փետրուարի 11-ին (1864), Մկրտիչ Խրիմեանը կը ներկայանայ Աղթամարի այն ատենուայ Կաթուղիկոսական տեղապահ Գաբրիէլ Արքեպիսկոպոս Շիրոյեանին*), յայտնելով, որ ինքը

*) Գաբրիէլ Արքեպ. Շիրոյեանը Վասպուրականի ԺԹ-րդ դարի Հայ հոգեւորականութեան պատկառելի և գործունեայ դէմքերէն մէկը եղած է, որ ներսէս Ե. Աշտարակեցիի Կաթուղիկոսութեան օրով կը ցանկանար Աղթամարի Կաթուղիկոսը դառնալ, սակայն Աշտարակեցի Հայրապետը, խիստ և կծու նամա-

Մկրտիչ Վարժապետ Խրիմեանն է, հեղինակ՝ «Հրաւիրակ Աստուածեան» և «Հրաւիրակ Երկրին Աւետեաց» գիրքերուն։ Կաթուղիկոսական տեղապահը կ'ուրախանայ և կը հարցնէ թէ ինչու եկած է։

—Եկած եմ վարդապետ ձեռնադրուելու և Աղթամարայ միաբան դառնալու համար,— կը պատասխանէ Մկրտիչ Խրիմեանը։

—Շատ լաւ,—կ'ըսէ Գաբրիէլ Արքեպ.-ը—Ցեսարընդառաջի Նախատօնակի երեկոյեան քեզ Կոչում կուտամ, իսկ առաւօտն ալ, կարողութեամբն Աստուծոյ, ձեռնադրութիւն կը կատարեմ, հիմայ դուն դնա ապաշխարէ։

Ամէն ինչ վերջացած էր։ Մկրտիչ Խրիմեանը կ'առանձնանայ իր մենարանին մէջ և կը սկսի Սաղմոս կարդալ— ապաշխարել։

Կոչում տալու օրն է։ Երեկոյեան ժամահրաւէրի զանգերը կը դողանջեն։ Կաթուղիկոսական տեղապահ և Աղթամարի միաբանները Ս. Խաչի Տաճարը կ'իջնեն։ Մկրտիչ Վարժապետ Խրիմեանի ձեռնադրութեան արարողութիւնը կը սկսի։ Գաբրիէլ Արքեպ.-ը բազմեր է թիկնաթոռի վրայ, իսկ Մկրտիչն ալ ծնկաչոք խոնարհեր է անոր առջև, լուռ և գլխահակ։ Ձեռնադրող Արքեպիսկոպոսը, համաձայն «Մայր Մատեան»ի հրահանգներուն տաճարի մէջ, հրապարակաւ, հարցումներ կ'ուղղէ Կարտավիլակ (կնքահայր կամ վկայ) վարդապետին թէ ձեռնադրելին՝ այսինքն Մկրտիչը՝ «ունի զուստումն», «ուղղափառ իցէ» կամ թէ «եթէ հերձուածող իցէ, ոչ է ձեռնադրելի», «ունի զգործս առաքինութեան», «հասեալ է 'ի չափ հասակին թէ ոչ», «'ի բարեպաշտ ծնողաց և 'ի սուրբ անկողնոյ իցէ ծնեալ թէ ոչ», «արժանի է այս մեծ աստիճանիս նուիրեալն թէ ոչ», արդեօք նա՝ Մկրտիչը, «հեզ, խոնարհ, գթած, մարդասէր, անյիշաչար և զուարթամիտ» է, նա եկած է ձեռնադրուելու «վասն աղաչանաց ուրուք, կամ վասն ահի բռնաւորաց, կամ վասն ընչից»

---

կով մը կը ձգկէ անոր այդ ցանկութիւնը, յորդորելով, որ մնայ իբր Վառզուրականի Հայոց Առաջնորդ։ Այդպէս ալ կ'ըլլայ։

Գաբրիէլ Արքեպ.-ը կը վախճանի 1857 թուին և մեծ շուքով կը թաղուի Վանի Հայկավանք եկեղեցւոյ բակին մէջ, ուր անոր գերեզմանին վրայ, ժողովուրդը գմբէթաձարդ և գեղակերտ յուշարձան մըն ալ կը շինէ,

Տաճիկները, 1915 թուին Վանի դէպքերու ժամանակ, այդ յուշարձանը քանդեր և գերեզմանը օրբապղծեր էին։

թէ՝ «յօժարութեամբ սրտի իւրոյ». Այս բոլոր հարցումներուն, Խարտավիլակը հաստատական և դրական պատասխաններ կուտայ, իսկ Գաբրիէլ Արքեպիսկոպոսը կը յարէ.

«Հովիւն քաջ՝ որ եդ զանձն իւր ՚ի վերայ բանաւոր հօտին կարողացուսցէ զքեզ հովուել զհօտ իւր արդարութեամբ, տալով զանձն քո լինել օրինակ հօտին». Այս կոչումի ընթացքին Մկրտիչը կը ստանայ Կիսասարկաւագի և Աւագ Սարկաւագի աստիճանները. Արարողութիւնը կը վերջանայ, իսկ Մկրտիչ Սարկաւագը, առանձնանալով իւր խուցը, ամբողջ գիշեր Սաղմոս կը կարդայ, կ՚ապաշխարէ, և հոգևոր ապրումներով կը սլանայ.

Կէս գիշերը կը կոտրուի. վանքի ժամհարը կոչնակ տրկըլկացնելով կը թակէ վանականներու խուցերու դուռները. Ամէնքն ալ կ՚արթնան. Ինչ յետոյ գիշերային ժամերգութեան զանգերը կը զըրնգան. Մկրտիչ Սարկաւագը կ՚երթայ տաճար և մոմի աղօտ լոյսին տակ կը շարունակէ սաղմոսերգութիւնը.

Լուսաբաց է—1864 թուի Փետրուարի 14-ը։—Գաբրիէլ Արքեպիսկոպոսը պատարագիչի հանդերձներով զգեստաւորուած, հանդիսաւոր պատարագ կը մատուցէ. Պատարագի ընթացքին կը շարունակուի ձեռնադրութեան արարողութիւնը, մինչ ձեռնադրուողին ալ կը հագցնեն պատարագիչի հանդերձները.

Օծման կարգը կը կատարուի Աւագ Սեղանի վրայ. Արքեպիսկոպոսը, շրջապատուած Խարտավիլակով և սարկաւագներով, մեռոնի աղաւնատուփը ձեռքին՝ կը մօտենայ ձեռնադրեալին, մինչ զանգերը կը ղօղանջեն և Աղթամարի տաճարը կը թնդայ օծման կարգի յուզիչ և բաղցրահնչիւն շարականներով. Գաբրիէլ Արքեպիսկոպոսը կ՚օծէ ձեռնադրեալին ճակատը, ծանր ու խորհրդաւոր երգելով՝

«Օրհնեսցի՝ օծցի եւ սրբեսցի ճակատ ՏԷՐ ՄԿՐՏԻՉ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ. այս նշանաւ սուրբ խաչիւս և սրբալոյս միւռոնաւս և յաւուրս շնորհիւ. անուամբ Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ամէն»։

Ապա Արքեպիսկոպոսը կ՚օծէ Մկրտիչ Վարդապետի ձեռները և կը վերջանայ արարողութիւնը. Պատարագէն յետոյ միաբանները կը համբուրեն Կաճաչ Մեռոնը, իսկ Նոր ընծայ Մկրտիչ Վարդապետը

պէտք է «քառասուն օր կացցէ յեկեղեցին, զկարգն ուսուցի և զինքն ծանիցէ»։

Քառասունքի օրերն են. Մկրտիչ Վարդապետը ամբողջ օր փակուած է տաճարի մէջ և գլխաւորաբար պատարագի արարողութեան փորձերը կ'ընէ, Աւետարան կարդալու ձեւերը կը մշակէ և եկեղեցական ամբողջ արարողութիւնները կ'ուսումնասիրէ։

Թէև այդ բոլորի հետ նա ծանօթ է, բայց պէտք է կատարեալ հմտութիւն ձեռք բերէ, որ քառասունքը լրանալէ յետոյ յաջողութեամբ մատուցէ աւգրաճիկ պատարագը։ Աղթամարի պատմական տաճարի կամարներն ու խորանները, ամբողջ օր, Մկրտիչ Վարդապետի աղօթքներով ու հոգեշունչ երգերով կը լեցուին։ Ամփոփուած իր հոգեկան աշխարհի մէջ, նորընծայ վարդապետը, արեւի երես չը պիտի տեսնէ. միայն աղօթել և ապաշխարութեամբ զբաղուիլն է անոր պարտականութիւնը։

Սակայն անոր սիրտը կ'ալեկոծուէր ուրիշ յոյսերով ու նպատակներով, որոնց իրագործումը կապուած էր Աղթամարի Կաթուղիկոսական տեղապահի և միաբանութեան բարի կամեցողութեան հետ. Ի՞նչու նա Աղթամարի միաբան դարձաւ, ինչ էր անոր նպատակը, մինչ Աղթամարը իր ապագայ գործունէութեան համար յարմար միջավայր մըն էր, ուր դարերու աւանդութիւն և պատմութիւն կար և անապատական ու խստակեաց կրօնական կեանքի և խաւարտիզին մտքերու իշխանութիւնը կը տիրէր. Սակայն պէտք էր հրապարակ իջնել, պարզ ու ազատ ձեւով յայտնել իր նպատակները, ոչի բուին պայքար մղել հին ըմբռնումներու դէմ, բաղխել հին դէմքերու և հին մտքերու հետ, այն միակ յոյսով՝ որ կ'ապահովուէր յաղթանակը, որով և Աղթամարը պիտի դառնար Վասպուրականի Հայութեան մտաւոր ու կրթական նոր և մեծ կեդրոնը։

Մինչ Մկրտիչ Վարդապետը, Աղթամարի մէջ, տարուած էր իր ապագայ ազգանուէր գործունէութեան մտքերով ու յոյսերով, անդին, Վանի մէջ, իր եղբայր Մսրխանն ու ժողովուրդը, արդէն լսեր էին, որ Մկրտիչը գացեր Աղթամար և ձեռնադրուեր է վարդապետ։

Ժամանակակիցները կը վկայեն, որ երբ Մսրխանը առաջին անգամ կը լսէ, որ Մկրտիչը վարդապետ ձեռնադրուեր է, երկու ձեռքով

կը սկսի իւր գլուխը դրմփել (ծեծել), յալ և հառաչել «Հէյ վա՛յ, իմ ազիզ ախպէր գնա՞ց մեր ձեռէն»*). Սակայն Մսրխանն ի վերջոյ կը հաշտուի կատարուած իրողութեան հետ և անմիջապէս իւր Վարդապետ եղբօր համար կարել կուտայ վեղար, կապոյտ և ընտիր ալեծածան Ջատախի շալէն վերարկու, նոր կօշիկներ և այլն։ Այս բոլորը պատրաստելէ յետոյ, Մսրխանը ճամբու պատրաստութիւն կը տեսնէ և իրենց ծառայի հետ, ձիով կ'ուղևորուի դէպի Աղթամարի Դռսի-տուն**), Ախաւանց, ուր վանքի նաւակը նստելով կ'երթայ կղզին, իւր նորընծայ վարդապետ եղբօր՝ Մկրտիչի մօտ։

Որքան յուզիչ եղած է այս հանդիպումը, երկու եղբայրները, իրար հակառակ համոզումներով, այժմ եղբայրական գրկախառնութեամբ և արցունքով ու համբոյրով կը հաշտուին։ Մսրխանը կ'առաջարկէ իւր վարդապետ եղբօր, որ դիմէ Գաբրիէլ Արքեպիս.-ին և թոյլտուութիւն ստանայ Աղթամարէն մեկնիլ, երթալ Վան և քառասունը Ցանկոյսների եկեղեցւոյ մէջ պահել։ Այս դիմումը կը յարգուի և Մկրտիչ Վարդապետն ու Մսրխանը Աղթամարէն կ'ուղևորուին դէպի Վան։ Ցանկոյսների եկեղեցւոյ բակին մէջ, հերթապահ

---

*) Մկրտիչ Խրիմեանի վարդապետական ձեռնադրութեան այս տեղեկութիւններն ինձ պատմեց Վարագայ «Ծառանգաւորաց դպրոց»ի ուսուցիչ Մարտիրոս Խրաճեանը, աւելցնելով—«Խրիմեան Հայրիկի մանկութեան, երիտասարդութեան և վարդապետական ձեռնադրութեան մասին հաղորդած տեղեկութիւնները բոլորն ալ վաւերական են և հաստատուն փաստեր։ Իմ հօր մայրը՝ Ոսկեհատ Խրաճեանը պայծառ յիշողութեամբ օժտուած խոհուն կին մըն էր։ 1880-ական թուերուն, երբ ես 20—22 տարեկան էի. Խրիմեանի գիրքերը հաճոյքով կը կարդայի. անոր հանդէպ ունեցած սէրը պաշտամունքի հասած էր իմ մէջս։ Ես յաճախ կը հետաքրքրուէի Խրիմեանի մանկական և երիտասարդական կեանքով, որոնց մասին ահա իմ Ճոչմամէն՝ (մեծ մայրը) Ոսկեհատը լիակատար տեղեկութիւններ կուտար ինձ, վասն զի նա Խրիմեանի մանկութեան ընկերը եղած էր, նաև դրկից ու թաղեցի։ Այդ հանգուցեալ պառաւը, (որ մեռաւ 1889-ին 75 ամեայ) հիացմունքով կը պատմէր, որ Մկրտիչ Խրիմեանը, մանուկ հասակէն իսկ, բարութեան և ուշիմութեան տիպար մըն էր՝ ամէնքի սէրին ու համակրանքին արժանացած»։

**) Վանի ծովի Լիմ, Կտուց և Աղթամար կղզիները իրենց հանդիպակաց ծովափի վրայ ունին ագարակներ, տուներ. գոմեր և այլն, որոնք կը կոչուին Դռսի-տուն, այսինքն ծովէն դուրս գտնուած շէնքերը, իսկ կղզիներ և իրենց վրայ գտնուած շէնքերը՝ կը կոչուին Ներսի-տուն։

քահանայից փոքրիկ և կիսալոյս սենեակ մը կը տրամադրուի Մկրտիչ Վարդապետին, քառասունը պահելու համար։ Ցանկոյսների Թաղեցինը և Այգեստանի միւս եկեղեցիներու ծխականները, ամէն օր, հերթով, երեք անգամ կերակուր կ'ուղարկէին նորընծայ վարդապետին, որուն սեղանակից կ'ըլլային նաև քահանաները, տիրացուները և ժամհարները։

Քառասունքը կը վերջանար։ Մկրտիչ Վարդապետը, կը պատրաստուէր անդրանիկ պատարագը մատուցելու։ Ժամանակի և տեղական սովորութեան համաձայն Վանի եկեղեցիներու մէջ, քահանաները կը ծանուցէին «բարեպաշտ ժողովրդեան» թէ՝ «Մկրտիչ Վարդապետ Խրիմեանը հանդերձեալ է անդրանիկ սուրբ պատարագ մատուցել և քարոզել» ուստի և ժողովուրդը թող երթայ Ցանկոյսների Ս. Աստուածածին եկեղեցին։ Մկրտիչ Վարդապետն ալ իր կողմէ, յատուկ հրաւիրագիր և նշխար կը ղրկէ բազմաթիւ անձանց, որ ներկայ ըլլան իր անդրանիկ պատարագին ու քարոզին։

Եւ ահա, 1864 թուի Մարտի 25-ին յաջորդող առաջին կիրակի օրը, առաւօտեան, Ցանկոյսների եկեղեցին կը լեցուի խուռնեռամ ժողովուրդով։ Պատարագը կըսկսի։ Պատարագիչի հանդերձներով զգեստաւորուած 34 տարեկան Մկրտիչ Վարդապետ Խրիմեանը, սեղանին առջև կանգնած, հանդիսաւոր կերպով կը մատուցէ իր անդրանիկ պատարագը։

Կարգը կուգայ քարոզին։ Մկրտիչ Վարդապետը՝ խաչը աջ ձեռքին, իսկ գաւազանը ձախ ձեռքին բռնած, սեղանի վրայ կանգնած՝ կը դառնայ դէպի ժողովուրդը, որ լուռ և սրտատրոփ կը սպասէր։ Վարդապետին գլուխը բաց, աչքերը վառվռուն են, երեսները ծածկուած՝ մէկ մատ երկարութեամբ սև նորածիլ մօրուքով, իսկ գեղեցիկ հասակը կ'աբձանանայ սեղանի վրայ։ Եւ ահա յանկարծ կը հնչէ անոր թաւ և ուժգին ձայնը.

—«Անուամբ Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ...»։

—«Հովիւ քաջ զանձն իւր դնէ ի վերայ ոչխարաց իւրոյ...»։

Մկրտիչ Վարդապետ Խրիմեանի անդրանիկ քարոզի բնաբանն էր աւետարանական այս խօսքը, որուն վրայ քարոզիչը կը հիմնէր իր քարոզի գաղափարները։

Կը պատմեն, որ—«Երբ Մկրտիչ Վարդապետը բեմբանը կը բա-

նայ քարոզը խօսելու, անոր եղբայր Մսրխանն անմիջապէս վեր կ'ելլէ իւր տեղէն և եկեղեցիէն կը հեռանայ, կասկածելով, որ Վարդապետը, չը պիտի կրնայ քարոզել և ինքը ժողովուրդի ներկայութեան պիտի ամչնայ եղեր»։

Սակայն Մսրխանը սխալուած էր։ Մկրտիչ Վարդապետը խանդավառ ոգևորութեամբ և պարզ լեզուով ու ոճով կը շարունակէր իւր քարոզը, որ այնքան խոր և քաղցր տպաւորութիւն կը թողուր ժողովուրդի վրայ։

Ո՞վ էր այդ քաջ հովիւը, որ պատրաստ պիտի ըլլար իւր անձը զոհելու իւր հօտին։ Ի՞նչու քարոզիչը այդ բնաբանն ընտրած էր իւր անդրանիկ քարոզի համար, որով, առաջին անգամ ըլլալով, եկեղեցիի մէջ, ժողովրդեան ներկայութեան, ուխտ ու երդում կ'ընէր դառնալ—Հովիւ էայ եւ իւր անձը ճուիրաբերել իւր ճօտիճ՝ Հայ Ազգին։ Անոր ուխտը վսեմ էր, երդումը՝ նուիրական, խոստումը՝ վերջնական։ Ահա թէ ինչու առաջին առթիւ իսկ, Մկրտիչ Վարդապետ Խրիմեանը, իբրև Հովիւ էայ՝ հրապարակ կուգար՝ գործելու յանուն իւր ժողովուրդի մտաւոր և կրթական զարգացման, բարօրութեան և ազգի ու հայրենիքի ազատագրութեան։

Եկեղեցիի բեմէն արտասանուած այդ անդրանիկ քարոզը, սոսկ կրօնական և հոգևոր գաղափարներու արտայայտութիւն չ'էր, կամ աշխարհուրաց հոգևորականի մը զղջման և ապաշխարութեան հառաչանքները չ'էին, այլ՝ քրիստոնէական կրօնի, Հայ լուսաւորչական դաւանանքի և մարդկային առաքինութիւններու, պարզ ու պայծառ բացատրութիւններուն կը զուգորդուէին նաև ազգի և հայրենիքի, ուսման և դաստիարակութեան սիրոյ որոտալից կոչերը, որոնք թունդ կը հանէին թմրած ուղեղներն ու սառած սիրտերը։

Այս անդրանիկ պատարագէն ու քարոզէն յետոյ, Մկրտիչ Վարդապետ Խրիմեանը, վանի մէջ համբաւ կը հանէր իբրև հմուտ հոգեւորական, քարոզիչ և ազգասէր ու հայրենասէր։ Այս էր պատճառ, որ նա ամէն կիրակի, վանի այս ու այն եկեղեցին կը հրաւիրուէր պատարագելու և քարոզելու խուռն և հետաքրքիր բազմութիւններու ներկայութեան։ Այդ քարոզները ժողովուրդի աչքին առջև կը բանային ապագայի և Նոր կեանքի լուսաւոր հորիզոններ, որոնց մէջ պիտի դաբձնուէր Վասպուրականի Հայութեան Վերածնունդը։

Մկրտիչ Վարդապետը Վանի մէջ իւր կրօնական պարտականութիւնները վերջացնելէ յետոյ, կ'երթայ Աղթամար ներկայանալու իւր Հոգեւոր Հօր՝ Գաբրիէլ Արքեպ.-ին. Աղթամարի տաճարի մէջն ալ պատարագ կը մատուցէ և կը քարոզէ։ Ամենայն հաւանականութեամբ Մկրտիչ Վարդապետը քանի մ'ամիս կը մնայ Աղթամարի մէջ և մօտիկէն կ'ուսումնասիրէ այդ պատմական մենաստանի ներքին—միաբանական կեանքը և մտերմութիւն կը հաստատէ Գաբրիէլ Արքեպիսկոպոսին հետ։ Կ'ըսեն, որ Աղթամարի Կաթուղիկոսական տեղապահի կարգադրութեամբ, Մկրտիչ Վարդապետ Խրիմեանը, կարճատև ժամանակով մը, իբրև շրջուն քարոզիչ կ'այցելէ Աղթամարի Կաթուղիկոսութեան իրաւասութեան ենթակայ գաւառները—Հայոց Ձոր, Ռշտունիք, Շատախ, Մոկս, Կարճկան և այլուր։ Գիւղական եկեղեցիներու մէջ կրօնի, ազգի, հայրենիքի և կրթութեան մասին խանդավառ քարոզները կը խօսէ և որ գլխաւորն է՝ խորապէս կ'ուսումնասիրէ Վասպուրականի լեռնագաւառներու Հայութեան մտաւոր, կրթական, տնտեսական և քաղաքական վիճակն ու կացութիւնը, որոնք շատ անմխիթար պատկեր մը կը ներկայացնէին։

Իւր այս քարոզչական շրջագայութենէն վերադառնալէ յետոյ, Մկրտիչ Վարդապետը Աղթամարի Կաթուղիկոսական տեղապահին կ'առաջարկէր ամէն տեսակ հնարաւոր միջոցներու դիմել, գաւառի գեղջուկ Հայութեան մտաւոր ու տնտեսական վիճակը բարելաւելու համար։ Անոր այս առաջարկը դժգոհութիւն կը պատճառէր ոչ միայն Գաբրիէլ Արքեպիսկոպոսին, այլև Աղթամարի միաբաններուն, որոնք չէին կրնար հանդուրժել, որ քանի մը ամիսներու նոր ընծայ վարդապետը ձեռնամուխ լինէր վանքի ներքին գործերուն և կաթուղիկոսական իրաւունքներուն։ Այսպէս ըլլալով հանդերձ, Գաբրիէլ Արքեպիսկոպոսը կը գնահատէր Մկրտիչ Վարդապետի եռանդն ու գործունէութիւնը, «որոնք պէտք է ամփոփուէին կրօնի և հոգևոր քարոզչութեան սահմաններուն մէջ»։ Թէ որքան ատեն Մկրտիչ Վարդապետ Խրիմեանը մնաց Աղթամարի մէջ, չը գիտենք, միայն պարզ է, որ 1864 թուի աշնան, Մկրտիչ Վարդապետը, Գաբրիէլ Արքեպիսկոպոսի գրաւոր արտօնութեամբ, իբրև Աղթամարի նուիրակ-քարոզիչ կ'ուղևորուէր դէպի Կ. Պոլիս։

## Զ.

## „ՀԱՅԱՍՏԱՆՅԻ ՎԱՐԴԱՊԵՏ"Ն Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Աղթամարէն կ'երթայ Վան, ճամբու պատրաստութիւններ կը տեսնէ և քանի մ'ուղեկիցներու հետ, 1864 թուի աշնան, Մկրտիչ Վարդապետ Խրիմեանը ճամբայ կ'իյնայ։ Արճէշէն կ'անցնի Էրզրում, ապա Տրապիզոն, ուր նաւ նստելով, երրորդ անգամ ըլլալով կը կտրէ Սև ծովը։ Ի Կ. Պոլիս ապրող անոր բարեկամները ու համակիրները արդէն գիտէին, որ նա մայրաքաղաքը պիտի գար։ Այն օրը, երբ Մկրտիչ Վարդապետը Կ. Պոլիս կը ժամանէր, դիմաւորութեան եկող բազմութեան մը ուղեկցութեամբ կ'առաջնորդուէր Սկիւտարի Ս. Խաչ եկեղեցին, որուն բակին մէջ իրեն յատկացուած էր սենեակ մը։

Կ. Պոլիս հասնելէն օր մը յետոյ, Մկրտիչ Վարժապետը կը ներկայանայ Patriarkին և իր առաքելութեան նպատակը կը պարզէ։ Պատրիարքը սիրալիր ընդունելութիւն ցոյց կուտայ և կ'արտօնէ, որ Կ. Պոլսոյ եկեղեցիներուն մէջ քարոզութիւնները ընէ։ Կ. Պոլսոյ Հայ թերթերը, կը յայտարարեն թէ «Մկրտիչ Վարդապետ Խրիմեանը մայրաքաղաքս ժամաներ է»։ Եւ օր մըն ալ, Կ. Պոլսոյ Հայութիւնը գունդ առ գունդ կ'երթար Մայր Եկեղեցին (ի Կում-Կափու) «Հայաստանցի Վարդապետ»ին քարոզը լսելու։

«Ամբողջ Մայր Եկեղեցին ժողովուրդով լեցուեցաւ, ինչպէս կ'ըսեն ասեղ ձգելու տեղ չը մնաց։ Պետական բարձրաստիճան պաշտօնեաները, ամիրաները և հարուստներ եկեղեցւոյ ատեանին առջև գրաւեր էին իրենց տեղերը։ Պատարագիչը՝ նոյն ինքն Մկրտիչ Վարդապետն էր, որ խաչն ու գաւազան ձեռքին բռնած, եկեղեցւոյ սեղանին վրայէն իր պատկառելի հասակով դարձաւ դէպի խուռներամ ժողովուրդը։ Խաչակնքելէ յետոյ սկսաւ քարոզել։ Նախ Քրիստոսի վարդապետութեան և Աւետարանի ճշմարիտ ոգւոյն անդրադարձաւ, ապա Հայաստանեաց Առաքելական եկեղեցւոյ գովքն ըրաւ և կամաց կամաց ծանրացաւ մեր ազգային անցեալի և Հայոց Պատմութեան հոյակապ ղէմքերու վրայ։ Սքանչելի կերպով բացատրեց Գրիգոր Լուսաւորչի, Մեծն Ներսէսի, Սահակ Պարթևի, Մես-

րոպ Մաշտոցի, Ոսկեդարեան քերթողներու, Վարդան Մամիկոնեանի, Բագրատունեաց և Ռուբինեանց մեծագործ և հայրենասէր թագաւորներու կատարած դերերը և այսպէս հասնիլ մինչև մեր օրերը, համեմատութիւն ըրաւ անցեալի և ներկայի Հայ կեանքի մասին, շեշտելով, թէ ինչպէս Հայաստան Աշխարհը, դարերէ ի վեր զրկուած է իւր ազատութենէն և Հայ ազգը կը տառապի բռնաւորաց շղթաներուն տակ. Ապա յանկարծ, որոտալից ձայնով մ'աղաղակեց— «Ողբա՛մ զքեզ Հայոց Աշխարհ, ողբամ զքեզ ժողովուրդ Հայոց». Ազգի և հայրենիքի սիրոյ մասին այնքան խանդավառ և ոգեւորիչ զգացումներ արտայայտեց, որ գրեթէ ինքնամոռացումի մէջ ընկաւ։ Բառերն ու խօսքերը մէկ քան զմիւս սրտառուչ և գեղեցիկ՝ կարկուտի նման՝ դուրս կը թափէին իւր բերնէն։ Հրաւէր կարդաց, որ մայրաքաղաքի Հայութիւնը միայն իւր ուսման և դաստիարակութեան մասին չը մտածէ, որ անդին կայ բուն Հայրենիքը— Հայաստան Աշխարհը— ուր խաւարի և տգիտութեան մէջ, բռնութեան և արհաւիրքներու տակը ընկճուած, անտեսուած և մոռացուած գաւառներու Հայութիւնը մայրաքաղաքի հայերու օգնութեան և հոգացողութեան առարկայ պիտի դառնայ և կոչ ըրաւ, որ Գատրիարքարան, ազգային մարմիններ և ժողովուրդը ասկէ յետոյ, եղբայրական ձեռք կարկառեն նաև գաւառներու հայերուն և զարկ տան անոնց մտաւոր դաստիարակութեան։

«Հայաստանցի Մկրտիչ Վարդապետ Խրիմեանի այս քարոզը այնքան խոր և քաղցր տպաւորութիւն թողուց ժողովուրդի վրայ, որ այնուհետև, ամէն տեղ անոր մասին կը խօսէին, անոր գովքը կ'ընէին։ «Հայաստանցի Վարդապետը ազգի և հայրենիքի վերածնութեան նոր առաքեալ ու ջահակիր մըն է» կ'ըսէին պոլսահայերը, որոնց սիրտերը թունդ եւած էին ազգասիրութեան ջերմ զգացումներով։

«Կիրակի օր մըն ալ, Հայաստանցի Վարդապետը հրաւիրուեցաւ Գէշիկթաշի Ս. Աստուածածին եկեղեցին պատարագելու և քարոզելու։ Այս մասին արդէն լուրը տարածուած էր. եկեղեցին բերնէ բերան այնքան ժողովուրդ խռնուեցաւ, որ շատերը դուրս մնացին։ Եկեղեցւոյ ատեանին առջև նստած էին Արքունի ձարտա-

բապետ Կարապետ Ամիրայ Պալեան և Արքունի Վառօդապետ Յովհաննէս Պէյ Տատեան։

«Մկրտիչ Վարդապետի քարոզին բնաբանն էր՝ Եկի նուր արկանել։ Եւ յիրաւի, բերանը բանալուն պէս, այլևս կարծես մոռցաւ, որ ինքը հոգևորական էր, այլ՝ ազգի և հայրենիքի մասին այնքան եռանդուն և կրակոտ քարոզ մը խօսեցաւ, որ կրակ ու բոց դարձաւ և հրեղէն խօսքերով ու զգացումներով բացատրեց ազգասիրութեան և հայրենասիրութեան գերագոյն նպատակը։ «Իւր ազգն ու հայրենիքը չը սիրող անձը, մարդկային կեանքի մէջ ապրելու իրաւունք չը պիտի ունենայ» որոտագին ձայնով մը կանչեց Հայաստանցի Վարդապետը, աւելցնելով—«Հայ եղողը Հայաստանի հողին վրայ միայն կը ճանչնայ թէ ինքզինքն եւ թէ ազգն ու հայրենիքը»։

«Ապա, յանկարծ աչքը դրպաւ ատեանի աջն նստած Յովհաննէս Պէյ Տատեանին, որուն ուղղեց այս խօսքերը—«Ո՛վ Արհուճք Վառօդապետ, հու ամբաւած վառօդէդ հիչ մըն ալ Հայաստանցի հայերուս տուր, որ գործածենք մեր բռնամիներուն դէմ»։ Ետոյ դարձաւ Կարապետ Ամիրայ Պալեանին և ձայնեց—«Ո՛վ Արհուճի Ձարտարապետ, բա՛ւ է որ Սուլթանաց համար պալատներ շինես, եկո՛ւր հեզ Հայաստան տանիմ, հոն մեր նախնեաց աւերակներ շատ կան, եկո՛ւր, նորոգէ՛ մեր փլած եւ կիսաւերակ ամրոցներ, բերդեր եւ պալատներ»։

«Վառօդապետն ու ձարտարապետը սարսափած, խեղդուած ձայնով մը կ'ըսեն – «Ամա՛ն, Հայր Սուրբ, ոտքդ պագնենք, ատանկ մի խօսիր, զմեզ խորտակել կ'ուզես»։ Իսկ ժողովուրդին մէջ խուլ շշուկ և իրարացում մը փրթաւ։ Գոհունակ դէմքեր, խորհրդաւոր նայուածքներ, վառվռուն աչքեր ուղղուած էին Հայաստանցի Վարդապետին, որ բուռն ոգևորութեամբ շարունակեց ու վերջացուց իւր քարոզը։

«Գիրակի օր մըն ալ Սկիւտարի Ս. Խաչ եկեղեցին հրաւիրուեցաւ քարոզելու։ Ելանք գացինք. կրնայինք չ'երթալ, կը համբերէինք։ Ազգի և հայրենիքի սիրոյ մասին մենք առաջին անգամն էր, որ այդպէս խանդավառ և անկեղծ քարոզիչ մը կը տեսնայինք։ Հայաստանցի Վարդապետը նորէն իւր սովորական եռանդով ու բարձրաթռիչ զգացումներով կը քարոզէր։ Սկիւտարի Ս. Խաչ եկեղեցին

մէջ խօսած քարոզը պարզապէս յեղափոխութեան և ըմբոստութեան կոչի ու հրաւէրի կը նմանէր. մեր աչքին առջև կանգնած ոչ թէ կրօնական, այլ յեղափոխական դէմք մը, որ կ'աղաղակէր—«ելէ՛ք, ելէ՛ք Հայկայ զաւակունք, առէք սուր եւ հրացան, վառօդ ու գընդակ, երթանք Աշխարհ Հայաստան, զի տառապեալ Հայ ժողովուրդը ձեզի կը սպասէ ակնդէտ»։ Այս խօսքերու ժամանակ, ժողովուրդի մէջ շշուկներ բարձրացան, շատերը շշնջացին — «Սո՛ւս... սսը՛... ըը՛...», որպէսզի քարոզիչը, փոխէր իր խօսքերը, բայց կրակոտ վարդապետը, որ եկած էր ազգի և հայրենիքի ազատութեան հուր արկանել մայրաքաղաքին հայոց սրտերուն մէջ, այդ «սսը՛»ներուն և «շշը՛»ներուն ի լուր հետևեալը պատմեց—«ժամանակին, Պաբսից Շահերէն մէկը, իւր սիրած ուղտին վիզէն կախել կուտայ հրովարտակ (ֆէրման) մը, որով ուղտը արտօնուած էր մտնել քաղաքին շուկան և ամէն խանութին մօտենալով կրնար իւր ուզած ուտելիքներն ու միրգերը ճաշակել։ Խանութպանները երբ կը տեսնէին, որ արտօնեալ ուղտը իրենց խանութին կը մօտենար և կը սկսէր միրգերն ուտել, կը քաշուէին խանութին ներսը և վարագոյրին ետևէն՝ «սսը՛» «ըը՛» կը ձայնէին, սակայն ուղտը անվախ ու համարձակ կը շարունակէր իւր գործը։ Հիմայ, ժողովուրդ Հայոց, ես ձեր այդ «սսը»ներն ու «շշը»ները, հաշուի չեմ առներ, ձեր վախի և զգուշացման ձայները չ'են կրնար ինձ լռեցնել, վասն զի Հայաստանի տառապեալ ժողովուրդը ինձ արտօնած է, որ իւր սրտի թարգմանն ըլլամ և իւր ցաւոց պատկերն ու ցանկութիւնները պարզեմ ձեր առջև»։ Գոհունակութեան ժպիտներ փայլեցան ունկնդիրներու դէմքերու վրայ, իսկ Մկրտիչ Վարդապետը նոյն եռանդով շարունակեց ու վերջացուց իւր քարոզը, որ շատերուն վախ պատճառած էր, հակապետական խօսքեր բովանդակած ըլլալուն համար։

«Ու այսպէս, Հայաստանցի Վարդապետին քարոզները թունդ կը հանէին Կ. Պոլսոյ հայերու սիրտերը։ Ազգի և հայրենիքի սիրոյ հուրն արկանող Խրիմեանը կը դառնար ժողովրդական յայտնի դէմք մը, ամէնքի սէրին ու յարգանքին արժանացած հոգևորական մը, որուն սիրտն ու հոգին համակ հայրենասիրութեան և ազգասիրութեան վառ հնոց մըն էր։ Ահա թէ ինչու, երբ Մկրտիչ Խրիմեանը 1854-ի վերջերը Կ. Պոլիս կը հասնէր, մայրաքաղաքի Հայու-

թիւնը, անոր քարոզներու ազդեցութեամբ տարուած կը հետաքրքրուէր գաւառաբնակ Հայութեան վիճակով և յաճախ դրամական հանգանակութիւնները կը կատարուէին, Հայաստանի այս ու այն գաւառի հայերուն օգնելու համար»*)։

Կ. Պոլսոյ հոծ Հայութիւնը կը սթափուէր և կը յիշէր, որ անդին, Անատոլիի խորքերու և Հայաստանի մէջ, հսկայ զանգուած մը, տանջուած և խոշտանգուած Հայութիւն մը կար, որ դարեր շարունակ լուռ և համր կերպով կը ծփար տգիտութեան, խաւարի և տաճկական ու քրդական արհաւիրքներու մէջ։ Մկրտիչ Վարդապետ Խրիմեանը այդ զարկուած ու զրկուած ժողովուրդի դարաւոր տառապանքի ձայնն էր, անոր վիշտերու թարգմանը և տգիտութեան խաւարը լուսաւորող ջահը։ Սկիւտարի Ս. Խաչ եկեղեցւոյ ծխականներու խնդրանքով և Պատրիարքարանի արտօնութեամբ Մկրտիչ Վարդապետը կը նշանակուի յիշեալ եկեղեցւոյ քարոզիչ և միշտ նոյն ազգասիրական ոգով խանդավառ քարոզները կուտայ։

Սակայն բանաւոր քարոզութիւնները բաւական չ'էին, որ Մկրտիչ Վարդապետը իր նպատակին հասնէր։ Նա կը դիմէ իր բա-

*) Կ. Պոլսոյ երեք եկեղեցիներու մէջ, Մկրտիչ Վարդապետ Խրիմեանի խօսած քարոզներու այս մանրամասնութիւնները հաղորդեց ինձ (1923 Յուլիս 20) ԽՕՀԻԿ ԽԱՆ ՍԱՐԱՖԵԱՆԸ չէչտելով—«Պաշտելի Խրիմեանի այդ քարոզներուն, 1854-ին ունկընդիր եղած էր լուսահոգի հայրս, Յովճաննէս Սարաֆեանը, որ միշտ հիացմունքով կը յիշէր այն օրերը, երբ Հայաստանցի Վարդապետը Թունդ հանած էր Կ. Պոլսոյ Հայութեան ազգային ու հայրենասիրական զգացումները։ Ես այս բոլորը պատմեցի քեզ հօրս բերնով ու խօսքերով»։

Խաչիկ Խան Սարաֆեանը, գրական ծածկանունով Եաչխար, ծնած էր Կ. Պոլսոյ Մաքրի գիւղին մէջ 1849-ին։ Պատանի հասակէն, 1865-ին, Կիւլպէնկեան Առևտրական Տան պաշտօնեայ դառնալով, ամբողջ 60 տարի բարեխղճօրէն կը ծառայէ։ Կ. Պոլսոյ 1860—1880-ական թուերու քաղաքական, ազգային և գրական դէպքերու և դէմքերու մասին շատ արժէքաւոր տեղեկութիւններ գիտէը և պայծառ յիշողութեամբ յաճախ կը պատմէր ինձ (և ես այդ բոլորը գրի առած եմ) թուականներով և հետաքրքիր մանրամասնութիւններով։ Ազգային և գրական ասպարէզներու մէջ (Կ. Պոլիս, Տասթէմունի, Պուլկարիա, Թաւրիզ), Խաչիկ Խան Սարաֆեանը միշտ ալ համեստ, բայց գործօն մասնակցութիւն ցոյց տուած է։ 1898-ին հաստատուեցաւ ի Թաւրիզ, ուր 1927-ի Հոկտ. 27-ին կնքեց իր մահկանացուն 78 տարեկան հասակի մէջ։ Անոր բազմաթիւ գրական քերթուածները ցարդ անտիպ կը մնան։

բեկամներուն և համակիրներուն, որպէսզի դրամապէս օգնեն իրեն ամսաթերթ մը հրատարակելու համար, բացատրելով, որ թերթի միջոցով ալ աւելի հնարաւոր պիտի ըլլայ ժողովուրդին մէջ տարածել ազգի, հայրենիքի և ուսման սէրը։ Անոր այս խնդրանքին կ'ընդառաջեն Տատեան, Օտեան, Պալեան և Տիւզեան անուանի և հարուստ գերդաստանները, որոնց նիւթական և բարոյական օժանդակութեամբ ու բազմաթիւ համակիրներու և բարեկամներու քաջալերութեամբ Մկրտիչ Վարդապետ Խրիմեանը գործի կ'անցնի։

## Է.

## „ԱՐԾՈՒԻ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ“

Մկրտիչ Վարդապետ Խրիմեանի նպատակը կ'իրագործուէր 1855 թուի Ապրիլ ամսին։ Իւր բարերարներու նիւթական օժանդակութեամբ ապահովուած և ժողովուրդի բարոյական քաջալերանքներով ոգևորուած, նա՝ Հայաստանցի Վարդապետը, Կ. Պոլսոյ Աւագեան Տպարանի հետ կը պայմանաւորուէր հրատարակելու ամսաթերթ մը, «ԱՐԾՈՒԻ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ» անունով։ Կառավարութեան հրամանը և Պատրիարքի արտօնութիւնը ստանալէ յետոյ, Խրիմեանը ամսաթերթին մէջ հրատարակուելիք նիւթերը կը խմբագրէր, կը դասաւորէր և կը յանձնէր մամուլին։

Եւ ահա 1855 թուի Յունիս ամսի սկզբին, Կ. Պոլսոյ մէջ, Մկրտիչ Վարդապետ Խրիմեանի խմբագրութեամբ լոյս կը տեսնէր՝

«ԱՐԾՈՒԻ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ. ԹՌՈՒՑԵԱԼ ՀԱՑՐԵՆԱՍԷՐ ԹԵՒՕՔ ՅԱՐԵՒՈՒՆԻ ԳԱՀԷՆ Ի ՎԱՆՏՈՍՊ. Ա. Տարի. Թիւ 1. 1855. Յունիս. ԽՄԲԱԳԻՐ ՀԱՑՐԵՆԱՒՕՍ ՄԿՐՏԻՉ ՎԱՐԴԱՊԵՏ ԽՐԻՄԵԱՆ. Կոստանդնուպօլիս. ի Տպարանի Երից Եղբարց Աւագեանց»։ (Թերթը տետրակի ձևով էր, քառածալ, 16 երես. Ծաւալ՝ 15×24 հարիւրորդամեթր. Թուղթ և տպագրութիւն՝ բաւարար։ Բաժնեգին՝ Կ. Պոլիս՝ 3 արծաթ մէճիտ, Ռուսաստան՝ 4 արծաթ մանէթ)։

Ողջոյն քեզ, «Արծուի Վասպուրականց», որ «հայրենասէր թեւօք»դ Վոսփորի ափերէն կը սլանաս դէպի Հայաստան Աշխարհ և «Հայրենեաց Մկրտիչ Վարդապետ Խրիմեանի» ողջոյնն ու աւետիսը

կուտաս տառապանքի մէջ տանջուող և մտաւոր խաւարի մէջ խարխափող Հայութեան։

Արծուի Վասպուրական՞ն... ո՛վ էր այդ Արծիւը, որ իւր թեւերը թափահարելով Ց. Գոլսէն պիտի սլանար դէպի Հայոց Աշխարհը։ Վասպուրականի Արծիւը նոյն ինքն Մկրտիչ Վարդապետ Խրիմեանն էր, որ իւր ազգանուէր և հայրենանուէր ամբողջ եռանդն ու թափը, ժողովուրդը դաստիարակելու իւր բովանդակ ջանքերը, Արծուի թևերով կ'ուղարկէր ամենուրեք և ազատ ու համարձակ կերպով կը հնչեցնէր իւր ձայնը։

«Արծուի Վասպուրական»ի առաջին թիւէն իսկ, հայրենախօս խմբագիրը կ'ընդգծէր իւր ազգային գործունէութեան սահմանները, որոնց մէջ կ'ամփոփուէին կրօնի, ազգի, հայրենիքի և ուսման ու դաստիարակութեան սիրոյ գաղափարները։ Խմբագիրը կը յորդորէր, որ գիւղացի՝ «շինական ժողովուրդ»ը կապուած մնայ իւր հողին ու ջուրին հետ, օտարութեան, պանդխտութեան չը դիմէ և զարկ տայ գիւղատնտեսութեան։ Հողամշակութիւնը ժողովուրդի բարօրութեան ազդակներէն մէկը կը համարէր և ասոնց հետ զուգընթաց՝ գիւղացիները պէտք է ուսում ու կրթութիւն ստանային։

Սակայն գաւառաբնակ հոծ Հայութիւնը կարող էր բարձրացնել իւր մտաւոր մակարդակը։ Ժողովուրդը ենթակայ էր տիրող տարրերու սարսափներուն, մատնուած էր անտէրութեան, մինչ ասդին, մայրաքաղաքի Հայութիւնը անհոգ ու հանգիստ կեանք մը կը վարէր, առանց հետաքրքրուելու գաւառներու Հայութեան վիճակով։ Ահա այս ցաւոտ ու վիրաւոր երևոյթները՝ յուզումով և արցունքով կը պատկերացնէր Մկրտիչ Վարդապետը թէ իւր քարոզներու և թէ «Արծուի Վասպուրական» թերթին մէջ։ Եւ այսպիսով «Արծուի Վասպուրական»ը կը դառնար Հայաստանի Հայութեան հառաչանքի ձայնը, անոր տառապանքներու թարգմանը և ապագայ յոյսերու արտայայտիչը, յանձինս Մկրտիչ Վարդապետ Խրիմեանի՝ որը պոլսահայերու կողմէ ճանչցուած էր իբրև Հայասացցի Վարդապետ։

Հայրենախօս խմբագիրը, «Արծուի Վասպուրական»ի 1855 թուի, Օգոստոսի ամսաթերթին մէջ (թիւ 3) կը սկսէր հրատարակել դէպի Կիլիկիա իւր կատարած ճամբորդութեան տպաւորութիւնները, որոնք շարունակաբար լոյս տեսան և երեք անգամով վերջացան (թիւ 3–5)։

Օ'ն ուրեմն մտնենք Կիլիկիա— «Ճաճկամ տեսնել զիմ Կիլիկիա...»։

«ՀԱՑՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ. Ճանապարհորդութիւն ի Սիս.— Այն ինչ հասանէը մեզ մտանել ընդ դուռն Տորոսեան լերանց.ով, որպիսի տեսարան իմն ամենազուարճ եւ ցանկալի տարածեցաւ առաջի ուղեւորիս աչաց, որով յափշտակեալ եւ ակնպիշ եղեալ միանգամայն անյագ տենչանօք դիտել սկայ ընդ գեղեցկաշար բիւրաշղթայ բազմատարած լերինս, պարզեալ ձգեալ ընդ չորս կողմունս խիտ զմիմիամբք անցեալ, 'ի հիւսիսոյ առ հարաւ, 'ի հարաւոյ առ հիւսիս, յարեմտից յարեւելս, յարեւելից յարեմուտս»*)։

«Արծուի Վասպուրականը» այնքան ջերմ և սիրալիր ընդունելթիւն կը գտնէր Կ. Պոլսոյ ազգային և գրական շրջանակներու մէջ, անոր ընդհանուր բովանդակութիւնը այնքան լաւ և քաղցր տպաւորութիւն թողած էր ամենուրեք, որ հայրենասէր խմբագիրը ամէն կողմէ քաջալերական և խրախուսիչ նամակներ կը ստանար։

Որքան գեղեցիկ էր ամպերու մէջ սաւառնող թևատարած արծուի նկարը, որ կը զարդարէր թերթի առաջին էջի ճակատը։ Չէ որ այդ արծիւը, նոյն ինքն Վասպուրականի Արծիւն էր, որ իւր «հայրենասէր թևօք» Կ. Պոլսէն կը սլանար Հայաստանի ամէն կողմերը, Ջմիւռնիա, Կիլիկիա, Երուսաղէմ, Կովկաս, Պարսկաստան, Ռուսաստան, Եւրոպայի փոքրաթիւ Հայ գաղութներ ու մինչև հեռաւոր Հնդկաստան և ամէն տեղ ջերմ ընդունելութեան կ'արժանանար։

«Արծուի Վասպուրականը», 1855 թուի Յունիս, Յուլիս, Օգոստոս և Սեպտեմբեր ամիսներուն 500-ական օրիակ լոյս կը տեսնէր, «Երից եղբարց Արապեան» տպարանի մէջ։ Խմբագիրը յաջողած էր, այս չորս ամիսներու ընթացքին, ոչ միայն ծածկել տպարանական ծախսերը, այլև համեստ գումար մըն ալ խնայած էր, մտադիր ըլլալով իւր թերթի համար գնել սեփական տպարան մը։ Այս նպատակին հասնելու համար, Խրիմեանը կը դիմէ իւր բարերարներուն և համակիրներուն, խնդրելով որ օժանդակեն իրեն։ Ամէնքը սիրով ընդառաջեն ազգասէր վարդապետի ցանկութեան և ահա, 1856 Յուլի Հոկտեմբերին «Արծուի Վասպուրականի 5-րդ թիւը լոյս կը տեսնէր իւր սեփական տպարանէն, որ հաստատուած էր, Սկիւ-

*) «Արծուի Վասպուրական». 1855. Հոկտ. Թիւ 5։

տաբի Ս. Խաչ եկեղեցւոյ բակին մէջ գտնուած յարմար շէնքի մը մէջ, ծխականներու ցանկութեամբ, որպէսզի իրենց եկեղեցւոյ քարոզիչը՝ Մկրտիչ Վարդապետը ստիպուած չ'ըլլար տպարանի համար յատուկ շէնք վարձել։ Չէ որ այս ալ տեսակ մը օժանդակութիւն էր։ Տպագրական այդ մեքենան երկաթեայ էր, իւր բոլոր պարագաներով և տառերով։ «Արծուի Վասպուրական»ի 1855-ի Հոկտեմբերի ամսաթերթի վրայ տպուած է հետեւեալը — «Իւսիւսար. ընդ հովանեաւ Սուրբ Խաչ Եկեղեցւոյն. ի տպարանի Արծւոյն Վասպուրական. 1855—ՌՃԴ»։

Թերթի խմբագիրը և սրբագրիչ ինքն էր՝ Մկրտիչ Վարդապետը։ Օգնականներ աշխատակիցները ազգասիրական և կրօնա-բարոյական նիւթերու մասին երբեմն յօդուածներ կուտային։ Գլխաւոր աշխատակիցներն էին Տիգրան Ե. Կալփաքճեան (յետոյ Ծուսիկ Վարդապետ) և Մինայէլ Ռուբէնեան (յետոյ Ամբրոսիոս Վարդապետ), որոնք յանուն ազգասիրութեան ոչ միայն յօդուածներով կ'աշխատակցէին թերթին, այլև գրաշարութեամբ և կազմաբարութեամբ կը զբաղուէին։

Երբ որ «Արծուի Վասպուրական»ը իւր սեփական տպարանէն լոյս տեսաւ, հայրենասէր խմբագիրը, առաջին առթիւ իսկ հետեւեալ տողերը կը գրէ։

«Անհրաժեշտ պարտք է բոլոր քաղաքացի իշխանաց, որոնք կարող և ձեռնհաս են՝ բարիք ընելու համազգի գիւղացւոց կրթութեան համար ըստ ամենայնի հոգ տանիլ, վասն զի դպրոց, ուսումն, վարժապետ, ազգասիրութիւն միայն քաղաքացւոց համար չէ»*)։ Այս խօսքերով խմբագիրը կը յորդորէր, որ քաղաքացիք «իրենց հայրենակից գիւղաբնակ եղբարց լուսաւորութեան համար» նուիրաբերող և աշխատող ըլլան։

Այսպէս ահա, ամբողջ տարի մը, 1855 Յունիս—1856 Մայիս, կանոնաւոր կերպով լոյս կը տեսնէր «Արծուի Վասպուրական»ը, որուն խմբագիրը պարզ ու պայծառ կերպով արդէն ընդգծած էր իւր ազգանուէր գործունէութեան սահմանները։ Օ՛ն ուրեմն, պէտք էր երթալ «հայրենակից գիւղաբնակ եղբարց լուսաւորութեան», բարօրութեան և ազատութեան համար աշխատիլ։

*) «Արծուի Վասպուրական». 1855. Հոկտ. Թիւ 5։

## Ը.

# ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ ՎԵՐԱԾՆՈՒՆԴԸ

Համաշխարհային պատմութեան մէջ, ԺԹ-րդ դարը կը համարուի ազգերու քաղաքական, հասարակական, մտաւոր, գրական և գիտական Վերածնութեան Դարը։

Մարդկային միտքը կաշկանդող կապանքները լուծուած էին Եւրոպայի մէջ։ Հասարակական և քաղաքական նոր ծրագիրներ կը մշակուէին։ Ազգերն ու անհատները մտածողութեան և գործելու նոր և ազատ ուղիներ կ'որոնէին և մարդկութեան բարօրութիւնը դարբնելու համար նոր ոլորտներ կը փնտռէին։ Հնամաշ, ստրկամիտ և կաշկանդիչ աւանդներն ու նախապաշարումները կը վերնային մէջտեղէն։ Մարդկային-ընկերական յարաբերութիւններն ու հասկացողութիւնները նոր հիմքերու վրայ կը դրուէին։ Եւ այս բոլոր երևոյթներու մէջ խոշոր և գործօն դեր կը կատարէին գիտութիւնն ու գրականութիւնը։ Գրագէտն ու գիտնականը ասպարէզ կ'իջնէին պաշտպանելու համար անհատի և հանրութեան շահերը։ Արևմտեան հասարակութիւնը, դարաւոր փորձանքները քաշելէ յետոյ, չէր հանդուրժեր հոգևոր և քաղաքական ճնշիչ լուծը, պահանջելով, որ մարդկային միտքն ու խօսքը ազատութիւն վայելեն։

Ֆրանսական 1848-ի յեղափոխութիւնը ոչ միայն կ'ազատագրէր Ֆրանսան հին կարգերէն և վարիչներէն, այլև մեծ ու փոքր ազգերու առջև կը բանար մտածողութեան և նոր կեանքի հորիզոններ։

Իտալիան կ'ապստամբէր և աւստրիական բռնակալ լուծէն կ'ազատագրուէր։ Բովանդակ աշխարհը հետևիհետէ կը հետևէր իտալական այս ազատագրական շարժումին, որուն ղեկավարներն էին Գարիբալդին և Մաձինին։ Ժողովրդական այս զոյգ հերոսները դիւթեր ու հմայեր էին բռնութեան շղթաներով կաշկանդուած ազատատենչ մեծ ու փոքր ազգերու սիրտն ու հոգին։

«Երիտասարդ Գերմանիան» իր գիտական ու գրական փայլուն նուաճումներով և բարձրաթռիչ խոհերով կը ծառանար հին կարգերու և ըմբռնումներու դէմ։

Այսպէս, Եւրոպայի մէջ, մարդկային միտքը նորանոր թռիչքներով հսկայական նուաճումներ կ'ընէր։

Ռուս մտաւորականութիւնն ալ կը շարժուէր և գիտական, գրական ու հանրային հարցեր կ'արծարծէր. Ռուսաստանի և ռուս ժողովուրդի վերածնութեան գաղափարը այդ մտաւորականութեան ներշնչման և ոգևորութեան աղբիւրը կը կազմէր։ «Անձի ազատագրութեան երկրպագու» Պիսարեվը կը գրէր որ— «Բանաստեղծը պէտք է մարմնացնի իր մէջ ժամանակի լաւագոյն ձգտումները. նա գրում է իւր սրտի արիւնով, իսկ սրտի արիւնով գրելու համար պէտք է խորապէս և գիտակցաբար ատել և սիրել, առանց անձնական օգտի». Ռուսաց գրականութիւնը ներշնչուած էր իւր երկրի ցաւերով, մատնանշելով ժողովուրդի չարքաշ կեանքը և խեղդուած հեծեծանքը։

Ռուսական մտքի այս վերազարթնումը խորապէս կ'ազդէր նաև արևելահայ ուսանողութեան և ժամանակակից ազատամիտ մտաւորականութեան վրայ։ «Ազգութիւն, հայրենիք և հաղաքացի» կոչումները վսեմ գաղափարներու և առողջ հասկացողութիւններու ուղիներ բացեր էին նոր սերունդի առջև, որուն միակ նպատակն էր կռել ու կոփել մտաւոր և ազգային վերածնունդ մը, որուն համար «Հանճարեղ Սիրտ» Խաչատուր Աբովեանը կ'աղաղակէր։

«Հոգ ունինք՝ խլած, կեանք ունինք՝ մեռած,
Ա՜խ, ջրի-կրակի մենք եսիր դառած.
Է՛ն ինչ շունչ կըլի, որ էս նոր հոգին
Փչի, վեր կացնի քնից մեր ազգին...»։

Աբովեանը իւր «Վէրք Հայաստանի— Ողբ Հայրենասիրի» հատորը Արարատեան Աշխարհի գեղջուկ հայաբարբառով կը գրէր, որպէս զի հասարակ ժողովուրդը կարդար, հասկնար և տեսնէր իւր սրտի և հայրենիքի վէրքն ու ոդբը։

Գիտնական և հրապարակագիրը՝ «Ռուսահայ Հրապարակախօսութեան Նահապետ» Յոհփաննես Նազարեանցը Հայ աշխարհիկ մայրենի լեզուին այս սրտաուռչ կոչը կ'ուղղէր.

«Հնչիր դու հնչիր այժմ և յաւիտեան,
Մայրենի լեզու, բարբառ սիրական,
Արի, բարձրացիր հնութեան փոշուց,
Զգեցիր նոր կեանք սուրբ գրուածքներով,
Որ ամենայն սիրտ վառուի քո սիրով...»։

Այս կոչը կը միանար Արովեանի հառաչանքին և Հայ աշխարհիկ լեզուն հետզհետէ կը դառնար Արևելահայ գրականութեան ու մամուլի սեփականութիւնը։

«Մարտնչող - Հրապարակախօս»— բանաստեղծ Միքայէլ Նալբանդեանը Իտալիայի ազատագրութեան օրերուն, իտալացի աղջկան բերնով երգել կուտար՝ իր սրտէն բղխած և իր գրչով գրուած այս տողերը.

«Մեր հայրենիք թշուառ անտէր,
Մեր թշնամուց ոտնակոխ,
Իւր որդիքը արդ կանչում են,
Հանել իւր վրէժ քէն ու ոխ...»։

«...Ամենայն տեղ մահը մի է,
Մարդ մի անգամ պիտ մեռնի
Բայց երանի որ իւր ազգի—
Ազատութեան կը զոհուի...»։

Մեր հայրենիքը՝ թշուառ և անտէր Հայաստանն էր, որ «մեր թշնամուց ոտնակոխ» կ'ըլլար, այդ հայրենիքի որդիները՝ հայորդիներն էին, որոնք «հանել իւր վրէժ քէն ու ոխ» կը կանչէին. Ազատատենչ բանաստեղծը երանի կուտար այն Հային, «որ իւր ազգի ազատութեան կը զոհուի»։ Հայկական ազատագրութեան և ըմբոստութեան ահազանգն էր որ կը հնչէր։

Հեռաւոր Հիւսիսի պանդուխտ ուսանող Ռափայէլ Պատկանեանը —ապագայի «Ազգային Երգիչ» Գամառ Քաթիպան—ազգային վերածնութեան գաղափարը կը դարբնէր.

«...Թափ տանք մեզանից փոշին հնութեան,
Վերածնենք մեր մէջ նոր կեանք ու նոր բարք...»։

Այսպէս ահա կը դարբնուէր Արեւելահայ Ազգային եւ Գրական Վերածնութիւնը՝ Ռուսաստանի և Կովկասի մէջ։ Դպրոցներու, թերթերու, գրականութեան, ժողովուրդի դաստիարակութեան, բարօրութեան և տնտեսական բարգաւաճման հարցերը այլեւս արագութեամբ ծընունդ կ'առնէին և կը զարգանային։

Հին և նոր հասկացողութիւններ և դէմքեր իրար դէմ կը ծառանային։ Հոգևորականութիւնը իւր իշխանութեան խախտումը նախատեսելով, կատաղի պայքար կը մղէր աշխարհիկ ըմբռնումներու և ազգի ու հայրենիքի վերածնութեան գաղափարներով տոգորուած երիտասարդ մտաւորականութեան դէմ։

Այս միևնոյն երեսյթներուն մենք ականատես կ'ըլլանք նաև Արեւմտահայ Ազգային եւ Գրական Վերածնունդի պատմութեան ընթացքին։

Արևմտահայ մտքի և գրականութեան կեդրոնը հաղած է Կ. Պոլիս և մասամբ ալ Զմիւռնիա։ Դեռ 1820-ական թուերէն, պոլսահայ երիտասարդութիւնը կ'երթար Եւրոպա և Վենետիկի ու Վիեննայի Մխիթարեան միաբանութեանց կրօնա-ազգայնական շունչով կը դաստիարակուէր։ Ժամանակակից լուսաւոր գաղափարները, այդ քաղքենի ուսանողութեան համար ոչ միայն արհամարհելի, այլև խորշելի էին։ Մխիթարեանց դաստիարակութեան դրոշմը այնքան խորն էր, որ այդ ուսանողները գլխաւորաբար կը դառնային հոգևորականներ։ Սակայն ֆրանսական 1848-ի յեղափոխութեան ալիքներով տարուբերուած և գաղափարական ու մտաւոր շարժումներով դաստիարակուած արևմտահայ երիտասարդութիւն մը հրապարակ կ'իջնէր և կը պայքարէր հին ըմբռնումներու դէմ։ Այսպիսով արևմտահայոց մէջ կը յառաջանար երկու հոսանք—Ա) Կրօնական-Պահպանողական և Բ) Եւրոպական-Ծառայդիմական։ Առաջին հոսանքի պաշտպանները, կը հանդիսանային հոգևորականներ, հարուստներ, կղերամիտ հին դէմքեր և Մխիթարեաններու դաստիարակութեամբ և ազդեցութեամբ հրապարակ իջած անհատները։ Երկրորդ հոսանքի ներկայացուցիչներն էին եւրոպական դաստիարակութիւն ստացած և ազգի ու հայրենիքի վերածնութեան գաղափարով տոգորուած ազատամիտ երիտասարդները, ղեկավար ունենալով՝ Գրիգոր Օտեանի, Բժ. Նահապետ Ռուսինեանի, Մտ. Ոսկանի, Գրիգոր Ազաթօնի, Նիկողոս Պալեանի և ասոնց նման ժողովրդանուէր դէմքեր, որոնք համարձակօրէն կ'աղաղակէին—«Ամէն ինչ ժողովրդով եւ ժողովուրդի համար»։ Այս մտաւորական երիտասարդներու պատկառելի խումբը կը յաղթանակէր և ապա կը հիմնէր Ազգային Սահմանադրութիւնը, որ արևմտահայ ազգային վերածնութեան պատմութեան ամենաշքեղ և լուսաւոր էջը կը կազմէ։

Այս երկու հոսանքներու պայքարը շատ սուր կերպարանք ստացաւ մանաւանդ Կ. Պոլսոյ մէջ։ Պահպանողականութեան և հոգևորականութեան ձայնը հանդիսացաւ Ծովհաննէս Ֆէրոյենց Շամուրճեան Պատուելին իր «Երևակ» թերթով, իսկ ազատամիտ և յառաջ-

դիմասէը երիտասարդներու բերանն էր, «Մասիս» (1852) շաբաթաթերթը, որուն մէջ հին Պուէտ Խաչատուր Միսաքեան՝ նոր սերունդի աչակողմեան ներկայացուցիչը կը գրէր—«Հայոց մէջ ալ պէտք է, որ իմացական մարդը քիչ մը խլրտի, շարժի ու առաջ երթայ... Աղէկ գիտնանք, որ ազգային շարժման թափ տուողը տպագրութիւնն է»։

Նոր սերունդը յուսահատ կատաղութեամբ կը հարուածէր հին սերունդի յոռի բարքերը. յորդորելով, որ կրօնական անմիտ, պառակտիչ և եղբայրադաւ վէճերն ու կռիւները չքանան և անշարժութեան ու տգիտութեան դատապարտուած Հայութիւնը յառաջդիմական քայլեր առնէ։ Կ. Պոլիս և Զմիւռնիան իրենց երիտասարդ մտաւորականներու բանաւոր և գրաւոր քարոզութիւններով կը հանդիսանային Արևմտահայ ազգային և գրական վերածնունդի գլխաւոր կեդրոնները, որոնց մէջ, սակայն, կեդրոնացեր էին նաև պահպանողական տարրերը—«Ազգին երևելիներն ու կղերը»։

Յառաջդիմասէը և լուսամիտ երիտասարդութեան—թէ արևելահայոց և թէ արևմտահայոց մէջ—գաղափարական պայքարը ուղղուած էր հին սերունդի հետևեալ ըմբռնումներու դէմ։—Ազգային գաղափարը ամփոփուած էր միայն Հայ եկեղեցւոյ, իսկ Հայութիւնը՝ Քրիստոնէութեան մէջ։ Գրականութիւնը ներշնչուած էր կրօնական ոգով. լուսաւորուած և ուսեալ էր այն Հայը, որ գրաբարագէտ և խրթնաբան էր. ուսման մատակարարը Հայ հոգևորականութիւնն էր, ուսանելի դասերը՝ կրօնական. Ահա սոսկ էին հին սերունդի պաշտպանած գաղափարները, որոնց դէմ ծառացող ըմբոստ երիտասարդութիւնը կը պնդէր որ—«Հայկական եկեղեցին ազգայնութեան տարրերէն մէկն է և ոչ թէ ազգի մարմնացումը։ Կրօնը ազգի համար է ոչ թէ ազգը կրօնի համար»։ Կրօնական մոլեռանդութիւնը կը կասեցնէ մեր ժողովուրդի յառաջդիմական քայլերը և կը ծանրանայ մտքի ազատութեան վրայ։ Կրօնական գրականութիւնը ժողովուրդի մը մտաւոր զարգացման գլխաւոր ազդակ չը պիտի ըլլար։ Ուսումն ու դաստիարակութիւնը միայն կղերի, պահպանողականներու և «ազգին երևելիներուն» համար չէին։ Հասարակ ժողովուրդն ալ, մանաւանդ գիւղացիները և խոնարհ դասերը ուսման և կրթութեան պիտի արժանանային։ Սակայն լեզուն գրաբար էր և

անմատչելի՝ ժողովրդական հոծ զանգուածներուն։ Այստեղէն ալ անա, ծնունդ կ՚առնէր գրաբար-աշխարհաբարի պատմական պայքարը, որ կը վերջանար աշխարհաբարի կատարեալ յաղթանակով։ Դարեր շարունակ գրաբարը տիրող եղած էր, հսկայական մատենագրութիւնը կար, բայց ժողովուրդը օգուտուելու հնարք չ՚ունէր։ Սակայն ո՛վ կը համարձակէր մէկդի վանել գրաբարը—«նախաստեղծ Ադամի լեզուն»։ Մխիթէ կարելի էր ռամկաբար գրել, ռամիկի լեզուով սերունդ կրթել։ Ուրեմն պիտի աշխարհաբարը յաջորդէր «ամենապատուական լեզուիս Հայոց» գրաբարին։ Հին սերունդը կրնար հաշտուիլ այս մտքին հետ։ Այո՛, աշխարհաբարը կը յաղթանակէր շնորհիւ նոր սերունդի յառաջամարտիկ երիտասարդներուն, որոնք յաչս կղերի նկատուած էին «կործանիչ կրօնի և ազգային պարծանքի»։

ԺԹ–րդ դարի, 1860ական թուերուն, արևմտեան գիտական և գրական առողջ մտքերով սնած ու զարգացած Հայ երիտասարդութիւնը տարուած էր ոչ միայն ժողովրդասիրական, այլև համամարդկային գաղափարներով։ «Ժողովրդով եւ ժողովուրդի համար» յայտնի նշանաբանը կամաց կամաց կ՚իրականանար։ Այդ ժողովուրդը ոչ միայն քաղաքացիներէ, այլև գիւղացիներէ կը բաղկանար։

Մկրտիչ Վարդապետ Խրիմեանը «Արծուի Վասպուրական»ի մէջ կը գրէր—«Անհրաժեշտ պարտք է բոլոր քաղաքացի իշխանաց, որոնք կարող և ձեռնհաս են՝ բարիք ընելու համազգի գիւղացւոց կրթութեան համար ըստ ամենայնի հոգ տանիլ, վասն զի դպրոց, ուսումն, վարժապետ, ազգասիրութիւն միայն քաղաքացւոց համար չէ»։ Քաղաքացիք պարտաւոր են իրենց «հայրենակից գիւղաբնակ եղբարց լուսաւորութեան համար» աշխատիլ։ Մխիթարեանը կը շեշտէր որ—«Մի ազգ օրքան էլ հարուստ լինի երևելի մարդերով այնուամենայնիւ այդ ազգի ազգութեան մեքենան շարժուում է հասարակ ժողովրդի վրայ. սա է այդ մեքենայի առանցքը, լծակը, հաստատանը»։

Նոր սերունդի յաղթանակը ապահովուած էր այլևս գլխաւորաբար Կ. Պոլսոյ մէջ, ուր ամիրաներու և ժողովուրդի խոնարհ դասի և արհեստաւորներու մէջ մղուած պայքարն ալ կը վերջանար ամիրաներու պարտութեամբ։ «Ժողովրդական սկզբունքները ամէն օր աւելի գետին կը շահէին, յայտնապէս հովանաւորուելով ժամանակին

Պատրիարք Յակոբոս Սերոբեանի պաշտպանութիւնէն»*)։

Նոր սերունդը—յառաջդիմասէր երիտասարդներու այդ կուռ կազմակերպութիւնը—կը քարոզէր սիրել կրօնն ու եկեղեցին, որոնք Հայութեան գոյութեան գլխաւոր ազդակներէն են, սիրել ազգը ոչ թէ ճառերով ու խօսքերով, այլ գործնականապէս, աշխատելով ու զոհաբերելով. սիրել հայրենիքի ոչ միայն հողն ու ջուրը, այլև անոր ծոցին մէջ ապրող ժողովուրդը, որուն ուսման և դաստիարակութեան համար պէտք էր նիւթական և բարոյական նուիրաբերութիւն։ «Հայաստան երկիր դրախտավայր» ըսելով ու երգելով հայրենիքը «դրախտ» չէր դառնար, թէև Հ. Ալիշանը կ'ազդակէր, որ «դրախտը Հայաստանի մէջն էր» Աստուած՝ «երկրիս հիման քար յԱյրարատ դընլաւ, 'ի հայոց հողմէն կազմեցաւ Ադամ, զոր ն հայոց Եւայն ծնեաց քաղցրահամ» ևայլն։ Այս խօսքերը հայրենասիրութեան շատ հին և աւանդական ձևեր էին։ Պէտք էր ազգի և հայրենիքի սէրը ժամանակակից ոգիին և գաղափարներուն համաձայն արտայայտուէր, գործնականօրէն ցուցադրուէր։ Ժողովուրդի դաստիարակութեան ծառայել, ուսման և յառաջադէմ մտքերու ջատագով ըլլալ, գիւղացիներու տնտեսութեան բարգաւաճման և հողամշակութեան զարկ տալ, ժողովուրդին միտքը կաշկանդող նախապաշարումները ցրել, ազատ կեանքի և անկախ հայրենիքի գաղափարներն արծարծել, ստրկութեան, ոչխարամտութեան և կոյր հնազանդութեան վարագոյրները պատռել։ Ահա այս բոլոր վսեմ և գեղեցիկ նպատակները իրար լրացնելով՝ կը կազմէին ազգի և հայրենիքի գերագոյն սիրոյ յուշարձանը, որուն կառուցման համար ամէն մի Հայ անհատը պարտաւոր էր նուիրաբերել իւր ուժը և աշխատանքը։

Ի՞նչպէս պիտի տարածուէին այդ գաղափարները։ Միայն խօսքերը, լրագրային յօդուածները և քարոզները բաւական էին։ Ի հարկէ ոչ։ Այդ գաղափարներու և ազգի ու հայրենիքի սիրոյ քարոզութեան, ուսման և կրթութեան տարածման համար անհրաժեշտ էր Կենդանի Գործ և Ժողովրդանուէր Գործիչ, որ մայրաքաղաքէն մեկնէր բուն Հայաստան, մտնէր ժողովուրդին մէջ և աշխատէր։ Գաւառական գործունէութեան այդ ժողովրդանուէր գործիչը պատրաստ էր — Միսիոնէր

*) Թ. Ե. Գ. Խրիմեան Հայրիկ. էջ 21։

Վարդապետ Խրիմեանը՝ նոյն ինքն Վասպուրականի Արծիւը, որ ինքնաբերաբար հրապարակ կ'իջնէր և կ'երթար նուիրելու իւր ժողովուրդի ու հայրենիքի ուսման և մտաւոր վերածնութեան Մեծ Գործին,

— «Լոյս եւ Աբխատանիք...» ահա այս էր Խրիմեանի նշանաբանը, երբ նա կը պատրաստուէր Կ. Պոլսէն մեկնիլ հայրենիքը՝ Վասպուրական՝ «հայրենակից գիւղաբնակ եղբարց լուսաւորութեան» համար աշխատելու։

## Թ.

## „ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ՎԵՆԵՏԻԿԸ“

Մկրտիչ Վարդապետ Խրիմեանի կէտ-նպատակն էր Վասպուրականի կեդրոնական և պատմական վայրի մը մէջ հիմնել դպրոց, տպարան, հրատարակել թերթ և այդ վայրը դարձնել կրթական և գրական կեդրոն մը։ Արդեօք Մխիթար Աբբահօր հիմնած Մխիթարեան Միաբանութեան և Վենետիկի Ս. Ղազարեան մենաստանի պատկառելի Հայրերու կրթական և գրական գործունէութեան պատկերն ունէր իւր աչքին առջև, որ կը նախատեսէր հայրենիքի ծոցին մէջ ստեղծել այնպիսի հիմնարկութիւն ու մտաւոր կեդրոն մը, որ աթժանի ըլլար «Վասպուրականի Վենետիկը» կոչուելու։

ԺԹ-րդ դարի կէսերուն, Հայ մտքի կեդրոններն էին Վենետիկ, Վիեննա, Կ. Պոլիս, Թիֆլիս, Զմիւռնիա և մասամբ ալ Մոսկուա։ Այս կեդրոններու մէջ հաւաքուած ժամանակակից գրական և ազգային մեծանուն դէմքերը կը դարբնէին հասարակական, մտաւոր ու գրական վերածնունդը և կը հրահրէին հայկական ազատագրութեան և անկախ հայրենիքի գաղափարը։

Հայաստանէն հեռու, Վենետիկի գեղածիծաղ ափերուն վրայ, իւր խուցին մէջ կծկուած Հայր Ղեւոնդ Ալիշանը կը պրկէր իւր հայրենասէր քնարին լարերը և մեր ազգային անցեալի քաջայաղթ հերոսները կը վերակենդանացնէր։ Հայոց Աշխարհի գեղազուարճ բնութեան դովքը Հայր Ալիշանի ազգաշունչ գրչով կը բանահիւսուէր։ «Նուագք»ի հինգ հատորները և «Ծուխիկ Հայրենեաց Հայոց»ը կը դառնային ներշնչման և հայրենասիրական ստեղծագործութեան աղբիւր

և օրինակ ժամանակակից երիտասարդ մտաւորականութեան համար։ Հայր Արսէն Բագրատունիի «Հայկ Դիւցազն»ը իւր հոյակապ կառուցուածքով մեր գրականութեան մէջ կը գրաւէր իւր արժանի տեղը։ Վենետիկի Մխիթարեան Միաբանութիւնը անդադար լոյս կ'ընծայէր մեր պատմութեան և մատենագրութեան գրչագիր և հին մատեաններ և կը տարածէր ժողովուրդին մէջ։ Թարգմանական գրականութիւնն ալ իր կարգին կը զարգանար։ Վենետիկը Հայ անցեալի, պատմութեան, մատենագրութեան և ազգային ու հայրենասիրական զգացումներու հարազատ վայր մըն էր։

Վիեննայի Մխիթարեանց Մայրավանքը կը հանդիսանար Հայ պատմագիտութեան և հայկաբանութեան կեդրոն։ Հայ լեզուի և քերականութեան վաստակաւոր ուսումնասիրողը և տիտան Հայկաբան Հայր Առսէճ Այտճեանը իւր գործով կ'անմահանար։ Անոր օրինակին կը հետեւէին իւր միաբանակից եղբայրները, որոնք տարիներ յետոյ, մէկ-մէկ գիտնական, լեզուաբան, բանասէր եայլն պիտի դառնային պատիւ բերելով և՛ իրենց և՛ Հայ ազգին։

Կ. Պոլիսը արեւմտահայ մտքի և գրական շարժման կեդրոնն էր։ Այնտեղ կային դպրոցներ, գրական դէմքեր, Պատրիարքարան, ազգային մարմիններ, թերթեր եայլն։ Հայ կեանքը կը ծփար ու կ'ալեկոծուէր Կ. Պոլսոյ մէջ ոչ միայն ազգային վերածնունդի դադափարներով, այլև յարանուանական ու դաւանաբանական եղբայրադաւ անմիտ վէճերով ու կռիւներով, որոնց տխուր էջը կը կազմէ Հասունեան-Հակահասունեան պայքարը, որ Հայ-լուսաւորչական և Հայ-կաթոլիկ հայերու մէջ կ'առաջացնէր ատելութիւն և խոր թշնամութիւն։ Այս պայքարի ժամանակ Մկրտիչ Վարդապետ Խրիմեանն ևս հրապարակ կ'իջնէր և իբրև Հայ եկեղեցւոյ պաշտօնեայ կը հրատարակէր անստորագիր տետրակ մը «Ընդդէմ Պապականութեան» վերնագրով։ Խրիմեանն իւր այս տետրակ-գրքոյկը «գրած է եռանդուն ջատագովութեամբ՝ իբրև Հայկական եկեղեցւոյ հարազատ՝ պարսաւելով Վատիկանի գերիշխանութիւնը իբրև հակառակ Քրիստոսի խոնարհ թագաւորութեան և Ս. Աւետարանի հոգւոյն»*)։

Զմիւռնիան ևս արեւմտահայ մտաւոր ու գրական վերածնունդի և կրթական շարժման կարեւոր կեդրոններէն մէկն էր։ Դեռ ԺԸ-րդ

*) «Արեւելք» օրագիր. Կ. Պոլիս. 1885։

դարի վերջերէն, Զմիւռնիայի Հայութիւնը իւր կրթական-դպրոցական գործը լաւ հիմքերու վրայ դրած էր։ Նշանաւոր էր այնտեղի «Մեսրոպեան ձեմարան»ը, ուր իբրև դասատու, հայկաբան ու քերթող կը փայլէր Հայ դասական գրականութեան տաղանդաւոր մէկ դէմքը— Վանեցի Տէր Յովհաննէս Միրզայեան Վարժապետ-Քահանայ՝ մականուանեալն Վանանդեցի*), որուն որդին Տէր Մարդար Քահանան և թոռը Մարդիս Վանանդեցինները ևս իբրև դաստիարակ և քերթող կարևոր տեղ կը գրաւեն Զմիւռնիայի Հայ կրթական և գրական պատմութեան մէջ։ ԺԹ-րդ դարի կէսին Զմիւռնիայի մէջ Ղուկաս Պալթազարեանը կը հրատարակէր իւր «Արեւելեայ Աստղաբեան» թերթը, որ մեր մամուլի պատմութեան մէջ իւր պատուաւոր տեղն ունի։

Թիֆլիսը կը հանդիսանար արեւելահայերու մտաւոր, գրական և կրթական վերածնութեան կեդրոնը։ Երջանկայիշատակ Ներսէս Ե. Աշտարակեցի Կաթուղիկոսը, 1824-ին Թիֆլիսի մէջ կը հիմնէր «Ներսիսեան Դպրոց»ը, որ շուրջ 95 տարի գոյութիւն ունեցաւ և հսկայական դեր կատարեց Հայ կեանքի մէջ, տալով հոգևորա-

---

*) Թորգոմ Սրբեզ. Դուշակեանը իւր «Թրիմեան Հայրիկ» գրքի մէջ (էջ 20) Յովհաննէս Միրզայեան Վարժապետ—Քահանայ Վանանդեցիին «զմիւռնիացի» կը համարէ, ինչ որ սխալ է։ Յովհան Միրզայեան, աշխարհական անունով Ամիրզադէ՝ ծնած է Վանի Այգեստանի մէջ 1772-ին։ Ութ տարեկան հասակէն կը տարուի Կուսց-Անապատ և կը յանձնուի Դաստառ վարդապետի խնամքին։ Կուսց-Անապատի մէջ կը ստանայ իւր նախնական ուսումը և կոնդակագիրքէն ալ գեղեցիկ գիր գրել կը սովրի։ Իր ընդունակութեամբ կը հմտանայ կրօնական ուսմունքներու մէջ և կը ստանայ դպրութեան չորս աստիճաններ՝ Ամիրզադէ անունը Յովհաննէի փոխելով։ Ուսման սիրով վառուած՝ կանցնի Կ. Պոլիս և մտնելով «մայր դպրատուն» կ'աշակերտէ «յոտս գերիմաստ ուսուցչացն տիրացու Յարութեան և մահտեսի Մանասէրի Կարնեցւոյ»։ «Մայր Դպրատան» հովանաւոր Շնորհք Մկրտիչ Ամիրայ Միրիջաննեանը մասնաւոր խնամք ցոյց կուտայ Յովհաննէին, որ արդէն շնորհք ցոյց կուտար քերթողութեան մէջ՝ կրօնական տաղաչափեալ ոտանաւորներ գրելով։ Ամիրան օր մը Կ. Պոլսոյ Զաքարիա Պատրիարքին խնջոյքի կանչած էր։ Բազմաթիւ հիւրերու շարքին նստած էր նաև Յովհան։ Բազմականները կը խնդրեն, որ այս խնջոյքի մասին Յովհաննէս ոտանաւոր մը յօրինէ։ Երիտասարդ քերթողը, տեղւոյն վրայ, իսկոյն խնդրուած ոտանաւորը կը գրէ և կը կարդայ, արժանանալով ամէնքի գնահատանքին։ Հիւրերը կը խնդրեն, որ Պատրիարքը արժանաւոր վարձատրութեամբ (այսինքն ոսկեղօսով)

կան, գրական, կրթական և ազգային բազմաթիւ դէմքեր։ Մոսկուայի «Լազարեան Ճեմարան»ը, հետեւաբար հիւսիսի մէջ, կը հանդիսանար իբրև Հայ մտքի և գիտութեան լուսաւորութեան տաճար և 100 տարիներու ընթացքին պատկառելի պատմութիւն մը կ'արձանագնէր։ Էջմիածինն իբրև Ամենայն Հայոց Հայրապետութեան կեդրոն կրօնական տիպի «Ժառանգաւորաց Դպրատուն» մ'ունէր, նպատակ ունենալով Հայ եկեղեցւոյ համար ուսեալ հոգևորականներ պատրաստել։ Ահա ԺԹ-րդ դարի կէսին յիշեալ վայրերն էին Հայ մտքի կրթութեան նշանաւոր կեդրոնները, որոնք իրենց հիմնարկութիւններով և գործիչներով Հայկական—ազգային վերածնունդը կերտեցին։

Հայ գրականութեան և կրթութեան այդ կեդրոնները, սակայն, օգտակար կ'ըլլային միայն իրենց շրջապատի հայերուն և տեսակ մը կղզիացած գործունէութիւն ցոյց կուտային։ Արևելեան և արևմտեան Հայաստանի՝ բուն հայրենիքի Հայութիւնը տգիտութեան և մտաւոր խաւարի մէջ կը խարխափէր և քաղաքական ու տնտեսական տառապանքներու կ'ենթարկուէր։

Հայ ժողովուրդի գործիչները բանաւոր ու գրաւոր քարոզութիւններով հրապարակ իջած էին և կը պահանջէին, որ հասարակ

---

պատուէ Յովհաննէս։ Ամիրայի ցանկութեամբ՝ Պատրիարքը Յովհաննէ Վաճեցի կոչումը՝ Վաճառդեցիի կը փոխէ, ի յիշատակ Ղուկաս Վանանդեցիի։ Եւ այնուհետև Յովհաննը՝ Վաճառդեցի տիտղոսով յայտնի կը դառնայ Հայ գրականութեան մէջ։ Ընծրհք Ամիրայի կողմէ, 1798-ի Ապրիլ 26-ին Յովհան կ'ուղարկուի Իզմիր, իբրև վարժապետ տեղւոյն «Մհերպեան Ճեմարան»ի։ Իզմիրի մէջ կ'անմունանայ և 18 տարի վարժապետութիւն ընելէ յետոյ կը ձեռնադրուի քահանայ։ Իբրին գրաքարով և աղաչափութեամբ գրած է քանի մը մատեաններ, որոնց մէջ նշանաւոր են «Արփիական Հայաստացին» և «Ոսկի Դարի Հայաստացին» հատորները։ «Հայաստան երկիր գրախտավայր» յայտնի երգին հեղինակն ալ ինքն է։

Յովհան Վանանդեցին մեռաւ Իզմիրի մէջ 1840 թուի Փետրուար 3-ին և մեծ շուքով թաղուեցաւ։ Տէր Յովհան Քահանայի որդին էր՝ Տէր Մարգար իսկ թոռը՝ Սարգիս Մխրզայեան Վանանդեցիները՝ որոնք երկուքն ալ Իզմիրի հայոց ժամանակակից պատմութեան մէջ պատուաւոր տեղ կը գրաւեն։ Վանանդեցիները ի յիշատակ իրենց հայրենիքի՝ Վանին, Իզմիրի մէջ հիմներ էին «Վասպուրական» անունով թաղերն մը։

ժողովուրդը և մանաւանդ՝ Հայ գիւղացիութիւնն ալ մտաւոր դաստիարակութեան արժանանայ։

Այս գերագոյն և նուիրական նպատակով ոգևորուած Մկրտիչ Վարդապետ Խրիմեանը, 1856 թուի աշնան, ի Կ. Պոլիս ապրող իւր բարեբարներուն և համակիրներուն կը յայտնէր, որ ինքը Վան —Վասպուրականը պիտի երթայ տեղւոյն Հայութեան մտաւոր և կրթական դաստիարակութեան նուիրուելու համար։ Անոր այս ցանկութեան կ'ընդառաջէին ոչ միայն ազգային մարմիններն ու Պատրիարքարանը, այլև նշանաւոր և ազգասէր գերդաստանները, որոնք դրամական հանգանակութեամբ կը քաջալերէին ժողովրդանուէր գործիչի այդ ձեռնարկը։ Խրիմեանը կը յայտնէ, որ «Արծուի Վասպուրական» թերթը պիտի փոխադրէ հայրենիք՝ շարունակելով անոր հրատարակութիւնը Մայր Երկրին մէջ։

Կ. Պոլսոյ մէջ Պօղոս Ադա Օտեանն էր՝ «այն հոյակապ հոգին որ ամենէն մեծ գումար մը կը դնէր Խրիմեանի յաջողութեան, և իրեն նմանեաց հետ քաջալերելով զվարդապետն», «Արծուի Վասպուրական» թերթին համար կը գնէին երկաթեայ և փայտեայ երկու տպագրական մեքենաները, (մամուլ) տառեր, գիծեր, գործիքները, տպարանական գործի ամէն տեսակ պարագաները, նիւթեր և մինչև անգամ թուղթ ու թանաք։

Խրիմեանի նպատակն էր Վասպուրականի մէջ հիմնել նաև դպրոց մը «գիւղաբնակ եղբարց լուսաւորութեան համար»։ Այս առթիւ ևս անոր կատարած դիմումները քաջալերուած էին։

Սակայն Վասպուրականի մէջ Խրիմեանի գործունէութեան կեդրոնը պատմական և անուանի այնպիսի վայր մը պիտի ըլլար, որ իրաւամբ «Վասպուրականցի Վենետիկ»ը կոչուելու արժանանար։ Խրիմեանն արդէն որոշած էր այդ կեդրոնավայրը—Աղթամա՛ր՝ «Յ Աւրծռունի Գահ»ը, ուրկից «Արծուի Վասպուրական»ը իւր «հայրենասէր թևօք» պիտի սլանար դէպի Վանատոսպ, այնտեղ «գիւղաբնակ եղբարց լուսաւորութեան համար» դպրոց պիտի բանար, մատաղ սերունդը դաստիարակէր, հրատարակութիւններ ընէր, ժողովուրդի համար ուսեալ և ազատամիտ հոգևորականներ և ուսուցիչներ պատրաստէր, մէկ խօսքով իւր նպատակն էր Աղթամարի մէջ, մտաւոր, կրթական և գրական այնպիսի գործունէութիւն մը հիմնել, որ Մխի-

թարեան Միաբանութեան, եթէ ոչ նման՝ գոնէ մանրանկարն ըլլար, իսկ Աղթամարն ալ՝ «Վասպուրականի Վենետիկը»: Ահա թէ ինչու Խրիմեանը, դեռ 1855-ին, Կ. Պոլսոյ մէջ իւր «Արծուի Վասպուրական» թերթի առաջին երեսի վրայ կը գրէր՝ «Թուղցեալ հայրենասէր թևօք յԱրծրունի Գահէն ի Վանտոսպ». Աղթամարն էր «յԱրծրունի Գահ»ը՝ իւր գործունէութեան ապագայ կէտ-նպատակը, որուն իրագործման համար կը պատրաստուէր Կոստանդնուպոլսէն Վասպուրական երթալ:

Ամենուրեք կը խօսէին, որ Հայաստանցի Վարդապետ Խրիմեանը շուտով ճամբայ պիտի ելնէ դէպի Վասպուրական՝ ժողովուրդին ուսման և դաստիարակութեան գործին նուիրուելու համար: Կ. Պոլսոյ Ցառաջդիմական կամ Լուսաւորեալ անունով ճանչցուած հայրենասէր երիտասարդներ, ազգասէր գերդաստաններ և ազնց ազդեցութեան ենթակայ Յակոբոս Պատրիարք Սերոբեանը բարոյապէս ու նիւթապէս Խրիմեանին աջակից կը հանդիսանային՝ «Գիւղաբնակ եղբարց լուսաւորութեան համար» աշխատելու ցանկութիւնն այնքան խանդավառ տրամադրութիւն ստեղծած էր, որ երկու երիտասարդները՝ Տիգրան Կալփակճեան և Միքայէլ Ռուբէնեանը Խրիմեանին ներկայանալով պատրաստակամութիւնը կը յայտնէին երթալ Վասպուրական և ժողովուրդի դաստիարակութեան գործին նուիրուել. Խրիմեանը սիրով կ'ընդունէր այս առաջարկը:

Ճամբու պատրաստութիւնները վերջացած էին: Տպագրական զոյգ մեքենաներ, տառեր, գործիքներ, թուղթ, թանաք եւայլն ամէն ինչ արկղերու մէջ դասաւորուած, հակերու վերածուած և նաւին յանձնուած էին: Եւ ահա 1856 թուի աշնանային պայծառ առաւօտ մը, Մկրտիչ Վարդապետ Խրիմեանը, իւր երկու ուղեկիցներուն՝ Տիգրանի և Միքայէլի հետ, Սիրքէճիի նաւամատոյցը կ'իջնէր: Բազեկամներու և համակիրներու մեծ բազմութիւն մը Հայասցանի Առաքեալին ողջերթ մաղթելու եկած էր:

Նաւը կը դիմէր դէպի ծովի բացերը, մինչ ծովափ կանգնած բազմութիւնը կ'աղաղակէր.

—Երթաս բարեաւ Վարդապետ, յաջողութիւն Հայր Սուրբ, կեցցես Վասպուրականի Արծիւ.

Զորրորդ անգամն էր, որ Խրիմեանը կը չափէր Սև ծովը. նաւը

կը հասնէր Տրապիզոն։ Հակերն ու բեռները նաւահանգիստ կը հանեն և կարաւանի մը յանձնելով ճամբայ կ'ելլեն դէպի Երզրում։ Հոկտեմբեր ամիսն էր (1868)։ Անձրևոտ և մռայլ եղանակ։ Այս խորհրդաւոր կարաւանը Տրապիզոնէն ճամբայ կ'ելլէ դէպի Մայր Երկիրը՝ Հայաստան։ Խրիմեանը հեծած է ձիու վրայ, և կ'երթայ կարաւանին առջևէն։ Տիգրան ու Միքայէլը ձիերու վրայ նստած՝ կը հետևեն Վարդապետին։

—Զընգ հա՛ զընգ, զընգ հա՛ զընգ կը զբընգան կարաւանի ձիերու վիզերէն ու կողերէն կախուած զանգակները և կարաւանը դանդաղ քայլուածքով, գիշեր ցերեկ՝ դաշտ ու դաշտ, ձոր ու հովիտ, լեռ ու բարձունք կը կտրէ կ'երթայ։

Ողջոյն քեզ Հայոց Աշխարհ, ահա մամուլաբարձ այս կարաւանը կը մտնէ քո սահմաններուն։ Տպագրական մեքենան ու տառը առաջին անգամն է, որ մուտքն կը գործեն քո հողերուն մէջ։ Այս տեսակ կարաւան մը տպագրական գիւտէն յետոյ քո հողերու վրայէն անցեր էր արդեօք։

Կարաւանը հասեր է Բարձր-Հայքի սահմանները, ահա և Մայր Երկրին հողը։ Ողջոյն քեզ Հայաստան Աշխարհ, մամուլաբարձ կարաւանը ոտք կոխեց քու հողերուն վրայ։ Տպագրական գիւտէն յետոյ, առաջին անգամն է, որ տպագրական մեքենայ և ձուլուած տառեր մուտք կը գործեն Մայր Երկրին մէջ։ Անյիշատակ դարերէ ի վեր բազմատեսակ հին և նոր ազգերու և ցեղերու վաճառականական կարաւանները երթևեկեր են Հայաստանի մէջէն՝ մարդկային վայելքի, հաճոյքի, ապրուստի նիւթեր և իրեր տարած բերած են, ղէնք ու զրահ, վառօդ ու գնդակ փոխադրած են, բայց այս կարաւանը Հայ ժողովուրդի մտաւոր դաստիարակութեան և «գիւղական եղբարց լուսաւորութեան համար» տիպ ու տառ, թուղթ ու թանաք կը բերէ։

Երկար և տաժանելի ճամբորդութեամբ մը կարաւանը կը մտնէ Վանի սահմաններուն։ Խրիմեանի եղբայր Մսրխանը, ազգականները, թաղեցիներ և համակիրները մեծ խումբով մը կը դիմաւորեն Վարդապետին, կարաւանը կ'առաջնորդեն Ծանկոյսների Ս. Աստուածածին եկեղեցւոյ բակը և հակերը կը տեղաւորեն։ Ժողովուրդին մէջ լուր կը տարածուի թէ «Մկրտիչ Վարդապետը Ստամբոլէն տպա-

գրական մեքենայ բերած է, թերթ ու գիրք պիտի տպէ»։ Եատերը չը գիտեն թէ տպարան, տիպ ու տառն ինչ բաներ են։ Տարաձայնութիւնները և զանազան մեկնութիւնները ծայր կ'առնեն։

Մկրտիչ Վարդապետը Վան հասնելէն յետոյ, ճամբայ կ'իյնայ դէպի Աղթամար։ Կը ներկայանայ Կաթուղիկոսական Տեղապահ Գաբրիէլ Արքեպիսկոպոսին և կը յայտնէ, որ Պատրիարքարանի, ազգային մարմիններու և ազգասէր ու հայրենասէր անձերու բարոյական և նիւթական աջակցութիւններով եկած է Աղթամարի մէջ հիմնելու վարժարան մը, թէ՝ Վասպուրականի հայոց մէջ ուսում և կրթութիւն տարածելու համար ամենայարմար կեդրոնավայրը Աղթամարն էր, ուր մտադիր է լոյս ընծայել «Արծուի Վասպուրական» թերթը, որ «Թուղթեալ յԱրծրունի Գահէն» պիտի սլանար ի «Վանտոսպ» և Հայաստանի ամէն կողմեր։ Եւ վերջապէս կը յայտնէ, որ Աղթամարը «Վասպուրականի Վենետիկը» պիտի դառնայ և մտաւոր ու կրթական կեդրոն մը Թուրքիոյ արեւելեան նահանգներու Հայութեան համար։

Կաթուղիկոսական Տեղապահ և Վասպուրականի Առաջնորդ Գաբրիէլ Արքեպիսկոպոսը կտրուկ կերպով կը մերժէ Խրիմեանի այս առաջարկները։ Աղթամարի խաւարամիտ և տգէտ միաբաններն ալ կը հակառակեն Խրիմեանի ծրագիրներուն։ Մտաւոր լոյսի պայքարն էր այս խաւարի և տգիտութեան դէմ, ա՛յն ի գիր, Խրիմեանի հանրօգուտ ծրագիրներն ու յոյսերը բաղխելով քար և անտարբեր ուղեղներուն, Աղթամարի քարաժայռերուն վրայ կը փշրուէին և ծով կը թափուէին։

«Խրիմեանի իղձն էր այդ մեծ վանքին մէջ ծառայել։ արդէն նախապատրաստուած էր որ մամուլ և ժառանգաւորաց վարժարան պիտի հաստատէր այդ տեղը և լուսաւորէր այդ վանքին մութ ու խաւարին մէջ ընկղմեալ թեմական հայ ժողովուրդն և հայ եկեղեցին։ ...Բայց Աղթամարայ միաբանք և Վասպուրականի գործի վրայ եղողներ մերժեցին Խրիմեանն և ծիծաղեցան նորա յոյսերուն վրայ։ ...Խրիմեանին աչքը Աղթամարն էր, սակայն անկարելի եղաւ յաջողիլ» կ'ըսէ Խրիմեանի կենսագիրը Ատակեռը։

«Աղթամարի միաբանները նկատեցին, որ այդ նոր վարդապետը (Խրիմեան)՝ կ. Պոլսէց եկել է նոր նոր ծրագիրներով և տարօ-

բինակ ցանկութիւններով. ...(Աղթամարի) Վարդապետները կար-
ծում էին՝ թէ գրել կարդալը միայն իրենց սեփականութիւնն է,
այդ պատճառով վնասակար էին համարում ժողովրդին ուսու-
տալը, ուրեմն և դպրոցներ բանալը. ...Հասկանալի է, որ այդ տե-
սակ հոգևորականութեան առաջ անպատիժ չէր կարելի խօսել՝ ժո-
ղովրդին լուսաւորելու, դպրոցներ բանալու, վանքերում ուսումնա-
րան հիմնելու մասին. Եւ Խրիմեանը՝ իր համարձակ մտադրութիւն-
ների համար՝ անպատիժ չը մնաց. Նրան այնպիսի կատաղի թշնա-
մութիւն ցոյց տուեցին Աղթամարում, որ նա հեռացաւ այդ տեղից»
կը գրէ Խ. Մալումեանը (Է. Ակնունի).

«Բայց ինչ յանդուգն խղճ մը պիտի ըլլար (Աղթամարի) այ-
ապառաժին վրայ գրական ու կրթական բուրաստան մը մշակելու
ծրագիրը.... Աղթամար ժ. դարէն ի վեր քիչ բան կը պահէը իր
մէջ ազգային և հոգևոր այն արժէքէն զոր սակաւատեւ ժամանակ
մը միայն, Արծրունիներու ամէնէն փայլուն օրերուն, կրցեր էր շո-
ղացնել երբեմն. Իրարու յաջորդող ինը դարերու յարատեւ մռայլին
մէջ տգիտութեան խաւարը՝ ներսէն, և ասպատակութեանց սար-
սափը դուրսէն, ջնջած փշրած էին հոն ամէն մեծութիւն ու գեղեց-
կութիւն: ...Ու միակ բանը որ այդ բարոյական աւերակոյտին*
մէջ կը շարժէր դեռ, գահի և գաւազանի կռիւն էր» կ'եզրակացնէ
Թորգոմ Արքեպ. Գուշակեանը.

Մեր անմահ վիպասան Րաֆֆիի (Յակոբ Մելիք-Յակոբեանի)
և Աղթամարի միաբան-վարդապետներու միջև տեղի ունեցած եր-

---

*) Աղթամարն ունի հազար տարիներու պատկառելի պատմութիւն մը
զարդարուած քաղաքական, մատենագրական, ձեռագրական, մանրանկարչա-
կան, ճարտարապետական հայրն էջերով ու արժէքներով: Կարծեմ, որ Թորգո
Արքեպիսկոպոսին՝ իրրև հոգևորականի և գրագէտի՝ վայել չէը Աղթամարի
«բարոյական աւերակոյտ» արտայայտութիւնը տալ, («Խրիմեան Հայրիկ» էջ՝ 23): Աղթա
մարի Կաթուղիկոսութեան գահ ու գաւազանին ձգտող կարգ մը անարժան
շահամոլ հոգևորականներու պայքար և կռիւը չը պիտի նսեմացնէին Աղթամար
արժէքը և զայն դարձնէին «բարոյական աւերակոյտ»: Եթէ այսպէս մեկնելու
ըլլանք Հայոց եկեղեցական պատմութիւնը և կրօնական կեդրոնները—Էջմիա-
ծին, Երուսաղէմ, Կ. Պոլիս, Կիլիկիա և այլ վայրերը—բոլորն ալ «գահի և գաւա
զանի կռիւներ ունեցած են, դեռ աւելին՝ անգամ թեմերն ու առաջնորդներ
նոյն պայքարին և կռիւներուն միշտ ենթակայ կամ մասնակից եղած են:

կար ու սուր զրոյց-վիճաբանութենէն*) քաղուածաբար կը մէջբերեմ այն կէտերը, որոնք շատ պարզ ու պայծառ կերպով կը բնորոշեն Աղթամարի 1860-ական թուերու խաւարամիտ ու տգէտ կրօնաւորներու քարացած մտայնութիւնը ուսման, կրթութեան և Մկրտիչ Վարդապետ Խրլմեանի գործունէութեան մասին.

Ուրեմն, Բաֆֆին արդէն Աղթամարի կղզին մտեր է, Երեկոյ է.— «ես նստած էի մի բարձր քարաժայռի**) վերայ, որին զարկուում էին ծովի երթևեկ ալիքները, և սրտիս մտածութիւնների մրրիկը խառնուելով հոդանիւթ տարրերի ալեկոծութեան հետ, արձակում էին երևակայութեանս սենեակի մէջ նորանոր արձագանք»։ Յանկարծ Բաֆֆին կը լսէ ձայն մը որ կ'ըսէ- «Իլի վեր, ախբար, ասիկա մեր Հայր սուրբի տեղն է. ամեն օր էսա վախտ, աստեղ նստած, ղահվա կը խմէ, մրկայ էլ կուգայ կոր»։ Այս խօսքեր ըսող վանքի ծառաներէն մէկն եղած է, որ «պարսկական փոքրիկ խալիչա» մը կը փռէ քարաժայռին վրայ, ուր պիտի նստէր Հայր սուրբը, դիտէր Վանի ծովի լուսնազարդ ջուրերը և «ղահվա խմէր»։ Հայր սուրբը կուգայ և կը գրաւէ իւր տեղը։ Հետզհետէ կուգան նաև վանքի միաբան-վարդապետները, կը ծանօթանան «Ֆիրացու ճակոբ»ի (Բաֆֆիի) հետ և ծայր կ'առնէ հետևեալ խօսակցութիւնը։

—«Հը՛մ, որդի ուստի ես, ո՞րտեղից կուգաս»։—«Բնիկ սալմաստեցի եմ. Հայրենիքի սէրը բերել է ինձ այս կողմերումս շրջելու.

---

*) Բաֆֆիե 1858-ին Ատրպատականէն (Սալմաստէն) ճամբորդեց Յունկահայաստան։ Վասպուրականի և Տարօնի նահանգները լիակատար ուսումնասիրութեան ենթարկեց։ Անոր ճամբորդական նկարագրութեանց և տպաւորութեանց մէկ գլուխը կը կազմէ «Աղթամարայ վանքը», որ առաջին անգամ հրատարակուեցաւ ի Մոսկուա, Ստ. Նազարեանցի խմբագրած «Հիւսիսափայլ» (1860. Նոյեմբեր. Թիւ 11) ամսաթերթի մէջ, որն իր կողմէ իբր խմբագրական ծանօթութիւն հետևեալը կը գրէր—«Խօսակցութիւն ազգային լուսաւորութեան վերայ, դուրս հանած մի ճանապարհագրութենից, որ եղած է 1858 թուակ. շրջելով Վասպուրականի և Տարօնի կողմերում»։

**) Այդ նոյն քարաժայռի վրայ նստելով Բաֆֆին քանահիւսեր է իւր «Ձայն տուր ով ծովակ» յայտնի երգը։ Այդ քարաժայռը—ի յիշատակ Բաֆֆիի, մինչև այժմ ալ կը կոչուի «Բաֆֆու քար», որուն վրայ նստելով՝ Հայ ուխտաւորները կը յիշէին Բաֆֆին և կ'երգէին «Ձայն տուր ով ծովակ»ը։

ուխտաւոր եմ, Ուրբ Կարապետի վանքից եմ գալիս»։ Բաֆֆին կ'ըսէ վարդապետներուն որ — «Ողճալի վիճակի մէջ եմ տեսնում ձեր ժողովուրդը, միանգամայն մեռած տգիտութեան խաւարի մէջ, որ և պատճառ է տալիս զրկուելու աշխարհային փառքից»։ Այս խօսքերը լսելէ յետոյ վարդապետները խիստ կեբպով կը հակաճառեն.—«Ո՛հ, լուսաւորութիւն... լուսաւորութիւն անխելք բառ, անխելք գրոյց, մի քանի խելառներ ազգը կը լուսաւորեն. ան ևս Հայոց ազգը. ան հարիւրաւոր սրբերու անէծքին տակ ճնշուած ազգը։ Մենք մեր վանքերը պահենք թէ ժողովրդեան լուսաւորութիւն տամք. լուսաւորութիւն անոր հաց կուտայ, թէ հալաւ, ձեռք վեր կալ ադ սարսաղ խօսքերէն, քեզի համար պահէր. Հայոց ազգը թող իւր հալին մնայ, նա ձեզ նման մարդերու խրատներուն կարօտ չէ։ Ցօ դա հերձուածող է, հօ դա պռոտեստանտ է դորա խօսքերից շատ մոլորութիւնները երևում են։ Այս գիշեր միայն պատիւ քո այստեղ մնալը, առաւօտեան դուրս։ Բաւական է, քարոզ մի կարդա։ Ջո ասածները մոլորութիւն են։ Զարմանալի՛ բան. դուք միշտ կը պահանջէք լուսաւորութիւն լինի, ուրկից կը լինի լուսաւորութիւն, եթէ ոչ տէրութեան գանձարանէն։ Բայց մեք ոչ թագաւորութիւն ունինք և ոչ գանձ. հազիւ հազ առանձնացել ենք վանքերու մէջ, մեր սև օրերը կուլանք. Հա՛, հա՛ քո Մկրտիչ Վարդապետն (Խրլիմեան) ալ, հողն անոր գլխին, ան ապերախտը թողաւ անապատը, իւր կրթուած սուրբ տեղը. ուզեց տպարան և դպրոց հաստատել, լուսաւորութիւն տարածել. հիմայ այն է որ չարվադարի նման տարին մի անգամ կը վազէ դէպի Պօլիս ամիրաներից օգնութիւն խնդրելու, մեծ պարտքերու տակ է ընկած, անխելք գործ, անիմաստ բան։ Այ թշուառական, ով քեզի կ'ստիպէր քո չափէն դուրս շալակ վեր առնուլ, ոտդ կոտրվի, տակը մնաս։ Վանքերի խորշերում մի կտոր հաց չկար որ ուտէիր, քո աղօթքիդ, ժամ ու պատարագիդ լինէիր։ Այդ գործերէդ ինչ կը թափվի, որ դու ինչ հաւաքես։ Ազգը կը լուսաւորուի, թող մի քիչ ալ խաւարի, ու անդունդը գնայ, քեզ ինչ բոյթ։ Բոլոր Վասպուրական քեզ թշնամի ես արեր, չգիտես ինչ է շինածդ։ ...Թո՛ւհ, կործանվուի, տպարանն ալ, դպրոցն ալ. հէնց մեք ուղղական, սեռական, տրական չգիտենք, մեզ չօրհնեցին։ Մկրտիչ Վարդապետն մեք լաւ կը ճանաչեմք

նորան տիրացուβեան ժամանակից. մի փարայ չ'ունէը գլուխը գերծել տալու, βինչ էլաւ, հա էն շլէլ (բարձրահասակ) Մկլօն է. Խազինայ չգտաւ. ինչով պիտի կառավարէ տպարանը ու վարժարանը. Ասում եմ ափսոս է, մի քանի տարի կեանք ունի βո՛ղ չփչացընէ խնճի ու խելառ գործերու մէջ, խաղաղ ու հանգիստ նստէ, ազգի բարիքն վայելէ ու անոնց համար աղօթք ընէ. Վատ չեմ ըսեր, սիրտս նորա համար կցաւի. եβէ ո՛չ. նա βագաւորը դառնայ. իմ վանքս չէ կարող ձեռքէս դուրս հանել»։

Այս զրոյց վիճաβանութիւնը երկար կը տեւէ. Րաֆֆին շատ խելօք ու փաստական խօսքերով կը ջանայ համոզել Աղβամարի միաբաններըը, որ մեր ժողովուրդի համար ուսում և կրβութիւնը կենսական պահանջ են, իսկ միաբաններն ալ իրենց խաւարամիտ և քարացած գաղափարներով տարուած յամառ կերպով կը պնդեն, որ «ուսում և լուսաւորութիւնը վնասակար է մեր ժողովուրդին» ևայլն. Զրոյցը կը վերջանայ,—«Մի խորին լռութիւն տիրեց սրբոտիս,—կը շարունակէ Րաֆֆին—վարդապետները գնացին Եկեսցէ ասելու. Կրկին միայնակութիւն։ Ծովի ալիքների ձայնը սկսաւ լսելի լինել. մի վսեմ զգացողութիւն βագաւորեց սրտիս վերայ. Ահա քեզ այդ զգացողութեան բանաստեղծաբար արտայայտութիւնքը»։

Պանդուխտ Րաֆֆին խօսքը լուսնակին կ'ուղղէ.

«Ամեն տեղ տիրած խորին լռութիւն,
Կաբձես թէ մեռած լինի բնութիւն։
Նստած սգաւոր, պանդուխտ միայնակ,
Ո՛հ.քեզ համ տեսնում, ով փայլուն լուսնակ։

...Քարէ քո սիրտը, և խիղճդ մեռած,
Քանի՛ արիւններ, քանի՛ կոտորած
Ցեսար, լռեցիր և դարձեալ պայծառ,
Հայ երկրի վրայ կապում ես կամար»։

Ապա հայրենիքի ազատութեան և Հայ ժողովուրդի մտաւոր դաստիարակութեան ու լուսաւորութեան գաղափարներով տոգորուած Րաֆֆին խօսքը Վանի ծովակին կ'ուղղէ.

«Ձայն տուր, ով ծովակ ինչու լռում ես.
Ողբակից լինել չկամիս դժբախտիս։
Ձարժեցէք, զեփիւռք, ալիքը վէտ-վէտ.
Խառնէք արտասուքս այս ջրերիս հետ։

...Ուրեմք գալու է մի օր, ժամանակ.
Ցեսնել Մասիսի գլխին մի գրօշակ.
Եւ ամեն կողմից պանդուխտ Հայազգիք
Դիմել դէպ իւրեանց սիրուն հայրենիք»։

Որքան յուզիչ և սրտառուչ զուգադիպութիւն էր։ Մկրտիչ Վարդապետ Խրիմեանի ազգօգուտ գործունէութեան Աղβամարեան ծրագիրները ու «Վասպուրականի Վենետիկ»եան յոյսերը Աղβա-

մարի շահամոլ, տգէտ և խաւարամիտ հոգևորականութեան քար ու-ղեղներուն բաղխելով կը փշրուէին և կղզւի Բարձր-Քարի ժայռերէն կը թափուէին ծփան ծովի մէջ, իսկ Րաֆֆին կուգար և նոյն քարաժայռի վրայ նստելով իւր անդրանիկ բանաստեղծութիւնը կը հիւսէր ու կ'ողբար «փշալից անապատ» Հայաստանի վիճակը և Հայոց «խղճալի ազգ»ի «անճար ցաւը», որոնք բանաստեղծի աչքերէն թափուած արցունքները կը խառնէին Վանի ծովի ջուրերուն հետ։

Այսպիսով ահա Խրիմեանի և Րաֆֆիի արցունքներն ու յոյսերը Աղթամարի կղզիին վրայ և ծովի ջուրերուն մէջ իրար կը խառնուէին։

## Ժ։

## ՎԱՐԱԳԱՅ ՎԱՆՔԸ

Վանի Այգեստաց քաղաքամասի Աւօի-Դար[1] թաղէն կ'իջնենք լայնածաւալ և կանաչազարդ դաշտը։ Ուրքաթ-Առուն[2] շուռ տալով կ'առաջանանք դէպի Փէօրէօզա-Քարը[3] և Շուշանց գիւղի բլուրներու ստորոտներէն դէպի հարաւ քալելով կանգ կ'առնենք Զրուիկ-Աղբիւրի[4] սառն ու կչկչան ջուրերու ափին, պահ մը կը հանգստանանք և դէպի առաջ երթալով մեր աջ կողմը կը թողունք Թորուան-Աւերը[5], որուն ստորոտէն կը բղխի Խաչ-Աղբիւրը[6]։ Փիչ մ'անդին Չեռնակուս[7] բլուրն է, որուն լանջերուն վրայ են՝ Կաթնաղբիւր[8], Իշխանաց Աղբիւր[9], Օալով Աղբիւր[10] և Աւեր-Եկեղեցին[11]։ Մեր ձախակողմի վրայ կը թողունք Չալամօղի-Ձոր[12], Կարկուս-Խաչ[13] և Ապարանջան-Քարը[14]։ Ոլորապտոյտ և ծառազարդ մայր ճամբով յա-

---

*Ծանօթութիւն.*—1. Բարձրադիր ու ջրառատ թաղ մը։ 2. Ուրբաթ օր չհնուած բլլալուն համար Ուրբաթ Առու կը կոչուի։ 3. Ըստ աւանդութեան այս քարին մօտ յանուն կրօնի նահատակուած է Փէօրէօզա (Փիրուզա) անունով կոյս մը։ 4. Ջուրը չրա-չրա կը թափուի և այդ ջրաձայնէն ալ աղբիւրն առած է իւր անունը։ 5. Ժամանակին Հայ գիւղ մը եղած է հոն, ուր այժմ կ'երևին թոնիրներու աւերակներ։ 6. Աղբիւրի գլխին խաչ քար մը կայ։ 7. Հին մարտկոցի մը աւերակակոյտեր։ 8. Ջուրը սպիտակ է, կաթի գոյն։ 9. Արծրունեաց իշխաններու անունով։ 10. Աղբիւրին մօտ քարաւալեր կան։ 11. Հին տաճարի մը հետքեր։ 12. Համանուն անձի մ'անունով։ 13. Խիստ կարկուտ եկած տարի մը մասաղ ըրած են անկելով այս «ցաւման խաչը»։ 14. Մեծ սալաքարի մը վրայ կա-




Վան-Վաղարշապատ վանքը 1907 թ.–մ.–. – 1. Տաճար. – 2. Թանգարան և ձեռագրաց մատենադարան. – 3. Թրխմեան հայրիկի հիմնած (1857) «Ժառանգաւորաց վարժարան». – 4. Ուխտաւորաց սենեակներ (100 հոգի). – 5. Ցորենի ամբար. – 6. Վարագայ «Դրախտ» կոչուած նշանաւոր այգին. – 7. Վարագայ լեռներ. – Միաբաններ, ուսուցիչներ, որբ-աշակերտներ, վանքի պաշտօնեաներ, ուխտա-

ռաջանալով կը մտնենանք Ջուրմարին[15] և ահա կ'երևի ՎԱՐԱԴԱՁ ՎԱՆՔը իր հոյակապ և գմբէթազարդ տաճարներով, պարիսպներով և հին ու նոր շէնքերով։

Վանքի դարբասէն դեռ ներս չը մտնենք, այլ 5 ժամուայ հաճելի յոգնութիւն մը յանձն առնելով երթանք Վարագայ բնական, աւանդական ու պատմական վայրերը շրջագայենք և ապա դանք Վարագայ վանքի վերակացու ծերունազարդ Պարոն Պետրոսի հիւրասիրութիւնը վայելենք։

Վանքի մտան է Վարդավառի Բլուրը[16], որուն առջևէն անցնելով կը մտնենք Ջայնամ-Դարի Ձորը[17]. Աջ կողմի վրայ, դէպի հարաւ-արևելք կը թողունք Կալագեահա Թեւ[18], Տափեր[19], Հավերիճ[20] և Յակոյի Աղբիւրը[21], Դէպի հիւսիս յառաջանալով կը մտնենանք Ծակ-Քարին[22], որուն մտան է Կուզ-հէր[23] լեռանցքը և Ս. Հռիփսիմեանց Մատուռը[24], Մատուռին դէմ ու դէմն է սառն ու զուլալ Ապարանջան Աղբիւրը[25], ուր քշիկ մը հանգչելէ յետոյ, կը բարձրանանք բլուր մը և կ'իջնենք Կօռ-Քարի[26] տակ։ Կօռ-Քարը ստորին մասն է Շուշանց գիւղի սարին, որ Վարագայ լերան արևմտեան գագաթը կը կազմէ։ Կօռ-Քարի վերը, լեռան մէջն է Խաչ-Պատուհանը[27]։ Ահա և Բէօշ-Ակներ[28], ապա Գոմեր[29], Ձախի-Ձոր[30], ուրկից ճամբան կ'երկարի դէպի Ջիաթուճուկի[31] բարձունքները։ Շարունակելով մեր վե-

---

նացի ապարանջանի մեծութեամբ ծակերը, որոնց մէջէն Վարագայ վանքի ջուրը կ'երթայ դէպի Ջուշանց գիւղը։ 15. Ըստ աւանդութեան երբ Ջոմար քիւրդ աւազակապետը Վարագայ սրբազան անօթները կողոպտելով ջորիի մը վրայ բարձած կը տանէր, ջորիի ոտքը այդ քարի մէջ մնաց ու կոտրուեցաւ։ 16. Հաւանաբար Հայ հեթանոսական յիշատակներու հետ կապուած է այս կոչումը և կամ հին ատեններ վանքի միաբանները այդ բլուրին վրայ վարդավառի գացեր են։ 17. Այծինքն դժոխքի ձոր։ 18. Համանուն լեռնամաս։ 19. Հաւերժավայրեր։ 20. Քարաշար ցած պատերով շրջանակուած վայրեր, ուր ամառը կը դիշերեն ոչխարները։ 21. Ցածր անունով մարդու մը կողմէ շինուած։ 22. Լեռան մէջ ծակուած քար մը, որուն մէջէն կ'անցնի առու մը։ 23. Քարայր մը ուր կուզ կենդանիներ կ'ապրին եղեր։ 24. Ցանուն Հռիփսիմեանց կուսանաց։ 25 Վարագայ հովտին մէջ։ 26. Թեքուած քար, որուն ստուերին տակ միշտ հով է, այնտեղ կան ծառեր և աղբիւրներ։ 27. Լեռան մէջ խոշաձև պատուհան։ 28. Առատ աղբիւրներ։ 29. Հովտի մէջ ոչխարաց գոմեր։ 30. Ձախակողմի ձոր։ 31. Կակուղ բարձունք մը, ուր Աբծրունի իշխանները ժամանակին ձիախաղեր սարքեր են և ձիերը հեծնելով այս

բլլը կը մօտենանք Կօտկաճ-Քարի[32] լեռնամասին և ասկէ կ'իջ-նենք Հնձևեաց-Ձորը[33], ուրկից ոլորապտոյտ և զառիվեր ճամբով կ'ուղղուինք դէպի ՎԵՐԻՆ ՎԱՐԱԳ[34]. Մեր ճամբուն զուգընթաց կանգնած են Արեղափարեցը[35]: Ահա Վերին Վարագը, ուր ջուր և ծա-ղիկ, հով ու զով սքանչելի են: Վերին Վարագի աւերակ տաճարի պատերուն տակ հանկչելէ յետոյ, որքան քաղցը է երգել Վարագայ սարին և հովտին նուիրուած ժողովրդական գովք-երգերը. Որքան սառն ու յստակ է Անմահական Աղբիւրը[36], Քրիստոսի Աղբիւրը[37], որուն վերևը՝ Թոդիկ Ճգնաւորի Այրն[38] է, կողքին ալ՝ նոյն սուրբին մատուռը: Ասոր արևելա-հիւսիսը Աստղական բերդն[39] է, Վարագայ լեռան ամենաբարձր գագաթը, իսկ հարաւ-արևելքը՝ Գալիլիա[40] կոչուած աշտարակաձև բարձունքը: Տաճարին մօտիկ է Բամ-բասաձոց բլուրը[41], որուն դիմացն է չքառատ և ծաղկազարդ Ծաղ-կաձորը[42], ուրկից լեռնային ջուրերու եզերքն ի վար քալելով կ'իջ-նենք Ս. Գրիգոր վանքի[43] հովիտը, ուր նշանաւոր են Մատնապատ[44] սառն ու վճիտ աղբիւրները: Ահա Ս. Գրիգորի մենաստանը, որուն հանդիպակաց լեռնալանջին վրայ կը հանգչի Աղօթատեղը[45]. Դուրս կուգանք այս հովտէն և Ձորովանց[46] գիւղին առջևէն դէպի հարաւ շրջուելով, լեռան ստորոտէն կը յառաջանանք դէպի Սօսոյի Գէօլեր[47],

---

բարձունքներէն սլացեր են դէպի լեռան գժուար մասերը: 32. Հովուի հագուստի (կօտիկի կամ կեապանակի) նման քար մը: 33. Ուր հնձուորները ճաշի ժամանակ նստեր են աղբիւրի ական մօտ հանգստացեր ու ճաշեր են: 34. Վարագայ հովտի հիւսիսակողմի լեռանցքին մէջ, երբեմն եղած է շէն վանք, և ապա թալան-ուած և աւերակ գարձած՝ քիւրդերու ձեռքով: 35. Մարգակերպ քարեր՝ վեղա-րանման գլուխներով: 36—37. Սառն ու վճիտ աղբիւրներ: 38. Քարայր մատուռ՝ յանուն Թոդիկ ճգնաւորի: 39. Ըստ աւանդութեան հեթանոս հայերը Աստղիկ դիցուհիի արձանը այս լեռնաբերդին վրայ կը պաշտէին: 40. Վարագայ բարձ-րունքներէն մէկը, որուն վրայ, ըստ «Յայսմաւուրքի» Ս. Հռիփսիմեանց ձեռքով պահուած էր Քիսուսի խաչափայտի մէկ մասը, որ յետոյ յայտնուեցաւ և Վարագ բերուեցաւ: 41. Այստեղ Վերին Վարագայ վանքի վարդապետները նստեր և բամ-բասանքներով զբաղուեր են: 42. Բազմազան, գոյնզգոյն և անուշաբոյր ծաղիկ-ներով առատ ձոր մը: 43. Յանուն Ս. Գրիգոր Լուսաւորիչի կառուցուած վանքը, որուն Սալնապատու Մենաստան անունն ևս կուտան: 44. Սառն ու թեթև ան-մահական ջուր, որ բազմաթիւ աղբիւրներով կը հոսի լեռան կուրծքէն: 45. Ս. Գրիգոր Լուսաւորիչի: 46. Պատմական գիւղ մը, որ ժամանակին Հայոց Հայրա-պետանիստ աթոռ եղած է: 47. Վարագայ լեռան արևմտեան ստորոտին չին-

կը բարձրանանք Կարմրաւորայ Ս. Աստուածածին վանքի Վերին Աւազանը[48], կ'իջնենք Շուշանց գիւղէն դէպի Վարագ երկարող ճամբուն եզերքը և կը շեղուինք դէպի վեր ու Եղեգիկճերէճ[49] քալելով կը մտնենք Կախաճ Աղբիւրճերուն[50] և կը մտնենք Վարագայ վանքի սահմանները: Ահա Վարդապետաց Աղբիւր[51] և լիճը, Վարագայ Վերին Աւազան[52], Վանից Այգին[53], Դրախտ[54], վանքի առջև տարածուող ընդարձակ և ծառաշատ անտառը, գեղեցիկ կամճակը, Կուզոյի Աղբիւր[55], Բաղդասար Վարժապետի Աղբիւր[56], Հայրիկի Ծառ[57], Վախէզ[58], Խաչեր[59], Բէր[60], Կալեր[61], Ջօմէճ[62], Փայխճեր[63], Հայրիկի Աղբիւր[64] և դեռ տեղական կոչումներով որքան վայրեր Վարագայ վանքի սահմաններուն մէջ և վանապատկան:

Կանգներ ենք պարիսպներու արևմտակողմը, մեծ և գլխաւոր դարբասին առջև, ուրկից ներս կը մտնենք վանքի լայն ու քառակուսի բակը, որուն մէջն է Վարագայ հազարամեայ մենաստանը՝ իր եօթն տաճարներով՝ կողք կողքի, իրար կպած, կանգուն կամ կիսափուլ կաթուղիկէ-գմբէթներով. Ըստ ժողովրդական աւանդութեան և Թոդիկ ձգնաւորի տեսիլքին, երբ Գրիգոր Լուսաւորիչը, իբր Քրիստոնէութեան քարոզիչ կ'այցելէ Վասպուրականի Տոսպ գաւառը, (Վանի շրջակայք) գիշեր մը երազի մէջ կը տեսնէ, որ երկնքէն 12 լուսեղէն սիւներ կ'իջնեն. Լուսաւորիչը այդ լուսատիւներու իջման տեղը շինել կուտայ 12 վանքեր. այսպէս, երեքը Վերին-Վարագայ, եօթը Վարի-Վարագայ մէջ, մէկը Կարմրաւորի Ս. Աստուածածին վանքը, իսկ միւսն ալ Ճանկոյսներ թաղի Պատիկ-Տաճար Ս. Աստուածածին եկեղեցին. Վարագայ եօթը տաճարներն

---

ուած լիճ և ծառնոցներ։ 48. Կարմրաւոր վանքի արհեստական աւազան: 49. Համանուն բոյսերով պատուած բլուրներ։ 50. Դաքաններու աղբիւր։ 51. Վարագայ վանքի վարդապետներու աղբիւրը, որուն մօտ հանգստի կուգային անոնք։ 52. Վարագայ Ջրի աւազան: 53—54. Վարագայ այգիներ։ 55—56. Համանուն անձերու շինած աղբիւրներ։ 57. Վարագայ այգիին մէջ մեծ ու լայնածաւալ ճիւղերով ծիրանի ծառ մը, որուն տակ նստելով կը հանգստանար ու կը կարդար Հայոց Հայրիկը։ 58. Վանքի Ջրաղացներու վերև գտնուած ծառազարդ և Ջրառատ գետին, ուր ուխտաւորները նստած կը զուարճանային։ 59. Գերեզմաններ։ 60 Ոչխարներ կթելու տեղ։ 61. Կալատեղ։ 62. Լեռնային, Ջրառատ և արօտաշատ զով վայրեր, ուր ամառները՝ 4 ամիս, ոչխարներ կը պահուին։ 63. Ախոռներ։ 64. Խրիմեան Հայրիկի սիրած աղբիւրը՝ վանքի մեծ գարբասի առջև։

են՝ Ս. Նշան, Ս. Խաչ, Ս. Յովհաննէս (կամ քառասուն աբեղայից տաճար), Ս. Գէորգ, Ս. Աստուածածին, Ս. Սոփիա և Ս. Սիօն։ Գլխաւոր և հոյակապ տաճարն է Ս. Նշանը, որ իբրև հայկական ճարտարապետութեան մէկ գեղակերտ յուշարձան շատ խոր տպաւորութիւն կը թողու ականատեսին վրայ։ Այս եօթն տաճարները (որոնց տաճիկները՝ Եէտի-Քիլիսէ կը կոչեն) հիմամբ նորոգուած են Ժ-րդ դարի վերջերը, Վասպուրականի Արծրունեաց Սենեքերիմ թագաւորի հրամանով։ Այս մասին Թովմա Արծրունի պատմագիրը հետեւեալը կ՚արձանագրէ.

«...Եւ ՚ի ստորոտ լերինն շինեաց զհոյակապ եւ զհռչակաւոր մայրաքաղաքն մենաստանացն զՎարագ, եւ կարգեաց ՚ի նմա արս հաւատարիմս, եւ զարդարեաց բազում կրօնաւորօք, եւ երկնագումար դասիւք սուրբ քահանայիւք, եւ կարգեաց նոցա ռոճիկս, եւ կէին ՚ի խաղաղութեան ՚ի գաւառն Վասպուրականի. ամենայն աշխարհաց անկելոց եւ գերելոց տեղի ապաստանի ՚ի նա գտանիւր»*)։ Ս. Նշանի տաճարին մէջ թաղուած են Սենեքերիմ Արծրունի թագաւոր, Խուշուշ թագուհին և Պետրոս Գետադարձ Կաթուղիկոսը, որոնց գերեզմանները արձանագիրներով հանդերձ կը մնային մինչև մեր օրերը։ Ս. Գէորգ եկեղեցին վերածուած էր թանգարան-գրադարանի, ուր կը պահուէին գրչագիր և տպուած մատեաններ, բեհեզագրածածկ քարեր, հին դրամներ, զէնքեր, իրեր, հին անօթներ, գործիքներ և այլն։ Ս. Յովհաննէս տաճարը ցորենի ամբարանոց եղած էր, իսկ միւս չորս եկեղեցիները իրենց կիսաւերակ խորհրդաւորութեան մէջ կը հանգչէին դարեր դարեր շարունակ։ Վանքի բակի հիւսիսակողմը կը գտնուէին Առաջնորդարան, միաբաններու խուցերը, «Ժառանգաւորաց Վարժարան», «Արծուի Վասպուրական» թերթի տպարան, նորակառոյց դպրոցի շէնքը և ուրիշ շինութիւններ։ Հարաւակողմը՝ վանքի բակէն դուրս Տնտեսուցեր էին, որոնց մէջ այր ու կին տնտեսներ և coշարները (կամ կթողները) օրն ի բուն թոնիր վառելով, կերխուսով, խնոցի հարելով և իւղ ու պանիր պատրաստելով կը զբաղուէին. Բակի արևմտակողմը վանքի փուռն էր, որ ամբողջ օր, փոքրիկ-կլորիկ թարմ հաց կը մատակարարէր վանականներուն, մշակներուն, դպրոցի աշակերտներուն, ուխտա-

*) Պատմութիւն Տանց Արծրունեաց. էջ՝ 345։


ւորներուն և ճամբորդներուն. Վարագը հիւրասէր և առատաձեռն էր, ուր ամէն Հայ, անգամ օտարներ, սրտաբաց ընդունելութեան կ'արժանանային։ Վարագը ժողովրդական վանք էր։

Բակի հարաւային և արևմտեան կողմերը շրջապատուած էին երկյարկանի ընդարձակ շէնքերով, որոնց 100 սենեակները ուխտաւորներու և ամառանոց եկողներու առջև միշտ բաց էին։ Ունէր Սալախանէ անունով մեծ գիւղ մը Խոշաբ գաւառին մէջ, ընդարձակ վարելահողեր, խոտհոցներ, ջրաղացներ, արօտատեղիներ. Վանի և Ռուսաստանի մէջ ունէր խանութներ և կալուածներ, տուներ. Վանքի այգիները՝ հազարամեայ ընկուզենիներով և այլ պտղատու ծառերով, հաճելի զբօսավայրեր էին ուխտաւորներու համար։ Վարագն ունէր 2000 ոչխար, 200 սևատաւար (գոմէշ, կով, եզ), ձիեր, գիւղատնտեսական մեքենաներ, արհեստանոցներ, «Հայրիկեան ծառանգաւորաց Վարժարանը» իր սաներով և ուսուցիչներով, տասնեակ հօտաղ-մշակներ, հովիւներ, պահապաններ, ջրաղացպաններ, ծառաներ եայլն եայլն։ Ամբողջ տարին, գիշեր ցերեկ, կեանքը կը ծփար ու կ'եռար այս վանքին մէջ, փոքրիկ քաղաքի մը նման, ուր անգործ մարդ չը կար, ամէն ոք իր գործն ու աշխատանքն ունէր։

Վարագայ Վանքը Հայկական ազատագրական ու յեղափոխական շարժումներու ընթացքին շատ գնահատելի ծառայութիւն մատուցեր է մեր ժողովուրդին։ Վանքի մէջ հիւրընկալուեր ու պահուեր են մեր յեղափոխական գործիչներն ու ռազմիկ-ֆիտայիները։ Վարագայ հովիտն ու լեռներն ապաստանած յեղափոխականները միշտ ալ վայելեր են վանքի խնամքը։

Վարագայ վանքը իր գոյութեան առաջին շրջաններէն իսկ մինչև մեր օրերը, Հայ մատենագրութեան և կրթական պատմութեան մէջ կարևոր տեղ կը գրաւէ, իբրև կեդրոն մը, ուր զարգացաւ Հայ գրչագրութեան և մանրանկարչութեան արուեստը, ուր հոգևորական մատենագիրներ և տաղասացներ փայլեցան և ուր՝ դարեր շարունակ Հայութիւնը վառ պահեց իր հաւատքն ու մշակոյթը։ Արևելքի վայրագ ցեղերու և արիւնարբու բռնակալներու սուրն ու հուրը բազմիցս աւերեցին մեր հայրենիքը, բայց Հայ ժողովուրդը միշտ ալ կառչած մնաց իր հող ու ջուրին և պահեց իր նուիրական վայրերը։ Այսպէս ալ Վարագը բազմիցս թալանուեր, կրակի

և աբիւնի մատնուելը էր, բայց ամայի և հայազուրկ չէր դարձեր։ Արհաւիրքներէն յետոյ, Հայութիւնը աւերակներու և մոխիրներու վրայ նստելով վերանորոգեր էր այդ պատմական և հինաւուրց մենաստանը, որ ունեցած էր իւր փառքի և անկումի իրար յաջորդող բազմաթիւ շրջանները՝ Ժ-րդ դարէն մինչև Ի-րդ դարի սկիզբները։




## ՎԱՐԱԳԱՅ ՎԱՆՔԻ ՊԱՐԻՍՊՆԵՐԷՆ ՆԵՐՈՒ ԳՏՆՈՒԱԾ ԵՕԹՆ ՏԱՃԱՐՆԵՐՈՒ ԵՒ ԱՐԱԳԱԾԻՆ ՇԷՆՔԵՐՈՒ ԱՍՏԱԿԱԳԻՏԸ

Ծանօթութիւն.— ■ Պարիսպներ։ ▬ Շէնքերու հիմքեր։ ⁞⁞⁞* «Ժառանգաւորաց Վարժարանի» անդրանիկ շէնքի տեղը։ ~~ Աղբիւրներ։ —— Սալայատակներ։ Ը Բուրգեր։ 1. Ս. Աստուածածին, 2. Ս. Գէորգ, 3. Ս. Նշան, 4. Ս. Խաչ, 5. Ս. Յովհաննէս, 6. Ս. Սիոն և 7. Ս. Սոփիա տաճարները։ 8. Առաջնորդարան։ 9. «Ժառանգաւորաց Վարժարան»։ 10. Վարդապետ Տպարան։ 11. Աշակերտներու ննջարաններ։ 12. Սեղանատուն։ 13. Խոհանոց։ 14. Բաղնիք։ 15. Փուռ։ 16. Ցնտեսատուներ։ 17. Միաբաններու և ուխտատուրներու սենեակներու երկյարկանի բաժանմունքները (մօտ 100 սենեակ)։

## ԺԱ.

## ԽՐԻՄԵԱՆ՝ ՎԱՆԱՀԱՅՐ ՎԱՐԱԳԱՅ

Այսպէս ուրեմն, Աղթամարը «Վասպուրականի Վենետիկ»ը դարձնելու՝ Մկրտիչ Վարդապետ Խրիմեանի ծրագիրը չուր կ'իյնար։

Սակայն նա չը վհատեցաւ, այլ յամառ կերպով կը հետապնդէը իրագործել իւր նպատակները։ Այժմ պէտք էր աչքի առջև ունենար ուրիշ վանք մը։ Վարագայ վանքն էր այդ, որ իւր պատմական և մատենագրական անցեալ փառքերէն աղքատացած, անմխիթար և անտէր վիճակ մը կը ներկայացնէր։ Ծնտեսապէս հարուստ այս վանքի եկամուտները Վանի Հայ «Իշխաններ»ու*) և Առաջնորդարանի կամայականութեանց ենթարկուած էին։ Այդ հինաւուրց վանքը անխիղճ և անհաշիւ կերպով կը շահագործուէը ազդեցիկ հոգևորականութեան և «Իշխաններ»ու ձեռքով, իսկ ժողովուրդը բոլորովին իրաւազուրկ և արհամարհուած վիճակի մը ենթակայ կը խարխափէը տգիտութեան մէջ։

Այս տեսնելն էր ահա, 1856 թուի աշնան, երբ Մկրտիչ Վարդապետ Խրիմեանը, իւր համակիրներու և գաղափարակիցներու բարոյական օժանդակութեան ապաւինած, անաչառ և մանրակրկիտ կերպով կ'ուսումնասիրէը Վարագայ վանքի բարոյապէս տխուր և անկեալ վիճակը, տնտեսական եկամուտներու յայտնի և անյայտ վատնումները և կը կազմէը ընդարձակ տեղեկագիր մը՝ ուղարկելով Կ. Պոլիս՝ Պատրիարքարանին, ազգասէր ամիրաներուն և Հայութեան մտաւոր դաստիարակութեան ջատագով Ցառաջդիմասէր երիտասարդներուն, որոնց գլխաւորը Դրիգոր Օտեանն էր։ Խրիմեանը միաժամանակ կը տեղեկացրէը, որ իւր Աղթամարեան ծրագիրները վիժած էին, որ Վարագայ վանքն ալ իբրև Վանին մօտիկ և կեդրոն՝ շատ նպատակայարմար վայր մըն էր ազգային դաստիարակութեան և ժողովուրդի մտաւոր լուսաւորութեան համար։

Խրիմեանի այս տեղեկագիրը Կ. Պոլսոյ ազգային իշխանութեան

*) Վանի Հայ կալուածատէրեր, հարուստներ, և աղա ու բէյ տիտղոսներով յայտնի ազդեցիկ անձերը, յաչս հասարակ ժողովուրդի, նկատուած էին իբրև «Իշխաններ»

շրջանակներու մէջ մեծ իրարանցում և ապա խուլ պայքար կ'առաջացնէր Օտեան գերդաստան, Լուսաւորեալ-ցառաջդիմասէրներ, և և Յակոբոս Պատրիարքը կը պնդէին, որ Խրիմեանը նշանակուի Վարագայ վանքի վանահայր և նուիրուի ժողովուրդի դաստիարակութեան գործին։

Իսկ Պաւարեալ որակումով ճանչցուած հոգևորական և աշխարհական յետադէմ և աւանդամոլ անձերը կը պնդէին, որ Վարագայ վանքը ենթարկուի Վանի Առաջնորդարանին և Հայ «Իշխաններ»ուն իսկ Խրիմեանն ալ անոնց հրահանգներով գործէ։

Սակայն բարոյական յաղթանակը Լուսաւորեալի ներկայացուցիչները կը վաստակէին և պատիւ Յակոբոս Պատրիարքին, որ յատուկ կոնդակով մը Վարագայ վանքը, անկախ Վանի Առաջնորդարանէն, կը յանձնէր Մկրտիչ Վարդապետ Խրիմեանի վանահայրութեան, 1856 թուի Դեկտեմբերին։ Այս մասին մէջ բերինք նաև Խրիմեանի կենսագիր Աբակեռեի ժամանակակից վկայութիւնը։

«Խրիմեան հասնելով Վան, թէպէտ ժողովուրդն և երիտասարդութիւնը և երեխինները դաս մը շատ համակիր եղան իրեն, բայց իշխանաց մեծ մասն, որոց ձեռքն էր առաջնորդարան և առաջնորդն, և վանականք և վանօրայք մեծ ընդդիմութիւն և թշնամանք ունեցան նորա դէմ. անմիջապէս երկու բանակի բաժանուեցաւ Վան բայց բուն բաժանարարութեան պատճառը Պօլիսն էր։ Հակառակողք կը դիմէին Պօլսոյ երեխաց այն դասուն, որք հակառակ էին Օտեանց և Օտեանց տան խմբին, և նոցա հրահանգով կը մերժէին Խրիմեանն և իւր ձեռնարկն ու առաջարկը. բայց Խրիմեանն ալ պաշտպանութիւն կը վայելէր այն դասէն, որ յետոյ կոչուեցաւ «Լուսաւորեալք» և միւսք «Պաւարեալք»։ Խրիմեանին աչքը Աղթամարն էր, սակայն անկարելի եղաւ յաջողիլ. ուստի Վարագայ վանքը խնդրեց, որ Վանին աւելի մօտիկ էր, ընդարձակ պատրաստական շէնքեր ունէր, բայց Վարագն ևս առաջնորդարանին և իշխանաց վանքն էր, զրօսավայրն։ Յետ մեծամեծ դժուարութեանց և աղմկալից անցքերու, վերջապէս Պոլսոյ Պատրիարքարանը՝ որ այն ատեն Լուսաւորելոց ազդեցութեան տակն էր, անկախ Վանայ առաջնորդարանէն յանձնեց Խրիմեանին» *)։

*) «Արեւելք» օրագիր. Կ. Պոլիս. 1885։

«... Անցաւ Վարագ, որուն վրայ միաբան*) ձեռնադրուած էր իսկապէս, բայց Լիմի և Կուղի անապատականներէն կիսաշխարհիկ նկատուած այդ վանքին երջանիկներն ալ անհանդուրժելի գտան իր տեսութիւնները. Իր փափաքն էր այս մենաստանին մէջ հաստատել դպրոց ու տպարան, որոնց համար օժանդակութեան հաւաստիքներ ստացած էր մայրաքաղաքէն. բայց դեռ ժողովուրդն ալ անպատրաստ կը թուէր այդ նորութեան ու վիճակին Առաջնորդարանը ինքն իսկ չէր ախորժեր ձեռնարկէն, անոր մէջ տեսնելով վանքին ապագայ ինքնավարութեան վտանգը և առաջնորդական աթոռին զրկումը անոր փարթամ հասոյթներէն»**).

«Վանահայրութեան պաշտօնով մտաւ Խրիմեանը այդ վանքը (Վարագ) այն ժամանակ, երբ նա ներկայացնում էր մի անապատ, որի մէջ բուն էին դրել մի քանի անգործ և մեռած հոգևորականները» կը գրէ Բագրատ Մ իրիմանեանը.

Երբ Խրիմեանը կը նշանակուի Վարագայ վանքի վանահայր, անոր դէմ «գլուխ են բարձրացնում նախանձը, չարակամութիւնը, շահասիրութեան, ընչաքաղցութեան հոգին և աշխատում են տապալել Նրա ծրագիրն ու ձեռնարկութիւնները»***), կ'աւելցնէ Ե. Ձագարբէգեանը.

Սակայն Խրիմեանի և իւր կողմնակիցներու բարոյական յաղթանակը կատարեալ էր.

Պատրիարքարանի կոնդակով, առանց Վանի Առաջնորդարանի և «Իշխաններ»ու կամքն առնելու, Խրիմեանը կը պատրաստուէր քաղաքէն երթալ Վարագ և ստանձնել վանահայրութիւնը.

---

*) Թորգոմ Աբբեպ. Գուշակեան և ուրիշները գրած են, որ Խրիմեանը Վարագայ վանքի վրայ միաբան ձեռնադրուած էր. Այս կէտը սխալ է. Խրիմեանը Աղթամարի վանքին համար միաբան ձեռնադրուեցաւ, միակ նպատակ ունենալով այդ պատմական մենաստանը դարձնել իւր ապագայ գործունէութեան կեդրոնավայրը: Սակայն երբ իւր Աղթամարեան գործունէութեան ծրագիրները չուրն ընկան, նա հրաժարեցաւ Աղթամարի միաբանութենէն և իբրև ազատ վարդապետ ենթարկուեցաւ Պատրիարքարանին, որուն կարգադրութեամբ ալ նշանակուեցաւ Վանահայր Վարագայ.

**) Թ. Ե. Գ. Խրիմեան Հայրիկ. էջ 24.

***) «Նոր-Դար». 1893. Թիւ 150. Թիֆլիս.

Վանի Առաջնորդարանն ու «Իշխանները» հրահանգած էին Վարագայ վանքի միաբանութեան, որ պարիսպներու դռները միշտ փակ պահեն, թոյլ չը տալով որ Խրիմեանը ներս մտնէ։

Ձմեռ էր. 1857 թուի Նունուարի ցրտաշունչ առաւօտ մը։ Մկրտիչ Վարդապետ Խրիմեանը և իւր համակիրներն ու գործակիցները, մեծ խումբով մը ճամբայ կ'ելլեն դէպի Վարագ։ Երբ կը հասնին վանքի պարիսպներուն տակ, կը տեսնեն, որ դուռները փակուած են։ Ձայն կուտան, դուռը կը թակեն, բայց ներսէն ոչ մէկ պատասխան։ Եւ ահա Աթոռակալ Դասպարը*) պարիսպներէն վեր բարձրանալով կ'իջնէ վանքին բակը և դուռները կը բանայ։ Ներս կը մտնեն և կ'ուղղուին դէպի վանահօր սենեակը, ուր հաւաքուած կը գտնեն վանքի միաբանները։ Յարմար տեղ և ժամանակ էր. Խրիմեանը վանահօր ցոյց կուտայ Պատրիարքարանի կոնդակը, որ ոչ միայն Մկրտիչ Վարդապետի վանահայրութիւնը կը հաստատէր, այլ Վարագայ վանքը Վանի Առաջնորդարանի իրաւասութեանէն հանելով ուղղակի Պատրիարքարանի հսկողութեան կ'ենթարկէր։ Այսպիսով ամէն ինչ վերջացած էր։

## ԺԲ.

## „ԺԱՌԱՆԳԱԻՈՐԱՑ ԱՆԴՐԱՆԻԿ ՎԱՐԺԱՐԱՆ“

Խրիմեանը 1857 թուի Նունուարէն, պաշտօնապէս կը ստանձնէր Վարագայ վանքի վանահայրութիւնը և այնուհետև այդ երկու անունները—ԽՐԻՄԵԱՆ և ՎԱՐԱԳ—համահայկական յայն համակրանք և ժողովրդականութիւն կը վայելէին ամբողջ 50 տարի։

Վասպուրականի Արծիւը, Արծրունեաց այս մեծաստանն Արծուարոյնի կը վերածէր և տարիներու ընթացքին իւր ազգին կ'ընծայէր Արծուաձագերու ժողովրդանուէր սերունդ մը, որուն ճակատը լուսապսակով զարդարուած է։

*) Այս Դասպարը Խրիմեանի ծառան եղած է։ Վանահայր Խրիմեանը երբ վանքի շրջակայք պտտելու երթար, Դասպարը իսկոյն աթոռ մը կ'առնէր ու ետևէն կը վազէր, որ վարդապետը գետնի վրայ չը նստէր, մինչդեռ Խրիմեանն ալ կը ցանկանար քարերու կամ կանաչներու վրայ նստիլ։ Այս պատճառով ալ ահա Դասպարին Աթոռակալ (աթոռ վերցնող) կը կոչէին։

Նոր վանահայրը, առաջին առթիւ իսկ կը բարեկարդէր վանքի ներքին կեանքը։ Միաբանութեան հանդէպ նա այնքան անյիշաչար և եղբայրական վարմունք մը կը ցուցնէր, որ քիչ ատենէն, վանականները սիրոյ և համակրանքի զգացումներ կը տածեն անոր հանդէպ։ Վանքի տնտեսութիւնը կանոնաւորելու համար, վանահայրը ձեռնահաս անձեր գործի կը լծէր և կեանք ու աշխատանք կ'եռար մենաստանի պարիսպներէն ներս ու դուրս։

Գարուն էր. 1857 թուի Մարտի 1-ի արշալոյսին, երբ արևը վարագայ լեռան բարձունքներէն իր ողջոյն ու համբոյրը կուտար Վասպուրական մեր աշխարհին, տաճարէն եկեղեցական թափօրը շարական երգելով կ'ուղղուէր դէպի վանքի հիւսիսակողմի պարսպապատը և կանգ կ'առնէր տափարակի մը վրայ, ուր գետնի մէջ բաւական տարածութեամբ հիմքերը փորուած և շինուածանիւթեր— հող, քար, փայտ, այլն—հաւաքուած էին։

Մկրտիչ Վարդապետը կը վերցնէ հիմնաքար մը և փորուած հիմքի մէկ անկիւնին մէջ կը տեղաւորէ։ Ապա խանդավառ բարոզով մը ներկաներուն կը բացատրէ դաստիարակութեան կարևորութիւնը։ Այսպէս ահա կը կատարուէր Վարագայ «Ծառանդաւորաց Անդրանիկ Վաժարան»ի հիմնարկութեան արարողութիւնն ու հանդէսը, որուն ներկայ էին ոչ միայն վանքի միաբաններն ու մշակ-հօտաղները, այլև Խրիմեանի համակիրներն ու գաղափարակիցները՝ որոնք քաղաքէն հրաւիրուած էին։

Դպրոցական շէնքի կառուցման աշխատանքները կը կատարէին ոչ միայն վարպետներն ու բանուորները այլև, վանահայրն ու վանականները։ Երեք ամիս յետոյ (1857 Մարտ-Մայիս), Վարագայ «Ծառանդաւորաց Վարժարան»ի շէնքն արդէն պատրաստ էր։ Բարձր պատերով, օդասուն, արեգդէմ, լուսաւոր և պարզ ու համեստ արտաքինով այդ շէնքը կը ներկայացնէր միջակ մեծութեամբ սրահ մը, որուն վերնայարկը պիտի ծառայէր իբրև ննջարան, իսկ ներքնամասը՝ իբրև դասատուն։ Վանքի բակին մէջ, դպրոցին կից, վանահայրը շինել կու տայ նաև խոհանոց, սեղանատուն, հանդերձատուն, բաղնիք և գիշերօթիկ դպրոցի մը յատուկ և անհրաժեշտ յարմարութիւններ։ Դպրոցին մօտիկ, վանքի բակին հիւսիսակողմը,

Խրիմեանը կառուցել կուտայ նաև տպարանի շէնքը, իւր յարակից մասերով. «Արծուի Վասպուրականի տպարանն էր այդ։

Դպրոցի հիմնադիրը պատրաստել կուտայ աշակերտական գրասեղաններ, գրատախտակ, ուսուցիչներու աթոռներ և սեղաններ։ Քարտէսներ, քնագիտական նկարները ևայլն արդէն Կ. Պոլսէն իր հետ բերած էր։

Այս բոլորէն յետոյ, Խրիմեանը գրաւոր յայտարարութիւններ ցրել կուտայ Վանի և գաւառներու մէջ, յայտնելով ժողովուրդին, որ ի Վարագ հիմնուած «Ժառանգաւորաց Անդրանիկ Վարժարանի բացումը պիտի կատարուի 1857 Օգոստոսի 1-ին։ Դպրոցը գիշերօթիկ պիտի ըլլար։ Աղքատ ծնողներու զաւակներ և անտէր որբեր ձրիաբար կ'ընդունուէին, իսկ ուսևորները թոշակ պիտի վճարէին։ «Ժառանգաւորաց Վարժարանն ընդունուող աշակերտին — աղքատ, հարուստ թէ որբ — կ'առաջարկուէր հետևեալը.

«Աշակերտ մը չէ կարող վարժարանիս որդեգրութեան իրաւունքն ունենալ՝ մինչև որ հաստատուն երաշխաւորութեամբ չհաւատարմացնէ թէ ինքն բարձրապատիւ Հիմնադրի մտացը նպատակին համեմատ, պիտի աշխատէ նոյն վարժարանին իսկական որդեգիրը կամ սան լինելու։ Ուստի եւ բարեկարգութեան համար սահմանուած բոլոր կանոններուն ալ կ' պարտաւորի մեծաւ ակնածութեամբ հնազանդել»*)։

Եւ ահա առաջին առթիւ, քաղաքէն ու գիւղերէն Վարագ կը բերուին ուսևոր և որբ խումբ մը աշակերտներ, որոնք կը դառնան «Ժառանգաւորաց Վարժարանի անդրանիկ որդեգիր-սաներ — Գաբրիէլ Օրուանձտեան, Արսէն Թոխմախեան, Արշաւիր Փոխանեան, Հրաչեայ Սևիկեան, Եղիշէ Մեսրովբեան, Յարութիւն Տէր Սարգիսեան, Երուանդ Տէր Գէորգեան, Արամայիս Մարգարեան, Վահան Պապայեան, Աշոտ Թովմասեան, Մուշեղ Մ. Պետրոսեան, Արամ Բժիշկ-Յակովբեան և ուրիշներ։

Ուշագրաւ է այն երևոյթը, որ Խրիմեանը այս անդրանիկ աշակերտներու կրօնական, օտար կամ տգեղ անունները կը փոխէ և իւրաքանչիւրին հայկական-պատմական կոչումով կը մկրտէ իբր Վարագայ սաներ։

)* «Արծուի Վասպուրական». ի Վան-Վարագ. էր։ Տպիս. էջ 118։

Խրիմեանը վանէն և գաւառներէն իւր շուրջ կը հաւաքէ ժողովրդանուէր և զարգացած խումբ մը երիտասարդներ, որոնք կը դառնային «ժառանգաւորաց Վարժարանի» անդրանիկ ուսուցիչները և հիմնադրի գաղափարակիցներն ու գործակիցները։ Այսպիսով կը կազմուէր նաև ուսուցչական խումբը. Հիմնադիր-Վերատեսուչ՝ Մկրտիչ Վարդապետ Խրիմեան, դաստատները՝ Մանուէլ Արտամետցեան (յետոյ Դիոնէսիոս Աւագ Քահանայ՝ Վանի Ս. Աստուածածին Մայր եկեղեցւոյ), Մարտիրոս Փափազեան (ապա Մեսրոպ Քահանայ և յետոյ շուշտակ վարդապետ), Տիգրան Գալփակճեան (յետոյ Յուսիկ վարդապետ, կ. Պոլսեցի), Միքայէլ Ռուբէնեան (յետոյ Ամբրոսիոս վարդապետ, կ. Պոլսեցի), Նահապետ Փիրղալէմեան (յետոյ Ղևոնդ վարդապետ) և Տիրացու Գէորգ։ Դպրոցն ունէր նաև վերակացու և տնտեսական մատակարարութեան պաշտօնեաներ։ Ամէն ինչ պատրաստ էր։

Օգոստոսի 1-ին (1857) յիշատակելից հանդէսով մը կը կատարուի «ժառանգաւորաց Անդրանիկ Վարժարանի» բացումը և դասատուութիւնը կը սկսի։

«Վարժարանիս ուսմունքներն են առայժմ ասոնք.

«ա. Օրթագան պատմութիւն, բ. Ընդհանրական Տեղեկութիւն, գ. Քրիստոնէական Վարդապետութիւն, դ. Եկեղեցական Երաժշտութիւն, ե. Ճարտասանութիւն, զ. Քերականութիւն, է. Աշխարհագրութիւն ի Բնական մասէն, ը. Թուաբանութիւն թ. Ազգային Պատմութիւն, ժ. Հասարակ Գրութիւն, ժա. Հասարակ Ընթերցում հայլն։

«Այս ուսմունքներս յատուկ ցուցակաւ իւրեանց յատկացեալ ժամանակին 'ի գործ կը դրուին անխափան»*)։

«ժառանգաւորաց Վարժարան»ի բացման լուրն արդէն տարածուեր էր ոչ միայն Վասպուրականի, Տաճկահայաստանի և կ. Պոլսոյ, այլև Կովկասի և Պարսկաստանի Հայութեան մէջ։ Եւ ահա 1858 թուի ամռան, կ. Պոլսէն, գաւառներէն և Կովկասէն ու Պարսկաստանէն տասնեակ մը որբ և թոշակաւոր աշակերտներ կը հասնէին Վարագ և իրենց ներկայացուցած «բարի վարուց» յանձնարարականներով կ'ընդունուէին «ժառանգաւորաց Վարժարան»։

---

)* «Արծուի Վասպուրական», ի Վան-Վարագ. 1859. Մայիս. էջ՝ 117։

Այժմ տեսնենք թէ՝ «Խրիմեան Արժանապատիւ Տ.Մկրտիչ Հայրենասէր և Գիտնական Վարդապետի Վերատեսչութեամբ Վանայ Վարագ Մենաստանին մէջ հաստատեալ Ժառանգաւորաց Անդրանիկ Վարժարան»ի հիմնադրի մասին, ինչ կարծիքներ և տպաւորութիւններ ի յայտ եկած են, դեռ 1850-ական թուերու վերջերը։

Առաքելական Սալմաստ գաւառի Փայաղուկ գիւղէն, 1858-ի ամառը, 23 տարեկան հայ երիտասարդ մը, իր մէկ ընկերոջ հետ, կ'անցնէր Վասպուրական, այցելելով նաև Վարագայ վանքը, ճիշտ այն շրջանին, երբ «Ժառանգաւորաց Վարժարան»ը իր գոյութեան մէկ տարին կը լրացնէր։ Այդ երիտասարդը Յակոբ Մելիք-Յակոբեանց էր—ՐԱՖՖԻ՛Ն է խօսողը.

«... Գեղեցիկ պայծառ առաւօտ էր, երբ ես և Ասլանը ձի նստած, դուրս եկանք Այգեստանի ծառազարդ փողոցներից և ուղեւորուեցանք դէպի վանքը։ Մեր առջևն էր Վարագայ սարը իր սքանչելի տեսարաններով. Արևը դեռ նոր էր սկսել ծագել. Ես առաջին անգամն էի տեսնում արևի մի այնպիսի հրաշալի ծագումը. Նրա ճառագայթները հրեղէն շառաւիղների նման տարածուեցան Վանայ շրջակայքը, տարածուեցան ծովակի մանիշակագոյն մակերևոյթի վրայ և լուսաւորեցին առաւօտեան մառայլի մէջ ծածկուած հեռաւոր լեռները։

«Մենք այժմ բարձրանում էինք Վարագայ լեռան զառիվերը։

«Երբ հասանք վանքը, երբ շրջապարսպի գլխաւոր դռնից ներս մտանք, երբ հետզհետէ երևան եղան այդ հինաւուրց սրբավայրերի պատկառելի շինուածքները, նրանց արտաքին տեսքը միայն իմ վրայ այն տպաւորութիւնը գործեց, որ ես յանկարծից սկսեցի մոռանալ, թէ այստեղ անպատճառ տեսնելու եմ կատուց անապատի հանապատները։ Եւ իրաւ, այստեղ շնչում էր մի այլ կեանք, երեւում էր մի այլ աշխարհ։ Վանքը թէ՛ արտաքուստ և թէ՛ ներքուստ հովանաւորուած էր ծառերով ու պարտէզներով. վազում էին, սառն յստակ աղբիւրներ և ջրերի վտակներ հաւաքուելով, մեծ աղմուկով դարձնում էին վանական ջրաղացի ծանր աղօրիքը»։

Րաֆֆին և իր ուղեկիցը վանքի հիւրընկալ աբեղային կողմէ կ'առաջնորդուին «մի բաւական մաքուր և կահաւորուած սենեակ»։

«Երիտասարդ արեղան Հայրիկի (Խրիմեանի) աշակերտներից էր։ Ես իսկոյն նկատեցի, և այնուհետև ինձ շատ անգամ էր պատահել նկատել, որ նրա աշակերտները նրա մասին խօսելիս նրանց մէջում էր խորին ոգևորութիւն, նրանք մի առանձին պարծանքով էին յիշում այն մարդու անունը, որին այնքան սիրում էին, որին այքան պատուում էին։

«—Հայրիկից առաջ,—շարունակեց նա (արեղան),—այդ վանքը (Վարագ) համարեա թէ աւերակ էր, ոչ դպրոց կար ոչ աշակերտ և ոչ կանոնաւոր տնտեսութիւն։ Նրա եկամուտները կողոպտւում էին թէ ներքին և թէ արտաքին աւազակներից։ Վանքը պարտքերի ներքոյ խեղդւում էր։ Բայց Հայրիկը կեանք տուեց այդ վանքին։ Բոլորը ինչ որ տեսաք և ինչ որ պիտի տեսնէք, նրա աշխատութեան պտուղն է։ Բայց փոխարէնը, ինչ որ ստացաւ նա և ինչ որ ստանում է, միշտ եղել է ատելութիւն, հալածանք և դաւադրութիւն իւր խաւարասէր թշնամիների կողմից...

«—Ո՞վքեր են այդ դաւաճանները,—հարցրեց Ասլանը։

«—Մի քանի եկեղեցականները, միացած մի քանի աղաների հետ, որոնց պարագլուխն է մեր քաղաքի սրբազան Առաջնորդը,—պատասխանեց արեղան։

«—Բայց մթթէ Հայրիկը բարեկամները չունի։

«—Ունի, բայց Հայրիկի բարեկամները այնպիսի կարող, այնպիսի հզօր մարդիկ չեն, որպէս նրա թշնամիները։ Հայրիկի բարեկամները ժողովրդի հալածուած, հարստահարուած և ամեն իրաւունքներից զրկուած դասակարգն է։ Հայրիկի բարեկամները աղքատ շինականներն են, քաղաքի արհեստաւորներն են, և անտուն, անտեղ, անհող, անջուր սարակներն ու բանուորներն են,—և մի քանի երիտասարդներ, որոնք ազնիւ սիրտ և բարի ցանկութիւններ ունեն։

«(Խրիմեան) Հայրիկը եկեղեցական աստիճանով դեռ վարդապետ էր, բայց նրա կատարած գործերը, ստացած հռչակը, վայելած ժողովրդական մեծ համարումը,—այդ բոլորը չէր կարող չը գրգռել միւս եկեղեցականների նախանձը, որոնք թէ աստիճանով և թէ դիրքով աւելի բարձր էին քան թէ նա։ Նա հիմնել էր վանքում մի գիշերօթիկ դպրոց, որը մի տեսակ վարժապետանոց կարելի էր համարել, ուր հաւաքել էր նա զանազան տեղերից մա-

նուկները, այն նպատակով, որ վարժապետացուը և կրթեալ քահանայացուը պատրաստուեն, և վերադառնալով իրենց հայրենիք, գիւղական քահանաները և վարժապետները դառնան։ Նա առաջին օրինակը եղաւ, որ դատարկամոլ և ձրիակեր կրօնաւորների անկելանոց դարձած վանքին տուեց մի այնպիսի կազմակերպութիւն, որ նա սկսեց այնուհետև ծառայել իբրև մի բարձր հիմնարկութիւն ժողովրդի հոգևոր, բարոյական և մտաւոր կրթութեան համար։

«Ո՞րքան մեծ անհամբերութեամբ ցանկանում էի տեսնել այդ մարդուն (Խրիմեանին), լսել նրա ձայնը, և խօսել նրա հետ։ Նա մեզ երկար սպասել չը տուեց, շուտով վերադարձաւ գութանի մօտից, քրտնած, փոշիների մէջ թաթախուած։ Նախ վազեց իր սենեակը, երևի, լուացուելու համար, յետոյ եկաւ մեզ մօտ։

«Նա դեռ երիտասարդ էր, բարձրահասակ և ամուր կազմուածքով։ Գլխին վեղար չունէր։ շագանակի գոյն խիտ մազերը կիսով չափ ծածկում էին նրա լայն ճակատը և, դէպի յետ սփռուելով, անփոյթ կերպով թափւում էին հզօր ուսերի վրայ։ Մօրուքը թաւամազ էր, որպէս անապատական առիւծի բաշը։ Ինչ որ աւելի նշանաւոր էր նրա հոգ, միևնոյն ժամանակ, այրական դէմքի վրայ դրանք էին՝ արծուի խոշոր աչքերը և արծուի կտցաձև քիթը։ Գուցէ այդ էր պատճառը, որ նա ստացել էր մի երկրորդ մականուն ևս Վասպուրականի Արծիւ։ Հագուստը պարզ էր և վայելուչ, իսկ վարվողութեան ձևերի մէջ խիստ հասարակ էր նա և անկեղծ։ Նայելով այդ կրօնաւորի վրայ, ի նկատի ունենալով նրա անցեալը և ներկան, իսկոյն երևում էր՝ մինչև շինականի աղքատ խրճիթը խոնարհուած մարդու ամկասիրութիւն, ամիկ բոլոր առաքինութիւններով, ամիկ բոլոր անփառասիրութեամբ,—և մարդասիրական բարձր գաղափարներով ոգևորուած մի եկեղեցականի անձնազոհութիւն, որ իր աշխատութեան հոգևոր մխիթարութիւնը որոնում է նոյնիսկ ամկի, դարերով թշուառացած ամկի, հանգստութեան և բարօրութեան մէջ։ Նա ժողովրդի մարդ էր և ժողովրդի համար ծնուած։

«Ես առաջին անգամն էի տեսնում մի այսպիսի սիրելի անձնաւորութիւն։ Նրա ուխտեալ երկիրը Վասպուրականն էր։ Հայրենա-

սիրութիւնը հասնում էր նրա մէջ մինչև մոլեռանդութեան, իսկ կրօնասիրութիւնը մինչև բարձր առաքինութեան։

«Այդ մարդը կատարելապէս սիրահարուած էր իր հայրենիքի՝ Վասպուրականի վրայ։ Իսկ Վարագը, Վանը, Վանայ ծովակը իր շրջակայ գաւառներով—նրա մտածութեան գեղեցիկ առարկաներն էին։ Բայց նա իր հայրենիքում նոյն դրութեան մէջն էր, որպէս մի ժամանակ Խորենացին Տարօնում։ Կղերը նրա դէմ ևս լարում էր զանազան որոգայթներ։

«Հայրիկը տարաւ մեզ գրատուն, որտեղ հաւաքուած էին տպագրրուած գրքեր, թէ՛ հայոց և թէ՛ օտար լեզուներով և հայոց գրչագրերը, որոնք փայտեայ պահարանների մէջ կարգով դասաւորած էին։

«—Այդ մեր թանգարանն է,—ասաց Հայրիկը,—բայց դեռ աղքատ թանգարան, որովհետև շատ ժամանակ չէ, որ գոյութիւն ունի։ Յետոյ Հայրիկը ցոյց տուեց իր դպրոցը, որ գտնվում էր վանքի շինուածքների մի առանձին բաժնում։ Եւ իրաւ, այդ դպրոցը իր տեսակի մէջ առաջին օրինակն էր այդ երկրում և գուցէ այդ էր պատճառը, որ իբրև նորութիւն, ենթարկուել էր այնքան հալածանքների։ Ես ի հարկէ, չէի կարող քննել նրա ներքին, ուսումնական կազմակերպութիւնը, նրա ծրագիրը,—ինձ գրաւում էր նրա արտաքինը միայն։ Այստեղ առաջին անգամ տեսայ, որ աշակերտները դասաւորած էին կարգով նստարանների վրայ։ Այստեղ առաջին անգամ տեսայ սև գրատախտակը, որի վրայ կաւիճով գրում էին։ Առաջին անգամ տեսայ, որ աշակերտներին սովորեցնում էին առանց փայտի ու ծեծի։ Այստեղ ֆալախկայ, ճիպոտներ, խրատելու քանոն և դրանց նման պատժական գործիքները չը կային։ Հայրիկը մեզ տարաւ մի դահլիճ, որտեղ ես տեսայ զանազան հանքային վէմեր, չորացած միջատներ, գոյնզգոյն թիթեռներ և սմենամանր պողոճներ։ Մի ևնոյն դահլիճում կային զանազան բոյսեր ու ծաղիկներ, այնպէս լաւ չորացրած, որ բնաւ չէին կորցրել իրանց ձևը կամ գեղեցկութիւնը։ Կային և մի քանի թռչունների պաճուճապատաններ։

«—Այդ բոլորը մեր աշակերտների հաւաքածուն է,—ասաց Հայրիկը, այնպիսի հրճուանքով, որ կարծես, ինքն ևս ուրախանում էր իր սանների առաջին երախայրիքի վրայ։—Նրանք երբեմն իրանց

վարժապետների հետ փոքրիկ արշաւանքներ են կատարում մեր շրջակայ լեռների վրայ, և բնութեան մէջ՝ ծանօթանում են բնութեան հետ։

«Երեկոյեան պահուն, երբ օդը փոքր ինչ զովացաւ, Հայրիկը մեզ տարաւ և երկար ման էր ածում իր վանքի շրջակայքում. Մեծ բաւականութեամբ ցոյց էր տալիս նա այն բոլորը, ինչ որ արել էր, և ինչ որ դիտաւորութիւն ունէր անելու. Այդ եռանդոտ մարդը այն տպաւորութիւնն էր գործում ինձ վրայ, որպէս մի լաւ հողագործ, որին ծանօթ են իր ագարակի բոլոր բոյսերը, բոլոր տունկերը, և որը գիտէ նրանց բնաւորութիւնը, ուսումնասիրել է նրանց կեանքը, և որը այնքան սիրում է նրանց։

«Արևը մտել էր և երեկոյեան մութը բաւական թանձրացել էր, երբ մենք, մեր ձիաները հեծնելով, մեծ գոհունակութեամբ մեզ բարեաւ ասացինք Հայրիկին եւ, դուրս գալով վանքից, սկսեցինք իջնել Վարագայ լեռան զառիվայրը։ Ճանապարհը Հայրիկի շնորհիւ հարթած էր, և մենք մեծ դժուարութիւն չէինք կրում իջնելու ժամանակ»*)։ Եւ Րաֆֆին ու Ասլանը կը մեկնէին Վարագէն.

Վարագայ վանքի մտաւոր, կրթական և տնտեսական վերածնութեան և Խրիմեանի ազգանուէր գործնուէութեան կենդանի վկայ և ականատես Րաֆֆին իւր վերոյիշեալ տպաւորութիւններն ու դիտողութիւնները կը հրատարակէր «Կայծեր»ի մէջ և Հայկական Ազատագրութեան գաղափարներով տոգորուած երիտասարդութեան մէջ կ'արծարծէր նաև ուսման և դաստիարակութեան սէրը։ Աղթամարի միաբանները երբ կը նախատեն ու կը ծաղրեն Խրիմեանի գործունէութիւնը, Րաֆֆին խօսքը վանահօրն ուղղելով կ'ըսէ.

«...Դու, ինչո՞ւ այդպէս կողմնաւորապէս դատում ես Արծուի ջանքը։ Նա Արծիւ է սրատես աչքերովը Վարագայ բարձրավանդակից տեսնում է իւր ազգօգուտ տնօրէնութիւնների շատ հեռաւոր սահմանները։ Նա առաջինն է, որ կամենում է զարթեցնել Վասպուրականի ժողովուրդը մահահրաւէր թմրութիւնից։ Ինչու անիծում ես նորա դպրոցն ու տպարանը, այդ երկու գլխաւոր գոր-

*) Րաֆֆի. «Կայծեր»։ Բ. Հատոր. Բ. Տպագրութիւն. էջ՝ 251—285։ Մխիթարեան Տպարան։ Վիեննա. 1904։

ծիքը, որ այնքան ձեռնտու են ազգային լուսաւորութեան բանին։ Նա արդէն կրում է իւր մէջ այն բարձր վսեմ միտքը, որով ոգևորուած է ետքանչիւր կրթեալ ազգասէր հայերի մէջ։ Նորա գործերի վախճանը շահաւէտ է. երանի թէ մեր բոլոր կրօնաւորք ունենային այն ազնիւ ոգին, որպէս Մկրտիչ հայր սուրբը։ Ինչ երջանկութիւն կը լինէր»։

«Մկրտիչ Վարդապետ Խրիմեանը արդէն ծանօթ է ազգին, աւետեաց երկրի և Արարատեան հրաւիրակներով. այլև 1855 թուին Պօլսում հրատարակուած ամսատետրակներով։ Այս հայրենասէր հոգին եռանդոտ ազգասիրութեամբ վառուած 1857 թուականին Վարագայ վանքում, Վանայ քաղաքին մօտաւոր, հաստատեց մի տպարան ու դպրոց, որ նոյնպէս ծանօթ է «Արծիւ Վասպուրականի» ամսական տետրակներից։ Անցեալ տարի ճանապարհորդելով այդ կողմերում և հանդիպելով սրբակրօն Հօրը, ո՛չ մի անձնում չէի տեսած ազգասիրական հոգին, այդպէս կենդանի, որպէս այդ արժանապատիւ կրօնաւորի մէջ։ Մի կողմից թշնամիների ահագին բազմութիւնը, միւս կողմից արծաթի պակասութիւնը, չէին կարողացել հատանել նորա յոյսերը, շիջուցանել նորա ազգասիրութեան կրակը։ Խզճալին ամենայն հալածանք, ամենայն թշնամութիւնք, մինչև անգամ մահ յանձն էր առած, իւր իղձը կատար հասուցանելու համար այն տեղ միտքս եկաւ մի Հայրենասիրի ազգու երգը.

— «Հուրըն սիրոյ իմոյ ազգի,
Միշտ ի խարոյկ սըրտիս վառի,
Ջուրըդ արտասուաց ո՛չ շիջանի.
Օգնեա՛յ, Քրիստոս, Փրկիչ բարի»*)։

Այժմ խօսքը տանք Վարագայ «Ժառանգաւորաց Վարժարանի» ուսուցիչ և Խրիմեանի գործակից Մանուէլ Արտամեցեանին, որ իբր ժամանակակից և կենդանի վկայ, ներկայ եղած է յիշեալ վարժարանի հաստատութեան.

«Այս ԺԱՌԱՆԳԱՒՈՐԱՑ ԱՆԴՐԱՆԻԿ ՎԱՐԺԱՐԱՆՍ 1857 մարտի մէկին հաստատեցաւ Վարագայ վանքիս մէջ. հայրենասէրը վերատեսչութեամբ Խրիմեան Տ. ՄԿՐՏԻՉ գիտնական Վարդապետի. որուն

*) «Հիւսիսափայլ». 1860. Նոյեմբեր. Թիւ 11։

բարենպատակ հիմնադրութեանը համար մինչև հիմայ թափած անբաւ ըրտանց չափը չի կայ. որ գրեթէ նոր Մեսրովբ մը հդաւ Վասպուրականի կորդացեալ սրտերուն մէջը գիտութեան նոր և լուսաւոր սերմունքներն բազմաջան ըրտամբ մշակելով. Այս մասին շատ եւ կարի շատ եղաւ մեծապատիւ հայրենասէր յարգելեաց անձնանուէր ջանքն ալ. որոնք երկայնամիտ համբերութեամբ Պօղոս սրբազան առաքելոյ խրատին հետևելով՝ եւս առաւել պայծառացնելու եւ կատարելագործելու վրայ են։

«Թէ եւ այս Վարժարանիս ներքին և արտաքին կառավարութիւնը ամեն մէկ պարագայիւ Ազգիս մեծ մասին ծանօթ է, բայց հեռաբնակ մեծարու Ազգայնոցս Ազնիւ բաղձանքն եւս լրացնելու համար՝ արժան դատեցաւ մասնաւորապէս տեղեկութիւն մը հրատարակել ՚ի ցնծութիւն և ՚ի միամտութիւն նոյն ճշմարիտ ազգասիրաց։

«Նախապէս գիտնալու է որ՝ բուն վարժարանն վանուց պարսպէն ներս՝ վերնայարկ՝ միջակ մեծութեամբ յարմարաւոր գրասեղաններով պատրաստութիւն ունի 25 աշակերտի բաւականութեամբ. Թանգարան մի ունի՝ ուր երկաթէր աշխատութեամբ ժողոված կան 270 հատորի չափ հին և նոր տպեալ եւ հին ձեռագիր մատեանք, որն որ օր աւուր ազգասիրաց ջանիւք հարստանալու վերայ է. Գիշերային հանգստարանն նմանապէս լայն արձակ է դրպրոցին հաւասարութեամբ վերնայարկ. ուր կան պատրաստած 20 աշակերտի համար յատուկ ննջարաններ գեղեցիկ դրիւք և մաքուր հանդերձանօք. սեղանատուն, խոհարան և դպրոցի վերաբերեալ միւս հարկաւոր շինութիւնք ամէն ալ նոր պատրաստութեամբ կան։ Ամառ եղանակին որ օրերն խիստ երկար են աշակերտք և միաբանք երեք անգամ ՚ի սեղանատուն կ՚իջնան (այսինքն) առաւօտ, կէսօրին և երեկոյ. որուն կերակրոց պատրաստութիւնը իւրաքանչիւր ամսոյ համեմատ յատուկ ցուցակով վերատեսչի ստորագրութեամբ կը տնօրինուի. Երկայն օրեր ժամու կէսու չափ զբօսանաց հրաման կայ աշակերտելոց՝ թէ որ Տպարանի վերաբերեալ հարկաւոր գործէ մը չպարտաւորին ետ մնալու»։

---

*) «Արծուի Վասպուրական». ի Վան-Վարագ. 1859. էջ՝ 116։

## ՎԱՐԱԳԱՑ ԺԱՌԱՆԴԱՒՈՐԱՑ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԱՆԴՐԱՆԻԿ ԱՇԱԿԵՐՏԱՑ ՑՈՒՑԱԿԸ. 1859. Ապրիլ.

| Թիւ | Խրմեանի կոդմէ անուանուած | Բուն անուն | Ազգանուն | Տարիք | Ո՛րտեղացի |
|---|---|---|---|---|---|
| 1 | Արշամ | Աւետիս | Գրիգորեան | 25 | — |
| 2 | Գարեգին | Յովհաննէս | Օրուանձտեան | 20 | Վանեցի |
| 3 | Արշաւիր | Յակոբ | Փոխանեան | 19 | » |
| 4 | Արսէն | Յարութիւն | Թոխմախեան | 16 | » |
| 5 | Գեղամ | Գէորգ | Տ. Աբրահամեան | 19 | » |
| 6 | Հրաչեայ | Մարգար | Ցևիկեան | 13 | » |
| 7 | Արամ | Գէորգ | Բժիշկ-Յակոբեան | 16 | — |
| 8 | Վահրամ | Ղազար | Նազարեան | 15 | — |
| 9 | Երուանդ | Գէորգ | Տ. Գէորգեան | 16 | Վանեցի |
| 10 | Համայեակ | Աւետիս | Արշարունի | 16 | Իգդիրցի |
| 11 | Ներսէհ | Մովսէս | Տ. Յովսէփեան | 17 | Թէհրանցի |
| 12 | Եղիշէ | Մարգար | Տ. Մեսրովբեան | 17 | Վանեցի |
| 13 | Մհերդատ | Բաղդասար | Յարութիւնեան | 19 | — |
| 14 | Մուշեղ | Մխիթար | Մ. Պետրոսեան | 14 | — |
| 15 | Յաբեթիկ | Յարութիւն | Տ. Սարգսեան | 15 | Վանեցի |
| 16 | Վահան | Վարդան | Պապաեան (որբ) | 15 | — |
| 17 | Լեւոն | Գէորգ | Առաքելեան (որբ) | 15 | — |
| 18 | Սիսակ | Շահէն | — (որբ) | 14 | — |
| 19 | Աշոտ | Սարգիս | Թովմասեան | 19 | — |
| 20 | Սմբատ | Մ. Սարգիս | — | 30 | Սղերդցի |
| 21 | Թաթուլ | Դաւիթ | Պօղոսեան | 16 | — |
| 22 | Արամայիս | Մարգար | — (որբ) | 12 | Վանեցի |

Այս ցուցակին վրայ, 1859-ի ուսումնական տարեսկզբին կ'աւելնային նաև հետեւեալները.—Յակոբ Աղուանեան (յետոյ Գրիգորիս Եպիսկոպոս), Մեսրոպ Մոկացեան (յետոյ Վարդապետ), Խաչատուր Ալէքսանդրապօլցի, Գէորգ և Համազասպ Մոկացիներ և ուրիշներ։

Սկզբնական շրջանէն իսկ, դպրոցի բարոյական դաստիարակութիւնը կը տարուէր կրօնական և ազգային շունչով, իսկ նիւթական

մատակարարութեան գործը բաւական նպաստաւոր պայմաններու մէջ կը գտնուէր։ Սան-աշակերտները ոչ միայն դպրոցական ուսում կը սովրէին, այլև կը զբաղուէին արհեստներով և գիւղատնտեսական աշխատանքներով։ Կային հիւսն, կօշկակար և դերձակ աշակերտներ։ Մեղուաբուծութիւն, բանջարաբուծութիւն, ծաղկամշակութիւն, ծառեր տնկել, ճամբաները շինել, ընդհղէններ մշակել և նման գիւղատնտեսական գործերը սաներու միջոցով կը կատարուէին, իսկ հացահատիկները մշակելու համար վանքի հօտաղ-մշակները կ'աշխատէին։

Այսպէս ահա, Խրիմեանի յամառ կամքի և անձնուէր ու յարատև աշխատանքի շնորհիւ, 1857-ին, Մայր-Հայրենիքի մէկ հեռաւոր լեռնահովտի մէջ՝ Վարագայ Եօթն Տաճար Մենաստանին պարսպապատէն ներս, կը հիմնուէր իւր կոչման արժանի կանոնաւոր եւ անդրանիկ դպրոց մը — «Ժառանգաւորաց Վարժարան»ը, — որ ոչ միայն Վան-Վասպուրականի, այլև բովանդակ Տաճկահայաստանի Հայութեան համար գեղեցիկ ու պատմական նորութիւն մըն էր, ուսման և մտաւոր լոյսի շտեմարան մը, որ տարիներու ընթացքին առաւել ևս զարգանալով ու յառաջդիմելով, Վան - Վասպուրականի կրթական, գրական եւ ազատագրական վերածնունդը պիտի դարբնէր։

Խրիմեանի անձն ու գործը և «Ժառանգաւորաց Վարժարան»ը, նիւթական և բարոյական քաջալերութեան կ'արժանանային գլխաւորաբար Կ. Պոլսոյ ազգասէր, ազատամիտ և ուսումնասէր շրջաններու կողմէ, իսկ Խրիմեանի ծննդավայր-հայրենիքի՝ Վանի մէջ Հայ «Իշխանները» և «Խաւարեալք»ի ներկայացուցիչները դաւեր և հալածանքներ կը կազմակերպէին Խրիմեանը վարկաբեկելու և [սկսուած հանրօգուտ աշխատանքը խանգարելու համար։

Վարագայ վանքի հարուստ եկամուտներէն ակամայ զրկուած, յաչս ժողովուրդի վարկաբեկուած և Խրիմեանի դէմ թշնամութեամբ լեցուած Վանի «Իշխանները»ն ու խաւարամիտները՝ հակախրիմեանական և օխակալ Մահտեսի Յովհաննէս Քօլօզ Վարժապետի բերանով կը հնչեցնէին իրենց զրպարտութեան կանչոցները, որոնք սակայն «ձայն բարբառոյ յանապատի» կը մնային.

«...Բայց աստանօր եկից ի վէպ մնացորդաց Վարագայ,
Զոր Խրիմեան յափշտակեաց յԱռաջնորդէն մեր Վանայ։

Որով ազգին պէս պէս զձիրս վեհանձնաբար խոստանայր.
Այն է, Վարագ հանդերձ մանկամբ յաւագութեանն հանել ծայր.
Բայց ամենայն ի դերև եւ իբրև սնոտի առասպել.
Ըստ առակին, զոր սկսաւ և ոչ կարաց կատարել։
Զոսկւոյն գումար զոր ած Պօլսոյ հանդերձ սպասիւք պատուական,
Զայն ամենայն վայրավատին ծախեաց ի գործ անպիտան.
Տակաւ տակաւ արկ ընդ պարտիւք զաթոռըն մեր ան Վարագ.
Գոգցես գողոց այրըս դարձաւ որկրամոլից և քնակ»*)։

Այսպէս կը գնահատուէր Խրիմեանի գործը, այն մարդոց կողմէ, որոնք տարիներ շարունակ Վարագայ վանքի եկամուտները կը կլանէին և ճնշուած ու արհամարհուած ժողովուրդի դեկավարները կը հանդիսանային։ Խրիմեանն եկաւ և իւր հուժկու բազուկով ու խրոխտ ձայնով խորտակեց այդ իշխանական և աղայական մտայնութիւնը և ժողովուրդին սովրեցուց «ժողովրդով ու ժողովրդի համար» նշանաբանի գործադրութիւնը։

## ԺԳ.

## „ԱՐԾՈՒԻ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ“Ն Ի ՎԱՆ—ՎԱՐԱԳ

«Ժառանգաւորաց Անդրանիկ Վարժարան»ի գործերը կանոնաւորելէ յետոյ, Խրիմեանը «Արծուի Վասպուրական» ամսաթերթի վերահրատարակութեան ձեռնամուխ կ'ըլլայ։ Կ. Պոլսէն բերուած զոյգ մամուլները—երկաթեայ և փայտեայ—իրենց ամբողջ պարագաներով տեղաւորուած էին Ճանկոյսների եկեղեցւոյ բակի սենեակներէն մէկուն մէջ։ Խաւարամիտներն ու հակախրիմեանականները կը ծաղրէին այդ մամուլները և Խրիմեանի հասցէին հետևեալ նախատական ու հեգնական խօսքերը կ'ըսէին.

—«Ախմախ հարիֆ, էլեր ի Վանայ չուր (մինչև) Ստամբօլ տրնկ հա տրնկ գնացեր ի, էսա երկաթի կտորներ, փէտի փշուրներ ժողվե բիրե իկե ժողովրդին կը պօռա՝ թէ տպարան եմ բիրե, կաղէթ կը կը տպեմ, լուսաւորութիւն, ուսում կը տարածեմ, տո խոզ - կօտ

*) Խրիմեան եւ գործ իւր. էջ՝ 79—80։

(հող գլխիդ), վարդապետ ես դնա մոի վանքդ ժամ-պատարագիդ խառնուի. ամօթ չի, վարդապետ կաղէթ կը տպի»*):

Այս խօսքերը երբ Խրիմեանի ականջին հասեր էին, ըսած էր.

—Շատ լաւ, ես անոնց պատասխանը յետոյ կուտամ:

Ճանկոյեաններուն եկեղեցւոյ սենեակներէն մէկը կը վերածուի տպարանական շէնքի: Երկաթեայ մամուլը, տառերը և մնացեալ պարագաները կը դասաւորեն. Տիգրան Գալփակճեանը կը դառնայ գրաշար, իսկ Միքայէլ Ռուբէնեանն ալ տպագրիչ և 1857 թուի Դեկտեմբերի սկզբին թերթը կը յանձնուի մամուլին:

Վանի Այգեստանի Ճանկոյեաններուն ձորակի Պատիկ Տաճար Սուրբ Աստուածածին եկեղեցւոյ բակին մէջ, գետնայարկ սենեակի մը խոնարհ յարկին տակ, կը ճրագայ ու կը թրխկայ երկաթեայ մամուլը՝ «Արծուի Վասպուրականի»ի թերթերը տպելով: Խմբագիրն ու աշխատակիցները խառնուեր են տպարան և բոլոր միասին աշխատանքի լծուեր են. կը գրեն, կը սրբագրեն և տպուած թերթերը կը ծալեն:

Եւ ահա, 1858 թուի Յունուարի 1–ին, նոր տարուայ առաւօտ, լոյս կը տեսնէ «Արծուի Վասպուրականի**) երկրորդ տարուայ առաջին թիւը:

Հայ մամուլի պատմութեան մէջ գեղեցիկ և սրտագրաւ երեոյթ մըն էր այս: Գուտենբերգի տպագրական գիւտէն յետոյ, առաջին անգամն էր, որ Մայր Երկրի մէկ հեռաւոր անկիւնին մէջ կը ճռընչէր մամուլը և Մկրտիչ Վարդապետ Խրիմեանը կը հանդիսանար այն հոյակապ դէմքն ու գաւառաբնակ Հայութեան մտաւոր դաստիարակութեան կամաւոր ջահակիրը, որ ժամանակի և միջավայրի քար և անտարբեր մտայնութիւններու, իր դէմ յարուցուած դաւերու, հալածանքներու և ամէն տեսակ դժուարութիւններու մէջ՝ կը

---

*) Հայոց Հայրիկի եղբօր թոռը՝ այժմ ծերունազարդ Վահան Խրիմեանը 1919-ին ըսաւ ինձ այս խօսքերը, աւելցնելով որ—«Ճանկոյեաններ ծերունիները կը վկայէին, որ իրենց եկեղեցւոյ երեսփոխան Պետրոս Ազա Ջաղօեանն էր, որ այդ կերպով արտայայտուած էր»:

**) «Արծուի Վասպուրականը առաջին տարին լրիւ լոյս տեսաւ ի Գ. Գալիս 1855 Յունիս—1856 Մայիս: Այս ամսաթերթի 12 թիւերը կը կազմէին մէկ լրիւ տարի կամ հատոր: Թերթի թիւերու վրայ նշանակուած է Ա. Հատոր, Բ. Հատոր, Գ. Հատոր և այլն, որը պիտի ընդունել Ա. Տարի, Բ. Տարի, Գ. Տարիի տեղ:

դարբնէր Մեծ Դուռ մը՝ ստեղծելով «Ժառանգաւորաց Վարժարան»ն ու «Աբծուի Վասպուրական»ը։

«Նա (Խրիմեան) եղաւ որ ամենամեծ արգելքներէ յաղթելով՝ առաջին անգամ Հայաստանի մէջ տպարան հաստատեց և առաջին Հայ թերթը հրատարակեց»*)։

«Որչափ կարևոր և օգտակար, նոյնչափ դժուարին գործ էր ազգին բնաշխարհին մէջ թերթ մը հրատարակել, քանի որ ամեն նիւթական միջոց ու դիւրութիւն կը պակսէր»**)։

«Հայաստանի այս անձնանուէր նահատակին (Խրիմեանի) ազգասիրութեանը և հայրենասիրութեանը վրայ գովեստ չ'հարկաւորիր, վասն զի ինքնին իւր արդիւնքները կը խօսեն։ Վանի մէջ տպարան հաստատելը ու հոն «Աբծուի Վասպուրական» անունով թերթի հրատարակելը (որոնց համար ալ իր հայրենակիցներէն փոխանակ օգնութիւն գտնելու մեծամեծ արգելքներ կը տեսնէ) մեծագործութիւններ կը սեպենք»***)։

«Խրիմեան եղաւ հպարտ տէրը տպագրական մեքենայի մը, որուն շնորհիւ ջանաց աշխարհական դասակարգը խանդավառել և փարատել կղերականներուն թանձր տգիտութիւնը։ Երբ Վարագի վանահայրը լճացած ջուրերուն մէջ նետեց իր քարը, հարուածը պտիկ արձագանգ մը տուաւ ծննդավայրի սահմաններէն և իր հայրենակիցներուն շարքերէն անդին»****)։

«Հայրիկ իր պարբերական մամուլը նախ Պոլիս կը հաստատէ յետոյ կը տեսնէ, որ Հայաստանի սրտին մէջ պէտք է գործել։ Վանտոսպի Վարագայ վանքը պիտի ըլլար նոր Աշտիշատ մը և գիտութեան տաճար։ Պարբերական թերթը կը հրատարակուի շատ դժուարին հանգամանքներով։ Բայց Հայրիկ իր նպատակին հասած էր։ Իր մամուլը կը

---

*) Ստ. Պալասանեան—«Պատմութիւն Հայոց». էջ՝ 479։

**) Հ. Գրիգորիս Վրդ. Դալէմքեարեան—«Հանդէս Ամսօրեայ». Ուսումնասիրութեր Վիեննայի Մխիթարեան Միաբանութեան. 1890. Թիւ՝ 9։

***) Ստ. Փափազեան—«Դասագիրք Ազգային Պատմութեան». էջ՝ 317։

****) Հ. Ֆ. Գ. Լինչ—«Հայաստան» (Armenia). Ա. Հատոր. Թարգմ. Լեոն Լաբենց. Կ. Պոլիս. Տտ. Ռ. Մազաեան. 1913. էջ՝ 170—171։

ճռնչէը Հայաստանի մէջ, անմիջական օգնութիւն, լուսաւորութիւն կը հասցնէը գեղջուկ հայութեան»*).

«Հայաստանում առաջին տպարան հիմնողը և առաջին լրագիր հրատարակողը՝ նա է Խրիմեանը։ Առաջին մարդը, որ յիսունական թուականներին, սրանից մօտ կէս դար առաջ յայտնեց, թէ կարելի է Հայաստանի այս կամ այն կենտրօնում տպարան հիմնել և լրագիր հրատարակել—Խրիմեանն էր։ Եւ նրան դրա համար շատերը խեղճ էին կարծում»**)։

«...1858ի ամանորին, կ'երևի «Արծուի Վասպուրական»ը՝ գրաբարի հետ աշխարհիկ բարբառով խմբագրուած հայրենախօս գրուածներով, որ այդ ժամանակի համար կատարեալ նորութիւն էր, երբ Ռուսահայերը դեռ կանոնաւոր գրական լեզու իսկ չունէին, իսկ Թիւրքահայ լեզուն թիւրքերէնի և գրաբարի ազդեցութենէն օձիքը թօթուած չէր դեռ։ Խրիմեան կը հիմնէը դպրոց, տպարան և թերթ՝ ճօական թուականներու Վասպուրականի մէջ...։ Երեք ճամբայ՝ մէկ նպատակի ուղղուած,—գիտութեան լոյս տարածելու խաւար հայրենիքի մէջ։ Հիմնադիրն ինքը, վարիչն ու մղիչ ուժն ինքը՝ Խրիմեան երիտասարդ աննկուն վարդապետը, որուն այդ ձեռնարկը կատարեալ խենթութիւն կ'համարէին ժամանակի խաւարամիտները...»***)։

«Արծուի Վասպուրականը լոյս աշխարհ կուգար և Վանի հոգրիզոնէն սաւառնելով կ'երթար Վասպուրականի ամէն կողմերը և մինչև Պարսկաստան, Կովկաս, Ցաճկահայաստան, Կ. Պոլիս ու հեռաւոր Հայ գաղութները։

Երբ թերթի առաջին թիւը (1858 Յունուար, Երկրորդ Տարի) լոյս կը տեսնէը, հայրենախօս խմբագիրը—Խրիմեան—Կիրակի առաւօտ մը Ցանկոյսների եկեղեցւոյ մէջ, քարոզի ժամանակ կը բացականչէը.

—Ո՛վ երեսփոխան աղա, երբ քանի մ'ամիս առաջ տպագրական մեքենաներ բերի և տեղաւորեցի եկեղեցւոյ բակին մէջ, դուն

---

*) Հ. Ս. Ներսէսեան—«Ազգային Դէմքեր—Գրագէտ Հայեր». Ա. Հրտր. Վենետիկ. Տպարան Ս. Ղազար. 1920. էջ՝ 300—301։

**) Խ. Մալումեան—Երիմեաց. էջ՝ 36։

***) Տիգրան Չիթունի—„Վարագայ Յօբելեան» (1857—1907). 1910. Կ. Պոլիս. էջ՝ 12։

ղժգոհելով ու ծաղրելով ըսած էիր թէ՝ ախմախ հարիֆ Խրիմեանը գացեր է այդ երկաթի կտորներն ու փէտ-փշուրները բերեր և կ'ըսէ թերթ պիտի տպեմ. (Թերթը գրպանէն հանելով ցոյց կուտայ) Ահաւասիկ, տես այդ փէտ-փշուրներով տպեցինք և լոյս ընծայեցինք Վասպուրական Աշխարհի այս անդրանիկ թերթը — «Արծուի Վասպուրական»։ Մի վախնար, քեզ և քեզ պէս մտածողներուն, նեղութիւն և ձանձրոյթ չը պիտի տանք, շուտով այդ երկաթի կտորներն ու փէտ-փշուրներ կը տեղափոխենք Վարագայ վանքը:

Առաջին առթիւ «Արծուի Վասպուրականը» լոյս կը տեսնէր 500 օրինակ և կը տարածուէր։ Ռուսաստանի մէջ միայն 70 բաժանորդ ունէր։ Թերթի ծաւալը և բաժանորդագրութեան պայմանները նոյն էին, ինչ որ 1855-ին ի Կ. Պոլիս։

«Արծուի Վասպուրականի Բ. տարուայ առաջին թիւը Վանի մէջ լոյս տեսնելէ յետոյ, Խրիմեանը տպագրական մեքենաներն ու տառերը փոխադրել կուտայ Վարագայ վանքը, ուր արդէն «Ծառանգաւորաց Վարժարանին կից տպարանի յատուկ շէնքին մէջ կը տեղաւորեն մեքենաները և տպագրական տառերը։

«Ծառանգաւորաց Վարժարանի սաներն ու աշակերտները գործի կը լծուին և թերթի հրատարակութեան աշխատանքները շատ կանոնաւոր կ'ընթանան։

Այստեղ խօսքը տանք «Արծուի Վասպուրականի անդրանիկ գրաշարին՝ Վարագայ Պարոն Պետրոսին, որ յետոյ դարձաւ Խրիմեանի սիրելին և մօտ 60 տարի կապուած մնաց Վարագայ վանքի հետ։

«Ես աղքատ ընտանիքի զաւակ էի, հայրս ինձ տարաւ Վարագայ վանքը, ուր աննշան վարձքով գառնարած դարձայ։ Աշխոյժ և աչքըաց 13 տարեկան պատանի մ'էի ես, երբ օր մը Խրիմեանն ինձ տեսաւ և անուշ ու սիրալիր ձայնով մ'ըսաւ — Ծղաս գառնարածութիւնդ թող եկուր տպարան գրաշարութիւն սովրիր։ Ես սիրով ընդունեցի Խրիմեանի առաջարկը և մտայ տպարանը, ուր կարճ ժամանակի մէջ գրել կարդալ և ապա գրաշարութիւն սովրեցայ։ Այսպէս ահա, 1858 թուի ամրան, ես արդէն «Արծուի Վասպուրականի անդրանիկ գրաշարներէն մէկն էի։ Փետրուարի վերջերը (1858) արդէն Վարագայ մէջ, լոյս տեսաւ «Արծուի Վասպուրականի Բ. թիւը։ Ո՛րքան ուրախութիւն և ոգեւորութիւն յառաջացաւ վանքի


միաբաններու, վարժարանի ուսուցիչներու և աշակերտներու մէջ, երբ «Արծուի Վասպուրական»ը լոյս տեսաւ ի Վարագ։ Այդ օրը տօնական կերպարանք ստացաւ, ամէնքը կ'ողջագուրուէին և կը շնորհաւորէին թերթի հրատարակութիւնը։ Խմբագիր Խրիմեանը արցունքն աչքերուն կը դիտէր այս բոլորը և հոգեպէս կը հրճուէր ու կը մխիթարուէր։ Նա արշալոյսէն առաջ կը զարթնէր, կ'երթար տաճար կ'աղօթէր և իւր խուցը մտնելով թերթի համար յօդուածներ կը գրէր։ Անոր յօդուածները անստորագիր էին և աճապարանօք գրուած։ Վանքի ամէն տեսակ գործերու ղեկավարը ինքն էր։ Վարժարանի մէջ մէկ-երկու ժամ դաս տալէ յետոյ, կը հեծնէր ձին կ'երթար հողագործներու մօտ, հողամշակութեան ցուցմունքները կուտար, կ'անցնէր այգիները, կը դիտէր ծառամշակութեան և բանջարաբուծութեան աշխատանքները, մինչև անգամ հովիւներուն և նախրորդներուն ցուցմունքներ կուտար, ախոռներն ու գոմերը կը դիտէր, ջրաղացներն ու տնտեսատունը կը մտնէր և վերջապէս ամբողջ օր ոտքով կամ ձիով կը շրջէր, հսկելով վանքի արտաքին ու ներքին ամէն տեսակ աշխատանքներու վրայ։ Խրիմեանի հոգին կ'ապրէր վարագայիններուս մէջ, իսկ ինքը կ'ոգևորուէր մեզնով և մեր աշխատանքներով»*)։

Ի Վան-Վարագ հրատարակուող «Արծուի Վասպուրական» ամսաթերթի շապիկը հետևեալ պատկերը կը ներկայացնէ.— Աշխոյժ

---

*) Վան-Վասպուրականը 1915—16 թուերուն պատերազմի արհաւիրքներէն քար ու քանդ եղած՝ ռազմավայր դարձեր էր։ Կովկասէն, 1916-ի ամրան անցայ Վան և բուռն փափագ ունեցայ երթալ տեսնել Վարագայ վանքը՝ որ 1915 թուի Վանի Հայութեան հերոսամարտի օրերուն արդէն մոխրակոյտի վերածուած՝ ամայի և աւերակ դարձեր էր։ Յուլիս 12-ի լուսաբացին Բիթլիսցի եփրեմի հետ ճամբայ ելանք Այգեստանէն և երկու ժամէն յետոյ հասանք Վարագ, որ լուռ, ամայի և ահազդեցիկ վիճակ մ'ունէր։ Դացինք վանքի այգին, ուր հազարամեայ ընկուզենիին տակ մենակ և տխուր նստած գտանք Վարագայ Պարոն Պետրոսը, որ արցունքն աչքերուն, կերկերուն ձայնով պատմեց Վարագայ հետ կապուած իւր յուշերը և ես ի գիր առի։ Պետրոսի այդ յուշերէն ահա մէկ բերեցի վերոյիշեալ տողերը։ Խնդմ Պարոն Պետրոս, Վարագայ հողին մէջ հանգչելու փափագդ, անկատար մնաց, դուն յուսահատ ու անմխիթար գացիր Եգիպտոս և ինքզինքդ ծով նետելով վերջ տուիր քո տանջուած կեանքին։






# ԱՐԾՈՒԻ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ

ԹՈՒՈՑԵԱԼ ՀԱՑՐԵՆԱՍԷՐ ԹԵՒՕՔ
ՑԱՐԾՐՈՒՆԻ ՄԵՆԱՍՏԱՆԷՆ ՎԱՐԱԳԱՑ

ԽՄԲԱԳԻՐ ՀԱՑՐԵՆԱԽՕՍ
ՄԿՐՏԻՉ ՎԱՐԴԱՊԵՏ ԽՐԻՄԵԱՆ

1860 ՀԱՏՈՐ ՁՈՐՐՈՐԴ ԹԻՒ Ը.

ՎԱՆՏՈՍՊ
Ի ՏՊԱՐԱՆԻ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ ԱՐԾՈՒՈՑՆ
Ի ՎԱՐԱԳ

«ԱՐԾՈՒԻ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ» Ամսագիր (էջ-էջ ՀԱՅՐ-ԲԱՐՁ)
Թերթի բուն ծաւալը 15×24 հարիւրորդաժեթր

նայուածքով թևատարած արծիւ մը, մագիլներով բռնած է գայլիսան մը և կը սլանայ ամպերու մէջ։ Պատկերի տակը, թերթի վերտառութիւններն են.—

«ԱՐԾՈՒԻ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ. ԹՌՈՒՑԵԱԼ ՀԱՑՐԵՆԱՍԷՐ ԹԵՒՕՔ ՅԱՐԾՐՈՒՆԻ ՄԵՆԱՍՏԱՆԷՆ Վ.ԱՐԱՓԱՑ. ԽՄԲԱԳԻՐ ՏՆՕՐԷՆ ՀԱՑՐԵՆԱԽՕՍ ՄԿՐՏԻՉ ՎԱՐԱՊԵՏ ԽՐԻՄԵԱՆ. Հաստ Երկրորդ. 1858. Փետրուար. Տպագրեալ ի Վանս Սուրբ Խաչին Վարագայ. 'ի Տպարանի Արծուոյն Վասպուրականի»։

Խմբագիրը իւր թերթի ուղղութիւնն ու բովանդակութիւնը հինգ տեսակի կամ սեռի կը բաժնէ.

«ա. Հանդէս Աստուածպաշտութեան.—Առ որով պարունակելոց են որ ինչ առ ճշմարիտ կրօն Աստուածպաշտութեան որ առ հաւատս և առ եկեղեցին Քրիստոսի վերաբերի և րդծալի առնել այսու զքաղցրութիւն բանիցն Աստուծոյ 'ի քիմս հայկածին մանկտոյն քան զմեղր քաղաքական և ազգասիրական բանից։

«բ. Հանդիսարան Հայրենասէից Առաքինեաց Հայոց.—Ընդ որով կարգաւ յիշատակելոց են գովութեամբ հանդերձ նախնի քաջազունքն մեր և այնոքիք որք հետեւողք գտանեն յարդի ժամանակս նոցին հայրենազարդ գործոց ըստ ամենայն հանգամանաց ճառագրելով։

«գ. Տեսարան Հայրենի Աշխարհաց.—Որում իբրև 'ի պատկերին նշմարելոց են եւ արդի վիճակ քաղաքաց, գիւղից, գերդաստանաց, վանօրէից, մենաստանաց, եկեղեցեաց, ժողովրդոց եւ համօրէն այլ հանգամանաց, որ առ աշխարհագրական տեղեկութեան վերաբերին։

«դ. Բուռաստան Բարոյական Առաքինութեանց.— Որ իբրեւ զբուրաստանս բազմազան ծաղկօք զարդարեալ բուրելոց է յինքնէ զանուշահոտութիւն մեծամեծ առաքինութեանց։

«ե. Թանգարան Հայկազնեան Դպրութեանց.— Առ որ բովանդակեմք գհնագունիցն և արդի հեղինակաց բազմանիւթ զբուածս ընդարձակ ոճով շարադրեալքն եւ եթէ չափաբանութեամբ՝ զոր սի անգամ 'ի ձեռս բերիլ կամիցեմք 'ի հնագիր մատենագրութեանց։

«Իսկ եթէ պատահեցի երբեմն այնպիսի նիւթ ինչ, որ ոչ այն-

չափ վերաբերի առ հինգ տեսս յիշեալ յօդուածոց զայն ևս արժան դատեմք ՚ի վերջոյ թերթին հրատարակել»։

«Արծուի Վասպուրական»ի այս հինգ բաժիններու վարիչները «Ժառանգաւորաց Վարժարան»ի ուսուցիչներն էին, իսկ աշխատակիցները՝ սան-աշակերտներ։ Խմբագրի օգնական ու փոխանորդն էր Մանուէլ Վարժապետ Արտամետցեանը, որ կը գրէր «Տեսարանք Հայրենի Աշխարհաց» բաժնի յօդուածները, ներկայացնելով Վասպուրականի աւաններու, գիւղերու և վանքերու տեղագրութիւնն ու պատմութիւնը և լոյս կ՚ընծայէր Հայ հին գրչագիրներու պատմարժէք յիշատակարանները։ Իւր գրած յօդուածներու տակ Մանուէլ Վարժապետը կը ստորագրէր երեք աստղ—***—կամ ** Արտամետցեանց։ Ուսուցիչ աշխատակիցներն էին՝ Նահապետ Փիրղալէմեան, Մարտիրոս Փափազեան, Տիգրան Գալփակճեան և ուրիշներ։ Աշակերտ աշխատակիցներն էին՝ Գարեգին Օրուանձտեան, Արսէն Թոխմախեան, Արամ Բժիշկ-Յակոբեան, Արշաւիր Փոխանեան, Արշամ Գրիգորեան, Հրաչեայ Սևիկեան, Եղիշէ Տէր-Մեսրովբեան, Միհրդատ Յարութիւնեան և ուրիշներ, որոնց ստորագրութիւններուն իբր ծանօթութիւն կցուած էր՝ «Ածակերs Ժառանգաւորաց Վարժարանի Վարագայ» խօսքը։

Աշխատակիցներու շարքին կը փայլէր նաև «Պետրոս Տ. Յովսէփեան Մադաթեան Շամախեցի Սէյեադ մականուանեալ»ն ժողովրդական աշուղ-բանաստեղծը, որ Կովկասէն աշուղական ոտանաւորներ կ՚ուղարկէր։

Ուշագրաւ է նաև, որ «Պօլսոյ ազնիւ գերդաստանի մը օրիորդ ուսումնասիրական ոգով յօրինած» տաղաչափուած ոտանաւորը՝ «Յորդորական առ Հայկազուն Օրիորդս ի դաստիարակութիւն ուսման» վերնագրով հրատարակել կուտար «Արծուի Վասպուրական»ի մէջ (1859, էջ՝ 272)։ Խմբագրութիւնը սիրով լոյս ընծայած է այդ ոտանաւորը, որուն իբր ծանօթութիւն և հեղինակին իբր բաջալերութիւն գրուած են այս տողերը—«Կը փութամք հրատարակել. քաղցր թուհսցի յուշկն սիրելի ընթերցողաց, եւ վայելելով ճանչնալու է նաեւ թէ ինչ աշխոյժ և ինչ նոր զգացմունք կը փայլի սիրայորդոր տողից վրայ. իմանալու է թէ ուսումն եւ կրթութիւն զկեզուս կանանց անգամ վարժեցուցեր է կանչել՝ ազգասիրու-

թիւն հայրենասիրութիւն եւ ատոր մի միայն միջոցն է դաստիարակութիւն»։ Կին աշխատակիցներէն էին նաև «Շումնուի երկու ուսմնական Հայկազուն Օրիորդները»։

Աշխատակիցներու շարքին կայ նաև «Ոմն արդի բանահիւսից» ստորագրութեան տակ ծածկուած անուն մը։

Այսպէս կանոնաւոր կերպով կը հրատարակուէր «Արծուի Վասպուրականը», իսկ «Ժառանգաւորաց Վարժարան»ն ալ օրըստօրէ կը յառաջդիմէր։

Վարագայ այս փայլուն շրջանին էր ահա,—1858-ին—երբ Յակոբ Մելիք-Յակոբեանը—անմահ Րաֆֆին*)—կ'այցելէր Վարագ կը հիանար Խրիմեանի գործունէութեան վրայ և կը խոստանար իր աշխատակցութիւնը «Արծուի Վասպուրականի»ին, որուն տարածման համար կը ստանձնէր գործակալութիւնը՝ Սալմաստի և Պարսկաստանի։

«Արծուի Վասպուրականը» կը թնակոխէր իր հրատարակութեան Գ. տարուայ մէջ (Հատոր Երրորդ) 1859-ի Յունուարին։ Ա. Թիւին սկիզբը հրատարակուած է «Նախադրութիւն» մը (Յառաջաբան), որմէ կը քաղեմ հետևեալ տողերը.

«... Ցնծութիւն մեծ է նա մանաւանդ բազմաշարչար տառապելոյս Վասպուրականի, որ թէպէտ գուրկ՝ի նախնի փառաց իւրոց և՝ի մեծապանծ շքոյ, գուրկ՝ի խուռներամ իւրոյ հօրամոյն զաւակաց, բայց լուսոյ իմաստութեան օթարան գտեալ, տասնամեայ ժամանակաւ յաւէտ ասպնջական իւր ունի, յոգնաթիւ մանկանց դաստիարակութեամբ եւ դպրոցական յառաջադիմութեամբ։ Վասն որոյ Վասպուրականս Արծուին խնդամտեալ յիւրն քրտնաւոր վաստակ՝՝ի շրջանն իւր Երրորդ ցնծութեամբ սրտի յառաջացեալ մտանէ։

---

*) Թորգոմ Արքեպ. Գուշակեանը կը գրէ որ—«Րաֆֆին Պարսկաստանէն Վան անցած էր և իբրև ուսուցիչ կը պաշտօնավարէր Վարագի մէջ» («Խրիմեան Հայրիկ» էջ՝ 29)։ Նոյն իմաստ բան մըն ալ Արշակ Չօպանեան կը գրէ—„Րաֆֆին, քանի մը ամիս անցուց՝ իր ասպարէզին սկիզբը՝ Վարագայ վանքին մէջ“ («Դէմքեր» էջ՝ 120)։ Այս երկու յիշատակութիւնները ալ ճիմնովին սխալ են։ Րաֆֆին իբրև այցելու եկաւ Վարագ ու գնաց։ Թորգոմ Արքեպ.-ը և Չօպանեանը կրնան ցոյց տալ գրաւոր և փաստական աղբիւր մը՝ Խրիմեանի կամ Րաֆֆիի կենսագրութեանց մէջ՝ հաստատելու համար, որ Րաֆֆին «իբրև ուսուցիչ կը պաշտօնավարէր Վարագի մէջ» կամ «Րաֆֆին քանի մը ամիս անցուց Վարագայ վանքին մէջ» կէտերը, որոնք վաւերականութենէ դուրս են։

Ուր թողից ապա յոգնաթիւ խրախուսական բանից քաջալերը եւ հայրենասիրական յորդորը Կ.Պոլսեցի երախտաւոր բարերարաց, ուսումնատենչ արգոյ Տփխիսեցւոց, Պարսկաստանցի հայրենասէր հայկազանց, Կարնեցի յարգելեաց և միւս մասնաւոր անձանց որք հայրենասոյս ձեռնտուութեամբ և հանապազորդեան խրախուսանօք, իբրև ջնջանաւ մաքրոյ սրբեն տապակէզ ճակատուց մերոց զկայլակնացեալ զքիրտ և տան նուիրելոցս 'ի պայծառուութիւն օրհնեալ Ազգիս 'ի վեր քան զկար նահատակիլ անվեհեր ընդդէմ ամենայն լեռնացեալ դժուարութեանց. մի միայն նպատակ ունելով սակաւ առ սակաւ ածեալ մուծանիլ կաթնածարաւ մանկտին 'ի գեղաւոր տաճար լուսաւոր իմաստութեան եւ կցել զսիրտ տարաբնակ որդւոցն Այրարատայ 'ի մի յոդ միութեան, 'ի մի սիրտ Ազնուական 'ի մի սէր Ազգային։

«Արդ՝ սկսանիմք ահա շրջանն երրորդ ըստ Արծուոյն Վասպուրականի՝ որ է շրջան երկրորդ ըստ նոր կարգադրութեան՝ որ 'ի ծոցոյ Վասպուրական Աշխարհիս. պահելով ամենայնիւ զբաժանմունսն յօդուածոց և տարազ դրից նոյնն՝ ըստ անցելոյ ամին...։ Ջանամք ևս մեր ոմանն սրբել եւ գտել զթերթսն յակամայ վրիպակաց եւ 'ի թերութեանց»։

Խմբագրութիւնը ցոյց կուտայ բնաշխարհի մէկ հեռաւոր անկիւնին — Վարագայ — մէջ թերթ հրատարակելու դժուարութիւններն ու ծանր պայմանները։ Ահա թէ ինչ.

«ա. Զի տպարանս նոր մուտ գտեալ է յանծանօթ վայրս. ինքն եւ բոլոր պարագայք իւր նոր եւ անփորձ. տպագրիչ նոր, ձուլածու նոր, գրաշար նոր, մելանահար նոր, նմանապէս եւ բոլոր կարասիք նոր եւ կրկնակի տաժանելի փորձիւ հաստատեալ։

«բ. Թիւ գրաւոր աշխատողաց սակաւ եւ գտեալքն եւս մեծապէս բազմազբաղք յայլատարազ գործս, որով եւ առ բազումս ցրուեալն տկարանայ առ միմեանս։

«գ. Բազմամեայն հեռաւորութիւն տեղոյս յափանցն Պոնտոսական ծովու, յորմէ միայն կարեմք ընդունել շարունակ զբովանդակ նիւթս տպագրութեան. զկաղապար, զթուղթ, զմելան եւ զայլս։

«դ. Ոչ շարունակ թղթակցութիւն և կամ կարաւանաց երթեւեկութիւն 'ի գլխաւոր քաղաքս, որով մարթասցի ըստ ժամանակին

հաստացնել զամաթերքին առ արգոյ բաժանորդն եւ լցուցանել զնոցին ազնուական սրտի հայրենաշէն զկարօտ։

«Ե. Տկարութիւն և փորձկութիւն տպագրութեան աղբատիկ մամլոյս. որ չգիտէ քան զկարն իւր ազատ նկրտիլ եւ ծնանիլ աւելի ինչ»։

Այս ծանր պայմաններուն ենթակայ Վարագայ տպարանը ոչ միայն «Արծուի Վասպուրական»ը լոյս կ'ընծայէր այլև «ի խնդիր բազմաց»՝ այսինքն՝ Վանի, գաւառներու, վանքերու, տարրական դպրոցներու, վարժապետներու և դաստու վանականներու դիմումով ու Խրիմեանի համաձայնութեամբ տպարանը «արտաքս եհան (լոյս ընծայեց) երկու հազար օրինակս նորատիպ» Քերականն և Հեգարան դասագրքեր, որոնք միշտ Կ. Պոլսէն կը ստացուէին։

Գաղափար մը կազմելու համար «Արծուի Վասպուրական»ի 1859 թուի «տարեկան նիւթոց» վրայ ներկայացնենք հետևեալ ցանկը.

Հանդէս Ասուածպաշտութեան եկեղեցւոյ Հայց բաժին, ուր ի յայտ կուգան Հայ եկեղեցոյ մեծանուն և երախտաւոր դէմքերն ու մատենագիրները, որոնց համառօտ կենսագրութիւնը և կատարած ազգօգուտ գործերը հիացմունքով ցուցադրուած են։ Այդ դէմքերէն յիշենք հետևեալները. Գիւտ Կաթուղիկոս, Յովհան Մանդակունի, Մովսէս Կաթուղիկոս՝ «տումարական կարգաց ուղղիչ», Կոմիտաս «ճարտար բանահիւս», Ներսէս Շինող «կանգնիչ և նորոգիչ նախնի դաստակերտաց», Անանիա Շիրակացի, Թէոդորոս Քռթենաւոր և Մովսէս Քերթող Սիւնեցի՝ «քաջարուեստ Հռետորք Հայոց», Սահակ-Պարթև Կաթուղիկոս, Յովհան Իմաստասէր, Ստեփաննոս «լիահանճար» Եպիսկոպոս Սիւնեաց, Սիօն և Մաշտոց Կաթուղիկոսներ, Գրիգոր Արշարունի Եպիսկոպոս և Փիլոն Վարդապետ։

Հանդիսարան Հայրենասէից Առաքինեաց բաժին, ուր ի յայտ կուգան Հայոց «իմաստասէր, աշխարհաշէն, հայրենասէր, քաջապանծ, հայրենաշէն և առաքինազարդ» թագաւորները—Վռամշապուհ Արշակունի, Աշոտ, Սմբատ, Աշոտ Երկաթ, Աբաս, Աշոտ Ողորմած և Գագիկ Բագրատունիները և «Պանծալի Իշխանները» Կիլիկիոյ՝ Ռուբէն և Կոստանդին։

Տեսարան Հայրենի Աշխարհաց բաժին, ուր ի յայտ կուգան Վանի արուարձաններու գիւղերն ու վանքերը իրենց տեղագրական

և պատմական ծանօթութիւններով, այսպէս.—Արտամետ, Կենդանանց, Կուռուպաշ, Շուշանց, Կողպանց, Ձորովանք, Լամզկերտ, Շահրաղի, Լէսկ և Աւանց գիւղեր· Կուռնկ վանք, Ս. Խաչ, Կարմրուղ և Սալնապատի Ս. Գրիգոր վանքեր·

Բուրաստան Բառոյական Առաքինութեանց բաժին, ուր ի յայտ կուգան բարոյախօսական գրուածքներ, կենդանական զրոյցներ և առակներ, այսպէս,—Նախանձ, Պատմութիւն անկիրթ զաւակի, Ժամանակն կու փախչի չեն կատարուիլ գործքերդ, Ազգ երթայ և ազգ գայ բայց երկիր յաւիտեան կայ, Ոգի փառասիրութեան, Նկարագիր գինեմոլ անձանց, Ի՛նչ որ ցանես զայն կը հնձես, Գայլ և գառնուկ, Աղուէս և գայլ, Շուն և կատու, Օարեկ և ագռաւ, Ցուլ և մուկ, Առիւծ և այծ եայլն· Ինչպէս նաև զուարճալի մանրավէպեր և բարոյախօսական խօսքեր ու մտքեր·

Թանգարան Հայկազնեան Դպրութեանց բաժնին մէջ ի յայտ կուգան արձակ գրուածքներ և չափածոյ բանաստեղծութիւններ— Ողբերգութիւն Անի քաղաքի, Քնար Հայաստանի, Գովասանութիւն ի Վասպուրական Աշխարհ, Վասն Իշխանաց, Շուշանիկ Դուստր Սենեքերիմայ Արքայի, Տաղ Վարագայ Խաչին, Տաղ 'ի մեծապանծ Թագաւորս Հայաստանի, Միայնիկ Գիշեր, Մեծն Վարդան ի Տաւարշան, Աշուն, Ծորդորակ առ Հայկազուն օրիորդս 'ի դաստիարակութիւն ուսման, Եղիշէն ի Տաւարշան, Արսէն 'ի դաշտն Աւարայրի, Հարք գաւառ առ գաղթական Հայազն ուղևոր, Պարսաւանք Բռնակալաց աշխարհիս եայլն· Զանազան կարգի յօդուածներու շարքին յիշատակենք՝ Բնական գիտելիք-գետնաշարժ, Կենցաղօգուտ բանք՝ Հարկավճար, Խնայաշահ, Աղքատասիրաց և Ընթերցասիրաց Ընկերութիւնները կազմելու մասին (Մեսրովբ Քահանայ Փափազեանի), Նամակներ, Երախտագիտական ուղերձ, Հանելուկներ, Ծանուցումներ եայլն եայլն· Այս բաժնի մէջ հրատարակուած են Վանքերու և եկեղեցիներու արձանագրութիւնները նաև բազմաթիւ Հայ հին գրչագիրներու պատմարժէք յիշատակարանները, որոնց հրատարակութեամբ Խրիմեանը հիմք կը դնէր Հայ գրչագիրներու ուսումնասիրութեան, որ յետագային այնքան զարգացաւ մեր գրականութեան մէջ·

«Արծուի Վասպուրականին» կը գրէին թէ գրաբար և թէ աշ-

խարհաբար և երբեմն ալ այս երկուքի խառնուրդ հաճելի ոճով մը։

Վարագայիններու աշխարհաբարի մասին գաղափար մը կազմելու համար կը մէջբերեմ քանի մը հատուածներ, որոնք ցոյց կուտան թէ որքան պարզ և հասկանալի ոճով կը գրէին.

«Ծոսբ գաւառը որ Բզնունեաց ծովու արևելակողման մեծ մասն պատեր է, Վան քաղաքովը մէկ տեղ՝ իւր մէջն պարունակած ունի շատ մը վանքեր եւ գիւղօրէք։ Որոնցմէ խիստ երեւելիներն եւ՝ ի հին ժամանակաց անուանի եղածներն այս տեսարանիս մէջը պիտի հանդիսանան պատշաճաւոր կերպով, 1858 տարուան Վ. Արծուոյ թերթից Վարագայ եւ Վան քաղաքի տեսարանացը եղանակաւ եւ ոճով։ Նախ անոնց հնագիտական տեղեկութիւնները՝ ի հին մատենից քաղած համառօտելով եւ ապա արդի տեսարանն ականատես ստորագրելով»։

Այս տողեր ստորագրողը Մանուէլ Վարժ. Արտամետցեանն է։

Մեսրովբ Քահանայ Փափազեանը կ՚առաջարկէր Վասպուրականի մէջ հիմնել «Ընթերցասիրաց Ընկերութիւն» մը.

«Ընթերցասիրաց Ընկերութեան համար ամէն կահ կարասեօք զարդարուած մաքուր սենեակ մը պատրաստուած պիտի ըլլայ. ուր գետեղուին ազգային ամէն տեսակ հին եւ նոր տպեալ և ձեռագիր գրքեր, տետրակներ և լրագրեր։ Այս ընկերութիւն մասնաւոր ժողով մը պիտի կազմէ ընկերութեան անդամներէ բաղկացեալ, որոնք երաշխաւոր պիտի ըլլան հաւաքուած բոլոր ստակին։ Կեդրոնը յարմար և ապահով տեղ մը պիտի ըլլայ և անկէ շատ ճիւղերու ալ կրնայ բաժնուիլ միևնոյն նահանգի մէջ»։

Ահա և Տիգրան Գալփակճեանի աշխարհաբարը.

«Ազգասէր ճանապարհորդ՝ երբոր Անիին մօտենաս, պիտի դիմաւորեն քեզ ոչ թէ Անիի ազգայինները, այլ այն Անեցի թուչունները եւ գազանները, որոնք արդարեւ Անեցի են, վասն զի իրենց բոյները թողնէ թող Անիին մէջը հաստատած են եւ շատ ալ ապահով են։ Գնա՝ հարցուր ով ազգասէր, եւ քու հարցմանդ պատասխան առնելու համար աւերակներուն մէջէն ելած արձագանքներովը գոհ եղիր. հարցուր թէ ուր է այն հազարաւոր բիւրաւոր Հայկազանց բազմութիւնը»։

Թէ «Արծուի Վասպուրական»ի խմբագրութիւնը, որքան նա-

խանձախնդիր էր, որ թերթը միշտ աշխարհաբարին մօտենայ, ապա ուրեմն մէջբերենք հետեւեալ բնորոշ ծանօթութիւնը.

«Նիւթին սրբագրիչը տպարանէն հեռու տեղ գացած ըլլալով, տպագրութեան մէջ աշխարհաբարին վայելչութիւնը կորսնցնող սխալներ եւ տառասխալները եղած է, ուստի հարկ համարեցինք ուղղելու»։

Այդ սխալները շատ աննշան են, օրինակ ը-ի մը պակասը «աշխարհաբարին վայելչութիւնը կորսնցնող» պարագայ նկատուած է։

Վարագը իւր դպրոցով ու թերթով, իւր հոգեւորական և աշխարհիկ գործիչներով, ջերմ պաշտպան կը հանդիսանար աշխարհաբար լեզուի մշակումին և ժողովրդականացման այնպիսի ժամանակի մը մէջ, երբ հոգեւորական, պահպանողական և աւանդամոլ բազմատեսակ հոսանքները խաչակրութիւն մը կազմած էին աշխարհաբարի դէմ, որուն գոյութիւնն անգամ ամօթ և նախատինք կը սեպէին գրաբարին համար։

## ԺԳ.

## ԴԱՒԵՐ ԵՒ ՄԱՀԱՓՈՐՁ՝ ԽՐԻՄԵԱՆԻ ԴԷՄ

Խրիմեանի հանրօգուտ գործը, վայելած ժողովրդականութիւնը և դպրոցի ու թերթի յաջողութիւնները նախանձի, վրիժառութեան և դաւադրութեան նոր դռներ բացին անոր թշնամիներու և հակառակորդներու առջեւ։ Վանի «Իշխաններ»ն ու խաւարամիտ կղերը, ձեռք ձեռքի տուած ամէն տեսակ ստոր դաւեր լարեցին զայն վարկաբեկելու և տապալելու համար։ Եւ ահա բողոքներ, դժգոհութիւններ և հալածանք ծայր կ'առնեն Վանի մէջ՝ Խրիմեանի դէմ։ Ամբաստանագրեր կ'ուղարկուին Կ. Պոլիս, Պատրիարքարանին՝ պահանջելով որ Խրիմեանը դատի կանչուի։ Խնդիրը այնքան լուրջ բնոյթ կըստանայ, որ Խրիմեանը կը ստիպուի 1858-ի Նոյեմբերին, անձրեւոտ և ցուրտ եղանակին, ճամբայ իյնալ դէպի Կ. Պոլիս, ուր Պատրիարքարանի և ազգային շրջանակներու կողմէ մանրակրկիտ քննութիւններ կը կատարուին։ Պը պարզուի, որ անոր գործունէութիւնը շատ արդիւնաւոր եղած է և ազգին օգտակար։ Անոր դէմ ուղղուած բո-

ղոքնիրն ու մեղադրանքները կը համարուէին ստոր դիտումներու և նախանձի արդիւնք և այսպիսով Խրիմեանը պարզերես և արդար կը հռչակուէր։

Խրիմեանը Պատրիարքարանի և իր բարեկամներու շրջաններուն մէջ մանրամասն զեկուցում կուտայ Վան-Վարագի իր եռամեայ գործունէութեան մասին։ Ամենուրեք կը գնահատեն իր գործը և բարոյապէս ու նիւթապէս կը քաջալերեն զինք։

«Հայաստանցի Վարդապետը» նորէն Պոլսահայերու յարգանքին ու համակրանքին կ'արժանանայ և ամէն կիրակի կը հրաւիրուի այս ու այն եկեղեցին պատարագելու և քարոզելու։ Իր քարոզները նորէն ազգի ու հայրենիքի սիրոյ և ուսման ու դաստիարակութեան մասին կ'անդրադառնային։

Կիրակի օր մը, 1859 թուի Մայիսի մէջ, Խրիմեանը Սկիւտարի Ս. Կարապետ եկեղեցւոյ մէջ կը քարոզէ բնաբան ունենալով՝ «Ի՞նչ է Ազգասիրութիւն»։ Այս քարոզին ներկայ կ'ըլլայ Վանեցի երիտասարդ առևտրական մը—Կարապետ Կանչէեան—որ հայրենախօս քարոզչի «խրատներուն սիրով ունկնդիր» կ'ըլլայ և կը մտածէ, թէ՝ «Պէտք է որ ազգին ծառայիմ, բայց ինչ բանով՝ տգիտութիւնը թագաւորեր է վրաս։ Մտածեցի՝ ինչ միջոցով կրնամ ասոր ելքը ձեռքըս բերել»։ Եւ ահա Կարապետ Կանչէեանը կը դիմէ Խրիմեանին։

«Անձնանուէր Արծուի սուրբ հայրն մխիթարից իմ տարակուսեալ անձս, առ որ երթս անկեալ աղաչեցի՝ որ վաստուրական գաւառին միջի նոր ծաղկեալ ժառանգաւորաց դպրոցին մէջը մշակուելու համար, զիս իւր գթոտ թեւերուն տակը առնէ։ Այս խնդիրս ընդունեց սիրով. ուղղեցի ճանապարհս դէպ 'ի արևելք, ցուլիս ամսոյ մէջը Վարագայ վանուց աւետնասուրբ Տաճարը համբուրելու արժանացայ։ Սկսեցի գիտութեան բարեհամ պտուղները վայելել։ որուն ցանկալի քաղցրութեամբը զմայլած՝ կուրախանամ հոգևորապէս։ Վարագայ լեռան ծայրէն գեղեցիկ արշալոյս մը ծագել սկսեր է, որուն լոյսը անշուշտ իւր բոլորի երկիրներն պիտի լուսաւորէ։ Ազօթենք Խրիմեան Գ. Տ. Մկրտիչ Վարդապետի կենաց համար, որ անխոչ ջանասիրութեամբ զՀայաստանն լուսաւորել կը տքնէ եւ կերպ կերպ նեղութիւններով կը տանջէ իր անձը 'ի սէր ազգիս։

Ցուսով եմք որ քիչ ժամանակէն պիտի յաջողի նորին մշակած պարտիզի պտուղները»*)։

Ահա թէ ինչ ազդեցութիւն կը թողնէին Խրիմեանի քարոզները Կ. Պոլսոյ Հայոց մէջ, մինչդեռ Վանէն իւր հակառակորդներն ու թշնամիները անդադար ամբաստանագրեր կ'ուղարկէին Կ. Պոլիս, պահանջելով, որ Պատրիարքարանը Վարագայ վանահայրութիւնը Խրիմեանին չը յանձնէ, անգամ թոյլ չը տրուի, որ նա Վան վերադառնայ եայլն։ Այս բոլորը զուր անցան։ Վանի մէջ իւր դէմ յարուցուած հալածանքները աւելի ևս տարածեցին անոր համբաւն ու ժողովրդականութիւնը ոչ միայն Կ. Պոլսոյ, այլև Թուրքիոյ, Կովկասի ու Պարսկաստանի մէջ։

Գաբրիէլ Արքեպ. Շիրոյեանի մահէն յետոյ, Պատրիարքարանի կողմէ Վան-Վասպուրականի Հայոց Առաջնորդ նշանակուած էր Կ. Պոլսեցի Իգնատիոս Վարդապետ Դադմաճեանը, որ ազատամիտ, ուսումնագէտ և կարող հոգևորական մըն էր։ Իգնատիոս Վարդապետը ամէն կերպով կը քաջալերէր Խրիմեանի ձեռնարկները, սակայն Վանի Հայ «Իշխաններ»ն ու խաւարամիտները կը ջանային համոզել Առաջնորդը, որ «երես չը տայ Խրիմեանին»։

Իգնատիոս Վարդապետը այնքան կը գնահատէր Խրիմեանի գործունէութիւնը, որ յաջողեցաւ «Իշխաններ»ու մէկ մասը իր կողմը գրաւել և 1859 Մայիս 23-ին այցելութեան երթալ Վարագայ վանքը։

Խօսքը տանք ** Արտամետցեանին.

«Գերապատիւ Տ. Իգնատիոս պայծառափայլ և ազգախնամ արի առաջնորդ Մուրբ Հայրն, իւր շնորհաբեր գալստեամբն պատուասիրեաց յատուկ այցելութեամբ թէ Ս. վանքս եւ թէ ժառանգաւորաց Վարժարանս, ուր համառօտակի քննութիւն մը առնելէն ետեւ՝ մեծապէս գոհունակութեամբ պատուեց եւ յատուկ յորդորակներ եւ քաջալերական շատ խրախուսանքներ տուաւ. և յարգոյ իշխան ազայից համակամութեամբ ժամադիր ալ եղաւ, որ քանի ամիսէն գնի, ընդարձակ կերպով եւ մանրամասնաբար քննութիւն մը եւս տրուի 'ի ցնծութիւն բոլոր հայրենասիրաց»։

Երբ Վանի հակախրիմեանականները կը նկատեն, որ Առաջ-

*) «Արծուի Վասպուրական». 1859. Սեպտեմբեր. էջ՝ 243—245։

նորդ Իգնատիոս Վարդապետի համակրանքն ալ Խրիմեանի կողմն է, աւելի կը զայրանան և ամէն տեսակ ստոր միջոցներու կը դիմեն Խրիմեանը տապալելու և «Ժառանգաւորաց Վարժարան»ն ու «Արծուի Վանպուրականը» խորտակելու համար։

Այս դաւերը կը նիւթուէին Վանի մէջ, երբ Խրիմեանը 1859-ի ամրան Կ. Պոլսէն ճամբայ կ'իյնար դէպի հայրենիք, Պատրիարքարանի և իւր բարեկամներու՝ նիւթական և բարոյական օժանդակութեամբ քաջալերուած։ Վան հասնելէ յետոյ նա նոյն թափով ու եռանդով կը շարունակէ դպրոցի և թերթի գործը մեծ յաջողութեամբ։

Հակախրիմեանականներու նախանձն ու կատաղութիւնը այն աստիճան կը բորբոքուի, որ անոնք գաղտնի կ'որոշեն սպաննել ֆայ Խրիմեանը։ Սակայն որ Հայ անհատը կը համարձակուէր այդ ոճիրը կատարել։ Ոչ ոք յանձնառու չը պիտի ըլլար անմեղ արիւն թափել։ Այն ատեն, Խրիմեանի թշնամիները Ուշտունեաց գաւառի Ոստան աւանէն բերել կուտան Միր-Մահմուդ անունով քիւրդ աւազակ մը, որուն 6 հատ Օսմանեան հնչուն ոսկի տալով կը հրահանգեն, որ յարմար և ամայի տեղ մը Խրիմեանին դէմը ելնէ և սպաննէ։

Ամառային առաւօտ մը, Խրիմեանը մենակ ու ոտքով Վարագայ վանքէն ճամբայ կ'իյնայ Վան երթալու համար։ Մօրուքն ու մազերը հովին տուած, Խրիմեանը հանդարտ քայլերով կ'իջնէ մինչև Զըռիկ Աղբիւրի մօտերը, երբ յանկարծ ձորի մը մէջէն, դարանակալ քիւրդ Միր-Մահմուդը հրացանը ձեռքին Խրիմեանին դիմացը կը ցցուի։ Վասպուրականի Արծիւը իւր խորաթափանց հայեացքը կ'ուղղէ քիւրդի աչքերուն։ Քիւրդը կը շփոթի, կը դողայ և հրացանը ձեռքէն կ'իյնայ գետին։

—Ի՞նչու շփոթուեցար ու կը դողաս, բարեկամ.—կը հարցնէ Խրիմեանը։

—Կ'ուզէի քեզ սպաննել...—կը բացականչէ քիւրդը և գետին իյնալով ծնկաչոք կը մօտենայ և կը գրկէ Խրիմեանի ոտքերը։

—Հապա ինչու չը սպաննեցիր,—բարի ժպիտով մը կը հարցնէ Խրիմեանը։

—Աստուած իմ ձեռքը բռնեց, իսկ խղճիս ձայնն ալ թելադրեց, որ պէտք չէ սուր բարձրացնել Աստուծոյ օրհնեալի վրայ։ Ձո թշնամիները ինձ կաշառեցին, որ ես սպաննէի քեզ, բայց ահա կը տես-

նեմ. ձեռներս կը դողան. ո՛չ ես այդ ոճիրը չր պիտի կատարեմ, ես Աստուծոյ օրհնեալի վրայ չեմ կրնար ձեռք վերցնել։

—Դուն ալ օրհնեալ ըլլաս, որդի,—կ'ըսէ Խրիմեանը—երթաս խաղաղութեամբ, բայց այդ բոլորը ինչ որ ըսիր ինձ, ուրիշներուն չր յայտնես։

—Դուն կը ներես քո թշնամիներուն,—կը հարցնէ քիւրդը։

—Աստուած այդպէս կը պատուիրէ,—կը պատասխանէ Խրիմեանը։

Այս խօսակցութենէն յետոյ, Խրիմեանն ու Միր-Մահմուդը բաղդր անուշ զրուցելով կը շարունակեն ճամբան և կր մտնեն քաղաքին ու փողոցներէն անցնելով կը բաժնուին իրարմէ։

Հակառակ Խրիմեանի պատուէրին, քիւրդը ամենուրեք կը պատմէ այս դէպքի մանրամասնութիւնները։ Հակախրիմեանականները թէև կը խայտառակուին, սակայն նորէն կը շարունակեն իրենց դաւերն ու հալածանքները։

Այս մահափորձի լուրը ժամանակին տարածուեր է Հայութեան մէջ և արձանագրուած է Խրիմեանի հին ու նոր կենսագիրներու կողմէ։


Սակայն այս բոլոր դաւերու և հալածանքներու մէջն անգամ, Խրիմեանն աննկուն, քաջարի և որ զլխաւորն է անյիշաչար մնաց և շարունակեց իր ժողովրդանուէր գործունէութիւնը Վան-Վասպուրականի մէջ։ «Ժառանգաւորաց Վարժարանը իր փառքի և բարեզարդութեան լաւագոյն շրջանը կ'ապրէր, իսկ «Արծուի Վասպուրական»ն ալ խմբագրութեամբ «Հայրենասիրաց Մկրտիչ Վարդապետ Խրիմեանի» «Թռուցեալ հայրենասէր թևօք յԱրծրունի Մենաստանէն Վարագայ» կը սաւառնէր Հայաստանի և հայկական հեռաւոր գաղութներու մէջ, տանելով ազգի սէրն ու հայրենեաց ողջոյնը։ Հայր Արծիւը շրջապատուած իր Արծուաձագերով, Վարագայ մէջ կը հաստատէր հիմնաւոր Արծուաբոյն մը, որ տարիներու ընթացքին պիտի դառնար Վասպուրականի կրթական տաճարը։ Վարագը Խրիմեանի սկզբնական բազմարդիւն և ազգանուէր գործունէութեան հոյակապ կեդրոնն էր, որ հետզհետէ իր վրայ պիտի սևեռէր համայն Հայութեան ուշադրութիւնը։ Խրիմեանը Վարագայ հոգին էր, Վարագը Խրիմեանի սիրտն էր, անոր զգացումներու աղբիւրը, անոր աշխատանքի և եռանդի ներշնչարանը։ Ահա թէ ինչու Հայր Արծիւը այնքան կապուած էր Արծուաբոյն Վարագայ և իր արծուաձագերու հետ։






ՎԱՆ – ԱՂԹԱՄԱՐԻ ԿՂԶԻՆ ԵՒ ՎԱՆՔԸ, որու տաճարին մէջ 1854 թուին Խրիմեանը վարդապետ ձեռնադրուեցաւ, ընտտակ ունենալով Աղթամարը դարձնել «վասպուրականի վենետիկ»ը, բայց թոյլ չը տուին.

(Աղթամարի կղզւոյ բարձր ժայռի «Փարազուխ»ի վրայ նստած՝ անմահ Բանջին 1857ին գրեց իւր «Զայն տուր ով ծովակ» երգը).



ՄՈՒՇ – Ս. ԿԱՐԱՊԵՏԻ ՎԱՆՔԸ, որու վանահայրը և ցարոնի հայոց առաջնորդը էր Խրիմեան հայրիկը, 1862–1869. Մշու Սուլթան Ս. կարապետի վանքը այժմ աւերակ և մզկիթ է, 1915էն ի վեր.



ԷՋՄԻԱԾԻՆ – ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿԻ ՀԻՄՆԱԴ (1896) ԹԱՆԳԱՐԱՆԸ, որ այսօր կը կոչուի «Հայրիկեան թանգարան» իւր պատմական, գիտական և ազգագրական բաժիններով.

# ՀԱՅՈՑ ՀԱՅՐԻԿ

## ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՍՆԱՄԵԱԿ

## 1860—1870

### Ա.

### ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԽՐԻՄԵԱՆ

ԱՐԵՒՄՏԱՀԱՑ ազգային, հանրային, մտաւոր և կրթական վերածնութեան դարագլուխը կը հանդիսանայ Ազգային Սահմանադրութիւնը, որուն հիմքը դրին խումբ մը ժողովրդասէր, լուսաւիտ և ազատասէր երիտասարդները—Գրիգոր Օտեան, Տոքթ. Նահապետ Ռուսինեան, Տոքթ. Սերվիչէն, Ստեփան Ասլանեան, Բարունակ Ֆէրուհ-Խան, Մկրտիչ Աղաթօն, Կարապետ Իւթիւճեան, Արիստակէս Ալթուն-Տիւրրի, Մինաս Մինասեան, Յակոբ Կրճիկեան, Նիկողոս Պալեան, և ուրիշներ։

Ազգային Սահմանադրութիւնը կը հիմնուէր Կ. Պոլսոյ մէջ 1860 թուի Մայիս 24-ին, Աղրիանուպոլսեցի Սարգիս Արքեպիսկոպոսի Պատրիարքութեան օրով։

Ազգ. Սահմանադրութեան հիմնական սկզբունքն է.

«Ազգին ամեն մէկ անհատը առ ազգը պարտաւորութիւններ ունի, ազգն ալ իր կողմէն առ ազգային ամեն անհատ պարտաւորութիւններ ունի. դարձեալ ամէն մի անհատ իրաւունքներ ունի ազգէն և ազգն անհատներէն»։

Ազգ. Սահմանդրութիւնը կուգար ոչ միայն Արևմտահայ մտաւոր ու մշակութային կեանքին զարկ տալու, այլև հեռուէ հեռու կուրուագծէր Թիւրքիոյ Հայութեան ազատագրական և քաղաքական ձգտումները։

Պատրիարքարանի և Կ. Պոլսոյ ազգային շրջանակներու անուշադրութեանը մատնուած Տաճկահայաստանի գաւառներու Հայութիւնը, Ազգ. Սահմանադրութեան միջոցով՝ իւր իրաւունքն ու ձայնը կը ստանար։ Ազգ. Սահմանադրութիւնը, սկզբէն իսկ զարկ տուաւ կրթական ու դպրոցական գործի զարգացման։ Վասն զի՝—«Դպրոցն է մտաւոր վերածնութեան խոշորագոյն ազդակը։ Եւ Սահմանադրութիւնը առանձնապէս զարկ տուեց դպրոցին։ Մի տենդային և շինարար գործունէութիւն։ Հայ մարդը ցոյց տուեց այն օրերից ի վեր, որ իր մի շարք հիմնական արատների հետ՝ ունի անվիճելի մի առաքինութիւն — գնահատել ուսումն ու գիտութիւնը, գնահատել դպրոցն ու առաջադիմութիւնը։ Հիմնեցին ընկերութիւններ, գումարեցին դպրոցական, դրամական ֆոնդեր, թափ առաւ մանաւոր բարեգործութիւնը, որ մինչև օրս էլ մեր հանրային գործունէութեան տիրապետող գծերից մինն է»*)։

Ազգային Սահմանադրութեան լուրը կը հասնէր նաև Վան։ Վարագայ Արծուաբոյնը կը թնդար ուրախութեան աղաղակներով։ Հայը Արծին ու արծուաձագերը գոհ և երջանիկ էին, որ վերջապէս կը շարժէր կեդրոնը—Կ. Պոլիս—և գաւառաբնակ Հայութեան վիճակն ու ձայնը հաշուի կ'առնէր։ «Արծուի Վասպուրական»ի խմբագիրը —նոյն ինքն Մկրտիչ Վարդապետ Խրիմեանը—Վարագայ բարձունքներէն կ'ողջունէր Ազգային Սահմանադրութեան հռչակումը, և իւր թերթի մէջ՝ «Ազգային Սահմանադրութիւն եւ հիմնադիրք Ռորիճ» վերնագրով խմբագրական (13 էջանոց) ընդարձակ յօդուածով մը կը ջատագովէր ազգային ու պատմական այս վերածնունդը—Ազգ. Սահմանադրութեան հռչակումը, որուն հետ համեմատութեան կը դնէր նաև Հայոց պատմութեան երախտաւոր դէմքերու գործերը։

Խրիմեանի քարոզներն ու «Արծուի Վասպուրական»ի յօդուածները կը հետապնդէին, որ գաւառաբնակ Հայութիւնը ուսման և կրթութեան լուսով դաստիարակուի և անոր իրաւունքն ու ձայնը յարգուի և հաշուի առնուի։ Ազգային Սահմանադրութիւնը այդ ազգօգուտ գաղափարներն ու քարոզները կը մարմնաւորէր և Արևմտա-

*) Միքայէլ Վարանդեան—«Հայկական Շարժման Նախապատմութիւն»։ Հատոր երկրորդ. Թրնեվ. 1914. էջ՝ 36։ (Հրատ. Հ. Ը. Դ—եան)։

հայ ներքին կեանքը հիմնովին կը յեղաշրջէր։ Կղերի, ամիրաներու, «Խաւարեալք»ի և պահպանողական հոսանքներու իշխող լուծը կը տապալուէր և ժողովրդական, ռամկավարական սկզբունքները կ'ողողէին արևմտահայութեան հոծ զանգուածներու միտքերը։ Ազգային Սահմանադրութիւնը Արևմտահայ մտաւոր, կրթական, ազգային և ազատագրական հոյակապ յուշարձանն է, որուն կերտողներէն մէկն ալ, համարձակ կերպով կրնանք ըսել, որ Մկրտիչ Վարդապետ Խրիմեանն եղաւ, իւր «Արծուի Վասպուրական» թերթով։ Խօսքը Խրիմեանին է.

«Ո՞վ կարէ պատմել Արծուոյ սրտի ծայրայիր հրճուանքը. մինչ պայծառ արեւ օրը ու բարեպատեհ ժամը կ'ողջունեն զինքն, ո՞վ կարէ ճառել նորա հայրենասէր ոգւոյն անպատում ցնծութիւնը երբոր ինքն ալ իր սուրբ անուանակից Յովհաննու Մկրտչի նման ձայն կուտայ բոլոր Հայաստանին թէ՝ „Այս ուրախութիւն, որ իմս է՝ լըցեալ է“։

«...Բիւզանդիոնի բարձրութենէն Մասիսն լուսաշող անձրևացնցուղ ամպերուն մէջէն բազմագունեան աղեղին հաշտութեան նշանով սիրուն ճառագայթները կ'արձակէ։ Մեղուն ալ սիրաճախրիկ թեւերուն վրայ մեղրանիւթ ծաղիկները բարձած՝ բզզալով խայտալով դէպ 'ի Հայաստան կը թռչի 'ի վաղուց քաղցրութեան կարօտ հայ մանկտիներուն բերնին անուշահամ մեղը կընծայէ։ Ի՞նչ, Ազգային նոր Սահմանադրութիւնը։ Ո՞վ սարէ սար թռչելով ժողվեց ծաղիկները ու շինեց այս մեղրը, ժիր աշխատասէր մեղուաց միաբան խումբ մը Բիւզանդացի գրասէր Ուսումնականաց, ո՞վ ճաշակեց ու տեսաւ որ քաղցր էր ու միանգամայն յարմար և անոյշ Հայոց բերնին. Էր Սարգիս արժանապայծառ Սրբազան Պատրիարք, Պօլսոյ իմաստուն եկեղեցականաց Դասք ու բոլոր խորհրդակից Իշխանաւորք Հայոց. եւ մանաւանդ ազգին յառաջադիմութեանը աւելի ցանկացող Պօլսեցի հայ Հասարակութիւնը։ Չեմ գիտեր Արծիւը կարող պիտի ըլլայ իւր տկար մտքով չափել այս նոր պարծանաց յաւերժագիրը արձանը, զոր ունին կանգնել ու հաստատել հայրենի գաւառներուն մէջը։ Այո, որչափ Արծւոյ թեւերուն ուժ կը բաւէ պիտի Վարագայ լեռնէն թռչի ամենուրեք այս եկեղեցազարդ ու հայրենաշէն ա-

ռաքինեաց արիական գործը բոլոր Հայկազանց ականջներուն հրուչակելով հրատարակէ։

«...Թող սիրէ ու գովութեամբ հռչակէ Արծիւը Բիւզանդացի Հայկազունները, որոնք դրացի Եւրոպացւոց օրինակէն արթննալով՝ իրր տասն և հինգ տարուայ միջոցը դպրոցներէն դուրս հանին մեծ խումբ մը առոյգ պատանիները, որք ուսման և գիտութեան զրահներով զինուորած ու ձիուքերնին առնելով մէկ մէկ երկաթեայ կռան՝ հրաւէրը կը կարդան, իմաստութիւն, գիտութիւն, ուսումն և մտաւորութիւնը։

«...Ազնիւ ընթերցող, ազգը, հայրենիքը քաղաքականութեամբ կրթելու և լուսաւորելու համար բուն առաջին միջոցը Ազգային սահմանադրութեան օրէնքն է, որ հսկող, արթուն ու շրջահայեաց աչք մըն է, որ ազգային զանազան կառավարութեան մասերուն վերայ գլուխ կեցած պահապան զինուորի մը նման կը հսկէ։

«...Արժան կը համարիմ բոլոր Վասպուրական գաւառի կողմէն՝ ի սրտէ շնորհակալութիւն մատուցանել Պօլսոյ այն ազգասէր կաճառորդաց, որոնք հիմնադիր սկզբնաւորութեամբ պատճառ եղան Ազգային Սահմանադրութեան հաստատելուն»*)։

Ազգ. Սահմանադրութեան հռչակումի առթիւ Վարագայ մէջ կատարեցին պաշտօնական հանդէս մը, որուն հրաւիրուած էին Վանի նահանգապետ փաշան, Հայոց Առաջնորդ, քահանաները, քաղաքի ուսուցիչները, երեւելիները եայլն։

Այսպէս ահա Ազգ. Սահմանադրութիւնը մուտ կը գտնէր Վասպուրականի մէջ և հետզհետէ գործադրութեան կը դրուէր։ Կը կազմուէր «Գաւառական Ընդհանուր ժողով»՝ նախագահութեամբ Առաջնորդին։ Կ'ընտրուէին կրօնական և քաղաքական ժողովներ, որոնց խառն նիստերուն կը նախագահէր Առաջնորդը։ Քաղաքական ժողովին կ'անդամակցէին Վանի երեւելիները—«Ազգին կամ տեղական իշխանութեան ծառայութեանց մէջ գլխաւոր պաշտօնով մը պատուեալ անձինք»՝ որոնց մեծ մասը բէյեր և աղաներ էին։ Ասոնք ժողովուրդին կողմէ կը կոչուէին «Օնիխիլէր» (այսինքն 12-ներու ժողովը), որուն պարտականութիւնն էր «գաւառական ծանր կամ ընդհանրական գործեր տնօրինել»։

*) «Արծուի Վասպուրական». 1860. Դ. տարի. Թիւ 2. էջ՝ 21—35։

## Բ.

## ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ ԴԷՊԻ ԿՈՎԿԱՍ ԵՒ ԱՏՐՊԱՏԱԿԱՆ

Վարագայ «Ժառանգաւորաց Վարժարան»ն ու «Արծուի Վասպուրական» ֆերթը երիք տարի շարունակ, Կ. Պոլսեցի Հայ բարեբարներու և Խրիմեանի համակիրներուն նուիրաբերած ղրամական աջակցութեամբ ապահովուեցան։ Դպրոցը բարեկարգելու, վանքը ծաղկեցնելու և ուսման ու կրթութեան գործը աւելի հաստատուն և դրական դարձնելու համար, Խրիմեանը կ'որոշէ վանէն ուղեորիլ դէպի Կովկաս և այս անգամ ալ Կովկասահայութեան բարոյական և նիւթական օգնութեան ձեռք կարկառել, յանուն իր ազգօգուտ ձեռնարկներուն։

Խրիմեանի նպատակն էր նաև մօտիկէն ուսումնասիրել Կովկասի Հայոց բարոյական, կրթական, դրական և ազգային կեանքը և որ գլխաւորն է սիրտ կապ ու ջերմ յարաբերութիւն մը ստեղծել Թուրքիոյ և Ռուսաստանի Հայոց մէջ, վասն զի այդ երկու հատուածներու մերձեցման և եղբայրական ու փոխադարձ օգնութեան կարիքը ժամանակակից և ազգային տեսակէտով շատ կենսական էր։

Վարագայ գործերը կարգադրելէ յետոյ, Խրիմեանը իր երկու աշակերտներու՝ Գարեգին Սրուանձտեանի և Հրաչեայ Սեֆկեանի հետ կը պատրաստուի վանէն մեկնիլ դէպի Կովկաս։ Խրիմեանին կ'ընկերանայ Վանի Առաջնորդ Եղնատիոս Վարդապետ Գազմաճեանը, որ կ'երթար Էջմիածին եպիսկոպոս ձեռնադրուելու։

Եւ ահա, 1860 թուի Նոյեմբերի 10-ին, ցրտաշունչ և անձրեւոտ առաւօտ մը, Խրիմեան և իր ճամբորդակիցները վանէն կը մեկնէին և ութ օրուայ տաժանելի ճամբորդութենէ մը յետոյ կ'իջնեն Էջմիածին։ Խրիմեանը ներկայանալով Էջմիածնի ժամանակակից Գահակալին՝ Կ. Պոլսեցի Մատթէոս Ա. Կաթուղիկոս Զուխաճեանին «նկարագրեց Հայաստանի վիճակը, բացատրեց որ առանձին ուշք պիտի դարձնել բնիկ երկրի ժողովրդի վրա, պատմեց իր ձեռնարկութիւնների մասին, խնդրելով որ իրան մի կօնդակ տրվի, որպէս զի ինքն այդ կօնդակով պտտի Կովկասի զանազան կողմերը և հանգանակութիւն անի»*)։

*) Խ. Մալումեան—Խրիմեան. էջ՝ 46։

Խրիմեանը կը ծանօթանայ նաև Էջմիածնի միաբաններու հետ, որոնց մէկ մասը սիրով և համակրանքով կը քաջալերեն անոր գործունէութիւնը, իսկ միւս մասն ալ նախանձով և ատելութեամբ լեցուած՝ կը համոզեն Կաթուղիկոսը, որ կոնդակ չը տայ Խրիմեանին։ Մատթէոս Կաթուղիկոսը տատանման մէջ կ'իյնայ և «երբեմն սառն, երբեմն ջերմ» վերաբերմունք ցոյց կուտայ Խրիմեանին։

Վաղարշապատցի Գրիգոր Աղա Տէր Մկրտիչեան-Մալիճցեանը «որ Կաթողիկոսին, Սինօդին և միաբանութեան առջև պատկառելի և ազդեցիկ անձ» մըն էր «ծանօթ և սիրող Խրիմեանի գործոց և համբաւոյն, այլ զոր անձամբ դեռ նոր կը տեսնէր» մէջտեղ եկաւ և իր ազդու միջնորդութիւններով յաջողեցաւ Կաթուղիկոսէն ստանալ Խրիմեանի ցանկացած կոնդակը։

Դիրակի առաւօտ մը, Նոյեմբերի վերջերը (1860), Խրիմեանը պատարագից Էջմիածնի Մայր Տաճարին մէջ, ուր ներկայ էին ոչ միայն Կաթուղիկոսն ու միաբանները, այլև խուռներամ ժողովուրդ։ Խրիմեանը խանդավառ քարոզ մը խօսեցաւ՝ կրօնի, եկեղեցոյ, ազգի և հայրենիքի մասին։ Ի վերջոյ ծանրացաւ ազգասիրութեան վրայ և կոչ ըրաւ, որ նոր սերունդը հետևէ իր նախնեաց քաջարի արքաներու և սպարապետներու օրինակին և իր անձը նուիրաբերէ ազգի ու հայրենիքի ազատութեան համար։

Եօթն օր Էջմիածին մնալէ յետոյ, երբ կոնդակն ալ առած էր, Խրիմեանը իր երկու աշակերտներու հետ՝ Երևան—Ախտա—Դիլիջան—Ղարաքիլիսէ գծով կ'երթայ Թիֆլիս և կ'իջևնէ Առաջնորդարան։ Այն ժամանակուայ Թիֆլիսի (Վրաստան—Իմերեթի) Առաջնորդն էր Սարգիս Արխեպ. Հասան-Ջալալեանը, որ «մեծ պատուով ընդունեց Խրիմեանը, հիւրընկալեց, կոնդակը հանդիսապէս ընթեռնուլ տուաւ, ինքն անձամբ դրուատեց զԽրիմեան, նպաստելու յորդոր կարդաց, և շէն գումար մը ստորագրեց հանգանակութեան տումարին գլուխը. իւր կառքով այցելութեան կը շրջեցնէր նշանաւոր անձանց, բայց ամէն կերպով կը հսկէր որ առանձին տեսնուելու մարդ չերթար Խրիմեանին, և ոչ Խրիմեան այլոց՝ առանց իրեն»*)։

Սակայն Խրիմեանը չի կրնար հանդուրժել Սարգիս Արքեպ.-ի հսկողութեան լուծը և կ'ուզէ իր մեկուսացած վիճակէն դուրս գալ

*) Աշակերտ—«Արեւելք» օրագիր. Կ. Պոլիս. 1885։

ու մտնել ժողովրդի մէջ։ Եւ ահա Խրիմեանը հրապարակ կուգայ։

Թիֆլիսի եկեղեցիներու մէջ ազգաշունչ և հայրենասիրական, խանդավառ և ոգեւորիչ քարոզներ կուտայ տիրելով «ժողովրդի մտքին և սրտին»։ Բարձրահասակ, արծուաքիթ և խորաթափանց աչքերով Խրիմեան Վարդապետը «եկեղեցու բեմից ողջոյնները էր տալիս ժողովրդին՝ Հայաստանի անունից, քարոզում էր մարդասիրութիւն և առաջադիմութիւն։ Հայաստանցի Վարդապետը կարճ միջոցում ժողովրդի պաշտելին դարձաւ։ Ամենքն էլ ուզում էին նրա հետ ծանօթանալ, խօսել, նրանից մի յիշատակ ստանալ» կը գրէ Խ.Մալումեանը։

Սակայն խօսքը տանք ժամանակակից և ականատես վկային— Գարեգին Մուրադեանին*), որ «Կռունկ Հայոց Ազխարհին»**) ամսագրին մէջ (1860 Թիւ 12) կը գրէր «Մկրտիչ Վարդապետ Խրիմեան Վանեցի, կամ Վասպուրական Արծիւը Թիֆլիզումն» ընդարձակ յօդուածը, որմէ կը մէջբերեմ այս տողերը։

«...Այս վրայ երկրորդ կիրակին է, որ տեղիս եկեղեցական տաճարների սեղաններն դղրդում են մի հայրենասէր ոգով վառուած նորահաս վարդապետի նորօրինակ քարոզութեամբ։ Այս վրայ երկրորդ կիրակին է, որ Թիֆլիզի Հայ հասարակութիւնը ուրախ ու զուարթ լեցվում է եկեղեցին՝ լսել մի վառվռուն և ազատամիտ վարդապետի հայրենասիրական քարոզութեանց, իրան հայրենի երկրի նուիրական սարերի, գետերի և քաղաքների անուններն, իրան եկեղեցաշէն հայրերի և հայրենաշէն թագաւորների և նախարարների առաքինի մեծագործութեանց յիշատակներն, իրան ազգի անցած և գնացած փառաւորութեան և ներկայի անփառունակ վիճակի նկարագրութիւններն։ Այս վրայ երկրորդ կիրակին է, որ Թիֆլիզի հայ

---

*) Գարեգին՝ աշխարհական անունն է Մելիսեդեկ Արեշ. Մուրադեանին, որ Հայ եկեղեցական, ազգային և գրական ասպարէզներու մէջ պատկառելի դէմք մըն էր։ Երկար տարիներ վարեց Իզմիրի Հայոց Առաջնորդութեան պաշտօնը վայելելով ժողովուրդի սէրն ու համակրանքը։

**) Մխիթարեան Միաբանութեան շունչով դաստիարակուած Կ. Պոլսեցի Մարկոս Ադաբէկեանը 1860 թուի սկզբէն հաստատուելով ի Թիֆլիս կը հրատարակէ «Կռունկ Հայոց Ազխարհին» ամսագիրը (1860—1864) որ մեր մամուլի պատմութեան մէջ, իբրև ազգայնական թերթ պատուաւոր տեղ կը գրաւէ։ «Կռունկ»ի խմբագիրը խիստ պահպանողական էր և «Հայ Հասարակաց»՝ բառիս լայն առումով։

ժողովուրդը շարժուած և ոգևորված հայրենեաց յիշատակովը՝ խօսելու, դատելու, հարցասիրելու և բաղդատելու առարկայ է շինել իր անցեալ և ներկայ կեանքն և վաղեմի ու այժմեան վիճակը.... Ո՞վ է այդ վարդապետն, որ այս ժամանակումս քաջ ճանաչում է իրան մեծ կոչումն, վարվում է իրան կոչումին համաձայն և փառասիրութեան, անձնապաշտութեան, ծուլութեան և մեղկութեան կուռքերն ոտքի տակ փշրելով՝ և միայն ազգային փառացը և պարծանցը փափաքելով՝ համարձակ լսելի է անում իր ձայնն.... Դա Հրաիրակ Արարատեան և Հրաիրակ Աւետեաց Երկրին գործաշարժ հոգինակութիւնների հոգեծանօթ հեղինակն է, Մկրտիչ վարդապետ Խրիմեան, որ այժմ Թիֆլիզում հանդիպելով քարոզութիւն է անում. ազգի կարօտութեանը և բաղձանքին յարմար վարդապետ, որ մի ձեռքին ունի ազգային կեանքի պատմութիւնը, իսկ միւսում Ս. Գիրք, մի ձեռքին ունի անցած գնացած կեանքի մնացորդներ և փոշիներ, կորուստ և տխուր յիշատակներ, իսկ միւսում յոյս և կենդանութիւն...»։

Խրիմեանի այս քարոզներէն մէկուն ներկայ եղած է (Թիֆլիս, 1860) Հայ վաստակաւոր գրագէտ և կրթական գործիչ Ղազարոս Աղայեանը, որ իւր յուշերու մէջ կը գրէ.

«...Հայրենիքի սէրը. Դրա նիւթն ունէի ես։ Բայց մի բարեպատեհ հանգամանք պէտք էր, որ վառէր և բորբոքէր. Խրիմեան Հայրիկը մի երկնային շանթով վառեց իմ մէջ այդ նիւթը։

«Հայրիկի քարոզը ես առաջին անգամ լսեցի Մէյդանի Ս. Գէորգ եկեղեցումը (Թիֆլիս)։ Կանգնած էի առջևի կարգումը։ Դեռ չէի տեսել Հայրիկի պատկերը։ Երբոր բարձրացաւ բեմի վրայ, դեռ ես ոչինչ չր խօսեցած, սոսկ այդ հայեացքը իմ վրայ մի չլսւած տպաւորութիւն գործեց։ Մեծն Ներսէս, Սահակ Պարթև, Մեսրոպ վարդենապէս պատկերացան երևակայութեանս մէջ իբր կենդանացած և առջևս կանգնած։ Սիրտս լցւեց, բուկս խեղդւեց, բայց աւելնայն ուժով զսպեցի ինձ և տեղս ու տեղս չոքեցի, գլուխս դրի գետնին երկու ձեռքիս մէջ և խեղդւած հեկեկանքով յորդ արտասուք թափեցի։ Նա սկսեց խօսել, բայց ես չէի իմանում ոչինչ, իմ հոգին իր բոլոր զգացումներով թռել էր Հայաստան։ Ահա այս ժամանակից իմ առաջևան ցաւերի վրայ աւելացաւ և այս ցաւը և ինձ հա-

մար անբուժելի դարձաւ։ Աստուածասիրութիւն, հայրենասիրութիւն և ուսումնասիրութիւն երրորդութեան պէս միացնալ ուժով տիրեցին իմ ամբողջ բնութիւնը, այլևս ուրիշ զգացումների տեղի չտւին։ Աշխարհային փառք, պատիւ, վայելչութիւն բոլորովին ոչընչացան ինձ համար»*)։

Խրիմեանը «Կռունկ»ի մէջ (*1861. էջ՝ 55—64*) շատ նշանակալից և արժէքաւոր յօդուած մը գրեց՝ի յայտ բերելով իւր պարզ ու պայծառ դաղափարները՝ Հայ հոգևորականներու կրօնական և և ազգային պարտականութիւններու մասին։ Այս յօդուածը, որ «Ձայն Վասպուրական Առծոյն» վերնագիրն ունէր, մեծ տպաւորութիւն թողուց Թիֆլիսի Հայ հասարակութեան վրայ։ Ամենուրեք կ'ըսէին—«Ահա, վարդապետը էսենց կուլի» (կըլլայ)—և «կը շրջապատէին զինքն համբուրիւ և գովեստներով, անձամբ և գրով. չը տեսնուած ոգևորութիւն մի ծագեցաւ ժողովրդեան մէջ»։

«Ներսիսեան Դպրանոց»ի աշակերտներէն Դանձակեցի Յարութիւն Տէր Մարտիրոսեան – Տէր Դանիէլեանցը «Կռունկ»ի մէջ (*1861. էջ՝ 65—66*), «Ի՛մաւորութիւն Կռնկաց Վասպուրական Առծոյն ի Տփխիս» վերնագրով այս ոտանաւոր-ուղերձը կը գրէր.

«Քու գալուստ բարի Արծլիդ հայրենեաց,
Փութա՛ կատարումն տուր մեր բաղձանաց.
Գիտենք Հայաստան աշխարհից կուգաս,
Բայց մեզ նրանից ինչ խապրիկ մը տաս։

Վարագայ սուրբ վանքն է քու օթևան,
Ինչպէս ամառուան նոյնպէս ձմեռուան.
Հայաստան աշխարհըն է քու առաջ,
Որոյ դրութիւն յայտնի է քեզ քաջ։

Երկինք խոյանայ ամպերու վրայ,
Քու աչք հայրենեաց միշտ մտիկ կուտայ.
Վանայ գեղեցիկ ու վսեմ երկիր,
Դու ի՞նչպէս թողիր ու հոս տիղ եկիր։

---

*) Ղ. Աղայեան—«Իմ կեանքի գլխաւոր դէպքերը». էջ՝ 24—25։ Թիֆլիս. 1894. Տպարան Մ. Դ. Ռօտինեանցի։

Մենք պանդուխտ կռունկ, այս օտար աշխարհ՝
Կարօտ ենք քաշում հայրենեաց համար.
Զունինք մի վայրկեան հանգիստ մեր կենաց,
Մեզանից Հայաստան միշտ հեռու մնաց։

Բայց դու Հայաստան վեհ աշխարհ թողած,
Հոս տեղ Ցփխիսում էր կաս զբաղած.
Եւ ի՞նչ նպատակ քո մտքի մէջ կայ,
Փութա պատասխան, մեզ շուտով ասա։

Գիտենք դու եկիր այցելու լինել,
Քու որդւոց ցաւեր դու ինքնին դիտել.
Քու աչքեր սուր են շուտով կը տեսնեն,
Սրտի ցանկութիւն շուտով կը գտնեն.

Բայց դուն, ով Արծիւ, որդիդ հարազատ,
Հայրենեաց ցաւոց դու տեղեակ հաստատ.
Մէկ խարբիկ մ'ասա, մեր մայր աշխարհից,
Սրտերնիս հանգիստ առնենք ձեզանից.
Տեսնենք ինչպէս է, որ մենք էլ փութանք,
Ձեր կարօտ եղբարց մեզանից լուր մը տանք»։

Այս բարի գալուստի սրտագին ուղերձին կը պատասխանէր Գաբրիէլ Սրուանձտեանը՝ «Կռունկ»ի մէջ (*1861. էջ՝ 66—70*) գրելով «Համապատասխանիք ճախընթաց ոտանաւորին առ դիմառորող Վասպուրական Արծուոյն» վերնագրով ոտանաւոր մը։

Այսպէս խանդավառ տրամադրութիւն մը կը ստեղծուէր Թիֆլիսի մէջ Խրիմեանի անձի և գործի շուրջ։ Կը կազմակերպուի նաև հանգանակութեան գործը, որուն ղեկավարն ու հովանաւորը կը հանդիսանայ Վանի լաւագոյն և հայրենասէր մէկ զաւակը՝ Թիֆլիսաբնակ Գեներալ Երեմիա Արծրունին*), «և ինքը մի խոշոր գումար ստորագրելով խոստանում է, շարունակել ստորագրութիւնը և պէտք եղած դրամը ժողովել» կը գրէ պատմագիր Աղեքսանդր Երիցեանը։ Հանգանակութեան գործը յաջողութեամբ կը շարունակուէր։ Նուի-

*) Ազգային մեծանուն գործիչ և «Մշակ» թերթի հիմնադիր—խմբագիր Գրիգոր Արծունիի հայրը։

բատուններու մէկ մասը կանխիկ վճարած էր դրամը, իսկ մէկ մասն ալ ապառիկ թողած էր։ «Այս առաջին անգամն էր, որ Թիֆլիսեցիք յօգուտ Ճաճկահայոց դրամ էին նուիրում» կ'աւելցնէ Սղ. Երիցեանը։

Թիֆլիսի Առաջնորդ Սարգիս Արքեպ. Հասան-Ջալալեան և իր շրջապատի կղերականները, երբ կը նկատեն Խրիմեանի վայելած համակրանքն ու ժողովրդականութիւնը, չարութեամբ և նախանձով լեցուած՝ առաջին առթիւ կը խանգարեն հանգանակութեան գործը և բազմաթիւ զրպարտութիւններով ծանրաբեռնուած ամբաստանագիր մը կը դրկեն Մատթէոս Կաթուղիկոսին, առաջարկելով, որ Խրիմեանը կանչուի Էջմիածին և պատասխանատուութեան ենթարկուի։ Այսպիսով կը խանգարուի նաև հանգանակութեան գործը և Խրիմեանը ստիպուած կ'ըլլայ իր երկու արծուաձագերու՝ Գարեգին Սրուանձտեանի և Հրաչեայ Սևիկեանի հետ հեռանալ Թիֆլիսէն և երթալ Գանձակ։

Ինչպէս ամէն տեղ, նոյնպէս Թիֆլիսի մէջ 1860-ական թուերուն, Հայ կեանքի մէջ գոյութիւն ունէր հին և նոր գաղափարներու ուժեղ պայքարը։ Կղերը, վաճառականութիւնը և աւանդամոլ ու քար ուղեղները կը պայքարէին ազատամիտ և ուսումնասէր անձերու և գործերու դէմ։ Պահպանողականութիւնը կը հանդիսանար մեծ ուժ մը, և կը հովանաւորուէր Ռուս բռնապետութեան կողմէ։ Անդին կար հոծ զանգուած մը՝ հասարակ ժողովուրդը, որ կը խարխափէր մտաւոր խաւարի և տգիտութեան մէջ։ Նման միջավայրի մը մէջ, Խրիմեանի ներկայութիւնը, բնական է, որ հաճոյք պիտի պատճառէր խոնարհ և ազատամիտ դասերուն, գրգռելով պահպանողականութեան կատաղութիւնը։ Այս պայքարի մէջ տարուբերուելէ յետոյ Խրիմեանը կը հեռանար Թիֆլիսէն, ուր Սարգիս Արքեպ.-ի արբանեակները չարամիտ լուրեր տարածեցին թէ՝ «Խրիմեանի գրիչն ու բերանը պետութեան ընդդէմ խօսելով, կառավարութիւնը ծանր նկատած էր և հրամայած որ Ռուսաստանէն դուրս հանեն»։ Սակայն այսպէս չէր։ Մատթէոս Կաթուղիկոսը կարգադրած էր, որ Խրիմեանը Էջմիածին գայ, երբ նա արդէն Թիֆլիսէն անցեր էր Գանձակ շարունակելու հանգանակութեան գործը։ Գանձակէն անցաւ Ղարաբաղ։ Շուշի քաղաքի Հայութիւնը շատ սիրալիր և խանդավառ ընդունելութիւն մը ցոյց տուաւ Խրիմեանին, որուն հայրենասէր և

ազգաշունչ քարոզները շատ մեծ տպաւորութիւն թողած էին Նուշեցոց վրայ. Դանձակի և Նուշիի հայերը համեստ գումարներով մասնակցեր էին հանգանակութեան։

Մատթէոս Կաթուղիկոսի հրամանին ընդառաջելով Խրիմեանը Ղարաբաղէն ուղղակի կուգայ Էջմիածին և կը ներկայանայ Կաթուղիկոսին, որը զանազան անտիպ պատճառներ մէջբերելով Խրիմեանին տուած հանգանակութեան կոնդակը ետ կ'առնէ և ճամբու կը դնէ զայն։ Սակայն Խրիմեանը առանց յուսահատելու Էջմիածնէն ճամբայ կ'ելնէ և կը շարունակէ հանգանակութեան գործը։ Կ'անցնի Երևան, ապա Նախիջևան, Ագուլիս և ամէն տեղ կ'ընդունուի ջերմ սիրով և ցոյցերով։

Այս ուղևորութեան ընթացքին է ահա, որ Խրիմեանը Կովկասահայութեան մէջ համբաւ ու ժողովրդականութիւն կը վայելէ ոչ միայն իբրև ճշմարիտ հոգևորական և սիրտերը հրահրող քարոզիչ մը, իբրև ուսում և կրթութիւն տարածող ուսուցիչ մը, իբրև ազգանուէր և հայրենասէր դէմք մը, այլև իբրև Յեղափոխական fառոզիչ մը, որ Հայկական Ազատագրութեան եւ Ազատ ու Անկախ Հայրենիքի գաղափարախօս պատգամը կը հաղորդեր Վասպուրականի Արծիւը, Կովկասահայոց մէջ կատարած այս ուղեւորութեամբ, ոչ միայն լուսաւոր էջ մը կը թողուր իր այնքան զեղեցիկ կեանքի և գործունէութեան վրայ, այլև Հայ ազատագրական և քաղաքական մտքի զարթօնքի պատմութեան մէջ՝ իբրև ազգաշունչ քարոզչի՝ իր արժանի տեղը կը գրաւէր։

Խրիմեանը Ագուլիսէն կ'անցնի Պարսկական Ատրպատական և հասնելով Թաւրիզ, կ'իջևնէ Հայոց Առաջնորդարանը, 1861 Թուի Մայիսի սկզբին։

Ատրպատականի Հայոց ժամանակակից Առաջնորդ Գէորգ Եպիս. Վեհապետեանը շատ սիրալիր ընդունելութիւն ցոյց կուտայ Խրիմեանին, որուն բնակութեան համար ալ առանձին սենեակ*) մը կը յատկացնէ Առաջնորդարանի մէջ։

---

*) Այս գեղանյարկ, կիսալոյս և փոքր սենեակը ցարդ կը մնայ և կը ծառայէ իբր պահեստատուն՝ Ատրպատականի Հայոց Թեմական Տպարանին, որուն ներկայ շէնքը նախկին Առաջնորդարանն էր։ «Պաշտպան Պարսկահայոց» Շիրազացի Ստեփաննոս Եպիս. Մխիթարեանը 1889-ին Առաջնորդարանի այդ միայարկ և հնաձև շէնքը վերածեց տպարանի։

Թաւրիզի Ս.Աստուածածին Մայր եկեղեցոյ բակին մէջ, 1860-ական թուերուն, գոյութիւն ունէր ծխական դպրատուն*) մը, ղեկավարութեամբ Յովսէփ Աւագ Քահանայ Տէր Յովսէփեանի։ Այս Տէր Յովսէփը Թաւրիզի Հայ գաղութի ԺԹ.-րդ դարի ազգային և կրթական կեանքի պատմութեան մէջ՝ իւր արդիւնաւոր գործունէութեամբ, կարևոր տեղ մը կը գրաւէ։ Տէր Յովսէփ Քահանան և Թաւրիզի ժամանակակից ուսումնասէր և ազգասէր երիտասարդները կը ներկայանան Խրիմեանին և ամէն տեսակ բարոյական ու նիւթական աջակցութիւն ցոյց կուտան։ Երկարատև և դժուար ճամբորդութենէ մը յետոյ, Խրիմեանը Թաւրիզի մէջ, մօտ ամիս մը կը հանգստանայ և առիթ կ'ունենայ համակիրներու ջերմ շրջանակ մը ստեղծել։ Թաւրիզի Հայութեան ժամանակակից անուանի դէմքերն ու առանդուն, հայրենասէր երիտասարդներ և պատանիները կը խմբուին Խրիմեանի շուրջ և կը լսեն անոր յորդորներն ու խրատ-խուսանքները՝ ազգի, հայրենիքի և ուսման սիրոյ մասին։

Թաւրիզի Հայութեան ժամանակակից դեկավար դէմքերը—վաճառականներ և հարուստներ—Սիմոն Թումանեան, Ծատուր Խան Սէթ-Խանեան, Արզուման Նազարբէկեան, Ասլի Միքայէլեան, Աբրահամ Վարդանեան, Սարգիս Տէր Օհաննեան, Մատթէոս Նազարեան, Խաչատուր Տէր Զաքարեան, Գէորգ Աֆթանդիլեան, Գրիգոր Եղիազարեան և ուրիշներ—անսահման ոգևորութեամբ լեցուած՝ Վարագայ «Ժառանգաւորաց Վարժարան»ի և «Արծուի Վասպուրականի» օգտին հանգանակութիւն մը կը կազմակերպեն։ Ղարաբաղցի առևտրական գործակատար հայրենասէր Յովհաննէս Շըխեանցը կը ստանձնէ «Արծուի Վասպուրականի» Թաւրիզի գործակալութիւնը, իսկ Աւագ Աֆթանդիլեանն**) ալ—առանդուն և զարգացած պա-

---

*) Այս դպրատան մէջ, 1837-ին, ուսուցիչ եղած է նաև մեր ազգային ու գրական գործիչ բազմատանջ Մեսրոպ Թաղիադեանը։

**) Աւագ Խան Աֆթանդիլեանը 1860—80-ական թուերուն, Թաւրիզի մէջ իբրև զարգացած և ազգասէր անձ մը համբաւ հանած էր։ Կ'աշխատակցէր Կ. Պոլսոյ, Իզմիրի և Կովկասի Հայ թերթերուն։ Գրական, կրթական և ազգային հարցերու շուրջ նամակային յարաբերութիւններ մշակած էր՝ Խրիմեանի, Սըրուանձտեանի, Գր. Արծրունիի, Րաֆֆիի, Մ. Մամուրեանի և այլոց հետ, որոնց գրուած նամակները (Աւագ Խանին) այժմ ունիմ ձեռքիս տակ։ Այդ նամակները

տանի մը— կը խոստանայ թերթի համար բաժանորդներ գտնել։ Թաւրիզի մէջ իբրև ուսեալ, ազգասէր և եռանդուն Հայ ամենէն աւելի Խրիմեանին սիրելի կը դառնայ պատանի Աւագ Աֆթանդիլեանը։

Կը պատմեն, որ եկեղեցւոյ ժամհար օր մը կուգայ և կը հարցնէ թէ— «Հայր Սուրբ փրթօշ կ'ուտեմ»։— Խրիմեանն առանց գիտնալու թէ փրթօշն ինչ է կ'ըսէ— «Այո, կ'ուտեմ, բեր»։— Ժամհարը կը բերէ մեծ մաքրաթով մը (հողէ աման) ջուրով հարուած մածուն, մէջը լեցուած՝ մանր կտրուած թարմ վարունգ, կանաչ սոխ, քիշմիշ, Տէր-Ազօթիկ (շիվլիթ) բանջար և սառոյցի մեծ կտոր մը, նաև չոր լաւաշ հաց։ Խրիմեանը կը վերցնէ փայտէ գդալը կը խառնէ փրթօշը և հաճոյքով կ'ուտէ պատուիրելով ժամհօր, որ այդ զովացուցիչ և օրհնեալ Մածնափրթօշը յաճախ բերէ։

Թաւրիզի մէջ քաղցր և անմոռաց յիշատակներ թողնելէ յետոյ, Խրիմեանը իւր երկու ուղեկիցներու հետ, 1861 Յունիսի 4-ին ճամբայ կ'իյնայ դէպի Սալմաստ։ Բազմաթիւ Թաւրիզեցի հայեր ձիեր հեծած մինչև Աջի գետը կ'ուղեկցին և բարի երթ կը մաղթեն։ Երիք օր յետոյ, Մարանդ— խոյ գծով կը հասնին Սալ-

---

անտիպ են, պատմարժէք և հետաքրքիր։ Աւագ Խանը՝ վաճառական Գէորգ Աֆթանդիլեանի որդին էր, ծնած ի Թաւրիզ 5 Ապրիլ 1844-ին։ Նախնական ուսումը ստացած էր Տէր Յովսէփ Աւագ Քահանայէն։ Սալմաստի Կաթոլիկ հայոց հոգևոր հովիւ՝ Վիեննայի Մխիթարեան Միաբան Հ. Կղեմէս Վարդապետէն, Սուրբ գիւղին մէջ, կը սովրի ֆրանսերէն 1860 թուին և 1866-ին իբր հետագրիչ կը պաշտօնավարէ նախ պարսկական և ապա հնդկերոպական հետագրատուններու մէջ։ Թաւրիզի Արամեան դպրոցին մէջ իբր ուսուցիչ կը հրաւիրուի 1875-ին պաշտօնակից ունենալով Մեսրոպ Քահանայ Փափազեան, Րաֆֆին, Սամուէլ Դիւզդեան և ուրիշներ։ Փափազեան Քահանայի, Մարգար Նազարբէկեանի և Աւագ Խանի ջանքերով 1869-ի Յունիսին Թաւրիզի մէջ կը կազմուի „Աւարայրեաց Ընկերութիւն" որուն նպատակն էր զարկ տալ իգական սեռի դաստիարակութեան՝ բանալով համանուն դպրոց մը։ Արտպատականի Թագաժառանգը (յետոյ Մուզաֆէրէդդին Շահ) 1886-ին եաւուաթեան տիտղոս կուտայ Աւագին։ Մինչև 1889ի վերջերը Աւագ Խանը Արամեան դպրոցի մէջ ուսուցչութիւն ընելէ յետոյ կը հրաժարուի և կը զբաղուի առևտուրով։ Ընտրուած է անդամ ազգային և կրթական հիմնարկութեանց, անդամ՝ Արտպատականի Հայոց Թեմական Խորհուրդի եայլն։ Մեռած է Թաւրիզի մէջ 1917-ին, 73 տարեկան։

Աւագ Խանի որդին՝ Սուրէն Աֆթանդիլեանը այժմ անդամ է՝ Արտպատականի Թեմական Խորհուրդին և Կեդրոնական Դպրոցի Հոգաբարձութեան։

մաստ, կ'ուղևորուին դէպի Փայաջուկ գիւղը և կ'իջևնեն Մելիք-Միրզա Մելիք-Յակոբեանենց տունը։ Բաճճիենց տունն էր այդ, ուր կը հիւրընկալուէր Խրիմեանը իւր երկու արծուաձագերու հետ։

Բաֆֆիենց նահապետական «տունը համարեա գիւղական հիւրանոց էր այն ամեն օտարական հայի համար, որ մուտ գործէր Սալմաստ։ Խրիմեան Հայրիկը 1861 թուականին Ատրպատական գալով երբ Սալմաստ ժամանեց նրա տան մէջ հիւրասիրվեց» կը գրէ Աւագ Խան Աֆթանդիլեանը։

Սալմաստ հասնելէ յետոյ Խրիմեանը Թաւրիզի իւր համակիրներուն ու բարեկամներուն՝ յանուն երիտասարդ Աւագի, հետևեալ նամակը*) կը գրէ.—

*Ազնիւ ուսումնասէրք*

*Սիրելիք Արծուոյս*

*Ողջամբ Սալամաստ ժամանեցինք, ուր տեղէն այս առաջին գրաւորական ողջոյն ձեր սիրելութեան կը նուիրեմ: Ինչպէս մօտէն բերանով մեր սրտի խորին շնորհակալութիւն յայտնեցի ձեր հրամանացը, նմանապէս փոքր ինչ հեռանալով ձեզմէ դարձեալ նոյն կը նուիրեմ, վասն զի սիրոյ եւ երախտագիտութեան մէջը հեռաւորութիւն չի կայ: Ձեզ կը ճանչնամ այսուհետեւ Դավրէժեցի ազգայնոց մէջը իբրեւ ազնիւ քաղաքացի, այդ հայրենիքի մէջը իբրեւ պարտքը ճանչցող հայրենասէր: Վերջապէս դուք ճանաչեցիք Արծիւ եւ նորա ծեռնարկութիւնը, որ ընդհանուր ազգին կը վերաբերի. Արծիւն ալ լաւ ճանչըցաւ ձեր հոգին եւ կ'աղաչէ որ այսուհետեւ իրար չի մոռնանք:*

*Աղօթարար վասն ձեր՝*

*Մկրտիչ Վրդպտ Խրիմեան*

*10 Յունիս 1861*
*'ի Փայաճուկ*

*-նակ իմ ղկիզչ կիգստոն փոխոց մէջ:ձեղոցեստոր մէն հղոր*

*) Այս նամակի բնագիրը ձեռքիս տակն է։ Գրուած է 11×18 հարիւրօրդամեթր մեծութեամբ սպիտակ թուղթի մէկ երեսի վրայ, սև թանաքով և գիւրընթեռնելի գրով: Այս, ինչպէս նաև Խրիմեանի միւս անտիպ նամակները առաջին անգամ ըլլալով լոյս կ'ընծայեմ նոյնութեամբ և կէտ առ կէտ։

Խրիմեանը շրջելով Սալմաստի Հայ գիւղերը կը շարունակէ իւր քարոզները, յորդոր կարդալով որ գիւղացիութիւնը միշտ կապուած մնայ իւր հող ու ջուրին հետ, զբաղուի հողամշակութեամբ և զարկ տայ նաև մատաղ սերունդի կրթութեան։

Սալմաստի հարուստ Հայերն ալ նիւթական օգնութիւն ցոյց կուտան Խրիմեանին, որուն խնդրանքով Բաֆֆին ալ կը ստանձնէր «Արծուի Վասպուրական»ի գործակալութիւնը — «Սալամասս. Պ. Յակովբ Միրզայեան Մէլիք Յակովբեանց, միանգամայն գործակալ Պարսկաստանի Հայոց»։

Երկու շաբաթ, Խրիմեանը կը վայելէ Բաֆֆիենց տան հիւրընկալութիւնը և Յունիսի 24-ին (1861) ճամբայ կ'իյնայ դէպի Վան։ Հայր Արծիւն ու երկու արծուաձագերը ուխտի կ'երթան Ս. Բարդուղիմէոսի և Հոգոց վանքերը և Յունիսի վերջերը կը հասնին Վան—Վարագ։

Խրիմեանի այս քարոզչական և հանգանակութեան ճամբորդութիւնը տեւեց ամբողջ ութ ամիս (1860 Նոյեմբեր—1861 Յունիս)։ Թէև դրամական հանգանակութեան արդիւնքը հարեստ էր, բայց բարոյական, ազգային, հայրենասիրական և կրթական քարոզութեանց ազդեցութիւնները շատ խոր և արդիւնաւոր. եղան՝ Էջմիածնէն սկսեալ Ալէքսանդրապոլ, Թիֆլիս, Գանձակ, Շուշի, Երևան, Նախիջևան, Օրդուբատ, Ագուլիս, Թաւրիզ և Սալմաստ։

Վարագ հասնելէ յետոյ, Խրիմեան և երկու աշակերտ-ուղեկիցները «Արծուի Վասպուրական»ի մէջ իրենց ճամբորդութեան տպաւորութիւնները կը գրէին (Հատոր Դ. 1861. Թիւ 1, որ լոյս տեսաւ Յուլիսին)։

«Ծանուցումն առ ընթերցողս» խմբագրական յառաջաբանը հետևեալն է.—

«Վասպուրական թերթիս անունը պատշաճապէս Արծիւ դրուեցաւ, վասն զի այս քանի անգամ եղաւ կը ծերանայ, կը հնանայ և դարձեալ կը նորոգի։ Ի՞նչ է Արծուոյն ծերութիւն և հնութիւնը. ուրիշ բան չէ, բայց միայն չքաւոր աղքատութիւնը. չեմ գիտեր դժնդակ բախտն Արծուոյն համար միշտ պանդխտութիւն է վճռեր և այս վճիռը նորա ճակատէն յաւիտեան չը պիտի ջնջուի, որով գոնէ փոքր ինչ Վարագայ սարին տակ հանգիստ առնելով իւր

ճետերուն յառաջադիմութեան համար պարապի կամ իւր տկար մատուլին թևերը շարժելով հրատարակէ այս հայրենասէր թերթերը։

«Մինչդեռ տաժանելի պանդխտութենէն նոր դարձած կը կարծեմ որ փոքր ինչ հանգիստ գտնեմ հայրենեացս գրկարանին մէջ, նոյն դժբախտութեան վճիռը կը խօսի ականջիս թէ քո հանգստութիւն քանի մը ամիսէ. դարձեալ պատրաստէ տրեխներդ դէպի պանդխտութեան ճանապարհ։ Թող չը կարծեն սիրելի ընթերցողները թէ խօսքերս գանգատի կամ տրտունջի եղանակ է. քաւ, Արծիւը հայրենեաց մշակն է, հայրենեաց սէր իւր հրամանատարն է, թող ուր կուզէ վարէ ու մղէ. պէտք է որ հայրենեաց սիրոյն կամակատար ծառայ հանդիսանայ քանի որ հայրենեաց ջրով, հողով և օդով կը սնանի։

«Ահա երկրորդ անգամի պանդխտութենէն դառնալով Արծիւը կը սկսի դարձեալ իւր թերթերը շարունակել, և պիտի աշխատի առաւելապէս այնպիսի յօդուածներ հրատարակել, որ Ազգին միութեանը, հայրենեաց շինութեան, եկեղեցեաց բարեզարդութեան և Հայ Մանկտոյն լուսաւորութեան կը վերաբերին։ Այս առարկաները սիրելի են ամէն Հայ Խմբագրաց, Արծիւն էլ իբրև անոնցմէ յետին խմբագիրը՝ կը սիրէ նոյն առարկաները և իւր սովորած հայրենասիրական ձայնով մինչև հեռաւոր Հայկազանց գաղթականութեան սահմանները մունետիկի պէս ման գալով կը կանչէ բոլոր Հայ ականջներուն—Ազգ, Հայրենիք, նախնի Հայաստան, Հայկ, Արամ, Տիգրան, Տրդատ, Վահան, Վարդան, Գրիգոր, Ներսէս, Մեսրոպ, Օահակ, Այրարատ, Վաղարշապատ, և մոռացեալ աւերակ Անին, Եկեղեցիք, Աստուածպաշտութիւն, Վանորայք, Դպրոց, Լուսաւորութիւն և Յառաջադիմութիւն։ Զգայուն եղիր, Հայաստան, ականջդ բաց արա, լսէ այս անունները, սիրէ այս բառերը, բերանդ առ յաճախ, խօսիր մշտապէս։ Ասոնք են ահա Արծուոյն ըղձալի ձայները, որոնց արձագանք եղած է Վարագայ քարերէն, իւր հայրենասէր թևերով ձայն կուտայ. երբեմն ևս հայրենի սարէն կը թռչի պանդխտութեամբ հեռաւոր հայկազանց բեմերուն վերայ, նոյն բարձրաձայն աղաղակներով կը քարոզէ Հայաստան, Հայաստան...։ Մինչև գերեզմանին դուռը պիտի կանչէ Արծիւը թէ ուշ թէ անագան իւր ձէնը Հայոց ականջին պիտի հասնի»։

Այս յառաջաբանէն յետոյ, Խրիմեանը «Ծառիդածութիւն Վաս-

պուրակաց Արծուոյն իւր ճանապարհորդութեան մէջը» 12 էջանոց ընդարձակ յօդուածով կը ծանրանայ Հայ եկեղեցւոյ և մանաւանդ էջմիածնի բարեկարգութեան վրայ· Ցոյց կուտայ Հայրապետական իրաւանց և պարտքերու սահմանները· կը թելադրէ որ Հայ հոգեւորականութիւնը սերտ կերպով կապուի էջմիածնի հետ, աշխարհականներն ալ պէտք է խառնուին եկեղեցական բարեզարդութեան, եկեղեցին և հոգևորականութիւնը պիտի ժողովուրդի ուսման և կրթութեան նախանձախնդիր ըլլան և բարոյապէս ու նիւթապէս օժանդակեն·

«Եթէ կը սիրէք ազգային յառաջադիմութիւն, յառաջ մատիք ու լծուեցէք եկեղեցական և աշխարհական ի միասին կ'տեսնաք ձեր աչքով ու փորձով»· Երիմեանի այս «խորհրդածութիւն»ները մեր եկեղեցւոյ և ազգային դաստիարակութեան մասին շատ կենսական հարցեր կը շօշափեն·

Գարեգին Սրուանձտեանը „Արծուի Վասպուրական“ի մէջ, առաջին տարի իսկ, «Ցեսարանք Հայրենի Աշխարհաց» բաժնի մէջ, կը հրատարակէր իրենց ութ ամսուայ ճամբորդութեան ընթացքին տեսած վայրերու նկարագրական տեղագրութիւնն ու ստացած տպաւորութիւնները·

«Այս անգամ «Վասպուրականի Արծուի»ն իր հետ կը բերէ Հայրենի աշխարհաց տեսարանք, ուր ոտքով ընթացաւ, ուր աչօք տեսաւ, ուր անձամբ հանգեաւ, ուր և երբեմն լաց, երբեմն զուարճութիւն կրեց, ուր բաւական և անբաւական միջոցներ վայելեց·

«Հայրենի աշխարհներն ասեմ, ուր այս անգամ, ինչպէս յայտնի է ամէն մարդուց ազգայնոց, այցելութիւն առնել և օգնութիւն խնդրել գնաց մեր Արծուին· սկսեալ Այրարատէն, Երևանէն մինչև ի Կովկասեան Թիֆլիզ, Թիֆլիզէն ի Գանձակ և անտի ի Ղարաբաղ, այն է Շուշի քաղաք, ի հին Նախիջևան, ի նախնի Դողթան (Ագուլիս, Օրդուբատ), ի Պարսկաստան Ատրպատականն Դավրէժ և ի Սալամաստ· Արդ մեզ պարտք է, ինչպէս որ ակն ունին մեր սրգոյ բաժանորդները, այն տեսած քաղաքաց և նշանաւոր տեղեաց վերայ տեղեկութիւններ գրել գոնէ ըստ մասին·

«Մեր գործ պիտի լինի այժմ գրել միայն վերոյիշեալ քաղաքները, նոցա դիրքը և ի մէջ բնակեալ Ազգայինք, նոցա վիճակը և

յառաջադիմութիւն քաղաքականութեան և ազգայնութեան մէջ, որոց վերայ փորը ի շատէ կարօղացանք մեր դիտողութիւնը ձգել»։

Օրուանձտեանի առաջին յօդուածն է «Երեւաց fաղաf»ը, որուն տեղագրական, պատմական և այլ տեղեկութիւնները (մօտ 6 էջ) հետաքրքիր են և արժէքաւոր։

«Ծիղոյս (Երևանի) ազգայինք սկսեր են զարթնուլ հայրենասիրութեան հոգւով. արդէն բաւական ուսումնականներ կը գտնուին իւրեանց մէջ, որք և մեծ յոյս կուտան շուտով յառաջ տանել իրենց հայրենիքը դէպի լուսաւորութիւնը։

«Սխրալի աչօք տեսանք Երևանու Հայրենասէրները, այն ինչ մեր պանդուխտ Արծուին էջմիածնէն դարձած՝ իջևանին մէջը միայնիկ տխուր իւր անձրևոտ ու ձիւնոտ թևերը կը հանգչեցնէր, ահա խումբ խումբ սինեկին ներսն ու դուրս պատած Հայկազունք լեցուեր էին խօսիլ և ունկն մատուցանել Արծուոյ հայրենասիրական ճառերուն, թէև անցաւ այն պատեհութիւն, որ Երևանու եկեղեցւոյ բեմերը տեղի տային Արծուոյ ձայնին, բայց և ոչ իսպառ անմխիթար զանոնք թողուց, գնաց, գիտեմք, նոցա զգայուն սիրտը հետ Արծուոյն, բայց և մնաց Արծուոյն հոգին նոցա մէջ։

«Երևանցի՛ ազգայինք, ձեր աչքը, ձեր աչք շատ լուսաւոր պէտք է լինի վասն զի շատ վսեմ առարկաներ ունիք տեսնալու ձեր առաջ, Մասիսին գագաթը, Արագածին ճակատը, Արմաւրայ, Դունայ, Արտաշատայ, Երուանդակերտին, Վաղարշապատու աւերակաց յիշատակը, Երասխին յատակը, այս ամեն տեղեր ձեր աչաց առարկայ են և ձեզ պարտք է այն ոտքա տակը թաղեալ Հայրենի պարծանաց յիշատակները ի լոյս հանել առ որ անցկալի յուսալի աչօք կ'սպասեն ամենայն Հայք»։

Օրուանձտեանը մանրամասն կերպով գրած էր Խրիմեանի այս ուղևորութեան պատմութիւնը, որ հեղինակին կողմէ, արևելահայ բարբառով յոյս տեսաւ Ծարուխիւն Սվաճեանի «Մեղու» (Կ. Պոլիս) թերթին մէջ 1861-ին։

Խրիմեանի ուղեկից-աշակերտ Հրաչեայ-Մարգար Սևիկեանն ալ «Արծուի Վասպուրականի»ի մէջ (1861. Թիւ 1) «Բառեւ» վերնագրով այսպէս կը նկարագրէր Հայր Արծուի ճամբորդութիւնը.

Արծուիդ սիրաթեւ
Թռիր յԱյրարատ
առաւ ողջոյն Մասեաց.
ասա թէ Արծուին
ողջամբ հաս վարագ։
Էջ և՛ի Ցիխիս
առաւ անդ աւետիս,
ասա թէ Արծուին
այն ձեր սիրելին
իւր երկու ձագօք
խոնջած թեւերով
հանգեաւ ի վարագ
առ ընկալաւ կեանք։
Թռիր օն Արծուիդ
իջիր ի Դանձակ
կաց առ դպրոցի
նորագիր հիման։
Առա յիշեցէք
դու Արծուոյն խրատ
զուգել գորա հետ
դպրոց մի աղջկանց։
Փութացիր Արծուիդ
սիրուն թեւերդ բաց,
մուտ ի Ղարաբաղ
ի տունըն Սիւնեաց։
Ասա, յիրաւի,
դուք քաջասիրտ էք
յաղթող անուանիք
վեհ Ղարաբաղցիք։
Այդ քաջութեան հետ
յարդեցէք ուսումն,
որ միաք ու բազուկը
միանան ուժով։

ՅԱրձախօյ լերանց
Արծուիդ Թռիր անց,
դարձիր յերևան
զինչ քեզ երևան։
Դու ասա նոցա
ելէք երևան՝
ուսման արևով
փայլեցէք պայծառ։
Ել յերևանէն
հասիր նախջուան։
Խօսիր դու նոցա՝
թէ ձեզ երանի,
Նահապետին տուն
ձեր կալուածն է բուն։
Ձեր որդւոց համար
դուք ևս նոր տապան
պարտիք պատրաստել
վասն իմաստութեան։
Թող դու նախջուան
գնա յԱգուլիս
այն մեր հին գաւառ
վառապուրականի։
Ուսումն թող լինի
ձեր մէջ ճոխութիւն
անով թող մեծնան
ձեր աշխոյժ մանկունք։
Արծուիդ մի յամեր
յերասխին ափեր,
զի այդ մայր թշուառ
շատ ունի ցաւեր։
Անցիր Երասխէն
գնա ի Դավրէժ,

զոր շինեաց Խոսրով
ի Պարսից վըրէժ։
Ասա նոյն տեղի
մնացորդ Հայերուն,
թէ ձեր փառք պարծանք
է ձեր վարժատուն,
զի անդ ձեր որդիք
լինին իմաստուն։
Թռիր Դավրէժէն
եկ ի Սալմաստ.
մեր նախնի գաւառ
Հեր և Զարևանդ։
Ասա այն տեղի
յաջողակ Հայոց,
մի թէ կարող չէք
դուք շինել դպրոց։
Մեզք են ձեր տղայք
կը շրջեն դատարկ,
թէ այսպէս մընան,
չար է հետևանք։
Ուրիմն դպրոցներ
բացէք ձեր գեղեր,
թող լուսաւորուին
ձեր որդւոց միտքեր։
Այս բան իմ նուէր,
տամ ձեզ ով Հայեր,
ես Մարգար երգիչ
Հայկազանց տոհեր։

Հրաչեայ Մուրգար
Աշակ. Ծ.Վ. Վարագայ

Այս ճամբորդութենէն ծնած ժողովրդական զրոյց մը — որ իբր թէ Խրիմեանը Ռուս կառավարութեան ճնշումով հեռացաւ Կովկասէն — ծնունդ տուած է նաև ժողովրդական տարբեր և գեղեցիկ զրոյցի մը, որուն համաձայն, որպէս թէ Աշուղ-Ջիւանին իւր «Այծեամ» երգով յորդոր կը կարդայ, որ Խրիմեանը հեռանայ Կովկասէն, «ռուսկաց»ին ձեռքը չ'իյնալու համար.—

«Փախիր այծեամ, փախիր, որսկանն է գալիս,
Զագուկներդ տխուր լալիս են լալիս։
Դաշտումը ման մի գար, թէ մտածես լաւ,
Ինչ կը վիրաւորեն կըստանաս մեծ ցաւ.
Դուրս մի ելնիր խիտ անտառից դու քնաւ.
Փախիր, այծեամ, փախիր, որսկանն է գալիս,
Զագուկներդ տխուր լալիս են լալիս...»։

Այս սիրուն զրոյցն ալ վաւերական ըլլալէ հեռու է, վասն զի երբ Խրիմեանը 1860—1-ին Կովկաս կը գտնուէր, այդ թուերուն Զիւանին 14—15 տարեկան*) պատանի մըն էր, որ դեռ իրը Աշուղ համբաւ հանած չէր։ Իսկ եթէ Զիւանին տարիներ յետոյ յօրինած է «Այծեամ» երգը՝ նոյն նպատակով. այդ մասին փաստեր չը կան։

Կր պատմեն, որ երբ Խրիմեանը կր հասնի Վարագ՝ դպրոցի ուսուցիչներ, աշակերտներ, միաբաններ և հօտաղ-մշակներր անհուն ուրախութեամբ կը շրջապատեն զինքր և հարց ու փորձերու տարափներ կը թափեն գլխին։ Խրիմեանը բոլորին ալ սիրով կը պատասխանէ, ինքն ալ կր ծանօթանայ վանքի անցուդարձերու հետ։ Յաջորդ օր, արշալոյսին մինակ ու ոտքով կ'երթայ քաղաք—Վան—և իր շրջագայութեանց ու հանգանակուած կանխիկ և ապառիկ դրամական հաշիւներու մասին զեկուցում կուտայ Առաջնորդին և հրօնական ու քաղաքական խառն ժողովներուն։

Խրիմեանի թշնամիները, անոր բացակայութեան ժամանակ, նորէն դիմած էին Կ. Պոլիս՝ Պատրիարքարանին, որ Խրիմեանը Վարագայ վանահայրութենէն հեռացուի, սակայն Պատրիարքարանը ոչ միայն կը մերժէ այդ առաջարկը, այլև յանդիմանական գրութեամբ մը կր յորդորէ, որ այդ «ազգադաւ ձեռնարկներ»էն հեռու մնան և «եղբայրաբար, սիրով գործեն վասն հայրենեաց»։

Վարագ հասնելէ յետոյ. Խրիմեանը առաջին առթիւ իսկ լոյս կ'ընծայէր «Արծուի Վասպուրական»ի 1861 թուականի Ա. Թիւը, որմէ բանի մը տասնեակ օրինակ, ճամբորդի մը միջոցով կ'ուղարկ-

*) Աշուղ Զիւանին ծնած էր 1846-ին Ախալքալաքի Կարզախ գիւղին մէջ և մեռած ու թաղուած ի Թիֆլիս՝ 1909-ի Մարտի 1-ին։

ուէը Թաւրիզ, Թերթի այս թիւին հետ Խրիմեանը Աւագ Աֆթանդիլեանին կ'ուղարկէը նաև հետևեալ նամակը*).—

1861, Սեպտ. 12, Թիւ 1
'ի Վարագ

Արգոյ Սիրելի

Ինչպէս որ պարտք համարած եմ ինձ ամէն պատեհութեանց մէջ նամակ զրել առ Ձեզ, ահա զնոյն կ' փութամ կատարել: Այս երկրորդ թիւ նամակն է:

Առաջնոյն պատասխանը ընդունած եմ արդէն մեծ սիրով: Այո' եւ նորա մէջ մեծ սէրը զտայ ծրարուած:

Շնորհակալութիւն կը նուիրեմք Ձեր եռանդուն եւ անկեղծ զգացմանց, զոր առ մեզ ունիք, Ծարատեւեցէք այդ Եռանդ:

Մեր այս ողջունաբեր նամակին հետ ընդունեցէք նաեւ Վաստպուրական Արծուոյն Ա. Թիւը, առ որ գիտեմ, ցարդ կարօտով սպասում էք: Ձեզ նման սիրելեաց վրայ վստահութիւն ունի Արծուին, որ ըստ ամենայնի ազգասիրաբար եւ անձնուիրաբար աշխատող լինիք մեր նպատակին, եւ զի՞նչ է Արծուոյն նպատակ, եթէ ոչ Հայրենեաց նոր ու լուսաւոր կերպարանք մի տալ եւ ողջ ազգին պայծառութիւն ու վերանորոգութիւնը տեսնել: Ո՛հ միջոց դժբաղդ է արել զԱրծիւն:

Պ. Գրիգորին**) մեր ողջոյնը նուիրէ:—

Մկրտիչ Վրդպտ Խրիմեան***)

Քո մտերիմ Գարեգին կարօտիւ կ' բարեւէ Ձեր յարգութեան, եւ կ'խնդրէ որ ներողամիտ լինիք առանձին նամակ չի գրելնուս համար:

Մեր Հրաչեայ Մարգարն եւ բոլոր ժառանգաւոր եղբարք անձկանօք կ' բարեւեն զՁեզ:

---

*) Այս նամակի բնագիրը գրուած է 21×27 հարիւրորդամեթր մեծութեամբ կապոյտ, ողորկ և բարակ թուղթի մէկ երեսի վրայ, սև թանաքով:

**) Աւագ Աֆթանդիլեանի բրոջ նշանած՝ Գրիգոր Նիւազարեան:

***) Խրիմեանի այս և միւս նամակներու առօրագրութիւնները շրջապատուած են իբր շղթայուած ամպանման գիծերով: Առօրագրութեան բոլորտիք քաշուած այս ամպանման գիծերը, հաւանաբար կը խորհրդանշեն՝ Հայր Արծիւը կը սաւառնի ամպերու մէջ՝ մէքար:

«Արծուի Վասպուրականի Թաւրիզի գործակալ Ղարաբաղցի Յովհաննէս Շըխեանցը, 1861 թուի Օգոստոս 22-ին, նամակ մը գրէ Խրիմեանին յայտնելով, որ «ամիսէ մը զկնի իւր մեծաւորաց հրամանաւ պիտի մեկնի ի Ղարաբաղ» և կը խնդրէ, «ով ոք Ձեր գործն կատարելու է աստ՝ նորա անունն նշանակէք ամսատետրակի կողքին», Ուրեմն Յովհ. Շըխեանցը կը հրաժարուէր թերթի գործակալութենէն, ինչ որ երեսի վրայ կը մնար.

Եւ ահա, 1861-ի Սեպտ. 19-ին, Գարեգին Սրուանձտեանը մանրամասն նամակ մը կը գրէ Աւագ Աֆթանդիլեանին, առաջարկելով, որ ստանձնէ թերթի գործակալութիւնը.

«Ես զՁեզ կ'ադաչեմ, այս մասին աշխատութիւն յանձն առնուս 'ի սէր Արծուոյն. ահա քեզ պատեհութիւն կատարէ քո անձնանուիրութիւնը, ցոյց տուր քո Ազգասիրութիւն և Արծուասիրութիւն։ ...Այո զՁեզ արժան կ'համարի Հայր Արծիւն և ես կ'ադաչեմ, որ կամքերնիդ ցոյց տաք առանձին նամակաւ յօգուտ Արծուոյն և 'ի սէր, որով և զիս և զԱրծիւն կ'առնես քեզ բարեացապարտ»*)։

Արդեօք Աւագ Աֆթանդիլեանը յանձն առաւ թերթի գործակալութիւնը, կամ Սրուանձտեանին ինչ պատասխանեց, չը գիտենք, միայն, պարզ է, որ 1861-ի Նոյեմբեր 26-ին, ցուրտ և անձրևոտ օր մը, Գարեգին Սրուանձտեան և Կ. Պոլսեցի Մ. Միքայէլ Ալէքսեան Վարագէն ճամբայ կ'իյնային դէպի Պարսկաստան՝ Թաւրիզ «որպէս զի Արծուոյ տեւրակներ կարգի դնեն»՝ այսինքն թերթի գործակալութեան համար յարմար անձ մը գտնեն. Զարաչար և տաժանելի ճամբորդութենէ մը յետոյ, Գարեգին ու Միքայէլ Արծուաձագերը կը հասնեն Թաւրիզ և Աւագ Աֆթանդիլեանին կը յանձնեն Հայր Արծուի գրած հետևեալ նամակը**).—

---

*) Այս տողերը քաղեցի Սրուանձտեանի ինքնագիր, անտիպ նամակէն որ ձեռքիս տակ կը գտնուի այժմ, անոր ուրիշ նամակներուն հետ։

**) Այս նամակի բնագիրը գրուած է 18×26 հարիւրորդամեթր մեծութեամբ սպիտակ թուղթի մէկ երեսի վրայ, սև թանաքով։

1861. Նոյ. 25
'ի Վարուգ

Ազնիւ Ազգասէր.

'Ի վաղուց կ'փափագէի Ձեր սիրելոխթեան ճամուկ մի գրել հանդերձ ողջունիւն սիրոյս, սակայն պատեհոխթիւն չէր յաջողեր։ Այս անգամ բարեպատեհ առիթ եղաւ մեզ սոյն ճամուկիս մեր սրտի իղձը առնիրել Ձեր ազգասիրոխթեան հանդերձ շնորհակալոխթեամբ։ Այո Ձեր յիշատակ քաղցր է ինձ եւ միշտ յիշել պարտական եմ Ձեր սէրն ու մեծարանք, զոր ամենեցուն մեզ առնիրէիք մեզ։

Արժանի կ'ընանք Ձեզ ասիկա Ազգասիրաց շնորհիւ կ'որոգոխի օրըստօրէ եւ 'ի ձեռնէ մեր մեր քաջալերոխթիւն եւ ապաստ յանդգնով, վստահոխթեամբ կ'թեռնիկոխէ իւր Ազգօգուտ սկզբնանց մէջ պաշտպան ունենով միմիայն Աստուած եւ ճշմարտոխթիւն, եւ միշտ Ձեզ ասիկա Ազգասէրներ ու Ազգասիրոխթիւն։ Այս երկոն հաստատուն վճռելոն վերայ դրած է Արժիր իւր բոյնը, եւ կաշխատի հոգալոյն չափ երկայնամիտ լինելով եւ համբերելով ամենայն տեսակ անդոխթեանց եւ վշտաց մինչեւ Հայաստանի Աստուածմ իւր այցելոխթեան աչքը կարճատե մեզ վերայ, եւ օր ըսիտի գայ, որ իմ ապրուստիս հատուցանէ մեր Հարց Աստուածմ յոյսախոխթիւն եւ յոգուտ առնիասարակ սիրելի Ազգայնոցս։

Մեր Վարուգայ Ժառանգաւորաց աշակերտներեն երկոքր՝ Սրոսանձտեանց Գարեգին որ արդեն ժանօթ Ձեզ, եւ Մ. Մխրայէլ Աղբսեան Կ. Պոլսեցին յոյժ արկեցինք այդ կողմեր, որպէսզի Արժանի տեսրնաներ կարգի դնեն. յառնիկ Ձեր շնորհաց եւ խնամոց յանձն կառնեմ, որ բնդունիք զրանք եւ 'ի գիտս Ազգասիրոխթեան օժանդակիք նոցա, որ շուտով գործը վճռելեն եւ վերադառնան։—

Մկրտիչ Վրդպտ Խրիմեան

Ազնիւ Ազգասէր.

'Ի վաղուց կ'փափագէի Ձեր սիրելոխթեան ճամուկ մի գրել հանդերձ ողջունիւն սիրոյս, սակայն պատեհոխթիւն չէր յաջողեր։ Այս անգամ բարեպատեհ առիթ եղաւ մեզ սոյն ճամուկիս մեր սրտի իղձը առնիրել Ձեր ազգասիրոխթեան հանդերձ շնորհակալոխթեամբ։ Այո Ձեր յիշատակ քաղցր է ինձ եւ միշտ յիշել պարտական եմ Ձեր սէրն ու մեծարանք, զոր ամենեցուն մեզ առնիրէիք մեզ։

Արժանի կ'ընանք Ձեզ ասիկա Ազգասիրաց շնորհիւ կ'որոգոխի օրըստօրէ եւ 'ի ձեռնէ մեր մեր քաջալերոխթիւն եւ ապաստ յանդգնով, վստահոխթեամբ կ'թեռնիկոխէ իւր Ազգօգուտ սկզբնանց մէջ պաշտպան ունենով միմիայն Աստուածմ եւ ճշմարտոխթիւն, եւ միշտ Ձեզ ասիկա Ազգասէրներ ու Ազգասիրոխթիւն։ Այս երկոն հաստատուն վճռելոն վերայ դրած է Արժիր իւր բոյնը, եւ կաշխատի հոգալոյն չափ երկայնամիտ լինելով եւ համբերելով ամենայն տեսակ անդոխթեանց եւ վշտաց մինչեւ Հայաստանի Աստուածմ իւր այցելոխթեան աչքը կարճատե մեզ վերայ, եւ օր ըսիտի գայ, որ իմ ապրուստիս հատուցանէ մեր Հարց Աստուածմ յոյսախոխթիւն եւ յոգուտ առնիասարակ սիրելի Ազգայնոցս։

Մեր Վարուգայ Ժառանգաւորաց աշակերտներեն երկոքր՝ Սրոսանձտեանց Գարեգին որ արդեն ժանօթ Ձեզ, եւ Մ. Մխրայէլ Աղբսեան Կ. Պոլսեցին յոյժ արկեցինք այդ կողմեր, որպէսզի Արժանի տեսրնաներ կարգի դնեն. յառնիկ Ձեր շնորհաց եւ խնամոց յանձն կառնեմ, որ բնդունիք զրանք եւ 'ի գիտս Ազգասիրոխթեան օժանդակիք նոցա, որ շուտով գործը վճռելեն եւ վերադառնան։—

Մկրտիչ Վրդպտ Խրիմեան

Ազնիւ Ազգասէր.

'Ի վաղուց կ'փափագէի Ձեր սիրելոխթեան ճամուկ մի գրել հանդերձ ողջունիւն սիրոյս, սակայն պատեհոխթիւն չէր յաջողեր։ Այս անգամ բարեպատեհ առիթ եղաւ մեզ սոյն ճամուկիս մեր սրտի իղձը առնիրել Ձեր ազգասիրոխթեան հանդերձ շնորհակալոխթեամբ։ Այո Ձեր յիշատակ քաղցր է ինձ եւ միշտ յիշել պարտական եմ Ձեր սէրն ու մեծարանք, զոր ամենեցուն մեզ առնիրէիք մեզ։

Արժանի կ'ընանք Ձեզ ասիկա Ազգասիրաց շնորհիւ կ'որոգոխի օրըստօրէ եւ 'ի ձեռնէ մեր մեր քաջալերոխթիւն եւ ապաստ յանդգնով, վստահոխթեամբ կ'թեռնիկոխէ իւր Ազգօգուտ սկզբնանց մէջ պաշտպան ունենով միմիայն Աստուածմ եւ ճշմարտոխթիւն, եւ միշտ Ձեզ ասիկա Ազգասէրներ ու Ազգասիրոխթիւն։ Այս երկոն հաստատուն վճռելոն վերայ դրած է Արժիր իւր բոյնը, եւ կաշխատի հոգալոյն չափ երկայնամիտ լինելով եւ համբերելով ամենայն տեսակ անդոխթեանց եւ վշտաց մինչեւ Հայաստանի Աստուածմ իւր այցելոխթեան աչքը կարճատե մեզ վերայ, եւ օր ըսիտի գայ, որ իմ ապրուստիս հատուցանէ մեր Հարց Աստուածմ յոյսախոխթիւն եւ յոգուտ առնիասարակ սիրելի Ազգայնոցս։

Մեր Վարուգայ Ժառանգաւորաց աշակերտներեն երկոքր՝ Սրոսանձտեանց Գարեգին որ արդեն ժանօթ Ձեզ, եւ Մ. Մխրայէլ Աղբսեան Կ. Պոլսեցին յոյժ արկեցինք այդ կողմեր, որպէսզի Արժանի տեսրնաներ կարգի դնեն. յառնիկ Ձեր շնորհաց եւ խնամոց յանձն կառնեմ, որ բնդունիք զրանք եւ 'ի գիտս Ազգասիրոխթեան օժանդակիք նոցա, որ շուտով գործը վճռելեն եւ վերադառնան։—

Մկրտիչ Վրդպտ Խրիմեան

## Գ.

## ԱՆԴՐԱՆԻԿ ՇՐՋԱՆԱԻԱՐՏՆԵՐ

Խրիմեանը Վարագ հասնելէ յետոյ ոչ միայն նուիրուեցաւ դպրոցի և թերթի գործերուն, այլև զարկ տուաւ վանքի գիւղատնտեսական աշխատանքներուն։ «Ժառանգաւորաց Վարժարան»ը իւր կոչման արժանի բարձրութեան հասած էր արդէն։ «Արծուի Վաստուրականի»ի հրատարակութիւնն ալ, հակառակ արտաքին և ներքին դժուար պայմաններուն՝ կանոնաւոր կերպով կը շարունակուէր։

Վարագայ և Խրիմեանի անուան ու գործին շուրջ բովանդակ Հայութեան մէջ յառաջացեր էին հիացումի և հմայքի անսահման զգացումներ։ Վասպուրականի մէկ խաղաղ ու լռիկ լեռնահովտի այս մենաստանը—Վարագ–յաչս Հայութեան նկատուած էր ոչ միայն իբրև պատմական ու նուիրական հազարամեայ սրբավայր մը, նաև իբր մտաւոր ու կրթական հաւաքարան մը, որուն խոնարհ յարկին տակ տպագրական մամուլը կը ճռնչէր, իսկ Հայ պատանիները հայեցի ուսում և կրթութիւն կը ստանային, ուխտելով նուիրուել ազգին ու հայրենիքին։ Հայկական ազգային ու մտաւոր վերածնունդի պատմութեան մէջ, Վարագայ դպրոցն ու մամուլը՝ Խրիմեանի անձով ու գործով կ'արձանանան։

Վասպուրականի Արծիւը երբ Բիւզանդիոնէն կը սլանար դէպի Վան ու կը թառէր Վարագայ երկգագաթ լերանց բարձունքներուն վրայ, այն ատեն—1856—Վարագը դարերու մոռացութեան և խաւարի ու տգիտութեան մէջ թաղուած էր։ Սակայն երբ Հայր Արծիւը ազգի, հայրենիքի և ուսման սիրով զինուած ու խանդավառուած կը թափահարէր իւր թևերը, Վարագը կը դառնար այն հոյակապ Արծուաբոյնը, ուրկից տարիներու ընթացքին, Վարագայ Արծուաձագերը թև առնելով կը սլանային դէպի Հայ եկեղեցական, ազգային, գրական և յեղափոխական ասպարէզները։

Հայր Արծիւ Խրիմեանի աշակերտ Արծուաձագերը անհունապէս երջանիկ էին անշուշտ, երբ 1863 թուի Մայիսին Վարագայ մէջ կը կատարուէր «Ժառանգաւորաց Վարժարան»ի ուսումնական տարե-

վերջի հանդէսը և 12 երիտասարդներ բախտ կ'ունենային աճդռանիկ շրջանաւարտները կոչելու։

Այդ դպրոցական հանդէսը պաշտօնական բնոյթ կը կրէր։ Վանէն Վարագ հրաւիրուած էին՝ Հայոց Առաջնորդ Իգնատիոս Եպիսկոպոս, քահանաներ, «Օնիքիլէր»ի անդամներ (Հայ «իշխաններ») աշակերտաց ծնողներ և այլն։ Դպրոցին Վերատեսուչ Խրիմեանը հանդէսին բացումը կը կատարէր։ Շրջանաւարտները գրաւոր և բերանացի ճառեր կ'արտասանէին՝ նիւթ ունենալով կրօն, բարոյականութիւն, եկեղեցին, ազգ և հայրենիքը։

Հայր Արծիւը սրտագին ողջոյն կուտար իւր ձագերուն, որոնք Արծուաբոյն Վարագայ մէջ 6-7 տարի ուսում և դաստիարակութիւն ստացան՝ ազգին և հայրենիքին ծառայելու սրբազան ուխտով։ Խրիմեանը արցունքն աչքերուն՝ կը համբուրէր ճակատները իւր այս անդրանիկ շրջանաւարտներուն՝ իւրաքանչիւրին տալով աւարտական վկայականը։ Շրջանաւարտներուն կողմէ հրաժեշտի ճառը վերապահուած էր Դարեգին Սրուանձտեանին, որուն քաղցրազրուցիկ և հայրենախօս լեզուն՝ թարգման կը հանդիսանար իւր ընկերներու զգացումներուն։

Եւ այսպէս ահա, 1863 թուի գարնան, Վարագայ «Ժառանգաւորաց Վարժարան»ը Հայութեան կ'ընծայէր իւր անդրանիկ շրջանաւարտները*) — Դարեգին Սրուանձտեան, Արսէն Թոխմախեան, Հրաչեայ Օնիկեան, Եղիշէ Ծէր Մեսրովբեան, Յակովբ Աղուանեան, Մեսրովբ Մոկացեան, Ներսէհ Ծէր Յովսէփեան և ուրիշ հինգ երիտասարդներ (որոնց մէջ կային երկու Իգդիրցիներ)։

Այս շրջանաւարտ երիտասարդները ազգանուէր ուխտով մը իրենց անձը կը նուիրէին հայրենիքի ծառայութեան և մատաղ սերունդի դաստիարակութեան։ Անոնցմէ շատերը կուսակրօն հոգեւորականներ դարձան և միշտ ջանացին ընթանալ այն շաւիղով, ուրկէ գացած էր ու կ'երթար իրենց Մեծ Ուսուցիչ — Խրիմեանը, որ Մեսրովբ Մաշտոցի նման աշակերտներ կը հասցնէր ժողովրդի մտաւոր դաստիարակութեան գործ տալու համար։ Դժնդակ պայ-

*) Խրիմեանի գործակիցներու և «Ժառանգաւորաց Վարժարան»ի աշակերտներու մասին հաւելեալ տեղեկութիւններ պիտի տանք յաջորդ գլուխներու մէջ։

մաններու մէջ ստեղծուած «Ժառանգաւորաց Վարժարան»ը, այս անդրանիկ շրջանաւարտները ազգին ընձայելէ յետոյ, իւր անուան շուրջ նոր յոյսեր և նոր թռիչքներ կը ստեղծէր։

Գ.

## „ՈՂՋՈՅՆ ՀԱՅՐԵՆԵԱՑ“

«Արծուի Վասպուրական» թերթի ճակատը, 1860-ի Թիւ 1-էն սկսեալ, զարդարուած էր հետեւեալ պատկերով.

Վանի չքնաղ հորիզոնն է մեր աչքին առջեւ։ Արեւելքը՝ Վարագայ բարձրադիր լեռներն են, որոնց լանջին վրայ, հովտի մը մէջ կը հանգչի Արծուաբոյն Վարագայ վանքը։ Լեռան բարձրունքներէն արեւն է ծագեր—ուսման և դիտութեան լոյսն է այդ, որ պատեր է խաւարի և տգիտութեան արգանդը։ Լեռան ստորոտէն դէպի արեւմուտք կը տարածուի Վան քաղաքը՝ իւր Այգեստանով ու բերդով, իսկ քիչ մ'անդին Վանի ծովն է, Սիփանայ սարը կողքին բազմած՝ Վարագայ սարին ղէմ-դիմաց։ Վանաշխարհի հորիզոնին մէջ, ուզած և հպարտ Վասպուրականի Արծիւը՝ «Թողուցեալ հայրենասէր թեւօք յԱրծրունի մինաստանէն Վարագայ» Հայաստանի ամէն կողմեր կը սլանայ, կտուցին բռնած թերթիկ մը թուղթ՝ վրան գրուած երկու բառ.

—«Ողջոյն Հայրենեաց...»։

Լսեցէք, Վասպուրականի Արծիւն է խօսողը.

—«Ես Արծիւ, ցանկացօղ կենաց և բարեաց իմ Հայաստանին. նորա լերանց վերայ խոյացայ, նորա դաշտն ու հովիտը ողջունեցի, նորա գեղն ու քաղաք. շէնն ու աւերակ ես տեսայ, իջեւանեցի և անցայ. շատ տեղեր լացի և երբեմն ուրախացայ, տեսածներս ամէն պատգամ յօրինեցի և առ ձեզ, ով իմ պատուական և հայրենասէր ընթերցօղք, ձեզ նուէր բերի ձօնեցի։

«Իմ շրջան այժմ և յաւէտ Հայրենեաց սահմանի մէջն է. ես Հայաստանի սիրահար հաւ մի եմ, իմ ձայն ու եղանակ Հայաստանի և Հայրենասիրի երգ է, թէ լամ այդ անունը կ'յիշեմ, թէ գեղգեղեմ այդ անունը կ'հնչեմ. վերջապէս դա իմ սէրն է, իմ տէրն է, ես նորա Անձնանուէրը գերին եմ.

«Դուք, որդիք Հայաստանի, ուր որ հանդիպիցաք ձեր Արծուոյն, սիրեցիք զինքը. ողջագուրիցիք զրկեցինք զինքը. թէ տրտում էր մխիթարեցիք, թէ տկար՝ զօրացուցիք՝ թէ անկեալ՝ ձեռքէն բռնեցիք և կանգնեցուցիք. վերջապէս չթողիք զինքը. և նա իր բոլոր կենաց մէջ պարտաւոր է ձեզ, ով հայրենասէր և ազնիւ հոգիք։

«Եատ ներողութիւն և վստահութիւն վայելած եմ ձեզմէ. չափազանց ուրախութիւն և համակրութիւն ընդունած եմ ձեր ազգասիրութենէն։ Ես շնորհապարտ եմ ձեր սիրոյն, ձեր գթութեան, ձեր շնորհաց և օգնականութեան։ Ես կարող չէի, դուք զիս բաջալերեցիք, ես իմ ճանապարհի մէջ թափառած կ՚անգնէի, դուք կանչեցիք ու քաշեցիք զիս յառաջ. արդելքներու և դժուարութեանց խումբերէն թռուցիք. ես տակաւին մանուկ և անզօր էի, բայց ձեր յոյս և խրախոյս վառեց իմ հոգին. իմ հոգին որ և վառուած էր սիրով Հային և Հայաստանին. շարժեցի խներս, որչափ և կարող էի, թռայ ու հասայ, ուր որ Հայ տեսայ. և ամէնքն էլ ընդունեցին իմ բարեւ, իմ կտուցից կախ արած ու բերած Հայրենեաց Ողջոյն եւ շատ բարեւ։

«Վարագայ սար, Վարագայ վանք, այս է իմ հանգիստ և իմ խանձարրանք. ես սիրեցի այդ իմ Հայրենի վայրերը, աղբատ ու թշուառ վայրեր։—Ա՛հ այժմ և վաղուց ամէն Հայու հայրենիք այդպէս է եղեր, այնպէս շատ տեղեր զարձեր են աւեր»։

«Ողջո՛յն Հայրենեաց...» կը բացականչէր Խրիմեան — Հայր Ազգիւր, որ կը սլանար Մայր Հայրենիքի ամէն կողմեր, Հայկազեան Ազատագրութեան ահազանգը կը հնչեցնէր և բմբոստութեան հրաւէր կը կարդար հայորդիներուն, որոնք կը տառապէին արիւնոտ ու բռնակալ լուծին տակ։ Ճաճիկի լուծն էր այդ, որուն կը միանային նաև քրդական վայրագութիւններն ու անլուր արհաւիրքները։ Ճաճկահայաստանը զարձած էր տառապանքի և սարսափի ահաւոր երկիր մը, ուր Հայութիւնը կը խոշտանգուէր անխնայ։ Մայր Երկիրը այս վիճակին ենթակայ էր, իսկ կեդրոնի—Գ.Պոլսոյ և Զմիւռնիոյ—մէջ ապրող ազգային մարմիններն ու զեկավար դէմքերը՝ Պատրիարքարանէն սկսած մինչև բարձր զերդաստաններ, ամիրաները և խմբագիրները՝ մոռացութեան մատներ էին գաւառի հոծ Հայութեան քաղաքական և ազգային այս տառապանքը, որուն հան-

դէպ կեդրոնը «վեճերոս, մեղկացուցիչ լուրեաց մէջ կը գտնուէր»։ Եւ այս տեսիլներն էր ահա— 1860ական թուականներուն սկիզբը— երբ՝

«Մի ձայն միայն հնչում էր՝ բարձր ու խրխոտ, հնչում էր մարդկային արժանապատուութեան լիակատար գիտակցութեամբ, առանց բնաւ սողալու, շոյելու, երկրպագելու, առանց բնաւ վարագուրելու Մեծ Համրի, ժողովրդի արիւնոտ վէրքերը, հայկական արիւնաներկ ու անիծակուռ դժոխքը...։ Ձայնը հնչում էր Վասպուրականից, Վարագայ բարձրունքներից, ուր թառել էր Արծիւը գուտտենբերգեան մեքենան շալակած և ուսկից նա թափահարում էր անդադար իր հզօր թևերը, արձակում էր իր սուր ճիչը դէպի հայոց աշխարհի մշուշապատ օրիզոնները, լալիս էր իր հարազատ ժողովրդի հետ, մարմնացնում էր նրա տանջանքն ու նահատակութիւնը և շեփորում նրա յուսահատ բողոքը խաւարի և բռնութեան համատարած ուժերի դէմ։

«Խրիմեանն էր։ Այն ժամանակւայ հայութեան խիղճը, նրա իղձերի սգաւոր և ցաւատանջ թարգմանը։ Վասպուրականի Արծիւը գուցէ միակ յեղափոխական իրողութիւնն էր հայկական օրիզոններում, միակ օրգանը հայրենիքի մէջ, որ նրա անհամար փլատակները ողբալով հանդերձ, կուի, ըմբոստացման հրաւէր էր կարդում նոր սերունդին։ Ողբն ու բողոքը հիւսւում էին մի ցաւոտ ու միալար աղաղակի մէջ, որ բարձրանում էր Վարագի անշուք տպարանից, գնում էր հեռուն, մինչև Պօլիս, Կովկաս, Պարսկաստան, խօսում էր ամենուրեք բուն երկրի, ժողովրդի ցաւերից, տանում էր ամենուրեք հայրենեաց սարերի ու հովիտների բուրմունքը, լցնում էր սրտերը հայրենասիրական մի ջերմ, սրբազան խանդավառութեամբ... հաստատուած հայրենի հողի վրայ, հարազատ ցեղի ծոցում, նրա հակայ ողբերգութեան անմիջապէս ձայնակից։ Գուցէ նուազ բանաստեղծ, քան Աւարայրի երգիչը (Հայր Ալիշան), բայց աւելի ինքնատիպ և խորունկ, աւելի հզօր մտայնութեամբ ու սլացքով, միանգամայն վարպետ գրչի և խօսքի, միանգամայն գրող, խօսող և գործող...։ Մի վարպետ՝ ինքնածին, բնատուր, եզակի՝ առանց քիչշատ կանոնաւոր կրթութեան, որ սակայն զարմացնում էր ունկնդրին իր հրահանգիչ խօսքով ու ներհուն իմաստութեամբ, մի հանճարոյ, անզուտ մետաղ, որ հնչում էր զմայլելի ղողանջներով, մի

տիպար ճշմարիտ առաքեալի, որի վսեմ նայուածքի մէջ հարազատ ժողովրդի լեռնացած վիշտն էր ցոլում, որի պարզ ու պարթև կերպարանքը „անձնաւորումն էր Հայաստանի բարձրագագաթ լեռնային զանգուածների, նրա յստակ ու լայնարձակ հօրիզոնների ու ջրերի“.

«Առաջին արեղան էր, որ դարձաւ պուբլիցիստ, հրապարակախօս, առաջին վարդապետն էր, որ մերժեց վանական ամուլ կեանքը և նուիրուեց իր բովանդակ էութեամբ— աշխատաւոր ժողովրդին։ Հայկական դէմօկրատիզմը— ռամկավարական հոսանքը— չի ունեցել թիւրեայ աւելի պերճ և անաղարտ ներկայացուցիչ, աւելի հզօր և համոզուած ռահվիրայ, քան այդ „մոլորուած“ արեղան։ Յայտնաւուրքը, Շարականը դուրս մնացին նրա առօրեայ մտահոգութիւններից և եկեղեցու բեմից հնչեց հայրենասիրական քարոզը— ջերմ, ազդու, խրախուսիչ—հնչեցին Հայկի ու Արամի անունները, նոյն բեմից աղօթքի հետ տեղացին ազատախօս վարդապետի շանթերը վաշխառուների կաշառակեր հոգևորականների և աշխատաւոր ժողովրդի ամեն տեսակ ցեցերի դէմ. նոյն բեմից խարանուեց կեղծիքը, տգիտութիւնը, չատագովուեց ուսումը, ժողովրդական դպրոցն ու մշակոյթը, գիտութեան և քաղաքակրթութեան վերջին խօսքը, որ հայրենասէրը արեղան իւրացրել էր ընթերցանութեամբ, սովորել էր այն ժամանակւայ հայ աղբատիկ գրականութիւնից.

«Ինքնուսի (autodidacte) այդ հազւագիւտ տիպարը շտապ-շտապ ամբարում էր իր մտաւոր պաշարը, արագօրէն զարգանում ու առաջադիմում, շնորհիւ իր դիտելու և ըմբռնելու արտասովոր կարողութեան, շնորհիւ մանաւանդ իր երկար ու հեռաւոր պտոյտներին—Թիւրքիա, Կովկաս, Պարսկաստան։ Ամեն տեղ ուշի ուշով դիտում է, ուսումնասիրում հայ կեանքն ու հինաւուրց աւերակները, ամեն տեղ իր դիւթիչ քարոզներով, իր անպաճոյճ, բիբլիական բարբառով արծարծում էր հայրենասիրական կրակը, բարձրացնում էր ընկճւած սրտերը և հրաւիրում բոլորին դէպի գործ, դէպի անխոչ հայրենաշէն աշխատանք.

«Գրիչը— ոչ նուազ զօրաւոր քան խօսքը. Որքան ոյժ, գեղեցկութիւն ու կրկնակ կայ այդ յուռհատ, պաղատագին կոչերի, այդ ողբերի, երեմիականների մէջ, որոնցով լի է խրիմեանական գրականութիւնը՝ սկսած իր անգրանիկ „Հրաւիրակ Արարատեան“ից, ուր առաջին անգամ թռթռում է հայրենասէրը բանաստեղծի քնարը,

մինչև „Արծուի Վասպուրական"ի բարձրաթռիչ, հայրենաշունչ էջերը, ուր փուռում է ձեր աչքի առջև լայնածաւալ Հայաստանը իր սրտայոյզ տեսարաններով, իր տխուր ու վեհապանծ վայտակներով, Մհսրոպների, Վարդանների դեռ խօսուն տուբերներով.... և այդ հսկայ ու լքաւեր գալեքէյի մէջ տեսնում էք—աւերակների վրայ թառած—Խրիմեանի տիտանեան կերպարանքը, որ ողբում է և յորդորում ու խրախուսում անդադար, որ կոչում է թափառական, օտարացող հայութիւնը „դէպի երկիր, դէպի երկիր"...*)»

Դէպի հայրենիք... «Ողջո՜յն Հայրենեաց...» — բարձր ու խրոխտ կը հնչէր Խրիմեանի ձայնը սթափցնելով թմրած ու լքուած սիրտերը.

Մինչ «Արծուի Վասպուրական»ը վարագայ բարձունքներէն իւր սրտագին և յուսալից ողջոյնը կուտար Հայրենեաց Հայոց, երբ Զէյթունի ազատատենչ լեռնորդիները 1862-ի Օգոստոսի 2-ին ըմբոստութեան դրօշը կը պարզէին տաճկական արիւնոտ եաթաղանին դէմ. Զէյթունի ազատագրական պայքարի արձագանգները Տաւրոսեան լեռնաշղթաները թնդացնելէ յետոյ կը հասնէին Հայ Աշխարհի ամէն կողմեր և դարաւոր ստրկութեան մէջ մրափող, զարկուած ու զրկուած Հայութեան սիրտերը կը հրահրէին ազատ կեանքի և նոր օրերու յոյսերով.

Զէյթունի ըմբոստութեան օրերուն, վարագայ բարձրունքներէն «Արծուի Վասպուրական»ը կը բացականչէր.

«Էն դեհ մի կուիւ կայ, կը լսէք ահաւոր ձայներ, ձայն Արևմուտքից, ձայն Հիւսիսից... մի՛, մի սարսափինք, նորա մեզ քաջութիւն թող տան... մենք հաւ չենք, մենք էլ մարդ ու մարդու զաւակ ենք։

«Ազգի համար պիտի աշխատիս, էլ ուրեմն դու քեզ համար չես, քո ծնողաց համար չես.... Ազգին ես... Կրնթանաս արիաբար, հսկայ հսկայ, առաջուցդ դժուարինք, վիշտ ու նախատինքները կոխելով։ ...Զարկ ու զարկուիր, վեր կանգնիր, մեռնիս էլ կը յաղթես... Նահատակ... Ի՞նչ հոգեղէն անուն, ինչ երկնային կոչում... Անուն օրով ազգեր կենդանացած են....

*) Մկրտիչ Վարանդեան—«Հայկական Շարժման Նախապատմութիւն». Հատոր Առաջին. Թրնեվ. 1912. էջ՝ 292—296։ (Հրատ. Հ. Բ. Դ—եան)։

«Աշխատինք ուրեմն... յուսահատութիւն միայն չունենանք... Հայութիւնը կարծես գերուԹեան վիճակեալ մի անօթ է. Բայց ինչի՞ կուլաս դորա վերայ. չ'ողբանք, չը յուսահատինք... Արտասուք սրբենք և ոչ Թէ արտասուք Թափենք, ձեռք ու ոտք շարժենք և ոչ Թալկանանք մեռելի պէս վեր ինկնինք. Լացողները լացին ու անցան գացին. հիներն էին նոքա. մեք նորուԹեամբ շարժինք...

«Այլև դու, կորովիդ հայկական երիտասարդութիւն, ընդ ոտս ի վեր կը խոյանաս ոյանաս, թեւերուդ վրայ ազատականութիւն բեւեռած, ճանապարհը դա է.... Բայց մէկ կողմից խառնակ է օդ, մրրկոտ է երկինք և միւս կողմից չուան և լարը ձգած են որոգայթ ոտիդդ. ինչ, ուրեմն, դատբիր կամէի ասել քեզ, ո՛չ, ո՛չ, դու ընթացիր, բայց ծանր ծանր, ինչպէս արի, նոյնպէս զգոյշ...»*), «Արթնցէք, Հայկայ որդիք, արթնցէք...».

Արդեօք այս տողերը Զէյթունի ըմբոստութեան ազդեցութեան տակ գրուած էին, յիշուած «ահաւոր ձայներ»ը Զէյթունէն կուգային, թէ՝ Արևմուտքէն ու Հիւսիսէն. Սակայն փաստն այն էր, որ «Արծուի Վասպուրականը» պարզ ու համարձակ կերպով Հայկական ըմբոստութեան և ազատագրութեան հրաւէր կը կարդար համայն Հայութեան.

«...Խրիմեանի Մուսան էր, որ կոչում էր բարձրաձայն սթափեցուցիչ ղօղանջներով հէգ ու աւեր Հայաստանում, որ բախում էր մոլեգնօրէն ազատութեան քրմի դուռը, որ ուզում էր բողոքի տարերային յորձանքի մէջ հալեցնել դարաւոր շղթաները, տիտանեան մի հարուածով ջախջախել բռնապետութեան հիդրան. Խրիմեանի Մուսան էր—ցաւոտ, անմխիթար, բայց և խիզախ, անվեհեր—որ եկել էր բուն իսկ հայրենիքի մէջ, նրա խրխոտ ու ագաւոր բարձունքներում ծանուցանելու մի վսեմ գաղափար,—հայկական ապրուստամբութեան գաղափարը—որ այնուհետև պիտի աճէր, ուռճանար հետզհետէ սուբ'եկտիվ մտքի և օբ'եկտիվ իրականութեան կրկնակի մղումով, պիտի երթար կամաց-կամաց նւաճելու սրտերն ու ուղեղները, պաշարելու „Ձայն տուր ով ծովակ"ի խորհրդաւոր հեղինակին, պիտի

*) Դարեգին Սրուանձտեան—«Արծուի Վասպուրական». Ձրջան Հինգերորդ 1862—63. Թիւ՝ 1։

գերէը նրա ամբողջ էութիւնը, արտադրելով մի շարք հոյաշունչ հատորներ, պիտի ստեղծէը պարզ, անյայտ փայլուկցի երիտասարդից—Րաֆֆիից... որպէս զի նրա միջոցով, նրա հրեղէն քուրայի մէջ բոցավառէր սերունդներին և ծնունդ տար յետագայում այն առնական ու յուզիչ վիպերգութեան, կորիճների այն ցասկոտ ու վրիժառու լէգէոններին, որ քսան տարի շարունակ թնդացրին նոյն հարազատ լեռները դիւցազնական մարտակոչով—„Մահ կամ Ազատութիւն“։

«Նա պիտի պայթէը—այդ եզակի ու եղերական դիւցազնամարտը—„խառնակ օդում և մրրկոտ երկնքի տակ“, բայց պիտի գար „Արծուի Վասպուրական“ի մարգարէական արտայայտութեամբ, բարոյապէս վերածնելու անարգւած, ոտնահարւած համայնքը, որպեսզի նրա ճակատից ստրկութեան մուրը և արցունքոտ, արիւնաներկ հողի վրայ „բուսցնելու ՆՈՐ ՀԱՑՈՒԹԵԱՆ ազնուագոյն բողբոջները...»*)։

Այո՛, «Արծուի Վասպուրական»ն էր, որ ծնունդ տուաւ ու բուսցուց «ՆՈՐ ՀԱՑՈՒԹԵԱՆ ազնուագոյն բողբոջները»—Հայկական ազատագրութեան անձնուէր գործիչները և ռազմունակ ու հոյակապ հերոսները.... ✗

## Ե.

## ՈՂՋՈՅՆ ԱՇԽԱՐՀԱԲԱՐԻՆ

Գրաբար-աշխարհաբարի պայքարը, ԺԹ-րդ դարի Հայ գրական ու մտաւոր վերածնունդի պատմութեան ուշագրաւ և հետաքրքիր երեւոյթներէն մէկն է։

Ամբողջ Հայ հոգեւորականութիւն, Մխիթարեան զոյգ Միաբանութիւններ և աւանդամոլ ու պահպանողական հոսանքները ձեռք ձեռքի տուած, կրակ ու բոց կտրած, կատաղի և յուսահատ պայքար մը կը մղէին ընդդէմ աշխարհաբարի պաշտպան և լուսամիտ

*) Միքայէլ Վարանդեան—«Հայկական Շարժման Նախապատմութիւն». Հատոր Առաջին· Թիֆլիս· 1912. էջ՝ 313—314։

երիտասարդութեան, որուն յաղթանակը— աշխարհաբարի ընդհանրացումն ու զարգացումը— ի վերջոյ իրականութիւն դարձաւ։

Պարտուածները, թէև կամաց-կամաց, ընդունեցին աշխարհաբարի կենսական անհրաժեշտութիւնը, սակայն բոլորովին ձեռնթափ չ'եղան գրաբարի ազդեցութենէն և ցաւով ու տհաճութեամբ թողին Հայոց գրաբարը՝ «վսեմական գրոց լեզուն»։

Հայ հանճարեղ սիրտը— հայրենախօս Հայր Ալիշան— իւր «Ճուշիկը Հայրենեաց Հայոց»ի նախաբանին մէջ՝ (Վենետիկ. Ս. Ղազար 1866. Նախաբան. էջ՝ 19) ցաւ ի սրտի այս տողերը կը գրէ.

«...Ինձի, իմ զգացմանս՝ արդարև այս աշխարհիկ լեզուս՝ շատ պստիկ, շատ ցած, շատ անբաւական եկած է. ըսեմ նաև թէև շատ օտարացեալ, այլազգացեալ 'ի բնիկ հայկական ոճոյ, որ ամենէն աւելի հաճոյն էր ինձի. այնպէս կերևի ինձի՝ թէ մեծ կրակ մը փոտած քուրջերով ծրարել կ'ուզեմ, երբ այն իմ հին և սրբազան հայրենեացս հրեղէն յիշատակները՝ այսպիսի խեղճուկ լեզուով կաւանդեմ, թողնելով իր վսեմական գրոց լեզուն»։

Եւ իսկապէս 1860-ական թուերուն Հայ մամուլին մէջ կային թերթեր, որոնց աշխարհաբարը «օտարացեալ, այլազգացեալ» էր։

Թիֆլիսի մէջ 1866—67-ին Գէորգ Տէր Աղեքսանդրեանի խմբագրութեամբ լոյս տեսնող «Վաճառական» շաբաթաթերթը հայերէն, ռուսերէն և թուրքերէն բառերու խառնուրդով մը կը հրատարակէր երկու „աշխարհաբար" յայտարարութիւններ.

1) «Գաւուդարսովեննիխ իմուշչեստվ Դեպարտամենտում նշանակած է էս մարտի 30-ին Թէլաւի ուեզդի Օժիօ և Խօրխելի անուանով գիւղերի մէջը գտնված երկու եկեղեցական բաղթ իջարով տալու տորգը»։

2) «Կավկազսկի Վաեննի Օկրուգի Վոյեննո Մեդիցինսկի ուպրավլենիումը նշանակած է ապրելի 4-ին Թիֆլիզի Զապասնի ափտեկի մատերիալների, պրիպասների և կաւէ ամանների հասցընելու տորգը»։

Խ. Աբովեանի յայտնագործած Արարատեան գեղջուկ հայարարբառէն ծնունդ առած էր ահա վերոյիշեալ «աշխարհաբար»ը՝ Արևելահայոց մէջ, իսկ «Արծուի Վասպուրականի պարզ ու անպաճոյճ

աշխարհաբարի կողքին, Կ. Պոլսոյ Հայ Թերթերու մէջ, կը բազմէր հաներէն ու տաճկերէն բառերով կազմուած այս «աշխարհաբար»ը.

«Ինք էվէլին ասեմ քի Քրիստոս եկաւ յաշխարք՝ լնուլ ու թէքմիլ անել զօրէնս. վէ շիւպհէսիզ լցոյց. ինչպէս զԹլպատութիւնն, զպատիւ տօնից և Թիւրլիւ Թիւրլիւ պայրամներաց և զառնագենութեան. Փուշն և այրքան որ քաղեն ի Թառլայէն, պէտք էր որ Թողուն զքեօքն ի հողի մէջն, որ կինէ բուսանի, եօխսա ի քեօքէն ճանանն, պէլլի մի տէյիլ։ Իշտէ մարդիք զայս ուահմքեանի Աստուծոյ պատէքն խափաներ էին. անոր համար եկաւ յառաջին Թաբիխն զարձուց։ Ամմա ասեմ քի՝ մէկ պարտք մի երկու տեղ կու տրվի մի, եօխսայ հայրն էտայ անելուն յետև որդիքն այլ կինէ պիտի որ տան մի տէյնի տիրոջն, հաշա»*)։

Ճիշտ այս շրջանին—1860-ական Թուերուն—«Արծուի Վասպուրականը» կը յարուցէր գրաբար-աշխարհաբարի հարցը և ազատ ու անվախ կերպով կը պաշտպանէր աշխարհաբարի գործածութեան անհրաժեշտութիւնը։ Խրիմեանի տաղանդաւոր աշակերտ Գաբրիէլ Սրուանձտեանը «Հանդէս հակառակութեանց հայոց գրաբար եւ աշխարհաբար լեզուաց» վերնագրով վիճաբանական յօդուած մը կը գրէր, որմէ կը քաղեմ այս մասերը.

«Գրաբար.—Ծո՛ւ աշխարհաբար, մի անգամ մտածէ՝ չափիդ ու հասակիդ վերայ։ Ահ ինչ ասեմ, բարկանամ տղայ ես, զարհեմ որդիս ես. սպաննե՛մ իմս ես, բայց կը խնայեմ, սրտիս մէջ ոչ գուէ Թողիր ոչ սէր, յանդունդն ես յանդուգն, ինձմէ ծնար, ու իմ կենաց և իրաւանց յափշտակող եղար։

«Աշխարհաբար.—Տակաւին պիտի երկարի՞ս խօսքդ. հնացար անցար։ Պարտ է մեծաց մեղմանալ և փորուննց աճիլ։ Այժմեան կենանիք նորութիւն կը սիրեն. Հին ես պէտք է Թաղուիս։ Գլորուեցաւ ան անիւ, Թէպէտ հայը բայց դու արդէն ընկար՝ երբոր գիս ծնար։

«Գրաբար.—Հնացայ ու անցայ, հը՛յ, ինչ կ բարբանջես, անընորհք, գիտես ո՞վ եմ ես, աւելր Մեսրովբայ ոսկորներ ողջ կքաշեմ դուրս կ հանեմ շիրմից, Թող վկայեն Թէ Աստուած ինչ սքան-

*) Հ. Արսէն Այտընեանն իւր «Քննական Քերականութիւն Աշխարհաբարի Համ Արդի հայերէն լեզուի». (Վիէննա. Մխիթարեան Տպարան. 1866.) էջ՝ 250-ի տակ մէջ բերած է յիշեալ «աշխարհաբար»ը։

չելի հրաշքով շինեց ու շնորհեց զիս Հայաստանին, իմ աշխարհին։

«Աշխարհաբար.—Աստուած հոգիդ լուսաւորէ, իրաւ քո սքանչելիք և արած բարիք չեմ ուրանար ես, քո դարը կ յարգէ զքեզ։ Գնա մարթ եկեղեցին, դունից դուրս մ'էլնեը, այն բաւական համարէ, քո իշխանութիւն ու սահմանդ եկեղեցին է միայն։

«Գրաբար.—Կարկտնած լուսաւորութիւն վրադ առաջ կ շրջես։ Ստամբօլու մէջ Կor ես, Կարնոյ մէջ Կը ես, Մշոյ մէջ Զիմա՞լ ես, Վանայ մէջ Voros-voros ես, Փոքը Հայոց մէջ առհասարակ տաճկականով խառն զանգուած մի ես Էճէնսիմէ սէօյլէյիմ, Ռուսաստանի մէջ Գնում-գալիս ես, Թիֆլիսի մէջ Վո՞ւնց իս, Ղարաբաղն երթաս Ադա յի՞նչ անելական ես, Ագուլիս Զօկ ես։ Դէ հպարտացիր քո ժամանակով, քո լուսաւորութիւնով։

«Աշխարհաբար.—Մ՚ը մէկ գործքերս ու փառքերս յիշեմ. միով բանիւ լուսաւորութիւն եմ ես։

«Այս վէճի ժամանակ ահա ԺԱՄԱՆԱԿԸ իւր հզօր փառքով ու յաղթական կառքով այս հանդէսի մէջը մտաւ երկու հակառակ զօրագլուխներ իւր առջև կանչեց և այս վճիռը կնքեց ու հաստատեց.—Գրաբարին միշտ յարգանք եւ անմահութիւն։ Աշխարհաբարին կեանք եւ ծառայդիմութիւն»*)։

Այսպէս ուրեմն, «Արծուի Վասպուրական»ը հետևելով ժամանակի պահանջներուն, կը հանդիսանար հզօր պաշտպան և առաջնորդ աշխարհաբարին, որուն կը մաղթէը «կեանք եւ ծառայդիմութիւն»։

Ողջո՜յն Աշխարհաբարին, որ գեղջուկ, շինական, հասարակ ժողովուրդի հոգիէն ու սիրտէն կուգար և անոր զգացումներուն հետ պարզ ու հարազատօրէն կը խօսէր։

Արծուաբոյն Վարագը ազգային, հայրենասիրական և ժողովրդական գեղջոյն ապրումներու այն հոյակապ շտեմարանն էր, որուն յարկին տակ ապրող ու գործող Հայր Արծին և իր Արծուիկները, ի գին ամէն տեսակ զոհողութիւններու՝ ՆՈՐ ՀԱՑՈՒԹԵԱՆ և Հայկական Ազատագրութեան գաղափարը կը դարբնէին Մայր Հայրենիքի և հարազատ ժողովրդի ծոցին մէջ։


---

*) «Արծուի Վասպուրական». Ջրջան Հինգերորդ. 1862—63. Թիւ՝ 3։

## „ԱՐԾՈՒԻ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ“Ի ԵՐԿԱԹԵԱՑ ՄԱՄՈՒԼՆ Ի ՎԱՆ-ՎԱՐԱԳ

*«...Տկարութիւն եւ փոքրկութիւն տպագրութեան աղքատիկ մամլոյս, որ չգիտէ քան զկարն իւր ազատ նկրտիլ եւ ծնանիլ աւելի ինչ»:*

*«Արծուի Վասպուրականի» «յամրաշարժ մամուլին թեւերը»:*



Ահա ձեր տպագրական այն երկաթեայ մամուլին, որ Խրիմեանը 1856-ի աշնան, Կ. Պոլսէն բերաւ Վան և հաստատեց Վարագայ վանքին մէջ: Այս տպագրական հասարակ մեքենան, ոչ միայն լոյս ընծայեց «Արծուի Վասպուրականը», այլև դպրոցական, թատերական, բանաստեղծական եւայլն գրքեր, որոնց հեղինակները Վարագայ «Ծառանդաւորաց Վարժարանի» աշակերտներն էին: Այս մամուլը ամբողջ 35 տարի (1857—1892) գործեց Վարագայ վանքին մէջ, մինչև որ 1882 ին տաճիկ կառավարութիւնը բռնագրաւեց ու տարաւ քաղաքը (Վան) հրատարակելով «Վան» («ՈՒԱ») անունով շաբաթաթերթ մը և պետական գործեր: Օսմանեան Սահմանադրութեան հռչակումէն յետոյ (1908 Յուլիս 10), կառավարութիւնը առիպուած եղաւ Վարագայ մամուլը վանքին յանձնել: Վան-Վասպուրականի 1915 Ապրիլեան հերոսամարտի օրերուն, Վարագը տաճիկներու ձեռքով մոխրակոյտ դարձաւ, որով այդ յիշատակելից և պատմական մամուլն ու տպարանը աւնչացան:

## Զ.

# ԽՐԻՄԵԱՆ՝ ԱՌԱՋՆՈՐԴ ՀԱՅՈՑ ՏԱՐՕՆՈՑ

ՏԱՐՕՆ... Մշու Աշխարհն է այդ, պատմական Հայաստանի մեծ և կեդրոնական նահանգներէն մէկը, որ կը տարածուի Վասպուրականի արևմտակողմը, ուր Վանի ծովափին բազմած Նեմրութայ սարի հազար-հազար ակնաղբիւրները «Մշու դաշտն ի վար կ'երթան» և կ'ոռոգեն Մայր Երկրի և Հայութեան սիրտերը։

Տարօն... Մամիկոնեաց Նախարարութեան ազնուական տոհմի այս նուիրական երկիրը, որուն օդն ու ջուրը, ծնունդ ու սնունդ տուին Վարդան, Վահան, Մուշեղ, Սամուէլ և դեռ քանի՛ քանի՛ մեծանուն Մամիկոնեաններու, որոնց հայրենասէր և ազգանուէր հոգիները դարձեր-դարձեր շարունակ վառ կը մնան և պիտի դառնան ազգի ու հայրենիքի գերագոյն սիրոյ ընդունարան և ներշնչման աղբիւրը։ Դիւցազն Սասունցի Դաւիթը Տարօնի փառքն է։

Տարօն... Հայոց Մատենագրութեան անմահանուն դէմքերու այս սրբազան ծննդավայրը, որուն Հացիկ գիւղին մէջ ծնաւ՝ «Վսեմական վարդապետ, վեհիմաստ վանական, խօսքի աղբիւր, բանի բարձունք» Մեսրոպ Մաշտոցը, որ 16 դարերէ ի վեր «Օշականի մէջ անմահօրէն մահացեալ կը մնայ»։ Ահա խոնարհ Խորնի գիւղը, ուր ծնաւ Մեծն Խերթող և Պատմահայր Մովսէս Խորենացին։ Առաքելոց վանքի կամարներուն տակ կը հանգչին նշխարները՝ Մեծ Վարժապետ և Հայրապետ Սահակ Պարթևի, Դաւիթ Անյաղթ Փիլիսոփայի, Մամբրէ Վերծանող մատենագրի և ուրիշներու, որոնք մէկմէկ լուսատու աստղեր են Հայոց Մատենագրութեան երկնակամարին վրայ։ Տարօնացի Մեսրոպը կերտեց՝ Ա, Բ, Գ, Դ, Ե, Զ....

Հայոց պատմութեան և մատենագրութեան մէջ, որքա՜ն շատ են անուննեը Տարօնածին դէմքերու, որոնք Հայ ռազմական ու գրական ասպարէզներու մէջ լուսաւոր հետքեր և պանծալի գործեր թողեր են։

Տարօնը նշանաւոր է նաև իւր Հայ հեթանոսական ու քրիստոնէական՝ աւանդական և իրական պատմութիւններով, որոնց իրը յուշարձան կը մնան բազմաթիւ սրբավայրեր՝ իրենց նուիրական

անցեալով։ Հայոց հին աստուածներու՝ Մայր Բարութեանց Ոսկեմայր Անահիտի, Գեղեցկութեան Դիցուհի Ոսկեծին Աստղիկի, և Հայոց Քաջութեան ու Ճաղճութեան աստուած Վահագնի՝ մեհեաններն ու բագինները կործանուեցան Ս. Գրիգոր Լուսաւորչի քրիստոնէական բարոզներու մուրճերով և անոնց փլատակներու վրայ բարձրացան՝ Մշու Սուլթան Մուրադատու Սուրբ Կարապետի, Առաքելոց և Ս. Յովհաննու վանքերը՝ «մենաստաններ, խաչն ի գմբէթ Աւետարան, սուրբ հաւատ»։

Տարօնի սքանչելի օդը, սառնորակ և առատ աղբիւրներն ու ջուրերը, բերրի հողը, Մեղրագետի և Արածանիի ափերը, Սասունի լեռնահովիտներն ու բարձունքները և վերջապէս Մշու Դաշտը, դարեր շարունակ կեանք տուած են Հայութեան, որ սուրբ սիրով կառչած մնաց Մայր Հայրենիքի այդ սքանչելի մասին, ուր սակայն ժամանակի և դէպքերու բերումով, տեղ գտած էին նաև քիւրտն ու տաճիկը, որոնց ճնշող լուծը և սուրն ու հուրը անպակաս եղան Մշու Աշխարհի վրայէն։ Քաղաքական արհաւիրքներու և հալածահարութեանց ենթակայ՝ Տարօնի Հայութիւնն ալ, միւս գաւառներու նման, անուշադրութեան մատնուած էր Կ. Պոլսոյ ազգային և ղեկավար մարմիններու կողմէ։

Այս քաղաքական ու տնտեսական ծանր պայմաններու մէջ ապրող Տարօն-Տուրուբերանի Հայութեան ազգային-եկեղեցական վիճակը շատ տխուր և անմխիթար էր ԺԹ.րդ դարի կէսերուն։ Հոգևորականներ, գիւղական վաշխառուներ, «իշխան» ու «մէլիք» կոչուած դէմքերը — յարգելի բացառութիւններէ զատ — դարձեր էր ժողովուրդի ինքնակոչ ղեկավարներ և անարգել ու սանձարձակ կերպով կը շահագործէին եկեղեցական և ազգային կալուածները։ Սուրբ Կարապետի վանքի ամբողջ դրամական մուտքերը տգէտ և խաւարամիտ հոգևորականները կ'իւրացնէին։ Տարօնի գեղջուկ Հայութիւնը կը խարխափէր մտաւոր խաւարի և տգիտութեան մէջ՝ մատնուած անտէրութեան և յուսահատութեան։ Այս դառն ու կործանիչ իրականութեան մէջ, Տարօնի Հայութիւնը ընդհանուր դժգոհութեամբ ծառացաւ հոգևոր և աշխարհիկ իշխողներու դէմ, հրապարակեց ու խարազանեց անոնց ազգադաւ գործերը և որոշեց ժողովրդական ձայնով և ընտրութեամբ հրաւիրել հոգևորական այնպիսի անձնա-

ւորութիւն մը, որ գեղջուկ և ճնշուած ժողովուրդի բարոյական և նիւթական շահերուն պաշտպան հանդիսանար, ազգասէր և ժողովրդանուէր առաջնորդ մ'ըլլար և շինական մանուկներու կրթութեան մասին մտածէր։ Եւ ահա հանրագրութիւններն ու ձայները կը կեդրոնանան «այն ժամանակուայ Հայութեան խիղճը» արձանացնող սիրուած անձի մը շուրջ — Մկրտիչ Վարդապետ Խրիմեանն էր այդ, որուն անուան և կատարած ազգօգուտ գործերու մասին ժողովրդական զրոյցներ կը հիւսուէին Մշու Դաշտին մէջ։

Տարօնի Հայութիւնը կը դիմէր Պատրիարքարանին և Ազգային ժողովին, յայտնելով, որ «Տարօնի հայ ազգաբնակչութիւնը փափագ է յայտնում իր մէջ տեսնելու այն համբաւաւոր վարդապետին, որի արևով երդվում էր Վասպուրականը»։ Պատրիարքարանն ու Ազգային ժողովը, ընդառաջելով ժողովուրդի ցանկութեան, սիրով կ'ընդունեն և կը հաստատեն այս ընտրութիւնը, վստահ ըլլալով, որ Խրիմեանը յաջողութեամբ պիտի բարեկարգէր Տարօնի եկեղեցական և ազգային գործերը, զարկ տալով նաև գեղջուկ մանուկներու կրթութեան և ժողովուրդի բարոյականի բարձրացման։ Խրիմեանի կամքն առնիլէ յետոյ, Պատրիարքարանը հանել կուտայ նաև Օսլիթանի հովարտակը, որով կառավարութիւնն ալ կը վաւերացնէր Խրիմեանի ընտրութիւնը՝ իբրև Առաջնորդ Տարօնի Հայոց, որոնց կողմէ, Մշեցի յարգուած մէկիք մը, յատուկ հրաւիրակի պաշտօնով, Կ.Պոլսէն ճամբայ կ'իյնար և 1862-ի Օգոստոս 3-ին կը հասնէր Վան-Վարագ և Պատրիարքարանի կոնդակը/ կը յանձնէր Խրիմեանին։ Այդ կոնդակը կը յայտնէր, որ Խրիմեանն ընտրուած է «Առաջնորդ Տարօնոյ և Վանահայր Գլակայ (Ս. Կարապետի) վանուց»՝ իրեն վերապահելով նաև Վարագայ վանքի վանահայրութիւնը։

«Այդ լուրը կայծակի արագութեամբ տարածվեց ամբողջ Վասպուրականում։ Խրիմեանի աշակերտները և բարեկամները չը գիտէին տխրեն, թէ ուրախանան։ Մի կողմից տխրեցին, որ պէտք է զրկվեն իրանց սիրած մարդուց, իսկ միւս կողմից ուրախ էին, որ նա ստանում էր մի մեծ պաշտօն և միջոց պիտի ունենայ ծառայելու աւագին վիճակի ժողովրդին»*)։

*) Խ. Մալումեան—Խրիմեան. էջ՝ 50։

Խրիմեանի համար դժուար էր բաժնուիլ Արծուաբոյն Վարագէն, իւր գործակիցներէն և աշխատակիցներէն, սակայն անդին ամբողջ ժողովուրդ մը—Տարօնի Հայութիւնը—սրտատրոփ անոր ժամանումին կը սպասէր։ Խրիմեանը գնաց քաղաք (Վան) եկեղեցիները մէջ հրաժեշտի քարոզները խօսեցաւ, Վանի Առաջնորդին, Քաղաքական Ժողովին, Կուսակալին, «Իշխաններ»ուն և իւր հարազատներուն «մնաք բարև» ըսաւ և Վարագ գալով՝ «Հայր Արծիւն սկսաւ անյապաղ իւր պատրաստութիւնը տեսնել։ Առաջին գործն եղաւ Վարագայ տպագրական մամուլները մէկը իւր պարագայիւք պատրաստել, որ իրեն հետ տանի Ս. Կարապետի վանքը. ապա Վարագայ վանուցս ներքին և արտաքին կառավարութեանց կարգ և սահման դրաւ։ Վանքի ներքին և արտաքին կառավարութեանց վրայ փոխանորդ կարգեց ժառանգաւորաց եղբարց անդրանիկ և առաջապահ Մեսրովբ Վարդապետը» (Մոկացեան), կը գրէ Գարեգին Սրուանձտեանցը։ «ժառանգաւորաց Վարժարանի տեսչութիւնը յանձնեց «օծակից նորին և եղբայր ժառանգաւորացս եղնիկ Վարդապետին»։ Տպարանի հսկողութիւնը տուաւ «առ հասարակ եղբարց յառաջադէմ աշակերտաց աշխատասիրութեան և կազմեց ուսումնական խորհուրդ մը դպրոցին և տպարանին տնօրէնութեան»։ «Արծուի Վասպուրականի համար նշանակեց խմբագրական մարմին մը, որուն կ'անդամակցէին՝ Մանուէլ Արտամետցեան, Տիգրան Կալփագճեան և Արսէն Թոխմախեան։ Այս բոլոր գործերու վերին դեկավարութիւնն ու հովանաւորութիւնը Խրիմեանն իրեն վերապահեց։

Փայտեայ մամուլը, տպագրական տառեր, թուղթ, թանաք, դասագիրք, գրենական պիտոյքներ և այլն ամբողջ դաստաւորեցին արկղերու մէջ և բեռները կապեցին։

Մեկնելու օրը կը մօտենար։ Վանէն ահագին բազմութիւն եկած էր Վարագ Խրիմեանին բարի երթ մաղթելու։

Կիրակի առաւօտ մը—1862-ի Օգոստոս 19-ին—Հայր Արծիւը Վարագայ մայր տաճարին մէջ հանդիսաւորապէս պատարագեց։ Տաճարը ծայրէ ծայր լեցուած էր ժողովուրդով։ Խրիմեանը յուզուած՝ բայց խանդավառ շեշտերով տուաւ իւր հրաժեշտի քարոզը, որուն մէջ իւր աշակերտներուն ուղղեց հետեւեալ խօսքերը.

«Չի ուրախանայ Արծուին և պիտանի չէք ազգին, եթէ լոկ

ուսմամբ լինի ձեր յառաջադիմութիւնը. Իմ պարծանք ձեր առաքինութիւնն է, ձեր բարի վարք. Ձեր եղբայրասիրութեան քաղցր պտուղները ես տեսնելով և ազգ վայելելով՝ ուրախ պիտի առնէք և փառաւորէք ոչ միայն զմարդիկ և հայրեններք, այլև զԱստուած և երկինք. Դուք կապրէք, կուսանէք ազգի և հայրենեաց համար. Հայրեններք ձեզ կը սպասէ. դուք Աստուծով զօրացած և երջանկացած Հայրեններքի բարի յոյսեր պիտի լինէք... Ահա ես կերթամ իմ նոր նուիրական կոչմունքիս. Կացէք յիս և ես ի ձեզ. Ձեզանից չեմ հրաժարիր, ձեզանից չեմ հեռանար. այլ զձեզ զօրացուցանելու կերթամ. Իմ վստահութիւն և հաւատարմութիւն պահեցէք և պսակեցէք ձեր սիրով, ձեր բարի համբաւով և ձեր ժրաջան և գովելի յառաջադիմութեամբ. Պիտի աշխատեմ ես փոյթ ընդ փոյթ ձեզ այցելութիւն առնել. մի տրտմիք. Կացէք Աստուծով, կացէք սիրով, կացէք ինձմով»։

Խրիմեանը կուլայ, աշակերտները կուլան, ժողովուրդը լուռ և յուզուած կ'ունկընդրէ Հայր Արծուի քարոզը. Այդ օր վանքի սեղանատան մէջ տեղի կ'ունենայ ընդհանուր ճաշկերոյթ մը, որուն կը մասնակցէին միաբանները, ուսուցիչներ, աշակերտներ, քաղաքէն եկած պաշտօնական անձեր և ուխտաւորներ. Բաժակները կը խմեն Հայր Արծուի կենաց և յաջողութեան համար.

Արշալոյս է—1863-ի Օգոստոս 20-ի երկուշաբթի առաւօտ—Վարագայ վանքի բակին մէջ կարաւանի ձիերը կը բեռցնեն՝ տպագրական մամուլի, թուղթի և տառերու հակերով. Այժմ խօսքը տանք ժամանակակից ականատես վկային՝ Վարագայ Պարոն Պետրոսին, որ նկարագրէ թէ Խրիմեանն ինչպէս ճամբայ ելաւ Վարագէն։

«Երբ ձիերը բեռցուեցան և ամէն ինչ պատրաստ էր, Խրիմեանը մտաւ տաճար մոմ վառեց, ծնկաչոք աղօթեց ու լացաւ. Անոր օրինակին հետևեցան նաև իւր ուղեկիցները, տեսարանը յուզիչ էր և սրտաճմլիկ. Բոլորս ալ կ'արտասուէինք, անգամ վանքի մշակ-հօտաղները, հովիւներն ու տնտեսները կը մղկտային. Խրիմեանը հեծաւ իւր սպիտակ ձին, Մշեցի հրաւիրակ-պատգամաւոր Մէլիքն ալ, իւր պարթև հասակով, (որ բնաշխարհիկ տարազով զարդարուած էր) հեծաւ իւր ձին. Խրիմեանին ուղեկցող Գարեգին Սրուանձտեանց, Յակոբ Աղուանեան, երկու ուսուցիչները, վեց երգեցիկ աշակերտ-

ներ, տպարանի երկու գրաշարները և երեք գործաւորները հեծան կարաւանի ձիերու վրայ. Վարժարանի աշակերտները կարգով կանգներ էին իրենց ուսուցիչներու և վանքի միաբաններու հետ։ Վանի կուսակալը 4 ոստիկան զինւորները ղրկած էր, որ ապահովութեան համար միանային այս մեծ կարաւանին։

«— Զը՛նգ, զը՛նգ... շարժուեցաւ կարաւանը, որուն առջևէն կ՚երթային աշակերտները երգելով. Վանէն և գիւղերէն եկած էին հարիւրաւոր ձիաւորներ Խրիմեանին բարի երթ մաղթելու. Այս հանդիսաւոր թափօր-կարաւանը մինչև Այգեստան հասաւ։ Քաղաքէն բազմաթիւ մարդիկ միացան մեզ և այսպէս 3 ժամ յետոյ հասանք Արտամետ գիւղը։ Այստեղ Խրիմեանը լացաւ, տուաւ իր վերջին ողջոյնն ու հրաժեշտը, մենք բոլորս ալ տխուր և սրտաբեկ՝ վերադարձանք Վարագ, իսկ կարաւանը շարունակեց իր ճամբան դէպի Մուշ»։

Հայոց-Ձոր, Ռշտունիք, Կարճկան գաւառներէն անցնելով կարաւանը կը հասնի Դատուան— Վանի ծովի արևմտեան կողմը—և Նեմրութայ սարի ստորոտներէն անցնելով կը մտնէ Մշու Դաշտի սահմանները։ Ահա Տարօնը—Մշու Աշխարհը, որ մշուշ է, բայց իր հողն ու ջուր անուշ է...։

Կարաւանը որ գիւղին որ հասնէր՝ գեղջուկ մշեցիները—ոտաւոր ու ձիաւոր—քահանաներով, մէլիքներով, աղ ու հացով, մատաղով, եկեղեցական թափօրներով, ժողովրդական ցոյցերով, դհոլ զուռնայով, երգ ու պարով Խրիմեանին դիմաւորութեան կուգան։ Տարօնի Առաջնորդը կը յուզուի տեսնելով այս տանջուած ու տառապած, աղքատ ոտաբոբիկ, ցնցոտիապատ շինական ժողովուրդի անկեղծ ուրախութիւնը, ամէն գիւղի մէջ կը քարոզէ, կը մխիթարէ, կը յուսադրէ, կը խոստանայ գիւղացիութեան վիճակը բարւոքել, ուսում և կրթութիւն տարածել ևայլն։

Կառավարութիւնը և նշանաւոր քիւրդ ցեղապետներ, բէկեր և աղաները պաշտօնական դիմաւորութիւն և յարգանք ցոյց տուին Խրիմեանին, որ Սուլթանական հրովարտակով կուգար Տարօնի Հայութեան ազգային գործերը դեկավարելու։

Խրիմեանի այս հանդիսաւոր կարաւանը ճամբայ կ՚իյնայ դէպի Ս. Կարապետի վանքը, ուր մեծ պատրաստութիւն տեսնուած էր

նոր վանահօր ընդունելութեան համար։ Երբ վանքէն կը նկատեն, որ կարաւանը կը մօտենայ, տաճարի զանգակները կը զօղանջեն և եկեղեցական թափօրն ալ շարական երգելով կ'ընդառաջեն Խրիմեանին. Հազարաւոր գիւղացիներ լեցուած էին վանքը, որ տօնական և հանդիսաւոր բնոյթ կը կրէր այդ օրը։ Խրիմեանը կ'երթայ տաճար, կ'աղօթէ և ապա զգայացունց քարոզ մը կը խօսէ, շեշտելով, որ Տարօնի Հայութիւնը խեղճ ու թշուառ է, տառապեալ ու տգէտ է. ժամանակակից վկան*), այսպէս պատմեց ինձ այդ քարոզի մօտաւոր բովանդակութիւնը.

«Ե՛ինական ժողովո՛ւրդ Հայոց. Վասպուրականէն երբ Տարօնի երկիրը մտայ, երբ ոտքս Մշու Դաշտի վրայ դրի, ամէն տեղ թշուառութիւն տեսայ, աղքատութիւն տեսայ և ի՛նչ, շրթունքներս ակամայ մրմնջեցին՝ Ողբամ զքեզ Հայոց Աշխարհ։ Այս խօսքն ըսած է Մշոյ Խորնի գիւղացի Մովսէս Խորենացին, որուն կը միացնեմ և իմ ձայնը — Ողբամ զքեզ ժողովուրդ Հայոց, զի քո այժմեան կեանքը յոյժ ողբերգական է. Սակայն յուսահատի՛նք, քա՛ւ լիցի, ես քեզ համար Յոյս բերած եմ, ես քեզմէ յուսալիքներ ունիմ։ Դուն կը գտնուիս խոր տգիտութեան և խաւարի մէջ, բայց խնդա և ուրախ լե՛ր, մշա՛կ ժողովուրդ, ես քեզ համար ուսման և կրթութեան Լոյս բերած եմ. Լուսոյ շողերը ես Վասպուրականէն, Վարագայ վանքէն

*) Վարագայ «Ծառանգաւորաց Վարժարանի» և Խրիմեանի անդրանիկ աշակերտներէն Հմայեակ-Աւետիս Առաքուճիճ, որ ծնած էր 1830-ին Արքատեան Դաշտի (Սուրմալուի) Իգդիր-Մաւա գիւղին մէջ։ Մանուկ հասակէն ոբքացած ըլլալով կ'ուղարկուի Վարագ և կ'որեգրուի վանքին կողմէ։ Խրիմեանին հետ Մուշ մեկնողներու մէջ եղած էր նաև Հմայեակ Արշարունին, որ 1868-ին վարդապետ կը ձեռնադրուի և տարիներ յետոյ անցնելով Էջմիածին, կ'ընդունուի տեղւոյն միաբանութեան մէջ։ Երբ 1916—20 թուերուն, ես Էջմիածին կ'ապրէի, յաճախ կ'երթայի Հմայեակ վարդապետի մօտ և կը խնդրէի, որ պատմէր իր անցեալի յուշերը։ Սիրով, յուզումով և լալով կը պատմէր Վարագայ և Մշոյ կեանքը՝ Խրիմեանի գործերը։ Մասնաւոր հիացումով կը խօսէր նաև մեր տաղանդաւոր գրագէտ և գործիչ Աւետիս Ահարոնեանի մասին, որուն բարերարն ալ եղած էր կարծեմ։ Արշարունի վարդապետը մեռաւ 1921-ի Յունուարին, զոհ դառնալով բոլշեւիկներուն, որոնք բռնագրաւեցին անոր սենեակը և հիւանդ ծերունին շպրտեցին ձիւներու մէջ։ Պարզ, համեստ և բարի մարդ մըն էր նա, հաճոյախօս և սակաւապէտ։ Մեռաւ խոր ծերութեան մէջ, (91 տարեկան) և թաղուեցաւ Էջմիածնի վանքի գերեզմանոցը։

բերած եմ. Ցեսաք կարաւանի ձիերը. որոնց վրայ բարձուած հակերով ձեզ համար տպարան բերած եմ, մամո՛ւլ. Ա՜հ, ինչ անուշ կը հնչէ այս անունը—մամո՛ւլ, փայտաշէն և անպաճոյճ մեքենայ մըն է այդ, որ պիտի հաստատեմ այս վանքին մէջ և թերթ տպեմ, գիրք տպեմ, ձեր միտքերը լուսաւորեմ. Ահա ասոնք կը կոչուին լոյս, գիտութեան և ուսման լոյսը, որուն ճառագայթները պիտի ցոլան մինչև գիւղական խոնարհ խրճիթները. Սիրելի ժողովուրդ, շատ նպատակներ, ծանր աշխատանքներ ունիմ, եկած եմ աշխատելու, եկած եմ վասն ազգին և հայրենեաց գործելու, բայց պէտք է դուն ալ զօրավիգ ըլլաս ինձ, որ մեր ջանքերը յաջողութեամբ պսակուին, որ ես գոհ մնամ քեզմէ և դուն ինձմէ. ժողովուրդը մեծ է, ժողովուրդին սիրտը ծով է, ես կը մտնեմ այդ ծով սիրտին մէջ, կը քրքրեմ անոր ծալքերը, ուր որ ցաւ և վիշտ տեսնեմ՝ սպեղանի կուտամ, ուր խինդ և հրճուանք տեսնեմ՝ ես ալ կը խնդամ և կը հրճուիմ, ի միով բանիւ, ցաւերուդ ցաւակից, ուրախութեանդ խնդակից, աշխատանքիդ և տառապանքիդ լծակից եմ, վկայ բսածներուս, այս Սուրբ Տաճար, դասք միաբանից և երամք ժողովրդոց, դուք չարքաշ որդիք, մշակ և հողագործ զաւակներս. Է՛հ, այժմ գացէք հանգստացէք, գացէք յուսացէք, Տէր ընդ ձեզ և մեզ...».

Մուշ հասնիլէ յետոյ, Խրիմեանն առաջին առթիւ իսկ, 1862-ի Սեպտեմբերին, Ս. Կարապետի վանքին մէջ կը բանայ «Ժառանգաւորաց Վարժարան» մը, ուր շրջակայ գիւղերէն կը հաւաքէ քանի մը տասնեակ գեղջուկ պատանիներ, որոնց դաստիարակութիւնը կը յանձնէ իր աշակերտներուն-Գարեգին Սրուանձտեանին, Յակոբ Ազուանեանին և միւսներուն.

Գեղջուկ ժողովուրդն ի վիճակի չէր հոգալու այս դպրոցին ծախքերը. Ս. Կարապետի վանքը մեծաքանակ դրամական մուտքեր ունէր, որոնք անխնայ կերպով կը շռայլուէին կամ կ'իւրացուէին ագէտ և շահամոլ վանականներու կողմէ. Այս հռչակաւոր մենաստանը, իբրև համահայկական ուխտատեղի, միշտ լեցուած էր ուխտաւորներով, որոնց նուիրած դրամներ, մատաղացու կենդանիներ, գալդեր, գործուածքներ և այլ իրեր վանականներու սեփականութիւնը կը դառնային.

«Այդ պատմական, նուիրական և միշտ սիրելի հայոց վայրը խո-

րին տգիտութեան և անկարգութեան մէջ էր. կ'ուտէին, կը յափըշտակէին և առ ոտն կը կոխէին դաս մը մարդիկ և վանականք այդ վանքին սրբութիւնն ու ճոխութիւնը և ժողովուրդին բազմութեան հոգին ու սրինը, առանց խիղճ ընելու և պարտականութիւն և պատասխանատուութիւն յանձն առնելու. ժողովուրդն ևս համակերպած էր տալու, լռելու, տեսնելու և հլութեամբ ու յօժարութեամբ կրելու այդ ամէնը». կը գրէ Խրիմեանի կենսագիրներէն Աճակեւսը։

Սուրբ Կարապետի «վանքի մէջ բուն դրած միաբանները, տգէտ, անուս վանականները, ոչինչ չանելով և անհոգութեան մէջ պարարտացնելով իրանց մարմինը, անխնայ վատնում էին վանքի եկամուտները, ուտում, խմում, քէֆեր էին անում և վանքերից դուրանում իրանց ազգականներին էին տալիս» կ'աւելցնէ Խ.Մալումեանը։

Սակայն Խրիմեանն աւելի ցայտուն և յաջող կերպով կը բնորոշէ Սուրբ Կարապետի հոգևորական-վանականներու ներքին կեանքը, որուն մէկ էջը հետեւեալն է.

«...Ուտեմք ըզմիս և ըզմատաղ, զխորովուն գառըն կարմրած,
Ուտեմք ըզճաշ ըզխարիսայ իւղն ի վերայ լիճ լիճ լըցեալ.
Ուտեմք ըզկաթըն մաքեաց և ըզմածունըն սերակապ,
Ուտեմք զանհալըն կարագ և ձագուց մեղր ըզհետ նորա.
Ուտեմք և յափրանամք նրնչեմք ի խուց, խորտամբ անհոգ,
Ոչ գիրք Աստուածաշունչ, ոչ այլ մատեանք մեր սուրբ նախնեաց,
Ոչ ուսանեմք, ուսուցանեմք զբանն Աստուծոյ առ ժողովուրդս.
Թողեալ զԱւետարան, պաշտենք սեղան և զուխտաւորս,
Թողեալ զուխտ կոչման մերոյ լընումք ըզպէտրս մարմնաւորս...
Ոչ առաքեալ ոչ մարտիրոս վասն աշխարհին հայոց եղեալ...
Ոչ հովիւ հօտին սիրող, ոչ առաջնորդ ժողովրդեան...»*)։

Այս էր ահա այդ մենաստանի վանականներու կեանքը, որ փոթորկուեցաւ Խրիմեանի ներկայութեամբ։ Նա կազմեց վանական «Տնտեսական Խորհուրդ» մը, որուն ձեռքը կը կեդրոնանայինվանքի դրամական և այլ մուտքերը։ Նորաբաց «Ժառանգաւորաց Վարժարան»ի աշակերտներ և ուսուցիչները համեստ ապրուստ մը կը

*) Խրիմեան Հայրիկ—«Հրաւիրակ Աւետաւետաց».Բ. Տպագրեր. Կ.Պոլիս. 1876։

ստանային, նոյն նաև վանականները, որոնց անհաշիւ վատնումները վերջ դտած էին արդէն։

Վանք բարեկարգելէ և եկամուտները կանոնաւորելէ յետոյ, Խրիմեանը իւր հովուական պաշտօնին կը լծուի։

## Է.

## ԽՐԻՄԵԱՆ՝ «ՀԱՅՐԻ՛Կ...»

Տարօնի Հայութեան առօրեայ կեանքը, քաշած տառապանքը, վիշտն ու ցաւը և տնտեսական սոսկալի վիճակը մօտիկէն ուսումնասիրելու համար, Խրիմեանը ձի հեծած՝ կը շրջագայէ Մշու Դաշտի հայաբնակ գիւղերը։

Հայկական աւանդութիւններով, նահապետական վարք ու բարքով և յովորոյթներով ապրող Տարօնի գեղջուկ, հողագործ Հայութիւնը կը տնքար տաճկական և քրդական արհաւիրքներու և ծանր հարկերու տակ։ Դարերու բռնակալ լուծը այնքան դաժան և խեղդող եղած էր, որ տանջուած Հայութիւնը համակերպած էր այդ սարկական զարհուրելի կեանքին և լուռ կերպով կը տանէր ամէն տեսակ տանջանքներն ու չարիքները։ Պետական հարկահաւաք, ոստիկան, պաշտօնեան, քիւրդ ցեղապետներ, բէկեր, աղաներ և աւազակներն անարգել ու սանձարձակ կերպով կը մտնէին Հայ գիւղերը և վայրագութիւններ կը գործէին։ Հայ կոյսերն ու գեղեցիկ կիներն անոնց անասնական կիրքերուն զոհ կը դառնային, տուները աւարի և թալանի կը մատնուէին, տղամարդիկ ծեծի, տանջանքներու և սպանութեան ենթակայ էին միշտ։ Հայ գեղջուկի ընտանեկան պատիւը կը պղծուէր, կրօնը, հաւատքն ու սրբութիւնները ոտնակոխ կ'ըլլային, իւր արդար վաստակի և դառն քրտինքի արդիւնքը կը թալանուէր, բայց ժողովուրդը Մեծ Համբն էր, որ միայն կը զղար, «ի խորոց սրտի» կը հառաչէր։ Այդ հառաչանքը—«Զայն հառաչանաց հեծութեան սրտի»—ուր հասցնէր, կառավարութեան, որուն եթէ բողոքելու ըլլար նորէն ինքն էր մեղադրուողը, յանցաւորը։ Օ՜րթմն... լռել, տոկալ, և ամէն արհաւիրքի ժամանակ, տանջանքի և օրհասական րոպէներուն, արիւնի և մահուան ատեն՝ յու-

սահատ ու նուաղկոտ աչքերը Տարօնի նուիրական սրբավայրի կաթուղիկէներու խաչերուն ուղղել։ Խաչուած ժողովուրդն էր այդ, որ խաչերուն կ'ապաւինէր և իր անմեռ ու անշէջ հաւատքին խառնելով իր ցաւանչանքը՝ յուսահատ և աղեկտուր ձայնով մը կը բացականչէր.

«Եա՛ Մշու Սուլթան Զանկլի Դիւան Սուրբ Կարապետ,
Դու ելիմդա՞ տանես, օգնական-պահապան կանգնես...»։

Ահա այս պատկերն ունէր Տարօնի Հայութիան քաղաքական գոյավիճակը. երբ Խրիմեանը անվախ և համարձակ կերպով կը մտնէր Հայ գիւղերը, կը հանդչէր ծխոտ ու մրոտ, ցածլիկ և թրշուառ յարկերու տակ, կը դիտէր գեղջուկի տառապանքը, կը տեսնէր կիսամերկ և ոտաբոբիկ մայրեր և զաւակներ, ամօթխած կոյսերն ու հարսները, տանջուած դէմքերով ծերունիներն ու երիտասարդները, որոնք սիրով, սրտով կ'ընդունէին այդ անկոչ հիւրը և կը պատմէին իրենց տառապանքի սև ու արիւնոտ պատմութիւնները։ Խրիմեանը կը լսէր, կը գրէր այս բոլորը, կը մխիթարէր, կը յուսադրէր և կը խոստանար ազգու միջոցներու դիմել—կառավարութեան բողոքել, Պատրիարքարանին և Ազգային ժողովին յայտնել։ Մշու Դաշտի Հայութեան կեանքը տառապանքի նոր աշխարհ մը կը բանար Խրիմեանի աչքերուն առջև, աչքեր՝ որոնք սրատես, թափանցող և դիտող էին, աչքեր՝ որոնք ի տես այդ զարկուած ժողովուրդի տանջանքներուն արցունքով կ'օծուէին թէև, բայց յոյսի և փրկարար աշխատանքի լոյսեր կը ցոլացնէին։

Խրիմեանը Մշու Դաշտի մէկ Հայ գիւղը գացեր և հիւրասիրուեր է նահապետական մեծ ընտանիքի մը խոնարհ յարկին տակ, ուր տեսեր է, որ կը ճօճուին 32 օրօրոցներ, որոնց մէջ մուշ-անուշ մանկիկներէն ոմանք քնած են, ոմանք արթուն ու ժպտուն, ոմանք կուլան։ Խրիմեանը կը յուզուի, կը հրճուի գլխարկը կը վերցնէ և կը բացականչէ խաչակնքելով.

«—Աճեցէք և բազմացարուք, լցէք երկիր և տիրեցէք դմա...»։

Այդ նահապետական ընտանիքը շուրջ 100 անձէ բաղկացած եղեր է։ Ընտանիքի անդամները բոլորն ալ հաշտ ու սէր, խոնարհ ու խաղաղ, աշխատող և չարքաշ՝ ապրած են մէկ յարկի տակ՝

գլուխ ունենալով գերդաստանի ծերունի նահապետը, որուն ճակատին Խրիմեանը եօթն հարթոյրներ դրօշմած է, կը պատմեն։

Ահա ուրիշ գիւղ մը. կալի ժամանակ է. կալւորները նստեր են գետնի վրայ թանապուր կ'ուտեն։ Խրիմեանը կը մօտենայ և առանց հրաւէր ստանալու կը վերցնէ փայտեայ դգալը և կուշտ ու կուռ կ'ուտէ իր այնքան սիրած թանապուրը, զարմանք պատճառելով կալւորներուն, հնձւորներուն, մշակներուն, հօտաղներուն խօսցնել կուտայ հողի մասին, ապրուստի մասին.

Կ'երթայ միւս գիւղը, գիւղացիք կը շրջապատեն զինք, կը պատմեն իրենց թշուառութիւնները, կրած զրկանքները։ Ծանր հարկերու և հարստահարութեանց մասին մանրամասնութիւններ կը յայտնեն, կը հիւրասիրեն ու ճամբու կը դնեն.

Մտեր է Ծրօնք գիւղը. հոն հարսանիք կայ. Ուղիղ կ'երթայ և կը մտնէ հարսանիքատունը. Գեղջուկներն ուրախ են, դհոլ զուռնան «Մշու Խրո»ի հոլանակը կը նուագէ, շուրջ պարը կը կազմուի և քաջակորով, յաղթամարմին մարդ ու կին պար կը բռնեն.

Ահա և Վարդենիս գիւղը, ուր յարդուած մէլիք մը մեռեր է, մեռելի հոգւոյն՝ «Հոգւոց» մը կ'ըսէ, իր ցաւը կը յայտնէ ու կը հեռանայ։ Գիւղէն դուրս գալու ժամանակ թշուառ պառաւ մը ձիուն սանձը կը բռնէ, խնդրելով, որ իր ջահէլ-ջիւան հիւանդ զաւակի վրայ երկու գլուխ Նարեկ կարդայ։ Խրիմեանը ներս կը մտնէ և կը կատարէ պառաւի ցանկութիւնը։

Հեռուէն սրարշաւ ձիաւոր մը կուգայ և Խրիմեանին կը յայտնէ, որ քիւրդերը մտան այսինչ գիւղը և կը պահանջեն այսքան ոչխար-տաւար։

Խրիմեանը հոն կ'երթայ և իր ազդու միջնորդութեամբ քիւրդերը կը հեռացնէ գիւղէն։

Ցաճիկ հարկահաւաքը 6 ոստիկաններով մտեր է Ջրիկ գիւղը և յաւելեալ տուրքեր կը պահանջէ։ Գիւղացիք կը դիմեն Խրիմեանին, որ անձամբ կուգայ և կը հարթէ այդ հարցը։

Գրեթէ բոլոր գիւղերու մէջ կան Հայ վաշխառուներ և վատահամբաւ մեծաւորներ, որոնք խեղճ գիւղացիներու գլխին պատուհաս են և ներքին ցեցեր։ Ասոնց հանդէպ Խրիմեանն անողորմ է, կը սպառնայ, կը սարսափեցնէ և կը սանձահարէ այդ ցածոգի արարածները։

Գիւղերու մէջ կը քարոզէ ազգի և հայրենիքի սիրոյ մասին, ուսման և կրթութեան մասին, հրահանգելով, որ ամենուրեք դպրոցներ բացուին, մանուկները դրել կարդալ սովրին, խոստանալով, որ Առաջնորդարանը դրամապէս պիտի նպաստէ գիւղական դպրոցներու յարատեւութեանը։

Այս հովուական այցելութիւններու ժամանակ, Խրիմեանը ազգաշունչ և յեղափոխական քարոզներով Տարօնի Հայութեան մէջ կ'արծարծէ ինքնապաշտպանութեան գաղափարը, ըմբոստութեան ղդացումը և „ակըն ընդ ական և ատամ ընդ ատամ"ի նշանաբանի իմաստը, մանաւանդ որ այդ ատենները (1862-ի աշնան) Զէյթունի լեռնական հայորդիներու ապստամբութեան արձագանգները հասեր էին նաև Մշու Դաշտը։

Օր մը Խրիմեանը քանի մը մշեցի հայ «աղա»ներու հետ կ'այցելէ Մուշի բանտը, որ բերնէ բերան լեցուած եղեր է քիւրդ բանտարկեալներով. Խրիմեանը կը հարցնէ թէ—«Այսքան մարդիկ ինչու՞ լեցուցեր են հոս»,—կը պատասխանեն թէ—«Ատոնք բոլորն ալ քաղաքական յանցաւորներ են, որոնք ըմբոստացան կառավարութեան դէմ»։ Խրիմեանը կը յարէ—«Երանի՛ այն գալիք օրերուն, երբ այս և նման բանտերը կը լեցուին նաև Հայ քաղաքական յանցաւորներով։ Ա՛հ, այն ատեն միայն կը տեսնենք հայրենեաց ազատութեան արշալոյսը»*)։

Այսպէս ահա, Խրիմեանը կ'այցելէ Մշու Դաշտի ամբողջ Հայ գիւղերը, կը մտնէ խոնարհ խրճիթները և ամենուրեք հայրական սէր, դորով, և օղնութիւն ցոյց կուտայ։ Ժողովուրդի ցաւերուն ցաւակից, ուրախութեան խնդակից և աշխատանքին լծակից կ'ըլլայ։ Կարճ ժամանակի մէջ, նա այնքան մեծ ժողովրդականութեան կ'արժանանայ, որ կառավարութիւնն անգամ լուրջ ուշադրութիւն կը դարձնէ անոր գործունէութեան վրայ։ Տարօնի Հայութեան քաշած քաղաքական և տնտեսական տառապանքներու մասին նա բազմաթիւ տեղեկագիրներ կը կազմէ, փաստերով ու վկայութիւններով հաստատուած դիմումներ կը գրէ և Պատրիարքարանին ու Ազ-

*) Բուլանուղի շրջանի Մաշիդլու գիւղացի Միհրան Գրիգորեանը (մեր գաւառական հմուտ գործիչներէն մէկը) իւր հօրմէն լսած այս խօսքերը հաղորդեց ինձ 1923-ին, Թաւրիզի մէջ։

զային ժողովին ուղարկելով կը պահանջէ, որ ազգու միջոցներու դիմեն, որ Բարձրագոյն Դուռը վերջ տայ Տարօնի աշխարհի Հայութեան տառապանքներուն։

Վանի զրական ղէմքերէն Մեսրոպ Աւագ Քահանայ Ճանիկեանը կը պատմէր թէ, այդ տեղեկագիրներու հետ Խրիմեանը նամակ մը գրած էր Ազգային ժողովին, որուն անդամներէն շատերը լացեր էին կարդալով հետևեալ տողերը.

«Այս տեղեկագիրներու թուղթր հազիւ գտայ, գրիչն ունէի, մելանը կը պակսէր: Ահ, չը սարսափիք երբ յայտնեմ, որ Մշոյ զեղջուկ ժողովուրդի արցունքն ու արիւնը մելան շինեցի և այս տեղեկագիրները պատրաստեցի։ Տառապեալ Հայութեան արցունքով և արիւնով գրուած այս թուղթերը, բարձերու տակ չը դնէք, անուշադրութեան չը մատնէք։ Տարօնի Հայութիւնը ակնդէտ ձեր օգնութեան կը սպասէ, ձեր ազգասիրական ձայնին ու խղճին կոչ կ'ընէ։ Ես հոս կարելին կ'ընեմ, դուք ալ շարժեցէք, գաւառներու Հայութիւնը ձեր աշխատանքին կարօտը կը քաշէ, աշխատինք աշխատինք...»։

Խրիմեանը կը համոզէ բիւրդ բէկերն ու ցեղապետները, որ Հայ ուսուցիչները երթան քրդական գիւղերու մէջ դպրոցներ բանան և քիւրդ մանուկներուն ուսում և դաստիարակութիւն տան։ Անգամ կը խոստանայ հայատառ քրդերէն բերականներ և դասագրքեր հրատարակել: Կ'ըսեն թէ ցեղապետներէն շատերը կ'ընդունեն Խրիմեանի այս առաջարկը, սակայն կրօնական մոլեռանդութեամբ տարուած շէյխերն ու մոլլաները կը խանգարեն այս գործը, որ կառավարութեան համար ալ «վնասակար» էր։ Խրիմեանը կը ջանայ համերաշխութիւն և դրացիական բարի յարաբերութիւններ ստեղծել Հայ և քիւրդ ժողովուրդներու մէջ։ Նա գերագոյն ջանքը կը թափէ համոզելով քիւրդերը, որ հողագործութեան զարկ տան, նստակեաց դառնան, աւարի և յարձակումներու ետևէն չ'իյնան, սակայն անոր բոլոր ջանքերը ապարդիւն կ'անցնին, բանի որ Տարօնի աւազակաբարոյ բիւրդ ցեղապետները, իշխանութեան թուլութենէն օգտուելով, ամբողջ նահանգ մը իրենց վայրագութեանց և բռնութեանց ասպարէզ դարձուցեր էին։ Կառավարութեան գոյութիւնը զրեթէ անուանական էր Տարօնի մէջ։ Պետութեան գոյութիւնը հարկահա-

ւաքութեան ժամանակ կը զգացուէր միայն։ Հայ գիւղերը ոտնատակ կ'ըլլային, կանայք կը բռնաբարուէին, կոյսեր կ'առևանգուէին, սակայն կառավարութիւնը անզօր էր օճրագործները ձերբակալել կամ պատժել, կամ եթէ ուժ ալ ունենար, աչք կը գոցէր հայկական տառապանքներու առջև և միայն խոստումներ կուտար։ Այս արհաւրալից իրականութեան մէջն էր ահա, որ Խրիմեանը սքանչելի ջանք ու ճիգ կը թափէր փրկելու և պաշտպանելու համար Հայ հաւատքը, ընտանեկան պատիւը, ժողովուրդի տնտեսութիւնն ու ստացուածքը՝ մարդակերպ գազաններու ճիրաններէն ու ժանիքներէն։

Հապա Հայ կեանքի ներքին ցեցերը—գիւղական ամէն տիպի կեղեքիչները, որոնք թշուառ գիւղացիներու արդէն իսկ մռայլ և սև կեանքի գիշատիչներն էին։ Խրիմեանի պայքարը և բուռն աշխատանքը ուղղուած էր նաև այդ գիւղական ցեցերու դէմ, որոնք իրենց կարգին խուլ և վախկոտ բայլեր կը ձգէին Խրիմեանը յաչս ժողովուրդին նսեմացնելու համար։ Խաւարամիտ, տգէտ և շահամոլ կարգ մը հոգևորականներն ալ գործի վրայ էին, վարկաբեկիչ լուրեր տարածելով Խրիմեանի մասին։ Հայութեան ներքին, ազգային կեանքը քայքայող և մաշող ուրիշ ցաւատանջ իրողութիւն մըն ալ գոյութիւն ունէր։ Պանդխտութիւն—դարիբութիւնն էր այդ, որ երկրի երիտասարդութիւնը կը քաշէր դէպի Կ. Պոլիս և Կովկաս։ Հայրենի հողէն ու ջուրէն կամովին հեռացած մշեցի երիտասարդները Կ. Պոլսոյ խաներու և նաւամատոյցներու մէջ բնակիլը—համբալ կը գառնային և իրենց կանաչ-կտրիճ արևը կը մարեցնէին մուխ ու խոնաւ նկուղներու մէջ։ Պանդխտութիւնը կը քայքայէր գաւառներու Հայութեան ներքին, ընտանեկան և տնտեսական կեանքը, որ բազմազան ողբերգական էջերը կը ցուցադրէ ԺԹ-րդ դարի մեր ազգային պատմութեան և դրականութեան մէջ։ Պանդխտութեան գլխաւոր կեդրոնը Ցարօնի աշխարհն էր, ուր տիրող քաղաքական սոսկալի գոյավիճակը և տնտեսական ծանր պայմանները, իրար խառնուելով ծնունդ տուած էին Պանդխտութեան։ Որքան երգեր կան մշեցի դարիբներու և պանդուխտներու մասին. «Ղարիբ մնեցիմ» յայտնի էր ամէն տեղ։ Նա Ցարօնի գեղջուկ հայերու կրած տառապանքի մարմնացումն էր, անոնց յոյսերու և յոյ-

զերու արտայայտիչը, վշտապատու մի կենդանի վկան, որ կը շրջէը Հայաստանի, Կովկասի և Կ. Պոլսոյ մէջ ու չարաչար աշխատանքով, արիւն-քրտինքով վաստակած փոքրիկ գումարները կ'ուղարկէը իւր ծնողներուն, կնոջ ու զաւակներուն, որոնք ճիտը ծուռ, մալուլ-մուխ նստած, աչքերնին ճամրուն տնկած, իրենց ազիզ զարիքի գալուն կը սպասէին։ Կ'անցնէին տարիներ, զարիքի ծերունի հայրն ու մայրը կը մեռնէին և ընտանիքը կը քայքայուէր։ Ղարիքը կը հիւծուէր, կը ծերանար զարիբութեան մէջ, հայրենիքի և սիրելիներու կարօտը կը տոչորէին անոր սիրտը։ Կ. Պոլսոյ խաներու անկիւններու կամ խոնաւ նկուղներու մէջ հաւաքուած գաւառացի պանդուխտները — զարիբ-զուրբէթներ — իրիկուններըը ձէն-ձէնի կուտային և զարիբին երգը կ'երգէին — «Կուռւնկ...»։

«Կռունկ, ուստի կուգաս, ծառայ եմ ձայնիդ,
Կռունկ մեր աշխարհէն խապրիկ մը չունիս...
. . . . . .
Թողեր ու եկեր եմ մրլքեր ու այգիս,
Քանի որ ախ կ'անեմ կու քաղուի հոգիս...»։
. . . . . .
Գրեր եմ մէջ թղթիս թէ հոս մնացի,
Օրիկ մ'օրերուս զաչերս չը բացի
Սիրելիք ձեզնէ կարօտ մնացի...»։

Ահա այս էր Հայ պանդուխտի վէրքը, անոր երգը, որ ամբողջ ժողովուրդի մը վշտահար սիրտէն կուգար և դէպի նոյն ժողովուրդի սիրտը կ'երթար։

Պանդխտութի՜ւն... — ազգն ու հայրենիքը քայքայող ու կործանող այս ահաւոր իրականութեան դէմն էր ահա, որ Խրիմեանը ծառացաւ իւր պարթև հասակով և ազդու խօսքով։ Ուր որ երթար, ամէն տեղ, նա կը յորդորէր, որ ժողովուրդը չը լքէ իւր ընտանիքն ու հայրենիքը, հողն ու ջուրը և չը պանդխտէ։

Ամբողջ Տարօնի Հայութիւնը իւր տառապանքներով և աշխատանքով, իւր ապրումներով և խոկումներով, իւր ներքին, հոգեկան ձգտումներով կը պատկերանար Խրիմեանի աչքերուն առջև։ Ժողովուրդը անոր սրտով, անոր հոգիով ու շունչովը կ'ապրէը, կը յու-

սար, նա ժողովրդական զգացումներու աղբիւր և ընդունարանն էր, նա ժողովրդանուէր հովիւ էր, «Հովիւ քայլ, որ զանձն իւր» կը նուիրէր իր բազմատանջ բանաւոր հօտը գիշատիչ գայլերու ժանիքներէն փրկելու համար։ Նա առաքեալ էր հոգևոր և բարոյական գեղագոյն զգացումներով օժտուած, նա սիրուած ու պաշտուած հայրն էր ամբողջ ժողովուրդի մը, որուն սրտի անուշ, հարազատ և զգայուն ձայնը կը հիւսէր այս կոչումը—ՀԱՑՐԻ՛Կ...

Այդ ձայնը կը հնչէր Տարօն-Տուրուբերանէն, մշուշազարդ Մշու Դաշտէն և համայն Հայութեան մէջ տարածուելով կ'արձագանգէր։

—ՀԱՑՐԻ՛Կ....

Հայրիկ Հայրենեաց, ԽՐԻՄԵԱՆ ՀԱՑՐԻ՛Կ..., «Նուագող վշտից Հայրենեաց Հայոց...»։

Տարօնի գեղջուկ ժողովուրդը, իր սէրն ու պաշտամունքը արտայայտելու համար, այս սրտագին խօսքերն ունէր իր շրթունքին.

—«Հոգիս հոգուդ եղնի դուրբան, Հայրիկ ջան...»։

—«Ղուրբան եղնիմ ես քո անուան, Հայրիկ ջան...»։

Տարօն-Տուրուբերանի գեղջուկ Հայութեան այս սրտալի, հարազատ և բնորոշ խօսքերը ցոյց կուտան թէ Խրիմեանը որքան մեծ ժողովրդականութեան և մինչև անգամ պաշտամունքի առարկայ դարձած էր։ Նա ամբողջ ժողովուրդի մը կողմէ Հայրիկ կոչուած էր, նա ժողովուրդի իսկական հայրն էր, որ գիշեր ցերեկ կ'աշխատէր ու կը տանջուէր։ Հայրիկ, Հայրիկ... կը բացականչեն գիւղացիք և կը խռնուին անոր բոլորտիք, հարցեր կուտան, պատասխանները կ'առնեն, եկեղեցւոյ, դպրոցի, քահանայի, վարժապետի, տանուտէրի, գործի, հօտաղ մշակներու, արտի և ջուրի, գութանի և տաւարի մասին անվերջ խօսակցութիւններ կը բանան, կը դժգոհեն կամ գոհունակութիւն կը յայտնեն, պետական պաշտօնեաներու և քիւրդերու մասին նորանոր յայտնութիւններ կ'ընեն, գարիբներու նամակները կարդալ կուտան, աշխարհի վիճակէն տեղեկութիւններ կ'ուզեն և այլն։


Հայրիկը կը ժպտայ, կ'ուրախանայ և երբ կուզէ հեռանալ, գեղջուկները սրտալի ձայնով՝ Հայրիկ... Հայրիկ ջան... կը կանչեն և թևերէն բաշքշելով կը հրաւիրեն խարիսայ և թանապուր ուտելու, հանգստանալու։ Հայրիկ չի մերժեր այս հրաւէրը, սիրով կ'երթայ և գեղջուկներու հետ սեղան կը նստէ։

## Ը·

## „ԱՐԾՈՒԻԿ ՏԱՐՈՆՈՅ“

Մշու Օուլթան Ս. Կարապետի վանքի գետնայարկ երկու խուցերը վերածուեր էին տպարանի· Մէկ կողմը մամուլն էր, իսկ միւս կողմը գրաշարանոցը, ուր վարպետն հակած երկու գրաշարները տառեր դասաւորելով ու շարելով կը զբաղուէին·

— Ճր՛ռ, ճր՛ռ... կը ճռռայ փայտեայ մամուլը· դանդաղութեամբ կը գործէ գուտտենբերգեան այդ հնաձև, նախնական մեքենան,



որ տպագրութեան գիտէն յետոյ, առաջին անգամն ըլլալով, մուտք կը գործէր ի Տարօն — Հայ տառերը գտնող Մեսրոպ Մաշտոցի հայրենիքը·

Կ.Պոլսոյ մէջ, 1863 թուի սկիզբներուն, Գրիգորիս (յետոյ Եպիսկոպոս) Ալէքթճհանի խմբագրութեամբ լոյս տեսնող «Թուչնիկ Պիզասեան» անունով «Ընգետասանօրեայ» լրագիրը կը հատարակէր հետեւեալ լուրը.

«Հայաստանի հրեշտակ Խրիմեանի աշխատութեամբ Մշոյ վանքին մէջ պիտի հրատարակուի մի կիսամսեայ թերթ, Արծուիկ Տարոնոյ անունով»։

Եւ ահա, 1863-ի Ապրիլին լոյս կը տեսնէր Տարօնի Հայութեան անդրանիկ թերթը.

«ԱՐԾՈՒԻԿ ՏԱՐՈՆՈՅ· Լրատար. Թուղթեալ հայրենասէր թեօf„Վասպուրական Արծուոյն“ի Մաքիկոնեանս Աբխարհէն յինճիկենեան Լերանց ի Մշոյ Ս. Կարապետի հրատարակի ուխտէն։ Կիսամսեայ. 1863. Ապրիլ։ Ի Տպարանի „Վասպուրական Արծուոյն“, ի Տարօն, Ս. Կարապետի վանիf»։

Թերթի խմբագիրը Հայր Արծուի տաղանդաւոր Արծուիկն էր— Գարեգին Սրուանձտեանցը—որ իւր ամբողջ գրական ընդունակութեամբ, հայրենասիրական յօդուածներով, իւր անուշ, ներդաշնակ և ինքնատիպ ոճով ու գրչով ի յայտ կուգար «Արծուիկ Տարոնոյ»ի էջերուն մէջ, ուր Հայութեան տառապանքը կը ցուցադրէր, հայրենիքի ՝սէրը կ՝արծարծէր, ուսման և դաստիարակութեան հրաւէր կը կարդար գիւղացիներուն, պանդխտութեան աղէտները կը նկարագրէր և վերջապէս ժողովուրդի տգիտութեան և թշուառութեան վէրքերը մատնանշելով կոչ կ՝ընէր, որ ամէնքն ալ սթափուին, ինքնագիտակցութեան գան, ինքնապաշտպանութեան գաղափարը իւրացընեն և թօթափեն ստրկութեան լուծը։ Այս բոլոր էական հարցերը Խրիմեանի քարոզներէն ծնունդ կ՝առնէին և Սրուանձտեանցի գրչով կ՝արձանագրուէին։

Խրիմեանը «Արծուիկ Տարոնոյ»ի վերին հսկողն էր, հովանաւորը, իսկ Սրուանձտեանցը դեկավարն էր՝ աշխատակից ունենալով Մուրբ Կարապետի «Ժառանգաւորաց Վարժարան»ի ուսուցիչներն ու աշակերտները։ Մտաւոր, կրթական և գրական շարժումը, որ ծնունդ առաւ Մուրբ Կարապետի վանքին մէջ, կամաց կամաց վանական շրջապատէն դուրս եկաւ և տարածուեցաւ գիւղերու մէջ։ Ամենուրեք գիւղական դպրոցներ բացուեցան, գրաճանաչութիւն և ուսումը

# ԼՐԱՏՐ

## ԸՐԺՈՒԻԿԱ ՏԵՐՈՆՑԻՑ

ԹՈՒՅԼՏՎԱԼ ԹԱԳԱՒՈՐ Ի ՀԱՍԱՐԱԿԱՑ ԸՐԺՈՒԻՑՆ
Ի ՄԱՍԱՒԱՆԵՑԻՆ, ԸՍԿԵՐՀԱԼՈՅՆ · ՑԻՆՆԱՀՈՂՆԵՑԻՆ ԼՈՒՐՑՑՑ
Ի ՄԱՍՈՒՑՈՒ ԿԱՐԳԱՊԱՏԻ ՀԱՐԿԱՒՈՐԻ ՄԱՐՏՈՍԻՆ ·

ԸՍՏԱՐԻԼ 1· 1868· ԹԻՒ 1·



Ի հրատարակեալ ամէն երկու անգամ ·
ափիքան եւ Ի Կիւս.

Տարեկան գինն 24 գրուշ ·
Ի կէստարուան գինն 12 գրուշ ·
Մէկ հատ 40 փարայ ·

Պէտ Թիւն ու գինն, խորհրդ Ըն տարածուլ ·
Պատ. ըստ Ցրմուխեր լրագրներու՝ Խմբագիր
պիտի ճասնի ·
Ի յարգ բոլոր վերաբերեալներուն հետ ձեռ Իզիր
գրութիւն ատ խմբագիր պիտի ուղղի ·


## ԸՐԺՈՒԻՆ ԹՈՒՅԼՏՎԱԼՆ Ի ՕՍՄԱՆՑՈՒԻՑ

Ընտանեաւոր գործոն կը բանայ իւր գանձերը Թոքի Տարեցու Ըրդուիկ, բայց ան նպատակ ու խորհուրդ Մեծերը, գոհացնել կը ատոյգ գործով փնտռոյ բնութիւն ·

Ըստացին Թուրքը տպրիլի ամիս,
Ըրծուիկ գոհ ապրիս ·

Թոքը Թոքը գոհ Ընտրեցնաց ճնա, Թոքը տեր բնդ քեզ, ատոր Ընտանեաւոյն գոյութիան Ընտրց ընծայ առնուիս · նոյնս ի պիտն գրել ·

Վատ ըլլայ ատոր Ըրծուիկ. վատ ըլլայ ժամանակին, վատ ըլլայ նա Ընտանեան բարեկեցութիւն Տերս Թիւան ՅԱՍԻ ԹԻՆ, Ը.Օ.Ի.Օ. մեծ Թիւնագործին · Ընտանեան ի բառնայ զոհ Թիւոյ վերայ իւր պերոյ, առ ատոր ի նուէր ատոյ գինք պրոյնիրուան մասն ·

Ըստ հնուան բառնիր կծոյցին գոյութեան երբոյ վերայ վերայ գոյնիրով · ոյուս հնուան ոյութիւն բնդ ոյութիւն · ատոր Թոքը կրոյցին գոյ գոյ Ըրծուիկ · ատոյ ել Ըրծուիկ, գոհ Ընտրեցնաց պիտոյ Ընծայ գոհ Թիւոյ, հարց. բնդ Ընտրեցնաց գոհ Թիւոյ. ատոր այդ հոս Ընտրեցնաց հարց բառն. ատոր Թոք Ըրծուիկ բն նոյս Ընտրեր · ոյուս հնուան գոհ գոյութեան գոհ ատ բհնոյ ոյութ երբոյ Ընտրեցնաց բհոյս Ընտրեն. Տարեկան · գոհ ձոյն ոյութեան գոհ ատ ատ Ըրծուիկ ել գ ատ ատ ել գոհ · ատ նոյս ատ ատ գոհ ատ · ատ ատ ատ գոհ ատ ·

Ըրծուիկ ատոյգ Ընտրեցնաց Թիւն լրեր, գոհ ձոյնոյգ բարեկեցութեան Թիւն Թիւ. ընդ ոյգոյգ գոհ ատ Թիւ Թիւ. գոհ գոհ ատ Ընտրեցնաց Թիւն · գոհ բոյգոյգ Ընտրեցնաց Թիւն · ԸՍՏԱՒԻՒՆ ատ Ը.Օ.Ի. գոհ գոհ ատ · ոյգոյգ երբոյնիրուն ձ բոյգոյգ · ատոյգ ոյգ Թոքը ատ ձոյգ. Ընտրեցնաց ատ Ը.


ՏՊԱՐԱՒԻՒՆ ՏԱՐՕՆՑԻՑ Թուրքի ճեմարանական թաղ. 11 Ք 17,ծ: Թուրքի քաղ ծառայ 17 Ք 28: Հրատ. Հայկ Ազնուեանի



շատ բարերար ազդեցութիւն թողին ժողովուրդի վրայ և ամէն գիւղի մէջ կարդացուորներու թիւն աւելցաւ։

«Արծուիկ Տարոնոյ» թերթը գիւղերու մէջ վառ հետաքրքրութեամբ կը կարդացուէր։ Գիւղական քահանան, վարժապետ կամ պատանի մը, խումբ մը գիւղացիներու մէջտեղը նստած թերթերը կը կարդային և կը բացատրէին։ Աշխարհիկ, պարզ լեզուով գրուած յօդուածները կը ցուցադրէին ժողովուրդի կրած զրկանքները՝ կառավարութենէն և քիւրդերէն։ Հայ վաշխառուներու և տէտ ու շահամոլ կրօնաւորներու արարքները արձագանգ կը գտնէին թերթի էջերուն մէջ։ Ցաչս կառավարութեան «վստահելի» նկատուած մշեցի Հայ աղաներու ազդադաւ ընթացքն ալ ուղղակի կամ անուղղակի կերպով կը պախարակուէր։ Պետական պաշտօնեաներու զեղծումները, անարդար դատեր, կաշառակերութիւն, բռնութիւններ ևայլն բոլորն ալ կ'արձանագրուէին «Արծուիկ Տարոնոյ» մէջ, որ լոյս կը տեսնէր ամիս երկու անգամ։ Այս թերթը «Լրատար» էր— լուրեր հաղորդող—գաւառի Հայութեան տառապանքի լրատարը, որ կարաւաններու և ճամբորդներու միջոցով կը հասնէր Տաճկահայաստանի, Պարսկաստանի և Կովկասի ամէն կողմեր, Կ. Պոլիս, Զմիւռնիա, Եւրոպա և մինչև անգամ Հնդկաստան և ուրիշ գաղութներ։ «Արծուիկ Տարոնոյ»ն գաւառաբնակ Հայութեան հարազատ ձայնն էր—«Ձայն հառաչանաց հեծութեան սրտի, ողբոց աղաղակի», որ ազատ ու համարձակ կը հնչէր Տարօնի աշխարհէն և կը հասնէր ամենուրեք։ Դերմարդկային ջանքերու արդիւնքն էր Տարօնի նման զուլումի երկրի մը մէջ տպարան հաստատել և թերթ հրատարակելը։ Սակայն, ինչպէս Վասպուրականի, այնպէս ալ Տարօնի մէջ, Խրիմեանի աշխատանքը յաջողութեամբ պսակուեցաւ, որովհետև անոր ամբողջ գործունէութեան միջավայրը հասարակ, պարզ, գեղջուկ ժողովուրդն էր, երկրագործ ու մշակ դասակարգը։ Գիւղ և գիւղացիութիւնն էր Խրիմեանի կէտ-նպատակը, որուն հասնելու համար նա անսահման ոգևորութեամբ և անտրտունջ կ'աշխատէր յանուն գիւղական ժողովուրդի բարոյական և տնտեսական բարօրութեան։

Կ. Պոլսոյ մէջ, Խրիմեանը հարուստներու օգնութեան կը դիմէր և «գիւղսբնակ եղբարց լուսաւորութեան համար» դրական նպաստները կը ստանար։ Իսկ երբ Վասպուրականի և Տարօնի

գաւառական հայոց մէջ մտաւ, անոր հրահանգն էր, որ ժողովուրդը պէտք է հոգայ իր մանուկներու ուսման ծախքերը, առանց յոյս դնելու դուրսէն եկող նպաստներու վրայ։ Այս միտքը շատ որոշ կերպով կ'արծարծէր նաև «Արծուիկ Տարոնոյն»։

Ժողովուրդի տնտեսութիւնը քայքայող, անոր բարոյական, ազգային և ընտանեկան ազնիւ զգացումները ոտնահարող և անոր միամտութիւնը շահագործող ամէն տեսակի և տիպի մարդոց հանդէպ — աշխարհական թէ հոգևորական, Հայ, քիւրդ կամ տաճիկ — «Արծուիկ Տարոնոյն» համարձակ կերպով կը ցցուէր, կը խարազանէր, կը նախատէր և կը սպառնար։ Եւ ժողովուրդին ուզածն ալ այս էր։ Արժէր, որ այս բոլոր հարցերը մէջբերումներով ցուցադրէինք, բայց դժբախտաբար «Արծուիկ Տարոնոյի» ամբողջ թիւերը չր կրցանք գտնել։

Այժմ տեսնենք թէ Խրիմեանի տարօնեան ժողովրդանուէր գործունէութեան դէմ ովքեր ծառացան և ինչ դաւեր լարուեցան։

Խրիմեան Հայրիկի առաջնորդական պաշտօնը ծանր հարուած մը տուաւ Սուրբ Կարապետի տզէտ և շահատէր միաբաններուն, որոնք իրենց ունեցած դիրքերը կորսնցուցին՝ ազգային և հոգևոր ասպարէզներու մէջ։ Ժողովրդական ինքնագիտակցութեան զարթօնքը ծանր մուրճի մը նման իջաւ դիւղական վաշխառուներու և Մշոյ Հայ «աղա»ներու գլխին։ «Իշխան», «մէլիք», «աղա», «տանուտէր» եայլն տիտղոսներով ինքնակոչ «գործիչներ»ը տեսակ մ'իրաւազուրկ վիճակի ենթարկուեցան և այսպիսով ահա դժգոհներու զօրաւոր հոսանք մը յառաջ եկաւ Տարօնի մէջ՝ Խրիմեանի անձի և գործունէութեան դէմ։ Այս դժգոհ և իրաւազուրկ անձերը, ձեռք ձեռքի տուած, ամէն տեսակ միջոցներու դիմեցին Խրիմեանը Տարօնէն հեռացնելու համար։ Սակայն Խրիմեանը մենակ չէր. անոր կողքին կանգնած էր գեղջուկ ժողովուրդը, որ արհամարհանքի և դատապարտութեան սիւնին գամեր էր բոլոր անոնց, որոնք Հայրիկի գործերը խանգարել կ'ուզէին իրենց դաւերով։

Ժողովուրդի սէրը և առողջ բնազդն ու պաշտամունքը իրար գրկած ուժ և կորով կը ներշնչէին Խրիմեանին։ Հակառակորդներու պայքարը այնքան սուր կերպարանք կը ստանայ, որ անոնք կը դիմեն մատնութեան և դաւաճանութեան, կառավարութեան յայտնե-

լով, որ Խրիմեանի նպատակն է Մշու Դաշտի մէջ յեղափոխութիւն պայթեցնել, հայկական թագաւորութիւն ստեղծել հոյլն և իբրև փաստ ցոյց կուտան «Արծուիկ Տարոնոյ»ի հրատարակութիւնը, անոր մէջ տպուած ազգային և հայրենասիրական յօդուածները, քիւրդերու և պետական պաշտօնեաներու կատարած զեղծումներու և բռնութեանց մասին գրուած լուրերն ու դէպքերը։

Եւ ահա օր մը, 1863-ի Յուլիսի սկզբին, Մշոյ Հայ «երեսփիներէն Վարդան Աղա Մամիկոնեան*) անունով ազդեցիկ անձ մը, որ միաժամանակ նաև Խրիմեանի Թշնամիներէն մէկն էր, Մշոյ տաճիկ միւթէսարրիֆի (փոխ նահանգապետի) մօտ երթալով կը յայտնէ, որ Խրիմեանի հրատարակած «Արծուիկ Տարոնոյ» թերթը կառավարութեան դէմ զրպարտիչ լուրեր և յօդուածներ կը տպէ, որ Խրիմեանի այդ «հակապետական ընթացքը» ժողովուրդին և երկրին համար «շատ վտանգաւոր» է, որ Խրիմեանը կը գործէ ոչ թէ իբրև հոգևորական այլ՝ յեղափոխական հոյլն հոյլն և կ'առաջարկէ, որ կառավարութիւնը փակել տայ Սուրբ Կարապետի տպարանը և դատերնէ «Արծուիկ Տարոնոյ»ի հրատարակութիւնը։

Միւթէսարրիֆն անմիջապէս ոստիկաններ կ'ուղարկէ Սուրբ Կարապետի վանքը հրամայելով, որ կնքեն տպարանի դուռները։ Ոստիկանները կը կատարեն հրամանը։ Հայրիկը այդ օր վանքէն գացեր էր գիւղերը շրջելու։ Երեկոյեան երբ կուգայ վանքը և կը լսէ, որ տպարանը կնքուած և թերթի հրատարակութիւն ալ ար—

*) Վարդան Աղա Մամիկոնեանը, 1860 թուին «Արծուի Վառպուրական» թերթի Մուշի գործակալն էր և հետուէ հետու Խրիմեանին կը համակրէր։ Բայց երբ Խրիմեանը Տարօնի Առաջնորդ դարձաւ և պայքար մղեց ժողովուրդը շահագործող Հայ ցեց-աղաներու դէմ, Վարդան Աղան ալ, իբրև վաշխառու; կաշառակեր և կառավարական մարդ, հալածանքի ենթարկուեցաւ Խրիմեանի կողմէ։ Այսպիսով ալ ահա Վարդան Աղան դարձաւ Խրիմեանի երդուեալ հակառակորդն ու կատաղի թշնամին։ Ցաչս Տարօնի Հայութեան Վարդան Աղան ճանչցուած էր իբրև պետական շահերու պաշտպան և հակաժողովրդական անձ մը, որու մասին մեր հին հայդուկներէն Գոփեցի Մուշեղ Թէրզեանը, ինձ պատմեց (1928 Մայիս 24)հետեւեալը—«Գոփի հայերու և կառավարութեան մէջ յուրջ հարց մը կար, որ խաղաղ կերպով լուծելու համար միջնորդեցին Մշոյ Միւթէսարրիֆ և Հայոց Առաջնորդ Տրիգորիս Նպիս. Ալէքճեանը։ Առանց հետ Գոփ եկաւ նաև Վարդան Աղան, որ երբ ժողովուրդի մօտ բերան բացաւ պիտի խօսէր, ամէն կողմէ կանչեցին—«մատնիչ, դաւաճան լուր, ոուսօ», նախատեցին և լռեցուցին։ Այո, Վարդան Աղան վատ մարդ էր։

գելուած է, անմիջապէս կը կոտահէ, որ այդ դաւաճանութեան հեղինակը. Վարդան Աղա Մամիկոնեանն է, որուն կը զրէ հետեւեալ նամակը*).

*Մեծարոյ Վարդան Աղա*

*Յոհական մարդ*

*Տարօնոյ Արծուիկին համար ի՛նչ որոզայթներ որ լարուած են ու կը լարուին, գիտէ Հայր Արծիւը:*

*Ընդայրաբար կը խրատեմ զքեզ թո՛ղ տուր այդ ճեռնարկութիւնդ եւ սովորիր հետեւիլ Քիսուսի հեզութիւններուն:*

*Եթէ փարաւոնամիտ ոգւով կ'իյնաս Մովսէսի մը ետեւէն, ամէն ասեմ քեզ, կարմիր ծովին մէջ պիտի խեղդուիս: Ողջ լեր:*

*Ի վանս Ս. Կարապետի* *Աղօթարար*
*1863 Յուլիս 13* *Յրիմեան Հայրիկ*

«Արդէն մութն ընկած էր, երբ Հայրիկը կանչել տուաւ վանքի ձիաւոր սուրահանդակը, այս նամակը տուաւ անոր, պատուիրելով, որ երթայ քաղաք (Մուշ) և անձամբ յանձնէ Վարդան Աղային. Սուրհանդակը ճամբայ ելաւ. Նա կէս գիշերէն յետոյ հասած էր քաղաք և նամակը տուեր էր Վարդան Աղային. Յաջորդ օր, Յուլիս 14-ի երեկոյեան կողմ, մէկ ալ տեսանք Վարդան Աղան, ուրիշ երկու աղաներու հետ (անունները չեմ յիշեր) եկաւ վանքը և գնաց Յրիմեանի մօտ. Հէնց, որ սենեակի դուռը բացաւ ու ներս մտաւ, Աստուածի իմ, Յրիմեանը կրակ ու բոց դարձաւ և աղաղակեց «Ագռաղա՛ւ, մատնի՛չ, Յուդա՛ եւ Վասակ, ինչու եկար, այո՛ դուն պիտի խեղդուիս կարմիր Ծովին մէջ՝ եթէ արարքներդ շարունակես». Վարդան Աղան սարսափահար գետին ընկաւ և կ'ուզէր Յրիմեանի ոտները

*) Համայեակ Վարդապետ Արշարունիի մօտ կը գտնուէր այս նամակի պատճէնն. Ժամանակին Յրիմեանի աշակերտները արտագրած են այդ նամակը և հաճոյքի համար բերանացի արտասաներ են ամէն տեղ: Նոյնն ըրած էր նաև Արշարունին, որ պատճէնն ինձ ցոյց տուաւ և օգնութեամբ արտասանեց: Համայեակ Վարդապետ Արշարունին ինձ նուիրեց (1920 Ապրիլ 17) այս խիստ բնորոշ նամակի պատճէնն, որ լոյս կ'ընծայեմ առաջին անգամ:

համբուրել, բայց նա ետ քաշուեցաւ ու կանչեց — «Դուն կը սողաս, ես կը թռչիմ, սակայն գիտցիր Արծիւը սողունիդ կը ներէ այն ատեն միայն երբ կնքել տուածդ տպարանը բացուի. ահա իմ վերջին խօսքը»։ Վարդան Աղայի ուղեկիցներ և վանականները միջամտեցին, Հայրիկը հանդարտեցաւ և ծխելով գնաց վանքի այգին ու ծառի մը տակ առանձնացաւ։ Վարդան Աղան ամօթապարտ և ընկճուած հեռացաւ վանքէն ու գնաց Մուշ։ Երկու օր յետոյ, Մշոյ միաբէսարըֆը գրութեամբ մը կը յայտնէր Խրիմեանին թէ, տպարանի կնքումը թիւրիմացութեան արդիւնք է, իսկ Վարդան Աղան ալ այդ գործին մէջ յանցանք չունի եղեր։ Այս դէպքէն յետոյ թէև Վարդան Աղան առերես Հայրիկին բարեկամ կը ձեւանար, բայց ներքնապէս կատաղի հակառակորդ և թշնամի դարձաւ»*)։

Սակայն «Արծուիկ Տարոնոյն», նախ երկու անգամ հպարտութեամբ կը սլանար և ազդու, համարձակ կերպով կ'արձանագրէր Տարօն-Տուրուբերանի Հայութեան տառապանքներր։ Այդ «լրատար» թերթի էջերը կը պատկերացնէին գաւառի Հայութեան զուլումի և արհաւիրքներու պատմութիւններն ու դէպքերը՝ ժողովուրդի արիւնարցունքով գրուած։ Գարեգին Օրուանձտեանցն էր «Արծուիկ Տարոնոյ»ի հոգին և դեկավարն ու խմբագիրը։ Հայր Արծիւը ժամանակ չ'ունէր նստել վանրը և թերթի ու տպարանի գործերը կառավարել։ Հայրիկը ժողովուրդի մէջն էր միշտ, ձիով ու ոտով կը շրջէր գաւառներն ու գիւղերը և իր տհաճներն ու յաճները իր գիր առնելով գիւղական սուրահանդակներու ձեռքով կը հասցնէր Ս. Կաթողիկէ վանրը՝ «Արծուիկ Տարոնոյ»ի մէջ հրատարակուելու համար։

Օրուանձտեանցի գրական արժանիքներն ու տաղանդը փայլեցան մանաւանդ «Արծուիկ Տարոնոյ»ի մէջ։ Վարագայ «Ժառանգաւորաց Վարժարան»ի այս հոյակապ դէմքը, Խրիմեանի այս զաղափարական և ժողովրդանուէր աշակերտը «Արծուիկ Տարոնոյ»ի միջոցով ճիմ կր դրնէր Հայ ազգագրութեան եւ ժողովրդական անգիր բանահիւսութեան նաւատագրութեան եւ ուսումնասիրութեան։ Հայ ժողովրդական-ազգային դիւցազնավէպը — «Սասունցի Դաւիթ» — Օրուանձտեանցը կը յայտնագործէր և մեր գրականութեան սեփա-

*) Գաւոժեց Համայեակ Վրդ. Աբշարունի. (Էջմիածին 20 Ապրիլ 1920-ին)։

կանութիւն կը դարձնէր։ Հայ ժողովրդական անգիր բանահիւսութեան սիրահար մըն էր Սրուանձտեանցը, որ կը գրէր.

«Ես ինքս ալ վաղուց սկսած էի ճաշակս և գրիչս սիրել տալու այսպիսի առարկայից, և Արծուի Վասպուրականի մէջ՝ի Վարագ տպագրել տուի Վանեայ պատմաւոյ աղօթքը նայլն։ Ի Մուշ ալ Տարոնոյ Արծուիկի մէջ Մշեցւոց լեզուով գրուածքները և քանի մը երգեր տպագրեցի. բայց որովհետև միշտ Արծուոյ թռիչ խափանեցին և Արծուիկը խոխոտեցին, երկուքի շարունակութիւնն ալ վատութեանց և մատնութեանց զոհ ընելով»*) նայլն։

Եւ իսկապէս «Արծուիկ Տարոնոյ»ի հրատարակութիւնը հազիւ մէկ ու կէս տարի տևեց (1863 Ապրիլ 1—1864 Օգոստոս 15), վասն զի Խրիմեանի թշնամիները այնքան բազմացան, որ բացարձակ կերպով հրապարակ իջան և պայքարեցին անոր գործունէութեան դէմ. կառավարութիւնն ու քիւրդ բէկերը բոլորն ալ պաշտպան հանդիսացան Խրիմեանի թշնամիներուն, որոնք ի վերջոյ ծանր ամբաստանութիւններ և զրպարտութիւններ բովանդակող տեղեկագիրներ կազմելով բողոքեցին թէ կառավարութեան և թէ Պատրիարքարանին, որ Խրիմեանը պատասխանատուութեան կանչուի։

Այս շարժման գլխաւոր դեկավարները կը հանդիսանան Ս. Կարապետի վանքի երկու ազդեցիկ միաբաններ՝ Մամբրէ Վարդապետ և Եսայի վրդ. Ղևոնդեանը, որոնք նախ քան Խրիմեանը, Մշոյ ազգային գործերու վարիչներն էին և վանքի եկամուտներու անհաշիւ տնտեսները։

Կառավարութիւն, քիւրդ բէկեր, Հայ կղեր, «աղաներ, վաշխառուները և ժողովուրդի արիւն-արցունք քամող ամէն տեսակի ու տիպի խաւարամիտ և տգէտ, շահամոլ և կաշառակեր տարրերը, ձեռք ձեռքի տուած՝ կատաղի հալածանք մը կազմակերպեցին Խրիմեանի դէմ։

Դաւեր, մատնութիւններ նորէն ծայր առին, որոնց առաջին զոհը դարձաւ «Արծուիկ Տարոնոյ»ն։ Խմբագիր Սրուանձտեանցը թևրթի վերջին համարին մէջ (1864, Օգոստոս 15) հետևեալ տողերով «Արծուիկ Տարոնոյ»ի տապանագիրը կ'արձանագրէր.

*) Խոց ու Իոց—Ծրագրեաց Գ. Վ. Սրուանձտեանց. Բ. Տպագրութիւն. 1910. Կ. Պոլիս. էջ՝ 81։

«Ես ալ իմ ծնողին ճակատագիրն ունիմ. Վասպուրական Արծուիս ճանաչող Տարոնոյ Արծուիկին պիտի չի զարմանաս, բայց մեր արգոյ բաժանորդներէն մէկ քանին հետևեալ բողոքն ուղղած են առ մեզ.—„Տարիքաց երկու մասէն, կ'ըսեն, բաղկացած էր ձեր թերթիկն, վասն զի գարունը ծնաւ, ամառը թռաւ, աշունը մեռաւ ձմեռը թաղեցաւ ըսենք, ինչ ըսենք. Մենք շատ կը սիրէինք զինքն իբրև հայրենեաց պատմաբեր թռչնիկ, բայց դուք շարունակութիւն մը չունիք, շատոնց ի վեր չընդունելով Արծուիկիդ թերթն՝ անոր կարօտ ենք և կը փափաքինք յայտնէք մեզ թէ ինչ է առիթ ատոր դադարման կամ ընդհատութեան, ձեր զանցառութիւնն արդեօք թէ տեղւոյդ անյարմարութիւն... կը պատասխանենք՝ Այո տեղւոյն անյարմարութիւն, անկարգութիւն, բռնաւորութիւն, վանրի մասնաւոր միաբանութիւն..., և ասոնց ամենուն հայր շահասիրութիւնն է առիթ, որ զհայր Արծիւն մատնեցին, Ածուիկի օրօրանը դարձուցին իրեն գերեզման, կապեցին զմամուլ, գոցեցին տպարան, փակեցին գառաջնորդարան, ցրուեցին զվարժարան»։

Այսպէս ահա, այս անտանելի թոհ ու բոհին մէջ ընդմիշտ կը լռէր «Արծուիկ Տարոնոյ»ն, որուն հետ կը խեղդուէր նաև Տարօնի տանջուած Հայութեան բողոքի ձայնը. Գառավարութիւնը կ'որոշէր, որ այլևս ոևէ տպարան չը հաստատուի Հայաստանի մէջ. Նկատելով, որ տպարանները լոյս կ'ընծայեն կառավարութեան դէմ բողոքող թերթեր և ապստամբութեան գաղափարը կ'արթնցնեն Հայ ժողովուրդին մէջ. Խաւարի և տգիտութեան պայքարն էր այս լոյսի և դիտութեան դէմ, պայքար՝ որուն զեկավարները «Արծուիկի օրօրանը դարձուցին իրեն գերեզման»։

Վշտահար Հայրիկը տխուր, տրտում օր մը կը նստէր Ս. Կարապետի վանքի պուրակի ծառերու շուքին տակ, աչքերը դէպի Վասպուրականը կ'ուղղէր ու կը հիւսէր այս տողերը.

«Հոն դուն, որ յարև կուսէն, Վանայ ծովէն շնչես անոյշ,
Շնչեա, թող փարատի մէգն և մշուշ Մրջոյ դաշտին.
Եւ պայծառ տեսից զաշխարհս զոր սիրեցի, յոր տրբնոջայ,
Ասացի գինի ճառլ վ սուխմ, ո՜հ, ոխերիմ բիջուցիւ զայն...»։

Այդ «հին ճառագոր ուսման և կրթութեան սիրոյ ճրագն էր, ազգի և հայրենիքի սիրոյ, բարօրութեան և ազատութեան ճրագն

էր, Հայութեան ինքնագիտակցութեան և մտաւոր, ազգային ու քաղաքական վերածնութեան ճրագը, որ «ոխերիմը շիջուցին զայն»։

Հովը կը փչէր Վանայ ծովէն, կը սուրար Տարօնի վրայ ու Հայրիկն ալ կը վառէր հին և նոր ճրագները՝ ջանալով փարատել «մշուշ Մըշոյ դաշտին»։ Սակայն Հայ կղերն ու «աղա»ները—խաւարի և տգիտութեան այդ տարրերը—ամէն տեսակ ստոր և ազգադաւ միջոցներու դիմեցին լոյսի և գիտութեան ջահերն ու ճրագները մարեցնելու՝ Տարօն-Տուրուբերանի Հայութիւնը մշուշի և մութի մէջ պահելու նպատակով։

Խրիմեան Հայրիկը տարի մը Մշոյ մէջ գործելէ յետոյ, 1863-ի Սեպտեմբերին ճամբայ ելաւ դէպի Վան՝ Վարագայ վանքի, թերթի ու դպրոցի գործերը տեսնելու համար։ Այս այցելութենէն շատ մը ետք, վասնզի իր բացակայութեան ատեն, ամբողջ տարի մը (1862 Սեպտ.—1863 Սեպտ.) վանքի միաբաններ, ուսուցիչներ և աշակերտներն անձնուիրաբար և բուռն եռանդով շարունակեր էին իրենց Մեծ Ուսուցչի Մեծ Գործը։

«Աննկարագրելի էր այն ուրախութիւնը, որ տիրեց ամբողջ Վարագին, երբ պաշտելի վարդապետը մտաւ վանքը։ Դա մի տօնախմբութիւն էր վանքի համար», կը գրէ Խ. Մալումեանը։

Կարճ ժամանակէ մը յետոյ Խրիմեանը վերադարձաւ Մուշ և շարունակեց իւր հովուական պաշտօնը։

## Թ.

## ՄԱՏՆՈՒԹԻՒՆՆԵՐ, ԴԱՒԵՐ ԵՒ ՄԱՀԱՓՈՐՁԵՐ

Երբ Խրիմեանը Տարօնէն գնաց Վան, անոր թշնամիները սանձարձակ և եռանդուն կերպով գործի լծուեցան, որպէս զի ժողովուրդի կողմէ բողոքի և դժգոհութեան հանրագրութիւններ պատրաստել տային Հայրիկի գործունէութեան դէմ։ Սակայն Տարօնի գիղջուկ հայութիւնը համարձակ կերպով ծառացաւ Խրիմեանի թշնամիներու դէմ պաշտպանելով իւր այնքան սիրած Հայրիկի իրաւունքներն ու հեղինակութիւնը։

Խրիմեանի թշնամիներու գեկավարները և ցայտուն դէմքերն էին

Ս. Կարապետի վանքի չորս միաբաններ—Գրգաթոռ (Գրիգորի Թոռ) Կարապետ, Եսայի և Մաւրբէ վարդապետները—որոնց թէև թիկունք և պաշտպան կը հանդիսանային տաճիկ պաշտօնեաները և մշեցի Հայ «աղա»ները։ Այդ չորս վարդապետներու հակաժողովրդական գործերը և Խրիմեանի դէմ մղած պայքարը այնքան սև էջեր և ամօթաբեր դրուագներ ունի, որ մէկ առ մէկ արձանագրելը երկար և դժուար պիտի ըլլար։ Այդ քառեակ սևահոգիներու միակ նպատակն էր, որ Խրիմեանը՝ յաչս կառավարութեան և ժողովուրդին վարկաբեկուի և հեռացուի Տաթևէն։ Հայրիկի թշնամիները նախ կը դիմեն մատնութեան և կառավարութեան կը յայտնեն, որ «Խրիմեանը եկած է Մուշ պետութեան դէմ յեղափոխական շարժումներ և ըմբոստութիւններ կազմակերպելու համար»։ Պատրիարքարանին կը գրեն, որ «Խրիմեանը Ազգային Սահմանադրութեան օրէնքները կ'ոտնակոխէ, ժողովուրդի իրաւունքներն ու շահերը կ'արհամարէ, հոգևորականութեան պատիւը կ'արատաւորէ, վանքերը կը ժողովրդականացնէ» և այլն նման զրպարտիչ տեղեկագրեր կ'ուղարկուին Գ. Պոլիս։ Այդ չորս վարդապետներն ամենուրեք կը շրջէին և կը համոզէին ժողովուրդը, որ Խրիմեանի մասին աննպաստ զեկուցումներ գրեն Պատրիարքարանին։ Այս նպատակին հասնելու համար վարդապետները, կաշառք և պաշտօն կը խոստանային, կը սպառնային և այլն։ Ահա երկու օրինակ.

«Այս չորս վարդապետք ի ներկայութեան Յովհաննէս Եպիսկոպոսի 1,000 ղրուշի պարտամուրհակ մը տուած են մշեցի Համբարձում պարտատէրին, որ ի նպաստ իրենց և ի վնաս Խրիմեանի աղերսագիր տայ։ Մշեցի կօշկակար Յակոբին 1,000 ղրուշի պարտամուրհակ տուած են՝ Խրիմեանի դէմ բողոքելու համար, բայց իրողութիւնն յայտնուելով՝ խառն ժողովին ներկայացաւ։ Պարտամուրհակը ներսէս եպիսկոպոսին քովն է»։ Այս տողերը կ'արձանագրէր Խրիմեանի ջերմ պաշտպան Գրիգորիս Ալէքճեանը՝ իւր «Թռչնիկ Պեզասեան» թերթի մէջ (Կ. Պոլիս, 1864)։

Խրիմեանի դէմ կը ծառանար նաև «Հինաւուրց» Յովհաննէս Եպիսկոպոսը, որ յիշեալ չորս վարդապետներու արարքները կը վաւերացնէր, հրահանգիչ ունենալով «Մշոյ աշխարհական դասէն ազդեցիկ անձինք, որոնց համար պատրաստ սեղան մի եղեր էր Մուշն

ու վանքը և խորտիկ ու ըմպելի վանքին գանձն ու ժողովրդեան արցունքը»։

Խրիմեանի թշնամիները պաշտօնական գրութիւններով դիմեցին նաև Կարնոյ կուսակալին, յայտնելով ով Խրիմեանը «հակապետական ընթացք բռներ է» Տարօնի մէջ։ «Կարնոյ մէջ չարութեամբ ծերացեալ քահանայ մը, որ այն ժամանակ առաջնորդական փոխանորդութեան պաշտօն կը վարէր՝ գործակցութեամբ քանի մը անուանի աշխարհականաց՝ պաշտօնապէս կը հաստատէր Կարնոյ կուսակալին վճիռը, Հայրիկի վրայ Մշոյ չարաիւսաց գրածները»։

Այս դեռ բաւական չէր, այդ «չարութեամբ ծերացեալ քահանայ»ն ի Կ.Պոլիս Ե. Վարդանեանի խմբագրած «Մշեմուայր Հայաստիս» թերթին մէջ պարբերաբար յօդուածներ կը հրատարակէր Խրիմեանի գործունէութեան դէմ և կառավարութեան ու Ազգային Ժողովին կոչ կ'ընէր որ Խրիմեանը դատի կանչուի։

«Չարաիւսութիւնք այնքան զարհուրելի էին, որ անոնց առջև ոչ միայն Հայրիկը այլև Մշոյ ամբողջ Հայութիւնը կորստական դատաստան կը կրէին» կը վկայէ այդ դէպքերուն ականատես Աւակեւրը։

Այս բոլոր երևոյթները բացատրելու համար, Հայրիկը 1864 ի Սեպտեմբերին կ'երթայ Կ. Պոլիս և ներկայանալով Պատրիարքարանին, Ազգային Ժողովին ու կառավարութեան՝ մանրամասնաբար և հանգամանօրէն կը պատմէ իր թշնամիներու սարքած դաւերու և մատնութեանց պատճառները։

Կառավարութիւնը — Ռ. Դուռը — «Ռճճիչ Ցանձնաժողով» մը կ'ուղարկէ Տարօն՝ Խրիմեանի վրայ բարդուած մեղադրանքները քննելու համար։ «Ցանձնաժողովն անաչառապէս մանրամասն քննութեան առաւ խնդիրները և տեղեկացրեց Ռ. Դրան հերքելով ամբողջ ամբաստանութիւնը և ցոյց տալով թէ Խրիմեան Հայրիկը ծառայած էր խղճի մտօք տէրութեան և ազգին։ Գարդարանաց Հայրիկն և կը հաստատուէր իր պաշտօնին մէջ»։

Հայրիկի հեռանալէն յետոյ անոր թշնամիները հալածանքի կ'ենթարկեն Ե. Կարապետի «Ժառանգաւորաց Վարժարանի ուսուցիչները և աշակերտներն ու որբերը, որոնք վանքի մէջ չորաչար տանջանքներ կրելէ յետոյ, գիշեր մը մեծ խումբով կը փախչին լեռները՝ թշնամիներու ձեռք չիյնալու համար։

Հայր Արծիւը հեռացեր էր Տարօնէն, իսկ Արծուիկները անտէր և անպաշտպան, քաղցած և կիսամերկ՝ ապաստաններ էին լեռներու անառիկ բարձունքներու վրայ և կամ անտառներու խորքերը։ Օր մը այս հալածական Արծուիկները կը խմբուին և կ՚որոշեն իրենց այդ թշուառ վիճակի մասին նամակ մը գրել Հայ Արծուին։ Թուղթն ունէին, կը պակսէր գրիչ և թանաք։ Ոլբան յուզիչ և կսկծալի եղած է այն տեսարանը, որ աշակերտներէն մէկ քանիները փուշով ծակծկեր են իրենց բազուկները և արիւն հաններ են։ Նամակագիրը չոր բոյսի մը ցօղունը գրիչ շինելով այդ արիւն-թանաքով նամակ գրեր է։ Երբ Հայրիկը կը ստանայ այդ նամակը և կը տեսնէ, որ արիւնով գրուած է, ինքն ալ հնձկլտալով կուլայ և իր արցունքով կը թրջէ այդ արիւնագիր նամակը։ Հայր Արծուի արցունքն ու Արծուիկներու արիւնը իրար խառնուելով հանրօգուտ և ազդանուէր Մեծ Ուխտի մը սրբազան ու հոյակապ յուշարձանը կը կերտէին։

Խրիմեանը 1865-ի գարնան Կ.Պոլսէն կը վերադառնայ Տարօն և կը շարունակէ իր գործունէութիւնը։ Կարճ ժամանակէ մը յետոյ անոր թշնամիները նորէն հրապարակ կուգան և մատնութիւններ ու դաւեր կը նիւթեն։ Գլխաւոր դերակատարները նորէն Ս. Կարապետի միաբաններն էին, որոնք կը հաւաքուէին վանքի արևմտա-հարաւակողմը, «Բամբասանաց բլուր» կոչուած վայրը՝ «Հայրիկի դէմ սարքուած ատելութեան իրենց ծրագիրները որոճալու համար։ Հանրային խղճմտանքին կանգնած անարդանքի սիւնն էր այդ բարձունքը, որուն վրայ գամած էր ժողովուրդի զզացումը՝ անսիրտ կրօնաւորներուն դատապարտութեան վճիռը»*)։

«Թռչնիկ Պզտասեան» թերթը 1865-ի գարնան, հետեւեալ լուրը կը հրատարակէր.

«Խրիմեանի հակառակորդ չորս վարդապետք՝ չորրորդ անգամ դայն մատներ են անհիմն ամբաստանութեամբ լեցուն հանրագրութիւն մը մատուցանելով կուսակալին (Կարնոյ)։ Այդ հանրագրութիւն՝ Չէրքէզները ապկէց հեռացնելու համար է ըսելով՝ միամիտ ժողովուրդին ստորագրել տալով՝ կուզեն եղեր Ր. Դրան դրկել»։

Ր. Դուռը ստանալով այդ ամբաստանագիր-հանրագրութիւնը կը հեռագրէ Մշոյ միւթէսարըֆին, որ Խրիմեանը կառավարութեան դուռը կանչուի և խիստ քննութիւն կատարուի։ Մշոյ կառավարա-

*) Թ. Ե. Գ. Եղիմեան Հայրիկ։ էջ՝ 37։

կան շէնքին մէջ տեղի կ'ունենայ այդ պատմական քննութիւնը։ Թուրք պաշտօնեաները, քիւրդ բէկեր և ցեղապետներ, Հայ հոգևորականներ և «աղա»ներ խօսքերնին, սրտերնին մէկ ըրած ամէն տեսակ սուտ վկայութիւններ և զրպարտութիւններ ի յայտ կը բերին, ջանալով հաստատել, որ Խրիմեանը պետութեան դէմ կը գործէ։ Քննիչները ձայն կուտան Խրիմեանին, որ երկար ու փաստական ճառով մը կը բացատրէ թէ իր դէմ լարուած դաւերն ու մատնութիւնները՝ նախանձի, չարակամութեան, կաշառքի և թշնամութեան արդիւնք են և իւր ճառը կը վերջացնէ այս խօսքերով.

«Իմ հակառակորդաց ոսկին պիտի հատնի, բայց իմ համբերութիւնս չը պիտի սպառի. կը համբերեմ, մինչև արդարութիւնը հասնի ու պաշտպանէ զանմեղութիւնը»։

Խրիմեանը կ'արդարանար, իսկ զրպարտիչներն ու մատնիչները խայտառակուելէ յետոյ, նորէն կը շարունակէին իրենց դաւադրութիւնները։

Մինչ Մշոյ մէջ Խրիմեանը կ'ամբաստանուէր ու կը դատուէր միւս կողմէ Տարօնի գեղջուկ Հայութիւնը՝ «մեծ ցասմամբ լեցուած ժողովուրդ և գլուղապետք Խնուսայ, Գուլանրխի և դաշտի հայոց ժողվեցան» ի Մուշ պաշտպան հանդիսանալով Հայրիկին։ Հազարաւոր գեղջուկներ, ձիաւոր և ոտաւոր, ժողովրդական մեծ ցոյցով Խրիմեանը—իրենց սիրելի Հայրիկը—քաղաքէն առաջնորդեցին դէպի Ս. Կարապետի վանքը, ուր լեցուած էին զինուած քիւրդեր և չորս դաւադիր վարդապետներու կողմէ կաշառուած խումբ մը հայեր, որոնք դիմադրութիւն ցոյց տուին ժողովուրդին թոյլ չտալով, որ Խրիմեանը վանքի պարիսպներէն ներս մտնէր։

«Բանը այնտեղ հասաւ, որ պաշարողք բաղխեցան իրարու, ահա կենաց վտանգներ սկսան երևան գալ. հազիւ մէջ կը մտնէր Հայրիկն և զինքն առաջնորդողները կը համոզէր, յարձակողները կ'ամօքէր», կը վկայէ ականատեսը։

Այս ընդհարումը կը վերջանար, իսկ Խրիմեանն ալ առանց վանքը մտնելու ճամբայ կ'իյնար դէպի Կարին և տեղւոյն Հայոց Առաջնորդ Բարութիւն Եպիսկոպոս Վեհապետեանին*) կը պատմէր

*) Պատրիարք Հայոց Թուրքիոյ (1885) և ապա Երուսաղէմի (1889)։

Տարօնի Հայութեան խռովայոյզ վիճակը և Ս. Կարապետի վանականներու սարքած խայտառակութիւնները։

Խրիմեանը երբ կը հեռանար Տարօնէն, չորս վարդապետները թէև կը զգան, որ ծանր պատասխանատուութեան տակ պիտի իյնային, սակայն այս անգամ ալ գրաւոր և բանաւոր յուրեր տարածեցին ժողովուրդին մէջ թէ Խրիմեանը «վանքի գանձերն էր կողոպտեր, խաշնը ու աւետարաններ էր գողցեր, ուստի և փախաւ, հեռացաւ»։

Ճարութիւն Եպիսկոպոս և Խրիմեանը, Տարօնի Հայութեան ազգային այս խռովայոյզ վիճակի մասին մանրամասն տեղեկագիր մը կազմելով կը ղրկեն Կ. Պոլիս և Պատրիարքարանէն կը պահանջեն, որ նորէն քննութիւն կատարուի։

Պատրիարքարանը անմիջապէս կը հեռագրէր Ճարութիւն Եպիսկոպոսին, որ մեկնէր Մուշ, Տարօնի ազգային գործերն ու խռովութիւնները քննելու համար։ Ճարութիւն Եպիս.-ը կը հասնէր Մուշ. ապա Ս. Կարապետի վանքը և գործի կ'անցնէր։ Հարցաքննութեան կ'ենթարկուէին բազմաթիւ վկաներ, որոնք բոլորն ալ կը հաստատէին Խրիմեանի անմեղութիւնը և կը դատապարտէին անոր թշնամիներու ազգադաւ գործերը։ Ժողովուրդին կողմէ հանրագրութիւնները կը տրուէին քննիչ Եպիսկոպոսին պնդելով, որ «Հայրիկը եկեղեցւոյ, ազգի և ժողովուրդի շահերուն միակ պաշտպանը հանդիսացեր է Տարօնի մէջ, որ անոր դէմ յարուցուած թշնամութիւնները ն ու զրպարտութիւնները դատապարտելի են» և այլն։

Ճարութիւն Եպիսկոպոսը լսեց նաև Խրիմեանի թշնամիներու և հակառակորդներու վկայութիւնները և հաստատապէս համոզուեցաւ, որ ատոնք բոլորն ալ զրպարտութիւններ և ստոր դաւեր են։ Քննիչ Եպիսկոպոսը ծանր ամբաստանագիր մը պատրաստեց, եզրակացնելով, որ գլխաւոր յանցաւորները Ս. Կարապետի վանքի վեց վարդապետներն են, որոնք շահասիրութեան և պաշտօնի ու դիրքի համար, քանի մը տարի շարունակ փոթորկեր էին Տարօնի Հայութեան ազգային, ներքին կեանքը, չարութեամբ և նախանձով լեցուեր էին Խրիմեանի դէմ և հալածանք, դաւեր, մատնութիւններ յարուցելով աշխատեր էին զայն հեռացնել Տարօնէն։ Ճարութիւն Եպիսկոպոսը իր գրաւոր զեկուցման մէջ պահանջ կը դնէ, որ Պատրիարքարանը պատժել տայ խռովարար և ազգադաւ վեց վարդապետները և ընդառաջելով ժողովուրդի ցանկութեան հրահանգէ,

որ Խրիմեանը նորէն Տարօնը վերադառնայ և շարունակէ իւր հովուական գործունէութիւնը։

Մինչ Ցարութիւն Եպիսկոպոսը Մշոյ ազգային գործերու քննութեամբ կը զբաղուէր, Խրիմեանն ալ ի կարին նստած՝ «Կարնոյ կուսակալին նշանաւոր տեղեկագիրը մը մատոյց Մշոյ երկրի նկատմամբ. նկատողութեան առնուեցաւ այդ տեղեկագիրը, որոյ արդիւնքն եղաւ Վսեմ. Կուսակալին անձամբ քննութեան երթալ այն աշխարհին, և հօթանասուն նշանաւոր անձինք տարագրել Րումէլիի կողմերը, որոց մեծ մասն քիւրդ էին*)»։ Այդ «հօթանասուն նշանաւոր» անձերն էին քիւրդ աւազակապետներ, բռնաւորներ, կաշառակեր և վատահամբաւ տաճիկ պաշտօնեաներ, որոնք Խրիմեանի տեղեկագրին համաձայն, մէկ մէկ պատուհաս դարձեր էին Տարօնի հայ և քիւրդ գիւղացիութեան գլխին. Ատոնք բոլորն ալ կ'աքսորուէին Եւրոպական Թուրքիա (Րումէլի) և Տարօնը մի առ ժամանակ ազատ շունչ կը քաշէր։

Կարնոյ մէջն էր դարձեալ, որ Խրիմեանը ստացաւ Հռոմի Պիոս Թ.-րդ Ս. Պապին հրաւիրագիր-շրջաբերականը, որ աշխարհի բոլոր եկեղեցիներու բարձրաստիճան հոգևորականութեան ուղղուած՝ հրաւէր կը կարդար երթալ Հռոմ Ս. Պապին «անսխալականութիւնը հաստատող ժողովին մասնակցելու համար»։

Հայ հոգևորականութիւնը չը պատասխանեց այդ շրջաբերականին**), իսկ Հայրիկը գրութեամբ մը հրապարակ եկաւ և ցոյց տալով քրիստոնէական գաղափարի ազատ և խոնարհ հոգին հետեւալ խօսքերը կ'ուղղէր Ս. Պապին.

*«Այսպիսի ժողովոյ մը տեղ չիձգուս եր Քրիստոսի խոնարհ թագաւորութեան ծանծեւան Մատուրիս համ Դողգոթայիս մօտ, եւ ոչ Հռովմայ վեհ աթոռին»։*

Կարնոյ մէջ քանի մ'ամիս Խրիմեանը հանգիստ կեանք վարեց, հեռուանց վարելով նաև Վարագայ վանքի և դպրոցի գործերը։ Իւր կրած հալածանքներու և տանջանքներու մասին նամակներ գրեց Վարագայիններուն, յորդորելով, որ սիրով ու եղբայրաբար գործեն «վասն զի ներքին և արտաքին ՃՇնամիք կը վխտան աչ և ահեակ»՝ աշխատելով խորտակել սկսուած գեղեցիկ գործերը։

---

*) Աւետիք օրագիր. Կ. Պոլիս. 1885։

**) Մելքիսեդեկ Եպիսկոպոս Մուրատեանը չատ բնորոշ և ուշագրաւ պատասխան մը գրեց այս շրջաբերականին։ (Տես «Բանբեր». Ս. Պետերբուրգ. 1904)։

Վանէն և Վարագէն իրեն յուսադրական և քաջալերական նամակներ կը գրէին, բոլորն ալ ցանկանալով, որ Հայր Արծիւը Արծուաբոյնը վերադառնայ և հանգստանայ, սակայն նա չ'ընդունեց։

Հայրիկի Մարիամ եղբօր որդին Յովհաննէս Պրիմճեան*) յուզիչ և սրտառուչ ոտանաւոր մը գրելով կը ձօնէր Հայրիկին։ Վանէն ճամբորդ մը, 1865-ի Հոկտեմբերին կը հասնէր Կարին և Հայրիկին կը յանձնէր Խորէնի գրած ձօներգը, որուն առաջին տունն էր.

«Հայրիկ, Հայրիկ, երբ աչուընիս
Դէպ արեմուտք կ'ուղղենք,
Վառուած սրտիւ, կարօտ ըղձիւ,
Հառաչանօք քեզ կը յիշենք...»։

---

*) Ծնած էր 1844-ին ի Վան։ Մանուկ հասակէն արբանեալով՝ Հայրիկ կը ստանձնէր անոր խնամակալութիւնը։ Վարագայ «Ծաւանգաւորաց Վարժարան»ին ընթացքը աւարտելէ յետոյ, 1871-ին անցած էր Գերմանիա և 3 տարի յաճախելով համալսարան սորված էր մանկավարժութիւն։ 1874-ին, Հայրիկի կողմէ նշանակուեցաւ Վարագայ գպրոցի տեսուչը, որ երկսեռ գպրոցական նոր կարգեր մացուց կրթական կեանքի մէջ։ Վարագայ տպարանէն, 1880-ական թուերուն լոյս ընծայեց կարգ մը գպրոցական գրքեր—«Այբբենարան», «Ընթերցարան», «Բարոյական Պատմութիւններ», «Հայրենագիտութիւն» (Ա. մաս՝ Վան քաղաք, Բ. մաս՝ Վանայ Օրուարձաններ, Գ. մաս՝ Վասպուրական)։

Վանի կրթական և ազգային պատմութեան մէջ արժանի տեղ մըն ալ կը գրաւէ Խորէն Խրիմեանը, որ Հայրիկի Կաթուղիկոսութեան առաջին տարիներուն Վանէն ընտանիքով գնաց Կովկաս—Էջմիածին Հայրիկին մօտ ըլլալու համար։

Օսմանեան Սահմանագրութեան (1908) հռչակումէն յետոյ եկաւ Վան, ուր վերահրատարակեց իւր «Հայրենագիտութիւն» դասագիրքը։ Համեստ, սիրալիր և յարգուած մարդ մըն էր, Խորէն Խրիմեանը, որ 69 տարեկան հասակին մէջ մեռաւ 1913-ին և թաղուեցաւ Խրիմեաններց տոհմական գերեզմաններուն մէջ։ Հանգուցեալի ամուսին՝ Տիկին Իսկուհին, 1917 ին, իմ խնդրանքի վրայ տուաւ ինձ Հայրիկի քանի մ'անտիպ նամակներ, իւր ամուսնոյ կենսագրութիւնը և ուրիշ կարգ մը կարեւոր տեղեկութիւններ Հայրիկի կեանքի և գործունէութեան մասին։ Տիկին Իսկուհին վերջերս հաղորդեց ինձ նաև, որ Հայրիկի հօր անունը՝ Յովհաննէս, իսկ մօր անունն ալ՝ Մարիամ եղած էր։ Խորէնին աւազանի անունը եղած է Յովհաննէս, որ յետոյ, Հայրիկի կողմէ փոխուած է Խորէնի։ Խորին և սրտագին շնորհակալութիւնս կը յայտնեմ Տիկին Իսկուհի Խրիմեանին, որ իւր բարոյական օժանդակութեան և քաջալերանքէն զատ, ինձ տուաւ նիւթեր, տեղեկութիւններ, անտիպ նամակներ և այլն։

Այս ձայնը կը հնչէր Արծուաբոյն Վարագէն և կը յուզէր վրշտահար սիրտը Հայրիկին, որ հետևեալ նամակը*) կը գրէր Խորէնին.

1865 Հոկտ. 28

Նոր Սոխակ Կարին

Սողոմոնեան պարտիզին

Դո՛ւ անճկալի եղբօրորդեակդ իմ.

Սիրաթոիչ նամակիդ թեւերով այս անգամ իջեր ես այն պարտէզն, ուր չէ Հայրիկն անդ, եւ քո սիրահար վարդի թուփի վրայ նստելով կ'երգես ու կը կանչես՝ Հայրի՛կ, Հայրի՛կ...

Բարձր Հայոց սահմանին մէջ այնինչ քուն կայի ծանրաբեռնուած հոգսերով՝ ի վեր զարթեա յանկարծ, եւ ահա ձայն եղբօրորդւոյն իմոյ բաղխէ զղուն: Սիրոյս դուռ քեզ համար բաց է, կեանքս քեզ համար նուիրուած, ո՛վ կարէ զիս մնկնիլ ի սիրոյն քոյ:

Այս հալածանք, այս վշտեր թեթեւ են եւ դիւրատար այն է ինձ համար անպայման ցաւ սրտիս, զի ահա հուպ կալով Վարագայ դրախտին չեմ զիտեր պիտի տա՛յ Ձէր պահ մի հանգչիմ դորա գիրկ, առ վարդենոյդ շքով յոր կայ եւ երգէ սոխակդ սիրահար՝

Առ որոյ ձայն կամ կարօտ
Տարագիր Հայրիկ

Այսպէս, Հայրիկը նստած Կարին՝ Վան-Վարագայ կարօտով կ'այրուէր և Մուշ-Տարօնի Հայութեան խռովայոյզ վիճակի մասին մտածելով կը տանջուէր, երբ 1865-ի Նոյեմբերին Բարութիւն Եպիսկոպոսը Տարօնէն կը վերադառնար Կարին և ընդարձակ տեղեկագիր մը կ'ուղարկէր Պատրիարքարան; հանգամանօրէն պարզելով Տարօնի ազգային և եկեղեցական գործերու վիճակը, խռովութեանց պատճառներն ու հետևանքները ևայլն: ✗

*) Այս անտիպ նամակի բնագիրը կը գտնուի հանգուցեալ Խորէն Երիմեանի ամուսնոյն՝այժմ ծերունազարդ Զիկին Իսկուհի Երիմեանի մօտ, որ կ'ապրի Նիւեան:

Պատրիարքարան և Ազգային Ժողովը երբ կը համոզուին, որ Խրիմեանն անմեղ եւ արդար է, այն ատեն կը վճռեն, որ Ս. Կարապետի խռովարար վեց վարդապետները Երուսաղէմ աքսորուին։ Թէև յանցաւորները կը մերժեն աքսոր երթալ, բայց Պատրիարքարանը Ռ. Դրան միջոցով և ոստիկանական հսկողութեամբ զանոնք Ս. Կարապետի վանքէն հանել կուտայ և կ'ուղարկէ Երուսաղէմի Հայոց Մայրավանքը։

Խրիմեանի հալածուած, թափառական և տանջուած աշակերտները մէկ մէկ կուգան Կարին և կը հանգչին Հայր Արծուի Թևերուն տակ։

Հայրիկը 1866-ի Մարտին Կարինէն ճամբայ կ'իյնայ դէպի Տրապիզոն, ուր նաւ նստելով նորէն կը չափէ Սև ծովը և կը հասնի Կ. Պոլիս, իսկ աշակերտներն ալ կ'երթան Մուշ, Ս. Կարապետի վանքը և բուռն եռանդով աշխատանքի կը լծուին, ջանալով կարգի բերել վանքի, դպրոցի և տպարանի խանգարուած գործերը։

Ձեռքիս տակ ունիմ Գարեգին Օրուանձտեանցի 1866 Յուլիս 4 թուակիր ինքնագիր մէկ անտիպ նամակը՝ Աւագ Աֆթանդիլեանին ուղղուած՝ Ս. Կարապետի վանքէն։ Այդ նամակէն կը քաղեմ հետեւեալ տողերը, որոնք կը հաստատեն, որ Ս. Կարապետի վանքը շատ անմխիթար և անապահով վիճակ մը կը ներկայացնէր, երբ Արծուիկները, այդ բոլոր դէպքերէն յետոյ գացին հոն և աշխատանքի լծուեցան։

«...Յարգի Աղայ Գալուստ*) պատահեցաւ ինձ Բարձր Հայոց բարձր լեռան մը գլուխ. անդ ուղեկից միմիանց եղանք։

«...Հիւրասիրութեան պատիւ Աղայ Գալուստին և իւր յարգի ընկերաց մեր իսկ պարտքն էր։ Այլ ինչ որ իրենք տեսան և իմացան, և ինչ որ դուք ևս իրենցմէ տեղեկանաք, կը յուսամ որ անմեղադիր կը լինիք։ Գարի շատ ցաւեցայ, որ ոչ միայն Աղայ Գալուստեանք, այլև ամենայն յարգի ուխտաւորք գայթակղութեամբ և

*) Աղա Գալուստ Շեռմազուճեանց է այս,—Ծ.-ը գարի կէսերուն յայտնի գարձած կրթական և գրական անխոնջ գործիչը, որ ոչ միայն ուսուցիչ էր, այլև ճամբորդ, ուղեգիր, երգիծաբան և հին թերթերու աշխատակից։ Շատ հետաքրքիր և արժէքաւոր դէմք մըն է այս, որու մասին ես բաւական նիւթեր ունիմ։

խիստ դժգոհութեամբ մեկնեցան վանքէն. պատճառ՝ արդէն կրնաս ինքնին գիտել կամ հարցանել եկողներէն.

«...Տարագրութենէն նոր դարձած, վիճակս խառն և անապահով, այնքան առայժմ գրեցի պատասխան. կը ցանկամ շարունակել նամակներս Կարնոյ վրայօք շնորհիւ Աղայ Թադէոս Ամատունւոյ և թէ Արծուիկն ալ սկսանք հրատարակել, ձեր բաժին նոյն միջոցով կը ղրկեմ.

«...Հայրիկին նուիրածդ ջերմ բարև և համբոյր սուրբ Աջոյն նամակաւս ծրարած ի Պոլիս ղրկեցի. Արծիւ Վասպուրական առայժմ դադրած է բայց Արծուիկ շարունակելու յոյս կայ մօտ օրերս».

Սակայն ի գիւր... Խրիմեանի թշնամիները Վանի մէջ «Արծուի Վասպուրականի «թռիչը խափանեցին» իսկ Մուշի մէջն ալ «Արծուիկ Տարոնոյ»ն «խոխոտեցին, երկուքի շարունակութիւնն ալ վատութեանց և մատնութեանց զոհ ընելով».

Այսպէս ընդմիշտ կը լռէին Մայր Հայրենիքի—Վասպուրականի և Տարօնի—այս երկու թերթերը, որոնք հսկայական ջանքերով ու տառապանքով, բարոյական և նիւթական մեծամեծ զոհողութիւններով և Խրիմեանի ջանքերով հաստատուեցան Հայաստանի մէջ և դարձան երկրի տանջուած ու հարստահարուած ժողովուրդի ձայնը և բողոքի, բաղձանքի, ուսման, ազատութեան և ազգասիրութեան լեզու դրին Մեծ Համրի բերնին մէջ. Այս զոյգ գաւառիկ թերթերը ոչ միայն պատուաւոր տեղ կը գրաւեն Հայ մամուլի պատմութեան մէջ, այլև անոնք գերազանցապէս արժէքաւոր են այն տեսակէտով, որ Հայկական մտաւոր, գրական և քաղաքական վերածնութեան շարժումներու ժամանակ ժողովրդական ազատ և համարձակ արտայայտիչներն եղան. Այս երկու թերթերը Մայր Երկրի Հայութեան հսկայ տառապանքը և ապագայի ազատ ու անկախ հայրենիքի յոյսերն ու բաղձանքը ցուցադրեցին. Թերթերը թէև ընդմիշտ լռեցին, բայց անոնց հիմնադիր Խրիմեան—Հայր Արծիւ և իր Արծուիկները շարունակեցին իրենց ազգանուէր աշխատանքը.

Խրիմեանը Կ. Պոլսոյ մէջ կարճ ժամանակ մը հանգստանալէ յետոյ գրեց ու հրատարակեց գիրք մը—«Մարգարիտ Արեւելեան Երկնից, խուռն վաստակ երկոց Մկրտիչ Վարդապետի Խրիմեան.

ի Պատրիարքութեան Կ. Պոլսոյ Տեառն Պողոսի առաքելապաշտօն Արքեպիսկոպոսի· Կ. Պոլիս. Տպագրութիւն Արամեան. 1866— Ռ6 Ժ6.» (էջ՝ 128)։

Խրիմեանի այս գիրքը, երկու «Հրաւիրակ»ներէն յետոյ, առաջինն էր, որ գրուած էր արձակ և պարզ աշխարհաբարով· ճըշմարիտ հոգեւորականի մը, գիտակից և իր կոչման արժանի Հայ եկեղեցական պաշտօնեայի մը յատուկ կրօնական ու բարոյական գերագոյն ապրումներու, խոր հաւատքի և աւետարանապաշտ զգացումներու գեղեցիկ հաւաքարան մըն է «Մարգարիտ Աղբայութեան երկնից» գիրքը, որուն իւրաքանչիւր էջը զարդարուած է մարգարտաշար բառերով և հոգեշունչ զգացումներով· Աւետարանի ոգին, Քիստոսի և Առաքեալներու քարոզները Խրիմեանի հոգեկան աշխարհի մէջ խորապէս դրոշմուած էին։

«Ո՞րն է այն մատեան, որ առաւել մարդոյ սրտի հետ կը խօսի քան թէ մտաց· ով է այն մատենին արտագիրը դպիրը, որուն լեզուէն ու շրթունքներէն շնորհք և սէր կը բղխի· Աւետարանն է այս, յաւիտենական կենաց բան, զոր Քիստոս քարոզեց, կտակ թողուց աշխարհի ու գնաց·

«...Ես տրուպս, որ իբրև վարդապետ և մատակարար կոչուած եմ Աւետարանի սեղանոյն, նոյն ամենալի անապատ սեղանէն պատառ մի ճաշակ պատրաստեցի Սիօնի որդւոց համար· Մատթէոսի Աւետարանչին հինգերորդ, վեցերորդ և եօթներորդ գլխոյն վրայ մեր մտաց չափաւորութեամբ խորհրդածելով դիւրաձեռն յօրինեցի այս փոքր Մատենիկ· Այն նպատակաւ որոշեցի միայն այս երեք գլուխ, վասն զի սոցա մէջ կը պարունակին գրեթէ մեծ մասամբ Աւետարանի ճշմարտութեան բարոյական և փրկաւէտ օրէնքներն·

«Փոքրացան աշխատութիւնս ուրիշ նպատակ մի չունի, ուշիմ ընթերցող, բայց միայն Աւետարանի Սուրբ օրինաց գիրեր դրոշմել մեր սրտին մէջ, և միանգամայն համեմատել մեր արդի ատելութեան վարք Քիստոսի քարոզած սիրոյ պատուիրանին հետ, ու ճանչնալ փորձով թէ ստոյգ Աւետարանին հարազատ որդիքներ կոչուելու արժանի եմք·

«...Առէք ընդունեցէք ուրեմն, ով եկեղեցւոյ մօր հոգեծին մանկունք, Քիստոսէն աւանդեալ աղբայութեան սոյն Մարգարիտ, զոր

իբրև փոքրիկ մանեակ մի յօրինելով ձեզ կը նուիրեմ. ...Ի՞նչ գին կը խնդրէ, գիտէք, այս մարգարիտին տէր, ուրիշ ոչինչ, սիրտ միայն. Տուր ուրեմն, քո սիրտ, որդեակ, ինչպէս կը խրատէ Իմաստունն, և ահա կ'ստանաս մարգարիտն»։

Այս տողերով կը բնորոշէ ահա Խրիմեանն իւր «Մարգարիտ Աբքայութեան Երկնից»ի նպատակը, որ ժամանակակից Հայ հոգեւորականութեան կ'առաջնորդէր դէպի Քիստոսի մէկ վեհագոյն գաղափարը—«Սիրեցէ՛ք զմիմիանս...»։ Այս գիրքը Խրիմեանի կրօնաբարոյական սքանչելի ըմբռնումներու արձանացումն է, ճշմարիտ մարդու, իսկական քրիստոնիայի մը ձեռքով շարուած մարգարիտներու մանեակ մը, որ Հայրիկը կը կախէր իւր հալածիչներու սիրտերէն, ցանկանալով, որ անոնց մէջ բոյն դրած ատելութեան և չարութեան զգացումները չքանան և տեղ տան «Սիրեցէք զմիմիանս»ի գաղափարին։

Այս համեստ գիրքը վառ հետաքրքրութեամբ ընդունուեցաւ ամենուրեք։ Ժամանակակից Հայ թերթերն ալ գնահատականները գրեցին, յանձնարարելով, որ ամէն կրօնասէր և ազգասէր Հայ անհատը օրինակ մը գնէ այդ ճշմարիտ մարգարիտ մատեանէն։

Հեղինակը խորին երախտագիտութեամբ տարուած, իւր այս գիրքը նուիրած է «Աւ բարգաւաճեալ շառաւիղս Օսեան Գերդաստանի», որուն շատ բան պարտական էր, իբր երիտասարդութեան օրերէն։

Գատուելի Յովհաննէս Տէրոյինեանը իւր «Երեւակ» թերթին մէջ (*1866*, էջ՝ *218*), «Մարգարիտ Աբքայութեան Երկնից»ի*) մասին հետեւեալ տողերը կը գրէր։

---

*) Խրիմեանի այս գիրքը չորս տպագրութեան արժանացած է։ Ա. տպագրութիւնը 1866-ին՝ Կ. Գոլիս։ Բ. տպագրութիւն՝ 1876 ին Կ. Գոլիս։ Բ. տպագրութեան մասին Ղուկաս Գալդազարեանը իւր «Արշալոյս Արարատեան» թերթի մէջ (1876, թիւ 1042) կը գրէ—«Ինչպէս իւր անունէն կը տեսնուի այս մատենիկն խրատական գեղեցիկ և ամենաօգտակար երկասիրութիւն մըն է, որ սրբազան հեղինակն ամենա. Խրիմեան Հայրիկն, Աւետարանական հոգեյարատիրութիւն, ներողամտութիւն առ միմիանս և ուրիշ գեղեցիկ առաքինութիւններ կը քարոզէ, յորոց մեծ պէտք ունի Հայ ժողովուրդն՝ մանաւանդ ի յուսաւորեալ դարուս յայսմիկ»։ Գնահատական տողեր գրած է նաև «Մասիս» թերթը (1876, թիւ 1827)։ Գ. տպագրութիւն՝ Կ. Գոլիս 1887, հրատարակութեամբ գրավաճառ Գէորգ Զարգարեանի, որուն ուղղուած է հեղինակին ուղերձը։ Դ. տպագրութիւն՝ Էջմիածին 1894։

«Խրիմեան արժանապատիւ Մկրտիչ պիտնական վարդապետը այս անունով փոքրիկ գիրք մը շինած է 128 երեսէ բաղկացեալ, որ սուրբ աւետարանի բարոյական անհամեմատ խրատները կը պարունակէ. ...Արժանապատիւ հեղինակը ուրիշ եկեղեցականաց օրինակ մ'ըլլալու է, որ կարծես թէ չգիտեն իրենց պարտքը և օրերնին պարապ կ'անցընեն».

Տարիներու տառապալից կեանքը, թշնամիներու դաւերն ու հալածանքները խռովը ու վրդովը էին Խրիմեանի սիրտն ու հոգին, որոնք պահ մը աշխարհային գործերէն կը սլանային դէպի վեր և կը ձգտէին երկնային, կրօնական ու հոգևոր հանգիստ մը որոնել։ Խրիմեանը պահ մը կ'առանձնանար, կը թուչէր դէպի «երկնից արքայութիւնը» և Աւետարանի մարգարտները գտնելով կը հիւսէր վեհագոյն զգացումներու գեղեցիկ մանեակ մը— «Մարգարիտ Արքայութեան Երկնից»ը։

Պատրիարքարանի պահանջով Ս. Կարապետի վանքի խռովարար և հակախրիմեանական հինգ վարդապետները Կ.Պոլիս կը հասնէին քննութեան և դատի ենթարկուելու համար։ Ազգային ժողովը և պոլսահայ թերթերու մեծ մասը կը մեղադրէին խռովարարներու ազգադաւ ընթացքը և կ'արդարցնէին Խրիմեանը, որուն պաշտպան Բարութիւն Սվաճեանը իւր «Մեղու» թերթին մէջ կը գրէր.

«Ի՞նչ կ'ուզէք Մշոյ վանքէն, Խրիմեանը ոսկի չ'ունի, մինչ Մշոյ վանքը պարտք ունի. ինչ կուզէք անոնցմէ»։

Քննութեան ժամանակ, Խրիմեանի թշնամիները ամէն կողմէ գլուխ բարձրացուցին զայն զրպարտելու և տապալելու համար։

— «Խրիմեանը կռապաշտ է» կ'աղաղակէին Ս. Կարապետի դաւադիր միաբանները։

— «Խրիմեանը բողոքական է» կը պոռային խաւարամիտները։

— «Խրիմեանը աւազակ է» կը կանչէին Վանի և Մուշի հակախրիմեանականները։

— «Արծուիդ և Արծուիկներուդ ծուխ-ծուխ, բզիկ-բզիկ պիտի ընենք» կը պոռային թշնամիները։

Իսկ խռովարար վարդապետները Ազգային ժողովին մէջ կը կանչէին թէ— «Մենք Խրիմեանը չենք ուզեր, նա ժողովուրդին մէջ

գրգռութեան որոմները կը ցանէ պետութեան դէմ, չ'ըլլայ թէ նորէն Մուշ ուղարկէք զինք»։

Խրիմեանի թշնամիներու կողմէ կաշառուած «Մէճմուայը Հայոց» թերթը երդում-պատառ կ'ըլլար ու կը գրէր.

«Եթէ Խրիմեանին ի Մուշ դրկելով օգուտ մը կրնայ ծնանիլ նէ, մեզի ալ աշխարհ մարդ չըսէ, աշխարհի վրայ իբրև մարդ չը պըտտինք և յաւիտեան ամօթով ըլլանք»։ Նոյն կարծիքին էր նաև «Երևակ» թերթը։ Իսկ «Մասիս», «Մեղու», «Հայրենիք» և «Փունջ» թերթերը միաձայն կը պաշտպանէին Խրիմեանի անմեղութիւնը, կը գնահատէին անոր ազգանուէր աշխատանքը և կը թելադրէին, որ Ազգային իշխանութիւնը պատժէ յանցաւորները և Խրիմեանին նոր լիազօրութիւններ տալով ճամբէ Մուշ։ Այսպէս ալ կ'ըլլայ։

Խրիմեանը կը ներկայանայ ժամանակակից Պատրիարք Պօղոս Արբեսիս. Թաքթաքեանին և կը յայտնէ, որ «շուտով կը մեկնիմ»։

— Ո՞ր կ'երթաս, Վարդապետ,— կը հարցնէ Պատրիարքը։

— Դէպի Մուշ, ժողովուրդն ինձ կը սպասէ։

— Չէ, քանի մ'օր ալ կեցիր, որ Մշոյ վարդապետներն ալ հետդ տանես։

— Ես արդէն բեռներս կապեր և պատրաստ եմ Օրբազան Հայր, աւելորդ բեռներ չեմ կրնար վերցնել, կ'ըսէ Հայրիկը։

— Ուրեմն այդ բեռները մեզ վրայ կը ձգես։

— Չէ... ուրիշ տեղ մը դրկեցէք— կը պատասխանէ Հայրիկը։

Երբ Խրիմեանը վանքին կը մօտենար, տաճարի զանգերը կը զօղանջէին և տասնեակ հազար գեղջուկ ժողովուրդ միաձայն կ'աղաղակէր— «Կեցցէ Հայրիկ, կեցցէ Խրիմեան»։ Վանքի տպարանէն հազարաւոր օրինակներով լոյս ընծայուած էր թուրքիկ մը, որուն վրայ տպուած էր Շամախեցի աշուղ-բանաստեղծ Սէյհադի «Զայն՝ առ հարազատ Վասպուրական Արծուին» ոտանաւորը (28 տուն)։ Գեղջուկները թուրքիկները ձեռքերնին բռնած կը մօտենային տիրացու Մկրէին և կարդալ կուտային։ Մկրէն ալ հանդիսաւոր ձայնով կը կարդար.

*«Սրատես իշխան ապրուպետան օղոց,*
*Վաղուց կարօտեալ գոլով սուրբ տեսույդ,*
*Ձին արժան չարարեր քոյդ ոսկեայ գետրոց.*
*Աչքուձք իմ հերքեալ եղեն ի լուսոյդ...»։*

Ապա յանկարծ, Խրիմեանին առջև և ժողովուրդին մէջտեղը եկաւ կոյր աշուղ մը, որ բարձր ու խրոխտ եղանակով մը երգեց Խրիմեան Հայը Արծուին ձօնուած այս երգը.

«Գոչեաց երբեմն ամպ ահագին, ամպ սեւաթոյր եւ մթագին,
Հողմ ու մրրիկ, շանթ եւ կայծակ հոսէր թափէր նա մոլեգին:
Վեհ Արծուին մէջ մրրկին հոլանածեւ բացած իւր թեւ՝
Մերթ խոյանայր, մերթ խոյանայր, զամպն ու մրրիկ ճեղքէր սլանայր,
Եւ իւր թեւոց բացած շաւղէն լոյս տարածէր երկրիս վերէն:
Բայց վեհ Արծուին ազատ թեւօք ճեղքեց էանց ընդ ստուերօքն,
Այո՛ իբրեւ յաղթող եւ մեծ ցրուեց զամպոց խառնակ քմահճ...»:

—«Կեցցէ՛ Հայը Արծիւ... կեցցէ՛ Խրիմեան, դուրբան քըզի Հայրի՛կ ջան...» աղաղակները թնդացուցին օդը, Խրիմեանը մտաւ վանքը, իսկ ժողովուրդը անուշ յիշատակներով օրօրուն հեռացաւ։

Խրիմեանը Կ.Պոլսոյ մէջ մասնակցութիւն ցոյց տուաւ նաև ազգային գործերուն և 1866-ի վերջերը ճամբայ ելաւ դէպի Մուշ, շարունակելու իւր առաջնորդական պաշտօնավարութիւնը։ Ժողովուրդը սիրով ընդառաջեց Հայրիկին և տարաւ Ս.Կարապետի վանքը, ուր հաւաքուած էին արդէն Արծուիկները և կը շարունակէին կրթական գործը։

Մուշ հասնելէ յետոյ Խրիմեանի առաջին գործն եղաւ դիմել Պատրիարքարանին և խնդրել, որ աքսորուած վեց վարդապետներուն «ներում շնորհուի արտօնելով, որ անոնք երուսաղէմէն Տարօն վերադառնան»։ Խրիմեանի այս մեծահոգութիւնը՝ իւր թշնամիներու հանդէպ, շատերուն զարմանք և հիացմունք պատճառեց։ Պատրիարքարանը կատարեց Խրիմեանի խնդիրը և աքսորականները վերադարձան Տարօն։

Սակայն անարգանքի սիւնին մեխուած այդ սևահոգի վեց վարդապետները փոխանակ Խրիմեանի անյիշաչարութեան և ներողամտութեանն ապաւինելու, այս անգամ սաստիկ վրէժով լեցուած կազմակերպեցին մահափորձեր։

«Շատ անգամ էր պատահում, որ գիշերը Հայրիկի սենեակի պատուհանների մօտ հրացաններ էին արձակում։ Գրանք վարձկան քիւրդեր էին, որ ուզում էին սպաննել նրան*)»։

*) Խ. Մալումեան—Խրիմեան. էջ՝ 61։

«Ս. Կարապետի վանքէն Հայրիկը գործով գնաց Մուշ և իջաւ Առաջնորդարան. Գիշեր էր, 1867 Մայիս 20, երբ յանկարծ պատուհաններէն ներս գնդակներ տեղացին. Հայրիկը քունէն վեր թռաւ և երբ պատուհանին մօտեցաւ գնդակը մը վիրաւորեց անոր ձախ ձեռքը*)»։

«Ծեսայ զինքն ի Տարօն, Խորոնից գիւղէն, յԱւազաղբիւրէն Սուրբ Կարապետի վանքը կը վերադառնար։ Արծիւն Վարագայ մենաստանէն բոյն մ'ալ Գլակայ վանք հաստատած էր. հոն իւր բոյն խառնելով, ձագերն սպաննել կուզէին. հոս իւր փետուրներն փետտելու փորձեր կընէին հնութեան, մօտութեան, խաւարի պաշտպան կուսակիցները. այլ ներողութիւնն անպատ էր այս մեծ մարդուն. ներողութեամբ և սիրով կը յաղթէր։ Քիւրդն՝ որ նիզակն անոր կուրծքին ուղղելով կուգար սրարշաւ, յանկարծ կանգ կառնէր, զինաթափ կըլլար անոր առաջ։ Քիւրդէն աւելի նախանձաբեկ կարգ մը կրօնաւորներ էին խաւարի պատերազմն յառաջ մղողները»**)։

«Մի երեկոյ քնելուց առաջ, երբ մենք, նրա աշակերտներս, պատրաստւում էինք անկողին մտնելու, Հայրիկը առած ձեռքը վառած ճրագը դուրս եկաւ։ Անցաւ մի հինգ վեց րոպէ յանկարծ լսեց հրացանի ձայնը և գնդակը եկաւ մտաւ մեր ննջարանի արտաքին պատին։

«Մենք իրարանցով ընկանք և այն էր առած վրաններս ով ինչ կարող էր, դուրս էինք գալիս սենեակից, որ մէկ էլ դուռը բացւեց և նրա շեմքին երևաց Հայրիկի հսկայական մարմինը, բռնած ձեռքին ճրագը, փոքր ինչ գունատ. մօտեցաւ մեզ, մենք շրջապատեցինք նրան՝ հարց ու փորձով, վախենալով, չը լինի թէ մեր ուսուցիչը վիրաւորւած լինի։

«—Հը՛... թշւառականները, ասաց հանգիստ Հայրիկը, անոնք կ'ուզեն ինձ գնդակներով թռցնել, բայց չը գիտեն, որ թնդանօթներ ալ պատրեն Արծիւը անոնցմէ չի վախենար։

«Մենք հանգստացանք։ Յետոյ միայն իմացւեց, որ այդ մի դաւ էր սարքած Հայրիկի հակառակորդ թշնամիների կողմից, նրան

---

*) Այս տողերն արձանագրած է հանգուցեալ Խորէն Խրիմեանը։

**) «Ծաղիկ». Ձեռագիրներէ. Թիֆլիս. 1893։

սպաննելու, կամ գուցէ ճիշտ, որ վախեցնելու և այդ արւած էր կաշառելով մի քրդի, որ յաջորդ օր մեղայականով եկաւ զղջալու իր յանցանքը։

«Հայրիկը դաւադիրներին ոչ միայն չը պատժեց, ոչ միայն յանդիմանութիւն չարեց նրանց, այլ որ զարմանալին էր բոլորովին մոռացութեան յուեց այդ դէպքը»*)։

Այս մահափորձերը կազմակերպող հոգևորական և աշխարհական թշնամիներու հանդէպ Խրիմեանը ոչ միայն ներող և անյիշաչար ընթացք ցոյց կուտար, այլև կը սաստէր կարգ մը տաք գլուխ երիտասարդներ, որ վրիժառութեան քայլերը չ'առնէին։

Անվախ, ազատ և համարձակ էր Հայր Արծիւը, որուն կեանքի դէմ նիւթուած դաւերն ու մահափորձերը ապարդիւն կ'անցնէին, անոր թշնամիներն ու դաւադիրները սևերես և ամօթապարտ կը մնային, իսկ Վասպուրականի Արծիւը իւր թևերը թափահարելով կը սաւառնէր Տարօն-Տուրուբերանի ամէն կողմեր և ուսման լոյսի, ազգի սիրոյ ու հայրենիքի ազատութեան ձայնը կը հնչեցնէր։

## Ը.

## ՀԱՅՐ ԱՐԾԻՒ ԽՐԻՄԵԱՆՆ Ի ՎԱՆ-ՎԱՐԱԳ

Ամառնային զով ու լուսնակ գիշեր մըն էր,—1867 Յուլիս—երբ Ս. Կարապետի վանքէն հօթն ձիաւորներ իջան Մշոյ Դաշտ և արագընթաց յառաջացան դէպի արևելք, դէպի Նեմրութայ սարի ստորոտները։

Ձիաւորներու այդ խումբը, երկու օր յետոյ, կը մտնէր Վասպուրականի սահմանները և Կարճկան, Ռշտունիք, Հայոց-Ձոր գաւառներէն անցնելով կը հասնէր Արտամետ գիւղը, ուրկից կ'ուղղուէր դէպի քաղաք՝ Վան և Օղգայու Ջաղդի ճամբան բռնելով կ'երթար Ճանկոյսների թաղը։

Ձիաւորները կանգ կ'առնէին և ներս մտնելով կը հանգչէին խոնարհ յարկի մը տակ—Խրիմեաններց տունն էր այդ։

---

*) «Ծաթաբալա». Ժամանակագրութիւն. Թիֆլիս. 1907. Թիւ՝ 72։ Յօդուածագիրը Հայրիկի աշակերտներէն մէկն է՝ Աբօ Յովհաննուսով։

Յաջորդ առաւօտ արշալոյսին ձիաւորներու խումբը ճամբայ կ'ելլէր դէպի Վարագայ վանքը, ուր արտակարգ եռ ու զեռ, շարժում, ուրախութիւն և տօնական պատրաստութիւն կը տեսնուէր։

«Ժառանգաւորաց Վարժարան»ի աշակերտները՝ ծաղկեփունջերը ձեռքերնին բռնած, իրենց ուսուցիչներու հետ, մայր ճամբու վրայ անհամբեր կը սպասէին, երբ արդէն ձիաւորներու խումբը կը մօտենար, աշակերտութիւնն ալ բարձր ու զիլ ձայնով կ'երգէր.

«Ո՛ւր գալուստ բարի Արծիւդ հայրենեաց...»։

Ձիաւորները կ'իջնէին ձիերէն, ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿը յուզումով և հրճուանքով լեցուած կ'ուլար։ Գարեգին Վարդապետ Սրուանձտեանցը*) կը հեկեկար, Վարագայ ուսուցիչներն ու աշակերտները գրկաբաց կը վազէին և նորեկներու հետ կ'ողջագուրուէին։ Լաց, ծիծաղ, ժպիտ, համբոյր իրար խառնուեր էին։ «Կեցցէ՛ Հայր Արծիւ, կեցցէ՛ Հայրիկ...» աղաղակները օդը կը թնդացնէին և ամէն կողմէ ծաղիկներ կը տեղային Խրիմեանի վրայ։

Տաճարի վանգերը քաղցրաձայն կը ղօղանջէին և եկեղեցական թափօրը, խաչ-Աւետարանով, խունկ ու մոմով, շարականներ երգելով դիմաւորութեան կուգար իր վանահօր՝ Մկրտիչ Վարդապետ Խրիմեանին, որ կ'առաջնորդուէր տաճար աղօթելու, քարոզելու և իր ողջոյնն ու ձայնը հնչեցնելու։

Այսպէս ահա Խրիմեանը 1867-ի ամառը կը հասնէր Վարագ և հինգ տարիներու Տարօնեան փոթորկալից, բազմատանջ և վշտալի կեանքէ մը յետոյ իր Արծուաբոյնի, հարազատներու և աշակերտներու ջերմ շրջանի մը մէջ հոգեպէս կը հանգստանար։

Խրիմեանն ամբողջ հինգ տարի հեռու մնալով Վանէն, այժմ կարօտով կը ծծէր կենսաբար օդը և կը խմէր սառնորակ ջուրը Վարագայ լեռնահովտին, ուր պտոյտի կ'երթար և կը յիշէր իր գործունէութեան սկզբնական շրջանի գեղեցիկ օրերն ու ապրումները։

Նա տեսաւ, որ իր բացակայութեան տարիներուն դպրոցի, թերթի և վանքի գործերը պատուով և յաջողութեամբ վարեր էին իր գործակիցներն ու աշակերտները։ Վարագայ «Ժառանգաւորաց Վարժարան»ը 1863-էն սկսեալ ամէն տարի ազգին կ'ընծայէր նոր շրջանաւարտներ—Մովսէս Պողանցի, Մարգար Հիւսեան Արճակեցի,

*) Վարդապետ ձեռնադրուած 1864-ին ձեռամբ Տարօնի Եպիս. Վեհապետեանի։

Յովհաննէս Կիւսենեանցի, Փանոս Աւերակեցի գիւղացի երիտասարդները, որոնք յետոյ գաւառական համեստ գործիչներ, ուսուցիչներ և քահանաներ դարձան։

Վանեցի երիտասարդներէն շրջանաւարտ դարձան՝ Տիգրան Ամիրճանեան, Մանուէլ Անանեան, Հայրապետ Ճանիկեան, Խորէն Խրիմեան, Կարապետ Նաթանեան, Սմբատ Գրիգորեան, Լեւոն Մատթէոսեան, Պետրոս Գափամաճեան, Նշան Շիրուանեան և ուրիշներ, որոնք փայլեցան Վասպուրականի հայոց գրական, կրթական, ազգային և առեւտրական ասպարէզներու մէջ։

«Արծուի Վասպուրական» թերթի հրատարակութիւնն ալ լաւ վատ շարունակուեր էր դեկավարութեամբ՝ Տիգրան Գալփակճեանի, Մանուէլ Արտամետցեանի, Արսէն Թոխմախեանի, Մարզար Սևիկեանի և ուրիշներու՝ աշխատակից ունենալով վարժարանի աշակերտները և դուրսէն ալ զանազան գրասէր անձեր։

Տպարանի գործերն ալ յաջող ընթացեր էին. Թերթէն զատ տպարանը լոյս ընծայած էր Մանուէլ Արտամետցեանի*) և Տիգրան Ամիրճանեանի**) թատերական ողբերգութիւններ և ուրիշ փոքրիկ գիրքեր։

Երբ Խրիմեանը Տարօնէն Վան կը հասնէր, Վասպուրականի Հայութեան ազգային կեանքը փոթորկուած և խռովայոյզ վիճակ մը կը ներկայացնէր, երկու կարևոր դէպքերու պատճառով.

Նախ՝ Վանի առաջնորդութեան հարցն էր, որ սուր կերպով կը ծեծուէր Ազգային ժողովի մէջ ու կը զբաղեցնէր Կ. Պոլսոյ և Կովկասի Հայ մամուլը. Լիմ Անապատ վանքի միաբան՝ տգէտ, բայց փորձառու Պօղոս Վարդապետ (յետոյ Եպիսկոպոս) Մելիքեանը Վանի

---

*) Ողբերգ Թատերական. Գործիներ Մանուէլ Արտամետեանց՝ դասատու Ժառանգաւորաց Վարժարանին. «Գաղթականութիւն ի Վասպուրականէ Սննդեքրիմայ Արծրունւոյ»։ Ի Տպարանի «Արծուոյն Վասպուրականի». ի Վան ի Վարդ. 1860. էջ՝ 91։

**) Ողբերգութիւն Մեծին Վարդանայ եւ Տղայոցն. Գործիներ ի Գ. Տիգրանայ Ամիրճանեանց, յաշակերտէ Ժառանգաւորաց դպրոցի Վարագայ. (ի նոյն տպարանի. 1862. էջ՝ 174)։ Նոյն հեղինակի՝ Ուսեալ Պաճդուխս (ողբերգութիւն յերիս արարուած. էջ՝ 65.) և Մրմունջք բանաստեղծական ժողովածուն ալ տպուեցան Վարագայ մէջ 1873-ին։

Հայ «իշխան»ներու և աղաներու պաշտպանութեամբ կը վարէր առաջնորդի և փոխանորդի պաշտօնները. ժողովուրդի մեծ մասը հակառակ էր Պօղոսին, իսկ մէկ մասն ալ համակիր։ Այս հակամարտութենէն ահա ծնունդ առաւ Պօղոս-Ապօղոսեան կոչուած պայքարը, որ ամբողջ 40 տարի (1856—1896) բուռն կերպով շարունակուեցաւ Վանի մէջ և վերջ գտաւ միայն Պօղոս Եպիսկոպոսի սպանութեամբ (Հնչակեան Վահէի ձեռքով՝ 1896 Յունուար 6)։ Պօղոս-Ապօղոսեան պայքարը Վանի Հայութեան մէջ յառաջ բերաւ հասարակական ինքնագիտակցութիւն, ցուցադրելով հին և նոր սերունդներու ուժեղ պայքարը՝ յանուն ազգային շահերու, որոնց ըմբռնումը հարկաւ տարբեր արբիւրներէ կը բղխէր՝ հակառակորդներու կողմէ։

Սակայն Պօղոսեանները «խաւարեալք»ի ներկայացուցիչներն էին, որոնք կը ջանային խորտակել Ապօղոսեաններու (կամ Խրիմեանականներու) յառաջդիմական և ազատասիրական ձեռնարկները։ Այս պայքարը Խրիմեանի կողմէ կը բնորոշուէր հետեւեալ խօսքերով.

«Կը զարմանամ, որ ներկայ դարուս մէջ կան դեռ մարդիկ, որոնք կը սիրեն խաւար և մռայլ միտքերու վրայ իշխել և տեսլով կ'ատեն մարդկային մտքի մառախուղը փարատող ուսման և գիտութեան լոյսը։ Գերմանացի կէօթէն լո՜յս աւելի՛ լո՜յս... աղաղակից մեռնելէն քանի մը րոպէ առաջ, իսկ մեր Պօղոս Վարդապետը կը կանչէ՝ խաւա՜ր, աւելի՛ խաւա՜ր... թող ըլլայ։ Ապա ուրեմն մենք այս պայքարը կը կոչենք՝ պայքար լուսաւորելոց՝ ընդդէմ խաւարեալոց»։

Երկրորդ հարցը Աղթամարի կաթուղիկոսութեան արիւնոտ և չարատանջ պատմութիւնն էր։ Աղթամարի միաբան Ռշտունցի Խաչատուր Եպիսկոպոս Շիրոյեանը, ի կենդանութեան Պետրոս Բիւրբիւլ կաթուղիկոսի, 1864-ի Սեպտ. 25-ին կաթուղիկոս կ'օծուէր «Մեծի Տանն Աղթամարայ» և Սեպտ. 28-ի գիշերը Փշավանց գիւղին մէջ սպաննել կուտար Պետրոս Բիւրբիւլը։ Ոճիրին ծրագրողն ու հեղինակը Խաչատուրն էր, որ կառավարութեան և Պատրիարքարանի կողմէ Կ. Պոլիս կը կանչուէր դատի։ Ամբողջ 12 տարի կը շարունակուէր այդ քստմնելի ոճիրին քննութիւնը։ Ի վերջոյ Խաչատուր Կաթուղիկոսը կը վերադառնար Աղթամարը և կը բազմէր արիւնոտ գահին վրայ։

Աղթամարի այս դէպքն ալ, 1864— 1876 թուներուն, մեծ աղմուկ հանեց և Կ. Պոլսոյ Հայ մամուլին ձանձրացուցիչ վիճաբանութեան մը նիւթ դարձաւ.

Պօղոս-Ապօղոսեան պայքարի և Աղթամարի դէպքի մասին հրատարակուած կան նաև քանի մը գրքոյկներ.

Ի՞նչ դիրք բռնեց Խրիմեանն այս երկու խոշոր դէպքերու հանդէպ. Խրիմեանն ընդունելով հանդերձ, որ Պօղոս Եպիսկոպոսն ազդեցիկ և խորագէտ մարդ էր, որ նա կրնար պետական շրջաններու մէջ պաշտպանել ժողովուրդի շահերը, բայց Հայրիկը չէր հանդուրժեր, որ Պօղոս Եպիսկոպոսը միացած Հայ ազաներու և «իշխան»ներու հետ ոտնակոխէր ժողովուրդի շահերը և պայքարէը յառաջդիմասէր և լուսամիտ ձեռնարկներու դէմ. Այս իսկ պատճառով Խրիմեանը բուռն կերպով կը պայքարէը Պօղոս Եպիսկոպոսի գործելակերպի դէմ, հանդիսանալով ժողովրդական շահերու ճոյնկապ պաշտպանը. Պօղոսի հակառակորդները—Ապօղոսեաններն—բոլորն ալ Խրիմեանի համակիրներ, գործակիցներ, աշակերտներ և ժողովուրդի խոնարհ դասերն էին՝ Խրիմեանականները, որոնք ի վերջոյ կը յաջողէին տանել յաղթանակը և իրենց ազդեցութիւնը կ'ուժեղանար Վանի ազգային գործերու ղեկավարութեանը մէջ.

Պօղոս-Ապօղոսեան պայքարի մասին Միքայէլ Նալբանդեանն անգամ արտայայտուած էր (Կ. Պոլիս, 1858) պախարակելով Պօղոսեաններու խաւարասէր ընթացքը. Վանի Հայութեան ԺԹ-րդ դարի ազգային-հասարակական պատմութեան ամենաուշագրաւ և աղմկալից էջն է Պօղոս-Ապօղոսեան պայքարը իւր բազմատեսակ դէպքերով.

Աղթամարի դէպքի հանդէպ, Խրիմեանը չափազանց վրդովուած էր. Անոր յամառ աշխատանքներու շնորհիւ միայն Պատրիարքարանը յաջողեցաւ Խաչատուր Կաթուղիկոսը Աղթամարէն Կ.Պոլիս տանել և դատել. Նա ամենուրեք նամակներ կը գրէր և Խաչատուրի ոճրագործութիւնը կը հաստատէր, աւելցնելով որ «այս եղեռնագործութիւնը ծածկել կամ պաշտպանել ամենադժուարին կէտ մըն է».

Ազգային ժողովի անդամներու մեծ մասը կը պնդէին, որ Խաչատուրը կարգալոյծ յայտարարուի և նոր ընտրութիւն կատարուի. Մինչև անգամ հրապարակ եկան կաթուղիկոսական թեկնածուններու անուններ, որոնց մէջ կը փայլէը նաև Մկրտիչ Վարդապետ

Խրիմեանի անունը*)։ Սակայն Խրիմեանը կարուկ կերպով մերժեց, որ իւր թեկնածութիւնը մէյտեղէն վերցուի։ Ընտրութիւնը չը կայացաւ, իսկ Աղթամարի կաթուղիկոսական փոխանորդ նշանակուեցաւ յայտնի Գօղոս Վարդապետ Մէլիքեանը։ Տարիներ յետոյ, Աղթամարի թեմականներու միաձայն պահանջով, Խաչատուր Կաթուղիկոսը «անպարտ» հռչակուեցաւ Ազգային ժողովի կողմէ և 1876-ի Հոկտեմբերին Սուլթան Համիտի Մէճիտիյէ շքանշանով վարձատրուած վերադարձաւ Աղթամարը և բազմեցաւ արիւնոտ գահին վրայ։

Իւր մեղքերը քաւելու համար, Խաչատուր Կաթուղիկոսը մինչև իւր կեանքի վերջ, Աղթամարի թեմական վանքերու նորոգութիւններով և տնտեսական բարեզարդութեան գործերով զբաղուեցաւ և շատ ազդու միջոցներով յաջողեցաւ սանձահարել քիւրդ բէկերն ու ցեղապետները՝ փրկելով Աղթամարի թեմականներու պատիւ և ինչքը։ Աղթամարի վերջին Կաթուղիկոսն եղաւ Խաչատուրը**), որ

---

*) Մատթէոս Ա. Կաթուղիկոս Զուխաճեանի մահուամբ (1865) էջմիածնի մէջ, 1866-ի Սեպտ. 17-ին գումարուեցաւ Համազգային ժողովը նոր Կաթուղիկոսի ընտրութեամբ զբաղուելու համար։

«Բեսարաբիայի աշխարհական պատգամաւոր ժառանգական պատուամեծար քաղաքացի Գարապետ Մարգարեան Հայրապետականը չը կարողանալով անձամբ ներկայանալ ժողովին, իւր Սեպտեմբերի 6-ին գրած յայտարարութեամբ ընտրելի առաջարկում է Վարագայ Ս. Խաչի Վանահայր Խրիմեան Մկրտիչ Վարդապետին». (Ծաւալիկ Վարդապետ—«Արարատ» ամսագիր. էջմիածին. 1883. էջ՝ 493)։ Համազգային ժողովի մէջ կաթուղիկոսական, թեկնածուներէն կ'ընտրուի Գէորգ Սրբազ. Քէչէաէճեան—Կաթուղիկոս Ամենայն Հայոց Գէորգ Դ.-ը, որ բարեկարգեց էջմիածին, հիմնեց «Արարատ» ամսագիրը (1868), «Գեորգեան ճեմարան» (1874) և իրաւամբ արժանացաւ Մեծագործ տիտղոսին։

**) Խաչատուր Կաթուղիկոսի գործունէութեան և ժամանակակից դէպքերու մասին, իմ խնդրանքով, անոր երբեմնի քարտուղար՝ իսկ այժմ Տէր Խաչիկ Քահանայ Գուրգեանը (Ամերիկա, Ֆրէզնօ) կարգ մը հետաքրքիր տեղեկութիւններ հաղորդեց ինձ։ Գուրգեանը կերտած է Խաչատուր Կաթուղիկոսի քանդակազարդ մարմարեայ շիրիմը՝ Հայ արուեստի աքանչելի նմոյշ մը, որ տակաւին չարդ ու փշուր եղաւ տաճիկներու ձեռքով 1915-ի Վասպուրականի դէպքերու ժամանակ։

Գուրգեանը գրած էր նաև Խաչատուր Կաթուղիկոսի գեղեցկահիւս տապանագիրը, որ անձամբ արտագրեցի 1914-ի Յուլիսին, երբ Վանի «Երամեան Վարժարանի խումբ մը դասընկերներով Աղթամարի վանք և այլ գաւառներ պտոյտի գացեր էինք։

իւր դիրքի և ազդեցութեան շնորհիւ կրցած էր պետական շրջաններու մէջ և քիւրդ ցեղապետներու մօտ պաշտպանել ազգային իրաւունքները ու շահերը։

## ԺԱ.

## ԽՐԻՄԵԱՆ ՄԿՐՏԻՉ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԱՆՆ ՏԱՐՕՆՈՅ

Ամբողջ ամառը Վան-Վարագայ և Վասպուրական հայրենեաց հաճոյքը վայելելէ յետոյ, Խրիմեանը 1868-ի Սեպտեմբերին, ողջերթի և համակրանքի ցոյցերով Վարագէն ճամբայ կ'իյնար դէպի Մշոյ Աշխարհը, ուր հասնելէ յետոյ զարմանքով լսեց, որ իւր բացակայութեան ժամանակ, ամբողջ Տարօն-Տուրուբերանի գաւառներու և գիւղերու մէջ հանրագրութիւններ պատրաստուելով ղրկուած էին Պատրիարքարան, որուն կը դիմէր Տարօնի Հայութիւնը և ժողովրդական միահամուռ ցանկութեամբ կը խնդրէր, որ «Մկրտիչ Վարդապետ Խրիմեանը ձեռնադրուի Եպիսկոպոս ի վերայ Տանն Տարօնոյ»։ Պատրիարքարանն ընդառաջելով ժողովուրդի ցանկութեան կը դիմէ ժամանակակից Հայրապետին — Գէորգ Դ.-րդ Կաթուղիկոսին, — որուն համաձայնութիւնը ստանալէ յետոյ կը հեռագրէ Խրիմեանին, որ երթայ Էջմիածին եպիսկոպոս ձեռնադրուելու համար։

Ժողովուրդին համակրանքը վայելող քանի մը մէլիքներ, իբրև պատգամաւորներ կը միանան Խրիմեանին։ Ճիշտ այդ օրերուն, Կ. Պոլսէն Էջմիածին եկած էր եպիսկոպոս ձեռնադրուելու նաև Խրիմեանի հայրենակից և գաղափարակից Երեմիա Վարդապետ Տէր Սարգսեան-Տէվկանցը։

Խրիմեանի հետ Էջմիածին եկած Մշոյ Հայութեան պատգամաւորութիւնը կը ներկայանայ Գէորգ Դ.-Կաթուղիկոսին և ժողովրդական հանրագրութիւնները մատուցանելով կը խնդրէ, որ փութացնէ ձեռնադրութիւնը։

Էջմիածնի մէջ, 1868-ի Հոկտեմբերին կատարուած Ս. Միւռոնի օրհնութեան հանդէսներու պատճառով եկած էին բազմահազար ուխտաւորներ, որոնց հետաքրքրութեան և համակրանքի առարկան դարձած էր Խրիմեանը։ Ականատեսը կը վկայէ, որ՝ «Հայրիկ ամենեցուն ցանկալին և ամենեցուն ուրախութիւն եղած էր այդ տօնին»։

Էջմիածնի Տաճարին մէջ, 1868 ի Հոկտ. 18-ին խուռներամ ժողովրդեան ներկայութեամբ, Գէորգ Դ.րդ Կաթուղիկոսը մեծաշուք հանդիսաւորութեամբ եպիսկոպոսական օծում և կոչում կուտայ Խրիմեան Հայրիկին և Երիմիա Վարդապետ Տէվկանցին։ Այսպիսով Խրիմեանը եպիսկոպոս կը ձեռնադրուի «ի վերայ Տանն Տաբօնոյ և Գլակայ Վանուց»։

Ձեռնադրութեան յաջորդ առաւօտ, Հոկտ. 19-ին, Խրիմեանը Էջմիածնի Տաճարին մէջ կը մատուցանէ եպիսկոպոսական անդրանիկ պատարագը, որու ընթացքին «համօրէն միաբանութեան և ժողովրդոց բազմութեան մի հոգեուանդ ճառ խօսեցաւ Մայր Աթոռոյն, Հայկական եկեղեցւոյն և հայ եկեղեցականութեան նշանակութեան վերայ»։

Խրիմեանի եպիսկոպոսական օծման և անդրանիկ պատարագին ականատես ու բարոզին ունկընդիր Տիկին Եղիսաբեթ Ամիրխանեանը*) պատմեր է հետեւեալը.

«Հայ ազգի և հայրենիքի սիրոյ մասին՝ մեր անցեալի պատմական դէպքերէն ու դէմքերէն օրինակներ յիշելով թելադրեց, որ ժամանակակից սերունդը իւր նախնիքներու անձնուիրութեան և ազգասիրութեան օրինակներն իւրացնէ և ջանայ Հայոց տառապեալ ազգն ու հայրենիքը ազատել օտարներու ճանկերէն։ Այս նպատակին հասնելու համար անձնուէր և հայրենասէր երիտասարդներ, գործօղներ կը պակսին մեր մէջ։

«Այստեղ յանկարծ Խրիմեանը թևերը պարզեց ու բացականչեց.

«—Ո՞ւր են, ուր Հայկ Նահապետ, Արամ, անյաղթ Վահագն, Մեծն Տիգրան, ուր են Քաջն Վարդան, Աշոտ Երկաթ և դեռ որքան Հայ քաջեր և կտրիճներ, որոնք...

«Դեռ խօսքը չը լրացած, ժողովուրդի մէջէն երիտասարդ մը բարձրաձայն կանչեց.

---

*) Աւոր որդին 60 տարեկան Լեւոն Ամիրխանեանը (Հայաստանի Հանրապետութեան օրով Արարատեան Աշխարհի Փոխ-Նահանգապետ, 1920) յայտնեց ինձ, որ՝ «Այս պատմութիւնը լսած եմ մօրս մօտէն 1893-ի աշնան, երբ Հայրիկը Էջմիածին եկաւ և Կաթուղիկոս օծուեցաւ։ Մայրս յիշեց Խրիմեանի եպիսկոպոսական ձեռնադրութիւնը և բարոզի այս խօսքերը»։

«—Մենք ինչ գիտենք թէ ուր են....

«Այս ձայնն իրարանցում յառաջ բերաւ ժողովուրդի մէջ, մինչ Խրիմեանր պատասխանեց.

«—Ա՛հ... չը գիտէք թէ ուր են, ապա ուրեմն հետեւեցէք ինձ, երթանք Անի, Արարատեան Աշխարհ, Աւարայրի Դաշտ, Վասպուրական, Բարձ-Հայք, Տարօն, երթանք Կիլիկիա և Հայոց Աշխարհի ամէն կողմեր, ես ձեզ ցոյց կուտամ անոնց քաջագործութեան և ազգասիրութեան վայրերը, դուք կը տեսնէք մեր փառապանծ քաջերու շիրիմները և կը լսէք անոնց հոգիներու հեծեծանքն ու հառաչանքը, որոնք ձեզ, մեզ, ամէնքիս հրաւէր կը կարդան, որ ազգն ու հայրենիքը փրկենք օտար բռնաւորներու ճանկերէն»։

Թորգոմ Արքեպ. Դուշակեանն ալ հետեւեալ ուշագրաւ իրողութիւնը կ'արձանագրէ («Խրիմեան Հայրիկ». էջ՝ 38—39).

«Ծովորութիւն էր, այն տեսնողը, որ եպիսկոպոսացու վարդապետները թանկագին ընծաներով կը ներկայանային Կաթողիկոսին և Էջմիածնի միաբաններուն, և այս վերջիններր՝ մասնաւորապէս՝ չերմօրէն սիրալիր մեծարանքներով կը շրջապատէին այն ընծայացուները, որոնք փարթամ թեմականներէ ղրկուած էին։ Հայրիկ աղբատ վիճակի մը չբաւուր առաջնորդ, ղրկուած ուրեմն շնորհալի ասպանջականութեան մը իրաւունքներէն, կը հարկադրուի սրամիտ հնարքի մը դիմել։ Միաբանութեան ախորժակները պարարելու համար՝ թոյլ կուտայ տարաձայնել թէ իրեն հետ բերած է Շամիրամայ ուլունքներէն և Վանայ Ծովու մարգարիտներէն, որոնցմէ մի մի շարոց պիտի նուիրէր ամէնուն՝ ձեռնադրութեան օրը։ Այդ օրը սակայն հրքան յուսաբեկիչ կը լինի ընդհանուր յուսախաբութիւնը, երբ նորապսակ եպիսկոպոսը ամէնուն կը յանձնէ տպագրուած մէյ մէկ վտիտ գրքոյկ միայն, որուն վերնագիրն էր „Margarits Արքայութեան Երկնից“։

«Ժամանակին Կաթողիկոսը, Դէորգ Դ., խորապէս պահպանողական միտք մը, կ'ըսեն թէ չէ հաճած այդ օրը տալ անոր՝ պաճակէ լանջախաչը, զոր եպիսկոպոսները ընդհանրապէս կ'ստանան իրենց ձեռնադրուած օրը...»։

Հոկտեմբեր 20-ին Խրիմեան և իւր ուղեկիցները Էջմիածնէն կ'ուղեորուին դէպի Կարին, ուրկից անկարելի կը լինի ճամբան

շարունակել դէպի Տարօն, վասն զի սաստիկ ցուրտ ու ձիւն-ձմեռ էր, ճամբաները փակուած և հաղորդակցութիւնն ընդհատուած էր։ Խրիմեանն ամբողջ 4 ամիս կը մնայ Կարին և կը նպաստէ տեղւոյն հայոց ազգային ու կրթական գործերու յաջողութեան։ Կարնոյ Առաջնորդարանին մէջ կուտակուած հայկական հարստահարութեանց և տառապանքներու անթիւ բողոքագիրներն ուսումնասիրելէ յետոյ, Խրիմեանը մանրամասն տեղեկագիր մը կազմէ և գաղտնի կ'ուղարկէ Կ. Պոլիս՝ Պատրիարքարանին։

Անոր գլխաւոր գործերէն մէկն ալ այն եղաւ Կարնոյ մէջ, որ իւր ազդու միջնորդութիւններով յաջողեցաւ կառավարութեան միջոցներով սանձահարել տալ կարգ մը քիւրդ բէկեր, որոնք բռնագրաւեր էին Հայ գիւղացիներու հողերը՝ Խնուսի և Ալաշկերտի մէջ։

Գարուն էր—1869, Մարտ—Տարօնէն կանաչ-կտրիճ խումբ մը ձիաւոր մշեցիներ, ուրախ-զուարթ, ազգային տարազով զարդարուած կը հասնէին Կարին և Խրիմեանը կ'առաջնորդէին դէպի Մուշ։ Ամբողջ Տարօնի Հայութիւնը ցնծութեան մէջ էր։ Խրիմեանի եպիսկոպոսանալը և առաջնորդութիւնը ժողովուրդի ձայնի և կամքի կատարեալ յաղթանակն էր, որուն առջև կը լուէին կիրքերը կը խոնարհէին թշնամիները։

## ԺԲ.

## ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ՝ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅՈՑ ԹՈՒՐՔԻՈՅ

Ազգային Սահմանադրութեան հիմնադրութեամբ (1860 Մայիս 24) պատրիարքական իշխանութեան և իրաւասութեան սահմանները կը կրճատուէին և Ազգային Ժողովի—ժողովրդական ձայնի ու կամքի—առջև պատրիարքներու ունեցած նախկին հեղինակութիւնը կը նուազէր և անձնական կամայականութիւնները կը սանձահարուէին։

Այս պատճառով ալ, 1869—69 թուերու ընթացքին պատրիարքական գահին վրայ բազմող Ադրիանուպոլսեցի Սարգիս Գույումճեան*) և Պրուսացի Պօղոս Թաքլաքեան Պատրիարքներն ամէն կեր-

*) Ասոր յաջորդեց Սեբաստացի Սահակ Արքեպ. Մադաքեան, իբրև պատրիարքական տեղապահ։

պով կ'աշխատէին Ազգային ժողովի ազդեցութենէն դուրս մնալ և միահեծան ու քմահաճ տէրեր դառնալ։ Այս զոյգ պատրիարքներու հակաժողովրդական ընթացքն առիթ տուաւ, որ Ազգ. Սահմանադրութիւնը ծանր հարուածներ կրեց և ներքին անհամաձայնութեանց պատճառով «երկու անգամ խափանուեցաւ կամ առկախուեցաւ»։ Պատրիարքարանը ծանր պարտքերու տակ ընկած էր, Ազգային ժողովի նիստերը դադրած էին, իսկ Ազգ. Սահմանադրութեան թշնամիները կառավարութեան միջամտութեամբ խեղդեցին ժողովուրդի ձայն և կազմեցին նոր ժողով մը՝ Պօղոս Պատրիարքի նախագահութեամբ։

Սակայն Կ. Պոլսոյ լուսամիտ և ժողովրդասէր երիտասարդութիւնը յաջողեցաւ ժողովրդական ընդհանուր բողոքի և զայրոյթի ցոյցեր կազմակերպել, պահանջելով, որ նախ՝ Պօղոս Պատրիարք հրաժարուի և երկրորդ՝ Սահմանադրութեան գործադրութիւնը վերահաստատուի։ Կամակոր Պատրիարքը ծեծով և բանտարկութեամբ պատժել տուաւ կարգ մը «խռովարար անձանց», որոնք ժողովրդական ըմբոստութեան ղեկավարներն եղած էին։ Սակայն Պատրիարքը չը կրցաւ ժողովուրդի պահանջն անտեսել և ստիպուած եղաւ 1869-ի Յունուարին հրաժարականը տալ ու հեռանալ, իսկ կառավարութիւնն ալ կիրքերը խաղաղեցնելու համար կ'արտօնէր Սահմանադրութեան գործադրութիւնը։ Ազգային ժողովի կողմէ 1869-ի գարնան Պատրիարք կ'ընտրուէր Վանի Առաջնորդ Կ. Պոլսեցի Իգնատիոս Եպիսկոպոս Գագմաճեանը, որ սակայն, իւր ընտրութեան հաստատութենէն 3 օր յետոյ վախճանեցաւ։

Ազգային ժողովը դարձեալ նոր պատրիարքի ընտրութեամբ զբաղեցաւ։ Ժողովականներուն ցանկութիւնն էր, որ նոր Պատրիարքը «մայրաքաղաքի կուսակցական մեքենայութեանց խաղերէն հեռու ապրած, ազատատենչ խառնուածքով՝ սահմանադրասէր խմորով մարդ մը, որ նոյն ատեն ճանչցած ըլլար գաւառի Հայութիւնը։ Այս էր ժամանակին պահանջը Պօղոս Պատրիարքական աթոռին վրայ»։

Պատրիարքական թեկնածուներու շարքին, կը հոլովուէին նաև Ներսէս Եպիս. Վարժապետեանի և Խորէն Եպիս. Նար-Բէյ Լուսինեանի անունները։

Սակայն Ազգային Ժողովի ժողովրդասէր անդամներու աչքերն ուղղուած էին դէպի Ցարօն, դէպի Մշոյ Աշխարհը, ուր գեղջուկ ու գաւառիկ Հայութեան մէջ կ'աշխատէր ու կը տառապէր՝ «իր գրիչովն ու խօսքովը, իր կեանքովն ու գործունէութեամբը ամբողջ ազգին սէրը գրաւած մեծ հայրենասէրը»—ԽՐԻՄԵԱՆ ՀԱՑԻ՜Ի....

Կ. Պոլսոյ հայոց Մայր-Եկեղեցիին մէջ, 1869-ի Սեպտեմբեր 4-ին կը գումարուէր Ազգային Երեսփոխանական Ժողովի պատմական նիստը, նախագահութեամբ Ներսէս Տատեանի և մասնակցութեամբ 76 երեսփոխան-պատգամաւորներու։ Ամբողջ եկեղեցին լեցուած էր ժողովուրդով։ Ժողովականները բուռն կերպով կը վիճէին այս ու այն պատրիարքական թեկնածուի մասին և որոշ եզրակացութեան մը չէին հասած դեռ, երբ Ազգային Ժողովի անդամ Գրիգոր Օտեանը ձայն առնելով ոտքի կ'ելլէը և իւր հոյակապ ճառը կը վերջացնէր այս խօսքերով։

«Ա՛լ ժամ է լուծելու կիրքերը և պատրիարքի ընտրութեամբ զբաղիլ, բոլոր ազգը անհամբեր անոր կը սպասէ։ Ազգը կ'ուզէ պարզ, անխարդախ և գրագէտ եպիսկոպոս մը, որ պատրիարք ըլլայ, բայց անիկայ (Ներսէս Եպիս. Վարժապետեան) չպիտի կրնայ ըլլալ, որովհետև ինքն ալ չընդունիր.... Ես կ'առաջարկեմ ուրիշ մէկը, ոք արդէն շատերուն սրտին համաձայն է, որ ազգին ալ սիրելին է և որ ճշմարիտ հայու գաւակ և ոչ նուազ փառք մ'է մեր եկեղեցւոյն — Հայրենասէրն ԽՐԻՄԵԱՆ...»։

«Հազիւ թէ նա վերջացրել էր իւր խօսքը՝ ամբողջ ժողովը ներկայ գտնվող ժողովրդի հետ միասին միաբերան աղաղակում են.— „Կեցցէ՛ Խրիմեան, կեցցէ՛ Օտեան“. Նար-Բէյը մասամբ գոհ լինելով, որ Վարժապետեանի թեկնածութիւնը վերցվում էր ասպարէզից, ինքն էս ձայնակցում է „Կեցցէ՛ Խրիմեան Օրբազանի Պատրիարքութիւնը“ և ժողովուրդը նորից ծափահարում է»։

Ազգային Ժողովի այս պատմական նիստին ականատես և ունկընդիր եղած Վանեցի Մադաթ Վարժապետ Պուզեանը հետևեալ տողերը կը գրէ.

---

*) Սարուխան—«Օսմանեան Հայերի Ազգային Սահմանադրութիւնը». (յօդուածաշարք՝ 1910-ին ի Թիֆլիս տպուած «Aror» ամսագրի մէջ. Թիւ՝ 2. էջ՝ 57)։

«Այս ցանկալի անուն (Խրիմեան) լսելուն պէս անթիւ ժողովրդոց կողմէն սկսան սրտատրոփ կեցցէները և ծափահարութիւնները իրրև կէս ժամ, յետ որոյ ըստ օրինի բուէարկութեամբ Խրիմեանն ընտրուեցաւ Պատրիարք Ցաճկաստանի Հայոց։ Նոյն օրը (1869 Մայիս. 4) յիսունէն աւելի հեռագիրներ քաշուեցան ի Մուշ ի շնորհաւորութիւն Խրիմեանին»*)։

Այս հեռագիրներն ստանալէ յետոյ Խրիմեանը շնորհակալութեան հեռագիր մը կուտայ Ազգային ժողովին աւելցնելով այս խօսքերը—«Զը շռայլել ի հանդէսս, որք ազգին ապարդիւն լինելէն զկնի մնասակար կարող են լինել. գործունէութիւնն է փառաւորութիւն»։

Խրիմեանի ընտրութիւնը Սուլթան Ազիզի կողմէ կը հաստատուէր, իսկ Ազգային ժողովն ալ կը հեռագրէր նորընտիր Պատրիարքին, որ Ցարօնի ազգային գործերը կարգի դնելէ յետոյ, շուտով ուղեւորուի դէպի Կ. Պոլիս։

Բ. Դուռը կարնոյ կուսակալ Իսմայէլ փաշային և Մշոյ միւթէսարըֆին կը հրահանգէր ամենուրեք պաշտօնական ընդունելութիւն ցոյց տալ Հայոց Պատրիարքին և պատուոյ պահակախումբով հասցընել մինչև Ցրապիզոն։ Մշոյ միւթէսարըֆ փաշան անձամբ կ'երթար Ս. Կարապետի վանքը և կը շնորհաւորէր Խրիմեանի ընտրութիւնը։ Հայրիկի հակառակորդներն ու թշնամիները «կը փոխեն իրենց դէմքն ու դերը և երամովին կ'երթան շնորհաւորութեան համրոյը նուիրելու»։ Կարնոյ կուսակալին կողմէ պետական պաշտօնական պատգամաւորութիւն մը իրրև հրաւիրակ կուգար Մուշ՝ Պատրիարքին ընկերանալու և դէպի Կարին առաջնորդելու համար։

Ցարօնի Աշխարհի Հայութիւնն իրարանցումի և պատրաստութեան մէջ էր։ Հայրիկը պիտի բաժնուէր իւր այնքան սիրած գեղջուկ ժողովուրդէն, որուն բարօրութեան համար ամբողջ եօթն տարի նա հոգեպէս ու մարմնապէս տանջուեցաւ։ Այս տանջանքներու արդիւնքն այն եղաւ, որ գաւառական Հայութիւնը գլխաւորաբար

*) «Հայկական Աշխարհ». ամսագիր. Թիֆլիս. 1870. Թիւ 1. էջ՝ 24։ Այս թերթի հիմնադիր-խմբագիրն էր Ստեփաննոս Ստեփանէ (յետոյ՝ Խրլէն Եպիսկոպոս Ստեփանէ—եկեղեցական և գրական գործիչ)։

Վասպուրականի և Տարօնի մէջ ուսման և կրթութեան սիրահար դառնալէ յետոյ, իւր ազգային ու քաղաքական վերածնութեան և ազատ հայրենիքի գաղափարներով տոգորուեցաւ, իրողութիւն մը՝ որ հիմնաքար պիտի դառնար Հայկական Ազատագրական շարժումներու արիւնոտ ու յուզիչ պատմութիւն։

«Ս. Հայրիկ կը հետանար Վանէն և Մուշէն, Վարագէն և Սուրբ Կարապետէն, այդ տեղերը ձգելով մի խումբ պատանեաց և երիտասարդաց, որք ուսած և զարգացած էին այն կրկին վանքերու գիշերօթիկ վարժարանաց մէջ։ Նոքա արդէն գիւղերը սփռուած էին իրենց գիտցածն ուսուցանելու, իրենց կրցածն ընելու։ Այդ երկու բազմահայ գաւառները, Վասպուրական և Տարօն, Ս. Հայրիկի երկանց զաւակները կը կազմեն իրենց քիչ շատ ուսեալ սերունդով։ Դոքա համօրէն Ս. Հայրիկի հոգիերով սնած որդիք և թոռունքն են։ Դեռ լոյս ու կրթութիւն ծաւալող ընկերութիւնք կազմեալ չէին այն կողմերը, այլ սակայն վարժարանք և վարժապետք կային, և այն պատրաստ տարերք օժանդակ և դիւրացուցիչ հանդիսացան ընկերութեանց ձեռնարկին»*)։

«60-ական թուականներուն Գլակայ վանքը նստած էր Երիմեանը։ Ինչպէս Վարագէն լոյս ու յոյս կը սփռէր Վասպուրականի ժողովուրդին իր քարոզներով և „Արծիւ Վասպուրականի“-ով, այնպէս ալ Սբ. Կարապետէն ան կը ներշնչէր ժողովուրդին հաւատ ու վստահութիւն դէպի իր ապագան, կարթնցնէր անոր հոգու մէջ Մուշեղներու և Վահաններու, Դաւիթներու և Մարամելիքներու յիշատակները, կը ներշնչէր անոր այն միտքը, թէ այդ երկիրը իրն է և պիտի մնայ իրենը։ Մէկ խօսքով Երիմեանը բոլոր միջոցներով կը մղէր ժողովուրդը դէպի ազգային ինքնագիտակցութիւն և ինքնօգնութիւն։

«Այդ ժամանակներու մէջ ամենուրեք կը բացուին դպրոցները, որոնք հետզհետէ կ'աճին ու կը տարածուին։ Կը պատրաստուի նոր սերունդ մը, աշխարհական և հոգեւորական, որ տարբեր ոգի մը ունի և ներշնչուած է Հայրիկի ըմբռնած գաղափարներով»**)։

---

*) «Արեւելք» օրագիր. 1885. Կ. Պոլիս։

**) Ռ(ուբէն)—«Հայ յեղափոխականի մը յիշատակները». «Հայրենիք» ամսագիր. Բոստոն. 1922. Ա. Տարի. Թիւ՝ 2. Էջ՝ 38—39։

Խրիմեան Հայրիկի շունչով դաստիարակուած սերունդը խորապէս կ'ըմբռնէր իւր դերն ու կոչումը և կը գործադրէր «ժողովուրդով եւ ժողովուրդի համար» նշանաբանը։ Տարօնի Հայութեան սրտի մէջ առկայծելով կը վառուէր կրթական և ազատագրական գաղափարի խարոյկը, որ անմար և անշէջ պահեցին Հայը Արծուի աշակերտ-Արծուիկները և յաջորդները՝—խաչի, գրչի, եւ սուրի ժողովրդաճուէր գործիչները*)։

Այս ազգօգուտ գործունէութիւնն էր ահա, որ գրաւական կը դառնար Խրիմեանի պատրիարքական ընտրութեան և Թուրքիոյ համայն Հայութեան համակրանքին արժանացած Հայրիկը Տարօնէն կ'ուղևորուէր դէպի մայրաքաղաքը՝ պատասխանատու և ծանր պարտականութիւն մը ստանձնելու համար։

Վերջապէս կը մօտենար Խրիմեանի մեկնումի օրը։ Ամբողջ Մշոյ Դաշտի Հայ գիւղերէն բազմահազար ձիաւոր և ոտաւոր գիւղացիները—մինչև անգամ ծերուկներ, կանայք, մանկիկները—խռնուած էին Ս. Կարապետի վանքը Հայրիկի հրաժեշտի քարոզը լսելու և օրհնութիւնն առնելու համար։ Մուշէն եկած էին նաև ոստիկաններ, պատուոյ պահակախումբ և պետական բարձրաստիճան պաշտօնեաներ։ Ս. Կարապետի վանքը տօնական հանդիսավայր մը դարձեր էր։ Ամէն կողմէ նաղարա-զուռնայի ձայները, պարերը և երգերը, ուրախ աղաղակները կը թնդացնեն վանքի ներսն ու դուրսը։

Աղօթարանը կը բացուի։ Լոյսը կը ճոխճոխուի արևելքէն և արեգական ոսկի շողերը կը փայլփլին Քարքէ լերան գագաթին ու լանջերուն վրայ։ Վանայ ծովէն, Նեմրութայ սարէն, Օտունի բարձունքներէն, Մշոյ Դաշտէն աշնան զով ու կենսաբար օդը կը փչէ։ Ամէն կողմէ գեղչուկներու խուռներամ բազմութիւնները կը շտա-

*) Գարեգին Օրուանձտեան, Գրիգորիս Ալէքճեան, Յովսէփ Սարաճեան, և ներսէս Խարախանեան եպիսկոպոսներ, Վարդան, Յովհաննէս, Սիմէոն, Ղազար, Զաքար, Ստեփան, Վահան և դեռ քանի՛ քանի՛ վարդապետներ, Մովսէս Սարկաւագ, Սարգիս, Քերոբ, Մուշեղ, Յովհաննէս խաչակիր և զինակիր քահանաներ, Վարդենիսցի Մարգար Վարժապետ, «Տատրակ Տարօնոյ» Դեղամ Ծէր Կարապետեան, Լեռեցի Լեւոն, Դոմերցի Ղուկաս և Դերեկցի Խաչիկ Վարժապետները, Մշու Աշխարհի և Սասունի յեղափոխական, ազգային և հայդուկ ու հերոս հարիւրաւոր գործիչներ, որոնց մէջ Նեմրութի հսկան ու սիրտն Սերոբ-Ալբիւրն ու անզուգական Հայր-Դժոխքը կ'արձանանան իրենց լուսազարդ ճակատներով։

պեն դէպի Ս. Կարապետի վանքը, որու տաճարին զանգերն ալ բարձր ու զիլ կը զօդանջեն և արշալուսային օրհներգութեան հրաւէրը կը կարդան բազմահազար ուխտաւորներուն։

Տաճարը կը լեցուի ժամաւորներով. Պատարագի զանգերն ալ կուտան և քիչ յետոյ պատարագիչը—Մկրտիչ Եպիսկոպոս Խրիմեանը—զգեստաւորուած, եկեղեցական հանդիսաւոր թափօրով տաճարը կ'իջնէ, իւր վերջին պատարագը կը մատուցանէ և ապա հրաժեշտի քարոզ մը կուտայ։ Հմայեակ Վարդապետ Արշարունին հետեւեալ կերպով պատմեց ինձ (1919 Հոկտեմբեր 24) Խրիմեանի հրաժեշտի քարոզի մօտաւոր միտքը։

«Երինակն ժողովուրդ Հայոց, եօթն տարի առաջ, այն օրը, երբ ես ոտքս դրի Մշոյ Աշխարհի վրայ, ես սիրեցի այս երկրի հողն ու ջուրը, սիրեցի այս աշխատասէր և չարքաշ ժողովուրդը, անոր դառն վաստակ և սուրբ քրտինքը տեսայ, անոր ցաւերն ու վիշտերը նկարագրեցի ամենուրեք և ձեռքէս եկածն ըրի, որ ժողովուրդը ուսում և կրթութիւն սիրէր, գրել կարդալ սովրէր, իւր հայրենի հողին ու ջրին կապուէր, պանդխտութեան չը դիմէր և մարդավայել ապրէր։ (Խրիմեանի աչքերը յանկարծ ուղղուեցան ցնցոտիապատ և բոկոտն պառաւի մը վրայ։ Վշտահար դէմքով, արցունքոտ աչքերով, դողդողուն ձեռքերով և կքոտած ծունկերով թշուառ մայր մը էր այդ, որ պատին կռթնած՝ Հայրիկի քարոզը կը լսէր)։ Կը տեսնէք այս թշուառ մայրը, Հայաստանի ցաւոց պատկերն է այն, իմ տաճկուած ժողովուրդի ոգին է այն, որ ուրուականի մը նման հոս կեցեր է և կարծես կը բողոքէ, կը պահանջէ, որ ես նկարիչ մ'ըլլամ և Պոլիս հասնելէ յետոյ Ազգային ժողովին մէջ նկարեմ իւր ցաւագին պատկերը, որ գաւառաբնակ Հայութեան պատկերն է։

«Այսօր վերջին անգամ դուք կը լսէք, Հայրիկին ձայնն ու քարոզը, բայց գիտցէք, որ Հայրիկ ուր, որ երթայ միշտ պիտի յիշէ ձեզ և պիտի լսէ ձեր տխրութեան և ուրախութեան ձայները, ձեր դանգատներն ու բողոքները։ Է՛հ, ժողովուրդ Հայոց, մնաք բարեաւ, ես կ'օրհնեմ ձեզ, կ'օրհնեմ ձեր տուն ու տեղ, ձեր ընտանիքն ու հայրենիք, դուք ալ օրհնեցէք ձեր Հայրիկ և մաղթեցէք, որ պատուով տանիմ այս ծանր լուծը, որ Ազգային Ժողովը և համայն ժողովուրդը իմ վզիս դրաւ։ Մնաք բարեաւ, իմ յոյսը ժողո-

վուրդն է, շինական և գիւղացի ժողովուրդը, որուն հարազատ ձայնին և մաքուր հոգւոյն ապաւինած՝ խղճիս վրայ ձեռք կը դնեմ և կ'երդնում, որ ես ժողովուրդի համար անձս ալ կը զոհեմ. Մնաք բարեաւ, ժողովուրդ Հայոց...»

Կեցցէներ և ուրախ աղաղակներ թնդացուցին օդը,—կը շարունակէ ականատեսը—մինչ շատերը կուլային, իսկ հարիւրաւոր մարդիկ մօտեցան Հայրիկին, աչը համբուրեցին և ստացան անոր օրհնութիւնը.

Խրիմեանը Ս. Կարապետի վանքէն կը մեկնէր 1869-ի Հոկտեմբեր 3-ին. Վանքի միաբաններէն Մկրտիչ, Խորէն և Յովհաննէս վարդապետները կ'ընկերանան նորընտիր Պատրիարքին. Պետական պատուոյ պահակախումբը կազմ ու պատրաստ էր. Տասնեակ հազար գեղջուկներ վանքի շրջակայք, ճամբաներու վրայ խռնուած Հայրիկին ողջերթ մաղթելու կեցեր էին. Երբ Հայրիկը ձիու վրայ նստած աջ ու ձախ խաչակնքելով կ'երթայ, հազարաւոր բերաններ յուզուած ձայներով կը կանչեն.

—Կեցցէ Հայրիկ, կեցցէ Խրիմեան...

—Հայրիկ, Հայրիկ, դուրբան քըզի, չը մոռնաս զՄուշ, չը մոռնաս աղբատ մշեցին, դարիբ մշեցին.

—Հայրիկ չան, չը մոռնաս մեր ճիժն ու պիժ, մեր մանկտիք.

—Հայրիկ չան քարը քըզի կանաչ դառնայ, բարով էրթաս.

Կը պատմեն, որ երբ Հայրիկը Ս. Կարապետի վանքէն մեկնեցաւ, այդ օր մօտ 6000 մշեցի ձիաւոր հայեր մէկ օրուայ ճամբայ միացան Պատրիարքի այդ պատմական թափօրին, որ երբ գիւղերուն կը մօտենար գիւղացիք եկեղեցական թափօրով, աղ ու հացով, մատաղով կ'ընդառաջէին Հայրիկին, անոր օրհնութիւնը կ'առնէին և ապա ձիեր նստելով կ'ուղեկցէին մինչև յաջորդ գիւղը. Շատ մը գիւղերու գիւղացիները ալ նաղարա-զուռնայով և երգ ու պարով կ'ընդառաջէին Հայրիկին, ձիաւորները մրցումի և ձիարշաւի կ'ելլէին. Գիւղերն իրար գերազանցելու համար արտակարգ ընդունելութիւն ցոյց կուտային. Գիւղական «իշխան»ներու և մէլիքներու հետ Հայրիկին դիմաւորութեան կուգային նաև բոկոտն մանուկներ, ցնցոտիապատ կանայք, անգամ ծերունիներ, որոնց բոլորին ալ Հայրիկը կը մխիթարէր և կը յուսադրէր.

Պատրիարքը մօտեցեր է Հայ գիւղի մը, ուրկէ քանի մը տասնեակ ձիաւորներ սրարշաւ կ'ընդառաջեն. ապա կուգան գիւղացիք, մեծ ու փոքր, մարդ ու կին, աղ ու հացով, մատաղով, պարելով ու երգելով։ Ջուռնաչին կը փչէ «Մշու խրոխի եղանակը իսկ նաղարաչին դրմփ հա դրմփ կը կոպլէ նաղարան, մինչ հարիւրաւոր մարդ ու կին ձեռք ձեռքի տուած, շուրջ պար բռնած, արագ և աշխոյժ, համաչափ ելևէջներով ու շարժուձևերով կը պարեն։ Եւ այսպէս ամբողջ ճամբու ընթացքին կ'ընդունեն և կը մեծարեն մինչև Վարդօ, Խնուս։ Կառավարութիւնն ալ իր կարգին ամէն տեղ պաշտօնական ընդունելութիւն և յարգանք ցոյց կուտայ նորընտիր Պատրիարքին։

Այս հանդիսաւոր շքերթը կը մօտենայ Կարին քաղաքին։ Կուսակալ Իսմայէլ փաշան, պետական պաշտօնէութիւն, Հայ հոգևորականութիւն, քաղաքին երևելիներ և խուռներամ, տասնեակ հազարաւոր ժողովուրդ կը դիմաւորեն Խրիմեանին։ Ժողովրդական ցոյցերով և հանդէսներով Խրիմեանը կը ժամանէ Կարին և կ'ուղղուի դէպի Հայոց եկեղեցին, ուր աղօթելէ և քարոզելէ յետոյ կ'երթայ Առաջնորդարան։ Յաջորդ օր Կարնոյ Հայ վաճառականները, Խաչատուր Փաստրմաճեանի*) տանը մէջ, ի պատիւ Խրիմեանի, կազմակերպեր էին պաշտօնական խնջոյք մը, որուն հրաւիրուած էին կուսակալ, պետական պաշտօնեանները, Հայ և թուրք վաճառականներ, և քաղաքին երևելիները։ Երբ ճառախօսելու կարգը Խրիմեանին կուգայ, նա ոտքի կ'ելլէ և կ'առաջարկէ, որ—«եթէ Կարնոյ Հայութիւնը կը սիրէ ինձ և կ'ուզէ յաւերժացնել այս հանդիսաւոր օրուան յիշատակը, ապա ուրեմն ես կը խնդրէի, որ ձեր աղջիկներու համար դպրոց մը հիմնէիք և իգական սեռի կրթութեան**) հոգատար ըլլայիք։ Այս գործի նախաձեռնութեան պատիւը, վաճառականներուն կու-

*) Եկեղեցական և ազգային գործիչ Արմեն-Գարօի (Գարեգին Փաստրմաճեանի հայրն էր այս Խաչատուրը, որ 1860—70 թուերուն Կարնոյ Հայ հասարակական կեանքի լուսատոյն գործիչներէն մէկը կը հանդիսանար։ Ցաճիկները զաւակդրութեամբ սպաննեցին զայն 1876 թուին։

**) Վանի, Մուշի, Կարնոյ, Կիլիկիոյ և Հայաստանի այլ վայրերու մէջ իգական սեռի կրթութեան և աղջկանց համար դպրոցներ հիմնելու հարցը առաջին անգամ Խրիմեան Հայրիկն արծածեց 1850—1860-ական թուերէն սկսեալ։ Այդ գեղեցիկ գաղափարը, տարիներու ընթացքին, իրականութիւն դարձաւ։

տամ, որ դրամ տան և գործի լծուին»։ Որոտընդոստ ծափերով կ'ընդունուի Խրիմեանի առաջարկը։ Խաչատուր Փաստրմաճեանը կը խոստանայ նուիրել 1500 օսմ. հնչուն ոսկի, իսկ Պալլաբեան էֆէնտին ալ 750 ոսկի։ Կուսակալ Իսմայէլ փաշան կ'երաշխաւորէ, որ շուտով պիտի կատարուի «Փաթրիք էֆէնտիմըզն» (մեր Պատրիարք հօր) փափագը։

Խրիմեանը Կարինէն պատուոյ պահակախումբով, կ'ուղղուի դէպի Բաբերդ, ուր թէ Հայութիւն և թէ կառավարութիւնը շքեղ ընդունելութիւն մը ցոյց կուտան Պատրիարքին։ Հայոց Առաջնորդարանի դուռն ճակատի վրայ մակագրուած էր՝ «Կեցցէ Ազգ, կեցցէ՛ Խրիմեան»։ Ի պատիւ Հայրիկին գիշերը հրավառութիւն և խրախճանքներ տեղի կ'ունենան քաղաքին մէջ։

Բաբերդէն կ'ուղղուի դէպի Կիւմիւշխանէ քաղաքը, ուր նոյն հանդիսաւոր ընդունելութեան կ'արժանանայ թէ ժողովուրդին և թէ կառավարութեան կողմէ։ Տրապիզոնի Հայութեան կողմէ ազգային մարմիններու ներկայացուցիչներ և քահանաներ մեծ խումբով մը Կիւմիւշխանէ եկեր էին դիմաւորութեան։

Պատրիարքի այս հանդիսաւոր շքերթը կ'ուղղուի դէպի Տրապիզոն, ուրկէ երկու ժամ հեռու, Խօշօղլան կոչուած վայրին մէջ, կառավարութիւն և ժողովուրդը կ'ընդառաջեն Խրիմեանին կեցցէներով և ցոյցերով։ Այնտեղ եկեր էին Տրապիզոնի հայեր, տաճիկ միւթէսարըֆ և իր օգնական, օտար հիւպատոսներ, զինուորականներ և պատուոյ զօրագունդը։ Շատ յուզիչ և խանդավառ եղած է նաև Տրապիզոնի յոյն ազգաբնակչութեան ընդունելութիւնը։ Ցունաց առաջնորդը, քահանաներ, վաճառականներ և ժողովուրդը կ'ընդառաջեն Խրիմեանին։

Ապա Խրիմեանը պետութեան կողմէ ուղարկուած ձիու վրայ նստելով, հսկայական ցոյցերով կը մտնէ Տրապիզոն։ Ամբողջ քաղաքը կ'որոտար բարձր և երկարատև ձայներով։

—Կեցցէ՛ Հայրիկ, կեցցէ՛ Խրիմեան, կը կանչէին հայերը։

—Չիթօ (կեցցէ) Խրիմեան, զիթօ Խրիմեան, կը պօռային յոյները։

—Նաշասը՞ն Փաթրիք էֆէնտի, կ'աղաղակէին տաճիկները։

Պետական շէնքերու և հիւպատոսարաններու վրայ կը ծածանէին բազմաթիւ դրօշակներ, ի պատիւ քաղաք ժամանած մեծ հիւրին։

Խրիմեանը կ'առաջնորդուի Հայոց եկեղեցին և ապա Առաջնորդարան։ Յաջորդ օր կ'այցելէ քաղաքի միւթէսարըֆին, հիւպատոսներուն, զինուորականութեան և ապա կ'երթայ Հայոց դպրոցը։ Աշակերտութիւնը ազգային երգեր երգելով, ծափերով և կեցցէներով կը դիմաւորեն Հայրիկին, ուղերձներ և ճառեր կը կարդան իսկ Խրիմեանն ալ յուզուած ձայնով սրտառուչ քարոզ մը կը խօսէ բնաբան ունենալով «Մխուքիւճ եւ Աբխասուքիւճ»։ Կիրակի առաւօտ Հայոց եկեղեցւոյ մէջ ազգաշունչ քարոզ մը կուտայ, յորդորելով, որ ուսում և կրթութիւն սիրեն, ազգ և հայրենիք սիրեն, պետութեան հաւատարիմ հպատակներ մնան և հարևան ազգերու հանդէպ եղբայրական սէր ցոյց տան։ Քարոզը վերջանալու վրայ էր, երբ Ծունաց առաջնորդը եկեղեցական հանդիսաւոր թափօրով և խունկերամ ժողովուրդով, կուգայ Հայոց եկեղեցին, խնդրելով, որ Խրիմեանն այցելէ Ծունաց եկեղեցին։ Այս մեծաշուք թափօրով Հայոց Պատրիարքը կ'առաջնորդուի դէպի Ծունաց եկեղեցին։ Քաղաքի յոյն աշակերտները ձիթենիի ճիւղերը ձեռքերնին բռնած երգելով կ'ընդառաջեն Հայրիկին, որուն ուղղուած բարի գալուստի յուներէն ճառը կը կարդայ յոյն ուսուցիչ մը։ Ծունաց եկեղեցւոյ մէջ Հայրիկը 45 րոպէ կը քարոզէ Հայ և յոյն եկեղեցիներու հնութեան, յունաց եկեղեցւոյ ուղղափառութեան, սիրոյ և միութեան վրայ։ Յոյները յաճախ կ'ընդհատէին քարոզը և «զիջիճ Խրիմեան» կ'աղաղակէին։ Ապա Ծունաց Առաջնորդի սարկաւագը կը քարոզէ շեշտելով, որ «Խրիմեանը Մ.Խորենացիի և Ն. Շնորհալիի մէկ տիպարն է, որ պատիւ կը բերէ Հայութեան մասնաւորապէս և քրիստոնիայ հոգևորականութեան ընդհանրապէս»։ Յոյն վաճառական մը ի պատիւ Խրիմեանին բազմամարդ և պաշտօնական ճաշկերոյթ մը կը կազմակերպէ։

Խրիմեանը ժողովրդական մեծ ցոյցերով Տրապիզոնի նաւահանգիստը կ'իջնէր, ուր կը սպասէր Սուլթան Ազիզի կողմէ ուղարկուած պետական շոգենաւը։ Մովափը խռնուած տասնեակ հազար ժողովուրդը որոտընդոստ ծափերով և կեցցէներով բարի երթ կը մաղթէր Խրիմեան Պատրիարքին։

Շոգենաւը կը սուրար, կը պատռէր կուրծքը Սև ծովին, որուն ալիքներուն և ջրաձայներուն մէջ կը մարէին ժողովուրդի կուրծքէն թռած կեցցէներու արձագանգները։






ՀՐԱՏ. ՀԱՑԿ ԱՃԷՄԵԱՆԻ. ՔԱՒՐԻՋ 1927

ՄԽԻԹԱՐԵԱՆ ՏՊԱՐԱՆ – ՎԵՆԵՏԻԿ

ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ–Ի ՕՐՕՓԷՕՐԻՆԸ ՀԻՒԼԻՒԼԸ Է.

«ՄԿՐՏԻՉ ՎԱՐԴԱՊԵՏ ՎԱՐԱԳԱՑ, ՊՊԻՍԿՈՊՈՍ ՏԱՐՈՆՈՑ և ՊԱՏՐԻԱՐՔ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՑ»

## ԺԳ.

## ԽՐԻՄԵԱՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՄՈՒՏՔՆ Ի Կ. ՊՈԼԻՍ

Ամբողջ մայրաքաղաքն իրարանցման մէջ էր. Նորընտիր Պատրիարքին վայելուչ ընդունելութիւն ցոյց տալու համար կառավարութիւն, Հայութիւն, յոյներ և բուլղարներ մեծամեծ պատրաստութիւններ տեսած էին։ Անսահման ուրախութեան և ոգևորութեան մէջ էին մանաւանդ հայերը։

Նոյեմբերի 6-ի առաւօտ (1869) հեռագիրներ և թերթերը յայտարարեցին որ — «Այսօր մայրաքաղաքս կը ժամանէ Նորընտիր Պատրիարք Խրիմեան Մրբազանը»։ Լուրը կայծակի արագութեամբ տարածուեցաւ ամենուրեք. Մարդկային հեղեղը, ուժեղ հոսանքով մը կը խռնուէր Գում-Կափուի ծովափը և կը սպասէր Խրիմեանի ժամանման։ Պետական շէնքերը, դեսպանատուներ, Պատրիարքարան, խաները, թաղերը մէկ խօսքով ամբողջ Կ. Պոլիս և արուարձանները դրօշազարդուած էին։

«Պօլսի բոլոր հայ ժողովուրդը, հայոց հոգևորականութիւնը, կառավարութեան ներկայացուցիչները, հաւաքուել էին ծովի ափը և սպասում էին Հայրիկին։

«Տաճիկ էֆէնտիները իրանց պաշտօնական զգեստը հագած, հեզ դէմքով՝ շտապում էին դէպի ծովի ափը ասելով.—„Մի տեսնենք՝ ադ ինչ տեսակ մարդ է, որին հայրդ այդքան կը սիրէք“։

«Արդէն կէսօր էր, բայց Հայրիկը չը կայ, ուր է, ժողովուրդը սպասում է նրան, էլի կը սպասի, մինչև վաղն էլ կը սպասի...։ Բոսֆորի ափը լցուած էր բազմաթիւ ժողովրդով, որոնց խօսակցութեան նիւթը Հայրիկն էր, մինը պատմում էր նրա քարոզութիւնների և բարութիւնների մասին, միւսը թէ նա ինչպէս կեանք է անցկացրել Վարագում, միւսը թէ ինչպէս Նիկոմիդիոյ մի առաջնորդը անարժան լինելով իր ամբողջ հօտը կորցրել է, Պատրիարքը Հայրիկին ուղարկում է այնտեղ անարժան առաջնորդի փոխարէն, Հայրիկը իր մի քարոզով դարձնում է բոլոր հօտը դէպի իր մայրական եկեղեցին»*)։

*) Տարազ· Շաբաթաթերթ. Թիֆլիս· 1893, Յունիս 20. Թիւ՝ 25։

Հանգուցեալ Խաչիկ Խան Սարաճեանը հետեւալը պատմեց ինձ (10 Մայիս 1924) Երիմեանի ժամանման մասին.

«Երիմեան Հայրիկի պատրիարքական ընտրութեան տարին (1869) ես 20 տարեկան պատանի մըն էի. Անոր գալու օրը, ես և թաղեցի ընկերներս ծովափը գացինք դիմաւորելու և հանդէսները տեսնելու։ Ամպոտ ու անձրևոտ օր մըն էր թէև, բայց ժողովուրդը սիրով, սրտով և անձկանօք Հայրիկի գալուն կը սպասէր. Շատ ուրախ էին մանաւանդ գաւառացի պանդուխտները—վաճեցիները մշեցիները—որոնք հայրենի տարազներով զարդարուն հպարտութեամբ կը շրջէին ծովափի վրայ։ Ասոնք բերած էին նաև իրենց դհօլ-զուռնան և շուրջ պար կազմած կ'երգէին ու կը պարէին։ Տեղ մըն ալ տեսայ, որ խումբ մը վաճեցիներ և մշեցիներ կանգնած՝ տաք տաք կը վիճէին։ Մշեցիները կ'ըսէին, որ—«Հա, իդա Հայրիկ մըր Հայրիկն է, Մշու առաջնորդ էղաւ, էտոր հըմար լէ բերին Պատրիարք էնեցին»: Վաճեցիներն ալ կ'առարկէին թէ—«Հայրիկը մեր Հայրիկն ի, մեր հայրենակիցն ի, որ գնաց Մուշ ուսում տարածեց, Մշու երկիր լուսաւորեց»։ Ես մօտեցայ վիճողներուն և ըսի—«Ախպար, ինչու կը վիճէք, Հայրիկը ոչ ձերն է, ոչ ալ անոնց, Հայրիկը ամէնքիս Հայրիկն է»։ Այս խօսքս հաճոյք պատճառեց գաւառացիներուն, որոնք սկսան միջադէպեր պատմել Երիմեանի կեանքէն։ Հայրիկին դիմաւորելու եկած էին նաև անոր հակառակորդները, որոնց մէջ կը յիշեմ Պատուելի Յովհաննէս Տէրոյենց—Զամուրճեանը։ Թերթերու խմբագիրներն ու թղթակիցները իրար անցեր էին յարմար տեղեր գրաւելու համար։ Այնտեղ էին Երիմեանի վրայ հիացողներէն՝ «Մեղու» թերթի խմբագիր Գարութիւն Սվաճեանը և Դրիգոր Օտեանը, ինչպէս նաև Ներսէս Վարժապետեան և Նար-Բէյ եպիսկոպոսները, որոնք երկար և լուրջ խօսակցութեամբ մը զբաղուած էին։

Յանկարծ հեռուէ հեռու լսուեցաւ շոգենաւին սուլոցը և օդը թնդաց որոտալից ծափերով և երկարատև ազաղակներով.

—Հայրիկ եկաւ, կեցցէ Երիմեան, կեցցէ՛ Պատրիարք, կեցցէ՛ Հայրիկ.... Ջիթօ Երիմեան.... Եաշասըն Փաթրիք էֆէնտի....

«Ներսեցաւ դրօշակներով զարդարուած նաւը.... Թնդանօթները որոտացին։ Ծափահարութիւնները և կեցցէները պատռում էին

Բոսֆորի խուլ ալիքները», կը գրէ ականատեսը. Շոգենաւը կուգայ Կում-Կափուի բացերը. Պատրիարքարանի կողմէ, խումբ մը եպիսկոպոսներ և վարդապետներ Սուլթան Ազիզի արքայական նաւակով կը մօտենան շոգենաւին և Երիմեանին ներկայանալով բարի գալուստ կը մաղթեն. Ապա, նորընտիր Պատրիարքը արքայական նաւակով կ'առաջնորդուի դէպի ծովափը, ուր տասնեակ հազարաւոր ժողովուրդ, տեղացող անձրեւին տակ, Հայրիկին կ'ողջունեն կեցցէներով, ծափերով և ժողովրդական ցոյցերով. Այս իրարանցումի մէջ՝

«Ճանկարծ մօտեցաւ մի պատանի, սպիտակ ձեռնոցներով, սևագոյն դէմքով, խորհրդաւոր աչքերով, ձեռքին մի թերթ և կանգնելով Հայրիկի առաջ՝ սկսեց կարդալ՝ «Ողջոյն առ Երիմեան»*).

Հրեշտակդ յուսոյ թռիր առ մեզ.
Շատ թառեցար, բիւ սրտակէզ,
Համր ի նոճիս աւերակաց...
Թէ բարեկամ ես ամայեաց՝
Մեր սիրտք ալ են աւեր, թափուր.
Լից ըզ նոսա հոգւոյդ ի հուր.
Բոցովդ աչաց սառն արծարծես.
Զանըզգայ սիրտըս եկ վառես.

Օ՜ն, Հայրիկին ընդ առաջ
Դիմենք, հայեր, աչ ի յաջ.
Հերիք կոհակք անջատեն
Զափրն որդւոց հօր լաստէն.
Պատռեմք Վոսփորն քաղցը
ի ձայն՝
«Ողջոյն քեզ, ո՛ Երիմեան»։

Մեղմ Աստուծոյն հեզ փաստաբան,
Դու խաչակիր խաղաղութեան,
Շանթից փոխան մեղրը հզօր
Զմեզ վերացու յայս թուխ փոսէ.
Եւ մութի մէջ, Հայաստանցին
Թէ կորընչի, հեծեծագին՝
Հասցու նըմա ջահ լուսաւոր.
Չ'ես դու Լուսոյ ուխտեալ զինուոր։

Օ՜ն, Հայրիկին ընդ առաջ
Վազեմք, հայեր, աչ ի յաջ.
Հերիք կոհակք անջատեն
Զափրն որդւոց հօր լաստէն.
Պատռեմք Վոսփորն քաղցը
ի ձայն՝
«Ողջոյն քեզ, ո՛ Երիմեան»։

«Այդ երիտասարդն Մինաս Չերազն էր»**), որ յետոյ կը դառնար ազգային նշանաւոր գործիչ և գրագէտ։

---

*) Տարազ. 1893. Յունիս 20. Թիւ՝ 25։ Երիմեանի Կ. Պոլիս ժամանման մասին գրած են նաև «Միաբանութիւն» (1869. Թիւ՝ 16), «Օրագիր» (1869. Թիւ՝ 50—52) և պոլսահայ բոլոր թերթերը։

**) Մինաս Չերազ—„Դրախտ Փորձեր“. երկրորդ. տիպ. Կ. Պոլիս. Արամեան տպագրութիւն. 1874. էջ՝ 17։ Այս ստանաւորը 5 տունէ։

Խրիմեանը շքեղ կառքի մը մէջ նստելով կը շրջապատուի բազմաթիւ ձիաւոր եպիսկոպոսներով և վարդապետներով, իսկ քահանաներն ալ հետիոտն կերթան կառքին առջեւէն. եւեթ, կառքերով կուգան Հայ և օտար հարիւրաւոր ներկայացուցիչներ և ծովածաւալ ժողովուրդ։ Այս հանդիսաւոր շքերթը կ'ուղղուի դէպի Մայր Եկեղեցին, որուն դուռն առջեւէն, Խրիմեան Պատրիարքը եկեղեցական թափօրով կը տարուի ներսը, որ արդէն լեցուած էր ժողովուրդով։

«Այն օրը, որ Հայրիկ ոտք կոխեց սուլթաններու յաղթապանծ ոստանը՝ այն օրը ծնի օր մը եղաւ ամբողջ մայրաքաղաքին համար։ Հայերը եռանդէ, օտարները հետաքրքրութենէ մղուած, Արծուի Վասպուրականին ի տես կը փութային. մարդկային բիւրաւոր բազմութեան մրրկայոյզ այդ ծովուն մէջ՝ միահամուռ ովսաննաներու սրտեռանդն մաղթանքներու մոգական շունչն էր որ կը բարձրանար, կը սաւառնէր օդին մէջ, հետզհետէ աւելի ուռճանալով, աւելի տարածուելով և արձագանգ տալով Կ. Պոլսի եօթը բլուրներուն։ Եւ Հայրիկ ելաւ քարոզել Մայր եկեղեցւոյ, այդ պատմական տաճարին բեմէն. նոյն հետայն լուսարարը եպիսկոպոսական շքեղագոյն գաւազանը կը մատուցանէ իրեն և ամէնէն փառաւոր գահը կը զետեղէ իր մօտ, Հայրիկը երկուքն ալ կը մերժէ»*) և ժպտալով կ'րսէ.

—«Սիրելի ժողովուրդ Հայոց, պատրիարքութիւնը յանձն առնելով կը զգամ, որ ծանր լուծի մը տակ կը գտնուիմ. Մշոյ Դաշտէն մինչև Կարին, Ծրապիզոն և Պոլիս, ամէն տեղ ովսաննաներով դիմաւորեցիք զիս և բերիք Պատրիարքարան։ Այս գահ և գաւազան խախուտ են, վաղը երբ պաշտօնիս պահանջման համեմատ սկսիմ գեղծումներ բարեկարգել, ամէն կողմէ պիտի աղաղակեն «Ի խա՛չ հաճ զգա, ի խա՛չ հաճ զգա» և տապալեն զիս։ Կամք Տեառն օրհնեալ եղիցի, ժողովուրդին ովսաննաները վայելող, անոր խաչէն ու դատէն վախնալու չէ»։

Խրիմեանի այս խօսքերը, անոր համակիրներէն ամանց կողմէ, դիւանագիտական չը համարուեցան։

Ապա Հայրիկը կ'առաջնորդուի Պատրիարքարան, ուր առաջին առթիւ իսկ հրօնական և քաղաքական խառն ժողովի անդամները,

*) «Արաքս». Ս.Պետերբուրգ. 1893. Դիլք Ա. էջ՝ 68. Առիւծի յօդուածէն։

գլխաւորութեամբ Գրիգոր Օտեանի կ'այցելեն նորընտիր Պատրիարքին, որուն հետ Օտեանը ամբողջ մէկ ժամ առանձին խօսակցութիւն կ'ունենայ։

Յաջորդ օր, Նոյեմբերի 7-ին (1869) Խրիմեանը կ'այցելէ Սուլթան Աբդիւլ Ազիզին. Արքայի կողմէ ուղարկուած հրաւիրակի հետ Պատրիարքը, հոգևորականներու պատկառելի շքախումբի մ'ուղեկցութեամբ՝ թարգման ունենալով Ներսէս Եպիս. Վարժապետեանը, կը ներկայանայ Սուլթան Ազիզին, որուն ուղղուած հայերէն*) ուղերձը կը կարդայ, իսկ նոյնի տաճկերէն թարգմանութիւնն ալ կուտայ Սուլթանին։ Վեհապետը յատընկալ շնորհակալութիւն կը յայտնէ Խրիմեանին, որ կը հեռանայ պալատէն Սուլթանի չորս ձիանի արքայական կառքով։

Պոլսահայ պատանի բանաստեղծ 18-ամեայ Պետրոս Դուրեանը Խրիմեանի ժամանման առթիւ գրած էր «Հայրիկ» վերնագրով ոտանաւոր մը.

Ո՞վ է որ գայ մեզ, ճեղքած օդն, ալին,
Ձակատն գոհարք, աստեղք կը փայլին.
Թագաւոր մ'է հայ որ ցատկեց չիրմէն.
Ո՛չ, դէմքը վառող արցունք ըսպի են.
Նա կ'արհամարհէ ծիրանի փառքեր,
Նա սև է հագեր։

Նա կուգայ հայոց մարգերէն կարմիր,
Ազատեց քրդէն հայը վշտակիր,
Խաչափայտով մը պանծացաւ յաղթող,
Հնչեցուց իր այս ազատութեան փող.
Տեսէք, քուրձ հագեր, կարծես ինք դրակ,
Բայց սիրան է կրակ։

Ահա կը հնչէ անոր հեշտ սրինգ,
Արձագանգ կուտան հայոց դաշտ, լերինք,
Երթանք իր շուրջը, հայեր արտալած,
Ձը խաբեր մատներ նա մեզ օտարաց.
Ձը սիրեր ոսկի, փառք ու վառ մարգիկ,
Հայուն է Հայրիկ։

Գլխիկը դրած ազաւոր օրքեմ,
Ձը թափեր ճակտէն դեռ ալիք վրսեմ,
Բայց դէմքի վրայ կանուխ են փթթած
Ընցքի ու վշտի խորշոմներ միշտ թաց.
Միակ վարձք մ'ունի, այն է կոչել գինք,
«Խրիմեան Հայրիկ»։

Դուրեանը իւր այս ոտանաւորը ծրարելով ղրկած էր Խրիմեանին, որ ուզած էր տեսնել ու ճանչնալ հեղինակը, բայց ամաչկոտ և համեստ Պետրոսը չը գնաց Հայրիկի մօտ.

---

*) Խրիմեանը օտար լեզու չը գիտէր, մինչև անգամ պետական լեզուն—տաճկերէնը—սահուն կերպով չէր կրնար խօսիլ։

Խորէն Աբգեպ. Նար-Բէյը անձնական բարեկամն էր ֆրանսացի մեծանուն բանաստեղծ Լամարթինի (ծն. 1790· † 1869), որուն օր մը կը կարդայ և ֆրան-

## ԺԳ.

## ԽՐԻՄԵԱՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՈՒԽՏԸ

Կ. Պոլսոյ Մայր Եկեղեցիին մէջ, 1869-ի Նոյեմբեր 12-ին կը գումարուէր Ազգային Երեսփոխանական ժողովը՝ նորընտիր Պատրիարք Խրիմեան Հայրիկի ուխտն ու երդումը լսելու համար։ Ամբողջ եկեղեցին լեցուած խուռներամ բազմութիւնը Պատրիարքի գալուն կը սպասէր։ Եկեղեցական հանդիսաւոր թափօրով Խրիմեանը երբ տաճարը կը մտնէր, օրօտընդոստ ծափեր և երկարատև «կեցցէ»ները կը թնդացնէին եկեղեցին։ Պատրիարքը կը բարձրանար սեղան, լռելեայն կ'աղօթէր և ապա դառնալով դէպի ժողովուրդը կը խաչակնքէր և յուզուած ձայնով, ծանր ու խորհրդաւոր կը խօսէր.

«Երեսփոխանք և ժողովուրդ Հայոց, դուք զիս բազում դժուարութեամբ պատրիարքական գահը բարձրացուցիք։ Ի՞նչ է պատճառը, որ Սահմանադրութիւնը ուխտի բեռը միայն պատրիարքի կռնակը դրած է և երեսփոխանք ազատ են անկից»։ Պատրիարքը կը պահանջէ, որ Ազգային ժողովի երեսփոխաններն ալ երդուին իր հետ։ Ժողովականները կը պնդեն, որ «ըստ Սահմանադրութեան միայն պատրիարքը պարտաւոր է ուխտել»։ Ազգային ժողովի ատենապետը կը հարցնէ—«Արդեօք, Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հայրը պատրաստա՞ծ է իւր ուխտի ձևը»։ Հայրիկը կը պատասխանէ—«Ես ուխտ պատրաստելու պէտք չունիմ. քարոզներս անգամ անգիր կուտամ.... Ես արդէն այդ ուխտ ըրեր եմ Հայաս-

---

սերէնի կը թարգմանէ Խրիմեանի «Հրաւիրակ Աւետեաց»ը։ Լամարթին կը հիանայ և կը հարցնէ թէ—«Հեղինակը քանի՞ տեսակ օտար լեզուներ գիտէ»։ Նար-Բէյը կը պատասխանէ, որ— «Իւր մայրենի լեզուէն զատ, ուրիշ ոչ մէկ օտար լեզու կարդալ գրել չը գիտէ»։ — «Ա՜հ, այս հեղինակը գրական հազուագիւտ տաղանդ մընէ, որուն մէջ բնածին են կրօնի, իւր ազգի և հայրենիքի սէրը, որոնց այսքան հարազատ ցուցադրումը կուգայ սիրտէ մը, ուր միայն իւր մայրենի լեզուն կ'ապրի» կը յարէ Լամարթինը։

Այս իրողութիւնը պատմեց ինձ Խաչիկ Խան Սարաճեանը (1923, Յունիս 20) աւելցնելով, որ—«Այս խօսքերը Նար-Բէյ Սրբազանէն անձամբ լսած եմ ի Կ. Պոլիս. 1879-ին»։

տանի մէջ, Մշոյ դաշտին մէջ, իմ մերկ ու բոկոտն զաւակաց առջև, իմ հարստահարեալ ժողովրդեանս քով։ Ես ուխտ կ'ընեմ ազգին ծառայելու, դուք ալ հետս պէտք է ուխտ ընէք.... Մշոյ դաշտի և Վանայ ժողովուրդը իր վիճակի թեթևացումը կը սպասէ, ես խոստացած եմ անոր, պէտք է աշխատինք, դուք ալ ուխտեցէք գործակցիլ ինձ։ Իմ վրաս Պոլսոյ պատրիարքի պէս մի նայիք. Ես Հայաստանի ցաւոց պատկերն եմ. Չը գիտեմ, թէ իմ նախորդքս ինչ կերպով միջնորդած են Տէրութեան՝ այս ցաւոց դարմանն խնդրելու համար, բայց ես ազդու միջնորդութիւն պիտի ընեմ»։

Եւ Պատրիարքը հանդիսաւորապէս կը կատարէ իւր ուխտը, երդուելով հաւատարիմ մնալ՝ ա) «Հայաստանեայց ս. Եկեղեցւոյն դաւանութեանց, աւանդութեանց և սրբազան կանոնաց, բ) Ազգային Սահմանադրութեան ոգոյն և սկզբանցը և գ) Օսմանեան բարեխնամ տէրութեան, որուն մեր ազգը դարաւոր հաւատարիմ գտնուած է և որուն շահը նոյն է մեր ազգին շահուն հետ»։

—Դո՛հ էք մեր ուխտէն, կը հարցնէ Խրիմեանը ժողովուրդին։

—Կեցցէ՛ Խրիմեան, կեցցէ՛ Հայրիկ, կեցցէ՛ Պատրիարք... ուրախաձայն ազաղակներուն կը միանան երկարատև և որոտալից ծափերը։ Ատենապետը կը փակէ այս պատմական ժողովը և Խրիմեանը ժողովրդական մեծ ցոյցերով կ'առաջնորդուի Պատրիարքարան ու կը բազմէ գահին վրայ։

Այս առեն է ահա, որ պոլսաբնակ Վասպուրականցիներու կողմէ պատգամաւորութիւն մը կը ներկայանայ Հայրիկին և թանկագին կերպասէ կարուած վերարկու-սքեմ մը կը նուիրէ իրենց հայրենակից Պատրիարքին, որը սակայն ժպտալով կ'ըսէ.

—Շատ աւելի գոհ պիտի ըլլայի եթէ Շատախի ջուլէն կարուած ըլլար այս վերարկուն, բայց քանի որ բերած էք կ'ընդունեմ և վրաս կ'առնում միայն երբ պաշտօնական այցելութեանց երթամ։

Խրիմեանի ջերմ պաշտպաններէն ու պաշտօնէներէն Ճարութիւն Սվաճեանը իւր «Մեղու» տասնօրեայ հանդէսի մէջ (Կ. Պոլիս. 1862) հետևեալ տողերը կը գրէր Տարօնի Հայութեան նորընտիր Առաջնորդ Մկրտիչ Վարդապետ Խրիմեանի մասին.

«Այս անունը միշտ բերկրութիւն և միշտ խինդ պատճառած է մեզի, և ամէն անգամ զինքը յիշելու առիթ ունենալնուս 'ի հոգի

կը հրճուիմք, քանզի անոր անունովը ճշմարիտ հայը մը, ժողովրդասէր Հովիւ մը, կրօնասէր ամբիծ կղերական մը, անձնուրաց առաքեալ մը, Հայաստանի լուսաւորութեան ջանադիր մը և Հայաստանի վարատեալ որդւոցս յառաջդիմութեան և միութեան անձնուէր կենդանի նահատակ մը կ'իմանանք, և զոհ եմք որ ցարդ մեր համարմանը մէջ սխալած չեմք, և յետ այսորիկ ալ չսխալելու մեծապէս յուսով եմք։

«Այսօր առիթ ունիմք դարձեալ յեղյեղելու Հայաստանի հրեշտակին անունը. և կը փութամք հաղորդել մեր ընթերցողաց՝ որ պատուական հայրենասէր Խրիմեան Մկրտիչ Վարդապետ Վարագայ վանուց վանահայրը, ուր տեղ ազգին բարեկրօն, պարկեշտասուն վարդապետներ, վարժապետներ և ժառանգաւորներ պատրաստելու ճիգին մէջ ամեն զոհերու յանձնառութեամբ աղքատութեան և նեղութեան հետ մարտնչելու արիութիւնը ունեցեր էր մինչև ցայսօր, նոյն վանքին վանահայրութիւնն ալ իւր վրայ մնալով՝ ըստ խնդրոյ բազմաթիւ աղերսարկուաց, և Ազգային առժամանակեայ վարչութեան Յանձնաժողովոյ որոշմամբ Մշոյ ընդարձակ վիճակին ալ առաջնորդ և Ս. Կարապետի վանից ալ վանահայր անուանուեցաւ։

«Այս արժանաւոր ընտրութեամբ ընդարձակ նոր ասպարէզ մը նս կը բացուի հայրենասէր Վարդապետին ջանիցը առջև՝ ասպարէզ մը՝ որ ոչ միայն նորա փառքը պիտի յաւելու (որուն հետամուտ չէ անձնուրաց առաքեալը) այլ առաւել ընդարձակ միջոցներ պիտի ունենայ Ս. Կարապետի մեծահռչակ վանքին բարկարգութեամբը և հասոյթներովը Մշոյ գաւառին անխնամ մանկտւոյն մտայինլուսաւորութեանը ձեռնտու և օգնական ըլլալու և այսպիսի բարեկարգութեան և բարոյապէս հիմնականկ նորոգութեան մ'ալ կարօտ էր անշուշտ նոյն վանքը»։

Այսպէս կը գրէր Ցարութիւն Սվաճեանը, երբ Խրիմեանը գաւառի մէջ, Մայր Երկրի Հայութեան համար կ'աշխատէր, սակայն երբ Խրիմեանը Կ. Պոլիս գալով պատրիարքական գահին վրայ կը բազմէր, Ցարութիւն Սվաճեանը յոռետես կը դառնար և կը նախատեսէր, որ Խրիմեանը մայրաքաղաքի դաւադիր, քաղքենի և պաշտօնական շրջաններու մէջ չը պիտի կրնար այնքան օգտակար ըլլալ Հայութեան, որուն համար նա շատ ազատ, համարձակ և

անձնուէր կերպով կ'աշխատէր Հայաստանի մէջ։ Այս իրողութիւնը հեռատեսող Սվաճեանը, Համբարձում Ալաճաճեանի «Փունջ» օրագրին մէջ (Կ. Պոլիս, 1869) կաւ ի սիրտ, այս տողերը կը գրէը Խրիմեան Պատրիարքի մասին.

«Անուա աստղ մը, որ կը խաւարի, անուա աղամանդ մը, որ իր փայլը կը կորսընցնէ...»։

Հիացող պաշտող սրտի մը խորքէն եկած այս տխուր հառաչանքը ծանր հարուած մըն էր, որ կ'իջնէր մայրաքաղաքի Հայութեան ուսին և կը վիրաւորէը Ազգային ժողովի ինքնասիրութիւնը, վասնզի Սվաճեանը համոզուած էր, որ «ըսի-ըսաւ»ներու մէջ պիտի խաւարէր Խրիմեանի աստղը և գաւազիր, չարամիտ ու բամբասող շրջապատներու մէջ ադամանդ Խրիմեանը պիտի կորսընցնէր իւր փայլը։ Սվաճեանը սխալուած չէր։ Խրիմեանը հազիւ գործի անցեր էր, երբ հակախրիմեանականներն ու «խաւարեալք»ի ներկայացուցիչները—Կ.Պոլսէն սկսեալ մինչև Ցարօն և Վասպուրական—նորէն գլուխ բարձրացուցին և զրպարտութեանց ու խիստ քննադատութեանց կծիկները բացին Պատրիարքի անձի և գործի դէմ։

Ամասիայի (և ապա Իզմիրի) Հայոց Առաջնորդ Յովհաննէս Եպիս. Եդեսեանը (որ Խրիմեանի կատաղի թշնամիներէն մէկն էր), գրութեամբ մը հրապարակ կուգար և կը ծաղրէր Հայրիկի Պատրիարքութիւնը.

«Վա՜յ, որ Վանեցիք զՎանեցին վայրաբար վանեցին,
Վա՜յ զնոքօք, որ զվանեալն 'ի վերին գահ վեր ածին...»։

Այս երկու տողով, Եդեսեանն ըսել կ'ուզէր թէ—«Օ՜հ, օ՜հ, կեցցէ՜, ինչ լաւ եղաւ, որ Խրիմեանը իւր հայրենակից վանեցիներէն անգամ փառաւորապէս հալածուեցաւ։ Ես վա՜յ կուտամ անոնց, որ այդ հալածուած ու քշուած մարդը բերին և պատրիարքական գահին վրայ բազմեցուցին»։

Սակայն Խրիմեան Պատրիարքի ուխտը, ազգին ծառայելու երդումը, այնքան խոր և ջերմ տպաւորութիւն թողած էին Թուրքիոյ Հայութեան վրայ, որ Եդեսեաններու հեգնանքներն ու չարամիտ գրութիւնները ամենուրեք կ'անարգուէին։

Հայ ժողովուրդը ազգի և հայրենիքի ազատութեան վառ յոյսերով կը կապուէր Խրիմեանի անուան, անձի և պատրիարքու-

թեան հետ, Պատրիարքին ազգանուէր ուխտը Հայութեան սիրտը կը լեցնէր Հայաստանի ազատութեան ջերմ սիրով և այնուհետև մայրաքաղաքէն սկսեալ մինչև Մայր Երկրի գաւառներն ու յետին գիւղերը արձագանգ կուտային ժողովրդական—աշուղական երգի այս տողերուն.

«Խրիմեան Հայրի՛կ... աւուռն Մկրտիչ,
Դո՛ւն պիտի չիմիս, Հայրի՛կ ջան,
Խեղճ Հայոց Փրկիչ...»։

## ԺԵ.

## ԽՐԻՄԵԱՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԱՌԱՋԻՆ ԳՈՐԾԵՐԸ

Պատրիարքական գահին վրայ բազմելէ յետոյ, Խրիմեանը առաջին առթիւ իսկ Ազգային Ժողովէն պահանջեց, որ մասնակի, անհատական հարցերն ու խնդիրները մէկդի դրուին, անտես առնուին և «Ազգին ընդհանուր և ներքին խնդրոց վերայ» սևեռուի Ազգային Ժողովի ուշադրութիւնը.

Եւ Խրիմեանի նախագահութեամբ «ի սկզբան՝ երբ առաջին նիստն կազմեցաւ, տեսան բացուեցաւ» Պատրիարքը Ազգային Ժողովին կը ներկայացնէր Ազգային Սահմանադրութեան վերաճննութեան ճարցը և հետզհետէ հետևեալ կարևոր ու կենսական խնդիրները կը յարուցէր, այսպէս.

ա) Ազգային Վարչութիւնը կեդրոնական և հանրային դրութեան վերածել։ բ) Ազգային պաշտօնէութեան և կառավարութեան յարաբերութիւնը օգտակար և օրինական հիմքերու վրայ դնել։ գ) Սահմանադրութեան ընտրողական սկզբունքը չարաշահ չը գործածուելու համար՝ ապահով և կարևոր ձևեր որոշել։ դ) Ազգային տուրքը կանոնաւորել և ընդարձակել։ ե) Ազգային պաշտօնէութեան հաշուետրուութիւնը պարտաւորիչ դարձնել։ զ) Հայ հոգևորականներու «անկերպարան ընթացքը կանոնաւորել»։ է) Առաջնորդական պաշտօնավարութեանց մէջ հաշուետուութիւն հաստատել։ ը) Ազգային վանքերու և եկեղեցիներու կալուածներու եկամուտներն ապահովել և ժողովուրդի կրթութեան ու «բարոյական օգտին ծառայեցնել»։

բ) Հայաստանեայց եկեղեցւոյ անկախութիւնը պահպանել և կրօնափոխութեան առաջն առնել։ ժ) Ազգին մէջ ուսում և կրթութիւն տարածելու համար նոր և ազդու միջոցներու դիմել։ ժա) Ազգային դաստիարակութեան համար դրամագլուխ հաստատել։ ժբ) Տարրական կրթութիւն տարածել և քանի մը հատ կեդրոնական ու բարձրագոյն դպրոցներ հաստատել Հայաստանի մէջ։ ժգ) Հայոց ազգային ընտանեկան, ամուսնական և բարոյական կապերն ամրապընդել, պանդխտութեան և գաղթականութեան առաջն առնել, Ազգը հանրական ընտանիք մը կազմելու դրութեան վերածել, Ազգային և անհատական իրաւունքները պաշտպանել, որով և Ազգի ամբողջութիւնն ապահովել։ Եւ վերջապէս ժդ) Հայաստանի — Մայր Երկրի — մէջ գոյութիւն ունեցող բռնութիւններն ու ոճիրները, արհաւիրքներն ու հարստահարութիւնները, ներքին և արտաքին տառապանքները բառնալու համար «բարեխնամ Տէրութենէն աւելի զօրաւոր միջոցներ խնդրել»։

Նորընտիր Պատրիարքի ցանկութիւնն էր Ազգային Ժողովը վերաքննել, աւելի լայնացնել և գաւառներու Հայութեան պահանջներուն յարմարցնել։ Խրիմեան Հայրիկի «անդիմադրելի տենչն էր՝» Կ. Պոլսոյ Հայութեան Ազգային Ժողովի և կեդրոնական կառավարութեան ուշադրութիւնը կեդրոնացնել Հայաստանի տանջուած և հարստահարուած Հայ ժողովուրդի վրայ։

Պատրիարքարանը և Ազգային Հիւանդանոցը ծանր պարտքերու տակ ճնշուած էին։ Խրիմեանը «տունէ տուն, եկեղեցիէ եկեղեցի շրջելով, հանգանակելով» մեծագումար դրամներով վճարեց այդ պարտքերը։

Պատրիարքը պարզ ու անպաճոյճ ձևով, արևելեան դէրվիշի մը նման կը մտնէր տուներ և դրամ կը հանգանակէր վերոյիշեալ պարտքերը ծածկելու համար։ Պատրիարքի այս պարզութիւնը, «Կ. Պոլսոյ մեծամեծ էֆէնդիներին դուր չէր գալիս։ Նրանք այն կարծիքի էին, որ Պատրիարքը պիտի լինի անմատչելի և ոչ ոքի չը պիտի երևայ։ Մի օր Խրիմեան, նոր պատրիարք նստած ժամանակը, այցելութեան էր գնացել մեծ-վէզիր՝ նշանաւոր Ալի փաշային։ Պատրիարքի այցելութիւնից յետոյ, Ալի փաշայի մօտ է գնում (Հայ) էֆէնդին։ — „Ձեր պատրիարքը այսօր եկաւ՝ տեսնվե-

ցանք" ասում է մեծ-վէզիրը։—„Կը ցաւիմ, որ նոր պատրիարքնիս դէրվիշ մէկն է, բոլորովին անտեղակ քաղաքավարութեան"։—„Ընդհակառակը, պատասխանում է Ալի փաշան, մինչև հիմա տեսած պատրիարքներիս մէջ նա ամենից քաղաքավարին է, և նրա խօսածներից նկատեցի, որ շատ փորձված և խելացի մարդ է։ Ձեր խօսքերից երևում է, որ այդ եպիսկոպոսը ամեն մարդու հետ նրա համեմատ գիտէ վարվել։ անքաղաքավարի մարդկանց հետ շատ էլ քաղաքավարական փափկութիւն չի բանեցնում, իսկ քաղաքավարի մարդկանց հետ տեսնված ժամանակը՝ գիտէ քաղաքավարական բոլոր փափկութեամբ վարվել։ Հայազգի էֆէնդին, հասկացաւ թէ ինչ է ուզում ասել մեծ վէզիրը և լռեց»*)։

Գաւառներէն Կ. Պոլիս եկած Հայ պանդուխտները շատ անգամ կը գիշերէին Պատրիարքարանի միջանցքներու մէջ։ Ազգային ժողովի անդամները երբ այս մասին դժգոհութիւն կը յայտնեն Հայրիկին, նա յուզուած կը պատասխանէ.

—Պատրիարքարանը ազգին տունն է, ամէն Հայ իրաւունք ունի անոր վրայ։ Դուք, էֆէնտիներդ և հարուստներդ, որ կը վայելէք Պատրիարքարանի դահլիճները, դուք ինչո՞ւ չէք հանդուրժեր, որ անտուն և թշուառ պանդուխտները մէկ երկու գիշեր այս միջանցքներու մէջ հանգստանան։ Ա՞յս է ձեր եղբայրսիրութիւնը, այս է ձեր ազգասիրութիւնը, որոնց մասին մեծ մեծ կը բարբառէք ժողովներուն մէջ։

Պատրիարք Հայրիկը ժողովրդական ձայնի և իրաւունքի հոյակապ պաշտպանը հանդիսացաւ Ազգային Ժողովին մէջ, ուր սակայն անոր այս ընթացքը խուլ դժգոհութիւններ յառաջացուց ժողովականներու մէջ, որոնք հոս ու հոն կը փսփսային, կը տրտնջային թէ

—«Պատրիարքը իւր գահէն ու դահլիճէն իջնելով ոտքով կ'երթայ խանները, կը մտնէ գաւառացի պանդուխտներու խղճուկ նկուղները և անոնց կեղտոտ, ճլոտ անկողիններու վրայ նստելով ժամերով զրոյց կ'ընէ, անոնց համար նամակներ կը գրէ և Պոլիսը մեռաւթիւնեան տալով Հայաստանով կը զբաղուի»։

Ո՛վ գիտէ, թերևս այդ «խղճուկ նկուղներ»ուն մէջ, այդ խոնարհ յարկերուն տակն էր, որ Պատրիարք Հայրիկը գաւառացի պանդուխտներուն կը թելադրէր միանալ և ժողովրդական Հանրագրութիւնի պատրաստել...

*) Խ. Մալումեան—ԽՐԻՄԵԱՆ. էջ՝ 68—69։

# ՀԱՅՈՑ ՀԱՅՐԻԿ

## ՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՍՆԱՄԵԱԿ

## 1870—1880

### Ա.

### „ՀԱՅԱՍՏԱՆԻ ՅԱՒՈՑ ՊԱՏԿԵՐՆ“ ՈՒ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

ՏԱՃԿԱՀԱՅԱՍՏԱՆԻ ամէն կողմերէն Գատրիարքարան կը հասնէին պաշտօնական և մասնաւոր նամակները, տեղեկագիրներ և բերանացի լուրեր, որոնք կը նկարագրէին գաւառներու Հայութեան արհաւիրքից կեանքը։ Քիւրդերու բռնութիւնները, պետական պաշտօնեաներու անիրաւ գործերը, կաշառակերութիւնն ու զեղծումները, իսլամացումներն ու անվերջ հարստահարութիւնները՝ մանրամասն, փաստացի և յուզիչ կերպով նկարագրուած էին այդ նամակներու և տեղեկագիրներու մէջ, որոնք Ազգային Ժողովի առջև կը պարզէին «Հայաստանի ցաւոց պատկեր» ու Հայ ժողովուրդի տանջանքի պատմութիւնները։ Ցիշատակենք տասնեակ մը չոր փաստեր։

Մշոյ Դաշտին մէջ, քիւրդ բռնաւոր մը, շան լակոտ մը գրկելով կը մտնէ գիւղական եկեղեցին և Հայ քահանային կը տիպէ թէ—«Պէտք է մկրտես այս լակոտը»։

Մալաթիոյ մէջ խումբ մը տաճիկներ խաչը կը կախեն շան մը պոչէն և դէս ու դէն քշելով կը զուարճանան։ Կառավարութիւնը կը տեսնէ այս զազրելի արարքը, բայց անտարբեր կը մնայ։

Խնուսի մէջ քիւրդերը կը փախցնեն հայոց քահանային աղջիկը, կը բռնաբարեն և կաշառք առնելէ յետոյ կը վերադարձնեն։

Ալաշկերտի մէջ քիւրդերը կը մտնեն Ս. Յովհաննու վանքը (Իշ-Քիլիսէ) կը կողոպտեն և վանահօր գլուխը կտրելով կ'անհետանան։ Կառավարութիւնը լուռ է։

«Ահա բռնութեանց ձայները կը խշխշան գեղի հրապարակը և գալով գալով մինչև նոցա շեմը կը կոխեն։ Կամ տուրք ժողվողն է կամ պարտատէրը կամ մի նոր տուգանք կամ քիւրդեր եկան գլխաղ (ձմեռանոց)։ Լաց մանուկ, գնաց հայրը, գնաց մայրը։ Հայրը այն կողմը աղաղակ կը հանէ, տուրք կը պահանջեն, հարուած կ'ընդունի վասն զի փող չ'ունի։ Կինը դրան ետև կայնած, սիրտը դէպի նորածին, և աչքերը դէպի ամուսին այս աղէտալի տեսարանին ու ցաւին յառած կը հեծէր, հեծեծէր. այժմ իսպառ թողուց մանուկը և թռաւ ու անցաւ մէջ այն աղէտից, յորմէ և իրեն բաժին ինկաւ, թիկունքն ու մէջքը հարուածեցին։ Ահա ծնողք մանկան, ահա մանուկ ծնողաց....

«Կը տեսնես, այն հրապարակի կշտից քանի հատ զօրքեր կ'անցնին և նոցա մէջ շրջապատուած մի ողորմելի պառաւ և մի հրիտասարդ շինական հայ կին.... Այն ինչ ձայն էր, ինչ ճիչ էր, որ յանկարծ լսուեցաւ.... Հարուած էր, որ տուին այն կնոջ, պարտուց համար բռնած կը տանին դատել ու տանջել....

«Իշաւ զապթիէն իւր ձիուց բարևեց ու գնաց Ռէսի տուն, ուզածը կերաւ և ապա սկսաւ առաջարկել. պառաւ կնիկներ. մէկին կը հարկադրէին չորս մարդու տուրք տալ, պատճառ, որ սորա չորս որդիք Օտամբուլ են. բողոքեց թշուառ պառաւը, թէ 1 տարի 4 ամիս է, որ իմ որդին օտարութեան մէջ մեռեր է, բայց ով էր լսող։ Ինքն ասաց, ինքը լացաւ.... Խնայէք մեզի։

«Արքունի տասանորդ ստացող՝ փայտ ձեռքը, զէնք վրան... հայհոյանք, սպառնալիք կը թափէ, մինչև փաթաթուխս ոտները, ծառայ դառնաս, շուն դառնաս, հազիւ տասն միջնորդով ու մէկ ոչխարով քեզ հետ հաշտուի»։

Այս փաստերը կ'արձանագրէր Հայաստանի ճամբորդ և Խրիմեան Հայրիկի տաղանդաւոր աշակերտ Գարեգին Վարդապետ Ծերուանձտեանցը։

Էսկիշէհիրի մէջ տաճիկները հայերու հանդէպ ցոյց տուած էին անլուր բռնութիւններ և անարգանքներ։

Ագշէհիրի մէջ երբ հայերը ննջեցեալ մը կը տանէին թաղելու՝ տաճիկները ծաղրի և նախատինքի ենթարկեցին յուղարկաւորները։

Կեսարիոյ մէջ տաճիկներն ու չէրքէզները սանձարձակ կերպով ոճիրներ և բռնութիւններ կը գործէին։

Տիգրանակերտի գաւառներուն մէջ Պէշիր օղլի Սիլօն և արբանեակները կը հարստահարէին հայ գիւղերը։

Մշոյ Դաշտի մէջ յայտնի աւազակ քիւրդ Ֆարիս և իւր եղբայրները ազատ ու համարձակ կերպով կը կողոպտէին հայերու ինչքերը։

Վանի Թիմուրզատէ կոչուած տաճիկ բռնաւորները կը սեփականացնէին հայոց հողերը։

Աբաղայի Դաշտի (Վան) քիւրդերը բռնութեամբ և ձրիաբար կը բանեցնէին հայ գիւղացիները։

Արղընի-Մատէն քաղաքի ճամբաները կառուցելու համար կառավարութիւնը հայերէն տարապարհակ բանուորներ տարած էր։

Շաբին-Գարահիսարի Ալամէրիկ հայ գիւղի Մէրաճ կոչուած վայրը, տաճիկները գրաւեր էին։

Աղբակի Շէյխ Ջէլալէդդինը հայ գիւղերու եկեղեցիները կողոպտել և դռները աղբով ծեփել տուած էր։

Նորդուզի մէջ քիւրդերը կը մտնէին հայոց գիւղերը և կը պահանջէին կանայք և աղջիկներ կամ անոնց փոխարէն կաշառք։

Ռշտունիքի Գուլի Խան քիւրդ բէկը հայ գիւղացիներէն հոդային ծանր հարկեր կը վերցնէր։

Խիզանի և մօտիկ գաւառներու Բէշիր, Սալման, Մուրատ, Ամար, Քէմալ, Եուսուֆ, Իպէ, Բէշիտ, Տէրվիշ և Սէլիմ անունով քիւրդ բարբարոսները իրենց արբանեակներով անլուր ոճիրներ և չարիքներ գործեր էին Հայ գիւղերու մէջ։

Մամրտանք և Սպարկերտ գաւառներու քիւրդերը կը յարձակուէին Հայ գիւղերու վրայ և կը ստիպէին, որ գիւղացիք գաղթեն։ Երբ գաղթը կը վերջանար քիւրդերը կը թալանէին և ապա կը հրդեհէին հայոց տուները։

Այսպէս ահա բովանդակ Տաճկահայաստանի ամէն կողմերէն քրդական և տաճկական գուլումներու, ոճիրներու և արհաւիրքներու մասին 529 բողոքագիրներ և տեղագիրներ կուտակուած էին Ազգային Ժողովի սեղաններու վրայ։ Մայր Երկրի Հայութեան տա-

ռապանքի ձայնին Կ. Պոլսոյ մէջ արձագանգ կուտային գաւառացի պանդուխտները, որոնք ժողովրդական հանրագրութիւններով հրապարակ կուգային և Պատրիարք Հայրիկին այս տողերը կը գրէին.

«Սթքազան Տէր. Մեր գաւառաբնակ հայրենակից եղբարց տառապեալ վիճակը մեր սրտին մահացու խոց մըն է... Անտարակոյս Ձեզի հետ մէկտեղ բոլոր կրօնի և ազգութեան պատուոյն նախանձախնդիր սրտերը այդ անլուր և անօրինակ եղեռնագործութիւններէն կը ճմլուին. Ուստի կը խնդրենք, որ այս աղէտից անմիջապէս դարման մը տարուի»։

Եւ ահա կը կատարուի անխուսափելին։ Ազգային ժողովը կը փոթորկուի. Երեսփոխաններու մեծ մասը սարսափի կը մատնուի։ Խրիմեանը կը պահանջէ, որ անպայման կարդացուին գաւառներէն եկած տեղեկագիրները, բողոքագիրները և ժողովրդական հանրագրութիւնները։ Ժողովականներու մէկ մասը կը պնդէ, որ այդ վտանգաւոր թուղթերու ընթերցումը պիտի նկատուի ըմբոստութիւն Օսմանեան Բարեխնամ Տէրութեան դէմ։ Ոմանք կը պնդէին թէ այդ վտանգաւոր գրութիւնները Ընդհանուր ժողովին մէջ չը պիտի քննուին, ուրիշներ կ'առարկէին թէ ինչու նման տեղեկագիրներ և հանրագրութիւնները Քաղաքական ժողովին ուղղուած չեն։ Ընդհանուր տրամադրութիւնը խուսափողական էր, շատերը ժողովներուն չ'էին գար, Պատրիարքը կը լքուէր մեծամասնութեան կողմէ և օր մըն ալ վշտացած կը բացականչէր.

«Ձիս նաւապետ կոչեցիք ազգային ալէկոծեալ նաւուն և նաւն ինձ յանձնելէ ետև ամենքնիդ ալ փախչելով զիս միայնակ թողուցիք. կը նայիմ չորս կողմս, բայց նաւաստի մը չեմ գտներ։ Եթէ դուք կը փախչիք, միթէ ես չեմ կրնար. իմ թևերս աւելի ազատ են. վարդապետ ինչու եղեր ենք. ազատութեան համար»։

Վերջապէս Ազգային ժողով յանձնաւու կ'ըլլար կարդալ ու լսել ծանօթ տեղեկագիրներն ու հանրագրութիւնները։ Սակայն ժողովականներու մէջ կային համարձակ ու սրտցաւ անձեր, «շիտակ ու արի հայ քաղաքացիները», որոնք իրենց ձայնը Պատրիարքի ձայնին միացուցին։

Այդ բողոքներու կորովի ձայներէն մէջբերենք քանի մը կտորներ*).

*) Առենագրութիւնք Ազգային Ժողովոյ. Նիստ Իե. 1870։

Իփէֆեան էֆէնտի.— Մասնաւոր եղելութիւններու առթիւ եղած բողոքները գոհացուցիչ վախճան մը չեն ընդունած և ասկէ ծագած է ահա այս հանրական բողոքի գաղափարը։

Ասեմապես.— Ինդրէն կը շեղիք (տեսնելով, որ վերջին խօսքը կառավարութեան դէմ տեսակ մը բողոք է)։

Իփէֆեան.— Գաւառներէն եկած բողոքները հաղորդուած են Բ. Դրան և Ցէրութիւնն ալ հոգ տարած է. բայց գաւառներէն դատրած չեն երբէք հարստահարեալ ժողովրդեան հեծեծումները։

Երեմիա Եպիսկոպոս Տէվկանց.— Ստիպուած եմ իմ խղճիս պարտք, հայրենեացս պարտք, մարդկութեան պարտք կատարել, առանց ինչ երկիւղի և տարակուսանաց, զի պիտոյ է համառօտիւ բացատրել մեր եղբարց վրայ ծանրացած աղէտալի հարուածները ու հարստահարութիւնք։

Այլ Երեսփոխան.— Հոն բռնաւորաց խումբ մը կայ. ֆիւրդն է անի, որ մեզի պէս հպատակ չէ տէրութեան, որ տուրք չտար, այլ թըշուառ հայը կը կեղեքէ և կ'ասպատակէ զէն ի ձեռին։

Խրիմեան Պատրիարք.— Բան մը կայ, որ պիտի բացատրեմ վարդապետօրէն։ Հայաստանի մէջ հարստահարութիւնը միշտ կայ և պիտի շարունակէ, քանի որ հոն երկու եղբայր, երկու ժողովուրդ կը բնակին, որոց մէկի ձեռք աւետարան և միւսին ձեռքը դուրան կայ...։ Անկարելի է, որ քիւրդն ու հայը իրարու հետ հաշտուին, մանաւանդ որ մէկը սուր ունի եւ կը հարուածէ, միւսն աւետարան ունի և կը չարչարուի...։

Այս չարիքի, այս անհաւասարութեան դէմն առնելու համար, Խրիմեանը կ'առաջարկէ, որ Հայաստանի մէջ քրիստոնեաններն ու մահմետականները հաւասարապէս պետական պաշտօնեաները դառնան, վասնզի՝

«Երբ հաւասարութեան սկզբունքն ի գործ դրուի և քիւրդը տեսնէ, որ քրիստոնէին մէջքն ալ պաշտօնական թուր մը կայ կախուած և Կուսակալի պաշտօն կը բարձրանայ այն տեղն կ'ըմբռնէ օրինագրքի ոգին»։

Եւ Պատրիարքը նուիրական ու ծանր պարտականութիւն կը դնէ Ազգային Ժողովի վրայ, որ Հայութեան տառապանքներն ու հարստահարութիւնները խոր և մանրակրկիտ քննութեան ենթարկուին։

Նա կտրուկ կերպով կը պահանջէ, որ Ազգային Ժողովը, առանց վերապահութեան, Բ. Դրան դիմէ և ճար ու դարման գտնէ, վասնզի տառապանքի և հալստահարութեանց մէջ ապրող ժողովուրդը յոյսը սրտին, լոյսն աչքերուն՝ իր ազատութիւնն ու բարօրութիւնը՝ Ազգային Ժողովէն և Խրիմեանէն կը սպասէր։

Եւ ահա 1870-ի Նոյեմբեր 27-ին կը գումարուի Ազգային Ժողովի պատմական նիստը։ Խորհրդաւոր լռութիւն։ Լուրջ և սառն դէմքերը պարտականութեան և գիտակցութեան զգացումներով պատուած են։ Խրիմեան Հայրիկը կորովի և զգայացունց ճառով մը կը յուզէ գաւառաբնակ Հայութեան տառապանքի հարցը և կը պահանջէ, որ Ազգային Ժողովը գործնական միջոցներու դիմէ։ Հայութեան Գատրիարք Հայրիկը յուզումով և արցունքով կը ներկայացնէր «Հայաստանի ցաւոց պատկեր», որուն կենդանի վկան ինքն էր, որ ժողովուրդի ցանկութեամբ եկած էր այդ «ցաւոց պատկեր»-ին դարման գտնելու։ Բիշեալ նիստին մէջ Հայրիկը կը բացականչէր։

«Հարկ է խոստովանիլ, թէ ես հանճարեղ չէի, քաղաքագէտ չէի, ժամանակին պահանջած մարդը չէի։ Ի՞նչ էր պատճառ, որ Ազգն ընտրեց զիս։ Զգիտելով ուրիշ պատճառներ, զորս Երեսփոխանական Ընդհանուր Ժողովը կրնար ունենալ, սա միայն գտայ, որ ի վաղուց անտի թշուառներու հետ ապրեր էի, սիրտս կաթկթից էր անոնց, ուրեմն Ազգը զայս կը պահանջէր յինէն։ Խոնարհելով Ազգի ընտրութեան առաջ, եկայ ստանձնեցի այս ծանր լուծը։ Մայր եկեղեցւոյ բեմին վրայէն ժողովրդեան խուռն բազմութեան խոստացայ, որ պատրիարքութեանս մէջ Ազգին թշուառութիւնը պիտի ներկայացնեմ բարեխնամ տէրութեան և դարման խնդրեմ։

«Ժողովուրդն անմռունչ ոչխար մը դարձած, ոչ իր իրաւունքներն կը ճանաչէ, ոչ պիտոյքները կը զգայ և ոչ օրինաց տեղեկութիւն ունի...։ Աշխարհի արդի դրութեան համեմատ՝ ով որ տգէտ է, պիտի բռնաբարուի և լոյսը միայն ազատութիւն վայելէ»։

Խրիմեանի այս ճառէն յետոյ Ազգային Ժողովը կ'որոշէ կազմել «Քննիչ Յանձնաժողով» մը՝ «Գաւառացի ազգայնոց կրած հարստահարութիւններու պատճառները իմանալու եւ դարմանը խորհելու համար»։ Այս Յանձնաժողովին կ'անդամակցէին 4 հոգևորականներ և 5 աշխարհականներ՝ նախագահութեամբ Ներսէս Եպիս. Վարժա-

պետեանի։ Ցանձնաժողովը 1870-ի Դեկտ. 14-ին գործի անցաւ և բարեխիղճ ու մանրակրկիտ կեպով քննեց գաւառներէն Գատրիարքարանին և Ազգային Ժողովին ուղղուած հարիւրաւոր բողոքագիրները, մասնաւոր ու ընդհանուր բնոյթ կրող տեղեկագիրները, արիւնով ու արցունքով գրուած նամակները, որոնք ամբողջ ժողովուրդի մը հսկայ տառապանքը կը յուշադրէին։ «Քննիչ Ցանձնաժողով»ը ամբողջ 10 ամիս (1870 Դեկտ.—1871 Հոկտ.) լուրջ և յամառ աշխատանքով յայդնեցաւ Հայաստանի—Մայր Երկրի սրտին և հեռաւոր գաւառներու մէջ ապրող Հայութեան բարոյական, ֆիզիքական, նիւթական և քաղաքական սոսկալի կեանքը հարազատօրէն պատկերացնել, Ազգային Ժողովին ներկայացնելով այն նշանաւոր Տեղեկագիրը, «այն արիւնոտ պատմական փաստաթուղթը», որուն Ա. մասը կը պարզէ հետեւեալ կէտերն իբրև հիմք և առիթ ժողովրդական բողոքներու և դժգոհութեանց, այսպէս.

Ա. Պետական տուրքերու հաւաքման մէջ գործ դրուած բացայայտ ապօրինութիւնները։

Բ. Կառավարական ամէն տիպի պաշտօնեաներու գեղծումները և կաշառակերութիւն։

Գ. Դատարաններու մէջ քրիստոնեաներու իրաւանց ոտնահարումը և իբր վկայ չ'ընդունուիլը։

Դ. Հարստահարութիւնները, բռնութիւններ և ամէն տեսակ արհաւրալից դէպքեր և ոճիրներ։

Այս նշանաւոր և անդրացիկ Տեղեկագիրը «այնու ամենայնիւ դեռ չէր տալիս լիակատար պատկերը Թիւրքահայոց դժոխային գոյութեան։ Դեռ դժգոյն էր և վհերոտ այդ առաջին Քիշատակագիրը։ Բայց և այնպէս այդ կիսատ ու երկչոտ փաստագիրն անգամ ահագին լոյս էր սփռում երկրի կացութեան վրայ, մերկացնում էր նրա էական ու մշտնջենաւոր վէրքերը։ ...Առաջին անգամը ցուցադրւում էր հայ ձեռքերով քրդական աւատապետութեան էութիւնը, այն սոսկալի խարազանը, որ ամենից աւելի էր կորացրել հայաստանցու մէջքը, որ ամենից աւելի էր ցամաքեցրել նրա կեանքի ու ապրուստի աղբիւրները։ Վերջապէս առաջին անգամն էր, որ հայկական խնդիրը, իր հրատապ պահանջներով, ամբապնդուած հազարաւոր աղաղակող փաստերով պիտի երթար բաղխելու Օսմանեան

կառավարութեան դուռը, պիտի ներկայացուէր սադրազամին և սուլթանին։ Տեղեկագիրը ասում է, որ ամենից առաջ ապստամբութեան ու հարստահարութեան ենթակայ են Էրզրումի և Դիարբէքիրի վիլայէթները այն է՝ Վան, Գղի, Դերջան, Բաղէշ, Մուշ, Զարսանճաք, Տիգրանակերտ, Սղերդ, որ այդ գաւառները հարստահարող աւազակների անունները ծանօթ են յականէ յանուանէ և տեղեկագրւած, որ „այնպիսի եղելութիւններ կան, որ ընթերցողին սոսկում կուտան“...։ Տեղեկագիրը յայտարարում է, որ պատրիարքական թագրիրները (տեղեկատու գրութիւնները) մնացել են անհետևանք, որ այդ թագրիրների նիւթ են եղել՝ կառավարական պաշտօնեաների զեղծումները, կանանց և մանկանց բռնի խլամացումը, ապա և աւազակութիւնները, առևանգութիւնները, բռնաբանութիւնները և այլն»*)։

Տեղեկագրի ընթերցումը սարսուռ ազդեց Ազգային ժողովի անդամներուն։ Խորհրդաւոր և ճնշող լռութեան մէջ յանկարծ հնչեց Խրիմեանի ձայնը.

«Կեանքիս մեծ մասը մեր խեղճ ժողովրդեան մէջ անցուցած եմ, ուստի դիտել կուտամ ժողովոյն որ ամենէն չափազանցութիւն չկայ Տեղեկագրին մէջ և Ցանձնաժողովը խնամով հաւաքած է ինչ որ ամենակարևորն էր»։

Այսպէս ահա, Պատրիարք Խրիմեան Հայրիկի յամառ և յարատև ջանքերու շնորհիւ Ազգային ժողովը ուշի ուշով և սրտի խորին կսկիծով կը դիտէր «Հայաստանի ցաւոց պատկերը», որ կը ցուցադրէր Թիւրքիոյ գաւառաբնակ Հայութեան կենդանի նահատակութեամբ լեցուած արիւնոտ և արցունքոտ կեանքը։

Այդ ահաւոր կեանքն էր ահա, որ Խրիմեանի յամառ աշխատանքի և հուժկու կամքի շնորհիւ ուշադրութեան կ'առնուէր, կ'ուսումնասիրուէր Ազգային ժողովի կողմէ և «Ինչիչ Ցանձնաժողով»ն ալ կը կազմէր այն նշանաւոր տեղեկագիրը, այն «արիւնոտ պատմական փաստաթուղթը, որ Հայաստանի ցաւոց պատկեր»ն էր։ Հայութեան «ցաւոց պատկեր»էն, լուռ տառապանքէն և արիւն-

*) Մէջբերել Վարանդեան—«Հայկական Շարժման Նախապատմութիւն»։ Հատոր երկրորդ. Ժընեվ. 1914. էջ՝ 55—57։ Հրատ. Հ. Ը. Դ—եան։

արցունքէն ահա ծնունդ կ'առնէր ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ, որուն վրայ, տասնեակ տարիներու ընթացքին պիտի կառուցուէր Հայոց Ազգային, ազատագրական եւ յեղափոխական շարժումներու արիւնազարդ և հոյակապ պատմութիւնը։ X

## Բ.

## ՓՈՒՇԷ ՊԱԱԿ

Խրիմեան Հայրիկը Մայր Երկրէն երբ մայրաքաղաքը կը հասնէր և պատրիարքական գահին վրայ կը բազմէր, անոր հակառակորդները ու թշնամիները ամէն կողմէ սև և մութ աշխատանքի կը լծուէին զայն յաչս ժողովրդեան և պետութեան վարկաբեկելու և տապալելու համար։ Բուրք կառավարութեան համար բնաւ ցանկալի չէր, որ Խրիմեանի նման անսահման ժողովրդականութիւն և վստահութիւն վայելող անձ մը պատրիարքական գահին վրայ նըստէր։ Բայց կառավարութիւնը համոզուած էր, որ եթէ Խրիմեանի պատրիարքական ընտրութիւնը չը հաստատէր, այն ատեն ոչ միայն Հայաստանի, այլև Կ. Պոլսոյ մէջ, լուրջ դժգոհութիւններ և մինչև անգամ բողոքներ և ցոյցեր կրնային յառաջ գալ։ Կառավարութիւնը թէ Մայր Երկրի և թէ Կ.Պոլսոյ մէջ, գաղտնի կերպով, թև ու թիկունք կուտար Խրիմեանի թշնամիներուն, իսկ առերես կը պաշտպանէր Պատրիարքարանի իրաւասութիւնը։ Տաճկական այս նենգամիտ քաղաքականութենէն մեծապէս կ'օգտուէին Խրիմեանի թշնամիները, որոնք ազատ կերպով հրապարակ կուգային և գաւեր կը սարքէին անոր դէմ։

Մշոյ Ս. Կարապետի վանքի միաբաններէն Կարապետ և Եսայի վարդապետները, (որոնք Խրիմեանի թշնամիներն էին) 1870-ին Կ. Պոլսոյ մէջ հրատարակեցին «Եւեքեաբբիր»*) վերնագրով գրքոյկ մը—«Սրբազան հօր դէմ տետրակ մը», որ կը բովանդակէր զրպարտութիւններ, բամբասանքներ և ամէն տեսակ վարկաբեկիչ խօսքեր։ Այսպէս ահա, Փուշէ Պսակ կը հիւսէին Հայրիկի համար։

---

*) Աշխատասիրութիւն Կարապետ և Եսայի վարդապետաց, միաբանից Ս. Կարապետի վանից Մշոյ, Կ. Պոլիս. 1870։

Խրիմեանը կը լռէր և անյիշաչար ընթացք մը ցոյց կուտար այդ սահոգի վեղարաւորներու հանդէպ։ Սակայն գաւառացի պանդուխտները Պատրիարքին դիմելով կը պահանջէին, որ այդ վարդապետները կարգալոյծ ընել տայ կամ այլ պատիժ տնօրինէ։

Այդ տեսնելը (1870) Կ. Պոլսոյ մէջ, Գէորգ Այվազեանի խմբագրութեամբ լոյս կը տեսնէր «Մամուլ» («Աւրձագանգ հասարակաց, հանդէս գաւեշտական») թերթը, որ կը հրատարակէր Մէփիստոփէլ ծածկանունով հեղինակի մը կողմէ գրուած «Հէմ ավճի, հէմ ճամպազ, հէմ ճինիվիզ» (Ե՛ւ որսորդ, և՛ լարախաղաց, և՛ խորամանկ) վերնագրով 61 էջանոց գրքոյկ մը*)՝ ի պատասխան «Երեքշաբթի» գրքոյկի անպատկառ հեղինակներուն։

Մէփիստոփէլի գրքոյկի մասին Կ. Պոլսոյ «Մասիս» շաբաթաթերթը (1870. Թիւ՝ 1006) այս տողերը կը գրէր.

«Հէմ ավճի, հէմ ճամբազ, հէմ ճինիվիզ։ Ս. Պատրիարք Հօր դէմ բանի մը շաբաթ առաջ Մշեցի Կարապետ և Եսայի անարժան վարդապետաց կողմէ հրատարակուած Երեքշաբթի անուն գաղշելի տետրակի մը զրպարտութեանց արժանաւոր կատակախառն հերքում մ'է, Մամոյ խմբագրութեան կողմէ հրատարակուած»։

Վանի Առաջնորդ Գօղոս Վարդապետ Մէլիքեանը Հայ «իշխան»ներու և կառավարութեան պաշտպանութեամբ՝ սանձարձակ կերպով ամէն տեսակ բռնութիւններ և ազգադաւ ու հակաժողովրդական քայլեր կ'առնէր**)։ Ժողովուրդը զզուած էր անոր առաջնորդական գործելակերպէն, որուն դէմ խիստ բողոքներ ուղղուեցան Պատրիարքին և Ազգային Ժողովին, պահանջելով, որ Գօղոս Վարդապետը հեռացուի Վանէն։ Խրիմեան Հայրիկը, առանց Քաղաքական և Կրօնական Ժողովներու կարծիքն առնելու, կը հրամայէ, որ Գօղոս Վարդապետը պաշտօնանկ ըլլայ և երթայ Բայազիտ աքսոր։

---

*) Կ. Պոլիս. Տպագրութիւն Ռ. Ճ. Քիւրքճեան. 1870։

**) Այս մասին Ազգօրհնականները (խրիմեանականներ) հրատարակեցին «Ամբաստանութիւն Վանայ Գօղոս Վարդապետին վրայ» անունով գրքոյկ մը (Կ. Պոլիս. Տպագրութիւն Սամուէլ Ղ. Պարթիզպանեան և Ընկ. 1874 էջ՝ 77) որուն ի պատասխան և հերքում Գօղոսականներն ալ (հակախրիմեանականները) հրատարակեցին «Խրիմեան եւ գործ իւր. Հերհումն Ամբաստանագրի Գօղոս Վարդապետի». վերնագրով գրքոյկը. (Կ. Պոլիս. 1874. էջ՝84։ Տպարանի անունը չը կայ)։

Պատրիարքի հրամանը կը կատարուի Նոյնութեամբ։ Այս ատենն է ահա, որ պօղոսեաններըը գլուխ կը բարձրացնեն Խրիմեանի դէմ, Ազգային Ժողովին կը դիմեն, քննութիւն և դատ կը պահանջեն։ Ազգային Ժողովը կը փոթորկուի։ Պատրիարքի գործունէութենէն դժգոհ տարրերը — թրքասէրը և պահպանողական կարգ մը էֆէնտիները — կը լարուին Խրիմեանի դէմ և կը գտնեն, որ — «Ս. Պատրիարք Հայրը ինքնագլուխ գործեր կը կատարէ»։ Ազգային Ժողովի անդամները կը բաժնուին երկու մասի. մէկ մասը համակիր Խրիմեանին, իսկ միւս մասը՝ հակառակորդ։

Հակառակորդներու գործօն և ազդեցիկ դէմքերն էին Գրօնական Ժողովի Ատենադպիրը Մատթէոս Վարդապետ (յետոյ Եպիսկոպոս, Պատրիարք և Կաթուղիկոս) Իզմիրլեան, Քաղաքական Ժողովի Ատենադպիրը Ստեփան Փափազեան և ուրիշները, որոնք բուռն կերպով կը պայքարէին Խրիմեանի դէմ, որ յաճախ կը դժգոհէր թէ — «Տիրող Սահմանադրութիւնը կը կաշկանդէ Պատրիարքի գործունէութիւնը, ես Սահմանադրութիւնը կը յարգեմ իսկ տառը՝ ոչ»։ Իսկ հակառակորդները կը պատասխանէին Խրիմեանին — «Իրաւ է թէ արդի Սահմանադրութիւնը իւր թերութիւններն ունի՝ բայց վարչական մեքենայն չը խանգարելու համար՝ պէտք է առայժմ կէս առ կէս գործադրել տիրող օրէնքը՝ մինչև որ բարեփոխուելով աւելի կատարելագործուի»։

Պատրիարքի հակառակորդներն ու թշնամիները այնքան առաջ գնացին, որ «ամէն տեսակ աններելի միջոցներ — զրպարտութիւններ և կաշառք» ի գործ դրին «Խրիմեանին տապալելու համար» կը գրէ Խ. Մալումեանը («Խրիմեան». էջ՝ 74)։

Խրիմեանի թշնամիներն ու հակառակորդները և Ազգային Ժողովի ընդդիմադիրը հոսանքը «Ղալաթիոյ Օճախ» կոչումով ճանչցուած էին։ Այդ «Օճախ»ը յաճախ կ'այրէր ու մոխիրի կը վերածէր ժողովրդական կամքն ու զգացումը և կը խեղդէր արդարութեան և իրաւունքի ձայները։ «Ղալաթիոյ Օճախ»ն էր դարձեալ, որ Խրիմեանի մասին վարկաբեկիչ յօդուածներ և գրուքիւններ կը հրատարակէր կաշառուած քանի մը Հայ թերթերու մէջ։ Կարապետ և Եսայի վարդապետներու գրած «Երեքշաբթի» գրքոյկն ալ «Ղալաթիոյ Օճախ»ի ջանքերով լոյս տեսաւ։ Մատթէոս Վարդապետ Իզ-

միրլեան*), Ստեփան Փափազեան և Քրիստոստուր Ղազարոսեանն էին «Ղալաթիոյ Օճախ»ի ղեկավար և ազդեցիկ դէմքերը, որոնց «խստադատ ուղղամտութիւնը չէր կրնար սանձահարել ամբոխայոյզ կիրքերը գռեհիկ հոգիներուն» կը գրէ Թորգոմ Արքեպ. Գուշակեանը («Խրիմեան Հայրիկ» էջ՝ 66) աւելցնելով, որ «Խրիմեան ընդմիշտ պահեց իր համարումն ու համակրանքը այս երէցին հայրենասիրութեան նկատմամբ». Հիացման արժանի է Խրիմեան Հայրիկի անյիշաչարութիւնը և քրիստոնէական ներողամտութիւնը, որուն առջև կը խոնարհուէին անոր թշնամիները ու հակառակորդները։

Ահա այսպէս փշալից, տատասկապատ և ցուրտ միջավայրի մը մէջն էր, որ կը գործէր Խրիմեան Հայրիկը. Պատրիարքական գահը, յիրաւի, վերածուեցաւ Գողգոթայի մը, որուն գագաթին վրայ կեցեր էր Հայրիկը և կը լսէր մեղադրանքի և զրպարտութեանց ձայները։ Վասպուրականէն սկսեալ մինչև Ցարօն, Էրզրում և Կ. Պոլիս— «Խա՛չ հան զդա, խա՛չ հան զդա» կը կանչէին սևահոգի հոգևորականները, ազգադաւ և տաճկասէր էֆէնտիները, հակաժողովրդական «իշխան»ները, խաւարամիտ ապաներ և կաշառուած խմբագիրները, որոնք մէկ մէկ ՓՈՒՇԷ ՊՕԱԿ ձեռքերնին բռնած՝ կը պատրաստուէին փշապատել Հայրիկի հոյակապ ճակատը, երբ Մայր Երկրէն, Հայրիկի ծննդավայր Վան-Վասպուրականէն, հասարակ և գեղջուկ ժողովուրդի սրտի խորքերէն՝ հուժկու և բարձր, անուշ ու քաղցր ձայն մը կը հնչէր.

—«Հայրի՛կ Հայրի՛կ... քո հայրենիքը, Հայ ժողովուրդը և զաւակներդ քեզ հետ են...».

Աշնանային տխուր և մռայլ երեկոյ մըն էր, 1872-ին Նոյմբերին։ Խումբ մը վանեցի պանդուխտներ կը մտեն Պատրիարքարան և ներկայանալով Հայրիկին կ'ըսեն.

—Սրբազան Հայրիկ, Վանէն Պոլիս հասան խումբ մը երիտասարդներ, որոնք ուրախ և տխուր շատ մը լուրեր բերած են երկրէն. Մենք համեստ ընթրիք մը պատրաստած ենք մեր խանին մէջ, Աբրահամ Աղա Սօլախեանին մօտ. կը խնդրենք, որ դուք ևս ներկայ լինէիք։

---

*) Իզմիրլեանը 1870-ի Յունուար 14-ին Խրիմեան Պատրիարքի անձնական քարտուղար նշանակուեցաւ և հմտութեամբ կատարեց այդ պաշտօնը, իսկ 1871-ին ընտրուեցաւ Ազգային Ժողովի անդամ։

Հայրիկը ուրախութեամբ կ'ընդունէ այս հրաւէրը և կ'երթայ. Վանէն եկած նորեկ երիտասարդ պանդուխտները Հայրիկի անվերջ և հետաքրքիր հարցերուն գոհացում կուտան։ Ամէնքն ալ ուրախ են, կը զրուցեն հին և նոր օրերու մասին և հայրենիքի համն ու հոտը կը վերյիշեն։ Պատրիարքը պանդուխտներուն հաւասար ընկեր դարձեր է և անոնց «կեղտոտ ու ճլոտ անկողիններու վրայ նստած Հայաստանով կը հետաքրքրուի»։ Այնտեղ կան նաև մշեցի, կարնեցի, սեբաստացի և այլ գաւառացի պանդուխտներ, որոնք հոգեկան ջերմ զգացումներով լեցուած՝ կը զրուցեն ու կը կատակեն։ Պատրիարքը և պանդուխտները միասին նստած...։ «Ըլլալիք բան է այս, ասանկ բան տեսուած է» պիտի հարցնէին անշուշտ պոլսեցի Հայ էֆէնտիներն ու աղաները, իսկ Խրիմեանը բարի և անհոգ ժպիտով մը պիտի պատասխանէր։ «Եղած բան չ'էր՝ բայց եղաւ, տեսած չ'էիք՝ բայց հիմայ տեսաք»։

Կը պատրաստուի ընթրիքի սեղանը, որուն գլուխը Հայրիկն է բազմած, Աբրահամ Աղան ալ կողքին։ Կ'ուտեն, կը խմեն, կը զրուցեն, կը կատակեն։ Հայրենի յուշ-յիշատակներով կ'ոգեւորուին ու կը յուզուին։ Հայրիկը պարզ և յուզիչ բաժակաճառ մը կ'ըսէ և իւր բաժակը կը խմէ գաւառացի պանդուխտներու կենացը բարեմաղթելով, որ անոնք շուտով հայրենիքը վերադառնան և իրենց ընտանիքին և հող ու ջրին կապուած մնան։

—Տղաներ «*Պանդուխտ Վասպուրականցին*»*) երգեցէք, կ'ըսէ Հայրիկը։ Ամէնքն ալ լուռ են, ուրախ դէմքերը թախիծով կը պատուին, երբ յանկարծ պանդուխտներէն մէկը բարձր և անուշ ձայնով մը կ'երգէ.

«Թող ախպէր, թող, որ իմ սիրտ կրակ ու բոց վառուած էլնի,
Թող իմ աչքը կկլլացող պղտոր պղտոր ախպիւր էլնի.

---

*) Այս երգի հեղինակն է *Տիգրան Ամիրջանեանը*, որ իւր գրած երգերու եղանակներն ալ յօրինած է։ «Պանդուխտ Վասպուրականցին» (ընդամէնը 9 տուն կամ 52 տող) ժողովրդական սիրուած երգ մըն է, որ առաջին անգամ լոյս տեսած է Վարագայ տաղարանէն, հեղինակին «Մրմունջը» գրքոյկին և ապա Միքայէլ Մխանսարեանցի նշանաւոր «Քնար Հայկական» և ուրիշ բազմաթիւ երգարաններու մէջ։

Թէ տիւն էլ արտասուք աւնիս արե ծիկ խետ ու լաց արա,
Մեր արտասուք թող ամպ կտրի, Հայոց դաշտեր անձրև էլնի։

Թողեր ենք ծէթիկիկ ծեագերս խեղճ ու կրակ վէր պաղ ցօրվան,
Թողեր ենք մեր կողակիցք վզիկ ծռած կէլու պերան...»։

Գանդուխտ երիտասարդները լուռ և անձայն կը մղկտան և աղօտ ճրագի լոյսին տակ անոնց արցունքոտ աչքերը փայլ կուտան. Հայրիկը խորապէս յուզուած կը սրբէ արցունքները և ձեռքը ճակատին դնելով լուռ և տխուր կը խորհրդածէ։

—Հայրիկ ջան քո կենաց, կեանքիդ մատաղ. ախ, անիրաւ աշխարհ..., այս ալ կ'անցնի, ամէն կողմէ կը ձայնեն սեղանակիցները և բաժակին կը խմեն Հայրիկի կենաց։

—Տղաներ, Հայրիկէ ցանկացին կենաց վրայ պատշաճ երդ մը երգեցէք, կ'ըսէ Աբրահամ Աղան։

Նոթեկ պանգուխտները ձէն-ձէնի կուտան ու կ'երգեն.

Հայրի՛կ, Հայրի՛կ, քո հայրենիք
Վասպուրական մեր աշխարհ,
Վարդի փոխան քեզ փուշ բերաւ,
Ցաւերդ դառան բիւր հազար։

Ա՛յն սայրատուր իրշերն ամէն,
Փո՛անջ կտրեցէք շարե-շար,
Թողէք գլխիս պատկ հիւանեմ,
Որուն ճակատս է յօժար»։

Մայիսն եկաւ սոխակներով,
Վարդի թրփիկ որոնեց.
Փոխան թրփիկ փշեր գտաւ,
Հաշահատաչ ձայն հանեց.

Վասպուրակա՛ն, է՛ր, չը ճանչե՛ս
Քոն բարերարդ աննմանը.
Ի՛նչ հատուցում այդ գոր առնես,
Արդա՛ր կշռէ ամէն բան.

Հայրիկն ասաց—«Իմ հայրենեակաց
Փուշն ալ ինծի է քան զվարդ.
Ես այն իրշոց մէջը դարձեալ
Կը որոնեմ սիրուն վարդ։

Հայրի՛կ, Հայրի՛կ, քո սուրբ ճակատ
Արիւն, արցունք ևն ո՛ւ միշտ,
Փթթեալ վարդից կարմիր թերթեր
Կը պսակեն քեզ յաւօք զարդ...։

Առաջին անգամն էր, որ Հայրիկը կը լսէր իւր անուան ձօնուած այս երգը։ Անոր սիրտը յուզմունքով և աչքերն արցունքով կը լեցուէին։ Այդ երգն ու ձայնը կուգային երկրէն՝ «Վասպուրական մեր աշխարհ»էն որ «վարդի փոխան» Հայրիկին «փուշ բերաւ» և անոր ցաւերը «բիւր հազար» դարձուց։ Հայրիկը իւր հայրենիքի փուշն

աւելի կը սիրէը քան օտարի վարդը և «այն փշոց մէջը դարձեալ» կ'որոնէը զարդ ու վարդ։ Ազգն ու հայրենիքը՝ «Այն սայրասուր փրշերն ամէն» շարէշար կապեցին և Հայրիկի ճակատին Փուէ պսակ հիւսեցին։

«Հայրիկ, Հայրիկ... քո սուրբ ճակատ» արիւնազարդ և աչքերդ արտասուալից՝ թող տեսնէ Հայ ժողովուրդը և քո գովքը երգէ։

Կէս գիշերին ընթրիքը կը վերջանար։ Հայրիկը կ'օրհնէը պանդուխտներն ու կը հեռանար և այնուհետև ամէն օր ու ամէն տեղ կը լսէը այդ երգի քաղցրանուշ թրթիռները—Հայրի՛կ, Հայրի՛կ ֆո հայրեցիք...»։

## Գ.

## ՎՇՏԱՊԱՏՈՒՄ ՏԵՂԵԿԱԳՐԻ ՔՆՆՈՒԹԻՒՆԸ

«Քննիչ Յանձնաժողովը»՝ Ներսէս Եպիս. Վարժապետեանի նախագահութեամբ, արդէն Ազգային ժողովին մատուցած էր Տաճկահայութեան տանջանքի նշանաւոր և ծանօթ Տեղեկագիրը, որուն ընթերցումը սարսուռ և յուզում յառաջ բերած էր ժողովականներու մէջ։

Պատրիարք Հայրիկը և Ազգային ժողովի անդամներէն հայրենասէր, գաղափարական և գիտակից ընտրեալ խումբ մը կը պնդեն, որ Տեղեկագիրը անմիջապէս քննութեան առնուի և Բ. Դրան մատուցուի։ Սակայն անդամներու ճնշող մեծամասնութիւնը կը զգուշանայ Տեղեկագրին քննութենէն և միշտ կը ջանայ, որ ժողովը զբաղուի այլ հարցերով, որոնց մէջ ուշագրաւ էին Պիլիկիոյ Կաթուղիկոսութեան իրաւասութեան և Աղթամարի Խաչատուր Կաթուղիկոսի ոճրապատումի տարիներով ծեծուած հարցերը։ Ազգային ժողովի այդ կասկածամիտ և զգուշաւոր անդամներու մեծամասնութիւնը, սակայն, կը ստիպուի տեղի տալ և «Քննիչ Յանձնաժողով»ի Վերապատում Տեղեկագիրը քննութեան կ'ենթարկուի 1871-ի Հոկտ. 22-ին, ԼԹ.-րդ նիստին*) մէջ։

---

*) Ատենագրութիւնք Ազգային Ժողովոյ. 1871. Կ. Պոլիս։

Պատմական և հանդիսաւոր էր այդ նիստը, որուն Ատենապետ Գրիգոր Օտեանը ծանր ու խորհրդաւոր շեշտով մը կը խօսէր.

«Երեսփոխանական ժողովը հաստատուած օրէն այսպիսի ծանր, այսպիսի փափուկ և ամէնուն սիրտը թրթռացնող խնդիր մը չէ ներկայացած ժողովոյս, կրնամ ասելցնել թէ ոչ երբէք խնդիր մը այսպէս յարմար ժամանակի մէջ ներկայացած չէ»։ Ապա հարց կուտայ.

«Պատուական հարուստներեն տեղեկագիրն՝ ժողովն այսօր ճնշութեան պիտի առնո՞ւ թէ ոչ»։

Ազգային ժողովը միաձայնութեամբ կ'որոշէ քննութեան առնել ծանօթ Տեղեկագիրը։

Ատենապետը դիտել կուտայ, որ – «Տեղեկագիրը երկու մասերու բաժնուած է, է առաջնոյն մէջ գանգատները կը պարունակեն, իսկ երկրորդը անոնց դարմանները ցոյց կուտայ։ Առաջին մասը չեմ կարծեր, որ վիճաբանութիւն վերցնէ, եթէ չափազանցութիւն կամ պակաս տեսնուի՝ միայն ցուցնելու է, գալով երկրորդին՝ այն է դարմաններուն կ'ըսեմ, կ'առաջարկեմ որ մի առ մի պէտք է վիճաբանինք անոնց վրայ։ Կը հարցնեմ արդ թէ՝ Ա. մասի վրայ դիտողութիւն ընող կայ»։

Պատրիարք. — Կարծեմ շատ մանրմունը բաներով զբաղելու չենք։

Ատենապետ. — Քանի որ ուրիշ դիտողութիւն ընող չկայ, ուրեմն առաջին մասի վրայ վիճաբանութիւնն սպառած է, ուրեմն և երկրորդին վրայ է խնդիրը, որ և արդարև Տեղեկագրին պինդ կարևոր մասն է։

Տեղեկագրին Բ. մասը կը թելադրէր երկու կարևոր և հիմնական կէտեր իրը դարման եւ փրկութեան միջոց։

Ա) Քիւրդերն ու չէրքէզները և բոլոր լեռնական ու վաչկատուն ցեղերը պէտք է զինաթափ ըլլան, իսկ եթէ ոչ Հայերն ալ իրաւունք պիտի ունենան զէնք կրելու։

Բ) Զինուորական տուրքի (պէտէլը ասքէրիյէ) փոխարէն զինուոր տալ պետութեան և ընդհանուր հայրենիքի համար արիւն թափել։

Պէկեան Էճէնտի. — Գամ քրդաց ձեռքէն զէնքն առնուի և կամ հայոց ձեռքը զէնք տրուի.... Այս խօսքը բնաւին աղէկ չէ. կարծեմ միայն քրդաց ձեռքի զէնքն առնուի ըսելը բաւական է։

Իսկ հայոց ձեռքը զէնք տլուի ըսելը ծանր է և ես պատշաճ չեմ համարիր....

Ի վերջոյ ժողովր խիստ փափկանկատ և զգուշաւոր դիրք կը բռնէ «հայոց ձեռք զէնք տալու» հարցի մասին և կը զբաղուի զինուորագրութեան խնդրով։

Ստեփան Փափազեան.—Զինուորագրութիւնը բարոյապէս պիտի զօրացնէ Հայ ժողովուրդը և զգացնէ, որ ինքն ալ երկրին տէրն է... համահաւասար պարտաւոր իր օսմանցի հայրենակցին հետ իր ծառայութիւնը մատուցանել երկրին. Զէնքը ներկայ ժամանակիս մէջ պատուոյ, ընչից և կենաց պահպանութեան հարկաւոր պիտոյք մ'է։ Ասկէ զատ եթէ քննենք, թէ որչափ պանդուխտ ունինք այժմ, ասոնց պատճառաւ որչափ երկիր անմշակ մնացած է, որչափ զաւակ տարուէ տարի կը կորսնցնենք, որչափ պանդուխտ օտարութեան մէջ կը կորսուին հայլն հայլն, այն ատեն լաւ կը հասկնանք թէ գաւառացիք փոխանակ կեանքն ամբողջ հողագործութեամբ անցնելու, եթէ աւուր մէկ մասը վառօդ գործածելու, սուր շողացնելու նուիրեն, իրենց քրտնաց արդիւնքը պահպանելու նիւթական շահու առաւելութիւն մը երևան պիտի գայ...։

Պատրիարք.—Մեր ժողովուրդը երբ լսէ թէ հրաման է եկեր զինուորագրութեան՝ մինչև սահմանազլուխ կը փախչի։

Խրիմեանը թէև սկզբունքով կ'ընդունէր զինուորագրութեան հարցը, բայց վաղաժամ կը համարէր, առարկելով, որ զինուորագրութեան սարսափն այնքան մեծ է, որ բոլորն ալ կը խուսափին և կ'ուզեն տուրք տալ։ Եւ կ'առաջարկէր, ու նախ՝ պէտք է ժողովուրդին կամքն առնել, միտքը պատրաստել. զէնքի և ինքնապաշտպանութեան, զինուորական պարտականութեանց մասին քարոզել, համոզել և ապա գործի անցնել։ Այս պարագային է միայն, որ զինուորագրութիւնը Հայութեան համար օգտակար կրնայ դառնալ։

Ատենապետ Օտեան.—Զինուորական տուրքը մեր տկարութեան տուրքն է։ Հայը, ինչպէս ուրիշ ոչ-մահմետական ազգեր, հայրենեաց համար արիւն թափելու իրրև անկարող, անկարող զէնք գործածելու, բոլոր երկրին պաշտպանութիւնը մինակ մէկ ազգ մը վրան առած է և այս պաշտպանութեան փոխարէն միւս ազգերը հարկ մը կը վճարեն.... Այդպիսի դրութեան մէջ պաշտպանութիւն

անկարելի է.... Երբ զինուորին յատուկ եղած պատուոյ զգացումը զարգանայ մեր մէջն ալ, այն ատեն հայ պիտի գտնէ իր նախնի նկարագիրը, զոր պիտի վերականգնէ գլորման ու ապականութեան վիճակէն, ուր ընկած է.... Դարերով գերութեան վիճակի հետեւանք...: Ցայտնենք աշխարհին թէ մենք ալ մարդ ենք և արիւթեան ընդունակ...:

Մարկոս Աղաբէկեան.—Ասի ծանր խնդիր մ'է և խիստ փափուկ...: Զինուորասուրիւնը զարման մի կարծէք հարստահարութեանց. գուցէ այդ զարմանն աւելի վատթար լինի մեր ժողովրդեան համար...: Զօրք տալ մեր գործին չի գար. զի հայ իր ընկերական վիճակէն հեռացուցած կ'ըլլանք, տուրք տանք ! բայց պայմաններ դնենք. Ճաճիկն աւելի աղքատ է քան զհայ.

Սեբաստ Փափազեան.—Մարկոս էֆէնտի կ'ըսէ, թէ գաւառի հայոց վիճակը աւելի երջանիկ է, քան մահմեդականաց վիճակը. Ասիկայ ապացուցանելու ենք պարտաւոր, և մինչև ցարդ մեր ամենուս գիտցածը այդ բանին ընդհակառակն է. վկայ են այսքան տարուան հրատարակութիւնները, որոնք գաւառացի ազգայնոց աղէտալի վիճակին նկարագիրներով լի են. Դառնալով անոնց, որ կ'ըսեն արիւն չը թափուի՝ կը պատասխանեմ, մինէ քիչ արիւն կը թափուի այժմ. եթէ կենաց, պատուոյ և ստացուածոց պահպանութեան համար արիւն թափել պէտք չկայ, ինչու համար ողորմելի անձի մը պէս քիւրդին առջև արիւն թափէ հայը և պատերազմի դաշտին վրայ չթափէ. Քուրդը կամ ուրիշ թշնամին վանելու համար՝ ինչու աղերսէ իր մահմեդական հայրենակցին և ինքը չը գործէ....

Երկար վիճաբանութիւններ, սրտմաշուք ժողովներ իրար կը յաջորդեն, բայց Ազգային ժողովի մեծամասնութիւնը չ'ընդուներ, որ Տեղեկագիրը նոյնութեամբ մատուցուի կառավարութեան.

Խրիմեանի, Երեմիա Չալխ. Տէվկանցի, Դր. Օտեանի, Ստ. Փափազեանի և այլոց անվախ ու կորովի ճառերու վրայ միշտ սառ ջուր կը թափէին Պէկեան, Աղաբէկեան և ուրիշ կասկածամիտ ու սուլթանավախ էֆէնտիները, որոնք չ'էին կրնար հաշտուիլ այն մտքին հետ, որ Հայն ալ զէնք կրելու, զինուորագրուելու իրաւունք ունենար և կամ իբր պատասխանութեան դիմէր վասնզի այդ երե-

ույթները «Օսմանեան բարեխնամ կառավարութեան կողմէ իբր ըմբռստութիւն պիտի նկատուի» կը պնդէին Ազգային Ժողովի Հայ-պահպանողական տարրերը, որոնց համար ոչ միայն տհաճ այլև անհանդուրժելի էր, որ գաւառական հարստահարութեանց և Հայաստանի վշտապատումի նշանաւոր Տեղեկագիրը քննութեան առնուէր։ Հայկական Հարցը, ամենէն առաջ Հայ պահպանողական և պայական տգիտութեան, ապիկարութեան և չկամութեան հարուածներուն կ'ենթարկուէր և միշտ կը հալածուէր Ազգային Ժողովէն, մինչ Խրիմեանը և իւր գաղափարակից, հայրենանուէր ժողովականները (որոնք շատ քիչ էին) կը շտապէին, որ Տեղեկագրին քննութիւնը շուտով վերջանայ և մատուցուի Բ.Դրան։ Ժողովականներու մեծ մասն ալ ոգի բռին կը ջանար գետին քսել Հայաստանի վշտապատումի Տեղեկագիրը, անարգելով ու ոտնահարելով բովանդակ Տաճկահայութեան արիւն-արցունքը և հսկայ տառապանքը։

Ազգային Ժողովի 1872-ի Փետրուար 18-ի նիստին մէջ, երբ մեծամասնութիւնը աննշան և խնդիրներ և երկրորդական հարցեր կը յարուցէր, Խրիմեան Հայրիկը միապետի մը նման սաստող և ուժգին յորդոր մ' ուղղեց Ժողովին։

«Իբրև դիտող և հովիւ, պատրիարքութեան բարձր գահէն կը համարձակիմ ասել, ես ձենէ առաւել կը տեսնեմ Ազգին վերահաս վտանգները։ Թողէք ուրեմն և այդ իրաւունքը շնորհեցէք ինձի, թէ որ խնդիրն է կարևոր, որը նախադասելի...։ Ուստի իբրև նուիրական պարտք, պէտք է ի բաց թողում այն խնդիրները, յորոց յապաղմանէ ոչինչ վնաս չեմ տեսներ և միայն այն խնդիրները վարեմ յառաջ, որոց լուծումը ժողովրդեան նեղկայ աղէտները կը բառնայ։ Ժողովրդեան համար ամէն բան պէտք է զոհել զի ժողովրդեան ձայնն ամէնէն բարձր կ'ելնէ» (Ծափահարութիւն)։

Երեմիա Եպիս. Տէվկանցն ալ, իր կարգին, խիստ և արտացաւ յորդոր մը կարդաց։

«Ես որ Հայաստանի ամէն անկիւնները շրջած, ականատես եղած եմ միլիոնաւոր հայ ժողովրդեան կրած զրկանաց, ցաւոց և նեղութեանց. կը լսեմ ու կը պաղատիմ, որ ով որ խիղճ ու գութ ունի իր սրտի մէջ, գաւառական հարստահարութեանց խնդիրն որոշէ ընել նախադաս, գերադաս և յառաջադաս։ Անձնական շահեր շատ

անգամ այս խնդրոյն արգելք հանդիսացան, որոյ դէմ ես յաւիտեան պիտի բողոքեմ, վասնզի այդ անձնական (աղայական) շահերու դէմ հայութեան ոգին դառնապէս կը բողոքէ և երկիր կը սարսի». (ծափեր)։ Թողումք կրօնական կերպարանօք շպարեալ սնոտի վէճերն ու կռիւները. այդ վէճերն էին, որ զմեզ 36 միլիօնէն ափ մը ժողովուրդ մնալու չափ սպառեցին—կաթողիկոսութիւն, պատրիարքութիւն, եպիսկոպոսութիւն, աթոռ և այլն ահնայն կարգ ու պաշտօնի խնդիր իրենց նշանակութիւնը կը կորսնցնեն ժողովրդեան տառապանաց խնդրոյն քով վասնզի այն ահնայն ժողովրդէն կը ծնանին, ժողովրդեան համար են և առանց անոր բան մը չեն արժեր»:

Երեմիա Եպիսկոպոսի այս խօսքերը կը ծակեն սիրտը Պէկեան էֆէնտիին, որը թունալից շեշտով մը կը յարէ.

—«Մեր եկեղեցականաց զգացածը մենք ալ կը զգանք...»։

Այս խօսքն ըսող Պէկեանը, սակայն «հայոց ձեռքը զէնք տրուելուն»կը հակառակէր և իւրայիններու հետ կ'աշխատէր, որ Տեղեկագիրը չը մատուցուի Բ. դրան.

Ի վերջոյ Ազգային ժողովի մեծամասնութեան հաւանութեամբ, Հայութեան վշտապատում այդ նշանաւոր Տեղեկագիրը բազմատեսակ փոփոխմանց և կրճատումներու ենթարկուելով Բ. Դրան յանձնուեցաւ. կառավարութիւնը կազմել տուաւ «Խառն Ճանձնաժողով» մը, որ «տեղն ու տեղը քննութիւն կատարելով երեան հանեց Տեղակագրի մէջ փաստուած զեղծումներն ու ապօրինութիւնները»։

Սակայն կառավարութիւնը բնաւ գործնական միջոցներու չը դիմեց Տաճկահայաստանի մէջ կատարուող հարստահարութիւնները ու ոճիրները սանձահարելու համար։ Բ.Դուռը տաճկական դիւանագիտութեան յատուկ յաճախակի սուտ խոստումներով և ձևական, պաշտօնական գրութիւններով Ազգային ժողովին և Պատրիարքին կը հաւաստիացնէր թէ հարկ եղած կարգադրութիւնները կատրուած են հարստահարութիւնները ոճիրները դատեցնելու համար։ Պատրիարք Խրիմեանը բազմաթիւ բողոք-թագրիրներ ներկայացուցած էր կառավարութեան՝ Տաճկահայութեան տառապալից կեանքի մասին, բայց այդ բոլոր փաստաթուղթերը պետութեան կողմէ անուշադրութեան մատնուելով կը թաղուէին տաճկական դիւաններու փոշիներուն մէջ։

«Ստեղծւել էր մի ծանր, անշնչելի մթնոլորտ հայկական անդամալոյծ պարլամենտում (Ազգային Ժողով)։ Եւ ամենից աւելի ծանր էր այն՝ ժողովրդի ցաւերով տառապող պատրիարքի համար։ Նա թողել էր իր Տաճօնն ու Վարագը, եկել էր պատրիարքութեան, որպէսզի քիչ շատ նպաստել կարողանայ գաւառացոց վիճակի բարւոքման։ ...Խոչընդոտները գալիս էին ոչ միայն Թիւրք կառավարութիւնից, այլ և նոյնիսկ հարազատ, ցեղակից ազաներից, որոնց գծուծ ինտրիգները և եսամոլ ու յանցաւոր անտարբերութիւնը աւելի ևս քաջալերում էին սուլթանական կառավարութիւնը իր հայասպան տակտիկի մէջ...։

«...Այդպէս վախճեցաւ մեր նորագոյն պատմութեան ամենատրխուր և ամենայուզիչ դրւագներից մինը։

„Հայկական խնդիրը“ ծնունդ առաւ և իր առաջին քայլերի մէջ իսկ՝ զարնւեց ծանր, ահաւոր խոչընդոտների...»*)։

Ո՛րքան ողբերգական, որքան կսկծալի էր այդ իրողութիւնը։ Խրիմեան Հայրիկը՝ իբրև պատրիարք և ժողովրդասէր, ազգանուէր գործիչ, «Հայաստանի ցաւոց պատկերը» և բովանդակ ժողովուրդի մը ճակատագիրը Ազգային Ժողովին կը ներկայացնէր, դարման ու փրկութիւն կը խնդրէր, բայց ժողովականները—շատ յարգելի բացառութիւններէ զատ—«եսամոլ ու յանցաւոր անտարբերութեամբ» մը կ'ոտնահարէին Մայր Երկրի Հայութեան տառապանքը։

Սակայն այլևս ուշ էր.... Հայութեան արհաւրալից կեանքէն և Հայաստանի վշտապատում ծանր երկունքէն ծնունդ առած էր ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ։

## Գ.

## ԴՐՈՒԱԳՆԵՐ՝ ԽՐԻՄԵԱՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԿԵԱՆՔԷՆ

Պաշտօնական շրջաններու ծանր ու խեղդիչ մթնոլորտէն դուրս, Խրիմեանը կ'առանձնանար և հոգով սրտով կը սլանար դէպի Հայաստան՝ երազելով Վասպուրականն ու Տարօնը։ Հայաստան եւ Հայութիւն—ահա Հայրիկի ոգեւորութեան և ներշնչման հարազատ

*) Միքայէլ Վարանդեան—«Հայկական Շարժման Նախապատմութիւն». Հատոր երկրորդ. Ծրնեվ. 1914. էջ՝ 70—72։ Հրատ. Հ. Յ. Դ—եան։

աղբիւրները, որոնք իւր քարոզներուն անսպառ նիւթ կը մատակարարէին։ Ազգի և հայրենիքի սիրոյ մասին ունեցած իւր յորդառատ և ծով զգացումները նա յաճախ ի գիր կ'առնէր և կը հիւսէր բազմաթիւ նամակներ, որոնք անուշ, զեղուն և բնորոշ մէկ-մէկ դրական գոհարներ են՝ առաքուած իւր այնքան շատ ծանօթ և անծանօթ բարեկամներուն և մտերիմներուն։

Նամակագրութիւնը Հայրիկի սիրելի և հաճելի զբաղումներէն մէկը եղած է՝ երիտասարդութենէն մինչև մահը։ Նա կը սիրէր նամակային կապեր պահել ոչ միայն իւր շատ մտերիմ անձանց՝ այլև անտես և անծանօթ յայտնի դէմքերու հետ, երբ նկատէր, որ անոնք ազգի և հայրենիքի վերածնութեան ու ազատութեան գաղափարներով կը տոգորուէին։

Արևմտահայ գրականութեան ԺԹ.-րդ դարի յայտնի դէմքերէն հինաւուրց Պուէs Խաչատուր Միսաքեանը*), դժգոհի և խռովածի մը նման Կ. Պոլսէն հեռանալով կ'անցնէր Փարիզ, ուր փիլիսոփայական խոր մտածումներու մէջ ընկած՝ ճգնաւորի մը նման, խորհրդաւոր կեանք մը կը վարէր կտրուած՝ ազգային կեանքէն ու հայրենիքէն։

Այս իրողութիւնը վիշտ կը պատճառէր Հայրիկին, որուն ցանկութիւնն էր, որ Պուէտ Միսաքեանը Փարիզէն վերադառնայ և երթայ Հայաստան։ Եւ ահա 1870-ի Յունուար 16-ին Հայրիկը Կ. Պոլսէն հետևեալ նամակը**) գրէ Պուէտ Խաչատուր Միսաքեանին.

«Երբա՜ՑԻ Հայաստան.

«Մեծարոյ Իմաստասէր ! Ջեմ տեսեր զքեզ, հրեշտակ ես թէ մարդ, հացիւ կ'ապրես թէ բանիւն Աստուծոյ, այլ կը ճանչնամ զքեզ երկասիրութեանցդ մէջ, զոր հանճար և տաղանդ ծանօթ են մեզ և Պոլսոյ Հայոց։ Քեզ համար կը պատմէին արդէն թէ դու Հայ Դիոգինէս մի ես այդ անձուկ կարասին մէջ նստած՝ կ'իմաստասիրես միշտ։

---

*) Պուէտ Խ. Միսաքեանը (ծն. 1815—† 1891) բանաստեղծ, բանասէր, քննադատ և ծանօթ հրապարակագիրը էր, որ փայլեցաւ 1860—1880-ական թուերուն։ Անոր աշակերտներէն էին Յարութիւն Մրմրեան, Մելքոն Գիւրճեան և ուրիշներ։ Գրական գործերէն գնահատելի են՝ «Քաղուր», «Ի ծնէ կոյր», «Սոֆիա» և այլն։ Այս հինաւուրց գրագէտը բնաւորութեամբ գառն ու դժուար եղած է։

**) Թէոդիկ—«Ամէնուն Տարեցոյցը».—Կ. Պոլիս. 1916—1920. էջ՝ 14։

«Պատճառները ինձ անյայտ են թէ ինչպէս քու բնականունդ երկրէն և Հայոց ժողովուրդէն խառված՝ վաղուց ի վեր քաշուելով օտարութեան մէջ կը պանդխտես, թեպետև կարդալով երբեմն Սաղմոսին մրմունջը — „Վայ ինձ, ընդ երկար եղև պանդխտութիւն իմ“, Այդ հրաշալիք մի է Փարիզին դրախտին մէջ այդպէս ճգնաւորական կեանք վարել, ինչպէս հին հարք՝ Պաղեստինի քարանձաւց մէջ ժուժելով անհնարին սակաւապէտութեան. Ինձ այնպէս կը թուի մեր Խորենացւոյն կեանք յիշելով դու՝ կը սրտմտիս թէ Հայ տակաւին անսիրող է իմաստութիւնը, գուցէ նա ևս զքեզ թողու որ երթաս ցաղացպան լինիս Մովսէսին պէս։ Սիրեմ զքե՛զ, վերցուր այդ կասկածը, դարձիր Աթէնքէն, Խրիմեան Հայրիկ իւր կերած հացէն քեզ նման իմաստասիրաց բաժին կը հանէ, նա սովոր է պատուել Իմաստութիւն։

«Ձեմ մոռնար, կը յիշեմ տակաւին, դու Ծաղկոցաձորի երկասիրող մշակն ես։ Ես ալ քեզ նման սիրահար էմ այդ Անուշ պարտէզին։ Արի՛, ե՛կ որ միասին մշակենք մեր հայրենի պարտէզ։ Քեզ նման ես ևս խմբագիր եմ, քան Պատրիարք։

«Մի՛ կասկածիր, եթէ Պոլիս մերժէ զմեզ, երկու մեծ և ընդարձակ կարասներ ունիմ - Վասպուրական աշխարհին մէջ վարագայ վանք, Տարօնոյ երկրին մէջ Գլակայ մենաստան։ Այս դրախտավայր տեղիք բաւական և շատ են մեզ։ Երթանք դատարկենք այդ լուին լեռները, որ կը բղխին կաթ ու մեղր. հո՛ն, հայրենի աշխարհին մէջ երկասիրենք, ուր Սահակ և Մեսրովպ թարգմանեցին, ուր Եղիշէն մրմունջ կարդաց և Եզնիկ փիլիսոփայեց...։

«Երգ մի կայ զոր յաճախ կ'երգեն պոլսեցիք ու տեղեերէն չ'եե cարժիր, մենք երգենք ու շարժինք.

*Իմ հայրենիք գիս կու կանչէ, հետոռ եմ Հայաստանեայ,*
*Հայոց ոլորան կու կանչէ՞ հետանալ Հայաստանեայ...։*

«Այո՛ Հայոց Հայրենիքը՝ Դրախտն է։ Երկնից Ճարտարապետը հոն չափեց Հայուն սահման. Հայը սակայն պահել չը կրցա՛ւ իւր անմահ Հայրենիքը»։

Պատրիարքական գահին վրայ նստելէ յետոյ Խրիմեանը պարտաւոր էր «ըստ ընկալեալ սովորութեան» իւր ողջունաբերը, խրատական և յորդորալի կոնդակն առաքել Թուրքիոյ Հայութեան։

Սակայն Պատրիարքը այնքան եռուն և տենդոտ աշխատանքներով տարուած էր, որ 1871-ի Յունուարին հազիւ կրցաւ հրատարակել իւր կոնդակը—«Նախնի Շրջաբերական թուղթ առ ամենայն եկեղեցիս Հայոց որ ընդ իշխանութեամբ Օսմանեան Պետութեան»*):

«Մկրտիչ Ծառայ Յիսուսի Քրիստոսի, և շնորհիւ սուրբ Հոգւոյն, Վարդապետ Վարագայ ուխտին, Եպիսկոպոս Գլակայ Վանից և Պատրիարք Կոստանդնուպոլսոյ.

«...Յետ նուիրելոյ Ցիրաձիր ողջունիս և նախընծայ թղթոյս, ո՛ սիրելի Հօտք և Հովիւք Հայոց, չեմ կարող անմեղադիր առնել զիս այլ կը խոստովանիմ հրապարակաւ անձինս հեղգութիւն առաջի համօրէն ազգիս, որ Օսմանեան բարեխնամ պետութեան տակ կը բնակին որոց Հովիւ կոչեցայ ի Տեառնէ.

«Ու այս անպատասխանի եմ, եթէ յառաջ բերեմ չարաչար զբաղմանցս վիճակ, քաղաքական խառն գործքեր, անհուն անհատական խնդիրները, հայրենի գաւառաց բազմադիմի հեծեծանաց ազատակները որ սիրտս և հոգիս կը պարաւանդէ, լռին հոգածութեան մէջ. Այս պատճառներ երբէք չեն կարող զիս չքմեղս առնել. Ո՛հ, այս պարտազանցութեանս մէջ մեծ ամօթ մի զգալով հանդերձ՝ պիտի համարձակիմ ազգին սիրոյն և համակրութեան վրայ վստահանալով նոր տարւոյ բարեգուշակ շրջանին մէջ՝ ահա սկիզբն առնում անդրանիկ շրջաբերականովս խօսիլ ընդ ձեզ. Ժողովո՛ւրդ Հայոց, և նախնի տրտմախառն ուրախութեամբ շնորհաւորել քու հինաւուրց ծերութիւն, որ Հայկայ նահապետին չորս հազար տարուան հաստատմատ շառաւիղն ես այսօր աշխարհիս վրայ, թէպէտ շատ փառաւոր ոստերդ քանցուեցան, դու շատ կանաչ ճիւղեր ունիս և պիտի ապրիս յաւիտեան արևու տակ. Այլ ես մի երկնչիր վերահաս չարիքներէն, դուն փրկուած ես, որ թէև անցելոյն փառքով անմխիթար կը մորմոքիս, ներկային մէջ յամենուստեք պաշարուած ես, այլ ապագային յուսով զօրացիր և ներկայ կեանքիդ հաշիւը ուղղէ. Զի ով որ արևուն տակ կ'ապրի, նորա լոյս կը վայելէ և նորա լուսով կը գործէ՝ հաշիւ ունի տալու».

Աւետարանական բարձր ու վսեմ սիրոյ, բարոյական և կրօնական գեղահիւս խրատներ և յորդորներ տալէ յետոյ, Պատրիարք Խրիմեանը Հայ ժողովուրդին կը թելադրէ, որ ազգային, ընկերա-

կան և ընտանեկան երկպառակութիւնները, տգիտութիւն, անմիաբանութիւն, մատնութիւն և ամէն տեսակ յոռի բաբեռը ոտնահարէ, ոչնչացնէ և ջանայ իւրացնել եղբայրսիրութեան, միաբանութեան, բարոյականութեան, քաղաքակրթութեան և լուսաւորութեան, գեղեցիկ և վսեմ գաղափարները.

«Ժողովո՛ւրդ Հայոց, շուրջդ նայէ. ազգերն ամէն առողջացած անդամալոյծ վիճակէն՝ դէպի նոր կեանք կը վազեն. ...Այո՛, չկայ աֆսարհիս վրայ ոչ ոք fեզ օգնական, ըզդուճայն յուսով մի՛ սպասեր, դու իճfճ ես fո օգնական, ջանf առա, cարժի՛r...»:

Եւ այս տողերն արձանագրողը պաշտօնական գահին վրայ նստած Պատրիարքն էր—Անդրանիկ Հայ Ցեղափոխական Խրիմեան Հայրիկը, որ վերոյիշեալ խօսքերով Հայութեան հրաւէր կը կարդար ոտքի ելնել, իճfճապաcցպանութեան դիմել, ստեղծել նոր կեանք մը, որ պիտի կոչուէր Հայ Ազատագրական եւ Ցեղափոխական Շարժումներ:

Ապա Խրիմեան Պատրիարքը Հայ հոգևորականութեան դառնալով հետևեալ յորդորները կուտայ.

«Այլ դուք լծակից՝ եղբարք իմ, շարժեցէք եփրատայ յորդ աւազան. թող կրկին մկրտուի ժողովուրդ ուսման և դաստիարակութեան ջրով... ոգևորեցէ՛ք այդ լքեալ ժողովրդոց սիրտ, որ լի է տրտմութեամբ, յոյս տուք քաջալերեցէ՛ք: Բացէք Սաղմոս, տուէ՛ք ժողովրդոց ձեռք, թող աղօթեն Դաւիթ բերնով „Մինչ յերբև մեղաւորք, Տէր, մինչև յերբ մեղաւորք պարծեսցին: Ջժողովուրդ քո Տէր, խոնարհ արարին և զժառանգութիւն քո չարչարեցին: Զայրին և զպանդուխտն սպանին, զորբս կոտորեցին“: ...Երեմիային ողբով պատասխնք՝ „Ցիշեա Տէր, որ ինչ անցք անցին ընդ մեզ, նայեաց և տես զնախատինս մեր, ժառանգութիւն մեր դարձաւ յօտարութիւն և հայրենի բնակութիւն մեր ի դառն նժդեհութիւն, աղբատացաք, կարօտացաք Տէր, զկուր մեր գնոյ արբաք, և հաց մեր դառնութեամբ ճաշակեցինք, հալածական եղեաք և յամեն ուրեք թափառեցաք և ոչ գտաք հանգիստ: Լքան ուրախութենէ սիրտք մեր և դարձան ի սուգ օրհնութիւնք պարուց մերոց“:

Պատրիարքի պաշտօնական վերարկուին տակ իր թևերը ծալած Վասպուրականի ազատատենչ Արծիւը Սուլթանի պալատի և

Բ. Դրան դահլիճներուն մէջն էր, որ կը հնչեցնէր այս խօսքերը, որոնք թէև Դաւիթ և Երեմիա մարգարէներու բերնով ըսուած էին, սակայն Երիմեանը Հայութեան տառապանքն ու վրէժը այդ խօսքերով կ'արտայայտէր։

«...Մ լծակից եղբայրք իմ— կը շարունակէ Երիմեանը —յոյս տուք, զօրացուցէք լքեալ ձեռքեր, կքուցեալ ծունկեր, թող համբերեն իսպառ, իսպառն մօտալուտ է, աղէտները վախճան ունին, Հայք պիտի ապրին.... Քարոզեցէք մի միայն բան այլև հաց. յուշ բերէք՝ գթած Քիսուս Նօթի ժողովրդոց հաց ալ բաշխեց, հոգւոյ կեանքին հետ, աշխատեցէք մարմնոյն կեանքն ալ բարւոքել։ Ցնտեսութիւն քարոզեցէք, զգուշացուցէք ժողովուրդ զեխ և շռայլ կեանքէն, քարոզեցէք քաղաքացւոց որ արհեստ սորվին, ընկերութիւնները կազմեն, շահավաճառութեան հետևին. քարոզեցէք հայրենի հող սիրեն, ամոլ՝ եղներ սիրեն, մաճ սիրեն, քլտինք շահաբեր հողի վրայ թափեն, չարաչար պանդուխտութեան չդիմեն. Քարոզեցէք առ հասարակ Ծկեղեցին սիրեն, գպրոց սիրեն, լոյս սիրեն, դաստիարակութիւն սիրեն, Ազգ սիրեն, Հայրենիք սիրեն. ...Այս է քո փրկութիւն և կեանք, ժողովուրդ Հայոց, յանձն առնեմ զքեզ Տեառն, Նա հովուեսցէ զքեզ, և քեզ ինչ ոչ պակասեսցի»։

Հայրիկի եղբօր որդին Խորէն Երիմեանը 1871-ին կ'ուղևորուի դէպի Գերմանիա (Լայպցիկ) բարձրագոյն ուսում ստանալու համար։ Հայրիկ իրրև յորդոր և քաջալերանք հետևեալ նամակը*) կը գրէ Խորէնին.

*Պանդուխտ Որդեակ իմ.*

*Երկու նամակներդ ստացայ. մէկն ի Գառագեղէն գրուած, միւսն ի Վառնայէն: Առաջնոյն մէջ ձեր արկածից պատկեր նկարած էք, թէ որչա՜փ ալեկոծուեր էք Սեւ ծովուն խեղ ալիքներուն ձեռքէն։ Ո՜հ որդեակ անըմբռներելի շղթաներու վրայ ընկած, ոչ ոք էր որ զքեզ խնամելով ի դիւր ածէր. այդ շղթաներ թող յո՛ւշ բերեն քեզ թէ քանի՜ անգամ այդպիսի կարծրագոյն շղթաներու պատահած է խե՜ղճ Հայրիկ։ Մինչ տղայ*

*) Այս անտիպ նամակի պատճէնն ինձ ղրկած է հանգուցեալ Խորէնի ամուսինն, տիկին Իսկուհի Երիմեանը։

էիր, ի վարագ սեր ու մածուն կուտէիր, ինչ դիւրութեամբ կասէիր, Հայրիկ զնաց, Հայրիկ եկաւ: Մի վհատիր որդեակ, առաքինութեան ճանապարհն այդպէս շղթայակուռ է, այդ շղթաները որ առաջին անգամ դէմդ ելան քեզ համար խորհրդաւոր նշանակութիւն ունին, դո՛ւ որ հանդերձեալ ես Հայրենեաց սիրոյն համար պատրաստուիլ:

Մեր հայրենեաց տգիտութեան շղթաները Ձեզ նման ուսանողաց ձեռքով պիտի խորտակուին: Օ՜ն, ուրեմն, արիացի՛ր, յուսա՛, հաւատա՛ եւ աշխատիր:

Այժմ ողջամբ հասեալ կաս ի Գերմանիա, շրջահայեաց եղի՛ր, արեւելք եւ արեւմուտք բաղդատէ՛, խաւար եւ լոյս, աշխատութիւն եւ ծուլութիւն կշռէ, ամէն բան ինչ որ կը տեսնաս մտքիդ չափէն անցուր, տե՛ս գիտութեամբ կատարելագործուած մարդիկ մինչեւ ուր յառաջդիմած են եւ տգիտութիւն ո՜ւր է մնացեր:

Կը պահանջեմ քենէ որ վառնայէն մինչեւ ի Գերմանիա ճամբորդութեանդ ամբողջ դիպուածները գրես, նաեւ քաղաքաց պերճութիւնները: Մինչեւ ի Գերմանիա—Լէյպցիկ ճանապարհի ծախուց ցուցակն եւս խրկիր, որ խիստ կարեւոր է:

1871 Հոկտ. 22 Ճաշողութեանդ աղօթանուէր՝ Հայրիկ Ղալաթիա (Կ. Պոլիս)

Կ. Պոլսոյ մէջ (Իւսկիւտար) 1873-ի Յունուար 21-ի գիշերը կը մեռնի արեւմտահայ եպիսկոպոսարդ (31 տարեկան) բանաստեղծ Պետրոս Դուրեանը*):

«Եպիսկոպոսարդութիւնը, մանաւանդ այս ընթերցասիրաց ընկերութիւնը, կ՛ուզէ որ նուագածութեամբ վերցուի մեռելը: Իւսկիւտարի եկեղեցիին պաշտօնեաները չեն թոյլատրեր հայկական եկեղեցիին ոգւոյն հակառակ նկատելով նուագարանով յուղարկաւորութիւնը: Տաներէցն իսկ, Տ. Գրիգոր քահանան, կ՛ընդդիմանայ. Եպիսկոպոսարդները չեն համոզուիր, հանդէսը կ՛ուշացնեն, և անոնցմէ

*) Պետրոսի փոքր եղբայրն է Եղիազ Արքեպիսկոպոս Դուրեանը, երեսփոխանն Հայոց Ս. Յակոբեանց Առաքելական Աթոռոյ արդի բանաստեղծ-բանասէրը և գիտնական-գրագէտ Պատրիարքը:

մէկը, Աւետիս Գօհանեան, Դուրեանն ամենէն աւելի սիրողներէն մէկը, կ'երթայ իսկոյն Պոլիս Պատրիարքէն հրաման առնելու. Բայց Խրիմեան Հայրիկը Պատրիարքարան չէ. Գօհանեան պատրիարքական տեղապահ Արիստակէս սրբազանին կը դիմէ և անկից արտօնութիւն կը խնդրէ. ան ալ կը վախնայ ինքն իր գլխու որոշում տալ և պատրիարքին կը դրկէ. Գօհանեան կ'երթայ և կը գտնէ Պատրիարքը Օրթաքէօյ կիւմուշճի Գասպար աղային տունը, ուր հարսանիքի հանդէս մը կը կատարուի. կը մօտենայ Խրիմեանին և խնդիրքը կը ներկայացնէ. Խրիմեան, որ հօր մը խանդաղատանքն ունէր Դուրեանին համար, չափազանց կը յուզուի անոր մահը իմանալով. յետոյ, իրեն եղած խնդիրքին հետևեալ սիրուն պատասխանը կուտայ. „Հրաման չեմ տար, բայց կը ներեմ" *):

Խաչիկ Խան Սարաճեանը կը պատմէր, որ «երիտասարդ բանաստեղծին մահը խոր վիշտ պատճառած էր Խրիմեանին, որ Դուրեանի թաղումէն շաբաթ մը յետոյ, երեմիա նպիս. Տէվկանցի հետ, անպաշտօն կերպով կ'երթայ Իւսկիւտար և Պաղլարպաշիի գերեզմանոցին պատին տակ թաղուած դժբախտ բանաստեղծի գերեզմանը կ'օրհնէ, «Հոգւոց» կ'ըսէ և կուլայ».

Բանաստեղծ Հայրիկը կ'ողբար մահը իւր բանաստեղծ զաւակին, որուն հիւանդ մարմինը կը ծրարէր ջերմ հոգի մը և հայրենիքի համար թրթռացող սիրտ մը.

«Ինչ, Հայաստան, քեզ մոռնալ,
Երբէք, այլև սև նոճի մ'ըլլալ քեզ շուք տալ...».

Հայաստանին սիրահար բանաստեղծի հանգած սիրտն ու յիշատակը օրհնելէ յետոյ Խրիմեանը կը հեռանար.

«Այդ օրերուն — կը շարունակէ Խաչիկ Խանը — մեր տուն հաւաքուած էին հօրս ծանօթներն ու ընկերները և ազգային հարցերու շուրջ կը խօսէին. Ղալաթիոյ Օճախի անդամներէն մէկը քննադատութեան ենթարկեց Պատրիարք Խրիմեանի պարզութիւնն ու անսահման մատչելիութիւնը յարելով — „Ախպար, Պատրիարքի մը

*) Արշակ Չօպանեան — «Պետրոս Դուրեան». — Կենսագրական և քննադատական ուսումնասիրութիւն. Հրատարակութիւն Թիֆլիսի Հայոց Հրատ. Ընկերութեան. Թիֆլիս. 1894. էջ՝ 111—112։

կը վայելէ մէն մենակ երթալ Պաղտրպաշի և օրհնել աղբատ տղու մը—Պետրոս Դուրեանի—գերեզմանը, ասի ըլլալիք, տեսնուածն բան է"։ Այս խօսքերը այնքան խոցեցին սիրտս, որ յանկարծ մեջտեղ ընկայ և ըսի—„Պատրիարք Սրբազանը յանցանք գործեց, չէ որ ինքն ալ բանաստեղծ է, անկա կը սիրէ գրչի մարդոց արժանիքները։ Հայրս մէջտեղն ընկաւ, սաստեց ինձ, ես լռեցի»։

Ու յիրաւի, Պատրիարքարանի պաշտօնական զբաղումներէն յետոյ, Խրիմեանը կը մտնէր ժողովուրդի մէջ։ Ամիրաներու, հարուստներու, էֆէնտիներու տուներէն սկսեալ մինչև ժողովուրդի խոնարհ դասերու՝ արհեստաւորներու, պանդուխտներու, բեռնակիրներու խրճիթներն ու նկուղները կ'երթար, կ'այցելէր և ամենուրեք չերմ ընդունելութեան կ'արժանանար։ Այսպէս էր նա. ժողովրդական ու ժողովրդասէր, ժողովուրդն էր անոր ոգևորութեան և ուրախութեան վշտի և տառապանքի հարազատ միջավայրը. ուր կը մտնէր ու կը մխիթարուէր։

Մկրտութիւն, նշանդրէք, հարսանիք, տօնախմբութիւն, հրաւէր, խնջոյք, յուզարկաւորութիւն, թաղում, հանդէս և նման բոլոր ժողովրդական կամ ընտանեկան հաւաքոյթներուն անպայման ներկայ պիտի ըլլար Խրիմեանը, որուն խօսքերն ու ճառերը, յորդորներն ու խրատները խոր տպաւորութիւն և գոհունակութիւն կը պատուհէին ներկաներուն։

—Սրբազան Հայրիկ—կը դիմէ Խրիմեանին պոլսահայ երիտասարդ մը—ես շատ կը սիրեմ Հայաստան, կ'ուզեմ երթալ ու տեսնել, բայց կ'ըսեն որ հոն ճամբաները շատ կան։

—Է՛յ... տղաս, Հայաստան սիրող անոր ճամբաները ալ պիտի սիրէ, կը յարէ Հայրիկը, կուշտ ու կուռ խնդունք պաճառելով ներկաներուն։

Հարանեկան խնջոյքի մը ժամանակ ճառախօսները կը խմեն Հայաստանի և գաւառաբնակ Հայութեան կենաց։ Ճառախօս մը փքուն և ուռուցիկ խօսքերով Հայաստանի և հոն ապրող ժողովուրդին գովքը կ'ընէ։

Հայրիկը վշտացած կը պատասխանէ.

—Մայրաքաղաքացիքդ երբ գաւառներէն եկած պանդուխտներ, մշակներ և խեղճ մարդիկ տեսնէք ձեր դուռներուն առջև կամ բակերուն մէջ, անոնց «խըմպել», «կուռօ» և այլ նախատական որակումներ կուտաք, մինչև անգամ դուք անոնց տեսքէն և անուններէն

կը խորշիք, բայց երբ ճոխ սեղանները կը շրջապատէք և օրհնեալ Բագոան ու գինին կը պաշտէք, Հայաստանի և գաւառի Հայութեան մասին ովսաննա գովքեր կը հիւսէք, առանց գիտնալու, որ ի Գոլիս թափուած, ձեզմէ «խըմպըլ» և «կուռօ» կոչուած գաւառացիները բոլորն ալ Հայաստանէն եկած են։ Ասի քնաւ աղէկ բան չէ և որպէս զի այս տպաւորութիւնն անցնի բոլորդ միասին երգեցէք «Եղբայր եմ մեմ»։

Բուռն ծափերէն յետոյ հանդիսականները կ'երգեն անմահն Մ. Գէշկէթաշլեանի «Եղբայր եմ մեմ» երգը։

«...Ձունին ձայն մի այնքան սիրուն
Ման գանձկալի եղբայրը անուն...»։

Մշոյ Ս. Կարապետի վանքի միաբան և Հայրիկի հակառակորդ Գրգաթոռ վարդապետը պաշտօնական գործով մը Գ. Գոլիս կուգայ և կը ներկայանայ Իրիմեան Պատրիարքին։ Ասոնք Պատրիարքարանի ընդունարանին մէջ խօսակցութեամբ զբաղուած էին, երբ դուռը կը բացուի և ցնցոտիապատ, թշուառ քահանայ մը ներս մտնելով կը մօտենայ ու կը համբուրէ Հայրիկի ձեռքը։

—Ո՞րտեղացի ես Ցէրտէք,—կը հարցնէ Հայրիկը տխրութեամբ։

—Բռնաշէնուցն իմ, Հայրիկ, ծառայ եմ սուրբ կաթղիդ։

—Ի՞նչու եկար Ստամբօլ, ինչ բանի եկած ես։

—Ղուրբանդ եղնիմ Հայրիկ, ճժերսի անօթի են, տկլուզ մացեր են, ընձի կը նեղացուն, ես լէ ըսի էրթամ Ստամբօլ, գարիբութեն էնիմ, բալըք բան մի բռմինք, քիչ մի փարա ժողվինք։

—Քեզի կը դրկեմ եկեղեցիներ կը պատարագես, աչհամբոյր և «ճիշէք» կը ստանաս, դրամ կը հաւաքես ու կը վերադառնաս երկիր ընտանիքիդ մօտ, հոգ ու ջուրիդ կը հսկես, հասկցար։

—Աղէկ կըսիս Հայրիկ ջան, դուրբան եղնիմ սուրբ կաթղիդ, հրմա քմալ էնիմ... հէյրան, ես պատարագ էնիլ չը գինամ,

—Ի՞նչպէս—կը զարմանայ Հայրիկը—դուն քահանայ ես, պատարագ ընել չես գիտեր։ Ապա քեզ ո՛վ ձեռնադրեց։

Քահանան մատնանշելով հոն նստած իւր ծանօթ և հայրենակից վարդապետը կը պատասխանէ.

—Հա իդա Գրգաթոռ ընձի տարաւ Ցիարբաքըրու Հրաշագործ

Մկրտիչ Եպիսկոպոսի*) մօտ էրէց էնեցին։ Հայրիկ ջան, Աստուած լէ շհատ ա որ ես հուդա մեղք չ'ունիմ։

Գրգաթոռ Վարդապետը զայրացած կը պոռայ.

— Ըծօ էրէց, քըզի էրէց էնեցինք, որ Խութ, Սասուն, Բռնաշէն օլըտիս, պատառ մի հաց, փշուր մի ժաժիկ, թացան քոմիս, զքու ճժերու հետ ուտիս։ Անօրա, քըզի վրվ ըսաց իպալ հուդա, զՀայրիկ տեսնել, որ ըռապիլ-ըռսվայ եղնիր՝ ես լէ քըզի հետ. Գնա կորի Ստամբօլուց թէ չէ, վալլա, քըզի կը թալիմ ի ծով։

— Է՛յ... Վարդապե՛տ, Վարդապե՛տ... կը սաստէ Հայրիկը։

Քահանան լուռ և գլխահակ կը կենայ, Հայրիկը վեր կ'ելլէ դրամ կուտայ անոր և ապա իւր ննջաբանը մտնելով վերարկու մը կը բերէ և կ'ըսէ.

— Է՛հ, զաւակս, առ այս վերարկուն ու գնա, Գոլիս չը մնաս, ուղիղ երկիր գնա, շոգենաւին տոմսակն ալ ես կ'առնեմ։

Քահանան օրհնաւէտիւնը շրթունքին կը հեռանայ և վերարկուն հագնելով երբ Պատրիարքարանի դուռնէն դուրս կուգայ, Երեմիա Եպիս. Տէվկանց դէմը կ'ելլէ.

— Ծօ տէրտէր, աս իմ վերարկուն ով տուաւ քեզի։

— Հայրիկ, Հայրիկ էտու, կ'ըսէ քահանան ու կը հեռանայ։

Երեմիա Եպիս.ը գլուխը շարժելով երբ կը մտնէ Հայրիկի ընդունարանը, նա ժպտալով կ'ըսէ.

— Է՛հ, սրբազան եղբայր, քեզի ըսի որ վերարկուդ հոս չը թողուս, փորձանք կուգայ գլխուն, է՛... շատ մի մտածեր, իմ պատրիարքական վերարկուս ալ քեզի կը հագցնեմ և այդպիսով մեր հաշիւը կը վերջանայ։

Երեմիան Հայրիկը իբրև Պատրիարք՝ Ազգային սնտուկէն կոկիկ գումար մը ռոճիկ կը ստանար, սակայն անոր գրպանը միշտ «ծակ» էր և շատ անգամ կը պատահէր. որ Հայոց Պատրիարքը իւր անձնական ծախքերու համար դրամի պէտք կը զգար։ Իւր ստացած ռոճիկները կը բաժնէր աղքատներուն և մանաւանդ Կ. Գոլսէն երկիր մեկնող գաւառացի պանդուխտներուն։

---

*) Տիգրանակերտի Հայոց Առաջնորդը, որ անմահ Յակոբ Պարոնեանի «Ազգային Ջոջեր»ու դէմքերէն մէկն է։

կը պատմեն, որ օր մը Խրիմեանը Ղալաթիոյ կամուրջին մօտ կանգնած կը ծխէր և աչքերը հեռուն տնկած կարծես մէկու մը կը սպասէր, երբ Գրիգոր Օտեանը կը մօտենայ ու կը հարցնէ.

—Սրբազան Հայրիկ, ինչու կեցեր էք հոս.

—Կամուրջէն անցնելու համար 10 փարայ չը կայ քովս, ծանօթ մէկու մը կը սպասէի և աղէկ եղաւ, որ դուն եկար, էհ վճարեցէք կամուրջի դրամը և միասին երթանք.

Բնական է, որ ազգային և պաշտօնական մարմինները Պատրիարքի այս դէրվիջաւարի ընթացքը բննադատութեան կ'ենթարկէին և անվերջ կը կրկնէին թէ—«Սրբազան Պատրիարքնիս դիւանագէտ մէկը չէ, իւր դիրքին ու կոչման հակառակ բաներ կ'ընէ». Պատմական իրողութիւն է, որ Խրիմեանը, ունէ ատեն, իւր պաշտօնական բարձր կոչումները ու դիրքը կրցած չէ օգտագործել իւր անուան և փառքի համար. Ընդհակառակն երբ պաշտօնական ծիրանին քաշեր են անոր ուսերուն վրայ, նա միշտ խուսափեր է և բնական ու անկեղծ ցանկութեամբ մը իջեր է ժողովուրդի մէջ, ապրեր է ժողովուրդի հետ իբրև Հայրիկ.

Իւր ամսականները, ստացած «Բիշէք»ներ և աջահամբոյրները նա բնաւ իւր անձնական կարիքներուն գործածած չէ, այլ առատ և անհաշիւ կերպով բաժներ է աղքատներուն և պանդուխտներուն, որոնք ամէն օր և ամէն տեղ անոր ետեւէն կը վազէին.

Օր մը Խորէն Արքեպ. Նար-Բէյն ըսած էր.

—Սրբազան Հայրիկ, օր մ'օրանց չը տեսանք, որ քանի մ'ոսկի պատրաստ դրամ ունենայիր գրպանդ.

—Էհ, Խորէն Սրբազան, դուն չես գիտեր, որ Պոլսոյ մէջ երեք մարդիկ կան, որոց գրպանները միշտ «ծակ» են - Սուլթան Ազիզ, Խրիմեան Հայրիկ և Գրիգոր Օտեան:

Այդ վայրկեանին գաւառացի պանդուխտ մը կը մօտենայ Խրիմեանին և երկիր երթալու համար ճամբու ծախք կը խնդրէ.

—Հա, Խորէն Սրբազան, «եղնցի ըստ բանի քում», երկու ոսկի պարտք տուր ինձի այս պանդուխտը ճամբենք երկիր.

Մինչև անգամ, վանէն և Ցարօնէն, Հայրիկը յաճախ նամակներ կը ստանար այս ու այն աղքատ ընտանիքէն կամ թշուառ ու

որբևայրի կիներէն, որոնք դրամ կը խնդրէին. եւ Խրիմեանը, բոլորին ալ անխտիր օգնութեան կը հասնէր իւր անձնական կամ ազգային դրամներէն համեստ գումարները դրկելով.

Նա անսահման գութի և խղճմտանքի մարմնացում կը դառնար այն բոպէներուն, երբ տեսնէր, որ մարդիկ դրամի և նիւթականի համար ընկճուած կամ թշուառութեան մատնուած են. Հայրիկի զգայուն սիրտն ու հոգին կ'ալեկոծուէր. Այն ատեն նա իւր ձեռքի տակ գտնուած դրամը—անձնական կամ ազգային—կը յատկացնէր անմիջական պահանջներուն, առանց հաշուի առնելու թէ այսինչ գումարը այս կամ այն նպատակի համար պահուած է. Այս իրողութեան իբր փաստ յիշենք Աւազաղբիւրի պատմութիւնը.

Խրիմեանը, Կ. Պոլսոյ մէջ, տուներն ու վաճառատուները շրջելով, կրցած էր 450 օսմ. ոսկի գումար մը հանգանակել, Մշոյ Աւազաղբիւր գիւղի հարստահարուած և խեղճ գիւղացիներուն համար.

Այդ օրերուն Կում-Կափուի (Կ. Պոլիս) հայոց թաղին մէջ մեծ հրդեհ մը յառաջանալով՝ հարիւրաւոր տուներ մոխրակոյտի վերածուեցան և բազմաթիւ ընտանիքներ թշուառութեան մատնուեցան.

Ահագին խումբ մը հրկիզեալներ կը մտնեն Պատրիարքարանը և կը ներկայանան Հայրիկին, որ տխուր ժպիտով մը կ'ըսէ.

—Ջաւակներս, եթէ դուք իբրև պատգամաւորներ եկած էք, շատ էք. գիտե՛մ, դրամ ուզելու համար եկած էք, անհոգ եղէք, բան մը կ'ընենք.

Հայրիկը կանչել կուտայ Պատրիարքարանի եկեղեցւոյ տեսուչ Մխիթար Զօպանեանը և կը հարցնէ.

—Մխիթար էֆէնտի, որչափ պատրաստ դրամ ունինք ոչ թէ քիչ՝ այլ շատ.

—Սրբազան Հայր, միայն Աւազաղբիւրին դրամը պատրաստ է.

—Է՛հ, առայժմ սա մեր աչքին առջև բալձրացող մոխրակոյտերը մաքրենք և յետոյ Աւազաղբիւրի մասին կը մտածենք. կ'ըսէ Հայրիկը և հանգանակուած 450 ոսկին իբր նպաստ կը բաշխէ հրկիզեալներուն.

Հայրիկի այս ընթացքը, Ազգային Ժողովի և մամուլի պահպանողական ներկայացուցիչներու կողմէ, երկար ատեն քաշքշուրնե-

րու և քննադատութեանց առիթ տուաւ, սակայն նա այդ ձանձրալի խօսքերուն և բանաւոր ու գրաւոր յարձակումներուն այս սրամիտ պատասխանը տուած էր.

— Ծո՛ ախպար, Կում-Կամփուի հրդեհն Աւազաղբիւրի դրամով մարեցնել տուինք, բայց սա քննադատութեանց հրդեհը մարեցնելու համար Աւազաղբիւրի ջուրերն ալ դեռ քիչ են։

Խրիմեան Հայրիկը պատրիարքական գահին վրայ բազմելէ յետոյ ալ գաւառաբնակ Հայութեան կրթական կեանքը իւր գուրգուրանքին առարկայ դարձուց։ Հարստահարստութեանց և քաղաքական հարցերու հետ Խրիմեանը միշտ կը յուզէր նաև գաւառացի Հայ մանուկներու դաստիարակութեան հարցը։ Նա յամառ կերպով կը պնդէր, որ գաւառներու մէջ, կրթական գործը լուսամիտ և բարեխիղճ մարդոց պէտք է յանձնուի և տարրական ուսումը պարտադիր դարձնելու մասին անգամ առաջարկներ կը բերէր և կ'եզրակացնէր։

«Մեր ժողովուրդը մտաւորապէս պիտի դաստիարակուի, որ քաղաքական ինքնուրոյն կեանքի համար աշխատելու ընդունակ դառնայ։ Ցգիտութեան և մտքի խաւարին մէջ ծնուած Ազատութիւնը խեղանդամ կ'ըլլայ և շուտով կը մեռնի»։

«Տարրական ուսումէն զատ—կը պնդէր Խրիմեանը—պէտք է միջնակարգ և բարձրագոյն կրթութեանց մասին ալ հոգ տանենք և գաւառներէն ուսանողներ դրկենք Եւրոպա։ Այլ և իգական սեռի կրթութեան նախանձախնդիր պիտի ըլլանք և գաւառներու մէջ աղջկանց յատուկ դպրոցներ հիմնենք, վասնզի գիտակից և կրթուած մայրերու զաւակները շատ աւելի կրնան իրենց Ազգին և հայրենիքին օգտակար ծառայութիւններ մատուցել»։

Խրիմեանը իւր եղբօր որդի Խորէնին գրած նամակներուն մէջ արդէն ցոյց կուտայ թէ որքան կենսական պահանջ են արևմտեան քաղաքակրթութիւնն ու գիտութիւնը։ Աբևելքը Խրիմեանի աչքին «Մութ աշխարհ» մըն է իսկ արևմուտքը՝ «Լուսոյ և գիտութեան աշխարհ», ուր ուսանելու գացած իւր եղբօր որդի Խորէնին, Հայրիկը հետևեալ նամակը*) կը գրէր.

---

*) Այս անտիպ նամակի պատճէնն ինձ ղրկած է հանգուցեալ Խորէնի սուսին, տիկին Խաչուհի Խրիմեանը։

*Սիրելի Թորէն.*

*Մ'ուր աշխարհէն ելար մտար լուսոյ եւ գիտութեան աշխարհ. հիացումն զքեզ պատեր է. տարօրինակ աշխարհ եւ մարդիկ կ'երեւին աչքիդ, արդեօ՞ք, դոքա՛ եւս աղամորդիներ են։ Այո՛, այո՛, Հայաստանի դրախտի զաղթականներն են դոքա։ Արեւելից դրախտ աւերակ դարձաւ, Աղամայ այդ աշխոյժ որդիքը նոր եւս զերազոյն դրախտ յԱրեւմուտս տնկեցին։ Այժմ, դո՛ւ, որդեակ իմ, մուտ առիր այդ դրախտը, զգո՛յշ լե՛ր չուտել ի ծառոյն որ մահաւոր է, այլ կե՛ր յաւէտ ինչ որ կեանք կուտայ քեզ եւ Հայրենեացդ։*

*Զգէ՛ մտքիդ ուղղան Գերմանիոյ գիտութեան ծով, նի՛ստ եւ հոգա՛, զբարին ամբարէ մտքիդ շտեմարան եւ խոտան ի բաց տար ի քէն։*

*Ղ. Պոլիս. 1872* *Քեզ անձկաւէտ՝ Հայրիկ*

## Ե.

## ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ ՎԵՐԱՔՆՆՈՒԹԻՒՆԸ

Ազգային Սահմանադրութեան հռչակումէն յետոյ (*1860 Մայիս 24*), Խրիմեանը «Արծուի Վասպուրականի»ի մէջ (*1860*) կը գրէր.

«Սահմանադրութիւնը իբրեւ ամուր պարիսպ մը ազգը և Հայրենիք կը շրջապատէ ու ամէն կերպ [կը պաշտպանէ դաւանամուտ գողերէն»։

«Ահա Սահմանադրութեան տախտակները պատրաստ, այլ Մովսէս պէտք է որ զանոնք Պոլսոյ կեդրոնական լեռնէն իջուցանէ Հայաստանի գաւառները...»։

Ազգային Սահմանադրութիւնը հռչակուելէ յետոյ կը գործադրըուէր միայն Կ. Պոլսոյ մէջ, իսկ անդին, Մայր Երկրի հոծ Հայութիւնը զրկուած էր այդ ժողովրդական ներքին ինքնավարութեան բարիքներէն։

Խրիմեանը՝ դեռ վարդապետ, երբ կը գործէր Վասպուրականի և Տարօնի մէջ, կը պահանջէր, որ Պատրիարքարանն ու Ազգային Ժողովը Սահմանադրութեան գործադրութիւնը փութացնեն նաև

գաւառներուն մէջ։ Սահմանադրութեան հրահանգները՝ «տախտակները պատրաստ» էին, սակայն Հայ Մովսէս մը պէտք էր, որ զանոնք «Պոլսոյ կեդրոնական լեռնէն» իջեցնէր և փոխադրէր Հայաստանի գաւառները։

Պատրիարքարանն ու Ազգային ժողովը միացած կը կազմէին «Պոլսոյ կեդրոնական լեռը» որուն գագաթը կը բարձրանար Խրիմեան Պատրիարքը 1869-ին՝ ջանալով հանդիսանալ Հայ Մովսէսը՝ Սահմանադրութեան օրէնքները գաւառներու մէջ գործադրել տալու համար։

Ազգ. Սահմանադրութեան օրէնքներու մեծ մասը գաւառներու Հայութեան ազգային շահերուն և պահանջներուն անյարմար էին։ Սահմանադրութենէն շատ լայն չափով կ'օգտուէր մայրաքաղաքի Հայութիւնը։ Բաւական է յիշել միայն այն փաստը, որ Կ. Պոլսոյ 34 թաղերու և արուարձաններու մօտ 100,000 Հայոց 34 եկեղեցիներու ծխականները Ազգային Ընդհանուր ժողովին 160 երեսփոխան (պատգամաւոր) կուտային, իսկ տմբողջ Մայր Երկրի և արտասահմանի մօտ 2,000,000 Հայութիւնը (50 շրջաններու բաժանուած) իրաւունք ունէր միայն 60 պատգամաւոր տալու։

Գաւառներու Հայութեան աբհամարհուած ձայնի և ոտնահարուած իրաւունքի մասին գաղափար մը կազմելու համար, կը ներկայացնեմ Ազգային ժողովի, երեսփոխաններու թուական համեմատութեան պատկերի մէկ ցայտուն մասը միայն.

| ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՕ Թաղեր եւ Արուարձաններ | երես-փոխաց | ՏԱՃԿԱՀԱՅԱՍՏԱՆ Նոհանգիստներ | երես-փոխաց |
|---|---|---|---|
| Կում-Կափու . . . | 24 | Վան . . . . . | 3 |
| Սամաթիա . . . | 15 | Կարին . . . . . | 2 |
| Գալաթ . . . . . | 15 | Բաղէշ . . . . . | 1 |
| Խասգիւղ . . . . | 15 | Մուշ . . . . . | 2 |
| Բեյա և Ղալաթիա | 17 | Տիգրանակերտ . . | 1 |
| Գէշիկթաշ . . . . | 10 | Խարբերդ . . . . | 3 |
| Օրթագիւղ . . . . | 14 | Սեբաստիա . . . | 2 |
| Իւսկիւտար և Ալէմտաղ | 19 | Գելիկիա . . . . . | 6 |
| Գումար՝ | 129 | Գումար՝ | 20 |

Այս համեմատական պատկերը ցոյց կուտայ մայրաքաղաքի Հայութեան և Ազգային Ժողովի արհամարհական ու տգեղ վերաբերմունքը ամբողջ Մայր Երկրի Հայութեան հանդէպ։

Գղերական, ամիրայական, աղայական և էֆէնտիական կամայականութեանց առջև ջարդ ու փշուր կ'ըլլար գաւառաբնակ Հայութեան իրաւունքը և կը խեղդուէր անոր ձայնը։ Դեռ աւելին. Ազգային Ժողովի մէջ այնպիսի հոգեբանութիւն և գոյավիճակ մը ստեղծուած էր, որ Մայր Երկրի Հայութիւնը իւր ծոցին մէջ ծնած ու անած և իւր անմիջական ձայնով ընտրուած երեսփոխան-պատգամաւորներ չ'ունէր հոն, ուր գաւառներու անունով կը ճառէին ու կը խօսէին Կ. Պոլսեցի աղաներն ու էֆէնտիները, որոնց մէջ, հարկաւ յարգելի բացառութիւններ կը կազմէին Դր. Օտեաններն ու Ստ. Փափազեանները։

Ցիրաւի Ազգային Ժողովը աւելի շատ մայրաքաղաքի հարցերով կը զբաղուէր քան թէ գաւառներու Հայութեան վիճակով։

Այս երևոյթի առջևն էր ահա, որ կը ծառանար Խրիմեան Հայրիկը և իր Պատրիարքութեան առաջի օրերէն իսկ կը պահանջէր, որ Սահմանադրութիւնը վերաքննութեան ենթարկուի։

«Սահմանադրութիւնը Ազգին օրէնքն է և ոչ թէ պոլսահայուն» կը բացականչէր Խրիմեանը։ Նա անհանդուրժելի կը գտնէր այն տխուր երևոյթը, որ Ազգային Ժողովը յաճախ կ'անտեսէր գաւառական կարևոր և անյետաձգելի հարցերն ու կը զբաղուէր պոլսեցոց տիրացուական կամ թաղականական անմիտ վէճերով։

Խրիմեանը կը պահանջէր, որ ընտրուին երկու ժողովներ— «ժողով մի Տեղական գործոց, Ժողով մի Գաւառական մասնաւոր գործոց»։ Սակայն անոր այս առաջարկը երկար վիճաբանութեանց ենթարկուելէ յետոյ անկարևոր և աւելորդ նկատուեցաւ։ Եւ ահա «Ղալաթիոյ Օճախ»ի ղեկավարներն ու պահպանողական, անձնապաշտ էֆէնտիները կը յայտարարեն թէ՝ Խրիմեանը հակասահմանադրական է...։

Պատրիարքը կը պահանջէր, որ Սպգ. Սահմանադրութիւնը վերաքննուի, վասնզի նա գաւառներու Հայութեան ազգային շահերուն գոհացում չի տար։ Իսկ պահպանողականները ու քար ուղեղները կը

պնդէին, որ Սահմանադրութեան վերաքննութիւնը վտանգաւոր ու կործանարար է։

Օրէնքի տառացի գործադրութիւնը կապեր-կաշկանդեր էր Խրիմեանի թևերը—Արծուի սրաթռիչ թևերը։

«Ոտքս ձեռքս կապած է,—կ՚աղաղակէր Խրիմեանը Ազգային ժողովին մէջ—ես չեմ կարող այսպէս գործել. եթէ այս վիճակ շարունակէ՝ ես կը հեռանամ, իմ խիղճ գիս կը տանջէ այս անգործութեան համար»։

Պատրիարքը ուխտած էր «Սահմանադրութիւնը չէ թէ բառ առ բառ գործադրել, այլ անոր ոգւոյն և սկզբանցը հաւատարիմ մնալ» և այսպէս ալ շարունակած էր իւր ընթացքը, բայց Քաղաքական ժողովը Խրիմեանէն կը պահանջէր Սահմանադրութեան տառական ու բառական գործադրութիւնը, ինչ որ կը սահմանափակէր Պատրիարքի քիչ մ՚ազատ գործունէութիւնը. Այս հողին վրայ ահա սուր անհամաձայնութիւն մը կը յառաջանար Պատրիարքի և Քաղաքական ժողովի միջև։

Ազգային ժողովի 1873-ի Փետրուար 16-ի Ե՛ր-դ նիստին մէջ, Խրիմեանը խիստ կերպով կը պահանջէ, որ յանձնաժողով մը կազմուի Սահմանադրութիւնը վերաքննելու համար։

Յաջորդ նիստին (2 Մարտ 1873) գաղտնի քուէարկութեամբ կ՚ընտրուի «Սահմանադրութեան Վերաքննիչ Յանձնաժողով»ը, որուն անդամներէն մէկն ալ Մատթ. Վրդ. Իզմիրլեանն էր։

«Վերաքննիչ Յանձնաժողովը» յատուկ գրութեամբ մը կը դիմէ Խրիմեանին խնդրելով անոր «կարծիքն ու դիտողութիւնները Սահմանդրութեան մէջ պարունակեալ վերաքննելի յօդուածոց վերայ»։

Խրիմեանը 1873-ի Յուլիս 11-ին, «Սահմանադրութեան վերաքննելի յօդուածոց» մասին «Վերաքննիչ Յանձնաժողով»ին կը գրէ ընդարձակ նամակ մը, որմէ կը մէջբերեմ կարևոր մասերը.

«...Ազգային վարչական կազմութիւնը (բաց յ՚Ընդհանուր Ժողովէն) միշտ անբաւական և անձեռնհաս է համայն Թուրքիոյ Հայոց Ազգին խնդիրներն ըստ օրինի և ընթացիկ եղանակաւ լուծելու, թէ՛ օրուան պատահական խնդիրները, թէ՛ ներքին և կենսական գործերը, որք անհատական մասնաւոր անձի մը կամ առանձին գաւառի մը չեն վերաբերիր, այլ բովանդակ ազգին։ Չի ազգին շահ

և յառաջդիմութիւն այս խնդրոց մէջն է։ Այս խնդիրներն իսպառ բարձի թօղի եղած են, միայն բերանով կը խօսուին. լրագիրը կը քարոզեն, բայց առանց արդեանց և առանց ձեռնարկութեան մնացած են մինչև ցայսօր, և սորա ներքին բուն պատճառն է վաչչական ժողովոց սակաւութիւնը և ժամանակի անձկութեան պայմանը։

«...եթէ Սահմանադրութենէն առաջ Հայոց համար տարեկան հազար խնդիր կար, Սահմանադրութենէն յետոյ երկու հազարի հասաւ, զի խիստ բնական է. երբ ժողովուրդը քուէի իրաւունք ստանայ, երբ Ազգին մէջ պարտուց և իրաւանց սկզբունքն օր ըստ օրէ յարգուի, անշուշտ բազմապատիկ խնդիրներ կը ծնանին, և այս խնդիրներն շատ անգամ վէճ և կռիւ, որոյ հետևանքն եղած է միշտ չարաչար զբաղմունք վաչչական ժողովոց։

«...Սահմանադրութիւնն գծողներն, մասնաւոր խնդիրներն՝ ընդհանուր խնդրոց հետ շփոթեր են. զոր օրինակ՝ բուն Մայրաքաղաքիս տեղական գործերը Գաւառային և ընդհանուր խնդրոց հետ խառն են։ Փորձառու ճշմարտութեամբ վերահասու լինելով կը վկայեմ թէ Սահմանադրութեան հաստատած քանի մը անձուկ ժողովները բաւական չեն իսկ ներկայ դրութեամբ Մայրաքաղաքիս մէջ գտնուած բնակչաց գործերը կարգադրել, թող թէ հանուր Գաւառականաց։ Ստուգապէս խօսելով որ Պոլսոյ համարեա թէ, հաքիւր հազար Հայ բնակչաց խնդիրները, կը հաւասարին երկու միլիոն գաւառացի Հայոց խնդիրներուն, կը թողում, չեմ յիշեր թէ ինչպէս շատ անգամ Տեղական խնդիրները նախապատուութեամբ և զօրութեամբ կը նուաճեն Գաւառացւոց խնդիրները։ Այս շփոթութիւնը և այս ընթացքը մեծ և ահագին զրկանքներ պատճառած է երկու մասին։

«...Կամ պէտք է Տեղական կամ Գաւառական խնդիրներն իսպառ իրարմէ անջատել և Պոլիս իբրև կեդրոնական գաւառ մի նկատելով Սահմանադրութեան տրամադրած ժողովներ հաստատել նախագահ պաշտօնէի մը տակ, բուն տեղական գործոց և խնդրոց համար և կամ նոր մի պաշտօնէութիւն մի հաստատել։ Ազգին կենսական և ընդհանուր խնդրոց համար առանձին ժողով մի պէտք է, որ գոնէ շաբաթը մի անգամ իւր նիստերը շարունակելով՝ Ազ-

գային յառաջդիմութեան ճանապարհները հորդէ ու բանայ, որ շատ և ահագին խոչնդոտներ ունի։

«...Ահա, սյս է այժմ մեր ամենակարևոր խնդիրը, զոր այսօր ժողովոյդ ուշադրութեան կը յանձնեմ, և այնչափ վերահաս ծանրացած և անհրաժեշտ խնդիրը մի է Ազգին համար, զոր պէտք է ժամ մի առաջ լուծել, զի Ազգին շահն այս կը սպահանջէ. եթէ տակաւին ազգային վարչական ժողովոց այս ընթացքը շարունակուի, ոչինչ յոյս չկայ Սահմանադրութենէն՝ և հետեապէս մեր յուսացած յառաջդիմութիւնը ձեռք չբերուիը, և տակաւին հեռի կը կը մնայ Հայոց ժողովրդէն։ Ոչ Գաւառացին իւր մեծամեծ խնդրոց լուծումն պիտի տեսնայ և ոչ Մայրաքաղաքացին իւր անուան և տեղոյն պահանջած յառաջդիմութեան նորանոր արգասիք պիտի կարենայ ցոյց տալ աշխարհի առաջ՝ թէ ինքն Եւրոպիոյ Ազգաց դրացի է և իւր պարտքն է քան զամեն գաւառացիս յառաջդիմութեան օրինակ հանդիսանալ. որչափ ցաւալի է թաղական կուիներով զբաղիլ, այդ չնչին խնդիրներով միշտ Պատրիարքարանի ժողովները ճնշել, ոչ ժամ, ոչ ժամանակ թողուլ գաւառական խնդրոց։ Այս ապարդիւն ընթացքը զրկանք է և ոչ պարծանք Մայրաքաղաքացի ազգայնոց, զի ինքն է նախածնող մայր Ազգային Սահմանադրութեան, իւր պարտքն է Գաւառացւոց համար անխնայ զոհել դրամ և ժամանակ, վասնզի համայն Թուրքիոյ գաւառացի հայերէն իրենք են միայն ուսմամբ և հարստութեամբ ձեռնհաս և ազատ այն ամէն հարստահարութեանց աղէտներէն, զորս կը կրեն անճարակ ու խեղճ Գաւառացիք՝ լոյս, բարեկարգութիւն, յառաջդիմութիւն և ազատութիւն միշտ Պոլսոյ կեդրոնէն սպասելով։ Շատ սպասեցին, աչքերնին հալեցաւ, յուսահատութիւնը մօտալուտ է, պիտք է ուշադրութիւն տալ Գաւառական խնդրոց, և սորա միայնակ միջոցն է գործոց և խնդրոց բաշխումն և վարչական մեքենային ամենօրեայ շարժումն»։

«Վերաբննիչ Ծանձնաժողով»ը գործի կը լծուէր իսկ Պատրիարքի և ազգային վարչութեանց մէջ գոյացած անհամաձայնութիւնը երթալով աւելի կը սրուէր, երբ Վանի Հայոց Առաջնորդ տխրահռչակ Գօղոս Վարդ.-ի հարցը եկաւ ու բորբոքեց կիրքերը։

Վասպուրականի Հայութիւնը բուռն կերպով բողոքեց ու պահանջեց Պատրիարքարանէն, որ Պօղոս Վարդապետը պաշտօնանկ ըլլայ և հեռացուի Վանէն, ուր սանձարձակ բռնութիւնները և կամայականութիւնները կը գործադրէր ոտնահարելով ժողովուրդի իրաւունքները։

Խրիմեանն ընդառաջելով ժողովրդական արդար բողոքներուն, առանց Ազգային Վարչութեան գիտութեան, պատրիարքական հրամանով Պօղոս Վարդապետը պաշտօնանկ կը հռչակէ և կ'աքսորէ Բայազիտ, Ս. Յովհաննու (Իշքիլիսէի) վանքը։ Յանցապարտ Պօղոս Վարդապետը խնդրագրով մը Ազգային Վարչութեան կը դիմէ և քննութիւն ու դատ կը պահանջէ։ Ազգային Վարչութիւնը բանաւոր կը գտնէ Պօղոս Վարդապետի խնդիրը և կ'ուզէ դատաստան նշանակել, ինչ որ Պատրիարքի «հեղինակութիւնը և յայտարարութիւնը կասկածի ենթարկել» կը նշանակէր։

Եւ ահա Խրիմեան Հայրիկի հակառակորդները Վանէն մինչև Տարօն, Կարին և Կ.Պոլիս՝ կատաղի պայքար կը մղեն անոր դէմ։

«Ղալաթիոյ Օճախ»ը նորէն գործի վրայ է։ Մատթ. Վրդ. Իզմիրլեան և Ստ. Փափազեանը «կ'աշխատեն խեղդել տարբեր ձայն մը, սիրազեղ բարեկամութեան ձայնը՝ զոր ունեն այնքան անձնուէր հովուի մը ժողովրդեան ճշմարիտ Հայրիկին նկատմամբ» կ'արձանագրէ Իզմիրլեանի կենսագիր Առիւծը («Արաքս». Ս. Պետերբուրգ. 1893. Գիրք Ա. էջ՝ 80)։

«...Քաղաքական ժողովը յամառել էր իր անհաշտ ընդդիմութեան մէջ, հռչակել էր Խրիմեանին „հակասահմանադրական“ և մինչև իսկ փորձեր էր անում գրգռել ժողովրդին Խրիմեանի դէմ։ Պատմութիւնը արտասանել է արդէն իր անողոք դատավճիռը այն կուրացած խմբակին դէմ («Ղալաթիոյ Օճախ») որ ղեկավարում էր այդ տխուր, հակաժողովրդական դաւը և որի անդամներից էր, տարբերախտաբար, Մատթէոս Իզմիրլեան»*)։

Այս իրադարձութեանց լարուած հետաքրքրութեամբ կը հետեւէին գաւառացի պանդուխտները, որոնք 1873 Յուլիս 30-ին ահա-

*) Մկրտիչ Վարանդեան—«Հայկական Շարժման Նախապատմութիւն». Հատոր Երկրորդ. Ժընեվ. 1914. էջ՝ 71։ Հրատ. Հ. Յ. Դ—եան։

գին խումբով մը խուժեցին Պատրիարքարան և յարձակելով Քաղաքական ժողովի անդամներու վրայ, սոսկալի կերպով ծեծի ենթարկեցին զանոնք. Երիմեանը մէջտեղ ընկաւ և հազիւ կրցաւ կատաղած ամբոխը հեռացնել։ Դաւառացիները կը սպառնային ջարդ ու փշուր ընել ամէն անոնց, որոնք «կը համարձակուէին իրենց սիրելի եւ պաշտելի Հայրիկի դէմ դաւեր լարել»։

Այս տխուր դէպքի մասին Երիմեանն այսպէս կ'արտայայտուէր. —«...Օրինաց խստիւ և տառական գործադրութենէն հետևեցան այսքան աղմկայոյզ խռովութիւնք՝ Պոլսոյ Թաղերուն և Դաւառներուն մէջ, թէ՛ ապագային վկայ լինի հազար ութ հարիւր ութսնասուն և երեք Յուլիս 30 Հայոց Պատրիարքարանի դժպատեհ դէպք։ Միթէ կարելի է ընդդէմ գիտակցութեան մեղանչելով այս խօսքերէն թիւր հետևութիւն մի հանել և ասել՝ ուրեմն Պատրիարքն իբրև հսկող օրինաց, իւր պարտիք չճանաչելով՝ Սահմանադրութեան դէմ կը խօսի և նորա տրամադրած օրէնքները ճշտիւ կատարելու փոյթ չունի»։

Կիրքերը սաստիկ լարուած էին. մթնոլորտը խեղդիչ և անշնչելի դարձած էր. Մայրաքաղաքի և գաւառներու ազանները ու էֆէնտիները, պահպանողականներն ու խաւարամիտները մէկ կողմը կեցեր էին, իսկ գաւառաբնակ ամբողջ Հայութիւնը՝ Կ. Պոլսոյ ազատամիտ և հայրենասէր երիտասարդութեան, «էսնաֆ»ներուն և գաւառացի պանդուխտներուն թև ու թիկունք հանդիսանալով՝ մեւս կողմը կեցեր էին։ «Ազգայինճի» ազանները ու էֆէնտիները կը սարսափէին իսկական ազգասէր երիտասարդներէն և գաւառացիներէն։ Հայ թերթերն ալ իրենց կարգին երկու հոսանքի բաժնուած կը յուզէին կիրքերը և կրակի վրայ իւղ կը լեցնէին, իսկ Բ. Դուռը հոգեպէս կը հրճուէր....

Ազգային կեանքը փոթորկուած էր մանաւանդ Կ. Պոլսոյ մէջ։ Օրերը յղի էին ծանր անակնկալներով, երբ Թուրքոյ Հայոց Պատրիարք Երիմեան Հայրիկը ի գիր կ'առնէր իւր «Ներկայ Հրաժարման»*) հռչակապ և սրտայոյզ ճառը։

---

*) «Ներկայ Հրաժարման» Երիմեան Ե. Պատրիարքի Հայոց. Ազգային Ընտրաթղթականական ժողովոյ 64-րդ Պատմական Նիստին մէջ։ Տպարան Նշան Պալիկեան. Կ. Պոլիս. 1910. էջ՝ 24։

## Զ.

## «ԵՐԹԱ՛Ս ԲԱՐԵԱԻ, ԱՐԾՈՒԻ՛...»

Պատրիարք Իրիմեան Հայրիկը կը պատրաստուէր իւր հրաժարականը ներկայացնել Ազգ. Երեսփոխանական ժողովին և Բ. Դրան։

Թէև անոր համակիրներն ու մանաւանդ գաւառացիները շատ կը խնդրեն, որ չը հրաժարուի, բայց վշտահար Հայրիկը կը մերժէ եղած խնդիրները։

Եւ ահա 1873-ի Օգոստոս 3-ին, Կ. Պոլսոյ Մայր Եկեղեցւոյ մէջ, կը գումարուի Ազգային Երեսփոխանական Ընդհանուր ժողովի 64-րդ նիստը, որուն ներկայ էին ոչ միայն ամբողջ պատգամաւորները, այլև պոլսեցի և գաւառացի խուռներամ ժողովուրդ։ Խորհրդաւոր լռութեան մէջ, ամէնքն ալ հոգեկան սրտատրոփ սպասումով մը համակուած են։ Ցարգանքի, յուզումի և թախիծի նշոյլներով պատուած հազարաւոր դէմքեր ու սեւեռուն աչքեր ուղղուած են Պատրիարք Հայրիկին, որ բեմը կը բարձրանայ և յուզուած ու վշտալի ձայնով մը կը կարդայ իւր «Ծoufէ Հրաժարական» պատմական ճառը։

«ԵՐԵՍՓՈԽԱՆՔ ՀԱՑՈՑ!

«Այսօր իմ արձակման օրն է, կ'աղաչեմ, որ թոյլ տաք այս Տաճարին մէջ, Հայոց Երեսփոխանութեան առաջ, մի քանի խօսք խօսիմ. և արձակում խնդրեմ այս Ատենէն, որ 1869 թուին Սեպտեմբեր 4-ին իւր քուէի ազատ ընտրութեամբ զիս կապեց և Տարօնէն վարեց մինչև ցայս վայր։ Նոյն տարւոյ Նոյեմբեր ամսոյ սկիզբը, Պօլսոյ Մայր Եկեղեցւոյ բեմին վրայ մեր Գահակալութեան հանդէսն կատարուեցաւ։ Չգիտեմ, կը յիշէ՞ք, այն իմ Ծաղկազարդի օրը, ես խօսք տուի Ձեզ և ուխտեցի այսպէս. „Երեսփոխանք և Ժողովուրդ Հայոց, դուք զիս բազում դժուարութեամբ յայս գահ բարձրացուցիք“, կ'ուխտեմ ահա յանդիման Ձեր, որ առանց աշխատութեան ես ինքնին կ'իջնամ այս գահէն, խոնարհ յարգանօք համբուրելով համայն Ազգի կնիքը կրող Ձեր վճռագիրը. զի օրինօք կապեցայ. կը փափաքիմ դարձեալ օրինօք արձակիլ։ Միայն սա կ'ա-

դաչեմ, վասն փառաց Եկեղեցւոյ և Հայոց Ազգին, Խաղաղութեամբ Թողէք որ երթամ։

«Այո՛, մեծ ակնկալութեամբ ընտեցիք զիս ու բերիք. գիտե՛մ, դժուարին է դիւրութեամբ Թողուլ։ Ի՞նչ էր արդեօք Ձեր և հանուր Թուրքիոյ Հայոց ակնկալութիւնը։ Ահաւասիկ. Գ՛ակնկալէիք որ Երբիմեան Հայաստանեայց Եկեղեցւոյ փառք կը յաւելուր. Կը յուսայիք Թէ նա Եկեղեցւոյ պաշտօնէից աղաւաղ դրութիւնը կը վերանորոգէր. Կը հաւատայիք որ նա անդադար քարոզելով՝ դպրոց, դաստիարակութիւն, լոյս և այլն, ազգային յառաջդիմութեան կառքը կը վարէր և դէպ ի իւր նպատակ կը տանէր։ Թող այս մեծ ակնկալութիւն, մի նւս այն էր, Թէ Երբիմեան, իբրև Սահմանադրաւէր Պատրիարք նա ինքն ձեռնհաս պիտի լինի շոյտ և արագապէս իւր Արծուի Թեւերով Սահմանադրութիւնը բառնալ ու տանել ափեղ Հայոց աշխարհին վերայ. քաղաքացին և շինական. գիտուն և ռամիկ առ հասարակ միահամուռ մկրտել՝ լուսաւորել և նոր սահմանադրական ժողովուրդ կազմել։ Առանց քան զայսոսիկ, ամենամեծ ակնկալութիւն գաւառացի ժողովրդոց այն էր, Թէ Երբիմեան Պատրիարք եղաւ, ուրեմն աւետիս, պէտք է որ ազատուինք հարստահարութեան ամէն ճնշումներէ. Զարմանքն այս է, որ ես էլ ճիշդ Ձեզ նման կը հաւատայի Թէ կարող եմ այդ մեծամեծ հրաշքները գործել և արդիւնաւորութեամբ պսակել այդ նախաձեռնել մեծամեծ ակնկալութիւնք։ Սորա համար իմ սրտի զեղուն զգացմամբ և անկշիռ երեւակայութեամբ չափեցի Թէ՛ արդեօք Տարօն Թողում, Վարագ Թողում, իմ այն փոքրիկ ագարակները, յորս կ՛աշխատէի և կը մխիթարուէի գոնէ դաշնաքեայ վաստակօք, ու երթամ Մեծն Բիւզանդիոն Հայոց Պատրիարք լինիմ, պիտի կարենամ ասկէ աւելի ազգին շահաբեր լինել։ Անկեղծաբար խոստովանելով՝ ես կը ճանաչէի զիս, Թէ Պատրիարքութեան բարձր Աթոռին վայելուչ յատկութիւնները չունէի, ոչ իմաստութեամբ, ոչ ուսումնականութեան հանճարով, ոչ քաղաքագիտութեամբ և ոչ մի քանի լեզուաց հրմտութեամբ։ Այսչափ տկարութեամբ հանդերձ, բա՛ւ Թէ փառասիրութեան տենչանք մղեց զիս յայս պաշտօն. ոչ, այլ միայն Ազգի սէրն և Հայրենեաց օգնելու եռանդն։ Ինքնին այս միայն կը մտաբերէի, Թէ պահ մի երթամ պատրիարքութեան Գահին վերայ

կենամ, թերեւս այդ իշխանութեան կեղրոնէն ձեռնհաս լինիմ դարման մի գտնել ու հայթաթել բազմակարօտ Ազգին. Իմ այս ապիկարութեանս չափը նոյն իսկ Երեսփոխանական Ժողովդ քաջ իսկ գիտէը. Խրիմեան իւր Ազգին անծանօթ չէը, բայց չգիտեմ թէ ինչ նպատակաւ, գուցէ խաղաղութեան համար, պահ մի ապշեցաւ ու մոռացաւ Սահմանադրութեան օրինադրած անժխտելի յատկութիւնները, և ընտրեց մարդ մի, որուն կեանքը առաւել կը սիրէը լեռ, դաշտ և վանական զբաղմունք. Բայց ասկէ աւելի ինչ պիտի ընէիր, Երեսփոխանութիւն Հայոց, նախահոգակ հեռատեսութեամբ չյայտնեցիր, որպէս զի ժամանակին հնձէիր առանց շուարման: Վանայ փոքրիկ ագարակի մի մէջ ինքնաբոյս Խրիմեան գտար, վա՜շ, ասիր ու ընտրեցիր: Այդ ինքնաբոյս ծառերուն պտուղ այսչափ է. Իրաւունք չունիս տրտունջ բառնալ.

«Վաթսուն երեքերորդ անգամ Երեսփոխանական Ժողովոյդ նախագահեցիր. ի սկզբան՝ երբ առաջին նիստն վազմեցաւ, ատեան բացուեցաւ, ինչ էր նախադաս և կարևոր խնդիրն — ՎԵՐԱԲՆՆՈՒԹԻՒՆ ՕԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ. Զորս տարուան շրջանին մէջ, այս ամենակարևոր խնդիրը խնդրոց կարգին մէջ անլուծելի մնաց. Ցանձնաժողովի նախապատրաստեալ ծրագիրը մերժուեցաւ, որպէս զի լաւագոյն ևս ծրագրուէը: Քանի մի ամիս յառաջ նոր վերաքննիչ ցանձնաժողով մի ևս քննեց Երեսփոխանութիւնն. այդ ժողովն, ինչպէս որ կը լսեմ. դեռ և ոչ հատուած մի վերաքննեց. Այս խնդիրն այսպէս տակաւին անկատար կայ ու կը մնայ: Երեսփոխանութիւնն այլ ևս ինչ խնդիր լուծեց. Սոսյ խնդիրը լուծեց. այո՛ այս խնդիրը լուծեց մեծ հեռատեսութեամբ. Հարստահարութեան խնդիրն յուզեց. այո՛ այս խնդիրն մահու և կենաց խնդիրը էր տառապեալ Ազգի մի համար, զոր երկիցս Բարձրագոյն Դրան յանձնելով շնորհ և գթութիւն հայցեցինք յանուն Ազգին, և դեռ կ՚սպասեմք այցելութեան.

«...Գիտեմ անհամբեր կը սպասէ Երեսփոխանական Ժողովդ, որպէս զի փութամ յայտնել այն կարևոր պատճառներն, որք անհրաժեշտ կերպով ստիպեցին զիս ինքնակամ յօժարութեամբ հրաժարիլ. Հեռատեսութեամբ նկատելով որ Ազգին շահ, եկեղեցւոյ շահ, ժամանակի ծանր ծանր պարագաները, այսպիսի զոհ մի կը պահան-

չեն յինէն։ Սահակ Նահապետին չափ պատրաստեմ առ այս, միայն կ՚աղաչեմ որ Երեսփոխանական ժողովդ իւր սուր վճիռը պատրաստէ։

«...Իմ հրաժարելուս առաջին պատճառն ձանձրութիւն և յուսահատութիւն է։ գործելու համար եկայ, և բան մի չգործեցի։ մէկ երկու տարի իբրև անփորձ, հազիւ թէ փոքր ի շատէ խելամուտ եղայ Ազգային գործոց և ընթացից։ Ամօթ չեմ համարիր այսպէս խոստովանիլ։ վասն զի Եւրոպիոյ ամէնէն իմաստուն կարծուած անձն իսկ տակաւին կարօտ է փորձառութեան և գործակից աջակցութեան։

«...Գիտէ Երեսփոխանութիւնդ, որ Սահմանադրութիւնն աշխատութեանց բաժանման սկզբունքն ընդունած է։ ուստի, վարչական ընթացից գոնէ ըստ մասին դիւրութիւն մի տալու համար, առկէ իբրև տարի մի յառաջ այս դժուարին իրաց պարագաները մի համոզական բանիւ ու արդարացի փաստերով Քաղաքական ժողովոյ Առենին ներկայացուցի, խնդրելով՝ որ երկու մասնաժողովներ յառկանան. ժողով մի Տեղական գործոց, ժողով մի Գաւառական մասնաւոր գործոց։ Մեր այս պարզ և օրինաւոր խնդիրն այնքան թիւր կարծիքներու ենթակայ եղաւ Քաղաքական ժողովին առաջ որ աւելորդ և անկարեւոր դատեց զայն ուշադրութեան առնուլ, և ես խոհականութիւն համարեցի չպնդել մինչև ժամանակ անցնի և փորձառութիւնն դիրենք համոզէ։ Այն օրն և այս խնդրէն ծնաւ անհամաձայնութիւն մեր և Քաղաքական ժողովին մէջ, և երթալով մեծցաւ այլ և այլ առիթներով։ Զարմանալ պէտք է, թէ այս ամենապարզ խնդրէն կարելի է յառի նպատակ մի հանել և մինչև իսկ ասել թէ՝ հակաահմանադրական է այս դրութիւն և այլն։ Երբ տեսայ, որ Քաղաքական ժողովն, այս խնդրոյն շուրջէն միշտ կը խրտչի, այլ ևս անկարելի է ընդունել տալ՝ խորհեցայ հիմնական կերպով այդ խնդրոյն լուծումն Ընդհանուր ժողովին բերել Վերաքննիչ յանձնաժողովին ձեռօք։

«...Ծիշդ ցէք, մի մոռնաք, Երեսփոխանք Հայոց, այն օր երբ Սահմանադրութեան համար յինէն ուխտ պահանջեցիք, ես այն օր հեռատեսութեամբ նկատեցի. որ անհնար է մեծն Ա՛ովսէսի չափ այդ օրինաց տուն ամենաճշտութեամբ պահել, այնչափ, որ կիրակի օր ցրտահարութենէն ստիպեալ խուլ ժողովոց պատուէր քարկոծել

տալ. և քուէարկութեան մէջ շփոթութիւն հանող անձինք չորս տարի քուէի իրաւունքէն զրկեալ հրատարակել. Ուստի բաւ և շատ համարեցի ուխտել միմիայն Սահմանադրութեան Ոգւոյն և անփոփոխելի Սկզբանց վերայ. բայց ներկայ Քաղաքական ժողովոյ կազմութեան օր՝ Ատենադպիրը էֆէնտին*), չգիտեմ ինչ նկատումով, դիւանական սեղանի վերայ Սահմանադրութեան օրինագիրքն դնելով այսպէս յայտարարեց, „Պէտք է Սահմանադրութեան տրամադրած յօդուածները մի առ մի ճշդութեամբ կատարել.“ Այն օրէն մինչև ցայսօր այս յայտարարութեամբ վարուեցաւ ժողովը, և ես հնազանդելով յարգեցի իւր ամէն որոշումները և ստորագրեցի. բայց մերթ ընդ մերթ միայն դիտողութեամբ յայտնեցի, խնամով և զգուշութեամբ ի գործ դնել այդ օրէնքը, մինչև ժողովուրդն ընտելանայ, մինչև քուէաթուղթ գրել սորվի, մինչև օրինաց ոգին ճանչնայ, ըմբռնէ, սիրէ ու գրկէ. Երանի՛ թէ Ատենադպիրը էֆէնտին այդ յայտարարութեան արդիւնքը վայելէր Ազգն. այլ ընդհակառակն՝ օրինաց խստիւ և տուական գործածութենէն հետեւեցան այսքան աղմկայոյզ խռովութիւնք, Գօլոյ թաղերուն և Գաւառներուն մէջ. թէև ապագային վկայ լինի հազար ուրախ հարիւր եօթանասուն և երեք Յուլիս 30 Հայոց Պատրիարքարանի դժպատեհ դէպք. Մինչ կարելի է ընդդէմ գիտակցութեան մեղանչելով այս խօսքերէն մի հատիկ հետեւութիւն մի հանել և ասել՝ ուրեմն Պատրիարք իրրև հակող օրինաց, իւր պարտքը չճանաչելով՝ Սահմանադրութեան դէմ կը խօսի և նորա տրամադրած օրէնքները ճշդիւ կատարելու փոյթ չունի. Այս դատաստանին դէմ Այսօր եւ Յաւիտեան կը Բողոքեմ. զի Խրիմեան յառաջ քան զվաթսուներրորդ Թուական 1820 Ապրիլ չորս՝ անդստին ի մօրէ Սահմանադրութենէն յառաջ սահմանադրական ծնած է և ցորեկ արեւուն լուսով աշխարհ եկեր է, խիստ Դժուարին է զանի իբրեւ Հակասահմանադրական ամբաստանել. Ես Սահմանադրութիւնը գրկել կ՚ուզեմ, բայց չեմ ուզեր զանի այնչափ ճղմել ու սեղմել, մինչև գրկիս մէջ մեռնի. Ես այնպէս կը համարիմ թէ նորա թերթերը վարդի թերթէն աւելի փափուկ են, խստութեամբ մի շօշափէք՝ պատառ պատառ կը լինի.

*) Սահփան Փափազեան.

Մանաւանդ, որչափ սարսուռ կը զգամ երբ Ոստիկանութեան ձեռք կը դպի, այսինքն անխորհուրդ անհեռատես մարդիկ օրինաց դիմահարները զսպելու համար ոստիկանութեան զէնք յօգնութիւն կը կանչեն, որոյ վախճանը թէ մինչև ուր կ'եզրերի՝ Ձեզ կը թողում խելամտել։

«Ժամ է արդ որ խօսիմ ու բացատրեմ իմ հրաժարելոյս երկրորդ պատճառը, այն Եկեղեցւոյ վիճակն, որ ամենամեծ և կարեւորագոյն է այնչափ որչափ Աստուած, իւր Աւետարան և Եկեղեցին բարձրախորհուրդ են։ Ուշ դիք, Երեսփոխանք Հայոց, ուշ դիք, պաշտօնակից եղբարք իմ, Թուրքիոյ Հայոց Եկեղեցւոյն վերայ պիտի խօսիմ, որ խոնարհեր աղքատացեր և նուաղեր է յոյժ. Թոյլ տուք որ հազար երեք հարիւր տարի յառաջ մեր Սուրբ Խորենացւոյ մրմունջն կրկնեմ աստանօր։

«„Ողբամ զքեզ Եկեղեցիդ Հայաստանեայց խրթնացեալ ի բարեզարդութենէ բեմին, զրկեալ ի քաջ հովուաց և հովուակցաց“։ Գիտէք, Երեսփոխանք Հայոց, ես յետին տրուպ և անարժանս այդ Եկեղեցւոյն հսկող հովիւն էի, Ս. Էջմիածնայ Վեհափառ Հայրապետին կողմէ Փոխանորդ կարգեալ. Դուք ձեռքս Սահմանադրութիւն տուիք և պահանջեցիք, որ ուխտեմ և հաւատարիմ մնամ Սահմանադրութեան. եթէ գեղծանիմ, զիս Ձեր քուէով կը դատապարտէք. յառաջ քան զՍահմանադրութիւն ցիսուս էլ իւր Աւետարանը ձեռքս տուաւ։ Մի՛թէ այդ մեծ և ահաւոր Աստուածամարդն իրաւունք չունի՛ յինէն համար պահանջել. այո՛ առաւել քան զՁեզ։ Ո՛հ, ես այդ Աւետարանը ձգեցի և այժմ բաժանարար պաշտօնեայ մի եմ Պատրիարքարանի դատարանին մէջ նստած, քանի մի գործակից եղբայրներով։

«...Ահաւասիկ իմ իրաւացի պատճառները, Երեսփոխանք Հայոց, զոր կ'աղաչեմ բարձր ուշադրութեան առնուք և նորա խորը թափանցէք պիտի տեսնէք, թէ Խրիմեան՝ ոչ միայն անկեղծ գիտակցութեամբ այլ և փորձառական ճշմարտութեամբ գրած է, իբրև կտակ կ'աւանդեմ Ձեզ, շոյտ և արագ փութացուցէք ՎԵՐԱԲՆՆՈՒԹԻՒՆ ՕԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ, Սահմանադրութեան իրաւանց և պարտուց հիմնական օրինաց որչափ կարելի է անվրէպ գործադրութիւն. Վարչական կազմութեան մէջ՝ աշխատութեանց բաժանումն.

Դործադիր իշխանութեան անդամոց միութիւն և համաձայնութիւն. Դէտցէք, այդ վարչական մեքենայն առանց այս հաւեմատութեան չի շարժիր. Այսչափ և այսքան բաւ է.

«Ներողութիւն կը խնդրեմ, այն ամէն թերութեանց համար, զոր իբրև սխալական մարդ գործած եմ. Ներողութիւն կը խնդրեմ համայն երեսփոխանական դասէն. Ներողութիւն կը խնդրեմ իմ վաստակակից Կրօնական Ժողովոյ Ս. Հարց դասէն. Ներողութիւն կը խնդրեմ Քաղաքական Ժողովոյ Մեծապատիւ անդամներէն. ես զձեզ չամբաստանեցի, այլ դրութիւնն ամբաստանեցի, որոյ ուղղութիւնն և փոփոխութիւնն Օրէնսդիր Ժողովոյն կը պատկանի.

«Այլ եւս կը մնայ ինձ օրհնել համայն Հայոց Ազգը և հրաժեշտ մատուցանելով առ երեսփոխանութիւնդ Հայոց՝ Վահանայ Գողթնացւոյն պէս պաղատիլ.

«„Առնակեցէ՛ք, որ տեսանեմ զորչափութիւն աւերածոց երկրին իմոյ Հայրենեաց“.

«Թո՛յլ տուէք այս Աթոռէն ելնեմ և հոն նստիմ. թերեւս այսու խաղաղութեան օրինակ մի ընծայեմ իմ յաջորդիս. Թո՛յլ տուէք, եթէ իբրեւ Պատրիարք՝ չի կարացայ՝ իբրեւ Խրիմեան Վարդապետ գործել, թերեւս իբրեւ Խրիմեան՝ կարենամ իբրեւ Պատրիարք գործել.

«Երթա՛ս բարեաւ, Արծո՛ւի, ասացէք, Գնա գտիր Վարագ քու սիրած խուցն ու գրիչ և սակաւիկ մի թանապուր. Հո՛ն մնացիր, զի ճաւ խռովեալ փութայ ի Նաւահանգիստս...».

## Է.

## ՆԱԽԿԻՆ ՊԱՏՐԻԱՐՔՆ ԻԲՐԵԻ ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ

—«Երբ Հայրիկը, իւր ճառի վերջին մասը կը կարդար - կը պատմէ Խաչիկ Խան Սարաճեանը — արցունքները այտերէն վար կը գլորուէին, ձայնը կը դողար և ամբողջովին յուզում և զգացում դարձեր էր. Ժողովուրդի մէջէն շատերն ալ կուլային և լուռ հեկեկանքները կը խառնուէին Հայրիկի ձայնին. Ընթերցումը վերջանալէ յետոյ, երբ բեմէն վար պիտի իջնէր, բուռն և որոտալից ծափահարութիւնը թնդացուց Մայր Եկեղեցին և ամէն կողմէ ծայր

առին ձայները և աղաղակները „Հրաժարական չեմ ընդուներ Հայրի՛կ“, „Ժողովուրդը fեզ հեs է Հայրի՛կ“. „Պետի մնա՛s, չհրաժարի՛s“ և նման բացականչութիւնները, աղմուկ, աղաղակ իրար խառնուեր էին, Ազգ. Ժողովի Առենապետ Գրիգոր Օտեանը կը չանար լռութիւն պահել, բայց անհնար եղաւ, մինչև որ Խրիմեանը ոտքի կանգնելով բսաւ—„Ժողովուրդ Հայոց, կ'աղաչեմ լռութիւն պահեցէք, որ Ժողովը շարունակէ իր գործունէները“. Երբ լռութիւն տիրեց և Ժողովը շարունակուեցաւ».

Պէկեան էֆէնտին ոտքի կ'ելլէ և խիստ կը քննադատէ Հայրիկի հրաժարական ճառը։

Առենապետ Գրիգոր Օտեանը դիտել կուտայ, որ «Պէկեան էֆէնտի Սրբազան Պատրիարքին առենաբանութիւնը դատափետելու ելաւ, բայց վիճաբանութեան սահմանէն դուրս է առայժմ այդ կէտը, վասնզի Ժողովը դեռ չորոշեց անոր վրայ վիճաբանիլ»։

Ազգային Ժողովի այդ նոյն՝ 64-րդ նիստին մէջ Քաղաքական Ժողովի 14 անդամներէն վեցը, իրենց հրաժարականը ներկայացուցին։ Ազգ. Ընդհանուր Ժողովի անդամներէն ոմանք դիտել կուտան, որ՝ «Թէ Սրբազան Պատրիարք և Թէ Քաղաքական Ժողովոյ հրաժարեալ անդամները ամբաստանեցին Ազգ. Ժողովը»։ Առենապետը կը յարէ—«Ոչ Սրբազան Պատրիարքին հրաժարագիրը, և ոչ ալ Քաղաքական Ժողովոյ անդամոց ոմանց հրաժարագիրը, երկուքն ալ ամբաստանութիւն չեն ըստ իս. Ս. Պատրիարքն այնպիսի խօսքերով՝ որ իր սրտէն կը բղխէին և զորս ինձի չափ սրտայոյզ ունկնդրութեամբ մտիկ ըրէք յայտարարեց թէ՝ „ոչ զոք կ'ամբաստանեմ. ինչպէս որ խաղաղութեամբ եկայ Պատրիարքական գահը բազմեցայ, նոյնպէս կ'ուզեմ խաղաղութեամբ ձգել այս գահը, իմ մենաստանս դառնալ և իմ բահս ու գրիչս նորէն ձեռքս առնուլ“. Լսել է որ Սրբազան Պատրիարքին տուած հրաժարականին մէջ չկայ ամբաստանութիւն մը»։

Ի վերջոյ Ազգային Ժողովը կ'ընտրէ «Քննիչ Յանձնաժողով»*) մը՝ Պատրիարքի և Քաղաքական Ժողովի անդամներու հրաժարականներու պատճառները քննելու համար։ «Քննիչ Յանձնաժողով»ը նախ կը

*) Առենապետ՝ Խորէն Արքեպ. Նար-Բէյ, Առենադպիր՝ Ղեոնդ Ե. Վրդ. Փերզալէմեան, անդամներ՝ Գէորգ Քհնյ. Արծրունի և Առաքել—Սիսակ Տատեան։

դիմէ Խրիմեանին, որ իւր հրաժարականը ետ առնէ, բայց նա կը մերժէ։ Ապա Քաղաքական Ժողովին դիմելով կը խնդրէ ցոյց տալ այն պատճառները, որոնք անհամաձայնութիւն յառաջ բերած են Պատրիարքի և Ժողովի յարաբերութեանց և գործերու մէջ։ Քաղաքական Ժողովի հրաժարեալ վեց անդամները (Սեմերքերիմ Մանուկեան, Բարսեղ Հալաճեան, Քրիստոստուր Ղազարոսեան, Ալիքսան Խօրասանճեան, Ստեփան Փափազեան և Բարթող Քիւրքճիպաշեան) — «Ղալաթիոյ Օճախ»ի պարագլուխները — 9 Օգոստոս 1873-ին գրութեամբ մը կը յայտնեն «Քննիչ Ցանձնաժողով»ին իրենց հրաժարման պատճառները, որոնք 11 կէտերով կ'ամբաստանեն Պատրիարքը։ Ուշագրաւ են հետեւեալ կէտերը.

Ա) «Սրբազան Պատրիարքը վանայ խնդրոյն մէջ առանց քննութեան և առանց դատաստանի Գօդոս Վարդապետ պաշտօնէ կը դատերեցնէ և առանց կրօնական ու Քաղաքական Ժողովոց գիտութեան կ'աքսորէ։

Բ) Գատրգիւղի Թաղական խնդրոյն մէջ հակառակ ոլոշման Քաղ. Ժողովոյ՝ Ս. Պատրիարքը հրաժարական կ'ընդունի, և յետոյ ալ Քաղ. Ժողովոյ որոշումը չի գործադրեր։

Գ) Բ. Դրան նախարարաց որոշուած այցելութիւններ մեծաւ մասամբ և ժամանակին չը կատարելը։

Ժ) Ս. Պատրիարք Հայրը 1 Մայիս ներկայ տարւոյս (1873) 28390 ղրուշ պարտական է կեդրոնական անտուկին։

ԺԱ) Սկիզբէն մինչև վերջը Ս. Պատրիարք Հայրը նախատանօք կը վարուէր ժողովականաց և Ժողովոյ դէմ, մինչև օտարին ըրած անարգանաց իրաւունք տալէ զատ, Նորին Սրբազնութիւնն ալ սկըսաւ՝ անարգել և խարդախ անուանել Քաղ. Ժողովը. ալ խարդախ անուանեալ Քաղ. Ժողով մը ժողովարանէն դուրս ալ կը վռնտուի կը ծեծուի ալ»։

«Քննիչ Ցանձնաժողով» բարեխիղճ և անաչառ քննութիւն մը կատարելէ յետոյ, կը փորձէ Պատրիարքի և Քաղաքական Ժողովի մէջ հաշտութիւն և համաձայնութիւն կայացնել և հրաժարականները ետ առնել տալ, բայց երկու կողմերն ալ կը պնդեն իրենց հրաժականներու վրայ։

Ի վերջոյ «Քննիչ Ցանձնաժողով»ը կ'առաջարկէ Ազգային Ժո-

դովին որ «յարգուին այդ հրաժարականները, վասնզի կացութիւն մը երբ այսքան ձգտի՝ պէտք է խզի և այս չէ երբէք ի դատապարտութիւն անձանց»։

Խրիմեան Պատրիարքը իւր հրաժարականը ներկայացուց նաև Բ. Դրան, որ սիրով ընդունեց....

Հրաժարեալ Պատրիարք Խրիմեան Հայրիկը 1873-ի Հոկտ. 2-ին կը հեռանար Պատրիարքարանէն և Հոկտ. 3-էն սկսեալ գահը կը մնար թափուր....

Խրիմեանի հակառակորդներն ու թշնամիները բերանացի և գրաւոր ամբաստանութեանց և մեղադրանքներու ծանր բեռ մըն ալ դրին հրաժարեալ Պատրիարք Հայրիկի ուսերուն վրայ։

«Պատրիարքին հակասահմանադրական ըլլալով տապալեցինք զինք։ Խրիմեանը հակապետական քայլեր կ'առնէր և բարեխնամ կառավարութեան սիրտը կը պղտորէր Ազգին վրայ։ Հայրիկը Պատրիարքարանի դրամները անհաշիւ կերպով կը վատնէր, աղքատներուն և պանդուխտներուն նպաստ տալով, իսկ Պատրիարքարանի անունն ու դիրքը կը նսեմացնէր դրամ չը ծախսելով։ Հայոց եկեղեցւոյ ոգւոյն դէմ կը գործէր և կ'առաջարկէր, որ հոգևորականութիւնը նիւթապէս բարւոք վիճակ ունենայ։ Դաւառներու մէջ Ազգ. Սահմանադրութիւնը գործադրել տալուն նպատակն այն էր, որ Ազգ. ժողովի ձայնը նուազ ըլլար։ Դաւառական հարստահարութեանց խնդիրներու մասին այնքան կը խօսէր որքիչ մնաց Ազգը վտանգի ենթարկել տար։ Պատրիարքարանը ծանր պարտքերու տակ ձգեց և ինքն ալ պարտական մնաց ազգային սնտուկին։ Պատրիարքարանի խորհրդականներ, խոհանոց և բանտը ջնջել տուաւ, որոնք անցեալէն կ'ուզային» և այլն և այլն։

Ահա այս ամբաստանութիւններով ծանրաբեռնուած Խրիմեան Հայրիկը կը քաշուէր ազգային գործունէութեան ասպարէզէն և կ'առանձնանար Իւսկիւտարի Իճատիէ թաղին մէջ։

Արևմտահայ տաղանդաւոր գրագէտ բժ. Յովսէփ Շիշմանեան— Ծերեցը կը նկարագրէ այն տուն, ուր կ'ապրէր Խրիմեան Հայրիկը։

«Պատրիարքութենէն հրաժարելով, գլուխը քաշած կը նստէր ընդարձակ սմայի տան մը մէջ Իճատիէ։ Քանի մը անգործ մնացած վանեցիք եկեր էին իր ծառայութիւնն ընելու, և ընդարձակ սրահի

մը մէջ դրած էին իրենց անկողիններըւ երբ ես ներս մտայ՝ նըստեալ սեղանի գլուխ կ'օրհնէը իրենց ճաշը այդ հրաժարեալ Պատրիարքը, որ „ոչ միայն Աւազադրիւրի 45,000 դրուշը, այլև Պատրիարքարանի սնդուկը պարպեր գնացեր էր“, բնական էր հետաքրքրքիր աչք մը ձգել այդ գետինը տարածեալ սփռոցի վրայ՝ որ սեղանն էր, ուր խաշած պաղ միս, կտոր մը Վանայ պանիր, ձմերուկ մը, կուժ մը ջուր և մէկ երկու գաւաթ էին ամէն հանդերձանք և ճոխութիւն»*):

Հրաժարեալ Պատրիարքը առանձնացաւ Կ. Պոլսոյ Ասթական ափը, Գուզկունճուքի Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ բակը, անշուք սենեակի մը մէջ։ Ա՞յս էր արդեօք իւր նաւահանգիստը, ուր հանգչելու հակած էր խռովեալ ցաւը:

Իւր բարեկամներն ու գաւառացիները այցելութեան կուգային իրեն և կը համոզէին, որ փոխադրուի Բերա, բայց Հայրիկը վշտացած կը պատասխանէր.

—Այստեղ հայրենիքիս մօտ եմ, այստեղ չը կայ ծովը, որ Հայրիկն ու Հայրենիքը իրարմէ բաժնէ։

Հայր Արծիւը փոխանակ իւր պաշտած Վարագայ Արծուաբոյնը երթալու, իւր «սիրած խուցն ու գրիչը և սակաւիկ մի թանապուր» գտնելու, մնացեր էր մայրաքաղաքի այդ մոռացուած մէկ անկիւնը և կ'երազէր Վասպուրականն ու Տարօնը—բովանդակ Հայաստանը, որուն «ցաւոց պատկերը» միշտ իւր աչքերուն առջևն էր։

Ազգային ժողովը երբ Սսոյ Կաթուղիկոսութեան հարցով ալեկոծուած էր սուր և երկարատև վէճերով, Խրիմեանը ցաւ ի սիրտ կը բացականչէր.

«Հոս նստեր եմ ձեր մէջ, բայց ո՞ գիտէ թէ իմ երևակայութիւնս ուր է գնացեր, ո՞ գիտէ թէ որ գաւառներու մէջ կը դեգերիմ մտովի, ուր չարչարեալ ժողովուրդներ, անոր մանկիկներ, վըշտահար հարսներ ու փեսաները կը ներկայանային աչքիս, և ակնկառոյց մնէ զօքավիդ կը խնդրեն։ Մենք հոս անդուլ կը վիճաբանինք... վիճաբանութիւնը սահման մը պիտի ունենայ»։

Սակայն նախկին Պատրիարքն այժմ մենակ էր, հեռու Ազգ.

---

*) Տե՛ս նաև—«Կաթողիկոսութիւն և Խրիմեան»։ 1884։

Ժողովի վիճաբանութիւններէն, իւր երևակայութեան թռիչքներով կ'երթար Մայր Եկեղեցը և կը դիտէր Հայութեան մեծ տառապանքը։

Պատրիարքութենէն հրաժարելէ յետոյ, Խրիմեանը կը փափագէր երթալ Տարօն և շարունակել Ց. Կարապետի վանքի իւր վանահայրական պաշտօնը, բայց Ազգ. Ժողովը և մանաւանդ «Ղալաթիոյ Օճախ»ը զանազան մութ կասկածներու վրայ հիմնուած Խրիմեանէն առին Ց. Կարապետի վանահայրութեան պաշտօնը և այնպիսի տոթոր միջոցներու դիմեցին, որ նա չը կրցաւ Կ. Պոլսէն Հայաստան երթալ։

«Ցոյժ ի խոր խոցեցաւ Ս. Հայրիկն—կը գրէ Ա.ակերտը—երբ պուին նորա վրայէն Մշոյ վանահայրութիւնը։ Նա ոչ միայն կ'ափսոսար իւր բրտինքն և կրածները այդ Ս. տեղին համար, այլ անօտնման սիրով կապուած էր և է Տարօնոյ աշխարհին Սրբազան վայրին և հողոյն և մարդոյն։ Բողոքներ ըրաւ, իւր եպիսկոպոսական ուխտն և օծումն յառաջ բերաւ իբրև Տարօնոյ Եպիսկոպոս, եկեղեցւոյ օրէնքը յիշեցուց. լսելի չեղաւ։ Եւ լռեց»։

Հայրիկի թշնամիները, նախկին Պատրիարքի մասին ինչ լուրեր և զրպարտութիւններ, որքան ցինիկ և անպատկառ խօսքեր, քանի՛ քանի՛ տեսակ ստոր ամբաստանութիւններ հրատարակեցին պոլսահայ թերթերու մէջ։ Այդ թունալից յօդուածներն ու քննադատութիւնները միշտ կ'ճզրակացնէին թէ «Խրիմեանը կերաւ, վատնեց ազգի դրամները և Պատրիարքարանը պարտքի տակ ձգեց»։

Այս մասին կը ձայնակցէին նաև Վանի տխրահռչակ Պօղոսեաններն ու «խաւարեալք»ի ներկայացուցիչները, որոնք Խրիմեանի հրաժարումէն յետոյ աւելի սանձարձակ դարձեր էին.

«...Խրիմեանը վեցչին տարիներս Կ. Պոլսոյ Ազգ. պարտուց հանպանակութեան միջոցաւ չորս տարիի չափ մախաղ թևէն կախ՝ նոյն մայրաքաղաքին մէջ խորշ չ'մնաց, ուր չ'մտաւ, գեր մեռել չ'մնաց՝ որ չ'թաղեց. ազնուականաց ծնունդ և ամուսնութիւն չ'մնաց, որ չ'մկրտեց, ու չ'պսակեց։ Առատաբիրտ Պօլսեցին ձրի ընել կուտար ասոնք այդ լակոտ շողոքորթին. քա՜ւ. այլ ուր կորան այս դրամները.... Ազգին կեանք ընդ շունս և ընդ պոռնիկս վատնող և ուտող թանապուր սիրող Խրիմեանն է։

«ի Կ. Պոլիս, թող Մեղուն*) վկայէ Խրիմեանի պատկերի ընդ սիրուհիի մը այլանդակ և անհամեստ գծագրութեամբ։

«Խրիմեանը կ'ամբաստանուի հանուր Վանայ բնակիչներէն, Ազգ. կեդր. Վարչութեան կրօնական և քաղաքական ժողովներէն, սահմանադրապէս հաստատեալ համայն խորհուրդներէն, Կ. Պոլսոյ հասարակութենէն, Տաճկաստանու բոլոր գաւառներէն, Ս. Էջմիածնի Վեհ. Հայրապետէն, Երուսաղէմի Ամեն. Ս. Պատրիարքէն և նորա միաբանութենէն, Տաթեւոյ Ս. Կարապետի վանուց միաբանութենէն և համայն եկեղեցականաց դասէն, Ռուսաստանի, Կովկասու և այլն և այլն սահմաններէն, մինչ զի Աստուածմէ իսկ՝ որ յերկնից ամբաստանիչ գտնուելով՝ շուտով շարժեց Վսեմ. Ցէրութեան սիրտը ընդունել նորա հրաժարականը և գտնկեց առնել այն Ազգութեան վնասակար էակը», («Խրիմեան և գործք իւր» էջ՝ 6 և այլն)։

Ուրեմն, ըստ Պօղոսեաններու, ամբողջ Հայոց Ազգը, և մինչև անգամ երկինքն ու երկիրը Խրիմեանի ամբաստանիչներն ու թշնամիներն էին։ Վերոյիշեալ տողերն արդէն ցոյց կուտան թէ, անաչառ քննադատութիւն չէ խօսողը, այլ չարութիւն, անզուսպ կիրք, զրպարտութիւն, վարկաբեկում և մարդկային ամէն տեսակ ստոր դաւեր, որոնք ամէն կողմէ կը տեղային Գուզկունճուքի եկեղեցոյ անշուք սենեակին մէջ նստած Մեծ Հայրեցասէրի Խրիմեան Հայրիկի վրայ, որուն խոցուած սիրտն ու վշտահար հոգին յանկարծ կը հրճուէին անաչառ քննադատութեան և ճշգրիտ գնահատութեան ձայնով մը, որ կուգար Կովկասէն, Գրիգոր Արծրունիի «Մշակ» թերթի խմբագրատունէն, ուր սեղանի մ'առջև նստած՝ մռայլ դէմքով, ցաւոտ աչքերով Մէլիքզադէ—Րաճճին՝ իւր վաղեմի և սիրած բարեկամ նախկին Պատրիարք Խրիմեան Հայրիկի մասին այս տողերը կը գրէր «Մշակ»ի մէջ (*1873 № 49*).

---

*) Մեղու ծաղրաթերթի խմբագիր Յարութիւն Սվաճեանը Խրիմեանին ջերմ պաշտպան և համակիր մնաց և իւր թերթին մէջ միշտ գնահատական յօդուածներով դրուատեց Խրիմեանի ազգանուէր գործունէութիւնը։ Սվաճեանը 1872-ի Նոյեմբ. 4-ին «Մեղուն յանձնեց Հայ գրականութեան տաղանդաւոր երգիծաբան Յակոբ Պարոնեանին, որ յաջողութեամբ կը խմբագրէր «Մեղուն։ Պարոնեանն ալ Խրիմեանի հանդէպ սէր և յարգանք տածեր է։ Ուշագրաւ է այն

«...Խրիմեանը իւր կեանքում շատ անգամ մեծ գումարներ ձեռք ձգեց, բայց նա մնաց միշտ աղքատ, միշտ պարտքերի տակ խրուած. Խրիմեանը խիստ անփոյթ է դէպի իւր անձնական վայելչութիւնը, դէպի իւր բարեկեցութիւնը, նա իւր վերայ ոչինչ չէր վատնում, իսկ բնաւորութեամբ, եթէ կարելի է այդպէս կոչել կօմունիsus էր։ Նա որպէս անհաշիւ կերպով ստանում էր, նոյնպէս անհաշիւ կերպով սպառում էր։ Հանդիպած աղքատին Խրիմեանը պատրաստ էր իւր վերջին փարան տալ և ինքը սոված մնալ։ Սեփականութիւնը նրա համար ոչինչ նշանակութիւն չ'ունէր, երբ նա ծառայում էր ընդհանուրի օգտին։ Խրիմեանը չէր ծնուած բարձր կոչման համար, որ պատրիարքական աթոռի վերայ փթեցնէր իւր կեանքը, և ձեռքը որ սովոր էր մուզաների շնորհած քնարը հնչեցընել, պարապեցնէր ֆաղաքական և կրօնական ժողովների վճիռները ստորագրելով։

«Խրիմեանը հոգւով բանաստեղծ է, իսկ սրտով առաքեալ։ Նա յիշեցնում է մեզ հինգերորդ դարու անձնուրաց աբեղաներին, որք հոգևոր զինուորութեան ցուպը ձեռքերնին կրած, հուրի և սուրի միջից անցնելով պտտում էին Հայաստանում, ուսում, գիտութիւն և կրօնք էին տարածում։

«Խրիմեանի պատրիարքութեան չորս տարին անցաւ խիստ անգոյն կերպով։ Նա մի երևելի բան չարդիւնաբերեց, որովհետև նա կառավարչական մարդ չէր։ Այլ խօսքով նա ուսած չէր դիպլօմատիկական խորամանկ ձևերը, որով հմուտ քաղաքագէտը պատեցընում է իւր նենգաւոր մեքենան։

«Արդարև, Խրիմեանը եռանդոտ, անհանգիստ և անվաստակելի

---

փաստը, որ մեր մեծանուն երգիծաբանը իւր գլուխ գործոց «Ազգային Ջոջերը» հատորին մէջ, Հայ եկեղեցական, ազգային և գրական ժամանակակից դէմքերու՝ «Ջոջերու» շարքին ծաղրի և քննադատութեան ենթարկած չէ անձն ու գործունէութիւնը Խրիմեան Հայրիկի։

Այսպէս լինելով հանդերձ շատ տարօրինակ և զարմանալի է, որ «Մեղուի մէջ տպուած է (թերթը չը կրցայ ձեռք բերել, թուականն ու համարը ինձ անյայտ են) այդ ցինիկ ծաղրանկարը, որ կը ներկայացնէ Խրիմեանն «ընդ սիրուհիի մը այլանդակ և անհամեստ գծագրութեամբ»։ Ցանկալի է, որ պոլսահայ հին դէմքերը մամուլի միջոցով կամ մասնաւոր նամակներով պարզէին այս մութ հարցը։

բնաւորութիւններից մինն է։ Նա սիրում է գործել, ընկնել, կանգնել և միշտ պատերազմել վտանգների մրրկածուփ խռովութեան հետ։ Բայց այդ բոլորը բաւական չէր մի սահմանադրական վարչութեան գլուխ լինելոյ համար։ Խրիմեանը՝ որպէս շատ բանաստեղծներ՝ իդէալիստ է։ Նա համբերութիւն չունէր ազգային գործերի կանոնաւոր կերպով և յաջորդաբար բարեկարգելուն։ Նա պահանջում էր հրաշքներ։ Նա կամենում էր հայոց դեռ նոր տպիտութեան թմրութիւնից աչքը բացած ժողովուրդը յանկարծ վերաստեղծել և Շվէյցարիայի նման ձևակերպել։ Խրիմեանը անհամբեր էր։

«Ինչ ազգի բարեկամ, ճակատագիրը կոչում է քեզ, պատրիարքութեան սահմանափակ շրջանը քո տեղը չէ։ Դուն, որպէս Իսրայէլը Բաբելոնում, միշտ կաթոտում էիր քո նազելի Սալիմին— դա Վասպուրականն է։ Ինչ, կրկին սիրէ Վարագը, սիրէ Այգեստանի ուռիները, Արծիւը և Ժառանգաւորաց դպրոցը քեզ սպասում են...։»

Իւր ժողովուրդի ցանկութեամբ Խրիմեանը բաժնեգրացաւ պատրիարքական գահը, ուրկից սակայն կամովին իջաւ, վասն զի համոզուեցաւ, որ պաշտօնական ծիրանին և գահն ու գաւազանը իւր ազատատենչ հոգին կը կաշկանդեն, ձեռքերը կը կապեն և գործելը կը խանգարեն։

«Հայրիկ իր պատրիարքական քառամեայ միջոցին մէջ դուռ չանաց Ազգային Սահմանադրութեան թերի կողմը սրբագրել տալ և գաւառական առաջնորդութիւնները աւելի ի վիճակի դարձնել օգտուելու սահմանադրական օրէնքներուն ընձայելիք առաւելութիւններէն և թէ միանգամայն Պոլիսը մղել աւելի մեծ չափով մը հետաքրքրութիւ գաւառներովը և անոնց անվերջ, անհամար կարիքներովը—գլխաւորաբար կրթական։

«Հայրիկի այս չանքերն ու հեռատես վարմունքը՝ ինչ որ ապացոյց կը մնան իւր խելացի և քաղաքագէտ մտքին, ապարդիւն մնացին ազգային իշխանութեանց քով։ Պօլսոյ կարգ մ'ուժեր և մանաւանդ ազդեցիկ դասակարգը իսպառ խուլ մնացին անոր պահանջներուն և Խրիմեանի պատրիարքութիւնը դժբախտաբար չի կրցաւ ունենալ ապաուած արդիւնաւորութիւնը։

«Հայրիկ՝ յուսահատ օրինական միջոցներու անբաւականու-

թեննէն, աչքը արթնցող երիտասարդութեան դառնուց։ Միտքերը այդ կողմէն աւելի պատրաստ էին»*)։

*Եւ յիրաւի, Հայրիկը իւր աչքերն ուղղեց «արթնցող երիտասարդութեան» որ պիտի կերտէր Հայկական արիւնաներկ Ազատամարտը, օրուն համար արդէն միտքերը պատրաստ, սիրտերը հրավառ և հոգիները պայծառ էին։*

*Թուրքիոյ Հայութեան և Ազգային Ժողովի ցանկութեամբ, 1874-ի Ապրիլ 26-ին Պատրիարքական գահին վրայ կը բազմէր Ներսէս Արճեպիսկոպոս Վարժապետեանը, Խրիմեանի արժանի յաջորդը, որ առաջին առթիւ իսկ, պաշտօնական գրութիւն մը հրատարակելով Կ. Պոլսոյ «Մասիս» թերթին մէջ յայտարարեց որ—«Նախկին Պատրիարք Խրիմեանը Օրթագանը ոչ միայն ազգային տնդուկին և Պատրիարքարանին պարտք չունի, այլ և իւր ամսականներու հաշուին, դեռ ևս պահանջ ունի»։*

*Նորընտիր Պատրիարքը—Ներսէս Արքեպ. Վարժապետեան—այնքան յարգանք և պատկառանք կը տածէր Խրիմեանի հանդէպ, որ միշտ անոր խորհուրդներուն կը դիմէր և յաճախ, անձամբ Գուզկունճուք երթալով կը տեսնուէր Հայրիկի հետ։ Պատրիարքի և Ազգ. Ժողովի ցանկութեամբ Հայրիկը Գրօնական Ժողովի Ատենապետ ընտրուեցաւ, բայց շատ քիչ կը մասնակցէր նիստերուն։ Իւր մենութեան և խորհուրդներուն մէջ ամփոփուած, Հայրիկը կ'երազէր Վան—Վարագը, իւր «խուցն ու գրիչ և սակաւիկ մի թանապուր...»։*

*Գուզկունճուքի եկեղեցւոյ բակին մէջ առանձնացած, նա օրն ի բուն կը կարդար ու կը գրէր և շաբաթ անգամ կը հազիւ պտոյտի կ'երթար Կ. Պոլսոյ կողմերը, տեսնուելով իւր բարեկամներու և գաւառացի պանդուխտներու հետ։*

*«Պատրիարքութենէն հրաժարուելէ յետոյ —կը պատմէ Խաչիկ Խան Ծարաճեանը—Խրիմեանի հանդէպ Կ. Պոլսոյ Հայութիւնը այնքան վառ սէր և համակրանք կը տածէր, որ երբ հրաժարեալ Պատրիարքը փողոցներէն անցնէր, հազարաւորներ—Հայ, Յոյն, Տաճիկ, Բուլղար և այլազգիներ—ապշահար և հետաքրքրութեամբ կը*

---

*) Միքայէլ Նաթանեան—«Ընթիար Ընթիարեան». (կենսագրութիւն)։ „Արօր" ամսագիր. Թիֆլիս. 1910. № 3. էջ՝ 90—91։

նայէին անոր պարթև հասակին ու ժպտալից, գեղեցիկ դէմքին, որուն վրայ փայլող զոյգ աչքերը և արծուենի քիթը մասնաւոր ուշադրութեամբ կը դիտէին մանաւանդ կրոպացիները։ Քանի՛ քանի՛ անգամ ականատես եղած եմ այս տեսարաններուն։ Օր մը Դալաթիոյ կամուրջին կը մօտենար Հայրիկը։ Հոն խռնուած հայերը յանկարծ շրջապատեցին զինք և աչը համբուրեցին։ Ամէնէն առաջ վազեցին գաւառացիները, որոնք պոլսեցոց յետ քշեցին ըսելով որ՝—„Հայրիկը մերն է, առաջին անգամ մենք պիտի համբուրենք անոր ս. աչը և առնենք օրհնութիւնը“։ Այս խօսքերուն ի պատասխան պոլսեցի մը հեգնանքով ըսաւ—„Ախպէր, բարի վայելում, ձեզի ըլլայ“։ Մարդն իւր ըսելը գիտցաւ, մէյ մըն ալ տեսայ, խումբ մը գաւառացիներ վրան յարձակեցան և ազուռը մը ծեծեցին, երբ Հայրիկը հասաւ և հեռացուց յարձակողները։

«Գրիգոր Օտեանը օր մը ճաշի հրաւիրեց Խրիմեան և Վարժապետեան Սրբազանները։ Ես ալ ներկայ էի այդ ճաշին։ Խրիմեանը վերցուց բաժակը և առաջարկեց—„Այս բաժակը կը խմեմ աճցեայ, ներկայ եւ ապագայ պատրիարքներու կենացը“։ Վարժապետեանը հարցուց—„Սրբազան Հայրիկ, անցեալը դուք էք, ներկան մենք, իսկ ապագայի պատրիարքն ով պիտի ըլլայ“։ Հայրիկը ժպիտով մը յարեց—„Մաղթենք որ մեզմէ աղէկ մէկը ըլլայ“։ Ընդհանուր ծիծաղի և ծափերու մէջ, յանկարծ հուժկու ձայն մը հնչեցուց Հայրիկի երգը—Հայրի՛կ, Հայրի՛կ fո ճայրեճիf...։ Ուրախ դէմքերը թախիծով պատուեցան, իսկ Հայրիկը գլխահակ կ՚արտասուէր...»։

Խրիմեան Հայրիկը իւր «Ռouf ճրաժարմաճ»ի վերջին տողերուն մէջ անհուն կարօտով և սիրով կը յիշէ Արծուաբոյն Վարագը, իւր մենաւոր ու լռին խուցը, կ՚երազէ իւր գրիչն ու «սակաւիկ մի թանապուր»։ Վարագը իւր նաւահանգիստն էր ուր կը փութար հասնել Խրիմեան Հայրիկ—խռովեալ նաւը, որ սակայն շղթայուեցաւ Կ. Պոլսոյ ծովափին։

Խրիմեանը հրաժարուելէ յետոյ ինչո՞ւ չ՚անցաւ Վան-Վարագ, այլ մնաց Կ. Պոլիս։ Այս հարցին վճռական պատասխան մը տալ դժուար է։ Արդեօք պետութիւնը չը թոյլատրեց, որ նա Կ. Պոլսէն հեռանար, ազգային, ներքին արգելքներ կային, անձնական դոր-

ձեր ունէր, կամ թէ Վանի ազգային խռովայոյզ կեանքը (Պօղոս-Ապօղոսեան պայքարը) չը հրահրելու համար չ'ուզեց հայրենիքը վերադառնալ—չը գիտենք։ Պարզ է միայն, որ նա Կ. Պոլիս նստած՝ Վան-Վարագի կարօտով կը տանջուէր և հեռուէ հեռու կը ղեկավարէր Արծուաբոյն մենաստանի գործերը։

Իւր եղբօր որդին՝ Խորէն Խրիմեանը 1874-ի աշնան Գերմանիայէն Կ. Պոլիս կը վերադառնար։ Խորէնը Լայփցիկի համալսարանն աւարտած էր և իբրև վկայեալ մանկավարժ կը ներկայանար Հայրիկին, որը կը հրահանգէր Խորէնին երթալ հայրենիքը և պաշտօնավարել «Վարագայ Ժառանգաւորաց Դպրոց»-ին մէջ։

Խորէն Խրիմեանը 1874-ի Հոկտեմբերին Կ. Պոլսէն ճամբայ կ'իյնար դէպի Վան, իւր հետ տանելով Հայրիկի գրած այս նամակը*)։

*Արժանապատիւ Հայր Մեսրովպ.*

*Փոխանորդ Վարագայ Վանից.*

*Ընդ գրոյս պիտի ընդունիք մեր եղբօր որդին, Վարագայ դպրոցի հաւատարիմ աշակերտ զգօն Խորէն որ Գերմանիայէն դառնալով ի Պոլիս, ահաւասիկ Պոլսէն ի Վան վերադարձաւ։*

*Թէեւ մտադիր էի զոնէ մինչեւ ի զարուն քովս պահել, բայց հայրենեացս եւ Վարագայ սէր ղիմադրելով յաղթեցին զիս, խեղճ Հայրիկ դարձեալ միայնակ մնաց պանդխտութեան մէջ եւ իւր հոգեհատոր զաւակ իւր Հայրենեաց յառաջդիմութեան կը նուիրէ։*

*Բաւական ժամանակէ ի վեր Վարագայ դպրոցը առանց ուսման մնաց, այժմ պէտք է իւր կանոնաւոր ընթացքը ունենայ որպէս զի իւր նպատակին հասնի։*

*Ուստի հետեւեալ հրահանգները պէտք է ի գործ դնէք եւ ճշտութեամբ կատարէք։*

*Ա. Խորէնը դասատու ընտրուած է դպրոցին եւ միանգամայն ներքին կառավարութեան տեսուչ եւ ինք պատասխա-*

*) Այս անտիպ նամակի պատճէն ստացեր եմ տիկ. Իսկուհի Խրիմեանէն։

նատու է «Վանական Ժողովրդի» առաջ, ինչպէս դուք եւ «Վանական Ժողուրդը» մեր առաջ:

Բ. Դպրոցին մէջ ինչ դասեր, որ պիտի աւանդուին, ծրագիրը պէտք է խորհրդակցութեամբ պատրաստէք. ի հարկէ Ժողէն իւր մանկավարժական հմտութեամբ սոյն ծրագիր պատրաստելու համար պիտի առաջնորդէ:

Գ. Աշակերտաց թիւը 12 թւէն չպիտի անցնի եւ այն եւս խիստ ընտրանօք պիտի ընդունուին, գոնէ 15 տարեկանէն վեր, եւ մեծ մասը թեմական գիւղերէն ընտրելու է:

Դ. Ըստ ընտրութեան Ժողէնին խիստ ուշիմ եւ ընդունակ աշակերտներուն միայն գերմաներէն լեզուն դասաւանդելու է:

Ե. Անժխտելի օրէնք հաստատելու է, որ դպրոցի աշակերտներ միայն որոշեալ ժամուն վանուց այլ եւ այլ գործերուն պարապեն, եւ այս տեսչին հրամանով:

Զ. Ժողէն ուսուցչութեան պաշտօնէի զատ պէտք է խմբագրութեան պաշտօն եւս վարէ երբ յաջողի Արծուոյ վերստին հրատարակութիւնը:

Է. Դպրոց բարեկարգ վիճակի մէջ դնելէն յետոյ պէտք է վանուց ընդհանուր բարեկարգութեան եւս հոգ տանիք:

Ը. Անհրաժեշտ կերպով «Վանական Ժողուրդը» պէտք է ըստ Սահմանադրութեան շարունակել, եւ ամէն որոշումներ խորհրդով եւ համաձայնութեամբ որոշել:

Թ. Վարագայ վանուց միաբան եղբայրներ պէտք է ըստ ամենայնի վանական օրինաց հպատակելով, իւրաքանչիւր իւր պարտիքներ ճանաչէ, անձնուիրութեամբ աշխատի եւ վանուց վաղեմի պայծառութեան եւ յառաջդիմութեան համար գովելի ջանքերը ցոյց տայ:

Ժ. Սոյն հրահանգը ընդունելէն յետոյ պէտք է անմիջապէս այս նոր կարգադրութեան ձեռնարկէք եւ տեղեկագիր պատրաստելով ուղարկէք մեզ:

1874 Հոկտ. 5 Ի Պօլիս

Մնամ համայն ուխտիդ աղօթանուէր՝
Հայրիկ

Այս նամակը ցոյց կուտայ թէ Խրիմեանը որքան մտահոգուած էր վարագայ գործերով։ Բայց ինչ ըրած, Հայր Արծիւը կաշկանդուած էր Կ. Պոլսոյ մէջ, ուր իւր յաջորդին՝ Վարժապետեանին ժառանգութիւն թողած էր Հայաստանի հարստահարութեանց արիւնապարդ և վշտապատում Ցեղեկագիրը և Սահմանադրութեան վերաքննութիւնը։

«Խրիմեան Հայրիկին պատրիարքութեամբը Հայաստան և Պոլիսը աւելի սերտ իրարու կապուեցան—կը գրէ Արփիար Արփիարեանը ի Լոնտոն հրատարակուած „Նոր կեանք" թերթին մէջ—։ Մինչև այն ատեն պատրիարքները կուգային Պոլսոյ շրջականերէն կամ Փոքր Հայքէն։ Նիկոմիդիա, Պրուսա, Ռոտոսթո, Իզմիր, ասոնք էին պատրիարքներ պատրաստող մենաշնորհեալ քաղաքները։ Իսկ Հայրիկ բնիկ վանցի մըն էր, Հայաստանը քարոզած էր, ու վանէն կը բերէին զինք։ Ազգային ժողովը հայ ազգին գաղափարներուն և զգացումներու թարգմանը կը հանդիսանար։ Այդ նոր սերունդին պարագլուխը Օտեանն էր, ձր Հայրիկին ձեռքէն բռնեց և պատրիարքական աթոռը բարձրացուց»։

Ազգային ժողովը թէև խնդրած ու պնդած էր, որ Խրիմեանը չը հրաժարուի, բայց նա մերժեց, հեռացաւ Պատրիարքարանէն, որուն դիւանական թուղթերուն մէջ թողեց երկու կարևոր և կենսական փաստաթուղթեր—Հայաստանի հարստահարութեանց Ցեղեկագիրը և Ազգային Սահմանադրութեան վերաքննութեան հարցը։

«Վարժապետեան չթերացաւ արդարև այս խնդիրներուն տալու իրենց արժանի կարևորութիւնը։ իր նախագահութեան տակ գումարուած նիստերուն մէջ, երեսփոխանութիւնը առաջին օրէն սկսաւ ջերմօրէն զբաղիլ անոնցմով։ Հասանաբար իր փափաքին վրայ էր որ Խրիմեանը պարտաւորուեցաւ յետաձգել իր երթն ի Հայաստան, բանիւ և գործով օգնելու համար իրեն՝ որպէս զի իր ծրագրած ու սկսած ձեռնարկները ստանան գործադրութեան առաջին շարժումը»։ (Ռ.Ե.Գ. «Խրիմեան». էջ՝ 67)։

Գուզկունճուքի եկեղեցւոյ բակի խոնարհ յարկին տակ ապրող Նախկին Պատրիարք Խրիմեան Հայրիկ, իւր արծուենի, սրատես աչքերով կը հետևէր նոր Պատրիարքի և Ազգ. Ժողովի գործերուն, չանալով, որ Հայաստանի հարստահարութեանց հարցը

միշտ քննութեան առնուի և պետութեան ուշադրութիւնը անոր վրայ հրաւիրուի կտրուկ և վճռական քայլերով։

Դաւառներու տառապած Հայութեան աչքն էր Խրիմեանը, որ օրը օրին կը դիտէր Պատրիարքի և Ազգ. Ժողովի գործերը։ Այս իրողութիւնը պատճառ դարձաւ, որ Հայրիկի թշնամիները թերթերու մէջ յայտարարեցին՝ «Խրիմեանը կ'ուզէ տապալել Վարժապետեանը, նա կը ցանկայ նորէն Պատրիարք դառնալ» ևայլն։

Խրիմեանի «անկումի վաղորդայնին, թշնամիները չեն դադրած զինք հալածելէ, անոնք կ'ուզեն ցոյց տալ զինք իբր դաւադիր և չարանախանձ, որպէս զի Վարժապետեանի ալ հալածանքին հնթարկուի։ Հայոց Հայրիկը ճակատաբաց ու սրտաբաց կը դիմէ այս վերջնոյն, ամօթահար ձգելով իր զրպարտիչները» կը գրէ Թէոդիկը։

Խրիմեանը այս առթիւ 1874-ի Յուլիս 30-ին Վարժապետեանին կը գրէ հոյակապ նամակ*) մը «որ իր բարձր հոգիին և ազնըւական զգացումներուն մէկ ցոլացումը կրնայ համարուիլ»։ Մէջ բերենք քանի մը բնորոշ հատուածներ.

«Ամենապատիւ Տէր, Լծակից եղբայր ի Քրիստոս— կը գրէ Խրիմեանը Վարժապետեանին — Սէր, որ եղբայրական միութեան յօդիչ կապն է և գերագոյն պատուէրն Աւետարանի, զիս կ'ստիպէ թուղթ մի ևս առանձին ուղղել Ձեր Բարձր Սրբազնութեան; զոր թէ մտերմական կը համարիք կամ պաշտօնական՝ այն Ձեր ազատ կամաց կը թողում։

«... Դուք այսօր ազգային բարոյական ապարակի վերատեսուչն էք։ Ես կը հաւատամ թէ հսկող աչքով կը տեսնէք, կը դիտէք՝ թէ ոյք են այն չարաբուեստ թշնամիները որք գիտեն գաղտագողի որոմն ցանել արտերու մէջ և տափելով ծածկել։ Այլ երբ բուսնի որոմն և դուք զարմանօք հարցնէք՝ թէ ո՞վ արար զայն, նոքա իսպառ չքմեղս լինելով կ'երդնուն, կը վկայեն՝ թէ Խրիմեան ըրաւ, Խրիմեան.... Եւ թէ հետաքրքիր լինիք ու բացատրութիւն

---

*) Այս նամակի բնագիրը Երուսաղէմի Հայոց Ս. Յակովբեանց Մայրավանքի լուսարարապետ և գրական մշակ Մեսրոպ Նպիս. Նշանեանը արամադրած է Թէոդիկին, որն իր կարգին հրատարակած է իւր «Ամէնուն Տարեցոյց»ի 1926 է հատորին մէջ (էջ՝ 208—212)։

խնդրէք՝ թէ ինչո՞ւ համար կը ցանէ, անշուշտ բազմադիմի կերպով կը համոզեն զինեզ՝ թէ ես կը խուովեմ ու կը շարժեմ անդադար, որ Աթոռդ երթայ, Դու ի վայր գլորիս, և ես կրկին Հայոց Պատրիարք լինիմ։

«Մի՛ հաւատար, Սրբազան Տէր, հաստատուն կաց Աթոռիդ վրայ. այդ անգօր չղջիկան ոչինչերէն մի՛ շաքժիր. դորա սուտ կը խօսին, կը խարբալեն զինեզ, զի „Խրիմեան ոչ ևս է պատրիարք Հայոց՝“ յիշեցէք։ Այս խօսքն իմ վերջին հրաժարագրոյս վճռակիր որոշումն է, և այս որոշումն իմ հաստատամտութեան մէկ սկզբունքն է. ես դիւրութեամբ չեմ փոխեր զայն։ Դեռ երէկ Աթոռէն իջայ, և մինէչ ստրջացեր եմ և այժմ կրկին կը ցանկամ. Ո՛չ, ո՛չ այդ ցանկութիւն գնաց և մեռաւ յիս. անցելոյն այդ կարծուած փառքն այլևս կարող չէ զիս խաբել. բայ թէ մի անգամ սխալեցայ։ ... Բայց աւա՛ղ, այդ անկայուն փառաց անտևական ժառանգութիւնը հաճոյ չեղաւ Խրիմեանի, զի այդ բարձրագոյն Գահը Դողգոթայի Խաչէն աւելի կը չարչարէ, և փոխանակ փառաւորելու՝ աշխարհի առջև նշաւակելով կը նշաւակէ մարդը։ Դու ինքնին տեսար և տակաւին կը տեսնես՝ թէ ինչպէս անխնայ դեռ կը նշաւակեն զիս ձեռներէց գրիչները։

«Ես յոտից ցգլուխ վէրքերով լեցուած, երիքոյի ճամբուն վրայ ինկած, մի գթած Սամարացւոյ կ՛սպասեմ, որ ինձ պատահէը և վէրքերս պատէը ու բառնար տանէը զիս իմ Հայրենեաց պանդոկը։ Մեծ ակնկալութեամբ կ՛սպասէի որ իմ Յաջորդը Սամարացին լինէը իւր Նախորդին։ Ո՛րչափ նորանոր վէրքեր կը յաւելուս ընկերիդ վրայ, եթէ բանսարկու լեզուաց տեղի տաս և համոզուիս ու հաւատաս՝ թէ Խրիմեան Քո նախանձորդն է, և թէ մի կուսակցական թելադրիչ պարագլուխ և այլն. Այդ կը լինէը միանգամայն հաւանական, և բնական էը՝ եթէ յառաջ քան զինեզ պատրիարք չլինէի. եղայ և Դում-Դափուի Հայոց դրախտի ճաշակը ճաշակեցի. դեռ դառնութիւնը կ՛զգամ. Դու հաւատա՛, նորա՛յ միայն Քեզ կը լինին նախանձորդ, որ դեռ անփորձ և անճաշակ են։

«Ուրեմն, եթէ կը ճանաչէք Դուք ի վաղուց անտի զԽրիմեան, թող իմ այս անկեղծ խօսքերս հաւատարիմ լինին Ձեր առաջ, կը վստահանամ ասել՝ թէ ինչպէս Քո անձին, նոյնպէս և Քո կրտսեր

եղբօր հաւատայ որ մենք ոչ Քո նախանձորդն ենք և ոչ մասնակից կամ բաժանորդ խռովարարութեան։

«... Շատ և երկար խօսեցայ, ներողութիւն կը խնդրեմ զի այդ՝ վշտահար սրտիս անձկութենէն է. այլ չգիտեմ թէ կարացի համոզել զՔեզ. Ձեր մտաց գայթակղութիւնը բառնալ: Եւ եթէ խռոված է հոգիդ, ահա Քրիստոսի սիրոյ խաղաղարար ողջոյնը տալով կ'ըսեմ՝ թէ եղբայր եմք մեք...»։

Այս նամակը ստանալէ յետոյ Վարժապետեանն անշուշտ փարատեց իւր կասկածներն ու վարումները և այնուհետև աւելի ևս յարգանք ու սէր ցոյց տուաւ Խրիմեանի հանդէպ։

Վշտահար Հայրիկը 1876-ին Տրապիզոնցի իւր մէկ բարեկամին հետևեալ տողերը կը գրէր։

«... Այս անգամին մեր տեսութիւնը շատ համառօտ եղաւ։ Դուք ձեր ցաւերը բաւական պատմեցիք. բայց ես չկրցայ իմ վշտերս ու վիճակս պատմել, թէ ինչպէս հայոց պատրիարքութեանը, թող բարոյական ցաւերը, բաւական և շատ նիւթական ցաւերուն տակ ես ճնշուեցայ, այսինքն գրեթէ 450 լիրայէն աւելի պարտք մնաց վրաս. հայոց պատրիարքարանէն դուրս ելայ և ոխերիմ թշնամիք այնպէս կարծեցին և բամբասեցին թէ ես զկեդրոնական սնդուկն կողոպտեր եմ։ Ուստի այդ իմ պարտք վճարելու համար, բաւական ժամանակէ ի վեր սկսած եմ քանի մը աշխատութիւններ հեղինակել։ Ես տրտունջ չեմ բառնար, երբ Պօղոս առաքեալ վրան կը կարէր և միանգամայն կ'աւետարանէր. ես ալ պարտական եմ աշխատիլ եկեղեցւոյ մանուկներու համար։ Ես այս միջոցով միայն մտադիր եմ պարտքերս վճարել, և եթէ յաջողէ Տէր՝ գարնան սկզբին ի հայրենիք դառնալ և հանգչիլ վարագայ հովանեաց ներքև, զի շատ խոնջած և վաստակած եմ»։

Իսկ էջմիածնի միաբաններէն մէկուն Հայրիկը կը գրէր։

«Մարդս մեծ պաշտօնի գլուխ անցնելով կարող չէ այնպէս մեծագործել ինչպէս իւր ազգի փափագն է. այլ պէտք է խոյս տալ չարազբաղ վիճակէն, խոյս տալ նաև հակառակորդ ոսոխներէ. երթալ և գործել միայն լուսոյ եւ դաստիարակութեան համար»։

Եւ Վասպուրականի Արծիւը, Նախկին Պատրիարքն իբրեւ Խրիմեան Հայրիկ, իբրեւ գրամբակ-հեղինակ Հայոց գրականու-

թեան ասպարէզը կ'իջնէր նորէն՝ իւր ժողովուրդի «Լուսոյ եւ դաստիարակութեան» գործին նուիրուելու համար։

## Ը.

## ԳՐԱՄՇԱԿ—ՀԵՂԻՆԱԿ ՀԱՅՐԻԿԻ ԵՐԿԵՐԸ

Ամփոփուած ինքն իր մէջ, իւր մտքերու և գաղափարներու հետ, Խրիմեանը 1874-էն սկսեալ բացառապէս նուիրուեցաւ գրական աշխատանքներու։

Դուզկունճուքի եկեղեցւոյ լռիկ և մենաւոր խուցին մէջ, գետնէ վրայ, ցածլիկ սեղանի մ'առջև ծալապատիկ նստած՝ նա երկնեց ու գրեց հետևեալ երկերը, որոնք իրար ետևէ 1876-ին լոյս տեսան Կ. Պոլսոյ մէջ։

ա. ՀՐԱՒԻՐԱԿ ԱՐԱՐԱՏԵԱՆ*), որուն չորս «Նուագ»ներուն վրայ հեղինակն աւելացուց նաև «Նուագ Հինգերորդ»ը ցուցադրելով Տարօնն ու Մամիկոնեան Տունը։ «Հրաւիրակ Արարատեան»ի այս երկրորդ տպագրութիւնը «ընծայեցաւ ի լոյս շնորհիւ ազնուամեծար Յակոբ Էֆէնտիի Նորատունկեան»։

բ. ԴՐԱԽՏԻ ԸՆՏԱՆԻՔ.**) Երկասիրեաց Խրիմեան Հայրիկ. ի պէտս Հայոց ընտանեաց։ «Ընծայեցաւ ի լոյս շնորհիւ գերազնիւ Ասպետի Աստուածատուր Ջունդ»։

Նախաբանով հեղինակը Հայ ժողովուրդին կը դիմէ.

«Բարեկամ ժողովուրդ Հայոց։ Ձեզ կը նուիրեմ դուզնաքեայ երկասիրութիւնս, որոյ մակագիրն է „Դրախտի ընտանիք“. Այս անուն քաղցր ու ժողովրդական է։ Ծամ հասու, խոստովանիմ քեզ, րվ ազգ Հայոց, չորս տարուան Պատրիարքութեանս շրջանին մէջ, քո ընտանեկան բազմապատիկ աղէտները ես ինքնին տեսայ, և այդ աղէտներու մէջ՝ առաւել աղէտաւոր էին ամուսնական խնդիրները, որք թէ որչափ և բանիպատիկ ծանրալուր են, ես կը ծածկեմ այդ թուանշանը և խնդրոյ պատմութիւնը չեմ յայտներ

*) Կ. Պոլիս. Տպագրութիւն Ե. Մ. Տնտեսեան. 1876. էջ՝ 138։

**) Կ. Պոլիս. Տոքթարան Զարդարեան. 1876. էջ՝ 248։

քեզ. Ո՛վ Հայոց ընտանիք ճանչցէք ձեր չափն ու վիճակը, դուք շատ աղքատ էք ոսկւով ու մտքով, աղքատ էք գործունեայ աշխատասիրութեամբ, աղքատ էք արուեստական հանճարով, աղքատ էք իմաստուն տնտեսագիտութեամբ. ...Ես կը գովեմ քո եռանդը, որ կը ձգտիս դէպ ի յառաջդիմութիւն և քաղաքակրթութիւն, միայն թէ սխալ ըմբռնած ես, որպէս թէ զեղխութիւն, զեղծմունք, նորասիրութեան բուռն տենչանքը, ճշմարիտ քաղաքակրթութեան նմանողութիւն է. Դու ազնիւ եղիր ու ազնիւ ժողովրդոց բարի ու պարկեշտ օրինակին հետևիր, որոց ամենայն ինչ կշռով ու չափով է, որոց ընտանեկան կեանքին լոյս և առաջնորդ՝ ուսումն, դաստիարակութիւն եւ տնտեսութիւն է. Քաղաքակիրթ ժողովուրդ այս երեք բառերով կը վարէ իւր ընտանեկան կեանք, այս երեք բառերն են, որով նոքա բարեպաշտիկ և երջանիկ կ'ապրին աշխարհիս վերայ, վասնզի ուսման լուսով հաց կը գտնեն, դաստիարակութեամբ հոգին և սիրտ կրթելով բարի ընտանիք կը կազմեն, իսկ տնտեսութեամբ հացին սեղան և այլ կեանքի պիտոյքները չափով ու կշռով կը մատակարարեն միշտ հոգալով ապագայի անստոյգ օրերն. Ո՛վ դուք ընտանիք Հայոց, ուղղեցէք ձեր ներկայն, որ ապագայն ուղիղ լինի, տնտեսեցէք ձեր ներկայն, որ ապագային հացը չը պակսի. Մի մոռնաք վերոյշշեալ երեք պայմանները, որ մեր թշուառ կեանքը կը բարւոքեն. և այս է՝ լուսով հաց գտէք, դաստիարակութեամբ բարի ընտանիք կազմեցէք, իսկ իմաստուն տնտեսութեամբ հոգացէք միանգամայն ձեր ներկայն և ապագայն».

Հայրական գուրգուրանքի և անխառն սիրոյ հաւաքարան մըն է «Դրախտի Ընտանիքը», որ կը բովանդակէ ճշմարիտ հօր մը, ժողովուրդի մը Հայրիկի բարոյական և խրատական գերագոյն և և ջերմ զգացումները՝ ուղղուած Հայ ընտանիքներուն. Այս գիրքը իւր ժամանակին այնքան ջերմ ընդունելութեան արժանացաւ, այնքան համբաւ ու ժողովրդականութիւն վայելեց, որ մինչև անգամ Կ. Պոլսոյ, Վանի, Կարնոյ և այլ վայրերու մէջ, նորահարսերուն իբր օժիտ՝ ծնողներն օրինակ մըն ալ «Դրախտի Ընտանիք»*) կը նուիրէին.

*) «Դրախտի Ընտանիքի մասին մատենախօսական յօդուածներ հրատարակուած են «Ազբալոյս Արարատեան» (1876. Թիւ՝ 1037). «Փորձ» (Թիֆլիս.

գ. ՅԻՍՈՒՍԻ ՎԵՐՋԻՆ ՇԱԲԱԹ. ԽԱՉԻ ՃԱՌ.*) Հոգեգրեց Խրիմեան Հայրիկ. ի նուէր Հայաստանեայց Եկեղեցւոյ Ուխտին. «Ընծայեցաւ ի լոյս շնորհիւ և արդեամբ Մեծ. Ռուբէն Էֆէնտիի Կիւմիւշկէրտանեան».

Կ. Պոլսոյ «Հայրենիք» թերթը 1876-ին (Թիւ՝ 295) այս գրքի մասին հետեւեալ տողերը կը գրէր.

«Խրիմեան սրբազանի գրական արդեանց պատուականագոյնն է սոյն մատենիկը, որ թէպէտ փոքր է քանակաւ, այլ կարճ մեծ է պարունակեալ նիւթով և նիւթոյն արժանաւոր գրչով. վասն, քաղցր և արժանաւոր ոճ մը կը փայլի սկիզբէն ցվերջ և կենդանի ու հոգելից խանդ մը՝ անոր իւրաքանչիւր բանից և տողից մէջ. Հոգեգրանք մ'է լի ջերմ եռանդով, երկնային իղձերով, Խաչին սիրով, Աւետարանի խորհրդով, և զորս ի բարձրութեան պահելով, այնքան կը պարզէ, որ քրիստոնէին և ամէն ընթերցողին սխրալի ու իմանալի կ'ընէ...».

Կրօնական և աւետարանական բարձրաթռիչ զգացումներով գրուած այս գրքոյկը կը պատկերացնէ Խրիմեանի քրիստոնէական և մարդկային տիպար սիրտն ու հոգին.

դ. ԺԱՄԱՆԱԿ ԵԻ ԽՈՐՀՈՒՐԴ ԻԻՐ.**) Խորհրդածեց Խրիմեան Հայրիկ. Լոյս տեսաւ շնորհիւ Վանեցի Համբարձում Աճէմեանի.

Թուրքիան 1876-ին՝ ներքին դժգոհութիւններու և արտաքին պատերազմներու պատճառաւ ծանր կացութեան մը ենթարկուած էր. Ճգիրներու, աւերակներու, արիւնի և սուր ու հուրի մէջէն յանկարծ, 1876-ի վերջերը, ծնունդ կ'առնէր Օսմանեան (աւելի ճիշտ Միտհաթեան) Սահմանադրութիւնը, որուն կերտողը կը հանդիսանար Միտհաթ Փաշան.

---

1876. Ա. Տարի Թիւ՝ 2). «Մասիս» (1876. Թիւ՝ 1805—6).

«Դրախտի Ընտանիքը»ը լոյս տեսած է չորս տպագրութեամբ. 1876-ին Ա. տիպ և 1888-ին Բ. տիպ՝ ի Կ. Պոլիս, 1893-ին Գ. տիպ՝ Թիֆլիս, 1894-ին Դ. տիպ՝ Էջմիածին.

*) «Խաչի ճառը» լոյս տեսած է երեք տպագրութեամբ. 1876-ին Ա. տիպ և 1887-ին Բ. տիպ՝ Կ. Պոլիս, 1894-ին Գ. տիպ՝ Էջմիածին: Հայրիկ իւր այս գրքոյկը նուիրած է «առ հօրեղբայր իւր Խաչատուր Խրիմեան որ ի Տէր ննջեր է».

**) Լոյս տեսած է երկու տպագրութեամբ. 1876-ին Ա. տիպ՝ Կ. Պոլիս. 1895-ին Բ. տիպ՝ Թիֆլիս.

Եւրոպական պետութեանց միջամտութեան սարսափով ահաբեկուած Թուրքիան Սահմանադրութիւն կը հռչակէր, իսկ «Հիւանդ Մարդը» կարմիր Սուլթան Աբդիւլ Համիտը Օսմանի խալիֆայական գահին վրայ կը նստէր։

Օսմանեան Սահմանադրութեան հռչակումը առիթ դարձաւ, որ Խրիմեանը գրեց «Ժամանակ և Խորհուրդ իւր» գրքոյկը՝ հեղինակին կողմէ նուիրուած իւր հայրենակից Համբարձում Աճէմեանին։ Հեղինակը կը գրէ թէ—«Մարդ չէը հաւատար որ հինգ հարիւր տարեկան Թուրքիոյ պառաւած և ամուլ Մայր երկնելով հին աշխարհին համար նոր Մանուկ Սահամանադրութիւն մի ծնէր։ Ծնաւ, այո, և ստրկացած ժողովուրդներ իրրև ազատարար կը համարին զայն. բայց տեսցուք թէ դայեակները ինչպէս պիտի պահեն զայն, որ ապրի, երբ նոր վերածնած մանուկ Թուրքաստան կռուով և սրով մանկակոտոր կը լինի։ Դժբեմ ժամանակ երկու ձևոք միանգամայն բերաւ Թուրքաստանին վերայ. Նոր Օրէնք՝ Սահմանադրութիւն բերաւ, որ նորա յաւիտենական աւերակներ շինէ. պատերազմ բերաւ, որ նորա հին աւերակաց վերայ նորանոր աւերակներ կուտէ։

«...Ժամանակ ստրկութեան և ժամանակ փրկութեան. ժամանակ չարչարանաց և ժամանակ հատուցման. ժամանակ կործանելոյ և ժամանակ կանգնելոյ, ժամանակ ինքնահրաման պետութեան և ժամանակ Սահմանադրութեան»։

«Ո՛վ ժամանակ, դու գիտես որ հարուածող գաւազանին տակ ստրկական երկիւղով փակուած ժողովուրդին բերանն ու լեզուն՝ իւր կեանք պահելու համար սովորած էր միայն լռութիւն պահել և ապտակողին դէմ անմռունչ կերպով միւս երեսը դարձնել, եթէ մերթ ընդ մերթ ազատ մամուլ իւր ազատութեան ճիգ և ձայն հանէր, այն ես կը ճրնշուէր խիստ օրինաց ներքև։ ուստի մեր աշխարհի զրկանաց և անիրաւութեան բազմատեսակ վէրքեր միշտ ծածուկ մնաց, վերջապէս նեխեցաւ ու փտեցաւ, ամեն որ դարմանի դարման կ'ազազակեն։ Արդեօք խորհելոյ, գրելոյ և խօսելոյ ժամանակ հասաւ։

«Հասաւ, հասաւ այն ազատաբեր ժամանակ։ քեզ աւետիս կուտամ, ժողովուրդ, լռած լեզուդ և փակուած բերանդ բաց այ-

սուհետև, խօսիր և գրէ որչափ սահմանադիր Օրէնք քեզ ազատութիւն կուտայ· խօսիր երբ կը զրկուիս. խօսիր դատաւորաց առաջ երբ ապիրատ ձեռք զրեզ կ'ապտակեն. խօսիր և իրաւունք խնդրէ· Գիտցիր որ ազատ Օրէնք զքեզ զի փրկեր, եթէ դու դարձեալ ստրկութեամբ վարուիս քո ոսոխ դատախազիդ առաջ...»

«Ազատութիւն տուր, ով մանուկ Սահմանադրութիւն, ազատութիւն կը խնդրեմ քեզմէ որ առ քո սնուցիչ դայեակներն ազատաբար խօսիմ. զի այլեւս չեմ կարող հին ծառայական usrկութեամբ խօսիլ...»:

«...Ո՛ր դեղն ու դարման ինչ է, գիտես, ով ստրկացած մահամերձ ժողովուրդ, ազատութիւն եւ fաղաfակրթութիւնն է. և այն է միակ որ պիտի բառնայ գլխէդ կուփահարիչ հարուածները»:

Հայ ժողովուրդի և հայրենիքի ազատութեան և քաղաքակրթութեան նուիրուած Յեղափոխական Հայրիկի ձայնն էր, որ կը հնչէր բարձր ու խրոխտ:

Օսմանեան Սահմանադրութեան (1876) հռչակումէն յետոյ, Կ. Պոլսոյ մէջ կազմուեցաւ պետական «Քննիչ Յանձնաժողով» մը, որուն գործը պիտի ըլլար ամբողջ Թուրքիոյ համար մշակել բարեճոռոգմանց ծրագիր մը, որ համապատասխանէր ոչ միայն պետութեան՝ այլև հպատակ ազգերու շահերուն: Գառավարութիւնը յատկապէս հրահանգած էր՝ «Քննիչ Յանձնաժողով»ին, որ մասնաւոր ուշադրութեամբ քննութեան առնէր Թուրքիոյ մէջ ապրող քիւրդ ցեղերու վիճակը և մանրամասն տեղեկագրով մը յայտնէր թէ տնտեսական, կրթական, բարոյական և այլն ինչ տեսակ բարենորոգումներ կարելի է մտցնել մասնաւորապէս քիւրդ ցեղերու մէջ, որ անոնք պետութեան և երկրի ժողովուրդին չարիք ու պատուհաս ըլլալէ դադրէին:

«Քննիչ Յանձնաժողովը» (որուն մէջ պետական Հայ դէմքեր ալ կային) իւր աշխատանքներէն զատ դիմեց նաև խորհուրդներուն և աջակցութեան այն անձերուն, որոնք մօտիկէն կը ճանչնային քիւրդ ցեղերը և կրնային անոնց մասին լիակատար տեղեկութիւններ տալ ու բարենորոգութեանց ծրագիր մը ներկայացնել: Այս առթիւ դիմում կատարուած էր նաև Խրիմեանին, որ 1876-ին կը կազմէր՝

Ե. ԲԱՐԵՆՈՐՈԳՄԱՆՑ ԾՐԱԳԻՐ. «Կապոյտ թերթիկներու վրայ» Հայրիկի գրած այդ տետրակը առաջին անգամ լոյս տեսաւ*) ի Կ. Պոլիս 1909-ին, Մելքոն Կիւրճեան-Հրանտի յառաջաբանով, ուր ողբացեալ գրագէտը հետեւեալ տողերը կը գրէ։

«Այս ծրագիրը որ նոր լոյս կը տեսնէ, գրուած է 1876-ին, այնատեն երբ մեծ յոյս մը, ծիրանի թռիչքով կը տատանէր Հայութեան հորիզոնին վրայ։ Հայրիկը, Սիմէօն Ծերունիի պէս, ոգեւորուած գրկեր է այս մանուկ—յոյսը, որ իսկոյն ի բաց թռած է պրոմեթեան սլացքով և զինքը թողած սրտաբեկ՝ բազուկները պարապութեան վրայ կարկառուն»։ «Բարեզորգմանց ծրագիրը» իսկապէս մանրամասն և փաստացի տեղեկագիր մըն է քիւրդերու քաղաքական, տնտեսական և բարոյական վիճակի մասին։ Խրիմեանը մօտիկէն ճանչցած և ուսումնասիրած էր քիւրդերը, որոնց սանձարձակութեանց պատճառները նա կը վերագրէ պետական պաշտօնեաներու յոռի ընթացքին և կաշառակերութեան։

Սակայն խօսքը տանք Խրիմեանին։

«Այսպէս կը համարիմ և կը հաւատամ այժմէն որ գաւառացի գիւղական ժողովրդոց այցելութեան ժամանակն հասած է, քանզի քիւրտերուն բարեկարգութեան խնդիրը Բ. Դրան ուշադրութիւնը գրաւած է այսօր, որոյ վասն Ցանձնաժողովդ կարգուած է բարեկարգութեան ծրագիր մը պատրաստել։ ուստի բաղդ և պարտք կը համարիմ ինձ՝ եթէ յայդոիմ սոյն տեղեկագրովս մասնակից գտնուիլ այդ վերանորոգ և աշխարհաշէն ջանից, որոց ձեռնարկութիւնն ու նպատակը հայաբերական երկրին նոր կեանք, նոր յառաջդիմութիւն և նոր փառք կը խոստանան։

«...Շատ զարմանք է, որ Տէրութեան երկրին մէջ զինուորական բանակին մօտ, տեղական կառավարութեան աչքին առաջ ինչպէս կը համարձակին նոքա (քիւրդերը) կռուոյ բանակներ կազմել։ եթէ այնպէս կարծուի թէ տեղական կառավարութիւն իւր օահմանապահ զօրքերով կարող չէ ջիւրտերու արշաւանքները զսպել, սուտ կը խօսիմք, այլ ստոյգ խօսելով պէտք է խոստովանիմք թէ տեղական կառավարութիւնք այս մասին շատ պարտազանց գտնուած

*) Տպարան Ե. Գ. Փալադաշեան. էջ՝ 29։

են իրենց պաշտօնին մէջ և պատասխանատու Բ. Դրան առաջ: Երբ տեսնան ու հաւատան քիւրտերն թէ իրենց չարութեաց պատիժ կայ, անհնարին է որ նոքա իրենց այժմեան տկար դրութեամբ կարենան խլրտել և Տէրութեան երկիրն ապականել.

«Ուստի ճշմարտութեամբ պէտք է այս եզրակացութիւն հանեմք թէ քիւրտերուն բազմադիմի հարստահարութիւնը՝ իրենց վայրենութենէն ու զօրութենէն չէ այնչափ, որչափ տեղական կառավարութեանց անփոյթ և ապիկար դրութենէն, և մերթ ևս նոցա նպատակաւոր թոյլտուութենէն, որպէս զի առիթ ունենան մեծամեծ կաշառառութեամբ, այսինքն ոչխարով, իւղով, պանրով, նժոյգ ձիերով, գեղեցիկ գորգերով և ոսկւով իսկ տուժել զբիւրտն.

«Ո՞վ չգիտեր և չվկայեր թէ երբ տեղական կառավարութիւնք կը զեղծանին և այս կերպով կը վարին իրենց քաղաքային պաշտօնին մէջ, որ իսպառ ընդդէմ է Տէրութեան կամաց և օրինաց, Քիւրտերն ևս իրրև իրաւունք կը համարին՝ իրենց կաշառատուութեանը փոխարէն՝ երկրագործ ժողովուրդը հարստահարել, և առ այս՝ նոքա փաստ ևս ունին և յառաջ կը բերեն ասելով, թէ մենք ևս կառավարութենէն կը հարստահարուինք.

«Քիւրտը հերկագործ խոփին երբէք կարևորութիւն չտար. նա մանգաղ և գերանդիէն իրեն համար զէնք ունի և կը կրէ, այլ զինուոր չէ. կը կարծուի թէ Տէրութեան հպատակ է, հպատակ չէ.

«Եթէ քաղաքի գողերն երբեմն գիշերապահուն մէջ խիստ գաղտագողի և երկիւղով միայն մի քաղաքացիի տուն կը կողոպտեն, Քիւրտերն ցերեկի արևուն առաջ առանց բնաւ ակնածութեան կարող են դաշտի հօտն ու նախիրը կողոպտել. Ի՞նչ կարող են ընել գաւառապետ եղած փոքրիկ պաշտօնեանքն կամ Գրոսէրտարի ըսուած պահակները՝ իրենց սակաւ և ապիկար դրութեամբ, որք շատ անգամ նոյնիսկ խորհրդակից և գողադարան են աւարառու Քրդաց».

Խրիմեանը դիտել կուտայ, որ զինուած քրդութիւնը երկրի համար չարիք ու պատուհաս է. Քիւրդը պաշտօնական պատերազմի անընդունակ է և վախկոտ. Իրը փաստ կը յիշէ, որ արևելեան պատերազմի ժամանակ քիւրդերը «տէրութեան առաւել խոչնդոտներ եղան. կուտայ ասպարէզին մէջ նոքա իրենց աւարը կ'օրոնէին և

միանգամայն ևս ի փախուստ կը դառնային թենդանօթին ձայնէն։ Նոքա փոխանակ թշնամւոյն բանակ կողոպտելու, նոյն իսկ տէրութեան բանակ և ծառայող խեղճ ժողովուրդը կողոպտեցին։ Քիւրտերու քաջութիւնը սոսկ հոչակ է, և նոքա քաջ են միայն ստրուկ և անզէն ժողովուրդին վրայ, քաջ են աւարելու և կողոպտելու մէջ»։

Քրդական ահաւոր չարիքը մեղմելու համար Խրիմեանն իբրև բարեկարգութեան միջոց կ'առաջարկէ, որ նախ՝ քիւրդերը զինաթափ ըլլան և նստակեաց, խաղաղ կեանք մը վարեն, զբաղուելով երկրագործութեամբ, գիւղատնտեսութեամբ և նոյնիսկ առևտուրով։ Երկրորդ՝ քիւրդերը պէտք է համախմբուին, կեդրոնանան Ռորոշ վայրերու մէջ, որպէս զի պետական հսկողութեան ենթակայ ըլլան։ Երրորդ՝ կառավարութիւնը պէտք է սանձահարէ քիւրդ շէյխերն ու մոլլաները, որոնք կը քարոզեն մոլեռանդութիւն և ատելութիւն ընդդէմ քրիստոնէից։ Չորրորդ՝ «տէրութեան շահ և մարդասիրութեան պարտիք կը պահանջեն որ քիւրդերն ևս արժանի համարուին տէրութեան շնորհաց և կրթութեան։ Ուստի ձեռնարկուած բարեկարգութեան մէկ զօրաւոր և բնական միջոցս այս է՝ որ տեղական կառավարութիւնք քիւրտերու զաւակաց կրթութեան հոգ տանին, որով միայն հնար է Քիւրտերու վայրենի բարքը մեղմել ու բարւոքել և զանոնք հետզհետէ քաղաքակրթութեան մէջ դնելով՝ տէրութեան և երկրին հաւատարիմ ժողովուրդ կազմել»։

Քրդական չարիքներու և արհաւիրքներու մէջ, Խրիմեանը ծանր պատասխանատուութեան և մեղադրանքներու կոյտ մըն ալ Բ. Դրան բաժին հանելէ յետոյ կ'եզրակացնէ.

«Քիւրտերուն և այլևայլ գաւառաց կարգադրութեան համար առաջին պէտք բարեկարգիչ ձեռքն է, աշխարհաշէն մարդն է, Բ. Դրան արդար և անխարեբէի կամքն է, տէրութեան օրինաց անթեղի գործադրութիւնն է հպատակ ժողովրդոց հաւասար և անխտիր ազատութիւնն է, հաւատարիմ ու կարող պաշտօնէից փոքձառական ընտրութիւնն է, գաւառական պաշտօնէից անփոփոխ շարունակութիւնն է, և այս ամէնուն պսակը՝ Բ. Դրան անխաբ և անդրժելի պահանջումն է և այլ ուրիշ ոչինչ, և այս է միայն կայսերական երկրին բարեկարգութեան կատարումն և վախճան»։

Սակայն այս բոլորը «ձայն բարբառոյ յանապատի» մնացին և Խրիմեանի «Բարեկործութեանց Ընկերին» ալ թաղուեցաւ Բ. Դրան դիւանական թուղթերու փոշիներուն մէջ, Հայաստանի վշտապատում և արիւնոտ Տեղեկագրի կողքին։

Թ.

## «ՎԱՆԳՈՅԺ»

Մինչ Միտհաթ Փաշան և մեծանուն ազգային գործիչ Գրիգոր Օտեանը 1876-ին կը հիմնէին Օսմանեան Սահմանադրութիւնը,—որ պիտի գար Թուրքիոյ ժողովուրդներուն շնորհելու կրօնի, խղճի, մամուլի, խօսքի, անձի և ինչքի ազատութիւն, օրէնքի հաւասարութիւն, պարտադիր ուսում և այլն—մինչ նոյն թուականի վերջերը Կ. Պոլսոյ մէջ կը գումարուէր եւրոպական պետութեանց Դեսպանաժողովը, մինչ Խրիմեան Հայրիկը մեծ յոյսով ու ապագայի գեղեցիկ երազներով օրօրուն իւր «Բարեկործութեանց Ընկերը» կը կազմէր, անդին՝ Տաճկահայաստանի մէջ, Ծայրագաւառներու Հայութիւնը նոր սարսափներու և աղէտներու կ'ենթարկուէր Տաճկաց կառավարութեան և քիւրդերու ձեռքով։ Բարձր Հայքի, Տարօնի և Վասպուրականի մէջ պետութեան աչքին առջև, Հայութիւնը անխնայ կը խոշտանգուէր ու կը տառապէր, Բ. Դրան գիտութեամբ և հրահանգներով։

Ազգանուէր Պատրիարք Ներսէս Վարժապետեանը կորովի ջանքերով՝ Հայկական Հարցը Կ. Պոլսոյ Դեսպանաժողովի ուշադրութեան և քննութեան կը յանձնէր։

Հայ թերթերը ոգի ի բուին՝ Հայաստանի հարստահարութեանց և հայոց տառապանքներու մասին յօդուածներ և թղթակցութիւններ կը հրատարակէին*)։

Այս իրադարձութեանց ժամանակ, Վանէ Հայութիւնը, ազգի և հայրենիքի ազատութեան սիրով ու յոյսերով տոգորուած՝ ան-

*) Այս պատճառով ալ կառավարութիւնը 1876-ի աշնան երեք Հայ խմբագիրներ ձերբակալեց, ծեծել տուաւ և աքսորեց Տրապիզոն։

սահման ոգևորութեան մէջ էր։ Թրիմեանի և իւր աշակերտներու հոգիով ու շունչով դաստիարակուած սերունդները տարիներ շարունակ, ընդ օրեր եւ ընդ կեանս երազը էին։ Ցեղափոխութեան և ըմբոստութեան գաղափարները խոր արմատ ձգեր էին արթնցող երիտասարդութեան սրտին մէջ. Ազգային Սահմանադրութեան տարեդարձները (Մայիս 24-ին), վարդանանց հանդէսները, ազգային տօներ, երգեր, ճառեր, ժողովներ և այլն իրար կը յաջորդէին։ Ապատ և անկախ Հայրենիքի գաղափարը նոր սերունդի և երիտասարդութեան ներշնչման ազբիւրն էր։ Դպրոցները, գրադարանները, ընկերութիւնները արագ կերպով ծնունդ կ'առնէին։ Վարագայ Արծուաբոյնը Վասպուրականի Հայութեան ընծայած էր գաղափարական և հայրենանուէր շարք մը գործիչներ – հոգևորական և աշխարհական— որոնք խօսքով ու գրչով ժողովուրդի մէջ տարածեր էին իրենց Մեծ Ուսուցիչ Հայր Արծիւի միտքերն ու գաղափարները, որոնց վրայ կը կերտուէր Վասպուրականի Հայութեան ազգային, կրթական եւ գրական վերածնունդը.

Սուլթան Համիտի և Բ. Դրան աչքին, Վանը կը հանդիսանար «յեղափոխութեան եւ ըմբոստութեան միակ կեդրոնը», որուն Հայութիւնն ալ «խիստ վտանգաւոր» տարր մը նկատուած էր մանաւանդ այն շրջանին, երբ Հայկական Հարցն արդէն ծնունդ առած էր և գեսպանաժողովն ալ մայրաքաղաքի մէջ կը գումարէր իւր նիստերը։

Հայակերը Սուլթանն ու Բ. Դուռը կ'որոշեն այնպիսի ծանր հարուած մը տալ Վանի Հայութեան, որ այլևս առիթ չ'ունենայ յեղափոխութեան և ազատութեան մասին մտածելու։

Պատրաստուած ահաւոր ծրագիրը հաղորդուած էր*) Վանի զինուորական հրամանատարի փոխանորդ հայահալած և դաժան Չէրքէզ Մէհմէդ Բէյին ի գործադրութիւն։

Եւ ահա, 1876-ի Դեկտեմբեր 6-ի Շորեքշաբթի, մութ ու մռայլ ուշ գիշերին, Վանի տաճիկ զօրքեր, ոստիկաններ և խուժանը կը

*) Ծրագրի գործադրութիւնը չը հաղորդուեցաւ Վանի Միւթէսարըֆ Էրզրումցի Ջէննատ զադէ Զիա Փաշային, որովհետև սա ազատասէր, լուսամիտ և շատ բարի անձմը եղած է, որ յետոյ պաշտօնանկ եղաւ ու քշուեցաւ Վանէն։

մտնեն Վանի շուկան, նախ կը կողոպտեն հայոց մօտ 1500 խանութները և ապա կրակի կը մատնեն ամբողջ շուկան։

Պետութեան հրամանով և ձեռքով Վանի ամբողջ շուկան — իւր հարիւրաւոր խանութներով, վաճառատուներով, արհեստանոցներով, խաներով և այլն — կը ծփար բոցերու մէջ։ Ամբողջ ժողովուրդի մը տնտեսութիւնը կը թալանուէր և մոխիրի կը վերածուէր մէկ գիշերուայ մէջ։ Սև գիշերը յանկարծ այդ ահաւոր հրդեհով կը լուսաւորուէր և Վանի ծովը լափող բոցերու ծիրանի պատմուճանով կը ծածկուէր, մինչ անդին Քաղաքամէջի պարիսպներէն ներս և Այգեստանի խորքերուն մէջ, Հայութիւնը տանիքներու վրայ բարձրացած, ցուրտ ու ձիւնի տակ կանգնած, սարսափահար կը դիտէր այս ահաւոր աղէտը և կ'ողբար իւր թշուառութիւնը։

«Բազարի եանկուն» էր այդ, Վանի հրդեհը, որուն բօթը կը հասնէր ամէն կողմ։ Ամբողջ ժողովուրդ մը տնտեսապէս կը քայքայուէր և ծայրահեղ թշուառութեան մատնուած կը նստէր մոխիրներուն վրայ։

Խրիմեան Հայրիկը կը բռնէր գրիչը և մղկտացող, վշտահար սրտով, արցունքոտ աչքերով կը գրէր «ՎԱՆԴՈՑԻ»ը, որուն ձեռագիրը հետեւեալ նամակին հետ 1877-ի Յունուար 25-ին կը յանձնէր իւր հայրենակից Աբրահամ Սօլախեանին։

*Առ Մեծարոյ սիրելիդ իմ,*

*Աբրահամ Սօլախեան, մտերիմ հայրենակից.*

«Վան վառուեցաւ, որ իմ և քո ընակատնունդ հայրենիքն է. անշուշտ ձեր ազնիւ սիրտն ևս մեր կարեվէր սրտին հետը վշտահար եղած է։

«Այդ քաղաքաւեր կրակին համար, որ անխնայ այրեց լափեց մեր հայրենեաց կեանքը, ես մի կաթ ջուր պատրաստեցի, չէ թէ այրած ժողովուրդին մորմոքեալ սրտին ջուր տալու մտքով՝ զի դորա համար գետեր և ծովեր պէտք են՝ այլ մի միայն Վանայ դպրատանց աղքատիկ մանուկներուն ծարաւն ու պապակը զովացնելու համար։

«Ծոյն իմ արտասուաց մի կաթիլ ջուրը ձեր բարեսիրտ ազնուութեան կը յանձնեմ, որ զայն ձեր օգնական ձանիւք առատացնէք, այ-

սինքն մամուլին տալով հոգայք տպագրութեան պէտքը, որոյ դուզնաքեայ արդիւնքն նուիրենք հետ քեզ մեր հայրենեաց այն կարօտ մանուկներուն՝ որք այսօր անդպրոց, անգիրք և անթուղթ մնացին։ Այս փոքրիկ բարոյական հացի նկանակը մեք մատակարարեմք, զի մեր բաժին է. իսկ հանապազորդական հացն Թողումք Թող Աստուած հոգայ, ոչ միայն տղայոց այլ և հարցն ու մարց։ Ո՛հ, հայրերը չքաւորութեամբ Թշուառացան և արդ անմխիթար դառնութեամբ կը հեծեծեն տան մէջ. գոնէ զաւակներ մխիթարուին դպրոցին տաճարին մէջ։ Շէն քաղաքի մի վաճառանոցի խանութներ փակուեցան, չՀողումք որ դպրոցներն էլ փակուին, մինչև յիշէ Աստուած և այցելութիւն լինի տառապեալ ժողովուրդին»։

Լսեցէք հայրիկի ձայնը— ՎաՁգա՛յ....

«Ո՛ տայր ինձ, ո՛հ, գեղեցիկդ Վան, Վասպուրական աշխարհի զարդն ու պսակ, որ աւերակիդ աճիւնացեալ մոխրին վերայ նըստելով՝ արժանի լինէի զքեզ և քո որդիքներդ ողբալ։

«Պատահար քո՝ երկնից պատահար չէր, այլ նոյն իսկ քո երկրէն և քո մէջէն. հին դրացի քաղաքացիներդ դաւեցին զքեզ. նորա՝ որ քեզ հետ կուտէին հայրենի սեղանէն, նորա՝ որ քո ճակատին քրտանց վաստակով լիապէս կը յագենային, ո՛հ անխնայաբար ոտնակոխեցին բարելից հացի սեղանդ։

«Այսուհետև զարդիւնս ձեռաց իւրեանց կերիցեն։

«Արդեօք տնակից եղբայրներդ նախանձեցան, հացն ու վաստակ ձեռքէդ կորզեցին, որպէս զի դու ՚առ քաղցի ուժաթափիս, ոգիդ և չիղերդ Թուլնան, ծունկերդ կՀոտին, և այլ ևս չկարենաս յառաջադիմել դէպ ի յուսոյն ասպարէզ և լաւագոյն կեանք։

«Եթէ այսպէս, ափսո՛ս, նա քան զքեզ առաւել տուժեց ու չկրցաւ խորհրդով խելամտել, որ քո կարծեցեալ յառաջդիմութիւնդ երկրին ընդհանուր բարգաւաճման անխտրապէս շահ և օգտակար էր։

«Ի՞նչ խորհրդաւոր օր էր հրափորձութեանդ օր, ով անբախտ Վան. միթէ այն օր քեզ համար սև օ՛ր էր, երբ Թուրքաստանի պայծառ օր կսկսէր, երբ Բիւզանդիոնի Վոսփորէն հրանօթներ կորոտային, և Օսմանեան միապետ ինքնակալ Գայսր սահմանադրութիւն կը կնքէր. այն ուրախ օրերում, ո՛հ, մոլեգնութեան հուրն զքեզ լափեց, ծուխով ու մուխով խեղդեց քո խնդութեան ձայն և շունչ։

«Ծովն քեզ մօտ էր, ջրոց աղբիւրները և վտակները կը վազէին. կարաձմեռն էր, թանձր ձիւնի ճերմակ սաւանով պատած էիր, շէնքերդ ամէն հոդակառոյց էին, մարդ կը զարմանայ, թէ որպիսի դիւրութեամբ վառեց քեզ կրակ։

«Ողորմիմ քեզ, ժողովուրդ Հայոց, ողորմիմ. արգեօք լաւագոյն չէր քեզ, որ միանգամ մեռնէիր և կնքուէր քո հանգստեան դերեզման և դու երթայիր դադարէիր առ հարս քո, քան թէ այսպէս ի գետին թալկանալով արիւնացամաք մեռնիս։ Ո՜հ, մինչև երբ անսամ քեզ, որ ինքնազոհ մեռնիլ սորվիս. աշխարհ սորվեցաւ այդ դասը, իւր մրցանակն առաւ, դու դեռ անուս մանուկ մնացիր։

«Այո՛, այն օրերը, երբ սահմանադիր օրէնք պարտք և իրաւունք կը քարոզէր, հաւասարութիւն կաւետէր, քո զրկանք և հարըստահարութիւն աւելի ևս ծանրացաւ։

«Ո՛վ Թուրան Թուրան, ես չգիտեմ՝ թէ չախչախելով չախչախելով ինչ շահեցան քո որդիքները։ Այդ հաշիւը տեսաւ կայսրութիւն և մեզ յայտնի է այսօր, որ Թուրքաստանի ժողովուրդ ամէն կրօնի ազգերը առ հասարակ չախչախուեցան քաղաքակրթութեան առաջ. սուտ է թէ ասեմ՝ օտարին ձեռք զմեզ չախչախեց. Ո՛չ, ո՛չ, մեք զմեզ անգիտաբար չախչախեցինք և արդ փշուր փշուր եղանք։

«Նախատեսէ՛, նախատեսէ՛, ո՛վ Թուրքաստան, սուրն ու դանակ քաղաքակրթութեան պատենին մէջ դիր, գիտցիր եթէ չանաս միշտ քո վաստակաւոր եղն իւր վարած ակօսին մէջ մորթել՝ ինչ կը լինի այնուհետև քո շահն, ոչինչ, միայն միսն ու կաշին. և յայնժամ դու անագան ուրեմն կուշաբերիս. և աւա՛ղ, կը տեսնաս որ երկիրդ անմշակ մնացեր է, հացին ու գանձին սեվը կը տիրէ, երկրին զաւակներ քաղցած կը մնան։ Ծանի՛ր ուրեմն ծանի՛ր, այդ ժրագործ եզին շահաբեր արդիւնքը, փոխանակ ազազուն պահելոյ՝ դարման տար ու պարարտ պահէ զայն, որ իւր ուժով կարենայ վարել քո խոպդացեալ երկիրը։

«Դու գիտե՛ս, ով հաւատարիմ ժողովուրդ Հայոց, մարդիկ և ազգեր կան, որ քո այնչափ հաւատարմութիւնդ կը ծաղրեն ու կը մեղադրեն զքեզ. երբ կը տեսնան որ խիստ անմտութիւն և անզգայ կը լինիս հաւատարմութեանդ մէջ, մինչև անշունչ անբարբառ

դիակ մի կը դառնաս դու, այնպէս որ պարկեշտութիւնդ կը նշաւակեն և կոխկռտելով կանցնին վերայէդ, և դու չես իմանար. Միթէ գոհաց կաս ես դու աշխարհիս երես, ես էլ կը դատիմ զքեզ թէ այդչափ տրկանաս և աղարտիս մարդկութեան ազատ պատիւ.

«Ելէք ուրեմն, մի նստիք և յուսահատ ողբաք այդ ապաժոյժ աւերակաց վերայ. ելէք, վանեցիք, թաղեցէք այդ մեռելը, վրան կոթող մի կանգնեցէք ու գրեցէք այս յիշատակարանը. „ԱՍՏ ԹԱՂԵԱՒ ՎԱՆԵՑԻ ՀԱՑ ԺՈՂՈՎՐԴՈՑ ԴԱՆՁՆ ՈՒ ԿԵԱՆՔ“:

«Դու լոյս և արև կը սիրես, ժողովուրդ. լոյս և արև զքեզ պիտի վերածնին, քո հրայրեաց երկիր մարգագետին կը դառնայ. լուսին ի վերուստ վերայէդ անցնելով պիտի զարմացմամբ հայի երբ տեսնայ, որ Արծրունեան աշխարհի որդիքներ համակ արծուապէս նորափետուր զարդարուած են, զոր բռնութիւն փետտեց որ լերկամարմին անպատանք մեռնին.

«Ես կը լռեմ, Տէր, թող այրած ժողովուրդին հեծեծանքն միայն առ քեզ հասնի, բայց ինչպէս լռեմ. թէ լռեմ ես, Վասպուրականի քարերն կաղաղակեն, երկու բիւր ժողովրդոց աչք վկայ են այս ճշդիւտ իրողութեան, թէ աշխարհիս իշխանութեան դատաւորներ այս վկայութիւն չընդունին, այնուհետև դատ և դատաստան քեզ կը մնայ, ո՛վ իրաւարար Տէր.

«Մամռուլ, մամռուլ, որ քան զարծիւ արագաթիռ ես, ու և տար մորմոքող սրտիս ցաւն ու հառաչանք և աչքիս աղէկուր կաթիլները, տար ցօղէ այն իմ այրած Հայրենեաց փոշիացեալ աւերակներուն վերայ, ցօղէ վառուած ու մրկած սև սիրտերուն վերայ.

«Գիտեմ, գիտեմ, այս իմ հեռաւոր նժդեհութեան վայրէս զքեզ լալ միայն հերիք չէ, ո՛վ իմ բնակատնունդ Հայրենիք, ո՛վ իմ խանձեալ խանձարուր. գամ գամ և քեզ հետ կական բառնամ, մոխրակուտիդ վերայ ողբանուէր նստելով զքեզ ողջագուրելով լամ».

Այսպէս ահա, Խրիմեան Հայրիկը «Վանգոյժ»ով*) «կուց մը

*) Վանգոյժ. կուց մը ջուր իւր այրած հայրենեաց վրայ կը սրսկէ Խրիմեան Հայրիկ. Կ. Պոլիս տպագրութիւն Արամեան. 1877. էջ՝ 16. «Վան Գոյժ»ի

ջուր կը սրսկէր իւր այրած հայրենեաց վրայ» և յոյսի ու քաջալերանքի խօսքեր կ'ուղղէր Վանի Հայութեան, որուն «պարզած սրտոտ կեցուածքը» յաչս պետութեան «մտահոգիչ հանգամանք» ըլլալէ կը դադրէր։

Այս ահաւոր աղէտի հետքերը կորցնելու և պետական այդ ոճրագործութիւնը քօղարկելու համար, Բ. Դուռը զանազան լուրեր և զրոյցներ յերիւրեց փաստարկելով, թէ—«Վանի հայերն իրենք էին, որ հրդեհեցին շուկան, այն դիտումով, որ Կ.Պոլսոյ Դեսպանաժողովը քննութեան առնէր նաև Հայկական Հարցը»։ Աւելի չարամիտները կը պնդէին, որ—«Ռուսական դրդումով է, որ հայերն այրեցին իրենց շուկան» և այլն։

Ազգային Ժողովն ու Պատրիարքը կը ցնցուէին։ Անոնց հետեւած «զգուշաւոր քաղաքականութեան» համար ծանր հարուած մըն էր ահա Վանի հրդեհը, որու մասին Պատրիարք Վարժապետեանը մանաւոր պատգամաւորութեամբ մը Բ. Դուռը գնաց և բողոք-տեղեկագիր ներկայացուց։ Օսմանեան Խորհրդարանի (Մէջլիսի Մէպուսան) մէջ անգամ Վանի հրդեհը քննութեան կ'առնուէր։ Հայ պատգամաւորները (մէպուս) սքանչելի համարձակութեամբ մը, բանի մը յոյն պատգամաւորներու հետ, խիստ կերպով կը քննադատէին կառավարութեան այդ դաւադրական քայլը։

Կովկասի մէջ Գրիգոր Արծրունին իւր «Մշակ» շաբաթաթերթով հանգանակութիւն կը բանար յօգուտ Վանի Հայ հրկիզեալներուն և սոսկալի կերպով, բուռն քննադատութեան կ'ենթարկէր Վարժապետեանի և Ազգային Ժողովի «խոհական քաղաքականութիւնը»։

Բ. Դուռը այս անելէն դուրս գալու համար, առաջին առթիւ Էրզրումի կուսակալութեան ենթակայ Վանի միւթէսարըֆութիւնը

---

այս հրատարակութեան մէկ մասը պետութեան կողմէ գրաւուեցաւ, բայց նոյնը 1877-ին Բ. տպագրութեամբ լոյս տեսաւ Թիֆլիսի մէջ։

Վ. և Գ. Զարդարեան եղբարք 1908-ին Կ. Պոլսոյ մէջ լոյս ընձայեցին «Վանգոյժ»ի Դ. տպագրութիւնը (տպ. Ե. Ասատուրեան· էջ՝ 16)։ «Վան Գոյժ»ի այս հրատարակութեան վրայ, ինչպէս նաև ուրիշ տեղեր, «կուց» բառը սխալմամբ «կուժ» գրուած է։ Վանի Հայ բարբառով «կուց» բառը կը նշանակէ երկու ձեռքերու միացած ափերու ջուրխմիկի ձևը, որով կարելի է ջուր վերցնել։

կուսակալութեան (վալիլըղ) վերածեց և իբրև կուսակալ Վան ղրկուեցաւ Շկodրալի Քէօսա Հասան Փաշան, որուն օգնական (մուավին) նշանակուեցաւ Մկրտիչ Աղաթօն (և ոչ թէ Մարկոս Ա-ղաբէկեան)։ Հետզհետէ պետական ծառայութեան մէջ մտան նաև ուրիշ Հայ պաշտօնեաներ։ Պետութեան կողմէ «Քննիչ Խառն Ճանձնաժողով» մը ևս Վան հասաւ, հրդեհին պատճառները քննելու համար, սակայն Ճանձնաժողովին տեղեկագիրը Բ. Դրան կողմէ բարձի թողի (մինէտէր ալթի) եղաւ եւ այսպէս հարցը փակուեցաւ։

Այս բոլորէն յետոյ, Սուլթան Համիտը հրամայեց, որ գրաւեն և այրեն «Վանգոյժ»ի չը սպառած օրինակները, իսկ Օսմանեան Տեբակոյտի անդամ նշանակուած Խրիմեան Հայրիկին ալ, «Վանգոյժ»ի պատճառով, հրաժարեցնել տուաւ։

«Վանգոյժ»ի հեղինակը նորէն Թուղկունճուքը քաշուեցաւ եւ տեղւոյն եկեղեցւոյ քարոզիչը դարձաւ։

## Ժ.

## «ՀԱՅԳՈՅԺ»

Բալքանեան ժողովուրդներու 1876-ի ապստամբութիւններն ու դիւցազնական, արիւնալի կռիւները արդէն ահաբեկեր էին Ելտրզի Պալատն ու Բ. Դուռը։ Ռուսական բանակներն ու պատերազմական նաւերը օրէ օր հրամանի կը սպասէին Թուրքիոյ վրայ յարձակուելու համար։

Հիւսիսի ահաւոր սպառնալիքը խուճապի մատնած էր Թուրքիան, որ հետ ի հետ պատերազմի պատրաստութիւն կը տեսնէր։

Եւ ահա, 1877-ի Ապրիլի 12-ին, Ռուսաստանը պաշտօնապէս պատերազմ յայտարարեց Թուրքիոյ դէմ. Ռուսական բանակները Արարատի ստորոտներէն սկսած մինչեւ Բալքանեան երկիրները յարձակողականի անցան։

Թուրքիան դէպի ռազմաճակատ քշեց ոչ միայն կանոնաւոր զօրամասերը, այլեւ բաշիբոզուկները (խուժան), անկանոն խումբեր եւ այլն: Վասպուրականի. Տարօն-Տուրուբերանի և Բաբնը-Հայքի

նահանգներու մէջ ապրող ամբողջ քիւրդ ցեղերն ու հերոսական-խումբերը. Էրզրումի եւ Բայազիտի ռազմաճակատը մեկնեցան։ Շէյխ Ջէլալէտտինը իւր տասնեակ հազար քիւրդ ձիաւորներով Աղրակէն Վանի վրայով յառաջացաւ դէպի Բայազիտի ճակատը, որուն հրամանատարն էր Մուխթար Փաշան։

Ռուսական բանակները Հայ զօրավարներու՝ Լոռիս-Մելիքովի, Տէր-Ղուկասովի և Լազարեի հրամանատարութեամբ յաղթական արշաւանքներով գրաւեցին Բայազիտ, Ալաշկերտ, Կարս և Էրզրում՝ ամենուրեք արժանանալով հայերու սիրալիր ցոյցերուն։

Մուխթար Փաշայի բանակը սոսկալի պարտութեան մատնուելով չարդուեցաւ Ալաջայի բարձունքներուն վրայ, իսկ մօտ 60,000 քիւրդ հերոսականները խուճապահար փախան դէպի երկրի ներսերը։

Կովկասը թալանելու ախորժակով ռազմաճակատը մեկնած քիւրդերն ու տաճկական բանակներու մնացորդները, իրենց կրած չարաչար պարտութեան վրէժը Վասպուրականի, Բարձր Հայքի և Տարօն-Տուրուբերանի Հայութեան գլխին թափեցին։ Թալանի և արիւնի ծարաւով կատաղած հրոսակախումբերը զարհուրելի ոճիրներ գործեցին մանաւանդ ռազմաճակատին մօտիկ Բագրեւանդի (Ալաշկերտ) Հայ գիւղերու մէջ։

Քրդական անկանոն զօրախումբերն արդէն պատերազմ սկսել առաջ, երբ դէպի ռազմաճակատ եկած էին, ամենուրեք Հայ գիւղերը արհաւիրքի մատներ էին։ Թալան, սպանութիւն, կանանց առևանգում և բռնաբարումը՝ սովորական դէպքեր էին։ Շէյխ Ջէլալէտտինի 15,000 քիւրդերը Թալանի և Հրդեհի մատնած էին իրենց ճամբու վրայ գտնուած Հայ գիւղերն ու վանքերը՝ Աղրակէն մինչև Ալաշկերտ։

Նոյն ոճիրները գործած էր նաև Նորտուզի Տրպազ Աղան՝ իւր 800 ձիաւոր քիւրդ աւազակներով*)։

Նահանջող քիւրդերը մահ, արիւն, կրակ և աւերածութիւն

---

*) Շէյխ Ջէլալէտտինի և Տրպազ Աղայի հրոսակախումբերը երբ Վանի Հայոց թաղերը կողոպտել կը փորձեն, ժողովուրդը տանիքներէն և պատուհաններէն քար և մոխիր թափելով քիւրդերու վրայ զանոնք փախուստի կը մատնէ։

սփռելով կը հեռանային՝ իրենց հետն թողնելով ծխացող, աւերակ գիւղեր և տասնեակ հազարաւոր Հայ դիակներ։ Բովանդակ Ալաշկերտի հովիտը—պատմական Բագրեւանդը—կը ծփար ծուխի և արիւնի մէջ, իսկ մազապուրծ եղած մօտ 3000 Հայ գեղջուկներն ալ ռուսական բանակներու հետ կ՚անցնէին Կովկաս։

Հիւսիսի երկգլխանի Արծիւն ու Հարաւի երկեղջիւր, արիւնոտ Մահիկը Արարատի հարաւային լանջերու և ստորոտներու վրայ իրար կը զարնուէին, իսկ ասդին Հայութեան արիւնը կը հոսէր և Տաճկահայաստանի մեծագոյն մասը զարհուրելի աւերածութեան, թալանի և հրդեհի կը մատնուէր քիւրդերու և տաճիկ զօրքերու ձեռքով։

Հայկական այս արիւնալի աղէտը խորապէս կը յուզէր Խրիմեան Հայրիկի վիրաւոր սիրտը, որ դեռ կը մղկտար «Վանգոյժ»ով։ Հայրենեաց Հայրիկը վերցուց գրիչը և արիւն արցունքով «Գրեց եւ տխուրհագուժեց» ՀԱՑԳՈՑԺ. Աշխարանք Հայոց Աշխարհին*).

«Ողբամ զքեզ, Հայոց աշխարհ, զի քո կեանք ողբերգութիւն է. ամեն դար և ժամանակ երբ աղէտներ կբեզ պատեցին, դու միշտ աղէտներուդ հետ մի ողբերգու ծնար. քո առաջին ողբերգուն Մովսէս Խորենացին է, որ հազար երկերիւր ամ յառաջ ուժգին ողբաց զքեզ, մինչ վերացաւ գլխէդ Արշակունի թագ, մինչ ջախջախեցաւ իշխանութեանդ գաւազան, նսեմացաւ քո փառք, կորեաւ ազատութիւնդ, և դու տիրական բարձրութենէդ խոնարհեհելով իջեր ծառայական 'ի ստրկութիւն. դու որ քան զհիւսիսականս վեհագոյն կը դնէիր քո գահը։

«Մարախի ու թրթուրի նման թափեցան, Հայոց գիւղեր և դաշտեր ծածկեցին, մի խուն ժամանակի մէջ ամեն կանանչութիւն կերան ու չորցուցին, այն շէն շէն գեղեր և աւաններ անապատ դարձուցին։ Մ՚իթէ չգիտենք 'ի սկզբանէ անտի որ այդ ազգին

---

*) Հայգոյժ. Աշխարանք Հայոց Աշխարհին. Գրեց և աշխարհագուժեց Խրիմեան Հայրիկ։ Տուաւ ի մամուլ մաերիմ հայրենակիցն մեր Գաբոն Համբարձում Ամէմեան։ Կ. Գալիս. Տպագրութիւն Ս. Մ. Ծնտեսեան. 1877. էջ՝ 32։

Հայգոյժը Բ. տպագրութեամբ լոյս ընծայեցին Վ. և Գ. Զարդարեան Եղբարք, 1908-ին Կ. Գալիս. տպագր. Ե. Ասատուրեան. էջ՝ 32։

ձեռք միշտ քանդող է. երբէք շինել չգիտէ. ես էլ չգիտեմ թէ ինչու՞ համար է որ երկրին իշխանութիւն այդ աշխարհաքանդ ձեռք կարճել չուզեր.

«Ես գիտեմ ու կը ճանաչեմ զՓիւրտն. գիտեմ թէ նա ինքնին ոչինչ գործ և զօրութիւն չունի. այդ անդէպ պատճառանքները 'ի բաց թողունք. Այո, դենպետներու կրօնամոլութեան հուրը կը վառէր զիրենք. այլ ինչ հուր էր այն, որ 'ի ներքուստ զդենպետները կը վառէր.

«Ո՜հ, մի՛ կրկտեր այդ հուրը, գրի՛չ իմ, գրի՛չ իմ. կը բորբոքի և զքեզ կ'այրէ. թող այրէ, թող այրէ, և աճիւնս երթայ խառնուի Հայոց այրած ժողովուրդի աճիւնին հետ.

«Ողբամ զքեզ, մանո՛ւկ մայրակորոյս. կ'ասեն թէ քո մայր մինչ 'ի փախուստ կը խուճապէր, մոռցաւ մայրական սրտի գորով, ձգեց թողուց զքեզ մի վարած արտի ակօսին մէջ. թերևս հաւատաց Քրիստոսի խօսքին և ասաց թէ մանկիկս իբրև ցորենահատիկ մի ցանեմ հայրենի հողին մէջ, թող մեռնի, որ բեղմնաւորի հատիկս բազմապատիկ ատոք ցորենով. Եւ ինչ է այդ.—Հայոց աշխարհի ազատութիւն.

«Ողբամ զձեզ, Հայո՛ց մայրեր, որ կորուսիք ձեր լծակից ամուսիններ և սիրական զաւակներ. թէ մեռաք՝ երանի՛ ձեզ, թէ ողջ մնացեր էք՝ եղի՛ւկ ձե՛զ. Ո՜հ, ինչ կը լինէր, որ դուք ևս այն Մշեցի դիւցազն կնոջ պէս զօրանայիք, ձեր վշտակրութեան և հալածանաց մէջ կամակար մեռնէիք կրօնի սրբութեան համար, ձեր զաւակաց սիրոյն համար, ձեր համեստ պատկառանաց համար. միթէ այժմ կապրիք դուք, և լաւագոյն չէր ձեզ մեռնիլ քան այդ չարավիշտ կեանք.

«Բագրևանդայ փոքրիկ հօտին փոքրիկ հովիւներ, ո՛վ քահանայք, թէ ողջ մնացեր էք՝ առէք ժամհարներ հետ ձեզ, գնացէք շրջեցէք բաղաքի փողոցները, տներ և տան մութ խորշեր որոնեցէք. շրջեցէք նաև գեղերու և դաշտերու մէջ, ժողովեցէք ուր և գտնէք Հայոց անթաղ մեռելներ. զի մեռելներու տէրերը թողին ու փախան. ծնողք փախան՝ զաւակներ թողուցին, զաւակներք փախան՝ ծնողք թողուցին. նոյնպէս անբաժան սիրելի ամուսիններ սէրը մոռցան, զիրար թողուցին ու փախան.

«Մի մի կամ ուրոյն ուրոյն գերեզման մի փորէք այդ անտէր մեռելներուն, այլ բոլոր միահամուռ խոր վիհերու մէջ թաղեցէք. միայն խաչքարէ նշան մի կանգնեցէք հողակարկատին վերայ. ես աստ կ'արձանագրեմ նոցա սուրբ և անմահ յիշատակը։

«ԱՍՏ ԿԱՏԱՐԵՑԱՆ ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԵԱՆ ԵՒ ՀԱՑ ԱՆՈՒԱՆ ՀԱՄԱՐ ՔԻԻՐՑԵՐՈՒ ԱՆՈՂՈՐՄ ՕՐԷՆ, ՕՍՄԱՆԵԱՆ ՑԷՐՈՒԹԵԱՆ ՀԻՆԳ ՀԱՐԻՒՐ ՏԱՐՈՒԱՆ ՀԱՒԱՏԱՐԻՄ ՀԱՑԵՐ.

«...Առէք նաև իջուցէք 'ի վայր ընդ ձող և ընդ ցից հանեալ Հայոց օսմաննեան երիտասարդներն. արև տեսաւ, լուսին տեսաւ, աստղեր տեսան, աշխարհ տեսաւ և Աստուած տեսաւ. այլ վկայ կը խնդրէ՞ք, ո՛վ աշխարհի ատենակալ դատաւորներ.

«Համառօտեցէ՛ք, համառօտեցէ՛ք աշխարհի խաղաղութեան դաշնագիրը. համառօտեցէ՛ք ձեր երկար և պատիպատ դատաստանին վճռագիրը, տեսցուք թէ Հայոց այնչափ զրկանաց, այնչափ զոհերուն և թափած արեան գինը դուք ինչ կը վճռէք.

«Այլ գիտեմ ես, գիտեմ, ո՛վ Հայոց անթաղ դիակներ, ձեզ համար ոչ քահանայ կայ, ոչ ժամհար, ոչ յուղարկաւոր, ոչ սիրելի, ոչ բարեկամ. սարսուռ և արհաւիրք ամենուրեք տիրեր է, ո՞վ կը համարձակի կատարել ձեր թաղման հանդէսը. Ո՜հ, ո՜հ, Հայո՛ց որդիքներ, հող ու դաշտ շատ ունէիք, գետնի երես դուք անհող, անծածկոյթ մնացիք, երկնից թռչուններ և երկրի շուներ ժողովեցան՝ կերան ձեր մարմին, կրծեցին ձեր ոսկորներ. մինչ ողջ էիք՝ բռնութիւն զձեզ կեղեքեց ու քերթեց. և մեռնելէն յետոյ՝ թերևս ասացիք թէ ազատուեցանք տառապանքէն, հանգչինք հողին մէջ. ո՛չ, ո՛չ, հանգստեան հող չտուին ձեզ. զի նոյն անողոք բռնութիւն՝ ձեր անշշունչ դիակներ ևս հարստահարեց.

«Ո՛վ՝ Լուսի՛ն Լուսին, Հայոց աշխարհէն կուգաս, Բագրեւանդայ կոտորածի դաշտերէն անցա՞ր. այնպէս կը թուի որ գիշերաժամուն մէջ շառաւիղներդ արիւնոտ դիակներու վերայ զարնելով՝ երեսդ շառագուներ է. Մի՛ անցնիր ճեպով. պահ մի կաց Բիւզանդիոնի Հորիզոնին վերայ, պանդուխտ Հայերուն լո՛ւր տուր Հայոց աշխարհէն. լո՛ւր տուր մեր թշուառ ընտանիքներէն, ո՞վ մեռաւ, ո՞վ մնաց, ո՞վ գերեցաւ և ո՞վ թողուց հայրենիք գաղթական գընաց, թողուց իւր հասած հունձեր, թողուց իւր հօտն ու նախիր,

թողուց իւր կեանքն և ամենայն ինչ։ Մերկ, կողոպուտ գնաց. ասաց թէ՝ անցնիմ այս կարմիր ծովէն և միանգամ ազատիմ չարչարանաց աշխարհէն։

«Լէնկթիմուրի գերեզմանի որդերէն ծնած ոմն չարաճճի սողուն, կրծելով կրծեցիր Հայու միսն ու ոսկոր, օձանման սողալով մտար Հայոց դրախտը, ամէն ծաղիկներ և կանաչ բոյսեր պղծելով ապականեցիր, չարչարեցիր Աստուծոյ խոնարհ ժողովուրդ։

«Ո՜հ, Հայոց աշխարհ, ո՜հ, աղէտներդ անբաւ անկշիռ են, զորս կրեցիր դու այս նոր Լէնկթիմուրի*) ձեռքէն։

«Այլ մխիթարեմց, մխիթարեմց, Մայր Հայաստան, զի դու սովորած ես ցաւեր ու վիշտեր կրել. հազար անգամ մահաբեր երկունքներ զքեզ ըմբռնեցին և դու հանդուրժելով անցուցիր երկունքներդ և ողջ մնացիր. հազար բիւր աղէտներ տեսար, միշտ որդիքներդ գրկէդ վարատեցան, բայց դու երբէք չվհատեցար, զի, ոգիդ պողպատի նման պինդ և աննկուն է. հազար անգամ գերեզմանին դուռը հասար, թշնամիներդ տեսան՝ ծափ զարկին, թէ վա՜շ, մեռաւ Մայր Հայաստան, և դու անդրէն Ղազարոսի նման վերածնար գերեզմանէն։

«Մի՛ վհատիր, ժողովուրդ, այս աշխարհ և աշխարհիս գահեր՝ ամեն գայթակղութիւն և օրոգայթներ ունին, խեղճ և ստրուկ ժողովուրդներ բռնաբարուած են և կը գոչեն ազատութի՛ւն, ազատութի՛ւն. Այլ ոչինչ ճար չունին, դորա միակ ազատութեան ճար՝ լոյս և կրթութիւնն է. դու զայն երբ ՚ի ձեռս երես, այն օր է միայն քո ազատութեան օրհնանդէս։

«Ցո՜ւռ, յո՜ւռ, ո՛վ խոտորուած գառներ, ո՛վ Հայոց ողջ ու մնացորդ որդիքներ, դեռ պիտի խոտորուիք, դեռ պիտի մորթուիք այդ չքոտի Քիւրդերէն, քանի որ ունգէն, ականջիդ, անուսպար ի՛ապրիք. դուք մարդ էք, ձեռք եւ բազուկ ունիք, միթէ անգգացած մնո՛ւր է ձեր արտմտութեան ոգին. միթէ կը հաւատա՛յք որ իշխանութեան աչքը հասնի մինչեւ Հայոց ամայի չեռներ ու դաշտեր եւ ձեզ պահապան չիմի։

«Ո՛վ դու մաշած և հիւծած հիւանդ, թէ յիրաւի բժշկութիւն

---

*) Ակնարկն անտարակոյս Սուլթան Համիտի մասին է։

կը ժտես, թէ ստոյգ ազատութեան կը ցանկաս, օն ուրեմն, փոքր ինչ խլրտիր մահճիդ մէջէն, ինքնաշարժ եղիր. ահաւասիկ Աստուծոյ մատն ու հրեշտակ աշխարհիս յեղափոխութեան աւազանին ջուրերը կը յուզեն. ով որ զինքն վաղ ձգէ նորա մէջ, նա միայն իւր ցաւերէն ազատ կը լինի։

«Թէ չգիտես, ես՝ իբրև դաս խօսիմ քեզ, որ դու խելամտիս թէ քանի թանգ է ազատութեան գին. աշխարհիս Փրկիչ զայն իւր խաչով և արիւնով գնեց. նոյնպէսնակ մեր նախնի քաջերը Եկեղեցւոյ և Հայրենեաց ազատութիւն մահով և արիւնով գնեցին: Մինէ դու ցանկալի ազատութիւն առանց զոհի և արեան ձրի ստանալ կ՛ուզես։

«Ո՛վ Երկնից արդարութիւն, մարդկանց փրկութիւն ընդունայն է. սուրդ երկայնամտութեան պատենէն հան, դու միանգամ հար և լուծէ այս յաւիտենական հանգուրցը, որ աշխարհիս վերայ գայթակղութիւն մի դարձեր է. վայ նոցա՝ որոց ձեռքով այս աշխարհաքանդ գայթակղութիւն կու գայ։

«Դու կը տեսնաս, երբ գահեր կռիւ ուզեն՝ Արևելեան խնդիրը կը յուզեն՝ և երբ աշխարհակալել կամին՝ դարձեալ Արևելեան խնդիրը կը հանեն։ Մինչև յերբ գահեր թողուն մարդկութեան վայելուչ խօսք, խորհուրդ և ուխտ, սրով և արիւնով խօսին. մինչև յերբ զօրաւորներ կռուին՝ տկար և անզօր ազգեր ոտքի տակ ճմլուին, պատերազմի արշաւանքներու առաջ խեղճ ժողովուրդ աշխարհաքանդ ու տնաքանդ լինի։

«Ծէ՛ր դու գիտէիր կանխաւ, որ աշխարհ և գահերն զմեզ կը չարչարեն. այլ քո ճշմարիտ հաւատացեալներ պէտք է յամենայն ժամ այս խնդրեն. Եկեսցէ արքայութիւն քո, որ է ճշմարիտ խաղաղութիւն, սէր և հաւասար եղբայրսիրութիւն, և քո բարի կամքն այն է որ մարդիկ այս պայմանով ապրին աշխարհիս վերայ»։

Այս էր ահա «Հայգոյժ»ը, որով Խրիմեանը ի յայտ կուգար ոչ միայն գուժկան և ողբերգու, այլ իբրև դաստիարակ մը, որ կը դադարարտէր Օսլեան Համիտի, Բ. Դրան և քիւրդերու ոճրածին ընթացքը՝ հայոց հանդէպ։ Հայրիկը իւր «անզէն և անմեղուն» ժողովուրդին ըմբոստութեան եւ ինքնապաշտպանութեան հրաւէրը կը կարդար։ Նախկին Պատրիարքը կը հերքէր ներկայ Պատրիարքի

«խոհական ընթացքը» և զէնքի գաղտիարը կը ներշնչէր իւր ա-բիւնաքամ ու զարկուած ժողովուրդին. Հոգևորականի վեղարը գլխին դրած, պաշտօնական սքեմը հագին, խաչը կուրծքին կա-խած՝ հայրիկը իւր վիթխարի հասակով կը ցցուէր Թուրք բռնա-կալութեան աչքին առջև և իբրև Անդրանիկ Ցեղափոխական՝ զէնքի եւ ինքնապաշտպանութեան ձայնը կը հնչեցնէր. Հայկական Ազատագրութեան ահազանգը «Վաճգոյժ»ով ու «Հայգոյժ»ով կը զօդանչէր. Խօսքի ու գրչի, խաչի ու մաճի քարոզներու կողքին հայրիկը վայելուչ տեղ մըն ալ կուտար զէնքին, որուն փրկարար զօրութեան մասին Խրիմեանի հաւատքը շատ վառ և խոր էր.

## ԺԱ.

## ԲԵՐԼԻՆԻ ՎԵՃԱԺՈՂՈՎԻ ՆԱԽՕՐԵԱԿԻՆ

Ռուս-տաճկական պատերազմի ընթացքին, Վարժապետեան Պատրիարքը, հետևելով իւր «խոհական քաղաքականութեան՝» հայ ժողովուրդին ուղղուած կոնդակ մը հրատարակեց, ուր պարզապէս «խունկ էր ծխում» Օսմանեան կառավարութեան և թշնամական ակնարկները կ'ընէր Ռուսաստանի անուան. Ահա քանի մը հատ-ուածներ.

«...եթէ այսօր Թուրքիոյ մէջ կը տեսնենք Հայ ազգը, որ կը պահէ իր կրօնը, իր լեզուն, իր պատմութիւնն ու աւանդութիւն-ները և վերջապէս եթէ այսօր Հայ ազգը կը զգայ իր էութիւնը, նոյն բարեխնամ տէրութեան շնորհաց արդիւնքն են. Ստոյգ է թէև, որ Հայ ազգը մերթ ընդ մերթ գաւառներու մէջ բարեխնամ տէ-րութեան կամաց հակառակ, հարստահարութեանց ենթակայ եղած ալ է, հարստահարութիւնք, որոնք միայն մարմինը կը վնասեն և հեռի են այն տեսակ հարստահարութիւններէն, որոնք ոգին և մար-մինը միանգամայն կը վնասեն և ազգին գոյութեանը կը սպառնան, սակայն վերջին օրերս ձեռք առնուած միջոցներով... Մեծ յոյս ունինք որ այնպիսի մասնաւոր ճնշման ու անկարգութեանց ալ հիմնական բարեկարգութեամբ առաջքը պիտի առնուի...»

«Արդ՝ Հայ ազգն... չի կրնար անտարբեր մնալ Օսմանեան Տէ-

ըութեան գտնուած արդի ծանրակշիռ պարագայից մէջ, այլ պարտաւոր է... անկեղծ օժանդակութիւն մատուցանել։ Օսմանեան երկիրը պաշտպանել՝ Հայաստանը պաշտպանել ըսել է, նոյնիսկ հայուն կրօնը, դպրոցը, ինչքը, տունը, ընտանիքը և պատիւն ու կեանքը պաշտպանել ըսել է...» («Մշակ» 1876. № 33)։

Եւ այս տողերը ստորագրողը այն Վարժապետեանն էր, որ Խրիմեանի պատրիարքութեան օրով, Հայաստանի հարստահարութեանց և տառապանքներու «Բննիչ Ծանձնաժողով»ին կը նախագահէր և Ազգային Ժողովին կը ներկայացնէր Հայութեան վշտապատումի արիւնոտ Տեղեկագիրը։

Վարժապետեանի կոնդակը այնքան խոր վրդովմունք և յուզում յառաջ բերաւ Հայութեան մէջ, որ մեծանուն Հայ հրապարակագիրը Գրիգոր Արծրունին «Մշակ»ի մէջ (1876 № 33) այդ կոնդակը համարեց «խայտառակ և ամօթալի», իսկ Ներսէս Պատրիարքին անվայել և հայհոյալից քննադատութեան ենթարկելէ յետոյ, հետևեալ բնորոշումը տուաւ ծանօթ կոնդակին—«Այո՛ դա յատկանիշ է ամենաստոր, ամենաանբարոյական, ամենալիրբ կղերականութեանը...»։

Սակայն որքան անարդար էր Գր. Արծրունիի այդ անզուսպ յարձակողականը Ներսէս Պատրիարքի անձին և անուան ուղղուած։ Մթեթ ազգասէր Պատրիարքը անձնապէս կատարած էր այդ կոչը, չէ՞ որ անդին Ազգային Ժողովը կար, էֆէնտիներու և աղաներու պահպանողականներու և տաճկամոլ անձերու շրջապատ մը կար, որ ոչ միայն այդ տխրահռչակ կոնդակի յղացումը այլ և խմբագրութիւնը կատարած էր։ Ներսէսի կամքն ու խօսքը խեղդուած էին այն շրջապատին մէջ, ուր Գրիգոր Օտեանի նման գործիչներն անգամ անզօրութեան և կամ համակերպութեան կը դատապարտուէին։

Այդ կոնդակի պատասխանատուութիւնը կը ծանրանայ ոչ թէ Ներսէս Պատրիարքի վրայ, այլ «Հայ դժբախտ, այլանդակուած իրականութեան վրայ, որ զուրկ ամուր նեցուկներից, հակազդեցութեան, դիմադրութեան սեփական միջոցներից, ապաւինած հզօրների կամքին ու խոստումներին, մոլորեցնում է երբեմն ժողովրդասէր, լուսամիտ և լաւագոյն գործիչներին, դատապարտում է՝ գնալ յաճախ մանուածապատ ճամբաներով, մերթ դէպի աջ,

մերթ դէպի ձախ, նայած թէ որ կողմից կը գան վարդապոյն, խոստումնալի պատրանքները», կ'եզրակացնէ Միքայէլ Վարանդեանը։

Պատրիարքի այդ կոնդակը, որքան որ բուռն դժգոհութիւն և զայրոյթ յառաջ բերաւ Հայութեան մէջ, նոյնքան գոհունակութիւն պատճառեց Բ. Դրան և Սուլթան Համիտին, որ դեռ ցոյց տուած չէր Պարմիր Դազանի իւր արիւնոտ երախը և պատառող ժանիքները։

Սուլթան Համիտը այնքան գոհ մնաց Ներսէս Պատրիարքի կոնդակէն, որ 1877-ի Օգոստոսի 10-ին, Ելդըզի Պալատին մէջ, յատուկ ընդունելութիւն շնորհեց Վարժապետեանին, իւր կողքին բազմեցուց զայն և նուաղ ու սիրալիր ձայնով մ'ըսաւ.

«— Ես, որ մրջիւնի մը վրայ կոխել կը խղճամ, այսչափ արիւնհեղութիւններ տեսնելուս յոյժ կը ցաւիմ, բայց Աստուած գիտէ, որ այս պատերազմին համար ես չեմ պատասխանատուն»։

Պատրիարքը յարգանքի և մեծարանքի խօսքերով հազիւ կը համարձակէր յիշեցնել Սուլթանին՝ «Հայոց մատուցած ծառայութիւնները և ըրած զոհողութիւնները այս պատերազմի միջոցին, մաղթելով, որ շուտով վերջ գտնեն այս արիւնի օրերը, որպէսզի կարող լինի „գահակալութեան օրը փառաւոր խաթթով խոստացած բարեկարգութիւնները ի գործ դնել վաճառականական և երկրագործական դպրոցները հաստատելով“ և այլն» (Թ. Ե. Գ. «Խրիմեան». էջ՝ 83)։

Սուլթան Համիտը, Պատրիարքի այդ խօսքերը «ձեռնամած և խիստ ազնիւ վարմունքով ջերմեռանդութեամբ մտիկ կ'ընէր» և քանիցս «շնորհակալ եմ» ըսելէ յետոյ, առքի ելաւ և իր ձեռքով Ներսէսի կուրծքէն կախեց Ա. աստիճանի Օսմանիյէ շքանշանը «յանուն և ի դէմս իր սիրելի Հայոց ազգին, յորոց յոյժ շնորհակալ էր»։

Պոլսահայ թերթերը խանդավառ յօդուածներ կը գրէին Պատրիարքի և Սուլթանի այս տեսակցութեան և խօսակցութեան մասին, որ կ'արձանագրուէր նաև Ազգ. Ժողովի տեղեկագրութեանց մէջ, իսկ երեսփոխանները «կը շնորհաւորէին Ազգին պետ՝ ձեռքը բերուած այս յաջողութեան համար, և—պէտք է հաւատալ արդեօք այնքան ունայնամտութեան—կ'որոշուէր երախտագիտութեան ուղերձ ներկայացնել Վեհափառ Սուլթանին իր հայասիրական զգա-

ցումներուն համար». Սուլթան Համիտը հայասէր.... Ըսէք հայակեր...։

Այս բոլորի մասին որքան բնորոշ և սրտառուչ են Թորգոմ Արքեպիսկոպոսի հետեւեալ խօսքերը («Խրիմեան». էջ՝ 83)։

«Ճէլալէttինի գոհերուն գերեզմանը փակուած ու մահարձանը դրուած էր. միայն թէ այդ կոթողին վրայ փոխանակ ԽԱՉԻ մը՝ cfաճcաճին ՄԱՀԻԿՆ էր fաճդակուած...»։

Սուլթանի և Պատրիարքի տեսակցութեան յաջորդ օրը, Խրիմեան Հայրիկը կ'այցելէր Վարժապետեանին ու քանի մը ազգային դէմքերու ներկայութեան կը հարցնէր.

—Սուլթանը ինչ միջոցներու դիմած է, որ Հայոց կոտորածները չը կրկնուին....

Վարժապետեանը կը կարկամէր, կը սկսէր սպրդնիլ, դողալ՝ առանց պատասխան մը տալու այդ ահաւոր հարցումին։

Խրիմեանն, անշուշտ, տխուր և հեգնական ակնարկ մը կը ձգէր Պատրիարքի կուրծքէն կախուած շքանշանին վրայ և յուզուած կը հեւանար....

Հայրիկ... կարմիր Սուլթանի կարմիր Մահիկով հովուանաւորուած այդ շքանշանն էր արդեօք պատասխանը «Վանդոյժ»իդ ու ու «Հայգոյժ»իդ։ Վանի հրդեհի բոցերն ու Բագրեւանդի արիւնի ճապաղիքները նշմարեցիր այդ շքանշանի գոհարներուն և ադամանդներուն մէջ։

Պատրիարքին կուրծքը զարդարող սուլթանական շքանշանը տեսնելէ յետոյ Խրիմեանը ցաւ ի սիրտ կը բացականչէր.

—«Ոչխարներուս ոսկորներեն մանեակ շինեցիր եւ հովիւիս վիզէն կախեցիր...»։

Ո՜րքան ահաւոր և պատկերաւոր էր այս ակնարկը, որ Խրիմեանը կ'ուղղէր Ներսէս Պատրիարքին։

Այս զարհուրելի օրինակը, ցնցեց ժամանակակից գիտակից Հայութեան էութիւնը և խոցեց Ներսէս Պատրիարքին սիրտը։

Հայրիկի այդ հարուածը թերևս շատ ծանր էր Վարժապետեանին համար, «բայց բոպէին պահանջը անդիմադրելի էր»։ Մեծ Հայը «Հայգոյժ»ն աշխարհագուժելէ յետոյ էր, որ ցաւ ի սիրտ կը տեսնէր այդ դիւանագիտական խաղերը։

«Սուլթանը ինչ միջոցներու դիմած է, որ Հայոց կոտորած-

նները չը կրկնուին...»։ Խրիմեանի այս հարցումը համարուեցաւ մատնութիւն և դաւաճանութիւն։

«1877-ի Օգոստոսին, Գօլսոյ Լրագիր թերթը չի վարանեցաւ գրելու՝ „Ո՞վ է մատնիչը“, խենեշօրէն մոլեգնոտ յօդուածագիրը, Հայոց Հայրիկը կ'անուանէր մատնիչ և դաւաճան. Եւ այդ Լրագիր-ի խմբագրապետն էր Նիկողոս Թիւլպէնտճեան։

«Եւ ինչո՞ւ Հայրիկ դաւաճան, մատնիչ կը համարուէր . . . Վասն զի ան դիմած էր Պատրիարք Վարժապետեանին և հարցուցած էր թէ.—Համիտ ինչ միջոցներ ձեռք առած էր հայերու կոտորածը չի կրկուելու համար։ Այս հարցումը կառավարութեան դէմ դաւաճանութիւն համարուեցաւ»*)։

Այն տեսնելը, երբ դեռ Բագրեւանդի, Վասպուրականի, Բարձր Հայքի և Տարօնի կողմեր սփռուած էին քիւրդերու և տաճիկներու ձեռքով նահատակուած հայերու ոսկորները, երբ Հայ Աշխարհի ամէն կողմեր արիւն կը հոտէր և հրդեհուած գիւղերը դեռ կը ծխային, իսկ ժողովուրդը ցան ու ցրիւ եղած կամ գաղթական դարձած էր, այդ տեսնն էր ահա, որ Ազգային Ժողովն ու Պատրիարքը Սուլթան Համիտին կը գրէին շնորհակալութեան և երախտագիտութեան Ուղերձը, որու մասին հեռաւոր Հիւսիսին մէջ նստած Հայկական Ազատագրութեան բանաստեղծ և Ազգային Երգիչ Գամառ-Քաթիպան (Ռաֆայէլ Պատկանեան) դառն ու կծու հեգնանքով մը կը ծաղրէր այդ «Ուղերձը՝ Առ Սուլթան Համիտ Բ. Թագաւոր Տաճկաց», մատուցուած «ի դիմաց 36 դաւաճան էֆէնտիներուն».

«Շնորհակալութի՜ւն, Վեհափառ Սուլթան
Որ դու քար ու քանդ արիր Հայաստան.
Օրը հազարով հայեր մորթեցիր
Հայոց շէն. գեղեր ամայացուցիր...»։

Այս իրադարձութեանց ամբողջ պատասխանատուութիւնը ոչ թէ անհատական է և Վարժապետեանին վրայ կը ծանրանայ, այլ հաւաքական և Ազգային Ժողովէն ծնունդ առած։ Այդ վրիպումները յառաջ եկան Տաճկահայութեան ժամանակակից դիւանագէտներու

*) Հ. Ս. Երեմեան. այս գրքի Ներածութիւն. էջ՝ 19։

և գործիչներու տաճկանպաստ և ռուսատեաց տրամադրութենէն, որուն պաշտօնական արտայայտիչը Ներսէս Պատրիարքը հանդիսացաւ։ Սակայն մեր նորագոյն պատմութեան այս հոյակապ դէմքը — ազգանուէր Վարժապետեանը — շուտով կը փոխէր իր «խոհական ընթացքը», Սուլթանի շքանշանը կ'առնակոխէր և Երիմեան Հայրիկի յարուցած Հայկական Արիւնոտ Հարցը — «Հայաստանի ցաւոց պատկերը» — Բերլինի պատմական վեհաժողովին կը ներկայացնէր։

## ԺԲ.

## ԲԵՐԼԻՆԻ ՎԵՀԱԺՈՂՈՎԸ ՈՒ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

Ռուս-տաճկական պատերազմը կը վերջանար 1878-ի Յունուարի սկիզբին՝ Թուրքիոյ չարաչար պարտութեամբ։ Ռուսական նաւատորմիղը կը մօտենար Կ. Պոլսոյ պարիսպներուն և թնդանօթներու որոտումները կ'ահաբեկէին Ելդըզի պալատն ու Բ. Դուռը, երբ երոպական պետութիւնները կը քննէին այն պայմանները թէ ինչպէս փրկել պարտուած Թուրքիան, ռուսական սպառնալիքէն։

Ամէնէն աւելի Անգլիան էր մտահոգուած Թուրքիոյ վտանգուած վիճակով։ Լորդ Բիկոնսֆիլդի կառավարութիւնը կը ջանար պահպանել Թուրքիոյ ամբողջութիւնը և հեռացնել ռուսական արշաւանքը, որպէս զի Հնդկաստանը վտանգի չ'ենթարկուէր։

Եթէ Ռուսաստանը Փոքր Ասիոյ տէրը դառնար, անգլիական քաղաքական ու տնտեսական շահերը լուրջ վնասներ պիտի կրէին։ Ահա թէ ինչու Անգլիան իր նաւատորմիղը տաճկական ջուրերուն մէջ կը հանգչեցնէր և կը պաշտպանէր պարտուած Թուրքիոյ շահերը։

Այսպիսով ահա, 1878-ի Յունուարին Սան-Ստեֆանօի մէջ կը կնքուէր ռուս-տաճկական պատերազմի զինադադար և հաշտութեան ու խաղաղութեան բանակցութիւնները տեղի կ'ունենային։ Այդ օրերուն Կ. Պոլսոյ անգլիական դեսպան Լէյարտը խորհուրդ կուտար Հայոց Պատրիարք Ներսէս Վարժապետեանին, որ Թուրքիայէն պահանջէր Հայկական Յանձնաժողովներու իրագործութիւնը։ Այս պահանջը նպաստաւոր կ'ըլլար թէ Թուրքիոյ և թէ Անգլիոյ համար,

վանզի այդպիսով ռուսական զէնքի վախը կը վերացուէր Փորը Ասիայէն։ Յունուարի 19-ին կը կնքուէր զինադադարի դաշնագիրը, որուն մէջ հայերու մասին խօսք չկար։

Ազգային ժողովի և Պատրիարքի «խոհական և զգուշաւոր ընթացքը» յանկարծ փոխուեցաւ։ Ճակատագրական տրամադրութիւնը չքացաւ և ծնունդ առաւ ռուսասիրական խանդավառութիւն մը, որուն արդիւնքը եղաւ այն, որ ներսէս Պատրիարքը՝ Ազգ. ժողովի զոյգ ատենապետներու—Ստեփան Փաշա Ալանեանի և Յովհաննէս էֆէնտի Նուրեանի—հետ, Յունուարին, գ. Պոլսէն մեկնեցաւ Սան-Ստէֆանօ, ուր Ցատեաններու ապարանքին մէջ տեսակցեցաւ ռուսաց բանակներու գերագոյն հրամանատար Մեծ Իշխան Նիկոլային հետ, որուն ներկայացուց Ճակատագրական ծանր և անմխիթար վիճակը՝ խնդրելով Ռուսաստանի օգնութիւնը։

Հայոց Պատրիարքի խնդիրը յարգուեցաւ։

Անոր եռանդուն ջանքերն ի զուր չ'անցան։ Ռուսաց և տաճկաց լիազօր պատուիրակները 1878-ի Փետրուարի 19-ին ստորագրեցին խաղաղութեան պայմանները և կնքեցին դաշնագիրը, որ լոյս տեսաւ Մարտի 9-ին։ Այդ պատմական դաշնագիրը հայերու մասին հետեւեալը կը յիշատակէր.

**16**-ՐԴ ՅՕԴՈՒԱԾ.—*Նկատելով, որ երբ ոուսաց բանակները քաշուին Հայաստանի մէջ գրաւուած վայրերէն (զորս Թուրքիոյ կը թողուին) որոնց մէջ կրնան հոիւներ եւ խոովութիւններ յառաջ գալ եւ խանգարել երկոու պետութեանց լաւ յարաբերութիւնները, Բ. Դուռը յանձն ի'սուէ անյապաղ իրագործացնել այն բարեփոխումները՞ոու բարենորոգումները, զորս կը պահանջեն տեղական պէտքերը, Հայերէ բնակուած անհանգիստներուն մէջ եւ երաշխաւորել անոնց ապահովութիւնը Քիւրդերոու եւ Չերքէզներոու բռնութիւններուն եւ հարստահարութեանց դէմ.*

Սան-Ստեֆանօի 16-րդ Յօդուածը կը դառնար Հայկական Հարցի պատմական և դիւանագիտական անկիւնաքարը, որուն վրայ պիտի հիմնուէր Հայկական Ցեղափոխութեան եւ Ազատագրութեան արիւնոտ Յուշարձանը։

Գ. Պոլսոյ եպիսկոպոսական դասին կողմէ, Խրիմեանի և Վարժապետեանի ստորագրութեամբ խնդրագիր մը տրուեցաւ Ազեք-

սանդը Բ. ցարին, որպէս զի սա պաշտպանէը քրիստոնեայ Հայաստանի իրաւունքները։

Վարժապետեանը 16-րդ Յօդուածի մասին, Ազգ. Ժողովի մէջ կը յայտարարէը.

«Ազգին յայտնի էր այն ամեն ինչ որ ուզեցինք. այն է՝ հայոց յիշատակութիւն դաշնադրութեան մէջ, և յայտնի է այսօր թէ այս յիշատակութիւնն եղաւ մասնաւոր յօդուածով. Արդեօք ճիշտ մեր ուզածին պէս եղա՞ւ յիշատակութիւնը.—ոչ. այլ քաղաքականութեան մէջ՝ երբ չես կրնար ընել ինչ որ կ'ուզես, պէտք է ընել ինչ որ կրնաս։ Մեր գործը չէր լմնցած, այլ սկսած էր»։

Եւ այնուհետև Վարժապետեանը ծննդեան եռանդով, յոյսով ու հայրենասիրութեամբ լեցուած՝ շարունակեց իր ազգանուէր գործունէութիւնը։ Օքանչելի կորովով և համարձակութեամբ նա արծածեց Հայկական Հարցը, Հայութեան մէջ խանդավառ տրամադրութիւն յառաջ բերելով Ազգի ու Հայրենիքի Ազատութեան և վերածնութեան հանդէպ։

Հայ քաղաքական միտքն ու պահանջները կը դարբնուէին ու կը ձևակերպուէին Կ.Պոլսոյ մէջ և Ազգ.Ժողովին ու Վարժապետեանին կողմէ կը յանձնուէին Խրիմեան Հայրիկին, որ Բեռլինը երթար ու բաղխէր միջազգային դիւանագիտութեան և պատմական Վեհաժողովին ամուր դռներն ու հռչակաւոր դիւանագէտներու անխիղճ սիրտերը։

Բեռլինի Վեհաժողովի նախօրեակին, ներսէս Վարժապետեանը գերագոյն ջանքեր գործադրեց Հայաստանը Եւրոպային ծանօթացնելու և Հայկական Հարցը հրահրելու համար, որպէս զի այդ Վեհաժողովը «աւելին տար քան թէ Սան-Ստեֆանօի դաշնագիրը»։ Ֆրանսերէն և անգլիերէն լեզուներով հրատարակուեցան յօդուածներ ու գրքոյկներ, ինչպէս նաև ընդարձակ տեղեկագիր մը՝ հայկական նահանգներու մէջ ապրող հայոց տառապանքներու և հարստահարութեանց մասին։

Լօնդոնի և Մանչեսթրի Հայ գաղութներն ալ անսահման եռանդով գործի լծուեր էին Հայկական Հարցը Եւրոպային ճանչցնելու համար։ Նման աշխատանքի լծուեր էին նաև ուրիշ գաղութներ։

Սան Ստեֆանօի դաշնագիրը եւրոպական պետութեանց մէջ

դժգոհութիւն յառաջ բերաւ. Միջազգային դիւանագիտութիւնը պահանջեց, որ այդ դաշնագիրը վերաքննութեան ենթարկուի։ Մասնաւորապէս Անգլիան շատ դժգոհ էր 16-րդ յօդուածէն, որ Հայաստանի մէջ քաղաքական նոր կացութիւն մը պիտի ստեղծէր։ Այս մասին Լորդ Սոլզբըրին Մարտի 30-ին (1878) յատուկ շրջաբերական մը կը հրատարակէր, իսկ Բիկոնսֆիլդի թըրքասէր դահլիճը ամէն գնով կը ջանար պաշտպանել Թուրքիոյ ամբողջութիւնն ու շահերը։

Եւրոպայի դիւանագիտական դահլիճները համաձայնութեան գալով կը պատրաստուէին գումարել Բերլինի Վեհաժողովը, որ պիտի զբաղուէր միջազգային քաղաքական հարցերով։ Մեծ ու փոքր, հզօր և անզօր պետութիւնները, ճնշուած ու հպատակ ազգերը մեծ յոյսերով ու պահանջներով Բերլինի պատմական Վեհաժողովին կը դիմէին։

Դիւանագէտները, պետական և քաղաքական գործիչները, պետութեանց և փոքր ազգերու պատգամաւորութիւնները ճամբայ կ'իյնային դէպի Բերլին։

Ազգային ժողովն ու Վարժապետեան Պատրիարքը գործի կ'անցնէին Հայկական Հարցը Բերլինի Վեհաժողովին ներկայացնելու համար։ Կ. Պոլսոյ և գաւառներու Հայութիւնը նոր օրերու և վառ յոյսերու զգացումներով կը խանդավառուէր։ Ազգային դէմքերն ու գործիչները պահ մը կը մոռանային իրենց անհատական վէճերն ու թայֆայական քինախնդրութիւնները և բոլորն ալ ազգի և հայրենիքի ապագայ բարօրութեան յոյսերով տոգորուած՝ մէկ սիրտ, մէկ հոգի կը դառնային։ Ջիշիր-ցերեկ անդուլ և հուսադուն աշխատանք կը կատարուէր Կ. Պոլսոյ հայկական շրջաններու մէջ։ Պատրիարքարանը կը պատրաստէր մանրակրկիտ և ընդարձակ տեղեկագիր մը, որ կը պատկերացնէր Տաճկահայութեան ազգային և քաղաքական պահանջները։ Տեղեկագրին կցուած էր նաև հայկական նահանգներու մէջ ապրող հայոց ընդհանուր վիճակագրութիւնը։

Հայկական Հարցը Բերլինի Վեհաժողովին ներկայացնելու համար, Վարժապետեանի հեռատես ու խելացի որոշմամբ և Ազգային Ժողովի համաձայնութեամբ ընտրուեցաւ Հայկական Պատ.

ութրակութիւնը՝ հետեւեալ կազմով—Նախագահ՝ Խրիմեան Հայրիկ, անդամ-խորհրդականներ՝ Խորէն Արճեպ. Նար-Պէյ և Ստեփան Փափազեան, թարգման-քարտուղար՝ Միհրան Զերազ.

Նար Պէյն ու Ստ. Փափազեանը գնացին Ս. Պետերբուրգ ռուսաց պետական շրջաններու մէջ Հայկական Հարցի մասին նպաստաւոր տրամադրութիւններ ստեղծելու համար. Մատթէոս Եպիս. Իզմիրլեանն ալ Ազգ. Ժողովի կողմէ էջմիածին մեկնեցաւ և Գէորգ Դ.րդ Կաթուղիկոսին ներկայանալով խնդրեց, որ Հայոց Հայրապետն ալ իւր բարոյական հեղինակութեամբ դիմում կատարէ Բերլինի Վեհաժողովին և Ռուսաստանին՝ յօգուտ Հայկական Հարցի. Սակայն Գէորգ Դ.րդը, որ խիստ ռուսատեաց էր, կտրուկ կերպով մերժեց Ազգ. Ժողովի խնդրանքը, առարկելով, որ ոնէ արտաքին միջամտութիւնը վտանգաւոր հետեւանք պիտի ունենայ Թուրքիոյ Հայութեան համար:

Այնքան եռանդուն, այնքան յարատեւ և անձնուէր աշխատանք կը կատարուէր Հայկական Հարցը լուրջ եւ հիմնաւոր կերպով Բերլինի Վեհաժողովին տանելու համար, որ մինչև անգամ պահ մը խորհուեցաւ որ Ներսէս Պատրիարքն ալ անձամբ Եւրոպա երթայ, «ինչ որ անկարելի եղաւ»:

«Միակ Հայը, որուն կարելի էր և պէտք էր վստահիլ այսքան փափուկ և պատասխանատու պաշտօն մը—Նուպարն էր. բայց Պատրիարքարանը, յաւէտ ողբալի մտայնութեամբ մը, չկրցաւ օգտուիլ ազգին այս հոյակապ զաւկին պատրաստակամութենէն. —Օտեան, որուն պետական դիրքը չէր Թոյլատրեր՝ իրեն՝ այսպիսի գործի մը լծուիլ, և որ սակայն Պոլսոյ մէջ իր խումբովը գաղտնապէս կ'աջակցէր Ներսէսի, թելադրեց զայն յանձնել Խրիմեանի, խորհելով թէ նա իր անձովը պիտի կարենար ազդել եւրոպական դիւանագէտներուն վրայ, իբրև կենդանի Պատկեր Հայասցանի». (Թ. Ե. Գ. «Խրիմեան». էջ՝ 90).

Այսպէս ահա, Հայոց Հայրիկը կը դառնար Հայկական Պատուիրակութեան նախագահն ու ոգին, ստանձնելով ծանր՝ բայց նուիրական պարտականութիւն մը, որ կը բղխէր ազգին և հայրենիքին հանդէպ ունեցած իւր անսահման սէրէն և անկեղծ զգացումներէն:

Երբ օր մը կը հարցնէին իրեն թէ—«Հայրիկ, ինչ լեզուով պիտի խօսիս Եւրոպայի քաղաքագէտներուն հետ», նա կը պատասխանէր—«Պիտի խօսիմ լեզու մը, զոր ամբողջ աշխարհ կը հասկնայ. պիտի լամ...»։ Հայութեան վիշտը սրտին և արցունքը աչքերուն պահած՝ Խրիմեանը, Մինաս Չերազի հետ, 1878-ի Մարտի 8-ին Կ. Պոլսէն ճամբայ ելաւ դէպի Եւրոպա, Հայկական Հարցը դիւանագիտական աշխարհին ներկայացնելու համար։

Հայրիկը առաջին առթիւ կը ժամանէր Հռոմ և Իտալիոյ Արտաքին Գործոց Նախարար Կոմս Գօրտիին կը ներկայացնէր Հայն ու Հայաստանը.

«...Հայերը իրաւունք ունին սպասելու, որ իրենց պահանջները կատարուին, վասն զի արդի Ասիոյ մէջ ամենէն աւելի քաղաքակիրթ ժողովուրդն են։ ...Իտալիա կարող է ըմբռնել թէ որքան պիտի ծաղկի Հայ ազգը, երբ ստանայ այն ընտիր և արդար վարչութիւնը, զոր կը պահանջէ այսօր, զի իտալական վսեմապանծ դրօշին տակ կը պատսպարուի այժմ Վենետիկի Մխիթարեան ճեմարանը, ոյր համբաւ ծանօթ է գիտուն աշխարհին, և զոր Եւրոպա կը գնահատէ արժանապէս։ Այդ վանքի նման հարիւրաւոր վանքեր կան Օսմանեան Հայաստանի մէջ, ուր համախմբուած են Հայ կրօնաւորները, ցեղակից Ս. Ղազարի կրօնաւորներուն, այլ անժխտելի է, որ մեր վանքերէն ոչ մին կրցած է հաւասարիլ Վենետիկի Հայ մենաստանին։ Պատճառն այն յոռի վարչութիւնն է, որ կ'աւերէ Հայաստանն։ Հայաստանի մենաստաններն անդուլ կերպով կեղեքումի և յարձակումի կ'ենթարկուին. Ձերդ Վսեմութիւն քաջ գիտէ, թէ մտաւոր մշակում երկրորդական խնդիր է երկրի մը մէջ, ուր չը կայ ապահովութիւն։ Տուէք մեզ վարչական ինքնուրոյնութիւն և Հայաստան կը ծածկուի Ս. Ղազարի ճեմարանին պէս ճեմարաններով, որք եւրոպական քաղաքակրթութիւնը կը ծաւալեն ասիական աշխարհին մէջ։ Եւ Եւրոպայի դիմելով Հայաստան կ'ըսէ. օգնեցէք ինձ որպէս զի վերականգնիմ, գործադրեցէք զիս՝ որպէս զի ասիական աշխարհին մէջ ծաւալէք քրիստոնեայ Եւրոպայի քաղաքակրթութիւնն»*)։

---

*) Մինաս Չերազ. «Հայաստան եւ Իտալիա». Կ. Պոլիս. 1879։

Կամ Կօրտին այս խօսքերը լսելէ յետոյ, խոստումներ կը շռայլէը Խրիմեանին, որ Հռոմէն Մարտի 19-ին ճամբայ կ'իյնար դէպի Փարիզ-ազատասէր և մարդասէր Ֆրանսայի մայրաքաղաքը, ուր առիթ կ'ունենար Ֆրանսայի Արտաքին Գործոց Նախարարի հետ խօսելու Հայոց Հարցի մասին։ Նոյն խոստումները կը ստանար նաև Ֆրանսայէն։

Փարիզի Աւստրիական դեսպանը երբ տեսած էր Հայրիկի պարթև հասակը, վառվռուն և դեղեցիկ աչքերը, արծուենի քիթն ու հայկական բնորոշ դէմքը, հիացմունքով ըսած էր.—«Ա՜խ, որքան կ'ուզէի պատկերահանն մ'ըլլալ նկարելու համար այս ճիաամանչ դէմքը»։ Եւ յիրաւի, Լրոպացիները զմայլմամբ կը դիտէին Խրիմեանի դէմքը, որ աստուածաշնչական նահապետի մը պատկերը կը ցոլացնէր։

Փարիզի մէջ Խրիմեանը այցելեց Նուպար Փաշային*), որը թելադրեց Խրիմեանին՝ Հայաստանի համար ապահովել Անգլիոյ հովանաւորութիւնն ու պաշտպանութիւնը։

Խրիմեանը կը ժամանէր Լոնդոն, արժանանալով տեղւոյն Հայ գաղութին սիրալիր ընդունելութեան և համակրական ցոյցերուն։ Անգլիոյ պետական և բարձր շրջաններու մէջ հայանպաստ տրամադրութիւն ստեղծելու համար, Լոնդոնի հայերը ղեկավարութեամբ հնդկահայ Սէթ Արգարի, Գաբրիէլ Փափազեանի, Գ. և Ե. Յովակիմեանի, Ե. Անդրէասեանի և այլոց, գործի կը լծուէին և մասնաւոր գրքոյկներով ու յօդուածներով Հայն ու Հայաստան և Հայկական Հարցը կը ծանօթացնէին անգլիացիներուն։

Լոնդոնի մէջ հիմնուեցաւ «Անգլօ-Հայկական Միութիւն», կազմակերպուեցան հրապարակային հաւաքոյթներ և բանախօսութիւններ, նպատակ ունենալով զարկ տալ Հայկական Հարցի և հայասիրական տրամադրութեանց արծարծման։ Այս գործերուն մէջ հայերուն բարոյական աջակցութիւն ցոյց տուին Կլատսթոն, Ջէյմս Բրայս, Լորտ Կարնարվօ և ուրիշներ։

---

*) Այս մեծանուն և քաղաքագէտ Հայի որդին է՝ ազգային, քաղաքական գործիչ, յայտնի բարերար և Ազգային Պատուիրակութեան (1913—1921) նախագահ Պօղոս Նուպար Փաշան։

Խրիմեանը Լոնտոնի մէջ այցելեց Լորտ Տէրպիի, Սոլզբըրիի, Բիքոնսֆիլդի և այլ պետական դէմքերու, խնդրելով, որ Բեռլինի Վեհաժողովին մէջ Անգլիան պաշտպանէ Հայկական Հարցը։ Սակայն այս երեք դէմքերն ալ սառն վերաբերմունք ցոյց տուին Խրիմեանին։ Հայկական Հարցը քանիցս յուզուեցաւ Անգլիոյ Խորհրդարանին մէջ, բայց զուր, վասն զի անգլիական քաղաքականութիւնը տաճկանպաստ հակումներ առած էր։ Երեսփոխաններէն քանիները խորհուրդ կուտային Խրիմեանին «աշխատիլ Ռուսիոյ միայն համակրանքը շահիլ...»։ Իսկ Բէնթըրպըրիի Արքեպիսկոպոսն ալ «քրիստոնէական եղբայրակցութեան» սիրով միայն կրցաւ մեծարել «Հայոց նախկին Պատրիարքը»*)։

«—Անգլիական զգահանցաւերը չեն կրնար բարձրանալ Ասրասի գագաթին վրայ...»։

Մեծն Բրիտանիոյ դահլիճը, ի վերջոյ, այս սառն ու չոր պատասխանը տուաւ Խրիմեանին, որ յուսախաբ կը մեկնէր Լոնտոնէն և Յունիսի 1-ին կը հասնէր Բեռլին, ուր յաջորդ օր, կը հասնէին նաև Խորէն Արքեպ. Նար-Պէյն ու Ստեփան Փափազեանը՝ Ս. Պետերբուրգէն։ Հայկական Պատուիրակութեան կազմը լրիւ էր։

Յունիսի 1/13-ին (1878) բացուեցաւ Վեհաժողովը նախագահութեամբ Գերմանիոյ Վարչապետ Բիսմարքի։

Հայկական Պատուիրակութիւնը սքանչելի եռանդ թափեց և ջանք ու ճիգ գործադրեց մեծ պետութեանց լիազօրներու մօտ, հայանպաստ տրամադրութիւն ստեղծելու համար։ Հայկական Հարցի ընդարձակ տեղեկագիրներն ու վիճակագրութիւնները մատուցուեցան մեծ պետութեանց պատուիրակներուն։ Հայկական Պատուիրակութիւնը յիշատակագրով մը կը խնդրէր Բեռլինի Վեհաժողովէն, որ Տաճկահայաստանին տրուի տեղական ինքնավարութիւն։

Թուրքիոյ Պատուիրակութիւնը ամէն տեսակ ստոր միջոցներու դիմեց, որ Հայկական Հարցը Վեհաժողովին օրակարգը չը դառնար, բայց չը յաջողեցաւ։

---

*) Խրիմեան Հայրիկի պաշտօնական այցետոմսի վրայ գրուած էր հետեւեալը. — «L'Archêveque Mkrtich Khrimian, Ex-Patriarche et Deputé de l'Armenie de Turquie» («Արքեպիսկոպոս Մկրտիչ Խրիմեան, Նախկին Պատրիարք և Պատուիրակ Թուրքաց Հայաստանի»)։

Այժմ խօսքը տանք Հայկական Պատուիրակութեան թարգմանքարտուղար՝ այն ատեն երիտասարդ իսկ այժմ ծերունազարդ՝ Մինաս Չերազին, որ իբր ականատես և կենդանի վկայ թող պատմէ իւր տպաւորութիւններն ու յիշատակները Բեռլինի Վեհաժողովէն։

«...Խրիմեանի հետ Պէռլին հասնելէ յետոյ դիտեցինք թէ, Վեհաժողովին նախագահը, որ իր հայրենակիցներուն կուրքը դարձած էր իրաւամբ, ոխերիմ թշնամիներ ալ շահած էր անոնց մէջ։

«...Պիսմարք, Շոբէնհաուբի և Նիչէի դպրոցէն ըլլալով կ'արհամարհէը տկարները, անհատ թէ ազգ։ Նրբմիտ ուղեղին հետ երկաթէ կամք ալ ունէր։ Պիսմարք ընդունած էր նախագահել պայման դնելով, որ Վեհաժողովը մէկ ամիս միայն տևէր Յունիս 13-ին (ն. տ.) բացուած ժողովը Յուլիս 13-ին վերջանալու էր անպատճառ, ինչպէս որ եղաւ։ Այս նպատակին հասնելու համար նախագահը երկաթէ գաւազանով վարեց ժողովը։ Դիւանագիտութեան այդ հսկան չորս շաբաթի մէջ քննել ու լուծել տուաւ Արևելեան խնդիրը։ Վեհաժողովին պաշտօնական տեղեկագրութիւնը կը վկայէ թէ Պիսմարք յուլիս 6-ի նիստին մէջ խօսած է հայկական խնդրին վրայ, և անկողմնակալ կերպով։ Վիլհէլմ Բ.-ի գիւտն է Թրքասէր քաղաքականութիւնը։ Պիսմարքը կ'արհամարհէը թուրքերը, և կըրնար քիչ շատ համակերպել Հայերուն, որոնց արքեպիսկոպոսները, իրենց վեհ տարազովը Արևելքէն եկած, իր գումարած Վեհաժողովին գլխաւոր զարդերն էին, եթէ հակառակ ըլլար մեր պատուիրակութեան Առկուսդա կայսրուհին չէր համարձակեր պաշտօնական ընդունելութեամբ պատուել զմեզ իր պալատին մէջ, ոչ ալ դահաժառանգ իշխանը (ապագայ Ֆրէտէրիք Գ. Կայսրը) կը համարձակէր չորս անգամ ունկնդրութիւն շնորհել մեզ, երկու անգամը սեղանի հրաւիրելով։ Բոլոր լիազօրներուն պէս, երկու գերման լիազօրներն ալ (Պիւլով ու Հոհէնլօհէ) ընդունեցան զմեզ։ Ինքը միայն չուզեց ընդունիլ, իր քարտուղար Տօգտոր Պուշին միջոցաւ յայտնելով թէ, իբր նախագահ, պարտաւոր էր չեզոք մնալ, և թէ չեզոքութեան դէմ մեղանչած պիտի ըլլար եթէ ընդունէր պատուիրակութիւն մը որ եկած էր բողոքել Վեհաժողովին անդամակցող պետութեան մը դէմ։ „Սակայն—ըսած էր Պուշին—

ձեր միջոցով կրնան հաղորդել ինձ ինչ որ ուզեն և կխոստանամ ուշադրութեան առնուլ". Եւ այսպէս ալ եղաւ, այնպէս որ Պիսմարքը Վեհաժողովին աւարտական խնդրոյքին մէջ միայն կրցաւ պատահել ու իր յարգանքը մատուցանել հայ եկեղեցականներուն։

«Տօքտոր Պուշ, որ Պիսմարքի կենսագիրն ալ եղած է, Դրիգոր Օտեանի ու բժիշկ Սերվիչէնի հետ բարեկամացած էր, երբ Կ. Պոլսի գերման դեսպանատան մէջ պաշտօն կը վարէր։ Ներսէս Պատրիարքի այդ երկու խորհրդականներուն յանձնարարականներով ներկայացանք իրեն։ Շատ սիրալիր ընդունելութիւն մ'ըրաւ մեզ իր տան մէկ սենեակին մէջ, զոր զարդարել տուած էր արևելեան կահերով ու գորգերով։ Պիսմարքի այս մտերիմը բաւական օգտակար եղաւ մեզ. իր խորհուրդներովն էր որ Հայաստանի համար չպահանջեցինք տարապայման սահմանագիծ մը, որ լիազօրները խրտչեցնելու պիտի ծառայէր և իրմէ ստացանք մեր դատին վերաբերեալ տեղեկութիւններ և 61-րդ յօդուածին առաջին օրինակը։ Միայն թէ Պիսմարքի չեզոքութիւնը մտաբերելով, խնդրեց որ պատուիրակութեան առաջին այցէն յետոյ, ես միայն շաբունակէի այցել իրեն, որպէսզի մեր կրօնաւորներուն տարազը աչքի չզարնէր։

«...Ըսի թէ հայ կրօնաւորները Վեհաժողովին գլխաւոր զարդերէն էին։ Արդարև միւս հիւրերը Պերլինի ժողովուրդին վաղածանօթ երոպացիներ էին միայն։ Դաթէրէ ի վեր առաջին անգամ էր, որ հայ արքեպիսկոպոսներ, իրենց վեղարները դրած Արևմուտքի արքունիքներուն ու աւագանիին կը ներկայանային։ Ներսէս Պատրիարք լաւ ընտրութիւն մ'ըրած էր Խրիմեանի ու Լուսինեանի։ պէս եկեղեցականներ նշանակելով. Անոնք հրաւիրուեցան Պէրլինի բոլոր դիւանագիտական ընդունելութիւններուն. երբ բազմամբոխ սրահներէն ներս մտնէին, կիները իրենց ոսկի ակնոցները դնելով անոնց կը նայէին իսկոյն և կը ջանային անոնց ներկայանալ. ոչ նուազ հետաքրքիր էին այրերը. Խրիմեանը մարմնացումն էր ասիական ծանրաբարոյութեան, զոր երոպացիները արժանապատուութեան գիտակցութիւն կը նկատեն իրաւամբ։ Փիլիսոփայի քաքտուղարը, Օտէնվի, ըսաւ ինձ օր մը.—„Լուսինեան Սրբազանն ու դուք երոպացիի դէմք ունիք. Խրիմեան Սրբազանն ըլլալու է բուն Հայը. իր դէմքը բոլորովին տարբեր դրոշմ

ունի“։—„Այո՛, պատասխանեցի, մենք երկուքս ևրոպացի ենք, քանի որ Կ. Պոլիս ծնած ենք: Խրիմեան Մրբազան հարազատ Ասիացի մ՚է, Հայաստանի Վան քաղաքին մէջ ծնած“։

«Ճշմարիտը սա է, որ Թուրքերը սաստիկ կը նախանձէին հայերուն գտած պատիւը տեսնելով։ Կը զգային թէ շատ կնսեմանային անոնց քով։

«...Դիւանագիտական ընդունելութեան մը մէջ էր, որ պատահեցանք Մօնդէնէկրօի երկու պատուիրակներուն, քաջակորով երիտասարդները, իրենց զինուորական համազգեստը հագած ու իրենց մէջքին կոր թուր մը կախած։

«Այո՛ Մօնդէնէկրօի հերոսները Պէրլին եկած էին յաղթուած թուրք փաշաներու թուրը կախած իրենց մէջքէն։ Հայաստանի պատուիրակներն ալ եկած էին այլ ինչպէս։—իրենց վիզէն մէկմէկ խաչ կախած։ Եւ հրաշք մ՚է որ կրցան հայանպաստ յօդուած մը խլել Եւրոպայի անկրօն ու անսիրտ դիւանագիտութենէն»*)։

Հայկական Պատուիրակութեան անդամ Ստեփան Փափազեանի «Պատգամաւորի մը Յուշատետրէն»**) ևս կարդանք քանի մը հատուածներ, Բերլինի վեհաժողովի մասին։

«...26 Յունիս 1878.—Խրիմեան որ մերթ յուսահատ և քիչ անգամ յուսալից է, այսօր ամենամեծ ճշմարտութիւն մը խոստովանեցաւ։—„Մարդ իմ միտքէս պէտք է ափսոսի որ փրկուի“ ըսաւ։

«...Գիշերուան Անդրիոյ երեկոյթին երթալ չուզեց Խրիմեան. պնդեցինք որ երթայ, վասնզի վաղը Քօնկրէն հայոց խնդրով պիտի զբաղէր և իր ներկայութիւնը հարկաւոր էր. կրկին մերժեց սակայն բարեբաղտաբար Մ. եկաւ որ հարկ դատեց երթալ, և մեկնեցաւ. ասոր վրայ ելաւ հագուելու և երբ վար իջած պահուն տեսաւ Նարպէյը ծանր վերարկուովը ու նշաններովը զարդարուած է, զայրացաւ և —„Ե՛ս չեմ երթար“ ըսաւ յանուն ազգին խնդրեցին, որ դժուարութիւն չհանէ։—„Յանուն ազգին կը յայտարարեմ, որ չեմ երթար, պատասխանեց, իմ երթալս օգուտ չունի այլ անոնց երկուքին

*) Հայաստանի Կոչնակ. Զարթօնքերէ. Նիւ-Եօրք. 1923. Թիւ՝ 1։

**) Այս պատմուժէք «Յուշատետրը» մաս առ մաս հրատարակուեցաւ Արշակ Չօպանեանի Ազատիս ամսաթերթի 1906—1907 տարիներու թիւերուն մէջ։

ալ վնաս"։ Կը զգայի որ սրտնեղութենէն կ'ընէ այս ամէնը։ „Հայրիկ, ըսի, մենք ազգին առաջ պատասխանատու ենք, ձեռքերնուս եկածը պէտք է ընենք, առիթը պէտք չէ փախցնենք, պէտք որ երթաս"։ Մտիկ չըրաւ և սենեակը ելաւ։ այն ատեն ես ալ Նարպէյի ըսի, որ ինքն ալ չերթայ և պատասխանատուն Խրիմեան մնայ։ Չերազ գանգատեցաւ այս մասին, ես ալ պատասխանեցի իրեն թէ Խրիմեան այս պատգամաւորութեան մէջ նշանակուելուն անշուշտ պատճառ մը կայ, հակառակ իրեն լեզուագէտ չըլլալուն, արդ, որովհետև Հայոց խնդիրը նկատողութեան պիտի առնուի, հարկէ, որ ինքն ալ ներկայ ըլլայ երկունքի մէջ գտնուող այսպիսի գիշեր մը, Անգղիոյ երեկոյթին, այս մեծամիտ ազգին։ Ճետոյ հանել տուինք Նարպէյի վերարկուն և նշանները և Խրիմեանի վրայ խրկեցինք, որ համոզէ և երթան։

«Վերադարձան շատ վհատած կերպիւ։ Խրիմեան ներս մտնելուն ըսաւ—„Ո իշ պիտի (այն գործը լմնցաւ) ալ գիր բան պէտք չէ"։ Նարպէյ կըսէ. „Ամէն բան լմնցեր է մեղք եղաւ մեր այսքան աշխատութեան"։ Չերազ, որ փոքր բաներու մէջ անգամ շատ կը յուսահատէր, լուռ ու մունջ կը մնար և բառ մը չէր կրնար արտասանել։ Հազիւ կրցայ ինքզինքս բռնել և զսպել, կարծես պիտի նուաղէի. քանի մը վայրկեան յետոյ սա բացատրութիւնը տուին ինձ։

«Անգղիա բոլոր Ասիան պիտի պաշտպանէ. Կիպրոսը պիտի առնէ, և Հայաստանի խօսքն անգամ չկայ։ Քարաթէոտորի (Թուրքիոյ պատուիրակ փաշան) ըսեր է, որ Թուրքը պիտի ընէ պէտք եղած բարեկարգութիւնները, բայց կանխաւ իմացնելով Եւրոպայի։ Ուրիշ կողմանէ ալ իմացեր են, որ Սօլսպէրի փօրմիւլ մը պիտի ներկայացնէ վաղը Քոնկրէսին Հայոց խնդրոյ համար. Վատինկթօն ալ ըսեր է, որ վաղը գուցէ ներկայանայ մեր խնդիրը։

«Շատ մը հեռագիրներ պատրաստեցինք և մանրամասնաբար իմացուցինք ի Պոլիս։

«1/13 Յուլիս.—Կէսօրէ յետոյ ժամ 6-ին, կայսերական պալատ ճաշի հրաւիրուեցան Խրիմեան և Նարպէյ։ Նարպէյ „հիւանդ եմ" կ'ըսէ, իսկ Խրիմեան չ'ուզեր երթալ,—„Ի՞նչ պիտի ընեմ" կ'ըսէ։ Սակայն թելադրեցի Ո. Պ. ն և Արթրունին (պրոֆ. Անդրէաս, եղբայր Գրիգոր Արթրունիի) որպէս զի երթան համոզեն սրբազան-

նները և ճաշի երթան. երկուքն ալ համոզուեր են և նշաններն կախելով գացին։

«Չերազի հետ գացինք ցերուել բողոքագիրը առաջուց. երկու ժամ վերջը վերջին Քօնկրէն եղաւ»։

Այսպէս էին ահա, Հայկական Պատուիրակութեան գործերը Բերլինի մէջ։ Դիմում, խնդրանք, տեսակցութիւն, ընդունելութիւն, հրաւէր, խնջոյք և այլն իրար կը յաջորդէին։ Ազգային Պատուիրակները ամէն տեսակ հնարաւոր միջոցներու դիմեցին մեծ պետութեանց լիազօրներու և նշանաւոր դիւանագէտներու ուշադրութիւնը Հայկական Հարցի վրայ սեւեռելու համար։ Պատուիրակութեան ոգին՝ Հայրիկը իւր ուսերուն վրայ քաշեր էր «դիպլոմատի ծիրանի»ն և «առանց սակայն յարմարելու դիւանագիտական արհեստի ամենապարզ պահանջներին», առանց ոնէ եւրոպական լեզու գիտնալու, իւր թարգման Մինաս Չերազի հետ, կ'այցելէր դիւանագէտներուն և իւր պարզ ու անպաճոյճ լեզուով կը պատկերացնէր Հայաստանն ու հոն ապրող տառապեալ Հայութեան վիճակը։ Հայասացի ցաւոց պաճկերը՝ Հայրիկի լեզուով կը նկարագրուէր։ «Թշուառութեան ճիրաններուն մէջ հայը կը բզբզտուէր։ Այդ քստմնելի պատկերը Պերլինի Վեհաժողովի դատաւորները Հայրիկին աչուրներուն մէջ կարդացին։ Եւրոպայի խղճին անխիղճ մարզպանները Հայրիկէն իմացան, թէ անդին հին աշխարհի ցեղ մը, Հայ սիրտը՝ մէզարներու ազատասիրէն կտցահար բարակացուէն կը մեռնէր» կը գրէ ինձ Հ. Ս. Երեմեանը և հարց կուտայ— «Հայրիկ ինչ խօսեցաւ, ինչպէս փաստաբանեց, ինչ կրցաւ ձեռք բերել» Պերլինի Վեհաժողովէն։

Հայրիկը մարդկային խղճի «անխիղճ մարզպաններ»ու հետ՝ զարհուած ու զրկուած Հայ ժողովուրդի Մեծ Տառապանքի մասին խօսեցաւ, տաճիկ պետութեան, Թուրք ցեղի քանդող և աւերիչ յատկութիւնները նկարագրեց, քիւրդերու գործած ոճիրներն ու արհաւիրքները պատկերացուց, սուրի, հուրի և սովի սպառնալիքին ենթակայ Հայաստանի վրայ հրաւիրեց Վեհաժողովին ուշադրութիւնը, խնդիրը ըրաւ, «պիտի լմա...» ըսաւ և արցունք թափեց, կոչ ըրաւ Եւրոպայի քրիստոնեայ և մեծ պետութեանց ու ժողովուրդներու խղճմտօք մարդասիրութեան, եղբայրասիրութեան,

փաստաբանից, որ անդին՝ Փոքր Ասիոյ մէջ, հինաւուրց ազգ մը, Հայութիւնը՝ լոյս, քաղաքակրթութիւն և ազատութիւն կը սիրէ և այս պատճառով ալ տիրող բռնաւորը ձեռքերէն կը հարուածուի, կը հարստահարուի, կը ջարդուի. մինչէ մարդկային արդարութիւնը պիտի լռէ այդ ահաւոր անարդարութիւնները տեսնելով։ Ապա ուրեմն Հայկական Պատուիրակութիւնը եկած է Վեհաժողովէն խընդրելու Հայկական նահանգներու—Ցանկահայաստանի—համար տեղական ինքնավարութիւն մը, որուն իրականացումով պիտի լուծուէր Հայկական Հարցը։

Վեհաժողովին լիազօրներն ու պատուիրակները լսեցին այս բոլորը և համոզուեցան, որ իրենց աչքերուն առջև կանգնած մարդը—Խրիմեանը—նոյն ինքն Հայաստանի եւ Հայութեան ցաւոց պատկերն էր։ Սակայն այս բոլորէն յետոյ, Վեհաժողովի վագրերը, դիւանագիտութեան երկաթեայ կամքերն ու քար սիրտերը ոչ միայն թոյլ չը տուին, որ Հայկական Պատուիրակութիւնը մասնակցէր Վեհաժողովի նիստերուն, այլև, մինչև անգամ, Հայկական Հարցը լուրջ քննութեան նիւթ չը դարձուցին, հակառակ շռայլուած խոստումներուն։

Մինչ Բերլինի Վեհաժողովն այսպէս անտարբեր և անխիղճ դիրք մը կը բռնէր Հայկական Հարցին հանդէպ, անդին՝ Մայր Երկրին մէջ, Հայութիւնը նոր կեանքի վառ յոյսերով ու երազներով կ'օրօրուէր։ Որքան ակնկալիքները կապուած էին Բերլինի Վեհաժողովին հետ, որուն ուղղուած էին տանջուած Հայութեան աչքերը։ Իսկ ի՞նչ կը մտածէին Սուլթան Համիտն ու Բ. Դուռը, որ Յունիսի 31-ին (1878) պահանջեց Ներսէս Պատրիարքէն, Բերլինէնետ կանչել Հայկական Պատուիրակութիւնը։ Պետութեան այս պահանջը Պետական Խորհրդի Հայ անդամ Արro էֆէնտիին հաղորդեց Հայոց Պատրիարքին, որը հետեւեալ հերոսական պատասխանը կուտար.

«Ցայտնեցէք Բ. Դրան, որ նա նախ քան ինձ կարդանայ ըստիպել յետ կանչել հայոց պատգամաւորներին Բերլինից, պէտք է կարգադրէ ինձ կախ անել Պատրիարքարանի շինութեան առաջ։ Ցիսուն և եօթ տարի սրանից առաջ, Յունաց Պատրիարք Գրիգորը բռնուեց նոյնիսկ եկեղեցու սեղանի մօտ և քահանայական զգեստով կախուեց տաճարի դռներում։ Ես կը հետեւեմ նրա օրինակին. կ'եր-

թամ սեղանը, կը զգեստաւորեմ և աւելի լաւ կը համարեմ անձնատուր լինել դահիճներին քան թողնել իմ հօտը». («Голосъ» Թերթ. 1878. Յունիս)։

Պատրիարքի այս յանդուգն և կտրուկ պատասխանը ռուսաց «Միջազգային Հեռագրական Ընկերութեան» կ. Պոլսոյ մասնաճիւղը յայտնեց համաշխարհային մամուլին։

Ծանօթ շքանշանի պատճառով, Վարժապետեանին հայհոյալից քննադատութեան ենթարկող անողոք Գրիգոր Աբծրունին, Պատրիարքի այդ սքանչելի պատասխանի մասին հետևեալ տողերը կը գրէր «Մշակ»ի մէջ.

«...Մենք չենք կարող չը յայտնել նրան մեր կատարեալ համակրութիւնը, մեր յարգանքը, երբ նա իր քաջ վարմունքով, իր վեհանձն պատասխանով կրկին յարուցանում է հայ մարդու հոգու մէջ հինգերորդ դարի հայոց հոգևորականութեան յիշատակը։ Աշխարհը կը յարգէ հային միայն այն ժամանակ, երբ ամենքը կը տեսնեն, որ հայը իր կեանքի գնով պաշտպանում է իր անձը, իր պատիւը, իր ազգի իրաւունքները. Թէև Ներսէս Պատրիարքը իր պարտաւորութիւնն է կատարել. հիացած ենք սրբազան Ներսէսի պատասխանով»։

Անգլիոյ լիազօր-պատուիրակ Լորդ Սոլզբըրին, Բերլինի Վեհաժողովի Յունիսի 22-ի ժԲ.րդ նիստին, պաշտօնապէս ներկայացուց Հայկական Հարցը, առաջարկելով զբաղիլ Սան-Ստեֆանօի դաշնագրի 16-րդ յօդուածով, որը Հայաստանին կը պատկանէր։ Այնուհետև Հայկական Հարցը հրապարակ եկաւ Վեհաժողովի Յունիս 24-ի, 26-ի և 29-ի նիստերուն մէջ և պաշտօնական արձանագրութեանց կարգն անցաւ։ Յունիս 26-ի ԺԵ.րդ նիստին մէջ Լորդ Սոլզբըրին կը կարդայ այն յօդուածը, որ խմբագրած էին Բրիտանական եւ Թուրք լիազօրները.

Այդ յօդուածը՝ 61-րդ չարատանջ յօդուածն էր— Տաճկահայութեան թափած արիւնի և Մեծ Տառապանքի գինը. Տաճկի և քիւրդի զարհուրելի բռնութեանց և արհաւիրքներուն դարերով ենթակայ Հայութիւնը, քաղաքակիրթ աշխարհի խղճին դիմելով, մարդկային տարական ազատութիւն եւ պատսպարութիւն կը խնդրէր, իսկ Վեհաժողովը ի՛անտեսէր այդ կէտը և կը բաւականանար միայն թղթի վրայ արձանագրելով 61-րդ յօդուածը.

Այսպէս ուրեմն, Բերլինի Վեհաժողովը Հայութեան կուտար յօդուած մը, որ կը մէջբերեմ Մինաս Չերազի այն առենուայ (1878) ոճովը գրուած.

**61-ՐԴ ՅՕԴՈՒԱԾ.**— *Բարձրագոյն Դուռն յանձն ի'առնու առանց յապաղ իրագործելոյ այն բարեփոխումներ եւ բարեկարգումներ զոր կը պահանջեն տեղական պէտքերն Հայերէ բնակուած անատուկներուն մէջ եւ երաշխաւորել անոնց ապահովութիւն Չերքէսներուն եւ Քիւրտերուն դէմ։ Նա այս նպատակի համար ձեռք առնուած միջոցներն պարբերաբար պիտի ծանօթացնէ պետութիւններուն*) որք պիտի սկսին անոնց գործադրումն վրայ։*

Հայկական Պատուիրակութիւնը 61-րդ յօդուածը ստանալէ յետոյ, Վեհաժողովին կը ներկայացնէր իւր դժգոհութիւնն ու բողոքագիրը, որ կը վերջանար այս տողերով.

«...Հայերը հասկցան թէ խաբուած են, թէ իրենց իրաւունքները չը ճանչցուեցան, որովհետեւ խաղաղասէր եղած են եւ իրենց ենթեղեցոյ անկախութիւնը եւ անփաստ ազդեցութիւնը պահելով ոչինչ են շահեր։

«Հայ պատուիրակութիւնը Արեւելք պիտի վերադառնայ իրեն հետ տանելով այդ դասը։ Բայց ան կը յայտնէ նոյն ատեն թէ Հայ ժողովուրդը երբեք պիտի չդադրի աղաղակելէ, մինչեւ որ Եւրոպա գոհացում տայ անոր արդար պահանջներուն»։

Վեհաժողովը կը տեւէր ճիշտ մէկ ամիս (1/13 Յունիս—1/13 Յուլիս. 1878) և կը վերջանար։ Հայկական Պատուիրակութիւնը Յուլիս 6-ին (հ. տ.) կը մեկնէր Բերլինէն։ Խրիմեանը, Մինաս Չերազի հետ ճամբայ կ'իյնար և Յուլիս 11-ին Վիեննա հասնելով կ'այցելէր Մխիթարեան Միաբանութեան Մայրավանքը։

Եւ վերջապէս Յուլիս 30-ին Խրիմեանն ու Մինաս Չերազ կը հասնէին Կ. Պոլիս և մանրամասն զեկուցում կուտային Պատրիարքին և Ազգային Վարչութեան՝ Հայկական Պատուիրակութեան հինգ ամսուայ գործունէութեան մասին։

Հայութիւնը Կ. Պոլսէն սկսեալ մինչև գաւառներու խորքերը, պահ մը խանդավառութեամբ ընդունեց 61-րդ յօդուածը, որ սա-

---

*) Գերմանիա, Աւստրիա, Ֆրանսա, Անգլիա, Իտալիա և Ռուսաստան։

կան շուտով կորսնցուց իւր հմայքը և «գնաց վիժելու աբեան և աւերածի անդունդներում...»։

Շուտով կը յառաջանար յուսալքում, տարտամութիւն, 61-րդ յօդուածը ոչ թէ կը լուծէր, այլ առաւել ևս կը յուզէր Հայկական Հարցը։ Լալկան, բամբասող և պահպանողական կարգ մը բերաններ կը բացուէին և սուր ու խայթող շեշտով պատասխանատուութեան խօսքեր կ'ուղղէին Վարժապետեանի, Խրիմեանի, Նար-Պէյի և բոլոր անոնց հասցէին, որոնք իրը թէ՝ Հայկական Հարցի և 61րդ յօդուածի վիժումին պատճառ դարձեր էին !!! Պատրիարքը «ինքնագլուխ գործեր է», «ազգային հաւաքական կամքը յայտնուած չէր պետութեանց», «Եւրոպան չի ընդունիլ Պատրիարքի ձայնը, իրըև ազգի ձայն...», «եթէ պաշտօնապէս և ազգովին բողոք եըթար, հայոց հարցը վիճաբանութեան կ'ենթարկուէր Բերլինի մէջ... մինչդեռ ոչ մի վիճաբանութիւն չեղաւ», Խրիմեան, Ներսէս, Նար-Պէյ, Չերազ և ուրիշները «վատ անփորձ դիւանագէտներ» էին և այլն նման խօսքեր խօսուեցան ոչ միայն կարգ մը շրջաններու՝ այլ նոյնիսկ Ազգային ժողովի մէջ, ուր յայտնի պահպանողական Թադէոս Պէկեանը ծանր «մեղադրական ճառ»ով մը հրապարակ կուգար և մասնաւորապէս կը քննադատէր Վարժապետեանի գործունէութիւնը։ Ապերախտութիւնն էր խօսողը...»

Լքուած սիրտերն ու յուզուած միտքերը խաղաղցնելու համար, Մինաս Չերազը 1878-ի Սեպտեմբերին կը հրատարակէր գրքոյկ մը — «Թէ ինչ ահեցաւիֆ Պէրլիճի Վեճաժողովէն»*) — և կը ձօնէր «Առ բարձրաշնորհ Տէր Ներսէս Վարժապետեան. Ձեզ կը ձօնեմ այս էջերը, որք Ձեզ կը պարտին իւրեանց գոյութիւն. Դարերէ ի վեր հայութիւնն մի կրօնական ժողովուրդ կը ձևացուներ և Դուք մի քաղաքական ազգի վերածեցիք զայն, անվեհեր պաշտպանելով իւր դատ եւրոպական աշխարհին առջև. ...Այլ որպէս զի կատարեալ լինէր Ձեր փառք, ապերախտութիւն ալ գտաք. Ներկայն չը վարձատրեց զզ Ձեզ լիապէս, որպէս զի ապագայն շնորհապատմեայ Ձեզ. և ապագայն պիտի կանգնէ Ձեզ մի արձան, որը պատուանդանի քարերէն մին է դուցէ այս անշուք տետրակ»։

---

*) Կոստանդնուպոլիս. Տեառնեան Տպագրութիւն, 1878. էջ՝ 29։

Նախաբանի մէջ հեղինակը կ'ըսէ— «Հնգամեայ պաշտօնավարութիւնս առիթ տուաւ ինձ ներքնապէս տեղեկանալ ազգային դատին, և մտադիր էի օրըստ ազգիս պատմել, իրը ականատես վկայ, այն գործերը զորս գործեցին հայ պատուիրակներն, աւետիսներ բերելով նմա, որ, աւաղ գոյժ կ'առնու ստէպ»։

Ապա հեղինակը կը շարունակէ— «Ի՞նչ է այս վհատութիւն, զոր կը նշմարեմ ազգիս վրայ։ Միթէ ներելի է յուսահատիլ մի ժողովուրդի, որ կը հաւատայ թէ ապագայ ունի։ ...Ազգս ոչ միայն վնաս չը կրեց, այլ մեծապէս շահեցաւ Պէրլինի Վեհաժողովէն։ ...Մեր շատ աւելի շահեցանք Պէրլինի քան Սան-Ստէֆանօի մէջ, և անհնար էր աւելի շահիլ լեզուով և գրիչով։ Սան-Ստէֆանօի յօդուածն աղաչանքներէ ծնած էր. Պէրլին ամբարտաւանեց զայն իր վեհավճիռով։ Եւրոպա իրաւունքներ տուաւ մեզ, այլ դոքա ամուլ պիտի մնան, եթէ չը կարենանք պաշտպանել զայնս։ ...Պէտք է աշխատիլ հայ հայրենիքի մէջ, օսմանեան ոստանին մէջ, եւրոպական աշխարհին մէջ, մեր իրաւունք պահանջելով այն ազգերէ որք հայ խնդիրն ճանաչեցին պաշտօնապէս։ ...Անհրաժեշտ է վառ պահել այն յարաբերութիւնները զորս առաջին հայ պատուիրակութիւնն հաստատեց եւրոպական դահլիճին, ժողովուրդին և մամուլին հետ։

«Պէրլինի Վեհաժողովէն մի ոսկէճաճ շահեցաճ. մեզ պիտի խիզախել եւ ճանել ոսկին» կ'եզրակացնէ Մինաս Չերազը։

Իսկ ինչ կ'ըսէր ու կ'եզրակացնէր Խրիմեան Հայրիկը, որ շրջած էր Եւրոպայի մայրաքաղաքները, մտեր էր արքունիքներն ու մեծ պետութեանց պաշտօնատունները, տեսած էր դիւանագէտներն ու անոնց հետ Հայկական Հարցի մասին խօսած էր, Բերլինի Վեհաժողովի անցուդարձերը մօտիկէն դիտած և ուսումնասիրած էր։

Հայրիկը դժգոհ էր 61-րդ յօդուածէն, պնդելով, որ Եւրոպական մեծ պետութիւնները միշտ հաշտ ու համերաշխ չը պիտի մնան, որ ճնշում ի գործ դնեն Բ. Դրան վրայ հայկական բարենորոգումները գործադրելու համար։ Նա կը պաշտպանէր Նաւպար Փաշայի այն տեսակէտը, որ հայկական վեց նահանգները Անգլիոյ պաշտպանութեան յանձնուին։ Այս տեսակէտին ալ Վարժապետեանը հակառակ էր, ինչ որ առիթ տուած էր Խրիմեանին բազմիցս ըսելու— «Ա՛խ Ներսէ՛ս..., ա՛խ Ներսէ՛ս, զայրոյթ կը զգամ ներսէս...»։

## ԺԳ.

## „ԽԱՐԻՍԱՅԻ ԿԱԹՍԱՆ ԵՒ ԵՐԿԱԹԵԱՅ ՇԵՐԵՓԸ“

Կ. Պոլսոյ և գաւառներու Հայութիւնը անհամբեր և սրտատրոփ կերպով Երիմեանի խօսքին կը սպասէր, անոր տպաւորութիւնները լսել կ՛ուզէր։ Եւ ահա Կ. Պոլիս հասնելէ քանի մ՛օր յետոյ, Հայոց Հայրիկը Բերլինի Վեհաժողովի մասին իւր հռչակաւոր քարոզը կը խօսէր Մայր Եկեղեցւոյ մէջ, որ ծայրէ ծայր լեցուած էր խուռներամ ժողովուրդով։

Խօսքը տանք այդ նշանաւոր քարոզին ունկնդիրը և ժամանակակից վկայ՝ Խաչիկ Խան Սարաճեանին։

«Կայծակի նման լուրը տարածուեցաւ Կ. Պոլսոյ Հայոց մէջ, թէ Երիմեանը Մայր Եկեղեցւոյ մէջ պիտի քարոզէ Բերլինի Վեհաժողովի և 61-րդ յօդուածի մասին։ Ամբողջ Մայր Եկեղեցին ժողովուրդով լեցուեցաւ. հարիւրաւորներ դուրս մնացին։ Որոշեալ ժամին եկաւ Հայրիկը, որուն դէմքը իւր սովորական ժպիտին փոխարէն, թախիծով մը ծածկուած էր։ Բարձրացաւ սեղան, խաչակընքեց և յուզուած ձայնով մը յանկարծ բացականչեց — „Իսրայէ՛լ, դո՛ւ փրկիցես զքեզ...“։ Այս էր բնաբանը այն նշանաւոր քարոզին, որուն մօտաւոր բովանդակութիւնը հետևեալն է.

«— Օրհնեալ և սիրելի ժողովո՛ւրդ Հայոց։ Հիմայ դուք ամենքնիդ ալ ականջնիդ սրած, անհամբեր և սրտատրոփ կը սպասէք թէ արդեօք Երիմեան Հայրիկ ինչ աւետիս բերած է մեզ Բերլինի Վեհաժողովէն և թէ ինչ պիտի ըսէ 61-րդ յօդուածի մասին, որ աշխարհի հզօր տէրութիւնք շնորհեցին մեր հայրենակ գաւառներուն։ Ինչ որ կ՛ըսեմ լա՛ւ մտիկ ըրէք, ըսածներուս իմաստը խորապէս ըմբռնեցէք և ամենքնիդ ալ գացէք աղէկ մը խորհեցէք ըսելիք խօսքերուս վրայ...։

«Գիտէք որ մենք Ներսէս Պատրիարքի և Ազգային Ժողովոյ որոշմամբ իբր պատգամաւոր գացինք Բերլին Հայկական Դատը մեծ պետութեանց Վեհաժողովին ներկայացնելու համար։ Շատ մեծ յոյս ունէինք, որ Վեհաժողովը աշխարհին խաղաղութիւն՝ իսկ փոքր և ճնշեալ ազգաց, ի թիւ որոց նաև մեր ազգին՝ ազատութիւն պի-

տի շնորհէը: Վեհաժողովը բացուեցաւ. աշխարհի մեծ պետութեանց քաղաքագէտ պատգամաւորները շարուեցան կանանչ սփռոցով ծածկուած դիւանագիտական սեղաններուն բոլորտիք, իսկ փոքր և ճնշեալ ազգաց պատգամաւորներս Վեհաժողովէն դուրս կը սպասէինք. Վեհաժողովին մէջտեղը, կանանչ սփռոցով ծածկուած սեղանի մը վրայ, դրուած էր մեծ կաթսայ մը խարիսայ*), ուրկից բաժին պիտի ստանային աշխարհիս մեծ ու փոքր ազգերն ու տէրութիւնք: Ժողովականներէն ոմանք կը քաշէին Արեւելք, ոմանք կը քաշէին Արեւմուտք և այսպէս երկար վիճաբանելէ յետոյ, սկսան կարգաւ, մի առ մի, ներս կանչել փոքր ազգաց պատգամաւորները. Նախ Պուլկար ներս մտաւ, ապա Սերպիացին, Ղարագաղցին, որոց կողերէն կախուած սուրերու չաքուրչուքոց գրաւեց ժողովականներու ուշադրութիւնը. Բաւական խօսելէ յետոյ, այս երեք պատգամաւորները fաւեցին իրենց սուրերը եւ իբրեւ երկաթեայ շերեփ խոթելով խարիսայի կաթսային մէջ, իրենց բաժին խարիսան առին և հպարտ ու համարձակ հեռացան. Կարգն եկաւ Հայոց պատգամաւորին. ես մօտեցայ և Ազգային Ժողովին կողմէ ձեռքս տրուած աղերսաթուղթը ներկայացուցի և աղաչեցի, որ իմ ամանս ալ լնուն խարիսայ: Ցանժամ կաթսային գլուխ սպասող մեծաւորները ինձ հարցուցին - „Ո՞ւր է քո երկաթեայ շերեփը, յիրաւի հոս խարիսայ կը բաժնուի, բայց երկաթեայ շերեփ չ'ուենցողն չէ կարող անոր մօտենալ, զայս իմացիր, որ եթէ մօտ առնէն այս խարիսան կըրկին բաժնուի յայնժամ առանց շերեփի չը գաս, զի պարապ յետ կը դառնաս". Է՛հ, սիրելի ժողովուրդ Հայոց, ես կրնայի խարիսայի կաթսային մէջ խոթել իմ ԹՈՒՂԹԻ ՇԵՐԵՓԸ, որ պիտի թրջուէը և հոն մնար: Հոն, ուր զէնքն է խօսող, ուր սուրերը կը շողշողան, հոն ինչ գործ ունին խնդիրը և աղերսաթուղթեր:

«Եւ յիրաւի տեսայ, որ Ղարադաղցուն, Պուլկարին և այլոց

*) Խարիսայ (հարէք առ?) Հայ գեղջուկ և նահապետական կերակուր մըն է. մսի և կորկոտի եփուած, հարուած խառնուրդ մը, որ ամէն տարի աշնան, Ս. Դէօրգի տօնին օրը կ'եփուէր Հայաստանի մէջ: Այդ օրը գաշտային աշխատանքներէն լմնցած գիւղացիութիւնը հաճոյքով կը վայելէր բնաշխարհիկ և հաճելի կերակուրը—խարիսան—որու մասին Խրիմեանը կը գրէ—«Լիճ տանտիկին զխաբիսան, լիճ լիճ արա իւղն ի վերան...»

պատուիրակներուն քով կային քանի մի քաչեր, որոց կողերէն կախուած սուրերէն արիւն կը վազէր.... Յայնժամ դարձուցի երեսս և իբր թէ կը փնտռէի իմ Զէյթունցի, Սասունցի, Շատախցի և այլ լեռնեցի և դաշտեցի քաչերս, բայց ո՞ւր էին, ժողովուրդ Հայոց, ըսէք ինձ էին այդ քաչերը, պէտք չէր որ անոնցմէ մէկ երկու հոգի ալ իմ քովս գտնուէին, որ անոնց արիւնոտ սուրերը Վեհաժողովի քաղաքագէտներուն ցուցնելով գոչէի. տեսէք, ահա իմ երկաթեայ շերեփները, հոս են, պատրաստ. Բայց աւաղ... միայն պերսաթուղթ մ'ունէի, որ խարիսայէն մէջ թրջուեցաւ, և մենք վերադարձանք դատարկաձեռն.... Արդարև եթէ զիս բաղդատէին Վեհաժողովոյ պատուիրակներուն հետ, ես անոնցմէ աւելի բարձրահասակ էի, դէմքով ալ աւելի գեղեցիկ, սակայն ինչ օգուտ, ձեռքս թուղթի կտոր մը տրուած էր եւ ոչ թէ սուր. ահա այս պատճառով ալ զըրկուած մնացինք խարիսայէն։ Այսու հանդերձ ապագայի տեսակէտով, անօգուտ չեղաւ Բերլինի Վեհաժողովին երթալն.

«Ժողովուրդ Հայոց, անշուշտ լաւ հասկցաք թէ գէճը ինչ կրնար գործել եւ կը գործէ, ուրեմն սիրելի և օրհնեալ հայաստանցիներ, գաւառացիներ, երբ Հայրենիք վերադառնալու լինիք ձեր բարեկամաց և ազգականաց իբր պարգև՝ մէկ մէկ գէճ տարէք, գէ՛ճ առէք եւ դարձեա՛լ գէճ. ժողովո՛ւրդ, ամեննէն առաջ ձո ազատութեան յոյսը ձո վրայ դիր, ձո խելքին եւ բազուկին ո՛ւժ տուր, մարդ ինքնիրմէն պէտք է աշխատի որ փրկուի. Իսրայէ՛լ դու փրկիցես զքեզ...“.

«Խրիմեանի այս քարոզը շատ խոր և անջնջելի ազդեցութիւն թողուց ժողովուրդին վրայ. Շատերը հիացան, իսկ ոմանք անխոհեմութիւն սեպեցին այդքան ազատ և համարձակ խօսքեր. Բարեկամներէս մէկ նկատեց, որ—„Հայրիկը հոգևորական ըլլալէ առաջ յեղափոխական է“։ Ուրիշ մը վրայ բերաւ թէ—„Երանի՛ այս քարոզը բառ առ բառ գրի առնուէր և ապագայ սերունդին ժառանգութիւն մնար“։ Հարկաւ ես բառ առ բառ չը կրցայ պատկերացընել Հայրիկին այդ պատմական քարոզը, բայց իմ պայծառ յիշողութեամբ գրեթէ կրցայ հարազատ բովանդակութեամբ ներկայացնել զայն».

Խրիմեանի այդ պատմական քարոզը*) ահա պիտի դառնար հայկական իճճնապատճպանութեան եւ զէճճի գործածութեան գեղեցիկ գաղափարը, որ պիտի հրահրէր սիրտն ու հոգին արթնցող և գիտակից Հայ երիտասարդութեան։

Խրիմեանը զէճճի եւ իճճնապատճպանութեան գաղափարը դեռ վարդապետական տարիներէն կը քարոզէր խօսքով և գրչով։ Բերլինի Վեհաժողովին երթալէ տարի մ'առաջ չէր—1877-ի պատերազմներու և արիւնի օրերուն—որ նա «Հայգոյժ»ի մէջ, ինքնապաշտպանութեան հրաւէր կը կարդար Հայութեան։ Այդ նոյն թուին էր, որ նա Կ. Պոլսոյ եկեղեցիներէն մէկուն մէջ, իր խօսած քարոզի ընթացքին, կը պատմէր հետեւեալը.

«Մէրելի ժողովուրդ Հայոց. Մուշէն Պոլիս եկան մէկ հայ և մէկ քիւրդ։ Երկուքն ալ համալսարիւն կ'ընէին։ Երկուքն ալ դրամ հաւաքեցին և հայրենիք վերադարձան։ Ճանապարհին քիւրդը դարանամուտ եղաւ, իր գնած զէնքով սպաննեց զհայ, յափշտակեց անոր ոսկիները և յօ՛ յօ՛ կանչելով տուն գնաց։ Ա՛րդ, առակս զինչ ցուցանէ, այն, որ քիւրդին հետ ապրողը պէտք է զէճճ ունենայ եւ իճճնապատճպանութեան խելամուտ ըլլայ. մնացեալը հասկանալի է...»։

Այսպէս ուրեմն, Խրիմեանը թէեւ համոզուած էր, որ «առաքայի տեսակէտով, անօգուտ չեղաւ Բերլինի Վեհաժողովին երթալն» բայց նա խորապէս հաւատացած էր, որ օտարներու վրայ յոյս դնելու չենք, Հայութիւն իճճ է, որ պիտի դարճնէ իւր ազատութիւնը։

Այս վեհ գաղափարը պիտի դառնար Բաֆֆիի վէպերու և Դամառ-Քաթիպայի ազդաշունչ ու յեղափոխական երգերու հիմնաքարը, որուն վրայ Հայ Յեղափոխական Կուսակցութիւնները պիտի կ'երտէին իրենց ՄԵԾ ՊԱՏՐԱՐԻ և հոյակապ, նսկայ գործի արիւնազարդ ՕՒՇԱՐՃԱՆԸ։

---

*) Վանի գրական հին դէմքերէն և Տաճկահայաստանի ծանօթ ուղեգիր ծերունազարդ Մաճուռէլ Կ. Միրախորեանը (որ այժմ կը բնակի Ռումանիոյ Փօքշան քաղաքին մէջ) այս քարոզի մասաւոր բովանդակութիւնը հրատարակեց Նոիէմբեր-Դեկտեմբեր 1927. Գ. Տարի. Թիւ՝ 30)։ Խրիմեանի այս պատմական քարոզը 50 տարիներու ընթացքին (1878—1928) բազմիցս լոյս տեսած է Հայ թերթերու և պարբերականներու մէջ, զանազան տարբերակներով (variante) և միշտ ալ պահած է իր թարմութիւնն ու նշանակութիւնը։ Միքաէլեանը խարխալի տեղ կը գրէ էջակէկ, ինչ որ սխալ է։

## ԺԹ.

# ԲԵՐԼԻՆԻ ՎԵՀԱԺՈՂՈՎԷՆ ՅԵՏՈՅ

«Երկաթեայ շերեփ»ի նշանաւոր քարոզը, կարճ ժամանակի մէջ, լայն ժողովրդականութիւն կը գտնէր և կ'ընդհանրանար ամենուրեք։ Կ. Պոլսէն սկսեալ մինչև ծայրագաւառներու խորքերը, բերնէ բերան, զրոյցի նման կը պատմէին այդ քարոզի բովանդակութիւնը և «երկաթեայ շերեփ»ի խորհրդաւոր իմաստը կը մեկնաբանէին։ Բրիմեանի այդ պատմական քարոզը դարձաւ Հայութեան քաղաքական և ազատագրական որոնումներու, խանդավառութեան և ներշնչման գլխաւոր ազբիւրներէն մէկը, ապագայ յոյսերու և հաւատքի ուժգին ազդակ մը, որ Հայ ժողովուրդին կը սովրեցնէր ինքնապաշտպանութեան հզօր գաղափարի իւրացումը և զէնք վերցնելու անմիջական պահանջը։

Հայ ազգային մարմիններն ու գործիչները, գրագէտներն ու մամուլը՝—թէ Կ. Պոլսոյ և թէ Կովկասի մէջ—աննման ջանք ու ճիգով՝ նուիրուեցան Հայ ժողովուրդի մտաւոր ու բարոյական դաստիարակութեան, համոզուած ըլլալով, որ զարգացած և գիտակից ժողովուրդը միայն կրնայ քաղաքական ձգտումները շուտով իւրացընել։ Պատիւ Գրիգոր Արծրունիին, որ իւր «Մշակ» թերթով, ոչ միայն նոր և լուսաւոր շաւիղ մը թօղուց մեր հասարակական և ազգային պատմութեան մէջ, այլ նա մեծ զարկ տուաւ նաև Հայ քաղաքական մտքի զարգացման և բարոյապէս ու նիւթապէս օգնեց Հայկական Վերածնունդի կառուցման գործերուն։ Ինչպէս որ Բրիմեանը իւր քարոզներով՝ այնպէս ալ Գր. Արծրունին իւր յօդուածներով՝ կերտեցին տաճկահայ և ռուսահայ հատուածներու մերձեցման ուղին, որուն վրայ իրարև կամուրջ, երևցաւ «Մշակ» թերթը։

Բերլինի Վեհաժողովէն յետոյ, Հայութեան դեկավար մարմիններն ու գործիչները կրցան կազմակերպել մտաւոր ու կրթական հսկայ աշխատանք և շարժում մը, որ ծնունդ կ'առնէր Կ. Պոլսոյ մէջ ուր՝ հետզհետէ կը հիմնուէին Ararատեան, Դպրոցասիրաց, Աբեղեանց և Կիլիկեանց անուններով ընկերութիւնները։ Առանց նպա-

տակն էր Մայր Երկրի Հայութեան մէջ տարածել ուսում և կրթութիւն, բարձրացնել ժողովուրդի ինքնագիտակցութիւնն ու տնտեսութիւնը. Ժողովրդանուէր այս շարժումը աւելի տարածելու և օգտակար դարձնելու համար, յիշեալ չորս ընկերութիւնները միացան և մէկ անունով կոչուեցան Միացեալ Ընկերութիւնք Հայոց, որուն դերը Ցաճկահայաստանի կրթական-դպրոցական պատմութեան մէջ, շատ նշանակալից և գնահատելի դարձաւ։

Հայ մտքի և մշակոյթի զարգացման այս երկրորդ շրջանին մէջն էր ահա—1878-ին—երբ Խրիմեան Հայրիկը գրեց իւր «ՍԻՐԱՔ ԵՒ ՍԱՄՈՒԷԼ»*) գիրքը, «որոյ նիւթն և պարունակութիւնն՝ աշխարհիս կեանքի կրթական դասերն են, զորս բարի հայր Սիրաք կաւանդէ իւր զարգացեալ Սամուէլ որդւոյն, Սիրաք իւր դասերն կը խօսի աշխարհիս բազմադիմի առարկաներու վերայ, և Սամուէլ մտադիւր ունկն կը դնէ. Սիրաք հայրական և բնական սիրով կաւանդէ մարդկային կենաց ամենակարևոր խրատները, և Սամուէլ որդիական հնազանդութեամբ կընդունի հայրախօս դասերը, որ կը կրթէ ու կը մարզէ զինքն իւր կենաց յառաջդիմութեան յասպարէզ», (Նախաբան. էջ՝ Գ.)։

Բարի հայր Սիրաքը՝ նոյն ինքն Հայրիկն է—բարոյախօս, խրատատու, իմաստասէր, կեանքի բովին մէջ եփուած, փորձուած ու խոհուն Մեծ Հայրը, որ առաքեալի մը համբերութեամբ՝ կեանքի դասեր կուտայ իւր որդի—հայորդի—Սամուէլին։ Ի՞նչ տեսակ նիւթեր և հարցեր կը շօշափեն այդ դասերը, որոնց համառօտ ծրագիրն անգամ մեր աչքին ու սրտին առջև կը պարզէ խրատական ու բարոյախօսական գողտրիկ միտքերու հաւաքաբանը հանդիսացող այդ գիրքը։

Այսպէս. Ա. Դաս.— Մարդ եւ աշխարհ. «Ի՞նչ է մարդն աշխար-

---

*) Սիրաք եւ Սամուէլ. Բարի հօր կրթական դասեր։ Դրեց Խրիմեան Հայրիկ և լոյս ընծայեցին ազնուական հղբարք Յովհաննէս և Մկրտիչ Էօտեան, ի նուէր Հայոց հարց և զարգացեալ որդւոց։ Կ. Պոլիս. ի Տպարանի Ս. Ղ. Պարթիղպանեան և Ընկ·, 1878. էջ՝ 224։ Բ. Տպագրութիւն՝ Կ. Պոլիս. ի Տպարանի Նշան Կ. Պէրպէրեան. 1887· էջ՝ 181։ Գ. և Դ. Տպագրութիւն՝ Թիֆլիս· Տպարան Մ. Դ. Ռօտինեանց. 1892 և 1893. էջ՝ 210· լոյս ընծայեց՝ Թիֆլիսի Հայոց Հրատարակչական Ընկերութիւն։

*հիս վերայ և ինչ է իւր կոչումն, պարտիք և իրաւունք մեր ընկերական կեանքին մէջ»։* Բ. Դաս.—Տիեզերք. բնական եւ բարոյական օրէնք. «*Ընդհանուր տիեզերաց բնական և յաւիտենական օրէնքներ*»։ Գ. Դաս.— Աճիւնասար կեանք մարդկային ընկերութեան մէջ. «*Մարդիկ հաւասար կը ծնին, անհաւասար կ'ապրին և հաւասար կը մեռնին*» կամ թէ՝ «*Մարդիկ արևի տակ անհաւասար իսկ հողին տակ հաւասար կ'ապրին*»։ Դ. Դաս.—Իշխանութիւն եւ հպատակ ժողովուրդ. «*Ի՞նչ է իւրաքանչիւրին պարտիք և իրաւունք*»։ Ե. Դաս.—Ժողովուրդ եւ ազնուականք ասխարհիս. «*Ժողովուրդն է բուն աշխատութեան մայր և երկրին կեանք տուող ոգին*»։ Զ. Դաս.—Աշխատութիւն եւ հաց. «*Հացին ու հարստութեան աղբիւրը երկիրն է, հողն է, և զայն բեղմնաւորող մարդոյն աշխատութեան ձեռքն է*»։ Է. Դաս.—Ուղիղ տեսութիւն կենաց, հաց եւ բաճ. «*Անօգուտ է գանձ և հարստութիւն երբ գանձատէր հարուստն տնտեսել չգիտէ*»։ Ը. Դաս.—Ինքնաշխատ յառաջադիմութիւն. «*Առանձին մարդոյն և թէ աշխարհիս ժողովրդոց մեծագոյն յառաջդիմութիւն՝ ինքնաշխատութեան օրաւուր ջանքն է։ Անարժան է այն ձեռք, որ առանց աշխատութեան հացը իւր բերան կը տանի*»։ Թ. Դաս.—Հանճար եւ ընկերական զօրութիւն. «*Ինքնաշխատութիւն, հանճար և ընկերական զօրութիւն, այս երեք հզօր դաշնակիցները միանալով քաղաքակրթեցին զաշխարհ*»։ Ժ. Դաս.—Երջանիկ եւ ապերջանիկ կեանք ասխարհիս. «*Այդ երկու հակառակ տարբերք մարդոյն կենաց հետ միշտ համընթաց կը լինին*»։ ԺԱ. Դաս.—Բարգաւաճանք եւ նուազումն ասխարհիս ազգաց. «*Ի՞նչ են այն զօրաւոր ներքին և արտաքին պատճառներ, որով աշխարհիս ազգերը կը բարձրանան և կը խոնարհին, կը բարգաւաճին և կը նուազին*»։ ԺԲ. Դաս.—Ժամանակ եւ պատանեկ ասխարհիս. «*Մարդ մարդոյն՝ առաւել չար և մեծագոյն պատահարն է*»։ ԺԳ. Դաս.—Աւետարան եւ ընկերասիրութիւն. «*Մարդոյն ազատ և երջանիկ կեանք ընկերասիրութեան մէջն է*»։

*Այս բոլորին մէջ կը լսենք «խոհուն՝ հանդարտ և պատուական հօր մը ձայնը», որ կ'ըսէ.*

«*Անհաւասիկ այսչափով բովանդակեցի Սիրաքայ բարի Հօր կրթական դասերը. սիրով կարդացէք խելամտելով ի միտ առէք, ով*

դուք Հայոց ժողովուրդ, Հայոց հայրեր, Հայոց դաստիարակներ և Հայոց զարգացեալ որդիքներ»։

Եւ այս տողեր գրող հեղինակը «կեանքի փորձառութեան բոլոր շրջաններէն և աստիճաններէն անցած, մարդիկ ու իրերը ճանչցած, յոյսի և դառնութեանց բոլոր ելևէջները ապրած» Հայոց Հայրիկն է, որուն «յստակուած խորհուրդներու և բիւրեղացած համոզումներու» հաւաքարանն է «Սիրաք Սամուէլ»ը։

Բեռլինի Վեհաժողովէն յետոյ, Կ. Պոլսոյ մէջ ծնունդ առած մտաւոր ու կրթական շարժումը արագութեամբ կը տարածուէր նաև գաւառներու մէջ։ Օրուայ նշանաբանն էր՝ Հայաստանի համար, Դէպի Հայաստան։ Միացեալ Ընկերութիւնը Հայոցը Մայր Երկրի ամէն կողմեր՝ քաղաքներու և գիւղերու մէջ՝ կը հիմնէր նախակրթարաններ ու դպրոցներ և զարկ կուտար ազգային, հայկական դաստիարակութեան տարածման։ Մեր նորագոյն պատմութեան ամենալուսաւոր և յուզիչ էջերէն մէկը կը կազմէ հայրենանրուէր և ազգօգուտ այս շարժումը, որուն Խրիմեանը կը նուիրաբերէր ահա իր «Սիրաք և Սամուէլ» գիրքը։

Եւրոպայէն վերադառնալէ յետոյ, Խրիմեանը մեկուսացած կեանք մը չը վարեց Կ. Պոլսոյ մէջ։ Ազգային ժողովն ու Նիւսէս Պատրիարքը զայն գործի լծեցին, ընտրելով (1878) Կրօնական Ժողովի Առենապետը, որուն գործակից դարձան Խորէն Նար-Բէյ, Իզմիրլեան և ուրիշ եկեղեցական դէմքեր։

## ԺԵ։

## ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ՝ ԱՌԱՋՆՈՐԴ ՀԱՅՈՑ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ

Ռուս-տաճկական պատերազմէն (1877) յետոյ, ամբողջ Տաճկահայաստանը տնտեսական ծանր տագնապի մէջ կը տառապէր։ Պատերազմի ընթացքին, պետութիւնը, զօրքերն ու քիւրդերը թալանի և աւերածութեան մատներ էին քաղաքներն ու գիւղերը։ Պատերազմի սարսափները, անիշխանութիւն, հարստահարութիւն, սպանութիւնները ու ոճիրները անդադար կը շարունակուէին գլխաւորաբար Վասպուրականի, Բարձր-Հայքի և Բիթլիսի նահանգներուն

մէջ. Հայ գիւղացիութիւնը — երկու տարի՝ 1878 — 1879 — տիրող արհաւիրքներու պատճառով չը կրցաւ հողամշակութեամբ և վար ու ցանքսով զբաղիլ. Ամբողջ երկրին հացը հայթայթող Հայ գիւղացին էր. Ցաճիկն ու բիւրդը անընդունակ և անսովոր էին հողամշակութեան սուրբ աշխատանքին. 1879-ի ամառն ալ անօրինակ և երկարատև երաշտ մը բերաւ. Այսպէս բռնութիւնն ու բնութիւնը միացած, 1879-ի աշնան սոսկալի եւ մեծ սովի մը մատնեցին մասնաւորապէս Վասպուրականի և Կարնոյ նահանգներու ամբողջ ազգաբնակչութիւնը՝ Հայ, քիւրդ, տաճիկ. Պատերազմի ընթացքին ծանր արհաւիրքներու ենթարկուած էին մանաւանդ Վասպուրականի արևելեան և հիւսիսային գաւառները և ամբողջ Բազրևանդն ու Բայազիտը. Սովը օրէց օր աւելի կը սաստկանար և ծանր աւերմունքներ կը գործէր. Սովամահութիւնը կը ցցուէր սովահար ժողովուրդի աչքին առջև: Մարդասիրական, եղբայրական օգնութեան ահազանգը կը հնչէր գաւառներու մէջ և անոր սաբսռազդեցիկ օղանջները կը ցնցէին մայրաքաղաքի ազգային մարմիններու և ժողովուրդի լաւագոյն զգացումները. Պատրիարքարան, Ազգ. Ժողով, Պոլսահայ հարուստներ և բոլոր սրտցաւ ազգայինները սովեալներու համար հանգանակութեան և օգնութեան գործեր կը կազմակերպէին. Կ. Պոլսոյ Հայութիւնը, առաջին առթիւ իսկ, արձագանգ կուտար եղբայրական օգնութեան կոչերուն և լիառատ գումարներ կը նուիրէր Հայաստանի սովեալներուն.

Այս ծանր օրերուն էր ահա, որ Վասպուրականի Հայութիւնը, առաջին անգամ ըլլալով, Ազգ. Սահմանադրութեան տրամադրած օրէնքներու համաձայն, կ'ընտրէր իւր Առաջնորդը, յանձին Խրիմեան Հայրիկի.

Տխրահռչակ Ոզոս Եպիս. Մելիքեանը, 1873-ին, Խրիմեան Պատրիարքի հրամանով աքսորուեցաւ Բայազիտ. Անոր յաջորդեց Գրիգորիս Եպիս. Աղուանեանը, որ յետոյ Պատրիարքարանի կարգադրութեամբ հրաժարեցաւ (1874). Աղուանեանին յաջորդեց, իբրև առաջն. փոխանորդ՝ Էիմ Անապատի Թադէոս Վարդապետը. Ապա 1875 Վասպուրականի Հայոց Առաջնորդ նշանակուեցաւ հայրենախօս Երեմիա Եպիս. Տէր-Մարգսեան-Տէվկանցը, որ շարունակեց իւր պաշտօնավարութիւնը մինչև 1879-ի աշնան, երբ

Խրիմեանը Վասպուրականի Հայութեան ձայնով սահմանադրապէս կ'ընտրուէր Առաջնորդ և կը հրաւիրուէր իւր թեմն ու հայրենիքը հովուելու։

Պատրիարքարանը սիրով կը հաստատէր Խրիմեանի ընտրութիւնը։ Հայրիկը ինքն ալ ուրախ էր, որ առիթ կ'ունենար երթալ հայրենիքը, տեսնել Վան-Վասպուրական, իւր Արծուաբոյն Վարագը, և իւր այնքան սիրած ժողովուրդը, որ կը տառապէր սովի մէջ։ Պատրիարքարանը կը հրահանգէր Խրիմեանին Վանի մէջ իւր նախագահութեամբ կազմել «Վասպուրականցի Սովելոց Ցանձնաժողով»ը, որուն պարտականութիւնը պիտի ըլլար նիւթական օգնութիւն ցոյց տալ սովեալներուն։ Պատրիարքարանը կ'որոշէր իւր կողմէ ներկայացուցիչ մը ղրկել Վան, «Սովելոց Ցանձնաժողով»ին մէջ գործելու և Խրիմեանին աջակցելու համար։ Ո՛վ պիտի ըլլար այդ ներկայացուցիչը, որ յետոյ միայն, 1880-ի ամառը Վան պիտի հասնէր։

Ազգային բարերար և մեծահարուստ Սեբովբէ Կիւլպէնկեանը*) իւր առևտրական տան պաշտօնեաներէն Քեռովբէ Դուլումճեանին կ'առաջարկէ, որ Պատրիարքարանի կողմէ և Վարժապետեանի ցանկութեամբ, իբրև օգնական միանայ Խրիմեանին և երթայ Վան կազմուելիք «Սովելոց Ցանձնաժողով»ին մէջ գործելու համար։ Դուլումճեանը, որ պատուական և ազգասէր Հայ մը եղած է, հաճոյքով կ'ընդունէր այդ առաջարկը։ Եւ ահա, 1879-ի Նոյեմբերին Խրիմեան Գ. Պոլսէն ճամբայ կ'իյնայ դէպի Վան։ Հայրիկը նորէն կը չափէր Սև ծովը դէպի սև սովը երթալու համար։

Աշնան խոնաւ, ցուրտ և անձրևոտ եղանակները սկսեր էին, երբ Խրիմեանը Տրապիզոնէն կ'ուղևորուէր դէպի Վան, ուր Հայ ժողովուրդը սրտատրոփ անոր ժամանման կը սպասէր։

Երկար և տաժանելի ճամբորդութենէ մը յետոյ, Խրիմեան Հայրիկը Նոյեմբերի վերջերը կը մտնէր Վան, ուրկից 17 տարի բացա-

---

*) Այս մեծ գերդաստանի մասին Վանեցի բանասէր Խաչիկ Լեոնեանը, Կ. Պոլսոյ «Բիւզանդիոն» օրաթերթին մէջ, ընդարձակ և փաստացի ուսումնասիրութիւն մը հրատարակեց և պատմական տուեալներով հաստատեց, որ Կիւլպէնկեանները սերած են Արծրունեաց Վարդ-Պատրիկ—Կիւլ-Պէ(ճ)կ իշխանի տոհմէն, որուն նախահօր՝ Վարդ-Պատրիկի գերեզման-մատուռը կը գտնուի Վանի Հայոց-Ձոր գաւառի Խորգոմ գիւղին մէջ։

կայեր էր։ Արդեօք որքան յուզուեցաւ անոր սիրտը, երբ ոտքը դրաւ հայրենի քաղաքի հողին վրայ։ Ամբողջ ճամբու ընթացքին, Էրզրումէն մինչև Վան՝ նա տեսած էր սովահար և տանջուած ժողովուրդը, որ «հաց, հաց» կ՚աղաղակէր։ Հայրիկը կը մտնէր իւր հայրենիքը — «Վասպուրական մեր աշխարհ»ը, որ «վարդի փոխան» փուշեր բերած և Հայրիկի ցաւերը «բիւր հազար» ըրած էր։ Սովն էր այդ, որ մահուան մանգաղով կը սպառնար հնձել հոգեպէս և մարմնապէս ընկճուած ժողովուրդը։ Սակայն Հայրիկի գալուստը լոյսի և յոյսի շողեր կը կաթեցնէր ընկճուած և յուսահատ ժողովուրդի սրտին մէջ։ Հայրիկն էր եկողը, Հայ ժողովուրդի Հայրիկը, որ աշնան անձրևոտ ու ցուրտ եղանակին ծով ու ցամաք կտրեր անցեր և իւր սովահար ու տանջուած զաւակներուն օգնութեան հասեր էր։

Ամբողջ Վանն իրարանցման մէջ էր։ Օրը ցուրտ, քամի և անձրևոտ, բայց ժողովուրդը հեւ ի հեւ Այգեստանէն կը վազէր դէպի Քաղաքամէջ Հայրիկին ընդառաջելու համար։ Վասպուրականի Արծիւը կը մօտենար քաղաքին, որ տօնական տեսք ստացեր էր այդ օրը։

Ժամանակակից ականատես վկան Եռվիֆ Տէր-Արիստակէսեանը*) թող պատմէ իւր տեսածներն ու լսածները թէ ինչպէս Խրիմեանը Վան ժամանեց։

«Աշնան, 1879-ի Նոյեմբերի վերջերն էր, ցրտաշունչ և անձրևոտ օր մը, երբ Խրիմեան Հայրիկը կը ժամանէր Վան։ Առաջնորդ Երեմիա Եպիսկոպոսը և հոգևոր ու քաղաքական ժողով-

---

*) Եռվիֆ Տէր-Արիստակէսեանը ծնած է Վան 1863-ին։ Աշակերտած է նշանաւոր Ռուբինեանց-Հօրօզ Վարժապետին։ Երկար տարիներ իբր առևտրական ապրած է Կ. Պոլիս, Կովկաս և Պարսկաստան։ Երիտասարդ հասակէն մինչև այժմ, երբ արդէն 65 տարեկան ծերունի մըն է, նա գրականութեան սիրահար մնացեր է։ Ունի ձեռագիր անտիպ աշխատութիւններ՝ (հայրենասիրական և ազգային նիւթեր)։ Իմ խնդրանքով նա գրեց և ինձ նուիրեց իւր ուսուցիչ Հօրօզ Վարժապետի մանրակրկիտ կենսագրութիւնը, որ պիտի երևայ «Վասպուրականի Գրական Մատենաշար» անունով աշխատութեանս մէջ (տարդ անպիտ)։ Իմ խնդրանքով նա գրեց նաև իւր յուշերն ու տպաւորութիւնները Խրիմեանի մասին։ Այդ յուշերէն քանի մը գլուխներ այժմ հաճոյքով կը հրատարակեմ գրքիս մէջ։

ներու անդամները Հայրիկին դիմաւորելու գնացին մինչև Աւանց գիւղը, ուր եկան նաև պետութեան ներկայացուցիչ Ալայ Պէյ, Թաբուր Աղասին, քաղաքի ոստիկանապետ և ոստիկաններու ձիաւոր պահակախումբը, Ռուսական հիւպատոս հայազգի Կոստանդին Համամարականի թարգման Միքայէլ Օրուանձտեան, Անգլիական հիւպատոս Կապիտան Ֆլէյթընի թարգման Միհրան Բաղդասարեան և ուրիշ բարձրաստիճան անձեր. Ջը նայած, որ անձրև կուգար և ցեխ էր, բայց քանի մը հազար ժողովուրդ Հայրիկին ընդառաջելու եկած էր։ Աւանց գիւղէն մինչև Առաջնորդարան, որ մէկ ժամուայ ճամբայ է, ժողովուրդը ամենուրեք խռնուած էր և սրտատրոփ՝ Հայրիկի գալուն կը սպասէր։ Վանի բերդի ոտորոտէն, Թաւրիզի Դուռ կոչուած դարբասէն մինչև Ս. Նշան եկեղեցին խուռներամ ժողովուրդը ձիւնախառն անձրևի տակ կանգնած՝ խորին սիրով և կարօտով լեցուած կը ցանկար տեսնել Մեծ Հայրենասէրը, որ կուգար իբր Առաջնորդ գործելու տանջուած ու սովահար Վասպուրականի մէջ։

«Հսկայական շքախումբով շրջապատուած կուգար Հայրիկը, որուն ի տես, ժողովուրդը «կեցցէ»ներով և ծափերով ողջունեց Վասպուրականի Արծուի գալուստը, իսկ հեռուանց քաղցր ու զիլ կը զօղանջէին Ս. Նշան եկեղեցւոյ զանգերը։ Հայրիկը գլխու շարժումով և սիրալիր ժպիտով ողջոյն կուտար ժողովուրդին։ Իւր տարիքէն աւելի ծերացած կ'երևար. ցուրտէն և անձրևէն կծկուեր և պատսպարուեր էր երկար մուշտակով մը։ Գլխի և մօրուքի մազերը սպիտակեր էին։

«Այս հանդիսաւոր շքերթը կանգ առաւ Ս. Նշան եկեղեցւոյ (որուն բակին մէջն էր նաև Առաջնորդարանը) դրան առջև, ուր պետական պաշտօնեաներն ու ոստիկանները պատուոյ ողջոյնով ընդունեցին Նախկին Պատրիարքը. Եկեղեցական թափօրը շարականներ երգելով ընդառաջեց Հայրիկին և տարաւ եկեղեցին, որ ծայրէ ծայր լեցուած էր ժողովրդով։ Քանի մը րոպէ հանգստանալէ յետոյ, Հայրիկը սեղան բարձրացաւ և իրեն յատուկ ազու և քաղցր, յուզալի և լալագին ձայնով խօսեցաւ.

«— Իմ սիրելի Վասպուրականի՛ ժողովուրդ։ Օրհնեալ է Գրիգորի, Ներսէսի, և Սահակայ Աստուած, որ անաքժանիս նորէն արժանի արաց

համբուրել իմ հայրենի տաճարներ և սրբութիւններ, տեսնել իմ սիրելի հայրենակիցներ, որոց համար կարօտամաշ եղայ պանդխտութեանս երկար տարիներու մէջ. Սիրելի ժողովուրդ, քեզ հետ պիտի ապրիմ այլևս, քեզ հետ պիտի շնչեմ հայրենիքիս կենսատու օդ, հո պիտի երթամ իմ սիրած բոյն—Վարագայ վանքը, և հոն պիտի ապրիմ մինչև վերջին շունչս, Ժողովուրդ Հայոց, եկած եմ որ քո ցաւերով մորմոքիմ, քո ուրախութիւնով բերկրիմ, քեզ հետ լամ, քեզ հետ խնդամ. Գիտէք որ աւերիչ պատերազմը քարուքանդ արաց Հայաստանի շէնն ու աւան, գեղն ու քաղաք. հարստահարուեր, գաղթեր կամ կոտորուեր է երկրագործ գիւղացին. Մեր աշխարհի լիութեան և բարութեան միակ աղբիւր ցամքեր է, գիւղացին մէջքակոտոր եղած է և սովը չոքեր է երկրի մէջ ու մահ կը սպառնայ ամէնքիդ. Սակայն մի վհատիք, այն Աստուած, որ Իսրայէլին երկար տարիներով անապատներու մէջ մանանայով կերակրեց, կարող է և ձեզ ազատել պատերազմներու մշտական հետեւանքն եղող այս սպառնալի սովէն.

«Սիրելի ժողովուրդ, օրհնեա՛լ լինիք, շնորհակալ եմ բոլորիդ ցոյց տուած սիրալիր ընդունելութենէն. Այժմ ներող եղէք, որ աւելի չեմ կրնար խօսիլ, Վասպուրականի Արծիւն ծերացեր է, ճանապարհի յոգնութենէն շունչս կը կտրուի: Այսուհետև ձեզ հետ եմ և շատ ու շատ առիթ կ'ունենամ ձեզ հետ խօսելու. Դարձեալ կը յորդորեմ զձեզ, որ չը յուսահատիք, մեծ է Աստուծոյ զօրութիւնը, ամէն կողմէ շուտով կ'օգնեն մեզ և կ'անցնին այս դժուարին օրեր: Դէհ, երթայք բարեաւ և խաղաղութեամբ. Թողէք որ ես ալ երթամ և հանգչիմ իմ հայրենի տան յարկին տակ",

«Հայրիկը երբ սեղանէն վար իջաւ, ժողովուրդը իրար հրելով շրջապատեց զայն. Շատեր կուլային, ուրիշներ կ'աշխատէին համբուրել անոր ձեռքերը, մինչև որ նա կրցաւ դուրս պրծնել բազմութեան ձեռքէն և բարձրանալ Առաջնորդարանի դահլիճը, ուր տեղի ունեցան պաշտօնական տեսակցութիւնները և բարի գալուստի ընդունելութիւն. Երեկոյեան կողմ, ոստիկանական պատուոյ պահակախումբի առաջնորդութեամբ և ահագին ժողովրդի ուղեկցութեամբ Հայրիկը Քաղաքամէջէն ձիով ճամբայ ելաւ դէպի Այգեստան: Խաչ Փողոցէն մինչև Ցանկոյսները, մինչև Խրիմեանենց տան

առջև, փողոցներու մէջ ժողովուրդը Հայրիկի գալուն կը սպասէր։ Ծափերով, կեցցէներով և ժողովրդական խանդավառ ցոյցերով նա կանգ առաւ իւր հայրենի տան առջև։ Երբ մութն ընկած էր արդէն, ժողովուրդը հեռացաւ իսկ Հայրիկը գնաց հանգչելու իւր հայրական տան խոնարհ յարկին տակ, հարազատներու, ազգականներու և մտերիմներու շրջանին մէջ»։

Խրիմեանը Վան կը հասնէր 1879-ի Նոյեմբերի 21-ին, չորեքշաբթի և յաջորդ օրն իսկ կը ստանձնէր իւր առաջնորդական պաշտօնը։ Երկու օր յետոյ, Նոյեմբերի 24-ին, Հայրիկը կրօնական և քաղաքական խառն ժողովներու անդամներն ու քաղաքի նշանաւոր անձերը Առաջնորդարան հրաւիրելով կը գումարէր մեծ նիստ մը։ Հայրիկը ժողովականներուն կը ներկայացնէր սովահար ժողովուրդի օրհասական վիճակը և կ'առաջարկէր այդ ժողովէն ընտրել մարմին մը, որ սովելոց համար կազմակերպէր դրամական հանգանակութեան և արմատիքի հայթայթման գործերը։ Ժողովը սիրով և միաձայն կ'ընդունէր այդ առաջարկը և կ'ընտրէր սովելոց խնամատար մարմին մը՝«ՎԱՕՊՈՒՐԱԿԱՆԻ ՕՈՎԵԼՈՑ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ»ը*), որուն սկզբնական կազմը հետևեալն էր. Նախագահ՝ Խրիմեան Հայրիկ, Ատենապետ՝ Գէորգ Բէյ Գալճեան, Ատենադպիր՝ Սեդրաք Տէվկանց, Դանձապահ՝ Մկրտիչ Մարութեան, անդամներ՝ Երեմիա Եպիսկոպոս Տէվկանց, Դարեգին Վարդապետ Սրուանձտեանց, Յարութիւն Թէրզիբաշեան, Մկրտիչ Փորթուգալեան, Այազ Այազեան, Ղևոնդ Թէրլէմէզեան և Կարապետ Իսաջանեան. Այս կազմին վրայ յետոյ աւելցան Յակոբ Պանիրեան, Յովհաննէս Խանճեան, Սարգիս Միրզախանեան և Սիմէոն Կիւնէշեան, իսկ «Հայաստանի Սովելոց Խնամատար Կեդրոնական Յանձնաժողով»ին կողմէ իբր ներկայացուցիչ և գործակից կը հանդիսանար Քերովբէ Դուլումճեանը։

«Սովելոց Յանձնաժողովը» իսկոյն գործի անցաւ և մեծամեծ զոհողութիւններով կազմակերպեց հանգանակութեան, նպաստի և հացի բաշխման գործերը։

---

*) Այս յանձնաժողովի անդամներէն մէկ մասի խմբական անտիպ լուսանկարը (էջ 526) ինձ նուիրեց կրթական, գրական և հանրային համեստ գործիչ Միհրան Բաղդասարեանը B. D., որ ծնած էր Կ. Պոլիս 1852-ին և մեռաւ Թաւրիզի մէջ 1927-ի Ապրիլի 23-ին։

ՀԱՅԿ ԳԱՍԱԹՑԱՒՆՆԵՐԻ
ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ

ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՐՄԱՆ ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

1927

# ՀԱՅՈՑ ՀԱՅՐԻԿ

## ԵՕԹՆԵՐՈՐԴ ՏԱՍՆԱՄԵԱԿ

## 1880—1890

### Ա.



### ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ՍՈՎՆ ՈՒ ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿԸ

*—Հա՜ց..., հա՜ց..., անօթի մեռանք... օգնեցէ՛ք...* կ՛աղաղակէր սովահար ամբոխը՝ Վանի Առաջնորդարանի դռներուն առջև խռնուած։

*«Վասպուրականի Սովելոց Ցանձնաժողով»*ը գերագոյն ջանքերով գործի լծուած է սովեալներուն հաց և դրամ մատակարարելու համար։ Աղէտն այնքան մեծ է և օգնութիւնն այնքան քիչ, որ ամբոխային դժգոհութիւնները միշտ անպակաս են։

Վասպուրականի Բաշկալէ, Աղբակ, Նորդուզ, Խօշաբ, Հայոց-Ձոր, Շատախ, Մոկս, Ռշտունիք և Թիմար գաւառներն ու Վան քաղաքը սովի մատնուած են։ Արճէշ և Ալչաւազ հացատատ գաւառները միայն այս աղետէն զերծ են։ Գաւառներէն հազարաւոր Հայ և քիւրդ սովեալները լեցուեր են քաղաք և հաց կը պահանջեն։ Փողոցներու մէջ, դռներու առջև, պատերու տակ, հիւանդ, անօթի և կիսամեռ պառկած են տղամարդիկ, կանայք և մանկիկները, որոնց անյոյս և անոյս աչքերը ճաց եւ օգնութիւն կը հայցեն փողոցի անցորդներէն։

*—Հայրիկն էկաւ. Հայրիկն էկաւ...* նուաղ և խեղդուած ձայնով իրար իմաց կուտան սովեալները և կ՛ընդառաջեն Հայրիկին, որ ձիով կուգայ հեռուէն։

Սովալլուկ, կմախք դարձած, փոս ընկած և կապտած աչքերով կամ ուռած դէմքերով մանկիկներ, կանայք և տղամարդիկ հաղիւ ոտքի կ'ելլեն և Հայրիկի ճամբան կը կտրեն։

—Հայրիկ ջան, արևիդ կուրբան պատառ մը խա՛ց...։

—Հայրի՛կ...անուանդ մեռնի՛մ, մէկ ճար արա, անօթի մեռա՛նք...։

—Հայրի՛կ, Հայրի՛կ, զաւակներս հիւանդ են օգնութի՛ւն....

Կը յուզուի, կուլայ Հայրիկը, ձեռքը զրպան կը խոթէ և ունեցած ամբողջ դրամը զինք շրջապատողներուն բաժնելէ յետոյ կը հեռանայ, երբ յանկարծ խումբ մը սովահար բիւրդեր, զղջացող յանցաւորներու պէս, վիզը ծուռ, աղաչական և լալագին կը ձայնեն.

—Հայրի՛կ, Հայրի՛կ, ազ բախտէ տա, նա՛ն, նա՛ն, հիմդա՛ղ.... (քո բախտն ենք ընկեր, հա՛ց, հա՛ց, օգնութի՛ւն)։

Հայրիկը ձիէն կ'իջնէ իւր ծանօթներուն մէկուն դուռը կը զարնէ և կը խնդրէ, որ այդ բիւրդերուն քիչ մը հաց տան։

Եւ այսպէս ամէն օր, անվերջ, մինչ սովի արհաւիրքը երթալով կը սաստկանար և ծնունդ կուտար նաև Թիֆօ հիւանդութեան։

Խրիմեանը հեռագիրներով ու նամակներով կը դիմէ Կ. Պոլսոյ, Կովկասի և Պարսկաստանի իւր բարեկամներուն և ազգայիններուն, խնդրելով անմիջական օգնութիւն հասցնել սովահար ժողովուրդին։

Պատրիարքարան և Ազգային Ժողովը երբ կը տեսնեն, որ սովը ոչ միայն Վասպուրականի, այլև բովանդակ Տաճկահայաստանի մէջ մեծ աւերներ կը գործէ, կ'որոշեն կազմակերպել համազգային օգնութիւն, ժողովուրդը սովամահութենէն փրկելու համար։

Ազգային պաշտօնական մարմինները կը պատրաստուէին կազմել Հայաստանի սովելոց խնամատար մարմին մը, երբ 1880 թուի Յունուարի 6-ին. Ս. Ծննդեան տօնի առաւօտը, Կ. Պոլսոյ Գատիւղի մէջ, Կիւլպէնկեաններու տուն հաւաքուած խումբ մը ազգասէր հայեր—Սերովբէ և Աբէլ Կիւլպէնկեաններ, Արիկ Ունճեան, Պօղոս Շաշեան և Գրիգոր Նիկոդիմոսեան—կ'որոշեն կազմել մարմին մը, Հայաստանի սովահար ժողովուրդին օգնութիւն ցոյց տալու համար։

Այսպէս ահա, կը կազմուի «ՀԱՑԱՍՏԱՆԻ ՍՈՎԵԼՈՑ ԽՆԱՄԱՏԱՐ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԾԱՆՁՆԱԺՈՂՈՎ»ը, հետևեալ կազմով.—Սերովբէ Կիւլպէնկեան, Սահակ Ղազարոսեան, Պօղոս Շաշեան, Գաբրիէլ Նորատունկեան, Արիկ Ունճեան, Գրիգոր Նիկոդիմոսեան, Աբէլ Կիւլ-

պէնկեան և Գառնիկ Յովակիմեան. «Կեդրոնական Ցանձնաժողով»ը սքանչելի եռանդով գործի լծուեցաւ և կրցաւ համազգային, ընդհանուր հանգանակութեամբ մեծագումար դրամներ կեդրոնացընել իւր ձեռքին տակ և կազմակերպել սովահար շրջաններու օգնութեան գործերը. Թուրքիոյ, Ռուսիոյ, Պարսկաստանի, Հնդկաստանի, Եգիպտոսի և Եւրոպայի գաղութներու ամբողջ Հայութիւնը դրամով, դեղօրայքով և այլ նիւթական միջոցներով օգնութեան հասաւ սովեալներուն.

Յատկապէս յիշատակութեան արժանի է Գր. Արծրունիի կատարած հսկայ գործը. Նա իւր «Մշակ» թերթի միջոցով մեծաքանակ գումարներ հանգանակելով ղրկեց «Կեդրոնական Ցանձնաժողով»ին, որը արդէն սովահար շրջաններու մէջ ունէր իւր մասնաճիւղերը և կանոնաւոր կազմակերպութեամբ մը կը ղեկավարէր օգնութեան ընդհանուր գործերը.

Այս բոլորէն յետոյ, սակայն սովի աղէտը շատ մեծ էր և հետզհետէ կը ծաւալէր.

«Կեդրոնական Ցանձնաժողով»ը գաւառներէն սրտաճմլիկ տեղեկութիւններ կը ստանար սովի մասին. Ահա քանի մը կսկծալի նկարագրութիւններ.

Ալաշկերտի մէջ այցելու մը կը մտնէ Ամատ գիւղը և ինչ կը տեսնէ — «Ամէն կողմ մահատիպ լռութիւն, ամէն կողմ ամայութիւն, չկայր շարժում մը, ձայն մը, որ կենդանութեան նշոյլ մը տայր...: Ահռելի տեսարանները կը ներկայանային հետզհետէ. ամէն սեռէ ու տեսակէ անձինք գետնի վրայ տարածուած էին, անշարժ, անզգայ, մահուան դալուկն իրենց դէմքն կը պատէր և միմիայն նոցա շընչառութեան շշնկոցն կը լսուէր. Ուղևորութեան ժամանակ շատեր ճանապարհին վրայ կը մնան կիսամեռ կամ դիակնացեալ. գարշահոտութիւն կը տիրէ ամենուրեք և Պայազիտէն մինչև Վաղարշակերտ ամբողջ դաշտն ծածկուած է դիակներով. Անձամբ տեսայ շատեր որ յետին շունչ կը փչեն»*).

«Վասպուրականի Յովելոց Ցանձնաժողով»ը 1880-ի գարնան Կեդրոնական Ցանձնաժողովին կը գրէր.

---

*) Տեղեկագիր «Յովելոց Խնամատար Կեդրոնական Ցանձնաժողովոյ» Գ. Գալիս. 1885. էջ 13—14.

«Երբ Առաջնորդարանի դուռը կը բանայինք, տանիքները արդէն լեցուած կ'ըլլային սովելոց բազմութեամբ. հա՜ց, դրա՜մ, դեղ, դարմա՜ն կ'աղաղակէին. այլ ամենէն աղէկտուր վիճակը Աղբակու, Նօրդուզայ, Շատախու, Մոկաց, Խօշապայ, Կեավառի և Կառկառու գաղթականներն ունէին. ամենին գոյնը կապար և գրեթէ կմախք դարձած ուժաթափ և համր, հազիւ զիրենք ժողովոյ սենեակ կը ձգէին։

«Պառաւ մամիկ մը կը ներկայանար մեզ իւր թոռներու հետ թաղիքի ցնցոտիները շալկած և կտոր մը դառն արմատ կամ մանանայ ըսուած քարծիլ առած իբրև օրապահիկ։ ...Մէկ տարու տղայ մը ոսկոր դարձած հազիւ կը շնչէր հօրը ցամքած կուրծքին վրայ. տղեկի մայրը մեռած էր ճամպան և տղեկը ծիծկաթ կ'ուզէր հօրմէն, հայրը հաց կը խնդրէր Մանաժողովէն։

«Վաթսուն տարեկան ասորի պառաւ մայր մը իւր 25 տարու միակ զաւակը շալկած կը բերէր և մինչև որ օգնութեան հասանք հոգեվարք երիտասարդն իւր մօր շալակին վրայ հոգին աւանդեց։ Աղբակցի մանկամարդ կին մը իւր էրիկ և ամբողջ զաւակները կորուսանելէն վերջը ինքն ալ կը մեռնէր. ամենէն փոքրիկը որ հազիւ եօթն ամսական էր՝ կախուած էր մօր ցամքած ծիծերէն և մեռած էր. Պժնկերտցի Ալէ անունով քիւրդ կին մը իւր դրացի կնոջ հետ համաձայնելով իւր դէտ հոգեվարք չափահաս զաւակը իրմէն կը յօշոտեն և կ'ուտեն։ Ուրիշ մը գետ կը նետէ իր տղան», (Տեղեկագիր· էջ՝ 16)։

«Սովելոց Յանձնաժողովի կազմած պաշտօնական վիճակագրութիւնը ցոյց կուտար, որ միայն Վան քաղաքի և Աղբակի գաւառի մէջ սովահարներու թիւը 66,000 ի կը հասնէր, իսկ սովամահներու թիւը 2,000-էն անցած էր։

«Բնական կերակուրի պակասութիւնը—կը գրէ Վասպուրականի Յանձնաժողովը—անբնական կերակրոյ կիրառութեան ըստիպելով, այդ կողմերն ալ ոչ միայն գազըն ու քարծիլը այլև աւելի անպիտան բաներ ուտեստի գործածութեան և առաջին գարնան (1880) սովելոց բազմութիւնը խումբ խումբ դաշտերը և լեռներ արածուելու ելան, որոյ հետևութիւնն եղաւ հիւանդութեանց ճա-

բակիլը եւ գլխաւորապէս ժանտատենդն (Թիֆօ) սաստիկ կոտորած ըրաւ»։

Ովն էր այդ, Սովի Տարի՜ն... որու մասին դեռ մինչև այժմ ժողովուրդին մէջ յուզիչ յուշեր կը մնան. Դեռ կան կենդանի վկաները, որոնք բազմատեսակ դրուագները կը պատմեն Հայրիկի մասին, թէ նա ինչպէս գիշեր ցերեկ քուն ու հանգիստ մոռցած՝ սովահար ժողովուրդի հոգսերով զբաղուած էր։ Այդ տառապանքի օրերուն նա իսկապէս իւր Հայրիկ կոչման արժանի շատ մեծ գործեր կատարեց։ Փոդոցներու պատերուն տակ ընկած սովեալներու ձեռքէն կը բռնէր, ոտքի կը հանէր և զանոնք կ'առաջնորդէր կամ իրենց և կամ իւր ծանօթներու, բարեկամներու տուները և կշտացընելով ճամբու կը դնէր։ Տաճիկ և քիւրդ սովեալները փոխանակ կառավարութեան դիմելու վստահաբար Հայրիկի մօտ կուգային և հաց ու դրամ կը խնդրէին. Խրիմեանը ինչպէս միշտ, այժմ ալ ամէն ազգի թշուառներու և սովահարներու հանդէպ ցոյց տուաւ իւր մարդասիրական վսեմագոյն զգացումները և անխտիր օգնութեան հասաւ Հայ, ասորի, եզդի, քիւրդ և տաճիկ սովեալներուն։

Վանի կուսակալ Շքօտրալի Հասան Փաշան օր մը տաճիկ հարուստներուն նախատելով ըսած էր,—Դուք չէք ամչնար, որ կը թողուք թուրք և քիւրդ սովեալները հայերէն հաց և դրամ մուրան։ Մթէ ձեր մէջ եղբայրսիրութեան զգացմունքը մեռեր է։

Ներկաները չէն հասկացող և հարուստ թուրք մը կը պատասխանէ.

—Փաշա էֆէնտի, ներեցէք համարձակութեանս, որ ըսեմ թէ, եթէ դուք Խրիմեանի մարդասիրութիւնն ունենայիք և մենք՝ հայերու եղբայրսիրութիւնը, այն ատեն թուրք և քիւրդ սովեալները փոխանակ հայոց թաղերը լեցուելու, հոս կուգային։

Օր մը խումբ մը քիւրդեր կը ներկայանան Հայրիկին և կը յայտնեն, որ կ'ուզեն Հայ-Քրիստոնեայ դառնալ, որպէս զի սովէն փրկուին։ Այս առաջարկը խորապէս կը յուզէ Հայրիկի սիրտը, նա պահ մը կը լռէ և ապա կը պատասխանէ.

—Ես կը կարգադրեմ, որ այսուհետև քիւրդերն ալ հաց և դրամ ստանան մեր «Սովելոց Ծանձնաժողով»էն այս մասին ապահով եղէք. Կը մերժեմ կտրուկ կերպով քրիստոնեայ դառնալու ձեր առաջարկը, վասն զի գիտեմ, որ սովն է խօսողը և ոչ թէ սիրտը։

կը յորդորեմ ձեզ, երբ այս դառն օրերը երթան, դուք հոգ սիրեցէք, խոփ ու գութան սիրեցէք, արդար վաստակով հաց կ'երէք, թէ պատերազմի և թէ խաղաղութեան ժամանակ ձեր հզրացի ազգերու հետ եղբայրաբար վարուեցէք և միշտ համոզուած եղէք, որ այս ահաւոր սովը արիւնի և բռնութեան հետևանքն է։ Է՛հ, օրհնեալ լինիք, գացէք և ըսածներս կատարեցէք։

Հանգուցեալ Մխիթար Բաղդասարեան, 1926-ին ինձ պատմեց, որ—«Հայրիկը դիմեց անգլիական հիւպատոս Մէյջըր Քլէյթընին, խնդրելով որ դրամապէս օգնէ սովեալներուն. Հիւպատոսը սիրով ընդունեց Հայրիկի առաջարկը և իմ միջոցով կարևոր գումար մը յանձնեց „Սովելոց Ցանձնաժողով“ին։ Մէյջըր Քլէյթըն երբ Վան մտաւ, տաճկանպաստ տրամադրութիւն ունէր, բայց երբ Հայոց տառապանքը և թուրքին բռնութիւնները տեսաւ, նա դարձաւ հայերու բարեկամ և Խրիմեանի վրայ հիացողներէն մէկը»։

Ռուսական հիւպատոս ազգասէր Կոստանդին Կամսարականն ալ 476 օսմ. լիրայ տրամադրեց սովեալներուն։

Խրիմեանը բազմաթիւ նամակներ գրեց Կ. Պոլսոյ, Կովկասի և Պարսկաստանի իւր հին ծանօթներուն և բարեկամներուն խնդրելով, որ դրամական օգնութիւն ցոյց տան սովեալներուն։

Անոր այս դիմումները յարգուեցան։ Թէհրանի մէջ, Մերունի Ե. Մասեհեանցի գլխաւորութեամբ հանգանակուած 312 թումանը (111 օսմ. ոսկի) ղրկուեցաւ Վան։

Աստրպատականի Սալմաստ գաւառի Հայ վաճառականներն ալ իրենց մէջ պատկառելի գումար մը*) հանգանակելով, ուղարկեցին Խրիմեանին։ Սովի տարիներուն Հայրիկը անսպառ եռանդի և անխոնջ աշխատանքի մարմնացում դարձեր էր։ Այդ աղէտի դէմ առնելու համար նա ամէն տեղ և ամէն տեսակ դիմումներ ըրաւ և անձնապէս կրցաւ մեծ գործ կատարել։

Սակայն սովէն զատ հիւանդութիւնն ալ կը սաստկանար և ամէն օր տասնեակներով կը մեռնէին միայն Վանի մէջ, ուր այնատեն

*) Այս գումարը ստանալէ յետոյ, Խրիմեանը գրած է պատշաճ ստացագիր մը, որ Սալմաստեցի վաճառական գրասէր Կարապետ Ըզգումանեանը տասնեակ տարիներ գուրգուրանքով պահելէ յետոյ 1927-ին նուիրեց ինձ։

կանոնաւոր բժիշկները չկային։ Հայրիկը նամակ մը կը գրէ Թիֆլիս և բժիշկ կը խնդրէ։ Եւ ահա Բժ. Յովսէփ Շիշմանեանը— վիպասան Շերենցը— դեղօրայքով և պատրաստութեամբ Թիֆլիսէն կուգայ Վան 1880-ի գարնան և կարճ ժամանակ գործելէ յետոյ կը հեռանայ։ Նոյն տարին Կ. Պոլսէն Վան կուգայ Բժ. Միհրան Վարդազարեանը, որ 6 ամիս անձնուիրութեամբ կը կատարէ իւր պարտականութիւնը։ «Յովելոց Կեդրոնական Յանձնաժողով»ի նեկկայացուցիչ Քերովբէ Գույումճեանն ալ 1880-ի Յուլիսին կուգայ Վան և տեղւոյն յանձնաժողովի հետ կը գործէ, ղեկավարելով հաշուական և վիճակագրական գործերը։

«Վասպուրականի Յովելոց Յանձնաժողով»ը սովամահութեան դէմն առնելէ յետոյ գիւղացիներուն վար ու ցանքսի համար սերմնացու և լծկան բաժանեց։ Աշնան (1880) բաւական վաթսունքս եղաւ։ Խրիմեանի և Ք. Գույումճեանի խնդրանքով «Կեդրոնական Յանձնաժողով» Վանի Ջատախ գաւառի Հայ գիւղացիներուն դրամական օգնութիւն ցոյց տուաւ, որով անոնք կրցան իրենց շահագործութեան արհեստը շարունակել աւելի յաջող պայմաններու մէջ։ Պատերազմի և սովի պատճառով Վանի մէջ կային բազմաթիւ որբեր, որոնց խնամքն ու դաստիարակութիւնը ստանձնած էր նոնակազմ «Անամատար Ընկերութիւն»ը, որուն հիմնադիրն էր աշխոյժ երիտասարդ ուսուցիչ մը— Համբարձում Երամեանը։ «Յովելոց Յանձնաժողով»ը դրամական օգնութիւն ցոյց կուտար նաև «Խնամատար Ընկերութեան» որբանոցին, որ հաստատուած էր քաղաքին մօտիկ Կարմրուորի վանքին մէջ։ Այդ որբանոցին մէջ կ'ապրէին և կ'ուսանէին 25 որբեր, Համբարձում Երամեանի ղեկավարութեամբ և անոր անձնուէր ու արդիւնաւոր աշխատանքի շնորհիւ կը փրկուէին սովէն ու մահէն։

Գերմարդկային ջանքերով հնարաւոր եղաւ սովի դէմն առնել։ 1881-ի ամառուան հունձքը բաւարար արդիւնք տուաւ։ Գիւղացիութիւնը ազատ շունչ քաշեց, կշտացաւ։ Երբ կեանքը իւր հունին մէջ մտաւ, այն ատեն Խրիմեանն ու «Յովելոց Յանձնաժողով»ը կ'որոշեն հանգանակուած գումարներով գիւղերու մէջ դպրոցներ հիմնել։ Այս ձեռնարկն ալ յաջողութեամբ կը կատարուի։

Վասպուրականի սովը 1880-ին աթոսափելի չափերու հասաւ,

1881-ին մեղմացաւ իսկ 1882-ին վերջացաւ։ Այս երեք տարիներու ընթացքին «Սովելոց Ճանճնաժողով»ը իբր նպաստ և օգնութիւն ժողովուրդին բաժնեց 12,602 օսմ. հնչուն ոսկի (մօտ 62,000 ռուբլի)։ Միայն Վանի մէջ օրական 5966 սովեալներ ձրի հաց կը կը ստանային։ 1563 գիւղացի ընտանիքներ սերմնացու ստացան, իսկ 1600 աղքատներ կօշիկ և հագուստ։

«Վասպուրականի Սովելոց Ճանճնաժողով»ը՝ Խրիմեանի նախագահութեամբ, հսկայական աշխատանք կատարած լինելուն համար, արժանացած էր «Հայաստանի Սովելոց Խնամատար Կեդրոնական Ճանճնաժողով»ի մասնաւոր գնահատութեան։

«...Ճանճնաժողովս յատուկ շնորհապարտութեան արժանաւոր կը վկայէ Քեռովբէ էֆ. Դույումճեանի աշխատանքն և երախտիքը։ Սեդրակ էֆ. Տ.Սարգսեան (Տէվկանց) 1881 տարւոյ վերջը ընդհանուր հաշիւներ և տեղեկագրութիւնը պատրաստեց։ Մկրտիչ էֆ. Փորթուգալեան սկիզբէն բաւական աշխատելէ յետոյ, վերջէն պարտաւորուեցաւ իւր աշխատութիւնը չափաւորել Միացեալ Ընկերութեան վարժարանաց տեսչութեան գրազմունքին պատճառաւ։ Միւս անդամներէն ոմն շատ և ոմն քիչ, այլ ամենքնին գրեթէ միշտ աշխատեցան ի նպաստ եղկելի սովելոց, շրջելով թէ քաղաքի և թէ ի սովեալ տեղիս։ այլ յատուկ յիշատակութեան արժանի են ատենպետ Գէորգ Գալճեան Պէյի, և գանձապետ Մկրտիչ Մարութեան էֆէնտիի անխոնջ վաստակները, և ի վերայ ամենեցուն Ամեն. Խրիմեան Ս. Հայրիկի հայրագութ հովանաւորութիւնը, որ իւր սրբտին և լեզուին զօրութեամբ զամենեսին ի գործ և օգնութիւն կը մղէը և իւր անձնական ջանիւքն ալ ամենեցուն բարի օրինակ կը հանդիսանայր։ Վանայ մասնաժողովոյն աշխատանքն ուրիշ մասնաժողովներէն տարբեր և առաւել ծանր կերպարան մ'առաւ, երբ յանկարծ ամեն կողմ արմտիք պակսելով բոլոր շրջակայ գիւղօրէից և մերձաւոր գաւառաց նօթի և նօթեալ ժողովուրդը խուռն բազմութեամբ քաղաք դիմեցին և քաղաքին չքաւորաց և կարօտելոց հետ խառնուելով մասնաժողովոյն շուրջը բոլորեցան սրբտաճմլիկ աղաղակներով» (Տեղեկագիր. էջ՝ 70—71)։

Հայաստանէն ու Վասպուրականէն 1882-ի աշնան չքացաւ սովը, որուն համար Վանի Հայ պառաւները այս անէծքը մրմնջացին.

—Ո՛ավ... էրթալդ էլեի գալդ չէլեի... կռուցկդ էս կողմ....

## Բ.

## ՀԱՅՐԻԿԻ ՆԵՐՔԻՆ ԿԵԱՆՔԸ ՎԱՆԻ ՄԷՋ

Պատմական, ազգային և հանրային տեսակէտով որքան արժէքաւոր և գնահատելի է Խրիմեանի գործունէութիւնը, նոյնքան ալ հետաքրքրքիր և իւրայատուկ է անոր ներքին կեանքը այն բոլոր վայրերու մէջ, ուր նա ապրեր ու գործեր է։

Վան-Վասպուրականի մէջ, Խրիմեանի ազգային արդիւնաւոր գործունէութիւնը — 1880 - 1885 թուականներուն — ներկայացնելէ առաջ, կենդանի վկաներու յուշերով պատկերացուենք անոր ներքին կեանքը, որ այնքան գեղեցիկ էջեր ունի։

Վարագայ «Ժառանգաւորաց Վարժարան»ի երբեմնի ուսուցիչ Մarsիrnu Խէրաճեանը 1926-ին Թաւրիզի մէջ ինձ պատմեց իւր յուշերը Հայրիկի մասին.

«Ես դպրոցական պատանի էի, երբ առաջին անգամ, 1879-ի Նոյեմբերի 21-ին տեսայ Հայրիկը, որ Կ.Պոլսէն Վան ժամանեց իբրև Առաջնորդ և „Սովելոց Ցանձնաժողով»ի նախագահ ու գնաց Առաջնորդարան պաշտօնական տեսակցութիւններ կատարելու համար։

«Ցանկոյսների թաղեցիներս յատուկ պատրաստութիւնները տեսած էինք Հայրիկին արժանավայել պատիւներ ընծայելու համար։ Այդ ցուրտ և անձրևոտ օրը, Պողպատի Դար կոչուած վայրէն մինչև Խրիմեաններց տուն, փողոցները խոնուած էին բազմահազար ժողովուրդով։ Երեկոյ էր արդէն երբ Հայրիկը Քաղաքամէջէն ձիով հասաւ Պողպատի Դարը, ուր Վարագայ վանքի միաբաններ, ուսուցիչները, աշակերտները, Վանի Հայոց Առաքեաց և Աւծրուճեաց ընկերութեանց ամբողջ անդամներ, քահանայական դասը և Ցանկոյսների դպրոցի աշակերտութիւնը դիմաւորութեան ելած էին։ Մոմերով, երգերով և «կեցցէ»ներով Հայրիկը առաջնորդեցինք դէպի իւր հայրենի տունը։ Նա մտաւ այն խոնարհ ու պարզ սենեակը, ուր անցուցած էր իւր մանկութիւնն ու երիտասարդութիւնը։ Ազգականները, բարեկամները, դրացիները և հին ընկերները լեցուեցան սենեակը, ուր շարժուելու տեղ չը մնաց։ Մեր ուսուցիչ Դաւիթ Շաքարեանը „Հրաւիրակ Արարատեան“ի ճաճով գրած

էը բարի գալուստի գեղեցիկ ուղերձ մը, որ կարդաց ու նուիրեց Հայրիկին։ Թէև Հայրիկը յոգնած էր, բայց մինչև լոյս չը քնացաւ, վասն զի ներկանները երգերով, զրոյցներով, հինէ՞ու նոր ուրախ և տխուր յուշերով հաճոյք պատճառեցին անոր։

«Այսպէս ահա, առաջին անգամ ըլլալով, ես ծանօթացայ Հայրիկի հետ և առիթ ունեցայ տեսնել այն սենեակը, ուր կ'ապրէը ու կ'աշխատէը Վասպուրականի Արծիւը։

«Այդ սենեակը միջակ մեծութեամբ, հոդաշէն և հնաձև սենեակ մըն էր, ցած առաստաղով և արևահայեաց, երկու փայտաշէն պատուհաններով, որոնց փեղկերը ապակիի փոխարէն պատուած էին ձէթոտած թուղթով։ Լոյսը այդ թուղթերէն ներս կը թափանցէը և խորհրդաւորութիւն մը կուտար Մեծ Հայրենասէրի կացարանին։ Սենեակի ճակատի պատէն կախուած էին Հայրիկի վարդապետութեան առաջին տարուայ խահուէագոյն, մեծադիր նկարը*) և ազգային, պատմական դէմքերու պատկերները։ Պատերու մէջ կային չորս պահարաններ (տոլապ) որոնց մէջ շարուած էին Հայրիկի մատենադարանի հարիւրաւոր գիրքերը։ Գետնի վրայ դրուած էր ցած, փոքրիկ սեղան մը, որուն առջև նստելով Հայրիկը կը կարդար ու կը գրէը, անդադար ծխելով և սուրճ խմելով։

«Հայրիկը ճաշի ժամանակ, ամէն օր կ'ուտէը իւր այնքան սիրած թանապուրը։ Անոր ճաշը շատ պարզ էր, իսկ սեղանակից հիւրերն անպակաս։ Ճաշէն յետոյ ձի կը նստէր ու պտոյտի կ'երթար մօտակայ գիւղեր և դաշտեր։ Բնութեան սիրահար էր նա, դաշտի, հողի, աշխատանքի երկրպագու մը, որ միշտ ազատ և բացօդեայ կեանք կը սիրէը»։

Մարկոս Նաթանեանը**) իմ խնդրանքով, Հայրիկի մասին, 1937-ին գրեց իւր յուշերը, որոնցմէ կը քաղեմ այս մասերը։

---

*) Խրիմեանը 1860-ին երբ Թիֆլիս այցելեց, լուսանկարիչ Համազասպ Մամիկոնեանը հանեց անոր փոքրադիր լուսանկարը, որ յետոյ մեծ դիրքով լոյս տեսաւ վիմատիպով և հազարներով տպաւորեցաւ Գովկասի մէջ։

**) Ծնած է ի Վան 1862-ին։ Նախնական ուսումը իւր հայրենի քաղաքին մէջ ստանալէ յետոյ ինքնաշխատութեամբ ձեռք կը բերէ ժամանակին պահանջած զարգացումը և 1877-էն մինչև այժմ, ամբողջ 50 տարի, անդադար, իբրև կրթական և գրական գործիչ ծառայած է Հայութեան՝ Վանի, Մուշի Կ. Պոլսոյ

«Իբրև հայբենակից մանաւանդ, իբրև մէկ տարիէ աւելի իր ձեռքին տակ Վանայ իր առաջնորդութեան օրով, Առաջնորդարանին դիւանապետ առիթ ունեցած եմ ճանչնալ զայն աւելի մօտէն ինչպէս զինքը տեսած եմ Կ. Պոլսոյ մէջ ալ և հետևած եմ իր կեանքին փուլերուն։

«Քանի Խրիմեանի համբաւ ու անունը տարածուեցաւ Ազգին մէջ այնչափ ալ Հայրիկ մականունը ընդհանրացաւ։ Բայց ամենամեծ մղում ստացաւ այդ տիտղոսին ծաւալումը այն ատեն երբ վանեցի ուսուցիչ Հայրապետ Ճանիկեանը հեղինակեց „Հայրիկ, Հայրիկ fո Հայրենիք“ երգը, որ գլխաւոր առիթն եղաւ Խրիմեանի Հայրիկ պատուանունին այդքան ընդհանուր կերպով տարածուելուն։

«Հայրիկի անյիշաչարութիւն, մարդասիրութիւն եւ անշահասիրութիւնը հանրածանօթ հրդոյթիւններ են։

«Ինչպէս յայտնի է Խրիմեանը ամուսնացած էր նախապէս և կնոջ մեռնելէն ետքը վարդապետ ձեռնադրուած էր։ Մինչև իր խոր ծերութիւնը ընտանեկան շատ քաղցր յիշատակներ ու սիրալիր կապեր պահած էր իր հանգուցեալ կնոջ ազգականներուն և պարագաններուն հետ՝ իր մօտ 6 տարի վերջին բնակութեանը ժամանակ Վանայ մէջ։ Գրեթէ շաբաթ անգամ մը կ'այցելէր իր ծերացեալ քեռիին (որուն թոռն է իմ կինը) և ժամերով հոն կենալով տան փեսայի զգացած վայելքը ունենալ կը կարծէր և կը սփոփուէր։ Նոյնպէս կ'այցելէր իր բոլոր հին ազգականներուն և կը նոթզէր անոնց հետ հին քաղցր յիշատակներ։ Բաց աստի կ'ընդունէր իր տուն ամէն դասակարգի այցելուներ, որոնց հետ կը տեսնըուէր վերին աստիճանի ընտանութեամբ ու պարզութեամբ իրեև մտերիմներու և իր նախկին կեանքին հին ընկերներու։ Փոխա-

---

և այլ վայրերու մէջ։ Ցաճկական բռնութեանց—բանտ և աքսոր—մրուրը քամելէ յետոյ հաստատուեցաւ Կ. Պոլիս, ուր տասնեակ տարիներ ազգային դրպրոցներու մէջ պաշտօնավարեց, աշխատակցելով նաև Կ. Պոլսոյ թերթերուն, պատմական և ուղեգրական յօդուածներով։ 1925-ին Կ. Պոլսէն անցաւ Փարիզ, ուր գժբախտութիւն ունեցաւ տեսնելու մահը իր երիտասարդ Անուշաւան զաւակին։ Այժմ կ'ապրի Փարիզ և Սանասարեան ժողովրդական համալսարանի դասախօսներէն մէկն է։ Մարկոս Նաթանեանի մանրամասն կենսագրութիւնը պիտի երևայ իմ «Վասպուրականի Գրական Մշակներ»ու մէջ։

դարձաբար ինքն ալ կ'այցելէր անոնց, խոնարհելով ամէն կարգի խեղճ տուներ և խրճիթները մտնելով սիրողաբար։

«Իբրև Առաջնորդ, իբրև Վարագայ վանահայր և իբրև „Սովետոյ Յանձնաժողով"ին նախագահ՝ ունեցած պաշտօնական ու հանրային զբաղումներէն դուրս՝ Հայրիկը, ուր որ երթար կը յորդորէր, կը քարոզէր, որ երիտասարդութիւնը պանդխտութեան չը դիմէ, այլ միմիայն կապուի իւր հայրենիքի հող ու ջուրին և վառ պահէ ընտանեկան տունն ու օճախը։ Այս նպատակով ալ Հայրիկը կը համոզէր ծնողները, որ ամուսնացնեն իրենց զաւակները, անոնց «ոտքերը կապել» հայրենիքի և ընտանիքի հետ։ Եւ առաջին օրինակը իր տունէն տալով ամուսնացուց իր եղբօրորդին Խորէն Խրիմեանը հարս բերելով անոր՝ խիստ խոնարհ, բայց խիստ պարկեշտ ընտանիքի մը մէկ աղջիկը, որ Վանայ մէջ առաջին ուսեալ օրիորդն էր։ Եւ օրինակ ըլլալու համար ուրիշներու՝ առաջին անգամ ինքը առանց քօղի և բոլորովին բաց գլուխով ու երեսով կենալ հրամայեց հարսին թէ պսակի ատեն, թէ տանը մէջ, թէ եկեղեցին, թէ փողոցներու մէջ և թէ ամէն տեղ առհասարակ։ Հրամայեց նաև խօսիլ համարձակ ինչպէս իրեն հետ, նոյնպէս տագրի հետ և ամէն ազգականի ու բարեկամի հետ։ Մինչդեռ անկէ առաջ հարսերը գլուխնին քօղով ծածկած կը կենային եկեղեցին պսակի ատեն, նաև տուներու մէջ և չէին խօսեր երկան պարագաներուն հետ։ Հայրիկին տուած կնոջական ազատութեան այս առաջին օրինակը կամաց կամաց ընդհանրացաւ Վանայ մէջ։ Ամուսնութիւնները բազմացնելու համար Հայրիկին թափած ջանքը ու ըրած յորդորներն ալ ապարդիւն չը մնացին։

«Հայրիկը շատ կը սիրէր ձի նստիլ և աստ ու անդ երթեւեկել, գլխաւորապէս իր տունէն երթալ քաղաքը, մինչև Առաջնորդարանը և դառնալ։ Նոյնպէս յաճախ կ'երթար Վարագայ վանքը և կը դառնար տունը նոյն օրն իսկ։ Երբէք կամաց չէր քալեցներ ձին, այլ դրեթէ քառասմբակ վազցնելով միշտ։ Իր մեծագոյն հաճոյքը ձին վազցնելու մէջ կը գտար։ Արդէն նշանաւոր ձիավարժ էր։ Իր ապրտակ, գեղեցիկ ձին ալ շատ հլու և ընտել էր իրեն։ Ամէն անգամ, որ այդպէս սրարշաւ կ'անցնէր Վանայ հռչակաւոր Այգեստանի ծառազարդ շուքերու տակէն, հարթայատակ փողոցնե-

րու մէջէն, Հայ, թուրք, քիւրդ, ասորի պատկառանքով բարևի կը կենային, իսկ ինքը ձեռքի բարև մը տալով կը սուրար արագընթաց։ Ամեն ազգի տղաքները կը կենային նոյնպէս իր ճամբուն և երջանիկ կը համարէին զիրենք եթէ ձեռքի բարև մը ստանային Հայրիկէն։

«Հայրիկը հոգեկան մեծ վայելք մը կը զգար եկեղեցինները քարոզելով ու դպրոցական, լսարանական հանդէսներու նախագահելով ու ըստ պատշաճի խրատականները խօսելով։ Թէ եկեղեցինրէ և թէ վարժարաններէ մեկնած ատենը ահագին բազմութիւն մը կը թափէր վրան և կ՚ուզէր իր ձեռքը համբուրելու պատիւն ունենալ»։

Կովկասահայ մտաւորականներէն Տիգրան Փիրումեանը — որ 1882—85 թուերուն Վանի մէջ իբր կրթական գործիչ յայտնի էր — Խրիմեանի ներքին կեանքի մասին հետևեալ տողերը կը գրէ.

«...Ներք մարդոց բաւական է լոկ Հայրիկի խորհուրդը, միջնորդութիւնն ու պաշտպանութիւնը, նա զոհում է նրանց համար իր բոլոր ժամանակը։ Արդէն նրա բոլոր մտածումները զրկեալներին ու կարօտեալներին օգնելու համար են։ Փոստային օրերին նա չունի մի ազատ րոպէ մարդոց հետ տեսնուելու. նա գրում է իր անթիւ ու բազմատեսակ նամակներն ու կարդում բազմապատիկ ստացածները։ Նրանցից ոչ մէկում չէ կարելի գտնել մէկ տող իսկ, որ վերաբերէր Հայրիկի անձնական օգտին, բարեկեցութեան ու հաճոյքներին. նրանք բոլորն էլ մարդասիրութեան, հարստահարեալներին ու կարօտեալներին օգնելու համար են։

«...Հայրիկը չէ ախորժում պատուոյ վնասակար կերակուրներից և նախադասում է ցամաք հացով միայն կշտանալ։ Իսկ գալով ուտիսին արդէն Հայրիկի համար չկայ աշխարհի մէջ այնքան համեղ կերակուր, ինչպէս Թանապուրը։ Եւ նրա ունեցած բարեկամութիւնը այդ Թանապուրի հետ արդէն առածի կարգն է անցել ամէն տեղ։ ...Նա շատ քչակեր է և շատ հազագիւտ բան է, որ նրա հետ ճաշողները կարողանան նրա չափ ուտելով կշտանալ։ Նոյն պարզութիւնը նա ցոյց է տալիս նաև խնջոյքներում. նա չէ մերձենում բոլոր կերակուրներին և հաւանածներից մի մի պատառ է վերցնում. Թանապուրից յետոյ նա սիրում է նոյնպէս թէյը և

կանոնաւորապէս գործ է դնում օրն երկու անգամ, որ սովորական չէ Ճաճկաստանում.

«Ցերեկւան ազատ ժամերին նա զբաղւում է կարդալով ու գրելով. ձրագէր տակ երբէք չէ պարապում և աւելի սիրում է գիշերները կանուխ պառկել ու առաւօտեան զարթնել. Բայց լաւ խօսակիցների համար նա չէ խնայում նաև գիշերային ժամեր. Իբրև ընկեր զրուցակից և խօսակից արդէն աննման է Հայրիկ. Նա հագնում է էժանագին և ամենապարզ շորեր. Մինչև որ հագուստը խունանալ չը սկսէ նա նոր չի կտրել տայ, բայց բանն այն է, որ անթիւ կարօտեալներ չեն թոյլ տալիս որ նա մի քիչ մաշէ իւր շորերը. Հայրիկը լաւ ձիավարժ է. Նա իր բոլոր ճանապարհորդութիւնները ձիով է կատարում»*).

## Գ.

## ՎԱՐԱԳԱՅ ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԸ

Վասպուրականի մեծ սովը Խրիմեան Հայրիկի մտքին մէջ յառաջ բերաւ գեղեցիկ գաղափար մը—հիմնել Երկրագործական Վարժարան մը, որ ի վիճակի ըլլար մասնագէտ հողագործներ և գիւղատնտեսներ հասցնել և զարկ տալ հողամշակութեան և ամէն տեսակ գիւղատնտեսական աշխատանքներու.

Խրիմեանը «Վասպուրականի Օվելոց Ցանձնաժողով»ին կը կը յայտնէ իւր այս նպատակը, որուն իրագործումը ցանկալի կը գտնէ նաև յիշեալ մարմինը. Խրիմեանը 1880-ի Սեպտեմբերին պաշտօնապէս կը գրէ Կ. Պոլիս, «Հայաստանի Օվելոց Խնամատար Կեդրոնական Ցանձնաժողով»ին յայտնելով, որ Երկրագործական Վարժարանը պիտի ունենայ տեսուչ-վարիչ մը, մասնագէտ գիւղատնտես մը և 20 ձրիավարժ աշակերտներ: Վարժարանի տարեկան ծախքը նախատեսուած էր 380 օսմ. ոսկի. Այս գումարէն Խրիմեանը 180 ոսկի կը խնդրէր «Կեդրոնական Ցանձնաժողով»էն իսկ

*) Խրիմեան Հայրիկ. Իմ յիշողութիւններից. Գրեց՝ Ցիգրան Փիրումեանց. Թիֆլիս. 1887. Տպարան Մովսէս Վարդանեանի. էջ՝ 52։

200 ոսկին ալ յոյս ունէր Կովկասահայերէն ստանալ։

«Կեդրոնական Յանձնաժողով»ը սիրով կ'ընդունէր Խրիմեանի առաջարկը և կը խոստանար բարոյական ու նիւթական ամէն տեսակ աջակցութիւն ցոյց տալ։

Կը մնար որոշել այն վայրը, ուր պիտի բացուէր «երկրագործական վարժարանը»։ Խրիմեանը Վարագայ վանքը կ'ընտրէր իբրև միակ վայրը, որ քաղաքին մօտ էր, ունէր առատ հող ու ջուր և դպրոցական բոլոր յարմարութիւնները։

Եւ ահա 1880-ի Նոյեմբերի սկիզբը Վարագայ վանքին մէջ, Խրիմեանի նախագահութեամբ՝ պաշտօնական հանդէսով մը կը բացուի ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԸ, որուն տեսուչ կը կարգուի՝ Տ. Խրիմեանը։

Հայրիկը Կովկասէն հրաւիրեց մասնագէտ գիւղատնտես մը՝ Նշան Մատաթեանը, որ աշակերտներուն պիտի սովրեցնէր տեսական և գործնական գիւղատնտեսութիւն։ Դպրոցին մէջ ուսուցչական պաշտօն կը վարէին նաև Տարապետ Փիլիպպոսեան, Սահակ Այվատեան (յետոյ եպիսկոպոս), Դաւիթ Շաքարեան, Մարտիրոս Տէր Մկրտիչեան (յետոյ քահանայ) և ուրիշներ։ Իրապէս, Վարագայ Ժառանգաւորացը կը վերածուէր «երկրագործական Վարժարան»ի՝ վերին հովանաւորութեամբ Հայր Արծիւ Հայրիկի։

Խրիմեանի այս ձեռնարկը բարոյապէս ու նիւթապէս քաջալերեցին ոչ միայն Կ. Պոլսոյ այլ և Կովկասի հայերը։ Վանի ռուսական հիւպատոս Կոստանդին Կամսարականը անձնապէս 100 օսմ. ոսկի նուիրեց նորաբաց Վարժարանին։ Հայրիկն ու Կամսարականը Վանի Հայ հարուստներէն յօգուտ Վարժարանի, հանգանակեցին 250 ոսկի։ Խրիմեանը՝ իբրև Նախկին Պատրիարքի՝ պետութենէն ստացած իւր 25 ոսկի ամսական ռոճիկներն ալ կը յատկացնէր Վարագայ վարժարանին։

Գործը յաջողութեամբ կ'ընթանար։ Խրիմեանն ու Մատաթեանը կ'որոշեն Վարժարանի համար բերել տալ հերկելու, հնձելու, կալսելու, խոտ ու յարդ մանրելու մեքենաներ և երկրագործական ու գիւղատնտեսական անհրաժեշտ գործիքներ։ Խրիմեանը նամակներով կը դիմէ Մարսէյլի, Վիեննայի և Մանչեսթրի գաղութներու ազգայիններուն խնդրելով, որ Վարագայ «երկրագործական Վար-

ժարան»ին մեքենաներ նուիրեն։ Մանչեսթրի Հայ վաճառականները հնձելու ընտիր մեքենայ մը կը նուիրեն։ Վանեցի մեծանուն բարերար Մկրտիչ Սանասարեանը երկու տարի 1000-ական րուբլի վճարեց գիւղատնտես Մատաթեանին իբր տարեթոշակ։ Ղզլարցի գրասէր բարերար Յովսէփ Իշմիրեանցը 50՝ իսկ Փոթի քաղաքի վաճառականներէն Կարապետ Պոպովն ալ 60 ոսկի նուիրեցին «երկրագործական Վարժարան»ին, որը գոյութիւն ունեցաւ միայն 3 տարի —1 նոյեմբեր 1880— 31 Հոկտեմբեր 1883— երբ Վարժարանը երկրագործական-գիւղատնտեսական ըլլալէ դադրեցաւ և նորէն շարունակուեցաւ իբր Վարագայ «Ժառանգաւորաց Վարժարան»։

Երեք տարուայ ընթացքին «Երկրագործական Վարժարան»ին մէջ տեսական ու գործնական գիւղատնտեսութիւն սովրեցան 30 աշակերտներ, որոնք թէև որոշ մասնագիտութիւն մը չը կրցան ձեռք բերել, բայց գաւառներու մէջ յաջողեցան հողամշակութեան և գիւղատնտեսութեան արդիւնաւոր միջոցներ գործադրել։ «Երկրագործական Վարժարան»էն մասնաւորապէս օգտուեցաւ Վարագայ վանքը—Վասպուրականի Վենետիկը։

Գիւղատնտես Մատաթեանի դեկավարութեամբ, վարժարանի սաներն ու վանքի հողագործները խնամքով կը մշակէին վանքի հողերը։ Հացահատիկներու, ընդեղէններու, բանջարեղէններու մշակութիւնը շատ մեծ արդիւնք կուտար վանքին։ Ծառամշակութիւնն ալ իր կարգին զարգացաւ Վարագայ մէջ։ Երեք տարուայ ընթացքին վանքի այգիներու մէջ և շրջակայքը հարիւր հազարաւոր ծառատունկներ մշակուեցան։ Վանքի արևմտեան դարպասի առջև տարածուեցաւ արհեստական ընդարձակ անտառ մը, որ բնական, հիասքանչ տեսարան մը կ'ընծայէր Արծուաբոյն Վարագին։ Երիմեանն անձամբ կը մասնակցէր այդ գիւղատնտեսական աշխատանքներուն, կ'երթար գութանաւորներու մօտ և մաճկալի ձեռքէն մաճն առնելով արտ կը վարէր, հնձող մեքենայի վրայ նստելով արտ կը հնձէր, ծառ կը տնկէր, ճամբաներ շինել կուտար, բահը ձեռքին՝ ածու կը ջրէր, ջրաղացներու, առուներու, աղբիւրներու ջուրերը հաւաքել կուտար լճակներու մէջ։ Մէկ խօսքով Վարագայ վանքի ամէն տեսակ գիւղատնտեսական աշխատանքներուն գործօն մասնակցութիւն ցոյց կուտար, կը յոգնէր, կը տանջուէր և

ապա հօտաղ մշակներու հետ, բաց դաշտի մէջ, արևին տակ, ա-ուններու ափին նստելով թանապուր կամ մածուն կ'ուտէր։

Վարագայ մէջ զարգացած էր նաև կաթնատնտեսութիւնը։ Հին աւանդութիւն մը կ'ըսէ թէ Վարագը այնքան շատ ոչխար ունէր, որ Վերին Վարագէն մինչև Ներքին Վարագ՝ կաթը խողովակներով կը հոսէր։ Ոչխարաբուծութիւնը Վարագայ վանքի տնտեսական ամենամեծ ձեռնարկներէն մէկն էր։ Վանքի այս հարուստ և բազմատեսակ տնտեսութեան շնորհիւ ապահովուած էր նաև «Ժառանգաւորաց Վարժարան»ի գոյութիւնը։ Վարագը, Լիմ և Կտուց Ա-նապատներու նման, խստակեաց, ճգնաւորական կեանքի, աղօթքի և աշխարհուրացութեան վանք չէր, այլ աշխատանքի, կենսունակութեան և դաստիարակութեան կեդրոն մը, որուն բարոյական ու տնտեսական ամէն տեսակ գործերու մէջ կ'արձանանար Խրիմեանը՝ իբրև վանահայր, ուսուցիչ և ստեղծագործող աշխատաւոր։

Վարագայ «Երկրագործական Վարժարան»ը իւր եռամեայ կարճատև գոյութեամբ, այնքան մեծ դեր կատարեց վանքի տնտեսութեան զարգացման մէջ, որ տասնեակ տարիներ շարունակ, մինչև մեր օրերը, միշտ ձեռնարկներ եղան և անգամ մեծաքանակ գումարներ տրամադրուեցան կեանքի կոչել այդ վարժարանը։

Խրիմեանը որքան որ անտնտես, անհաշիւ և անփոյթ էր իւր անձնական կեանքի և ապրուստի վերաբերմամբ, ընդհակառակն նա շատ ուժեղ կերպով կը պաշտպանէր ժողովրդական տնտեսութեան գաղափարը և ամէն կերպով կը ջանար, որ ժողովուրդը կապուի մանաւանդ հողամշակութեան արդար և սուրբ աշխատանքի հետ։ Այս նպատակին հասնելու համար էր, որ նա բացաւ Վարագայ «Երկրագործական Վարժարան»ը և մինչև իւր մահը հողին փառքն ու հացին երգը բանահիւսեց, Հայ մշակ, շինական ժողովուրդին նուիրելով իւր հոյակապ գլուխ գործոցը՝ «Պապիկ եւ Թոռնիկ»ը։

Վարագայ «Երկրագործական Վարժարան»ի եռամեայ, կարճատև գոյութիւնը ցաւ կը պատճառէր ոչ միայն Խրիմեանին, այլ և «Ովկեղոց Կեդրոնական Ընկերաժողով»ին որ կը գրէր։

«Արդարև տխրութեամբ կը յիշատակէ Ընկերաժողովս, թէ այն երկրագործական վարժարանը՝ որուն զարգացման և յաջողութեան

համար այնչափ անուններ և պարագայներ գրաւական էին, և յորս վստահացեալ ինքն ալ եռանդեամբ գործոյն ձեռնարկեց. և ապագային ընդհանուր օգտին համար մասնաւոր զոհողութիւններ չխնայեց, այսօր ոչ ևս է. Ամեն. Խրիմեանի խնայողական փորձերն, թոշակներու նուազումն և նոր միջոցներու գործադրութիւնն ալ այդ վտանգը չկարացին արգելուլ. Մեղադրանաց զննութիւններն իսկ թերևս մեղադրելի են սակայն թէ վարժարանին տեսչութիւնն և թէ հոդագործական ուսուցչութիւնն զերծ չեն կրնար մնալ ձախողութիւն պատասխանատուելենէն» (Ցեղեկագիր. էջ՝ 106).

## Գ.

## ՀԱՅՐԻԿ՝ ԴՊՐՈՑՆԵՐՈՒ ՀԻՄՆԱԴԻՐ ԵՒ ՀՈՎԱՆԱՒՈՐ

Խրիմեան Հայրիկը իւր պատրիարքութեան՝ատեն, իր հայրենակից մեծանուն բարերար Մկրտիչ Սանասարեանէն խնդրած էր, որ Վանի մէջ հիմնել տայ աղջկանց յատուկ դպրոց մը. Սանասարեանը սիրով ընդունած էր Խրիմեանի խնդիրքը. Եւ ահա 1870-1871 թուերուն, Սանասարեանի դրամական օժանդակութեամբ, Վանի մէջ կը բացուի Ս. Սանդխտեաց անունով աղջկանց դպրոցը՝ բարոյական հովանաւորութեամբ Խրիմեանի և հսկողութեամբ վանեցի Վ. Պապիկեանի, Փէհրիզեանի, Գ. Գափամաջեանի, Նշան Երուանեանի և այլոց. Դպրոցին աւագ ուսուցիչ կը նշանակուի Խրիմեանի գործակից և «Արծուի Վասպուրականի» երբեմնի դեկավար Դիոնէսիոս Քահանայ (Մանուէլ) Արտամետցեանը, որուն Հայրիկը մասնաւոր նամակով մը կը գրէր—«Ձեզ կը յանձնեմ Ս. Սանդրխտեան օրիորդաց ուսումնարանի փափուկ պաշտօնն, թէև տակաւին խոպանացած մի երկիր է Վան, սակայն մեծ յոյս ունիմ ձեզ վրայ, որ խոփն ու ձևիչը պիտի պեղէ, պիտի հերկէ ու մշակէ մեր հայրենիքի ապառաժոտ հողն...».

Ս. Սանդխտեան դպրոցը նախ չ'ունէր իւր սեփական շէնքը. Դպրոցին բացումը կատարուեցաւ Ստեփան Մանօղլեանի տան մէջ, ետոյ տեղափոխուեցաւ Այգեստանի Խաչ Փողոց՝ Մսրիկեաններու տուն, և ապա Աճէմեաններու և վերջապէս Բազիկեաններու տուները.

մինչև որ Խրիմեանը յաջողեցաւ Սանասարեանէն 2000 րուբլի դրամ ստանալ և 1884-ի ամրան կառուցել տուաւ Ս. Սանդխտեան վարժարանի սեփական շէնքը, Նորաշէնի եկեղեցւոյ մօտ, բարձրադիր և օդասուն վայրի մը վրայ, պարտէզով և առուներով զարդարուած շրջաբակի մը մէջ Սանասարեանը 10,000 րուբլի գումարի մը տոկոսն ալ յատկացուց դպրոցի կրթական ծախսերուն։

Ս. Սանդխտեան դպրոցի սանուհիները, դեկավարութեամբ Տիկ. Իսկուհի Խրիմեանի, Վանի մէջ հիմնեցին «Վանուհեաց Ընկերութիւնը»*) որուն գլխաւոր նպատակն էր իգական սեռին մէջ տարածել ուսում և դաստիարակութիւն։

Վանի մէջ, 1880-ական թուերուն, տղոյոց յատուկ մօտ տաս ազգային և մասնաւոր դպրոցներ կային, մինչ աղջկանց համար միայն Ս. Սանդխտեան վարժարանն էր, որ չր պիտի կրնար հարիւրաւոր աշակերտուհիներ ընդունիլ։ Այս պահանջին մասամբ դոհացում տալու համար, Խրիմեանը կը ձեռնարկէ իգական սեռին յատուկ երկրորդ դպրոցի մը հիմնարկութեան։ Եւ ահա 1883-ին Հայրիկը իրենց տան կից Մանասէրենց տունը դրամով կը գնէ, քանդել կուտայ և ժողովրդական հանդէսով կը կատարէ դպրոցական շէնքի մը հիմնարկէքը։ Կարճ ժամանակի մէջ կը վերջանայ շէնքին կառուցումը։ Հայրիկը կը կատարէ դպրոցի բացման հանդէսը և կը յայտնէ, որ իգական սեռի դաստիարակութեան պիտի ծառայէ այս շէնքը «Գայիանեեան Վարժարան» անունով։ Դպրոցին ուսուցչական անդրանիկ խումբ կը բաղկանար հետեւեալներէ— Աւետիս Քահանայ Շաղօեան (Նշիկ Երէց), Արիստակէս և Վրթանէս Ալիքեանները, Գէորգ Շաքարեան (յետոյ քահանայ), Գրիգոր Ռօշիկեան, Եղիսաբեթ Գօնդակչեան, Մարինէ և Սրբուհի։

Այս դպրոցը քանի մը տարի յաջողութեամբ կը շարունակէ

---

*) Ցաճկական բռնապետութեան տարիներուն՝ այս ինչպէս նաև ուրիշ բազմաթիւ ընկերութիւններ լուծուեցան։ Օսմանեան Սահմանադրութենէն յետոյ, 1908-ի աշնան, այս ընկերութիւնը՝ «Վանուհեաց Միութիւն» անունով նորէն գործի անցաւ և արդիւնաւոր աշխատանք կատարեց մինչև Վասպուրականի 1915-ի յուլիսեան մեծ գաղթը՝ դէպի Կովկաս, ուր յիշեալ Միութիւնը ձեռագործի արհեստանոցներ հաստատեց Երևանի և Թիֆլիսի մէջ։ «Վանուհեաց Միութիւնը» լուծուեցաւ բոլշևիկներու իշխանութեան օրով 1921-ին։

իւր գոյութիւն մինչև որ ծխական ազգային դպրոցները ունեցան նաև իգական սեռին յատուկ բաժիններ.

Խրիմեանը 1880-ին նորոգել տուաւ նաև Վարագայ «Ժառանգաւորաց Վարժարան»ի իւր հիմնած նախկին շէնքը, որուն, փոխարինեց լուսաւոր դասարաններով, ննջարաններով, պարտէզով և գիշերօթիկ վարժարանի մը յատուկ յարմարութիւններով օժտուած դպրոցը, որ մխիթարեան վերածուեցաւ տաճիկներու ձեռքով 1915-ի Ապրիլին, Վանի հերոսամարտի օրերուն. Հայրիկի թոյլտրուութեամբ «Ժառանգաւորաց Վարժարան»ի շէնքին աւելի հիմնաւոր վերանորոգութեամբ զբաղուեցաւ նաև Վանի Առաջնորդ (1886—89) Գրիգորիս Եպիս. Ալէաքճեանը (Թուչիկ).

Վարագայ վանքին մէջ, 1882-ի ամրան, Խրիմեան պաշտօնական խնջոյք մը սարքեց. Հրաւիրուած էին Վանի կուսակալ Զքօտրալի Հասան Փաշան, ռուսական, անգլիական և պարսկական հիւպատոսները, պետական կարգ մը պաշտօնեաներ և Հայ եկեղեցական ու աշխարհիկ կարևոր անձեր. Ջոթս հոգիէ բաղկացեալ նուագախումբը (փող փչողներ) բազմաթիւ ազգային և հայրենասիրական երգեր նուագեց. Հասան Փաշան — այդ հին աղուէսը — Հայրիկի դիւրայոյզ խառնուածքին ծանօթ ըլլալով, նուագողներուն կ'ըսէ.

— Խրիմեան էֆէնտինին չարքիսի սէօյլէյին (երգն ըսէք).

Նուագողները ձէն ձէնի կուտան և ազդու, խորին զգացմունքով կ'երգեն «Հայրիկ Հայրիկ, քո Հայրենիք» երգը: Ուրախ դէմքերը թախիծով կը պատուին, մինչ Հայրիկը գլխահակ կուլայ, իսկ Հասան Փաշան քմծիծաղը դէմքին, հոգեպէս կը հրճուի...

Վանի Այգեստանի մէջ աղջկանց յատուկ դպրոցներ ունենալու ծրագրով տոգորուած Խրիմեանը 1881-ին, ի Քաղաքամէջ, Ս. Վարդան եկեղեցւոյ բակին մէջն ալ հիմնել տուաւ օրիորդաց «Նուշաեանեան Վարժարանը».

Այս բոլորէն յետոյ, Հայրիկը Վանի բոլոր դպրոցներու վրայ կը գուրգուրար և ցոյց կուտար իւր բարոյական աջակցութիւնը. Յաճախ կ'այցելէր դպրոցներ և քաջալերանք ու յորդոր կը կարդար ուսուցիչներուն և աշակերտներուն. Դպրոցական, կրթական գործի ընդհանուր ղեկավարն ու հովանաւորը Հայրիկն էր, որ անկեղծութեամբ, ինքնաբերաբար կը խառնուէր նաև դպրոցներու

ներքին գործերուն, որոնց պաշտօնական մարմիններն ու վարիչները անսահման ներողամտութեամբ և որդիական սիրով թոյլ կուտային, որ նա իր հայրական կարգադրութիւններ մտցնէր դպրոցական ներքին կեանքի մէջ։ Հայրիկը կ'այցելէր նաև վանքերու դպրատուներն ու գիւղական դպրոցները, որոնց բոլորին ալ ցոյց կուտար իր բարոյական ու նիւթական աջակցութիւնը.

Ժողովրդական դաստիարակութեան ջահակիր և նախանձախընդիր նոյն Խրիմեանն էր դարձեալ, որ հրապարակ իջած էր հովանաւորելով ու դեկավարելով կրթական ընդհանուր գործերը՝ Վանի և շրջակայ գաւառներու մէջ, մինչ անդին, Աղթամարի Խաչատուր Կաթուղիկոսը վանքերու ախոռներն ու մարագները կը նորոգէր, անտես առնելով իր թեմի Հայ գիւղացիութեան մատաղ սերունդի դաստիարակութեան գործերը։

## Ե.

## ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿՆ ՈՒ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ՈՍԿԵԴԱՐԸ

Խրիմեանի գործունէութիւնը Վան-Վասպուրականի մէջ երկու կարևոր և ցայտուն շրջաններու կը բաժնուի.

Ա. Վարագայ վանքի վանահայրութիւն և «Արծուի Վասպուրականի» խմբագրութիւնը՝ *1856 Հոկտ.—1862 Օգոստոս*։

Այս վեցամեայ շրջանը,—որ Վան-Վասպուրականի հայոց ազգային, գրական և կրթական Վերածնունդը կ'արձանագնէ—մանրամասնօրէն նկարագրուած է (էջ՝ *328—332*)։

Բ. Վասպուրականի Առաջնորդութիւն, «Սովելոց Ճանճնաժողով»ի նախագահութիւն և ազատ գործունէութիւնը՝ *1879 Նոյեմբեր —1885 Ապրիլ*։

Այս վեցամեայ շրջանը չարունակութիւնն է առաջին շրջանի և այս երկուքը միացած կը կազմեն տասներկու տարիներու ժամանակամիջոց մը, որուն մէջ Խրիմեանը իր ազգանուէր և արդիւնաւոր գործունէութեամբ կրցաւ կերտել Վասպուրականի հայոց ազգային, գրական, կրթական եւ յեղափոխական կեանքի վերածնունդն ու ոսկեդարը. Մեծաւոր գաղափար մը կազմելու համար

Վասպուրականի Ոսկեդարի—թող ներուի ինձ այսպէս կոչել—մասին, թուրքիկ ակնարկ մը նետենք այն դէմքերու վրայ, որոնք Խրիմեանի գործակիցները, աշակերտները և հետեւողները հանդիսացան և շարունակեցին իրենց Մեծ Ուսուցչի Մեծ Գործը երեսուն տարիներու ընթացքին—1857—1887—և ապա սերունդէ սերունդ, ժառանգաբար, մինչև մեր օրերը։

ՎԱՆ-ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ինքնուրոյն և իւրայատուկ տեղ մ'ունի Հայոց գրականութեան պատմութեան մէջ։ Մայր Հայրենիքի սրտին՝ Վասպուրականի մէջ, Վանի գեղածիծաղ ծովակի ափին, Վարագայ երկդագաթ լերան լանջին վրայ հաստատուած Արծրունեաց Արծուաբոյն Վարագայ վանքէն իւր թևերը թափահարելով կը սլանար «Արծուի Վասպուրական» ամսաթերթը, որուն հայրենախօս խմբագիր Մկրտիչ Վարդապետը—Խրիմեան Հայրիկ—Վանի բնաշխարհիկ գրականութեան հիմնադիրը կը հանդիսանայ։ «Արծուի Վասպուրական» թերթը դարձաւ գաւառական գրամշակներու հաւաքարանը։ Հետզհետէ ի յայտ եկան գրական և կրթական հետևեալ դէմքերը.

Գարեգին Վարդապետ (ապա եպիսկոպոս) Սրուանձտեանց, հայրենախօս բանաստեղծ, ազգագիր, բանահաւաք, քարոզիչ, Հայաստանի ուղեգիրը, որ իւր՝ անուշ ու ներդաշնակ ոճով գրեց և հրատարակեց՝ «Մանանայ», «Տորոս Աղբար» (երկու հատոր), «Համով-Հոտով», «Գրոց Բրոց», «Հնոց Նորոց», «Շուշան Շաւարշայ» և այլ հայրենաշունչ հատորներ։

Երեմիա Եպիսկոպոս Տէր Սարգսեան-Տէվկացց, Հայաստանի ճամբորդ, որ ազգաշունչ ոճով մը գրեց ու հրատարակեց «Հայրենասիրութիւն Հայոց» հատորը։

Արիստակէս Վարդապետ Տէվկացց, ժողովրդական բառ ու բանի սիրահար գրամշակ մը, որ լոյս ընծայեց «Պանդուխտ Վանցի» և «Հայերգ» գիրքերը։

Ղեւոնդ Վարդապետ Փիրոյէմեան, բովանդակ Հայաստանը ոտքի տակ տուաւ, թափառական ու չարչատանջ կեանք մը վարեց և հաւաքեց տասնեակ հազարաւոր Հայ գրչագիրներու պատմաժէք յիշատակարանները, որոնց մէկ մասը լոյս ընծայեց «Նօsurf Հայոց» անունով։ Գրած է նաև «Ճանապարհորդութիւն ի Մայր Աթոռ»

գիրքը և «Ձորս Ընկերք» ճամբորդութիւն մը Վանէն՝ կ. Պոլիս, ունէր բազմաթիւ անտիպ ձեռագիրներ։

Սեդրաք Տէվկացց, որ գրեց «Շանէճ ի Սիպիր» ազգայնական վէպը և «Վառարանի մը կայծեր» բանաստեղծական գրքոյկը։

Առաքել Վարդապետ Թոխմախեանց, Գրիգոր Արծրունիի «Մշակի» աշխատակից և հեղինակ՝ «Հայրենիքի պահանջներ եւ Հայ գիւղացին» ու «Մասիս լեռներէ հառաչանքներ» գրքոյկներու և «Վանի գաւառաբարբառ բառարանը»ի, (որուն անտիպ, բնագիրը կը գտնուի ձեռքիս տակ)։

Մեսրոպ Քահանայ (ապա շուշտակ վարդապետ) Փափազեանց, (հայր՝ Վրթանէս, Վահան և Ներսէս Փափազեան եղբայրներու), հրատարակեց «Պարտիզակ» և այլ գրքոյկներ, կրթական և հասարակական վաղեմի գործիչ։

Պօղոս Վարդապետ Նաթանեանց, Հայաստանի ճամբորդ, որ տեղեկագրեց Գազատիոյ, Նիկոմիդիոյ, Սիվրիհիսարի և այլ շրջաններ։ Հրատարակած է իր տեղագրութիւնները, որոնց մէջ կարևոր տեղ կը գրաւէ «Ursour Հայաստանի» փոքրիկ հատորը։

Դիոնէսիոս Քահանայ (Մանուէլ) Առտամեցեանց, Երիմեանի գլխաւոր գործակից։ Դաստիարակ, «Արծուի Վասպուրականի» փոխխմբագիր, հեղինակ՝ «Սեպեհերիմայ Արհայիճ Արծրունւոյ գաղթականութիւն ի Վասպուրական» և այլ թատերական տղերգութեանց։ Թողած էր պատմարժէք անտիպ ձեռագիրներ։

Մեսրոպ Քահանայ (Հայրապետ) Ճանիկեանց, «Հայրիկ Հայրիկ, ըո Հայրենիք» երգի հեղինակը, քաջ հայկաբան, վաղեմի ուսուցիչ և հմուտ քարոզիչ, որ ունէր ձեռագիր արժէքաւոր ուսումնասիրութիւններ։

Աւետիս Քահանայ Շաղոեանց, դաստիարակ, հեղինակ՝ «Ժուռկուճոպամեռ», «Գող Մժսօ» և այլ կարգ մը ժողովրդական կեանքի պատկերները նկարագրող գիրքերու։

Ղեւոնդ Քահանայ Շիրոեանց, հեղինակ՝ «Անխօս Մարգարիտ» գրքոյկի. ունէր անտիպ ձեռագիրներ։

Տիգրան Ամիրճանեանց, թատերագիր, բանաստեղծ և դաստիարակ։ Հեղինակած ու հրատարակած է «Ուսեալ Պանդուխտ»

ողբերգութիւն, «Մրմունջք» բանաստեղծական ժողովածոյ, «Կիկո-Մրսօ» զաւեշտ և այլն. «Պանդուխտ Վասպուրականցին» և այլ ժողովրդական երգեր անոր գրչէն ելած են։

Մանուէլ Անանեան, գերմանական բարձրագոյն կրթութեամբ օժտուած լեզուաբան, որ գրած է «Վանի գաւառաբարբառը», երբեմն խմբագրած է «Արծուի Վասպուրական» թերթը, աշխատակից Արգար Յովհաննիսեանի «Փորձ» պարբերաթերթին (Թիֆլիս) մանկավարժ և հմուտ հեղինակ։

Խորէն Խրիմեան, մանկավարժ և բանաստեղծ, լոյս ընծայած է «Հայրենագիտութիւն» անունով գրքոյկներ, Վարագայ «Ժառանգաւորաց»ի տեսուչ։

Մանուէլ Կ. Միրախորեան, վաղեմի դաստիարակ, Հայաստանի ճամբորդ և հեղինակ՝ «Նկարագրական Ուղեւորութիւն ի ճայաբնակ գաւառս Արեւելեան Տաճկաստանի» եռահատոր արժէքաւոր ուսումնասիրութեան։

Գէորգ Շէրենց, ուսուցիչ, բանահաւաք և բանաստեղծ։ Հեղինակ «Վանայ Սազ» (երկու մաս), «Սրտի Թարգման», «Սրբավայրեր» և «Մի գիշեր Բաղէշի բանտում» գիրքերու. Ունէր անտիպ գրութիւններ։

Յովհաննէս Բարադամեան, ունէր իւր սեփական վարժարան, ձայնագրագէտ, հայկաբան և բանահաւաք։ Իզմիրեանցի «Մահակ-Միսրոպեան Ցանձնաժողով»ին ներկայացուց «Վանի գաւառաբարբառ բառարան եւ fեռակաւութիւն»։ Բազմաթիւ անտիպ ձեռագիրներու մէջ ուշադրութեան արժանի էր «Զըլկուճի Մէյխանէն» անունով թատերական ողբերգութիւնը։

Սարգիս Վարժապետ Գնունի, Թիմարի էրէրին գիւղացի, Գէորգ Դ-րդ Կաթուղիկոսի քարտուղարն ու կենսագիրը։ Հրատարակած է «Ողբերգութիւն՝ Աբէլի», «Ողբերգութիւն Ս. Վարդանանց» և այլ թատերական ու դպրոցական գիրքեր։ Ունէր բազմաթիւ անտիպ գրութիւններ՝ մեծ մաս զաւեշտներ և ողբերգութիւններ։

Մաղաք Վարժապետ Պոյաճեան, վաղեմի դաստիարակ, Էջմիածնի «Արարատ» ամսագրի աշխատակից։

Դաւիթ Շահարեան, որ պոլսահայ թերթերու մէջ պատկերացուց գաւառացի պանդուխտներու տխուր կեանքը։

Մկրտիչ Աւետիսեան-Թէոդիկեան, Վանի Ս.ոմեոնական կուսակցութեան պետը, գրական և կրթական համեստ գործիչ. Աշակերտ՝ Մկրտիչ Փորթուգալեանի.

Համբարձում Երամեան, լուսազուրկ աչքերով այս երիտասարդը 1880-82ին բացաւ իւր սեփական դպրոցը, որ գոյութիւն ունեցաւ մինչև 1915-ի ամառը և տաճիկներու ձեռքով այրուեցաւ, Վանի Ցուլիսեան մեծ գաղթի ընթացքին. Երամեանը Վան-Վասպուրականի հայոց կրթական պատմութեան ամենահոյակապ և բազմարդիւն դէմքը կը հանդիսանայ. Նա իրրև գրամշակ ևս իւր արժանի տեղն ունի Վանի գրականութեան մէջ. Վերջին տարիներս նա գրել տուաւ իւր յուշերը, որոնք կը շօշափեն Վանի ազգային և կրթական շարժումներու յիսնամեայ պատմութիւնը.

Մարկոս Նաթանեան, կրթական բազմավաստակ գործիչ, պատմաբան և գրչի վաստակաւոր.

Խաչիկ Քահանայ Գուլգեան, դաստիարակ, քանդակագործ, քարոզիչ և գրչի մշակ.

Ասոնցմէ զատ Վան-Վասպուրականը տուած է նաև շարք մ'ուրիշ գրամշակներ, որոնք կապ չ'ունին Վարագայ և Խրիմեանի կերտած գրական ու կրթական շարժման հետ, այսպէս օրինակ.

Մատենագիր և վարժապետ-քահանայ Տէր Ցովնան Միրզա Վանցանցդեցի, Լիմ-Անապատի վանահայր՝ հայկաբան և գիտնական Յակոբ Եպիսկոպոս Թօփուզեան, հին վարժապետ, տարեգիր և ձայնագրագէտ Ցովհաննէս Քօլօզ, քանի մը գիրքերու հեղինակ՝ Ասանցի Խորէն Եպիսկոպոս Մխիթարեան, հայկաբան Միհրան Ասմանազ, դաստիարակ և դասագիրքերու հեղինակ՝ Եղիազար Մուրատեան, «Մշակ»ի հիմնադիր-խմբագիր և մեծանուն ազգային գործիչ Գրիգոր Արծրունի, յայտնի վիպասան Վրթանէս Փափազեան, կարգ մը ազգային վէպերու հեղինակ Արմէն Տիգրանեան և դեռ շատեր, որոնց կերտած գրականութիւնը 1890-ական թուերէն մինչև մեր օրերը, երեք սերունդներ յաջորդաբար շարունակեցին.

Այս վերջին քառասունամեակի ընթացքին ի յայտ եկան նաև բազմաթիւ համեստ գրամշակներ.

Ցովհաննէս Կուլօղլեան, Միքայէլ Թէրլէմէզեան, Ցովհաննէս Պըլուզեան, Միքայէլ Նաթանեան, Ծաչատուր Հէուոճեան, Մինրդատ

Եսայեան, Տիգրաճ Չիթուճի, Միսաք Տէվկանց, Տիգրան Օտեան (Ասօ), Հայկ Տէվկանց, Վահան Նալբանդեան, Ղևոնդ Մէլօեան, Համայեակ Մանուկեան, Արտակ Դարբինեան, Լեռ Կամսար, Ռէն, Վէսպէր, Օննիկ Մխիթարեան, Թուչնիկ, Մերուժ Թորգոմեան, Կ. Միտալ, Ոստանիկ, Օհան-Կարօ և ուրիշ կազմաթիւ սկսնակ երիտասարդ գրիչներ, որոնց անունները մէկ մէկ յիշել երկար պիտ ըլլար։

Ահա հօրթանասուն ամեակի մը ընթացքին—1857—1927—Վան-Վասպուրականի գրական մշակները*), որոնք գրականութեան և մտաւոր ստեղծագործութեան հին ու նոր բազմատեսակ ուղիներու և ճիւղերու մէջ ի յայտ եկան իրենց աշխատանքներով և ընդունակութիւններով, իրենց անհատական, ինքնուրոյն թռիչքներով՝ միակ նպատակ ունենալով ազգին ու հայրենիքին և կամ հանրութեան ծառայելու, օգտակար ըլլալու գեղեցիկ և վսեմ գաղափարը։

Վան-Վասպուրականի հին ու նոր պատմութիւն, ազգագրութիւն, տեղագրութիւն, ժողովրդական անգիր բանահիւսութիւն, ժամանակակից սերունդներու ազգային և հայրենասիրական զգացումներու արտայայտութիւն, քաղաքական, ազատասիրական և յեղափոխական ձգտումներու ցուցադրում, վէպեր, երգեր, անհատական ակրտումներ, բանաստեղծութիւններ, և այլն և այլն—ահա այն բոլորը, որոնք հարիւրաւոր հատորներով և հազարաւոր յօդուածներով կը պատկերացնեն Վան-Վասպուրականի մէջ ծնած ու զարգացած գրականութիւնը։

---

*) Յառներկու տարիներէ ի վեր է, որ—1916-1928—ես առաջ նիւթեր հաւաքած եմ Վասպուրականի հին և նոր գրամշակներու և դէմքերու մասին։ Այդ նիւթերը—կենսագրութիւններ, անտիպ նամակներ և գրութիւններ, ստորագրութիւններ, թանկարժէք լուսանկարներ, նոր և անտիպ ինքնակենսագրութիւններ, յուշագրութիւններ և այլն և այլն—դասաւորելով կազմած եմ հոկայ հաւաքածոյ մը՝ «ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ԳՐԱԿԱՆ ՄԶԱԿՆԵՐ» անունով։ Այս աշխատութեանս մէջ ի յայտ կուգան նաև Վասպուրականի հին և միջնադարեան մատենագիրները, ժողովրդական տաղասացներ, աշուղներ և այլն։

Իմ կոչը—որ 1916-ի Սեպտեմբերին լոյս տեսաւ Երևանի «Աշխատանք» և Թիֆլիսի «Վան-Տոսպ» շաբաթաթերթերուն մէջ—տարիներու ընթացքին արձագանգ գտաւ և շատերն ուղարկեցին ինձ իրենց յուշեր, տեղեկութիւններ, լուսանկարներ, կենսագրութիւններ և այլն «Վասպուրականի Գրական Մշակներ» աշխատութեանս համար։ Ամերիկաբնակ վասպուրականցիներու հայրենակցական միութիւնները և կամ այլ մարմիններ յանձն կ'առնե՞ն տպագրել իմ այս աշխատութիւնը, որ կը պատկերացնէ մեր երբեմնի չէն ու կենսուրախ, իսկ այժմ ամայի և աւերակ հայրենիքի գրական, կրթական և ազգային մշակոյթի ընդարձակ պատմութիւնը։

Վան-Վասպուրականի Ոսկեդարի լուսաւոր էջերէն մէկն ալ կրթական ու դպրոցական շարժումն է, որուն մէջ փառաւոր ու պատուաւոր տիղ մըն ալ կը գրաւէ Մկրտիչ Փորթուգալեանը.

Կ. Պոլսոյ մէջ 1876-ի Ապրիլին կը հիմնուէր «Աւարատեաց Ընկերութիւնը» որուն վարչութեան մէջ մտաւ երիտասարդ Մկրտիչ



ՄԿՐՏԻՉ ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ (*1920*-ին)

Ծն. ի Կ. Պոլիս *21* Հոկտ. *1848*—Վախճ. ի Մարսէյլ *26* Սեպտ. *1921*

*Մ. Փորթուգալեանը կտակեր է, որ իւր ոսկորները թաղեն իւր այնքան սիրած Վանի մէջ և այս պատճառով ալ անոր մարմինը այժմ կը պահուի չը թաղուած մեռելներու ապաստարանին մէջ* (Dépositoire) *ի Մարսէյլ, Վան փոխադրելու յոյսով։*

Փորթուգալեանը, որ նոյն թուի ամրան Կ. Պոլսէն կուգար Թիֆլիս և Գր. Արծրունիի հետ կը խորհրդակցէր «Արարատեան Ընկերութեան» գործելակերպի մասին։ Փորթուգալեանը կը վերադառնար Կ. Պոլիս, ուր Մինաս Չերազի հետ յիշեալ ընկերութեան ընդհանուր ժողովին առաջարկ կը բերեն, որ կրթական գործունէութիւնը ուղղակի Հայաստանի մէջ հաստատուի, ինչպէս Գր. Արծրունին ըսած էր։ Ընկերութիւնը սիրով ընդունեց այդ առաջարկը։

Կրթական գործունէութեան վայրը կ'ընտրուի Վան քաղաքը։ Փորթուգալեանը իբրև «Արարատեան Ընկերութեան» կրթական ներկայացուցիչ 1876-ի Հոկտեմբերին կը հասնի Վան և առաջին առթիւ իսկ, Թխմար գաւառի Ալիւր գիւղին մէջ կը բանայ գիւղական դպրոց մը, ընկերութեան ծախքերով։

Ռուս-տաճկական վերահաս պատերազմի պատճառով Փորթուգալեանը կը հեռանայ Վանէն և Թիֆլիս երթալով կը գործէ «Մշակ»ի խմբագրութեան մէջ։ Պատերազմը վերջանալէ յետոյ, 1878-ի աշնան, Փորթուգալեանը կը վերադառնայ Վան, ուր շարք մը դժուարութիւններ հարթելէ յետոյ, 1879-ի Յունուար 1-ին, ճիտէչեաննենց թաղի յարմար տան մը մէջ, պաշտօնական հանդէսով մը կը կատարէ բացումը «Արարատեան Ընկերութեան» Վանի Վարժապետանոցին, որուն նպատակն էր գաւառներու համար, ժամանակակից կրթութեամբ օժտուած ուսուցիչներ պատրաստել։

«Վարժապետանոցը,—կը գրէ Արփիար Արփիարեանը—վերածընութեան կեդրոն մը պիտի ըլլար ամբողջ հայ աշխարհին համար։ Հայաստանի և Կիլիկիոյ ամէն քաղքէն պիտի ընդունուէին աշակերտները, որոնք Վան հասաքուելով և վանեցիներուն հետ կրթուելով, Վանը պիտի ըլլար մտաւորական կեդրոն մը, ուրկէ մեկնող աշակերտները սերտ կապեր պիտի ունենային իրարու հետ։ Բայց այս բաւական չէր, Վարժապետանոցին մէջ պիտի ընդունուէին թիւրքեր, քիւրդ պէյերու տղաք, և նեստորականներէն, որով ամբողջ երկիրը պիտի միանար։ Այդ ծրագիրը սկսաւ գործադրուիլ, և թուրք աշակերտներ ընդունուեցան դպրոց»*)։

Վարժապետանոցը կատարեալ նորութիւն մըն էր Վանի Հա-

*) Լէօ. «Գրիգոր Արծրունի»։ Երրորդ Հատոր. 1905. Թիֆլիս. էջ՝ 102։

յութեան համար։ Ուսնալ ուսուցիչներու խումբը, Փորթուգալեանի տնօրէնութեամբ, ժամանակակից առողջ դաստիարակութիւն կուտար աշակերտներուն։ Ֆրանսերէն և տաճկերէն լեզուներու ուսուցումը, մարմնամարզութիւն, բնական գիտութիւններ և այլն կ'աւանդուէին Վարժապետանոցին մէջ։ Փորթուգալեանը ոչ միայն իբր ուսուցիչ և տեսուչ ի յայտ եկած էր, այլ և ազգի եւ հայրենիքի ազատագրութեան յեղափոխական fարոզիչ մը, որ դպրոցի մէջ միշտ դասախօսութիւններ կուտար և հայրենասիրական կրակոտ ճառեր կ'արտասանէր։

Սակայն ափսո՜ս, որ Վարժապետանոցը երկար կեանք չ'ունեցաւ։ Ներքին և արտաքին պատճառներով փակուեցաւ 1880-ի վերջերը, իսկ Փորթուգալեանը կ'երթայ Թիֆլիս և ապա Կ. Պոլիս, ուրկից Վան կը վերադառնայ 1881-ի գարնան և այս անգամ իւր անհատական ջանքերով և Խրիմեանի ու Կամսարականի աջակցութեամբ կը բանայ «Հայկազեան Կեդրոնական Վարժարանը» ուր միջնակարգ կրթութիւն պիտի ստանային ծխական դպրոցներէն եկած աշակերտները։

«Կեդրոնական Վարժարան»ի փոխ-տեսուչ և հայերէնի ուսուցիչ Մարկոս Նաթանեանը իմ խնդրանքով գրած իւր ինքնակենսագրութեանը մէջ հետեւեալ կերպով կը բնորոշէ Փորթուգալեանի ազգային և յեղափոխական գործունէութիւնը Վանի մէջ։

«...1880-ի վերջերը Մ. Փորթուգալեանը կրկին Կ. Պոլիս և Թիֆլիս գնաց ու վերադարձաւ 1881-ի գարնան։ Իր ընթացքին մէջ հետզհետէ փոփոխութիւն մըսկսայ նշմարել։ Կրթական գործէն աւելի յեղափոխական միտումներ եւ գործունէութիւն կը ցուցընէր, թէ աշակերտաց մտքին մէջ և թէ հրապարակային բանախօսութիւններով ժողովրդեան հոգիին մէջ յեղափոխական սերմեր ցանել սկսելով երբեմն ուղղակի, երբեմն անուղղակի ձեւերով։ Եւ քանի կ'երթար այնքան առաջ կը տանէր իր այդ քարոզութիւնները, այնպէս որ Կուսակալին բնակարանին առջեւէն աշակերտներ կ'անցուներ պատերազմական երգեր երգել տալով բարձրագոչ ձայներով և ռազմական դուազչափ քայլերով»։

Փորթուգալեանը իւր յեղափոխական գործունէութեան համար պատրաստ հող և տրամադրութիւն կը գտնէր Վանի մէջ, ուր աշ-

դէն Բերլինի Վեհաժողովէն և Հայրիկի «Երկաթեայ շերեփ»ի նշանաւոր քարոզէն յետոյ, 1878-ի վերջերուն, քանի մը տասնեակ ազատասէն և յանդուգն երիտասարդներ միանալով հիմներ էին Սեւ Խաչ անունով կազմակերպութիւն մը, որուն նպատակն էր «ժողովուրդի մէջ իմիջապատպանութեան ոգին տարածել, իր իրաւանց տէր ընել եւ իբր մարդ ապրիլ»։ Իսկ «Սև Խաչ մականիշը կը նշանակէր՝ կազմակերպութեան դաւաճան և անգթտնապահ ընկերի անուան վրայ սև խաչ քաշելով, իսկոյն և եթ մահուան դատապարտել»։

Սև Խաչը Վանի մէջ ունէր իւր ակումբը, ուր տեղի կ'ունենային հանդէսները, յեղափոխական երեկոյթներ, դասախօսութիւններ և այլն։ Այս ակումբի դասախօսներու մէջ յայտնի էին մանաւանդ Կ. Պոլսոյ Օրթագիւղցի Տաճատ Գնդունի Պէյլէրեան և Կովկասահայ Գալուստը, որոնց կրակոտ և ոգեմաշունչ ճառերով կ'ոգևորուէր երիտասարդութիւնը։

Վանի Հայութիւնը ամէն տարի մեծ շուքով կը տօնէր Ազգ. Սահմանադրութեան տարեդարձը։ Սև Խաչը 1882-ի Մայիսի 24-ին, Սահմանադրութեան 22-րդ տարեդարձը կը տօնէր ժողովրդական և յեղափոխական ցոյցերով ու հանդէսներով, որոնց ականատես վրկան՝ Ճառութիւն Ճանկիւլեանը*) (Կայծիկ) իւր «Յիշատակներ Հայկական Ձգնաժամէն» գրքի մէջ (Մասն Ա. և Բ. Կ. Պոլիս. 1913. էջ՝ 89—90) այսպէս կը նկարագրէ.

«1882-ին Սեւ Խաչի կազմակերպութիւնն որոշած էր Սահմանադրութեան 22-րդ Տարեդարձը կատարել Վարագայ վանքին մէջ։ Հանդէսին պատրաստութիւնը երկու ամիսէն աւելի տևեց, որովհետև 80-ի չափ զինուորական հագուստներ պատրաստուեցան, որոնց կէսը հեծեալ և կէսը հետիոտներու կը վերաբերէին իբր ոստիկան զինուորներ։ Հեծեալները թափօրին երկու կողմէն պիտի քալէին՝ իբր կարգապահութեան հսկիչներ։ Ամէնքն ալ գրեթէ զինուորական մարզանքներով վարժուած էին իբր զինուորներ, ունենալով իրենց սպաները, ենթասպաներն և տաճնապետները։

*) Հնչակեան կուսակցութեան գործօն անդամներէն մէկը, որ Սուլթան Համիտի հրամանով աքսորուեցաւ Աքիա, 1890-ի Գում-Գափուի ցոյցէն յետոյ։ 1915 ի Ապրիլ 24-ին Կ. Պոլսոյ մէջ, մտաւորականներու հետ ձերբակալուեցաւ և աքսորուելէ յետոյ, իւր տառապանքի ընկերներու հետ սպանուեցաւ։

«Կիրակի առաւօտ, ըստ որոշման, Վանայ մէջ գտնուած իննն ընկերութիւնները՝ Արծրունեան, Խորէնեան (Ուսումնասիրաց, Գըրբասիրաց, Արհեստասիրաց, Հայկազնեան, Աբամեան, Հ. Ա.) և այլն իրենց անդամներով և դրօշներով պիտի հաւաքուէին Այր Ծարոյց (Արարուց) եկեղեցիին հրապարակը։ Որոշեալ ժամուն կը հասնէին ընկերութիւնները իրենց դրօշներով և ամբողջ անդամներով։ Թափօրին առջևէն կ'երթային քանի մը սրինդ զարնողներ, ուրկէ վերջ կուգային հետիոտն զինուորները կամ ոստիկանները՝ իրենց զէնքերով. անկէ վերջ կուգային ընկերութիւններ խումբ խումբ, իսկ հեծեալ զօրքերը՝ թափօրին չորս կողմէն, ու թափօրը ճամբայ կ'ելլէր դէպի Վարագայ վանքը, ուր Սահմանադրութեան հիմնադիրներուն համար հոգեհանգիստ մը կատարուեցաւ և վերջը սեղանն սկսաւ։ Սեղանէն մէկ ժամ վերջ խօսքն սկսան ճառախօսութիւնները, հայկական երգեր, անկէ վերջ սկսան պարերն և զբօսանքը։ Երեկոյեան թափօր մը կազմուելով Խրիմեաններց տան առջևն հասած էր։ Խրիմեանին ձօնեալ մասնաւոր երգն երգուելէ և „Կեցցէ Խրիմեան" ըսելէ վերջ թափօրը մեկնեցաւ։ Կոստանդին Կամսարական պէյի տան դիմաց „Կեցցէ Կամսարական պէյ" ըսելէ վերջ, այլևս թափօրը ցրուեցաւ»։

Խրիմեան, Փորթուգալեան և Կամսարական—ահա երեք դէմքեր, որոնք հոգով սրտով իրար կապուած՝ 1880—1885 թուերուն Վան վաստուրականի մէջ դարբնեցին ցեղափոխական եւ Ազատագրական գաղափարները և գաստիարակեցին ազատատենչ ու ռազմունակ երիտասարդ սերունդ մը։

Կ. Կամսարականը թէև պաշտօնով ռուսական հիւպատոս էր*), բայց նա Վանի մէջ կը ներկայանար իբր ազգային գործիչ մը, բառիս լայն առումով։

Փորթուգալեանի ևօթնամեայ—1878—1885—կրթական և յեղափոխական գործունէութիւնը Վանի մէջ, Վաստուրականի Հայոց

*) Հասան Փաշան քանիցս փորձած էր զայն հեռացնել Վանէն և Բ. Դրան ալ հաղորդած էր թէ՝ «Կամսարականը ոչ թէ ռուսաց հիւպատոս՝ այլ Հայ յեղափոխական գործիչ մըն է»։ Սակայն, ի վերջոյ Կամսարականը յաջողեցաւ Կ. Պոլսոյ ռուսաց դեսպանատան միջոցով կուսակալ Հասան Փաշան պաշտօնանկ ընել և ջշել տալ Վանէն։

ազգային, գրական վերածնունդի և ոսկեդարի ամենագեղեցիկ ու շքեղ դրուագներէն մէկն է։ Փորթուգալեանը՝ իբրև դաստիարակ և յեղափոխական, Խրիմեանի աջ բազուկը հանդիսացաւ։ Գր. Արծրունիի քարոզած գաղափարները, Րաֆֆիի վէպերը, Գամառ-Խաթիպայի ռազմաշունչ երգերը և ժամանակակից Հայուհեան քաղաքական ու ազգային վերածնութեան ձգտումները՝ Փորթուգալեանի միջոցով և անոր կազմակերպած հանդէսներով ու դասախօսութիւններով տարածուեցան Վանի մէջ։ Խրիմեանի «ժառանգաւորաց»ի շարունակութիւնն էր Փորթուգալեանի «Կեդրոնական Վարժարան»ը, ուր յեղափոխական ու ռազմական շունչով դաստիարակութիւն կը ստանար սերունդ մը, որուն լաւագոյն ներկայացուցիչներէն յիշենք Մկրտիչ Աւետիսեան-Թէոլէմէզեան, Ողիւէ Գօնդակչեան եւ Տիգրան Տէրոյեանը (Վազգէն)— Հայկական ազատագրութեան ճամբու վրայ ընկած գործիչները։

Այս հինգ տարիներու ընթացքին— *1880—1885*—Վանի և մօտակայ գաւառներու մէջ բացուեցան բազմաթիւ դպրոցներ, հիմնուեցան զանազան ընկերութիւններ, իսկ ազգային ու հասարակական կեանքը արտակարգ եռանդով կ'ընթանար։ Անհատական շահերն ու խնդրը տեղի տուած էին ազգային և հանրային շահերուն։ Ժողովուրդի դաստիարակութեան, բարօրութեան և ազատութեան գաղափարներով տոգորուած երիտասարդութիւնը հիացման արժանի գործեր կը կատարէր։ Միութեան, համերաշխութեան և ժողովրդանուէր գործունէութեան սկզբունքներու հարուածներուն տակ վերջ գտած էին կղերական, ազայական և թայֆայական գաւադիր պայքարները։ Այս գեղեցիկ շրջանին էր նաև, որ վերջ գտաւ Պօղոս-Ապօղոսեան չարատանջ պայքարը։ Խրիմեանը Վան գալէ յետոյ, ոչ միայն չը հրահրեց այդ պայքարը, այլ իր վերին աստիճանի անյիշաչարութեամբ և բարոյական հեղինակութեամբ չքացուց հակառակորդ կողմերու կիրքերը։ Նոր սերունդը, կրթուած երիտասարդութիւնն ու ճշմարիտ հայրենասէրները—Ապօղոսեաններ կամ Խրիմեանականները—կրցած էին բարոյական պարտութեան մատնել Պօղոսեաններն ու հակախրիմեանականները։ Ազգային մարմիններու անդամները ժողովրդական յարգանքին և համակրանքին արժանացած անձերէն կ'ընտրուէին։ Պօղոս Եպիսկո-

պոան ալ քաշուած էր Լիմ-Անապատը և ունէ մասնակցութիւն ցոյց չէր տար ազգային գործերուն։ Ներքին պայքարի ամէն տեսակ գործերը ջնջուած էին և ստեղծուած էր ժողովրդական միահամուռ կամք մը, որուն դեկավարները կը հանդիսանային Խրիմեան, Փորթուգալեան, Սրուանձտեան, Կամսարական և ուրիշներ, որոնք իրենց ազգօգուտ յանքերով, անձնուէր աշխատանքով և հայրենանուէր զգացումներով 1880—1885 թուերուն՝ դարբնեցին Վասպուրականի հայոց ազգային, կրթական և ազատագրական շարժումներու երկրորդ և փառաւոր շրջանը։

Այդ պատմական շրջանի մասին, Վանի մէջ կրթական և ազգային գործերով զբաղուող (1883—1887) Կովկասահայ Տիգրան Փիրումեանը հետևեալ ուշագրաւ տողերը կը գրէ*).

«...Խրիմեանը սքանչելի քարոզներ էր ասում Հայաստանի եկեղեցիներում, նա ազատ մարդ էր գալիս գիւղէ գիւղ և ամենաազնիւ զգացմունքներ արծարծում ամենքից արհամարհուած մեր կրտսեր եղբայրների՝ գիւղացիների մէջ։ Հայաստանի ամեն ծայրերից մարդիկ Վարագի վանքն էին թափւում նրա խելացի կարծիքները լսելու և նրա քաղաքական հայեացքները ըմբռնելու։ Նա հազարաւոր նամակներ էր ուղարկում աշխարհի չորս կողմը՝ հայոց աշխարհի տառապանքների մասին իր խոկումները պարզաբանելու և բոլոր հայերի մէջ հայրենասիրական կայծը վառ պահելու։ Նա Հայաստանի մեծ Ռուդինն էր, Տուրգենեի անմահ Ռուդինը...։ Եւ Հայաստանի այն շրջանի (1880-ական թուերու) համար հէնց այդպիսի մի մեծ խօսող էր հարկաւոր, ի հարկէ անկեղծ մեծ խօսող, խոր զգացումներ ունեցող խօսող...։ Եւ այդ էր պատճառը, որ Հայաստանի ժողովրդի առնւազն երեք քառորդ մասը անպայման պաշտում էր նրան։ Ուրեմն Խրիմեան Հայրիկը Հայաստանի 80ական թուականների ամենամեծ առաքեալն էր։

«Իմ Վանում գտնուած միջոցին ժողովրդի բոլոր խաւերը աստիճ ցաւում էին, որ ռուսները խլելով Թիւրքիայից 1877 թուի պատերազմին Բաթումը, Կարսն ու Արդահանը, չվերցրին նաև Վասպուրականը։ „Այդ օրհնածները— ասում էին ինձ շարունակ

*) «Զորս Ծարի Վանում. 1883—1887». „Հայրիկն“ օրաթերթ. 1916. Թիֆլիս։

ամենքը — այնքան տեղեր խլեցին Թիւրքից և միայն այս մի կտորը թողին, ինչ կը լինէր, որ Վանն էլ ազատէին և մենք էլ ձեզ նման (ռուսահայերի) ազատ շունչ քաշէինք...“։

«Ջնայելով ընդհանուր վհատութեան և ապագայի համար մի ինչ որ անհանգստացնող զգացմունք ունենալուն, Վանի ժողովրդի առաջադէմ մասը այդ չորս տարւայ (1883—1887) ընթացքում կարողացաւ մի շարք խիզախ ու ազատասէր քայլեր անելու։ Այսպէս, օրինակ, նա բերել տւեց կոնտրաբանտով (մաքսանենգութեամբ) Թիֆլիսից երկու մեծ արկղ Րաֆֆիի գրքերից և բաժանելով երիտասարդութեան մէջ գրքերի վրայ նշանակւած իսկական գներով, փողն ուղարկեց նրանց քանքարաւոր հեղինակին։ Այդ կոնտրաբանտան կատրուեց Վանի ռուսական հայազգի հիւպատոս Կ.Կամսարականի միջոցով...։ Ծօնւեց գաղտնի կերպով նոյն այդ մեծատաղանդ Րաֆֆիի 25-ամեայ (1859—1884) գրական գործունէութեան յոբելեանը։ Մօտ 40 աչքի ընկնող երիտասարդներ գիշերով թագուն հաւաքւեցին Ս.Յակոբի թաղի մի խուլ փողոցի տան մէջ և մինչև լոյս հոգեշունչ ճառեր արտասանեցին Րաֆֆիի երկերի յեղափոխական նշանակութեան մասին։ Մի ճառախօս երիտասարդ, ի միջի այլոց ասաց որ Րաֆֆիի Կայծերը Թիւրքահայ երիտասարդութեան դասագիրքն են դարձած...։ Այդ գիշերային գաղտնի հաւաքոյթը սրտառուչ էր նաև մի ուրիշ կողմից։ Ցան դռները պինդ փակած և մեծ զգուշութեամբ կատարւող այդ գրական տօնախմբութիւնը ինձ մտքով թռցնում էր քրիստոնէութեան առաջին դարերը և ես ինձ զգում էի հալածանքներից մի որև է ստորերկրեայ կատակոմբում (այր) ծւարած հաւատացեալների շարքում։ Կատակոմբում հաւաքւածները յոբելեանից յետոյ մի արծաթեայ փետրազարդ գրիչ էլ ուղարկեցին հայազգի երջանկայիշատակ մեծ վիպասանին։ Րաֆֆիի գրքերը մեծ յափշտակութեամբ էին կարդացւում Վանում։ Իմ դրացի մի 19-ամեայ պատանի մի երեկոյ մինչև լոյսը պինդ նստեց սեղանի մօտ և ծայրէ ծայր, առանց ընդհատելու, կարդաց Կայծերի առաջին հատորը....

«Ազատ խօսելու ամբիոն չունեցող երիտասարդները օգտագործում էին նոյն իսկ հարսանեկան հանդէսները, ոգևորիչ խօսքեր ուղղելով կեր ու խումով զբաղւած հասարակութեան։ Բազմաթիւ

երիտասարդները գաղտնի զէնքերը էին պահում և տօն օրերին դեռ լոյսը չծագած մերձակայ սարերն էին բարձրանում հրացանաձգութեան մէջ վարժուելու։ Մի երիտասարդ ուսուցիչ, Մկրտիչ Թէրլէմէզեան (Աւետիսեան) անունով, որ Մխիթարեան հայրերի տպած գրքերով քիմիա էր ուսումնասիրել, քրտնաջան աշխատանքով պայթուցիկ նիւթեր էր պատրաստում ապագայ պայքարի համար։ Իսկ ժողովուրդն ընդհանրապէս, աղօթում էր որ „օրհնած ուսը“ մի օր գայ և վանն էլ միացնի կովկասին...»։

## Զ.

## „ՎԱՆԻ ՀԱՅ ԻՇԽԱՆԱՑ ԾԵԾԸ“

Վանի նահանգապետ Հասան Փաշան, որ խորամանկ և քաղաքագէտ անձ մըն էր, Խրիմեանի, Կամսարականի և Փորթուգալեանի գործունէութեանց մասին օրը օրին գաղտնի տեղեկութիւններ կը հաղորդէր Սուլթան Համիտին և Բ. Դրան։

Փաշան 1883-ի Օգոստոսին, օր մը, գաղտնի կերպով իր մօտ կը հրաւիրէ Վանի 12 Հայ «Իշխան»ներն ու երևելիները— որոնցմէ շատերը ազգային քաղաքական ժողովի անդամներ էին— և անոնց կը կարդայ գրութիւն մը հետեւեալ իմաստով թէ – «Վանի Հայ ժողովուրդը բնաւ գոհ չէ օտար հիւպատոսներու ներկայութենէն, որ այդ հիւպատոսները կը միջամտեն հայերու, թուրքերու և պետութեան ներքին գործերուն և յառաջ կը բերեն դժգոհութիւններ և խռովութիւններ, որ Վանի Հայութիւնը բարեխնամ պետութեան քաղաքականութենէն և արդարադատ կուսակալէն շատ գոհ է, որ երկրի մէջ կատարեալ խաղաղութիւն կը տիրէ (ստատիս պէրֆէմայ տըր), որ հայերը օտար պետութեանց միջամտութիւններէն շատ դժգոհ են» և այլն և այլն։

Այդ գրութիւնը կուսակալին կողմէ պատրաստուած ժողովրդական կեղծ հանրագրութիւն մըն էր։ Հասան Փաշան Հայ «Իշխան»ներուն կ'առաջարկէր, անմիջապէս ստորագրել այդ հանրագրութիւնը, աւելցնելով, որ—«Պիտի ղրկենք Սուլթանին և Բ. Դրան»։ «Իշխան»ները կը կատարեն Փաշային հրամանը։ Փաշան կը կար-

գադրէ, որ այդ հանրագրութիւնը շուկային մէջն ալ պտտեցնեն և ժողովուրդին ալ ստորագրել տան. «Իշխան»ները այդ հակաժողովրդական և կեղծ հանրագրութիւնը ձեռքերնին բռնած կը մրտնեն Վանի շուկան և իրենց համակիրներէն ոմանց ստորագրել կուտան, միամիտներուն հաւատացնելով թէ – «Այս հանրագրութիւնը Հասան Փաշայի մասին պարզ գոհունակութիւն և շնորհակալեաց արտայայտութիւն մըն է, որ պիտի մատուցենք Սուլթանին և Բ. Դրան»։

Սակայն քանի մ'օր յետոյ գաղտնիքն ու կեղծիքը կը բացուին. Վանի հայոց մէջին դասակարգը՝ մանր առևտրականներն ու ամբողջ արհեստաւորները իրենց ներկայացուցիչներու միջոցով կը դիմեն Առաջնորդ Խրիմեանին և կը պահանջեն պատասխանատուութեան կանչել «Իշխան»ները, որոնք շահագործեր էին ժողովուրդի անունն ու վստահութիւնը։

Հայրիկը տխրահռչակ հանրագրութիւնը ստորագրող և ստորագրել տուող «Իշխան»ները կը հրաւիրէ Առաջնորդարանը և բացատրութիւն կը պահանջէ, մինչ անգին շուկայի ամբողջ արհեստաւորներն ու մանր առևտրականները, քանի մը հազար հոգի, իրը ժողովրդական բողոք և ցոյց կը փակեն խանութները և կը լեցուին Առաջնորդարանը, ուր եկած էին նաև «Իշխան»ները։

Հայրիկը կը պատրաստուէր ժողովը բանալ, երբ յանկարծ ցուցարար ամբոխը ահազդեցիկ աղաղակներով կը ներխուժէ Առաջնորդարանի դահլիճը և կը յարձակուի «Իշխան»ներու վրայ։ Ականատես վկան՝ Տնովբ Տէր Արիստակէսեանը կը պատմէ.

«Ամէն մէկ իշխան մնաց տասնեակ վրիժառու և ուժեղ բազուկներու մէջ։ Իշխաններէն ոմանք ոտնատակ մնացին և տրորուեցան, ոմանք բռունցքներու և փայտերու հարուածներու տակ ջարդ ու փշուր եղան, ոմանք դահլիճէն դուրս քաշքշուելով ամբոխի վրիժառութեան ենթարկուեցան։ Ֆանի մը հուժկու բազուկներ բռնեցին Այազ Այազեան „իշխան"ը և դահլիճի բարձր պատուհանէն շպրտեցին վարը։ Այազեան ջարդ ու փշուր եղաւ և քանի մ'օր յետոյ մեռաւ։ Հայրիկը այս սոսկալի ժխորի և իրարանցման մէջն ընկած, կը յանդիմանէր ու նախատէր կատաղած ամբոխը։

Բայց ո՛վ կը լսէը Հայրիկի խօսքերը, անոր ձայնը կը կորսուէը ամբոխի ժխորին մէջ»։

Հայրիկը յարձակողներէն մէկուն ձեռքէն փայտ մը կը խլէ և քանի մը հարուածներ կ'իջեցնէ ոմանց ուսերուն։ Ծեծուողներէն մէկը երբ ետ կը դառնայ և կը տեսնէ, որ ծեծողը Հայրիկն է ուրախաձայն կը բացականչէ.

—Չարկ Հայրիկ չան, զարկ, ձեռքիդ մատաղ, դու մեզ տփիր մենք՝ իսոնց, իսոնք մեզ վառեր են է՛....

Իշխաններէն ոմանց կանայք տանիքներու վրայ կանգնած կուլան և օգնութիւն կը խնդրեն, մինչ ամբոխին մէջէն քանի մը արհեստաւորներ կը կանչեն.

—Է՛յ խաթուններ, մի լաք, ինչու կուլաք, դարդ մի անէք, եթէ ձեր մարդերը մեռնեն մենք ձեզ կ'առնենք....

Ի վերջոյ ոստիկանութիւնը դէպքին վայրը կը փութայ և կը հեռացնէ կատաղած ամբոխը, իսկ Առաջնորդարանի մութ անկիւններու մէջ ապաստանած մազապուրծ «Իշխան»ներն ալ հազիւ հազ քայլելով, ոստիկաններու հսկողութեամբ իրենց տուները կ'երթան։

Հասան Փաշան իսկոյն իւր մօտ կը հրաւիրէ Խրիմեանը և կը յայտնէ հետևեալը.

—Այս դէպքին պատճառով հաբիւրաւորներ պիտի բանտարկուին և պատժուին, իբրև խռովարարներ. Որպէս զի պետական այս հետապնդումը չը կատարենք ապա ուրեմն պիտի յայտնենք Բ.Դրան, որ Վանի Հայ իշխանաց վրայ գործադրուած այս ծեծի և բռնութեան հեղինակները ոչ թէ ժողովուրդն էր, այլ խումբ մը մարդիկ, որոնք անձնական հաշիւներով տարուած և ատելութեամբ լեցուած՝ իշխաններէն լուծեցին իրենց վրէժը։ Ահա այս իմաստով գրութիւն մը կազմելով երկուքիս ստորագրութեամբ պիտի հեռագրենք Բ. Դրան ի գիտութիւն։

Խրիմեանը նկատելով, որ եթէ կուսակալին այս առաջարկը մերժէ, կրնան նոր դէպքեր յառաջանալ և հարիւրաւոր ցուցարարները պիտի բանտարկուին ու պատժուին, կը ստորագրէ յիշեալ հեռագիրը, որուն մէջ սակայն կուսակալը «սրիկայ» և «խռովարար» բառերով որակած էր ցուցարարները։ Խրիմեանի մօտ կարդալու ժա-

մանակ նենգամիտ և խորագէտ Հասան Փաշան, յիշեալ երկու բառերու վրայէն լուսթեամբ անցեր էր։

Քանի մ՚օրէն յետոյ կը բացուի նաև այդ կեղծիքը. Խրիմեանը կուսակալին կը ներկայանայ, կծու խօսքերով կը յանդիմանէ զայն և անմիջապէս Պատրիարքարանին կը հեռագրէ, որ—«Ր. Դրան ուղղուած հեռագրին մէջ սրիկայ և խռովարար բառերը կեղծիք են, ես գրած չ՚եմ. ծոյցը կատարուեցաւ ամբողջ ժողովուրդին կողմէ»։

Այս բոլորէն յետոյ, Հայրիկը Առաջնորդարանին մէջ գումարել տուաւ Երեսփոխանական ժողովը, որուն ներկայ կ՚ըլլան նաև ծեծ ու տրփոց կերած Հայ «Իշխան»ները։ Հայրիկը իրերու դրութիւնը պարզաբանելէ յետոյ, կը մեղադրէ «Իշխան»ներու ազգադաւ արարքը և յանդիմանութեան ու կշտամբանքի խօսքեր կ՚ուղղէ անոնց և մինչև անգամ իր համակիրներէն ոմանց, որոնք ստորագրած էին տխրահռչակ հանրագրութիւնը։ Այդ նոյն ժողովին մէջ Հայրիկը կուտայ իր հրաժարականը և կը բացականչէ.

—Ձեզ ճորէն Պօղոսն է պէտք եւ իր ճալախկան, որպէս զի դուք զգաստանաք։

Այս ժողովէն յետոյ Հայրիկը իր հրաժարականը (Վանի Առաջնորդութենէն) հեռագրով կը ներկայացնէ Պատրիարքարանին և նամակ մըն ալ գրելով Պօղոս Եպիսկոպոսին Էմմ-Անապատէն կը հրաւիրէ Վան, որ գայ և իրը Հայոց Առաջնորդ գործի լծուի։ Պօղոս Եպիս.ը կուգայ և այս անգամ շատ զգոյշ և աչալուրջ կերպով կը շարունակէ իր պաշտօնը։

Ահա այսպէս կը վերջանար Վանի Հայ Իշխանաց ծեծի պատմական դէպքը, որ ժողովրդական կամքի ու ձայնի ոտնահարման և մեր ազգային ու քաղաքական շահերու դաւաճանութեան մէկ սև էջը կը կազմէ, «12 երևելեաց և իշխանաց» բռնած ընթացքին պատճառով։ Սակայն միւս կողմէ այս դէպքն ունի նաև իր լուսաւոր էջը։ Ճեղափոխական և ինքնագիտակցութեան գաղափարները ժողովուրդի միջին դասակարգին մէջ խոր արմատ գտած էին. այդ ամբոխային յանդուգն ցոյցը տեսակ մը նախատինք էր նաև կառավարութեան հասցէին և մանաւանդ բարոյական ապտակ մը՝ Հասան Փաշային, որ շուտով Կ. Պոլիս կը կանչուէր և պաշտօնանկ կ՚ըլլար։ Անոր կը յաջորդէր Համիտ Փաշան, որ աւելի հա-

մարձակ կերպով կը գործէր իբր նահանգապետ և կը զսպէր Վանի հայոց հրապարակային, յեղափոխական ցոյցերն ու հանդէսները։

Իշխանաց ծեծէն ութ օր յետոյ, ցանկոյսներէն եկեղեցւոյ մէջ, Հայրիկը բնաբան ունենալով «Եղբայրսիրութիւն» կը քարոզէ և ի մէջ այլոց կ'ըսէ.

«Սիրելի ժողովուրդ, քո տունը քանդող 10—12 աղաները և իշխաններն են*), որոնք քո կամքին հակառակ և իրենց անձնական շահերուն ի նպաստ կը գործեն, այս իսկ պահուս քեզմէ անանկ ծեծ մը կերան, որ յաւիտեան չեն կրնար մոռնալ։ Թող օրհնեալ ըլլայ ժողովուրդին վրիժառու բազուկ և հզօր կամքը։ Իշխանաց ծեծէն յետոյ, երբ դեռ դահլիճին մէջն էի, աչքս ընկաւ երկար նստարանին (կանափային) տակ, ուր գունդ ու կծիկ եղած պահուեր էր Կարապետ Աղա Նալբանդեան։ Ցեսած էր երբ կատուի մը մազերը բզիկ-բզիկ կ'ընեն անիկա որչափ խեղճ և ողորմելի կը դառնայ, Կարապետ Աղան բզիկ-բզիկ եղած կատուի մը տեսք ունէր, (ընդհանուր ծիծաղ)։ Վայ անոնց, որոնք ժողովուրդի կամքին հակառակ կը գործեն. ժողովուրդի ձայնը հզօր է, բազուկը անխնայ և վրիժառու, զգոյշ, զգոյշ...»**)։

Ժողովուրդին Հայրն էր խօսող, ժողորգանուէր Հայրիկը, որուն ձայնը կը հնչէր բարձր ու հզօր, ինչպէս իր ժողովուրդին ձայնը։

Վանի Հայ իշխանաց ծեծէն յետոյ, 1883-ի աշնան, Թիֆլիսի «Արձագանք» շաբաթաթերթին մէջ (Հոկտ. 9, № 41, էջ 630) լոյս կը տեսնէր Վանէն գրուած հետեւեալ անստորագիր թղթակցութիւնը՝ «Խրիմեան Սրբազանի մի դաստապարտելի գործը» վերնագրով.

«Մի ցաւալի լուր ունիմ ձեզ հաղորդելու. ցաւալի, որչափ ճշմարիտ դժբախտաբար, Խրիմեան Սրբազան մի գիր ստորագրելով յանձնած է Վանայ կուսակալին, յայտնելով թէ տեղւոյն 12 երևելեաց հանրածանօթ հեռագիրն, որով երկրին վիճակէն գոհունակութիւն կը յայտնէին, և կ'ըսէին թէ իրենք կառավարութեան դէմ

*) Վանի այդ ժամանակուայ Հայ «Իշխաններն»էին՝ Գէորգ Բէյ Գալճեան, Յարութիւն Թէրզիբաշեան, Մկրտիչ Մարութեան, Կարապետ Խաչանեան, Կարապետ Նալբանդեան, Այազ Այազեան և ուրիշներ։

**) Այս խօսքեր գրի առած եմ 1926-ին՝ Մարտիրոս Խէրանեանէն։

խնդիրը չունին, կատարելապէս ճիշտ և անկեղծ է, և ինք. Խրիմեան, համամիտ է այդ հեռագիրն ստորագրողաց, իսկ ատոր դէմ բողոքող վանեցիք ստորին դասու կը վերաբերին և անոնց խօսքը նշանակութեան արժանի չէ. Թուղթին իմաստն այս էր թէ 12 երևելեաց հեռագիրը միայն արժէք ունի իսկ անոր դէմ եղած բողոքներն անարժէք են և այլն»։

Խրիմեանի թշնամիներու կողմէ գրուած այս անստորագիր թղթակցութիւնը ամբողջովին սուտ է եւ զրպարտութիւն, վասն զի ինչպէս տեսանք, Հայրիկը ոչ թէ «12 երևելեաց հանրածանօթ հեռագիրը» (հանրագրութիւնը) կը հաստատէ, այլ ընդհակառակն զանոնք ժողովի կանչելով կը յանդիմանէ և բացատրութիւն կը պահանջէ։ Այդ տխրահռչակ հանրագրութեան արժանի վարձատրութիւնը Վանի Հայ իշխանաց ծեծն էր։

Է.

## ԽՐԻՄԵԱՆՆ ԻԲՐ „ԿԱՍԿԱԾԵԼԻ ԵՒ ՎՏԱՆԳԱՒՈՐ“

Քրդական հարստահարութիւններն ու տաճիկ պաշտօնեաներու բռնութիւնները յաճախակի երևոյթներ էին գաւառներու մէջ։ Նման պարագաներուն ճնշուած ժողովուրդի դատերը կը պաշտպանէին ոչ միայն անգլիական և ռուսական հիւպատոսները, այլև Խրիմեանը, որ միշտ պետութեան այս ու այն պաշտօնատուն կը մտնէր և իր միջամտութեամբ կը պաշտպանէր Հայ գիւղացիներու դատերն ու իրաւունքները։

Խրիմեանի այս ընթացքն ու միջամտութիւնը պետական դըժգոհութեան առիթ տուաւ։

Թիմար գաւառի Լիմ գիւղացի Թումասի հետ թշնամացեր էր քիւրդ բէկ մը, որ օր մը ճամբու վրայ դարանամուտ կը կենայ և Թումասի վրայ յարձակելով սպաննել կ'ուզէ։ Սակայն Թումասը—որ քաջ տղամարդ մը եղած է—աւելի ճարպիկ կը գտնուի, քիւրդին մէջքէն խանչալը կը խլէ և իւր սխոյեանին կուրծքն ու փորը պատռելով կը սպաննէ։ Պատահարար այդ դէպքին վայրէն անցնող ոստիկանները կը ձերբակալեն Թումասը և քաղաք բերելով կը բան-

տարկեն. Հայրիկն ու Կամսարականը երկար աշխատելէ յետոյ կը յայտնին ազատել Թումասը։ Երբ կուսակալը կ'առարկէ թէ Թումասը մարդասպան է, Հայրիկը կը հաստատէ, որ—«նա վասն ինքնապաշտպանութեան կատարած է այդ սպանութիւնը և ոչ թէ դիտումնաւոր»։

Այս դէպքէն քիչ յետոյ, չորս քիւրդեր Մանդան գիւղի վրայ յարձակելով կը թալանեն հայերու ոչխարները։ Գիւղացիք Հայրիկին կը դիմեն և պաշտպանութիւն կը խնդրեն։

Հայրիկը սաստիկ կը զայրանայ գիւղացիներու վրայ և կ'ըսէ.

—Ի՞նչ... դուք կը սպասէք, որ կառավարութիւնը ամէն գիւղի մէջ, սարերու և ճամբաներու վրայ պահապան, ոստիկան դնէ, որ դուք հանգիստ և ապահով ապրիք, ամօթ ձեզ, որ գիւղ մ'ամբողջ կրցած չէք չորս աւազակ հալածել կամ բռնել, իսկ հիմայ ելեր տնկօ տնկօ եկեր էք և Հայրիկէն օգնութիւն կը խնդրէք. ես պիտի երթամ կուսակալին յայտնեմ դէպքի մանրամասնութիւնները, իսկ ձեզ ալ կ'ըսեմ, ալ բաւ է թոյլ և վախկոտ մնաք, գացէք գէնք առէք, գէնք... զի անով է, որ պիտի պաշտպանէք ձեր անձը, պատիւն ու ստացուածքը։ Հայտէ գացէք և ըսածներս կատարեցէք։

Ռուսաց Ալէքսանդր Բ. կայսրը 1881-ի Մարտի 1-ին կը սպանուէր անիշխանականի մը ձեռքով։

Կայսրի մահուան լուրը երբ Վան կը հասնէր, ռուսական հիւպատոսարանը ցաւակցական այցելութիւններ ընդունելէ յետոյ կը խնդրէ, որ Խրիմեանը հոգեհանգիստ մը կատարէ։

Խրիմեանը կ'ընդունէ այդ առաջարկը և Նորաշէնի եկեղեցւոյ մէջ տեղի կ'ունենայ հոգեհանգիստը, որուն ներկայ կ'ըլլան անգլիական և պարսկական հիւպատոսները, պաշտօնական մարմիններ և խառնեփամ ժողովուրդ։ Պատարագիչ Հայրիկը, ի յարգանս քսպանուած կայսեր, դամբանական ճառ մը կը խօսէ և կը շեշտէ.

—«Մեռաւ ռուսաց Ալէքսանդր Երկրորդ Ազատարար կայսր, մեռաւ ռուսական հզօր քաղաքականութեան և փոքր ազգերու ազատութեան պաշտպան թագաւորը, որ ռուս երկրագործ ու չքքաշ ժողովուրդը ազատեց ճորտական սոսկ վիճակէն։ Հայերս ալ կը ցաւինք այդ Ազատարար կայսեր եղերական մահուան համար, վասն զի մենք ալ զրկուեցանք հանգուցեալ Աբքայի խոստացած բարենորոգումներէն», և այլն։

Այս յաւուր պատշաճէ խօսքերը կը հաղորդուին կառավարութեան, որուն աչքին Իրիմեանը կը դառնայ կասկածելի՝ իբրև ռուսական քաղաքականութեան պաշտպանի։ Կառավարութեան այս կասկածը հիմնովին սխալ էր, վասն զի Իրիմեանը առելով կ'ատէը ռուսաց քաղաքականութիւնը։ Ռուսական հիւպատոս Կամսարականը օր մը կը թելադրէր Իրիմեանին թէ պէտք է Վասպուրականի Հայութիւնը ըմբոստանայ Օսմանեան պետութեան դէմ և Ռուսաստանի պաշտպանութեան դիմէ. Հայրիկը կը պատասխանէ.

—Ցոյն ժողովրդական առածը կ'ըսէ ջրէն ելածի ընկածի ջրեղեղ. հիմայ քուկդ է, դուն չը գիտես որ եթէ Ռուսը հայկական նահանգները գրաւէ մեզ չը պիտի տայ, այլ ռուսական նահանգի մը պիտի վերածէ և բարոյապէս խեղդէ մեզ և ջնջել տայ Հայկական Հարցը. Աւելի աղէկ է, որ մենք Թուրքիոյ իշխանութեան ներքոյ ներքին ինքնավարութիւն մ'ունենանք, քան թէ ռուսին լուծը դնենք մեր վզին.

Կամսարականի յաջորդը՝ Վանի ռուսական հիւպատոս Կուլէպեակինն ալ, օր մը Հայրիկին կը հարցնէ թէ—«Ի՞նչու դէմ էք ռուսական քաղաքականութեան, որ կը հետապնդէ նաև քրիստոնեայ փոքր և ճնշուած ազգաց ազատութիւնը».

Հայրիկը անվերապահօրէն կը պատասխանէ.

—Աղէքսանդր Բ.-ի քաղաքականութիւնը վերցուած է Աղեքսանդր Գ-ի օրով։ Ռուսական ներկայ քաղաքականութիւնը ամենուկուլ է։ Մեր Ներսէս Աշտարակեցի Կաթուղիկոսը 1827-ի ռուս-պարսկական պատերազմներու ժամանակ մեծ ծառայութիւններ ըրաւ ռուսաց բանակներուն և պալատին, որ խոստացած էր հայոց ազատութիւն շնորհել, բայց երբ ձեր զօրքերը գրաւեցին Երևանն ու Էջմիածինը, պալատը իր խոստումը չը կատարեցէ յետոյ, Պոլոժենիայով շրջայեց Կովկասի Հայութեան կրօնական, կրթական և ազգային գործերն ու տարբական իրաւունքները և պրոկուրոր (պատախազ) կոչուած պաշտօնեայ մըն ալ բազմեցուց Էջմիածնի Սինօդին մէջ։

Այսպէս ուրեմն ռուսական քաղաքականութեան հակակիր Իրիմեանը, յաչս տաճկաց կը նկատուէր իբր կասկածելի եւ վտան-

գաւոր անձ մը, որ իբր թէ համաբարականի հետ միացած ռուս կառավարութեան շահերը կը պաշտպանէին Վանի մէջ։

Այս կասկածը այնքան արմատացեր էր պետական շրջաններու և տաճիկ երևելիներու մէջ, որ 1882-ին, օր մը Վանի կուսակալ Հասան Փաշան կառավարչատան մէջ, Հայրիկին կէս լուրջ կէս կատակ ձևով մը կը հարցնէ.

—Իրա՞ւ է, թէ դիմած էք ռուս կառավարութեան, որ բանակ մը ղրկէ, Վանը գրաւելու համար։

Հայրիկը նոյն կէս լուրջ կէս կատակ ձևով կը պատասխանէ.

—Եթէ վստահ ըլլայի, որ ռուս կառավարութիւնը պիտի կատարէր այդ դիմումս, այն ատեն կը խնդրէի որ նա իր բանակը չը շարժէր....

Այս սրամիտ պատասխանը լսելէ յետոյ կուսակալը լուռ կը մտածէ, բայց կասկածը կը մնայ կասկած և Խրիմեանը կ'ամբաստանուի իբր պետութեան շահերուն և Օսմանեան երկրին դէմ գործող կասկածելի և վտանգաւոր անձ մը։

Խրիմեանը այս կասկածները փարատելու համար մեկուսացաւ Վարագայ վանքին մէջ և ապա հրաժարուեցաւ Վանի Հայոց Առաջնորդութեան իր պաշտօնէն, իրեն փոխանորդ նշանակելով Գարեգին Վարդապետ Սրուանձտեանցը, որուն յետոյ յաջորդեց Պօղոս Եպիսկոպոսը։

Գէորգ Դ. Կաթուղիկոսը վախճանուեցաւ 1882-ի Դեկտեմբերի 6-ին։ Հրապարակ եկաւ նոր կաթուղիկոսի ընտրութեան հարցը, որ ամբողջ երկու տարի յուզուեցաւ Կ. Պոլսոյ և Կովկասի Հայ մարմիններու և մամուլին մէջ։

Թերթերը կը հրատարակէին կաթուղիկոսական թեկնածուներու անունները։ «Մշակ»ը կը պաշտպանէր Խրիմեանի և Վարժապետեանի թեկնածուութիւնը։ Մատթ. Մամուրեանն ալ հրապարակ բերած էր Իզմիրի առաջնորդ Մելքիսեդեկ Եպիս. Մուրատեանի անունը։ «Մասիս» և «Արևելք» թերթերը (Կ. Պոլիս) ուժեղ կերպով կը պաշտպանէին Խրիմեանի թեկնածուութիւնը։ Մերինը 1884-ին կը հրատարակէր «Կաթողիկոսութիւն եւ Խրիմեան» անունով գրքոյկ մը և Խրիմեանի թեկնածուութիւնը պաշտպանելով կ'եզրակացնէր ու կը բացականչէր։

«Ո՛վ կաթողիկոսական ընտրութեան մասնակցողք եթէ կը սիրէք ձեր Ազգը, ձեր եկեղեցին, ընտրեցէ՛ք Խրիմեանը»։

Իսկ Արմենակ Սիւնին ալ իւր «Կաթողիկոսական Ընտրելիները»*) գրքոյկով Խրիմեանի թեկնածուութեան մասին հետևեալը կը գրէր.

«...Խրիմեան Սրբազանը շատ ազգասէր, լաւ քարոզիչ, տաղանդաւոր բանաստեղծ և յարգելի մարդ է, բայց կաթողիկոս լինել չի կարող. ...Նրա գլխաւոր արժանիքը, որով հռչակուեցաւ նա, թունդ ազգասիրութիւնն է և բանաստեղծական տաղանդը։ Խրիմեանը իւր ազգասիրութիւնով և ազդու քարոզներով աւելի մեծ գործ կարող է կատարել իր հայրենի Հայաստանում, իրան լաւ ծանօթ ժողովուրդի մէջ, քան թէ կաթողիկոսական պաշտօնով, կառավարչութեան անընդունակ լինելով» (էջ՝ 19—28)։

Հեղինակը կը պաշտպանէ Մելքիսեդեկ Եպիսկոպոսի թեկնածուութիւնը, պնդելով որ նա աւելի կարող է քան Խրիմեանն ու Վարժապետեանը։

Ազգային ժողովը 1884-ի Ապրիլի 16ին կը զբաղուի կաթուղիկոսական թեկնածուներու ընտրութեամբ։ Ձայները կը կեդրոնանան Խրիմեանի, Վարժապետեանի և Մուրատեանի անուններուն շուրջ։ Ի վերջոյ Վարժապետեանը կ'ընտրուի թէև, բայց կը հրաժարուի։

Եւ վերջապէս 1885-ին էջմիածնի մէջ գումարուած Համազգային ժողովը ընտրական 50 ձայները կը կեդրոնացնէ Իզմիրի Առաջնորդ Մելքիսեդեկ Եպիս.ի վրայ, իսկ էջմիածնի միաբանութեան աւագագոյն անդամ Մակար Արքեպիսկոպոսն ալ իրը թեկնածու կը ստանայ 16 ձայն. կը մնար Ռուսաց Ցարի (Ալէքսանդր Գ.) հաստատութիւնը։ Ցարը պետական շահերը նկատի ունենալով և հակառակ Հայ ժողովուրդի կամքին՝ կը հաստատէ Մակարի ընտրութիւնը և այս պատճառով ալ ժողովուրդն ու թերթերը Մակարին Ցարընտիր մակդիրը տուին։

Այսպէս ուրեմն երբ Խրիմեանի կաթուղիկոսական թեկնածուութիւնը հրապարակ կուգայ, Սուլթան Համիտն ու Բ. Դուռը լուրջ մտահոգութեան կ'ենթարկուին և ամէն կերպով կը ջանան չեզոքացնել Խրիմեանը։ Սուլթանի հրամանով Ներքին Գործոց Նախա-

*) Թիֆլիս 1884. Տպարան Լ. Գ. Կրամարենկոյ. էջ՝ 42։

բար էտհէմ Փաշան, քանիցս գաղտնի կը հրահանգէ Վանի կուսակալ Համիտ Փաշային, որ անուղղակի խօսքերով ու միջոցներով ջանայ համոզել Խրիմեանը և Վանէն հեռացնելով դրկէ Կ. Պոլիս։ Համիտ Փաշան թէև այդ ուղղութեամբ կը խօսէ Խրիմեանի հետ, բայց նա հաւանութիւն չի տար, առարկելով, որ կ'ուզէ մնալ իւր հայրենիքին մէջ, օգտակար ըլլալու համար ժողովուրդին և պետութեան։

Ներսէս Պատրիարք Վարժապետեանը վախճանուեցաւ 1884-ի Հոկտեմբերի 26-ին,

Վանի Առաջնորդարանին մէջ գումարուած կրօնական և քաղաքական խառն ժողովի ժամանակ, Հոկտեմբերի 26-ին, Խրիմեանը Պատրիարքարանէն կը ստանայ Վարժապետեանի մահը գուժող հեռագիրը։ Հայրիկը այնքան կ'ազդուի, որ կը գունաթափուի և բարձրաձայն կուլայ։ Ժողովը կը խանգարուի, իսկ Խրիմեանը դահլիճին մէջ երթևեկելով, լալագին կը բացականչէ.

— Ներսէս մեռաւ... Հայրիկ մեռաւ, Ներսէս մեռաւ... Խրիմեան մեռաւ, Վարժապետեան մեռաւ... Խրիմեանն ինչո՞ւ կ'ապրի...։

Ժողովականները հազիւ կը հանդստացնեն զինք։ Վարժապետեանի մահը այնքան խոր և ծանր տպաւորութիւն թողած էր Խրիմեանի վրայ, որ օրեր շարունակ նա մեկուսացեր և հառաչանքով ու լալով ողբացեր է ազգային այդ մեծանուն գործիչ և իւր աջակից ու գաղափարակից Ներսէս Վարժապետեանի կորուստը։

Դեկտեմբերի 4-ին, Վանի Նորաշէն եկեղեցւոյ մէջ կը կատարուի հոգեհանգիստ, իսկ դպրոցի սրահին մէջէն ալ սգահանդէս Վարժապետեանի յիշատակին։ Պաշտօնական անձեր և խուռն ժողովուրդը ներկայ կ'ըլլան այդ սգահանդէսին։

Ազգային կեանքի, ժողովրդական հանդէսներու, կրօնական, դպրոցական, բարեգործական, քաղաքական և այլ ամէն տեսակ գործերու մէջ Հայրիկը հովանաւոր և մասնակից էր։ Վանը յաչս պետութեան նկատուած էր իբր ըմբոստ եւ յեղափոխական կեդրոն մը, իսկ Խրիմեանը կասկածելի և վտանգաւոր անձ մը, «որուն ներկայութիւնը գաւառներուն մէջ՝ պետութեան շահերուն և քաղաքականութեան դէմ և վնասակար» կը համարէր Բ. Դուռը։

Այս իսկ պատճառով Սուլթան Համիտը կը հրամայէ Բ. Դրան, որ Խրիմեան Հայրիկը Վանէն տեղափոխուի Կ. Պոլիս։

## Ը.

# ՄԵԾ ԱՔՍՈՐԱԿԱՆԸ

Կ. Պոլսոյ «Մասիս» շաբաթաթերթը 1884-ի Դեկտեմբերի 22-ին (Թիւ՝ 3749, էջ՝ 521) Ազգային լուրերու մէջ կը հրատարակէր հետեւեալը.

«Ներքին Գործոց Նախարարի Բարձր. Լուիմ Փաշա հեռագրած է Վանայ կոռնակային, որպէս զի ուրախացնէ Ամեն. Խրիմեան Սրբազանի ի Պոլիս գալուստը»։

Ներքին Գործոց Նախարարի հեռագիրը ստանալէ յետոյ Վանի կուսակալ Համիտ Փաշան Խրիմեանին կ'առաջարկէ և կը սեպէ, որ ճամբու պատրաստութիւն տեսնէ և հեռանայ Վանէն։ Այս առաջարկը լսելէ յետոյ Հայրիկը կը պատասխանէ.

—Վեհափառ Սուլթանի և տէրութեան կամքին ու հրամանին հակառակ չեմ, բայց, Փաշա էֆէնտի, խղճի դէմ չէ արդեօք, այս ցրտաշունչ ձմրան, ձիւնին ու բուքին մէջ ճամբաները փակուած են և երթեւեկութիւնը դադրած, պետութիւնը ինձ տխտրի ճամբան ցոյց կուտայ և կը սպիպէ, որ վաթսուն և հինգ տարեկան ծերունիս խակոյն հեռանայ, իւր հայրենիքէն, որուն բարօրութեան համար այնքան զոհողութիւններ ըրած է։ Այո՛ ես կը կատարեմ Վեհ. Սուլթանի և Բ. Դրան հրամանը. գիտէք երբ—գարնան, երբ օդերը կը տաքնան և ճամբաները կը բացուին։ Այլապէս ես հիմայ տեղէս չ'եմ շարժիր, իսկ եթէ փորձէք բռնութեամբ զիս հեռացնել կամ աքսորել, այն ատեն դուք ծանր պատասխանատուութեան պիտի ենթարկուիք. Թողունք դեռ, որ կրնան անախորժ դէպքեր ալ յառաջ գալ*)։

Կուսակալը Խրիմեանի այս պատասխանը նոյն օրն իսկ կը հեռագրէ Բ. Դրան, որ խոնհմութիւն կը սեպէ աքսորի ժամանակը երկարաձգել մինչև գարուն։

Ցրտաշունչ ձմեռն անցաւ և վաստուրական մեր աշխարհը ողջոյն տուաւ կենսատու գարնան։ Մինչ Հայոց Աշխարհի չքնաղ բնութիւնը իւր շքեղանքն ու պերճանքը ցոյց կուտար իւր գրկին

*) Այս խօսքերն ըսած է ինձ Հայրիկի եղբօր Թոռ Վահան Խրիմեանը՝ 1917-ին։

մէջ ապրող բնակչութեանց, երբ անդիէն Եւդոկի որջին մէջ ապաստանած ճայակեր գազանը՝ նոյն ինքն Սուլթան Համիտը իւր բռնութիւնն ու պատառող ժանիքները ցոյց կուտար Վանի Հայութեան, որուն համար 1885-ի Մարտի սկիզբէն մինչև Յուլիսի վերջերը՝ տառապանքի, աղէտներու, արհաւիրքի և արիւնի նոր դուռ մը կը բացուէր։ Պետութիւնը պաշտօնապէս գործի կ'անցնէր Վանի Հայութեան մէջ տարիներէ ի վեր արմատացած ազատասիրական և յեղափոխական գաղափարները խեղդելու համար։ Այս նպատակին հասնելու համար, պետութիւնը կ'որոշէր այդ գաղափարներն արծարծող և վառ պահող գործիչներն ու անոնց աչքառու հետեւորդները բանտարկել, չեզոքացնել և աքսորել*)։

Եւ ահա Մարտի 10-ին Համիտ Փաշան պաշտօնապէս կը յայտնէր Խրիմեանին, որ ութ օրուայ ընթացքին պատրաստուի և ճամբայ ելնէ դէպի Կ. Պոլիս։

Այս լուրը կայծակի արագութեամբ կը տարածուէր Վանի Հայութեան մէջ։ Ամբողջ ժողովուրդը տխրութեան և արցունքի օրեր կ'ապրէր։ Չէ որ Վասպուրականի Արծիւը՝ Հայոց Հայրիկը իրը տfunուական պլուտի հեռանար Վան-Վասպուրականէն։ Պետութեան հրամանն այնքան խիստ և կտրուկ էր, որ մինչև անգամ Հայրիկը չ'արտօնուեցաւ Զատիկը տօնելէ յետոյ ճամբայ իյնալ։

---

*) «Վասպուրականի պեգրոնական Վարժարանի հիմնադիր-տեսուչ Մկրտիչ Փորթուգալեանը, 1885-ի Մարտի 16-ին Վանէն աքսորուեցաւ ի Կ. Պոլիս, ուր շատ կարճ ժամանակ մնալէ յետոյ, Կ'երթայ Մարսէյլ և սեփական ապարան ունենալէ յետոյ կը ձեռնարկէ «հրատարակել հայերէն լեզուով մի ազատ լրագիր մեր հարստահարուած Հայաստանցի եղբայրների դրութիւնը աշխարհահռչակ դարձնելու, արտատհմանեան Հայերի ուշադրութիւնը անոնց վրայ հրաւիրելով աջակցութիւն խնդրելու, մեր գաղափարները հայ ժողովրդին մէջ տարածելու համար։ Այդ ազատ լրագիրը ԱՐՄԷՆԻԱՆ էր, որուն Ա. թիւը լոյս տեսաւ ազատ Ֆրանսիայի մէջ, 1885 Յուլիս 20/1 Օգոստոսին։ «Արմէնիան» չուտով տարածուեցաւ Թուրքիոյ և արտատհմանի Հայութեան մէջ և չերմ համակրանքի արժանացաւ ամենուրեք։ «Արմէնիա»ի ազգային, հայրենասիրական և յեղափոխական գաղափարները չուտով ընդհանրացան և գարձան տեսակ մը կուսակցական համոզում անոնց համար, որոնք Փորթուգալեանի գործունէութեամբ և «Արմէնիա»ով կ'ոգեւորուէին։ Այսպիսով ահա ծնունդ կ'առնէր «Ռեճեակաճ Կուսակցութիւնը, որուն ուժեղ կեդրոնը Վանն էր, ուր յիշեալ կուսակցութիւնը գոյու-

Վանի գաւառներէն և շրջակայ գիւղերէն հոծ բազմութեամբ գիւղացիներ քաղաք լեցուեր էին Հայրիկին բարի երթ մաղթելու: Խրիմեանի հին և նոր հակառակորդներն ու թշնամիներն անգամ տխրած էին, որ Մեծ Հայրենասէրը կ'աքսորուէր հայրենիքէն: Վանի ազգային մարմիններ, դպրոցական վարչութիւններ, ընկերութիւններ և այլն, բոլորն ալ պատրաստութիւն կը տեսնէին Մեծ Ախտրակացը վայելուչ պատիւներով և ցոյցերով ճամբու դնելու համար.

Հայրիկի մեկնելու օրը որոշուեցաւ Մաղկազարդի Կիրակի օր (17 Մարտ 1885) պիտի խօսէր իւր հրաժեշտի քարոզը, իսկ Աւագ Երկուշաբթի առաւօտը ճամբայ ելնէր:

Կառավարութիւնն ալ իր կարգին ոստիկանական և զինուորական հսկողութիւնը աւելցուց քաղաքին մէջ, որպէս զի ժողովրդական բողոքի ցոյցեր և նման դէպքեր չը կատարուէին:

Մեկնումէն շաբաթ մ'առաջ, Հայրիկը Վարագայ ճօթն խորան ուռճաքին մէջ կը պատարագէ և սրտառուչ քարոզով մը հրաժեշտ

---

թիւն ունեցաւ գրեթէ 30 տարի (1888—1908): Վանի Արմենականութեան գեկավար և լուսաւոյն դէմքը կը հանդիսանայ Մկրտիչ Աւետիսեանը:

Արժէ յիշատակել նաև, որ Մ. Փորթուգալեանը 1883-ի գարնան կը ձեռնարկէ Վարագայ տպարանէն լոյս ընծայել «Վանի Գաւթաց» անունով թերթ մը, բայց կառավարութիւնը կը խանգարէ այդ ձեռնարկը:

Վանի մէջ 1885-ի Մարտի 17-ին բանտարկուեցաւ համարձակ և ազատախօս Մկրտիչ Սեֆիլեանց, Ապրիլ 6-ին աքսորուեցաւ Ծանկոյների դպրոցի ուսուցիչ Իզմիրցի Այգավարդ Ասլանեանց, Յունիս 3-ին ոստիկանութիւնը փակեց ու կնքեց Վարագայ տպարանը: Նոյն օրը ոստիկանութիւնը փակեց «Կեդրոնական Վաճառանոցը և հեռացուց ու ցրուեց ուսուցիչներն ու աշակերտները: Յունիս 11-ին բանտարկուեցաւ Վանի ազգային դպրոցներէն Կարապետ Նալբանեանը, համարձակ, գործունեայ և յեղափոխական գաղափարներով տպրուած անձ մը: Յունիս 13-ին բանտարկուեցան Խաչատուր Սալտխեան, Յովհաննէս Չիլոպեան և այլ խումբ մը երիտասարդներ: Յունիս 20-ին բանտարկուեցան Գէորգ Շահեցց ուսուցիչ և Մարխաս Մանուկիկեան, իսկ նոյն տարւոյ 24-ին ալ ձերբակալուեցաւ Կարապետ Գիւլիւմեանը, որուն տունը խուզարկելով ոստիկանութիւնը գտած էր Միք. Նալբանդեանի «Երկրագործութիւն» գրքի ձեռագիրը ընդօրինակութիւնը: Յուլիս 1-ին խուզարկուեցաւ Գարեգին Բադեցեանի տունը, ուր գտնուեցան «Նոր-Դար» լրագրի քանի մը թիւեր:

Ու այսպէս, առաջին առթիւ, իսկ կառավարութիւնը Վանի մէջ տարտափի և ահաբեկման քաղաքականութեան հետեւեցաւ:

կուտայ միաբաններուն, իւր պաշտած Աբծուարոյն Վարագին, «Ժառանգաւորաց Վարժարան»ի ուսուցիչներուն, սաներուն և հօտաղ-մշակներուն։ Վարագայ Պարոն Պետրոսը կը պատմէր որ—«Հայրիկը Աւծուի Վասպուրականի թերթի մամուլը գրկեց համբուրեց և հեկեկալով լաց եղաւ։ Իսկ երբ վանքի դարպասէն դուրս ելաւ և ձին հեծաւ խոր հառաչանքէ մը յետոյ բացականչեց— „Մնաս բարեաւ Վարագ, սիրելի Աբծուարոյն...“ և ալ չը կրցաւ խօսքը շարունակել, արցունքները այտերէն վար գլորուեցան, մենք բոլորս ալ կուլայինք, իսկ Հայրիկը ձին մտրակելով իւր հետևորդներով հեռացաւ ու գնաց Այգեստան»։

Ծաղկազարդի Կիրակի առաւօտ Հայրիկը գնաց Արարուց Մայր եկեղեցին, ուր խռնուած 6000 երկսեռ ժողովուրդը խորին լռութեամբ և կսկիծով լսեց Հայրիկի հրաժեշտի քարոզը, որով կը շեշտէր Միութեան պահանջը։

«Շատ դիւրին է մէկ մէկ կոտրել բարակ փայտեր, որոնցմէ երբ մեծ խուրձ մը կազմենք և թելով մը իրար կապենք անհնարէ այդ միացած խուրձը կոտրել։ Այսպէս ալ ժողովուրդ Հայոց, միացէք, հղբայրական սիրոյ թելով կապուեցէք միմեանց հետ և Միութեան մեծ խուրձ մը կազմելով հաւատացէք, որ այն ատեն թշնամին չը պիտի կրնայ ձեզ կոտրել, վասն զի միութիւնն ուժ է... Ես կ'օրհնեմ ձեր միութիւն, ձեր սէր և համերաշխ գործակցութիւն, մնաք բարեաւ, Հայրիկ կ'երթայ, կը հեռանայ մարմնով, բայց ուր որ երթայ հոգով սրտով ձեզ հետ կը մնայ, ձեր սիրով, ձեր սրտով կը գործէ, մնաք բարեաւ... մնաք բարեաւ...»։

Քարոզը վերջացնելէ յետոյ, երբ Հայրիկը սեղանէն վար կ'իջնէր, ժողովուրդը լաց ու կոծով անոր շուրջը կը խռնուի և կը համբուրէ ձեռքերը, մինչ նա հազիւ հազ բազմութեան մէջէն դուրս գալով կը հեռանայ։

Այդ նոյն օրը, կէսօրէն յետոյ, Նորաշէնի եկեղեցին խուռն բազմութեամբ լեցուած էր։ «Ամէն որ տխուր անձկանօք կը սպասէր լսել Հայրիկը։ Հուսկ ուրեմն Հայրիկը գաւազան ի ձեռին կը փայլի բեմին վրայ և իրեն յատուկ վսեմ և հոգեյոյզ ոճով՝ կը խօսի հետեւեալն ի հրաժեշտ»։

«Հասաւ ժամանակը, որ կը ստիպէ զիս տալ ձեզ իմ հրաժեշտի

ողջոյնը. Ես, ժողովուրդ, ի սկզբանէ անտի, առանց ձեռաց կամք՝ կամ լաւ եւս է ըսել գնդակ մը եղած եմ, զոր Հայ ազգը այսր անդր կը գլորէ. Սակայն չեմ ցաւիր առ այս. զի Աստուած է, որ ի ձեռն Հայ ազգին զիս կրթել կ'ուզէ զերդ գնդակ գլորելով, Հայրիկ գլորուելով փոխանակ վար իյնալու՝ վերը կ'ելլէ. Գլորեցէք որչափ կրնաք այս գնդակը, մինչև իյնայ ի փոս զերեզմանին. Գլորուիլն է իմ խաչը. բայց Ազգային կամ բարձրագոյն հրամանաւ ի Պոլիս փոխադրուիլս իրաւունք չունիմ ինձ խաչ համարելու. զի այդ հնազանդութիւն է, և հնազանդութիւն խաչ չէ.

«Իմ ի Վան բնակութեան հնգամեայ շրջանի մէջ, առանց կորուսանելու պատեհ առիթ, յաճախ քարոզեցի ձեզ լոյս և տնտեսագիտութիւն, զոր ձեզ՝ իմ հայրենակցաց կտակ կը թողում. Ազգի մը ապագայն իւր ներկայէն կշռելու է. ճշմարիտ է թէ ազգի մը դպրոցները անոր ապագային յայտարարն են. Դպրոց չը սիրող ազգ մը ճակատագրի հաւատալու նախապաշարումն ունի, սակայն ճակատագրի հաւատալու դարն անցած է. Արդի ազգաց ճակատագիրն է նոցա յառաջադիմութեան քայլերն. Այլևս թօթափենք նախապաշարում և հաւատանք մեր գործունէութեան. Դաստիարակեցէք զաւակներդ և հաւատացէք թէ ձեր փրկութիւնն ձեր զաւակներէն է. Զայս բան անեղծ պահեցէք՝ ձեր տպաւորութեան մէջ. Մարգարէական ոգւով կ'ըսեմ ձեզ թէ քաջալերեցարուք, Հայ ազգը վերջապէս պիտի անցնի ի թիւ լուսաւորեալ ազգաց.

«Ա՛րդ, մնաս բարեաւ պիտի ըսեմ ձեզ. Իմ մնաս բարեաւն շատ անտարբեր է, զի այսօրինակ բաժանումները ինձ համար նոր չեն. Հայրիկը թէև ձեզմէ կը հեռանայ, բայց զձեզ չպիտի մոռնայ, մինչև ցգերեզման. Ես նուիրուած եմ հայրենեացս և Հայ ազգին. կուրծքիս լանչոսկրին վրայ գրուած է ԺՈՂՈՎՈՒՐԴ. Պիտի չանամ և փաստաբանեմ ըստ կարի ի բարեկարգութիւն վիճակի Հայ ժողովրդեան. Ազօթենք, որ Օսմ. բարեխնամ Ցէրութիւնն իրեն և մեզ ի սկզբանէ անտի ցանկալի եղած բարեկարգութիւն գործադրելու յաջողի. Մեզ համար Օսմ. հպատակութեան շրջանակէն դուրս աւելի այլեկ տեղ չկայ. Ի բարեկարգութիւն այս երկրին՝ Թուրք և Հայ ժողովուրդք ձեռն ի ձեռն ջանալու են. Իմ մնաս բարեաւ ձեզ տալով հանդերձ կը խնդրեմ ի Տէնջ, որ ձեր սիրտը Խրիմեանի հետ և

ձեր աղօթք վան նորա առ Աստուած երթայ։ Մի ցաւիք խորհելով թէ արդեօք օր մ'ալ Խրիմեան պիտի տեսնանք։ Ցոյս ունիմ թէ հայրենիքը վերստին պիտի տեսնեմ։ Եթէ, ափսո՛ս, իմ յոյս ի դերև ելլէ, կ'ուխտեմ, որ իմ դիակս թաղուի Վարագայ խաչին ներքև, ուր Արծիւ երկար տարիներ բոյն դրած է։ Ի՞նչպէս մոռնամ հայրենիքը, որոյ ջուրը և օդը զիս սնուցած են։ Դարձեալ կ'ըսեմ, մնաք բարեաւ, կ'օրհնեմ իմ հայրենիքը և կ'աղօթեմ որ պողովատ դառնաք, նեղութեանց և դժուարութեանց տոկալու համար։ Կացէք յիս և ես ի ձեզ...»*)։

Նորաշէնի եկեղեցին դուրս գալով, Հայրիկը ահագին բազմութեան ուղեկցութեամբ կ'երթայ Ցանկոյսների եկեղեցին, որ ծայրէ ծայր լեցուած էր ժողովրդով։ Ժամերգութեան ընթացքին Հայրիկը կը բարձարանայ սեղանը և յուզուած ձայնով այստեղն ալ կատարէ իւր հրաժեշտի քարոզը**)։

«Ժողովո՛ւրդ Հայոց, վաղը կը հեռանամ այստեղէն. կը թողում իմ սիրելի հայրենիքը, ինձ կեանք տուող ժողովուրդս և իմ անձման վարագս, որտեղ քսան և եօթ երկար տարիներ բոյն մը շինեցի ինձ համար այս մատներովս։ ...Բայց մի կարծեք, ժողովո՛ւրդ Հայոց, թէ Խրիմեան գնաց և մոռացաւ ամէնքիդ։ ...Այն օրէն, երբ 1820 թուին Խրիմեանը մկրտուեցաւ այս սուրբ աւազանին մէջ (ձեռքով ցոյց տուաւ մկրտութեան աւազանը) մի տախտակ շինուեցաւ նորա սրտին վրայ ու ԺՈՂՈՎՈՒՐԴ բառը գրուեցաւ։ Քանի որ շունչս բերանս է, ոչ ոք չի կրնաք այդ բառը եղծել այնտեղէն։ Դուք ալ, մի եղծէք, ժողովո՛ւրդ Հայոց, Հայրիկի անունը ձեր սրտէն։

«Ժողովո՛ւրդ Հայոց, սիրեցէ՛ք միմեանց, դաստիարակեցէք ձեր որդւոց, աշխատեցէք լոյսի համար, հացի համար...։

«...Թիշեցէք ձեր աղօթքներու մէջ Խրիմեան Հայրիկին։ Խօսք

---

*) Նորաշէնի եկեղեցւոյ մէջ Հայրիկի խօսած հրաժեշտի այս քարոզը վանեցի Նշան Ղարասեֆերեանը գրի առնելով հրատարակած է Կ. Պոլսոյ «Աւետարեր» շաբաթաթերթին մէջ (1885. Մայիս. էջ՝ 75)։ Նշան Ղարասեֆերեանը վարագայ «Ժառանգաւորաց»ի սաներէն էր, վաղեմի դաստիարակ, որ այժմ կ'ապրի Ամերիկայի Գալիֆօրնիա նահանգին մէջ։

**) Այս քարոզն ալ ի գիր առած և հրատարակած է Տիգրան Փիլոմեանը իւր «Խրիմեան Հայրիկ» գրքոյկին մէջ. (էջ՝ 40—44)։

կուտամ, որ ուր ալ լինիմ, թէ Մասեաց ստորոտ և թէ Բիւզանդիոն՝ մէկ օր ալ չ'անցունել առանց իմ հայրենիքը յիշելու. Իսկ երբ Երիմեանը աւանդէ իւր հոգին օտարութեան մէջ, անոր անբռնաբարելի կտակը պիտի ըլլայ, իր ոսկերոտին Վասպուրական փոխադրել, Վարագայ խաչքարերուն տակ՝ իւր հայրենիքի ծոցին մէջ ամփոփել...»։

Աւագ Երկուշաբթի առաւօտ—18 Մարտ 1885—Հայրիկը կբնաց Սուրբ Յակոբ եկեղեցին և հոն խռնուած ժողովուրդին ալ իւր հրաժեշտի քարոզը տուաւ և «մնաք բարեաւ»ն ըսաւ. Այսպէս Այգեստանի չորս եկեղեցիներու—Աղաբը, Նորաշէն, Յանկոյսներ և Սուրբ Յակոբ—մէջ հրաժեշտի քարոզը խօսելէ յետոյ Երիմեանը քանի մը ժամ ալ, իւր հայրական տան խոնարհ յարկին տակ, հարազատներու և ազգականներու շրջանին մէջ, արցունքով ու կըսկիծով վերջին տեսակցութեան և հրաժեշտի խօսքեր, խրատներ կ'ուղղէր ամէնքին, կը համբուրէր իւր մանկական և պատանեկան կեանքի այդ նահապետական տան դռները և դուրս կուգար փողոցը, ուր խռնուած էին քաղաքացիները և գիւղացիները—մարդ, կին, մանուկ, ծեր թէ երիտասարդ։

Այժմ խօսքը տանք ականատես Մարտիրոս Խէրանեանին.

«Օրը պայծառ և արեւոտ էր. Աւագ Երկուշաբթի առաւօտ ժամի 10-ին (ր. ե.) Հայրիկը տունէն դուրս եկաւ և հեծաւ ձին. Յանիքներու վրայ և փողոցի դռներու մէջ կանգնած կանայք այնքան սրտալի ու հոգիով կուլային, և Հայրի՛կ Հայրի՛կ կը կանչէին, որ կարծես թէ Հայրիկը մեռած էր և մարմինն էր որ կը տանէին թաղելու. Համաժողովրդական վշտի և միաժամանակ նաև հսկայ ցոյցի մը տեսք առած էր այդ օր Վան քաղաքը. Հայերը, ի յարգանս Մեծ Աքսորականին, շուկան և հիմնարկութիւնները փակած էին. Այս հանդիսաւոր, հսկայական թափօրը Յանկոյաններէն՝ Հայրիկենց դռան առջևէն ճամբայ ելաւ դէպի քաղաք: Ռուսաց հիւպատոսի կողմէ ղրկուած երկու պահակները Հայրիկի ձիու առջևէն կ'երթային, իսկ պետութեան ղրկած ոստիկանական պատուոյ պահակախումբը կարգ կը պահպանէր. Կը յիշեմ, թէ ինչպէս Վարագայ միաբաններէն պարզ և ազատախօս ծերունի Մելքիսեդեկ Վարդապետը երկար ձեռնափայտի մ'օգնութեամբ հեւ ի հեւ կը հետե-

ւէր Հայրիկի ձիուն։ Նա վազէ վազ եկաւ, մօտեցաւ, աջքերը Հայրիկին ուղղեց և յուզուած ձայնով մը կանչեց.

«— Սրբազան Հայրիկ, եթէ այս երթալդ կամքիդ և ցանկութեանդ հակառակ է նէ, ըսէ ինձ, տես ես ինչ կ'ընեմ...

«— Ի՞նչ պիտի ընես, Վարդապետ, յարեց Հայրիկը ժպիտով մը։

«— Հիմայ երիտասարդութիւնը ոտքի կը հանեմ, արիւն կը թափենք և մեր սիրելի Հայրիկի հեռացումը կը խանգարենք։

«— Չէ, ես իմ կամքովս կ'երթամ, պատասխանեց Հայրիկը և յուզուած, զրգռուած Վարդապետը լռեց։

«Երբ թափօրը Հայկավանքի թաղը հասաւ, դռան մը մօտ պատին տակ կանգնած կուլար ծերուհի Տէր Ստեփան Քահանան, որուն ի տես Հայրիկը ձայն տուաւ.

«— Տէր Ստեփան, կ'երթաս ծանկոյսները մեր ննջեցելոց գերեզմանները կ'օրհնես։

«— Կեանքդ կ'օրհնեմ, Սրբազան Հայրիկ, պատասխանեց քահանան և վազելով եկաւ համբուրեց Հայրիկի աջը։

«Թափօրը հասաւ Քաղաքամէջի Թաւրիզի Դուռը՝ բերդին ըստորոտը, ուր այնքան ժողովուրդ — Հայ և տաճիկ — խռնուած էր, որ Հայրիկի ձին հազիւ կը յառաջանար։

«Հայրիկը Պօղոս Նպիս.ի ընկերակցութեամբ նախ գնաց Վանի կուսակալ Համիտ Փաշային և զինուորական հրամանատար Միւնիր Փաշային հրաժեշտի տեսակցութիւն տուաւ։ Ապա այցելեց Առաջնորդարան, ուր դահլիճին մէջ կը սպասէին ազգային մարմիններու և հիմնարկութեանց ներկայացուցիչները, ռուսաց հիւպատոս Կուլէպեակին և պարսից հիւպատոս Միրզա Մուսա Խանն իրենց թարգմաններով, Կրօնական և Քաղաքական ժողովի անդամները, բազմաթիւ եկեղեցականներ, վաճառականներ, պետական պաշտօնեաններ, թուրք երեւելիներ, և այլն։ Դաւառական ժողովի ատենապետը և ուրիշներ ողջերթի յուզիչ ճառեր արտասանեցին։ Հայրիկը բոլորին ալ իւր սրտագին շնորհակալութիւնը յայտնեց, օրհնեց, յետոյ ինքզ Ս. Նշան եկեղեցին աղօթեց և ճամբայ ելաւ։ Երբ Հայրիկը հարիւրաւոր ձիաւորներով շրջապատուած երեցաւ, բազմահազար ժողովուրդը բուռն ծափերով և որոտընդոստ աղաղակներով „կեցցէ՛ Հայրիկ, կեցցէ՛ մեր Կաթուղիկոս“ կանչեց։

«Վանի բերդի հիւսիսակողմի ստորոտէն մինչև նաւահանգիստ Աւանց գիւղը, մօտ մէկ ժամուայ ճանապարհ երկարող այդ լայն պողոտան և աջ ու ձախ կողմի դաշտերը մարդկային հեղեղով լեցուած էին։ Համաձակ կերպով կրնանք ըսել, որ մօտ քսան հազար ժողովուրդ կ'ուղեկցէը Հայրիկին։ Այդ օրը Վանի նորագոյն պատմութեան մէջ եզակի պիտի մնայ իբրև ժողովրդական սիրոյ, պաշտամունքի և հակայ ցոյցի արտայայտութիւն մը՝ ի պատիւ Խրիմեան Հայրիկի։ Մարդիկ իրար հրելով, կոխկրտելով կ'աշխատէին մօտենալ Հայրիկին և համբուրել անոր աջը։ Ձամբան կը կտրէին, ձիուն սանձը կը բռնէին։ Աղմուկ, ժխոր, լաց, իրարանցում, կեցցէ աղաղակներ և ծափեր իրար խառնուրդ էին ստեղծելով ամբոխային և՛ յուզիչ և՛ ահաւոր տեսարան մը։ Ամենէն աւելի սրտայոյզ էր «Հայրի՛կ, Հայրի՛կ fo Հայրեցիք» երգի եղանակը, որ բարձր ու զիլ կը հնչէր ամբոխի մէջէն և կը մարէր ժխորին մէջ։ Կը յիշեմ նաև թէ ինչպէս ուսուց հիւպատոսի զոյգ պահակները (կավազ) աջ ու ձախ մտրակելով հազիւ նեղ ճամբայ մը կրցան բանալ, որ Հայրիկի ձին յառաջանար։ Ոստիկանները կը վախնային ամբոխէն և կ'երթային հեռուանց, զգուշանալով ժողովուրդի յուզուած տրամադրութենէն։ Վերջապէս երբ արդէն երեկոյ էր, Հայրիկը հասաւ Աւանց գիւղը, պահպանիչ մ'ըսաւ, օրհնեց ժողովուրդը և գնաց Մահտեսի Յարութիւն Աղաւնեանի տունը, ուր մեծ պատրաստութիւն տեսնուած էր Հայրիկը հիւրասիրելու համար։ Արևի վերջին շողերն ընկան ծովի կապոյտ ջուրերուն վրայ, երբ ժողովուրդը տխուր տրտում հեռացաւ Աւանցէն։ Այդ գիշերը սուգի և տրտմութեան լուռ ու խորհրդաւոր գիշեր մը եղաւ Վանի հայերու համար, որուն Մեծ Չաւակը, նոյն ինքն Հայոց Հայրիկը կ'աքսորուէը Վասպուրականի մեր աշխարհէն...»։

Յաջորդ առաւօտ, Աւագ Երեքշաբթի, Մարտ 19-ին, Հայրիկը, Պօղոս Եպիսկոպոսի*) ուղեկցութեամբ և 6 ոստիկաններու հսկողու-

*) Պօղոս Եպիս.ը տեսնելով Խրիմեանի ժողովրդականութիւնն ու ազգանուէր գործունէութիւնը, վերջին տարիներ սկսած էր մասնաւոր սէր և յարգանք տածել Հայրիկի հանդէպ։ Հայրիկն ալ իր կարգին համոզուած էր, որ Պօղոս Եպիս.ի պէս ազդեցիկ և խորագէտ առաջնորդ մը կարևոր ծառայութիւն կը մատուցէը Վասպուրականի Հայութեան։

թեամբ Աւանցէն կ'ուղեւորուի դէպի Լիմ-Անապատ վանքը։ Այստեղ Պօղոս Եպիս.ը Մեծ Աբսորականին ի պատիւ վայելուչ հիւրասիրութիւն մը ցոյց կուտայ և կը տեսնէ, որ Հայրիկը վանքին մէջ Զատիկը տօնելէ յետոյ միայն ճամբայ ելնէ։ Երբ Հայրիկը կ'առարկէ անյարմար է, պետութիւնը դժգոհութիւն պիտի յայտնէ և այլն, Պօղոս Եպիս.ը կը պատասխանէ որ—«Պետութեան պատասխանը ես կուտամ»։ Հայրիկը կը մնայ Լիմ-Անապատը, իսկ ոստիկանները անոր ձին*) հետերնին առած, Արճէշի վրայով կ'երթան Ալջաւազի ծովափնեայ Պարկաճ գիւղը և հոն կը սպասեն։ Հայրիկին կ'ընկերանար նաև իւր Մարխան եղբօր որդին Կարապետ Խրիմեանը։

Զատիկը Լիմ-Անապատի մէջ տօնելէ յետոյ, Մարտի 27-ին Հայրիկը իւր եղբօր որդի Կարապետի հետ վանքի նաւակին մէջ անկիւն մը կը կծկուին և երկու գեղջուկ թիավարներու ընկերակցութեամբ ծովի վրայէն ճամբայ կ'իյնան դէպի Պարկաճ գիւղը, որուն ծովափին վրայ խռնուած էին Հայրիկին դիմաւորութեան եկած հազարաւոր գիւղացիներ։ Բզնունեաց գաւառէն (Ալջավազ) Հայրիկը ճամբայ կ'ելնէր դէպի Բուլանուղ։ Խրիմեանը, որ գիւղին որ մօտենար գիւղացիները եկեղեցական թափօրով, աղուհացով, մատաղով, նաղարա-զուռնայով, երգ ու պարով կ'ընդառաջէին և ճամբու կը դնէին։ Գիւղէ գիւղ գեղջուկ ձիաւորները կը միանային Հայրիկին, որ Մշոյ Դաշտի մէկ մասի Հայ գիւղերն ալ այցելեց և ամենուրեք ժողովրդական խանդավառ ցոյցերու արժանացաւ։ Ժողովուրդը գիտէր, որ Հայրիկը ոխտ կ'երթար և այս իսկ պատճառով աւելի հանդիսաւոր և մեծ ցոյցեր կը կատարուէին ամենուրեք։ Բազմաթիւ գիւղերու մէջ, գեղջուկներու խնդրանքով Հայրիկը քանի մ'օր մնաց և պատճառ դարձաւ գիւղական, ժողովրդական բէֆերու։ Կոփ գիւղաքաղաքի Հայութիւնը խանդավառ ցոյցերով, ձիարշաւով և թափօրով Հայրիկին դիմաւորութեան կ'երթայ։ Եւ այսպէս ամէն տեղ ժողովուրդը անսահման սէր, պաշտամունք և ջերմ ընդունելութիւն ցոյց կուտայ իւր Հայրիկին, որ աքսոր կ'երթար։

---

*) Հայրիկի Քօլոզ անունով սպիտակ ձին Վանի մէջ յայտնի էր։ Հայրիկը Տրապիզոն հասնելէ յետոյ ձին կը յանձնէ Կարապետին, որ կը վերադառնայ Վան։

Հայբիկը քանի՛ քանի՛ պսակներ կատարեց գիւղերու մէջ, նորածիններ մկրտեց, իսկ Աչջավազէն մինչև Տրապիզոն 37 քահանայ ձեռնադրեց։

Նա յատկապէս այս երկար ճամբան ընտրեց, որպէս զի Հայաստանէն ուշ դուրս գար։ Վանէն մինչև Տրապիզոն ճամբան, որ կարելի է 12—15 օրէն երթալ, Հայբիկը 70 օրէն հազիւ կրցաւ կտրել։ Տխուր նախազգացումով մը համակուած նա դժուարութեամբ, ակամայ կը հեռանար Հայոց Աշխարհէն, որուն համար այնքան զոհողութիւններ ըրած էր*)։

Հայբիկը կը հասնէր Կարին, ապա Բաբերդ, Կիւմիւշխանէ և Տրապիզոն՝ ամենուրեք արժանանալով ժողովրդական ցոյցերու և փառաւոր ընդունելութեանց։ Կեդրոնի հրամանով պետութիւնն ալ արժանավայել պատիւներ կ՛ընծայէր Նախկին Պատրիարք Մեծ Աքսորականին։

Հայ գրականութեան վաստակաւոր գործիչ Հ. Սիմոն Երեմեանը (Աստուած) այսպէս կը նկարագրէ Հայբիկի մուտքն ի Տրապիզոն.

«Հին ու նոր գրիչներուն հիացումը, ամբողջ դարու մը հայ սերունդին սրտին պաշտում մ՛ունեցող Հայբիկը՝ առաջին անգամ տեսայ Գետադարձ Պետրոսի Ամենափրկչեան վանքէն անդին Կըլկըլդուրի բովերը, երբ իր ճերմակ ձին քշեց Պոնտոսի մայրաքաղաքին դռնէն ներս. ես փոքրիկ և ընկերներովս Սուրբէնի և Արտաշէսի հետ՝ բարև բռնած կեցանք ու Հայբիկ իր սև ձիրանին մէջ փաթթաթուած, գմեզ ալ բանի տեղ դրաւ, բարևեց, օրհնեց։ Իր ետևէն կուգային զինք դիմաւորող հինգ հազար ձիաւորներու բազմամբոխը։ Վանէն վերջին անգամ կը դառնար. Տրապիզոնցիք զինքը մեծ հանդէսով կ՛ընդունէին, ազգային հոգի մը տուած էին անոր յաղթական մուտքին»**)։

---

*) Հայբիկը դեռ Վանէն աքսորուած չէր, երբ 1884-ի Դեկտեմբերին, Պատրիարքարանը կը ստանար հանրագրութիւն մը ստորագրուած՝ Մշոյ Դաշտի, Բալանուղի, Վարդոյի, Չուխուրի և Խնուսի քահանաներէն և գիւղապետներէն, որոնք կը խնդրէին, որ «Ամեն. Տ. Մկրտիչ Սրբազան Խրիմեան Հայրիկ վանահայր կարգուի Ս.Կարապետի վանուց», սակայն Պատրիարքարանը, կառավարութենէն վախնալով, կը մերժէ յիշեալ խնդիրքը։

**) Ազգային Դէմքեր. Դրագէտ Հայեր. Առաջին շարք. Երկրորդ Տպագրութիւն. Գրեց Հ. Սիմէոն Երեմեան. Վենետիկ. Տպարան Ս. Ղազար. 1920. էջ՝ 308։

Ցրապիզոնէն Հայրիկը շոգենաւ կը նստէը, 12-րդ անգամ ըլլալով կը չափէը Սև ծովը և կ'ուղեորուէը դէպի Կ. Պոլիս՝ իւր սեմսրավայրը։

* * *

Ամառային լուռ ու խաղաղ լուսնակ գիշեր մըն է. Սարիճ քամին կը փչէ Վարագայ սարէն, ծովիճ քամին կը փչէ Վանայ ծովէն. Սարն ու ծովը՝ իրար խառնած հովն ու զովը՝ կարծես անուշ ու ներդաշնակ օրօր կ'երգեն և կը շոյեն կատարները Այգեստանի ծառերուն, որոնց անուշ ու մեղմիկ հովածածան տերևները կը ծփան լուսնի արծաթ շողերուն տակ. Աղբիւրներու և առուներու կկլոցն ու քչքչոցը կը խառնուին ծառերու սոսափիւնին և այսպիսով կը ստեղծուի բնութեան գեղահիւս ու ներդաշնակ երաժշտութիւն մը։

Գիշերային այս խորհուրդ խռովին պահուն, յանկարծ, հեռուէ հեռու, այգիներու մէջէն կը լսուի անուշ ու յուզիչ եղանակ մը, որ կը հիւսէ Մեծ Սխտրակաճին ձօնուած երգը.

Նկել է գարուն, սոխակը սիրուն
Վարդի թըփի տակ, Հայրիկ ջան
Գ'երգէ Հայրենիք։

Ծիծիռնակ, բաղէն, թռչունք համօրէն,
Քաշում են միշտ մխ, Հայրիկ ջան
Օտարաց երկրէն։

Գուռնիկ մեր պանդուխտ, իր բարձր
եթերքով,
Փութա ձայն տալ մեզ, Հայրիկ ջան
Հայրենեաց սիրով։

Արծիւն Հայրիկ հայրենակարօտ՝
Հեռանում է արդ, Հայրիկ ջան
Դէպի Մուշ Տարօն։

Վասպուրականի երիտասարդները
Եւ օրիորդները, Հայրիկ ջան
Հազան սև լաթեր։

Լաց ու արտմուտքամբ մոռցան
Ծաղկազարդ,
Ինչպէս որ սոխակ՝ Հայրիկ ջան
Իւր սիրելի վարդ։

—Հայրիկ, ճհ Հայրիկ, ուր այդպէս
արագ.
—Գնամ հրաժեշտ տալ՝ Հայրիկ ջան
Եւ վերջին կտակ։

Նորաշէն, Արարք, Ճանկոյս Ձորոյ վանք,
Ուր կան ժողովուած, Հայրիկ ջան
Ծղայ, մարդ, կանայք։

Իսկ երկուշաբթին, որ օրն էր աւագ,
Ի Սուրբ Ցակօբէն, Հայրիկ ջան
Ցուն դառնաբ արագ։

Վերջին տեսութիւն, վերջին վառ կարօտ՝
Չը կրցաւ երբէք, Հայրիկ ջան
Ցալ ոչ մէկին մօտ։

Հրաժարական քարոզըդ տուիր
Խեղճուկ օրտիրնուս, Հայրիկ ջան
Կրակ վառեցիր։

Մի ջինջ արցունք աչքերէն վազեց
Չը կարաց ժուժել, Հայրիկ ջան
Ցեղէն վեր կայնեց։

Լոկ մի բան ասաց, խօսք մի հայրական,
Ա՛խ կաբծես Հայրիկ, Հայրիկ ջան
Մեռած է կուլան։

Լալական խումբեր, ո՛հ առին տարան
Հայրենի քաղաք, Հայրիկ ջան
Առաջնորդարան։

Փակեալ կրպակները կաբծես սուգ առած,
Աւաղ կաբդացին Հայրիկ ջան
Արծուին Հայրենեաց,
Թռաւ, ոլացաւ մեր երկրէն ի բաց։

Չէ, այլ չէ տեսնում սիրուն Հայրենիք,
Հայրենի փառքին, Հայրիկ ջան
Կարօտ մեր Հայրիկ։

Մեր սիրան ու հոգին դու մորմոքեցիր,
Քաղցր ու անուշիկ, Հայրիկ ջան
Թողիր գնացիր։

Վաստրի ափեր, գիտեմ չես սիրում,
Վարագայ վանքիդ, Հայրիկ ջան
Կարօտն ես քաշում։

Ուր որ ալ լինիս, ուր որ ալ երթաս,
Քու փայլուն Ջահէդ, Հայրիկ ջան
Հայուն լոյս կուտաս։

Մեր սիրան ու հոգին քո հոգւոյն
դուրպան,
Հրեշտակ Հայ ազգին, Հայրիկ ջան
Դարձիր Հայաստան*)։

Ժողովրդական անկեղծ սիրոյ և պաշտամունքի չերմ արտայայտութիւն մըն էր այս երգը, որ առաջին անգամ, 1885-ի ամբան կը հնչէր Վանի Այգեստանէն և ապա կը տարածուէր ամբողջ Հայութեան մէջ. Մեծ Ակսորական Հայրիկը երբ Կ. Պոլսոյ մէջ կը լսէր այս երգը բարձրաձայն կուլար և կը բացականչէր.

—Ա՛խ... այո՛, ճշմարիտ կ'ըսէք—Չէ՛, այլ չէ տեսնում սիրուն Հայրենիք, հայրենի փառքին կարօտ մեր Հայրիկ....

Թ.

## ԱՔՍՈՐԱԿԱՆ ՀԱՅՐԻԿՆ Ի Կ. ՊՈԼԻՍ

Երկու կէս ամիսներու (18 Մարտ—4 Յունիս) երկար ճամբորդութենէ մը յետոյ, Խրիմեանը կը ժամանէր Կ. Պոլիս։ «Մասիս» շաբաթաթերթը (1885, Յունիս 6, Թիւ՝ 3764) այս մասին հետևեալ մանրամասնութիւնները կը հաղորդէ.

«Ամեն. Խրիմեան Հայրիկ մայրաքաղաքս հասաւ երկուշաբթի (4 Յունիս) առաւօտ Մախսուսէի Սելանիկ շոգենաւով։

*) Այս ժողովրդական երգի հեղինակն է Վարագայ «Ծառանգաւորաց Վարժարան»ի ուսուցիչներէն Կարապետ Պալգեանը։ Երգի տուներու երկրորդ տողերուն մէջ շաղատառով շարուած «Հայրիկ ջան»երը եղանակին իբր լրացուցիչ մաս կը կազմեն։

«Թէպէտ Կիրակի առաւօտ իբր 300 գաւառացի և պոլսեցի ազգայինք յատուկ շոգենաւով Գավագ երթալով մինչև երեկոյ ըսպասած էին Ն. Սրբազնութիւնը դիմաւորելու համար, սակայն մինչև ժամ 12 Սելանիկ չերևնալով, ետ դարձած էին. Յաջորդ առաւօտուն ժամ 11-ին Սելանիկ շոգենաւն Անատոլու Գավագ հասաւ և Պէօյիւքտէրէ սպասող պատուիրակը վեց նաւակով ու մակոյկով դիմաւորեցին զՆ. Սրբազնութիւն և Պէօյիւքտէրէ տարին ուր Էգնայեանց տունն էջաւ։ Քանի մը հարիւր ազգայինք կը սպասէին անդ ի տես սիրելի Հայրիկին. Ն. Սրբազնութիւնը Պէօյիւքտէրէի մէջ քիչ մը հանգստանալէ յետոյ շոգեմակոյկով Գուզկունճուք անցաւ առաջնորդութեամբ 60-ի չափ հրաւիրակաց. Մեծ հանդէսով ընդառաջ ելան եկեղեցական և աշխարհական ազգայինք և խումն բազմութիւն որք տարին զՊ. Հայրիկն յեկեղեցի ուր խօսեցաւ ժողովրդեան, յիշեցնելով թէ 12-րդ անգամն է որ կը չափէր զՊԼև ծով, հերքելով իւր վրայ տարածուած զրոյցներ։ Ապա մաղթանքներ ըրաւ Վեհափառ Սուլթանին կենաց համար։ Ի վերջոյ ծանոյց թէ, Կիրակի օր երկարօրէն պիտի խօսի եկեղեցւոյն մէջ և քարոզի հրաւիրեց ներկայ բազմութիւնը»։

Պատրիարքարանը Գուզկունճուքի եկեղեցւոյ բակին մէջ պարզ ու համեստ սենեակ մը յատկացուց Մեծ Աքսորականին։

Հայրիկը կ. Պոլիս հասնելէ յետոյ, պաշտօնական այցելութիւնները չը տուաւ։ Նա մէն-մենակ յաճախ կ'այցելէր իւր հին բարեկամներու տունները և կը մեծաթուէր։ Իրիկունները կ'երթար այս ու այն խանը և գաւառացի պանդուխտներով շրջապատուած ժամանակ կ'անցունէր։ Որքան պարզ և սրտայոյզ էին այդ ժամանցները։ Վիթխարի ծերունին ծալապատիկ նստած է խոնարհ սենեակին վերը, կռնակը խփեր է պատին, համրիչ կը քաշէ ու կը ծխէ։ Անոր աչ ու ձախը, հասակի կարգով շարուած են գաւառացիները։ Հին յուշեր կը պատմեն, ուրիշ հարցերու մասին կը զրուցեն, հայրենիքէն՝ իրենց տուներէն ստացած նամակները կը կարդան, Հայկական Հարցի եւ Հայոց ազատութեան մասին կարծիքներ կը յայտնեն, ի վերջոյ թեթև ընթրիք մը կ'ընեն, կեռնաց կը խմեն, ուրախ և տխուր երգեր կ'երգեն, կը կատակեն հայլն։ կէս գիշեր է. Հայրիկը սաքի կ'ելլէ երթալու։ Բոլորն ալ կ'ընկերա-

նան իրեն, կը հասցնեն Գուզկունճուք ու կ'երթան իրենց տեղերը։

Հայրիկը առանձին է աքսորականի իր կացարանին մէջ, որ լուսաւորուած է մեղրամոմի աղօտ ու պլպլուն լոյսով։ Նա մէկերկու գլուխ Նարեկ կը կարդայ, ծնկաչոք, ձեռամբարձ կ'աղօթէ, ցած ձայնով շարական մը կ'երգէ ու կը հանգչի։

Լուսաբաց է։ Ժամին զանգերը կը զրնգան։ Մեծ Աքսորականը եկեղեցին կ'երթայ և ապա իր սենեակը վերադառնալով նամակները, անվերջ նամակները կը գրէ։ Կարդացէք այդ նամակները, որոնց մէջ դուք չը պիտի գտնէք բառ մը ու տող մը, որ Հայրիկը իր անձնական շահի կամ գործի մասին գրած ըլլայ։ Այդ նամակները ազգի, հայրենիքի, գրականութեան և դպրոցի սիրոյ, տնտեսութեան, բարեգործութեան, համերաշխութեան գաղափարներու և նման հարցերու շուրջ գրուած են։ Ամէն փոստին նա տասնեակ նամակներ կը գրէ և կը ստանայ։ Նամակագրութիւնը անոր սիրած զբաղումներէն մէկը եղած է։

Կ. Պոլիս նստած նա վարագը կը յիշէ, իր Արծուաբոյնի բարօրութեան և տնտեսութեան մասին կը մտածէ և հեռուէ հեռու հրահանգ ու խորհուրդ կուտայ։ Հետևեալ անտիպ նամակները*) ապացոյց են բսածիս։

1885 Դեկտ. 11 Կ. Պոլիս

*Աձձռեռերդ իմ Պետրոս*

*Առի քո ձամակը որ լի եռ զեղուն զգացմամբ գրած էք.. կարդացի եռ խոր զգացի, հոգի՛ս։ Փոտո***) յիշեր ես, ա՛հ այդ կատուն եռս ձիրս***) մը չաւի ազդեցութիւն արաց վրաս. երկուք եռս ձեր խնամոց յանձնուած ես։

*) Այս անտիպ նամակներու բնագիրները 1916-ի Յուլիսին ինձ նուիրեց Վարագայ Ծերունազարդ Գարոն Պետրոսը։ Այս երկու նամակներն ալ գրուած են Թուղթի մէկ երեսի վրայ՝ կապոյտ թանաքով։

**) Հայրիկի կատուն—բրդոտ, թաւ մազերով և կապոյտ աչքերով՝ Վանի նշանաւոր կատուներէն։ ***) Կը պատմեն, որ Հայրիկի հեռանալէն յետոյ անոր սպիտակ Քօլօզ ձին երկար ատեն խոտ չը կերաւ, օրն ի բուն խրխինջաց և կամաց կամաց հիւծուելէ յետոյ սատկեցաւ։

Ծրկրագործութեան համար շատ բաներ ուզեր ես, քանի մը մասեր Թադէոս վրդ.*) բերաւ իր հետ. Մանացորդն գարնան ողջ մնալդ կը դրկենք. Հնձելու գործիք չատ տեղ դրեք ու պահպանեցէք. Եթէ յաջողութիւն գտայ աւելր մի փոքր տեսակ պիտի առնեմ:

Քեզ ձայիմ, որ վերին ախոռ**) չատ կերպով կարգադրեք. ես հրահանգ պիտի տամ որ ձեր գործին ուրիշներ չը խառնուին, պետք է ազատ կերպով գործեք եւ չատ խորհուրդներ ընդունիք.

Վարագայ Ս. Տաճարին մէջ աճշուշտ կ'ապօթեք հայրիկին համար, մեծ է Աստուած, հայրիկ չուտով կը վերադառնայ:

Բարեւներս տուր բոլոր միաբանից եւ դպրոցի աշակերտաց եւ հաւատր մշտնջ.

Աղօթարար՝

Մեծարոյ Պարոն Պետրոս Երիմեան Հայրիկ

Անձնուէր մշակ Վարագայ վանուց

---

Կ. Պոլիս 1886 Մայիս 13

Մեծարոյ Պարոն Պետրոս

Անձնուէր մշակ Վարագայ վանուց

Թո՛ղ տուր այժմ որ ես մտածեմ քեզ համար, իսկ դուն Վարագայ համար մտածէ, այո՛ մտածէ՛ որ հրահանգներս ճշտութեամբ ի գործ դնէք: Մտածէ՛ որ երկրագործութեան մէջ նոր կերպեր ի գործ դնես, մտածէ՛ որ քիչ ցանես եւ շատ արդիւնք քաղես. Մտածէ՛ խուտ մշակութիւնը ընդարձակես.

---

*) Լիմ-Անապատի միաբան, որ քանիցս վարած է Վանի հայոց առաջնորդական փոխանորդութիւնը:

**) Վարագայ անտառին նեղքն, մեծ լճակին մօտիկ չինուած տեղը:

*Մտածէ՛ որ երկրագործութեան ծախսերը իր արդիւնքեն հոգաս, ինչպէս շատ անգամ բերովդ քարոզեցի, սիրով գրեցի եւ անոյշ դարձեալ կը գրեմ։*

*Երկրագործութեան մասն իսպառ պէտք է որոշուի վաճուց գրադմունքեն։ Քո ամեն աշխատութիւն պէտք է այս չիմի եւ ուրիշ բան մի՛ հոգար։*

*Մօրուքդ պատրաստէ որ հանդերձանոցն ազատ քահանայ չիմիս Վարագայ հասնելդ թեմարուն։*

*Աղօթարար՝*

*Հայրիկ*

Կիրակի օր մը — 1886-ի գարնան — Հայրիկը կը հրաւիրուի Կ. Պոլսոյ Քուրու-Չէշմէ (չor աղբիւր) կոչուած արուարձանի հայոց եկեղեցին քարոզելու. Կը բարձրանայ սեղանը, աչքերը ժողովուրդին կ'ուղղէ, պահ մը լուռ կը կենայ և յանկարծ, յուզուած ղողդողուն ձայնով մը կը բացականչէ.

—Սիրելի ժողովուրդ Հայոց, Թողինք Հայաստանի—վասպուրականի, Տարօնի—սառնորակ և առատաջուր աղբիւրները և եկանք սա Քուրու-Չէշմէին քարոզիչ դարձանք...:

Եւ ազգասիրութեան ու հայրենասիրութեան գերագոյն զգացումներով օծուն իւր քարոզը կը շարունակէ, հիացում պատճառելով ժողովուրդին.

Ոտիկանութիւնը քայլ առ քայլ կը հետևէր Մեծ Աբսորականի կեանքին— ուր կ'երթար, որոնց հետ կը տեսնուէր, ովքեր էին իւր մտերիմները և այլն: Կը պատմեն, որ օր մը Հայրիկը իւր մէկ բարեկամին հետ Գուզկունճուքի եկեղեցւոյ բակէն դուրս գալով փողոցը, կը տեսնէ, որ Հայ լրտես մը ուշի ուշով իրենց ետևէն կուգայ։ Դիտմամբ կը կենայ, իսկ լրտեսը՝ իրը թէ անտարբեր, երբ կը մօտենայ՝ Հայրիկը ժպտալով կ'ըսէ.

—Տղա՛, դուն զուր տեղ կը լրտեսես թէ Հայրիկ ուր կ'երթայ, գնա ըսէ, որ գնաց Կիւլպէնկեանց գրասենեակ քանի մ'աղքատաց համար դրամ խնդրելու։

Լրտեսը զոյնը կը թողնէ, կը շփոթուի և առանց բառ մ'ըսելու կ'անհետանայ և այնուհետև ալ չ'երևար։

Պետութիւնը Երիմեանի հանդէպ, արտաքնապէս ունէ տգեղ վերաբերմունք ցոյց չը տուաւ, այլ ընդհակառակն յարգանք և պատիւ, որոնք հարկաւ տաճկական նենգամիտ դիւանագիտութենէն կը բղխէին։ Իբրև Նախկին Պատրիարք, Երիմեանը պետութենէն 20 ոսկի ամսական կը ստանար։

Հայրիկը 1886-ի Յունիսին Կրօնական ժողովի Ատենապետ ընտրուեցաւ։ Այս Թուրքիոյ Հայոց Պատրիարքն էր Ցառութիւն Արեպ. Վեհապետեանը, որուն մտերիմ և խորհրդական դարձաւ Երիմեանը։ Նա անպաշտօն կերպով կը մասնակցէր նաև Իզմիրեանցի Սահակ-Մեսրոպեան Մրցանակաբաշխութեան Ընդհանուր ժողովի նիստերուն։ Վրթանէս Փափազեանը այս Ընդհանուր ժողովին կը ներկայացնէ իր գրած «Պատմութիւն Պարսկահայոց. 1600—1880» անտիպ աշխատութիւնը, որ կը յանձնուի Կ. Պոլսոյ մէջ ապրող Նոր-Ջուղայեցի Թորոսին (Վարդապետ Աստուածատրեանի), ի քննութիւն։

Բնականը կ'եզրակացնէ, որ Վրթ. Փափազեանի «Պատմութիւն Պարսկահայոց չեմ կարող գիտութեան կամ հնախուզութեան մեծ արդիւնք համարել, քանզի ցարդ երևցած պարսկահայոց պատմութեանց ոչ կատարելագոյն կրնայ սեպուիլ այդ երկը ոչ ևս հեղինակն պատմական մի նոր կէտ երևան կը հանէ կամ կը լուսաբանէ»։ Այս եզրակացութիւնը լսելէ յետոյ Ընդհանուր ժողովը կ'որոշէ Վրթ. Փափազեանի երկը չը վարձատրել։ Երիմեանը այս որոշման հիման վրայ ցաւ կը զգայ, և զգացումով տարուած հետևեալը կ'ըսէ.

—Անտաւասիկ մէջտեղը դրամ կայ, քաջալերութիւն պիտի տրուի և սակայն դիտէք թէ որքան քիչ են անոնք, որ բան մը ներկայացնելու համարձակութիւն կ'ունենան։ Մեղք էր, այդ տղան (Վրթանէս) ալ այդքան աշխատութեան գէթ վարձատութիւն մը, փոքրիկ բան մ'ալ ինք առնէր։ Ուզնեը է, աշխատեր է, աչքի լոյս թափեր է, ինչու բոլորովին անտես առնել զինքը։ Սա ալ կայ որ տեղագրական նիւթերը, պատմական զրուցիւններները միշտ նոր բաներ չեն, ասոր համար ինչ կ'ըլլար պզտիկ բան մ'ալ ան տղուն

տայիք. ես կարծիք մ'էր որ յայտնեցի*)։

Հայրիկը 1888-ի Մայիսին ստանձնեց Դուզկունճուքի եկեղեցւոյ քարոզչութիւնը։ Ամէն Կիրակի խուռներամ ժողովուրդ—մանաւանդ գաւառացիները—կը փութային այնտեղ անոր քարոզները լսելու համար։ Հնչակեան Կուսակցութեան Կ. Պոլսոյ գործիչներէն Մուրաս (Համբարձում Պօյաճեան), Կայծիկ (Յարութիւն Ճանկիւլեան) և ուրիշներ Դուզկունճուք կուգային յաճախ և իրենց յեղափոխական ծրագիրներու, գործերու մասին զեկուցում կուտային Հայրիկին, որ կ'ուրախանար, կ'ոգևորուէր և կը քաջալերէր անոնց ձեռնարկները։

Րաֆֆիի մահը (1888 Ապրիլ 25) լսելէ յետոյ, Հայրիկը խումբ մը գաւառացի երիտասարտներուն ըսած էր.

—Ափսոս Րաֆֆին... Աղթամարի քարաժայռին վրայ նստած «Ձայն տուր ով ծովակ»ը երգեց և երազեց «Տեսնել Մասիսի գլխին մի դրօշակ»։ Խեճ-Վարդանի երազը Հայոց ազգի բարօրութեան և հայրենիքի ազատութեան վսեմագոյն գաղափարն է, որ Րաֆֆին արձանացուց իւր գրիչով։ Անոր գրիչը ազատատենչ յեղափոխականի մը սուրին չափ զօրաւոր եղաւ և Հայոց հրիտասարդութիւնը ոտքի հանեց։ Անոր կորուստը ծանր է ազգին համար։ Րաֆֆին մեր «Արծուի Վասպուրական» թերթին աշատակից և գործակալը եղաւ երբեմն և շատ հաւնեցաւ մեր ընդգրկած գործունէութեան։ Անիկա Արծուաբոյն վարագին շատ բան պարտական է և միշտ ալ այդ մասին երախտագիտական նամակներ կը գրէր մեզ։ Այսօր ոչ ևս է Րաֆֆին, բայց անոր ազգաշունչ վէպերը մեր հրիտասարդութեան հիացմունքին առարկայ պիտի դառնան ընդմիշտ։ Սամուէլ, Դաւիթ Բէկ, Խենթ, Ասլան, Կարօ և դեռ շատեր անոր հերոսներէն՝ մէկ մէկ տիպար դէմքեր են, որոնք կը մարմնացնեն Ազգի և Հայրենեաց ազատութեան գաղափարը**)։

---

*) «Արեւելեան Մամուլ». Իզմիր. 1888. էջ 369—370։

**) Այս խօսքերը կը մէջբերեմ հանգուցեալ Պօղոս Նաթանեանէ (եղբայր Մարկոս Նաթանեանի) Հայոց Հայրիկի մասին գրած յուշերէն։ Վանի հայոց վաղեմի դաստիարակներէն Պօղոս Նաթանեանը 1917-ի Նոյեմբերին իմ խնդրանքով գրեց իւր յուշերը և նուիրեց ինձ։

Մարկոս Նաթանեանը կը պատմէ, որ— «Հայրիկը օր մը Ն. Պոլիս, Դուզկունճուք թաղի եկեղեցիին մէջ պատարագ կ'ընէր և ըստ սովորութեան անհուն բազմութիւն մը ներկայ էր, որով ժամոցի նուէրներէն 70 ոսկի (մօտ 350 տոլար) գոյացած էր։ Պատարագի աւարտումէն ետքը, երբ թաղական խորհրդարանը ելաւ, բազմաթիւ թշուառ և աղքատ Հայաստանցի պանդուխներ վրան խրոնուեցան և դրամ խնդրեցին. Հայրիկը ամէնուն ալ մէյ մէկ գումար անհաշիւ տուաւ ու ճամբեց սիրով։ Երբ ամէնքը գոհ մեկնեցան, ինքը տեսաւ որ քովը շոգենաւին տալու դրամ անգամ չէ մնացեր. վանքի ժամկոչէն երեք մէճիտ փոխ առաւ ու այնպէս գնաց շոգենաւը, Պոլսոյ կողմը անցնելու համար։

«Հայրիկի անճահասիրութեան այսպիսի բազմաթիւ օրինակներ կրնան յիշուիլ, եթէ կարելի ըլլայ թուել զանոնք։ Հայրիկը ազգին դրամները իրեն և իր դրամը ազգին կը համարէր. և այս պատճառով երբէք դրամ չ'ունէր և երբէք ալ առանց դրամի չէր մնար։ Հայրիկի անհուն և աննախընթաց ժողովրդականութեան և անսահման սիրելութեան գլխաւոր պատճառներէն մէկն ալ անոր անշահասիրութիւնն էր»։

Գէորգ Արքեպ. Արսլանեանը, իր պատանեկան կեանքի յուշերէն առնելով, մանրամասն կերպով կը նկարագրէ Ն. Պոլսոյ Ս. Փրկիչ Ազգային Հիւանդանոցի տարեդարձի հանդէսը (1886 Մայիս) և կը պատմէ հետեւեալ սիրուն միջադէպը.

«...Երգերու շարքը, ուրախութիւններու շարունակութիւնը չափ չ'ունէին։ Վեհապետեան (Պատրիարք) իր յաղթական կազմուածքով ու իրեն յատուկ պատկառոտ կեցուածքովը, խիստ ու խոժոռ դէմքովն և խրխոտ նայուածքովը ազդող ու տպաւորող, Հայրիկը՝ քովը բազմած, նոյնպէս յաղթ իրանով բայց անոյշ դէմքով և ընտանի նայուածքովը և պարզ ու անաչեխութեամբ քնաւորութիւնովը ամենուն մօտիկ, ամենուն սիրելի հայրիկն եղած, ամենուն աչքը անոր, ամենուն բաղձանքն է անոր աչքը առնել։

«...Այս պահուս պնակն է (հանգանակութեան) որ կը ներկայանայ հանդիսականներուն ու զոյն շրջագայեցնողը չոլ մըն է, ու Օրթագեան Պատրիարք Հօր առջին է։ Վեհապետեան անմիջապէս դրպանէն դեղին ոսկի մը կը սահեցնէ պնակին մէջ։

«Կարգը Խրիմեանին կուգայ, այնչափ դիւրահաղորդ այս դէմքին համակրելէ, այնչափ մատչելի ու միշտ ընտանի մեծին ու փոքրին։ Ի զուր կը ճգնի, պարապ քսակն ու գրպանները կ'որոնէ մամոնայի կտոր մը գտնելու, և յուսահատ՝

«— Ծօ, տղայ, Հայրկան քսակ երբ լիքն է եղեր, կ'ըսէ։

«Ու դառնալով Վեհապետեանին, այնչափ պարզ ու բնական եղանակով ու ձայնով մը՝

«— Արթին աղբար, ոսկի մըն ալ իմ տեղս ձգէ։

«Սրբազանը՝ յօնքերը պռստած, խոժոռ դէմք մը և անհաճոյ երևոյթ մը դեռ չառած, ստիպեալ գեղին ոսկի մըն ալ Հայրկան տեղը կը ձգէ։ Ժմդիծաղ մը մեծերուն ու խնդուք մը պատանիներուս այտերուն»*)։

Գետուեենէն իբր ամսական ստացած իւր 20 ոսկին Խրիմեանը մաս մը կը բաժնէր աղքատներուն, մաս մը կը դրկէր Վարագայ վանքին և կամ այլ կրթական ու բարեգործական հաստատութեանց։

Իսկ ինքը գրեթէ դէրվիշի նման պարզ կեանք մը կը վարէր Կ. Պոլսոյ մէջ, ուր յաճախ ճաշի կը հրաւիրուէր թէ հարուստներու տուները և թէ պանդուխտներու խրճիթները։ Առանց խտիր դնելու նա կ'երթար և իւր ներկայութեամբ մեծ հաճոյք կը պատճառէր սեղանակիցներուն։

Ինովք Ֆէր Արիստակէսեանը աքսորական Հայրիկի կեանքը այսպէս կը նկարագրէ։

«Վանէն առևտրական գործով, 1888-ի աշնան Կ. Պոլիս գացի։ Առաջին առթիւ այցելեցի մեր Մեծ Աքսորականին, որուն հանդէպ Պոլսոյ հայերը շատ խոր յարգանք և սէր կը տածէին։ Գուզկունճուքի հայոց եկեղեցւոյ քարոզիչն էր։ Պիրակի օրեր պատարագէն յետոյ, երբ ժամէն դուրս կուգար, հարիւրաւոր գաւառացի պանդուխտները վրան կը թափուէին և ամէն մէկը իւր անձնական և ընտանեկան հոգսերն ու վիշտերը կը նկարագրէր, օգնութիւն, ճար ու դարման կը խնդրէր Հայրիկէն։ Նա տաւօրինակ համբերութեամբ, ուշադիր և կարեկից կերպով կը լսէր այդ անվերջ և տրտմաշուք պատմութիւնները և իւրաքանչիւրին յարմար, գոհա-

*) «Հայ Խօսնակ». Կիւամսեայ Հանդէս. Դ. Տարի. Գ. Պոլիս 1927. էջ՝ 166։

ցուցիչ պատասխան մը տալով ճամբու կը դնէր։— „Վաղ առաւօտեան Կիւլպէնկեանց գրասենեակն արի, բան մը կ'ընենք“։ „Ա՛ռ այս երկու մէճիտ ծախքերդ հոգայ“։ „Ես Էսայեանց տուն պիտի երթամ և խնդրեմ որ քեզ գործ մը տան“։ „Զաքմաքճըլար կը սպասես կուգամ միասին կ'երթանք“ և այլն նման խօսքեր։

«Օր մը Հայրիկի մօտն էի, երբ ներս մտաւ տարիքաւոր մշեցի Հայ մը և լալով ըսաւ— „Հայրիկ ջան, դուրպան քրզի, երկրէն էկանք, ճժերսի հիւանդ են, անօթի, փարա չը կայ, գործ չը կայ, ցուրտ ձմեռ է, վառելիք չըկայ, անկողին չը կայ։ Հայրիկ... մէկ ճար էրա, հոգուդ դուրպան Հայրիկ ջան...“։

«Հայրիկը նախ տոմսակ մը գրեց Ազգ. Հիւանդանոցի իւր մէկ ծանօթ բժշկին, որ այդ ընտանիքի հիւանդ անդամները ընդունէն և բժշկեն, յետոյ պրպտեց իւր գրպանները և մէկ մէճիտ գտնելով տուաւ այդ մարդուն, ապա ըսաւ— „Ծոքթոր Թորգոմեաններց տունէն ինձ երկու հատ վերմակ ղրկած են, մէկը այս պանդուխտին տամ. անոնց մէկ վերմակնին թող պակաս ըլլայ“։ Այս ըսելով իւր մահճակալի վրայ փռուած վերմակներէն մէկը տուաւ մշեցուն ըսելով— „Վաղը կէսօրէն առաջ եկուր Ղալաթիա, Էսայեանց գրասենեակը, թերևս քեզ համար քիչ մը խարջլըղ կամ գործ մը գտնեմ“։

«Ճաշի ժամանակ էր։ Ժամկոչը սեղանը դրաւ. քիչ մը հաց, կտոր մը պանիր և ամանով մըն ալ թանապուր բերաւ։ Սկսած էինք ճաշել երբ սենեակին դուռը ճռաց և 20—22 տարեկան երիտասարդ մը, մաքուր հագուած, ներս մտաւ և լուռ ու շփոթուած՝ մեզ կը դիտէր։

«—Ի՞նչ կ'ուզես տղաս, հարցուց Հայրիկը, անուշ ձայնով մը։

«—Կը փափաքէի տեսնել Հայոց Հայրիկը և Ս. Այը համբուրել։

«—Որտեղացի ես, ինչու կ'ուզես տեսնել Հայրիկը։

«—Խարբերդցի եմ, Հայ-Կաթոլիկ, աւարտած եմ տեղւոյն Փէռերու դպրոցը, այժմ եկած եմ Վիեննա՝ Մխիթարեան մայրավանքը երթալու ուսումս շարունակելու համար։ Ես կարդացեր եմ Հայրիկի գիրքերը, հիացած եմ անոր պարզ և անուշ գրիչով։

«Հայրիկը գլխահակ կը լսէր այս խօսքերը և կը ժպտար։— Ես տեղէս վեր կեցայ և երիտասարդին ձեռքը բռնեցի ըսելով.

«— Աբի, մտեցիր և համբուրէ Հայրիկի ս. աչը. ահա նոյն ինքն՝ Հայոց Հայրիկը։

«Երիտասարդը զարմացած, հիացած մտեցաւ և համբուրեց Հայրիկի աչը և քանի մը գրքեր նուէր ստանալով՝ ուրախ զբուաբթ հեռացաւ։

«Հայրիկը երբ Զաքմաքճըլար Եօքուշէն կամ Մահմուդ Փաշայէն կը բարձրանար Պատրիարքարանը երթալու, Շատախի շալէն կարուած իւր վերարկուի քղանցքը ձախ թևին տակ կը զարնէր, իսկ աջ ձեռքով ալ հովանոցը բռնած՝ ծանր ու միաչափ կը քալէր՝ իւր անուշ և պատկառելի նայուածքը հեռուներն ուղղած։

«Կ. Պոլսոյ Կարաքէօմրիւկ թաղի եկեղեցւոյ ուխտագնացութեան օրն էր։ Հայրիկը հոն հրաւիրուած էր քարոզելու. Բազմահազար ժողովուրդ ուխտի եկած էր։ Հայրիկը բնաբան ունենալով պարտ եւ իրաւունք, շատ գեղեցիկ ու պարզ ոճով մը քարոզեց.

«Ուր որ պարտք է հոն կայ և իրաւունքը, ուր որ իրաւունք է հոն կայ և պարտքը։ Ամէնքդ ալ ուժգին և հզօր կերպով պահանջեցէք ձեր իրաւունքները և կատարեցէք ձեր պարտքերը։ Հայը հլու և հնազանդ կը կատարէ իւր պարտքերը, իսկ իւր արդար իրաւունքէն միշտ զրկուած է և զրկուած պիտի մնայ քանի որ տիրող պետերը չեն յարգեր արդարութիւնը։ Ամէն գաւառներու մէջ տանջուած, չարչարուած, հարստահարուած Հայը միշտ իրաւազուրկ և միշտ պարտականացած մնացեր է։ Այս անտանելի վիճակէն դուրս գալու համար չեմ ըսեր զէնք առէք և պետութեան դէմ ըմբոստացէք, բայց կ'ըսեմ պետութենէն ինքնապաշտպանութեան իրաւունք պահանջեցէք։ Չեմ ըսեր վեր կացէք Հայոց թագաւորութիւն պահանջեցէք, բայց կ'ըսեմ ձեր թագաւորէն պահանջեցէք արդարադատութիւն, հաւասարութիւն, վասնզի թագաւորի պարտքն է իւր հպատակ ազգաց վրայ — առանց ցեղի և կրօնի խտրութեան — հաւասար աչքով նայիլ։ Երէք մի հպատակ ազգին ձեռք տուր և հրացան տրուի, հարստահարելու և բռնաբարելու իրաւունք շնորհուի, իսկ միւս հպատակ ազգին ձեռքէն դանակն անգամ խլուի և անոր ինքնապաշտպանութեան իրաւունքը ատնահարուի, այն ատեն հպատակ ազգաց պարտքի և իրաւունքի փոխադարձ յարաբերութիւնները կը կորսնցնեն իրենց համազօրութիւնը։ Ա՛խ... հազար ախ... Հայը

իւր պարտքերը լրիւ կը կատարէ և ատոր համար ալ միշտ զրկուած է իւր իրաւունքներէն.

«Ուրեմն, ժողովուրդ Հայոց, մեր արդարացի պահանջը պիտի ըլլայ ինքնավարութեան արդար իրաւունքը եւ օրէնքի ճաւասարութիւն, առանց որոյ խաղաղութիւն չը պիտի թագաւորէ այս երկրին մէջ, ուր մէկը կը հարստահարէ անարգել և միւսը կը հարստահարուի շարունակ։ Եւ այս պարագային, երբ իրաւունքը կը բացակայէ յառաջ կուգայ պարտազանցութիւն... ըմբոստութի՛ւն... յեղափոխութի՛ւն...».

Հնչակեան կուսակցութեան հիմնադիրներէն Ռուբէն Խան-Ազատը 1889-ին, յեղափոխական-կազմակերպական գործերով կ'երթայ Կ. Պոլիս։ Խան-Ազատը կ'ուզէր տեսնել Հայրիկը, որուն հետ հնչակեաններու Կ. Պոլսոյ կազմակերպութիւնը շատ մօտիկ յարաբերութիւն ունէր և յաճախ անոր կարծիքներուն ու խորհուրդներուն կը դիմէր*)։ Հայրիկը ծանօթ էր հնչակեաններու ներքին, կուսակցական գաղտնիքներուն։ Շատ անգամ յեղափոխական գործիչները գաղտնի կերպով Հայրիկի մօտ կ'երթային և իրենց ծրագիրներու, ընելիքներու մասին տեղեակ կը պահէին Անգրանիկ եւ Մեծ Յեղափոխականը։

Այս նպատակով ալ ահա Խան-Ազատը կ'երթայ Գուզկունճուք և կը ներկայանայ Երիմեանին։

Հայրիկի սենեակը «մի իսկական վանական խուց էր—կը պատմէ Խան-Ազատը—հազիւ մի քանի քայլ երկարութեամբ, որը ինչպէս երեսում էր Հայոց Հայրիկի համար թէ ննջարանի և թէ առանձնասենեակի դեր էր կատարում։ Այդտեղ կար մի շատ հասարակ թախտ, մի հին ու կիսամաշ գորգով և տաճկական փոքրիկ մինդարով ծածկուած, մի հատ շատ հասարակ ու խնամացած սփռոցով ծածկուած սեղան և մի հատիկ աթոռ։ Երիմեանը բարձրացաւ ու նորից ծալապատիկ նստեց թախտի վրայ, կրթնելով ձախ կողմում դրուած բարձերին, իսկ ես նստեցի այդ միակ աթոռի վրայ։

«—Անունդ ինչ է, երէկ ըսիր ամմա չիմացայ, կը հարցնէ Հայրիկը։

---

*) Այս մասին մանրամասնութիւնները կարդալ Յարութիւն Ճանկիւլեանի «Յիշատակներ Հայկական Ճգնաժամեն» գրքի Դ. Մասի մէջ։

«—Խանազատեան, շուտասելուկով պատասխանեցի ես։

«—Ինչպէս ըսիր։

«—Խան-ազատեան, կրկնեցի ես այդ երկու բառերը բաժանելով։

—«Օճճ, այդ շատ երկար եղաւ, խաւը քեզի թող մնայ, ազատը ինձի տուր, ասաց նա իր սովարական ծիծաղով։

«Խրիմեանը մարդկանց դէմքերը կարդալու հանճարեղ ընդունակութիւն ունէր. նա կարողանում էր, շատ քիչ բացատրութեամբ, հէնց առաջին անգամից իր պատահած մարդու սրտի ու հոգու ներսը թափանցել ու նրա ամենաթոյլ երակները բռնել»*)։

Խան-Ազատը Խրիմեանին կը յայտնէ իրենց յեղափոխական գործերու, շարժումներու և ապագայ ցոյցերու ծրագիրները։

«—Ադ ինչ պիտի ընէք, Հայաստանն պիտի ազատէք, ասաց նա կէս հարցական և կէս հեգնութեամբ։

«—Դուն դինամիտ շինել գիտես, կրնաս ինձի հասկացողութիւն տալ, կը հարցնէ Խրիմեանը։

«Նիդրօգլիցերինի, ռումբեր շինելու ու նրանց գործածելու եղանակի մասին իմ տուած բացատրութիւնները լսելուց յետոյ, Խրիմեանը փոքր ինչ հիասթափւած ձայնով ասաց։

«—Ձո պատմածին նայելով ռումբ գործածողն ալ կրնայ վըտանգիլ։ հայ ազգը շատ քիչուոր է, պէտք է հայերէս շատ քիչ մարդ մնասւի։

«Ես ժպտացի և սկսեցի նորից նրան համոզել, որ առանց զոհերի առանց մեծ վնասների երբէք ազգերը ազատութիւն չեն գտել, ուրեմն ինչպէս կարող են հայերը բացառութիւն կազմել։

«—Այդ բոլորը աղէկ կ'ըսես, ամմա հայ ազգը շատ պզտիկ է, կը վախնամ, որ մինչև ազատութեան գալը տակը բան չը մնայ»**)։

Խան-Ազատը կը յիշէ նաև թէ Կ. Պոլսոյ Հնչակեան Մասնաճիւղը կուսակցական 30 ոսկիի գումար մը ի պահ յանձնած էր Խրիմեանին, որը սակայն յիշեալ դրամը իրը նպաստ բաժնած էր գաւառացի պանդուխտներուն։ Այս պատճառով ալ մասնաճիւղը կը պժգոհէը Խրիմեանէն։

---

*) Ռուբէն Խան-Ազատ—«Յիշողութիւններ Խրիմեանի մասին». Թիֆլիս. 1908· Տպարան Օր. Ն. Աղանեանի. էջ՝ 9։ **) Անդ· էջ՝ 13։

# ՀԱՅՈՑ ՀԱՅՐԻԿ

## ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՍՆԱՄԵԱԿ

## 1890—1900

### Ա.

### ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՔԱՐՈԶԻՉԸ

ԱՔՈՐԱԿԱՆ Հայրիկի ներկայութիւնը կ. Պոլսոյ մէջ, լուրջ մտահոգութիւն կը պատճառէր կարմիր Սուլթանին և Բ. Դրան։ Պետական լրտեսները—հայ և տաճիկ—ուշադիր կերպով կը հետևէին Հայրիկի ամէն մէկ քայլին և մանրամասն, յաճախ չափազանցուած զեկուցումներ կուտային լրտեսական մարմիններուն. Անոր ազգաշունչ և յեղափոխական քարոզները թարգմանուելով կը յանձնուէին առ որ անկ է. Լրտեսները հաղորդած էին նաև, որ Խրիմեանը մօտիկ յարաբերութիւն ունի Հնչակեան կուսակցութեան վարիչներու և յեղափոխական մարմիններու հետ։ Այս բոլորի վրայ կ'աւելնար նաև ժողովրդական ոչէրն ու համակրանքը, որ կը վայելէր Մեծ Աքսորականը: Հայրիկ ուր որ քարոզելու երթար, ժողովուրդը խուռներամ բազմութեամբ հոն կը դիմէր։ Հայրիկի հոգին ամէն տեղ էր, ամէնքի մէջն էր։ Անոր ձօնուած ժողովրդական երգերը բերնէ բերան կը հնչէին՝ ստեղծելով խանդավառ մթնոլորտ մը, որուն մէջ կը սաւառէր Վասպուրականի Արծիւը։

Կովկասի Հայութիւն ժողովրդական հանդէսներով կը տօնէր Մեծ Աքսորականի ծննդեան եօթանասունամեակը— *1820—Ապրիլ 4—1890*։ Ամերիկայի նորակազմ Հայ գաղութները սիրոյ և համա-

կրանքի ողջոյններ կ'ուղղէին Հայոց Հայրիկին, իսկ Մայր Եկեղեցին տանջուած Հայութիւնը իւր ցաւերն ու տառապանքները անոր միջոցով կը հաղորդէր Պատրիարքարանին և Բ. Դրան, վանդի անպաշտօն Խրիմեան Հայրիկը հոգով սրտով և շատ աւելի համարձակ կերպով կը պաշտպանէր ժողովուրդի բարոյական ու նիւթական շահերը, քան թէ պաշտօնական Պատրիարք Խորէն Արեպ. Ասլրեանը.

Ազգային Սահմանադրութեան երեսունամեայ տարեդարձի— 1860—Մայիս 24—1890—առթիւ Ս. Փրկիչ Ազգային Հիւանդանոցի պարտէզին մէջ, հանդիսաւոր ճաշկերոյթ և ժողովրդական հանդէսներ տեղի կ'ունենային.

Այս յիշատակելից հանդէսներուն ականատես և ճաշկերոյթին մասնակից Ենովք Էֆ. Արիստակէսեանը կը պատմէ.

«Ընդարձակ ճաշավայրը շրջապատուած էր վանդակներով, որոնց առջև խռնուած էր տասնեակ հազարաւոր բազմութիւն մը. Քանի մ'ընկերներով ճաշավայրը մտանք և մեր գնած տոմսակներով գրաւեցինք վեցերորդ սեղանի աթոռները. Որոշեալ ժամին հանդիսավայրը ժամանեց օրուայ Պատրիարք Աշըքեանը, Խրիմեանի ընկերակցութեամբ. Անոնց կը հետեւէին հոգևորականներ, պետական Հայ պաշտօնեաներ, Ազգ. Ժողովի անդամներ, վաճառականներ, ազգային, բարեգործական և դպրոցական մարմիններու ներկայացուցիչներ և հարիւրաւոր քաղաքացիներ. Պատրիարքը գրաւեց իւր պատշաճ տեղը, Անոր աջակողմը նստեցան Խրիմեան և Սրուանձտեան սրբազանները. Պատրիարքը սեղանն օրհնելէ յետոյ առաջարկեց յոտնկայս խմել բաժակը Սուլթան Համիտի կենաց. Բաժակները պարպուեցան լուռ ու մունջ. Հիւանդանոցի կառավարիչը Պատրիարքի, իսկ Կրօնական Ժողովի ատենապետն ալ Մակար Պաթուդիկոսի կենաց բաժակներ առաջարկեցին. Ապա բաժակներ առաջարկուեցան Կրօնական և Քաղաքական Ժողովներու, Ազգ. Հիւանդանոցի Հոգաբարձութեան և պետական պաշտօնէից կենաց. Անդին, վանդակապատին առջև խռնուած ժողովուրդը կը տեսնէր ու կը լսէր այս բոլորը և անհանգիստ, ջղագրգիռ, բայց լուռ, սրտատրոփ ինչ որ բանի կը սպասէր. Սեղանը վերջանալու մօտ էր, կարևոր «կենաց»ները դրեթէ կը վերջանային, բայց դիտմամբ մոռացութեան տրուած էր «կենաց» մը, Հայոց Հայրիկի, Մեծ Աքսո-

բականին «կեցացը», որուն ժողովուրդը անհամբեր կը սպասէր։ Դարեգին Եպիս. Օրուանձտեանը յանկարծ ոտքի կեցաւ և բարձր ու յուզուած ձայնով մը բացականչեց.

«—Այս բաժակն ալ խմենք մեր սիրելի Հայրիկի կեցացը։

«Հայրիկի անունը լսելուն պէս բազմահազար ժողովուրդը զարհուրելի և խլացուցիչ ձայներով աղաղակեց՝ „կեցցէ՛ Հայրիկ, կեցցէ՛ Թրիմեան Հայրիկ, կեցցէ՛ Աքսորական Հայրիկ...“ և որոտընդոստ, երկարատև ծափերը խառնուելով այդ աղաղակներուն, ստեղծուեցաւ ահազդեցիկ պատկեր մը։ Սեղանակիցները պահ մը սարսափեցան, ոտիկանութիւնն իրար անցաւ, մինչ «կեցցէ՛»ները օդ կը թնդացնէին։

«Հայրիկը ոտքի ելաւ. յուզմունքէն կուլար, դէմքը դեղներ, խունկի գոյն դարձեր էր, ալ ձեռքը բարձրացուց դէպի վեր և վանդակապատին առջև խռնուած բազմութեան դառնալով կանչեց—“Ժողովուրդ, խնդրեմ լռեցէք„։ Ծովածաւալ ամբոխը մէկ մարդու պէս իսկոյն լուռ մնաց և հազարաւոր դէմքեր Հայրիկին ուղղուեցան. խորհրդաւոր և յուզիչ էին այդ րոպէները. Ծովի ալիքներուն նման ծփացող, աղմկայոյզ ամբոխը սրտատրոփ և անհամբեր Հայրիկի խօսքին կը սպասէր, անոր ձայնը լսել կ՛ուզէր։ Սիգապանծ ու վեհ կեցուածքով կանգնած Հայրիկը անուշ, յստակ և բարձր ձայնով մը սկսաւ խօսիլ։

«—Սիրելի ժողովուրդ Հայոց, արեգակը երբ կը ծագի իւր նախածագ ճառագայթները նախ կը լուսաւորեն բարձրաբերձ լերանց գագաթները միայն։ Քանի մը րոպէներ անցնելէ յետոյ արեգակին շողերը կ՛իյնան միջակ բարձր լերանց կատարներու վրայ և ապա, բլուրներու ստրոտներու վրայ, մինչ դաշտերը տակաւին կը մնան ստուերներու տակ։ Քաղաքներու մէջն ալ առաջին անգամ բարձր և շքեղ տուները կը վայելեն արեգակին շողերը, մինչ գիւղերն ու խոնարհ խրճիթները կը մնան շուքերուն տակ և հուսկ ուրեմն արեգակն արդար կը բարձրանայ և իւր լոյսն ու ջերմութիւնը արար աշխարհին կը պարգեւէ հաւասար։

«Այսպէս է ահա մարդկային կեանքն ու մարդուն վարմունքը։

«Պատրիարք Օրբազանը նախ բարձր լերան կատարը տեսաւ—վեհափառ Սուլթանին կենացն առաջարկեց բաժակը։ Ապա բա-

ժակները առաջարկուեցան Պատրիարք Հօր, Ամենայն Հայոց Վեհափառ Կաթուղիկոսի, Ազգային ժողովի, Հիւանդանոցի Վարչութեան և հուսկ ուրեմն Հայոց մշակ եւ երկրագործ, չարքաշ ու տանջուած ժողովուրդի գաւակ Հայրիկի կեցացը.... Հայրի՞կ..., որ միշտ ալ Հայաստանի գեղջուկ եւ աշխատաւոր ժողովուրդի ցաւերովն ապրած է.... (Որոտընդոստ, երկարատև ծափեր և խլացուցիչ «կեցցէ»ներ բարձրացան ամբոխին մէջէն)։ Մշակ ու երկրագործ ժողովուրդը իւր աղի քրտինքով և արդար ու չաքքաշ աշխատանքով կ'արդիւնաբերէ հացը և բազմազան բերք ու բարիք, որոնք կը զարդարեն թագաւորաց, իշխանաց և հարուստներու սեղանները։ Եւ սակայն այդ աշխատաւոր և տառապեալ ժողովուրդը, դաշտաց և լերանց այդ անմեղ և օրհնեալ գաւակները միշտ կարօտ են պատառ մը հացի, յաճախ ծովալուկ կը մնան, թշուառ, կիսամերկ և ողորմելի կեանք մ'ունին։ Եթէ չի լինի մշակ և երկրագործ ժողովուրդը ոչ թագաւորները, ոչ իշխանները, ոչ հարուստներ և ոչ ալ արտօնեալ մարդիկ այսպէս ճոխ սեղաններ չը պիտի ունենան։ (Ծանկարծ խօսքը Աշրքեան Պատրիարքին ուղղեց)։ Ներեցէք Սրբազան Հայր, ես առանց ժողովուրդի՝ թագաւոր չեմ ճանչնար, եթէ չը լինի ժողովուրդը թագաւորն ինչ վրայ պիտի թագաւորէ և իշխէ, և ո՛վ է որ թագաւորաց հաց, տուրք և զօրք կուտայ, ոչ ապաքէն միայն և միայն աշխատաւոր, մշակ և երկրագործ ժողովուրդը։ Եւ ես, որ այդ մեծ ժողովուրդի համեստ գաւակն եմ, այս բաժակը կ'առաջարկեմ գեղջուկ եւ աշխատաւոր Հայ ժողովուրդի կեցացը։ —

«Մինչ սեղանակիցները բաժակներն կը պարպէին, անդին խըռնուած ժողովուրդը ծափերով, „կեցցէ Հայրիկ“ աղաղակներով նորէն թնդացուց օդը, երբ սեղանն ալ գրեթէ խանգարուեցաւ, իսկ Հայրիկը յուզուած և գունաթափ հեռացաւ սեղանէն և ուղղուեցաւ դէպի Հիւանդանոցը։ Երբ նա վանդակներուն մօտեցաւ խռովայոյզ ամբոխի մէջ հարիւրաւոր հուժկու բազուկներ դէպի Հայրիկ պարզուեցան և ահա Մեծ Աբսորականը ժողովուրդի ուսերով, ձեռքերու վրայ, ծափերով, կեցցէներով, երգերով և որոտալից աղմուկով տարուեցաւ Հիւանդանոցի դահլիճը, ուր նա պահ մը հանգս-

տանալէ յետոյ, մտաւ հիւանդներու կացարանները և մխիթարութեան խօսքեր ուղղեց անոնց»։

Հայրիկը հիւանդանոցին մէջ կը տեսնէ, որ գաւառացի պանդուխտ երիտասարդ մը կը գալարուի մահուան գրկին մէջ։ Նա իւր ձեռքով կը փակէ մեռածի աչքերը, «Հոգւոց» կը մրմնջայ և դուրս գալով նորէն ամբոխին մէջ կը մտնէ ու կը բացականչէ.

—Վերը կը մեռնին... վարը կը զուարճանան... հհ, հհ...։ Քանինները կը մեռնին այդպէս, կը դատարկուի հայրենիքը, անտէր կը մնան հայոց հողերը, կ'այրիանայ Հայ կինը, կ'որբանայ մանուկը, կը դատարկուի հայրենիքը, կը դատարկուի Հայաստան...։

Ժողովուրդը կ'ուլայ, մինչ Հայրիկը դէմքը կը խոժոռէ, մէջքը կ'ուղղէ և բռունցքը սեղմելով կը գոռայ.

—Ցիմա՛ր եւ ո՛չ-իմաստուն ժողովուրդ... որ միայն արտասուել գիտես...։

## Բ.

## ՀԱՅՈՑ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐՈՒ ԱՀԱԶԱՆԳԸ

Բերլինի Վեհաժողովէն յետոյ, երբ նենգամիտ և շահամոլ դիւանագիտութիւնը Հայութեան «կը շնորհէը» միայն 61-րդ յօդուածը, Հայկական ազատագրական շարժումներու գաղափարը հետզհետէ մարմին կ'առնէր և ծնունդ կուտար Հայ Յեղափոխական Կուսակցութեանց։ Օսմանեան բռնակալ լուծն ու արիւնոտ թաթը երթալով աւելի ևս կը ծանրանային Հայ ժողովուրդի վրայ։ Եւրոպական պետութիւններէն և Մուլթան Համիտի «բարենորոգումներ»էն ամէն յոյս կտրած և ազգի ու հայրենիքի ազատագրութեան գերագոյն գաղափարներով ոգեւորուած գործիչներն ու անձնուէր երիտասարդները հրապարակ կուգային՝ Հայկական Ազատագրութեան արիւնոտ պայքարը զարգնելու համար։

Յեղափոխական, ազատատիրական և ռազմական քարոզութիւնները ժողովրդական լայն զանգուածներու սեփականութիւնը կը դառնային։ Ինքնապաշտպանութեան և ղէնքի գաղափարը ամուր հիմքեր կը ձգէր տանջուած և ազատատենչ ժողովրդի սրտին մէջ։

Կովկասի և արտասահմանի մէջ բանաւոր և գրաւոր քարոզութիւններով Յաճկահայութեան ազատագրութեան գաղափարը դարբնելով զբաղուած էին ոչ միայն փորձուած և սառնարիւն վաղեմի գործիչները, այլև եռանդուն երիտասարդներ և տաքարիւն, հայրենասէր ուսանողներ։ Օրուայ կարևոր հարցը, կենսական պահանջը Յաճկահայութեան ազատագրութիւնն էր։ Ազատասէր և ռազմունակ երիտասարդները իբրև ուսուցիչ և յեղափոխական գաղափարներու քարոզիչ, երկիրը կը մտնէին և յայտնի ու գաղտնի կերպով կ'աշխատէին։

Այս գեղեցիկ և յուսալից շրջանին մէջն էր ահա — 1889-ի Մայիսին — երբ Պարսկաստանի Սալմաստ գաւառի գիւղական ուսուցիչներէն վանեցի Յովհաննէս Ագրիպպասեան, Կարապետ Կուլաֆսըզեան եւ թիֆլիսեցի Վարդան Գօլօշեանը՝ լուսնակ գիշեր մը, պարսկա-տաճկական սահմանագլուխէն ճամբայ կ'ելլեն դէպի Վան՝ յեղափոխական գրականութիւն տանելու և այնտեղ ժողովուրդի ինքնապաշտպանութեան գործերը դեկավարելու համար։ Այս երեք երիտասարդները Մայիսի 26-ին Վասպուրականի արևելակողմի լեռներու գաղտնի ճամբաներէն անցնելով կը հասնին Զուխ-Կեաուկ կոչուած վայրը և ահա խումբ մը քիւրդերու և ոստիկաններու կողմէ պաշարուելով կը ստիպուին զէնքի դիմել։ Տեղի կ'ունենայ ծանր և օրհասական կռիւ մը։ Ագրիպպասեանն ու Գօլօշեանը կ'իյնան թշնամիի գնդակներով, իսկ Կարապետ Կուլաքսըզեանը ազատուելով կը փախչի։ (Վերջինս այժմ կ'ապրի Հիւսիսային Կովկասի մէջ)։

Այսպէս ահա Հայկական Ազատագրական և Յեղափոխական շարժումներու անդրանիկ նահատակները — Յովհաննէս Ագրիպպասեանն ու Վարդան Գօլօշեանը - կ'իյնային Վասպուրականի լեռներու վրայ, որոնց կատարներէն բարձր և ուժգին ձայնով կը զօրանչէր Հայոց ազատագրական շարժումներու ահազանգը, որուն ուժգին զօրանչները տարածուած էին Յաճկահայաստանի ամէն կողմեր։ Վասպուրականի, Տարօն-Տուրուբերանի, Բարձր-Հայքի և այլ գաւառներու մէջ երիտասարդութիւնը տենդագին աշխատանքով գործի լծուած էր։ Ամենուրեք կը կազմուէին զինական խումբեր։ Անձնուէր մարտիկներու և ռազմիկներու արիւնը կ'եռար։ «Մահ կամ ազատութիւն». այս էր ահա մարտնչող նոր սերունդի կարգախօսը։

Ցարոնի Հայութեան գլխին չարիք և պատուհաս դարձած հռչակաւոր քիւրդ ցեղապետ և աւազակ ու ոճրագործ Մուսա-Բէկը առևանգած և բռնաբարած էր Կիւլիզար անունով մշեցի հայուհի մը — քահանայի մը աղջիկը։ Այս դէպքը այնքան ահաւոր ցնցում յառաջ բերաւ Հայ կեանքի մէջ, որ կառավարութիւնը պահ մը հայկական ընդհանուր ապստամբութեան մղձաւանջով բռնուեցաւ։ Մուսա-Բէկի դէպքը արձագանգ գտաւ ոչ միայն Հայ, այլ և եւրոպական մամուլին մէջ։ Ամէն կողմէ կառավարութենէն կը պահանջէին, որ Մուսա-Բէկը Կ. Պոլիս բերուի և պատժուի։ Մինչև անգամ Մուշէն 58 հայեր Կ. Պոլիս գացին և Սուլթանին խնդրագիր մը տալով Մուսա-Բէկի պատժուիլը պահանջեցին։ Մուսա-Բէկը ի վերջոյ Կ. Պոլիս բերուեցաւ և իբր թէ «դատի և պատժի» ենթարկուեցաւ։

Մուսա-Բէկի դէպքը եկաւ վրէժի և ըմբոստութեան զգացումով լեցուած Հայ երիտասարդներու սիրտերը հրահրելու։

Գաւառներու մէջ, ամենուրեք, կազմուած էին յեղափոխական գաղտնի մարմիններ և զինական թուղթիկ խումբեր։ Զէնքի գործածութիւնը և զէնք գնելը օրուայ պահանջն էր։ Ըմբոստ և վրիժառու տարրերը պատրաստ էին խօլական թափով հրապարակ իջնել և յանուն ազգի ու հայրենիքի ազատութեան արիւն թափել ու մեռնիլ։

Կառավարութիւնը գիտէր ու կը տեսնէր այս բոլորը և ամէն տեսակ միջոցներու կը դիմէր հայկական յեղափոխութիւնը իր սաղմին մէջ խեղդելու համար։ Բանտարկութիւնը, աքսոր, հալածանք, խուզարկութիւն և ամէն տեսակ բռնութիւններ պետութեան կողմէ ի գործ կը դրուէին այն վայրերու մէջ, ուր հայերը «կասկածելի և վտանգաւոր գործեր» կը կատարէին պետութեան դէմ։

Եւ ահա 1890-ի Յուլիսի 9-ին յանկարծ՝

*«Ձայնը հնչեց Էրզրումի հայոց չեռնարեն,*
*Թուռնդ Թուռնդ եղան Հայի սրտեր զէնքի շաչիւնեն...»։*

Ի՞նչ էր եղածը։ Կառավարութիւնը յանկարծ խուզարկեց Կարնոյ հայոց Մայր եկեղեցին և կասկածելի տուները՝ զէնքեր և ռազմանիւթեր գտնելու նպատակով։ Կարնոյ ըմբոստ երիտասար-

դուքիւնը ոտքի ելաւ և զէնքի դիմեց։ Արիւնալի ընդհարումներ տեղի ունեցան Կարնոյ փողոցներուն մէջ։ Երկուստեք դիակներ ընկան։ Ցեղափոխական և ազգմունակ բազմաթիւ Հայ երիտասարդներ սպանուեցան կամ բանտարկուեցան։ Կարնոյ ցոյցն էր այդ, յեղափոխական և զինական ըմբոստ ցոյցը, որուն արձագանգները կը հասնէին Հայ Աշխարհի ամէն կողմեր և կը ցնցէին Երզրզի պալատն ու Բ. Դուռը։

Կարնոյ ցոյցին մէջ ընկած Հայ կտրիճներու մարմինները դեռ անթաղ կը մնային, փողոցներու մէջ թափուած արիւնը դեռ մաքրուած չէր և ամբողջ Կարին քաղաքը տաճկական ահ ու սարսափի տակ կ'ապրէր, երբ շաբաթ մը յետոյ, Յուլիս 16-ին, ձայնը հնչեց Օթամբուլէն—Օսմանեան մայրաքաղաքէն։

Հնչակեան կուսակցութեան կազմակերպած Կում-Կափուի ցոյցն էր այդ (1890 Յուլիս 16)։ Կիրակի առաւօտ յուշարարները խուժեցին Մայր Եկեղեցին, ուր Յարութիւն Ճանկիւլեանը բարձրացաւ սեղանը և բարձրաձայն կարդաց կուսակցութեան հրատարակած «Պահանջմնագիրը», որ Սուլթանին կը ներկայացնէր Տաճկահայութեան տառապանքներն ու հարստահարութիւնները և կը պահանջէր վերջ տալ այդ բոլորին և երկրի մէջ բարենորոգումներ մտցնել։ «Պահանջմնագիրը»ը հազարաւոր օրինակներով բաժնուեցաւ ժողովուրդին։ Յուշարարները Աշըքեան Պատրիարքին վրայ յարձակելով փորձեցին զայն Պալատը՝ Սուլթան Համիտին մօտ տանել և անոր միջոցով ներկայացնել իրենց պահանջները։ Ցոյցը այնքան լուրջ կերպարանք առաւ, որ յանդուգն Ճանկիւլեանը Պատրիարքարանի դռան ճակատի վրայի պետական զինանշանը (Թուղրան) վար բերաւ և ջարդ ու փշուր ընելէ յետոյ բարձրացաւ դահլիճը և Սուլթան Համիտի մեծադիր պատկերը պատռտեց ու նակոխ ըրաւ։

Հնչակեան զինուած խումբերը եռանդով գործի անցան։ Ոստիկանութիւնն ու զօրքը ցոյցին վայրը հասան։ Հնչակեան զինուորներն ու տաճիկ զօրքեր և ոստիկանները ղէմ դիմաց ելան և իրարու վրայ կրակ բացին։ Յուշարարներէն երկու կտրիճ զինուորներ —վաներցի Մանուկ Նալբանդեան և սերաստացի Յովհաննէս Ղումբիկեան—զօրքերու գումիններով խոշտանգուելով նահատակուեցան։

ծուցարարներուն բացած կրակովն ալ ծանրապէս վիրաւորուեցան 7 տաճիկ զօրքեր։

Կառավարութիւնը ի վերջոյ յաջողեցաւ այս ցոյցին դիմացն առնել։ Կատարուեցան խուզարկութիւններ և ձերբակալութիւններ։ Օուլթանն ու Ռ. Դուրը խուճապի և սարսափի մատնուած էին վախնալով, որ յանկարծ օտար պետութիւններըպիտի միջամտէին կայլն։

Պետութեան համար այլևս ամէն ինչ պարզ էր։ Հայկական ազատագրական շարժումներու անհագանգը բարձր ու զբլ կը զօդանջէր և գաւառներէն սկսեալ մինչև մայրաքաղաքին փողոցները Հայ ռազմունակ և ազատատենչ երիտասարդութիւնը ոտքի կանգնած՝ իւր բազուկով ու զէնքով կը ծառանար Օսմանեան աբիւնոտ բռնակալութեան դէմ։

Տաճկահայութեան ազատագրութեան գաղափարը լայն արմատներ ձգած էր նաև Կովկասի և Ռուսաստանի Հայութեան մտաւորական և գաղափարական երիտասարդութեան մէջ։ Ռուսական յեղափոխական և ժողովրդասիրական գրականութեան թարմ հոգիով ու շունչով դաստիարակուած Կովկասահայ երիտասարդներն ու եռանդուն ուսանողները ամբողջովին կլանուած էին Տաճկահայաստանի ազատագրութեան գեղեցիկ գաղափարով։ Ս. Պետերբուրգի Հայ ուսանողութիւնը կը ծրագրէր արշաւախումբ մը կազմակերպել և Մայր Երկրի տառապեալ Հայութեան օգնութեան երթալ։

Խումբ մը գաղափարական և հայրենանուէր երիտասարդները՝ ղեկավարութեամբ Քրիստափոր Միքայէլեանի, Սիմոն Զաւարեանի եւ Ռոստոմ Զօրեանի, *1890-ի* ամրան, Կովկասի մէջ կը հիմնէին *ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ*, որ պիտի հանդիսանար Հայկական ազատագրական շարժումներու ճզօր ղեկավարն ու ամենէն մարտական եւ ժողովրդական կուսակցութիւնը։

Այդ նոյն թուին, Հ. Յ. Դաշնակցութեան ղեկավարութեամբ Ս. Պետերբուրգի Հայ ուսանողութեան արշաւախումբը՝ Սարգիս Կուկունեանի գլխաւորութեամբ՝ ռուս-տաճկական սահմանագլխի վրայ մարմին կ'առնէր և կը փորձէր Կաղզուանի մօտերէն Երկիրը մտնել, սակայն այդ փորձը կը վիժէր և Կուկունեանի խումբը ռուս սահմանապահ զօրքերու կողմէ ձերբակալուելէ յետոյ, կը գատուէր և կ'աքսորուէր Սիբիր։

Այսպէս ահա, Հայ յեղափոխական և ազատագրական շարժումները մարմին ու կեանք կ'առնէին թէ Տաճկահայաստանի և թէ Կովկասի մէջ։ Այս բոլորն ալ ուղղուած էին Սուլթան Համիտի բռնակալութեան և անոր հայաջինջ հաղթականութեան դէմ։ Սուլթանն ու Բ. Դուռը լիովին համոզուած էին որ Խրիմեանի ներկայութիւնը Ղ. Պոլսոյ մէջ, շատ մեծ նշանակութիւն ունեցած էր և պիտի ունենար յեղափոխական և հակապետական ըմբոստ ցոյցերու մէջ։ Ոստիկանական Նախարար Նազըմ Փաշան Սուլթանին կը հաւաստիացնէր թէ՝ «Խրիմեանը յեղափոխական գաղտնի մարմիններու հետ յարաբերութիւն ունի։ Անոր մօտ կ'երթան յեղափոխական գործիչները և անոր խորհուրդներուն կը դիմեն։ Խրիմեանի մատը գաղտնի կը գործէ հակապետական գործերու մէջ։ Խրիմեանի ներկայութիւնը ոգեորութիւն կը ներշնչէ Հայ ժողովուրդին և յեղափոխականներուն։ Կում-Կափուի ցուցարարներու մեծ մասը Խրիմեանի նախածանօթներն ու մտերիմներն են» և այլն և այլն։ Նազըմ Փաշայի այս տեղեկութիւնները ճիշտ էին։

Գաղտնի ոստիկաններն ու լրտեսներն ալ գիշեր ցերեկ անդադար կը հետեւէին Խրիմեանին։ Նա այնքան մեծ կասկածի տակ ընկաւ, որ շատերը զգուշացան և անկէ կտրեցին իրենց յարաբերութիւնները։ Ղ. Պոլսոյ Զինուորական Ատեանը զեկուցագրով մը կը յայտնէր Սուլթանին, որ իբր թէ Կում-Կափուի ցոյցը Խրիմեանի խորհուրդով կատարուած է և կ'առաջարկէր, որ նա դատի և պատժի ենթարկուի։ Սակայն Սուլթանն ու Բ. Դուռը ժողովրդական բռնկումներէն վախնալով, խոհեմութիւն համարեցին Խրիմեանը դատի չը քաշել։ Սուլթանը հաստատուած էր, որ Հայ յեղափոխականները օր մը կրնան Խրիմեանը Ղ. Պոլսէն արտաքսման փախցնել։ Այս իսկ պատճառով Համիտը հրամայած էր Նազըմ Փաշային, որ գիշեր ցերեկ Խրիմեանը գաղտնի և անուղղակի հսկողութեան տակ առնուի։ Նա ուր որ երթար—շոգենաւով թէ կառքով—լրտեսները ետևէն կը վազէին։ Որ տուն, որ գրասենեակ և վաճառատունը որ մտնէր լրտեսները կը վխտային ամէն կողմ՝ ատուգելու համար թէ որոնց հետ կը տեսնուի Հայրիկը։ Անոր այս վիճակը այնքան ծանրացաւ, որ ամէնքը կը խուսափէին անկէ և մինչև անգամ չէին ուզեր անոր հետ ճամբայ երթալ կամ ունէ գործ ու-

նեննալ։ Հայրիկի հոգեկան վիճակը փոթորկուած էր։ Նա իւր տըխրութիւնը փարատելու համար կ'երթար այս ու այն գրասենեակը, իսկ լրտեսներն ալ ետևէն կ'երթային և ժամերով կը սպասէին մինչև, որ Խրիմեանը դուրս գար։

Խրիմեանը, 1890-ի ամրան, յաճախ Նարլը-Կափու կ'երթար, տեղւոյն հայոց եկեղեցւոյ քարոզիչ Վաղինակ Ծ. Վարդապետ Խաֆարեանին այցելելու համար։ Լրտեսները այս այցելութիւնը «վտանգաւոր» կը նկատեն, կը յայտնեն ոստիկանութեան և այնուհետև Վաղինակ Ծ. Վրդ.ի վրայ ուժեղ հսկողութիւն կը կատարուի։

Վերջապէս կը կատարուէր անխուսափելին։ Սուլթան Համիտի հրամանով Եպարքոսը Աշըքեան Պատրիարքին կը յայտնէր հետևեալը — Վեհափառ Սուլթանին կամքն է, որ Խրիմեանը Երուսաղէմ ուխտի երթայ եւ ոճն մնայ... Ո'ևէ առարկութիւն և ընդդիմութիւն չը պիտի լինի այս մասին...»։

Բարձրաստիճան Հայ պաշտօնեաներն ալ Ք. Դրան կողմէ յատկապէս Խրիմեանին ներկայացան, յորդորելով և համոզելով, որ պատրաստուի և կամովին հեռանայ։ Խրիմեանը այս «հաւատարիմ» պաշտօնեաներուն տխուր քմծիծաղով մը ըսած էր — «Ասանկ գործերու համար աղուոր կը բարբառէք, բայց երբ ազգային բողոք ու խնդիր մը ձեր միջամտութեան ներկայացնեն պապանձուած Զաքարիայի կ'առնէք, անանկ չէ...»։

Գ.

## ՄԵԾ ԱՔՍՈՐԱԿԱՆԸ ԴԷՊԻ ԵՐՈՒՍԱՂԷՄ

«Երուսաղէմ ուխտի երթալու» պետական հրամանագիրը ստանալէ յետոյ, Խրիմեանը ճամբու պատրաստութեամբ զբաղուած էր։ Հնչակեանները երբ կը լսեն թէ Խրիմեանը հաշտուած է Երուսաղէմ երթալու մտքին հետ, Մեծ Աքսորականէն կը պահանջեն, որ նա մերժէ Սուլթանին հրամանը և Կ. Պոլսէն չը հեռանայ, իսկ ոստիկանութիւնն ալ յաճախ կը սպսպէ, որ ճամբայ ելլէ։ Ի՞նչ ընէր Հայրիկը, որ երկու քարի և անել վիճակի մը մէջ ընկած էր։ Սուլ-

թանին հրամանը կատարէը, երթար, թէ յեղափոխականներու պահանջին ընդառաջելով մնար։

Ենովք Տէր Արիստակէսեանը կը պատմէ.

«Աշնանային անձրեւոտ և մռայլ օր մըն էր։ Հայրիկը իմ սենեակս (Մարփունճիլար, Բարնաթեան Խան) հկաւ նամակները գրելու։ Նա իւր ցաւերու և մտածմունքի մէջ ընկղմուած անընդհատ կը ծխէը ու կը գրէը։ Սենեակիս դուռը մեղմ բացուեցաւ և ներս մտաւ Գրիգոր անունով (ազգանունը չեմ յիշեր) հնչակեան երիտասարդ մը, որ յարգանքով բարեւելէ յետոյ գրպանէն ծրար մը հանելով տուաւ Հայրիկին և իսկոյն հեռացաւ։ Հայրիկը կարդաց այդ գրութիւնը, կ. Պոլսոյ Հնչակեան Կուսակցութեան Վարիչ Մարմինը այդ պահուն գրով ուղղելով Հայրիկին կը սպառնար ու կը պահանջէր, որ նա մերժէ Սուլթանին հրամանը, ընդդիմանայ և երուսաղէմ չ'երթայ այլ մնայ կ. Պոլիս՝ իրենց ներս տանջուելու եւ իրենց ներս խաչուելու համար, կամ թէ Եւրոպա երթայ և պետութեանց միջամտութեան դիմելով յօդուտ Հայկական Հարցին աշխատանք կատարէ։ Այս էր ահա հնչակեաններու պահանջը։

«Պահանջագիրը կարդալէ յետոյ Խրիմեանը սաստիկ յուզուեցաւ և պահ մը լուռ մտածելէ յետոյ, տխուր քմծիծաղ մը դէմքին՝ ոտքի ելաւ, երբ արդէն մութն ընկած էր և անձրեւը կը տեղար, հեռացաւ առանց խօսելու։

«Դեկտեմբերի (1890) վերջին օրերն էին։ Ցուրտ և քամի օր մը, երեկոյեան կողմը, քանի մը Հայ բեռնակիրներ Հայրիկի անկողինի կապոցը և պայուսակները սենեակս բերին։ Քիչ յետոյ մենակ եկաւ նաև Հայրիկը և տխուր ձայնով մ'ըսաւ— „Է՛հ, տղաս ես քանի մ'օրէն երուսաղէմ կը մեկնիմ...։ Ծուրտ է, կ'ուզեմ տաք կերակուր մ'ուտել, հիմայ թանապուր եփելը դժուար է, կրնաս նէ քիչ մը բարխուն չօրբասի բերել տուր“։ Եղբօրս՝ Աբրահամին ղրկեցի կերակուրը բերելու։

Հայրիկը բացաւ պայուսակները և աչքէ անցուց իւր թուղթերն ու բազմաթիւ նամակները։ Կարեւորները վերցուց իսկ միւսներն ինձ յանձնեց ի պահ։ Հայրիկի գալէն քիչ յետոյ Բարնաթեան Խանի դիմացի տուներու պատուհաններէն և տանիքներէն լրտես-

նները ուշի ուշով կը դիտէին թէ ո՛վքեր անոր մօտ այցելութեան կուգան. Այսպէս, երեք օր երեք գիշեր լրտեսները կը հսկէին.

«Վերջին երեկոն էր. Հայրիկը միւս օր պիտի մեկնէր. Այդ գիշերը գրեթէ չը կրցանք քնանալ. Նա կը ծխէր ու կ'երգէր "Կրուսնկ"ը. Դեռ լոյսը չը բացուած մեր խանի դուռը թակեցին. Դռնապանին հարցուցի թէ ո՛վ է եկողը, ըսաւ որ „Ամբիյէ Միւսիրիճ է (լրտեսներու պետը) կ'ուզէ Հայրիկին այցելել". Ընդունեցինք. Բարձրահասակ և մաքուր հագուած մարդ մը ներս մտաւ, տաճկական թէմէնտէյով բարեւեց և նստելէ յետոյ ըսաւ.

«—Ներեցէք, Խրիմեան էֆէնտի, որ այսպէս շատ կանուխ ձեզ ձանձրոյթ պատճառեցի, վասնզի չ'ուզեցի օրը ցերեկով գալ.... Մենք ձեզ շատ նեղութիւն և վիշտ պատճառեցինք, դուք մուհաջէս (սուրբ, նուիրական) մարդ էք և մենք բնաւ կասկած չ'ունեցանք ձեր անձի և գործի վրայ, սակայն ժամանակը վատ է, կարգ մը տաքարիւն երիտասարդներ հակապետական գործեր կատարեցին և այդ պատճառով շատ շատ ամեղ մարդիկ կասկածի տակ ընկան. Ես եկած եմ բոլոր լրտեսներու կողմէ ներողութիւն խնդրելու, որ ամիսներ շարունակ, մեր պաշտօնի բերումով, ձեզ նեղութիւն պատճառեցինք. Այժմ կը խնդրեմ ձեր օրհնութիւնը և հայրական ներողամտութիւնը. Կը շնորհաւորեմ նաև այն, որ արժանացած էք արքայական շնորհին. Վեհ. Սուլթանը իբր ճամբու ծախք ձեզ 60 ոսկի նուիրած է. Անշուշտ թերթերու մէջ կարդացիք այս լուրը.

«—Հա՛... Հա՛...—վրայ բերաւ Հայրիկը—ես ալ ձեզմէ շնորհակալ եմ, դուք ալ շատ նեղութիւն քաշեցիք ինձ լրտեսելով. Քանի՛ քանի՛ գիշերներ Սկիւտարի բարձունքներու վրայ բացօթեայ անցուցիք, փողոցներու, նաւերու, վագոններու մէջ շատ տանջուելով՝ ձեր պաշտօնը հաւատարմութեամբ կատարելու համար, շատ շնորհակալ եմ, այսօր երեկոյեան նաւը կը նստիմ, հոն եկէք վերջին անգամ կը տեսնուինք.

«—Կը ներէք, Խրիմեան էֆէնտի—յարեց լրտեսապետը—ես այսպէս շուտ եկայ, որ ուրիշները չը նկատեն, այլևս չը պիտի տեսնուինք.

«Հայրիկը աչքով ըրաւ ինձ և ես ետքէ մէջիտ «նուէր» տուի լրտեսապետին, որ գոհ սրտով հեռացաւ.

«Հաւասաբաց էր. Ղևոնդ Վարդապետ Փիրղալէմեանն ու Վրթանէս Աբիկեանը (նկարիչ, այժմ ողջ է և կ'ապրի Հայաստանի մէջ), որոնք Հայրիկի հետ Երուսաղէմ պիտի մեկնէին, մեր սենեակը եկան ճամբու պատրաստութիւնները տեսնելու համար. Աշըքեան Գատրիարքն ալ իր կողմէ, ի պատիւ Խրիմեանին, բարեպան մը ղրկած էր ծառայելու. Բազմաթիւ պոլսեցիներ և գաւառացիներ Հայրիկի մօտն եկան այն առին ու հեռացան. կէսօրէն յետոյ եկաւ Գարեգին Եպիս. Սրուանձտեանը, որուն ի տես Հայրիկը լացաւ, իրար ողջագուրեցին և քանի մը րոպէ Մեծ Ուսուցիչն ու աշակերտը հեծկլտացին. Վերջին բաժանումն էր այդ..., Քիչ յետոյ ներս մտաւ վեհ դէմքով և միջահասակ եկեղեցական մը,— Մատթէոս Եպիս. Իզմիրլեանցն էր, որուն ի տես, Հայրիկը ձայնեց.

«—Հրամեցէ՛ք, հրամեցէ՛ք Սրբազան եղբայր, շնորհակալ եմ, որ եկաք. Գատրիարքարանը պիտի երթամ այսօր հրաժեշտ տալու, միասին կ'երթանք.

«—Ես Գատրիարքարանը չեմ ուզեր երթալ... բայց հոս երկար կը սպասեմ ձեզ. Շատոնց է վեր է, որ հրաման ստացաք Երուսաղէմ ուխտի երթալու....

«—Երկու ամսէն է վեր է. ես Նոյեմբերին պիտի մեկնէի, բայց երկու կրակի և անելի մէջ իյնալով ուշացայ. Մէկ կողմէն Սուլթանը կը ստիպէ որ հեռանամ, Գատրիարքարանն ու իւրայիններըը կը համոզեն, կը խնդրեն, որ անպայման երթամ, առարկելով որ եթէ չ'երթամ Ազգին իրաւունքները պիտի խլեն. Միւս կողմէ յեղափոխականներըը կը պնդեն ու կը պահանջեն, որ չ'երթամ, մնամ, ընդդիմանամ և կամ գաղանի երթամ Եւրոպա. Բայց ես շատ լաւ գիտեմ եթէ չ'երթամ, քաղաքական ինչ դէպք և բնական ինչ աղէտ —երաշտ, սով, հեղեղ, երկրաշարժ—որ տեղի ունենան, պիտի պօռան, կանչեն թէ՝ Խրիմեանի չ'երթալու պատճառաւ այսքան չարիք ու պատուհաս տեսանք. Անցեալ շաբթու Ունճեան էֆէնտին Ղալաթիոյ կամուրջին վրայ ճամբան կտրեց և ինձ տարաւ Էսայեանց գրասենեակը, ուր հաւաքուած ազգայինները յայտնեցին թէ Մեծ Եպարքոսը կը ցանկայ տեսակցութիւն մ'ունենալ ինձ հետ: Ելանք գացինք Եպարքոսի մօտ, սիրով ընդունեց և ըսաւ, որ Սուլթանն ինձ շատ կը յարգէ եղեր իբրև նախկին Գատրիարքի և չ'ու-

զեր ո՛նէ անախորժութիւն պատճառել ինձ և ցանկայ, որ ես իմ կամքով երուսաղէմ ուխտի երթամ, ծախսերս ալ Պալատը կը հոգայ։ Շատ լաւ, պատասխանեցի, Վանէն գիս հոս աքսորի քաշքշելիք, ինչ էր մեղքս, ինչ յանցանք գործեր էի, հիմայ ալ կ՛ուզէք, որ երուսաղէմը երթամ, այսինքն աքսորս կրկնակի կը դարձնէք։ Եպարքոսը շատ խնդրեց, պնդեց, որ չը մերժեմ, ես ալ ըսի շատ լաւ կ՛երթամ, միայն թէ կը խնդրեմ, որ խոստանաք արտօնութիւն տալ ինձ, քանի մը տարի յետոյ Վան վերադառնալ և վերջին օրերս Վարագայ վանքին մէջ անցուցնել։ Եպարքոսը խոստացաւ և ըսաւ, որ պիտի կատարէ փափաքս։ Գիտեմ, որ չը պիտի կատարուի փափաքս, բայց, է՛հ, բան մըն էր ըսի։ Ա՛խ, Սրբազան եղբայր, վիշտս շատ մեծ է, վանեցիք չը թողին, որ Զատիկը հայրենիքիս մէջ տօնէի, այժմ ալ պոլսեցիք չը թողին, որ Նոր տարին և Ս. Ծննդեան տօները Պոլսոյ մէջ տօնեմ։

«Քիչ յետոյ Աբիկ Ուենճեանը, սեղանաւոր Գրիգոր Թէրլէմզեանի միջոցով Իրմանին ուղարկեց, Սուլթանի «շնորհած» 60 ոսկին։ Հայրիկի կապոցները և պայուսակները ուղարկեցինք նաւահանգստի մաքսատունը։ Իզմիրլեանը տեսնելով, որ պայուսակներէն մէկը թուղթերով լեցուած է ըսաւ—„Սրբազան Հայրիկ, մաքսատան պաշտօնեաներն ու ոստիկանները հաւանաբար այդ պայուսակը խուզարկեն“։

«—Այդ պայուսակը հետս կը վերցնեմ և միշտ քովս կը պահեմ, իսկ երբ ուզեն քրքրել կամ խուզարկել կ՛ըսեմ—է՛հ, որ այդպէս կ՛ընէք ես ալ չեմ երթար հա..., ասի աղէկ գիտցէք..., ըսաւ Հայրիկը և բոլորս միասին խնդացինք։

«Հայրիկը Պատրիարքարանն այցելելէ յետոյ վերադարձաւ և Իզմիրլեանին ու Օրուանձտեանին հետ կառք նստելով ճամբայ ելան դէպի ծովափ (Ննի-Ջամիի դէմ, մաքսատան և կամուրջի մօտ)։ Փիրդալէմեան, Ախիկեան, ես և ուրիշ ծանօթներ ու հայրենակիցներ ալ կառքերով Հայրիկի կառքին հետևեցանք, իսկ լրտեսներու կառքերն ալ մեր ետևէն կուգային։ Նաւակ մը նստելով ուղղուեցանք դէպի Աւստրիական Լոյդ Ընկերութեան մեծ շոգենաւը, որուն մօտ ոստիկանական սպայ մը մեր նաւակը կանգնեցուց և ստուգեց մեկնողներու անցագիրները։ Հայրիկն ու Փիրդալէմեանը տեղաւորուեցան

Ա. կարգի կուպէներու մէջ։ Լոյդի նաւապետը, ի պատիւ Խրիմեանին պարզել տուաւ շոգենաւին դրօշակը։ Ռուսիկանական սպան իր հետևորդներով հեռացաւ՝ Պալատին և Բ. Դրան հաղորդելու, որ իբր Խրիմեանը շոգենաւը մտաւ երուսաղէմ երթալու համար։

«Ինչ յետոյ Խրիմեանին բարի երթ մաղթելու եկան Պատրիարքի ներկայացուցիչ, Կրօնական, Քաղաքական ժողովներու և ազգային հիմնարկութեանց ներկայացուցիչներ և բազմաթիւ հայրենակիցներ։

«Եկողները բոլորն ալ Հայրիկի աչը համբուրեցին, բարի երթի խօսքեր ըսին և երբ շոգենաւի մեկնումի վերջին ազդանշանը տուաւ, մենք վար իջանք։ Բոլորս ալ կուլայինք, Հայրիկն ալ կուլար, ան որ վեհափառ ու գեղեցիկ դէմքը ծածկուած էր խոր վշտով և թախիծով։ Երեկոյ էր։ Դեկտեմբերի դժգոյն արեգակի շողերն ընկած էին Վոսփորի ծփան ու կապուտակ ջուրերուն վրայ, որոնց կուրծքը պատռելով կը սուրար Լոյդի շոգենաւը, դէպի Երուսաղէմ տանելով Մեծ Աքսորական Հայոց Հայրիկը»։

* * *

Գարուն էր, 1891-ի Մայիսին, Համբարձման տօնին օրը, երբ Վանի հայերը ուխտի գացեր էին Վարագայ վանքը։ Խումբ մը ջահէլ-ջիւան, կանաչ-կտրիճ երիտասարդները Կարկուս-Աշչի բարձունքին վրայ նստած՝ Վանի ծովու շիջելափառ վերջալոյսը կը դիտէին, երբ յանկարծ իրենցմէ մէկը— Յարութիւն Տէվկանց—Տէր Սարգիսեանը*)—բարձր ու քաղցր ձայնով մը կ'երգէր իւր գրած և Երուսաղէմի Մեծ Աքսորականին ձօնած հետեւեալ երգը։

---

*) Ծնած էր Վանի մէջ 1870-ին։ Նախնական ուսումը Գաղաքամէջի «Ճիսուեան» դպրոցի մէջ ստանալէ յետոյ, իւր հօրեղբայր Սեդրաք Տէվկանցէն հայերէն՝ իսկ Տիգրան Ամիրճանեանէն ալ ֆրանսերէն լեզուի դասեր կ'առնէր։ Ինքնաշխատութեամբ կրցաւ զարգացնել իւր բնական ընդունակութիւնները և Պարին երթալով մտաւ տեղւոյն Սանսսարեան Վարժարանը, ուր երկու տարի փայլուն յաջողութեամբ սովրելէ յետոյ վերադարձաւ Վան և նուիրուեցաւ ուսուցչական գործունէութեան։ Գրած է բազմաթիւ յեղափոխական երգեր և մանկական պատմուածքներ ու երգեր, որոնցմէ մաս մը յայտնի են, իսկ անոնք որ չհրատարակուեցան 1915-ի դէպքերու ընթացքին։

Ծովածաւալ մաքուր հով,
Փչիր, փչիր սաստկացիր,
Անծայրածիր ովսանդ ծով,
Ցուզուիր, յուզուիր, կատաղիր....
Ա՛խ Հայրիկ, չան Հայրիկ,
Չանս քեզ մատաղ Հայրիկ։

Փչիր քամի, յուզուիր ծով,
Ոտքի ելէք ալիքներ,
Գոհակք, փրփուր պսակօք,
Արշաւեցէ՛ք անհամբեր,
Ա՛խ Հայրիկ, չան Հայրիկ,
Չանս քեզ մատաղ Հայրիկ։

Մեր վեհ Հայրիկ գլխակոր,
Կեանք է խնդրում ձեզանից,
Վատեր տանում են աքսոր,
Դուք օգնեցէք, չուրք անբիծ։
Ա՛խ Հայրիկ, չան Հայրիկ,
Չանս քեզ մատաղ Հայրիկ։

Վատերից դուք փրկեցէ՛ք
Ձեր ծոցն հանգչի յաւիտեան,
Փայլուն աստղեր, զարդարէ՛ք
Մեծ մարդու սառ դերեզման....
Ա՛խ Հայրիկ, չան Հայրիկ,
Չանս քեզ մատաղ Հայրիկ։

Այս երգն ալ շուտով կը տարածուէր և լայն ժողովրդականութիւն կը վայելէր՝ վանէն Կովկաս, Կ. Պոլիս և մինչև Երուսաղէմ՝ ուր Մեծ Աքսորականը Դողգոթային ուխտի գացեր էր....

## Գ.

## ԱՔՍՈՐԱԿԱՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԻԿԸ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՄԷՋ

Հայրիկը կը հասնէր Երուսաղէմ և կ'իջնէր Հայոց Ս. Յակովբեանց Մայրավանքը—իւր աքսորավայրը: Երուսաղէմի Հայոց Մայրավանքի Պատրիարք Յարութիւն Արքեպ. Վեհապետեանն ու միաբանութիւնը սառն ու անտարբեր ընդունելութիւն մը ցոյց տուին Մեծ Վտարանդիին, որուն իրը բնակավայր, Ս. Յակովբի եկեղեցւոյ փոքրիկ բակին մէջ, դէպի արլ, Աբեղաթաղի գետնայարկ, ճեղիկ, ցած եւ խոնաւ խուցերէն մէկը յատկացուցին.

Պետութիւնը խիստ հրահանգ կուտար Յարութիւն Պատրիարքին և վանքի միաբանութեան, որ Խրիմեանը Երուսաղէմէն չը հեռանայ: Պատրիարքը անձամբ ու պաշտօնապէս կ'երաշխաւորէր և պետութեան մօտ պատասխանատու կը դառնար, որ Խրիմեանը Երուսաղէմէն չը պիտի հեռանայ.

Հայբիկը կը քաշուէր իւր մենաւորի խուցին մէջ և օրն ի բուն կամաւոր բանտարկեալի մը կեանք կը վարէր։ Անոր կը ծառայէին վանեցի երկու երիտասարդները— Վահան Սահակեան (յետոյ Կորիւն Եպիսկոպոս) և Վահան Լազարեան (յետոյ Խորէն Վարդապետ)։ Առաւօտ երեկոյ նա տաճարը կ'իջնէր և անկիւն մը կծկուելով լուռ ու մունջ կ'աղօթէր։ Ցերեկները կարդալ-գրելով և այցելութիւններ ընդունելով կը զբաղուէր։

Կորիւն Եպիսկոպոսը, 1920-ի Ապրիլ 4/17-ին, Էջմիածնի մէջ, Հայոց Հայբիկի ծննդեան հարիւրամեակի հանդէսի ժամանակ, ճառախօսելու ընթացքին պատմեց նաև հետեւեալը.

«Երուսաղէմի մէջ ես կ'ապրէի Հայոց Հայբիկի մօտ և սիրով կը կատարէի անոր տուրեայ գործերը։ Առաւօտ մը, արեւածագէն առաջ, ըստ սովորութեանս արթնցայ և գացի Հայբիկի խուցը սուրճ եփելու համար։ Երբ մօտեցայ, տեսայ, որ դուռն ճակատի վրայ փակցուցեր էին թուղթի մը կտոր, որուն վրայ կարդացի.

*Թէպէտ վտար, քաղք քաղաք կամ թափառ,*
*Բախտն ու մարդիկ զիս հալածեն անգթաբար.*
*Այլ արդեն իսկ ազատութեան երբ վեհ ձայն*
*Թոռան բերանէս՝ յանձն առի վիշտ զայս համայն.*
*Ազատութեան ես անձնուէր,*
*Վիշտ, ցաւ սիրով ամ յանձն առեր.*

*Վտարուանդի՛, թէպէտ դառն են այս օրեր,*
*Օր մ'ալ տեսնես ազատութիդ ես հասեր,*
*Ազատութեան յաղթանակը քու ձեռքիդ՝*
*Վարդն ու շուշան պսակ պիտի դնեն գան ճակտիդ։*
*Ազատութեան ես անձնուէր,*
*Վիշտ, ցաւ սիրով ամ յանձն առեր**)։

«Մտայ Հայբիկի խուցը, յայտնեցի այս մասին. Նա եկաւ ու կարդաց, աչքերն արցունքով լեցուեցան և տխուր հեռացաւ ու գետնի վրայ ծալապատիկ նստելով սկսաւ անընդհատ ծխել։ Ծխախոտի ծուխին մէջ կը փայլէր անոր վշտալի և թախծապատ դէմքը։


---


*) Այս երգի հեղինակը Մկրտիչ Փորթուգալեանն է։

ՄՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ


Ազգորակաճ յերուսաղէմ

(1891)







Երուսաղէմ – հայոց Ս. Յակոբայ Մայրավանքի «Աբիղաթաղ»ի այն գետ-



նայարկ և խոնաւ խուցը, ուր ապրեցաւ հայոց հայրիկը, իւր աքսորի առաջին տարին և ուր՝ գրեց իւր գրչի գլուխ գործոց «Պապիկ–թոռնիկ»ը. (Անդ-ը լ–ա–ն–ե–ր)։



«Որչափ հետաքրքրուեցանք չը կրցանք գիտնալ թէ ո՛վ փակցուցեր էր այդ թուղթը։ Շատերը կը պնդէին, որ Ժառանգաւորաց Վարժարանի աշկերտներն ըրած են այդ»։

Կ'ուզէք ծանօթանալ Հայոց Հայրիկի աքսորական կեանքի մանրամասնութիւններուն, ապա ուրեմն լսեցէք թէ ինչ կը պատմէ «Շահէն ի Սիպիր»ի ծերունազարդ հեղինակ Օեդրաf Տէվկացցը, որ 1891-ի գարնան Երուսաղէմ գնաց Հայրիկը տեսնելու և վարդապետ ձեռնադրուելու նպատակով*)։

«...Տարիներ անցեր էին, վերջապէս անակնկալ դէպքով տեսայ դինքն յԵրուսաղէմ։ Ահա իր վիճակի և կենաց համառօտութիւն։ Սուրբ Յակոբայ եկեղեցւոյ բակին մէջ, դէպի աջ կողմը, միաբանութեան խուցերն տանող ճամբուն մուտքը, առաջին յարկին վրայ դռնակ մը կայ փոքրիկ ու նեղկիկ. եթէ քիչ մը հասակդ բարձր է երկու կտոր լինելու ես. եթէ քիչ մը հաստկեկ, քովընտի ներս մտնելու ես այդ բանտի դռնէն։ Նախասենեակը խոնաւ և մութ խցիկ մը, երկաթապատ փոքրիկ լուսամուտ մը ունի։ Այդ անտանելի խուցէն մի ուրիշ խուց կը մտնեմ որ հազիւ մէկ մեթր լայնութիւն և երեք մէթր երկայնութիւն ունի։ Պատուհանին կից կտրած սեղիկ մը և ժանգոտած պղնձէ աման մը՝ Հայրիկի լուացուելու տեղն են. իսկ մնացեալ մասը անկողիններու յատկացեալ է։ Այս նեղ խուցի վարի կողմը դռնակ մը կայ. անկից ահա Հայրիկի սրահ մտնելու բարեբաղդութիւնը պիտի ունենամ. Օիրտս և աչքերս լեցուած, ահա մեր պաշտելի և պատկառելի Հայրիկի ներկայութեան կը գտնուիմ... աննկարագրելի են առաջին տպաւորութիւնքս։

«—Ո՞ր հովերու թեւերովն այստեղ թռաք եկաք... ապրի՛ս, քալ ես եղեր, ինչ աղէկ ըրիր, բան մ'ալ չը գրեցիր առաջուց։

«Հայրիկին փարած էի անխօս, անլեզու, արտասուքս միայն կը խօսէին։

«—Տէ՛, ասա տեսնեմ, ինչ կայ աշխարհ...։

---

*) Տէվկանցը չը ձեռնադրուեցաւ, վասն զի Երուսաղէմի Հայոց Պատրիարքը կ'առաջարկէր, որ դաւնայ վանքի միաբան և Երուսաղէմէն չը հեռանայ։ Տէվկանցը այս առաջարկը մերժեց և չը ձեռնադրուեցաւ։

«Թողլով մեր խօսակցութիւն, քանի մը տողերով նկարագրենք Հայրիկն իւր սենեկին մէջ։ Աւելի քան ութ տարիներ անցեր էին, յորմէ հետէ չէի տեսած Հայրիկն. այսքան ժամանակի մէջ ուրախ եմ ըսել թէ այդ մեծ մարդու կորովի կազմուածքը կրցեր է մինչև ցարդ դիմանալ արկածներով լի եօթանասուն տարիներու ծանրութեան. միայն շատ թեթև բիչ մը շնչաբգելութիւն և մերթ մասնակի յոգնացաւ կը նեղեն զինքն, եթէ ոչ ընդհանրապէս քաջառողջ է և ազգն բաղդաւորութիւն պիտի ունենայ տակաւին ընդ երկար տարիներ Հայութեան պարծանք և մխիթարանք Խրիմեան Հայրիկն վայելելու, եթէ փութով այդ սոսկալի զրնցան խուցէն, այդ վտանգաւոր կլիմայէն դուրս ելնէ։ Այո, Հայրիկի բընակարանը սենեակ չէ այլ իրօք զրնցան։ Գետնայարկ խուց մը, որոյ և տանիքի քարուկիր հաստութիւնն մէկ կանգունէն աւելի է, ճիշտ գետնափոր գերեզմանի ձև ունի, երկնունիկ ու նեղ. երկու մէթր լայնութիւն և երեք մէթր երկայնութիւն ունեցող այս նեղ խուցին մէջ երեսակայեցէք պարթևահասակ Խրիմեանը համարձակ չէ կարող կանգնիլ զի գլուխ առիքին կը զարնէ։ ...Այս տարօրինակ սենեակը պատուհան մը միայն ունի անլոյս, որ պատրիարքարանի մարմարիոնէ մուտքին վրայ կը նայի. աջ ու ձախ կողմերն երկու փոքրիկ խալիներով և բարձերով բազմոցներ կան. միոյն վրայ ինքն բազմած է, միւսին վրայ հիւրերը կ'ընդունի փոփոխակի. փոքրիկ սեղան մը ալ կայ կանաչ կերպասով ծածկուած և պարզ աթոռակ, ուր կ'աշխատի Հայրիկ։ Հայրիկին մօտ պաղատի (ծալապատիկ) նստած է Հ. Ղևոնդ Փիրղալէմեան, որ թէպէտ տկար, բայց իւր զուարթ բնաւորութեամբ անոր անձկութիւն և վիշտերն կը մեղմացնէ։ Ճաճախ Հայրիկի հետ կը ճաշէինք. և դիտէք ինչ է իւր կերած. պահոց օրեր քանի մը դգալ ծաւրէ վռօճի պէս բան մը որ վանեցի վարդապետ մը կը պատրաստէր սիրով, ցամաք ոսպ կամ բակլայ, իսկ ուտիք օրեր, միաբանաց սովորական կերակուրը որ չէր կարող ուտել. քանի մը պատառ խաշած միս և հաւկիթ էին իւր սիրած կերակուր, իւր սակաւապէտ սնունդը։

«Իսկ ննջարան և կամ անկողին իւր նեղ բազմոցն էր, որոյ քով սարկաւագը (Վահան Մահակեան) երկար տախտակ մ'ալ կը յաւելուր երկու աթոռներու վրայ հաստատեալ. անդ կը ննջէր Հայոց

Հայրիկը... Երբէք գժգոհութիւն, բնաւ տրտունջ մը չը լսեցի իրմէ. Միայն օր մը ըսաւ—„Արծիւն ճնճղկան վանդակի մէջ սեղմած են. այս ալ կ'ապցնի...“. Արդեօք Երուսաղէմի այդ ընդարձակ և հարուստ վանքին մէջ Խրիմեանին արժանի և յարմար տեղ և կեանք պատրաստել կարելի չէր. Ինչո՞ւ չէ. բայց.... X

«Տասնևվեց օր դրեթէ Հայրիկի հետ միասին անցունելու երջանկութիւնն ունեցայ. Օր մ'ալ Սուրբ Յովհաննու ծնունդ գացինք. խեղճ Հայրիկ, որչափ կարօտ մնացեր է լեռներու օդին, ծառերու շուքին, զղզղուն աղբերաց. այդ իւղ և մեղր բղխող Աւետեաց երկիրը, Դաւթի քաղաքը, Սողոմոնի տաճարը չոր ու ցամաք ծալ-ծալ քարեղէն լեռներէ կը բաղկանայ, ի զուր առուակ մը, աղբերակ մը կը փնտռեն աչերդ. տօթակէզ արևին տակ, սպիտակ ժայռերու ծալքերու վրայ, անջրդի կը հալիս ու կը պապակիս. Վերջապէս մեր ուխտատեղին կը հասնինք ուսկից ձորակի մը մէջէն կը բարձրանանք Երուսաղ վանք որ ովասիս մ'է իւր պարտէզներով. Հովանաւոր ծառի մը տակ կը հանգչի Հայրիկ, որչափ գոհ է. ծառոց տերևներու սօսափիւն և բարձունքի հանդէպ ձորի տեսարանը հայրենի յիշատակներ կը զարթեցունեն յինքն, ամէն վայրկեանին հրատոչոր «ահա» մը կը թռի սրտէն. Վարագայ լեռներ, Վարագայ ծառեր, Վարագայ հովիտ, հազարաւոր սառիկ ու չորիկ աղբիւրներ, Կօտ քարի տակ աղբիւրը կը յիշէ անոր հովն ու հոտ ու պէս պէս ծաղկունքն անհամար. — Ի՞նչ անուշ հով կը փչէ, կըսէ Հայրիկը և կը տարածուի հողին վրայ բացօթեայ. վերարկուս վրան կը ծածկեմ... Հով դու, կամացո՛ւկ շարժէ տերևներն որ չի զարթեցնեն Մեծ տարագիրն. թողէք հայրենի յիշատակաց երազներու մէջ շրջի հանգչի պահ մը. Իսկ ես անշարժ կը հսկեմ, կը տեսնեմ անոր մրափած սիրուն դէմքը և կըսեմ ինքնին—եթէ Հայ ազգն իւր խոր քունէն չարթննայ և չը տեսնէ Հայրիկն և զայն Կաթողիկոս ընտրելով այդ բանտէն չի հանէ, օր մ'ալ Հայոց Հայրիկը այդ կլիմային, այդ զնտանին մէջ աչերը պիտի փակէ և այլևս չի պիտի բանայ ի դատապարտութիւն մեզ...»։

Ինչպէս նախորդ երկու գլուխներու մէջ յիշեցինք հնչակեաններու նպատակն էր, որ Խրիմեանը Եւրոպա երթար և յօգուտ Հայ-

կական Հարցին աշխատէր և յեղափոխական գործերու յաջողութեանը զարկ տար։

Հնչակեաններու «կեդր. վարչութիւնը նկատելով որ Խրիմեան Երուսաղէմի մէջ կը տառապի և թերևս իր այդ դրութիւնը երկար տևէ առանց ներման արժանանալու, նկատելով որ Խրիմեանը արտասահման երթալով յեղափոխական գործին աւելի մղում տուած կ'ըլլայ և այդ երկու պարագաները հայ ժողովուրդին վրայ լաւ ազդեցութիւն պիտի ընէ, ուստի կեդր. վարչութիւնը ծրագիր մը կը կազմէ Խրիմեանը Երուսաղէմէն փախցնել և ծրագրին գործադրութիւնը կը յանձնէ Ռ. Խանազատին» (Յարութիւն Ճանկիւլեան. Յիշատակներ Հայկական Ձգնաժամէն. Գ. Մաս. էջ՝ 55)։

Հնչակեան Կուսակցութիւնը, Ռուբէն Խան-Ազատի միջոցով, նախ կ'առաջարկէ Գր. Արծրունիին, որ «Եւրոպա անցնի և ազատ ու համաձակ կերպով յեղափոխութեան գլուխ կանգնի», բայց Արծրունին կ'առարկէ։

«—Ինչու այդպիսի առաջարկով դուք Խրիմեանին չէք դիմում, այ նա բոլորովին պարապ ու անգործ նստած է Երուսաղէմում, թող գնա Եւրոպա և թող գործ կատարի, նա աւելի մեծ անուն ունի հայութեան մէջ և աւելի վստահութիւն է վայելում, քան ես»։

Վերջապէս հնչակեանները կ'որոշեն իրենցմէ մէկը ղրկել Երուսաղէմ Խրիմեանը՝ Եւրոպա փախցնելու համար։

Այս ծրագրի գործադրութիւնը կը յանձնուի Ռուբէն Խան-Ազատին, որը իւր գրած և «Հայրենիք» ամսագրի մէջ տպուած «Հայ Յեղափոխականի Յուշերից» յօդուածաշարքի, «Մեծ Մարդու փոքր հաշիւներ» վերնագրով ԻԶ.-դ գլուխին*) մէջ, իւր յեղափոխական առաքելութեան մասին կը պատմէ հետևեալ մանրամասնութիւնները, որոնք 1908-ին լոյս տեսած են արդէն անոր «Յիշողութիւններ Խրիմեանի մասին» անունով գրքոյկին մէջ։

«Ժրնէվի ընկերներիս ես արդէն ասել էի Երուսաղէմ գնալու դիտաւորութեանս մասին։ Բանից դուրս եկաւ, որ նրանք էլ Խրիմեանին Եւրոպա տանելու այդ „մեծ“ միտքը յղացել էին և մտադրուել էին այդ նպատակով յատուկ մարդ ուղարկել Երուսաղէմ։

*) Հայրենիք ամսագիր. Վեցերորդ տարի. 1928. Թիւ՝ 4. էջ՝ 126—130։

Այդտեղ մենք մանրամասն քննութեան առանք, թէ ինչպէս պիտի կարողանանք օգտագործել Խրիմեանին, որ նա իր միջամտութիւններով չխանգարի մեր գործունէութեանը ու չցանկանայ ղեկավար դերի մէջ մտնել։ Բոլոր հանգամանքները քննելուց յետոյ, մենք ծրագրեցինք մօտաւորապէս, թէ ինչպէս և ինչ եղանակով ես պիտի դուրս բերեմ Խրիմեանին Երուսաղէմից, եթէ նա համաձայնութիւն տայ։ ...Ինքս միայն Ալէքսանդրիա ուղևորուեցի։ Ալէքսանդրիայում միայն մի քանի օր մնացի։ ...Ճանապարհուեցի դէպի Նաֆֆա, իսկ այնտեղից էլ կառքով (երկաթուղին դեռ չէը կառուցուած) Երուսաղէմ։ Մինչև Երուսաղէմ հասնելս ինձ զբաղեցնում էը մի այլ չափազանց կարևոր հանգամանք. ինչպիսի պայմանների մէջ էը պահում աքսորական Խրիմեանը, որ աստիճան խիստ էը նրա վրայ եղած հսկողութիւնը, թոյլատրում է արդեօք ուխտաւորներին նրա հետ ազատ տեսնուելու. թոյլատրում է նրան վանքի պատերից դուրս գալ։ շրջապատուած չէ արդեօք լրտեսներով. պիտի կարողանամ նրա հետ տեսնուել և նպատակս յայտնել, իսկ եթէ առաջարկութիւնս ընդունի, ինչ ձևով պիտի նրան վանքի պատերից դուրս հանել կարելի պիտի լինի արդեօք դռնապանին կաշառել և գիշեր ժամանակ վանքի դռները բանալ տալ. կը համաձայնուի՞ Խրիմեանը արդեօք ծպտուել, հրէական հագուստ հագնել եւ կամ հարկ եղած դէպքում մօրուքը խուզել (ընդգծումները իմս են Հ.Ա.)։

«...Ճաշարան տանող միջանցքի վրայ էը բացւում Խրիմեանի խուցը, որ միմեանց մէջ մտնող երկու սենեակներից էը բաղկացած. Առաջին սենեակում, որ նախասենեակի տեղ կարող էը ծառայել, պատում էին՝ նրա փոքրաւոր սարկաւագը, որ Ճարութիւն Պատրիարքի կողմից նշանակուած էը Խրիմեանի մօտ, որպէս լրտես, և իր հաւատարիմ վանեցի սպասաւոր Սահակը (ոչ թէ Սահակ, այլ Վահան Սահակեան. Հ.Ա.) որ շարունակ հսկում էը այդ լրտեսի վրայ։ Խրիմեանին Երուսաղէմում ներկայանալս մի չպատսուած անակնկալ էը։ Ինձ որ տեսաւ, բացականչեց զարմացած.

«—Ծօ, կենէ բուսար։

«—Զարմանալու ոչինչ չկայ—ասացի—ուխտի եմ եկել։

«—Հա, գիտեմ, դուն ուխտատեղեր կը սիրես,—պատասխանեց Խրիմեանը խորհրդաւոր շեշտով և շտապեց իրեն այցե-

լուրեան եկած պարոնին ճանապարհ դնել։ Ապա վերադառնալով ինձ, հարցրեց։

«—Այստեղ քեզի համար ինչ գործ կայ, որ եկեր ես։

«—Ուղարկուած եմ յատկապէս Ձեզ Եւրոպա տանելու, Հայրիկ։

«—Բայց Խայրիկը ժանգոտած մեքենայ է, բանի պէտքական չէ։

«—Ձեզ վրայ հսկողութիւնը խիստ է, հարցրի Երիմեանին։

«—Չէ, հսկողութիւն չկայ, գիս բոլորովին ազատ ձգած են։

«—Ասել է դուք շատ հեշտութեամբ կարող էք այստեղից հեռանալ։

«—Հոսկէ երթալը շատ դիւրին է, հարկաւ, մենակ թէ, եթէ փախչիմ, այլևս գիս չեն թողուր որ Վան երթամ։

«—Հայրիկ, ներկայ պատմական ժամանակներում երբ Հայաստանը երկունքի մէջ է, Ձեր տեղը ոչ թէ Վանն է կամ Պոլիսը, այլ Եւրոպան ուր դուք կարող էք միանգամայն ազատ զգալ Ձեզ և կատարել այն դերը, որ պէտք է կատարէ հայ ժողովուրդի Հայրիկը։

«—Ատիկա լուրջ խնդիր է։ այդ մասին պէտք է լաւ մտածել։ Թող մտածեմ. վերջը քեզի պատասխան կուտամ։

«Մտածեմ խօսքը մի յայտնի չափով դրական պատասխան համարելով սաստիկ ուրախացայ և ուրախ տրամադրութեամբ վերադարձայ խուցս։

«Յաջորդ օրուան համար Երիմեանը ինձ ճաշի հրաւիրեց, որն ես սիրով ընդունեցի։ Մեր ճաշը երկար չտևեց և մեր խօսակցութիւնն էլ ճաշի ընթացքում կողմնակի խնդիրների շուրջն էր պատնում։ Երբ ճաշի սեղանը հաւաքուեց և փոքրաւորը, սովորական տաճկական սուրճը մատուցանելուց յետոյ, մեզ բոլորովին միայնակ թողեց, ես իսկոյն ինձ հետաքրքրող հարցին դարձայ։

«—Էհ, Հայրիկ, դիշերս լաւ մտածեցիք, ինչ կ'ասէք այժմ։

«—Եայ, ատանկ շուտ կ'ուզէիր։ Ատիկա անանկ ալ դիւրին խնդիր չէ, որ կարենայի մէկ գիշերուան մէջ որոշում ընել, ասաց Երիմեանը խիստ լուրջ եղանակով։

«Ճակատի կնճիռները հաւաքած՝ մտածումների մէջ ընկաւ, իսկ ես հարցական նրա երեսին էի նայում։

«—Գիտես,—ասաց նա, մի երկու րոպէի լռութիւնից յետոյ,—եթէ այստեղէն փախչիմ, ամսականներս այլևս չեն տար ինձ։

«— Ինչ ամսական, հարցրի ես առանց գիտնալու թէ խնդիրը ի՞նչ է։

«—Դուն չգիտես, որ կառավարութիւնը ինձ 20 ոսկի ամսական կուտայ։ Եթէ փախչիմ, այդ ամսականներս այլևս չեն տար։

«Ես միանգամայն շանթահարուեցի և չկարողացայ ոչ մի բառ արտասանել, մեծ մարդու այդպիսի մանր հաշիւները լսելով։ Խրիմեանն իմ դլխին մի սափոր սառը ջուր էր լցրել։ Մի ակնթարթում իմ միջից չքացաւ ամբողջ հմայքն ու հրապոյրը, որ ես մինչ այդ ժամանակ տածում էի դէպի այդ մեծ հայրենասէրը, դէպի ամբողջ մի ազգի կողմից „Հայրիկ“ անունը վաստակած մարդը։ Պահ մի լռութիւնից յետոյ, ասացի.—

«— Այդ ինչ էք ասում, Հայրիկ, մի՞թէ ենթադրում էք, որ առանց Սուլթանի գանձարանից 20 ոսկի ստանալու դուք քաղցած պիտի մնաք։ Եւ ինչ մեծ պահանջներ ունիք դուք. մի՞թէ չտեսայ այսօր Ձեր ճաշը. այդ օրտեղ դուք չպիտի կարողանաք մի քանի ձու և թանէ ապուր գտնել։ Մի՞թէ վախենում էք, որ այն ժողովուրդը, որը Ձեզ Հայրիկ անունն է տուել չպիտի կարողանայ իր Հայրիկի թէկուզ ամենամեծ պահանջներն անգամ հոգալ։ Եւ ինչ կասի այն ժողովուրդը, երբ իմանայ, որ իր Հայրիկը, Սուլթան Համիտի 20 ոսկի ամսականից զրկուելու վախից, հրաժարուեց իր ազատագրական շարժման գլուխն անցնել։

«Խրիմեանն զգաց իր անհեթեթ պատճառաբանութեան ծանր տպաւորութիւնը և խօսակցութեան տոնը փոխելով ասաց.

«—Չէ, տղաս, չէ՛ որ քեզի ըսի՝ թող մտածեմ.

«Դարձեալ քանի մի օր մտածելուց յետոյ, Խրիմեանի վերջնական պատասխանը եղաւ.

«Դուն գնա հիմայ, Քանի մը ամիսէն ես կուգամ ու ձեզ կը գտնեմ»*)։

---

*) Պատմութիւնը պարզ է։ Խան-Ազատը, 1891-ի գարնան գացել է Երուսաղէմ Խրիմեանը Եւրոպա փախցնելու նպատակով։ Այդ թուականին—1891-ին—Խրիմեանը 71 տարեկան պատուելի և փորձուած ազգային դէմք մըն էր, իսկ Խան-Ազատը 29 տարեկան երիտասարդ և նորելուկ յեղափոխական մը, որ յաւակնութեան թևեր առած իջել է Երուսաղէմ և փորձած է Վասպուրականի հայոց Աբծիլը Եւրոպա փախցնել։ Խան-Ազատը 1889-ին, Գ. Գոլոյ մէջ, Հայրիկի հետ յեղափոխութեան և ազատագրական շարժումներու մասին խօսակ-

Այսպէս ուրեմն, Խրիմեանը Եւրոպա փախցնելու հնչակեաններու ծրագիրը ջուր կ'իյնար։ Հայրիկը հզօրական և խուսափողական խօսքերով կը մեռժէր Խան-Ազատի առաջարկը։ Եւ այսպէս ալ պիտի ըլլար, վասն զի Խրիմեանի անուան, դիրքին և տարիքին միանգամայն անյարմար և անվայել էր այդ արկածախնդրական փախուստը։ Եւ վերջապէս չէ՞ որ Երուսաղէմի վանքն ու Ճարութիւն Պատրիարքը, պետութեան մօտ երաշխաւորած էին, որ Խրիմեանը վանքէն չը պիտի հեռանայ։ Եօթանասուն մէկ տարեկան Հայոց Հայրիկը միթէ չը գիտէը, որ իւր փախուստը Երուսաղէմի Մայրավանքին համար շատ վտանգաւոր և վնասակար հետեւանքներու ծնունդ պիտի տար։

---

ցութիւն ունենալէ յետոյ, իբր թէ կ'ըմբռնէ «Խրիմեանի հոգեբանութիւնը ու ,, յեղափոխականութիւնը''» և կ'աւելացնէ—«նա յեղափոխականութիւն սիրում էր գրքերի ու քարոզների մէջ, իսկ իրական ու կեանքի մէջ կատարուած յեղափոխութիւնը, մանաւանդ երբ դա հայերին էր վերաբերում, նրան ուղղակի ոսոկում էր պատճառում» («Ծիշողութիւններ Խրիմեանի մասին» էջ՝ 21)։ Եթէ Խրիմեանն, ըստ Խան-Ազատի, այդպէս էր, հապա ինչու հնչակեան կուսակցութեան հիմնադիրներէն նոյնինքն սոցիալիստ և մարքսիստ Խան-Ազատը, յիշեալ եզրակացութեան գալէն երկու տարի յետոյ, իբրև հայ-քրիստոնեայ ուխտաւոր Երուսաղէմ կը մտնէր և կը փորձէր համոզել ու Եւրոպա փախցնել մէկը—իմա Խրիմեանը—որ «յեղափոխականութիւնը սիրում էր գրքերի ու քարոզների մէջ»։ Չէ՞ որ այսպիսի մէկը «ուղղակի ոսոկում» պիտի զգար յեղափոխական փախուստէն, որ պիտի կատարուէր Խան-Ազատի ձեռքով։ Ուրեմն Խան-Ազատը ըմբռնած չէր Խրիմեանի «հոգեբանութիւնն ու յեղափոխականութիւնը», վասնզի եթէ ըմբռնած ըլլար նա չը պիտի երթար Երուսաղէմ։ «Այլ առակ լուարուք»։

Խան-Ազատը ինքնիրեն հարց կուտայ—«Կը համաձայնուի՞ Խրիմեանը արդեօք ծպտուել, հրէական հագուստ հագնել և կամ հարկ եղած դէպքում մօրուքը խուզել»։ Նկատի առնենք, որ եթէ Խրիմեանը փախչելու ըլլար Երուսաղէմէն և յանկարծ ձերբակալուելով Գ. Պոլիս տարուէր՝ չէ՞ որ նա ծաղր ու ծանակի առարկայ պիտի դառնար և անոր կեանքն ու հոյակապ գործունէութիւն մութ ատուերով մը պիտի ծածկուէին։ Հայոց Հայրիկը հրէական հագուստով և մօրուքը խուզած Եւրոպա պիտի երթար յեղափոխական գործեր կատարելու համար։ Ո՛չ թէ Խրիմեան, այլ Խրիմեանի դիրքն ու համբաւը վայելող ծեւէ մէկը յանձն չը պիտի առնէր այդ ամօթալի փախուստին դիմելու։ Մենք հարց կուտանք Խան-Ազատին՝ եթէ հիմայ, այս օրերուն, Հայաստանի հնչակեաններու կողմէ երիտասարդ մը Թաւրիզ գայ և 66 տարեկան Խան-Ազատին ներկայանալով ըսէ թէ—«Ընկեր Ռուբէն, պարզակական հագուստ հագէք, ձեր մօրուքը խուզեցէք և հետեւեցէք ինձ, ես ձեզ Օրաքսի վրայով կը փախցնեմ Հայաստան կուսակցական և յեղափոխական գործեր կատարելու համար . . . . . »։

Վանի Ռշտունեաց գաւառի Նոր-Գիղ գիւղացի Մահտեսի Մուրաց Մուրատեանը Խրիմեանի՝ Երուսաղէմի կեանքի մասին, 1925-ին պատմեց իւր յուշերը, որոնցմէ կ'ամփոփեմ հետեւեալ մասերը.

«Երուսաղէմի Ժառանգաւորաց Վարժարանի աշակերտներէն ըլլալով յաճախ առիթ կ'ունենայի Հայրիկի հետ տեսնուելու և անոր քաղցր ու հաճելի զրոյցները լսելու։ Օրն ի բուն իւր խոնաւ ու նեղ խուցին մէջ ամփոփուած կը կարդար, կը գրէր և երբեմն ալ ցած ձայնով կ'երգէր։ Ցարութիւն Պատրիարքը յատկապէս այդ գետնայարկ ու խոնաւ խուցը յատկացուց Խրիմեանին, որպէս զի պետութիւնը չը կասկածէր թէ աքսորական Հայրիկը վանքին մէջ մասնաւոր գուբգուրանքի առարկայ դարձած է։ Անոր անձի և անուան շուրջ Երուսաղէմի բնիկ հայոց, ուխտաւորներու և միաբան-

---

Անշուշտ Խան-Ազատը կարուկ կերպով պիտի մերժէր այս առաջարկը։ Խրիմեանը կը ցանկար և յոյս ունէր, որ Երուսաղէմէն Վանը—Երկիրը—պիտի երթար և հոն աշխատէր, բայց Խան-Ազատը կ'առարկէ թէ—«Հայրիկ, ներկայ պատմական ժամանակներում երբ Հայաստանը երկունքի մէջ է Ձեր տեղը ոչ թէ Վանն է կամ Պոլիսը, այլ Եւրոպան»։ Եւրոպայի քաղաքական դահլիճներէն 1878-ին յուսախաբուած Խրիմեանը ցանկութիւն չ'ունէր նորէն Եւրոպա երթալ։ Նա իւր աչքերն ուղղած էր դէպի Մայր Երկիրը և կը ցանկար հոն երթալ—դէպի Աշխարհ Հայաստան։ Նա Երկրի և ժողովուրդի մէջ շատ աւելի մեծ գործ և աշխատանք պիտի կատարէր, քան թէ Եւրոպայի մէջ, ուր նորէն պիտի բաղխէր դիւանագիտութեան դռները և կամ կոյր գործիք դառնար Խան-Ազատներու ձեռքին։ Խան-Ազատը և Ծընէվի իւր ընկերները որոշած էին «օգտագործել Խրիմեանին» և որ գլխաւորն է, թոյլ չը պիտի տային «որ նա իր միջամտութիւններով» իրենց գործերը խանգարէր և կամ փորձէր «դեկավար դերի մէջ մտնել»։ Եթէ Խան-Ազատն ու իւրայինները համոզուած էին, որ Խրիմեանն այդպէս պիտի ընէր, ինչու կը փորձէին զայն Եւրոպա փախցնել։

Խան-Ազատը կը գրէ, որ «Խրիմեանը մարդկանց դէմքերը կարդալու հանճարեղ ընդունակութիւն ունէր». եթէ այսպէս է, ապա ուրեմն նա կրցած էր «առաջին անգամից» Խան-Ազատի «սրտի ու հոգու ներսը թափանցել» և զգալ ու գիտնալ, որ իւր այդ կերպ փախուստը Երուսաղէմէն անվայել՝ Եւրոպա երթալն ու Խան-Ազատներու կամքով և ցուցմունքով գործելը իւր անուան ու դիրքին անյարմար՝ իսկ քաղաքական ու ազգային շահերու տեսակէտով ալ անընդունակ պիտի դառնար։ Այս պատճառով ալ Խրիմեանը կը մերժէր Խան-Ազատի առաջարկը։

Այսպէս, իւր առաքելութեան և առաջարկի անյաջողութիւնը տեսնելէ յետոյ, Խան-Ազատը Խրիմեանի մահէն վերջը, 1907-ի Նոյեմբերին՝ Թիֆլիսի

ներու մէջ այնքան խոր յարգանք և համակրանք ստեղծուած էր, որ երբ նա երբեմն վանքի շրջապատէն դուրս գալով հեռուները պտոյտի կ'երթար, հետաքրքիր բազմութիւն մը—հայեր, հրեաներ և արաբները—կը հետևէին իրեն։ Նա կ'առանձնանար պարտէզի մը մէջ, կը նստէր կամ կը պառկէր վարդի թուփերուն տակ և դանակը ձեռքին՝ վարդենիի փայտերէն բազմաթիւ ծխամորճներ կը պատրաստէր, կը կարդար կամ շարական ու ժողովրդական երգեր կ'երգէր։ Իրիկուններըը յաճախ իր մօտ կ'երթային իւր հայրենակից և Վարագայ վանքի միաբան Ղևոնդ Վրդ. Փիլոզալէմեան և Մեսրոպ Վրդ. Մոկացեանը, որոնք իրենց հաճելի զրոյցներով և հին յուշերով Հայրիկին ուրախութիւն կը պատճառէին. Ղևոնդ Վրդ.ը չուն-գուռի վրայ կը նուագէր ու կ'երգէր աշուղական երգեր. Կը յիշեմ

---

«Մշակ» օրաթերթի, 1908-ին «Ծիսողութիւններ Խրիմեանի մասին» գրքոյկի և 1928-ին ալ «Հայրենիք» ամսագրին մէջ, կը գրէ, որ Խրիմեանն ըսաւ—«Եթէ այսօրուընէ փախչիմ ամսականներս չեն տար ինձ»։ Խրիմեանի այս խօսքը լսելէ յետոյ, Խան-Ազատը «կը շանթահարուի» և չի կրնար «ոչ մի բառ արտասանել, մեծ մարդու այդպիսի մանր հաշիւներ լսելով»։ Դեռ աւելին. այդ խօսքով Խրիմեանը Խան-Ազատի գլխին «մի ամբողջ կարաս սառը ջուր էր ածել»։ (Խան-Ազատը 1908-ին կը գրէ «մի ամբողջ կարաս», իսկ քսան տարի յետոյ՝ 1928-ին՝ կը գրէ «մի տափոր»)։ Ուրեմն, Խան-Ազատի խօսքերէն կը հետևցնենք, որ Խրիմեանը քսան ռոկի պետական ամսականէն չը զրկուելու համար Երուսաղէմէն չը փախաւ նըթացա, և ուրեմն այդ Մեծ Մարդը «իր մանր հաշիւները» չը դոհեց Հայ ազգին ու հայրենիքին։ Խրիմեանը պարզապէս Խան-Ազատին «ձեռք է առել»—ինչպէս կ'ըսեն կովկասահայերը—նեգեր ու ծաղրեր է անոր այդ անհեթեթ առաջարկը և կերպով մը «գլխից ցաներ է»։

Որպէս զի Խան-Ազատի համար պարզ լինի, որ Խրիմեանը «Մուլթան Համիտի 20 ռոկի ամսականից զրկուելու վախից» չէր, որ «հրաժարուեց աղատազրական շարժման գլուխն անցնելու», յայտնենք, որ Հայրիկը պետութենէն սատացած իւր 20 ռոկիէն ամսական 5 ռոկի կը զրկէր Կում-Կափուի ցոյցէն յետոյ ձերբակալուած և ապա Աքքայի բերդին մէջ բանտարկուած ճշակեացեներուն—Խան-Ազատի գաղափարակիցներուն—(այս մասին յետոյ)։ Այդ ամսականէն Խրիմեանը բաժին կը հանէր նաև Վարագայ վանքին և աղքատներուն։

Խան-Ազատը կը փորձէ նսեմացնել Խրիմեանի դէմքն ու արժէքը և մինչև անգամ մշեցի գաղթականի մը բերնով «փառաբէր» և «կեղծ խաչագող» որակումները կուտայ Հայրիկին. բնչու—որովհետև նա Խան-Ազատի միջոցով նըթացա չը փախաւ։ Այս է ահա Խրիմեանի ամբողջ «յանցանքը», որ առիթ տուած է Խան-Ազատին, իւր Փոքր ճաշիւները մաքրել Մեծ Մարդ Խրիմեանի հետ։

թէ ինչպէս շատերը կը ցանկային Հայրիկին խուցը մտնել և այդ ուրախ ժամանցին մասնակից ըլլալ, բայց տեղ չը կար, շատ նեղ էր։

«Օր մը Հայրիկը ինձ իւր մօտը կանչեց և ըսաւ—„Տղաս, բաւական բան սովրեցար, ալ ինչո՞ւ կը մնաս հոս, գնա՛ հայրենիք, վասն զի հոն քեզ նման երիտասարդները գեղջուկ ժողովուրդին մէջ շատ մեծ գործ կրնան կատարել մանաւանդ հիմայ, երբ ազատութեան գաղափարը եւ յեղափոխութեան ձգտումը օրստօրէ կը տարածուին ազգին մէջ“։ Հայրիկին խորհուրդով ես Երկիրը վերադարձայ և նուիրուեցայ գիւղացիութեան ազգային և յեղափոխական գործերուն»։

Հայրիկի սիրելին և գիւանապետ Կորիւն Եպիս.ը*) կը պատմէր.

«Հայրիկը օր մը Ցարուքիւն Պատրիարքի մօտ ճաշի հրաւիրուեցաւ։ Սեղանին կը մասնակցէին նաև քանի մը հարուստ Հայ ուխտաւորներ։ Մենք, քանի մը հոգի ալ, անկիւն մը կանգնած կը դիտէինք այդ ճաշկերոյթը։ Ցարուքիւն Պատրիարքը յանկած ոգեւորուեցաւ և կանչեց.

«— Է՜հ, Սրբազան Հայրիկ, ազգասիրական ճառ մը խօսեցէք մտիկ ընենք...։

«Հայրիկը ոտքի ելաւ և ժպտալով ըսաւ.

«—Սրբազան եղբայր, Վանայ մէջ ազգասիրական ճառեր և քարոզներ խօսեցայ գիս Պոլիս աքսորեցին, Պոլսոյ մէջ ազգասիրական ճառերը ըսի՝ զիս Երուսաղէմ աքսորել տուին, հոս ալ եթէ ազգասիրական ճառ մը խօսիմ ուր պիտի աքսորուիմ, ի վերին Երուսաղէմ արդեօք, բայց եթէ հոն գացի ձեզ ալ հետս կը տանիմ, ասի աղէկ գիտցէք հա՛...։

«Ծափեր և ծիծաղ իրար խառնուեցան և ապա Հայրիկը շատ զգայուն և յուզիչ ճառ մը խօսեցաւ»։

---

*) Ծնեալ ի Վան 1867-ին։ Վարդապետ՝ 1896 ին։ Կովկասի 1905 ի Հայ-Թրքական ընդհարումներու ժամանակ Դանձակ քաղաքի առաջնորդական յաջորդն էր։ Ռուս բռնապետութիւնը զայն մեղադրեց իբրև յեղափոխական և հակապետական անձ մը և 1907-ին աքսորեց Սիբիր, ուր ամբողջ 10 տարի շղթայակիր և չարաչար կեանք մը վարեց, մինչև 1917-ի Փետրուարի վերջերը, երբ Ռուս բռնապետութիւնը խորտակուեցաւ՝ Կորիւնը վերադարձաւ էջմիածին և վարեց զանազան պաշտօններ։ Կորիւնը 1920-ին ձեռնադրուեցաւ եպիսկոպոս։ Վախճանեցաւ 1922-ին, էջմիածնի մէջ։

Խրիմեանը 1892-ին, Երուսաղէմի մէջ, Հայոց Մայրավանքի մամուլին յանձնեց իր «Հրաւիրակ Երկրին Աւետեաց»ի Բ. Տպագրութիւնը, (պատկերազարդ, էջ՝ 168) «ի յոյս ընծայեալ բարերար ձեռնտուութեամբ գերապնիւ եղբարցն Կիւլպէնկեան», «ի յիշատակ հանգուցեալ սիրեցելոյ հօրն Սերովբէ Կիւլպէնկեան, կանգնեն զհրաւիրակս իբրև անմահ մահարձան, որդիք հարազատ հայրասէր և երախտագէտ՝ Պատրիկ, Յովհաննէս, Կիւլապի և Յարութիւն».

Երուսաղէմի իւր աքսորական կեանքին մէջն էր դարձեալ, որ Խրիմեանը երկնեց ու կերտեց իւր գրական ստեղծագործութեան գլուխ գործոցը — ՊԱՊԻԿ ԵՒ ԹՈՌՆԻԿ-ը*), «գիւղական ժողովուրդի համար գրեց Հայոց Հայրիկը», որ իւր խօսքը կ'ուղղէ՝ «Առ սիրեցեալ ժողովուրդս Հայոց».


«ՊԱՊԻԿ ԵՒ ԹՈՌՆԻԿ քեզ համար գրեցի և քո անուան նուիրում եմ, իմ սիրելի դաշտաբնակ մշակ ժողովուրդ, Հայոց Հայրիկ, որ այժմ ծերացած մի պապիկ դարձած է, նա սիրեց և փոքրկութիւն չհամարեց, որ ինքն պահ մի իբրև շինական պապիկ ձեւանայ, որպէս թէ Վասպուրականի Առճակ գիւղի մէջ ծնած է, վարագայ վանքում մաճկալ եղած է, շատ անգամ ի Պոլիս գնացել եկեր է և առանց դպրոցի նա միայն մտիկ անելով ու գրքեր կարդալով քիչ մի բան սովորած է և իւր սորված կ'աւանդէ իւր սիրական Թոռնիկին.

«...Ահա քեզ համար հոգացի և պատրաստեցի ՊԱՊԻԿ ԵՒ ԹՈՌՆԻԿ, իմ սիրելի գիւղացի ժողովուրդ, որ դու քո հայրենատուր հողն ու դաշտ սիրես և երբէք չի բաժանուիս, գիտնալով թէ քո կեանք հողն է ու հողագործութեան արդար ու հալալ վաստակ.

«...Վերջին բան առ ձեզ ուղղելով, ով Վասպուրական երկիր, իմ անձկալի Հայրենիք, ՊԱՊԻԿ ԵՒ ԹՈՌՆԻԿ յատկապէս ձեզ համար գրեցի, Երուսաղէմի Սիոնէ լեռան վրայ, խաչի հովանեաց տակ, դու կարդալով կը տեսնաս, որ Պապիկ Թոռնիկի նիւթեր՝ Վասպու-

*) Պապիկ եւ Թոռնիկ. գրեց՝ Հայոց Հայրիկ. Գիւղական ժողովուրդի Թոռնիկներու համար, ու յոյս հանին յօժարակամ փութով ազնուական եղբարք Կիւլպէնկեան. Տպագրեալ ի Մայր Աթոռ Սրբոյ Էջմիածնի. 1894—ՌՃՂԴ. էջ՝ 212, Հայրիկը իւր այս գիրքը ձօնած է հանգուցեալ Յովհաննէս Կիւլպէնկեանի յիշատակին.







— «Սիրելի թոռնիկ, կը տեսնաս ահա, Պապիկդ ծերացել է, ետքնետևը տարին անցուդարձել, դուռ միակ ժառանգ մնացեր ես մեր հայրենի տան։ Իմ այժմ պիտի սկսիմ հոդվածներուս բնական ես դիւրին դասերը տալ քեզ, որչափ լսած եմ ես որչափ փորձառութեամբ սորված եմ, խելացի թոռնիկ, բոլոր ուշդ հնձի դարձուր, լաւ ընդունիր դասերս ես ամփոփե մտքիդ մէջ»։

«Պապկի–թոռնիկ»

ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ



ՎԱՆ – ՎԱՐԱԳՆԱՑ ՎԱՆՔԸ ՄՈԽԻՐՆԵՐՈՒ ՄԷՋ (1915) ԱՒԵՐԱԿ ՆԻ ԱՄԱՑԻ

բական երկրի շինական ժողովուրդի դաշտի ծաղիկներէն քաղած եմ, զոր փնջիկ կապելով և ահա ձերն ձեզ կը նուիրեմ. ...կը թուիմ թէ շատ մօտ եմ ձեզ միայն հինգօրեայ ճանապարհ*) մի անջրպետ կայ. Վարագայ խաչի սար ծածկուած է աչքէս. Վասպուրական Արծիւն էի երբեմն, բայց այժմ թևաթափ ծերացած եմ, ու տայր ինձ որ նորափետուր արծուի լինէի, թռչէի վերանայի գէթ վերջի անգամ տեսնայի բարձր քարին վերայ դրուած իմ աւերակ բունիկս.

«Այլևս զուր է այս ցանկութիւն, կը մնայ ինձ հոգւով մօտ լինել ձեզ և հոգւով աղօթել վասն ձեր.

«Ինակ ձեզ կը մնայ կարդալ Պապիկ Թոռնիկ և յիշել զՀԱՑՐԻԿ.

«Թէ մեռնիմ երթամ ի գերեզման և այլևս չկարեմ խօսիլ ձեզ հետ կենդանի բարբառով ու գրով, ահա կը թողում ձեզ գիրս իբրև մշտախօս կտակ և յիշատակ, որոյ միակ նպատակն է, որ հայն իւր հայրենատուր հողէն չը բաժանուի».

Գիրքը կը բովանդակէ քսան և չորս գլուխներ. որոնց պարզ յիշատակութիւնն անգամ բաւական է, որ մենք գաղափար մը կազմենք անոնց պարունակութեան մասին, այսպէս.

«Երկիր, երկրի բնակիչներ—գիւղ և քաղաք. Հողագործութիւն և իւր արդիւնք. Փոխանակութիւն գիւղացւոց և քաղաքացւոց. Վիճակ մեր արդի հողագործութեան, Վարուցան և մշակական այլ աշխատութիւնք. Սերմի ընտրութիւն և սերմնացան. Զուր և ոռոգումն արտորէից և դաշտաց. Արտորէից բաժանումն հաւասար տարածութեամբ. Մայր հողին տկարութիւն և զօրութիւն. Հունձք. Կալ և կալատեղ. Շտեմարան. Ձմեռն և անոնց դարման. Ոչխար և իւր ամենաշահ արդիւնք. Գթասիրութիւն ընտանի անասնոց վերայ. Մշակութիւն ծառատնկոց. Գիւղական ժողովրդի տուն և կեանքը. Գիւղական եկեղեցի և քահանայ. Գիւղական ժողովրդի վիճակին բարւոքումն. Թոռնիկին հարցնիք. Պապկէ պատկ ի դաշտ. Մեռելոց դաշտ և գերեզմանաց յիշատակարանք. Պապկէ կտակ և մահ».

Դարերու յիշատակներով օծուն և բնութեան գրկին մէջ հանգչող Հայ նահապետական գիւղին բովանդակ կեանքը իւր բազմազան

*) Այսինքն էջմիածնէն մինչև Վան։ Այս ծառաջաբանը Հայրիկ գրած է էջմիածնի մէջ, գիրքը մամուլին տալու առեն։

և գունագեղ էջերով կը ներկայանայ ընթերցողի աչքին առջև. Ահա արտն ու աքօր, դաշտն ու գութան, մաճկալն ու հօտապ, ցորենի և գարիի շեղջերը։ Ահա Հայ գիւղի արտերն ու դաշտերը, որոնց մէջ գութանն ու աքօրը կը ճռան, մաճկալն ու հօտապ իրենց գութանները կ'երգեն, հոն՝ արտին մէջ, հուժկու հնձուորները ցորեն կը հնձեն, մինչ իրենց արևահար դէմքերէն զուլալ քրտինքը մայր հողին վրայ կը ցօղուի, անդին՝ գետակն ու առուակը ջինջ ու սառն ջուր կը բերեն և ջրուորը արտն ու պարտէզը կը ջրէ, հոս՝ կալն ու կալատեղ, ուր թիկնեղ եզները կամն ու ջարջառը կը քաշեն, կալուորները արագ արագ կը բանան ցորենի և գարի խուրձերը և նոր կալ կը սարքեն, կը բարձանան շեղջերը, սրսուռ Ֆռիկ ու Աւեսիֆ ցորենն ու դեղին գարին կը մաքրեն, կը չափեն և ամբարը կը լեցնեն. Գիւղական թոնրատուներուն մէջ կեանքը կը ծփայ, թոնիրի բարկ ու բալար բոցին վրայ թանապուրը կ'եռայ, ճաշը կը փթփթայ և ապա զոյգ հարսները թոնրանշուրթին մօտ նստելով թարմ հաց կը թխեն։

Հեռուն գիւղին ժամն է, որուն կոչնակը կը տկլկայ, անդին ուռենիներով շրջապատուած ջրաղացը չրխկ-չրխկ՝ աղուն կ'աղայ, թոնիրներէն կը բարձրանայ կապոյտ ծուխը, մինչ խաչքարերուն առջև կծկուած մամիկները խունկ կը ծխեն մեռելոց հոգիներուն և իրենց ցամքած աչքերէն հազիւ կաթիլ մ'երկու արցունք կը ցօղեն և «ողորմի» մը տալով կը հեռանան։

Այնտեղ ոչխարի հօտը կը մակաղէ, հովիւը սրինգ կը փչէ, հովուական կեանքն ու հովերգութիւնը իրենց բնական ու հարազատ պատկերը կը ցուցնեն, այգիներու մէջ ծառատունկեր կը տնկուին, պտղամշակութիւնը կը զարգանայ, իսկ գիւղական խոնարհ խրճիթներուն մէջ և համեստ յարկերուն տակ՝ Հայ գեղջուկ և նահապետական ընտանիքի կեանքը կ'եռայ՝ իւր ոճական, գիւղական, աւանդական և ազգային բոլոր սովորոյթներով, որոնք այնքան անուշ են, հարազատ ու հայկական։

Եւ այս բոլորին մէջ կ'երևայ Հայրիկին շունչն ու հոգին, ա. նոր ուժգին ձայնը, ամենատես աչքերը, զգայուն սիրտը և վեհափառ դէմքն ու պարթև հասակը։ Հայրիկն ու Հայ գիւղը, Քրիստեանն ու Հայ շինականը իրար լուծուած, մէկ սիրտ, մէկ հոգի դարձած՝

անուշ, հարազատ և ժողովրդական ըմբռնում մըն է այս, գրական և պատմական իրողութիւն մը, որուն վրայ կերտուած է Վասպուրականի Աբծուի համահայկական մեծութիւնը։

«Այս գիրքը, Պապիկ եւ Թոռնիկ, շատ բան պիտի խօսի դեռ Հայութեան. ու վաղը, երբ անցնի ընդհանուր մորմոքի և անձկութեան ներկայ շրջանը, երբ աւերաքանդ հայրենիքի վերաշինութեան հարկն ու պարտականութեան գիտակցութիւնը խօսքի և կիրքի պայքարներու մէջ անխմաստօրէն ցրուած մեր ոյժերը ժողովէ հայրենի հողին ու աշխատութեան սեղանին առջև, այս գիրքը պիտի լուսաւորէ մեր ճամբան դէպի գիւղակեանքի գեղեցկութիւնները, դէպի շինական կենցաղի երջանկութիւնը» (Թ. Ե. Գ. «Խրիմեան Հայրիկ». էջ՝ 161)։

Վարագայ միաբան, «Ժառանգաւորաց Վարժարանի» անդրանիկ ուսուցիչներէն և ապա բանահաւաք ու գրամշակ Ղեոնդ Վարդապետ Փիրղալէմեանը, 1891-ի Մայիսին վախճանեցաւ Երուսաղէմի Հայոց Մայրավանքին մէջ։ Փիրղալէմեանի մահը խորապէս խոցեց սիրտը աքսորական Հայրիկին, որ արցունքով ու կսկիծով հետևեցաւ անոր դագաղին, գերեզմանի վրայ սրտառուչ դամբանական մը խօսեցաւ, համբուրեց բազմաշխատ վարդապետին ճակատը և կատարեց Թաղման կարգը։

Նոյն թուի աշնան Հայրիկը, իւր ծախքով Փիրղալէմեանի հոդեհոյտին վրայ դնել տուաւ պարզ ու անպաճոյճ տապանաքար*) մը, որուն տապանագիրն ալ Հայր Արծիւը գրած էր։

| Տապանաքարի աջ կողմի երեսը | Տապանաքարի ձախ կողմի երեսը |
|---|---|
| ՂԵՒՈՆԴՆ եմ ես Վրդով երկասէր<br>Սիրահար նախնի մեր հարց մատենից<br>Շրջեցայ տքնեցայ՝ի հայրենի աշխարհ<br>Հարդացի կրկտեցի հին ու նոր ծեռագիրս<br>Որչափ յիշտկրնս ես ծեռամբ օրինակեցի<br>Ո՛հ զամէն՝ի մթան թողի ես եւ գնացի<br>ՀԱՑՐԻԿ քեզ յանձնեմ եւ կտակ թողում<br>Զերկոցս իմ վաստակ՝ի լոյս հան՝ի լոյս: | Երանի՛ քեզ ՂԵՒՈՆԴԻՀ<br>Որ ծնար առ՝ի թեւօք Վրգյ Յաչին<br>Ծերսղէմ՝ի Սիոնի զոգ հանգչեցար<br>Ո՛հ լռեց երգախօսիկ լեզուդ<br>Այլ ոչ երգես երանի՛ տամ այն դարուն<br>Մի երկուանար հոգի կտակդ նուիրական է<br>Զքեզ ելաց զարծանագիրս յօղեց .<br>ԽՐԻՄԵԱՆ ՀԱՑՐԻԿ |

*) Խորին և սրտագին շնորհակալութիւնս կը յայտնեմ Երուսաղէմի Ամեն.

Երուսաղէմի մէջ վախճանեցաւ նաև Հայրիկի աշակերտներէն և վարագայ միաբան հմուտ տնտես Մեսրոպ Վրդ. Մոկացեաճը։

Խրիմեանը 1892-ի Մայիսի 2-ին, Երուսաղէմէն ուսուցիչ Միքայէլ Կազմարարեանին հետեւեալ նամակը կը գրէ.

«Ձեռ Աւծւոյ թուցելոյ՝ սիրելի որդւոյ մերոյ Պրճ. Միքայէլի Կազմարարեանճ.

«Ուսանողութեանդ մէջ տեսնելով հանգուցեալ անզուգական և ազգասէր մեր բարեկամին՝ սիրելի Գրիգոր Օտեանի գրական գործերու համար ձեր սէրն և գուրգուրանք, որ կարդալէ աւելի կը կըլանէիք, բարոյական պարտք կը դնեմ ձեր վրայ, որ անոր ցիր ու ցան գրական գործերը ի մի հաւաքելով՝ ոսկեղէն անմահ կոթող մը բարձրացնէք փոխան այն շիրիմին, որ չորս ու կէս միլիոն հայեր չխորհեցան կանգնել ցարդ։ Գիտեմ դուք նժդեհ և անծանօթ էք Պոլսոյ հայերու և բարեյիշատակ անզուգականի բարեկամներուն, բայց գօտեպինդ եղէք. եթէ ձեզ չեն ճանչնար, Օտեանի անունը ամենքն ալ կը յիշեն։ Գերապատիւ Սրուանձտեան Սրբազանին ալ կը գրեմ, որ քեզ առաջնորդէ՝ անոնց, որոնք Օտեանի հետ մօտ յարաբերութիւններ ունեցած են։ Մնամ ողջունիւ և օրհնութեամբ՝ Հայրիկ»։

Այս նամակը ստանալէ յետոյ Միք. Կազմաբարեանը գործի կը լծուի և տարիներու ընթացքին կը հաւաքէ Գր. Օտեանի անտիպ գրութիւնները, ճառեր և այլն և այլն, որոնցմէ մաս մը առանձին հատորով*) լոյս տեսան Կ. Պոլսոյ մէջ 1910-ին միայն։

Երուսաղէմի Հայոց Մայրավանքի հինաւուրց միաբան և բազմաշխատ գործիչ Եղիճէ Եպիսկոպոս Զիլինկիրեան**) Խրիմեան

---

Պատրիարք Եղիշէ Արքեպ. Դուրեանին, որ ընդառաջելով իմ գրաւոր խնդրանքին, հաճեցաւ 1926 ի Մայիսի 24-ին Փիրդալէմեանի տապանաքարը լուսանկարել տալ, իսկ տապանագիրն ալ ընդօրինակել տալով ղրկեց ինձ։

*) Գրիգոր Օտեանց. Հրատարակիչ Միքայէլ Կազմաբարեան. Կ. Պոլիս. Տպարան Դաւէր. 1910. էջ՝ 193։

**) Ծնեալ ի Խարբերդ 1863-ին։ Երուսաղէմի «Ժառանգաւորաց Վարժարանը» կ'ընդունուի 1879-ին։ Վարդապետ կը ձեռնադրուի 1886-ին՝ իսկ Եպիսկոպոս՝ 1910-ին։ Երուսաղէմի Մայրավանքին մէջ տասնեակ տարիներ վարած է բազմաթիւ պատասխանատու պաշտօններ—Աւագ Թարգման, Դարբասապետ, Առաջնորդական և տեսչական պաշտօններ վարած է՝ Պէյրութի, Կեսարիոյ, Դամասկոսի, Բազէչի մէջ (1897—1901) և այլուր։

Հայրիկի Երուսաղէմի աքսորական կեանքի մասին այսպէս կը յուշադրէ*)։

«Կեսարիոյ Ս. Կարապետի վանուց Ժառանգաւորաց Վարժարանի տեսչութենէն 1890-ին հրաժարելով Գ. Պոլիս եկայ, Կումկափուք ցոյցէն քանի մ՚ամիս յետոյ։

«Այդ տեսիլները Ոստիկանութեան Նախարարն էր Նազըմ Փաշա, որ իր ձեռքին տակ կը պահէր նաև հարիւրաւոր ամաչկանաւոր Հայ լրտեսներ, որոնք պետութեան հաղորդած էին թէ Խրիմեան Հայրիկը երբեմն Նարլը-կափուի Հայոց եկեղեցւոյ քարոզիչ Վաղինակ Ծ. Վարդապետ Խաֆարեանին կ՚այցելէ։ Այս իսկ պատճառով Վաղինակ Վրդ.ը յաչս կառավարութեան նկատուեցաւ իբր վտանգաւոր և կասկածելի անձ մը, վասն զի տեսնուած ու խօսած էր Խրիմեանի հետ։ Վաղինակ Վրդ.ը, որ իմ դասընկերն էր և լաւ բարեկամս, 1890 Դեկտեմբերի վերջերը, օր մը ինձ հրաւիրեց ճաշի, որուն ներկայ էր նաև մեր նախկին դասընկեր Արմենակ Սարգիսեանը։ Ճաշի ժամանակ ազգային և քաղաքական հարցերու շուրջ երկար զրոյցներ ունեցանք։ Մեր սեղանակից և անարժան ընկերը —Արմենակ Սարգիսեանը, որ ոստիկանական լրտես էր և մենք չը գիտէինք այդ– Նազըմ Փաշային երթալով մեր խօսակցութիւնները պատմած էր։ Նոյն գիշերը, ոստիկանութիւնը խիստ հրահանգ ղրկեց Գ. Պոլսոյ Երուսաղէմատան Փոխանորդ Սիմէոն Եպիս. Սէֆէրեանին, որպէսզի ես չը հեռանամ։ Երկու օր յետոյ Կրօնական ժողովի Ատենապետ Գարեգին Եպիս. Օրուանձտեանց և Քաղաքական Ժողովի Ատենապետ Սահակ էֆ. Ղազարոսեանը Երուսաղէմատունը եկան և Սիմէոն Եպիս.ի ներկայութեան, պաշտօնապէս հարցաքննեցին զիս։ Տեղեկագիրը ստորագրեցի և յանձնեցի իրենց։ Յաջորդ օրը Նազըմ Փաշան, Աշըքեան Պատրիարքի միջոցով ինձ յայտնեց—„Եղիշէ Վրդ. Չիլինկիրեանը, Ս. Ծնունդը տօնելով երկ-

*) Թաւրիզեցի գերաեան Արմենակ Աճառոճեաճը 1927-ի գարնան Երուսաղէմ ուխտի երթալով, խնդրեցի իրմէ, որ տէր Եղիշէ Եպիս. Չիլինկիրեանի յուշերը (Խրիմեանի մասին) ի գիր առնելով ղրկէր ինձ։ Ահաբոճեանը կատարեց իմ խնդիրքը։ Նա մանրամասնօրէն ի գիր առաւ (1927 Մայիս 20) Եղիշէ Սրբազանի յուշերը և լուսանկարել տուաւ Մայրավանքի Աբեղաթաղի այն խուցը (տես պատկեր էջ՝ 615), ուր 6 ամիս ապրած էր աքսորական Հայրիկը։

երրդ օրն իսկ (1891 Յունուար 7) պէտք է անպայման Երուսաղէմ երթայ, իր ներկայութիւնը Կ. Պոլսոյ մէջ կասկածելի է, վասնզի տեսնուած էի Վաղինակ Վրդ.-ին հետ, որուն կ'այցելէը նաև Խրիմեանը". Ստիպուած էի կատարել այս հրամանը. Մեկնելուս օրը Օրուանձտեանցը լալով ըսաւ ինձ — „Պաշտելի Հայրիկին ս. աչը կը համբուրեմ, իր օրհնութիւնը կը հայցեմ, ախ... այլևս իրար չը պիտի տեսնենք...":

«Հասայ Երուսաղէմ. գտայ զՀայրիկ լուսարարապետի յարկաբաժնի ներքև գտնուած Աբեղաթաղի խոնաւ ու ցեղ խուցի մը մէջ կծկուած. Վշտահար էր, տխուր և կէս հիւանդ վիճակ մ'ունէր, անկողնոյ մէջ նստած կը ծխէր ու կը կարդար. Ցետ տեսութեան Հայրիկն ըսաւ — „Եղիշէ Վարդապետ, Ս. Աթոռը քեզ պիտի ղրկէ Պէյրութ իբր տեղւոյն Հայոց հոգևոր հովիւ և Ս. Նշանի վանուց տեսուչ, բայց ես կը փափագէի, որ չ'երթայիք, վասնզի ես ձեր աջակցութեան շատ պէտք ունիմ". Սակայն Մայրավանքիս Տնօրէն Ժողովը զիս մէկ շաբաթ յետոյ ղրկեց Պէյրութ. Երբ Հայրիկին գացի մնաս բարեաւ աջահամբոյրս մատուցելու, հիւանդ պառկած էր. Երբ ինձ տեսաւ լացաւ և ձեռքը բարձին տակը տանելով դրամի քսակն առաւ ու հինգ օսմ. ոսկի տալով ըսաւ.

«— Ա՛ռ սա հինգ օսմ. լիրան և Պէյրութէն Ցարութիւն էֆ. Ճանկիւլեանի հասցուր յԱքքաա, և գրէ անոր, որ Հայ բանտարկելոց մէջ բաժնէ». (Ականջը խօսի հնչակեան վաստակաւոր գործիչ Ռուբէն Խան-Ազատին. Հ. Ա.).

«Պէյրութ հասնելէս յետոյ, Հայրիկի տուած հինգ ոսկին ղրկեցի Համա-Համուսի (և ապա Դամասկոսի) ռուսական հիւպատոս հայազգի Կոստանդիս Կամսարականին (Վանի նախկին հիւպատոսը) խնդրելով, որ հասցնէր Աքքաայի բանտարկելոց. Պէյրութի օրհնեալ և ազգասէր Հայ ժողովուրդն ալ պարբերաբար դրամական գաղտնի հանգանակութիւն կատարելով կ'օգնէր Աքքաայի բանտարկելոց. Իսկ Հայրիկը սովորութիւն ըրաւ պարբերաբար ճ-ական ոսկի ղրկել ինձ, զոր կը հասցնէի Աքքաայի բանտը. Խրիմեան Հայրիկի և բանտարկելոց միջև թղթակցութիւնը կը կատարուէին իմ միջոցաւ՝ն է բանտարկեալը նամակնին ինձ կը ղրկէին և ես ալ Ց. Ցարութիւն Պատրիարքի հասցէով կը ղրկէի Երուսաղէմ, անկից կը

ստանալը զանոնք Խրիմեան Հայրիկը և անդրադարձ պատասխաններն միևնոյն միջոցով կը ղրկէր ինձ։

«Պէյրութ եղածս ժամանակ, օր մը Կամսարականն ինձ իր տունը ճաշի հրաւիրեց և ցոյց տուաւ Լոնտոնի կարևոր ազգայիններէն իր ստացած նամակները, որոնք ծանր մեղադրանքներ գրած էին Ծարուխիւն Պատրիարքի և Մայրավանքի միաբանութեան մասին, շեշտելով, որ Խրիմեանը Երուսաղէմի մէջ ամենքէն լքուած, մեկուսացած և հիւանդագին կեանք մը կը վարէ՝ օրն ի բուն կծկուած իր խոնաւ ու նեղ խուցին մէջ և կը խնդրէին, որ կաստ. Կամսարականը խստիւ պահանջէ Մայրավանքէն, որ Խրիմեանին լաւ սենեակ մը յատկացուի։ Կամսարականը յայտնեց նաև որ Լիբանանի Զահլէ քաղաքի յոյն Մետրապոլիտը (այժմ Անտիոքի Գրիգորիոս Պատրիարքը) Երուսաղէմ ուխտի երթալով այցելած էր Հայրիկին և անոր խուցն ու խեղճ վիճակը տեսնելով ցաւ ի սիրտ ըսած էր — „Արդեօք վայել է, որ Նախկին Պատրիարք և եկեղեցական ու հայկական այդ մեծանուն գործիչը—նոյն ինքն Խրիմեանը—Հայոց ազգի և Ս. Աթոռի կողմէ անուշադրութեան մատնուած՝ նեղ ու խոնաւ խուցի մէջ խաւարեցնէ իր կեանքը“։ Այս բոլորի մասին ես մանրամասն նամակ մը գրեցի Ծարուխիւն Պատրիարքին և յատկապէս խնդրեցի, որ Հայրիկին կանոնաւոր սենեակ մը տան։ Այդպէս ալ եղած էր։ Տարի մը յետոյ, 1892-ին, երբ ես Պէյրութէն իբր Վանքի Աւագ Թարգման Ս.Աթոռը կանչուեցայ, տեսայ, որ Հայրիկը Տնօրէն Ժողովի և Ծարուխիւն Պատրիարքի որոշմամբ փոխադրուած էր Մեծ Զարդախ կամ Քէօշկ յարկաբաժինը, ուր Մեծ Աքսորականը սկսաւ խաղաղ ու հանգիստ կեանք մը վարել և այնտեղն ալ գրեց «Պապիկ և Թոռնիկը»։ Տնօրէն Ժողովն ալ ինձ յանձնարարեց Հայրիկին պէտքերը հոգալու։ Հայրիկին յատկացուած պետական 20 ռսկի ամսականները միշտ ես կը ստանայի և կը յանձնէի իրեն։ Շատ անգամ յիշեալ գումարն ամբողջ մանր դրամ կը բերէի, նա կ'առնէր գրպանը կը լեցնէր և աղքատներուն կը բաժնէր (ականջը խօսի Խան-Ազատին. Հ.Ա.)։

«Հայրիկը բնաւ վանքի ներքին գործերուն չէր խառնուեր. Ծարուխիւն Պատրիարքի և միաբաններու հետ շատ սիրալիր էր։ Ճաշէն անոնց հետ զբօսանքի կ'երթար և ամենքի հետ կատակ-

ներ կ'ընէր. Ամէն օր Ց. Յակոբի տաճարը կ'իջնէր, կը կանգնէր մենակ և լուռ ու երկիւղած կ'աղօթէր. Մեծ-Բէօշկին մէջ, այս անգամ իւր ձեռքին տակ ունէր 4 սենեակ. Շատ կը ծխէր. ծխախոտին տուփն ու 10—15 ծխամորճները միշտ կողքին դրուած էին: Թէև վանքի սեղանատունէն իրեն կերակուր կը ղրկուէր, բայց նա միշտ թանապուր եփել կուտար և հաճոյքով կ'ուտէր, յիշելով Վան-Վարագն ու Տարօնը. Նա իւր սենեակի մէջ միշտ ալ ծալապատիկ կը նստէր սպիրի վրայ, կը կարդար ու կը ծխէր, իսկ գրելու ժամանակ կը նստէր գրասեղանի առջև.

«Օր մը, երեկոյեան կողմ, Հայրիկը կը պտտէր վանքի տանիքին վրայ, քիչ անդին ալ խումբ մը վարդապետներ կը պտտէին. Հայրիկը անուշ հայեացքով քանի մ'անգամ անոնց նայելէ յետոյ ըսաւ—„Ծո դոլի-դիվանաներ, ինչ կը պտտիք, աղօթեցէք որ Հայրիկը Կաթուղիկոս ըլլայ, որ ձեզ ամէնուդ ալ պսակէ...“, Թէ ինքը և թէ մենք կուշտ ու կուռ խնդացինք.

«Ես Գէյրութէն էի և հոն լսեցի, որ Եւրոպայէն յեղափոխական գործիչ մը ուխտաւորի հանգամանքով Երուսաղէմ եկած էր, որ Հայրիկին ծածուկ արտասահման փախցնէր, բայց նա մերժած էր. (Խօսքը Խան-Ազատի մասին է. Հ.Ա.).

«Կոստ. Կամսարականը 1892-ի գարնան իւր տիկնոջ հետ Երուսաղէմ ուխտի եկան և քանի մ'անգամ յատկապէս այցելեցին Երիմեանին. Անոնց տեսակցութիւնը ժամերով էր. հին յուշերը կը պատմէին Հայաստանէն, ազգային ու քաղաքական հարցերու մասին կը խօսէին և երկուքն ալ Մայր Երկրի մէջ գործելու բուռն սէր ու կարօտ կը ցուցնէին...»:

Այսպէս կ'անցնէին օրերը Մեծ Աքսորականին, որը Գողգոթայի բարձունքին վրայ նստած, փուշէ պսակը գլխին դրած, սիրտը տխուր ու վշտահար՝ իւր արտասուալից աչքերը կ'ուղղէր դէպի Աշխարհ Հայաստան, դէպի տառապանքի և արհաւիրքի Երկիրը, ուր զարկուած ու ջրկուած Հայ ժողովուրդը իւր սիրելի Հայրիկի հմայքով կ'ոգեւորուէր, անոր սիրով ու սրտով կ'ապրէր, անոր անունը կը յիշէր և տեսքը կ'երազէր... Իսկ «ճնճղուկան վանդակին մէջ սեղմուած» Վասպուրականի հսկայ Արծիւը իւր հզօր թեւերը կը թափահարէր անդադար և կը ցանկար թռչիլ դէպի Աշխարհ Հայաստան....

Ե.

## ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ՝ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

*Մակար Ա. Կաթուղիկոսը, 1891-ի Ապրիլի 16-ին սրտի պայթիւնով վախճանեցաւ Էջմիածնի մէջ։*

*Հրապարակ եկաւ կաթուղիկոսական ընտրութեան հարցը։ Մէկ տարի յետոյ պիտի կատարուէր նոր կաթուղիկոսի ընտրութիւնը։ Կովկասի, Կ. Պոլսոյ, գաւառներու և արտասահմանի Հայութեան ազգային ու հասարակական կեանքը նորէն կը փոթորկուէր։ Կաթուղիկոսական թեկնածուներու մասին ամենուրեք բանաւոր և գրաւոր վէճեր և կարծիքներ ծնունդ կ'առնէին։*

*Խրիմեանի, Իզմիրլեանի, Աշըքեանի, Սեդրաքեանի և ուրիշ յայտնի եկեղեցական գործիչներու անունները շրջան կ'ընէին մամուլի և ժողովներու մէջ։*

*Դրիգոր Արծրունին «Մշակ»ի միջոցով, չեմ կերպով կը պաշտպանէր Խրիմեան Հայրիկի թեկնածութիւնը, յիշելով նաև Սեդրաքեանի անունը։ Գր. Արծրունին, հիանալի հեռատեսութեամբ մը, 1891-ի Դեկտեմբերի 24-ին, «Բաց նամակ»ով մը կը դիմէր «Թիֆլիսի Թեմի Ընտրողներին».*

*«Որովհետև շուտով լինելու են Թիֆլիսի թեմի կաթողիկոսական պատգամաւորի ընտրութիւնները, ես պարտաւորութիւն եմ համարում բացարձակապէս յայտնել տպագրական խօսքի միջոցով, որ ես ուղղակի կը դնեմ իմ թեկնածութիւնը, որպէս Թիֆլիսի թեմի թեմական պատգամաւորի, և առաջարկում եմ, այն բոլոր եկեղեցական ընտրողներին, որոնք համակրում են թէ իմ 25 տարվայ գրական գործունէութեանը և թէ Մշակի գոյութեան 19 տարվայ ընթացքում դաւանած սկզբունքներին,—ինձ բուէ տան»։*

*Արծրունին նպատակ ունէր իբր պատգամաւոր երթալ Էջմիածին և Համազգային Ընտրական ժողովին մէջ պաշտպանել Խրիմեանի թեկնածութիւնը։*

*Արևմտահայ մամուլը, թէև գրաքննութեան շղթաներով կապուած չը կրցաւ կաթուղիկոսական թեկնածուներու և ընտրութեան մասին բան մը գրել, բայց Կ. Պոլսոյ և գաւառներու Հայութիւնը*

յայտնի և գաղտնի կերպով Խրիմեանի անունը կը յիշէը և կը ցանկաը, կը յուսար ու կ'երազէը, որ Հայոց Հայրիկը կաթուղիկոս ընտրուի. ժողովուրդին սիրտն էր խօսողը. ժամանակակից Հայ մտաւորականութիւնն անգամ համոզուած էր, որ Խրիմեանը կաթուղիկոս դառնալով շատ մեծ գործ կրնայ կատարել և նա է միակ արժանաւոր ու կարող թեկնածուն։ Իսկ ժողովուրդը խորապէս համոզուած էր, որ եթէ Խրիմեանը կաթուղիկոս ընտրուի, իւր բարձր դիրքի և պաշտօնի շնորհիւ պիտի կրնայ լուծել տալ Հայկական Հարցը և կերտէ Հայութեան ազատութիւնը. Սխալ թէ ճիշտ, այս էր ժամանակակից ժողովրդական ըմբռնումը, որ սակայն հաստատուն էր և անկեղծ.

«Մշակ» թերթին շուրջ բոլորուած Հայ մտաւորականութիւնն անգամ այնքան տարուած էր Խրիմեանի թեկնածութեան պաշտպանութեամբ, որ Ղազարոս Աղայեանը երուսաղէմը մեկնեցաւ այդ առթիւ Խրիմեանի հետ խօսելու համար, իսկ Խաչատուր Մալումեանն ալ (է. Ակնունի) առանձին գրքոյկով կը հրատարակէը Խրիմեանի կենսագրութիւնը, դրուատելով ու գնահատելով անոր կեանքն ու գործը։

Գր. Արծրունին, 1892.ի Փետրուարի 27-ին, «Մշակ»ի (թիւ՝ 23) մէջ «Միտիչ Խրիմեան» վերնագրով հոյակապ և պատմական յօդուածով մը կը ներկայացնէը Հայոց Հայրիկի «կեցդաճագիրը».

«Նա յայտնվում է հայութեան որպէս Վասպուրականի մի համեստ վանքի համեստ վանահայր. Համեստ իր սովորութիւններով, բարք ու վարքով, նիստ ու կացով, մարդկանց հետ պարզ վարմունքով, բայց անասելի յանդուգն, որպէս գաղափարի համար մարտնչող, որպէս մոլեռանդ պաշտող մարդկային մտքի.... Երջանիկ մարդ. նա անկեղծ կերպով հաւատում է մտքի փրկարար, անյաղթելի ազդեցութեանը, անպայման հաւատում է խօսքի ոյժին....

«...Եւ Խրիմեանը մնում է ֆանատիկոս, գաղափարամոլ, իր ամբողջ կեանքի ընթացքում մինչև ծօթանասուն երկու տարեկան հասակը. Միայն այդ տեսակ ճամոզվածները կարող են ժողովրդական մարդիկ լինել. դրա մէջն է Խրիմեանի ժողովրդական մարդ լինելու գաղտնիքը։

«...Մէը դէպի մարդկութիւն, ուրեմն և մէը դէպի իւր ազգը,

հաւատ դէպի արդար մտքի ոյժը, ահա այդ ժողովրդական մարդու նշանաբանը։

«...Խրիմեանը օպտիմիստ է, լաւատես է այդ բառի բուն քրիստոնէական մտքով։ Նրա համար չկան վատ մարդիկ աշխարհիս երեսին, այլ կան միայն մոլորված մարդիկ.... Նա միշտ անյիշաչար է..., յամառ է իր մտքերի, իր գաղափարների, իր դաւանած սկզբունքների մէջ։ Նա մազի չափ չի շեղվի իր սկզբունքներից... մի քարեայ սիւն, որին ոչ հողմը, ոչ էլ մրրիկը չեն կարող շարժել իր տեղից պատուանդանից։

«Մանուկ և հսկայ, հեզ և վիթխարի. ահա Խրիմեանի պատկերը։ Հաւատալ խօսքի ոյժին, հաւատալ մտքի անյաղթելի ազդեցութեանը, հաւատալ ճշմարտութեան, քրիստոնէական գաղափարի վերջնական յաղթութեանը. ահա Մկրտիչ Խրիմեանի նշանաբանը, նրա հաւատի դաւանանքը։

«...Որպէս իտէալիստ նրա հաւատը անսպառելի է. որպէս բուն քրիստոնէական հովիւ,—նրա պարտաճանաչութեան զգացմունքը իր հոգևոր զաւակների վերաբերմամբ, նրա հոգածողութիւնը, իր հոգևոր հօտի մասին՝ անսահման է...»։

Գր. Արծրունիի այս յօդուածը շատ խոր տպաւորութիւն թողուց հասարակութեան վրայ, որուն սիրտը կը ծփար Հայրիկի անուշ ու հարազատ սիրոյ զգացումով։ Ամէն Հայ շրթունքը Հայրիկի անունը կը հնչէր և ամէն Հայ սիրտը կը ցանկար, որ Խրիմեանը Հայոց Հայրապետ ընտրուի։

Հայ ժողովուրդը անօրինակ ոգևորութեամբ և գեղեցիկ յոյսերով առլցուն անոր գովքն ու փառքը կը բանահիւսէր և մինչև անգամ իւր ազգային ու քաղաքական ազատութիւնը անոր կաթուղիկոսանալուն մէջը կը գտնէր։

Եւ այս էր պատճառը, որ նոքէն քաղցր ու բարձր կը հնչէին Հայրիկին ձօնուած ժողովրդական երգի այս տողերը.

*«Խրիմեան Հայրիկ, աւետա՜ Մկրտիչ,*
*Դուռ պիտի չիմիս Հայրիկ ջան, խեղճ Հայոց Փրկիչ...»։*

Եւ այս տողերը խորին յոյսով ու անխախտ համոզումով կ'երգէր ոչ միայն պարզ ու հասարակ ժողովուրդը, այլև նոյն ժողովուրդի ղեկավար մտաւորականութիւնը։

Մայր Երկրի, Կովկասի և գաղութներու Հայութեան կողմէ կաթուղիկոսական ընտրութեան Համազգային ժողովին մասնակցելու համար ընտրուած պատգամաւորները, ժողովուրդին կողմէ հրահանգ կը ստանային իրենց ձայնը Խրիմեան Հայրիկին տալու։

Էջմիածնի Օինօղը գործի կ'անցնէր և թեմական պատգամաւորներուն հրաւիրագիրները կը գրկէր։

Ընտրուած պատգամաւորներն ու ներկայացուցիչները՝ Թուրքիայէն, Պարսկաստանէն, Կովկասէն և արտասահմանի քանի մը գաղութներէն՝ հետզհետէ Էջմիածին կը հասնէին։

Սակայն եկողներու մէջ չկային Մայր Երկրի—Վասպուրականի և այլ կարևոր վայրերու Հայութեան ձայնն ու փափագը ներկայացնող պատգամաւորները։ Կ. Պոլսոյ Պատրիարքարանը, յանձինս հակաժողովրդական Պատրիարք Խորէն Աշրքեանի խեղդած էր գաւառական Հայութեան ընտրական ձայնը։ Վասպուրականի Հայր Արծիւը կաթուղիկոսական թեկնածու էր, Էջմիածնի մէջ ընտրութիւն պիտի կատարուէր, սակայն Վան-Վասպուրականցիք աննման ու աննձայն կը մնային այդ ընտրութեան մէջ, վասնզի տաճիկ կառավարութիւնը այնպիսի մութ խաղեր ու դաւեր սարքեց, որ Վասպուրականէն պատգամաւորներ չը կրցան Էջմիածին երթալ։ Այս տխուր իրողութեան մէջ Աշրքեան Պատրիարքն ալ սև դեր մը խաղաց խորհուրդովն ամէն անոնց, որոնք Խրիմեանի երդուեալ ու կատաղի թշնամիներն էին։

Պատգամաւորներու բազմութիւնը տեսնելով, Աւետիք Արաքսանեանցի «Մուրճ» ամսագրի թղթակիցը—Ակաճատես—հարց կուտայ—«Ի՞նչու դրանց մէջ չկան բուն Տաճկա-Հայաստանի ներկայացուցիչները. Վան, Մուշ, Բլեթլիս, Սղերթ և այլն. ինչ խեղդեց այդ գաւառներուն ձայները։ Հայաստանի համար Կաթուղիկոս են ընտրում. ուր են բուն Հայաստանի ներկայացուցիչները։ Ինչպէս երևում է Անատոլիայի և Եւրոպական Տաճկաստանի գաղթականութիւնները աւելի շատ ներկայացուցիչներ պէտք է ունենան, քան թէ իսկական Տաճկա-Հայաստանը. Ուրիշ խօսքերով, այդ կողմերից բացակայ պէտք է լինի գլխաւոր ընտրողը» («Մուրճ» ամսագիր. 1892 Մայիս. Թիւ՝ 5. էջ՝ 809)։

Այսպէս ալ եղաւ։ Բուն Տաճկահայաստանի Հայութեան ձայնը

խեղդուեցաւ վանդի Խորէն Աղբեան «Պատրիարք Հայրը անհրաժեշտութեան մէջ էր գտնուած հղել սահմանափակ թիւ ներկայացնել կառավարութեան թոյլատուութեան կաթողիկոսական ընտրութեան մասնակցելու համար»։

Այժմ ներկայացնենք*) կաթուղիկոսական ընտրութեան համազգային ժողովի գործունէութեան մանրամասնութիւնները և Էջմիածնի մէջ կատարուած պատմական և ժողովրդական խանդավառ ցոյցերն ու հանդէսները։

«Վեհափառ կաթուղիկոսի այս անգամուայ ընտրութիւնը անշուշտ մեր պատմութեան նշանաւոր անցքերի շարքը պէտք է մտնի այն մեծ մասնակցութեամբ, որ ազգը ունեցաւ, և առաջին կաթուղիկոսացուի անձնաւորութեան արտասովոր արժանաւորութեամբ։ Այսպիսի փառաւոր վայրկեան քիչ է տեսել մեր ազգը, շատ չէ պատահում, որ անձնաւորութիւնը իւր մէջ ի մի ամփոփէ ազգի ժամանակակից բոլոր իղձերը և նրան նուիրական և պաշտելի բոլոր առաքինութիւնները, իսկ աւելի քիչ է պատահում, որ այդ տեսակ անձնաւորութիւն միահամուռ գնահատուի ժամանակակիցներից։

«Ահա հայերի մէջ վաղուց է, որ փայլում է այդ տեսակ մի անձնաւորութիւն, որի անունը և համբաւը ոգեւորում են ամիկից սկսած մինչև ամենակրթուածը, որոնք միմիայն ընդունակ են յարգել առաքինութիւնը և հասարակաց շահը և բաղդը վիճակել էր հայերին ամենապատկառելի և ամենապատուաբեր և, միևնոյն ժամանակ, իրենց համար ամենաօգտաւէտ պատմական գործ կատարելու, պսակել այդ տեսակ մարդու գործունէութիւնը տալով վերջապէս նորան ազգային ասպարէզի մէջ առաջին տեղը։ Ամենապատիւ Խրիմեան Մկրտիչ Արքեպիսկոպոսի ընտրութիւնը ամենաուրախալի նշանն է հայ ազգի հասարակական հասունութեան և որպիսի ընտրութիւն մենք ի զուր պէտք է փնտռենք նորա նման շատերը անցեալում։

«Ս. Էջմիածնում գումարուած Համազգային ժողովը մի վեհ և հետաքրքիր տեսարան էր ներկայացնում։ Դարերից ի վեր զանա-

*) «Արարատ» ամսագիր. Էջմիածին. 1892. Մայիս. Թիւ՝ ե. էջ՝ 448—472։

զան մասերում ցրուած հայերը այս անգամ միացել էին և մի ամբողջութիւն էին ներկայացնում. բոլորին էլ միևնոյն գաղափարները էին ոգևորում ընդհանուր ազգի վերաբերմամբ.

«...Ապրիլի 28-ից դեռ նոր սկսեցին տեղս ժամանել ընտրութեան պատգամաւորները և այնուհետև դեռ մինչև Մայիսի 2-ը շարունակւում էր նրանց անընդհատ գալը, և այսպիսի կարճ ժամանակամիջոցում այնպիսի գործունէութիւն տեղի ունեցաւ, որը նախատեսել ոչ մի կերպ չէը հնարաւոր և որը դեռ մինչև այժմ զարմանալի և անհաւատալի է թւում. կարճ ժամանակի մէջ զանազան հեռաւոր անկիւններում ցրուած հայ ազգի ներկայացուցիչները կարողանում էին միմեանց ճանաչել, համերաշխ լինել և մի դրօշակի շուրջը խմբուել. և այդ բոլոր յարաբերութիւնների մէջ Երիմեանի անմահ անունը, ինչպէս լուսատու ջահ, լոյս էր սփռում և ճեշտացնում միմեանց ճանաչելու գործը և ընտրութեան ծրագիրը. Երբ պատգամաւորների թիւը մի փոքր ստուարացաւ, նորա իսկոյն և եթ ձեռնարկեցին նախապատրաստական ժողովներ կազմելու, որոնց նպատակն էր ապահովացնել Երիմեան Հայրիկի առաջին թեկնածութիւնը և որոշելու միւս երեք թեկնածուների անունները. Վերջապէս բանակցութիւնները պսակուեցին ցանկալի վախճանով. Ռուսաստանի և Ջաճկաստանի պատգամաւորները համաձայնութիւն կայացրին Երիմեան Հայրիկին ընտրել միաձայն, իբրև երկրորդ թեկնածու ընտրել Սրբազան Մատթէոս եպիսկոպոս Իզմիրլեանին, իսկ իբրև երրորդ և չորրորդ թեկնածուներ Սրբազան Խորէն եպիսկոպոս Մէխիթարեանին և Սրբազան Երեմիա Արքեպիսկոպոսին. Այս ոչ պաշտօնական համաձայնութիւնը որոշեց ընտրութեան ելքը».

Այս պատմական և Համազգային ժողովին կը մասնակցէին 66 պատգամաւորներ՝ 72 ձայնով.

Հետաքրքրութեան համար հոս կը ներկայացնեմ Երիմեան Հայրիկի կաթուղիկոսական ընտրութեան պատգամաւորներու ընդհանուր ցուցակը, որուն դասաւորումը յարմարցուցի 646—647 էջերու վրայ տպուած խմբանկարին. (Անունները կարդալ և նկարները կարգով դիտել վերէն՝ աջ կողմէն սկսելով).

1. Յովհաննէս Քահանայ Տէր Յովհաննեան՝ ներկայացուցիչ Բայազիտի, 2. Բարդուղիմէոս Ա. Քհնյ Սարըաճեան՝ ներկ. Զաբշամբայի (ձանիկ), 3. Եփրեմ Արեղայ Սուքիասեան՝ ներկ. Առաջնորդին Բեսարաբիոյ, 4. Ներսէս Ծ. Վրդ. Արսլանեան՝ Առաջնորդ Զմիւռնիոյ, 5. Տրդատ Վրդ. Պալեան՝ Առաջնորդ Կեսարիոյ, 6. Պօղոս Վ.րդ. Խոլտաճեան՝ Առաջնորդ Կուտինայի և ներկ. Պրուսայի, 7. Եղիա Վրդ. Հասան-Ջալալեանց՝ պատգամաւոր Էջմիածնի Միաբանութեան, 8. Գէորգ Ծ. Վրդ. Իւթիւճեան՝ Առաջնորդ Եգիպտոսի, 9. Եղիշէ Վրդ. Այվազեան՝ ներկ. Եւդոկիոյ և Ամասիոյ, 10. Նահապետ Արեղայ Նահապետեան՝ ներկ. Սեբաստիոյ, 11. Յարութիւն Քհնյ Յակոբեան՝ ներկ. Ակնայ, 12. Յովհաննէս Վրդ. Դպիր-Վարդանեան՝ պատգ. Էջմ. միաբ., 13. Արիստակէս Վրդ. Տէվկանց—Տէր Սարգիսեան՝ Առաջնորդ Տրապիզոնի, 14. Վահան Վրդ. Տէր Գրիգորեան՝ անդամ Էջմ. Սինօդի, 15. Մինաս Ծ. Վրդ. Պարոն-Վարդեան՝ պատգ. Էջմ. միաբ., 16. Յովհաննէս Եպիս. Տաթևացի՝ պատգ. Էջմ. միաբ., 17. Արիստակէս Եպիս. Դաւթեան՝ անդամ Սինօդի, 18. Մեսրովբ Արքեպ. Սուքիասեան՝ Առաջնորդ Ադրիանուպոլսոյ. Մատթէոս Եպիս. Իզմիրլեան. 19. Մեսրովբ Արքեպ. Սմբատեան՝ Առաջնորդ Շամախիի, 20. Կարապետ Եպիս. Այվազեան՝ Առաջնորդ Արցախի, 21. Գրիգոր Եպիս. Գառնակերեան՝ Փոխ-Թեմակալ Երևանի, 22. Ղևոնդ Եպիս. Շիշմանեան՝ Առաջնորդ Կարնոյ և ներկ. Բասենի, 23. Սարգիս Եպիս. Տէր Գասպարեան՝ անդամ Սինօդի, 24. Մաղաքիա Եպիս. Օրմանեան՝ ներկ. Պատրիարքի Կ.Պոլսոյ և պատգմ. Շարին-Գարահիսարի. ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ. 25. Սահակ Եպիս. Խապայեան՝ ներկ. Պատրիարքի Երուսաղէմի, 26. Գրիգորիս Եպիս. Աղուանեան՝ անդամ Սինօդի, 27. Մամբրէ Եպիս. Սանասարեան՝ Առաջնորդ Թիֆլիսի. 28. Ստեփաննոս Եպիս. Յովակիմեան՝ Առաջնորդ Նիկոմիդիոյ, 29. Հմայեակ Եպիս. Դիմաքսեան՝ Առաջնորդ Թէքիրտաղի, 30. Երեմիա Եպիս. Գալատեան՝ Կաթուղ. Տեղապահ, 31. Արիստակէս Եպիս. Սեդրաքեան՝ անդամ Սինօդի, 32. Ղևոնդ Վրդ. Յովակիմեան՝ պատգ. Էջմ. միաբ., 33. Վարդան Վրդ. Վարդանեան՝ պատգ. Էջմ. միաբ., 34. Եղիշէ Վրդ. Ամատունի՝ ներկ. Առաջն. Ատրպատականի, 35. Խաչատուր Ծ. Վրդ. Կարապետեան՝ ներկ. Առաջն. Պարսկա-Հնդկաստանի, 36. Գէորգ Ծ. Վրդ. Երիցեան՝ Առաջնորդ Ռումանիոյ և Բուլ-

# ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ՊԱՏԳԱՄԱՒՈՐՆԵՐԸ

*Էջմիածին 3—5 Մայիս 1892 թ.*





Կաղապար՝ ՄԱՀՄՈՒՆ ԻՍՐԱՆՏԱՆԻ (Թաւրիզ, Սեպ. 1928)　　Լուսանկար՝ ՍԻՐԱՏԵԱՆՑԻ (Թիֆլիս, Սեպ. 1894

ՄԱՆՕԹ.—Այս պատմական լուսանկարը պատրաստած եւ պատուռած է յայնի լուսանկարիչ *Սիրատեանցը*, որ 1892-ի Ապրիլի վերջերը Թիֆլիսեն Էջմիածին գալով զանազան լուսանկարած է պատգամաւորներ: Լուսանկարի բնագիրը (մօտ մէկ մեթր երկայնիով) այժմ կը պահուի Էջմիածնի Մատենադարանի մէջ: Լուսանկարի ներքեւը տպագրուած է հետեւեալը.—«Պատգամաւորներ հին ընդ ամենը 79 անձինք 87 ձայնով, որոնցից բնտրութեանը ներկայ եղան միայն 65 հոգի 73 ձայնով: Իրանց գործիր յայտնողներ էին 14 հոգի, իսկ այս խումբը կազմուեցաւ 52 հոգուց 58 ձայնով (բացի Վեհ. Հայրիկը եւ Ս. Իգմիրլեանը), ասել է թէ ներկայ եղողներից 13-ի (15 ձայն) պաշտօներներ չկարողացանք ունենալ: Լուսանկար *Սիրատեանց*. 20 Սեպտ. 1894 Թիֆլիս»: Լուսանկարին մէջ կը տեսնուին նաեւ Աւարայր լեռը, Աւազս գետը, Ներսիսեան լիճը, Էջմիածնի, Վաղարշապատի, Տարեւի, Ս. Հռիփսիմեի, Շողակաթի, Թիֆլիսի վանքի եւ Ս. Յակոբ տաճարներն ու վանքերը: Առաջին անգամ լրլալով լոյս կը ընծայեմ այս յիշատակելից լուսանկարը: Հ. Անեմեան:

կարիոյ. 37. Ներսէս Վրդ. Հայկազունի՝ անդամ Սինօդի, 38. Կարապետ Մարգարեան՝ պատգմ. Բաբերդի, 39. Համբարձում Մոստիչեան՝ Կեսարիոյ, 40. Կարապետ Փափազեան՝ Ամասիոյ, 41. Ռուբէն Հասան-Ջալալեան՝ Երևանի, 42. Գրիգոր Արծրունի՝ Թիֆլիսի, 43. Տիգրան Կիւմիւշկէրտան՝ Կ. Պոլսոյ և Արաբկիրի, 44. Աբգար Յովհաննիսեան՝ Պրուսայի, 45. Գարեգին Փափազեան՝ Զմիւռնիոյ, 46. Մարսուտ Սանտալճեան՝ Ադրիանուպոլսոյ, 47. Յովսէփ Ճանիկեան՝ Ակնայ, 48. Յովհաննէս Սարգսեան՝ Աստրախանի, 49. Ներսէս Աթաբէկեան՝ Շուշիի, 50. Համբարձում Առաքելեան՝ Պարսկա-Հնդկաստանի, 51. Աղեքսանդր Լալայեան՝ Շամախիի, 52. Բժ. Յակոբ Նէվրուզեան՝ Թէքիրտաղի. (Իզմիրլեանն ու Խրիմեանը ցուցակէն դուրս են),

Այժմ յիշատակենք անունները այն պատգամաւորներուն, որոնք խմբանկարին մէջ չեն մտած.

53. Յովակիմ Վարդապետ Ղումէքեան՝ պատգ. Էջմ. միաբ., 54. Յովհաննէս Ծ. Վրդ. Արշարունի՝ Առաջնորդ Երզնկայի, 55. Խորէն Աւ. Քհնյ Վարդերեան՝ Ներկ. Դաղատիոյ, 56. Յարութիւն Թորոսեան՝ պատգ. Երուսաղէմի Հայոց, 57. Գասպար Գասպարեան՝ Նիկոմիդիոյ, 58. Խաչատուր Արսլանեան՝ Զարշամբայի, 59. Յարութիւն Շահրիկեան՝ Տրապիզոնի, 60. Յովհաննէս Կիւլպէնկեան՝ Սեբաստիոյ, 61. Համբարձում Լէփեան՝ Երզնկայի, 62. Կարապետ Տէր Ազարեան՝ Կարնոյ և Մշոյ, 63. Սարգիս Ենգիբարեան՝ Բայազիտի, 64. Աղեքսանդր Մելիք-Ազարեան՝ Ատրպատականի, 65. Ստեփան Մամիկոնեան՝ Բեսարաբիոյ.

Ընտրութեան օրը կը մօտենար. Երևանէն և Էջմիածնի շրջա-

---

Ծանօթ.—1. Առաջնորդներ՝ Խորէն Եպիս. Մխիթարեան՝ Սեբաստիոյ. 2. Տիմոթէոս Եպիս. Սափրիչեան՝ Պանորմայի, 3. Գէորգ Եպիս. Սուրէնեան՝ (այժմ Կաթուղիկոս Ամենայն Հայոց) Աստրախանի, 4. Մինաս Վրդ. Ամրիկեան՝ Ընքուշի, 5. Յովհաննէս Վրդ. Փափազեան՝ Արղնոյ, 6. Ներսէս Վրդ. Տէր Սարգսեան՝ Դերջանի, 7. Կարապետ Քհնյ Ներձակեան՝ Տիգրանակերտի (Առաջն. Փոխանորդ).

8. Մկրտիչ Կանեան՝ Տիգրանակերտի, 9. Համբարձում Ալաճաճեան՝ Պանորմայի, 10. Անտոն Ադաեան՝ Կուտինայի, 11. Յարութիւն Աբծրունի՝ Սեբաստիոյ, 12. Յովհաննէս Գալուստեան՝ Դերջանի, 13. Յովհաննէս Տէր-Իրմէնճեան՝ Ընքուշի, 14. Կարապետ Մուրատեան՝ Զմիւռնիոյ. Ցիշեալ 14 պատգամաւորները անձամբ չը կրնալով ներկայ ըլլալ ժողովին՝ ուղարկած էին «զգրաւոր կարծիս իւրեանց»:

կայ գիւղերէն հազարաւոր բազութիւն վանքի և Վաղարշապատի մէջ խռնուած էին, այդ պատմական հանդէսները տեսնելու համար։

«...Վերջապէս հասաւ Մայիսի 3-ը—կը շարունակէ Առաուտս թերթը։ Պարզ էր, որ այլևս մնացած ներքին գաւառների ներկայացուցիչները չպիտի հասնէին, եթէ դուրս էլ եկած լինէին։ Այսօր առաւօտեան պատգամաւորները և կառավարութեան ներկայացուցիչ Պ. Պրիբիլ և Սինօդի Պրօկուրօրը (Դանչելին) ժողովուեցին Վեհարան, որտեղից տեղի ունեցաւ հանդիսաւոր ընթացքը դէպի Տաճարը առաջնորդութեամբ Ամեն. Տէր Տեղակալի։ Այս հանդիսաւոր ընթացքի տպաւորութիւնը արտասովոր էր և հայերին վաղուց անծանօթ։ Վաղուց է, որ մենք ամբողջ ազգը ներկայացնող ժողովներ չենք ունեցել։ Ականատեսների յուզման և զմայլման չափ չկար։ Երբ Վեհարանի բակի դռնից երևաց հանդիսաւոր ընթացքի սկիզբը ամբոխը թնդաց կեցցէ Խրիմեան, կեցցէ պատգամաւորները ձայներով, որոնք չդադարեցին մինչև պատգամաւորների եկեղեցի մտնելը։ Պատարագից յետոյ որ մատուցեց Իչման Սեղանի վերայ Աղուանեան Սրբազանը, (Խրիմեանի հայրենակիցն ու գործակիցը) բոլոր պատգամաւորները ծնկաչոք լսեցին մաղթանք թագաւոր Կայսեր և Կայսերական Ընտանիքի համար։ Ապա աշխարհական պատգամաւորները տուեցին ընդունուած հանդիսաւոր երդումը, որը կարդում էր զգացուած և ազդու ձայնով Ամեն. Տէր Տեղակալը։ Երբ նոքա դուրս եկան եկեղեցուց ամբոխը ընդունեց նրանց ողջոյններով և կեցցէ Խրիմեան ձայն տալով։

«Մայիսի 4-ին ընտրութեան առաջին և նշանաւոր վայրկեանն էր։ Առաւօտուանից բազմատեսակ հասարակութիւնը, որի մէջ կային նշանաւոր թուով ինտելլիգենտ տիկիններ և պարոններ, լցրեց վանքի բակը։ Բոլորի երեսի վերայ հանդարտութիւն էր նկատւում, բայց այն հանդարտութիւնը, որը հետևում է սաստիկ յուզուած զգացմունքների յայտնուել ելքին։ Պատգամաւորները սկսեցին ժողովուել Վեհարան, գնալու ժամանակ անընդհատ արժանանալով ամբոխի զգացուած ողջոյններին, որով նա արտայայտում էր իւր գոհունակութիւնը կայացրած համերաշխութեան համար, որով ապահովացուում էր Խրիմեանի միաձայն ընտրութիւնը։ Կրկնուեց նոյն հանդիսաւոր ընթացքը, ինչ որ նախընթաց օրը։ Ամ-

բոխի մէջ տեսնւում էին մարդիկ, որոնք ձեռքերը բարձրացրած աղօթել սկսեցին։ Ի՞նչ էր նրանց սրտաշարժ աղօթքի միտքը, կարիք չկայ բացատրելու, միայն առանց զգացուելու անկարելի էր նայել այդ ռամիկ մարդկանց վերայ, որոնք այնքան իրենց սրտին մօտիկ էին համարում իրենց աչքի առաջ կատարուող մեծ գործը։ Պատգամաւորները փակուեցին տաճարում։ Նրանց թիւը 66 էր, 72 ձայնով։ Դորանցից տաճկական թեմներն ունէին 44 ձայն։ Դորանց մէջ զգացւում էր միայն ներքին գաւառների (Տաճկահայաստանի) ներկայացուցիչների բացակայութիւնը։

«Բաց աննելով Համազգային Ժողովի Նիստը, Ամեն. Տէր Տեղակալը ազդու խօսքերով յիշեցրեց Հայ ազգի Հայրապետների արիութիւնը և անձնազոհութիւնը յօգուտ եկեղեցոյ և ազգի և առաջարկում է ընտրել այդ մեծ Դահին արժանի անձնաւորութիւն։ Դորանից յետոյ պ.Գրօկուրօրը կարդաց Կովկասեան Կառավարչապետի գրութիւնը, որով առաջարկւում էր բանալ Ժողովը և յայտնւում էր, որ Բարձր Իշխանութեան կողմից ներկայացուցիչ է նշանակուած գաղտնի խորհրդական պ. Գրիբիլ։

«...Պարսկաստանի և Հնդկաստանի պատգամաւոր պ. Համբարձում Առաքելեանը, իւր ճառը ամբողջովին նուիրած էր Խրիմեան Հայրիկին—„Ընդհանուր Հայ ազգին փափագն և իղձն է Խրիմեանին տեսնել Հայրապետ. ...Խրիմեան՝ Հայը է հասարակաց։ ...Նրա համար չկայ իշխան, հարուստ, տէր, քաղաքացի, շինական, տգէտ, ուսեալ, այլ նրա մեծ հոգու, սրտի և մտքի առաջ պատկերացած է միայն հայ ժողովուրդ, ժողովուրդ, որի բարոյական, մտաւոր և կրօնական պահանջներին Նա պիտի լիութեամբ բաւարարութիւն տայ։ ...Նրա անխարդախ, անկաշառ, մաքուր հոգին պիտի լուսաւորէ Ս. Էջմիածնի վանքը և Հայաստան աշխարհը։

«...Խրիմեանից յետոյ քառանուն ցանկը լրացնելու համար իրրև արժանաւորագոյն անձինք նկատւում են Մատթէոս Եպիս. Իզմիրլեան, Խորէն Եպիս. Մխիթարեան և Երեմիա Եպիս. Տէր Մահակեան (Երուսաղէմի Պատրիարքական տեղապահ)։

«...Ապացուցէք, ապացուցանենք, որ արժանաւոր անդամներ ենք այս Վեհաժողովին. մի՛ մոռանաք, որ ապագայ սերունդ կայ, պատմութեան անաչառ, ահեղ դատաստան կայ, դատակնիք կայ,

ապագայ սերունդ կայ, պատմութեան անաչառ, ահեղ դատաստան կայ, դատակնիք կայ, եթէ մենք հակառակ ամբողջ ազգի ցանկութեան, ի վնաս Ս. Եկեղեցւոյ չընտրինք պաշտելի ՀԱՅՐԻԿԻՆ"։

«Պ. Հ. Առաքելեանի առաջարկութիւնը միաձայն հաւանութիւն է գտնում ժողովի կողմից ինչպէս և պէտք էր սպասել։ Օրանով վերջացաւ Մայիսի 4-ի նիստը։ ...Պէտք է ասած, որ այս մեծ ժողովի բոլոր գործողութիւնները կատարւում էին մեծ օրինապահութեամբ և առանց թիւրիմացութիւնների, որպիսի երևոյթի հետևանքն էր խաղաղութիւն ժողովի անդամների յարաբերութիւնների մէջ, որը ներշնչւում էր և բազմաթիւ ամբոխին։

«...Այդպէս մտենում էր անմոռանալի յիշատակի Մայիսի հինգը։ Բոլորի ուշը և միտքը մի բանով էր զբաղուած և զգացմունքները մի բանով լարուած, այդ Խրիմեան Հայրիկի առաջին թեկնածու ընտրուելու հարցն էր։

«Մայիսի 5-ին դեռ վաղ առաւօտուանից բազմաթիւ ամբոխը լցուեց վանքի բակը։ Նա արտասովոր ջղային էր այդ օրը։ Համակրանքի ցոյց էր անում այս կամ այն պատգամաւորին։ Զնայելով զգացմունքների լարուած լինելուն, կարգապահութիւնը չխանգարուեց ոչ մի տեղ։ Պատգամաւորները վաղ սկսեցին ժողովուել Վեհարան և արդէն ժամի 9-ին հանդիսաւոր ընթացքով ուղղուեցին դէպի Մայր Տաճարը։ Երբ նոքա երևացին, հազարաւոր ամբոխը թնդացրեց օդը, կեցցէ՛ Խրիմեան, կեցցէ՛ Հայրիկը ձայներով։ Պատգամաւորները իրենք ևս յուզուած էին։ Նոքա մտան եկեղեցի և փակուեցին։ ...Մէկը միւսի ետևից անցնում էին ժամերը. սպասողութիւնը իւր գագաթնակէտին հասաւ, բայց ցանկալի լուրը դեռ չէր գալիս։ Վերջապէս ժամի մօտ 12-ին Հայրիկի միաձայն առաջին թեկնածու ընտրուելու լուրը*) հասաւ և կայծակի արագութեամբ տարածուեց։ Մի քանի վայրկեան ուրախութեան արտայայտութիւնները և կեցցէները մի ձայնի էին ձուլուել, որը կարծես արտասանում էր մի վիթխարի հսկայ։ Ամենքը շտապում էին շնորհա-

*) «Խրիմեանի առաջին ընտրուած լինելը իմացուեց խռնուած ժողովրդին գանգակատան զանգակի մի հարուածով, որի խորհուրդը առաջուց պայմանաւորուած է եղել» կը վկայէ «Մուրճ» ամսաթերթը (1892, Մայիս)։

ւորել միմեանց՝ երկար տարիների ընդհանուր ազգի բաղձանքի իրագործումը։ Ազգային զգացմունքը լիովին բաւարարութիւն էր ստացել և արտայայտւում էր ուրախութեան բուռն նշաններով։ Մի քանի րոպէ չէր անցել Խրիմեան Հայրիկի ընտրութիւնից յետոյ, երբ արտասովոր և հազիւ երբ և իցէ տեսնուած նշան երևաց երկնքի վերայ։ Այդ օրը թափանցիկ և բարձր ամպերը բարակ քողով ծածկել էին երկինքը, որոնց միջից սահող արեգակը պարզ երևում էր։ Ճանկարծ պսակաձև ծիածան պատեց արեգակի շուրջը, իւր մէջ առնելով էջմիածնի Տաճարը. պսակի մէջ երևում էին ծիածանի գոյները։ Գեղեցիկ և աննման երևոյթի տպաւորութիւնը անկարելի է նկարագրել։ Հրաշալի երևոյթը մօտ տասն րոպէ կանգ առնելով տաճարի վերայ, սկսեց շարժուել դէպի արևմուտք և Վեհարանի տանիքի վերայ ցրուեց։ Հասարակութեան յուզման չափ չկար. բոլորը. գլուխները մերկացրած հիացած և զգացուած հետեւում էին սքանչելի ծիածանին։

«Հազիւ ժամի երկուսին պատգամաւորութիւնը, իւր գործը վերջացնելով, դուրս եկաւ Տաճարից։ Ամբողջ հասարակութիւնը խմբուած դէպի եկեղեցու դուռը սպասում էր նրան։ Ձայներին վերջ չկար, որոնցով հասարակութիւնը ողջունում էր պատգամաւորներին դուրս հետ միասին անընդհատ կրկնելով կեցցէները իւր սիրելի թեկնածուի վերաբերմամբ։ ...Թեկնածուներից Խրիմեան Հայրիկը ստանում է համազգային ժողովի բոլոր (72) ձայները։

«Ժամի 3-ին տեղի ունեցաւ Վանքի Սեղանատունը հանդիսաւոր ճաշ, որին մասնակցեցին Համազգային ժողովի բոլոր անդամները, Էջմիածնի Միաբանութիւնը, Բարձր Իշխանութեան ներկայացուցիչ պ. Պէքբիլ, Պրօկուրօր պ. Կանչելի և շատ պատուաւոր հիւրեր, թւով բոլորը աւելի քան երկու հարիւր մարդ։ Հասարակութիւնը չէր հեռանում վանքի բակից։

«...Ամեն. Տէր Տեղակալը (որ սեղանի նախագահն էր) առաջարկեց Օգոստափառ Կայսրի կենացը։ ...Ապա խմւում են Նորա Մեծամեծութեանց Տաճկաց Կայսեր Համիտ Սուլթանի և Պաբսից Արեգակնափայլ Նասիրէդդին Շահի կենացները։ Ամեն. Տէր Տեղակալ առաջարկում է ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿԻ կենացը։ Սրտի խորքերից բղխող կեցցէները և ուրախութեան ձայները երկար ժամանակ տի-

րում են Սեղանատանը. Երգւում է «Էջմիածին ի ճօրէ»։ Նիկոմիդիայի առաջնորդ Ստեփան Եպիսկոպոսը բաժակ առաջարկելով, խօսում է բարձր ոճով, իբրեն յատուկ խրոխտ և զգացուած ձայնով, սիրոյ և համերաշխութեան մասին։ (Դեռ երկար է շարքը կենացներուն և բաժակաճառերուն. Հ.Ա.)։

«...Ծամի 6-ին սեղանը վերջացաւ, Համազգային ժողովի անդամները նկարուեցան*)։ Բազմաթիւ հասարակութիւնը, որ դեռ շարունակում էր մնալ վանքի բակում մեծ ոգևորութեամբ ցոյց արեց Ամեն. Տէր Տեղակալին, Սրբազան Արիստակէս եպիս. Սեղբակեանին։ Աշխարհական պատգամաւորներից մի քանիսը հասարակութեան առանձին համակրութեանը արժանացան. դրանցից առանձնապէս պ. Գրիգոր Արծրունին։ («Նորան մինչ ելքի դուռը ձեռքերի վերայ տարան» կը գրէ «Մուրճ» ամսագիրը. 1892. էջ՝ 804)։

«Նոյն օրը երեկոյեան Վանքի բակում գեղեցիկ ճրագավառութիւն և հրախաղութիւն կար։ ...Ճեմարանի աշակերտների մէկ մասը երգում էր ազգային երգեր, ամենից շատ ի հարկէ Հայրիկի երգը, որ ծածկւում էր անթիւ կեցցէներով և ուրախութեան բացականչութիւններով։ Աշակերտների միւս մասը Վեհարանի տանիքից դիւթական լապտերով ցոյց էր տալիս հասարակութեանը Հայրիկի պատկերը, որի ամեն անգամ երևան գալիս հասարակութիւնը վերին աստիճանի յուզւում էր և կեցցէ Հայրիկ ձայները թնդացնում էին օդը, իսկ բակում գտնւող ճեմարանի աշակերտները այդ ժամանակ երգում էին Հայրիկի երգը»։

Այսպէս ահա, 1892-ի Մայիսի 6-ին, Էջմիածնի Համազգային ժողովին մասնակցող 65 պատգամաւորները, ընդառաջ երթալով բովանդակ Հայութեան կամքին ու ցանկութեան, իրենց 72 ձայնը կուտային 72 տարեկան պատկառելի Ծերունիին—Խրիմեանն Հայրիկին – եւ զայն կ՚ընտրէին Կաթուղիկոս Ամենայն Հայոց։

Խրիմեանի ընտրութիւնը պահ մը մտահոգութիւն պատճառեց թէ ռուսաց Արեքսանդր Գ.րդ ցարին և / թէ Կարմիր Սուլթան

*) Խրիմեան Հայրիկի կաթուղիկոսական ընտրութեան պատգամաւորներու այս խմբանկարի բնագրէն ունիմ ձեռքիս տակ հաղուագիւտ օրինակ մը, որ ցարդ անտիպ է։ Այս լուսանկարն ալ հետաքրքիր է և կը զանազանուի գրքիս 646—647 էջերու վրայ տպուած խմբանկարէն։

Համիտին. Ցարը և Նախարարական խորհուրդը կը վախնային, որ Երիմեանը. Կովկաս գալով իւր ներկայութեամբ հրահրէր հայկական յեղափոխական շարժումները, սակայն միւս կողմէ ալ ռուսաց դիւանագիտութիւնը, Երիմեանի ընտրութեամբ, քաղաքական հեռաւոր ծրագիրներ կը հետապնդէր. Չէ որ Երիմեանը համահայկական ամենէն մեծագոյն դէմքն էր, որուն սիրտը ժողովուրդին և ժողովուրդին սիրտն ալ անոր հետն էր: Այս իրողութիւնը Պետերբուրգի արքունիքին և քաղաքական դահլիճներուն ապագայ յոյսեր կը ներշնչէր, Տաճկահայաստանի ու Փոքր Ասիոյ գրաւումներու հեռանկարը կը ցուցնէր և Հայութեան սէրն ու համակրանքը դէպի Հիւսիսը կը քաշէր.

Երիմեանի ընտրութիւնը լուրջ մտավախութիւն կը պատճառէր մանաւանդ Սուլթան Համիտին, որ նախ՝ չ'ուզեց թրքական հպատակութենէն արձակել զայն, իսկ երբ չը յաջողեցաւ այս ընել, կարգադրեց, որ Երիմեանը Կ. Պոլսէն չ'անցնի Ռուսիա երթալու համար, վախնալով հայկական յեղափոխական ցոյցերէն և անակընկալ դէպքերէն, որոնք կրնային յառաջ գալ, երբ Հայրիկը մայրաքաղաքը մտնէր. Սուլթանը ամէն տեսակ հնդ միջոցներու դիմեց, որպէսզի ցարը չը հաստատէր Երիմեանի ընտրութիւնը. բայց զուր. Հիւսիսի Երկգլխանի Արծիւն աւելի խորագէտ ու զօրաւոր էր, քան թէ Հարաւի վայրագ ու պատառող Գայլը...

## Զ.

## ԵՐՈՒՍԱՂԷՄԷՆ — ԷՋՄԻԱԾԻՆ

Մայիսի 6-ի պատմական ժողովէն յետոյ, կաթող. Տեղակալ Երեմիա Եպիս.ը կը հեռագրէր Երուսաղէմ՝ Երիմեան Հայրիկին — «Էջմիածնի Ընտրողական ժողովը միաձայն ընտրեց Ձեզ Կաթողիկոսական գահի կանդիդատ». Աքսորական Հայրիկը կը պատասխանէր — «...ցայտնեմ զիմ սրտագին շնորհակալիքս, ի լուռն Սիօնի ողջունեմ զձեզ և զհամայն միաբան եղբարս...».

Այնուհետև Էջմիածինը պաշտօնական դիմումներ կը կատարէր,

որ ցարը հաստատէր Խրիմեանի ընտրութիւնը, ինչ որ տարի մ'ամբողջ ձգձգուեցաւ, վասն զի ռուս կառավարութիւնը տեղեկութիւններ կը հաւաքէր Խրիմեանի մասին, ստուգելու համար թէ նա ռուսական քաղաքականութեան համակիր է, թէ ինչ հայեացքներ ու ծրագիրներ ունի և թէ Կաթուղիկոս դառնալէ յետոյ արդեօք քաղաքական նպատակներ պիտի հետապնդէ Ռուսիոյ մէջ և այլն։

Այս բոլորէն յետոյ, սակայն Երուսաղէմի Մեծ Աբսորականը —Հայր Արծիւը «ճնճղկան վանդակին մէջ» կծկուած Հայաստանը կ'երազէր և Արծուաբոյն Վարագայ բարձունքներուն վրայ հանգչիլ կը ցանկար։ Թուղթն ու գրիչը և գիրքն ու երգն էին իր սիրտն ու հոգին մխիթարող միակ հաճոյքները։

Եւ Կաթուղիկոս ընտրուելէ յետոյ, թէև նա իր աչքերը Մասիսի ձիւնազարդ բարձունքին և Էջմիածնի գմբէթին ուղղած էր, բայց սիրտը, Հայրիկի սիրտը Վարագայ Արծուաբոյնին համար կը ծփար։ Նա սեղանին առջև կը նստէր, գրիչը կը բռնէր և Վարագայ Պաբոն Պետրոսին հետևեալ նամակները*) կը գրէր։

*1892 Յունիս 29 Յերուսաղէմ*

*Սիրելի Պետրոս*

*Զքեզ որ կը ճանաչեմ հաւատարիմ տնտես տանն Վարագայ, շատ ուրախ կը լինիմ որ երբեմն Վարագայ մասին շուրեր հաղորդես. այդ շուրերը թէ ուրախ լինին թէ տխուր հոգ չէ. պետք է Հայրիկ ուրախ շուրին համար ուրախ լինի և տխուր շուրին համար համբերէ։*

*Անտարբերութեամբ զանցառութիւն անել շատ ցաւալի է։ Վատահ լինելով որ ճշմարտութիւն կը սիրէք, խորհրդաբար կը հարցնեմ Ձեզմէ, գրեցէ՛ք։*

---

*) Այս երկու անտիպ նամակներու բնագիրները ինձ նուիրած է Վարագայ ծերունազարդ Պաբոն Պետրոսը, 1916-ի Յուլիսի 20-ին, երբ ես Վարագը գացի, ամայի և աւերակ Արծուաբոյնը տեսայ և Թիֆլիսի «Հարիզոն» օրաթերթի մէջ գրեցի տխուր ապաւորութիւններս։

Ես Մեսրովբ Վարդապետին*) գրեցի որ պատրաստուի Պոլիս գալու երբ հետագիրս ստանայ։ Այս բանն ի՞նչ ազդեցութիւն արաւ իր վրայ, յօժարութիւն ունի՛, եւ թէ Դանիէլ Վարդապետ**) յանձնառու կը լինի՞ յաջորդել անոր տեղ։ Ան այս ձեր կարծիքը ի՞նչ է, պիտի ճարողանա՞յ կատարվարել վանքը։

Միաբանները Դանիէլի հետ հաւանիրութիւն ունի՞ն եւ այլ կարեւոր տեղեկութիւններ ընդարձակ կերպով գրեցէք եւ գիր յանձնեցէք մեր Կարապետին։ Գրիս պատասխանը շուտով կ՚ուզեմ։

Աղօթարար՝ Հայրիկ

---

1892 Սեպտ. 21 Յերուսաղէմ

Սիրելի Պետրոս

Յուլիս 29 թիւ նամակդ եւս ստացայ, արդէն ստացեր էի Յուլիս 15 թիւ։ Երկու ընդարձակ նամակներդ ուշադրութեամբ կարդացի։ Այժմ Դանիէլ Վարդապետ բանի գլուխ անցաւ, կը յուսամ դուք նորա մեծ թիկնապահ կը լինիք։ Դուք ըստ ամենայնի մեր գաղափարին համաձայն էք։ Երկրագործութիւն պէտք է ամփոփուի. մեր ղրկած հրահանգ ձեզ համար մի ծրագիր է. չանացէք տակաւ առ տակաւ գայն գործադրել։ Արդէն այս տարի ինքնին այնպէս եղած է։

Այս ձմրան խորհեցէք, գործիքներ պատրաստեցէք, սկիզբն գարնան ձեռնարկէք ի գործ։ Գիտեմ հակառակ գաղափար-

---

*) Վարագայ վանքի միաբան Մեսրոպ Վրդ. Մոկացեանը, որ Հայրիկի կարգադրութեամբ անցաւ Կ. Պոլիս և ապա Երուսաղէմ, ուր և մեռաւ 1892-ի վերջերը, երբ Հայրիկը դեռ հոն էր։

**) Վարագայ փոխ-վանահայր Դանիէլ Վրդ. Թոսունեանը, որ քաջ, համարձակ և խոհուն մարդ մը եղած է, յայտնի քարոզիչ և ժողովրդական գործիչ մը, որ 1896-ի Յունիսին, Վանի դէպքերու ատեն, երբ քաղաքը կ՚երթար, Խաչ-Փողոցէն քիչ մը վար կը սպանուի տաճիկներու ձեռքով։

ներ ունեցողներ կան, աշխատեցէք զայնս համոզել թէ սիրով թէ յամառութեամբ։

Աշխարհիս վերայ ոչինչ գործ դիւրութեամբ յառաջ չ'երթար, միայն պէտք է հաստատուն կամք եւ սկզբունք ունենանք։

Հեռագիր տուած էիք պ. Պլուզեանի հետ, որով կը շնորհաւորէք մեր հաստատութիւնը *)։ Շնորհակալութեամբ կ'օրհնեմ զձեզ։

Աղօթարար՝ Հայրիկ

Վերջապէս 1893-ի Յունիսի 3-ին, «Կայսր եւ Իճճեակալ ամենայն ռուսաց» Ալեքսանդր Գ-րդ ցարը Խրիմեանի ընտրութիւնը կը հաստատէր յատուկ հրովարտակով.

«...Թող յայտնի լինի բովանդակ Հայոց ազգին, թէ անսալով նորա միահամուռ ցանկութեան, որ հանդիսաւոր կերպով յայտնուել է Էջմիածնում, 1892 թուի Մայիսի հինգին, Մենք հաստատում ենք Հայ-Լուսաւորչական Արքեպիսկոպոս Մկրտիչին Էջմիածնայ Պատրիարք և Կաթուղիկոս ամենայն Հայոց»։

Ցարը Յունիսի 6-ին՝ Ալեքսանդր Նեվսկու և ուրիշ շքանշանները՝ իսկ Յունիսի 10-ին ալ «վեղարի վրայ կրելու ադամանդեայ խաչ» կը նուիրէր Խրիմեանին.

Խրիմեանի կաթուղիկոսական հաստատութիւնը համազգային խանդավառութիւն յառաջ բերաւ Ռուսաստանի, Ցաճկաստանի, Պարսկաստանի և առհասարակ ամբողջ Հայութեան մէջ։

Այժմ խօսքը տանք եղիշէ Եպիս. Չիլինկիրեանին, որ շարունակէ պատմել Երուսաղէմի իւր յուշերը.

«Հայրիկի կաթուղիկոսական ընտրութեան հեռագիրը ուրախութեան չերմ զգացումներ յառաջ բերաւ Երուսաղէմի Հայոց Մայրավանքի և տեղւոյն Հայ գաղութի մէջ։ Ռուսաց ցարի պետական խորհրդական, (որ Երուսաղէմ եկած էր ռուսական հաստատութիւն-

*) Կ. Պոլսոյ ռուսական դեսպանատունը 1892-ի Սեպտ. 14-ին Աշըքեան Պատրիարքին կը յայտնէ, որ—«Օգոստափառ Կայսր ամենայն Ռուսաց հաճել է հաստատել զընտրութիւն Խրիմեան Մկրտիչ Սրբազան Արքեպիսկոպոսի յաթոռ Հայրապետութեան ամենայն Հայոց»։ Սակայն այս լուրը պաշտօնապէս չէ հաստատուեցաւ։

ները քննելու համար), Երուսաղէմի ռուսական հիւպատոս Արսենին և Կոստ. Կամսարականը Խրիմեանին այցելութեան եկան, շնորհաւորեցին և յոյս յայտնեցին, որ ծաթը շուտով կը հաստատէ այդ ընտրութիւնը։ Ծարութիւն Պատրիարքն ու միաբաններն ալ շնորհաւորեցին Հայրիկը ընտրութիւնը։ Կոստ. Կամսարականը ինձ ըսաւ որ—„Ռուսաց կառավարութիւնը ամէն կերպ կը ջանայ ուսումնասիրել Խրիմեանի հայեացքները ու նպատակները, վասնզի անոր մասին շատ աննպաստ և ննջգամիտ լուրեր հաղորդուած են պալատին, որ կը կարծէ թէ Հայրիկը ռուսատեաց է“։

«Շաբաթ մը յետոյ (Յունիսի կէսին, 1893) հիւպատոս Արսենիևը ինձ յայտնեց որ—„Կ. Պոլսոյ ռուսական դեսպան Նելիդովէն հեռագրով ստացայ 6000 րուբլի, որը մեր պետութիւնն իբր ճամբու ծախք յատկացուցած է Կաթուղիկոս Խրիմեանին, մինչև ռուսական սահմանը, ուր մտնելէ յետոյ ևս 6000 րուբլի պիտի ստանայ մինչև Էջմիածին ճամբորդելու համար“։ Երեք օր յետոյ հիւպատոսն եկաւ և Հայրիկին յանձնեց 6000 րուբլիի հաւասար գումար 675 $^{3}/_{4}$ օսմ. ոսկի։ Դրամը յանձնելէ յետոյ հիւպատոսը յայտնեց թէ, Էջմիածնէն ճամբայ ելած են և Երուսաղէմ պիտի գան հայրապետական հրաւիրակները՝ նախագահութեամբ Արիստակէս Սպիս. Սեդրաքեանի։ Էջմիածնէն ևս հեռագիր ստացանք, որ հրաւիրակները ճամբայ ելան։ Ասոր վրայ Մայրավանքիս Տնօրէն Ծողովը որոշեց Պատրիարքարանը իբր բնակավայր յատկացնել Կաթուղիկոս Հայրիկին, որուն թարգմանի պաշտօնը ես կը վարէի։ Բոլոր այցելուները, մինչև անգամ Ծաթուրիկ Պատրիարքը, իմ միջոցով կը ներկայանային Հայրիկին։ Հիւպատոս Արսենիևը Հայրիկին յանձնեց նաև ռուսական հպատակութեան անցագիրը, յայտնելով որ—„Ռուսական հիւպատոսարանն ու իւր ամբողջ պաշտօնէութիւնը, ինչպէս նաև ռուսաց հաստատութիւնները Նօքին Վեհափառութիւն Կաթուղիկոսի տրամադրութեան տակ դրուած են“։ Հայրիկը երկու անգամ Ծարութիւն Պատրիարքի հետ, պաշտօնապէս այցելեց ռուսաց հիւպատոսարանը և արտաքոյ կարգի պատիւներու արժանացաւ։

Ռուս պետութիւնը, Կովկասի փոխարքայի միջոցով, Էջմիածնի Օինօղին յայտնեց, որ Խրիմեան Կաթուղիկոսը Երուսաղէմէն—Էջմիածին ճամբորդելու համար, հետևեալ ուղեգծով պիտի ընթանայ.—

Երուսաղէմ, Աղէքսանդրիա, Թրիէստ, Վիեննա, Օդեսա, Բաթում, Թիֆլիս, Երևան, Էջմիածին։

Էջմիածնի Միաբանութեան կողմէ յատուկ պատգամաւոր-հրաւիրակները—Արիստակէս Եպիս. Սեդրաքեան, Սարգիս Եպիս. Տէր Գասպարեան, Եփրեմ Աբեղայ Սուքիասեան եւ Մեսրովբ Աբեղայ Տէր Մովսիսեան*)—*1893-ի Յունիսի 21-ին Էջմիածնէն ճամբայ կ'ելլեն դէպի Երուսաղէմ։ Կաթուղիկոսական հրաւիրակները կը ժամանեն Կ. Պոլիս, ուր անոնց կ'ընկերանան Սիմէոն Եպիս. Սէֆէրեան, Համբարձում Առաքելեան և Թիֆլիսի «Թիֆ. Լիստոկ» թերթի խմբագիր Իվան Խաչատուրեանցը և ճամբայ կ'իյնան դէպի Երուսաղէմ։

Երուսաղէմի Հայոց Մայրավանքի միաբանութիւնը արտակարգ պատիւներ և ընդունելութիւն ցոյց կուտայ հայրապետական պատգամաւորութեան՝ Յոպպէէն (Յաֆֆա) սկսեալ մինչև Երուսաղէմ։ Հրաւիրակները մեծաշուք հանդէսով կը ներկայանան Խրիմեան Հայրիկին և կաթուղիկոսական գօղը և խաչն ու գաւազանը յանձնելով կը հրաւիրեն Էջմիածին։

Օգոստոսի 1-ին (*1893*) Խրիմեանը Երուսաղէմի Հայոց Ս. Յակովբեանց տաճարին մէջ կատարեց հայրապետական անդրանիկ պատարագը և խօսեցաւ իւր հրաժեշտի քարոզը, որմէ կ'ամփոփեմ այս մասերը.

«Այսօր քարոզ պիտի խօսիմ ձեզ, մնաք բարեաւ պիտի ըսեմ։ Իրաւ մարմինս տկար է, բայց հոգիս յօժար—Փառք ճեզ Աստուած.

«...Յանկարծ միտքս կուգայ *1854* թուականը, երբ կը պանդխտէի ի Պոլիս, շատ մի կրած նեղութեանս մէջ միշտ փառք կուտայի Աստուծոյ. այն միջոցներուն եղբայրս մեռաւ, ներքին ու արտաքին վշտեր տեղացին վրաս, որոնց համբերեցի ու կրկնեցի—Փառք ճեզ Աստուած։ Աղթամարայ կղզւոյն մէջ վարդապետ ձեռնադրուեցայ և ինձ համար հալածանքն սկսաւ այն օրէն. Աղթա-

*) Այժմ Արքեպիսկոպոս և Առաջնորդ Հայոց Պարսկա-Հնդկաստանի, Մագիստրոս տիտղոսով՝ յայտնի գիտնական և բանասէր, որը գրած է «ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ Տ. Տ. ՄԿՐՏԻՉ ՎԱՀ. ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ԱՄԵՆՈՑՆ ՀԱՑՈՑ. Երուսաղէմից—Էջմիածին» մեծ հատորը. (Էջմիածին. 1894. էջ՝ 402) ուր մանրամասն նկարագրած է Խրիմեան Հայրիկի այդ պատմական և հանդիսաւոր ճամբորդութիւնը։

մարչն Վան, անտի ի Պօլիս քշուեցայ, Վանչն ի Մուշ. Մշեցիք աւելի խենդ են, զիս մինչև ի Բիւզանդիոն քշեցին. ...Վերջին անգամ մի քանի տարիներ Պօլսոյ մէջ ինկած մնացի, ուր ըսին թէ երկրին դէմ յանցանք գործեր եմ, յեղափոխական եմ, ուստի Պօլսէն ալ գլորեցին մինչև Զիթենեաց լեռը, ուր Մակարի մատուռին մէջ դադար առի. Օրհնեալ լինի այդ մատուռը, ուրկէ Կաթուղիկոս դուրս կ'ելնեմ, ով կ'ուզէ կաթուղիկոս լինի, թող գայ Մակարայ մատուռն ապաստանի. Առաջին անգամ քառասուն տարի առաջ Յովհաննէս Պատրիարքի օրով եկայ Ս. քաղաքը և այն ատեն Հրաւիրակ Երկրին Աւետեաց գրեցի, այս անգամ որ երկրորդ գալուստս է, աշխատեցայ և նոր յաւելուածներով կրկին տպագրել տուի, բայց այս երեք տարուայ ընթացքին մէջ Վարագայ վանքի միաբան երկու պատուական վարդապետներ թաղեցի այստեղ. մին Ղևոնդ Վարդապետ, որ յիշատակաց դպիր էր, բոլոր Հայաստան հետիոտն շրջելով՝ զուրկ ամէն տեսակ միխիթարութենէ, հնադարեայ կենդանի աւերակաց մէջ կը յուսար իւր սրտին սփոփանք գտնել, ամեն դէպք ու իրողութիւն, բոլոր գիւղերու բարք ու սովորութիւնք յուշատետրին մէջ արձանագրելով և անտիպ յիշատակարաններու և տարեգրութեանց հաւաքածոյք թղթով ահագին դէզ մի կը ձևացնեն. երկրորդն էր Մեսրոպ Վարդապետ, որ երկար ժամանակ Վարագայ վանքի հաւատարիմ Ծնտեսն էր. Շատ վախեցայ, որ այդ վարդապետներ զիս ևս կը տանին իրենց հետ, որովհետև ես բերած էի զիրենք աստ, մանաւանդ անցեալ տարի բաւական ծանր հիւանդութիւն մի եկաւ վրաս և մահուան մօտեցուց զիս. ...Կ'աղօթէի, որ ապրիմ, քան զի պարտք ունէի, բայց պարտքս Կաթուղիկոս լինել չէը, չէի աղօթեր, որ երկար ապրիմ Կաթուղիկոս լինիմ, այլ ապրիմ, որպէս զի գրեմ, պարտքս գրել էր միշտ, զի շատ բան ունէի գրելիք. Մտքէս բնաւ երբէք չանցածը, մինչև իսկ բոլոր կենացս և երազիս մէջ չտեսածս եկաւ այս ծերացեալ գլխուս, ինչ կարող եմ ընել, գարձեալ կը կրկնեմ Փառք Աստուած:

«Այժմ տխուր է անձն իմ, Ս. Սիօնի լեռնէն պիտի բաժանուիմ. Այս Ս. Սեղանի վրայ վերջին պատարագը կը մատուցանեմ ու մի քանի օրէն կը մեկնինք ի Ս. Էջմիածին, որոյ սեղանի վրայ զիս

օծելու համար տասներկու եպիսկոպոսներ իրենց բուժերով պիտի ճնշեն գլուխս, բայց այս գլուխս շատ ճնշուելու գլուխ չէ, այլ ծնրացած գլուխ է. ...Պէտք է մեկնիմ Սիօնի ստորոտէն, պէտք է բարձրանամ Մասեաց գագաթը. ...Իմ մէջ երկու սէր իրարմէ բուռն իրարու հետ կը կռուին, Խաչի սէրը Հայրենիքի սիրուն հետ. Եկեղեցին կը կոչէ՝ հնազանդիլ վերջնոյն. ...Է՛հ չ'երկարցնեմ, դառնամ իմ պարտաւորութեանս: Ամեն. Ս. Պատրիարքէն սկսեալ, սրբազան եպիսկոպոսաց, վարդապետ եղբարց, սարկաւագաց և առ հասարակ ամենէն ալ շնորհակալ եմ. ամենքն ալ իրենց Հայրիկ պատուեցին զիս. ...Խօսքս վերջացնեմ. զիս մի մոռնաք, Ս. Յակոբայ միաբանները. Ես ալ զձեզ երբէք չպիտի մոռնամ. Այսուհետև խնամութիւն պիտի ընենք Ս. Պատրիարքին հետ. երբեմն նա մէկ երկու վարդապետներ կը ղրկէ ի Ս. Էջմիածին, և երբեմն ալ ես կը ղրկեմ ի Ս. Երուսաղէմ և այսպէս մեր մէջ միշտ անխզելի կը մնայ սիրոյ կապը».

Մայրավանքի Աւագ Թարգման Եղիշէ Եպիս. Չիլինկիրեանը, Տնօրէն Ժողովի որոշումով՝ կառավարութեան, հիւպատոսներուն, յունաց և լատինաց պատրիարքներուն, Ֆրանչիսկեան միաբանութեան, դպտաց, ասորոց և հաբէշաց տեսուչներուն, արուպական բոլոր կրօնական հաստատութեանց և այլն, պաշտօնապէս կը յայտնէ, որ Օգոստոս 3-ին Հայոց Կաթուղիկոսը Երուսաղէմէն դէպի Էջմիածին պիտի մեկնի.

Օգոստոս 3-ին, ժամի 1-ին, վանքի զանգակները կը զօդանջէին. ամէն ազգի խուռներամ բազմութիւն և պետական պատուոյ պահակախումբը կը սպասէին. երբ Խրիմեանը կառքին մէջ կը նստէր, Երուսաղէմի Հայութիւնը, ութ տարեկան աղջկան մը ձեռքով, ծաղկեփունջ մը և հետևեալ Ջօնը կը նուիրէր Հայոց Հայրիկին.

«Աւարատեաց աղաւնին, Սիօնի լեռնէն, Ձիթենւոյ ճիւղի տեղ ծաղկեայ փունջիկով մաղթէ Հայրիկին բարի ճանապարհ. ի դիմաց՝ Սաղիմայ Հայ օրիորդաց՝ Սաթենիկ Թորոսեան».

Հայրապետական այս հանդիսաւոր երթը շարունակուեցաւ մինչև երկաթուղիի կայարանը, ուր հաւաքուած էր խուռներամ ժողովուրդը. երբ գնացքը սլացաւ, որոտալից ծափեր և կեցցէներ

թնդացուցին օդը։ Գնացքը հասաւ Եաֆֆա. քաղաքը տօնական տեսք առաւ. տաճիկ կառավարիչը, ռուսական, աւստրիական և գերմանական հիւպատոսները ներկայացան Հայրիկին։ Օգոստոսի 6-ին հայրապետական շքախումբը Աւստրիական Լոյդ Ընկերութեան „Electra“ շոգենաւով ճամբայ կ'իյնայ դէպի Ալեքսանդրիա, ուր նաւահանգստին մէջ Հայրիկին կը դիմաւորեն Եգիպտոսի Խըտիւի ներկայացուցիչը և Եգիպտահայութեան պատգամաւորները։ Խուռներամ ժողովուրդի կեցցէներու մէջէն կը յառաջանար Հայրիկի կառքը, որուն կը հետեւէին խտիւական պատուոյ պահակի հեծելագունդը և ապա 60 կառքեր։ Հայրիկը հանդիսաւոր թափորով կ'առաջնորդուի Ալեքսանդրիոյ Հայոց եկեղեցին և ապա Առաջնորդարան, ուր պաշտօնական այցելութիւններ տեղի կ'ունենան։

Յաջորդ օր (Օգոստ. 8 ին) կը պատարագէ Արիստակէս Եպիս. Սեդրաքեան, իսկ Հայրիկն ալ պարզ ու անպաճոյճ լեզուով կը քարոզէ աւելցնելով.

«.. Մեր մայրերը պիտի կրթուին որպէս զի կրթուած զաւակներ պատրաստեն. ...Ես կ'ազօթեմ Սիմէոն Ծերունու պէս արժանանամ տեսնել ազգիս փրկութիւն և ապա մեռնիլ...»։

Օգոստոսի 9-ին Հայրիկը պաշտօնական շքախմբով կ'այցելէ Եգիպտոսի Խրտիւին՝ որը շատ գոհ մնացեր էր։ Նոյն երեկոյեան Առաջնորդարանի բակին մէջ ի պատիւ Հայրիկին ընթրիք կը տրուի և հրաւառութիւն կը կատարուի։ Եգիպտոսի Հայութեան ցոյց տուած ջերմ և փառաւոր ընդունելութեան տպաւորութիւններով, Խրիմեանը Օգոստոսի 10 ին, Աւստրիական „Talia“ շոգենաւով ճամբայ կ'իյնայ դէպի Թրիէստ, ուր դիմաւորութեան եկած էին Վիեննայի Մխիթարեան Միաբանութեան Վանահայրը, տեղւոյն գաղութի հայերու ներկայացուցիչներ՝ (Զատիկ Փոփովիչի նախագահութեամբ), Մանչեստրի Հայոց հոգևոր հովիւ Սուքիաս Վրդ. Պարոնեան, վաճառական Մանուկեան և այլք։ Վենետիկի Մխիթարեան Միաբանութեան կողմէ երկու վարդապետներ Թրիէստ եկած էին Հայրիկին բարի երթ մաղթելու։ Օգոստոս 20-ին Հայրիկը իւր շքախումբով կը ժամանէր Վիեննա, ուր կը սպասէին Եւրոպայի Հայ գաղութներու ներկայացուցիչները—Լոնտոնէն՝ «Անգլո-Արմենական ընկերութեան» կողմէ՝ Պ. Փօլ (Պօղոս), Մանչեսթրէն՝ Սու-

քիաս Վրդ. Պարոնեան և Տէր Գրիգորեան, Փարիզէն՝ Փէհլիւանեան և Նշան Շնորհքեան, Մարսէյլէն՝ Սահակ Վրդ. Այվատեան և Բժ. Գալուստ Ասլանեան, Հունգարիոյ Արմենոպոլ քաղաքէն՝ երկու Հայկաթոլիկ վարդապետներ, Ռումանիոյ Ֆօքշան քաղաքէն՝ Մանուէլ Միրախորեան և Սիմէոն Սիմէոնեան, Սուչավայէն՝ ազգապետներ, Ռուսճուքէն՝ Յակովբ Սարիփինեան և Ն. Գ. Քէօդանեան, Լայպցիկի Հայ ուսանողներու կողմէ՝ Կարապետ Տէր Մկրտչեան և Գարեգին Յովսէփեան (երկուքն ալ յետոյ եպիսկոպոս և գիտական ու գրական դէմքեր), Վառնայէն՝ Օհան Քահանայ Մանդակունի, Զմիւռնիայէն՝ Պ. Մ., Բուքովինայէն՝ Տիգրան Գրունդուլ, Միւնխինի Հայ ուսանողներու կողմէ՝ ուսանող Հմայեակ Յակոբեան, և այլն և այլն։ Վիեննայի Մխիթարեան Միաբանութեան կողմէ Հայր Արսէն Այտընեանը, երկու վարդապետներու հետ, կ'այցելէ Հայրիկին։ Վիեննայի հայազգի պարսկական դեսպան Նարիման Խան Նարիմանեան և ռուսական դեսպանի խորհրդականը բարի գալուստ կը մաղթեն Կաթուղիկոսին։ Հայրիկը կ'այցելէ Մխիթարեանց վանքը, ուր սիրալիր ընդունելութիւն կը գտնէ, կը դիտէ թանգարան, տպարան, մատենադարան և այլն, յիշատակաց մատեանի մէջ կ'արձանագրէ քանի մը տողեր և ապա իւր լուսանկարը կը նուիրէ Մխիթարեան Միաբանութեան այս մակագրութեամբ—«Յիշատակ առ միաբանական ուխտն Մխիթարեան ի Վիեննա. ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ. թէ կենդանագիր մահկանացուս երթայ ի գերեզման, սոսկ սուրեր իմ մնասցէ առ ձեզ յիշատակ»։

Հայրիկը պաշտօնապէս այցելեց Աւստրօ-Հունգարիոյ արտաքին գործոց նախարար Կալնոկիին և ընդունեց փոխադարձը։ Վիեննայի մէջ հաւաքուած եւրոպահայ գաղութներու պատգամաւորութիւններն ի պատիւ Հայրիկին տուին ճաշկերոյթ մը, որուն ճաշացուցակը հետեւեալն էր.

«Տիգրանակերտի գինի, Տառեխ Վանայ, Գինի Երուսաղէմի, Խորոված ոչխար Երևանայ, Գետնախնձոր Դանձակայ, Ոլոռն Մշոյ, Աղցան Կարնոյ, Փիլաւ Ուրմիոյ, Գինի Էջմիածնի, Մածուն Շիրակայ»։

Հայրիկը Վիեննայէն ճամբայ կ'ելնէ դէպի Օդեսա, ուր ժողովրդական ցոյցերն ու պաշտօնական ընդունելութիւնները իրար

կը խառնուին։ Ռուսաստանի քաղաքներէն խումբ խումբ Հայ պատգամաւորներ եկած էին Օդեսա Հայրիկին բարի գալուստ մաղթելու։

Ահա և Բաթում, ուր Հայրիկը կ'ընդունուի հսկայական ցոյցերով։ Կովկասի բաղաքներէն և գաւառներէն բազմաթիւ պատգամաւորներ ընդառաջելու եկած էին, ի յիշատակ այդ պատմական օրուան (26 Օգոստ. 1893), Բաթումի Հայուհիները իւր նորակառոյց դպրոցին «Արիմեան» կոչումը տուաւ։

Թիֆլիսաբնակ Վասպուրականցի մշակներու և բեռնակիրներու (համալ) պատգամաւորը՝ յայտնի բանաստէր և հայկաբան Ստեփան Մալխասեանը Բաթումի մէջ, ներկայանալով Հայրիկին կը ճառախօսէ.

«...Որչափ աւելի մեծ պիտի լինի սրտի բերկրանքը Վասպուրականի Հայերի, որոնք պարծանքով տեսնում են այսօր իւրեանց Վեհ Հայրենակցին, իւրեանց սիրած և պաշտած Հայրիկին, որ գալիս է իւր Արծուի թևերը Մասեաց Բարձունքից սփռելու ընդհանուր հայութեան վերայ և նորան հովանաւորելու։ Դուք, Հայրիկ, Վասպուրականի ծնունդ էք, բուն Հայաստանի զաւակ, նորա օդով ու ջրով սնած, նորա արևով մեծացած, այնտեղ էք ճանաչել Հայրենիքը և ժողովուրդ, այնտեղ էք շինել ձեր առաջին բոյնն ու ձագեր մեծացրել, այնտեղից առաջին անգամ հնչեց Հայոց ականջներին Վասպուրականի Վեհ Արծուիդ գգուող ու սթափեցնող ձայնը։ ...Վասպուրականի այն հայերը, որոնք պանդխտել են Թիֆլիսում, սուրբ են պահում ձեր կտակն, Հայրիկ, և անեղծանելի դրոշմել են ձեր անունն ու գործերն իրանց սրտերում... Նոքա իմ միջոցով իրանց սրտեռանդն շնորհաւորութիւնն յղում են ձեզ։ Ողջունում են Հայրիկիդ Վանից և Այգեստանից, Վարագայ Մենաստանից և Մշու Օուլթան Ս. Կարապետից, ողջունում են Վասպուրականի ու Ծարօնի հողից ու ջրից, աւերակներից ու շիրիմներից...»։

Բաթումէն մինչև Թիֆլիս, երկաթուղիի կայարանները խռնուած էին ժողովուրդով և պատգամաւորներով։

Արտաքոյ կարգի հանդէսներով և ժողովրդական աննախընթաց ցոյցերով Հայրիկը ժամանեց Կովկասի Մայրաքաղաքը՝ Թիֆլիս։ Կայարանէն մինչև Վանքի (Մայր) Եկեղեցին հարիւր հազարաւոր ժողովուրդ խռնուած էր տեսնելու համար Հայոց Հայրիկի վե-

հափառ դէմքն ու պարթև հասակը. Կովկասի փոխարքայի կարմրագգեստ կազակներու պատուոյ պահակախումբը կ'ուղեկցէր Հայոց Կաթուղիկոսի շքերթին, որուն կը հետեւէին հարիւրաւոր կառքեր.

Ամբոխն իրար հրմշտկելով, առաջ կ'երթայ. ոստիկանութիւնը չի կրնար կարգը պահել. կեցցէները և ծափերը կը դղրդացնեն փողոցները ստեղծելով ահազդեցիկ պատկեր մը. Մարդկային հեղեղը մեծ աղմուկով կը յառաջանար դէպի վանքի եկեղեցին.

Շիրվանզադէն կը պատմէ որ («Հայրենիք» ամսագիրը, Բ. Տարի. 1924, Թիւ՝ 10, էջ՝ 33)—«...Խրիմեանի առաջին անգամ Կաթողիկոս ընտրուելուց յետոյ, Թիֆլիս մտնելու օրն էր. Երկաթուղու կայարանը լիքն էր բազմութեամբ. Ներկայ էին բազմաթիւ պատգամաւորութիւններ, ռուս կառավարութեան ներկայացուցիչներ՝ մի խումբ ժեներալներ և պաշտօնեաներ, վրացի իշխանները և Թիֆլիսի քաղաքային ինքնավարութիւնը իր ամբողջ կազմով. Խրիմեանը, ինքը լինելով բարձրահասակ, պարթև մի տեսակ արհամարհանքով էր վերաբերւում դէպի փոքրահասակ մարդիկ*). Ընդունելութեան առաջին խօսքն արտասանեց Պօղոս Իզմայլեանը, մի փոքրահասակ մարդ. ձառը, որ թարգմանեց ռուսերէնից հայերէն Խորէն եպիսկ. Ստեփանէն, խոր տպաւորութիւն գործեց Խրիմեանի վրայ. Բայց նրա ընութիւնն աւելի զօրեղ գտնուեց քան տպաւորութիւնը. Նա քաղաքագլխին ոտքից մինչև գլուխ նայեց և հարցրեց—„Դու ես գրել այդ ճառը“.—„Այո, Ձերդ Սրբութիւն“ պատասխանեց Իզմայլեանը հայերէն. —„Դուն այդպէս պզտիկ, ճառդ այդչափ աղուոր, շնորհակալ եմ“—ասաց Խրիմեանը. Քաղաքագլուխը շփոթուեց, մենք հայերս նոյնպէս, որովհետև օտարները պահանջ ունէին, որ Հայրիկի իւրաքանչիւր բառը թարգմանուի ռուսերէն.

«...Խրիմեանը հանճարեղ հոգեոր էր. Հանճարեղ ոչ իր պերճախօսութեամբ այլ մտքերի սրութեամբ և համեմատութիւնների սրամտութեամբ. Մինչև նրա Կովկաս հասնելը ընդառաջ էին գնացել մի քանի „քաղաքագէտներ“ նախազգուշացնելու համար, որ նա

*) Ականջը խօսի փոքրահասակ Ռուբէն Խան-Ազատին, որ Երուսաղէմ երթալով փորձած էր Եւրոպա փախցնել բարձրահասակ և պարթև Խրիմեանը:

չը լինի թէ ռուս կառավարութիւնը ոևէ կերպ քննադատէ.— „Աղէկ, —պատասխանել էր Հայրիկը,—ես ամենուրեք կը փառաբանեմ ա-նոր քաղաքականութիւնը“.

«...Աննման էր Խրիմեան Հայրիկի արտաքինը. եթէ Ադամեանի միայն գլուխն էր գեղեցիկ, Խրիմեանը ոտքից մինչև գլուխ մարմնացած գեղեցկութիւն էր և առնական գեղեցկութիւն. Ոչ մի լուսանկարով չի կարելի պատկերացնել Խրիմեանի դէմքը, մանաւանդ խոշոր, կապտագոյն աչքերի արտայայտութիւնը. Ծաւալի է, որ չգտնուեց այնչափ տաղանդաւոր նկարիչ, որ կարողանար տալ այդ աննման պատկերը. Երբ գնացքը կանգ առաւ կայարանում և Խրիմեանը դուրս եկաւ պլատֆորմի վրայ, բոլոր ներկայ եղողները միաժամանակ շշնջացին—„Ի՞նչ վեհ կերպարանք“. Նա ամբողջ գլխով բարձր էր իր շրջապատողներից. Արծուաքիթ էր նա, հպարտ գծաւորուած դէմքով. Ձկար նրա այտերի վրայ եպիսկոպոսներին յատուկ կարմրութիւնը. Միապաղաղ էր նրա դէմքի գոյնը և ճերմակ».

Վանքի եկեղեցոյ մէջ Հայրիկը շնորհակալութիւն կը յայտնէ իրեն ցոյց տրուած ընդունելութեան համար և կատակով կ'աւելցնէ.

—Ես Ծփխիսում բան մ'ալ սովրեցայ, որ Ծփխիսի Հայ ժողովուրդը կեցցէներով ալ մարդ կը սպանէ.

Թիֆլիսի մէջ Հայրիկին կը ներկայանան հարիւրաւոր պատգամաւորութիւնները—թէ Հայ և թէ օտարազգի—և ուղերձներով ու ճառերով բարի գալուստ կը մաղթեն. Կովկասի Հայութեան բոլոր դասակարգերը անխտիր՝ պատգամաւորներ, ուղերձները և նուէրները ղրկած էին Հայրիկին. Շատ յուզիչ և սրտառուչ տեսարան եղած է այն, որ Թիֆլիսաբնակ Վանեցի ու Մշեցի չարքաշ և աղքատ մշակները կը ներկայանան Հայրիկին. Մշակները գլխաբաց կը մօտենան աջը կը համբուրեն, կը յուզուին ու կուլան. Հայրիկն ալ կուլայ և ապա քաջալերանքի և մխիթարութեան խօսքեր ուղղելով անոնց՝ կը ճամբէ: Տարօնցիները ու Սասունցիները առանձին ուղերձ մը կուտան Հայրիկին. Շետոյ կուգան Հայ աշուղները.

Սեպտեմբերի 3-ին (1893) Հայրիկը պաշտօնապէս կ'այցելէ Կովկասի Փոխարքային և հանդիսաւորապէս կը ստանայ կայսերական հրովարտակը, շքանշաններն ու ադամանդեայ խաչը. Հայրիկը պատշաճ խօսքերով շնորհակալութիւնը կը յայտնէ և կը վերադառնայ

Առաջնորդարան, ընդունելով Փոխարքայի փոխադարձ այցելութիւնը։ Ամբողջ Թիֆլիս քաղաքը տեսակ մը տօնական տեսք ստացած էր, իսկ հայերը ոգևորութեան և ուրախութեան զգացումներով տոգորուած կը խռնուէին Առաջնորդարանի բակը և ժողովրդական ցոյցեր կը սարքէին ի պատիւ Հայոց Հայրիկին։

Թիֆլիսի Մայր Եկեղեցւոյ մէջ Հայրիկը կը քարոզէր աւելցնելով. — «...Դիտեմ ամենքս ալ, որ աշխարհիս վերայ հրաբխային լեռներ կան. այդ հրաբխային լեռները երբեմն երբեմն լաւ դուրս ժայթքելով կը յիշեցնեն մարդկանց իրենց գոյութիւն. Այսպէս Իտալիայի Վեզուվ հրաբխային լեռը. բայց կան այնպիսի հրաբուխներ էլ, որոնք հանգած են. այդպէս մեր Մասիսն ալ առեն օք կը գործէր, այժմ անոր բերան գոցուած է։ Ես էլ առենօք մի հրաբխային բլրակ էի հիմայ բերանս փակուած է, թէև հրաբուղիքը չի հանդեր. դլխովս շատ բաներ անցեր են. փորձուեր եմ, խոհեմ դարձեր եմ, բնութիւնն այդ կ'ընէ, ժամանակը, զանազան հանգամանքներ։ ...Սիրելի ժողովուրդ, անցան այն օրէն, երբ ես ձեզ տեսայ, 33 տարի (1860-ին), այն առեն ես ձեզ ներկայացայ Խրիմեան Հայրիկ, իսկ այժմ իբրև Ամենայն Հայոց Կաթուղիկոս. սակայն Հայրիկ չի փոխուեր. նա միշտ նոյն մնացեր է և կը մնայ. այսօր Կաթուղիկոս եմ վաղը դարձեալ Հայրիկ։ ...Իմ խորին շնորհակալութիւնն էլ կը յայտնեմ ձեզ, որ դուք այնքան սիրով ընդունեցիք ինձ, բայց կը խնդրեմ, որ մէյ մ'ալ չ'ընէք, շատ չափազանցութիւններ եղան»։

Հայրիկը ամբողջ շաբաթ մը մնաց Թիֆլիսը և օրն ի բուն Կովկասէն և Ռուսաստանէն եկած պատգամաւորութիւններն ընդունելց, այցելութիւններ տուաւ և Սեպտեմբերի 6-ին իւր շքախմբով, սալօն վակօնով, ճամբայ ընկաւ դէպի Երևան։

Գնացքը կը հետևանք կայարանէն խուռներամ ժողովուրդի ծափերու և կեցցէներու մէջէն։

Ադստաֆա կայարանի մէջ, թէ Գանձակ քաղաքի և թէ շրջակայքի Հայ և թուրք ժողովուրդը իրենց պատգամաւորութիւններով Հայրիկի գալուն կը սպասէին։ Հանգստանալէ և ճաշելէ յետոյ Հայրիկը վեց ձիանի կառքի մէջ նստած, իր շքախումբն ալ 7 կառքերով և մօտ 600 Հայ և թուրք ձիաւորներով, կը մտնեն Ղա-

զախ քաղաքը և ապա Ուզուն-Թալա, Քարվանսարա և Թարսաչայ գիւղերէն անցնելով կ'իջնեն Դիլիջան, ամենուրեք հանդիպելով ժողովրդական ցոյցերու. Հայ և թուրք գիւղացիները աղ ու հացով և թափօրներով կ'ընդառաջէին Հայրիկին և ծափերով ու կեցցէներով կ'ողջունէին զայն, խնդրելով, պահանջելով, որ քանի մը խօսք ըսէ և ապա երթայ։

Հայոց Հայրիկը ամեն տեղ ալ սիրով կը կատարէր գեղջուկ ժողովուրդի ցանկութիւնը՝ խօսելով ու քարոզելով։

Դիլիջանէն ճամբայ ելնելով Հայրիկը կ'իջնէ Սևանայ ծովակի ափը և նաւակը նստելով կ'այցելէ այդ հնադարեան ու պատմական մենաստանը։ Նոր-Բայազէտի ամբողջ Հայութիւնը կարծես թէ փոխադրուած էր Ելենովկա ռուսական գիւղը, որուն մուտքին առջև կը բարձրանար հսկայական յաղթական կամարը այս վերտառութեամբ—«ՑՑծա՛յ, ՀԱՑՐԻԿ, ի վեՑՑ ՍիւՑՑիբ»։ Ժողովուրդի խնդրանքով Հայրիկը գիշերեց այնտեղ. երեկոյեան լուսավառութիւն և ժողովրդական խրախճանքներ կատարուեցան և ամբողջ գիշերը գիւղական դհոլ-զուռնայի ձայնն ու պարերգերը հնչեցին մինչև լուսաբացը (9 Սեպտ.), երբ հայրապետական այդ հսկայ շքախումբը կ'ուղևորուէր դէպի Երևան։

Բազմաթիւ կառքերու և հարիւրաւոր ձիաւորներու ուղեկցութեամբ շքախումբը կը հասնէր Ախտա գիւղը, ուր գեղջուկ ժողովուրդը եկեղեցական թափօրով և աղ ու հացով կ'ընդառաջէը Հայրիկին։ Սուխոյ-Ֆանտանի ուսա գիւղացիներն ալ մեղր ու հացով դիմաւորեցին Հայոց Կաթուղիկոսին։

Սեպտեմբերի 10-ին, ցերեկուայ ժամի 12-ին Հայրիկը պիտի ժամանէր Երևան։ Էջմիածնէն մինչև Էյլար գիւղը դիմաւորութեան եկած էին կաթուղիկոսական Տեղապահ Երեմիա, Գրիգորիս Աղուանեան, Արիստակէս Դաւթեան եպիսկոպոսները և Վահան ու Ներսէս վարդապետները, այլև տասնեակ հազարաւոր ժողովուրդ և գիւղական պատգամաւորներ։

Այս հանդիսաւոր թափօրի առջևէն կ'երթար Հայրիկի կառքը, ապա միւս կառքերը, հարիւրաւոր ձիաւորներ և հազարաւոր ժողովուրդ։ Անվերջ ծափերն ու կեցցէները օդ կը բնդացնէին, իսկ փոշիի թանձր ամպերը կը սաւառնէին թափօրին հետ։

Քանաքեռ գիւղի ժողովուրդը, դպրոցի դռան առջև հաւաքուած, եկեղեցական թափօրով և աշակերտներու երգելով ընդառաջեց Հայրիկին։

Եւ ահա Երևանը, Արարատեան Աշխարհի թիրախը։

«Ժամի 12-ին մտանք Երևան. կառքերի ծայրը չէր երևում. ձիաւորների թիւը մի քանի հարիւրի էր հասնում։ Քանաքեռից մեծ բազմութիւն ոտով առաջ էր վազում կարճ ճանապարհով, որ շուտ հասնի քաղաք և մասնակցի այն փառահեղ և իւր տեսակում ամենագերազանց ընդունելութեանը, որ պատրաստել էր հասարակութիւնը։ ...Քանաքեռի զառիվայրից իջնելով փառահեղ գնացքը մտաւ Երևանի այգեստանը, բայց նշան տրուեց կանգնեցնել կառքերը։ Երևանի քաղաքագլուխ պ. Գեղամեանը քաղաքի իրաւասուներով ընդառաջ էին եկել Վեհափառին, աղ ու հացով ողջունելու Նորա շնորհաբեր մուտքը իւրեանց քաղաքը։ Կառքերը շարժուեցին, արդէն քաղաքում էինք, ուր պատրաստուած էր ամենաօրատալից և ամենաոգևորուած ժողովրդական ընդունելութիւն։ Ամբողջ երկար փողոցի վրայ (այժմ Աբովեան փողոց. Հ.Ա.) մինչև Առաջնորդարանի դուռը դալար խոտ էր ցանած։ ...Թուրքերը զարդարել էին իրենց պարտիզների պատերը և դռները խաղողի ողկոյզների և ծաղիկների փնջերով։ Ուր նայում էիր երևում էր Վեհափառի մեծադիր պատկերը ծաղկեայ փնջերի մէջ։ ...Ընդունելութեան ոգևորութիւնը զգացմունքների արտայայտութիւնը նոյն էր, ինչ որ ամեն տեղ, բայց Երևանցիք ազդուելով իրենց բնութեան ձիրքերով առատապէս օժտուած քաղաքի հրաշալիքներով, հրաշալիքներ էին պատրաստել։

«...Վեհափառին խնդրեցին կառքից իջնել և ոտով գնալ մինչև տաճար (Ս. Սարգիս եկեղեցին)։ Բազմաթիւ զինուորներ էին շարուած ճանապարհին կարգը պահպանելու՝ բայց ի զուր. մի՛թէ հնար կար բազմագլխեան հասարակութեան բան հասկացնել. Տփխիսի ճնշումներից աւելի սաստիկը այստեղ էր. բայց փորձուած էինք. մեծ շրջան կազմեցինք ձեռք ձեռքի տուած և այդպիսով կարելի եղաւ Վեհափառին աւելի հանգիստ առաջնորդել դէպի տաճար։ Երևոյեան տեղի ունեցաւ ամենափայլուն հրաւառութիւն. լուսաւորուած էր յաղթական կամարը, առաջնորդարանի ճանապարհը,

բակը, պատշգամբ, բայց իսկական տեսնելու արժանի հրախաղութիւնը պատրաստուել էր Հրազդան գետի ձախ ափի Դալմի կոչուած այգիներում և նրանցից վերև եղող լեռների և բլուրների վրայ*).

Երևանի նահանգապետ Ջրնգէն, Հայ, ռուս և թուրք պաշտօնական ու ժողովրդական բազմաթիւ պատգամաւորութիւններ ներկայացան Հայրիկին և բարի գալուստ մաղթեցին. Երկոյեան ամբողջ Երևան քաղաքը խրախճանքի մէջ էր. Հրավառութիւնն այնքան շատ էր և գեղեցիկ, որ քաղաքը կը ծփար լոյսերու մէջ. կիրակի առաւօտ, պատարագի ժամանակ, Հայրիկը խօսեցաւ.

«Սիրելի ժողովուրդ, միտք չունիմ քարոզ խօսելու միայն թէ շնորհակալութիւնս պիտի յայտնեմ Երևանի ժողովրդեան, որ այնքան մեծ պատրաստութիւնները էր տեսեր իմ ընդունելութեան համար. Այն ժամէն երբ Երևան ողջունեցի, երբ Հայոց Մասիս ողջունեցի, շարունակ կեցցէները լսելով սկսեցի մտածել, թէ Աստուած ինչքան պարտականութիւն դրեր է վրաս. ...ես կը մտածեմ ոչ միայն Ռուսիոյ Հայոց համար, այլև Թուրքիոյ, Մեծ Հայաստանի հայերու վիճակը ինձ շատ կը զբաղեցնէ».

Այս խօսակցութեան ժամանակ Հայրիկը քաշ է.

— Երևանցիք, շատ պատուեցիք, աղէկ սիրեցիք Հայրիկը, բայց աղէկ մ'ալ ճմլեցիք.

Ընդհանուր ծիծաղ կը բարձրանայ ժողովուրդին մէջ.

Պատարագէն յետոյ Երևանի Հայութիւնը ի պատիւ Հայրիկին պաշտօնական ճաշ տուաւ. Հայրիկը իւր բաժակ կ'առաջարկէ Հայ ժողովուրդի կենացը.

«...Ժողովուրդն միշտ անմահ է... ժողովուրդն անմահութիւն է, միշտ կը մնայ. Կեցցէ ժողովուրդ. ...Ամէն բան ժողովուրդի աշխատանքն է. այս հացը օրհնեալ տանտիկին թոնրի մէջ եփած է և բերուած սեղանը. Դիլիջանի սարին գլուխ պառաւ մը տեսայ, որ աղ ու հաց ներկայացուց մեզ,— Հայրիկ, ասաց, օրհնէք մեր թոնրի

*) Մեսրովբ Վարդապետ (այժմ Արքեպ.) Տէր Մովսիսեանց—«ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ Տ. Տ. ՄԿՐՏԻՉ ՎԱՀ. ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ. Երուսաղէմից—Էջմիածին». (էջ՝ 326—328), որմէ ամփոփեր եմ Հայրիկի այս մեծ ուղևորութեան համառօտ նկարագրութիւնը.

կրակ, որ չմարի, օրհնիր մեր հաց, որ չպակսի։ Ըսի.—Մայրիկ, կ'օրհնեմ ըրո հաց ու թոնրի կրակ, որ չմարի, կ'օրհնեմ և զտանաիկին, որ վառ պահէ կրակը։ ըսաւ.—Կե՛ր ու օրհնիր մեզ, մի մոռնար այս հաց, Հայաստանի յաւաշ է։ Հայրիկ կրնայ մոռնալ՝ ո՛չ, բնա՛։ Վերջապէս բոլոր բարիքներ որ մենք կը վայելենք մշակ ժողովրդի քրտանց վաստակն է, ես ալ մշակ ժողովրդի Հայրն եմ, ուստի խմենք այս բաժակը մշակ ժողովրդի կենացը, կեցցէ մշակ ժողովուրդն»։

Հայրապետական շքախումբը նոյն հանդիսաւոր երթով կ'ուղուէը դէպի Էջմիածին։

Վաղարշապատի և շրջակայ գիւղերու ժողովուրդը լեցուած էր Էջմիածին։ Ժողովրդական հսկայ թափօր մը, աղ ու հացով, դհոլզուռնայով և հարթւրաւոր ձիաւորներով Զուարթնոցի վանքի բլրակներուն վրայ կ'ընդառաջէ Հայրիկին։

«Հէնց որ երևաց Վեհափառի կառքը—կը շարունակէ Մեսրովբ Աբեղան—ձի խաղացնելով, նիզակներ պտտեցնելով, կեցցէներով օդը թնդացնելով առաջ անցան։ Այդքան բազմաթիւ ձիերից և կառքերից առաջացած փոշին անհետացրեց ամեն բան։ Ահագին աղմուկի միջից հազիւ էր լսւում Հռիփսիմէ և Շողակաթ վանքերի զանգակների ձայնը։ Ձիաւորները երբեմն առաջ էին անցնում, երբեմն կանգ առնում, կեցցէներ կանչում, մինչև հասանք գիւղի ծայրը։ Վեհափառի կառքը կանգ առաւ, այդտեղ Վաղարշապատի ժողովուրդը շինել էր տուել մի փառահեղ յաղթական կամար Անուոյ մօտ եղող Ղօշավանքի նմանութեամբ՝ երեք գմբէթով։ Կամարի շրջանակի վերայ խոշոր տառերով կարդացւում էր „Կեցցէ Հայոց ՀԱՅՐԻԿ“ բառերը, իսկ նոյն կամարի բարձրութեան վրայ կանգնած էին երկու հերարձակ, սպիտակ հագուստ հագած փոքրիկ աղջիկներ՝ ձեռքներին ծաղկեայ փունջեր։

«...Դիմաւորելու էին եկել ոչ միայն գիւղի բոլոր մեծ և փոքրերը այլ նաև Երևանից, Ղեբսանդրապօլից, շրջակայ գիւղերից մեծ բազմութիւն։ Մեծ դժուարութեամբ կարելի եղաւ Վեհափառի կառքի համար ճանապարհ բաց անել։ ...Ամբոխը ծովացել էր, նրա ալիքները մարդկային ներքին յուզմամբ ալեկոծւում՝ դիմում էին դէպի նաւը և այստեղ իջնելով յետ յետ մղուում։ Հիանալի էր տե-

սարանը, բոպէն ոգևորիչ։ Իսկ բոլորի պատճառը. Նա առաջ էր գնում հանդարտ քայլերով, յուզուած, մտախոհ պտտեցնում էր իր արծուի հայեացքը դէպի շուրջը և դարձեալ մտքերի մէջ սուզուում. Անթիւ բերաններից կեցցէ բարեմաղթութիւնն էր լսուում, դրա առաջ անլսելի էր տաճարի զանգակների դողանչիւնը, անլսելի էին նաև երգք շարականաց. Ձայն բազմաց, ձայն Աստուծոյ»։

Հայրիկը մտաւ Էճմիածնի Մայր տաճար, աղօթեց և Վեհարանը բարձրանալով բազմեցաւ Հայրապետական Գահին վրայ։

Դիշերը վանքի և ձեմարանի բակերուն մէջ հրավառութիւն և ժողովրդական ցոյցեր կատարուեցան, իսկ գիւղական դհոլ-զուռնայի, աշուղներու սազերու, երգի և ցնծութեան ձայները մինչև լոյս շարունակուեցան։

Յաջորդ առաւօտ Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ Հայրապետական մաղթանք, որմէ յետոյ Հայրիկը Էջմիածնի միաբանութեան մտերիմ ու սրտալի խօսքեր ուղղեց։

Սեպտ. 17-ին Հայրիկը այցելեց Էջմիածնի Գէորգեան ձեմարանը, որուն Հանդիսարանին մէջ տեղի ունեցաւ շքեղ հանդէս մը։ Մեծանուն երաժշտագէտ Կարա-Մուրզայէ խումբը ազգային երգեր կ'երգէր։

Գ.-րդ Լսարանի ուսանող Մարտիրոս Դանիէլեանի երգած «Կռունկ»ը շատ խոր և յուզիչ տպաւորութիւն թողած էր Հայրիկի վրայ։ Այս հանդէսի ժամանակն ալ Հայրիկը քաջալերական խօսքեր ուղղեց ուսուցիչներուն և աշակերտներուն խոստանալով յաճախ գալ և դասերուն ներկայ ըլլալ։

## Է.

## ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕԾՈՒՄԸ

Հայոց Հայրիկը կարգադրած էր, որ իւր Հայրապետական օծումը կատարուի Վարագայ Խաչի տօնին օրը (26 Սեպտ. 1893)։ Այս մասին Սինօդը հեռագրով յայտնեց ի սփիւռս աշխարհի ցրուած Հայութեան, մամուլին, պաշտօնական հիմնարկութեանց և այլն։

Հայրապետական օծման հանդէսները տեսնելու համար տասնեակ հազարով ժողովուրդ խռնուած էր Էջմիածին։ Ռուսաստանի

և Կովկասի հայաշատ քաղաքներէն անդադար պատգամաւորներ և ուխտաւորներ կուգային. Մինչև անգամ Պարսկաստանէն հարիւրաւոր ուխտաւորներ Էջմիածին հասեր էին. Գաղտնի խորհրդական Գրիգոր, Երևանի նահանգապետ Ֆրեզէն և ուրիշ պաշտօնական անձեր ներկայ պիտի ըլլային օծման հանդէսներուն. Կարգապահութեան կը հսկէին երկու գունդ ռուս զինուորներ և բազմաթիւ ոստիկաններ.

Սեպտեմբերի 25-ի շաբաթ առաւօտեան ժամի 10-ին Հայոց Հայրիկը հանդիսաւոր թափօրով առաջնորդուեցաւ Մայր Տաճարը և Իջման Տեղի առաջ կարդաց կաթուղիկոսական երդման բնագիրը, երդուելով հաւատարիմ մնալ Ռուսաց Կայսրին. Հայրիկը և Սինոդի անդամները ու պրօկուրօրը ստորագրեցին երդմնաթուղթը.

Սեպտեմբերի 26-ի կիրակի առաւօտն էր, Վարագայ Խաչի տօնին օրը. Էջմիածնի տաճարի զանգերը բարձր ու զիլ կը զօդանջէին. Հայոց Հայրիկը հայրապետական թանկագին հանդերձներով հանդերձեալ Մայր Տաճարի խորանէն դուրս կուգար և իրրև պատարագիչ կը բարձրանար սեղանը, որուն աջ ու ձախ կողմերը կանգնած էին Մեսրոպ Սմբատեան, Գրիգորիս Ադուանեան, Ներսէս Խուդավերդեան, Գէորգ Սուրէնեան, Արիստակէս Դաւթեան, Յարգիս Տէր Գասպարեան, Երեմիա Գալստեան, Սուքիաս Պարզեան, Յովհաննէս Տաթևացի, Արիստակէս Սեդրաքեան, Կարապետ Այվազեան և Գրիգոր Գառնակերեան եպիսկոպոսները.

Կարա-Մուրզայի ճեմարանական երգչախումբն ու երգիչ Շահլամեանը կ'երգէին պատարագի եղանակները. Տաճարին մէջ տեղ զրաւած էին միայն պետական պաշտօնեաներ, պատգամաւորութիւններ, թղթակիցներ և յատուկ հրաւիրեալներ, իսկ տասնեակ հազարաւոր ժողովուրդ կը սպասէր վանքի բակին մէջ, ուր Տաճարի արևմտակողմի զանգակատան առջև պատրաստուած էր յատուկ բեմ մը, որուն վրայ պիտի կատարուէր Հայրիկի օծման հանդէսը. Պատարագի ընթացքին, Հայրիկը ծնկաչոք երդուեցաւ.

«Մկրտիչ ժառայ Քրիստոսի եւ Եպիսկոպոս Գլուխայ վանուց, միաբան Սրբոյ Ոհրոխս Էջմիածնի, կամօքն Աստուծոյ եւ բնտրութեամբ հանդերձեալ ազգիս Հայոց կոչեցեալ յԱրարատեան Աթոռ կաթողիկոսութեան Ամենայն Հայոց, աւպատիւեալ յօգնականութիւն շնորհաց բարձելոյն՝ խոստանամ եւ ուխտեմ առաջի սրբոյ

*սեղանոյս եւ աստուածբնիկալ ս. Գրանցս, յանձն առնուլ զպաշտօնս զայս Նպիսկոպոսապետութեան Հայաստանեայցս եկեղեցւոյ եւ զբոլորապտուղ առաքինամբ ընծայել զանձն իմ յանվթար կատարումն աստուածադիր օրինաց եւ կամաց Կաթողիկոսական պարտուց եւ առաջնորդել ազգիս Հայոց...» և այլն։*

*Այս երդումէն յետոյ օծման արարողութեան մէկ մասը տաճարին մէջ կատարուեցաւ, երբ հանդիսադիրը Մեսրոպ Արքեպ.ը ձայնեց — «Աստուածային և երկնաւոր շնորհն, որ միշտ լինու զպէտս սրբոյ սպասաւորութեան առաքելական եկեղեցւոյ, կոչէ զՄԿՐՏԻՉ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՎԱՆՈՒՑ ԳԼԱԿԱՑ յեպիսկոպոսութենէ ի Կաթուղիկոսութիւն Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ՝ ի Հովուապետութիւն և յԱռաջնորդութիւն ընդհանուր ազգիս Հայոց՝ ըստ վկայութեան անձին իւրոյ և ամենայն ժողովրդեան»։*

*Ապա Հայրիկը Տաճարէն թափօրով եկաւ դուրս, կանգնեցաւ զանգակատան առջև հանդիսարան բեմին վրայ, շրջապատուելով 12 եպիսկոպոսներով։ Օծումն էր։ Հայոց Հայրիկը ծունկի իջաւ և ձեռամբարձ մնաց։ Մեսրոպ Արքեպ.ը մեռոնով օծեց անոր ճակատը իսկ միւս 11 եպիսկոպոսներն ալ մօտենալով բթամատները անոր գագաթին վրայ դրին ու երգեցին.*

*«Օրհնեցի օծցի եւ սրբեցի զագաթն Տէր Մկրտիչ Կաթողիկոսին»։ Օծեալի գլուխը ծածկեցին թափանցիկ բօղով և ապա Հայոց Հայրիկը ոտքի ելաւ, երբ յանկարծ որոտալից ծափերն ու երկարատև «կեցցէ Հայրիկ» աղաղակները իրար խառնուած ստեղծեցին այնպիսի սրտառուչ րոպէներ, որ Հայրիկը չը կրցաւ պահել իր յուզմունքն ու արցունքը։ Հանդէսը վերջացած էր։*

*Եկեղեցական թափօրով, Հայոց Հայրիկը զգեստաւորուած՝ առաջնորդուեցաւ վեհարանը և Ծաղկեայ դահլիճին մէջ բազմեցաւ հայրապետական գահին վրայ, իբրև ՏԷՐ ՏԷՐ ՄԿՐՏԻՉ Ա. ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՑՈՑ։*

*Նոյն օրը վանքի սեղանատան մէջ տեղի ունեցաւ պաշտօնական ճաշկերոյթ. Բաժակներ առաջարկուեցան Ռուսաց Ցարի, Հայրիկի և ներկայ եղողներու կենացը։ Գարա-Մուրզայի երգեցիկ խումբը կենացներու վրայ ազգային երգեր կ'երգէր։ Կարապետ Եպիս. Այվազեանը բնորոշ ճառով մը կը գրուատէր Հայրիկի անձնն ու*

գործը, իսկ խումբը կ'երգէր Ղազարոս Աղայեանի գրած ժողովրդական երգը՝ Հայը Արծիւ Հայրիկին ձօնուած.

Թող բարձրացնեն ճռինչ ադաղակ, թուխակ, կաչաղակ,
Միակ վայելուչ, միակ սրտառուչ, երգիչն է սոխակ։

Թող վայրեն բուեր, ագռաւներ անթիւ, հազար հաւ ու ճիւ,
Ամենից մեծը, ամենից բարձրը է ազատն Արծիւ։

Թող տան ուժ կ'ուզեն մանեակ մատանիք, նշաններ գափնիք,
Միակ արժանին, միակ սիրելին կը մնայ Հայրիկ։

Հայրիկ, ահ, Հայրիկ, քո քաղցր անուան լինիմ ես զուրբան,
Սիրեմ այն հողը որ ծնաւ քեզ նման հրեշտակ պահապան։

Ահ ցէր, պահպանիր դու մեր Հայրիկին, Քո հաւատարմին,
Անպակաս արա մեր գլխընեերից Նրա հովանին.

Որոտալից ծափերու և կեցցէներու մէջ կը մարէին երգի վերջին տողերը, մինչ սեղանը կը վերջանար, իսկ դուրսը մինչև լոյս ժողովրդական քէֆերը կը շարունակուէին.

Անգլիացի ուղեգիր և երկհատոր «Armenia»-ի մեծանուն հեղինակ Հ. Փ. Պ. Հիւիչը ներկայ եղած է օծման հանդէսին և ծանօթացեր է Հայոց Հայրիկի հետ, որու մասին կը գրէ իւր հետևեալ տպաւորութիւնները.

«Խրիմեան իտէալական բարձրաստիճան եկեղեցականն է. անոր դէմքը շեշտակի դուրս կը ցայտէ Հին Կտակարանէն, իր բովանդակ հուրքովը և բանաստեղծականութեամբը։ Իր օծման արարողութեան միջոցին այնպէս թուեցաւ ինծի, թէ Աբրահատի ստորոտը հնամենի ոգին տակաւին արթուն կը մնար. ...Այս մարդուն ամբողջական նկարագիրը կարծես թէ աւելի կաղապարուած է տիպարի մը վրայ, քան թէ՝ քրիստոնէական նուիրապետութեան. ...Իրեն համար կրօնք և հայրենասիրութիւն գրեթէ համարժէք բառեր են։

«...Այս նշանաւոր մարդուն հետ, քով քովի մտերմական այնպիսի յարաբերութիւն մը ունեցայ, որ անակնկալ մը եղաւ ինծի համար, ու այսպէս՝ էջմիածնի մէջ և յաջորդ ուղևորութեանս ընթացքին կրցայ մօտէն ծանօթանալ Խրիմեանի կեանքին։

«...Հանգստաւէտ օրուան մը յաջորդող առտուն, հրաւէր ստա-

ցայ այցելել Ն. Օրբութիւնը։ Երբ մենք Արարատի վրայ էինք, անիկա վանք հասած էր, և այնպէս կ'երեւար թէ չէր կրցած սենեակէն դուրս ելլել, որովհետեւ իր վրայ հիացող պեղացիները շուրջը կը խռնուէին ամէն անդամ որ դուրս ելլէր։ Մինչև իսկ այարտէզը պաշարուած էր պեղացիներէն որոնք ժամերով կը սպասէին իրենց Հայրիկին նայուածքին արժանանալու համար։

« ..Անիկա աշխարհի ամենէն նրբամիտ մարդն է, որ ձեզի կը դատէ իր խելացի աչքերուն մէկ նայուածքովը։ Չեմ յիշեր տեսած ըլլալ աւելի սիրուն և գրաւիչ դէմք մը։ Հաճոյքի սարսուռ մ'անցնցայ, մտածելով որ անոր քովը նստած եմ և կը տեսնեմ ժպիտը, անտարակոյս իր դիմագծին սովորական եղող այդ ժպիտը, որ կը ծրծռար իր վճիտ և թուխ աչքերուն շուրջը։ Ձայնն ալ շատ քաղցր էր, իսկ վարուելակերպը լեցուն էր մեծանձնութեամբ, որուն հետին կը զգաս թէ ոյժ կայ։ ...Կաթողիկոսը ինձի մանրամասնօրէն հարցուց մեր Արարատի վերելքին բոլոր պատահարները, ու հաւատաց թէ մինչև գագաթը բարձրացած ենք։ Այնուհետեւ խօսեցանք իր Անգլիոյ մէջ բնակած շրջանին վրայ և ուզեցի իմանալ իր կարծիքը Մր. Կլէտսթընի մասին, որուն հետ տեսակցութիւններ ունեցած էր։ Պատասխանեց թէ այդ ճապուկ մարդին աստուածարանական կարողութենէն խորունկ տպաւորութիւն կրած էր, Կլէտսթընը բոլոր ճանչցողներուն նման։ Իր դէմքը կծկուեցաւ, երբ կարդը եկաւ խօսիլու թրքական գաւառներուն մէջ իր ապրած կեանքին վրայ. անիկայ մանաւոր կերպով ծանրացաւ Հայերու կրած տառապանքներուն ահաւոր իրականութեանը վրայ։ Կարծես իր միտքը ինկան և ձայնը խեղդեցին իր գործօն օրերուն և անքուն անցուցած գիշերներուն բոլոր պայքարները, յոյսերը և անձկութիւնները։ Ի վերջոյ անիկա արձակեց Հառաչանք մը որով կարծես կը ցաւէր անոնց վրայ և ըսաւ— Հիմայ եկած եմ մոռացութեան Երկիրը» („Armenia". հատոր Ա.)։

Այն օրը, Սեպտ. 26-ին, երբ Էջմիածնի մէջ Հայոց Հայրիկը Կաթուղիկոս կ'օծուէր, բովանդակ Հայութիւնը հոգեպէս կ'ուրախանար։ Ամենուրեք կը կատարուէին հայրապետական մաղթանքներ և ժողովրդական մեծաշուք հանդէսներ։

Վարագայ Խաչի տօնին օրն էր այդ։ Վան քաղաքէն և շրջակայ

գիւղերէն հազարաւոր ժողովուրդ վարագայ վանքը լեցուած էր. Հայր Արծիւը կաթուղիկոս կ'օծուէր. Մինչ Արծուաբոյն Վարագը կրնար անտարբեր մնալ. Տաճարին մէջ կը կատարուէր մաղթանք, իսկ վանքի բակին մէջն ալ ժողովրդական հանդէս. երբ Մեսրոպ Քահանայ Ճանիկեանը կը կարդար Հայոց Հայրիկին ձօնած իւր այս ոտանաւորը, որ յետոյ կը տարածուէր ու կ'երգուէր.

Հայրի՛կ, Հայրի՛կ, քեզ ադետիք,
Վասպուրականի մեր աշխարհի
Փուչը խլեց քեզ վարդ բերուած.
Հրաժի՛ր, ցնծա՛ բիւր աւգտար։

Հայրի՛կ, Հայրի՛կ բաց քուն
վէրքերդ,
Մենք պատրաստ ենք հատուցանել,
Սիրոյ ազնիւ պաշտամանուն
Զայն պատուաստել, օծանիլ։

Մենք պատրաստ ենք, մենք
ոխտել ենք,
Պատակ հիւսանել քեզ հատուր,
Ձեորեր ամեն, սրտեր ամեն,
Պիտ միանան քեզ հատուր։

Հայրի՛կ, Հայրի՛կ, հայոց քոնիկ,
Անմահացուր դուն մեր կեանք,
Մօտիր, դպիր, կեանք տուր
հայոն
Եւ աւտա մերձ է քո փառք։

Բազմիր աթոռ Լուսաւորչին,
Հայոց մեծաց գերապայ,
Սահնակ Պարթեւ խոնջած,
յոգնած՝
Իր գահազան քեզ ծուտաչ։

Հովուիր հօտդ գահազանուն,
Սիրէ, ցաւեր ձեր կեանք, շոյս.
Ամեն հատակ կ'օրհնեմ զքեզ,
Դողդոջ ձերուկ, մատաղ կոյս։

Այսպէս ահա, կաթուղիկոսական ծիրանին ուսերուն քաշած՝ հայրապետական գահին վրայ կը բազմէր Հայոց Հայրիկը, որուն ուղղուած էին բովանդակ Հայութեան աչքերը ազգի և հայրենիքի ազատութեան յոյսով առլցուն։

Սակայն... Վասպուրականի ազատատենչ և սրաթռիչ Արծիւը, առաջին առթիւ իսկ, Հիւսիսի երկգլխանի հզօր Արծուի զօրութեան առջև կը զգար իւր անզօրութիւնը..., մինչ անդին ամբողջ ազգը— հասարակ գեղջուկէն սկսած մինչև մտաւորականը — ջերմ հաւատքով կ'երգէր.

Տէրհանան Հայրին, աւետ Մկրտիչ,
Դուն պիտի չիմիս, Հայրիկ ջան, խեղճ Հայոց փրկիչ։

## Ը.

## ՀԱՅՈՑ ՀԱՅՐԻԿԸ ԷՋՄԻԱԾՆԻ ԳԱԼԻՆ ՎՐԱՅ

*Խրիմեան Հայրիկը, իբրև Կաթուղիկոս Ամենայն Հայոց, 1893-ի Դեկտեմբեր 19-ին գրեց և հրատարակեց իւր հայրապետական Անդրանիկ Կոնդակը, որ հայրական սիրոյ, խանդաղատանքի և գուրգուրանքի սրտալի ձայն մըն է, Հայութեան ուղղուած մեծ ողջոյնը:*

*«ՈՂՋՈՅՆ... քեզ, Առաքելական Եկեղեցի Հայաստանեայց», որուն ամբողջ նուիրապետութիւնը մէկ առ մէկ կը լսէ Հայրիկի ձայնն ու յորդորը. «...Ողջոյն Ձեզ, վարժապետք և ուսուցիչք, Ձեզ յանձնեալ է ազգային կրթութիւն և դաստիարակութիւն մանկանց. ...Ողջոյն Ձեզ, խմբագիրք Հայոց, որ ճգնիք անդադար յաշխատութիւնս... գրով և թղթով վարէք զժողովուրդն ի յառաջադիմութիւն և քաղաքակրթութիւն. Զգոյշ, զգոյշ ջանացէք միշտ ի շինել, զի այս է ձեր սեպուհ պարտիք. Ողջոյն Ձեզ, յօրինիչ մատենագիրք, թարգմանիչք գրոց. ...Ողջոյն Ձեզ, Բարերար Մեկենասք, որ քաջալերելով զգրասէրս աշխատաւոր մշակն՝ ի լոյս հանէք զնորա վաստակն և ընծայէք ազգին. ...Ողջոյն Ձեզ, ուսանող մանկունք և օրիորդք, եղբարք և քոյրք, որ ձեռն ի ձեռն տուեալ ի միասին երթայք և գայք ի կրթութեան տաճարն. ...Ողջոյն Ձեզ, Մայրաքաղաքացիք և գաւառական քաղաքացիք. ...Ողջոյն Ձեզ, բնակիչք դաշտաց և լերանց շինական երկրագործ ժողովուրդ, որ սիրէք զհողն և մաճ, զոչխարն և տաւար, դուք աշխարհի բարի և անխարդախ մշակն էք. գործեցէք զերկիր և պահեցէք, գիտելով թէ միայն երկիրն է Ձեր կեանք և զօրութիւն. միշտ ջանացէք անկոր ուստ պահել այդ հայրենատուր ժառանգութիւնն»:*

*Հայրիկի կաթուղիկոսութեան հետ վառ յոյսեր կապած էր մանաւանդ Ցաճկահայութիւնը. Բուն հասարակ ժողովուրդը համոզուած էր, որ Հայրիկը պիտի կրնար Ռուսաստանի միջոցով ազատել Թուրքիոյ վրայ և ստեղծել Ցաճկահայաստանի ազատութիւնը, որուն համար արդէն Մայր Երկրին մէջ կ'աշխատէին յեղափոխական կուսակցութիւնները.*



ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ – Տ· Տ· ՄԿՐՏԻՉ Ա· ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ

*Ընտրեալ 5/18 Մայիս 1892. Օծեալ 26 Սեպտեմբեր 1893 ի Ս· Էջմիածին*

ՀՅՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ
ՍԿԱՎԵՄԻԱ

Սակայն Հայրիկը քանի մ՛ամիս էր, որ Էջմիածին հասեր էր, երբ Տաճկահայաստանի մէջ դէպքերը գահավիժօրէն իրար կը յաջորդէին և Հայ արիւնը կը կաթկթէր տաճիկի և քիւրդի նաթաղաններէն։

Այս անգամ—1894-ի Օգոստոսին—ձայնը հնչեց Սասունի լեռներէն։

«Սասունն ելաւ ապստամբեց, աշխարհի մէջ հաւնեց ձայն...»։

Տարօնի Աշխարհի այս լեռնական քաջորդիները ապստամբեցան Սուլթան Համիտի արիւնոտ բռնակալութեան դէմ։ Սակայն պետութիւնը հսկայական քանակութեամբ զօրքեր և քիւրդ հեծեալներ կենդրոնացնելով կրցաւ ապստամբութիւնը խեղդել և մօտ 10,000 ժողովուրդ սուրի քաշել։ Թէև եւրոպական պետութիւնները բողոքեցին, այդ եղեռն քննեցին և պահանջեցին, որ Սուլթան Համիտը Հայկական բարենորոգումները գործադրէր, բայց այս բոլորն ալ «ձայն բարբառոյ յանապատի» մնացին և Թուրքիան նորէն շարունակեց իր հայաջինջ քաղաքականութիւնը, որուն դէմ այնքան յանդուգն կերպով կը բողոքէր Երկաթէ Պատրիարք Իզմիրլեանը։

Սասունի մեծ կոտորածէն յետոյ, գիղջուկ քահանայ մը—Տէր Սարգիսը—Էջմիածին կուգայ և Հայրիկին ներկայանալով կը պատմէ, թէ ինչպէս իր բոլոր զաւակները կոտորուեցան։

Հայրիկը լուռութեամբ լսելէ յետոյ Տէր Սարգիսի կսկծալի պատմութիւնը կը հարցնէ.

—Քանի որդի ունէիր, Տէր Սարգիս։

—Բոլոր միասին քսան,՝ Հայրիկ ջան։

—Դուն քսան կորսնցուցիր, իսկ ես քսան հազար։ եղաւ fսաճ հազար ու fսաճ։ Որմէն շատ է, Տէր Սարդիս։

Քահանան ցնցուեցաւ, լռեց, աչքերն արցունքով լեցուեցան։ Ալ չը կրցաւ պատասխանել։

—Որմէն վիշտը մեծ է Տէր Սարգիս, կը հարցնէ Հայրիկը։

—Հայրիկի վիշտը... լալով կը պատասխանէ քահանան։

—Դէհ եկուր, Տէր Սարգիս, մօտ եկուր, ալդ գլխուս վրայ դիր, աղօթէ, օրհնէ, որ այս վշտին դիմանամ, հեկեկալով կ՛ըսէ Հայրիկը և գլուխը կը խոնարհեցնէ։

Ծերունազարդ քահանան աջը կը դնէ վշտալի Հայրապետի գլխին, կ՛աղօթէ ու կուլայ։

«Նա օրհնում էր Հայոց Կաթուղիկոսին, նրա առջև խոնարհ-ուել էր Հայոց Հայրիկը...»։

Յովհաննէս Թումանեանը*) այս խօսքերով վերջացուց իւր պատմութիւնը և ինքն ալ հեկեկալով լացաւ։

Իզմիրլեանի պատրիարքութեան օրով Հայկական Հարցը նորէն քննութեան առարկայ դարձաւ եւրոպական պետութիւններու կողմէ։ Հայկական նահանգներու բարենորոգմանց ծրագրի պատրաստութիւնը յանձնուեցաւ Անգլիոյ, Ֆրանսայի և Ռուսիոյ՝ Կ. Պոլսոյ դեսպաններուն, մինչ Պատրիարքարանն ու սրտասահմանի Հայ գաղութներն ալ Հայոց Հայրիկին կը դիմէին խնդրելով, որ անձամբ երթար Պետերբուրգ և Նիկոլայ Բ. Ցարին ներկայանալով, անոր պաշտպանութիւնը խնդրէր Հայկական բարենորոգմանց համար։

Հայրիկը 1895 Փետրուարին ճամբայ կ'իյնար դէպի Պետերբուրգ։ Բայց Նոր Նախիջևան հասնելէ յետոյ յանկարծ պետական հրամանով կը յայտնուի իրեն, կանգ առնել։ Նա ստիպուած կ'ըլլայ ամբողջ 4 ամիս սրտմաշուք անհամբերութեամբ սպասել Նոր Նախիջևանի մէջ։ Ցնշուշտ Սուլթան Համիտի համար հաճելի չէր, որ Հայոց Կաթուղիկոսը Ցարին պաշտպանութեանը դիմէր, իսկ ռուսական դիւանագիտութիւնն ալ չը ցանկացաւ Հայկական Հարցին պատճառով Սուլթանին «սիրտը պղտորել»։ Ռուս-տաճկական դիւանագիտական նենգ ու ներքին խաղերը կը շարունակուէին անդադար, մինչ Հայրիկը Նոր Նախիջևանի մէջ կը սպասէր, որ պետութեան հրամանով շարունակէր իւր ճամբորդութիւնը դէպի Պետերբուրգ։

---

*) Վաստակաւոր բանասէր Գիւտ Ալտզ Քահանայ Ադանեանը 1915-ի աշնան Ազգային Բիւրոյի ծախսով կը հրատարակէր իւր «Ինւանց Հայոց Պատմութեան» պատկառելի երկասիրութեան ԺԹ.-րդ հատորը «Հարուստահարութիւնները Տաճկահայաստանում» կարմրատառ վերնագրով։ Օր մը գացի Ադանեանց տպարանը (Թիֆլիս) Տիգրան Նազարեանի «Աղբիւր» և «Տարազ» ամսաթերթերը սրբագրելու համար։ Ալանեան քահանան ալ անկիւն մը կծկուած Խրիմեանի անտիպ նամակները կը դասաւորէր, երբ ուրախ զուարթ ներս մտաւ Յովհաննէս Թումանեանը։ Երկուքն ալ Խրիմեանի մասին երկար խօսեցան։ Թումանեանը պատմեց Հայոց Հայրիկի և Սասունցի Տէր Սարգիս քահանայի վերոգրեալ պատմութիւնը, որ ես անմիջապէս գրի առի։ Ցետոյ ես առիթ ունեցայ Թումանեանէն գրի առնելու քանի մը բնորոշ և զուարճալի մանրավէպներ՝ Հայրիկի կեանքէն։

Մեծ պետութեան դեսպանները 1895-ի Մայիսի 14-ին հրատարակեցին Հայկական բարեփոխումնաց ծրագիրը. Պատմական Մայիսեան ծրագիրն էր այդ, որուն ընդհանուր տպաւորութիւնը գոհացուցիչ չէր*). Սուլթան Համիտն ալ մատի արանքով կը նայէր այդ ծրագրին վրայ.

Ռուսական նենգամիտ դիւանագիտութիւնը, Մայիսեան ծրագրի հրատարակութենէն յետոյ միայն արտօնեց, որ Հայոց Հայրիկը նոր Նախիջեւանէն ճամբայ ելնէ դէպի Պետերբուրգ, Նիկոլայ Բ. Ցարին ներկայանալու համար.

Հայրիկը ճամբայ կ'ելլէր իր շքախումբով, որուն կը մասնակցէին՝ Կարապետ Եպիս. Այվազեան, Բարդուղիմէոս Ճուղուրեան, Յուսիկ Մովսիսեան, Նահապետ Նահապետեան, Յուսիկ Զօհրաբեան**) (Հայրիկի քարտուղար և դիւանապետ) և Մխիթար Տէր Մկրտիչեան Վարդապետները, Վահան Սարկաւագ Սահակեան (յետոյ Տօրիւն Վարդապետ) և Խորէն Խրիմեանը.

Մայիսի 25-ին, ցերեկուայ ժամի 2½-ին Հայոց Հայրիկը կը ժամանէր Պետերբուրգը. Կայսրան խնդուած Հայ ժողովուրդը «կեցցէ Հայրիկ» աղաղակներով և ծափերով ողջոյնի և համակրանքի ցոյցեր ըրաւ. Պետերբուրգի Հայերու պատգամաւորներն ու պետական բարձրաստիճան պաշտօնեաները դիմաւորեցին Հայրիկին, որը յետոյ չորս ձիանի կառքով առաջնորդուեցաւ Հայոց եկեղեցին. Պետերբուրգի Հայ ուսանողները Հայրիկի կառքը շրջապատած կը վազէին և բարձրաձայն կը կանչէին «Հայրիկ ջան», «կեցցէ Հայրիկ». Հայրիկի կառքին այնքան մեծ բազմութիւն մը կը հետևէր, որ Նեւսկի փողոցի անց ու դարձը կանգ առած էր. Հայրապետական այս հանդիսաւոր երթը շատ խոր տպաւորութիւն թողուց մանաւանդ ռուսներու և օտարազգիներու վրայ, որոնք հիացած կը դիտէին այդ հետաքրքրիր տեսարանը. Հայրիկը մեծա-

---

*) Մայիսեան ծրագրի մասին անգլերէն «Daily News» թերթը կը գրէր.— «...Որչափ քննենք այնքան վատ կը գտնենք (այդ ծրագիրը). Սրկչոտ և տարտամ մի արտադրութիւն է. Չպիտի գոհացնէ հայերը, որոնց կենաց, ընչից և խղճի ապահովութեան անհրաժեշտ երաշխիքը չունի...»:

**) Այժմ Արքեպիսկոպոս և Առաջնորդ Հայոց Ռումանիոյ:

շուք հանդիսաւորութեամբ մտաւ Հայոց եկեղեցին, աղօթեց և ապա իւր շքախումբով գնաց Միլիոնեան փողոցի մէջ պատրաստուած բնակարանը, ուր Հայոց Կաթուղիկոսին այցելեցին Ներքին Գործոց Նախարարի Դաղտնի Խորհրդական Մասալով և Պետերբուրգի քաղաքապետ Ֆոն-Վալը։ Մայիսի 26-ին Հայրիկը իւր շքախումբով այցելեց ռուսաց Ս. Պօղոս-Պետրոսի տաճարը և Ալեքսանդր Գ. Ցարի գերեզմանի վրայ հոգեհանգիստ կատարեց։ Նոյն օր Հանրային Կրթութեան Նախարար Գոմս Ե. Դելեանեան այցելեց Հայրիկին։ Կաթուղիկոսը պաշտօնական այցելութիւն տուաւ Ներքին Գործոց Նախարար Դուբնովոյին և ընդունեց փոխադարձը։

Պետերբուրգի ռուսերէն թերթերը գրեթէ բոլորն ալ հրատարակեցին Հայոց Հայրիկի լուսանկարն ու կենսագրութիւնը և համակրանքի ու գնահատութեան խօսքերով դրուատեցին անոր անձն ու գործունէութիւնը։

Մայիսի 31-ին Հայոց Հայրիկը իւր շքախումբով, Նոր-Պետերհոֆի մէջ, կը ներկայանար Ռուսաց Ցարին և Թագուհիին։ Արտաքին Գործոց Նախարարին կողմէ Հայրիկին թարգման նշանակուեցաւ մեծանուն Հայ գիտնական Պրոֆ. Կարապետ Եզեանը։

«...երբ Նորին Օծութիւնը, Նորին Մեծութեան (Նիկոլայ Բ. Ցարի) արարողապետ Ա. Վօնլեարլեարսկու և կամէր-իւնկէր Վ. Կոնիաբի ուղեկցութեամբ հասաւ Պետերգոֆ, տեղւոյն քաղաքապետի ողջոյնը ընդունելուց յետոյ՝ հրաւիրուեցաւ նստելու Ալեքսանդր Բ.-ի պատմական կառքը վեց սպիտակ ձի լծուած, չորս ձիաւոր և մի սպայ յետևից ուղեկցելով. շքախմբի առաջից երկու վարդապետներ առանձին առանձին պալատական կառքերի մէջ նստած տանում էին հայրապետական խաչն ու գաւազանը, յետոյ Նորին Օծութեան կառքը, իսկ այնուհետև չորս պալատական շքեղ կառքերով հետևում էին Գեր. Կարապետ սրբազանը պ. Կ. Եզեանի և միւս վարդապետների հետ։ Իսկ վերջին կառքում շաթիրները։

«Նորին Օծութիւնը Վեհափառ Կայսեր և Կայսրուհուն բախտ ունեցաւ ներկայանալու Պետերգոֆի մեծ պալատնքում, որի առաջի հռչակաւոր շադրուանները, ի պատիւ Վեհափառ Հայրապետի բացած էին և որոնք այդ միջոցին սքանչելի տեսարան էին ներկայացնում, մինչև Բալդիկ ծովը, չրանցքի երկարութեամբ։

«Վեհափառը երբ հասաւ կայսերական ապարանքը, առաջնորդուեցաւ Կանաչ Դահլիճը, իսկ շքախումբը մնաց Զինական սրահում։ Այս միջոցին կայսերական ապարանքը եկան Կայսերական Տան նախարարութեան կառավարիչ՝ գեներալ-լէյտենանդ բարոն Վ. Ֆրիդերիկս, օբէր-հոֆմարշալ իշխան Ս. Ն. Տրուբէցկոյ, աւագ արարողապետ իշխան Ա. Դոլգօրուկիյ, հոֆմարշալ կոմս Հ. Բէկկէնդորֆ և ուրիշները։ Ժամի 11½-ին Ալեքսանդրիայից ապարանք եկան Կայսր և Կայսրուհին։ Աւագ արարողապետ իշխան Ա. Դոլգօրուկին այդ ժամանակ գալով Վեհափառ Հայրապետին՝ հրաւիրեց Նորին Օծութեանը Նորին Մեծութեան առանձնասենեակը։ Այստեղ ունկընդրութեան միջոցին Վեհափառը շնորհաւորեց Նորին Կայսերական Մեծութեանը Նրա ի Գահ բարձրանալը. ապա հաղորդեց ի սփիւռս աշխարհի հայոց անձնուիրութեան զգացմանց արտայայտութիւնը։ Թագաւոր Կայսրը իւր գոհունակութիւնը յայտնեց Վեհափառին, որ տեսնում է իւր մօտ Նորին Օծութեանը։

«Ընդունելութիւնից զկնի, որը տևեց կէս ժամ, Վեհափառ Հայրապետին և շքախմբին առաջարկուեցաւ կայսերական ապարանքում նախաճաշիկ։ Նորին Օծութեան համար սեղան էր պատրաստուած։ Նախաճաշից յետոյ նոյն հանդիսով, պալատական կառքերով, Վեհափառ Հայրապետը իւր շքախմբով վերադարձաւ կայարան»*) (և ապա գնաց իւր բնակարանը)։

Յունիսի 1-ին և 2-ին Հայոց Հայրիկը այցելեց Մեծ Իշխան Միքայէլ Նիկոլաևիչին և Արտաքին Գործոց Նախարար Լոբանօֆ Ռոստովսկիին, Պետերբուրգի մետրապոլիտ Պալլադիին, պալատական բարձրաստիճան պաշտօնեաներուն և Պարսից դեսպանին, որոնք բոլորն ալ փոխադարձաբար այցելութեան եկան Կաթուղիկոսին։ Հայրիկը այցելեց Պետերբուրգի Էրմիտաժ կոչուած կայսերական թանգարան, բուսաբանական այգին, ուսական մեծ տաճարները, Լեռնային ճեմարանը և ուրիշ հետաքրքիր վայրեր։

---

*) Սիմէոն Դիւլամիրեան—«Արաքս» Հանդէս. Եօթերորդ տարի. Դիրք. Ա. 1894—1895. էջ՝ 219—234, ուր նկարագրուած են Հայրիկի Պետերբուրգ ժամանելու, Ցարին ներկայանալու, այցելութիւններու և մեկնումի մանրամասնութիւնները։

Սիմէոն Դիւլամիրեան կը գրէ, որ— «Վեհափառ Հայրապետը մի կարգ կարևոր խնդիրների մասին զանազան պաշտօնական թղթեր ներկայացրեց Ներքին Գործոց Նախարարութեան»։

Ժամանակին Կովկասի Հայ մամուլը, որ ռուսական գրաքննութեան ենթակայ էր, չը կրցաւ ունէ բան գրել այն մասին, թէ Պետերբուրգի պալատն ու նախարարական խորհուրդը ինչ պատասխան տուին Հայոց Հայրիկին, որ Հայկական բարենորոգումներու համար ռուսաց Ցարին պաշտպանութիւնը կը հայցէր։ Պետերբուրգի Հայոց եկեղեցոյ մէջ խօսած իւր երկու քարոզները փաստեր են, որ Հայրիկը ոգի ի բուին կը ջանար Հայկական Հարցը Ռուսիոյ միջոցաւ լուծել տալ։

«Սիրելի ժողովուրդ, կը հարցնէք թէ, Հայրիկ, դու ուստի կուգաս, ասա մեզ, արդեօք ողջ է մեր Մայր Հայաստան, ողջ են իւր հայ որդիները։ Գիտեմ, կան թերահաւատ մարդիկ, որք յուսահատ են և յուսահատաբար կը խօսին, կասեն թէ Հայաստան մեռած է, և կիսամեռ ընկած։ Իսկ ես կ'աւետեմ ձեզ, թէ Հայաստան կենդանի է և կենդանի պիտի մնայ։ Եթէ Հայաստան շատ բան կորուսեր է, սակայն չորս հազար ամաց հետէ տակաւին կ'ապրին նորա ճիւղերը, այո՛ Հայաստան կայ և պիտի մնայ, երբ նորա դրացի մեծ ազգեր Մարը և Ասորիք անցեր գնացեր են և միայն պատմութեան մէջ հետք թողեր են։ Դուք ես, ով գաղթական ժողովուրդք, որ այժմ Նեվա գետին քով կը բնակիք, գիտեմ դուք էլ նոյն հարցում կ'ընէք ինձի։ Դուք քաջ գիտէք, որ այսօր Հայաստան բաժնուած է երկու դրացի պետութեանց մէջ, դուք բաղդաւոր էք, ձեզ վիճակուած է ազատաբար վայելել մեծին Ռուսիոյ հզօր հովանին և պաշտպանութիւն։ Իսկ մէկ մաս, որ ինկած է Ցաճկաց իշխանութեան ներքոյ, այսօր հեծում է բազմադիմի զրկանաց և տառապանաց մէջ, այլ որովհետև ամէն բան իւր վերջն ու վախճանն ունի, հասած է ժամ, որ վերջ պիտի տրուի վշտակրեալ հայ ժողովուրդին։ Կը հաւատամք թէ Աստուածային նախախնամութիւն բաւական համարելով իւր հաւատացեալ ժողովուրդին չարչարանքը, իւր այցելութեան ձեռքով շարժեց քրիստոնեայ տէրութեանց սիրտը, որք այսօր միանալով համերաշխաբար, ոչ միայն կը յուսանք, այլև անթերևմիտ կը հաւատանք, որ վերջ տան Թուրքիոյ հայոց աշխարհի

ներկայ դրութեան և վերանորոգեն երկրի վարչական նոր բարեկարգ վարչութիւն. Այլև որովհետև Ռուսիոյ և Թուրքիոյ համայն ազգայինք հաւատք միշտ կենդանի պահեր են իրենց սրտին մէջ և գիտեն, որ ի սկզբանէ անտի քրիստոնեայ ժողովուրդին պաշտպան հանդիսացեր է արեան զոհերով ինքնակալ կայսրութիւն Մեծին Ռուսիոյ և առ այս կը վկայեն անցեալ պատմութիւնք. Սորա համար բովանդակ հայոց ակնկալութեան աչք կը յառին դէպի Մեծ դատաւորը և Թագաւորն Ռուսիոյ, որ իւր բարեացակամ հաճութեամբ պսակէ և վախճան դնէ հայոց վաղեմի և հնացեալ խնդրոյն.

«...Հայաստանն այժմ վիրաւոր է, որ կիսամեռ ընկած է, տեսնենք թէ ո՛վ պիտի օգնէ նորան իւր այդ վիճակէն ազատելու համար։ Հայաստան Ռուսական լայնածաւալ պետութեան դրացի մի երկիր է և ամենից աւելի քաջ տեղեակ է Հայաստանի վիճակին մեր ամենաողորմած և ինքնակալ ծարը, թէպէտ Եւրոպայի ամէն կողմերէ ձայներ բարձրացել են Հայաստանի համար և գիտեն նորա վիճակ, բայց Ռուսական հզօր արծուի սրատես աչքը աւելի լաւ է տեսնում և գիտէ ամէն ինչ։ Իրրև ընդհանուր քրիստոնէից պաշտպանին և մանաւանդ դրացի մի հզօր պետութեան՝ մեր յոյս նորա վրայ է և նորանից ենք ակնկալում ամէն ինչ։

«Քանի որ էջմիածնում էի, աշխարհքի չորս կողմից նամակներ, հեռագրներ կը թափէին ի վեհարան, թէ Հայրիկ, մի նստիր, շարժուիր. դիմիր Ռուսիոյ Ինքնակալ ծարին, խնդրիր դարման ժողովուրդի համար, Նա մարդասէր է։ Այդ մի մեծ պարտականութիւն էր ինձ համար, իրրև Ամենայն Հայոց Կաթուղիկոսի. Ես այժմ ոչ միայն կը յուսամ, այլև կը հաւատամ թէ Աստուծոյ այցելութեան ժամ հասած է. մի այցելութիւն պիտի լինի Հայաստանի ժողովրդոց, և մեր խնդիրք պիտի կատարուի, միայն Նորին Կայսերական Մեծութեան բարեհաճ ուշադրութիւն կը խնդրենք դէպի մեր տառապեալ հօտը»։

Պետերբուրգի մէջ Հայրիկին կը ներկայանան Հայ կանայք, օրիորդներ և ուսանողներ, որոնց բոլորին ալ նա կը յորդորէ, թէ — «Սիրեցէք ձեր ազգն ու հայրենիք. մի մոռանաք, որ հոն, Թուրքիոյ մէջ տառապեալ եղբայներ և քոյրեր ունիք, որոնք ձեր օգնութեան կը սպասեն»։

Յունիսի 13 ին Հայոց Հայրիկը իւր շքախումբով Պետերբուրգէն կը վերադառնար Մոսկուայի մէջ, պետութիւնն ու տիղմոյն հայերը փառաւոր ընդունելութիւն ցոյց տուին։ Բանաստեղծ Սմբատ Շահազիզը յանուն Մոսկուայի Հայութեան բարի գալուստ և ապա բարի երթ կը մաղթէր Հայրիկին, որուն ի պատիւ ժողովրդական խանդավառ ցոյցեր կատարուեցան։

Հայոց Կաթուղիկոսը մեծ յոյսերով առլցուն Մոսկուայէն կ'ուղևորուի դէպի Էջմիածին, ճանապարհին, ամենուրեք հանդիպելով ժողովրդական մեծ ցոյցերու։ Հայրիկի և Ցարի տեսակցութիւնը քաղաքական նոր և յուսատու հեռանկարներ կը պարզէր Հայութեան աչքին առջև։

Այս ճամբորդութեամբ Հայրիկը յաջողած էր ռուսահայ հարուստներէն մեծագումար դրամներ հանգանակել յօգուտ ազգային, կրթական և բարեգործական նպատակներու։

* * *

Հայրիկը կաթուղիկոսական գահին վրայ նստելէ յետոյ առաջին առթիւ, Էջմիածնի վանքի ներքին կեանքի բարեկարգութեամբ զբաղեցաւ։ «Ararատ» ամսաթերթի հրատարակութիւնը կանոնաւորեց։ Կարող գրիչներ և ուժեր «Արարատ»ին աշխատակից դարձան։ Թերթին իւրաքանչիւր թիւը լեցուեցաւ պատմական, բանասիրական, գրական, մանկավարժական և այլ արժէքաւոր յօդուածներով։ Հայոց Հայրիկը, ինքն ալ կ'աշխատակցէր «Արարատ»-ին։ Անոր մէկ յօդուածը գիւղական քահանաներու մասին, (որ տեսակ մը պատասխան էր Արիստ. Եալիս. Սեդրաքեանի «Քահանայական խնդիրը» գրքին) ժամանակին հետաքրքրութեամբ կարդացուեցաւ։ Հայոց Հայրիկը Ազէն Երէց ծածկանունով կը դառնայ գիւղական քահանայ, կը մտնէ Հայ գիւղը և պարզ ու անպաճոյճ լեզուով «Արարատ»ին մէջ կը գրէ սրտառուչ և անուշ խօսակցութիւն մը, որ տեղի կ'ունենայ Հայրիկի և գիւղացիներու միջև՝ գիւղական ցաւերու և գեղջուկ քահանայի մասին։

Կը պատմեն, որ Պետերբուրգի ռուսաց Մետրապոլիտը Հայրիկին առաջարկած էր թէ—«Եկէք համայն քրիստոնէական եկեղե-

ցիներու միացման հարցը արծարծենք»: Հայրիկը կը պատասխանէ. —«Ատիկա դարերէ ի վեր ծանօթ հարց մըն է, որ թէեւ շատ ծեծուած է, բայց ցարդ անլուծելի կը մնայ և պիտի մնայ։ Բան մըն ալ ըսեմ, որ բազմազան և բազմագոյն ծաղիկներով հարուստ ծաղկանոցն աւելի հաճելի և գեղեցիկ է, քան թէ միագոյն և միատեսակ բուրաստանը»։

Սուչավայի (Աւստրիա) Հայոց ազգային եկեղեցւոյ հոգաբարձութիւնը նամակ մը գրէ (1894) Հայրիկին, խնդրելով, որ իրենց գաղութին համար էջմիածնէն գրկուի հոգևոր հովիւ—վարդապետ մը՝ —«Որ ուժիմ եւ գուարթ ըլլայ, եւրոպական ձեւի ուսմունքներ ճանչցող մը ըլլայ, գիտնական, պարկեշտ, աստուածաբան ու տեսակ աճմ մը ըլլայ, եւրոպական լեզուի մը՝ գերմաներէնի կամ ֆրանսերէնի տեղեակ ըլլայ»։

Այս տողերը կարդալէ յետոյ Հայրիկը կուշտ ու կուռ կը խընդայ և Դիւանապետ Խորէն Վրդ. Մեսրոպեանէն կ'ըսէ.

—Է՜հ, ինչ կ'ըսես, Խորէն Վարդապետ, այս մարդոց ուզած «ըլլայ»ներէն կը գտնուին Էջմիածնի մէջ։ Շատ դժուար է, որ այս բոլոր ըլլայները մէկ անձի մէջ ամփոփուին. եթէ այդ ըլլայներուն կէսն ուզէին բան մը կ'ընէինք։ Պատասխանեցէք թէ — Հայրիկ կ'ըսէ, այդ ըլլայներէն եթէ ըլլան՝ նորէն ձեր կողմերը կ'ըլլան։

Ամերիկայի Հայութիւնը միշտ ալ բուռն սէր, անգամ պաշտամունք տածեր է Հայոց Հայրիկի անուան, անձի և գործի հանդէպ։

Հայրիկն ալ իւր հայրական սիրոյ զգացումն ու ձայնը հասցուցեր է Ամերիկայի Հայութեան, որուն կուզղէր իւր ձայնն ու խօսքը, դէռ այն ժամանակ, երբ իբր աքսորական կ'ապրէր ի Կ. Պոլիս, ուրկից 1890-ի Փետրուար 22-ին Հայոց Հայրիկը այս նամակը կը գրէր Ամերիկայի Հայ պանդուխտներուն.

*Որդիք Հայրենեաց եւ պատուական սիրելիք.*

*Յորմէտւս Հայրիկ անախտակս ողջոյն եւ օրհնութիւն կը առաքէ Ձեզ Բիւզանդիոնի տարագիր վիայրեն, ուր աներկիւղ շրթայով կաշխատուած եմ։ Որչափ քաղցր կը լիներ եթէ գիրս գրեի Ձեզ Վատպուրականի աշխարհեն եւ*

*Մշոյ դաշտեն, գէթ հայրենի շնչով խօսէի եւ հայրենի ժաղկանց հոտով բուրէի Ձեզ հայրենասիրուհեան հոտ։*

*Ուրախ եմ զի հայրենիք առանց Հայրիկի ձայնին կը խօսի ըլդ Ձեզ, եւ ինչ հրաշալի է իւր ձայն եւ հոգին, որ կը հասնի յանկոյս մեծին ովկիանոսի։ Գիտես թէ Մայր Հայաստանի ծոցեն տարագիր որդիք որչափ հետաձգած ձորա գրկեն, այնչափ սուգի կը սիրեն եւ կը յիշեն Մեռուցեալ, այրիացեալ մայրը։ Այդ օտար աշխարհի պերճանքներ թող չհրապուրեն զՁեզ, Ձեր պերճանք Մասիսն է, Այրարատն է, Էջմիածնայ գմբէթն է, յառեցէք Ձեր աչքն այն գմբէթի խաչին։ Ընկերական սուրբ ոգւոյն կրակ վառեցէք Ձերսրտին մէջ, որով կարմիր կարմիր կայծիկներ թողուցէք ի հայաստան։ Ա՛ն այս օրհնութիւն եւ յաջողութիւն կը մաղթեմ Ձեզ եւ կը մնամ միշտ*

*Աղօթարար՝ Հայրիկ*

**Որչափ սրտայոյզ և անուշ է Հայրիկի ողջոյնի կենդանի ձայնը, որ գրամոֆոնի միջոցով ուղղած է Ամերիկայի Հայութեան։ Լսեցէք, լսենք այդ ձայնը։ Հայոց Հայրիկն է խօսողը*)։**

*Ա՛ն գաղթական Հայկազունս յԱմերիկա*

*Ողջո՛յն Ձեզ պանդուխտ որդիք Հայոց, որ բաղդն զՁեզ հայրենի աշխարհեն վարել տարել է մինչեւ Ամերիկա։*

*Ողջոյն Ձեզ Արարատեան աշխարհեն, Մասեաց Նոյեան տապանեն, Էջմիածնայ սուրբ Տաճարեն։*

*Ողջոյն Ձեզ Հայոց Հայրիկեն, ո՞ տայր ինձ, որ սահելոիս տայի Ձեզ իբրեւ Նոյեան ղաւնիին թէ ցամաքեցաւ ջրհեղեղ, դարձէ՛ք, եկէք Ձեր հայրենի Աշխարհ։*

---

*) Այս ողջոյնի նամակն պատճէն 1916-ի գարնան ես տեսայ Տիգրան Նազարեանի մօտ, Թիֆլիս։ Բնագիրը կարծեմ պահուած է Էջմիածնի գիւանատան մէջ։

*Սիրտ առէք. քաջալերուեցէք աւերակող եւ բախտաւոր պաղտուխտ որդիք Հայոց, Աստուծոյ այցելութիւն մըտ է մեր չարշարեալ աշխարհին.*

*Ողջոյն տուէք ձեռն մեծ հայարիչ Էդիսոնին, որ իւր հրաշալի գիւտով գիմ կենդանի ձայն առաւ բերաւ Ձեզ. կեցցէ յաւերժ իմքն եւ իւր գիւտի յիշատակ.*

*Կը շնորհաւորեմ Ձեր մուտ ի նոր տարին կեանք եւ յաջողութիւն մաղթելով Ձեզ՝*

*Հայոց Հայրիկ*

*Էջմիածին 1895 Յունուար 8*

* * *

Հայոց Հայրիկի և ծարի տեսակցութիւնը ամենուրեք վառ յոյսեր յառաջ բերած էր Հայ ժողովուրդի սրտին մէջ. Ամէնքը համոզուած էին, որ ռուսաց «ամենաողորմած կայսրը» իւր հզօր ազդեցութեամբ պիտի ճնշում բանեցնէր Սուլթան Համիտի վրայ և հայկական բարենորոգումները գործադրել տար Տաճկահայաստանի մէջ.

Եւ սակայն, ով յուսախաբութիւն, յանկարծ Ռուսիոյ Արտաքին Գործոց Նախարար Լոբանոֆ Ռոստովսկին կ'արտասանէր իւր հռչակաւոր խօսքը.

—«Այո... Հայաստանն ալ ուրիշ հայի...»:

Ուրեմն Ռուսաստանը կը ցանկար Հայաստանը տեսնել առանց Հայի. Հիւսիսի Երկգլխանի Արծիւը այսպէս կ'ուզէր լուծել Հայկական Հարցը. Եւ Սուլթան Համիտի համար ատկէ աւելի ցանկալի բան կար. Լոբանոֆի այդ հայակործան ցանկութիւնը կարմիր Սուլթանին աւելի եռանդ և յանդգնութիւն կը ներշնչէր իւր հայահալած և արիւնոտ բռնակալութիւնը սաստկացնելու համար. Նա ոչ միայն Մայիսեան ծրագրի գործադրութիւնը կը ձըգձըգէր, այլև խիստ հալածանք կը հանէր Հայ յեղափոխականներու դէմ, մամուլի ձայնը կը խեղդէր և ամէն տեսակ անլուր ոճիր-

ներով ու արհաւիրքներով տաճկահայութիւնը արիւնի և բռնութեան տակ կը պահէր։

Այս շրջանին էր ահա, 1895-ի աշնան, Սեպտ. 18-ին, Ս. Խաչի մեուլոցին օրը, երբ Հնչակեան Կուսակցութիւնը Կ. Պոլսոյ մէջ, Բ. Դրան (Բար-Ալի) առջև կը կազմակերպէր յեղափոխական մեծ ցոյց մը, պահանջելով, որ Սուլթան Համիտը գործադրել տար Մայիսեան ծրագիրը։ Սաքսափահար Սուլթանը կը խոստանար գործադրել Մայիսեան ծրագիրը և Շաքիր Փաշան ալ իբրև «բարեվորոգմանց ճնիչ» կը մեկնէր Տաճկահայաստան։ Սակայն Շաքիր Փաշան կ'իմանար ոչ թէ Հայկական բարեվորոգմանց գործադրութիւնը կազմակերպելու, այլ նա Սուլթան Համիտի հրամանով Տաճկահայաստանի մէջ կը պատրաստէր Հայկական կոտորածներու արիւնոտ ծրագիրը։

Արդէն Բ. Դրան ցոյցէն երեք օր յետոյ Հայ արիւնը կը հոսէր Տրապիզոնի մէջ։ Հետզհետէ ամբողջ Տաճկահայաստանի մէջ Տաճիկ կառավարութիւնը կանոնաւոր զօրամասերու, քիւրտերու և խուժանի ձեռքով կը կազմակերպէր Համաճայկական մեծ ջարդերը 1895-ի վերջերէն սկսեալ։ Հայ յեղափոխական կուսակցութիւնները հերոսական ջանքերով թէև կը դեկավարէին Հայ ժողովուրդի ինքնապաշտպանութեան կռիւները, բայց թշնամին կը յաջողէր 100,000 հայեր ջարդել։ Հայ արիւնը կը հոսէր Մայր Երկրի մէջ։ Տրապիզոն, Բաբերդ, Էրզրում, Երզնկա, Խարբերդ, Եդեսիա, Տիգրանակերտ, Բաղէշ, Մալաթիա, Թոքաթ, Արաբկիր, Ակն, Կեսարիա, Ամասիա, Էնկիւրի, Սեբաստիա, Հալէպ, Մարաշ, Մշոյ Դաշտ, Վասպուրականի ծայրագաւառները և այլ վայրերը ենթարկուեցան տաճկական և քրտական վայրագութեանց։ Սուրն ու հուրը անլուր ոճիրներ կը գործէին։

Հայոց Հայրիկը այս ահաւոր կոտորածները լսելով պահ մը կը շշմէր, կսկիծի ու ցաւի մէջ կը ծփար։ Ո՞ւր դիմէր, ում բողոքէր։ Նա հեռագրով կը դիմէր Կ. Պոլսոյ ռուսաց դեսպանին—Նելիդովին—և բացատրութիւն կը խնդրէր, թէ յանուն ո՛ր արդարութեան 100,000 հայերը ջարդուեցան։ Բայց Նելիդովը «շնական հեռագրի մը մէջ, յանդիմանախառն շեշտով մը» Հայոց Հայրիկին կը պատասխանէր։

«Հայոց եկեղեցական պետերուն պարտականութիւնն է յորդորել իրենց ժողովուրդը խաղաղութեան եւ հնազանդութեան՝ իրենց տիրապետներուն»։

Հայկական ջարդերը, առաւել կամ նուազ չափով, մայրաքաղաքէն կը սկսէին և կը տարածուէին մինչև Տաճկահայաստանի ծայրագաւառները, որոնցմէ զերծ մնացեր էր միայն Վան քաղաքը, վասն զի կառավարութիւնը գիտէր ու համոզուած էր, որ Վանի Հայութիւնն անպայման զինական դիմադրութիւն պիտի ցոյց տար ջարդարարներուն։

Վանը Օուլթան Համիտի աչքի փուշն էր, մահացու նետ մը, որ ցցուած էր ջարդարարներու աչքին առջև։ Պետութիւնը գիտէր, որ Վանի մէջ գոյութիւն ունէր ըմբոստ և մարտնչող երիտասարդութիւն մը, որ կրթուած ու դաստիարակուած էր Խրիմեանի ու Փորթուգալեանի յեղափոխական գաղափարներով։

Օուլթան Համիտը իւր անձնական թիկնապահներէն Սաադէտտին Փաշան կը ղրկէր Վան, հայկական ջարդերը կազմակերպելու համար։ Սաադէտտին Փաշան իւր շուրջ հաւաքելով պետական պաշտօնեաներն ու տաճիկ երեւելիները՝ Վանի Հայութիւնը կոտրելու ծրագիրներ կը մշակէին։ Միւս կողմէ Վանի մէջ գործող Հայ յեղափոխական կուսակցութիւնները — Հ. Ը. Դաշնակցութիւն, Արմենականներ և Հնչակեաններ — ձեռք ձեռքի տուած գալիք արիւնոտ օրերու համար զինական խումբեր և ինքնապաշտպանութեան միջոցներ կը կազմակերպէին։

Այս բոլորը կը կատարուէին 1895-ի աշնան, երբ Սալմաստէն դաշնակցական և արմենական զինական խումբերու հետ Վան կը մտնէր նաև Մկրտիչ Աւետիսեան — Թէրէմէգեանը*), Վանի Արմենական կուսակցութեան ղեկավար դէմքը։ Աւետիսեանի գալէն առաջ արդէն Վանի և շրջակայ գաւառներու մէջ, յեղափոխական գործունէութեամբ զբաղուած էին Հ. Ը. Դաշ-

*) Մկրտիչ Աւետիսեանը 1893—1895 թուերուն Սալմաստի, Ուրմիոյ և Խոյի գիւղական դպրոցներու թեմական տեսուչն էր, որուն ինքնագիր բազմաթիւ նամակները այժմ կը գտնուին ձեռքիս տակ։ Այդ նամակները մէկ մէկ պատմական և արժէքաւոր փաստաթուղթեր են՝ անոր կրթական, յեղափոխական և ազգային գործունէութեան մասին։

նակցութեան դեկավարները՝ Պեսօճ, Վազգէն, Հնչակեաններու ներկայացուցիչ՝ Մարտիկ և բազմաթիւ վանեցի երիտասարդներ, որոնք բոլորն ալ մեծ եռանդով ինքնապաշտպանութեան գործերով զբաղուած էին։ Որքան սրտայոյզ էր, և միշտ յիշելի պիտի մնայ, այդ երեք կուսակցութեանց պետերու և ռազմիկ ուժերու գործակցութիւնը, անոնց սէրն ու միութիւնը՝ յանուն Հայ ժողովուրդի ինքնապաշտպանութեան և ազատութեան։ Կուսակցական վէճերն ու հակամարտութիւնները մէկդի դրուած, այժմ բոլորն ալ մէկ սիրտ մէկ հոգի դարձած կը սպասէին այն ահաւոր ու կարմիր օրերուն, որոնք սակայն չ'ուշացան։ Եւ ահա՝

«Հազար ութ հարիւր ինսուն վեց թուին,
Սև երկուշաբթի ճաւնիս երեքին՝

երբ արևը Արծուաբոյն Վարագայ երկգագաթ բարձրունքէն իւր ողջոյնն ու համբոյրը կուտար Վասպուրականին, տիրահռչակ Սասդէտաին Փաշայի հրամանով կանոնաւոր զօրամասեր, քիւրդ հրոսակախումբեր և բաւիրօզուկ խուժանը «Սալաւաթ» գոռալով ամէն ուղղութեամբ կը յարձակուէին Վանի Հայոց թաղերու վրայ, ուր սակայն ամբացեր էին Հայ յեղափոխականները ու ռազմունակ, կտրիճ երիտասարդները, որոնք հերոսական դիմադրութեամբ ետ կը մղէին ջարդարարներու յարձակումները։ Վասպուրականի ծայրագաւառներէն քիւրտ աւազակապետներն իրենց վայրագ հեծեալներով կը հասնէին Վան՝ ջարդի և թալանի ախորժակով։ Կռիւը սաստիկ էր։ Հայ քաջերը օրհասական և հերոսական պայքար կը մղէին տասնեակ հազարաւոր թշնամիներու դէմ, որոնք յաճախ խայտառակ պարտութեամբ կը նահանջէին; թալանելով ու հրդեհելով հայոց լքած տուները։ Այս ծանր և արիւնոտ օրերու մէջ շատ սեւ դեր կատարեց Վանի Անգլիական հիւպատոս Ուիլիամը, որ կը ջանար համոզելով զինաթափ ընել Հայ յեղափոխականները և երբ չը յաջողեցաւ տաճկական թնդանօթներով ինքն անձամբ ռմբակոծեց հայոց թաղերը, այն օրերուն՝ երբ Լոնտոնի մէջ Մեծ Ծերունին—Կլատսթընը—, Ջէյմս-Բրայս և ուրիշ յայտնի դէմքեր Հայկական ջարդերուն դէմ կը բողոքէին և Սուլթան Համիտին Մեծ Մարդասպան ու Կարմիր Սուլթան տիտղոսները կուտային։ Իսկ պարոնց հիւպատոս Միքզա Հիւսէյին Խանը պարսկական դրօշակի

հովանին ներքև կը պաշտպանէը հազարաւոր հայերու կեանքն ու ինչքը։ Նոյնը կ'ընէին նաև ֆրանսական և ռուսական հիւպատոսները ու Ամերիկեան և կաթոլիկ միսիոնարները։

Վանի Հայութիւնը գերագոյն ջանք ու ճիգով այնպիսի հերոսական պայքար մը մղեց 1896-ի Յունիսի 3—8, ամբողջ շաբաթ մը, որ ոչ միայն թշնամին խայտառակ պարտութեան մատնուեցաւ, այլև պետական թնդանօթները գրաւուեցան հայերու կողմէ։ Թշնամին ունեցաւ 500 սպանուած և 800 վիրաւոր, իսկ Հայերը 600 սպանուած և վիրաւոր։

Օտար միջամտութեանց և պետական դաւերու արդիւնքն այն եղաւ, որ կռիւը վերջացաւ և Հայ յեղափոխականներն ու կռուողները՝ իրենց ղեկավարներու՝ Պետօի, Աւետիսեանի և Մարտիկի հետ Յունիսի 8-ի շաբաթ երեկոյեան հեռացան Վանէն։ Ասոնց հետեւեցան հարիւրաւոր անզէն երիտասարդներ։ Այս ահագին խումբը, մօտ 800 հոգի, Վարագայ լեռնահովտէն ճամբայ ելաւ դէպի Պարսկաստան՝ Խօշաբ-Բաշգալէ գծով։ Ճանապարհին այս մեծ խումբը քանի մը մասերու բաժնուեցաւ։

Սակայն, պետական զօրամասեր և քիւրդ աշիրէթները— Շեկականը, Մլանցիք, Թակուրցիք, Շամկցիք, Մամատցիները և բազմաթիւ հրոսակախումբեր—պաշարած էին Տաճկա-Պարսկական սահմանագլուխի ճամբաները, Վանէն ելլող Հայ երիտասարդութիւնը թակարդի մէջ ձգելու և ջարդելու համար։ Թշնամին կը հասնէը իր նպատակին։ Անհաւասար և օրհասական կռիւներ մղելէ յետոյ կ'իյնային Մկրտիչ Աւետիսեան, Պետօն ու Մարտիկը իրենց մօտ 800 ջահել-ջիւան հետևորդներով։ Անոնց արիւնշաղախ դիակները Ջուխի, Գարահիսարի, Գիւզալ-Դարայի ձորերու մէջ, Ս. Բարդուղիմէոսի վանքի բլուրներու և սահմանի լեռներու վրայ սփռուած մնացին անտէր և անթաղ, իսկ անոնց լերթացած արիւնին մէջ կը բուանէր կարմիր ծաղիկ՝ «Ախպէրացց Արուն՝ մէջ fարերուն, դու էr կուլաս կուց-կուց արուն...»։

Ու Վանի Հայ մայրերը կուց կուց արիւն լացին, իրենց կանուչ-կտրիճ երիտասարդներու նահատակութիւնը ողբացին, ձէն ձէնի տուին ու երգեցին Հայ Վշտի ու Տառապանքի Մեծ Երգիչ Աւ. Ահարոնեանի գրած ողբերգը։

*Գարահիսար չերաւ կրծքին, ձա՛ւ էլ լինկաս վիրաւոր,*
*Կոխրծքը պատռուած, սիրտը խոցոտած, չար թշնամոյ գնդակով...*
*Ժայռոտ չերաւ չերի կատարից վա՛ր սլացիր սև՛ ագռաւ,*
*Թևերդ բաց չայն թևերդ ու չիւանին հով արա՛։*
*Խոցոտած սրտից մոգ արիւնը, կաթիլ կաթիլ կը ծորայ,*
*Ա՛խ, չիւանոյ ծնանքն է հոսում, ցաւոտ կրծքի չայն վերքից...*

Այսպէս, Վանի Հայութեան 1896-ի Ցունիսեան հերոսական ինքնապաշտպանութիւնը փառքով ու յաղթանակով կը սկսէր և 800 երիտասարդներու արիւնով ու ողբերգութեամբ կը վերջանար։ Նահատակներու վրիժառու ոգիները կը սաւառնէին Մայր Երկրի ամէն կողմերը, իսկ թափառական Հայ աշուղը կը պրկէր իր սազի լարերը և կ'երգէր.

*Այրե՛ան արիւն թէ մոռանան մեր որդիք,*
*Թող ողջ աշխարհ Հային կարդա ձախտերնիք...*

* * *

Հայոց ազատագրական շարժման հզօր դեկավարն ու մարտական կուսակցութիւնը — Հ. Յ. Դաշնակցութիւնը — 1896-ի Օգոստոսի 14-ին Կ. Պոլսոյ մէջ կը կազմակերպէր Բանկ-Օթթոմանի (Օսմանեան դրամատան) քաղաքական մեծ ցոյցը, որ կը ցնցէր ամբողջ աշխարհը։ Բարկէն Միւնին, Արմէն-Գարօն և դեռ քանի՛ քանի՛ հոյակապ դէմքեր այս ցոյցին դեկավարներն ու հոգին կը դառնային։ Ելզրզի Բորենին կը սարսափէր. պետութիւնը խուճապի կը մատնուէր։ Մայրաքաղաքին դեսպանները կը միջամտէին, ցոյցը կը վերջանար, ցուցարարները կը հետապնդուէին եւրոպական շոգենաւով մը, որ հազիւ ծովուն բացերը հասեր էր, երբ հայերու ջարդը կը սկսէր Կ. Պոլսոյ մէջ և նորէն Հայ արիւնը կը հոսէր, իսկ Վան-Վասպուրականէն ու այլ գաւառներէն ալ հազարաւոր գաղթականներ էջմիածին թափուելով Հայոց Հայրիկի օգնութեան կ'ապաւինէին։

Հայրիկի դիւանապետ Կորիւն Վարդապետը 1919-ին ինձ պատմեց, որ—«Վանի Հայութեան 1896-ի հերոսական կռիւներն ու

Հ. Բ. Դաշնակցութեան կազմակերպած Բանկ Օթօմանի ցոյցը այնքան հոգեկան հրճուանք պատճառած էին Հայրիկին, որ նա պահ մը մոռցաւ իւր մեծ վիշտը, նահատակներն ու թափուած արիւնը է յաճախ կ'ըսէր. – Osmաններէն յոյս կտրեմ, մեր ազգին ազատութիւնը մեր ձեռքով, մեր յեղափոխականներուն միջոցով պիտի գայ. Ազատութիւն գոն եւ արիւն կը պահանջէ, ա՛լ բաւ է, osmաները մեզ շատ խաբեցին.... Հազարաւոր գաղթականներ լեցուած էին Էջմիածին. Հայրիկը կրցաւ Կովկասահայ հարուստներէն մեծագումար նպաստներ ստանալ և կազմակերպել անոնց օգնութեան գործը, որ կը վարէին՝ Խաչիկ Վրդ. Դադեան և Խորէն Խրիմեանը»։

Վանի Հայոց հերոսական ինքնապաշտպանութեան կռիւներէն և Բանկ Օթօմանի ցոյցէն յետոյ էր, որ Հայոց Հայրիկը աշնանային խաղաղ գիշեր մը, իւր մենութեան ու խոհերուն մէջ ամփոփուած՝ կը վերցնէր գրիչը և մէկ շունչով հետագայ նամակը*) կը գրէր

*) Վաստակաւոր գիտնական և մեծանուն հայագէտ Պրոֆ. Նիկոլայ Մառը 1916-ի Յունիսին իւր գիտական արշաւախմբով ժամանեց Վանը պեղումներ և պատմագիտական ուսումնասիրութիւններ կատարելու համար։ Պրոֆ. Մառի յանձնարարական գրութեամբ, այդ օրերուն ես կը շրջէի Վանի և շրջակայ գիւղերու մէջ և հին ու պատմական վայրերու մասին կը հաւաքագրէի ժողովրդական զրոյցները, աւանդավէպներ, ազգագրական նիւթեր և այլն։ Իմ այդ շրջագայութեանց ժամանակ ես առիթ ունեցայ երթալ նաև վանեցի վաստակաւոր գրամշակ – բանասէր Խաչատուր Լեւոնեանի տունը, ուր կը յուսայի գտնել հանգուցեալի ձեռագիրը և անտիպ աշխատութիւնները։ Մտայ Լեոնեանի աշխատանոց—սենեակը, որուն առիթը փլած և ամէն ինչ ծածկուած էր հողի տակ։ Ցաժանելի աշխատանքով և մենակ ես յաջողեցայ հողերն ու փայտերը մէկդի հաւաքել։ Ժամեր շարունակ պրպտեցի գիրքերու և թուղթերու քրքրուած ,խոնաւ ու փտած ահագին կոյտ մը և ձեռք բերի մեր գրական և ազգային գէմքերու կողմէ Լեոնեանին գրուած բազմաթիւ նամակներ և կարգ մը գրութեանց պատուիրները միայն։ Այդ նամակներու մէջ գտայ նաև Հայոց Հայրիկի այս պատմարժէք նամակը, որ Վարագայ վանքի վանահայր Վրթանէս Ե. Վրդ. Տէր Սարգիսեան—Տէվկանցը (Սեպտեմբեր եղբայրը) նուիրած էր Խ. Լեոնեանին։

Հայրիկի այս նամակի բնագրի նմանահանութիւնը (fac-simile) ամբողջութեամբ պիտի հրատարակեմ գրքիս երկրորդ հատորին մէջ։

Լեոնեանի (որ մեռաւ Նիւեանի մէջ 1915–ի ամռան, Վանի գաղթէն յետոյ) մանրամասն կենսագրութիւնը ես գրեցի և հրատարակեցի 1916-ին, Ռուբէն Դարբինեանի խմբագրութեամբ լոյս տեսնող Բագուի «Գործ» ամսագրի մէջ (Սեպտ.—Հոկտ. № 9—10 էջ՝ 61—73)։

Վասպուրականի վշտահար Հայութեան, որուն 800 կանաչարև զաւակները յանուն ազգի և հայրենիքի ազատութեան, օրհասական պայքարէ մը յետոյ, անարգ թշնամիի սուր ու հուրին զոհուեցան։

Կարդանք այդ նամակը, որ Վասպուրականի սրաթռիչ Հայր Արծուի, Հայոց Հայրիկի յեղափոխական գաղափարներու գլուխ գործոցը, անոր հայրական անսահման սիրոյ, վշտահար սրտի, անոր հայրապետական օրհնութեան ու մխիթարութեան հոյակապ և անզուգական յիշատակագիրն է։

Կարդանք, կարդացէք այդ նամակը, ուր մեր աչքին առջև կը բանայ Հայոց Հայրիկի Մեծ սիրտը, ուր Հայ ժողովուրդի արիւն արցունքն ու տառապանքը իրար խառնուած՝ ծնունդ կուտան յեղափոխական և ըմբոստ գաղափարներու, հզօր և ազդու խօսքերու, որոնք հոգի և շունչ առնելով Հայոց Հայրիկի անուշ և ազատ ձայնը կը հնչեցնեն մեր ականջին։

Վասպուրականի ազատասէրը Արծիւը կը թափահարէ իւր թևերը, Անգրանիկ եւ Մեծ Յեղափոխական Խրիմեան Հայրիկը կը հնչեցնէ իւր ձայնը, «Ժամանակակից Հայութեան խիղճը», նոյն ինքն ծերունազարդ Հայոց Հայրիկն է խօսողը։

*Վասպուրականի*

*Վշտահոծ եւ տրտմաթախիծ համայն Հայոց*

*Որդեակք իմ սիրելիք*,

*Երբ հեռագիրը ծանուցին մեզ մեր հայրենեաց խաղաղակեաց եւ աշխատասէր ժողովրդեան փախուստն եւ կոտորած, թալանն ու աւերք, հրդեհն եւ բռնաբարում, սիրտը մեր լացան անհուն վշտով եւ թախծով եւ աչքունքս յորդեցին աղբերք արտասուաց, որք կարկաչելով ցանկամ յառաքել զիմ հայրենիս՝ ողոգելու այրեացաւեր մեր բնաշխարհն։*

*Քաղաքակրթութեան կարմիր պատեանին մէջ ժանգոտած սուրն մեր Մեծ Բռնակալն յաճախ կը փայլեցունէ Հայոց տառապակոծ ժողովրդեան անբիծ արեամբ։*

Գիտե՛մ, գիտե՛մ, ժողովո՛ւրդ Հայոց, հոգիդ ընկճեալ, սիրտդ խոցեալ է, սակայն գիտակցի՛ր, ուշքի եկ, որ եթէ սուրին դէմ սուր չը վերցնէիր եւ քո դէմ կրճտացող ժանիքներուն դէմ ատամներդ չը ցուցնէիր, այժմ իսպառ հողածածկ եւ անյիշատակ պիտի մնայիր: Ակն ընդ ական եւ ատամ ընդ ատաման, այս պէտք է լինի քո կենաց ուղղոյ նշանաբան:

Արծուի Վասպուրականն յընթացս երեսուն տարուոյ քո բարօրութեան եւ ազատութեան համար թափահարեց իւր թեւերն, սիրեցեա՛լ ժողովուրդ Հայոց, սակայն եղո՛ւկ, թեւակոտոր եւ սրտաբեկ անկաւ Մխիթարէ Ս. Տաճարի կամարաց տակ, ուսկից այժմ նուաղեալ ձայնիւ կ՛առաքէ ձեզ իւր հայրական օրհնութեանց եւ մխիթարութեանց գիրն, որ յանձնեցինք Հայոց աշխարհի խաբրաբեր կոունկին*), որ զայս գիր ծածուկ եւ ապահով տանէ դնէ վէր Վարագայ սարի բանձրիկ կատարաց, զի գիտեմք թշնամիք եւ հայրենադաւք վխտան յաջս եւ ահեակս:

Քանի՛ աղաչեցի, որչափ հառաչեցի, սակայն աւա՛ղ, ձայնս աղաչանաց եւ հառաչանաց չեղեն լսելի:

Ժողովո՛ւրդ Հայոց, զէն ի ձեռին, տիրական կենարար խաչն կուրծքիդ մարտնչեցար, զերթ Վարդանանք վանեցիք զթշնամին եւ ձեր վարդազոյն արեամբ պսակ հիւսեցիք ներկայ եւ զալոց սերնդեան ճակատաց:

Ցոյժ հրճուեալ եւ մխիթարեալ եմ որ անձնապաշտպանութեանդ գիտակցեցար եւ յեղափոխական ուղիներով ընթա-

*) Վանի Հայութեան 1896-ի Յունիսի ինքնապաշտպանութեան կռիւներէն յետոյ, երբ մօտ 800 երիտասարդներ քաղաքէն ճամբայ կ՛իյնային դէպի Գարսկառատան, Վարագայ վանքի հօտաղներէն Յովհան անունով գիւղացի մըն ալ կը միանայ այդ մեծ խումբին, որը տաճիկ զօրքերու և քիւրդերու ձեռքով կոտորուեցաւ Աղբակի Ս. Բարդուղիմէոս վանքի մօտերը: Այդ սարսափելի կոտորածէն ազատուեցան միայն մօտ քսան հոգի, որոնցմէ մէկն ալ յիշեալ հօտաղ Յովհաննէս եղած է: Նա Գարսկառատանէն կ՛երթայ Էջմիածին, ուր Հայոց Հայրիկէն կը ներկայանայ և այս պատմական նամակն առնելով Վան-Վարագ կը վերադառնայ: Նամակին մէջ ակնարկուած «խաբրաբեր կռունկը» այս Յովհաննէս է:

նալ գիտցարս Թէեւ կորուստք քո շատ են եւ անմահ նահատակներդ բազում, բայց գիտասջի՛ք, որդեակք իմ, որ առանց արեան ոչ գայ ազատութիւն ազգաց եւ բարօրութիւն ժողովրդեան։

Ընդեակ յեղափոխական կուսակցութիւնք որք կան ի քեզ եւ եղան քո կենաց եւ մահու պայքարի յառաջապահներն եւ քաջամարտիկներն, նոքա բոլորեքեան քաղած են այն հունձքն որուն սերմերն ու հունդերը ձեր արգաւանդ հողերուն մէջ ցանեցին Հայր Արծիւն եւ իւր Արծուածագերն։ Կուսակցութեանց երեւումն ի քեզ քո պապենական եւ պատմական նախարարութեանց վերածնման օրինակն է, իսկ Դաշնակցութիւն Կուսակցութիւնն հայկական նոր ասպետութիւնն է, նորա յառաջամարտիկներն մէկ մէկ ասպետներ հանդիսացան ի Վասպուրական եւ յայլուր։

Ելէ՛ք, ելէ՛ք, ժողովո՛ւրդ Հայոց, անդամագրուեցէ՛ք հայկական այդ նոր ասպետութեան, զօտեպնդուեցէ՛ք, վերաշինեցէ՛ք ձեր աւերակներն, մոխիրներու տակէն հանէ՛ք ձեր գանձն ու գոյքը, վերամշակեցէ՛ք ձեր արեամբ եւ արտասուամբ ոռոգացած հողերն, թեւ թիկունք տուէք ձեր կուսակցութեանց, զի խաչին եւ մահին հետ փրկարար է նաեւ ասպետին սուրն։

Մի՛ վհատիր, ժողովո՛ւրդ Հայոց, զի քո տառապանաց ահազանգը Այրարատի գագաթին ահա՛ կը հնչէ եւ կ'արձագանգէ, կը թնդացնէ Եւրոպիոյ քաղաքական դահլիճներն, ուր արդարութիւնն պիտի յաղթանակէ, տառապեալ եւ վշտակոծ ազգաց առաջ ազատութեան եւ բարօրութեան դրունս պիտի բանայ, որուն սեմէն ցնծութեամբ ներս պիտի մտնէ ձեզ ողջունելով եւ օրհնելով։

Ի Ս. Էջմիածին

20 Սեպտեմբերի 1896 ամի.

Տաճկահայութեան արիւնի և տառապանքի ձայնը պահ մը թնդացուց քաղաքակիրթ երկիրներու սրբունիքները և շարժեց խիղճն ու գութը արևմտեան ազգերու, որոնք յանուն մարդասիրութեան նիւթական օգնութիւն ցոյց կուտային Մայր Երկրի զարկուած ու զրկուած Հայութեան։ Նպաստի գործը յաջողութեամբ կազմակերպուեցաւ Ամերիկայի, Անգլիոյ, Ֆրանսայի, Դանիմարքայի և այլ երկիրներու մէջ։

Օտար պետութիւնները ու ազգերը թէև նիւթական օգնութիւն ցոյց տուին և Հայկական կոտորածներու առթիւ բողոքի ձայներ բարձրացուցին, բայց զրական մնէ միջոցի չը դիմեցին, որ Թուրքիան չը շարունակէր իւր հայաջինջ քաղաքականութիւնը։ Ռուսաստանի «ամենաողորմած կայսրն» ինչպէս նաև ռուս մտաւորականութիւնն ու ժողովուրդը քար անտարբերութեամբ կը դիտէին Հայկական կոտորածները։ Ռուսիան ոչ միայն նիւթական օգնութիւն ցոյց չը տուաւ Տաճկահայ գաղթականներուն և որբերուն, այլև արհամարհեց ամբողջ ժողովուրդի մը հսկայ տառապանքը։ Պետութեան այս ընթացքը սառեցուց նաև ռուս ժողովուրդի համակրանքը։

Այս բոլորէն յետոյ սակայն Հայոց Հայրիկը կրցաւ ռուսահայութեան մէջ կազմակերպել դրամական մեծագումար հանգանակութիւններ, որոնք յատկացուեցան թշուառութեան և աւերակներու մէջ տառապող տաճկահայ գաւառներուն։ Զարդերու ընթացքին հազարաւոր մանուկներ որբանալով անտէրութեան և կորուստի մատնուած էին, երբ Էջմիածինն ու Պատրիարքարանը կազմակերպեցին որբանոցամ ծանր և հսկայ գործը։

Տաճկահայաստանի մէջ բացուեցան բազմաթիւ որբանոցներ։ Հաւաքուեցան հազարաւոր երկսեռ որբեր, որոնք ոչ միայն ստոյգ կորուստէ փրկուեցան, այլև ուսում և կրթութիւն ստացան, շնորհիւ հայկական և օտար նիւթական օգնութեանց։

Ռուսահայ մեծանուն բարերար Գրիգոր Զանշեանցի նախաձեռնութեամբ Մոսկուայի մէջ 1897-ին լոյս տեսաւ „Братская Помощь“ (Եղբայրական Օգնութիւն) անունով բազմաբովանդակ մեծ ժողովածուն, որուն իրենց աշխատակցութիւնը բերած էին կարգ մը ռուս գրողներ։ Այս ժողովածուի վաճառման ամբողջ արդիւնքը

յատկացուեցաւ տաճկահայ որբերուն ու գաղթականներուն, որոնք տաճկի ու քիւրդի սուր ու հօւբէն փախչելով ապաստանած էին Կովկաս։

Հայոց Հայրիկը իւր անսահման ժողովրդականութեամբ և բարոյական բարձր հեղինակութեամբ յաջողեցաւ մանաւանդ ռուսահայութեան մէջ հիանալիօրէն կազմակերպել եղբայրական օգնութեան այս հսկայ գործը։

Հայկական չարդերէն և Վանի 800 երիտասարդներու սոսկալի կոտորածներէն յետոյ էր—1897-ի ամրան,—որ Հ. Ը. Դաշնակցութիւնը կը կազմակերպէր Խանասօրի պատմական արշաւանքը, որուն նպատակն էր լուծել աթեան վրէժը այն 800 նահատակ երիտասարդներուն, որոնք ընկած էին Պարսկա-Տաճկական սահմաններու վրայ։

Եւ ահա Յուլիսի 26-ին, մօտ 300 դաշնակցական ֆիդայիներ ու հայդուկներ Սալմաստէն կը մտնէին Խանասօրի դաշտը և կը յարձակուէին Մազրիկ քիւրդ ցեղի վրաններու վրայ։ Ցեղապետ Շարաֆ բէկը սարսափահար կը փախչէր, իսկ իւր աշիրէթի մեծ մասը կը կոտորուէր Հայ յեղափոխականներու գնդակներով։ Քիւրդ ցեղերն ու տաճիկ կառավարութիւնը պահ մը սարսափի կը մատնուէին, տեսնելով, որ մարտական կուսակցութիւն մը—իմ՛ Հ. Ը. Դաշնակցութիւնը—կուռ կազմակերպութեամբ հրապարակ կ՛իջնէր և ամենուրեք կ՛արձակէր իւր վրիժառու գնդակը։

Գորիւն Վարդապետը կ՛ըսէր թէ—երբ Հայրիկը լսեց Խանասօրի արշաւանքի մանրամասնութիւնները յուզուեցաւ և ըսաւ.

—Կեցցեն մեր յեղափոխականները. աւելի աղէկ է, որ Խանասօրներու մէջ զարնեն զարկուին, արիւն թափեն, քան թէ պետութեանց պալատներուն մէջ աղերսեն ու լան։...

Որքան ճիշտ էր ծերունազարդ Մեծ Յեղափոխականի այս խօսքը, այն տարիներուն, երբ «պետութեանց պալատները» մեր դիմումներն ու աղերսանքները լսելէ յետոյ, պզտոնական խոստումներ և պիղատոսական վերաբերմունք ցոյց կուտային Հայութեան։

Տաճկահայաստանի և Կովկասի մէջ գործող յեղափոխական կուսակցութիւններու զինական ցոյցերն ու քաղաքական պահանջ-

ները լուրջ մտահոգութիւն կը պատճառէին նաև Ռուսաց Գալատին և նախարարական խորհուրդին։ Մասնաւորապէս Կովկասի մէջ Հայութիւնը ռուս բռնապետութեան ճնշումին ու հալածանքին առարկայ կը դառնար, մանաւանդ երբ Կովկասին Փոխարքայ կը նշանակուէր դաժան և հայահալած Իշխան Գրիգորի Սերգէյեվիչ Գալիցինը։ Հիւսիսէն եկած այս Սպիտակ Արջը Թիֆլիս հասնելէ յետոյ, առաջին առթիւ իսկ, գրաքննութեան միջոցով կը խեղդէր կովկասահայ մամուլի ձայնը, որ տաճկահայ զուլումներու և թրքական բռնութեանց մասին ունէ յօդուած և հաւաքակ լուրեր անգամ չը գրուէին թերթերու մէջ։ Այնուհետև Գալիցինը 1897-ին, վերին հրամանով փակել կուտար Կովկասի հայոց ազգային-ծխական դպրոցները և յամառ կերպով կը ջանար գործադրել ձուլման քաղաքականութիւնը։ Արարատի հաբաւը տաճկական զուլումը, իսկ Արարատի հիւսիսը ռուսական ձուլումը կը ջանային խեղդել Հայ ժողովուրդը, որ սակայն գերագոյն ջանքերով այդ ազգակործան չարիքներուն դէմ ծառացաւ և պահեց իւր գոյութիւնը։

Գալիցինը կը ջանար նախ ծանր հարուած մը հասցնել Էջմիածնին, որ յաչս այդ դաժան փոխարքային նկատուած էր այն միակ աղբիւրն ու ընդունարանը, որ իբր թէ բարոյական ու նիւթական օգնութիւն ցոյց կուտար Հայ յեղափոխական կուսակցութեանց։ Գալիցինի կարծիքով Հայոց Հայրիկը ոչ թէ Ամենայն Հայոց Կաթուղիկոս, այլ յեղափոխական և քաղաքական գործիչ մըն էր։ Թիֆլիսի պալատը շատ վատ կարծիք ունէր Էջմիածնի և Խրիմեանի մասին և այս ուղղութեամբ ալ միշտ զեկուցումներ կը հասցնէր Պետերբուրգի պալատին և նախարարաց խորհուրդին, որ օրըստօրէ կը խորացնէր իւր հայատեաց տրամադրութիւնը։

Երբ Հայրիկը Թիֆլիս երթալով պաշտօնական այցելութեամբ բարի գալուստ կը մաղթէր Գալիցինին, վերջինս խորամանկ ժպիտով մը կը յարէր.

—Ձերդ Սրբութեան անձին հանդէպ մեծ է իմ համարումս, բայց չեմ կրնար ծածկել այն ճշմարտութիւնը, որ դուք շատ վատ տարբերէք շրջապատուած էք և ակամայ կը հետեւիք ուղղութեան մը, որ պետութեան և ձեր ժողովուրդին վնասակար է։

Խրիմեանը չը պատասխանեց, այլ լուռ արհամարհանքով մը և անհոգութեամբ պատերուն նայեցաւ.

Էջմիածնի մէջ, 1918-ի աշնան, Գորիւն Վարդապետը պատմեց և ես գրեցի հետեւեալը.

Հայրիկը Թիֆլիսի մէջ այցելութեան կ'երթայ Գալիցինին. Փոխարքան Կաթուղիկոսին թևը բռնելով կ'առաջնորդէ պալատին դահլիճներէն մէկը, որուն դռան մէջ փռուած եղեր է մեծ վագրի մը մորթը. Գազանի երախն ու ժանիքները տեսնելով Հայրիկը վայրկեան մը կը կենայ և կը դիտէ.

Գալիցինը հպարտութեամբ, թարգմանին միջոցով կը հարցնէ.

—Ձերդ Սրբութիւն, վախեցա՞ք այս մորթէն...:

—Ո՛չ, զարմացայ... Ձերդ Գերազանցութիւն.

—Ի՞նչու, կը յարէ փոխարքան.

—Անոր համար, որ պահ մը մտածեցի թէ մարդս որքան գազան ըլլալու է, որ կրցած է այս ամեհի գազանը որսալ և անոր մորթը բերելով հոս Ձերդ Գերազանցութեան ոտքերուն տակ փռած է....

Գալիցին կուշտ ու կուռ կը խնդայ և կ'աւելցնէ.

—Եթէ Ձերդ Սրբութիւնը կամենայ ես այդ մորթը կը նուիրեմ իրեն.

—Ո՛չ, ո՛չ—վրայ կը բերէ Հայրիկը—Հայ ժողովուրդի անմեղ գառն ի՞նչ գործ ունի Հիւսիսի պատռող վագրի հետ...

Թարգմանը ճշտութեամբ կը թարգմանէ այս խօսքերը, որոնք հարկաւ ծանր հարուածի մը նման. կ'իջնէին «Հիւսիսի պատռող վագրի» Գալիցինի գլխուն.

Գալիցինն ալ թէև 1897-ի Հոկտեմբերի 2-ին Էջմիածին գալով, փոխադարձ այցելութիւն կուտար Հայոց Կաթուղիկոսին, բայց այս պաշտօնական և ձևական յարաբերութիւնները չը կրցան լեցնել փոխադարձ ատելութեան այն խոր անդունդը, որ Էջմիածնի Վեհարանէն կը տարածուէր մինչև Թիֆլիս, փոխարքային պալատը.

Հայոց Հայրիկը 1897-ի Սեպտեմբերի 14-ին կը կատարէր իր անդրանիկ մեռոնօրհնէքը, որուն ներկայ էր տասնեակ հազարաւոր ժողովուրդ, Ռուսաց հայահալած քաղաքականութիւնը պատճառ

դարձաւ, որ Հայուհիները աւելի համակրանք և սէր ցոյց տար էջմիածնի և Հայրիկի հանդէպ։

Նոյն թուի Սեպտեմբերի 16-ին էջմիածին կը ժամանէին Մոսկուայի Երկրաբանական ժողովին մասնակցող միջազգային 30 յայտնի գիտնական դէմքեր*), որոնք Հայրիկին ներկայանալով եւկար և հաճելի զրոյցէ մը յետոյ կը հիւրասիրուէին ճոխ ճաշկերոյթով մը։ Հայրիկն ալ սեղանին մասնակցեր էր։ Օտարական պատկառելի հիւրերը հաճոյքով կերան հայկական խարիսաց, կարմրած գառ և ասիական ու եւրոպական կերակուրներ, Արարատեան Դաշտի խաղողն ու դեղձը և ըմպեցին էջմիածնի հին գինին։ Գիտնականներէն և ուսուցչապետներէն ոմանք բաժակաճառեր արտասանեցին, խօսելով Հայկական Հարցի և Հայ տառապանքի մասին։ Բոլորն ալ անհամբեր կը սպասէին Հայրիկի խօսքին, որ չ'ուշացաւ։

Մեծ Ծերունին ոտքի ելաւ, մինչ արցունքը կը շողար իւր աչքերուն մէջ, խօսեցաւ յուզիչ բաժակաճառ մը, շեշտեց, որ Հայուհիւն իւր ազատութիւնը կը սպասէր քաղաքակիրթ և Քրիստոնեայ Եւրոպայէն, բայց միջազգային դիւանագիտութիւնը չը կա-

---

*) Հայոց Հայրիկին այցելող միջազգային և գիտական այդ նշանաւոր դէմքերը հետեւեալներն են.—Ֆրայհէր ֆօն Ռիխտհօֆէն՝ Բերլինի համալսարանի ուսուցչապետ, Դոքթ. Մարթ Էբելինգ՝ ուսուցչապետ Բերլինէն, Մ. Ֆրիդրիխսէն՝ Համբուրկէն, Դոքթ. Շարլ Ռիւտ՝ Ժընևէն, Դոքթ. Ա. Ուլրիխ՝ Լայպցիկէն, Պրոֆ. Գարլ Շմեա՝ Բազէլէն, Պրոֆ. Ռինէ՝ Հաննովերէն, Դոքթ. Էօրբեկէ՝ Միւնխենէն, Դոքթ. Ա. Դաննեբերգ՝ Ալէքէն, Պրոֆ. Էմիլ Հարդանը՝ Լիմբերկէն, Պրոֆ. Կ. Հիւգս՝ Քէմբրիճէն, Դոքթ. Է. Օ. Հովայ՝ Նիւեօրքի Բնագիտական Թանգարանի տեսուչ, Հաւարդ Փելդինգ Ռայթ և Ջոնս Հոպկինս՝ Բալտիմորի համալսարանէն (Ամերիկա), Պրոֆ. Նոզէֆ Պ. Խադինգս՝ Շիքագոյէն, Ֆրէնսիզ Ա. Բաթէր՝ Լոնտոնի Բրիտանական Թանգարանէն, Ֆ. Ի. Սիմսոն՝ Էդինբուրգի համալսարանէն, Պրոֆ. Ջորջ Պ. Մեըրեյլ՝ Նիւեօրքի Ազգային Թանգարանի տեսուչ, Պրոֆ. Ստանիսլա Մէօնիէ՝ Փարիզի Բնագիտական Թանգարանի տեսուչ, Պրոֆ. Ադոլֆ Օսվալդ՝ Բազէլի, Դոքթ. Կարլօ Ռիւա՝ Միլանի և Պրոֆ. Ե. Աբելհանց՝ Յիւրիխի համալսարաններէն, Մադիսոր Էմմանուէլ Շտէօբէր՝ Վլադիկովկասէն, Ֆրանց Իւլիւս Լեոսինգ՝ Իւրեվ և Անատոլիյ Օբեռտովիչ Շկլեարեւսկիյ՝ Մոսկուայի համալսարաններէն, Պետր Իվանովիչ Շօշին, Լ.Լ. Բէլիֆոնա և Մատէ Ալտոն։ Թ. Ե. Ֆ. Այս գիտնականներու թիւը կը նշանակէ («Խրիմեան Հայրիկ» էջ՝ 189) 40 ինչ որ սխալ է։

տարեց իւր խոստումը, հայերը յուսախաբուեցան, իսկ Թուրքիան ալ սանձարձակօրէն կազմակերպեց Հայկական մեծ ջարդերը։ Հայրիկը առանց ոևէ վերապահութեան, շարք մը հեղաձրանքներ ուղղեց Եւրոպային և այս խօսքերով վերջացուց իւր ճառը.

— Ամէն տեսակ օրինական միջոցներու դիմեցի և աշխատանքներս ի զուր անցան, բայց բնաւ չեմ յուսահատած. միշտ նոր միջոցները կը փտնռեմ իմ ազգիս տառապանքը մեղմելու համար։ Այսօր դարձեալ պիտի դիմեմ ձեր կառավարութիւններուն, խրնդրելով, որ Հայկական հարցը լուծեն և իմ ազգիս տառապանքին վերջ տան։ ԵՒս այս որոշեր եմ ձեզ ամէնքդ ալ հոս պատանդ պահել, մինչև որ ձեր կառավարութիւնները կատարեն իմ խնդիրքը։

Սեղանակից հիւրերը կը հիանան Հայրիկի ազատախօսութեան վրայ և ծիծաղով ու երկարատև ծափերով իրենց բարոյական համակրանքը կը յայտնեն Հայութեան։

Ռուս կառավարութիւնը երբ ռուսացման, ձուլման իւր ծրագիրը կ'ուզէր գործադրել Կովկասահայութեան մէջ, առաջին առթիւ իսկ կը փորձէր Էջմիածնի Մայր Տաճարին մօտիկ կերտել ռուսական հսկայ եկեղեցի մը, որ ըլլար փառաւոր ու հոյակապ և ստուեր ձգէր Էջմիածնի վանքին վրայ։ Կառավարութիւնը Հայոց Հայրիկէն խնդրած էր, որ Ս. Գայիանէի վանքին արևմտակողմը տարածուող ընդարձակ արտին վրայ կառուցուէր այդ եկեղեցին, բայց Հայրիկը կտրուկ կերպով կը մերժէր պետութեան առաջարկը և անմիջապէս այդ արտը փորել տալով կը խորացնէր, քոլորտիքը ծառեր կը տնկէր և ջուրի աւազան անուան տակ անգործածելի կը դարձնէր։ Իսկ երբ պետութիւնը կը պնդէր իւր առաջարկի վրայ, այն ատեն միայն Հայրիկը Ց. Հոդակաթի վանքի դիմացի արտը կը տրամադրէր ռուսական եկեղեցիին, որուն կառուցման ծրագիրը սակայն ջուր կ'իյնար, վանդի պետութիւնը ի վերջոյ կը համոզուէր, որ այդ ձեռնարկը վտանգաւոր և ապարդիւն պիտի ըլլար և Էջմիածնի մէջ ոչ մէկ Հայ ռուսադաւան չը պիտի դառնար, որքան ալ նիւթական և շլացուցիչ խոստումներ մէջտեղ բերուէին։

Վաղարշապատի ռուս զինուորներու հոգևոր պետը՝ բարձրահասակ և հաստամարմին ռուս քահանայ մը — պօպ — շատ կը ցանկաը, որ ռուսական եկեղեցի մը կառուցուէր Էջմիածնի կողքին։

Հայրիկը, 1898-ի Ս. Ծննդան տօնի առաւօտը յիշեալ պօպի շնորհաւորութիւնն ընդունելէ յետոյ ժպիտով ու կատակով կը հարցնէր.

—Է՛հ, պօպ, հարցում մը պիտի ընեմ քեզի. քսէ, ո՞րն է մեծ, գլո՞ւխդ թէ գլխարկդ...

Պօպը կ՛ապշէր, կը կարմրէր ու կը լռէր, հասկնալով Հայրիկի հարցման բուն իմաստը։

Հայրիկը 1898-ի Յունուարին Թիֆլիս երթալով այցելեց Կովկասի Փոխարքայ Գալիցինին, որուն հետ ամբողջ երեք ժամ, թարգմանի միջոցով խօսակցութիւն ունեցաւ Հայոց ազգային, եկեղեցական և դպրոցական հարցերու մասին։

Այս երկար զրոյցներու ընթացքին Գալիցինը Հայրիկին ըսած էր թէ—«Կովկասի Հայոց դպրոցները յեղափոխական պրոպականդի բոյներ են», իսկ Հայրիկը պատասխանած էր—«Եղիցի ըստ բանի քումդ...» թէև թարգմանը այլ կերպ թարգմանած էր այդ խօսքը։

Փետրուարի 3-ին (1898) Բագուի Հայութեան կողմէ յատուկ պատգամաւորութիւն մը Թիֆլիս գալով կը խնդրէր, որ Հայրիկը այցելէր Բագու։ Յաջորդ օր Հայոց Հայրիկը իւր շքախումբով կ՛ուղղուէր դէպի Բագու. Գանձակի և բոլոր կայարաններու մէջ հանդիսաւոր ընդունելութիւն ցոյց կուտան. Հսկայական ժողովրդական ցոյցերով Հայրիկը Փետրուար 5-ին մտաւ Նաւթաշխարհի քաղաքը—Բագու։

«...Շաբաթ օր, Փետրուարի 7-ին, Վեհ. Հայրապետը, ինչպէս նախապէս յայտարարած էր, հետաքրքրութիւն կ՛ունենայ գնալ Ծև քաղաք կերօսին պատրաստող գործարանները դիտելու։

«Երբ Հայրապետը Ծև քաղաքի գործարաններուն մօտեցաւ Հայ բանւորներու մեծ բազմութիւն մը խանդավառ ընդունելութեան ցոյցերով ողջունեց զինքը մի քանի անգամ իրարու վրայ կեցցէ՛ Հայրիկ գոչելով։ Պտոյտը տևեց երկու ժամ։

«Վեհ.ը խնդրեց Նոբէլի կառավարչէն, որ այսօր իրենց Հայրիկը դիմաւորելու ու ընդունելու համար գործադուլ (անող բանւորներուն աւուրչէքը չի գլանայ ինչ որ խոստացուեցաւ»*)։

---

*) Վեհ. Հայրիկը Բագու։ Գրեց՝ Ս. Մ. Ծոցիկեան. Բագու. Տպարան «Աւրօր» 1898. էջ՝ 13—14։

Փետրուարի 8-ին Հայրիկը Բագուի Հայուհեան գեղեցիկ և սրտառուչ քարոզ մը խօսեցաւ, որմէ կը մէջբերեմ այս մասերը.

«Սիրելի Բագուեցիք, երէկ գնացի Ծև քաղաք: Քաղաքը սև բայց լուսաւոր աշխարհն իր սևերուն մէջ։ Է՜հ, հիմայ ըսէք՝ տեսնամ, թէ ինչ բանի համար կ'ուզէք զը աղօթեմ։ Նախ ամէն բանէ առաջ ու աւելի՝ խնդրենք Աստուծմէ իր երկնային արքայութիւնը։ Ցետոյ, հա, նաւթատէրերի շատրուանները թող առատ առատ նետեն (կը ժպտի, ընդհանուր ծիծաղ), վաճառական ու արհեստաւոր դասակարգին ալ առատ առնտուր և գործ, շատ լաւ, բայց չի վերջացաւ. դեռ կան ուրիշ դասակարգեր։ Դասակարգ մը մանաւանդ Հայոց Աշխարհի պանդուխտներու, որոնք օտար աշխարհի մէջ կը թափառին։ Այս գաղթականները միշտ ինձի կ'ըսեն — Ա՛խ Հայրիկ, երբ մեր տեղերը պիտի դառնանք, կ'ուզենք, որ այնտեղ մեռնինք, օտարութեան մէջ չենք ուզեր մնալ։ Ատոնց մէջ մեծատուն եղողներ ալ շատ կը դտնուին, անուն հանած իրենց երկրի մէջ։ Օրինակ մը ըսեմ ձեզի։ Մշոյ աշխարհի մէջ Մելիք-Խաչոյի նահապետական ընտանիքը կար, 70—80 հոգիէ բաղկացած։ Անագին հարստութիւններին կորուսած, իրենք բոլորն ալ ցանուցիր եղած էին։ Այդ ընտանիքէն մէկը ներկայացաւ ինձ — Ձիս կը ճանաչես, ըսաւ, Հայրիկ, քու Սուրբ Կարապետ վանքը եղած ժամանակդ քեզ շատ անգամ մեր տունն ենք հիւրասիրած, խորովածները կերցուցած։ Ճանաչեցի զինքը և ան, սկսեցի լաց լինել...»*)։

Ի պատիւ Հայրիկին, ընդունող ճանձնախումբը որոշած էր վարդանաց տօնին օր ճոխ ճաշկերոյթ մը տալ, բայց Հայրիկը կը մերժէր ըսելով.

«Ի զուր է այդքան մեծ ծախք։ Ես եկած եմ Բագու ոչ թէ մեծարուելու նպատակաւ, այլ իմ ժողովուրդը տեսնելու։ Աւելի լաւ կը լինի այդ մեծ ճաշկերոյթը պատրաստէք և կերակրէք բոլոր Տաճկաստանէն գաղթող խեղճ կարօտեալները։ Եւ այդ նպատակաւ ես իմ կողմէ կը նուիրեմ 100 րուբլի»։

Հայրիկը գնաց տեսնելու նաև Բալախանի, նաւթահորերու աշխարհը, ուր «Հայ բանուորներու դասը նաւթով սևցած շորերով ու դէմքերով սրտաշարժ ընդունելութիւն մը կ'անէ Հայրիկին»։

---

*) Վեհ. Հայրիկ Բագու. Ս. Մ. Ծոցիկեան. էջ՝ 18—20։

Հայ նաւթատէրերն ի պատիւ Հայրիկին, Բալախանիի մէջ ճաշկերոյթ մը տուին: Հայրիկը զգացուած և յուզուած բաժակաճառով մը կ'առաջարկէ սեղանակիցներուն յոտնկայս խմել տանջուած՝ բայց զրկուած բանուորներու, աշխատաւորներու կենացը և խօսքը նաւթատէրերուն ուղղելով կ'ըսէ.

«Դուք կեանքի պայմաններով ապահով մարդիկ էք, պարոններ, կ'ապրիք առատութեան մէջ, բայց ով է գիշեր ցորեկ ձեզ համար աշխատողը և ձեր հարստութիւնը աւելացնողը, եթէ ոչ՝ բանուոր ժողովուրդը, որոնց դուք պարտաւոր էք: Բանուոր ժողովուրդը ձեզ իրենց աշխատութեամբ ճոխ կեանք վարել տալով ինքը կ'ապրի կարօտ· ով պէտք է մտածէ անոնց վիճակին բարւոքմանը ու անոնց գաւակաց կրթութեանը մասին, եթէ ոչ՝ դուք, իրենց տէրերը· Ձեր պարտականութիւնն է անոնց վերաբերմամբ խորհիլ· Ես պիտի խնդրեմ ձեզմէ, որ անոնց աւուրչէքին վրայ տասը կոպէկ աւելացնելու առատաձեռնութիւնը ունենաք, մեղք են, վատահ եմ որ չէք մերժեր»:

Ս. Մ. Ծոցիկեանը կը գրէ, որ «ներկայ եղող բոլոր գործարանատէրերը խոստացան հաճութեամբ կատարել Վեհ. Հայրիկի ցանկութիւնը»:

Բագուի Նաւթի Անգլիական Վիճառու ընկերութիւնը Հայրիկի տրամադրութեան տակ կը դնէ 15,000 րուբլի· Ցաճկահայ գաղթականներուն իրը նպաստ՝ կը նուիրէ 5000 րուբլի, իսկ 5000 րուբլի ալ՝ Բագուի Հայոց Մարդասիրական Ընկերութեան· Հայ նաւթատէրերը կ'որոշեն Հայրիկի Բալախանի այցելելու օրուան իրենց դրամական ամբողջ արդիւնքը նուիրել տաճկահայ գաղթականներուն և որբերուն·

Բագուի մէջ Հայրիկին կ'այցելեն՝ նահանգապետ, ոստիկանապետ, թուրք կրօնապետներ, վաճառականներ, աշխատաւորներ, բանուորներ, գիւղացիներ և այլն, որոնց բոլորի հետն ալ նա սիրալիր տեսակցութիւն և զրոյցներ կ'ունենայ·

Փետրուարի 15-ին, գիշերուան ժամի 12-ն է·

«Ասելի ցուրտ քամի մը Բագու կը սպասէ ու կը դողդոդացնէ, կը գրէ Ս. Մ. Ծոցիկեանը·

«Լապտերներու լոյսով դուրս կուգայ Վեհը Վեհարանի գռնէն

Իւր ուղեկիցներով, գնալու կայարան, որ արդէն լեցուած է երկսեռ բազմութեամբ որոնք եկած են Հայրիկին ճամբելու։ Տոգեկառքը մեկնելու ազդարար՝ երկրորդ զանգակը կը հնչէ. ժողովուրդը բլատֆորմին վրայ խռնուած է. (Հայրիկը կը բարձրանայ վագոն և իւր հրաժեշտի խօսքը կ'ուղղէ ժողովուրդին)։

«Է՛հ, սիրելի Բագուեցիներ, մնաք բարով։ Շնորհակալ եմ ձեր ինձ արած սիրալիր ընդունելութեան համար։ Ես կ'երթամ, իմ վերջին հրաժեշտիս հետ օրհնութիւնս կուտամ ձեզ և կրկին կը պատուիրեմ. ինչպէս Քրիստոս իր աշակերտներուն, որ սիրէք զիրար, համերաշխութեամբ ապրիք՝ ձեր շրջապատողներուն հետ։ Աստուած տայ ձեզ յաջողութիւն, ձեր յաջողութիւնը իմս է. առանց ժողովուրդի յաջողութեան Հայրիկը Հայրիկ չէ. Ինչպէս որ դուք զիս կը սիրէք այնպէս ալ ես ձեզ կը սիրեմ։ Կը ցանկամ ձեզի երկար կեանք, բայց ես ալ կը ցանկամ երկար կեանք...։ (Անթիւ ձայներ ոգևորութեամբ կը գոչեն—կեա՛ցէ Հայրիկիս, կեա՛ցէ Հայրիկիս։ Անպատմելի կերպով զգացուած է, արտասուելու մօտ, ձեռքերուն հետ գլուխն ալ կ'օրօրցնէ արտայայտելով թէ ուրախութիւն թէ տրտմութիւն)։ Է՛հ, հերիք, օրհնեալ լինիք, մնաք բարով. Հայրիկ կ'երթայ բայց դարձեալ կուգայ։ (Դ. զանգը հնչած է արդէն, գնացքը ճամբայ ելած կը յառաջանայ, կը հեռանայ, դեռ կեցցէ՛ Հայրիկ ձայները՝ օդ կը թնդացնեն)»։

Հայրիկը Դանձակէն ճամբայ կ'իյնայ դէպի Ազստաֆա, Դիլիջան, Երևան և Փետրուարի 20-ին կը հասնի Էջմիածին։

Կաթուղիկոս Խրիմեանը Հայ ժողովուրդին մէջ կը փնտռէր իւր հոգեկան հաճոյքն ու մխիթարութիւնը. Էջմիածնի պարիսպներէն ներս և Վեհարանի դահլիճներուն մէջ անոր ազատատենչ սիրտն ու ոյացող հոգին կը ճնշուէին, վասն զի կարգ մը ազդեցիկ վանականներ անձնական և մանր հաշիւներով տարուած քինախնդրական զգացումներ կը տածէին անոր հանդէպ։ Ի՞նչու։ Այս ի՞նչուին պատասխանները գրելու համար պիտք է խորապէս ուսումնասիրել Էջմիածնի միաբանութեան 1890—1900-ական թուերու կարգ մը յայտնի անձերը, պարզել անոնց դիմագծերը և ցոյց տալ թէ ինչպէս Արիստ. Եպիս. Մեղրաքեանի գլխաւորութեամբ հակամարտութիւն մը կազմուած էր Խրիմեանի դէմ։ Դաւերու և բամբասանքներու

այդ խեղդիչ մթնոլորտին մը մէջ կ'այրուէը Հայոց Հայրիկի մեծ սիրտը, որուն վրայ կը ծանրանար նաև ռուսական բռնապետութեան կօշմարը։ Սեղբաքեան Եպիսկոպոսը վարագուրուած ամբարտաւանութեամբ մը կը ձգտէր տեսակ մը դեկավարի և խորհրդատուի դեր կատարել հայրապետական գործերուն մէջ, սակայն Հայրիկը անհանդուրժելի կը գտնէր այդ ինքնակոչ խորհրդականի ոտնձգութիւնները և պատշաճ յանդիմանութեամբ մը զայն ճամբու կը դնէր։ Էջմիածնի վանքի և ազգի դրամով համալսարանական, բարձրագոյն կրթութիւն ստացած կարգ մը վարդապետները, յաւակնութեան թևեր առած՝ կ'արհամարհէին Հայոց Հայրիկի անձն ու գործը։ Ցարգելի են այն մէկ քանի բացառիկ դէմքեր, որոնցմէ ոմանք այժմ ողջ են։ Մեսրովբ Վարդապետ (այժմ Արքեպիսկոպոս) Տէր Մովսիսեանը, որ 400 էջանոց հատորով մը Հայոց Հայրիկի Երուսաղէմէն—Էջմիածին ճամբորդութեան դրուատալից պատմութիւնը կը գրէր, այդ նոյն Մեսրովբ Վարդապետը Մագիստրոս տիտղոսը ստանալէ յետոյ կը դառնար Խրիմեանի երդուեալ հակառակորդն ու թշնամին. և ամէն կերպով կը ջանար նսեմացնել անոր հոյակապ դէմքը։ Էջմիածնի միաբաններէն ոմանք մինչև անգամ կը ջանային Հայոց Հայրիկի հայկական արեան մէջ ռուսասիրութեան թոյնը ներարկել, ինչ որ նա կ'արհամարհէր ու կը ծաղրէր և այս առթիւ շատերուն յանդիմանութեան խօսքեր կ'ուղղէր։

Եւ դեռ որքան տխուր իրողութիւններ ու փաստեր կը կատարուէին Էջմիածնի պարիսպներէն ներս, Սինոդի ատեաններու և վանական խուցերուն մէջ, ուր բամբասանքն ու դաւերը, անձնական քինախնդրութիւնները ու մանր հաշիւները իրար խառնուած, Վասպուրականի ծերունազարդ Արծուի շուրջ ստեղծեր էին այնպիսի մթնոլորտ մը, որ անշնչելի էր։ Եւ Հայր Արծիւը Վեհարանի դահլիճներէն ու Էջմիածնի պարիսպներէն դուրս կը սլանար յաճախ, լեռ ու դաշտ, բնութեան ծոցն ու Հայ ժողովուրդին գիրկը կը փնտռէր, Հայ գեղջուկի տնակն ու խրճիթը կ'իյնէր։

Ահա թէ ինչու նա ամառ ձմեռ յաճախակի ճամբորդութեամբ կ'անցունէր իւր օրերը և միշտ կը ջանար ժողովուրդին մէջ մնալ, վանդի իւր իսկ խօսքերով—«ժողովուրդը մեծ է, ազգ սիրեը յայն է»։ Մեծութիւնները միայն գիտեն մեծութեանց արժէքը։

Սակայն չը պէտք է հետևեցնել թէ Խրիմեանը բոլորովին անտեսած, երեսի վրայ ձգած էր կաթուղիկոսական և վանքի ներքին գործերը։ Այս բոլորն ալ իրենց կարգին կ'ընթանային։ Խրիմեանի թշնամիները ու չարամիտները կը պնդէին, որ Կաթուղիկոսը իւր յաճախակի և պարզ ու անպաշտօն ճամբորդութիւններով կը նսեմացնէ Էջմիածնի բարոյական հեղինակութիւնը։

— Մեծ մենք դատապարտուած ենք ցմահ այս գահին վրայ. բազմելու, Հայրապետը ժողովուրդին հայրն է, ժողովուրդը զիս սրտանց Հայրիկ կը կանչէ, իսկ դուք՝ Վեհափառ կը կանչէք երեսանց։ Ժողովուրդին ձայնը շատ աւելի անուշ ու հաճոյական կը հնչէ իմ ականջին ու սրտին...։

Այս պատասխանը կուտար Հայոց Հայրիկը և իւր սպիտակ, ազնուացեղ ձին հեծնելով 1898-ի Յուլիսի 26-ին, Դարեգին Վրդ. (այժմ Արքեպ.) Յովսէփեանի*), իւր դիւանապետ Կորիւն Վարդապետի և երկու շաթիրներու հետ կ'ուղևորուէր դէպի Սիւնեաց Աշխարհը։

Էջմիածին, Օշական, Աշտարակ, Մաղնի Մ. Գէորգի վանք, Ղաբաբուլաղ, Բջնի, Ծաղկունքի ճամբով կ'երթայ Սևանայ վանքը՝ Յուլիսի 30-ին։ Նոր-Բայազէտով գնաց Դարալագեազի Ս. Խաչ վանքը, ուրկից լեռնային դժուարանցանելի ճամբաներով կը բարձրանայ Զանգեզուրի լեռնաշխարհը։ Ամէն տեղ Հայ գիւղացիները խանդավառ ընդունելութիւն ցոյց կուտան Հայրիկին և ձիով ու ոտով ուղեկցելով գիւղէ գիւղ կ'առաջնորդեն, մինչև որ Օգոստոսի 12-ին Տաթևի պատմական մենաստանի զանգակներու ղօղանջներն ու Հայ գեղջուկներու սրտայոյզ աղաղակները իրար խառնուած կ'ողջունեն Հայոց Հայրիկի մուտքն ի տաճար։

---

*) Գերմանական բարձրագոյն կրթութեամբ օժտուած վաստակաւոր բանասէր, գիտնական և մանրանկարիչ։ Հայոց մատենագրութեան, պատմութեան և մանրանկարչութեան մասին ունի տպուած և անտիպ արժէքաւոր ուսումնասիրութիւններ։ Հայաստանի Հանրապետութեան տարիներուն (1918—1920) նա մէկն եղաւ, որ պատերազմներու ժամանակ մտաւ զօրաց շարքերը և գնաց ռազմավայրերը։ Դարեգին Արքեպ.ի անունը Սարդարապատի պատմական ճակատամարտի (24 Մայիս 1918) հետ պատուաւոր յիշատակութեամբ մը կապուած է։ Նա ծնած է պատմական Արցախի Մարտակ գիւղին մէջ 1867-ին, Վարդապետ ձեռնադրուեցաւ 1897-ին, իսկ Եպիսկոպոս՝ 1917-ին։

Օգոստոսի 13-ի առաւօտ Հայրիկը Ցաթիէն ճամբայ կ'իյնայ դէպի Գօրիս։ Հալիձորի գիւղացիները աղ ու հացով և կեցցէներով կ'ընդառաջեն Հայրիկին, որուն նոյն խանդավառ ցոյցերը կ'ընեն նաև Տինուհայրի, Խոթի և Քարահունջի Հայ գիւղացիները։ Հայրիկը կ'օրհնէ աղն ու հացը և 200 ձիաւորներու ուղեկցութեամբ ճամբան շարունակելով կը մօտենայ Գօրիսին, ուր ժողովրդական մեծ ցոյցերով կ'ընդունուի։ Գաւառապետ, քաղաքապլուխ, պաշտօնէութիւն և քաղաքի կարևոր անձերը կամարին տակ աղ ու հացով կ'ընդառաջեն, իսկ թուրքերու կրօնապետն ալ գեղեցիկ ճառով մը բարի գալուստ կը մաղթէ։ Մանուչար Բէկ Մելիք-Հիւսէյինեանցի տան հիւրասիրութիւնը վայելելէ յետոյ, Օգոստոսի 14-ի առաւօտ Հայրիկը Գօրիսէն կ'ուղևորուի դէպի Շուշի, ուրկից հայերը յատուկ կառք մը ղրկած էին։ Ճաշօրդ առաւօտ Հայրիկը կը ժամանէր Շուշի։ Ղազանչեցոց եկեղեցւոյ փոքրիկ հրապարակի (Ղանթարի տակ) վրայ շքեղ կամար մը կապուած էր։ Տասնեակ հազար Հայ և թուրք ժողովուրդ ծափերով և կեցցէներով ողջունեց Հայրիկի մուտքն ի Շուշի։

Եկեղեցի երթալէ յետոյ իշաւ յայտնի հարուստ Ղուկասեաններու տունը։ Հայրիկը այցելեց նաև առւսաց եկեղեցին և թուրքաց մզկիթը, ուր իւր խօսքը թուրք ժողովուրդին ուղղելով կ'ըսէ.

—Կրօնները Աստուծոյ աչքին առջև ծաղկեփունջ են, երբեմն մէկ ծաղկէն հոտ քաշէք, երբեմն միւսը։ Դուք տարբեր հաւատքով եղբայրներ իրար քով կ'ապրիք և ատոր համար ալ իրարև մէկ երկրի զաւակները պիտի լինէք հաշտ ու համերաշխ։

Ամբողջ քաղաքը տօնական տեսք ստացեր էր։ Ժողովրդական քէֆեր, հրախաղութիւն, ձիարշաւ և նուագածութիւն անպակաս էին։

Երկու օր հանգստանալէ յետոյ, Հայրիկը պատկառելի շքախումբով մը շրջագայութեան գնաց Ամարասի վանքը, ճարտար գիւղ, Գիշի, Նորշէն, Խորամորթ գիւղերը և Խաչէնով հասաւ Գանձասարի վանքը, ուրկից, վերադարձին այցելեց՝ Առաջաձոր, Մէյդիշէն, Դաշբուլաղ, Խանածախ, Խանբեանդէ և ուրիշ գիւղեր, ամէն տեղ ջերմ ցոյցերու և սիրալիր ընդունելութեանց արժանանալով։ Վերադարձաւ Շուշի, ուր ի պատիւ իրեն տեղի ունեցան հանդէ-

սուրը ճաշկերոյթներ։ Հայրիկը այցելեց քաղաքի եկեղեցիները քարոզեց և ջերմ յարաբերութիւն մշակեց ժողովուրդի հետ։

Վարանդայի Հէրհէր գիւղի ծխատէր Տէր Մանուէլեանը Հայրիկին կը նուիրէ արաբական ամեհի և անգուսպ գեղեցիկ նժոյգ մը։ Կը պատմեն, որ օր մը ճաշէն յետոյ, լուր տարածուեցաւ թէ Հայրիկը առաջին անգամ ըլլալով յիշեալ նժոյգը հեծնելով զբօսանքի պիտի երթայ։ Ժողովուրդը կը խռնուի Ղուկասեաններու տան մօտի հրապարակը տեսնելու համար թէ Հայրիկը պիտի կրնա՞ր հեծնել այդ նժոյգ և զսպել զայն։ Ո՛րքան մեծ կ'ըլլայ ժողովուրդի ուրախութիւնը երբ կը տեսնեն, որ Հայրիկը կուրծք դուրս ցցած, ալեհեր գլուխն ու մօրուքը հովին տուած քառասմբակ կը քշէը արաբական նժոյգը և իր ժպտալի դէմքը կ'ուղղէը այս ու այն կողմ, մինչ ծափերն ու կեցցէները կ'որոտային։

Օգոստոսի 13-ին Հայրիկը Շուշիէն կ'ուղևորուի դէպի Գօրիս։ Ղարաղշլաղ գիւղի Հայ գեղչուկները յուզիչ և սրտառուչ դիմաւորութիւն մը ցոյց տուին գիւղացէը Հայրիկին։

Գիւղացիք եկեղեցական թափօրով, աղու հացով եկան։ Թափօրին առջևէն կը բերէին երկու պարարտ եզներ, որոնց կոտոշներուն վրայ փակցուցած մոմերը կը վառուէին, իսկ երկու գիւղացիները ալ կալէն հանուած նոր ցորենը մաղերու մէջ լեցուցած՝ Հայրիկին մօտեցան։ Պատկառելի տարիքով ու դէմքով ծերունի մը արցունքն աչքերուն մօտեցաւ Հայրիկին, աչը համբուրեց և յուզուած ձայնով մը ըսաւ—«Հայրի՛կ ջան, ոտքդ դրիր մեր հողի վրայ, Աստուծու սիրտը կը քաղցրանայ մեր վրայ, օրհնի՛ր այս ցորեն, օրհնի՛ր մեր մատաղացուն, որոնք այս օրուայ յիշատակի համար քեզ նուէը ենք բերել»։ Հայրիկը կը յուզուի, կ'օրհնէ և կը շարունակէ իր ճամբան և Ջաբուղ ու Տեղ գիւղերէն անցնելով հասաւ Գօրիս, ուրկից Սեպտեմբերի 3-ին գնաց Տաթև և ապա Լոր, Գետաթաղ, Դարաբաս, Ուզ, Բռնակոթ, Մազրա և Բիչանակ գիւղերը, ապա անցաւ Հին Նախիջևան քաղաքը, ուր ռուս պետութիւն և Հայ ու թուրք բնակչութիւնը շատ փառաւոր ընդունելութիւն մը ցոյց տուին Հայրիկին։ Նախիջևանէն շարունակելով իր ճամբան Հայրիկը գնաց Նորաշէն, Դաւալու, Խոր-Վիրապի վանքը, Ղամաբ-

լու, իջաւ Զանգիբասար և վերջապէս Սեպտեմբերի 12-ին հասաւ Էջմիածին, ամիս ու կէս շրջելով Սիւնեաց Աշխարհի գիւղերն ու գաւառական քաղաքները, որոնց մէջ Հայութիւնը կը ծփար իւր շէնշող կեանքով և լայն ու մեծ սրտով։ Հայոց Հայրիկի այս պատմական և յիշատակելից ճամբորդութիւնը անոր կեանքի ամենագեղեցիկ էջերէն մէկն է։

Հայրիկը 1899-ի Մարտին գնաց Թիֆլիս և առաջին առթիւ իսկ այցելեց Փոխարքայ Գալիցինին։ Կորիւն Վարդապետը կը պատմէր որ— երբ պալատի սանդուղներէն վեր կը բարձրանայինք, սրահին մէջ, սպիտակ արջերու արձանները տեսանք, որոնց թաթերուն մէջ հաստատուած էին ելեքտրական լոյսի շիշերը։ Ես Հայրիկին ըսի— Հայրիկ տեսէք, որքան բնական տեսք ունին այս արջերու արձանները։ Հայրիկը ժպտալով պատասխանեց— Ծո ապուշ չէ՛, որ մենք անոնց ողջերն ու կենդանիները Պետերբուրգի պալատին մէջ տեսանք....


Էջմիածնի միաբան, Հայրիկի դիւանապետ (1906) և Ատրպատականի Թեմի ներկայ Առաջնորդ Տ. Ներսէս Արխեպ. Մելիք-Թանգեանը, Հայրիկի և Գալիցինի այս տեսակցութեան մասին կը պատմէ հետեւեալը.

«Փոխարքայական պալատի սրահում, Գալիցինը սպիտակ արջերի արձանները ցոյց տալով Հայրիկին ասում է— Տեսնում էք, մեր արջերն անգամ լուսաւորում են ձեր երկիրը։ Իսկ Հայրիկն անմիջապէս պատասխանում է— Այո՛ Եւրոպայի գազանանոցներուն մէջ մենք անոնց կենդանիները շատ տեսած ենք...»։

Մարտի 26-ին Թիֆլիսէն ճամբայ ելաւ դէպի Սանահին (վանք), որուն կամարներուն խորհրդաւորութեանը մէջ Հայրիկը բանաստեղծական ներշնչումով և խորին զգացմունքով կը գրէր «Սանահնի ճննդուկը» քերթուածը։ Ապա անցաւ Ալեքսանդրապոլ քաղաքը, ուր է պատիւ իրեն հայեր, ռուսներ, յոյներ և թուրքեր ժողովրդական հսկայ ցոյցեր և հանդէսներ կազմակերպեցին։ Այստեղ մնաց ութ օր, այցելեց եկեղեցիներ և պարզ ու անպաճոյճ լեզուով քարոզներ խօսեցաւ։ Ապրիլի սկիզբն էր։ Շիրակի դաշտէն անցնելով Հայոց Հայրիկը իւր հետեւորդներով կը բարձրանար Արագած լերան ձիւ-

նածածկ լանջերը, կ'այցելէր Մատաթա գիւղը, ապա կ'իջնէր Էջմիածնի գաւառի դաշտերը կը դիտէր Հայ գիւղացիներու գարնանային աշխատանքները, կ'ուրախանար, կը մխիթարուէր և վերջապէս Ապրիլի 8-ին կը հասնէր Էջմիածին. Մօտ երկու ամիս հանգստանալէ յետոյ Հայրիկը Յուլիսի 3-ին շրջաւոմբով մը նորէն կը ճամբորդէր և հետզհետէ կ'այցելէր Մաղնի, Յովհաննավանք, Սաղմոսավանք, Հաղարծին, Ղարաքիլիսա, Ապարանի շրջանի ամբողջ գիւղերը և Յունիսի 18-ին կը վերադառնար Էջմիածին. Երկու օր հանգստանալէ յետոյ 15-ին կ'երթար Երևան և բազմաթիւ հետեւորդներով կ'ուղեորուէր դէպի Խոր-Վիրապի վանքը, ուր բանի մը հազար ժողովուրդ հաւաքուած անոր գալուն կը սպասէր. Գիւղերու ճամբաներու վրայ խռնուած գիւղացիները թափօրներով, աղ ու հացով, դհոլ-զուռնայով, օտաւոր ու ձիաւոր՝ կ'ընդառաջին Հայրիկին. Խոր-Վիրապի մէջ՝ Ղամարլուի, Արտաշատի և շրջակայ գիւղերու գեղջուկները մեծ ընթրիք մը պատրաստեցին. Հայրիկը կը նախագահէր այս ժողովրդական սեղանին. Ժողովուրդը երգերով ու ծափերով գինի կը խմէր Հայրիկի կենացը, իսկ Հայրիկն ալ կ'օրհնէր Հայ գիւղացիութեան շէն ու լիք սեղանը, անոր արդար վաստակն ու քրտինքը, անոր դաշտն ու արտը և իր բաժակը կ'առաջարկէր երկրագործ և շինական Հայ ժողովուրդի կենացը. Եւ այս բոլորը կը կատարուէին Խոր-Վիրապի վանքին մէջ, բայց երկնքի տակ, ալեզարդ և վեհափառ Մասիսի դիմաց. Յունիսի 21-ին Խոր-Վիրապէն վերադառնալով Էջմիածին, Հայրիկը գնաց Սաղմոսավանք, Բիւրական, Օշական, ուր ներկայ եղաւ Ս. Սահակի և Ս. Մեսրոպի՝ Թարգմանչաց հանդէսին, որ ամէն տարի ամբան և աշնան ճեմարանի ուսուցիչներու և աշակերտներու կողմէ կը կատարուէր Օշականի մէջ, Ս. Մեսրոպի գերեզմանի վրայ. Յուլիսի 11-ին գնաց Սևան, Հաղարծնի վանք, ապա անցաւ Հառիճի վանք, Բաշ-Ապարան, Սաղմոսավանք, Աշտարակ և Օգոստոսի 19-ին վերադարձաւ Էջմիածին.

Աշնան ցրտաշունչ քամին կը փչէր, շուտով կուգար ձմեռը, աբար-աշխարհը կը ծածկուէր ձիւնով, իսկ Հայոց Հայրիկը Վեհարանի մէջ, իր գրասեղանին առջև կծկուած կը կարդար ու կը գրէր.





ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ — «ԵՐԿՈՒ ԴԱՐԱՒՈՐ ԿԱՂՆԻՆԵՐ՝ ԿՌՆԱԿ-ԿՌՆԱԿԻ»
*Յօշակաւ Ս. Էջմիածնի վանապատկան այգիի մէջ. 1900 թ.*

# ՀԱՅՈՑ ՀԱՅՐԻԿ

## ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՍՆԱՄԵԱԿ

## 1900—1910

### Ա.

### ՀԱՅՈՑ ՀԱՅՐԻԿԻ ԾՆՆԴԵԱՆ ՈՒԹՍՈՒՆԱՄԵԱԿԸ

ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՇԽԱՐՀԻ մէջ, Մայր Արաքսի ափերուն վրայ, յաւերժական ձիւնով ծածկուած ալեզարդ Մասիսի դիմաց և Էջմիածնի կաթուղիկէներու համաբներուն տակ՝ Հայոց Հայրիկը 1900 թուի Ապրիլի 4-ին կը թևակոխէր իր ծննդեան ութսուներորդ տարին.

Այդ Մեծ Հայի մեծ կեանքի ութսուն տարիներէն յիսնամեակ մը ամբողջ կապուած էր Հայ ազգային, մտաւոր, գրական, կրթական և ազատագրական վերածնունդի լուսաշող էջերուն հետ. Այդ հոյակապ կեանքը կ'արձանանար Վասպուրականի հսկայ Արծուի վիթխարի անձովը, որուն մէջ կը ծփար անոր ազգանուէր սիրտն ու ժողովրդանուէր հոգին:

Դարուն բացուելուն պէս, Մարտի 14-ին, Հայրիկը շքախումբով մը կ'ուղևորուէր դէպի Թիֆլիս, իսկ Էջմիածնի Դէորգեան ճեմարանի ուսուցչական խումբն ալ կը պատրաստուէր վայելուչ հանդէսով մը Հայոց Հայրիկի ծննդեան ութսունամեակը տօնելու.

Ճեմարանի հանդէսը Հայրիկի գուրգուրանքն ու սէրը այնքան անկեղծ և հարազատ էին, որ նա ամէն տեսակ բարոյական և նիւթական աջակցութիւն ցոյց կուտար այդ կրթական տաճարին. Ճեմարանի աշակերտութիւնը անհուն սիրով մը կապուած էր Հայ-

բիկի հետ, որ յաճախ կը լսէր անոնց խնդրանքներն ու գանգատները և միշտ ալ նպաստաւոր ընթացք կուտար։

Հայբիկի ութսունամեայ տարեդարձին ճիշտ օրը, Ապրիլի 4-ի երեկոյեան, ձեմարանի Վարչութիւնը կը կատարէր այդ յիշատակելից հանդէսը։ Ձեմարանի Հանդիսարանի մէջ տեղ կը գրաւէին վանքի միաբանները, ուսուցիչներ, աշակերտներ և բազմաթիւ հրաւիրեալներ։ Կոմիտաս Վարդապետի երգեցիկ քառաձայն խումբը մասնաւոր շուք կուտար հանդէսին։ Զ.-րդ դասարանի աշակերտներէն մէկը կը կարդար Հայբիկի մանրամասն կենսագրութիւնը, իսկ Բ. Լսարանէն ուսանող մըն ալ հայկական տաղաչափութեան մասին ուսումնասիրութիւն մը կարդալով ցոյց կուտար թէ բանաստեղծ Հայբիկը ինչպէս գործածեր է հայկական չափը իր «Հրաւիրակ»ներու մէջ։ Ձեմարանի դասախօսներէն բանասէր և հայկաբան Մանուկ Աբեղեանը մանրակրկիտ ուսումնասիրութեամբ մը կը ներկայացնէր Հայբիկի գոյգ «Հրաւիրակ»ներու բովանդակութիւնը, անոնց հոգեշունչ ու հայրենաշունչ զգացումները, գաղափարները, գրական արժէքը և այլն։ Ձեմարանի տեսուչ և գիտնական Կարապետ Վարդապետ Տէր Մկրտիչեանը յաւուր պատշաճի ճառով մը կը բնորոշէր Հայոց Հայբիկի ութսունամեայ պատկառելի կեանքը։ Կոմիտաս Վարդապետի երգեցիկ խումբը մէկընդմէջ կ'երգէր Հայոց Հայբիկին ձօնուած ժողովրդական երգերը, մինչ հանդիսարանը կը թնդար որոտալից ծափերով և կեցցէներով։

Հանդէսէն յետոյ Ձեմարանի տեսուչը կը հեռագրէր Թիֆլիս՝ Հայբիկին և կը շնորհաւորէր անոր ծննդեան ութսունամեակը։

Այդ նոյն Յուլի (1900) ամրան, Հայբիկը կ'երթար Օշական գիւղը, ուր եղբայր Եպիսկոպոսի վանապատական այգիին մէջ նա շինել տուած էր 4 սենեակներով ամառանոցային պարզ շէնք մը։ Ասոր դիմացն է այն հինաւուրց մեծ ծառը, որուն բունին իր կոնակը խփած ծալապատիկ կը նստէր Հայոց Հայբիկը և կը ծխէր, կը կարդար կամ ծառի հովանիին ու ստուերներուն տակ կը հանգստանար։ Ամրան մէջ (1900), օր մը երբ Հայբիկը մէջքը յիշեալ ծառին տուած և բարձի վրայ յենած կը ծխէր ու կը խոկար, Վահան Խրիմեանը (Հայբիկի Մօրքան եղբօր թոռը) խոհանոցի դռան մէջէն գաղտնի կը լուսանկարէր Ութսունամեայ Մեծ

Ծերունին, որ պարզ ու անպաճոյճ, հարազատ ու բնական դիրքով մը բազմոցին վրայ նստած՝ աստուածաշնչական նահապետի մը տեսքն ունի. Այդ լուսանկարը կը կոչուի՝ «Երկու դարաւոր կաղնիներ՝ կռնակ կռնակի». (Տես էջ՝ 718).

Պարսից Մուզաֆէրէդդին Շահը 1900-ի Հոկտեմբերի 11-ին, իւր Սադրազամի (Նախարարապետ) և շքախմբի հետ կ'այցելէր Էջմիածին. Մխիթարութիւնն ու ժողովուրդը մեծաշուք և սիրալիր ընդունելութիւն մը ցոյց տուին Իրանի Վեհապետին, որուն ի պատիւ Հայոց Հայրիկը ճոխ ճաշկերոյթ մը տուաւ. Շահնշահը Հայրիկին կը յայտնէր, որ Հայութիւնը դարեր շարունակ ապրելով Իրանի մէջ, նկատուած է իբր հաւատարիմ, աշխատասէր և ձեռներէց ժողովուրդ մը, որ կը վայելէ պետութեան խնամքն ու հովանաւորութիւնը. Հայրիկը շնորհակալութիւն կը յայտնէ խնդրելով, որ Շահնշահի հովանին միշտ պարսկահայութեան վրայ բլլայ. Մեկնելու րոպէին Շահը Հայրիկին կը նուիրէր «Առիւծ-Արև» (Շիրուխուրշիդ) ադամանդակուռ շքանշանը, իսկ Էջմիածնի ճեմարանին ալ հազար րուբլի.

Այս հանդէսներուն ականատես՝ Էջմիածնի միաբան Խորէն Վարդապետ Լազարեանը*) կը գրէ.

«Մուզաֆէրէդդին Շահն այցելեց Մայր Տաճար, Թանգարան և ապա Վեհարան. Մեկնելէն առաջ Շահնշահը Հայրիկին նուիրեց ադամանդեայ պատուանշան մը. Հայրիկը Շահին բարի երթ մաղթելէ յետոյ, Վեհարանէն միասին իջան և երբ Մայր Տաճարին զանգակատան առջևը հասան Շահնշահը Հայրիկին հարցուց— «Պապա՛ հանի՞ ճիշանըն» (Հայրիկ, ո՞ւր է շքանշանդ). Հայրիկն ինձ ըսաւ—Տե՛ւտ, գնա շքանշանը բեր. Ես կատարեցի հրամանը. Երբ Հայրիկը Շահին նուիրած շքանշանը կուրծքէն կախեց բազմահազար ժողովուրդը որոտալից ծափերով և ուրախութեան ցոյցերով աղաղակեց կեցցէ՛ Շահնշահը.

*) Ծնած է ի Վան 1873-ին, Վարդապետ ձեռնադրուած՝ 1901-ին. Էջմիածնի մէջ վարած է բազմատեսակ վանական պաշտօններ. 1921-ի վերջերը Էջմիածնէն անցաւ արտասահման և ապա Ամերիկա, ուր Միլվոքի Վիսքէնսինի հայոց հոգևոր հովուի պաշտօն կը վարէ ցարդ. Իմ մասնաւոր խնդրանքով Խորէն Վարդապետը գրի առաւ իւր յուշերը Հայրիկի և ազգային-եկեղեցական կալուածներու գրաւման (1903) Էջմիածնի դէպքերու մասին.

«Երբ Հայրիկը Շահին ընկերանալով կը յառաջանար դէպի ճեմարան, Շահը գոհ սրտով և ժպիտով ըսաւ Հայրիկին—«Պապա՛ կէյիք, բաս տըր, չօխ մամնուն ըմ» (Հայրի՛կ, ետ դարձիր, բաւական է, շատ գոհ եմ)։ Հայրիկը բարձրացաւ Վեհարանի Ծաղկեայ Պանլիճը, իսկ միաբանները արդէն իսկ պատրաստ սեղանին շուրջը հաւաքուած կը վայելէին համադամ խորոտիկներն ու խմիչքները և իրարու հետէ բաժակներ կը պարպէին Հայրիկին կենացը, երբ յանկարծ Հայրիկը իւր պարզ և հասակով կանգնեցաւ դահլիճին դռան մէջ, լիասիրտ խնդաց և ըսաւ—„Հա՛ աղուոր տեղ գտած էք. ան թուրքական առած մը կայ՝ կ'ըսեն Հայ կիւն պայրամ օլսուն փիլաւ իեախ, ինչ, կ'ուզէք, որ ամէն օր Շահը Էջմիածին գայ, որ դուք կուշտ ու կուռ պէս պէս կերակուրներ ուտէք. քիչ մըն ալ աղբատներուն թողէք“. Ընդհանուր ծիծաղի և ծափերու մէջ Հայրիկը հեռացաւ»։

## Բ.

## ԴԷՊԻ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԵՒ ՇԻՐԱԿԻ ԴԱՇՏԵՐԸ

Հայոց Հայրիկը հետևորդներու մեծ խումբով մը 1901-ի Ապրիլի 7-ին Էջմիածնէն կ'ուղևորուէր դէպի Արարատեան Դաշտը։ Հասաւ Մայր Արաքսի ափը և Մարգարա գիւղին մէջ հիւրասիրուելէ յետոյ շարունակեց ճամբան, որ կ'անցնէր Արարատեան Դաշտի մէջէն։ Դարնան կենսաբեր արևի և անձրևի տակ Հայ գեղջուկներու արտերը կը ծփային կանաչ ցանքսերով, որոնց ի տես Հայրիկի սիրտը կը լեցուէր հոգեկան հաճոյքով ու հրճուանքով։

Արարատեան Դաշտի գիւղերէն հարիւրաւոր ձիաւոր գեղջուկներ Հայրիկին ընդառաջելէ յետոյ կ'ուղեկցէին մինչև Իգդիր, ուր տասնեակ հազարաւոր գիւղացիութիւն խռնուած մեծ ցոյցերով և հանդէսով կը դիմաւորէր Հայրիկին։

Հայոց Հայրիկը Արարատեան Դաշտին մէջ։ Որքան սրտագրաւ էր այս պատկերը։ Հայ գիւղացիութիւնը իւր արդար քրտինքով և սուրբ աշխատանքով կառչած էր Մասիսի փէշերուն, ստորոտներուն և Մայր Արաքսի ափերուն։

Հայ գիւղը շէն, գեղջուկի տունը շէն ու շող, ծուխն ու մուխը կը բարձրանան գիւղական երդիքներէն, խոնարհ յարկերուն տակ Հայ նահապետական կեանքը կ'եռայ, մինչ Ալարատեան Դաշտին մէջ Հայ գութանը կը ճռայ, կը պատռէ կուրծքը մայր հողին, որուն վրայ կեցեր է այժմ Հայոց Հայրիկը և կը դիտէ հողագործին նուիրական աշխատանքները։

Ապրիլի 9-ին Հայրիկը Իգդիրէն ճամբայ ելաւ դէպի Կողբ— աղահանքերու այս յայտնի գիւղը, որուն մուտքին առջև կապուած էք հոյակապ կամար մը։ Գիւղացիք եկեղեցական թափօրով և աղ ու հացով ընդառաջեցին Հայրիկին և երգ ու պարով, մեծ հրճուանքով առաջնորդեցին դէպի գիւղը։ Հանգստանալէ և ճաշելէ յետոյ, գիւղացիներու ուղեկցութեամբ Հայրիկը այցելեց Ե. Դարի անմահ մատենագիր և «Եղծ աղաճղոց»-ի յայտնի հեղինակ Եզնիկ Կողբացիի մատուռը, որուն անշուք յարկին տակ դարեր շարունակ կը հանգչին նշխարները այդ երախտաւոր գրամշակին։ Հայրիկը իւր վեղարը վերցուց, ծնկաչոք համբուրեց Եզնիկի շիրիմը և ապա խօսքը գիւղացիներուն ուղղելով ըսաւ.

—Ձեր գիւղին պարծանքն ու փառքն է այս շիրիմը, բայց դուք, անոր յարգը չէք գիտեր և այսպէս անխնամ ու անշուք թողած էք։ Դուք աղահանքերէն օգուտ կը ստանաք, ամէն տուն թող համեստ գումար մը տայ, բան մըն ալ ես կուտամ և այս անմահ մատենագրին շիրիմն ու մատուռը նորոգեցէք։ Հայրիկը այս կը խնդրէ ձեզմէ։

Ապրիլի 10-ին Կողբէն ճամբայ ելաւ դէպի Կաղզուան։ Հարիւրաւոր ձիաւորներու ուղեկցութեամբ թափօրը կը մօտենար քաղաքին։ Քանի մը տեղ յաղթական կամարներ կապուած էին։ Խանութները փակ էին և ամբողջ քաղաքը դրօշազարդուած էր։ Քաղաքի մուտքին առջև հայեր, թուրքեր և ռուսներ զատ զատ թափօրներով և աղ ու հացով ընդառաջ ելան։ «Կեցցէ Հայրիկ» աղաղակները, ծափերը, դհոլ-զուռնայի ձայն, զանգերու զօղանջը և այլն իրար խառնուած յուզիչ տեսարան մը կը ներկայացնէին։

Ապրիլի 13-ին Հայրիկը Կաղզուանէն ճամբայ ելաւ դէպի Կարս։ Ճանապարհի վրայ ընդառաջ եկան քիւրդ բէկերն իրենց ձիաւորներով և թուրք գիւղերու կրօնապետներն ու մեծամեծները։

Կարսի ազգային, պետական և օտարազգի բազմաթիւ պատգամաւորութիւնները (42 կառքերով) և հարիւրաւոր ձիաւորներ ընդառաջելով Հայրիկին տարան քաղաքը, ուր կապուած էր շքեղ կամար մը, որուն տակ հայեր, ռուսներ, յոյներ, պարսիկներ, տաճիկներ և թաթար թուրքերը աղ ու հացով դիմաւորեցին և բարի գալուստ մաղթեցին։ Նահանգապետին այցելելէ յետոյ, Հայրիկը նախ գնաց Հայոց եկեղեցին աղօթեց ու քարոզեց, յետոյ գնաց Հայ-կաթոլիկներու եկեղեցին, ուր սրտառուչ քարոզ մը խօսեցաւ և շեշտեց որ —«Դաւանական և ծիսական տարբերութիւնները լուսաւորչական և կաթոլիկ հայոց սիրտերը թող իրարմէ չը սառեցնեն, գիտցէք, որ դուք միևնոյն ազգին և հայրենեաց հարազատ զաւակներն էք, միևնոյն զգացումներով և յոյսերով իրար կապուած եղբայրներ։ Անմահն բանաստեղծ Մկրտիչ Պէշիկթաշլեանը դաւանանքով Հայ կաթոլիկ էր բայց հոգւով և սրտով իբրև Հայ ապրեցաւ, իբրև ազգասէր և հայրենասէր Հայ, որ գրեց և երգեց.

«Ընդ աստեղօք ի՞նչ կայ սիրուն,
Քան զանձկալի եղբայր անուն...»,

Կարսի Հայ կաթոլիկ համայնքը մեծաշուք հանդէսով կ'ընդունէր ու ճամբու կը դնէր Հայոց Հայրիկը, որ կ'ուղղուէր դէպի ռուսաց եկեղեցին, ապա կ'երթար տաճկաց մզկիթը։ Երբ Հայրիկի շքախումբը մզկիթին կը մօտենար մոլլա մը բարձրասլաց մինարէթի ծայրէն բարձր ու զիլ ձայնով կրօնական երգ մը կ'եղանակէր։ Ապա Հայրիկը գնաց պարսից մզկիթը, ուր հաւաքուած էին կարսաբնակ ամբողջ պարսիկներն ու թաթար թուրքերը։ Մզկիթներու մէջ աղօթելէ յետոյ Հայրիկը գնաց յունաց եկեղեցին և ընդունուեցաւ մեծաշուք հանդէսներով։

Յաջորդ օր Հայրիկը բարձրացաւ Կարսի բերդը, դիտեց ամրութիւնները։ Ի պատիւ իրեն ամբողջ քաղաքը տօնական տեսք ստացեր էր, շրջակայ գիւղերէն հազարաւոր Հայ գեղջուկներ Կարս եկած էին իրենց սիրելի Հայրիկը աչն առնելու համար։

Ապրիլի 16-ին Հայրիկը Կարսէն գնաց Ալեքսանդրապոլ, 18-ին անցաւ Սանահին և դիտեց նորոգութիւնները, ապա գնաց Դիլիջան, Սևանայ վանքը և Մայիսի 1-ին վերադարձաւ Էջմիածին։

Հայոց Հայրիկի այս յաճախակի և երկարատև ճամբորդութիւնները և ժողովրդական ամէն տեսակ դասակարգերու հետ մշտական յարաբերութիւնները առիթ դարձան, որ ռուս բռնապետութեան Կովկասի դաժան ներկայացուցիչը՝ նոյն ինքն Փոխարքայ Գալիցինը կասկածէր, որ Խրիմեանը ճամբորդելով քաղաքներն ու յետին գիւղերը, ժողովուրդին մէջ ըմբոստութիւն և յեղափոխութիւն կը քարոզէ և առ հասարակ ռուսաց պետութեան դէմ կը գործէ։ Գալիցինը իւր այս կասկածները կը հիմնաւորէր և իբրև փաստական իրողութիւն ի գիր առնելով կը հաղորդէր ցարին և նախարարաց խորհուրդին։

Հայահալած Գալիցին 1901-ի Մայիսի 31-ին Ռուսաց Ներքին Գործոց Նախարար Սիպեագին հետեւեալ տողերը կը գրէր Խրիմեանի մասին.

«...Այժմեան Մկրտիչ Պատրիարք—Կաթողիկոսի էջմիածին ժամանելով անկարգութիւն այնտեղ նորէն ծայր է տուել։ Իր ամբողջ կեանքը անցուցանելով տաճկական բռնակալ ու անարդ տիրապետութեան տակ, նա էջմիածին բերեց իր հետ Տաճկաստանից վարչական այնպիսի ձևեր, որպիսիներին ընտելացած էր իր հայրենիքում։ ...Ներկայ Պատրիարք—Կաթողիկոսը, որ ամբողջովին անձնատուր է եղած ոչ այնքան իր հօտի հոգևոր պետի դերին, որքան նրա քաղաքական ղեկավարման, գնալով աւելի ու աւելի յանդուգն է դառնում դէպի մեր կառավարութիւնը և սրա օրէնքների պահանջները։ ...Կարելի պիտի լինի սպասել Պատրիարքի կողմից նորանոր օրինազանցութիւններ, որոնց կրկնութիւնները չեն կարող չը կոտրել արժանապատուութիւնն ու նշանակութիւնը մեր կառավարութեան»*)։

Կովկասի պալատը լուրջ և ուշադիր կերպով կը հետեւէր Խրիմեանի իւրաքանչիւր քայլափոխին։ Օինօդի Գրօկուրօրն օրը օրին գաղտնի զեկուցումներ կը հաղորդէր Գալիցինին՝ էջմիածնի և Խրիմեանի ներքին կեանքի մասին։ Խրիմեանի յաճախակի պտոյտներու մէջ Ռուս բռնապետութիւնը քաղաքական նպատակներ կ'որոնէր։ Գալիցինը համոզուած էր, որ Հայրիկը «իւր հօտի

*) «Ազաւ Եկեղեցի», Ամօաթերթ. Նրևան. 1928. Թիւ 7—8 էջ՝ 121—132։

հոգևոր պետի դերին» նուիրուելէ աւելի ստանձներ է անոր «քաղաքական ղեկավարման դերը» և այս պատճառով ալ միշտ կը շրջագայէ ժողովուրդի մէջ։

Հայ տաղանդաւոր բանաստեղծ Աւետիս Իսահակեանը 1901-ի Սեպտեմբերին կ'այցելէ Էջմիածին և Հայոց Հայրիկի մասին կը գրէ իւր այնքան գեղեցիկ ու սրտագրաւ յուշերը։

«Սեպտեմբերի մէջ, 1901 թուին, այցելեցի Էջմիածին։ Նոյն թուի Մայիսին երբ Վենետիկում էի գտնւում մեզ ամենից սիրելի Ղեւոնդ Ալիշանը ինձ վրայ քաղցր պարտք դրեց „Հայոց Հայրիկին կարօտագինս ողջունելու իր կողմանէ“։

«Երեկոյեան անմոռանալի բաղդ ունեցայ Հայրիկի մօտ լինելու, համբուրեցի նրա աչը։ Սիրտս ուժգին խփում էր ուրախութիւնից և մի անորոշ զգացմունքից։ Առաջարկեց նստել։

«—Վեհափառ Հայրիկ, մեծ բաղդաւորութիւն եմ զգում, որ ինձ վիճակուել է յայտնել Նահապետ Ալիշանի կարօտագին ողջոյնները Հայոց Հայրիկին։

«—Ա՜հ, շատ շնորհակալ եմ, դուն Վենետիկ էիր, երբ էիր հոն, ինչպէս է Հայր Ղեոնդը, աղէկ է։

«—Այո, Վեհափառ Հայրիկ, այս գարնանս Վենետիկ էի և պատիւ ունեցայ մի քանի անգամ լինելու ալեզարդ Նահապետի մօտ, որն ինձ արժան համարեց ձեզ ողջոյններ բերելու։ Նա հիւանդոտ է և թոյլ։

«—Ափսոս, ափսոս,—խօսքս ընդհատեց Հայրիկը,—մենք հասակակիցներ ենք, ես շատ կը սիրեմ անոր, անուշ գրիչ ունի, նա շատ է ազդել իմ գրչի վրայ, նա ինձ շատ բան է ներշնչել, ասա ուրիշ ինչ կ'ընէր։

«—Նա ինքն էլ ասում էր, որ Հայրիկը իրենից հարիւր օր, միայն հարիւր օր է մեծ և ասում էր թէ բերկրութեամբ եմ լսում, որ Հայրիկը ձի է նստում և ժողովրդին այցի գնում.... Միշտ նախանձում էր ձեզ, Վեհափառ Հայրիկ, և ասում էր, որ Հայրիկի բանն ուրիշ է, նա առոյգ է մնացել, որովհետև Մասիսի շուրջ տակն է քնում, հայոց դաշտերի ծաղկաշունչ հովն է ծծում և Արաքսի ջուրն է խմում։

«Այստեղ Հայրիկ ուրախ ու սրտանց ծիծաղեց.

«— Ան կը նախանձէ ինձ, ես վաղը կը կարգադրեմ, որ անոր Մասիսի հողէն, Երասխի ջուրէն ու Հայաստանի ծաղիկներէն քիչ մը վերցնեն և փոքրիկ արկղով մը ղրկեն Վենետիկ։

«Ինչպէս յետոյ իմացայ՝ Հայրիկի կարգադրութեամբ ուղարկել էին մի փոքր արկղ այդ արմատաններով Հայոց Նահապետին, բայց մինչև հասնելը դժբախտաբար Նահապետը արդէն վախճանուած էր եղել (1901, Նոյեմբերի 22-ին)։

«Ամբողջ գիշեր ես Հայրիկի թովիչ ձայնի, արձուենի հայեացքի ներգործութեան տակն էի. ինձ թւում էր, որ ապրում եմ նահապետական օրերում և երջանկութիւն եմ ունեցել խօսելու բիբլիական նահապետներից մէկի հետ։ Հայրիկն իմ երեակայութեան մէջ միշտ պատմական կամ աւելի ճիշտն ասած՝ առասպելական նեմբռոսով է լուսաճաճանչուած. մանուկ օրերից երազել եմ տեսնել Վասպուրականի Արծուին, «Կայծեր»ի Հայրիկին։ Մի ես երեկոյ Հայրիկի կողմից կանչեցին ինձ Վեհարան։

«— Էհ նստէ տեսնենք, դուն գիտես, որ ես ալ բանաստեղծ եմ, ու շատ կը սիրեմ բանաստեղծութիւնները. Հոմերոսն ու Վիրգիլոս ամենէն շատ կը սիրեմ։

«Ու սկսեց առոյգ և հուժկու շեշտով անգիր ասել Էնէականից, Իլիականից։ Այդ ժամանակ նրա արեւի նման չքնաղ աչքերը փայլում էին ոգեւորութեամբ և պատանեկան աշխոյժով։ Երազի մէջ էի զգում ինձ. լսում էի Վասպուրականի հինաւուրց Արծուի թեերի թափահարումը իմ գլխի վերև»*)։

Ռուսներու կողմէ Կովկասի գրաւման հարիւրամեակը (1801—1901) մեծ շուքով տօնուեցաւ Թիֆլիսի մէջ Սեպտեմբերի վերջերուն։ Հայրիկը Սեպտ. 19-ին իւր շքախումբով ժամանեց Թիֆլիս և առաջին առթիւ իսկ այցելեց Արքայական Գաղտամասեր Իշխան Նիկոլայևիչին և Յունաց Թագուհի Օլգա Կոստանդինովնային, որոնք Առաջնորդարան գալով փոխադարձաբար այցելեցին Հայրիկին։ Հոկտ. 16-ին Հայրիկը Փոխարքայ Գալիցինին այցելելով մէկ ժամ խօսակցութիւն ունեցաւ Հայ-ազգային գործերու մասին։ Նոյեմբերի 4-ին Թիֆլիսէն ճամբայ ելաւ դէպի Էջմիածին։

---

*) «Գիր եւ Կեանք». Ժողովածու. կազմեցին Ց. Մալխասեան և Նար-Դոս. Թիֆլիս. Տպ. Էսպէրանսօ. 1911. էջ՝ 66—74։

## Գ.

## ՋՈՒԱՐԹՆՈՑԻ ՅԻՇԱՏԱԿՆԵՐԸ

*Էջմիածնէն դէպի Երևան երկարող խճուղիի հարաւակողմը, Հռիփսիմէի վանքին մօտիկ, բայց դաշտին մէջ Ներսէս Չինող Հայրապետը Է. դ. դարի կէսերուն կերտել տուաւ Ջուարթնոց կամ Առաջարի Ս. Գրիգոր Լուսաւորիչ անունով հոյակապ տաճարը, իւր յարակից շէնքերով։ Այս տաճարը, ըստ պատմական և ճարտարապետական նորագոյն ուսումնասիրութեանց, հայկական ճարտարապետութեան հոյակապ յուշարձաններէն մէկը եղած է։ Արաբական և հետագայ արշաւանքներու ընթացքին, երբ Հայաստանը աւերածութեանց կ'ենթարկուէր, Ջուարթնոցի այդ գեղակերտ տաճարն ալ քարուքանդ ըլլալով հարիւրաւոր տարիներ կը հանգչէր հսկայ հողակոյտերու տակ։ Դարեր շարունակ Արարատեան Դաշտի Հայ ծողովուրդը Ջուարթնոցին Հանգած կամ Խաչգարած եկեղեցի կոչումը կուտար և անոր փլատակներուն ուխտ երթալով մոմ կը վառէր ու խունկ կը ծխէր։*

*Հինգ-վեց տարի (1916—1921) ապրելով Էջմիածնի մէջ բազմից առիթ ունեցայ երթալ Ջուարթնոցը և ուշի ուշով ու հետաքրքրութեամբ դիտել հայկական ճարտարապետութեան այդ սքանչելի կառուցուածքի յատակագիծը և քանդակները ու բնօրինները։ Ջուարթնոցի կենսուրախ, շինարար և վաստակաւոր վանահայրը՝ նոյն ինքն Խաչիկ Ծ. Վարդապետ Դադեանը*) 1920-ի Մայիսի*

---

*) Ծնեալ Սիւնեաց Աշխարհի (Ղարաբաղ) Վերին Թաղավարդ գիւղին մէջ 1863-ին։ Ձեռնադրեալ վարդապետ՝ 1894-ին։ Աւելի քան 20 տարի (1900—1922) վարեց Ջուարթնոցի վանահայրութիւնը և հոգով սրտով կապուած մնաց այդ պատմական և հինաւուրց տաճարի փլատակներուն հետ։ Նա կրցաւ այնտեղ ծառեր անկել, այգիներ և արտեր մշակել, Ջուարթնոցը գարձնելով գուարճալի և կենսառատ վայրը մը։ Խաչիկ Վարդապետի անունը սերտօրէն կապուած է Ջուարթնոցի աւերակներու պեղումներուն հետ, որոնք նա տարիներով շարունակեց, արժանանալով Հայ և օտարազգի ուխտաւորներու և գիտնականներու ջերմ գնահատութեան։ Խաչիկ Վարդապետը այժմ ողջ է (65 տարեկան) կ'ապրի Էջմիածին և կ'երազէ իւր ջանքերով ու քրտինքով ի յայտ եկած Ջուարթնոցի հին օրերն ու յիշատակները...։*

29-ին տոմսակ մը գրած էր ինձ հրաւիրելով Զուարթնոցը ճաշի. Սիրով գացի, այնտեղ կային նաև ուրիշ հրաւիրեալներ. Զուարթնոցի տուերախիտ ծառերուն տակ Խաչիկ Վարդապետը համեստ սեղան մը պատրաստած էր. գառան մսով փլաւ և հին գինին առատ էին. Շարէ շար շարուեցանք սեղանին բոլորտիքը, խնդրելով որ Խաչիկ Վարդապետը նախագահէր. Սիրով ընդունեց օրհնեց սեղանը և երբ բաժակը վերցուց՝ աչքերն արցունքով լեցուեցան, բայց կրցաւ յուզուած ձայնով արտասանել հետեւեալ բաժակաճառը.

«Ձեզ մատաղ տղերք չեն, այսօր ես ձեզ հրաւիրել եմ այստեղ, որ այս անպաճոյճ սեղանի շուրջ խմբուած միասին տօնենք Զուարթնոցի պղտումների քանամեակը. Օրանէց քսան տարի առաջ, 1900 թուի Յունուարին ես մեր պաշտելի Հայոց Հայրիկից խնդրեցի, որ թոյլ տար Զուարթնոցում պեղումներ կատարէի. Հայրիկը շատ ուրախացաւ, համաձայնուեց մեւմ էր պետութեան թոյլատուութիւնը. ես դիմեցի Պետերբուրգի Կայսերական Հնագիտական Ճանձաժողովին և խնդրեցի նրա թոյլատուութիւնը, ինչ որ յաջողուեց. եւ ահա, 1900 թուի Մայիսի 29-ին ձեռնամուխ եղայ պեղումների աշխատանքներին, որոնց յաջողութիւնը ես պարտական եմ անմահն Խրիմեանի բարոյական քաջալերանքին և նիւթական օգնութեան. Պաշտելի Հայրիկը յաճախ այցելում էր Զուարթնոցը, դիտում էր պեղումները հետեւում, գնահատելով և քաջալերելով իմ աշխատանքները, որոնց արդիւնքն այսօր տեսնում էք. Ապա ուրեմն, տղերք չեն, ես առաջարկում եմ այս բաժակը յոտընկայս խմել Հայոց Հայրիկի անմահ յիշատակին».

Խաչիկ Վարդապետը վերջացուց իւր բաժակաճառը, արցունքները սրբեց, բոլորս միասին ոտքի ելանք, երգեցինք «Հայրի՛կ, Հայրի՛կ ֆո ճայրենիֆ» երգը և բաժակները պարպեցինք. երիտասարդ բանաստեղծ Գառնիկ Բեալաշեանը (որ մեռաւ 1931-ի աշնան Էջմիածնի մէջ) յաջորդ բաժակն առաջարկեց Խաչիկ Վարդապետի կենացը, որ ընդունեցինք ծափերով և կեցցէներով. ճաշէն յետոյ գացինք Զուարթնոցի*) աւերակները կրկին ու կրկին անգամ տես-

*) Վաստակաւոր Հայ ճարտարապետ Թորոս Թորամանեանը, Զուարթնոցի յատակագիծն ու բեկորները ուսումնասիրելով վերակազմած է այդ հոյակապ տաճարի փոքրագիծը մօտէլը, որ կը պահուի Էջմիածնի «Հայրիկեան Թանգարան»-ին մէջ, հետզհետէ պատճառելով այցելուներուն։

նելու։ Աւերակներու մէջ նստած կ'ունկընդրէինք Խաչիկ Վրդպ.ի պատմութիւններըը Զուարթնոցի անցեալի և պեղումներու մասին։

«Պեղումների և աշխատանքների ամենակարևոր մասը—կը պատմէ Խաչիկ Վրդպ.ը—վերջացրի 1901 թուի վերջերը։ Ցաճարի յատակը բացել ու մաքրել էինք, սիւների արձուագանդակ խոյակներն և այլ քանդակազարդ քարերը դարսել էինք որմերի տակ և այլն։ Ես ցանկանում էի, որ պեղումների բացումը Հայրիկի օրհնութեամբ կատարուէր։ Դրա համար էլ Դեկտեմբերի 4-ի առաւօտեան անձամբ ներկայացայ Հայրիկին խնդրելով, որ այդ օրը այցելէր Զուարթնոցը և կատարէր պեղումների բացումը։ Այդ նոյն օրը, ճաշից յետոյ, Հայրիկը մի քանի միաբաններով, ճեմարանի ուսուցիչների և ուսանողների հետ եկաւ Զուարթնոցը։ Ես ընդառաջ գնալով Հայրիկին առաջնորդեցի տաճարը, որտեղ տեսաւ կատարուած աշխատանքները և ապա արձուագանդակ գոյգ խոյակներից մէկը ցոյց տալով ասացի.

«—Վեհափառ Հայրիկ, տեսէք, Այրարատեան Դաշտի արձիւը նուիրաբերում եմ Վասպուրականի Արծուիդ։

«Հայրիկն խոկոյն պատասխանեց.

«—Հմ, աղէկ ըսէր, Խաչիկ Վարդապետ, հարկաւ գիտես որ նման գնման կը սիրէ։

«Ինչպէս գիտէք—կը շարունակէ Խաչիկ Վրդ.ը—Զուարթնոցի մասին բաւական բանավէճեր ծագեցին*)։ Ես պնդում էի (ինչ որ սխալ է. Հ.Ա.) որ բուն էջմիածինը սա է, Զուարթնոցը։ իսկ Ցուսիկ Եպիս. Մովսիսեանը և Մեսրոպ Վարդապետը պնդում էին՝ էջմիածինը հէնց այն է որ կայ։ Այս բանավէճի մասին մի օր Հայրիկն ինձ ասաց.

«—էջմիածին ոչ հոս է, ոչ ալ հոն, տեղն ու քարերը չեն կարևոր, այլ պրպտեցէք, քննեցէք թէ էջմիածին ձեր սիրտերուն մէջն է թէ ոչ։

---

*) Զուարթնոցի կառուցման, պատմութեան և պեղումներու մասին մանրամասնութիւնները տես՝ Մեսրոպ Վարդապետ Տէր Մովսիսեանի «Էջմիածին եւ Հայոց Հնագոյն Եկեղեցիներ» (Գրակ. Ա. Տպարան Ս. Էջմիածնի. 1905) արժէքաւոր և խղճամիտ ուսումնասիրութիւնը։

«Զուարթնոցին ուխտի, այցելութեան և ուսումնասիրութեան եկողների անուններըը և նրանց տպաւորութիւնները ու յուշերը ունենալու համար, ես սկզբից իսկ պատրաստեցի մի մատեան, որի մէջ առաջին անգամ և առաջին երեսի վրայ Հայրիկն այդ օրը իւր իսկ ձիռքով գրեց հետեւեալ տողերը*).

*Սիւն հաստատուխթեան Զուարթնոց վեհուգոյն տաճարին,*
*Բաղխական Ցիսուսի փրկական Խաչին եւ աշխարհայոյս*
*Առետարանին,*
*Ի վերայ դիցապաշտ կռամոլութեան մոլորեալ հին ժողովուրդին,*
*Ցիշատակ յաւերժական Ներսիսի Շինող հայրապետին,*
*Որ լուծ հողով ժամկեալ էր ել ի լոյս*
*Անդուլ աշխատութեամբ Տէր Խաչիկ վարդապետին,*
*Տեսանել այս չնաշխարհիկ գիւտ սրբանուէր՝ վիճակեցաւ*
*Հայոց Հայրիկին.*

*4 Դեկտեմբերի 1901 ամի*

«Տղերք չան, ձեզ պատմեմ նաև հետեւեալ միջադէպը. Հայկական կոտորածների տարին (1895-ի աշնան) Ալաշկերտի գաղթականները թափուել էին էչմիածնի բակը և Հայրիկից նպաստ էին խնդրում. Հայրիկը կանչեց ինձ, 200 րուբլի աբծաթ դրամ տուեց, որ բաժանէի՝ գաղթականներին. երբ մտայ ժողովրդի մէջ և սկսեցի նպաստը բաժանել, ամեն կողմից թափուեցին վրէս, սկսեցին քաշքշել ինձ և դէս ու դէն հրել. վերջը վերարկուս պատռեցին. Ինչ մեղքս պահեմ ձեռքիս գաւազանով մի քանի տղամարդկանց վզակոթին հասցրի. Գաղթականներից մէկը վազել էր Հայրիկի մօտ և բողոքել էր.—Հայրիկ ջան, Հայրիկ, զմեզ զարկեց, կոտորեց տաճիկ, մկայ լէ կը տրփա Խաչիկ. Հայրիկը կանչեց ինձ յանդիմանեց, դրամը ձեռքիցս առաւ և ասաց—ես ինքս կ'երթամ կը բաժնեմ. Հայրիկը իջաւ ժողովրդի մէջ, ես էլ մի քանի քայլ հետեւից հետեւում եմ նրան և կարգ եմ պահում: Մէկ էլ տեսայ ամեն կող-

*) Այս գեղահիւս և անթերի տողերը անձամբ արտագրեցի Զուարթնոցի այցելութեան մատեանէն և 1920-ին առաջին անգամ լոյս ընծայեցի էչմիածնի մէջ: (Տես՝ Հայկ Ամէմեան. «Խրիմեան Հայրիկ» ծննդեան հարիւրամեակի առթիւ. 1820—1920. Ս. Էչմիածին. Տպ. Մայր Աթոռոյ. 1920. էջ՝ 24).

մից թափուեցին Հայբիկի վրայ, իսկ նա բարձր ձայնով կանչեց— Ծօ՛ ո՞ւր ես Խաչիկ Վարդապետ, ո՞ւր է գաւազանդ.... Հայբիկին շրջապատողները ծիծաղելով ետ ետ քաշուեցին, ես մօտեցայ և բոլորս միասին սկսեցինք ծիծաղել։ Նպաստը բաժանելուց յետոյ, երբ Հայբիկին տարայ վերադարձը, նա գնաց ներսից իւր մի իւղաներկ մեծադիր նկարը*) բերեց նուիրեց ինձ և ասաց.

«—Է՛հ, Խաչիկ Վարդապետ, այսօր վրադ բարկացայ և յանդիմանեցի, վանդի ժողովուրդին վշտացուցեր էիր։ Այս նկարս քեզի կը նուիրեմ, որ միշտ յիշես այս դէպքը և խոհեմութեամբ վարուիս ժողովուրդին հետ։ Թէև Հայբիկը բարկացաւ վրադ, բայց անոր կենդանագիրը չի բարկանար»։

Յաջորդող ընթացքին Խաչիկ Վրդպ.ը Հայոց Հայբիկի կեանքէն պատմեց շատ հետաքրքիր և արժէքաւոր դրուագներ ու մանրավէպեր, որոնք բոլորն ալ ես գրի առած եմ։

## Գ.

## ՅԵՐՈՒՆԱՁԱՐԴ ԵՒ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԲԱՆԱՍՏԵՂԾՆԵՐԸ

Յուրա ձմեռ էր, երբ Արագածի Սոխակը—երիտասարդ բանաստեղծ Աւետիք Իսահակեանը—Շիրակի Դաշտէն կը սլանար դէպի Աբարատեան Դաշտը և Էջմիածին հասնելով կը հանդչէր Վաղարշապատի Արծուի—ծերունազարդ բանաստեղծ Հայոց Հայբիկի Թևերուն տակ, վայելելով անոր հայրական սէրն ու գուրգուրանքը։ Երկու բանաստեղծ սիրտերն ու հոգիները կը բացուէին իրար դիմաց։

Աւետիք Իսահակեանն է խօսողը։

«...1902 թ. յունուարին ես նորից Էջմիածնայ վանքումն էի և ինձ համար կրկնուում էին նորից հաճելի, սիրուիչ երեկոները։ Գնացի տեսնելու Հայբիկին։

---

*) Այս նկարը Խաչիկ Վրդպ.ը կախած էր Զուարթնոցի իւր սենեակի պատէն և յաճախ հաճոյքով կը պատմէր վերոյիշեալ միջադէպը։

«— Է՜հ, բարև նկար, կերևի, որ Հայբիկին կարօտցիր ես, վանքի հացն ալ անուշ է, պատմէ, նայիմ ինչ կայ, ուր էիր։

«Ես պատմեցի ճանապարհորդութիւններիս մասին։

«— Ապրիս, ապրիս, համ կը ճամբորդես, համ կը գրես. ես ալ այդպէս եմ անում. Շատ բաներ եմ գրել վերջին տեսիլներս, կարդամ լսէ, բայց ուղիղ ու ճշմարիտ խօսէ, քու կարծիքն ըսէ, մի վախնար, հիմայ դուն կը մտածես, որ հայոց կաթողիկոսի գրածները չի կարելի քննադատել, կամ անոր շիտակ բան մը ըսել, ինչպէս մեր վարդապետները կանեն. երեսիս մի բան կ՚ասեն, դուրսը ուրիշ, ես ալ քեզ պէս մի բանաստեղծ եմ, դուն ալ ինձ պէս, ատեղ մենք հաւասար ենք. ու գիտցիր, որ բանաստեղծները միշտ ճշմարիտը պիտի խօսին աշխարհիս տէրերի առջև. մեզ ալ աշխարհը տէր չունէր գլուխը դնելու, առաքեալներն անուն ու բոբիկ մարդ կուգային, բայց հիմայ մենք՝ նրանց ժառանգները՝ վեհարաններէն մէջ կ՚ապրինք. առը վրայ բան մը գրեր եմ*)։

«...Մի՛ւս օրը, խրախուսուած Հայբիկի հեզահամբոյր վարմունքից, մի քանի նկատողութիւններ արեցի, որ ոտանաւորները երկար են, և ոճը խառն է՝ արևելեան և արևմտեան։

«— Այո՛, այո՛ ես ալ նկատել եմ, որ իմ լեզուն խառնուել է. գովկաս եմ ապրում. ազդուել եմ, միշտ ալ խառն բարբառով կը խօսիմ.... Իսկ որ կ՚ըսես, թէ երկար է, պատճառը երկար գիշերներն են,— արձագանգեց նա— չեմ քնանար, ձանձրոյթէս մարդ կուգամ գիշերները, կը ծխեմ ու կ՚երգեմ, ու երգելով սառնկ կը գրեմ, երկար կ՚ըլլայ մինչև որ քունս գայ։

«— Թոյլ տուէք, վեհափառ Հայբիկ, հարցնել ինչ էք երգում։

«— Շարականներ կ՚երգեմ, ներքուղներ, սուրբ հարց երգերէն՝ Շնորհալու, Կեչառեցու, Խորենացու, Գետրոս Ղափանցու ու Գրիգոր Աղթամարցու սիրոյ տաղերն ալ կ՚երգեմ, Ղափանցին լաւ

*) Այս ուխտը Թադէի վանուց քերթուածը, որ լոյս տեսաւ Էջմիածնի «Արարատ» ամսագրի մէջ 1902-ին: Այս քերթուածին մէջ, Հայոց Հայբիկը Թագէոս Առաքեալի լեզուով կը բացատրէ—«...Ո՛վ է ճշարեր այդ օտար բաց, Աբոռ, Աբոռ եւ Մայր Աբոռ, Վեհափառ եւ Վեհարաց, Էջմիածին, Էջմիածին, Լուսաւորիչ, Լուսաւորիչ, իսկ Թադէին ճամար ոչինչ...»։

տաղտասց է, Բուչակ Նահապետ անորից վեր է, բայց ժողովուրդի երգերն ամենից վեր են, ես շատ կ'երգեմ մեր Վանայ գեղջկական երգերը, որ սովորել եմ մանկուց Վարագայ և Ս. Կարապետի ուխտաւորներից։ Բայց շատ կը սիրեմ Խորենացու ողբը, անոր համար ես մի եղանակ եմ շիներ ու կ'երգեմ. ինձ կերևայ թէ այդ ողբը հայ ազգի ճակատագիրն է ու ամեն դարու ողբը. ինձի կը թուայ թէ Բերթողահայրը Մովսէս օրերիս համար է գրեր...

«Ճանկարծ նա յիշեց Նարեկացուն և ոգեորուած խօսեց Նարեկի վանքի, Վանայ ծովի գեղեցկութեան մասին, անգիր ասեց Նարեկացու տողերից, պատմեց նրա տեսիլը, նրա մասին եղած ժողովրդական աւանդութիւնները։

«Ճաշորդ երեկոն Հայրիկը շատ ուրախ տրամադրութեան մէջ էր. պայծառ դէմքով, ծալապատիկ նստած բազմոցի վրայ՝ գիրք էր կարդում, երբ ես ներս մտայ. մեծ „վանիկ" կատուն նրա կողքին աներուշ մռում էր։

«—Նստէ տղաս խօսինք, դիշեր երկայն է.

«Մի փոքրիկ գաւաթով սուրճ խմելուց յետոյ, Հայրիկը պատրաստեց իր հաստ պապիրոսները և սկսեց ծխել ու զուարթաղէմ խօսել։

«—Դու ալ կը ծխես, գիտեմ, սուրճին հետ շատ համեղ կըլլայ ծխել, բայց գիտցիր Հայրիկին մօտ չըլլալը ծխել. միւրան մը կը նկատէ ու աշխարհով չաւ կ'անէ, թէ հայոց կաթողիկոսը թոյլ կուտայ տղաներուն իր մօտ ծխել։

«Այստեղ Հայրիկը երկար և բարի ծիծաղեց.—Աստը համար քեզ մուշտուկ մը կը նուիրեմ, Հայրիկի մուշտուկներից, դուրսը ծխիր։ Եւ ապա վերցրեց երուսաղէմից գրկուած ձիթենու փայտից շինած մի մուշտուկ և տուեց ինձ։

«Դրանից յետոյ Հայրիկն սկսեց կատակներ անել, անցեալից ծիծաղելի դէպքեր պատմել. երբեմն նրա յիշողութիւնը թարմ էր, նոյնքան էլ նա թեթևչքներով էր խօսում. մէկ պատմում էր Սուլթանի մասին, մէկ նկարագրում էր բանաստեղծական գոյներով մի լեռ Պլիկիայում, մէկ խօսում էր Լոնդոնի մուզէյների կամ Պարզի մասին։ Եւ ինչըր պատմում էր բոլորն էլ հետաքրքրական էր և ուսանելի, պատմողական ձևը գեղեցիկ և անպաճոյճ. ժողովուրդն

էր խօսում.— երեք հազարամեայ հայ փորձուած ժողովուրդը. նա իր պատմական բազմաբովանդակ և նշանակալից անցեալից ինչպէս մի առասպելական հարուստ գանձարանից, հանում էր թանգագին գոհարները — յուշեր և այդ յուշերով ոգևորւում, թարմանում, առոյգանում և ապրում էր.... Այդ յուշերը մեր ժողովրդի 19-րդ դարի ամբողջ պատմութիւնն էին, մի շքեղ ոդիսական, որի ստեղծողն ու ականատեսը՝ բռնած ձեզ հայրական ձեռքով տանում էր Հայաստանի խորշերն և եւրոպական պալատներն ու վեհաժողովները. հսկայական կալէյդոսկոպի մէջ դու տեսնում ես Սասուն ու Կիլիկիա, Սիփան ու Սիս, Մասիս ու Մոնբլան, Բզնունեաց ծով ու Բոսֆոր, գութան ու գեղջուկ, Սուլթան ու Բիսմարկ հայլն հայլն...: Հիացած էի նրա աննման յիշողութեան վրայ, մանրամասն ու գեղարուեստօրէն նկարագրում էր Մեռեալ ծովն ու օրինակ մի լեռ Սիւնեաց աշխարհում. յիշում էր 40-ական թուականների մարդկանց և անցքերի օրը նոյնիսկ...:

---

«...ես որոշ գործով շարունակ թափառում էի, և մի անգամ մի ամառայ ընթացքում Հայրիկին պատահեցի վեց տեղում — Թիֆլիս, Սանահին, Հաղարծին, Սևան, Գեղարդ և վերջապէս՝ Խոր-Վիրապ: Վերջին տեղում ներկայացայ Հայրիկին. ինձ տեսաւ թէ չէ ասաց. — „Ծո, դու կը հետևես ինձ ամեն տեղ, սատանայ, հայդէ, կորի գնա մօտէս“: Ես խոյն փախայ. բայց երեկոյեան կանչեց ինձ մօտը և սիրտս առաւ:

«—Ցդաս ասօր սիրտս եղած էր ուրիշ բանի մը առթիւ, բարկութիւնս քու վրադ թափեցի, քանզի գիտեմ, որ դու Հայրիկին կը սիրես ու անոր էն չես նեղանայ. ուրիշների վրայ չեմ կրնար բարկանալ. քեզ կը սիրեմ ատոր համար վստահ կը բարկանամ վրադ:

«Ցետոյ ծիծաղով վրայ բերեց.— „Ի՞նչ շատ մանկուգաս վանայ ջրտորտոզ (ջուրերու վրայ ելևէջող, երթևեկող) թռչուններին պէս. երանի՛ քեզ. երիտասարդ ես. չես յոգնիր. լաւ կանես. շրջիր, գնա՛ մանեակ ժողովուրդի մէջ. ինչ կայ չկայ՝ ան է. ան տեղ է, հոգին հետ, մեծ է ժողովուրդ ասածդ. մեծ սիրտ ունի ան. անոր հետ եղիր միշտ ու քու սիրտն ալ կը մեծնայ...“:

«Երբ վերջին անգամ Հայրիկին տեսայ, ցաւալիօրէն թոյլ էր ու գունատ։

«— Հիւանդ է Հայրիկը,— ասաց—շատ չի ապրի Հայրիկը. էհ շատ մարդ կայ պառկած հոդին տակ, վաղ ես ալ կը պառկիմ հոդին քնով. դուն կուգաս վանքը ու Հայրիկին շիրիմը կը տեսնես. կուլաս, չես լայ, այդ չեմ կրնար ըսել, բայց ան ժամանակ կը զգաս Հայրիկի կարօտը, հոս տեղ ուրիշը նստած կ'ըլլայ, ու չես կրնար Հայրիկին հետ խօսիլ ու ծիծաղիլ...։

«Անյոյս նախազգացումով բռնուած՝ ուշի ուշով դիտում էի նրան, արծուենի հայեացքը, ուր դեռ արև կար, հոգեթով ձայնը և հնագարեան մագաղաթի նման դեղին սուրբ աչը։ Զգում էի, որ վերջին անգամ եմ նրան տեսնում. մի երկար և խորին համբոյրով նրա աչն առայ և հեռացայ մռայլ ու տխուր։

«Ես հաւատացած եմ, որ մինչև մահ իմ հոգում անջինջ և անաղարտ կը մնայ նա, այդ մեծ, պատմական մարդը. երբէք չեմ կարող մոռանալ նրա հայեացքը, նրա ձայնը. այնպէս, այնպէս խորն է ազդել նա իմ հոգու վրայ»։ («Գիր եւ կեանք» ժողովածու. Թիֆլիս. 1911)։

## Ե.

## ԲԱՆԱՍՏԵՂԾ ՀԱՅՐԻԿԻ ՎԵՐՋԻՆ ՄՐՄՈՒՆՋՆԵՐԸ

Ամբողջ ազգի մը կրօնական, քաղաքական, կրթական և հանրային հոգսերով ծանրաբեռնուած Հայրապետը. էջմիածնի Վեհարանին մէջ, իւր գրասեղանին առջև կծկուած և կամ բազմոցի վրայ ծալապատիկ նստած՝ ծխելով ու խոկալով թափ ու թոռիչք կուտար իւր բանաստեղծական ապրումներուն և իւր կեանքի վերջին ջրջանին իսկ կապուած կը մնար գրչի և գրականութեան հետ։

Ութսուն տարիները անցուցած պատկառելի հասակն ու ծերութիւնը, ազգային և անձնական վիշտերն ու տառապանքները, հայրապետական բազմազբաղ գործերն ու յաճախակի ճամբորդութիւնները, առիթ ու ժամանակ չը տուին, որ նա «Պապիկ Թոռնիկ»ի նման երկեր գրէր։ Ռուսական դաժան բռնակալութիւնն ու

գրաքննութիւնը կաշկանդած էին բազմաթիւ զրագէտներու գրիչն ու սիրտը՝ Ռուսաստանի և Կովկասի մէջ։

Կորիւն Վարդապետը 1917-ի Հոկտեմբերի 29-ին ինձ ըսաւ հետեւեալը.— «Կարծեմ 1903-ի գարնան էր, որ օր մը Հայրիկի հետ Էջմիածնի լճափին նստած կը խօսէինք, երբ Մեծ Ներսէնին ըսաւ— Կուրիւճ Վարդապետ, այս ամեան կտակս կը գրեմ եւ իբր աւանդ կը թողում Հայոց ազգին։ Հայոց Հայրիկի կտակակատարը Հայոց ազգն ըլլալու է: Ալ չը շարունակեց, աչքերն ուղղեց լճակի ջինջ ջուրերուն և երկար ատեն լուռ մնաց։ Ցետոյ չիմացայ թէ արդեօք Հայրիկը գրե՞ց իր կտակը»։

Ես շատ հետաքրքրուեցայ Էջմիածնի մէջ, Հայրիկի կտակի մասին տեղեկութիւններ ձեռք բերելու համար, բայց միաբաններէն և ոչ մէկը որոշ բան մը չը կրցաւ ըսել։ Արդեօք Հայրիկը գրե՞ց իր կտակը, հաւանօրէն ոչ. վասնզի 1903-ի ամրան և աշնան ազգային եկեղեցական կալուածներու գրաւման ցարական հովարտակը և անոր յաջորդող դէպքերը հոգեկան այնքան ծանր կացութեան մատնեցին Մեծ Ներսէնին, որ դժուար թէ նա ժամանակ և տրամադրութիւն ունենար կտակ գրելու մասին մտածելու։

Սակայն ծերունազարդ բանաստեղծը, «Նուագող վշտից Հայբենեաց» Հայոց Հայրիկը կը պրկէր իւր քնարին լարերը և կը գրէր հոգեշունչ և ազգաշունչ տաղեակ մը քերթուածներ*), պարզ ու անպաճոյճ լեզուով, անարուեստ և անյանգ տաղաչափութեամբ մը, որ կը նմանայ «Հրաւիրակ Աւարայեաց»-ի հայկական չափին առջև։ Այդ քերթուածներուն մէջ մի՛ փնտռէք գեղարուեստական և շքեղ էջեր, լեզուական և տաղաչափական ներդաշնակութիւն, այլ որոնեցէք այնտեղ Ութսունամեայ Մեծ Ներսէնի Մեծ Սիրտը,

---

*) Այս քերթուածներէն քանիները հրատարակուեցան «Արարատ», «Բազմավէպ» և «Լումայ» ամսաթերթերուն մէջ 1900ական թուերուն։ Հեղինակի արտօնութեամբ Մաուի Պէյլէրեանը (Սօնէ) Հայոց Հայրիկի 9 կտոր քերթուածները ամփոփեց և հրատարակեց «Վերջալոյսի Ձայներ» անունով գրքոյկի մը մէջ, (Դահիրէ. Տպագր. Ս. Թորոսեան. 1901. էջ՝ 80) որուն վաճառման արդիւնքն ալ «հեղինակի հրամանաւ» յատկացուեցաւ «Արեւմիս» գրական և գեղարուեստական հանդէսին։

որուն ծալքերուն մէջ ի յայտ կուգան հեղինակի վսեմ ու հարազատ զգացումները՝ պարզ ու անփառունակ խօսքերով արտայայտուած։

Հետևեալներն են ահա Հայոց Հայրիկի հոգեշունչ մրմունջներն ու ազգաշունչ ձայները, որոնց թրթիռները այնքան անուշ կը հնչեն մեր ականջին։

ա) Ողբացող Զինուորին Ցիշատակը*).—Պարտաճանաչ զինուորը, կռուի դաշտին մէջ վիրաւոր ընկած՝ հոգեվարքի րոպէներուն կը հառաչէ.

«Ասին մարդիկ աշխարհաբան, Ո՛վ մարմնացեալ սիրոյ հրեշտակ,
Դայ ժամանակ մեծ ոսկեդար. Դու կոչեցիր զմարդիկ եղբայր,
Դահերն ամէն գան ի համբոյր Ցո՛ւր զմեզ քոյդ խաղաղութիւն
Ուխտեն դնել սուրն ի պատեան. Զոր չկարէ տալ մեզ աշխարհ»։

բ) Ողբացեալ Չանճեւի Ցիշատակին**).—Ռուսահայ մեծանուն բարերար Գրիգոր Չանշեանի յիշատակին ձօնուած այս քերթուածը շատ սիրուն և գողտրիկ էջեր ունի։ Մշեցի որբուհի Սօնէն երազին մէջ կը տեսնէ մահուան հրեշտակը, որ կը գուժէ Չանշեանի մահը։ Սօնէն կը յուզուի, կուլայ վասնզի իւր բարերարէն զատ չունի ան հոգատար մէկը։ Սակայն յանկարծ անոր անմեղ սիրտը կը շողայ յոյսի զգացումով.

«Սօնէն դարձաւ լուրջ և ըզգօն, Դէպի երկնուց կապոյտ վրան,
Սրբեց աչերն դարձուց ի վեր, Կեցցէ՛, գոչեց, Հայն ու հաւատ...»։

Սօնէն հարց կուտայ հրեշտակին թէ մինչև երբ ինքն ու իրեն նման շատերը ողբի և տառապանքի մէջ պիտի մնան. հրեշտակը այս յուսատու պատասխանը կուտայ.

«Մինչև տեսնաս աղեղն Այսպէս ասէ Տէր Զօրութեանց,
Նոյեան նշան և ծիածան Այլևս հաշտեալ եմ ես ընդ քեզ
Համար կապած երկնուց երես, Ո՛վ տառապեալդ Հայաստան,
Մի ծայր Մասիս, միւսն Արագած Որ զայն հիւսեց և ողբագրեց,
Եւ եսային հնչէ պատգամ. Ուժգին ելաց Հայոց Հայրիկ»։

գ) Իսահակայ զեներամ***).—Կրօնաշունչ քերթուած մը, որ կ՛արտայայտէ նաև հայրենիքի սէրը։

---

*) «Արարատ». 1902. էջ՝ 418։ **) «Գեղունի» (Վենետիկ). 1901. Յունիս. էջ՝ 25։ ***) «Արարատ». 1901. էջ՝ 133։

դ) Դիւցազն Կարինէի Յիշատակին.—*Էջնկթիմուրի արիւնալի և արհաւրալից արշաւանքի ժամանակ, հոգով մարմնով հերոս Մշեցի Կարինէ անունով հայուհի մը կը բարձրանայ Սասունի լեռները և դիւցազնական կռիւ կը մղէ արիւնկզակ թաթարներուն դէմ։ Հայոց Հայրիկը Հայ մայրերուն կը յանձնարարէ դիւցազնուհի Կարինէի օրինակով ընթանալ։*

ե) Բեթլէհէմի ծաղիկ*).—*Քիսուսի Մնունդն ու հովիւներու տեսիլը, Բեթլէհէմի և Երուսաղէմի յիշատակները, որոնք կրօնական անկեղծ շունչով մը ի յայտ կուգան այս քերթուածին մէջ։*

զ) Ի Յիշատակ Անձնատուր Նահատակութեան Ատմեանց Զօրավարաց**).—*Կրօնական և ազգային զգացումներով հիւսուած։*

է) Սանահնի Վանուց Ճննդուկ***).—*Պատմական և հինաւուրց Սանահնի վանքի կամարներուն տակ Հայրիկը կը ներշնչուի և կը գրէ այս քերթուածը։ Մեծ Ծերունին մանուկի մը անուշ և անմեղ զգացումներով առյուն զրոյցի կը բռնուի ճննդուկի մը հետ, որ եւմուտ կ'ընէը Սանահնի վանքի այն սենեակը, ուր իջած էը Հայոց Հայրիկը։*

ը) Ողբացող Խորենացին ի ՅԱսիա եւ յՕտական****).—*Պատմահայր և քերթողահայր Մովսէս Խորենացին նախ ուխտի և այցի կ'երթայ յԱշտիշատ՝ Ս. Սահակ Պարթևի շիրմին և ապա Օշական գալով կը համբուրէ Ս. Մեսրոպ Մաշտոցի անգիր ու անշուք տապանաքարը։*

թ) Հայր Ալիշանի Յիշատակին*****) (արձակ).—*Հայրենախօս բանաստեղծը՝ նոյն ինքն հայրենակարօտ Հայր Ղեւոնդ Ալիշանը 1901-ի Նոյեմբերի 22-ին Վենետիկի Ս. Ղազարի վանքի մէջ կ'աւանդէը իւր պայծառ հոգին, որ կարծես կը սլանար դէպի Հայոց Աշխարհն ու կը հառաչէը։*

«Ծեր Նահապետիդ տուր կակուղ հողիկ
Որ զքեզ պինդ սիրեց Հայոց Աշխարհիկ...»:

*Հայ ժողովուրդը վշտի և յարգանքի խորին զգացումներով լեցուած՝ ամենուրեք հոգեհանգիստներ և սգահանդէսներ կազմակերպեց Նահապետ Ալիշանի յիշատակին։*

---

*) «Արարատ». 1901 էջ՝ 3։ **) Անդ. 1902. էջ՝ 108։ ***) Անդ. 1901 էջ՝ 597։ ****) Անդ. 1902. էջ՝ 579։ *****) «Բազմավէպ». 1902. էջ՝ 349—354։

Սակայն ահա, Կովկասի մէջ, խումբ մը պահպանողականներ և քանի մը կղերականներ հարց բարձրացուցին թէ Հայ կաթոլիկ Ալիշանի յիշատակին Հայ լուսաւորչական եկեղեցիներուն մէջ հոգեհանգիստ կատարելը սրբապղծութիւն է։ Կովկասահայ ազատամիտ թերթերը խիստ քննադատութեան և դատապարտութեան խօսքեր ուղղեցին յարանուանական և դաւանական անմիտ հարցեր յարուցանող այն անձերուն, որոնք Հայ լուսաւորչական եկեղեցւոյ դարաւոր իրաւունքները պաշտպանելու յատկնութիւնն ունէին կարծելով, որ Հայր Ալիշանի յիշատակին կատարուած հոգեհանգիստները պիտի խախտէին դիրքն ու հեղինակութիւնը «Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ» որուն Հայրապետը՝ Հայոց Հայրիկը ոչ միայն կը հեգնէր ու կ՚արհամարհէր այդ դաւանական տգեղ վերաբերմունքը, այլև կը կարգադրէր, որ ամենուրեք հոգեհանգիստներ կատարուին Հայր Ալիշանի յիշատակին։ Իսկ ինքն ալ՝ Վասպուրականի Արծիւը՝ Աւարայրի Բլբուլի՝ Հայր Ալիշանի Յիշատակին այս տողերը կը գրէր.

«...Ո՞յր էր այդ մահաստուեր դագաղ. ո՛վ էր որ քաղցր ի քուն ննջէր այդ տախտակին մէջ. աւաղ Հայր Ալիշանն էր այն, Այլևս լռած էր այն խօսուն բանաստեղծ լեզուն. փակուած էին աչկունք, որ միշտ հայէր դէպ յարև Հայոց աշխարհ. իւր վաթսունամեայ աշխատանոցի՝ Սիրելի խցէն հանուած, ուր դեռ ապրիլ կուզէր Մաթուսաղային չափ և գրել կուզէր. չէր պիտոյ նմա հանգիստ երկնից օթևան, այլ միայն իւր խցիկն, իւր խցիկն թուղթ ու գրիչ։ Այս էր միակ կեանք և երջանկութիւն Հայր Ալիշանին և ուրիշ ոչինչ։

«...Բան առ Ձեզ ուղղելով, ո՛վ Մխիթարեան ուխտ. ո՛վ կարող է բառնալ կամ փարատել Ձեր թախծագին սուգն ու տրտմութիւն, ...Հարցանում է Հայոց Հայրիկ, ուր թաղիցիք հայրենեաց սիրահար Հայր Ալիշան, դուք կարծում էք թէ նա միշտ Ձեր մէջն էր, կամ էր և չէր։ Ոչ նորա հոգին վերացեալ շրջում էր Հայոց Աշխարհ. չ՚թողուց բան մի որ չ՚երգեց, սարն ու ձոր, դաշտն ու հովիտ, ծառն ու ծաղիկ, դրախտի գետեր, բիւրականի աղբերակունք։ Անցաւ հազար հազար աւերակներով, դառնապէս ելաց և ողբագրեց, մտաւ Աւարայրի, Ջաւարշանայ դաշտ, մի առ մի համբուրեց Վարդանանց քաջերուն անմահ ճակատներ։ Աւաղ այդ ամէն թռուցեալ ոգւով երևակայութեամբ կատարեց, ո՛հ չտեսաւ աչքով

Հայոց Հայրենիք, և չը կոխեց ոտքով հայրենի հող, զոր խանդակաթ ոգւով երգում էր. „Ես այն ճողճ ու ջուր սրտով եմ սիրել“։ Մերթ ևս խոնջած նահապետ իննչում էր Մասեաց շուքին ու հովանեաց տակ։ Ո՞ տայր նմա որ իսկապէս անդ իննչէր։ ...Ի՞նչ էր այն քօղ որ ծածկեց նորա արծուատես աչկունք. ինչ էր այն կապ որ կաշկանդեց նորա ազատ ոտք. կարօտով երգեց Հայոց Աշխարհ. կարօտով մեռաւ... չ'կամեցաւ կամ արդեօք չ'կարաց գէթ մի անգամ ողջագուրել իւր նազելին կամ տեսնել այդ հեռաւոր անձկալոյն երես։ Ի՞նչ էր այս հակասութիւն։ ...Արդեօք դուք այնպէս համարում էք որ Հայր Ալիշան յանձն իւր բաժանեալ էր. ոգին ի Հայաստան, սիրտն ի Հայաստան, սէրն ի Հայաստան, բովանդակ տենչանք Հայրենիք՝ Հայրենիք, իսկ իւր հաւատն ու կրօն դէպ ի Հռովմ, դէպ ի Հռոմ, և բան զամէն միաբանական ուխտ գերազանց ջերմեռանդագոյն. Եւ աստ ուրեմն դուք տատամսելով ի միտս գուցէ երկդաւան համարիք զՀայր Ալիշան. Այդ ոչինչ փոյթ է ինձ, զի հաւատն ազատ է և ես չը կամիմ շօշափել հաւատոյ խնդիր. Բայց թէ դուք տակաւին մեղաւոր դատիք զԱլիշան, ես Քրիստոսի դատաւորին բան յառաջ բերելով ասեմ. „Թողեալ լիցին նմա մեղք իւր, զի յոյժ սիրեաց“ հայրենի աշխարհ. Այո բովանդակ իւր կեանքով սիրեց Հայոց Հայրենիք և մեռաւ, իւր անուան յիշատակն անմահացած է։

«Կուժ մի ջուր երասխայ դրախտի գետէն, մի բուռ հող Մասիսի ծոցէն պիտի յղեմ Ձեզ, ով Մխիթարեան Ուխտ։ Դրախտի գետի ջուրը սրսկեցէք Հայր Ալիշանի գերեզմանին վրայ. իսկ մի բուռ հող փոքրիկ սափորիկով դրէք նորա շիրիմին քովիկ. այդ Թող լինի միայն նուիրական Ցիշատակ Հայր Ալիշանին։

«Ուխտաւնամեայ Նահապետէն առ Նահապետն ձօնեալ, որ բան զիս վաղ մեռաւ. Տէր այսպէս կամեցաւ որ Հայրիկը ողջ մնար. զի պիտոյ էր մի այլ Նահապետ, որ ողբայր իւր սիրեցեալ Նահապետին մահ»։

ժ) Իմ Ուխտ Թադէի Վանուց*).—Հայոց Հայրիկը երևակայութեամբ կը սլանար դէպի Արտազի գաւառը և պատմական ու հի-

*) «Ազատամ». 1902. էջ 236։

նաւուրց Ս. Թադէի վանքին մէջ զրոյցի կը բռնուի Թադէոս Առաքեալին հետ, որ դժգոհութեամբ կը յարէ—«Ո՞վ է հնարեր այդ օտար բան, Աթոռ, Աթոռ և Մայր Աթոռ, Վեհարան և Վեհափառ... Խաչի երկրէն ելայ եկայ, ես լոյս բերի Հայաստանին... քարոզեցի Աւետարան... Աստուած հաննց Գրիգոր Մշակ, որ աճեցոյց իմ ցանած սերմ... Աւաղ ես արդ անուն չունիմ, զիս մոռացել է Հայոց Ազգ, Էջմիածին չէն ու պայծառ, Թադէի վանք աւեր դարձել...»։

Հայոց Հայրիկը՝ նոյն ինքն Էջմիածնի Մայր Աթոռի Աթոռակալը և Վեհարանի Ծաղկեայ Դահլիճի Գահին վրայ բազմած Վեհափառը, պարզ ու համարձակ կերպով կ'անտեսէր աթոռներն ու գահերը, վեհարաններն ու դահլիճները, որոնց պաշտօնական և կաշկանդող մթնոլորտէն յաճախ խոյս կուտար և առաքեալի կամ քարոյախօսի մը նման միշտ կը ջանար ժողովուրդին մէջ մնալ, վասնզի «ժողովուրդը մեծ է, անոր սիրտը լայն է...» կ'ըսէր. Նա մեծ սիրով ու հաճոյքով կը նստէր գիւղական խրճիթներու մէջ ու կը զրուցէր գեղջուկներու հետ, մինչ Վեհարանին մէջ, Գահին վրայ բազմելով պաշտօնական խօսակցութիւններէն կը ձանձրանար։ Այդպէս էր նա. պալատն ու խրճիթը, թագաւորն ու գեղջուկը անոր աչքին առջև հաւասար էին։ Ռուսաց «ամենազօր» Նիկոլայ Բ. Ցարի վրայ նա հեգնանքով կը նայէր։ Շիրվանզադէն շատ ճիշտ նկատած է որ նա՝ Հայրիկը—«Ոչ մի նշանակութիւն չէր տալիս կայսեր հետ իր տեսնուելուն։ Խօսում էր Նիկոլայ Բ-ի մասին իբրև մի հասարակ պատանու վերաբերմամբ» և լսած էր—«Պզտիկ մարդ մըն է, կայսերական շուք չունի»։ «Ձկար նրա համար ոչ իշխան ոչ ծառայ—կը շարունակէ Շիրվանզադէն—ոչ հարուստ ոչ ալ աղքատ, ամենքը միևնոյն արժէքն ունէին նրա աչքում։ Այդ տեսակէտից նա կատարեալ բանասեղծ էր։ Միայն մի բանի առաջ էր խոնարհում նրա անկախ ու հպարտ հոգին—ժողովրդի։ Ցիշում եմ այն պահը, երբ Ներսէսեան դպրոցի երգեցիկ խումբը նրա առջև երգեց Վանի մի ինչ որ ժողովրդական երգ։ Պէտք է տեսնէիք Խրիմեանին այդ պահին։ Այդ հսկայ մարդը ժողովրդական վշտալի երգի տպաւորութեամբ կծկուեց, փոքրացաւ։ Նրա նահապետական պայծառ դէմքը մռայլուեց և նրա կրծքից դուրս թռաւ մի ծանր, երկարատև հառաչանք։ Եւ թուաց ինձ այդ պահին, որ նա ինքը հայ ժո-

ղովուրդն է իր դարաւոր տառապանքներով։

«—Անտակտ էր,—ասում և կրկնում են Խրիմեան Հայրիկի հակառակորդները։

«Այո՛, անտակտ էր իբրև Կաթողիկոս, բայց մեծ էր Խրիմեանը նոյնիսկ իր անտակտութեան մէջ»*)։

ժա) Թագաւորաց ժողով**).—Հայոց Հայրիկը 1900-ին գրեց այս քերթուածը և զայն յանձնելով իրեն այցելող Տօնապետեանին կ'ըսէ—«Այս այժմ կարող չէ լոյս տեսնել մեր օրհնեալ Ռուսիայում, առ հետդ, գուցէ հրատարակես զայն մի օր ձեր ազատ Անգլիայում»։ Տօնապետեանը կը ստանայ ձեռագիրը և լոյս կ'ընծայէ մեծ պատերազմի ընթացքին, 1915-ին, երբ աշխարհի տէրերն ու թագաւորները քուն ու հանգիստ չ'ունէին, մինչ ժողովուրդներն ու բանակները, արեւելքէն արեւմուտք իրար կը ջարդէին և մարդկային արիւնը կը հոսէր ամենուրեք։

Խրիմեանը մեծ մարգարէի մը նման գուշակած էր համաշխարհային մեծ պատերազմը։ Հայ Մարգարէն աշխարհի թագաւորներն ու վեհապետները ի մի հաւաքելով ժողով մը կը կազմէ—Թագաւորաց ժողովն է այդ, ուր աշխարհի տէրերը կը խօսին ու կը վիճեն։ Ահա «մեծ տիրապետն ովկիանու» Անգլիոյ Վեհապետը, որ ցոյց կուտայ իւր «ահեղ նաւատորմիղը»։ Գերմանիոյ «խրոխտ և ինքնապարծ կայսր» Վիլհելմ Բ.ը կը մատնանշէ իւր «կրթեալ զինուորութիւն, անպարտելի ահեղ բանակ» Կրուպի թնդանօթները։ Ֆրանսայի Հանրապետութեան Նախագահը կը շեշտէ, որ իւր ժողովուրդը քուն ու հանգիստ չ'ունի, մինչև որ Ալզաս-Լօրէնի վէրքը չը բուժուի։ Աւստրիոյ զառամեալ կայսր Եօզէֆը կը յայտնէ, որ իւր երկիրը բազմատեսակ ազգերու և ցեղերու «այլալեզու խառնուրդ»

---

*) «Հայրենիք» ամսագիր. 1924. Թիւ՝ 10. էջ՝ 35։

**) Այս երկար քերթուածը առաջին անգամ լոյս տեսաւ Լոնդոնի մէջ, Տօնապետեանի հրատարակութեամբ, որուն մէջ կայ նաև անգլիերէն թարգմանութիւնը (The Meeting of the Kings, by Khrimian, the Katholicos of all armenians, London, 1915)։ Պատերազմի ընթացքին այս քերթուածը լոյս տեսաւ նաև Տիգրան Նազարեանի «Տարազ» ամսաթերթին մէջ, իսկ տիկին Իսկուհի Խրիմեանն ալ Թիֆլիսի մէջ, 1919-ին, առանձին գրքոյկով լոյս ընծայեց «Թագաւորաց ժողով»ը։

մըն է, խոստովանելով թէ իւր իշխանութիւնը «անկայուն է և կարճատև», աւելցնելով նաև, որ «մէկ բռնութիւնը միշտ ուրիշ բռնութիւն միայն կրնայ ծնիլ»։ Հերթը Ռուսիոյ՝ «Հիւսիսային Մեծ Գետութեան Դահակալ» ցարին է, որ կը վախնայ Չինաստանի ահաւոր ուժէն և Ճաբոնի արագ քաղաքակրթութենէն։ Ահա և «Հիւանդ Մարդ»ը՝ Կարմիր Գազան Սուլթան Համիտը, որ իւր կուտախնձոր դարձած երկրի ապահովութիւնը կը տեսնէ արևմուտքի պետութեանց ներքին դաւերու և անհամաձայնութեանց մէջ։ Հայրիկը վերջին խօսքը տուած է Բելճիքայի Ալբերտ թագաւորին, որ վեհապետներուն կ'ըսէ թէ – «Ձեր գանձ, աթոռ և տէրութիւն» հաւատարիմ ժողովուրդն է—բուն պատուանդանը, որ պէտք է «հաստատ պահել»։ Ապա փոքրիկ Բելճիքայի Վեհապետը խաղաղութեան հրաւէրը կը կարդայ .

«...Խաղաղութիւն աշխարհին,
Խաղաղութիւն թագաւորաց,
Խաղաղութիւն ժողովուրդին.
Հերիք այս չափ մեծութեան տենչ,
Բաւ և շատ է, սահման դրէք.
Հերիք անթիւ զէնք ու բանակ,
Ազգեր աղջոյն հեծեն ողորմ
Բողոքում են մինչև յերկին...
Բաւ է դրէք սուրն
ի պատեան,
Ողջունեցէք խաղաղութիւն»։

Թէև վեհապետները ոտքի կանգնած կը բացականչեն—«Կեցցէ... Բելճիոյ Թագ, նա բան խօսեց ճշմարտութեամբ», բայց Խրիմեանը մարգարէական ոգով լեցուած՝ աշխարհի և վեհապետներու խաղաղասիրութեան մասին յուսահատ է և ի խորոց սրտի կը գոչէ.

«Հայոց Հայրիկ գրեց այս բան,
Ափսո՜ս, ափսո՜ս աշխատութեան...»։

Հայրիկը 1900-ին երբ կը գրէր «Թագաւորաց Թագով»ը, կը գուշակէր նաև մեծ պատերազմը՝ Մեծ Ծերունին, արդեօք, երբևիցէ գուշակեց նաև, որ այդ նոյն պատերազմին Հայ ժողովուրդը մէկ մլիոն անմեղ զոհեր պիտի տար և իւր պատմական ու սեփական հայրենիքէն զրկուելով տարագիր ու գաղթական բազմութիւնները աշխարհի չորս կողմերը ցրուելով, հայրենազուրկ և տառապալից կեանք մը պիտի վարէին. եթէ Հայոց Հայրիկը գուշակէր իւր ժո-

ղովուրդի այս ահաւոր և աննախընթաց աղէտը, նա «Թագաւորաց Ժողով»էն յետոյ նոր «Հայգոյժ» մըն ալ պիտի գրէը իւր արցունքով...—«Ողբամ զքեզ, Հայոց աշխարհ...»

ժբ) Խաղաղութեան Դաշնագիր*). — Հայրիկը 1901-ին գրեց «Խաղաղութեան Դաշնագիր» քերթուածը, որ բնական շարունակութիւնն է «Թագաւորաց Ժողով»ին։ Աշխարհի տէրերն ու վեհապետները նորէն ժողովի կը նստին, խաղաղութեան դաշնագիր մը ստորագրելու համար։ Պետութիւնները կը խոստովանին որ «ի կռիւ, ի կռիւ ճակատամարտ»ներու մէջ ուժաթափ եղած են և այժմ «խաղաղութիւն, խաղաղութիւն» կ'ուզեն, ու կը կանչեն—«Օ՛ն ամփոփենք սուրն ի պատեան, զէնք և զինուորը ի բաց դիցեն և գահերն զիրար ողջունելով՝ խաղաղութեան դաշն կընքեմք...»։ Բայց ահա—

«Յանկարծ հնչից շէփորն ահեղ,
Հրաւէր ի կռիւ ճակատամարտ...
Վրդովեցան Ատենակալք,
Աւ ի խուճապ և ի տագնապ,
Կործանեցան դիւան և կահ.
Եւ փակեցաւ մեծ ատեան,
Վերցաւ հրեշտակ խաղաղութեան,
Իջաւ Արէս ի կռուոյ դաշտ,
Ատենակալք բան փոխեցին,
Ի սուր, ի սուր գոչեցին...»։

Պատերազմ...՝ Հայոց Հայրիկի «Խաղաղութեան Դաշնագիր» քերթուածին, 27 տարի յետոյ՝ 1928-ին պիտի յաջորդէը Ամերիկայի Արտաքին Գործոց Նախարար Քէլլոկի ծանօթ դաշնագիրը—պատերազմն օրէնքէ դուրս...՝ խաղաղութեան նոր դաշնագիր մը, որուն տակ ստորագրող պետութիւնները սակայն օրը օրին կը սպառազինուին և օր մը Հայոց Հայրիկի խօսքերով պիտի գոչեն.

«Հրաւէր ի կռիւ ճակատամարտ... ի սուր, ի սուր...»։

Ահա այն 12 քերթուածները, որոնք կը հնչեցնեն ծրունազարդ բանաստեղծ Հայրիկի վերջին մրմունջները։ Վերջալոյսի ձայներն են այդ մէկ քան զմիւս պարզ ու անարուեստ քերթուածները, որոնց մէջ կրօնական, ազգային և հայրենասիրական զգացումներու ջերմ ու անուշ շունչ մը կայ, հարազատ ձայն մը, որ բարձր ու հուժկու հնչեց վան-վաստուրականէն վարագայ արծուաբնակ լերան գագաթէն ու մարեցաւ, Արարատեան Դաշտին մէջ, Մասիսի ստորոտներու և Արաքսի ափերուն վրայ, Էջմիածնի կամարներուն տակ...։

*) «Արարատ» ամսագիր. 1901. էջ՝ 226—227։

## Զ.

# ՇԻՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐՆ ՈՒ ՆՈՐՈԳՈՒԹԻՒՆՆԵՐԸ

*Հայ ժողովուրդը օրքան որ սիրով ու հիացմունքով կը յիշէ Հայոց Հայրիկի պարզ ու անուշ գրիչը և քարոզներն ու հզօր, ազդու խօսքերը, նոյնքան ալ Խրիմեանը միշտ յիշելի կը մնայ ու կ'անմահանայ իբր շինարար ու գործնական ազգային դէմք մը, որ իւր վարդապետութեան՝ եպիտասարդութեան տարիներէն մինչև խոր ծերութիւնը զբաղեցաւ ազգային և հանրօգուտ շինարարութիւններով և նորոգութիւններով. Վան-Վասպուրականի, Տարօն-Տուրուբերանի և Արարատեան Աշխարհի մէջ անոր ջանքերու շնորհիւ կառուցուեցան գիւղական եկեղեցիներ, դպրոցներ, թանգարաններ, գրադարաններ, ջրաղացներ, տուներ, նորոգուեցան վանքեր և պատմական յիշատակարաններ, տնտեսութեան և հողագործութեան հետ կապ ունեցող պարզ շէնքեր և այլն.*

*Իւր կաթուղիկոսութեան 14 տարիներու ընթացքին, միայն Արարատեան Աշխարհի և մասնաւորապէս Էջմիածնի մէջ Հայրիկը կատարեց շինարարական այնպիսի գործեր, որոնք պատիւ կը բերեն իւր անուան և կ'անմահացնեն իւր յիշատակը.*

*Մեծանուն գիտնական և հայագէտ Պրոճ. Նիկոլայ Մառը, 1890-ական թուերուն երբ կը ձեռնարկէր Բագրատունեաց պատմական մայրաքաղաքի՝ Անիի պեղումներուն, Հայոց Հայրիկը բարոյական և նիւթական լայն աջակցութիւն ցոյց կուտար վաստակաւոր գիտնականին, կը քաջալերէր անոր աշխատանքները և Ղարաքաղցի Միքայէլ Վարդապետին*) ալ կը դրկէր Անի, իբր վանահայր և հսկիչ. Հայրիկը մասնաւոր գրութեամբ մը կը յանձնարարէր Միքայէլ Վարդապետին, որ բանիմաց գիւղացիներէն կազմել տար յանձնախումբ մը, Շիրակի շրջանի պատմական վանքերու*

*) Միքայէլ Վարդապետը ամբողջ 25 տարի ապրեցաւ Անիի աւերակներուն մէջ իբրև վանահայր և հսկիչ. 1918-ի գարնան, երբ տաճիկները գրաւեցին ամբողջ Շիրակը (նաև Անին) Միքայէլ Վրդ.ը եկաւ Էջմիածին, ուր և մեռաւ նոյն թուի Յուլիսին. Բարի և պարզ մարդ մըն էր, որ այնքան սիրով ու հաճոյքով կը հիւրընկալէր Անիի ամէն ազգի այցելուները.

հին յիշատակարանները պահպանելու համար, Օշականի մէջ, Ս. Մեսրոպ Մաշտոցի նշխարներու վրայ կառուցուած եկեղեցոյ պատին տակ թաղուած երախտաւոր Հայ Իշխան Վահան Ամատունիի շիրմին վրայ Հայրիկը շինել տուած է սիրուն յուշարձան մը.

Սանահնի, Հաղբատի, Հաղարծնի, Սևանայ, Խոր-Վիրապի, Սաղմոսավանքի և այլ պատմական վանքերու տաճարներն ու յարակից շէնքերը Հայրիկը նորոգել տուաւ, իսկ ծախսերը հայթայթեց Կովկասահայ հարուստներէն և կամ էջմիածնի գանձարանէն. Երեմիա Եպիս. Գալստեանի հանգանակած գումարներով Հայրիկը էջմիածնին մօտիկ Հռիփսիմէի գեղակերտ տաճարը նորոգեց և յարակից երկյարկանի քարաշէնքերը կառուցել տուաւ. Գայիանէի վանքի բանկին մէջ Հայրիկը շինել տուաւ միայարկ շինութիւն մը, որբանոցի համար, իսկ էջմիածնի Ներսիսեան լճակի ափին ալ 16 սենեակներով հիւրանոց մը, որ Հայրիկի անունով կը կոչուի Հայրիկապատ. Հայրիկի շինարարութեանց յիշատակները ի յայտ կուգան մանաւանդ էջմիածնի պարիսպներէն ներս. Վեհարանի կողքին կը բարձրանայ սրբատաշ քարերով շինուած Հայրիկեան Թանգարանը, ուր տասնեակ տարիներու ընթացքին հաւաքուած ու դասաւորուած են պատմական, հնագիտական, ազգագրական, գեղարուեստական և այլն ամէն տեսակ իրեր, արձանագրութիւններ, նկարներ, զարդեր, հին դրամներ, պատմական դրօշակներ, ամաններ, զէնքեր, արծաթ և ոսկի զարդարանքներ, տարազներ և այլն և այլն, որոնք բոլորն ալ խնամքով և անձեռնմխելի կը պահուին զատ զատ դարակներու և պահարաններու մէջ. Հայրիկեան Թանգարանի դասաւորման և ճոխացման համար շատ գնահատելի աշխատանքներ կատարած են Գարեգին Արքիպ. Ծովսէփեան, Խաչիկ Վրդ. Դադեան և ձեմարանի ուսուցիչ Սեներքերիմ Տէր Յակոբեանը. Թանգարանի քանի մը պահարաններու մէջ խնամքով կը պահուին Հայրիկի համրիչները, ժամացոյց, ծխամօրճներ, ծխախոտի տուփ, սեղանի թանկագին սպասներ, ամանեղէններ, բաժակներ և այլն և այլն: Ձամբորդութեանց կամ զանազան առթիւ ժողովուրդին կողմէ Հայրիկին նուիրուած թանգաբժէք կամ պարզ՝ բայց յիշատակալից իրերէն յիշենք՝ աղ ու հացի արծաթեայ, տախտակեայ և կամ ցորենի ցօղուններով շինուած ափսէներ, փոքրիկ ոսկեայ

գուեթան, արծաթ բաժակները, „Ադծուի Վասպուրական“ (ոսկի) և մինչև անգամ այն փոս ամանը, որուն մէջ Հայրիկը թանապուր կամ մածուն կուտէր։

Թանգարանապետ Գարեգին Արքեպ. Յովսէփեանի օգնականն էի ես 1919—1920 թուերուն և ամէն օր քանի մը ժամ կ'աշխատէի թանգարանի գործերով. Արտաստմանէն ու Հայաստանի զանազան կողմերէն էջմիածին այցելող հայերը երբ թանգարան կուգային ես անհրաժեշտ ծանօթութիւններ կուտայի և ապա կ'առաջնորդէի դէպի Հայրիկի իրերով ծանրաբեռնուած պահարանները, որոնց առջև կանգնած այցելուները յուզմունքով և խոր հետաքրքրութեամբ կը դիտէին Հայոց Հայրիկի առօրեայ կեանքի հետ կապուած իրերն ու առարկաները. Այցելուներէն շատ շատերը կը յիշեմ—մանաւանդ Արարատեան Դաշտի գիւղացիները—որոնք սիրուն ու արտագրաւ յուշեր կը պատմէին Հայրիկի մասին, Հայրիկի շինարարութեանց գեղեցիկ և պատմական յիշատակարաններէն մէկն է ահա էջմիածնի թանգարանը։

Արդէն իւր կարգին յիշատակեր ենք, որ Զուարթնոցի պեղումները առաւելապէս Հայոց Հայրիկի բարոյական ու նիւթական աջակցութեամբ և Տէր Խաչիկ Վարդապետի «անդուլ աշխատութեամբ» կատարուեցան։

Հայրիկը էջմիածնի շրջապարիսպէն ներս շինել տուաւ նաև Սինոդի նոր շէնքը, փուռ, սառցատուն, բաղնիք, խոհանոց և այլն. Հայրիկի յամառ ջանքերուն շնորհիւ էջմիածնի վանքն ունեցաւ ելեքտրական ընտիր մեքնաշարժ մը, որ ոչ միայն առատ լուսաւորութիւն կուտար վանական հաստատութեանց, այլև վանքի տպարանի մեքենաները ելեքտրականութեամբ կ'աշխատէին. Ծիշնենք նաև, որ Հայրիկի կաթուղիկոսութեան ընթացքին էջմիածնի տնտեսութիւնը զգալի յառաջդիմութիւն մը ունեցաւ, շնորհիւ վանքի գիւղատնտես Կոստանդին Մելիք-Շահնազարեանի*) ջանքերուն. Գիւղատնտեսական բազմատեսակ մեքենաները զարկ տուին վանքի տըն-

*) Գրական ծածկանունով Տամպլաչի Խաչաց, որը մանկական գրականութեան և գիւղատնտեսութեան մասին հրատարակած է քանի մը գրքոյկներ։ Աշխատակցած է Կովկասի հայ թերթերուն։ Այժմ կ'ապրի Հայաստան։

տեսական զարգացման։ Ներսիսեան անտառի մէկ մասը յատկացուեցաւ թթիւնիներու մշակութեան. տնկուեցան մօտ 20,000 թթենիներ, շերամապահութեան համար։ Անտառին մէջ Հայրիկը շինել տուաւ շերամատուն մը։ Հայրիկը կառուցել պիտի տար նաև հայկական ոճով մատենադարան մը և վեհարան, սակայն եկեղեցական կալուածներու գրաւման և Հայ-Թրքական ընդհարումներու դէպքերը արգելք հանդիսացան այդ ձեռնարկներուն։ Անոր մահէն յետոյ միայն՝ Մատթէոս Իզմիրլեան և Գէորգ Սուրէնեան կաթուղիկոսներու օրով՝ կառուցուեցան էջմիածնի մատենադարանն ու վեհարանը (վերջինս կիսակատար) ինչպէս նաև Ճեմարանի բակին մէջ՝ մանկավարժական շէնքն ու աստղադիտարանը։ Մատենադարանի կառուցումը կատարուեցաւ Մագիստրոս Մեսրոպ Եպիսկոպոսի հսկողութեամբ և գնահատելի ջանքերով, իսկ ծախսերը հոգաց սիւնեցի հարուստ Դաւիթ Աւան-Իւզբաշեանը։

Հայրիկի կատարած այս բոլոր շինարարութեանց և նորոգութեանց մէջ միայն էջմիածնի Մայր Տաճարի ներքին նորոգութիւնն էր, որ ծնունդ տուաւ քննադատութեանց և խռովայոյզ պատմութեանց։ Պատմենք իրողութիւնը։ Էջմիածնի տաճարի ներքին պատերը պարսկական ոճով ծաղկանկարուած էին։ Դարերու ընթացքին տաճարի ներքին ծեփը ճաքճքած և կամ խոնաւութեան պատճառով տեղ տեղ թափած, իսկ ծաղկանկարներու մեծագոյն մասն ալ եղծուած էր։ Մասնագէտներու և կարգ մը բանիմաց մարդոց հետ խորհրդակցելէ յետոյ Հայրիկը կ'որոշէ փճացած ծեփերը վար առնել տալ և անոնց փոխարէն նոր ծեփով ճերմակցնել պատերը։ Այս աշխատանքը վերջանալէ յետոյ, տաճարի պատերը պիտի զարդարուէին հայկական ոճի զարդանկարներով։ Մասնագէտներու հսկողութեամբ հին ծեփերը վար կ'առնուին պատերէն։ Ծեփերու նկաբազարդ մեծ կտորները խնամքով կը փոխադրուին Թանգարան (ուր կը պահուին ցարդ)։ Կաթուղիկէի ներքնամասի, կամարներու մէջի և քանի մը տեղերու ամուր ծեփերն ու անաղարտ ծաղկանկարները նոյնութեամբ կը պահուին իբրև հնագոյն և գեղարուեստական արժէքներ։

Եւ ահա Խրիմեանի թշնամիներն ու հակառակորդները զայն վարկաբեկելու համար նոր խաչակրութիւն մը կազմեցին, ի լուր

հանրութեան յայտարարելով, որ Խրիմեանը ոչնչացուց Էջմիածնի տաճարի ներքին պատերու զարդանկարները, որ Հայրիկի այդ արարքը «հնախօսական արժէքներու հանդէպ յարգանքի պակասութիւն» էր, որ Խրիմեանը այս է, այն է և այլն։ Շշուկները, փսփսուքները, բամբասանքները ծայր առին նաև Էջմիածնի միաբանութեան մէջ։ Թիֆլիսի քանի մը Հայ թերթերը – մասնաւորապէս Համբ. Առաքելեանի «Մշակ»ը — անտեղի և անարդար յարձակումներով քննադատեցին Հայրիկի այդ արարքը։ Այն ճարտարապետներն ու մասնագէտները, որոնք Հայրիկին խորհուրդ տուած էին տաճարի ներքին նորոգութիւնը կատարելու, անոնք բոլորն ալ մէկդի քաշուեցան և Հայոց Հայրիկը դարձաւ քաւութեան նոխազը։

Հանդուցեալ Ծովհաննէս Թումանեանին, 1916-ի գարնան, Թիֆլիսի մէջ օր մը հարցուցի թէ — Խրիմեանը մեղք ու յանցանք ունի՞ Էջմիածնի տաճարի ներքին պատերու ծաղկանկարներու ոչնչացման գործերուն մէջ։ Անոր մասին եղած քննադատութիւնները արդարացի՞ են։

Թումանեանը պատասխանեց.

«— Ես էլ առաջ համոզուած էի, որ Հայրիկը մեղաւոր է, բայց յետոյ, թէ Էջմիածնում և թէ Թիֆլիսում հետաքրքրուեցի և իմացայ, որ իսկական մեղաւորը ոչ թէ Խրիմեանն է, այլ նրան խորհուրդ տուող մասնագէտները, որոնք քաջութիւն չ'ունեցան հրապարակով բացատրութիւն տալ և պարզել այդ հարցը։ Ծակայն էս էլ ասեմ, որ Հայրիկի յայտնի և անյայտ թշնամիները էդ հարցը մատի փաթաթան շինեցին և բոլորովին զուր տեղ աղմուկ հանեցին։ Մի օր ես Թիֆլիսում Հայրիկին ասացի.

«— Վեհափառ Հայրիկ, Մայր տաճարի ծեփերի և ծաղկանկարների մասին դիւանատան կողմից մի պաշտօնական բացատրութիւն եթէ տալու լինէք, էս աղմուկը կը վերջանայ։

«— Պարոն Թումանեան— ասաց Հայրիկը— յիսուն տարիներէ ի վեր իմ անձիս և գործիս շուրջ միշտ աղմուկ և քննադատութիւն կայ, եթէ ես այդ բոլորին բացատրութիւն և պատասխան տայի, վստահ եղիր, որ Հայրիկ ըլլալէ պիտի դադրէի։ Իսկ այս հարցին առթիւ քեզի խորհուրդ կուտամ, որ երթաս ու երգես։

...Թող վայեց բուեր, ագռաւներ աւերի հազար հաւ ու ճիւ,
Ամեներից մեծը, ամեներց բարձրը է ազատ Արծիւ....

«Երկուքս միասին սրտանց ծիծաղեցինք. ես հիացած էի նրա յայնասրտութեան վրայ. եւ իսկապէս Խրիմեանի թշնամիները բոլորն էլ վայող բուեր և կռկռացող ագռաւներ էին, որոնցից և ոչ մէկը չէր համարձակւում ազատ և վեհափառ Արծուին մօտենալ»։

Սակայն տարիներու ընթացքին, Մայր Տաճարի ծաղկանկարներու «ոչնչացման» ծանօթ պատմութիւնը բերնէ բերան խօսուելով տեսակ մը յանցանքի նման Խրիմեանին վերագրուեցաւ, ինչ որ անտեղի և անիրաւ է։

Տաղանդաւոր Հայ գրագէտ Կ. Զարեանը, անտեսելով իրողութիւնն ու փաստերը, էջմիածնի տաճարի ծաղկանկարներէն «մի մասի» ոչնչացումը՞ Խրիմեանին կը վերագրէ այս տողերով.

«...Ու ահա „լուսաւորեալ" մի կաթողիկոս, նոյն ինքը Խրիմեանը, յանուն առաջադիմութեան և քաղաքակրթութեան, հին բաներ անուանելով ծեփել է տուել անողոք կերպով որմանկարի ամենագեղեցիկ մի մասը և ոչ մի սպառնացող աւերճանակ չի արդիլել այդ ոճիրը»*)։

Կ. Զարեանի այս հեգնական և սպառնական ուշացած տողերը ի յայտ կը բերեն պատկերաւոր և բանաստեղծական զրպարտութիւն մը, որ փաստական ոևէ արժէք չ'ունի**)։

---

*) «Ա.ճցուրդ եւ իր ձամբաց». «Հայրենիք» Ամսագիր· 1927, թիւ՝ 8, էջ՝ 29։

**) Կ. Զարեանը Խրիմեանի մահէն 20 տարի յետոյ միայն քաջութիւն ունեցած է թղթի վրայ «սպառնացող աւերճանակ» ցոյց տալ Հայոց Հայրիկի յիշատակին ու շիրմին: Խրիմեանի կենդանութեան ժամանակ Կ. Զարեանը համարձակութիւն չը պիտի ունենար «սպառնացող աւերճանակի» մասին խօսք ընելու, վասն զի Հայրիկի թշնամիներու կողմէ կաշառուած ոճրագործ քիւրդն անգամ իր սպառնացող հրացանը ձեռքին ծունկի կուգար անոր Մեծութեան առջեւ։ Կ. Զարեանի աչքին Խրիմեանը կը ներկայանայ չակերտաւոր լուսաւորեալ դէմք մը, որ իբր թէ «հին բաներ»ու ոչնչացումը «առաջադիմութիւն և քաղաքակրթութիւն» համարելով «ծեփել է տուել անողոք կերպով որմանկարի ամենագեղեցիկ մի մասը»։ (Սակայն ինչու միայն «մի մասը» «ծեփել է տուել» իսկ մնացեալ մասերը պահեր է)։ Կ. Զարեանը քաջ գիտէ, որ Խրիմեանը ժբ.-դդ դարու կէսերէն մինչև իր մահը, յանուն Հայ ազգային լուսաւորութեան, «առա-

Ազգային երգիչ Արմենակ Շահ-Մուրատեանին հարցուցի (Թուրիզ 20 Դեկտ. 1928)– «Էջմիածնի տաճարի ծաղկանկարներու ծանօթ պատմութեան մասին ինչ գիտէք»։ Շահ-Մուրատեանը պատասխանեց.

«Անձամբ գիտեմ և ականատես եղած եմ, որ տաճարի ներքին պատերու վրայի ծաղկանկարներէն քանի մը մասեր հետզհետէ կ'ոչնչանային և վար կը թափուէին։ Կարգ մը մանագէտներ և Էջմիածնի գիտնական միաբանները խորհուրդ տուին Խրիմեանին, որ այդ ծաղկանկարները նորոգութեան ենթարկուին։ Թափուած տեղերը սպիտակ ծեփով ծեփուեցան, իսկ թափուելու վտանգին ենթակայ ծաղկանկարներէն հանի մը խոշոր կտորներ վար առնուելով թանգարանը փոխադրուեցան։ Ահա այս է ամբողջ պատմութիւնը, որ Խրիմեանի թշնամիներն ու հակառակորդները—Էջմիածնի քանի մը ազդեցիկ միաբաններ և Համբ. Առաքելեանն ու իւրայինները—մատի փաթթան շինելով չկրցան վարկաբեկել Խրիմեանի անունը։ Այդ անազնիւ հակառակորդները ծաղկանկարներու պատմութեան սև ու տգեղ գոյներ տուին, մամուլի մէջ սուտ լուրեր և անպատշաճ յօդուածներ գրեցին՝ հասարակաց միտքն ու կարծիքը պղտորելու համար։ Քանի որ գրքիդ մէջ այդ պատմութեան մասին խօսեր ես ապա ուրեմն իմ այս խօսքերը իրր խղճի պարտք կատարող մարդու մը հերքումը լոյս ընծայէ»։

## Է.

## ՌՈՒՍԱԿԱՆ ԴԱՒԵՐԸ ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՒԹԵԱՆ ԴԷՄ

*Ռուսաց Նիկոլայ Բ. ծարի Կովկասի փոխարքայ (կառավարչապետ) գաժան և հայակեր Գոլիցին 1898-ին Կայսրինը ներկայա-*

---

ջագիմութեան և քաղաքակրթութեան» հիմնած է գպրոցներ, թերթեր, գրադարաններ, հաւաքել տուած է պատմական և դեղարուեստական «հին բաներ», հիմնած է թանգարաններ, հովանաւորած և քաջալերած է պատմական պեղումներ (Անի և Զուարթնոց), պահպանել տուած է հայկական յիշատակարաններն ու չէնքերը և այլն։ Այս բոլոր փաստերուն քաջատեղեակ Կ. Զարեանը չը գիտենք ինչու բանաստեղծական պատկերներով կը փորձէ խեղաթիւրել փաստերը և վիրաւորող չափերաններով ու հեգնանքով կը մօտենայ Խրիմեանի անուան ու գործին։

ցուց զեկուցագիր մը, որով կը շեշտէր թէ—«Հայ կղերը հայկական շարժման գլուխն է անցել» ևայլն. Այս վերագրումներն ոչ միայն սխալ՝ այլև սուտ էին. Իսկ Հայոց Հայրիկի մասին Գոլիցինը այն կարծիքն ունէը թէ—«Ներկայ Պատրիարք—Կաթողիկոսը, որ ամբողջովին անձնատուր է եղած ոչ այնքան իր հօտի հոգևոր պետի դերին, որքան նրա քաղաքական դեկավարման, գնալով աւելի ու աւելի յանդուգն է դառնում դէպի մեր կառավարութիւնը և սրա օրէնքների պահանջները». Այս զրպարտութիւններն իբր իրական փաստերը կայսրին և Նախարարաց Խորհուրդին ներկայացնելէ յետոյ Գոլիցինը կ՚առաջարկէր «Հայ եկեղեցու բոլոր կալուածները եւ գրամագլուխները յարմուծիս գրաւել». Այս առաջարկին հակառակեցան եկեղեցական և երկրագործական նախարարները, որոնք կը պնդէին, թէ՝—«Այդպիսի զօրեղ, բոնի միջոց, Հայ ազգաբնակութեան մէջ կրնայ խիստ դժգոհութիւն առաջ բերել». Երկրագործական նախարար Երմոլովը կ՚առաջարկէր Հայ եկեղեցական գումարներու և կալուածներու հսկողութիւնը յանձնել Ներքին Գործոց Նախարարութեան. Իշխան Գոլիցինն ու Ներքին Գործոց Նախարար Օիկեագին ընդունեցին Երմոլովի առաջարկը, որ կայսրի հրամանով յանձնուեցաւ յատուկ յանձնաժողովի մը քննութեան.

«Յանձնաժողովը գտաւ, որ առաջարկուած միջոցը, որը ծանր հարուած է տալիս բովանդակ հայ եկեղեցուն, կ՚ազդէ ամբողջ հայ ազգաբնակութեան վրայ դէպի Ռուսաստանը՝ թէ պետութեան մէջ և թէ արտաստմանում, ծիշեալ քայլը, յանձնաժողովի կարծիքով, ի նկատի ունի գլխաւորապէս կարճել հայոց բարձր հոգևորականութեան և ինտելիգենցիայի օրինազանց գործունէութիւնը, բայց այդ նպատակի համար կարելի է գործադրել ուրիշ միջոցներ, կարելի է, ի միջի այլոց սահմանափակել հայոց եկեղեցու ինքնավարութիւնը և հաստատել իրական վերահսկողութիւն եկեղեցական արդիւնքների և ծախքերի վրայ. Այդ պատճառաբանութիւնների համաձայն յանձնաժողովը վերև յիշած ձեռնարկութեան իրականացումը վաղաժամ համարեց»*).

---

*) Ռուսաց Նախարարաց Խորհուրդի գաղտնի արձանագրութիւնը հրատարակուած է Է. Ակինեանի (Ս. Մալումեան) «Դէպի Կռիւ» գրքի մէջ. Հրատարակութիւն Հայ Ցեղ. Դաշնակցութեան. 1904, Ժընև.

Ցանձնաժողովի այս եզրակացութիւնն ընդունեց Օբպեդոսցին, իսկ Գոլիցինը յամառ կերպով մնաց իւր նախկին կարծիքին, որ պէտք է գրաւել հայոց եկեղեցական կալուածները. Կայսրը յանձնաժողովի արձանագրութիւնը կարդալէ յետոյ յանձնարարեց Ներքին Գործոց Նախարարին, որ Գոլիցինի հետ բանակցեն և ներկայացնեն իրենց դիտողութիւնները այն մասին թէ՝ եկեղեցական կալուածները նէթէ չը գրաւենք, ապա ինչ միջոցներու դիմենք՝ «Հայոց հոգևորականութեան օրինազանց գործունէութիւնը դատըեցնելու համար». Օբպեդոսցին, Գոլիցինի հետ բանակցելէ յետոյ, ցարին յայտնեց, որ— «Ներկայումս միակ դրական միջոցը վերոյիշեալ նպատակով՝ կարող է լինել հայոց եկեղեցու կալուածների գրաւումը հոգևոր հաստատութիւնների իրաւասութիւնից». Օբպեդոսցին կը խնդրէր ցարէն, թոյլ տալ յիշեալ գործը մտցնել Նախարարաց Խորհուրդի մէջ։

Տարիներ անցան. «Թագաւոր կայսեր բարեհաճութեամբ» 1901-ի Յուլիս 26-ին Հայոց եկեղեցական կալուածները գրաւելու առաջարկը ներկայացաւ Նախարարաց Խորհուրդի քննութեան. Ներքին Գործոց Նախարար «ստատս-սեկրետար Պլեվէ, ի միջի այլոց բացատրում է թէ առաջարկւած ծրագիրը բոլորովին հաստատացած է և ըստ ամենայնի համապատասխան այն միջոցներին, որոնց ձեռնարկից է եղել և դեռ լինելու է Ներքին գործերի մինիստրութիւնը՝ հայոց եկեղեցու չափազանց ինքնավարութիւնը սահմանափակելու համար». Հարցը քննելէ յետոյ Նախարարաց Խորհուրդը կ'եզրակացնէ.

«Հայոց եկեղեցուն և նրա հաստատութիւններին, այսինքն դպրոցներին պատկանող բոլոր ստացուածքները (թէ եւրոպական Ռուսաստանում և թէ Կովկասում) յանձնւում են երկրագործութեան մինիստրութեան կառավարութեանը, իսկ դումարները՝ Ներքին գործերի մինիստրութեան. Վերջինիս այլադաւան քրիստոնեաների դէպարտամէնտում կենդրոնանում է այդ կալւածների և դրամագլուխների արդիւնքի և ծախքերի գլխաւոր վերահսկողութիւնը, ինչպէս և դրանց լիակատար հաշուետուութիւնը».

Մինչ Պետերբուրգի մէջ Պալատն ու Նախարարաց Խորհուրդը կը մտածէին հայահալած Գոլիցինի ծրագրած առաջարկի գործա-

դրբուքեան միջոցներու և ժամանակի մասին, անդին Հայ ժողովուրդն ու Էջմիածինը անտեղեակ էին պալատներու մէջ կատարուող հակահայ քաղաքականութեան այդ ստոր դաւերուն։

Հինգ տարիներու ընթացքին (1898 – 1902) ռուսաց հայատհալած բռնապետութիւնը ծրագիրներ կը մշակէր Հայ ազգային-եկեղեցական կալուածները գրաւելու մասին, բայց գործադրութիւնը դեռ կ'ուշանար։

* * *

Այս իրադարձութեանց անտեղեակ Հայոց Հայրիկը, իր սովորական դարձած ճամբորդութեանց ծայր դրաւ։ 1902-ի Փետր. 2-ին գնաց Ալէքսանդրապոլ և ապա անցաւ Թիֆլիս, ուր 16-ին այցելեց Վրաստանի Էքզարխ Սրբազան Ալէքսէյին, իսկ 19-ին՝ Փոխարքայ Գոլիցինին, որ յաջորդ օրն իսկ փոխ այցելութիւն տուաւ Հայոց Կաթուղիկոսին և «շատ սիրալիր» խօսքեր ըսաւ։ Փետր. 24-ին Հայրիկը ներկայ եղաւ պատմագիր Ագեք. Երիցեանի յուղարկաւորութեան ու գեղեցիկ դամբանականով մը բնորոշեց հանգուցեալի բարեմասնութիւնները. Թիֆլիսէն ճամբայ ինկաւ դէպի Շիրակ և Մարտի 10-ին հասաւ Էջմիածին։

Յունիսի 4-ին գնաց Օշական, ուր Ս. Մեսրոպի շիրմին վրայ հոգեհանգիստ կատարեց և այս գիւղի պատմական տիրոջ՝ Իշխան Վահան Ամատունիի գերեզմանին վրայ իր ծախքով քարաշէն յուշարձան մը տնկել տուաւ։ Յունիսի 21-ին Բիւրականէն ձիով ճամբայ ելաւ դէպի Դիլիջան, Հաղարծին, ապա եկաւ Եղուարդ, Աբզաքան, Ռեդմալ, ուրկից 6 ժամուայ լեռնային դժուար ճամբաներով նորէն գնաց Դիլիջան և Հաղարծնի վանք։ Յունիսի 28-ին գնաց Մաղկունք գիւղը՝ ապա անցաւ Դարաչիչակ (Մաղկաձոր) Ալափարա, Բջնի, և 14 օրուայ ճամբորդութենէ մը յետոյ Օգոստոս 2-ին հասաւ Էջմիածին։ Օգոստ. 17-ին գնաց Ալէքսանդրապոլ, 19-ին անցաւ Ղարաքիլիսէ, Դիլիջան, Հաղարծին, Սևան, Երևան և 27-ին եկաւ Էջմիածին։ Սեպտ. 2-ին նորէն գնաց Ալէքսանդրապոլ, ապա անցաւ Թիֆլիս և շարք մը գործեր կարգադրելէ յետոյ 21-ին վերադարձաւ Էջմիածին, ուր Հոկտ. 2-ին ընդունեց փոխ այցելութիւնը Վրաց Էքզարխի, որուն կ'ընկերանային Երևանի

նահանգապետ Տիզենհաուզէն և անոր օգնական Իշխան Նախաշիձէն։

Նոյեմբ. 16-ին գնաց Երևան, 18-ին անցաւ Ալէքսանդրապոլ, իսկ 22-ին՝ Թիֆլիս, ուր 26-ին այցելեց փոխարքայ Գոլիցինին՝ թարգման ունենալով գրաքննիչ Ալ. Բիշմիշեանը։ Նոյն օրը Գոլիցինն այցելեց Խրիմեանին և 45 րոպէ խօսակցութիւն ունեցաւ Էջմիածնի և Կովկասի Հայութեան մասին։ Այս օրերուն Թիֆլիսի մէջ մեռաւ կովկասահայ յայտնի բարերար Աւետիք Ղուկասեանը (Շուշեցի), կտակելով Էջմիածնին 60,000 րուբլի։ Դեկտ. 13-ին Հայրիկը ճամբայ ելաւ Թիֆլիսէն և 16-ին հասաւ Էջմիածին։

Խրիմեանի հետ ունեցած այս վերջին տեսակցութենէն յետոյ Կովկասի դաժան փոխարքան կը մեկնէր Պետերբուրգ իր հետ տանելով «Գաղտնիքներէ գաղտնիքը—Կովկասի Հայութեան չքացո՞ւմն...» որ հակահայկական զարհուրելի դաւադրութիւն մը կը պարունակէր հետևեալ ծրագրով.

Ա. «Ոչնչացնել և առնւազը չլատել այն բոլոր հիմնարկութիւնները,—դպրոց, ընկերութիւններ, թատրոն, մամուլ, գրականութիւն, որոնք ժողովրդի մէջ բորբոքում են ինքնուրոյն, անկախ գոյութեան զգացումներ և տանում են նրան դէպի քաղաքական տենչն ու երազները։

Բ. «Հարւածել հայոց լուսաւորչական եկեղեցին, որը իբրև բուն ազգային հիմնարկութիւն ուժգնօրէն նպաստում է ազգայնական հակումների աճեցման ժողովրդական մասսաների մէջ։

Գ. «Սահմանափակել հայերի իրաւունքները քաղաքացիական ազատ զբաղումների շրջանում – բժիշկ, փաստաբան, պաշտօնեայ և թոյլ չտալ որ հայ ժողովուրդը Անդրկովկասում, ուղղափառների հաւասար իրաւունքներ ունենայ արդիւնաբերական և առևտրական ձեռնարկների մէջ, ինչպէս և անշարժ կալւածների գնելու գործում, որ անհրաժեշտ միջոց է՝ նրան տնտեսականապէս ուժասպառ անելու համար։

Դ. «Նւազեցնել հայերի թիւը կովկասեան այն նահանգներում, որոնք սահմանակից են Թիւրքիային ու Պարսկաստանին, յատկապէս Երևանի նահանգում, ուր հայութիւնը ամենաուժեղ տարրն է ընդհանուր ազգաբնակութեան մէջ և Կարսի շրջանում, որ Էրզրումի վիլայէթին կից լինելով՝ քաղաքական անընդհատ յուզման ջերմ

մասնակցութիւն ունի։ Այդ նպատակին հասնելու համար պէտք է՝ ա) Հաստատել այդ կէտերում ռուսական գաղթականութիւնները, բերած նրբքին նահանգներից, բ) Հողային բաժանումների ժամանակ առաւելութիւն տալ նորեկ գաղթականութիւններին ինչպէս և մահմեդական համայնքներին, գ) Գաղթեցնել հայերին այն բոլոր շրջաններից, ուր մուտք է գտել քաղաքական ազիտացիան և դ) Ոչ մի կերպ թոյլ չտալ Թիւրքաց Հայաստանից եկած գաղթականութեան՝ բնակութիւն հաստատել հայաշատ կենդրոններում ինչպէս և առհասարակ Անդրկովկասեան երկրների մէջ, ուր հայերին քչացնելը մի անգամ ընդմիշտ պէտք է լինի տեղական կառավարութեան մշտական հոգածութեան կարևորագոյն նպատակակէտը» («Դէպի Կոխ». էջ՝ 28—30)։

Ահա այս էր ռուսական հայահալած քաղաքականութեան Գուլիցինեան ծրագիրը,— «Գաղտնիքների գաղտնիքը»— որ կը պատրաստէր նախ՝ հայ ազգային-եկեղեցական կալուածներու գրաւման և ապա «Հայութեան չքացումի» դաւերը՝ Կովկասի մէջ։

## Ը.

## ԱԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԿԱԼՈՒԱԾՆԵՐՈՒ ԳՐԱԻՈՒՄԸ

Կովկասի փոխարքայ Գուլիցինի գաղտնի զեկուցագրերու և բերանացի հաւաստիացումներու վրայ հիմնուելով Պետերբուրգի պետական բարձր շրջանները ու Նախարարաց Խորհուրդը եկած էին այն եզրակացութեան, որ իսկապէս Հայ եկեղեցին՝ կեդրոն ունենալով Էջմիածինն ու Հայոց Հայրապետութիւնը, կը հանդիսանայ բարոյական և նիւթական այն միակ և գերագոյն յենարանը, որ զարկ կուտայ Հայ յեղափոխական շարժումներուն, ցոյցերուն, կը հովանաւորէ ժողովրդական, ազգային և ազատասիրական գործերը և մէկ խօսքով կը ջանայ պատրաստել Ազատ, Անկախ եւ Միացեալ Հայաստանի ծրագիրը։ Սակայն ռուսաց բռնապետութիւնը, բնաւ տեղեակ չէր Հայ եկեղեցիի ներքին կեանքին և հոգևորականութեան ներքին տրամադրութիւններուն։ Համազգային ժողովրդականութիւն վայելող և ազատասիրական, հայրենասիրական զգացումներով տո-

դորուած Հայոց Հայրիկը, ռուսաց պալատներու աչքին կը հանդիսանար յեղափոխական և քաղաքական մեծ դէմք մը, որ իբր թէ Ազատ Հայաստանի կազմութեան համար դաւեր կը նիւթէր Ռուսաց կայսրութեան դէմ:

Սակայն իրականութիւնն այն էր, դժբաղդաբար, որ Էջմիածնի միաբանութեան աւագ անդամներէն ոմանք մէկ մէկ ռուսաէր անձեր էին, որոնք ոչ միայն Հայ ազատագրական, յեղափոխական շարժումներուն դէմ էին այլև ազատ ու միացեալ Հայաստանի մը կազմութեան մասին անգամ չէին կրնար մտածել: Գալով Հայոց Հայրիկին, իբր Կաթուղիկոսի, կը հետապնդէր Հայկական Հարցը «դիւանագիտական խաղաղ ճանապարհներով» միայն: Էջմիածինը 1900-ական թուերուն, և անկէ առաջ, հազիւ թէ ունէ մասնակցութիւն ցոյց տուած է մեր ազատագրական պայքարին*): Վաղարշապատի ազատասէր ու համարձակ Հայր Արծիւը, որ երբեմն սուլթաններէն ու տաճկաց բռնապետութենէն չէր վախնար, Էջմիածնի գահին վրայ բազմելէ յետոյ, կծկուեր, քաշուեր էր ու կը վախնար ռուսաց երկգլխանի արծուի բռնակալութենէն, որուն համար ըսած էր—«ես՝ մէկ գլխանի Արծիւս քիչ մը կը վախնամ սա երկգլխանի ռուսական Արծիւէն...»:

Ժամանակը և միջավայրն ու տարիքը կոտրած էին Խրիմեանի թափն ու ազդեցութիւնը, դեռ Թորոսնք Էջմիածնի պատերէն ներս ու դուրս նիւթուող դաւերն ու վարկաբեկումները, որոնց դեկավարները կը հանդիսանային Մայր Աթոռի ազդեցիկ միաբանները—վարդապետներն ու եպիսկոպոսները, (բացառութիւնները յարգելի են):

Ահա այս էր Էջմիածնի ներքին պատկերը, այն տարիներուն, երբ ռուսական պալատները կը կարծէին թէ Հայոց Մայր Աթոռն

---

*) Էջմիածնի միաբաններու մէջ եղած են մէկ քանի բացառիկ և յարգելի դէմքեր, որոնք գործօն մասնակցութիւն ցոյց տուած են մեր յեղափոխական շարժումներուն և ռուսաց բռնապետութեան կողմէ հալածուած, բանտարկուած և աքսորուած են: Մեծ պատերազմի ընթացքին և Հայաստանի Հանրապետութեան տարիներուն (1918—1920) Էջմիածինը բարոյական և նիւթական ամէն տեսակ զոհողութիւն և աջակցութիւն ցոյց տուաւ Հայ ժողովուրդին: Այս պատմական փաստ է, որ միշտ ալ յիշատակութեան պիտի արժանանայ:

է բարոյական ներշնչման և նիւթական օգնութեան այն միակ աղբիւրը, որ զարկ կուտայ Հայ յեղափոխական կուսակցութեանց ժողովրդականութեան և կամ Թուրքիոյ այս ու այն նահանգներու մէջ կատարուող ազատագրական շարժումներուն։

Ուրեմն պէտք էր առաջին առթիւ կտրել այդ աղբիւրը, այսինքն գրաւել Հայ ազգային—եկեղեցական կալուածները և այդպիսով վերջ տալ նաև Հայ յեղափոխական և քաղաքական շարժումներու և ձգտումներու գոյութեան։ Այսպէս կը մտածէր ռուսաց բռնապետութիւնը և շուտով գործի կ՚անցնէր։

---

Ռուսական պետական դաւերուն անտեղեակ Հայոց Հայրիկը կրնար երևակայել, որ իր յաճախակի, անմեղ ու շատ անգամ անպատակ ճամբորդութիւնները կրնային լուրջ կասկածներ յառաջացնել պետական բարձր շրջաններու մէջ թէ՝ Հայոց Կաթողիկոսը, իբր մշտական ուղևորութեանց ընթացքին, Հայ ժողովուրդի մէջ քաղաքական բարոյնները կուտայ և յեղափոխական զգացումներ կ՚արթնցնէ՝ ազատ և անկախ Հայաստանի համար։

Ցուրտ ու ձիւնոտ ձմեռ էր, 1903-ի Յունուարի 18-ին՝ երբ Հայրիկը էջմիածնէն ճամբայ ելաւ դէպի Երևան, 19-ին հասաւ Սևան, ապա գնաց Հադրութին, 27-ին գնաց Ալէքսանդրապոլ և գնացքով վերադարձաւ էջմիածին։ Փետրուարի 13-ին նորէն գնաց Երևան, Մարտի 13-ին անցաւ Ղրակի դաշտի գիւղերը, Ալէքսանդրապոլ և ապա Թիֆլիս ու վերադարձաւ էջմիածին, ուր քանի մ՚ամիս յետոյ պիտի ստանար այն հեռագիրը, որ Պետերբուրգէն կուգար ու կը հրամայէր կառավարութեան յանձնել Հայ ազգային եկեղեցական—դպրոցական կալուածները։ Եւ վերջապէս կը կատարուէր անխուսափելին։

Ռուսաց Նիկոլայ Բ. կայսրը «բազմած արքայական գրասեղանի առջև» կը լսէր Ներքին Գործոց Նախարար Պլեվէի բացատրութիւնները Հայ ազգային-եկեղեցական կալուածներու գրաւման անհրաժեշտութեանը մասին և 1903-ի Յունիսի 12-ին իր «օգոստափառ ձեռքով» կը ստորագրէր ու կը հաստատէր այն թուղթ-

հրովարտակը, որ կը հրամայէր յարբունիս գրաւել Հայոց ազգապատկան անշարժ և շարժական հարստութիւնները։

«ԲԱՐՁՐԱԳՈՑՆ ՀՐԱՄԱՆ.— Թագաւոր Կայսրը, մինիստրների կոմիտէի որոշման համեմատ, Ռուսաստանի Հայ-Լուսաւորչական եկեղեցու կալուածների վարչութիւնը կառավարչական հիմնարկութիւնների տեսչութեան տակ կենտրոնացնելու և վերոյիշեալ եկեղեցու միջոցներն ու կալուածները—որոնցով ապահովում էին Հայ-եկեղեցական դպրոցների գոյութիւնը—ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեանը յանձնելու մասին, 1903 թուի յունիսի 12-ին բարձրագոյն հրամայել բարեհաճեց։

«Հայ-լուսաւորչական եկեղեցիներին, վանքերին, հոգևոր հաստատութիւններին և հոգևոր դպրոցներին պատկանող ջոյր անշարժ կալուածները առանձին հաստատուած կանոնների համաձայն որոշուած կարգով՝ այդ դատաւորութեան հոգևորականութեան և հոգևոր հաստատութիւնների վարչութիւնից առնել և յանձնել երկրագործութեան և պետական կալուածների միութեան տեսչութեանը, իսկ վերոյիշեալ հիմնարկութիւնների դրամագլուխները յանձնել նորին գործերի միութեան տեսչութեանը, պահպանելով Հայ-լուսաւորչական եկեղեցու սեփականութեան իրաւունքները այդ կալուածների և դրամագլուխների վրայ»։ («Դէպի Կուլ». էջ՝ 16)։

Ամբողջ ամիս մը գաղտնի պահուելէ յետոյ, Յուլիսի կէսին, պաշտօնապէս լոյս տեսաւ «Թալանի օրէնքը»՝ «Կառավարչական Համբաւաբեր» թերթի մէջ, իսկ Գոլիցինն ալ իր «յաղթանակով գոհ ու հպարտ» մայրաքաղաքէն ճամբայ կ'իյնար դէպի Թիֆլիս յիշեալ օրէնքի անշեղ գործադրութիւնը կատարելու համար։

Պետերբուրգի և Թիֆլիսի ռուսական թերթերու մէջ լոյս տեսան «կիսապաշտօնական» յօդուածներ, որոնք Հայ ժողովուրդին կը վստահացնէին թէ կառավարութեան նպատակն է «ա) Աւելի մեծացնել լուսաւորչական եկեղեցու եկամուտները և հետևաբար նպաստել նրա բարգաւաճման, բ) Ապահովել աղքատ և չքաւոր հոգևորականներին, որոնց վիճակը այժմ չափազանց ողբալի է և գ) Ազատել եկեղեցին և նրա կալուածները ապօրինի, անսահման յափշտակութիւններից»։

Այս խօսքերուն նպատակն էր մեղմացնել Հայ ժողովուրդի հաւանական յուզումներն ու զրգռութիւնները։

Կաթողիկոս Ամենայն Հայոց Հայրիկը երբ լսեց ազգային-եկեղեցական կալուածներու գրաւման հրովարտակի գոյժը, պահ մը հոգեպէս խորտակուեցաւ*) և ծանր յուսահատութեան մատնուեցաւ, Ի՞նչ ընէր Վասպուրականի ծերունազարդ Արծիւը...։

Պետերբուրգէն օտար թերթերու թղթակիցները հեռագիրներով ի լուր աշխարհի կը յայտնէին ծանօթ հրովարտակի հրատարակութիւնը։

Գոլիցինը գործի կ'անցնէր։ Կովկասի հայաբնակ բոլոր վայրերու զինուորական և ոստիկանական իշխանութիւնները թիֆլիսէն ստացան շտապ եւ կտրուկ շրջաբերականներ, որոնք կը յայտնէին պահանջել եկեղեցական կալուածներն ու դրամները, միջոց չը տալ բողոքելու, հսկել որ հարստութիւնները չը պահուին, եթէ հայերը կը դիմադրեն՝ զօրք բերել, դրամատուները հրաման ստացան արգելքի տակ առնել հայոց ազգապատկան գումարները, Էջմիածնի Սինօդին կարգադրեցին յանձնել դրամներն ու հաշիւները, թեմական առաջնորդներէն պահանջեցին դրամներու և գոյքերու ցուցակները, երեցփոխներուն սպառնացին ծախքեր չընել կայլն։

«Երկու ուժ միայն մնացին անտես ու մոռացուած,—Հայ ժողովուրդը, որ տէրն է եկեղեցական հարստութեան և ժողովրդից ընտրուած կաթողիկոսը, որ մէկի ներկայացուցիչն է և միւսի ա-

*) Վաստակաւոր Հայ նկարիչ Վարդգէս Սուրէնեանը նկարած է Էջմիածնի հոգեկան այն յուզումնալից րոպէն երբ յայտնուած է իրեն ազգապատկան կալուածներու գրաւման գոյժը։ Գալոյտ վերարկուն հագին, գդակը գլխին՝ Հայրիկը բազմած է թիկնաթոռի մը վրայ, կնքուած ծրար մը (նամակ կամ հեռագիրը) ընկած է ոտքերուն տակ, ձեռքերը դողդոջուն կախ ընկած են օդի մէջ, աչքերն արտասուալից, դէմքը անհուն վշտով ու յուզումով պատուած՝ սարսուռ մը կարծես ծածկեր է անոր էութիւնը։ Բնական մեծ ուժեամբ այս հոյակապ նկարը ականատեսին վրայ շատ խոր և յուզիչ տպաւորութիւն կը թողու։ Հայ ժողովուրդի անհուն վիշտերու մարմնացումն է այդ նկարը, որ 26 տարիներէ ի վեր Էջմիածնի թանգարանի պատէն կախուած կը մնայ և իւրաքանչիւր Հայ այցելուին կը յիշեցնէ 1903 ի ուսոց հայահալած քաղաքականութեան նորագոյն պատմութեան դաժան և արհաւիրալից ժամանակները։

ւանդապահ-վերահսկողը։ Այդ մոռացումը, անշուշտ, պատահական չէր և ոչ էլ արդիւնք դիւանագիտական թուլամտութեան, այլ գիտակցական, նախամտածած, բնական հետեւանքը այն դաւադիր քաղաքականութեանը, որի դէօշը պարզած էր յունիսեան օբէնքով»։

Գոլիցինը ըսած էր, որ «կաթողիկոսը անզօր և ծերացած՝ իսկ ժողովուրդն ալ հոգևորականութենէն զայրացած՝ կառավարութեան միջամտութեան կը սպասէ»։ Եւ կայսրն ու Պլեվէն հաւատացեր էին, որ այդպէս էր։ Գոլիցինն ալ համոզուած էր և ուրախ, որ ժողովուրդն ու կաթողիկոսը հաղիւ թէ հրապարակ գան...։

«Աբհամարհած, վիրաւոր կաթողիկոսը, անցած օրերի Վասպուրականի Աթթիլը, ընկաւ խոր վշտի և մտածմունքների մէջ։ Որպիսի հիասթափումն ծերութեան օրերին։ Ի՜նչ չքնաղ յոյսերով նա թողեց Երուսաղէմը, տխուր աքսորի մռայլ խուցը՝ դէպի Արարատեան երկիրը, դէպի գեղանի Մասիս թռչելու համար։ Եւ որքան կազդուրիչ էին անցած բերկրալից օրերի սպասելիքները, որոնք բոլորն էլ այժմ չքացած, ոտնակոխ եղած, նախագուշակում էին մի սև ապագայ, լի դառնութեամբ, տանջանքներով, արժանի պատմութեան խորին անէծքին։

«Փակուած Մաղկեայ Այվանի (դահլիճի) չորս պատերի մէջ, ուր ամեն ինչ՝ և՛ գահ, և՛ գաւազան, և՛ նկարներ ծաղկի փոխարէն փուշ էր յիշեցնում, անզօր եկեղեցու ծերունի պետը, խորին յուսահատութեան ենթակայ, կրկնում էր անդադար՝ „ինչ անել՞։ Ոչ մի պատասխան։ Սև վեղարների շրջապատը ոչինչ չէր ասում նրա մտքին և ոչ էլ սրտին։ Նայեց Մասիսին, գեղանի լեռան գագաթին այնքան թովիչ բանահիւսութեան ժամերին։ Բայց անհատնում վշտերից՝ նա վաղուց է քար կտրել։ Ուսաբեկ փորձեց դիմել պատմութեան, այնքան փոփոխական և այնքան սգաւոր՝ քրիստոնէական տանջանքի այդ դարաւոր վանքի մէջ։ Սակայն աւազ, պատմութիւնը նրան չկազդուրեց, սիրտ ու ուժ չտուեց։ Նա տատանման մէջ ընկաւ, զգում էր իրան միայնակ, անզօր, առանց թև ու թիկունքի։

«Դիմադրութի՜ւն...

«Ժողովրդի ձայնն էր այդ, որ հեռից եկող ալիքի նման կուտակւում, ուռչում էր և զարկեր տալիս Էջմիածնի պատերին, իբրև

ազդանշան և յորդոր։ Ժողովրդական ոգով սնած, նրանով մեծացած և նրանից ընտրւած գահակալը ականջ դրեց, զգաց, թէ որտեղից է գալիս կոչը, ըմբռնեց նրա ուժը, շտկեց կորացած մէջքը և խրոխտ հայեացքով նայեց հակառակորդին։ Այն օրից որոշ էր նրա անելիքը»։ («Դէպի Կաթ.». էջ՝ 34—35)։

Հայ ժողովուրդի դիմադրութեան և բողոքի ուժգին ձայնն էր այդ, որ կը հնչէր բարձր ու խրոխտ, մինչ Հայոց Հայրիկն ալ կ'ըսէր.

—Ռուսաց կառավարութիւնն իրաւունք չունի եւ չի կարող գրաւել Հայոց ազգային-եկեղեցական կալուածները, որոնք ոչ թէ միայն ռուսահայոց՝ այլ ի սիրուս աշխարհի ցրուած համայն Հայութեան սեփականութիւնը կը կազմեն*)։

—Բողո՛ք, դիմադրութի՛ւն, ըմբոստութի՛ւն...

Այս ձայներն ու աղաղակները կը հասնէին ամէն կողմէ և կորով կը ներշնչէին 84 տարեկան ծերունազարդ կաթողիկոսին, որուն սիրտը կը ծփար անցեալի և հին օրերու ազատատենչ զգացումներով։ Ժողովուրդի ձայնը կը թնդացնէր Էջմիածնի պարիսպները, որոնց պատերուն տակ ու խուցերուն մէջ կծկուած հոգևորականները իրենց սարսափահար աչքերն ուղղած էին Վատպուրականի հինաւուրց Արծուին....

Կովկասի մէջ գործող Հայ յեղափոխական կուսակցութիւնները գործի կ'անցնէին և ժողովուրդի մէջ կ'արծարծէին բողոքի և դիմադրութեան զգացումները։

Հ. Յ. Դաշնակցութիւնը կը ստանձնէր ժողովրդական իճիճապատժապաճութեան ղեկավարութիւնը։ Դաշնակցութեան կուսակցական մարմիններու նախաձեռնութեամբ կազմուեցաւ «Հայկական Իճիճապատժապաճութեան Կեդրոնական Կոմիտէ» անունով գաղտնի մարմին մը, որ Կովկասի հայաբնակ քաղաքներու, գաւառական կեդրոններու և մինչև անգամ գիւղերու մէջ ունեցաւ իւր մասնաճիւղերը։ «Գաղտնի Կոմիտէ...»։ Ի՛նչ խորհրդաւոր կոչում։

---

*) Ինովը Տէր Ալիստակէսեանը կը գրէ, որ—«Հայրիկի այս խօսքերը անձամբ լսած եմ։ Էջմիածնի Վեհարանի բակին մէջ, պարտէզի տաղաւարին տակ նստած Հայրիկը կը խօսէր Հայ բժիշկի մը հետ ռուսաց հայահալած քաղաքականութեան մասին։ Դիւանապետ Կոբրին Վարդապետի հետ քիչ մը հեռու կանգնած մեկ կ'ընէինք այդ չահեկան խօսակցութիւնը»։

Ինքնապաշտպանութեան կոմիտէները նպատակն էր ամէն տեղ կազմակերպել ժողովրդական բողոքի և ի պահանջել հարկին նաև զինական դիմադրութեան ցոյցեր՝ ռուս բռնակալութեան դէմ, որ նա չը գրաւէը ազգապատկան կալուածներն ու դրամները. Հնչակեաններն ու սոցիալ-դեմոկրատները ալ իրենց գործօն մասնակցութիւնը ցոյց տուին ինքնապաշտպանութեան «Գաղտնի Կոմիտէ»-ներուն, որոնց հմայքն ու ազդեցութիւնը՝ ժողովրդական խաւերու մէջ՝ պաշտամունքի առարկայ դարձաւ. «Գաղտնի Կոմիտէ»ները կազմակերպեցին զինական, թռուցիկ և ահարեկիչ խումբեր, տարածեցին թռուցիկներ և ամենուրեք յեղափոխական քարոզներու, բողոքի, ըմբոստութեան ու կռուի շեփորները հնչեցուցին.

Հայ ժողովուրդը պատրաստ էր. Դէպի կռի՛ւ....

«Հայկական Ինքնապաշտպանութեան Կենտրոնական Կոմիտէ»ն և մասնաւորապէս Հ. Յ. Դաշնակցութիւնը, թև ու թիկունք հանհանդիսացան Հայոց Հայրիկին, խրախուսանքի խօսքեր ուղղեցին, բողոքելու, դիմադրելու, յամառելու ոգի ներշնչեցին և ամէն կերպով վստահացուցին, որ ժողովուրդն ու յեղափոխական կուսակցութիւնները իւր կողքին կանգնած կը մնան.

Եւ ահա «Հայ ազգի քաղաքական-եկեղեցական ներկայացուցիչը՝ 85 ամեայ կաթողիկոսը ժամանակի պահանջների բարձրութեան վրայ գտնուեցաւ. դժբաղդութիւնը նրան դարձրեց առաջնայ արծիւը...»*).

Այս հրատապ օրերուն (1903 Յուլիս) Հայոց Հայրիկը կը հասնէր Թիֆլիս. Տասնեակ հազարաւոր Հայ ժողովուրդ կայարանը խռնուած Կաթողիկոսի ժամանման կը սպասէր. Ոստիկանութիւնը խիստ կերպով կը հսկէր, որ ոնէ միջադէպ կամ ցոյց տեղի չ'ունենար. Գնացքը կանգնելուն պէս ամբոխի «Կեցցէ Հայրիկ», «Ձը ստորագրես Հայրիկ» աղաղակներն ու որոտալից ծափերը թնդացուցին Թիֆլիս քաղաքը.

«...Այդ պահուն—կը պատմէր ինծի աղչնակ մը—վագոնի պատուհանի առջև երևցաւ Հայրիկի գունատ դէմքը. Ձեռքի թոյլ

*) Հ. Ի. Կենս. Կոմիտէի հրատարակած թռուցիկէն.

շարժումով բազմութիւնը լռութեան հրաւիրեց.— „Ի՞նչ կեցցէ", ասաց ու գլխիկոր հեռացաւ պատուհանէն»*)։

Կայարանէն մինչև Վանքի եկեղեցին (Առաջնորդարան) ժողովուրդը «կեցցէ Հայրիկ» աղաղակներով հետևեցաւ Հայրիկի կառքին. Ֆանի մը տեղ ցուցարարները փորձեցին կառքի ձիերն արձակել և կառքը քաշել, բայց Խրիմեանը զայրացաւ և յանդիմանելով հեռացուց անզուսպները. Թիֆլիսի Հայութեան պատգամաւորները ներկայանալով Հայրիկին կը պահանջեն չը յանձնել կալուածները։

Հայրիկը Թիֆլիսէն ճամբայ կ'իյնայ դէպի Էջմիածին. Ղարաքիլիսէի և շրջակայ գիւղերու ժողովուրդը կայարան խառնուած անոր գալուն կսպասէր. Ոստիկանութիւնը թէև կը փորձէ արգիլել, որ ժողովուրդը չը մօտենայ գնացքին, բայց հէնց որ գնացքը կը կենայ բազմահազար ամբոխը «կեցցէ Հայրիկ» աղաղակներով կը պատռէ ոստիկանութեան շղթան և կը շրջապատէ գնացքը, որուն մէկ վագոնին մէջ, պատուհանի ապակիներուն հետևէն Հայրիկը կը դիտէր յուզուած ժողովուրդի ցոյցը և կը լսէր անոր ձայնը—«Հայրի՛կ, ժողովուրդը քեզ հետ է», «Կեցցէ Հայրիկը...»։

Աննախընթաց էր մանաւանդ Ալէքսանդրապոլի ժողովրդական հսկայական ցոյցը. Շիրակի դաշտի Հայ ժողովուրդը լսելով, որ Հայրիկը պիտի գայ, աճապարած էր քաղաքը հասնել։ Կայարանը դարձած էր մարդկային հեղեղի ահաւոր վայր մը. Գնացքը կը հասնէր. Ցուզուած ամբոխը կը պահանջէր, որ Հայրիկը երթայ քաղաք։ Սպառնական և խնդրական աղաղակներ, կեցցէներ, ծափեր, աղմուկ, իրար խառնուած զարհուրելի տեսարան մը ստեղծեր էին։ Հայրիկը վագոնէն կ'իջնէր, կը նստէր կառքը և ամբոխով շրջապատուած կ'ուղղուէր դէպի քաղաքը—Ալէքսանդրապոլ։ Ոստիկանութիւնը շշմած, շփոթած և սարսափահար չը գիտէր ինչ ընէր. Ֆանի մը հուժկու բազուկներ արձակեցին կառքին ձիերը և իրենք քաշեցին։ Ժխորի, աղմուկի, ծափերու և փոշիի ամպերու մէջ կը մարէին Հայրիկին ձօնուած ժողովրդական երգերու ձայները, մինչ վշտալի Խրիմեանը գունատ և յուզուած՝ ար-

*) Ռ. Լեռնեան. «Հայրենիք» ամսագիր. 1928, թիւ՝ 1, էջ՝ 74։

լից աչքերով կը դիտէր ժողովրդական այս հսկայ ցոյցը։ Կառքի մէջէն նա կը լսէր ամբոխի անընդհատ ձայները—քալալերանք, սպառնալիք, յորդոր եւայլն, և գլխու հանդարտ շարժումներով կարծես համաձայնութիւն կը յայտնէր։

Յուլիսի 29-ի առաւօտ, Ալէքսանդրապոլի Հայ-լուսաւորչական եկեղեցիներու զանգերը կը զօդանչէին։ Հայերը փակեր էին խանութները։ Արդէն ժամի 10-ն էր երբ 5000-ի մօտ ամբոխը Առաջնորդարանի դռան առջև խռնուած՝ Հայրիկի դուրս գալուն կը սպասէր։ Ժողովուրդի կողմէ պատգամաւորներ ներկայացան կաթողիկոսին և խնդրեցին, պահանջեցին, սպառնացին, որ կալուածները չը յանձնէ։ Հայրիկը խոստացաւ չը ստորագրել, չը յանձնել, այլ բողոքել խիստ կերպով։ Յետոյ դուրս եկաւ և յուզուած ամբոխին ուղղեց այս կարճ և ազդու խօսքերը.

—«Ժողովո՛ւրդ Հայոց, քանի կեանքիս եմ ինչոհաժները չը պիտի յանձնեմ, այլ պիտի բողոքեմ, պաշտպանեմ մեր եկեղեցւոյ եւ ազգի դարաւոր իրաւունքները, վստահ եղէք, Հայրիկը կը շտե ժողովուրդին արդար բողոքն ու ձայնը, ոչ իր սիրտեն կոչգայ։ Միայն թէ դուք ալ ամուր եւ անսասան մնացէք»։

Ապա Հայրիկը շրախմբով շրջապատուած գնաց դէպի կայարան։ Յուզուած ժողովուրդը հետեւեցաւ կաթողիկոսի կառքին անդադար աղաղակելով—«Հայրիկ բողոքիր, մերժիր, չը յանձնես, մենք քեզ հետ ենք, բողո՛ք, բողո՛ք...»։ Ճամբու ընթացքին երբ գաւառապետի օգնականը կը փորձէր բարձրանալ «կաթողիկոսական կառքը՝ արագ քշել տալու համար ամբոխը վայր քաշեց նրան՝ գոչելով—„Կեղտոտների տեղ չէ այդ“։ Կայարանում գրգռուած ամբոխը գրոհ տուեց և քարեր նետեց ժանդարմների վրայ...», մինչ ազգային և ռազմական երգերը կը թնդային ամէն կողմ։

Ալէքսանդրապոլի ցոյցը մեր նորագոյն պատմութեան և բմբոստ շարժումներու հոյակապ մէկ գրուագն է, որ իր ժամանակին թնդացուց Թիֆլիսի և Պետերբուրգի պալատները։ Պատիւ Շիրակի Հայութեան, որ իր յեղափոխական հսկայ ցոյցով, հնչեցուց բողոքի և դիմադրութեան ահազանգը, որուն արձագանգները Արագածի գագաթէն գնացին մինչև Արարատի և Կովկասի լեռնալանջերը՝ թրունդ-թրունդ հասնելու համար հայոց սրտերը...

Հայրիկը կը հասնէր Էջմիածին. Հազարաւոր ամբոխ վանքի բակը խռնուած կըսպասէր. երբ կառքը մօտեցաւ «Կեցցէ Հայրիկ» աղաղակները որոտացին և ծափերն ու բացականչութիւնները իրար խառնուեցան. Հայրիկը մտաւ տաճար աղօթեց ու բարձրացաւ Վեհարանը. Դեռ չը նստած բազմաթիւ պատգամաւորութիւնները ներկայացան և խնդրեցին չը յանձնել կալուածները.

Այդ օրերուն մեծ շուքով կատարուեցաւ Էջմիածնի տօնը. Պատարագիչը Հայրիկն էր. Հակառակ ոստիկանութեան արգելքին ահագին ամբոխ լեցուած էր Էջմիածին. Պատարագէն յետոյ երբ Հայրիկը միաբաններու շքախումբով կը բարձրանար Վեհարան, քանի մը հարիւր Հայ կանայք պատուեցին ոստիկաններու շղթաները և մօտեցան Կաթողիկոսին. Այդ րոպէին,— կը գրէ Ռ. Լեռնեանը — «Պատաւ գեղջկուհի մը ձեռքը վեր կարկառած, բացագանչեց— „Երթ դուն Հայոց Հայրիկն ես պէտք է, որ հայոց գոյքը աձիրատին չտաս“. Խրիմեանը լուռ նայեցաւ անոր ու բարձրացաւ Վեհարան. Հոն կիներու կողմէն ընտրուած պատուիրակութիւն մը ներկայացաւ իրեն ու կրկնեց արդէն սովորական դարձած պահանջը».

Ալէքսանդրապոլի ժողովրդական մեծ ցոյցի յաջորդ օրը, Յուլիսի 30-ին, Հայրիկը հրամայեց, որ Էջմիածնի միաբանները երեկոյեան ժամի 7-ին թող գան Վեհարան՝ «խորհրդակցութեան նիւթ դարձնելու համար նախարարական ժողովի բարձրագոյն հաճութեամբ հաստատուած Յունիս 12-ին 1903 ամի նոր կարգադրութիւնը՝ Հայ եկեղեցեաց գոյից և կալուածոց ամբողջ կառավարութիւնը պետական հաստատութիւններին յանձնելու վերաբերեալ». Այս պատմական ժողովին ներկայ էին 29 միաբանները. Կը նախագահէր Երևանի Թեմական Առաջնորդ Սուքիաս Արքեպ. Պարզեանցը, որ առաջարկեց խորհրդակցութեան նիւթ դարձնել այն հարցը թէ «արդեօք պէտք է համակերպել եղած կարգադրութեան թէ հարկաւոր է միջոցներ ձեռք առնել պահպանելու համար եկեղեցական կալուածոց նախկին կառավարութեան եղանակը». ժողովը միաձայն որոշեց «խնդրել Նորին Ցարական Վեհափառ Հայրապետին, որպէսզի օրինական կերպով բողոքէ առ Նորին Կայսերական Մեծութիւն՝ չզրկելու Հայոց եկեղեցին իւր բազմադարեան իրաւունքներից և չը դնելու համար նորան անտանելի կացութեան մէջ»

Այս ժողովէն յետոյ Սուրբիաս Արքեպ.ը վերադարձաւ Երևան, ուր Օգոստոսի 3-ին տեղի ունեցաւ ժողովրդական բողոքի մեծ ցոյցը։ Նախապէս տեսնուած պատրաստութեան համաձայն հազարաւոր ժողովուրդ խռնուած էր Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ բակն ու ներսը. Ժխտունիոյ նորօք հանգուցեալ Առաջնորդ Մելքիսեդեկ Արքեպ. Մուրադեանի յիշատակին կատարուած հոգեհանգստէն յետոյ, երբ Սուրբիաս Արքեպ.ը կ՚ուզէր հեռանալ, ցուցարարները պահանջեցին, անմիջապէս ընկերանալ ժողովուրդին և էջմիածին երթալով «ժողովրդի կենդանի բողոքը կաթողիկոսին և միաբանութեան հաղորդել». Առաջնորդը մերժեց, առարկելով, որ «արդէն մի անդամ եղել եմ էջմիածնում». ժողովուրդը յուզուեցաւ, սպառնական բառերը վեր բարձրացան և կատաղի աղաղակներ օդը թնդացուցին—«Նորից գնացէք, պահանջում ենք, որ գնաք» ևայլն։ Սարսափահար Առաջնորդը մտաւ եկեղեցին, իսկ ոստիկանութիւնն ալ հասաւ ամբոխը ցրելու համար. Բայց զուր. ցուցարարները կառք մը բերին և Առաջնորդը մէջ դնելով, շարժուեցան դէպի Աստաֆեան (այժմ Արովեան) պողոտան». Մօտ 5000 ժողովուրդ սպառնական կոչերով կը հետեւէր Առաջնորդի կառքին՝ «Դէպի էջմիածին, դէպի էջմիածին...» աղաղակելով. Ամբոխն անցաւ Նահանգապետի տան առջևէն և Հրազդանի կամուրջը հասնելով բրոնեց էջմիածնի ճամբան. Ոստիկանապետը փորձեց դիմադրել, պահակները շփոթած, շշմած հոս ու հոն կը վազէին։ Ամբոխը պատռեց շղթան և առաջ անցաւ. Վաղարշապատէն ձիաւոր զօրքեր և ոստիկաններ հասան ամբոխի դիմացն առնելու համար։ Զօրաց թիւը 350-ի հասաւ, մինչ ժողովուրդը կրակ ու բոց կտրած էր։ «Սրերը շողացին, զօրքը հրաման ստացաւ կրակել. ժողովրդի միջից ևս տրաքեցին ատրճանակներ. Հրացանաձգութիւնը կրկնուեց։ Սակայն ամբոխը չը նահանջեց, շղթան պատռեց և հոսանքը առաջացաւ՝ տալով մի քանի վիրաւորուած զինուորներ և ցուցարարներ»։Ցուցարար ամբոխը յաղթական աղաղակներով մտաւ էջմիածնի բակը. որ թնդաց «Բողոքե՛լ, բողոքե՛լ» կոչերով. Վեհարանի դռան առջևի պահապան ռուս զինուորները սարսափահար փախան։ Ժողովուրդը մօտեցաւ. «Կեցցէ՛ Հայրիկ, կեցցէ՛ ժողովրդի Հայրիկը...» կոչերը օդ կը թնդացնէին. ժողովուրդի կողմէ 10 պատգա-

մաւորները Առջանորդ Սուքիաս Արքեպ.ի հետ բարձրացան Վեհարան. Հայրիկը յուզումով ու հաճոյքով խօսեցաւ պատգամաւորներու հետ և խոնարհուելով Հայ ժողովուրդի կամքին առջև խօսք տուաւ կատարել իւր պարտքը և ապա դառնալով պատգամաւորներուն ժպիտով ու կատակով ըսաւ.

—Է՛հ զաւակներս, դուք գացէք, Սուքիաս Սրբազանը թող մնայ հոս, անիկա ձեր վախէն և ուսւսց սարսափէն յոգնած է...»

Պատգամաւորները ծիծաղելով հեռացան և ժողովուրդին յայտնեցին որ «Հայրիկը մեզ հետ է», «Կեցցէ» աղաղակներ և ուրախութեան կանչերը նորէն բարձրացան և ամբոխը երեկոյեան ժամի 7-ին ճամբայ ելաւ դէպի Երևան։

Այս ցոյցէն յետոյ Փոխարքայ Գոլիցինը հետեւեալ հեռագիրը կ'ուղղէր Էջմիածնի Սինօդին.

«Ստիպուած եմ Սինօդիդ կարգադրել Թեմական ատեաններուն, որ իմ մասիս գտնուած անկեղծական եւ վաճառական գալուստները չանձնեն ոեթէ օրուայ ընթացքում պետական վարչութեան եւ չանձնելուց յետոյ յայտնեն Սինօդիդ»։

Սինօդի դատախազ (պրոկուրոր) Վրացի Կանչելին այս հեռագրէն յետոյ կ'առաջարկէր Սինօդին «առանց յետաձգելու ածել ի կատար» «զԲարձրագոյն հրամանն» իսկ եթէ ոչ կը սպառնար պատժական օրինագրքի 37, 1146, 1148 և այլ յօդուածներով: Կանչելին ցարական լրտես և Գոլիցինեան գաշտելի գործակալ մըն էր Էջմիածնի մէջ։ Նա ամենակեղտոտ դերը կը կատարէր այդ տագնապի օրերուն, չանալով երկպառակութիւն առաջ բերել և բանտի ու աքսորի սպառնալիք տարածել Էջմիածնի միաբաններու մէջ, որ հակապետական քայլերը չ'առնէին։

Հայրիկը Օգոստոսի 4-ին, Երևանի Հայութեան մեծ ցոյցի յաջորդ օրը Սինօդին կը գրէր,

«Պատուիրեմ՛ք Սինօդիդ Թողուլ առայժմ գյայտարարութիւն օրենսդրութեան եւ առաջի առնելով մեզ զպատճեան ամենայն գրութեանց, որք հայթի յայս խնդիր միոչ ցնորօք տնօրինութիւն մ'եր»։

Իսկ դատախազ—լրտես Կանչելին ալ կ'առաջարկէր Սինօդին գործել «ըստ ցուցման և թելադրութեան իւրում»։ Սինօդի 4 ան-

դամները – Արքիստակէս Արքեպ. Սեդրակեան, Մակար Եպիս. Բարխուդարեան, Աշոտ Վրդպ. Շախեան և Մխիթար Վրդպ. Տէր Մկրտչեան—Կանչելիք առաջարկը «հակառակ օրինաց» գտնելով Օգոստոս 6-ին իրենց հրաժարականը տալով Կաթողիկոսին յայտնեցին, որ դատախազի «պահանջը ղնէ զմեզ յանել վիճակի ի պաշտօնավարութեան մերում»։

Ներքին Գործոց Նախարար Պլեվէն, 1903-ի Օգոստ 6-ին, Պետերբուրգէն հետևեալ սպառնական հեռագիրը տուաւ Երիմեանին.

«Էջմիածին.—Ամենայն Հայոց Կաթողիկոս Պատրիարք Մկրտչին. Ձեղնկանաչով, որ ձեռնհասական կայուածների վերաբերմամբ յունիսի 12-ի բարձրագոյն հրամանի գործադրութիւնը հանդիպում է յապաղումների, խնդրում եմ Ձերդ Սրբութենան, հոգալ անյապաղ կարգադրութիւն ամեն այս մասին։ Ամեն մի յետաձգում, իբրև ամենազանգուածութիւն թագադրական կամքին, ի՛ռնեն ծանր հետեւանքներ»*)։

Այս հեռագիրը ստանալէ յետոյ Երիմեանը Օգոստ. 6-ին պատասխանեց, որ —«Այս խնդիրը շատ լուրջ նշանակութիւն ունի ամբողջ Հայ եկեղեցոյ համար և կրնայ շատ անցանկալի հետևանքներ ունենալ»։ Կաթողիկոսը Պլէվէի միջնորդութեան կը դիմէ խնդրելով «ժամանակաւորապէս յետաձգել կառավարութեան կարգադրութեան գործադրութիւնը»։ Կաթողիկոսը նոյն օրն իսկ հեռագրեց նաև կայսրին, խնդրելով, որ թոյլ տրուի իրեն անձամբ երթալ Պետերբուրգ և «ներկայացնել կարևոր բացատրութիւններն ու նկատուածները»։

Սակայն «Թագաւոր կայսրը բարեհաճեց բարձրագոյն հրամայել՝ մերժել» Հայոց Կաթողիկոսի «խնդիրքը մինիստրական կոմիտէի բարձրագոյն հաստատած Յունիս 12-ի որոշման գործադրութիւնը յետաձգելու մասին», ինչպէս նաև «անժամանակ գտաւ այս գործի առթիւ» Կաթողիկոսի «անձամբ ներկայանալը»։ Պլեվէն յատուկ գրութեամբ (13 Օգոստ. 1903) խորհուրդ կուտար Երիմեա-

*) Այս պաշտօնական գրութեանց պատճէններէն կարևորները հրատարակուած են Է. Ակինեանի «Դէպի Կոհիւ» գրքին մէջ։ Ձեռքիս տակ ունիմ յիշեալ դիւանական գրութեանց տետրակ մը, որ կը բովանդակէ 15 փաստաթուղթերու պատճէնները՝ 1904-ին տպագրուած Էջմիածնի Հայրապետական Դիւանի գործերէն։

նին թէ — «եթէ Ձերդ Սրբութիւնը անհրաժեշտ կը համարի գալ Պետերբուրգ, Ձեր բռնած ընթացքի մասին բացատրութիւններ տալու, հապա այդ առիթով պէտք է խնդրամատոյց լինել» Գովկասի Փոխարքայի միջոցով։

Սեպտ.ի 4-ին Խրիմեանը հեռագրեց Թիֆլիս՝ Գոլիցինին.—

«Ցիրագին հանգամանք, որ բարդեն զինդիր կատարման որոշման յանձնաժողովոյ նախարարաց յ12 Յունիսի, զօրացուցանեն զդիտակցութիւն անհրաժեշտութեան յանուն Հովանաւորեալ պարտուց իմոց՝ տալ զհանգամանօրէն բացատրութիւն եղանակի գործողութեանց իմոց առաջի ամենազօր հովանաւորի եկեղեցւոյ իմոյ։ Զայս ունելով առաջի աչաց՝ ըստ գրութեան Տ. նախարարի ներքին գործոց յ13 Օգոստոսի՝ յարգոյացար խնդրեմ ի պայծառափայլութենէ Ձերմէ, առնել զպատշաճաւորն միջնորդութիւն՝ թոյլ տալ ինձ երթալ ի Պետերբուրգ վասն յանդիման լինելոյ Նորին Մեծութեան վերոյիշեալ նպատակաւ»։

Հայակեր Գոլիցինը Սեպտ.-ի 6-ին այս կտրուկ և մերժողական պատասխանը տուաւ.

«Էջմիածին։ — Հայոց Ծայրագոյն Պատրիարք Կաթողիկոսին.

*Հաղորդում եմ Ձերդ Սրբութեան, որ մինիստրների կոմիտէի յունիսի 12-ի Բարձրագոյն հաստատուած օրէնքը պէտք է Ձեր կողմից ի կատար ածւի ճշտութեամբ եւ առանց յետաձգման։ Մինչեւ որ այդ օրէնքը ճշտութեամբ չգործադրւի, ես անկարելի եմ համարում միջնորդել՝ Բարձրագոյն բարեհաճութիւն ստանալ՝ Ձեր Պետերբուրգ գնալու համար»;*

Այս անգամ Կաթողիկոսը դիմեց Նիկոլայ Բ. Ցարին.

«...Ութսուն և չորս ամեայ հասակիս ծերութեամբ ես յանձն առի աշխատութիւն անձամբ դիմել առ կայսերական Վեհագոյն աթոռդ։ Այլ, աւաղ, փակեցին այն ազատ ճանապարհն, որ բաց է ամենեցուն առաջ»։ Խրիմեանը կը խնդրէ Կայսրէն, որ փոխել տայ Յունիս 12-ի որոշումը, սակայն Պլեվէն կը պատասխանէ.—

«Թագաւոր Կայսրը Բարձրագոյն հրամայել բարեհաճեց՝ յայտնել Ձերդ Սրբութեան, որ Նորին Մեծութեան վճիռը՝ նոր կարգ հաստատել հայ եկեղեցական կալուածների կառավարութեան գործում՝ ընդառաջ է եւ Ձեր ամենահպատակ խնդիրքը՝ փոխել յիշեալ օրէնքը՝ Նորին Մեծութեան կողմից քողնւած է անհետեւանք»։

Ամերիկայի Փրովիդէնս քաղաքի Հայ գաղութը իւր երախտագիտութիւնը կը յայտնէ Խրիմեանին «այն արիական ընթացքին համար», որ ցոյց տուած է «մեր եկեղեցւոյն նուիրական իրաւունքները պաշտպանելու այս փափուկ խնդրոյ մէջ» և Հայրիկի միջոցով խնդրագիրը տուած է ուսաց ցարին, որ «բարեհաճի յետս կոչել» Ծունիս 12-ի հրամանը։

Շիքագոյի, Բիւլմանի և թէ Ուգենկանի 500 Հայոց կողմէ ընտրուած ժողովրդական Մասնախումբը 1903 Սեպտեմբեր 8-ին կը հեռագրէ Խրիմեանին.

«Լուսաւորչի եկեղեցւոյ զաւակները կը պահպանենք Ազգային եկեղեցւոյ կալուածներու Ռոհիոյ ապօրինի գրաւումին մահ դիմադրէք։»

Ամերիկայի Հայոց Առաջնորդ Ծովսէփ Եպիս. Սարաճեանը կը հեռագրէ՝ «Պաշտպանել մեր եկեղեցւոյ դարաւոր իրաւունքները»։

Բոսթընարիոյ Վառնա քաղաքի Հայերը 800 ստորագրութեամբ կը խնդրեն, որ Հայրիկը անդրդուելի մնայ իւր «կորովի որոշման վրայ և ամէն զոհողութիւն յանձն առնելով» ազգին հարստութիւնը չը յանձնէ Ռուս կառավարութեան, որպէս զի «Ամբողջ աշխարհ հասկնայ, թէ հալածուած Հայ ազգը և անոր Հայրապետը դեռ գիտեն իրենց իրաւունքները պաշտպանել և զանոնք ոտնակոխ ընել չտալ նոյնիսկ ամենազօրեղ կառավարութեանց»։

Շգիկտոնէ Գահիրէի և Աղեքսանդրիոյ Հայութիւնը Այվազեան Եպիսկոպոսի և Դանիէլ Վարդապետի միջոցով իւր հիացմունքը կը յայտնէ Խրիմեանին, խնդրելով չը յանձնել կալուածները։

Պարսկաստանի Հայութիւնն ալ, որ դարեր շարունակ վայելած է Մեծն Իրանի հիւրընկալ պետութեան և բարեացակամ ժողովուրդի հովանաւորութիւնը, իւր բողոքի ձայնը բարձրացուց ուսաց բռնակալութեան դէմ. նոր Ջուղայի Հայութիւնը կը գրէ.

«Արևելքում, մասնաւորապէս Պարսկաստանում, մահմեդականները Ռուսաց թագաւոր կայսեր վրայ նայել են որպէս Հայ եկեղեցու պաշտպանի վրայ. իսկ այսօր ամենքը—թէ Պարսկաստանի և թէ Հնդկաստանի Հայերը, որպէս և պարսիկ ժողովուրդը միանգամայն ապշած են այս անսպասելի ճնշումը տեսնելով Հայոց բազմադարեան անկախ եկեղեցու վերաբերմամբ. Մինչ Կով-

կասի կառավարչապետը արեան մէջ պիտի խեղդէ համայն մարդկութեան մարդասէր քաղաքակրթութեամբ ձեռք բերուած խղճի, կրօնի ազատութիւնը»։

Ամերիկեան Հայութեան կողմէ Առաջնորդ Եղիշէ Վարդ. Մուրադեանը հեռագրեց Հայոց Հայրիկին (23 Օգոստ. 1903).

«Ես ևս ինձ հաւատացած Թեմի ժողովրդի հետ միասին ձայն կը բարձրացնեմ այդ անարդարութեան և հայակեր պաշտօնէից յերիւրած զրպարտութեան դէմ, խնդրելով միջնորդ հանդիսանալ հայ ժողովրդի կողմից Նորին Գահերեցական Մեծութեան առաջ և վերականգնել Հայաստանեայց եկեղեցու իրաւունքն ու սպասաւորների վարկը»։

Եւրոպայի մէջ «Դաշնակցական Անկախ Կոմիտէ» ստորագրութեամբ, 1903-ի Օգոստ-ին լոյս տեսաւ յեղափոխական թռուցիկ մը.

«Հայրենակիցներ, Ռուս կառավարութիւնը, առանց մեր եկեղեցու ներկայացուցչի գիտութեան անգամ, աւազակօրէն յափշտակեց այն բոլորը, ինչ համարւում էր այդ եկեղեցու անձեռնմխելի սեփականութիւն։ ...Բողոք հայութեան բոլոր անկիւններում։ ... Կռիւ ամեն տեղ և բոլոր միջոցներով բռնապետութեան վայրագ ներկայացուցիչների դէմ, որոնք մի մի պատուհաս են դարձել մեր դժբախտ երկրի համար։ Ցոյց տանք ուխտադրուժ բռնապետութեան, որ նա չէ կարող տեւողաբար ու անպատիժ կերպով խաղալ մի ազգի ճակատագրի հետ»։

Տաճկաստանի Հայութիւնը, որ կը տանջուէր Սուլթան Համիդի բռնակալութեան ճիրաններու մէջ, իւր բողոքի և բուռն դժգոհութեան ձայնը բարձրացրուց այն Ռուսաստանի դէմ, որ իբր թէ քրիստոնեայ փոքր ազգերու պաշտպանը կը հանդիսանար։

Սակայն Կ. Պոլսոյ ռուսական դեսպանը պահանջեց, որ Բ. Դուռը խստիւ կերպով արգելէ ինչ ցոյց կամ բողոք։ Գաւառներու մէջ Հայ ժողովուրդը ռուսական հիւպատոսարաններու առջև բողոքի ցոյցեր կազմակերպեց։ Բայց տաճիկ ոստիկանութիւնը ամեն տեղ ոտքի կանգնեցաւ և խեղդեց ժողովրդական արդար բողոքի ձայնը։ Տաճկահայ մամուլը, որ «հազիւ սկսել էր կարծիք յայտնել, ենթարկուեց խոչընդոտ լռութեան», կը մնար խաղաղ ու դադտնի, գրաւոր բողոքի ճամբան միայն։ Տաճկահայաստանի քաղաքներէն ու

գաւառներէն հարիւրաւոր բողոքագիր և խնդրագիր ուղղուեցան Գատրիարքարան, որ հասցնէր Էջմիածին՝ Հայոց Հայրիկին. Գատրիարքարանը իրրև պաշտօնական մարմին, դարձաւ տաճկահայութեան բողոքի և խնդրանքի արտայայտիչ ձայնը, որ պատշաճ և պաշտօնական կերպով կը հնչէր Վոսփորի ափերէն մինչև Էջմիածին և ապա Պետերբուրգ։

Համայեակ Եպիս. Դիմաքսեանը Կ. Պոլսէն կը գրէր (30 Յուլիս 1903) Հայրիկին—«...Մեր Ս. եղեղեցւոյ և ազգի տարեգրութեանց մէջ չեմ յիշեր, թէ տեղի ունեցած լինի այսօրինակ յայտնի բռնաբարութիւն. ո՛չ պարսիկք, ո՛չ հագարացիք, ո՛չ Թաթարք, ո՛չ Լանկ-Թամուր և ո՛չ ձինկիզխան չվարուեցան այսքան չարաչար, և այս 20-րդ դարում քրիստոնեայ ինքնակալ կայսր մը կուզէ այս մեծագոյն հարուածը տալ մեր Եկեղեցւոյն և ազգիս՝ արդարութեան և իրաւունքի սահմաններէն դուրս նիւթական բիրտ ուժի զօրութեամբ»։

Խօսքը «երկաթէ Գատրիարք» և Երուսադէմի աքսորական Մատթէոս Արքեպիս. Իզմիրլեանին է, որ կը գրէ Խրիմեանին.

«...ժամ իսկ է, Վեհափառ Ս. Հայրապետ, գօտեպնդել և բերել ի հանդէս զնոգիդ անվեհեր և աննկուն բարձրացուցանել զբարբառ Ձեր և շատանալով սակաւամատնեայ տրօք ժողովրդեան՝ մի՛ մի՛ բնաւ ընդունել զկարգադրութիւնն զայն կործանարար եկեղեցւոյ և ազգի։ ժամ իսկ է պաշտպանել արիութեամբ իրաւանց եկեղեցւոյ մերոյ և ազատս կացուցանել զնա ի ծառայութենէ ըստրկութեան եթէ վտանգ ինչ պատահեսցէ անձիդ պատուականի»։

Տաճկահայոց Գատրիարքարանն արդէն վաղուց գործի անցած էր և ամէն տեսակ օրինական միջոցներու կը դիմէր կանխելու համար Հայ ժողովուրդի գլխին գալիք աղէտը. Գատրիարք Մաղաքիա Արքեպ. Օրմանեանի Նախագահութեամբ Սեպտ. 9/22-ին (1903) Կ. Պոլսոյ մէջ գումարուեցաւ եպիսկոպոսական ժողով մը, որուն կը մասնակցէին՝ Մեսրոպ Սուքիասեան, Գրիգորիս Յովհաննիսեան Եզնիկ Ապահունի, Մկրտիչ Վեհապետեան, Ներսէս Աբելեանեան, Համայեակ Դիմաքսեան, Գէորգ Երիցեան, Գաբրիէլ Ճէվահիրճեան, Ցիմոթէոս Սափրիչեան, Վահրամ Մանկունի և Բարդուղիմէոս եպիսկոպոսները. Այս ժողովը հանգամանօրէն քննութեան առնելով ռուսաց պետութեան հայահալած ընթացքն ու ազգային կալուածներու գրաւման պատճառները կ'եզրակացնէր, որ եթէ

ռուսները մերժեն Հայութեան խնդիրքը, այն ատեն պէտք է դիմել Եւրոպայի մեծ պետութեանց միջամտութեան և Թրքմանին ալ կը թելադրէին՝ միշտ գործել պատշաճ և օրինական սահմաններու մէջ յուսադրելով, որ «ազգը համերաշխ ոգով կապուած է մեծանուն Հայրապետիդ հետ»։ Ժողովը խնդրագրով կը դիմէր ռուսաց ցարին, ցոյց տալով «մեր նախնեաց անստգուտ ծառայութիւնները ռուսական պետութեան» և ապա կը խնդրէր «բառնալ Հայ եկեղեցւոյն վրայէն այս դառն բաժակը, թողուլ զայն իր դարեւոր խաղաղութեան մէջ»։ Ժողովը Կ. Պոլսոյ ռուսաց դեսպան Զինովիեվին տուաւ պատմական և փաստաթղթ Ցիշատակագիր մը, որուն պատճէն ալ ցարին ղրկուեցաւ։ Ցիշատակագիրը կը շեշտէր — «Ի՞նչպէս հաւատանք, որ նա, որը մի ժամանակ շնորհում էր հայոց եկեղեցուն իր բարձր հովանին, այսօր մտածում է հալածել նրան և նեղել այնքան անակնկալ կերպով»։ Ի պահանջել հարկին Ցիշատակագրին պատճէնները «պիտի հաղորդուին մեծ-պետութեանց Պօլսոյ դեսպաններուն և արգէն Անգլիոյ և Գերմանիոյ դեսպաններուն բերանացի բացատրուած է ռուսական նոր կարգադրութեան աղէտալի վիճակը, հայ եկեղեցուն կրած հալածանքները այլուվին հանդերձ»։ Այս ժողովէն կարդ մը «խորհող անձինք» կ'եզրակացնէին որ «Հայոց Ս. Հայրապետն անդրդուելի մնալու է և իր թախանձանքներ ու խնդիրքներ յարատև կրկնելու և ստէպ խնդրելու։ Վեհ. ցարին ունկնդրութիւնը՝ հեռագրով ու թղթով. ժողովուրդն ալ հանդարտ մնալու է. և երբ ամէն յոյս ամէն միջոց սպառուի, ամէն դուռ գոցուի յայնժամ Հայոց Հայրապետն» կրնայ անցնիլ Եւրոպա կամ Կալկաթա։

Օրմանեան Պատրիարքը Կովկասի Հայութեան ցոյցերն ու ըմբոստ շարժումները լսելով Թրքմանին կը գրէր.

«...Ջարանգութիւնք ի վերայ պաշտօնէից և զկիրառութիւնք հրազինաց ընդդէմ ոստիկանաց և զինուորաց, ոչ միայն չզօրացուցանեն զդատ և զիրաւունս եկեղեցւոյս, այլև տկարացուցանեն զնա։ ...Վասն այսորիկ ցանկալի էր մեզ զի կարճէին ցուցմունքդ աղմկալիցք և գործողութիւնք վտանգալիցք» վասնզի «դիմադրութիւնը օրինաւոր է, ցորչափ օրէնքով է, և օրէնքի վրայ հիմնուելով պարզ եկեղեցական ընդդիմութիւն կրնայ աւելի արդիւնաւոր

նկատուի»։ Սակայն դէպքերն ու պատմութիւնը ցոյց տուին, որ ցարական բռնակալները մազաչափ անգամ հաշուի չ'առին հայ հոգևորականութեան «եկեղեցական ընդդիմութիւնը» և թախանձանքներն ու խնդիրները, իսկ երբ «կիրառութիւնք հրապինաց» և հայ ժողովրդական ըմբոստ ցոյցերը դղրդացին Կովկասի մէջ, այն ատենն էր ահա, որ ռուսաց բռնակալութիւնը հաշուի կ'առնէր Հայութեան բողոքի և սպառնալիքի ձայնը մանաւանդ, որ Հայ յեղափոխական կուսակցութեանց և «Դաշնի Կոմիտէ»ներու ահաբեկիչներու ռումբերն ու գնդակները մահ և սարսափ կը տարածէին գլուղերէն սկսեալ մինչև Թիֆլիսի փողոցները։ Այս յեղափոխական և գերազանցապէս ժողովրդական ցոյցերն ու զինական դիմադրութիւնները այնքան ահաբեկում յառաջ բերին Թուրքիոյ պետական շրջանակներու մէջ, որ Ելտըզի Դաշնը խիստ հրահանգ տուաւ Օրմանեան Պատրիարքին—«Քարոզել զգուշութիւն, դէպքեր չը ստեղծել, վերջ տալ ցոյցերուն և խոհեմ ըլլալ»։ Պատրիարքն ալ իր կարգին կը գրէր Կաթողիկոսին—«Մեր կայսերական կառավարութիւնն ալ շատ զգուշաւոր է ռուսական կառավարութեան հետ ունեցած յարաբերութեանց մէջ և մեզ ալ նոյն զգուշաւորութիւնը կը կրկնուի շաբաունակ և մենք ալ պարտաւորը ենք հնարաւորութեան սահմանին մէջ շարժուիլ և աւելորդ քայլերով միջադէպեր չստեղծել»։

Կիլիկիոյ Սահակ Բ. Կաթողիկոսն ու Երուսաղէմի Ցարութիւն Պատրիարքը խնդրագրեր կ'ուղարկէին Նիկոլայ Բ. ցարին, որ չը դրաւէր Հայ ազգապատկան կալուածները, Տաճկահայոց Պատրիարքարանը գովելի եռանդով մը գործի լծուած էր, թարգման հանդիսանալով գաւառներու Հայութեան ձայնին և լուռ բողոքին։ Այս բոլոր յայտնի և գաղտնի գրագրութեանց պատճէնները կ'ուղարկուէին Էջմիածին՝ Հայոց Հայրիկին, որ Օգոստ. 8-ին հետևեալը կը հեռագրէր.

«Կ. Պոլիս.—Հայոց Պատրիարք Օրմանեան Արեպիսկոպոսին.

*Մեր վերջնահաս որոշումն է չը յանձնել ձայնուածները։ Դուք նոյն գործադրեցէք բոլոր հնարաւոր միջոցներն ու հարկ եղած դիմումները։ Ողարկեցիմք թղթեր. պատասխանեցէք Էջմիածին։*

*Ամենայն Հայոց Կաթողիկոս՝ ՄԿՐՏԻՉ*»։

Այս հեռագիրը հաղորդուեցաւ նաև արտասահմանի Հայ պաղտւթիներու ազգ. մարմիններուն։ Բովանդակ Հայութիւնը հոգեկան հրճուանք զգաց։ Ցաճկահայ «շղթայակապ ժողովուրդը, անկարող աւելի կտրուկ կերպով ապահովելու իր իրաւունքները, յոյս դրեց այդ հեռագրի վրայ, վստահ նրա հեղինակի արիութեանն ու խոստմանը» (Է. Ակնունի)։

Հայոց Հայրիկը նորէն դարձաւ պաշտամունքի առարկայ։ Անմեղ ու միամիտ սիրտերը ծփացին, յուզուեցան և զրկուած ու զարկուած Հայ ժողովուրդը նորէն երգեց.

«Ո՞րմէնաւ Հայրիկ, ասուռ Մ՚կրտիչ,
Դուռ պիտի չիձիս Հայրիկ ջաձ խեղճ Հայոց փրկիչ...»։

* * *

Այս ծանր օրերուն Էջմիածնի պարիսպներէն ներս ապրող միաբանները սարսափի և վհատութեան մատնուած էին։

«—Սրբազան հայր, ինչ պիտի անենք, ինչ դիրք պիտի բռնենք, հարցնում էին երիտասարդ վեղարաւորները, դիրքով և տարիքով աւելի բարձր, ազդեցիկ միաբանակիցներին։

«—Ի՞նչ պիտի անենք, զաւակս, ի հարկէ պէտք է խոնարհուինք Թագաւորի կամքի առջև։ Եւ ինչ կարող ենք անել։ Ոչ թօփ ունենք ոչ էլ թնանգ։ Մենք եկեղեցւոյ սպասաւորներ ենք և խոնարհութեան առաջին օրինակը պիտի տանք։

«Եւ չահէլ, եպիսկոպոսութեան դիրքի տենչացող վարդապետները դուրս էին գալիս սրբազանների խուցերից՝ մրմնջելով՝—Եթէ եպիսկոպոսները այդպէս են ուզում, մենք ինչ կարող ենք անել...»։ («Դէպի Կռիւ». էջ 126—127)։

Այս վհատած և լքուած սիրտերը կը լեցուէին նաև դատախազ Կանչելիի տուած ահաբեր սպառնալիքներով։ Սակայն այս լքման օրերը շուտ անցան։ Վերունազարդ Հայրիկի հոգեկան արիութիւնը և ժողովրդական ցոյցերն ու պահանջկոտ պատգամաւորներու երթևեկը տեսնելով էջմիածնի միաբանները ուշքի եկան, մանաւանդ, որ «Դաշնակ Կոմիտէ»ներու և յեղափոխական կուսակցութեանց անյայտ և խորհրդաւոր «մարդերը»՝ ահաբեկիչները մահուան սպառ-

նալիք կուտային թուլասիրտներուն և ուսասէր անձերուն.

Ահաբեկիչը մտած է եպիսկոպոսի մը սենեակը.

«—Ո՞վ էք դուք, հարցրեց, սրբազան տանտէրը:

«—Ո՞վ եմ ես, ինչ է իմ անունը և որտեղից եմ գալիս—այդ գաղտնիք է: Կ'ասեմ միայն, որ ես՝ անդամ եմ յեղափոխական կազմակերպութեան, ուղարկուած եմ այստեղ հայկական մի գաղտնի կոմիտէի կողմից և պաշտօն ունեմ հաղորդելու ձեզ նրա որոշումը, որի գործադրութիւնը պարտաւորական է անպայման. ...Որոշուած է պատիժ այն հոգևորականներին, որոնք եկեղեցական կալուածները յանձնելու կողմնակից են. Թիշեցէք այդ, և յիշեցրէք նրանց, որոնց դուք քարոզել էք այդ մտքով, ուրիշների մասին ուրիշները կը հոգան...». («Դէպի Կուիւ». էջ՝ 128):

Սակայն աւելի քաջարի գտնուեցան Թեմական առաջնորդները և յաջորդներն ու վանահայրները, որոնք ժողովուրդին մէջ ապրելով բողոքի և դիմադրութեան զգացումներով տոգորուեցան՝ ինքնաբերաբար կամ «Գաղտնի Կոմիտէ»ներու թելադրութեամբ: Կաթողիկոսի հրամանով Ռուսաստանի և Կովկասի Թեմերու առաջնորդները և քազաքներու առաջն. փոխանորդներն ու վանահայրերը եկան Էջմիածին. Օգոստ. 9-ին տեղի ունեցաւ Թեմական առաջնորդներու և Սինոդի անդամներու խառն ժողովը, որ եզրակացուց— «...եթէ Վեհափառ Հայրապետի միջնորդութիւնը չը յարգուի, յայնժամ մենք միաձայն որոշում ենք, որովհետև ռուսահայոց Թեմերում գանուած ստացուածքները պատկանում են օրինական տեսակէտով ոչ միայն ռուսահայոց եկեղեցուն, այլև Տաճկաստանում, Պարսկաստանում և ի սփիւռս աշխարհի ցրուած բոլոր հայերի և ընդհանուր հայ եկեղեցուն, և որովհետև այդ բոլոր ստացուածքը նուէր է հազար վեց հարիւր տարի առաջ ապրող պապերի, ուստի և որպէսզի չը մեղանչենք այդ սուրբ աւանդութեան և կարգի դէմ մենք մեր իրաւասութիւնից բարձր ենք համարում այդ ստացուածների յանձնումն, և որովհետև այսպիսի պայմաններում դժուար կը լինի մեր պաշտօնավարութիւնը, մենք սրանով նեղկայացնում ենք մեր հրաժարականները».

Այս արձանագրութիւնը ստորագրած են՝ Սուքիաս Պարզեան, Արիստակէս Սեդրակեան, Գէորգ Սուրէնեան (այժմ Կաթողիկոս Ամե-

նայն Հայոց), Արիստակէս Դաւթեան, Գրիգոր Գառնակերեան, Մակար Բարխուդարեան և Անանիա Համազասպեան եպիսկոպոսներն ու Աշոտ Եախեան և Մխիթար Տէր Մկրտչեան վարդապետները.

Օգոստ. 11-ի երեկոյեան ժամի 7-ին Կաթողիկոսի հրամանով և Սուքիաս Արք.ի նախագահութեամբ կայացաւ վանահայրերու և առաջն. փոխանորդներու ժողովը, ուրուն կը մասնակցէին՝ Վանահայր Ս. Հռիփսիմէ վանքի՝ Ծուխիկ Եպիս. Մովսիսեան, Սևանի՝ Սարգիս Եպիս. Փիլոյեան, Սանահնի՝ Գարեգին Եպիս. Սաթունեան, Ս. Շողակաթի՝ Գրիգորիս Վարդապետ, Զուարթնոցի՝ Խաչիկ Դադեան, Տաթևի՝ Ներսէս Մելիք-Թանգեան (այժմ Արքեպ.), Զարնքայ՝ Վահան և Մաղնիի՝ Ղուկաս վարդապետները. Իսկ առաջնորդական փոխանորդներն էին՝ Ալէքսանդրապոլի՝ Սահակ Բաղդասարեան, Կարսի՝ Գրիգոր, Դանձակի՝ Բենիկ (այժմ կարգալոյծ), Նուխիի՝ Սիմոն Տէր Մանուէլեան, Հին Նախիջևանի՝ Իսահակ, Ախալցխայի՝ Բարգէն, Նոր Բայազէդի՝ Խորէն Մուրադբէկեան (այժմ Արքեպ.), Նոր Նախիջևանի՝ Մուշէ, Բագուի՝ Մատթէոս և Ղզլարի՝ Թովմա վարդապետները.

Այս պատկառելի ժողովը իւր «հնազանդութեան անկեղծ զգացմունքն» յայտնելէ յետոյ Կաթողիկոսին վստահացուց, որ —«Այս խնդրի լուծման վերաբերութեամբ մենք, վանահայրերս և վիճակաց առաջնորդական փոխանորդներս միայն և միայն հնարաւորը կը համարինք կատարել այն հրամաններն ու հրահանգները, որոնք սկիզբն կ'առնեն ազգիս Վեհափառ Հայրապետէն և կը հաղորդուին մեզ սրբազան առաջնորդների ձեռքով»։

Հայ ժողովրդական ցոյցերն ու յուզումները, խնդրանքներն ու բողոքները այնքան յաճախակի դարձան, որ Պետերբուրգի պետական շրջանակները կասկածի և անել կացութեան մատնուեցան. Ներքին Գործոց Նախարար Պլեվէն սարսափի ենթարկուած, Կովկասի սատրապ Գոլիցինին կը հեռագրէր.

«Եթէ դիմադրութիւնը շատ մեծ է, ժամանակաւորապէս յետաձգեցէք գործադրութիւնը»:

Սակայն Հայ ժողովուրդի արեան ծարաւի Գոլիցինը չնկատի համարձակութեամբ պատասխանեց.

«Բարձրագոյն հրամանը կը կատարուի երկու շաբաթուայ ընթացքում»։

գնացին Հայրիկի մօտ և «անպաճոյճ ոճով, բայց խորը յուզմամբ յայտարարեցին եկեղեցու պետին, որ Հայ կինն էլ միացնում, խառնում է իր ձայնը ընդհանուր բողոքին,— միակ պատասխանը թալանի ամօթալի օրէնքին».

Ախալխալաքի ժողովրդական ցոյցը տեղի ունեցաւ Օգոստոս 23—24-ին. Երկսակայ դիւղերու Հայ ժողովուրդը եկաւ քաղաք. Ցուցարար ամբոխը փակեց խանութները և բողոքի ցոյցեր կազմակերպեց. Ոստիկանութիւնը սարսափի մատնուած հեռուէ հեռու կը դիտէը կատարուած դէպքերը.

Դանձակի մէջ Հայ ժողովրդական ցոյցը արիւնով և դիակներով վերջացաւ. Օգոստ. 29-ին մօտ ութ հազար ժողովուրդ փողոցները թափուելով դիմեց դէպի առաջնորդարան, պահանջելով, բողոքելով, որ կալուածները չը յանձնուին. Փոխ նահանգապետը, ուսացած հրեայ Անդրէեվը, ցոյցին վայրը հասաւ և հրամայեց զօրքին ամբոխը ցրել. Կատաղած ցուցարարները չը հեռացան, այլ ընդհակառակն բարձրացան աղաղակները,—«Ձենք տայ, չենք յանձնի» և ապա քարերու կարկուտը ամէն կողմէ թափուեցաւ հայատեաց Անդրէեվի վրայ, որ սարսափի մատնուած հրամայեց զօրքին ամբոխը ցրել. Կատաղած ցուցարարները չը հեռացան, այլ ընդհակառակն բարձրացան աղաղակները,—«Ձենք տայ, չենք յանձնի» և ապա քարերու կարկուտը ամէն կողմէ թափուեցաւ հայատեաց Անդրէեվի վրայ, որ սարսափի մատնուած հրամայեց զօրքին կրակել. Հրացանները ուժգին համազարկերով որոտացին. Զարհուրելի տեսարան էր. Վայնասուն, աղաղակ, վիրաւորներու հառաչանք, արիւն, աղցունք իրար խառնուեցան: Ամբոխը հեռացաւ տալով 10 սպանուած և 70 վիրաւոր. Հայ նահատակներու թաղումը կատարուեցաւ ոստիկանական հսկողութեամբ.

Թիֆլիսի մէջ Օգոստ. 31-ին Հայութիւնը թափուեցաւ Վանքի եկեղեցւոյ բակը Դանձակի նահատակաց հոգեհանգիստն ու պատհանդէսը կատարելու համար. Հազարաւոր ժողովուրդ ծունկի իջած էր «Դանձակի նահատակներէն, հայկական ինքնապաշտպանութեան առաջին զոհերի համար». Ցանկարծ ժողովուրդը ոտքի կեցաւ և «կեցցէ Հայութիւն, կեցցէ ազատութիւն» աղաղակեց. Ոստիկանութիւնը այլ ու ձախ հարուածներ տուաւ ամբոխին պահանջելով լռել. Զինաւոր կոզակներ և ոստիկաններ օգնութեան փութացին, մինչ երկու հայեր գնդակահար ընկան և ապա ամբոխը հեռացաւ.

Մեծ Ղարաֆիլիսայի մէջ Օգոստ. 31-ին մօտ ութ հազար

Գոլիցինը այդ յանդուգն պատասխանը տալէ յետոյ հրամայեց կրկնապատկել և ուժեղացնել ձեռք առնուած միջոցները։ Քաղաքներու և գաւառական կեդրոններու զինուորական և ոստիկանական իշխանութիւնները լարուած կերպով կը հետևէին կատարուած դէպքերուն. Հայարնակ վայրերը ամենախիստ հսկողութեան ենթարկուեցան.

Այս վտանգաւոր օրերուն Էջմիածնի մէջ պիտի կատարուէր աւանդական միւռոնօրհնութեան հանդէսը*), ինչ որ առիթ պիտի տար ժողովրդական համախմբման.

Գոլիցինը վախնալով, որ Էջմիածնի մէջ խռնուած Հայ ուխտաւորները կրնան մեծ ցոյցեր կազմակերպել, ուստի և Օգոստոսի 23-ին այս նամակը գրեց Կաթողիկոսին.

«Ձերդ Սրբութիւն, ի նկատի ունենալով, որ ներքին գործերի մինիստրը անցանկալի է համարում այս տարի ուխտաւորների համախմբումը Էջմիածնում, միւռոնօրհնութեան առիթով, ես, համաձայն ստատս-սեկրետար Պլեվէի առաջադրութեան՝ արուած անցած յունիսի 23 ից, պատիւ ունեմ ամենախոնարհաբար խնդրելու Ձերդ Սրբութեան՝ յետաձգել սեպտեմբեր 28-ին նշանակուած Միւռոնօրհնութիւնը մինչև մի այլ՝ աւելի բարեպատեհ ժամանակ։ Արդիւնքի մասին բարեհաճեցէք տեղեկացնել ինձ որքան կարելի է կարճ ժամանակամիջոցում».

Այս գրութիւնը դեռ Էջմիածին չը հասած, Հայոց Հայրիկը Օգոստոսի 24-ին կատարեց միւռոնօրհնութեան հանդէսը և պատասխանեց Գոլիցինին.

«Մեք՝ չընկալեալ տակաւին գրութիւն Ձեր, ի 24 սոյն Օգոստոս ամենայն կատարեցաք ի Մայր-Տաճարիս Ս. Էջմիածնի զօրհնութիւն սրբալոյս Միւռոնի», Հազարաւոր ուխտաւորներ, հակառակ ոստիկանութեան արգելքին, խռնուած էին Էջմիածին. ժամերգութենէն յետոյ Հայ կանայք լեցուեցան Վեհարանի բակը և՝ «կեցցէ Հայ ժողովուրդ, կեցցէ Հայրիկ. կորչի բռնակալութիւն» աղաղակներով պահանջեցին ներկայանալ Հայրիկին. Վանքի բակը կը թնդար ոգեւորով, մինչ կանանց ներկայացուցիչները

*) Հայոց Հայրիկը 1903-ի Ապրիլի 5-ին կոնդակով յայտնած էր Հայ ժողովուրդին, որ Սեպտ. 28-ին պիտի կատարուի միւռոնօրհնութիւնը։

ժողովուրդը հսկայական ցոյց կատարեց. ձառեր, ռազմաշունչ երգեր, Դանձակի զոհերու հոգեհանգիստ և սգահանդէս, թափորներ և աղաղակներ իրար խառնուած և՛ ահաւոր և՛ յուզիչ ժամեր ստեղծեցին։ Ոստիկանութիւնը սարսափի մատնուած հրապարակներէն քաշուած էր։

Բագուի ժողովրդական ցոյցն ալ (Սեպտ. 2-ին) զինական դիմադրութեամբ և արիւնով վերջացաւ։ Ցուցարար ամբոխը «Կորչի բռնապետութիւն, կեցցէ՛ Հայ ժողովուրդ» աղաղակներով թափուռեցաւ եկեղեցւոյ բակը, Պարապետ հրապարակի մօտ։ «Ընդունող ծանձնախումբը» պիտի գար եկեղեցւոյ տապանաքարերու վրայ։ Ոստիկանները ու ձիաւոր զօրքերը պաշարեցին եկեղեցին, ուր պահուած Հայ հերիսասարդները ատրճանակներով խոյացան ոստիկաններու վրայ։ Ծայր առաւ կատաղի կռիւ, երկուստեք դիակներ ընկան։ Հասան ձիաւոր զօրքերը, Հայ քաջերը պաշարուեցան, բայց յայտնեցին, որ մինչև մահ պիտի դիմադրենք։ Ի վերջոյ պաշարուածները հաւատալով պետութեան «ազնիւ խօսքին» անձնատուր եղան, բայց խոյն տարուեցան բանտեր աւելի քան 100 հոգի։

Շուտի՛... Հայկական ըմբոստութեան և յեղափոխական հերիսասարդութեան այս արծուաբոյն բերդաքաղաքի Հայութիւնը՝ Դանձակի և Բագուի դէպքերէն յետոյ, մէկ սիրտ մէկ հոգի դարձած, ոտքի կանգնեցաւ և ցոյցերն ու բողոքի ըմբոստ բայլերը աստիճանաբար զարգացան։ Հայերը կողպեցին խանութներ, եկեղեցիներ, ակումբներ և գրադարաններ։ «Ընդունող ծանձնախումբը» գնաց Ագուլեաց եկեղեցին «գրելու համար»։ Հայ ժողովուրդը տուներէն դուրս եկաւ, փողոցները խռնուեցան ամբոխով, որ գնաց դէպի այն հիւրանոցը, ուր իջած էր Դանձակի նահանգապետ Լուցաուն։ Կատաղած ամբոխը քարկոծեց նահանգապետի նստած սեղնակը, ջարդեց ապակիները։ Զօրքը օգնութեան հասաւ։ Հրացանները որոտացին ամբոխի վրայ, որ պատասխանեց ատրճանակներով։ Կռիւը տևեց քանի մը ժամ. երկուստեք ընկան սպանուածներ և վիրաւորներ։ Յաջորդ օր նահանգապետը գնաց առաջնորդարան, չարդել տուաւ զանձարկղն ու դռները, ապա կատարեց «Թալանի օրէնք»ի արձանագրութիւնը։ Քաղաքը զինուորական պաշարման ենթարկուեցաւ, կատարուեցան խուզարկու-

թիւններ, բանտարկութիւն, Թեմական դպրոցը փակուեցաւ, ոստիկաններն ու կոզակները ամէն տեսակ վայրագութիւններ գործեցին, բայց Շուշիի Հայութիւնը բարոյապէս մնաց հպարտ ու յաղթական։ Գատիւ սիւնեցի հայորդիներուն։

Այս օրերուն Սիւնեաց Թեմի առաջն. փոխանորդ և Տաթեւի վանահայր Ներսէս Վարդպ. Մելիք-Թանգեանը թեմական գործերով կուգար Շուշի։ Ոստիկանութիւնը կասկածելով, որ անոր ներկայութիւնը ժողովրդական նոր ցոյցերու և դէպքերու տեղի պիտի տար, ուստի և կը բանտարկէ զայն։ Տաթեւի վանահայրը մէկ ամիս կը պահուի բանտի մէջ և ապա «Ընդունող ծանձնախումբի հետ, հարիւր ձիաւոր կոզակներու հսկողութեամբ կը տարուի Տաթեւ՝ վանքի հարստութիւններն ու կալուածները յանձնելու համար։ Հակառակ ոստիկանութեան ձեռք առած բոլոր միջոցներուն և ճնշումներուն, Մելիք-Թանգեանը չի յանձներ վանքի հարստութիւնները, որոնք ի վերջոյ բռնութեամբ գրաւուեցան։

Սիւնեաց Աշխարհի գաւառական հայաբնակ քաղաքներն ու մեծ գիւղերը բոլորն ալ ուսուց ոստիկանութեան բռնութեանց և պատիժներու տակ տնքացին թէև, բայց ամենուրեք, լեռնական տոկունութեամբ կրցան պաշտպանել իրենց ազգային, բարոյական և նուիրական իրաւունքները։

Կարսի Հայութիւնն ալ Սեպտ.ի 3-ին կազմակերպեց այն հրոկայ և սպառնական ցոյցը, երբ «Ընդունող ծանձնախումբը առաջն. փոխանորդ Կիւրեղ Վարդապետէն պահանջեց Հայոց եկեղեցիներու կալուածներու ցուցակները և գոյքերը։ Կիւրեղ Վարդպ.ը համաձակ և կտրուկ կերպով մերժեց։ Իսկոյն եկեղեցւոյ զանգերը զօղանջեցին, ժողովուրդը խռնուեցաւ առաջնորդարանի առջև և ապա խումբերու բաժնուելով վազեցին դէպի եկեղեցիները։ Աղմուկ, աղաղակ և իրարանցում ծայր առաւ քաղաքին մէջ։ Ամբոխը քարեր նետեց «Ընդունող ծանձնախումբի և նահանգապետի վրայ, որ հրամայեց զօրքին կրակել։ Ցուցարարները պատասխանեցին ատրճանակներով։ Այս անհաւասար կռուի մէջ ընկան չորս հայեր և շատերն ալ վիրաւորուեցան։ Մանր վէրքեր ստացան նաև քանի մը ռուս զինուորներ։ Աւելի քան 5000 ցուցարարներ զարհուրելի աղաղակներով շրջեցան քաղաքի փողոցներու մէջ ազգային և

ռազմաշունչ երգեր երգելով, կառավարութիւնը ձերբակալեց 85 անձեր և խուզարկեց բազմաթիւ տուներ.

Նոր Նախիջեւանի մէջ ժողովուրդը մեծ ցոյցով մ'ըմբոստացաւ. Ոստիկանութիւնը, հրդեհաշէջ զօրագունդն ու ձիաւոր կոզակները հազիւ կրցան ցրել ցուցարար ամբոխը, մինչ առաջն. փոխանորդ Մուշէ Վարդապետն ալ կը հանդիսանար ժողովրդական արդար բողոքի համարձակ արտայայտիչը.

Գաւառական քաղաքներու՝ Նոր-Բայազէդի, Ղազախի, Գորիսի, Ագուլիսի, Ջալալ-Օղլիի, Իգդիրի, Շուլաւէրի, Կաղզուանի, Ախլցխայի եւայլ վայրերու մէջ տեղի ունեցան ժողովրդական բողոքի և ըմբոստութեան բուռն ցոյցեր և զինական դիմադրութիւններ.

Հապա Հայ գիւղերը... Որքան տառապանք և անլուր բռնութիւններ տեսան Արարատեան ու Սիւնեաց Աշխարհներու և Շիրակի դաշտի մեծ ու փոքր, մօտիկ ու հեռաւոր գիւղերը, որոնց քահանաներն ու երեցփոխները գեղջուկ ժողովուրդի գլուխն անցած՝ «Դաշտանի Կոմիտէ»ներու ցուցմունքով գործեցին և ինքնաբերաբար չը յանձնեցին գիւղական աղքատ ու համեստ ժամերու կալուածներն ու գոյքերը. Ռուս ոստիկանի մտրակը և կոզակի սուրն ու հարուածները չը կրցան կոտրել Հայ գեղջուկ ժողովուրդի դիմադրական եւ ըմբոստ ճոգիի թափը, որ երթալով աւելի թև ու թռիչք կ'առնէր, դառնալով ոգեորութեան և ներշնչման աղբիւրը Հայոց Հայրիկին.

* * *

Կովկասի Հայութեան ժողովրդական ցոյցերն ու դիմադրութիւնները, արտասահմանի Հայ գաղութներու և հոգեորականութեան բողոքի և խնդրանքի ձայները այնքան խոր հաւատք և ոգեւորիչ ներշնչեցին Վասպուրականի ծերունազարդ Աբծիւ Հայոց Հայրիկին, որ նա պարզ ու կտրուկ կերպով վճռեց իւր ընելիքը.

Կաթողիկոսը առաջին առիթ թակ, Օգոստ. 21-ին յատուկ կոնդակով (թիւ՝ 1001) Սինոդին գրեց հետեւեալը.

*Մեք, իբրեւ Ընդհանրապետ Հայրապետ ամենայն Հայոց, ընտրեալ միաձայնութեամբ ազգիս ի քահանայապետութիւն հոտի*

Ս. Հօրն Մերոյ Գրիգորի Լուսաւորչի եւ ժայռագոյն վերատեսուչ Առաքելական Ս. Եկեղեցւոյս Հայաստանեայցս, այսու հայրապետական կոնդակիս մերով պատուիրեմք Ստեփիդ՝ չառնել ոչինչ իարգադրութիւն ի կողմանէ Սիւնհոդիդ առանց հրաւիրագրութեան մերոյ, վասն որոգ կարգադրութեան ժողովոյ ամբարարաց հաստատեալ Բարձրագոյն հաճութեամբ յ21-ի յունիսի տարւոյս, յաղագս որ նդամանիի գոյից եւ ստացուածոց եկեղեցեաց եւ վանքից մերոց Ռուսաստանի։

ՄԿՐՏԻՉ Կաթողիկոս Ամենայն Հայոց»։

Այս կոնդակի հրահանգէն 13 օր յետոյ, Սեպտ.ի 4ին, Երեանի նահանգի Հայ եկեղեցական կալուածները և գոյքերն «Ընդունող Յանձնախումբ»ի անդամներն ու նախագահը՝ նոյն ինքն Երեանի հայատեաց փոխ-նահանգապետ վրացի Իշխան Նակաշիձէն՝ էջմիածին գալով ներկայացան Հայոց Կաթողիկոսին։ Այն պաշտօնական խօսակցութիւնը*), որ տեղի ունեցած է Վեհարանի մէջ, նոյն օրն իսկ գրի առնուած և ապա հրատարակուած է (1904-ին) է. Ակնունիի «Դէպի Կուր» գրքին մէջ (էջ՝ 38—40 և 177—179), ուրկէց կը մէջ բերեմ կարեւոր մասերը.

«Իշխան Նակաշիձէ.— Ձերդ Սրբութիւն, յայտնի կը լինի Ձեր Սրբութեան՝ մինիստրական ժողովի ներկայ տարւայ յունիսի 12-ի որոշումը, հաստատուած Բարձրագոյն կամքով և հաճութեամբ, որով յետ այսու Ռուսաստանի Հայ եկեղեցիների և վանքերի կալուածների, կայքի և դրամագլուխների կառավարութիւնը պիտի անցնի նոր կազմուած մինիստրութիւններին, պահելով ամեն մի եկեղեցու և վանքի սեփականութեան իրաւունքը։ Որքան մեզ յայտնի է, այդ հրամանը նորին գործերի պարոն մինիստրի միջոցով յայտնուած է Էջմիածնի Սինոդին։ Ես և իմ ընկերներս, որոնց պատիւ ունեցայ ներկայացնելու Ձերդ Սրբութեան, Գովկասեան բարձր իշխանութեան կողմից նշանակուած լինելով Երեւանեան նահանգի եկեղեցիների և վանքերի ստացուածները և դրամագլուխները ընդունող յանձնաժողովի

*) Էջմիածնի միաբան Տօրէն Վարդպ. Ղազարեանն ալ այս խօսակցութեան համառօտ և ճշգրիտ բովանդակութիւնը իմ խնդրանքով յիշողութեամբ գրի առաւ 1927-ին և դրկեց ինձ (Ամերիկայէն)։

անդամներ, հրաման են ստացել գալ այսօր Վաղարշապատ և ստանալ Ձերդ Սրբութեան հաճութիւնն և աջակցութիւնը՝ ձեռնարկելու բարձրագոյն հրամանի ի կատար ածման.

«Վեհափառ Կաթողիկոս.— Ինձ ալ յայտնի է յիշեալ նոր որոշումը, որ միանգամայն անսպասելի էր համայն Հայ ազգի և ինձ համար, քանի որ դժուար էր կարծել, թէ այդ օրինակ մի կարգադրութիւն կրնար տեղի ունենալ եկեղեցու մը վերաբերմամբ՝ առանց նախապէս անոր ներկայացուցչին յայտնելու կամ գոնէ կարծիք հարցնելու։ Այն օրէն, երբ ես էջմիածին մտայ և երդմամբ ընդունեցի ուսաց Մեծազօր կայսեր հպատակութիւնը, ուխտեցի լինել ամենահաւատարիմ հպատակ իմ թագաւոր կայսեր։ Այսու հանդերձ պիտի ըսեմ հրապարակաւ, որ յիշեալ երդմանս հետ միաժամանակ երդուեցի Աստուծոյ առջև՝ ինձի վստահացած եկեղեցւոյ առջև՝ մնալ հաւատարիմ Ս. Եկեղեցւոյս և ազգիս, պահպանել նորա դարաւոր սրբազործուած իրաւունքն ու արտօնութիւնները և երբէք չը դաւաճանել իմ կոչմանս, եթէ նոյնիսկ մահ ինձ վիճակուի, այլ ինչ որ ստացեր եմ իմ նախորդներէն, նոյնն անթերի թողնել իմ յաջորդին. Մնալով հանդերձ հաւատարիմ հպատակ իմ թագաւոր կայսեր, կը յայտնեմ, որ երբէք չեմ կրնար իբրև Հայոց Հայրապետ, համաձայն լինել ներկայ նոր օրէնսդրութեան և չեմ ընդունիր զայն երբէք, քանի որ միանգամայն կը յեղաշրջէ ինձ հաւատացած եկեղեցւոյ դարաւոր իրաւունքներ և վարչական կարգեր.

«Նակաշիձէ.—Ձերդ Սրբութիւն, հաւատալով հանդերձ Ձերդ Սրբութեան հաւատարմական անկեղծ զգացմունքներին և հովւապետական պարտաւորութեան, խնդրեմ ընդունել, որ ես նոյնպէս իմ թագաւոր կայսեր ամենահաւատարիմ հպատակ և երդեալ պաշտօնեան եմ. Ինձ համար նոյնպէս սուրբ է թագաւոր կայսեր կամքը, և ես, իբրև իմ թագաւորի երդեալ պաշտօնեայ, պարտաւոր եմ Նորին Մեծութեան հրամանը անթերի կատարել. Թոյլ տուէք յայտնել, որ ես որևէ եղանակով անշուշտ պիտի կատարեմ իմ կայսերը հրամանը, որի համար դարձեալ կը խնդրէի Ձերդ Սրբութեան հաճութիւնը:

«Կաթողիկոս.—...իմ համաձայնութիւնս յայտնել և այս խնդրի

առթիւ ձեր ձեռնարկութեան մասնակից լինել չեմ կրնար։ Նոյնը և հրամայեր եմ իմ ներկայացուցիչներին, թեմական առաջնորդներին և սինօդականներին, որոնք նոյնպէս ինձ հետ ուխտած են չմասնակցիլ այս խնդրին։ ...Այսօր իսկ աշխարհի ամէն կողմերէն հայեր ինձ դիմելով իրենց ներկայացուցիչների միջոցաւ՝ պատրիարք, եպիսկոպոս, առաջնորդ և ժողովուրդ, կը խնդրեն միջնորդ լինել առ Թագաւոր կայսրն՝ անխախտ թողնելու հայոց եկեղեցւոյ դարաւոր իրաւունքները»։

Սակայն «խնդիրը լուծում չը ստացաւ, կը գրէ Է. Ակնունին։ Նենգամիտ պաշտօնեաները այս կողմ այն կողմ ընկան, փորձեցին ազդել խոստումներով, սպառնալիքով, փորձեցին դաւեր լարել,— սակայն դարձեալ անօգուտ։ Աջողութեան ոչ մի նշան չէը երեւում»։

Գոլիցինեան գաղշելի գործակալ Իշխան Նակաշիձէն, Սեպտ.ի 16-ին նորէն էջմիածին եկաւ և նոր տեսակցութիւն խնդրելով ներկայացաւ կաթողիկոսին.

«Նակաշիձէ.—Ձերդ Սրբութիւն, այսօր տասներորդ օրն է, որ մեկնելով Երեւանից՝ ձեռնարկել իմ յունիս 12-ի Բարձրագոյն հաստատուած օրէնսդրութեան գործադրութեան. նոյն օրէնքի տրամադրութեամբ՝ ընդունեցինք որոշ կալուածներ, որոնք կը պատկանէին Մայր Աթոռին։ Բայց քանի որ նոյն օրէնքի մէջ խօսք կայ և՛ դրամական գոյքերու մասին, որոնք կը պատկանին եկեղեցիներուն և վանքերուն, հետևաբար այստեղ, Մայր Աթոռի մէջ մեզ կը մնայ ուրիշ ընելիք մը ևս, որպէս զի Բարձրագոյն հրամանը լիովին կատարուած լինի։ Իմ և ինձ հետ միասին կովկասեան բարձրագոյն իշխանութեան կողմէ նշանակուած ընդունող յանձնախմբի խոնարհ խնդիրն է առ Ձերդ Սրբութիւն, որ բարեհաճէք հրամայելու՝ թոյլ տալ մեզ վերցնել գանձարանի մէջ եղած դրամական կարողութիւնն ալ։

Կաթողիկոս.—Ինչ որ կը վերաբերէր արտաքին կալուածներուն, դուք ազատ էիք վերցնել՝ Ձեր հայեցողութեան համաձայն, ինչպէս այդ կը տրամադրէ նոր օրէնքը, բայց ինչ որ կը վերաբերի Մայր Աթոռի գանձարանին, ատոր ես պիտի ըսեմ հետեւալը։ Մայր Աթոռի անուան և վարկի հետ կապուած է գանձարանը։ Յանձնելով վանքի գանձարանը ձեզ, ես երկրորդ օր իմ ձեռքով պիտի

փակեմ և Մայր Ցանաչքի դուռը։ Ամսոյս 18-ին ես ուղարկեցի յանուն Նորին Մեծութ. Թագաւոր կայսեր իմ ամենախոնարհ աղերսս ներկայ խնդրի առթիւ, կը յուսամ ու մեծ հաւատով կ'սպասեմ, որ Նորին Մեծութեան ողորմութիւնը պիտի հասնի ինձ և խնդիրն ստանայ բարեյաջող լուծումն։ Ուստի կը խնդրէի այս մասին այլևս խօսք չընել։

«Նակաշիձէ.—Ձերդ Սրբութիւն, ես ինձ ընկերացող ծանձնախմբի հետ միասին իմ խորին շնորհակալութիւնս և երախտապիտութիւնս կը յայտնեմ Ձերդ Սրբութեան։ Մեր կատարած գործողութիւնների միջոցին, տասն օր շաբունակ և ոչ մէկ տեղ մենք ոչնչէ դիմադրութեան չի հանդիպեցանք և կամ ոչնչէ անախորժ դէպքեր չի կատարուեցան, և ես լի երախտապիտութեամբ այդ կը վերագրեմ Ձեր անմիջական ներկայութեան և ազդեցութեան։ Գալով այն առարկութեան, թէ վանքը գանձարանի վարկով կը պահպանուի, ես կը վստահացնեմ, որ եթէ իմ խնդիրս՝ խաղաղութեամբ, քաղցրութեամբ և սիրով վերջանայ ես կարող եմ անմիջապէս հետագրել պատշաճաւոր իշխանութեան՝ և վանքի առօրեայ պէտքերի համար գուցէ գումարներ բաց թողնուին։ Գալով Ձերդ Սրբութեան խնդրագրին յանուն Թագաւոր Կայսեր, ես նորից կըրկնում եմ, որ եթէ խնդիրը համերաշխութեամբ վերջանայ, յոյս ունեմ թէ Նորին Մեծութիւնը աւելի լայն ըմբռնելով խնդիրը գուցէ իր շնորհն անէ և ողորմած լինի դէպի Ձեր ուղերձը։

«Կաթողիկոս.—Ես, իբրև ամենայն հայոց կաթողիկոս, հրամայած եմ իմ առաջադրեալ հոգևորականութեան և խրատեր եմ ժողովրդին, որ ոչ մի մասնակցութիւն չունենան այս խնդրոյ մէջ, ինչպէս մենք ոչէ մասնակցութիւն չունեցանք. արդ ինչպէս կարող եմ ինքս մասնակցիլ Ձեր առաջարկութեան և իմ ձեռքով իմ գանձարանը Ձեզ յանձնել. Ի՞նչ պիտի ըսէ ինձ իմ ժողովուրդը յանձնելու դէպքում. չէ՞ որ նա պիտի ըսէ՝ մեզ հրամայեց չմասնակցիլ, իսկ ինքը գանձարանը յանձնեց։ Ո՛չ, այդ երբէ՛ք չի կրնար տեղի ունենալ. Ուստի եւ իմ վերջնական խօսքս է՝ երբէք իմ կողմից գանձարանը չյանձնուիր. վարուեցէք ինչպէս ձեր ցանկութիւնն է և ինչպէս օրէնքը կը տրամադրէ. եթէ հաճելի է Ձեզ՝ կրնաք կնքել գանձարանը. Այս է իմ վերջին խօսքը»։

Կաթողիկոսի այս վերջին խօսքն ու կտրուկ պատասխանը լսելէ

յետոյ, Նակաշիձէն կը կոտրուի և խնդրական ու խղճալի ձայնով մը կ'աւելացնէ.

—Ձերդ Սրբութիւն, խնայեցէք ինձ, չորս զաւակներու հայր եմ, ես ինչ պատասխան տամ իմ Թագաւոր կայսեր։

Իսկ Հայոց Հայրիկը անմիջապէս կը յարէ.

—Եթէ դուն չորս զաւակներու հայր ես, ես ալ չորս միլիոն զաւակներու հայր եմ, հապա ես ինչ պատասխան պիտի տամ իմ ազգին։

Նակաշիձէն գլխիկոր և ամօթահար կը հեռանայ, մինչ Հայոց Հայրիկը կը ծխէ ու կը խոկայ։

Կը պատմեն, որ այս խօսակցութեան ժամանակ ծերունազարդ Հայրիկը նստած էր սեղանին առջև, մէջքն ուղղած, կուրծքը դուրս, դէմքը գունատ, աչքերը բոցավառ և լայն բացած, նայուածքը խրոխտ և առնական, կը խօսէր ծանր, հատիկ հատիկ և վճռական շեշտով։ Անոր վեհափառ կեցուածքն ու հզօր շեշտը կ'արձանացնէին Հայ ժողովուրդի աչդար բողոքի հուժկու ձայնն ու յեղափոխական քաջարի գործերը։

Այժմ խօսքը տանք ժամանակակից ականատես և կենդանի վկային՝ էջմիածնի միաբան Խորէն Վարդպ. Լազարեանին.

«Վեհափառ Հայրիկի կտրուկ ու վերջնական պատասխանն առնելէ յետոյ, Իշխան Նակաշիձէն և իր հետևորդները գնացին դէպի վանքի դանձարանը, որ կը գտնուի Վեհի ննջարանի ներքնի յարկում։ Նակաշիձէի հրամանով դանձարանի դուռը կնքեցին, պահակ զինուորներ դրին ու գնացին Երևան, ուրկից օրէց օր մեծ քանակութեամբ ռուս զօրքեր եկան Վաղարշապատ։

«Հայրիկը հոգեկան ծանր տագնապի ենթարկուած՝ անվերջ կը ծխէր ու մեն կուգար դահլիճին մէջ։ Որպէսզի Հայրիկը մենակութենէն չը սրտնեղէր՝ Դիւանապետ Կորիւն Վարդապետ, տաքբաքախտ Գամիտաս Վարդապետ, ես և Խորէն Եպիսկոպոսը հերթով կամ միասին կը մնայինք իր քով։ Նակաշիձէն դանձարանը կնքելէ յետոյ երբ հեռացաւ, Հայրիկը դարձաւ ինձ և իր սովորական, մեղմիկ ձայնով ըսաւ.—„Ծօ ապուշ, գնա՛ դանձապահը հոս կանչել տուր“։ Վանքի դանձապահ Եղիշէ Վարդպ. Ահարոնեանն եկաւ և խոբը գլուխ տալով կանգնեցաւ։—«Հա՛, եկա՛ր, Եղիշէ Վարդա-

պետ,— ըսաւ Հայրիկը— շուտ գնա զանձարանի բանալիները ու մատեանները բեր հոս, շուտ»։ Հրամանը կատարուեցաւ։

«Սեպտեմբերի 22-ի առաւօտեան ժամի 10-ին, Դիւանատան մէջ կ'աշխատէի, երբ Հայրիկի զանգը հնչեց. վազեցի գահլիճը, ուր մենակ կ'երթեւեկէր, երբ ինձ տեսաւ ըսաւ— «Հոս կանչեցէք Լուսարարապետ Ղևոնդ Եպիսկոպոսը»։ Լուսարարապետը եկաւ, Հայրիկը դարձաւ անոր,— «է՛հ, Ղևոնդ Սրբազան, այս գիշեր Մայր Տաճարին մէջ Հսկումն և Եկեսցէ պիտի ընենք, իմաց տուէք միաբանութեան և ժողովուրդին, զանգակները տխուր հնչեցուցէք, անուշ և յուզիչ ձայնով երգեցէք Տէր Ողորմեայի այս տուն— „Արի Աստուած ճարցն մերոց, որ ապաւէնդ ես ճեղելոց, հաս օգնութիւն ծառայից քոց, յեր օգնական ազգիս Հայոց“։ Ասիկա ալ տեսակ մը ժողովրդական կրօնական ցոյց մըն է, վասն զի Սիրս բազաւորաց՝ ի ձեռն Աստուծոյ են»։

«Այդ նոյն օրը, երեկոյեան ժամի 7-ին, էջմիածնի Կաթուղիկէն զանգակը հատ հատ և տխուր կը զօդանչէր։ Հիւանդ ու ծերունի միաբաններն անգամ իջան Տաճարը, ուր խռնուած էր նաև ահագին ժողովուրդ։ Հայրիկն ալ եկաւ, բայց հայրապետական գահին վրայ չը բազմեցաւ, այլ մենակ, տխուր և յուզուած կանգնեցաւ առեանը. նա յոգնած աչեն ծունկի կուգար և գլխաբաց կ'աղօթէր։ Կրօնական արարողութիւնը շատ յուզիչ ու խորհրդաւոր անցաւ։ Վերջանալէ յետոյ երբ Հայրիկը դուրս եկաւ Տաճարէն, հազարաւոր ամբոխը հուժկու ձայնով մը պոռաց „Կեցցէ՛ Հայրիկ, կեցցէ՛ Հայութիւն“։

«Ծանր ու խորհրդաւոր գիշեր էր. ոչ մի ձայն, միայն պահակ զինուորներու սուլոցները կը խանգարէին գիշերային լռութիւնը։ Լուսացաւ։ Սեպտեմբերի 23-ի առաւօտեան, կայծակի նման լուրը տարածուեցան Վանքի և Վաղարշապատի մէջ թէ՝ այսօր Վանքի գանձարանի դուռը չարդելով պիտի բանան և գանձերը տանեն։ Ռուս զօրքերը շարժման մէջ դրուեցան։ Վանքի գուներու առջև, Ղազարապատի և Ճեմարանի բակերն ու անցքերը լեցուեցան ռուս զօրքերով։ Ժամի 11-ին եկաւ Իշխան Նակաշիձէն մօտ երկու հարիւր ձիաւոր կոզակներով, որոնք սուինները հրացաններու վրայ ամրացնելու հրամանը ստանալէ յետոյ պաշարեցին Վեհարանի տա-

ներքները, դռները ու բակը։ Նակաշիձէն հրամայեց, որ ոչ ոք ներս չը մտնէ, իսկ ինքը՝ «Ընդունող Յանձնախումբ»ի, Սինօզի դատախազ Կանչելիի, ասոր օգնական հայազգի Ռուստամ-Բէկ Մադաթեանցի և զինուած կոզակներու հետ, Տղոցի դուճէն ներս մտնելով գնաց դէպի գանձարանը։ Մենք վեհարանի պատուհաններէն կը դիտէինք դուրսի շարժումները։ Այդ րոպէին Ռուստամ-Բէկը եկաւ վերը և գնաց Հայրիկէ մօտ ու ըսաւ—«Վեհափառ Տէր, եթէ կարելի է բանալիները շնորհ ընէք, թող Ձեր կամքով լինի, հակառակ դէպքում կը ջարդեն գանձարանի դուռը»։ Հայրիկը ձեռքը սեղանին զարկաւ և բարձր ձայնով կանչեց,—«Կորի՛ր, ճեռացի՛ր այստեղից, բաճալիճները չեմ տար, ինչ որ գիտեն թող ըճեն»։

«Հայրիկի վերջնական պատասխանը լսելէ յետոյ Նակաշիձէն հրամայեց փշրել գանձարանի դռները։ Ռուս վարպետներու մուրճերն ու գործիքները դրմփ հա դրմփ, չըխկ հա չըխկ կը գործէին։ Երկաթեայ լոմեր, բիրեր և կոթիչ սեպերը փշրեցին ու կրնկահան ըրին գանձարանի Ա. և Բ. դռները։ Նակաշիձէն և իր հետևորդներն արդէն կանգնած էին գանձարանի մէջ, երկաթեայ մեծ մեծ գանձարկղներու առջև (15, 30 և 80 փութ ծանրութեամբ)։ Հայրիկը լուռ և մտախոհ կ'երթևեկէր դահլիճին մէջ ու կը ծխէր։ Դէմքը գունատ էր և անհուն վշտով ու թախիծով պատուած։ Դիւրին անգոր է պատկերացնելու անոր այնքան մեծ ու շատ հոգեկան տառապանքը, որուն ականատես եղանք ես և Կորիւն Վարդապետը։ դահլիճի պատին տակ կանգնած էինք երկուքս ալ դլխիկոր, տխուր ու կը դիտէինք անոր պատկառելի հասակն ու գունատ, վշտահար դէմքը։ Ծանկարծ մտքովս անցաւ այն միտքը, թէ մի գուցէ Հայրիկը հոգեկան տառապանքին չը կրնալով տոկալ կաթուածահար ըլլայ և փուուի գետին։ Ուստի առանց բան մ'ըսելու գլուխ տուի ու դահլիճէն դուրս գալով գնացի Կորէն Խրիմեանի մօտ և ըսի—„Կորէն ջան, գնա Հայրիկին ըսէ կառքը բերեն, թող երթայ Ս. Գայիանէի վանքը“։ Հայրիկը մեր առաջարկն ընդունեց։ Երբ սանդուխէն վար կ'իջնէինք գանձարանի կողմէն որոտացին մուրճերու ուժգին հարուածները, որոնց ի լուր Հայրիկը ամբողջ մարմնով ցնցուեցաւ, սարսռաց և հառաչեց։ Այդ ծանր և ուժգին հարուածները օրքան խոովեցին անոր սիրտն ու հոգին և

այդ բոպէին ինչեր անցան անոր մտքէն.... Հայրիկի թևերէն բռնելով տարանք Թանգարանի դուռն առջև, ուր կը սպասէր կառքը. նա ոտքով վազեցի վանքը, որուն ժամանակաւոր վանահայրն էի, Սեհնակը պատրաստեցի և ընդառաջ եկայ. Դեռ չը նստած սուրճ պահանջեց. Սուրճը բերինք. Անվերջ կը ծխէր, կը խոկար և ի խոր ոտք կը հառաչէր. Ծանկաթէ տեղէն վեր կեցաւ և ըսաւ—„ես կ'երթամ Ս. Հռիփսիմէի վանքը". Նստեցուցինք կառքի մէջ, մենք ալ ուրիշ կառքով մը հետևեցանք իրեն և Վաղարշապատի փողոցներէն անցնելով գնացինք դէպի Ս. Հռիփսիմէի վանքը. Փողոցներու մէջ ձիաւոր կոզակներ կ'երթևեկէին, իսկ ժողովուրդը սարսափի մատնուած դռները փակած և ներս մտած էր. երբ հասանք վանքի առջև հրամայեց, որ երթանք վանապատական Ղուի այգիը. կառքը ծառուղիներու մէջէն երթալով հասաւ չինարի ծառերու մօտ. Հայրիկը վար իջաւ կառքէն և կանաչի վրայ փռուած գորգին վրայ նստելով մէջքը զարկաւ չինարի գարաւոր ծառին, աչքերն ուղղեց վեհափառ ու ձիւնապատ Մասիսի գագաթին և կարծես իր խոր վիշտն ու Հայութեան տառապանքները լռելեայն կը պատմէր Հայոց Աշխարհի լեռնապատին. Ծխախոտի ծուխի գալանները հանդարտ ոլորտներով դուրս կ'ելլէին անոր բերնէն ու քթէն և ամպի նման կը սաւառնէին գլխավերևը. Անոր խառնած սիրտն ու փոթորկուած հոգին բանաստեղծական սքանչելի տեսք մը տուած էին իր խնկագոյն դէմքին. Դրաւիչ աչքերն ու սրատես հայեացքը կ'արտայայտէին համակ յուզում և զգացում. Աստուածաշնչական մարգարէի մը տիպարն ունէր նա, որը պատկերացնելու համար երանի թէ մէկ մէկ հոգերան ունկարիչ ըլլային այնտեղ. Լուռ էր, մտածկոտ և անվերջ կը նայէր դէպի երկինքն ու Մասիսը և կարծես երկուքէն ալ օգնութիւն կը խնդրէր. Երբեմն ուշադիր կերպով կը նայէր դէպի Վաղարշապատ և կարծես կը փորձէր ինչ որ ձայներ լսել. Մուրճերու հարուածները կ'ուզէր լսել թէ՝ ժողովրդական ըմբոստութեան և բողոքի հուժկու ձայնը.... Ու մենք կը դիտէինք անոր այդ ապրումները, անոր հոգեկան տառապանքներն ու փոթորկումները, որոնք ծնունդ առած էին այդ համազգային ծանր հարուածէն.

«Այգեպանները խաղողի լաւ տեսակներէն քաղելով լեցուցին

զամբիւղը և դրին Հայրիկի առաջ, բայց նա բնաւ չը կերաւ, այլ միայն կը ծխէր ու կը ծխէր. Հազիւ թէ կէս ժամ հանգստացած էր, երբ ձայն տուաւ—„ես կ'երթամ Շողակաթի վանքը“ և ոտքի ելաւ։ Հինգ րոպէ յետոյ հասանք Շողակաթի վանքը, ուր թէյ պահանջեց. Դանդաղաշարժ վանահայր Սամադարցի Գրիգոր Վարդապետը հազիւ կրցաւ ինքնաեռը տաքցնել տալ։ Հայրիկը երբ տեսաւ, որ թէյը կ'ուշանայ—„երթանք Մայր Աթոռ“ ըսաւ ու կանգնեցաւ. Ութ րոպէ յետոյ կառքերը կանգնեցան Ճեմարանի դրան առջև։ Շաթիերը երբ կառքէն վար իջաւ, պահակ զինուորը սուինաւոր հրացանը ձեռքին կանչեց—Նելիզեա՛ (չի կարելի)։ Արգելք, որ Հայոց Կաթողիկոսը չը մտնէր Էջմիածին. Կառքերը քշել տուինք դէպի Վաղարշապատի հրապարակը, դէպի Տրդատի դուռը, ուր խռնուած էին ձիաւոր կոզակներն ու զօրքերը։ Աստեղ ալ նոյն արգելքին հանդիպելով, գնացինք դէպի Ս. Գայիանէի վանքը. Այս արգելքը աւելի խոցեց Հայր Արծուի վիրաւոր սիրտը, որ հանգիստ չ'ունէր. Նա կը տանջուէր և՛ հոգեպէս և՛ մարմնապէս, մինչ մենք ոևէ կերպով չը կրցանք զինք հանգստացնել։

«Էջմիածնի գաւառապետը—ծագումով գերմանացի Լեմերման*)—տեսնելով, որ պահակներու կողմէ՝ Կաթողիկոսի դէմ վանք ներս մտնելու յարուցուած արգելքը կրնայ ժողովրդական բողոքի և կամ ծանր դէպքերու առիթ տալ, ուստի Նակաշիձէի կամքն առնելէ յետոյ, եկաւ Ս. Գայիանէի վանքը և Հայրիկին ներկայանալով ըսաւ—«Ձերդ Սրբութիւն, այդ տգեղ թիւրիմացութեան համար ներողամիտ եղէք. կը խնդրեմ, որ երթաք Մայր Աթոռը, որուն դռները Ձեր առջև միշտ բաց են». Հայրիկը զայրացկոտ դէմքով նայելէ յետոյ ձեռքը սեղանին զարկաւ ու պոռաց—«Կորսուի՛ր». Լեմերմանը շփոթած և ամօթահար հեռացաւ։

---

*) Ռուսաց բռնապետութեան այս աղուէս գործակալը Էջմիածնի գաւառապետութեան իւր պաշտօնը շարունակեց մինչև 1917-ի Փետր.ի վերջերը և ապա պաշտօնանկ եղաւ ու անհետացաւ, երբ Նիկոլայ Բ. Ցարն ու ռուսաց միապետութիւնը տապալեցան։ Լեմերմանը երկար տարիներ պաշտօնավարելով Հայաստան մէջ, կը խօսէր հայերէն, Էջմիածնի ներքին կեանքին ծանօթ էր և մեր ազգային ու քաղաքական ձգտումներուն տեղեակ ըլլալով, հակահայ քաղաքականութեամբ կը գործէր։

«Երեկոյեան ժամի 5,30-ին Հայրիկը Ս. Գայիանէի վանքէն դուրս գալով գնաց դէպի Վեհարան։ Մենք ալ կը հետեւէինք իրեն. Թանգարանի դռնէն ներս մտնելով իջանք Վեհարանի բակը։ Անցանք գանձարանի առջեւէն. Դեռ պետական պաշտօնական կողոպուտն ու թալանը կը շարունակուէին. Գանձարանի ներսէն խօսակցութեան ձայներ կը լսուէին, մինչ սուինաւոր պահակներն ալ սարսափահար կ'երթեւեկէին բակին մէջ և տանիքներու վրայ։ Բարձրացանք Վեհարան. Հայրիկը մտաւ դահլիճը և բազկաթոռի մը վրայ նստելով ձեռքը գլխուն դրաւ, քնկաւ խոր մտածմունքի մէջ, իսկ մենք ալ հեռուն կանգնած կը դիտէինք անոր Մեծ Վիշտը, որ մեր սիրտն ալ կ'արիւնոտէր։ Այս առեն էր ահա, որ դատախազի օգնական Ռուստամ Բէկը ներս մտաւ և գլուխ տալով ըսաւ. — «Վեհափառ Տէր, ինչ որ պէտքն էր վերցուին և գնացին, մնացածներին տէր եղէք»։ Հայրիկը չը նայեցաւ անոր երեսը, լուռ մնաց և ապա, երբ նա հեռացաւ, դարձաւ մեզ՝ երեք վարդապետներուս ըսաւ. — «Գացէք և Սինօդի անդամներէն մէկ քանիներ ալ կանչելով մտէք գանձարանը. ինչ որ թողած են հաւաքեցէք արկղերու մէջ և տարէք Տաճարի Թանգարանը, բայց զգուշացէք մերոնցմէ, որ չը լինի թէ բաներ մը թաղնեն.... Անոնք աւազակներ էին, օրը ցերեկով, սուրով, զօրքով եկան կողոպտեցին ու գացին, իսկ մերոնք գողեր են, գող՛յ...»։

«Սինօդի անդամներու հետ մտանք գանձարանը և ի՛նչ տեսնենք, Աստուած իմ, երկու դռները կրնկահան եղած և մէկ կողմ դրուած էին, երկաթեայ երեք գանձարկղներն ալ ջարդ ու փշուր եղած, ոսկեայ և ադամանդազարդ խաչեր, լանջախաչեր, մատանիներ և թանկագին իրերը յատակի վրայ փռուած։ Վայրագ ձեռքերը ամէն տեսակ աւերմունք գործեր էին։ Այդ բոլորը հաւաքեցինք տախտակեայ արկղերու մէջ, կնքեցինք և տարանք Տաճարի Թանգարանը։ Ետոյ ստուգեցինք, որ Իշխան Նակաշիձէն և «Ընդունող Յանձնախումբը» (աւելի ճիշտ աւազակախումբը) էջմիածնի գանձարանէն տարան՝ 14,000 րուբլի թղթադրամ, վեց ֆունտ արծաթի հին դրամներ, մէկ ֆունտ թրքական հնչուն ոսկի և ռուսական ոսկեդրամ, հին, պատմական դրամներ, Հայ բարերարներու կողմէ էջմիածնին կտակուած 400,000 րուբլի արժէքով արժէ-

թուղթեր և զանազան վիճակագրություններ. Այս բոլորը դասաւորեցին արկղի մը մէջ, կնքեցին, դրին կառքի մէջ և պինուորական ամենախիստ հսկողութեամբ տարան Երևան. Նախաշիձէն և իր յանձնախումբը, ինչպէս նաև ուս պահակներն ու զօրքերը հետացան. Երեկոյ էր արդէն. էչմիածինն ու Վաղարշապատը ծանր և և խորհրդաւոր լռութեան մէջ ընկղմեցան. Մութ գիշերն իջաւ և իր գրկին մէջ թաղեց ուսաց հայահալած բռնապետութեան այդ գարշելի արարքը...»:

Էչմիածնի գանձարանի կողոպուտի մասին, ինովք Տէր Աբիստակէսեանը կը գրէ հետևեալը.

«Էչմիածնի Սինօդի դատախազ Կանչելիի օգնական-քարտուղար Ռուստամ-Բէկ Մադաթեանցը (որ քրոջս ամուսինն էր) ինձ պատմած է այս խօսակցութիւնը, որ տեղի ունեցած է էչմիածնի մէջ, Սեպտ. 23-ին, պետական կողոպուտի օրը.

«Իշխան Նակաշիձէին և «Ընդունող ծանձնախումբ»ին ընկերացած էր նաև ուսաց Ներքին Գործոց Նախարարութեան Գնտելրուդին եկած ներկայացուցիչը, որ գումարներու և արժէթուղթերու ցուցակները կազմելէ յետոյ, գրեց երկու օրինակ արձանագրութիւն: Բոլորն ալ ստորագրեցին. Ներկայացուցիչը այս տոյգ արձանագրութիւնները իր թղթապանակին մէջ դնելէ յետոյ հարցուց.

«—Իշխան Նակաշիձէ և պարոն Կանչելի, էչմիածնի գրամական հարստութիւնը այսքան է միայն, այո՞.

«—Այո՛, հէնց այսքան է, պատասխանեց պրոկուրորը (Կանչելին).

«—Պարոն պրոկուրոր, մեր այս արձանագրած գումարները Սինոդի հաշուեմատեաններուն համապատասխանե՞ն.

«—Ի հարկէ, պատասխանեց պրոկուրորը վճռական շեշտով.

«—Ուրեմն, կը հարցնեմ ձեզ, Իշխան Նակաշիձէ և պարոն պրոկուրոր, ըսէք խնդրեմ, մեր պետական օրէնքով, ինչ անուն տանք մեր կատարած այս գործին, որ օրը ցերեկով, վկաներուն կոտրելով, դրամարկղները չարդելով, այսքան աննշան գումարներ կը խլենք Հայոց վանքէն, ուր են հապա երկար ժամանակէ ի վեր ձեր ակնարկած միլիոնները. Ո՞ւր են էչմիածնի դրամական հարստութիւնները, որոնց համար դուք երկուքդ ալ կը պնդէիք, որ հայ-

կական յեղափոխութեան տարածման կը ծառայեն։ Մինչ մեր պետութեան համար, ամօթ և նախատինք չէը այս ձեռնարկը, այս անվայելչագործը, որուն իսկական հեղինակները դուրք երկուքդ էք։ Դուք չը լսեցիք Հայոց ծերունի Կաթողիկոսի իրաւացի բողոքը, թէ՝ մահմեդական պետութեանց կողմէ յարգուած Հայոց եկեղեցոյ իրաւունքները՝ քրիստոնեայ Ռուսաստանը բռնութեամբ կը խլէ։ Գիտէք արդեօք, թէ դուք երկուքդ, որքան խայտառակ դեր կատարեցիք և մեր պետութիւնը յաչս աշխարհի անպատուեցիք, ամօթ ձեզ։

«Այս խօսքերէն յետոյ Ներքին Գործոց Նախարարութեան ներկայացուցիչը խիստ խռոված և գունատ, դուրս ելաւ գանձարանէն և առանց բառ մ՚ըսելու հեռացաւ, կարծով գնաց էջմիածնի կայարանը և նոյն օրն իսկ ճամբայ ելաւ դէպի Թիֆլիս, ուր մինչև անգամ չը ներկայացաւ փոխարքայ Գոլիցինին, այլ ուղղակի անցաւ Պետերբուրգ»։

Թալանի և կողոպուտի օրէնք գործադրող «Ընդունող Ծանձնախումբ»երը ամէն տեղ գործի անցան։ Անոնք հայկական յետ ընկած գիւղերէն սկսեալ մինչ գաւառական կեդրոններն ու քաղաքները ուրք տակ տուին՝ Հայոց ազգապատկան հաշուածներն ու գոյքերը արձանագրելու համար։ Ռուս ոստիկաններու մարդկանէն ու հարուածները ամէն տեսակ ոճիրներ գործեցին մանաւանդ գիւղերու մէջ։ Գիւղական քահանաներ, երեցփոխներ և հոգաբարձուները անլուր տանջանքներու, ծեծի և բանտարկութեան ենթարկուեցան «Թղթին ձեռք չը քաշելու» համար։ Անոնցմէ ոմանք մեռան և շատերն ալ երկար ժամանակ հիւանդ պառկեցան։ Հարկաւ գտնուեցան Թուլասիրտներ և կամ մատնիչներ ու լրտեսներ, որոնք ժողովրդական անարգանքի մատնուելէ յետոյ «Դադտնի Կոմիտէ»ներու ահաբեկիչներու կողմէ մահապատժի ենթարկուեցան։

Տէր՛ր..., տէրբի՛ս...—մահապատիժ, ահաբեկիչ։ Հ. Յ. Դաշնակցութիւնը և յեղափոխական «Դադտնի Կոմիտէ»ները միացած որոշեր են մահապատիժի տալ ամէն անոնց, որոնք լրտեսի, մատնիչի, դաւաճանի դեր կատարած են և կամ «Ընդունող Ծանձնախումբ»երուն ցուցմունքներ կուտան ի վնաս ազգային և ժողովրդական շահերուն։ Եւ այդ մատնիչներն ու ազգադաւները թա-

ալտլոը ընկան ահաբեկիչներու գնդակներով. Ահա Սարգիս Փոթոյեան մատնիչը, որուն արիւնշաղախ դիակը փռուած է էջմիածնի պատերուն տակ, ահա Խաչատուր և Գարեգին դաւաճան քահանաները. մէկը խեղդամահ եղած, իսկ միւսը՝ գնդակազարկ. Ահաբեկիչները մտած են գիւղը և կը պահանջեն, որ մատնիչ երեցփոխու լրտես տանուտէրը հրապարակ գան. Կուգան երկուքն ալ. Գիւղացիներու ներկայութեան հրապարակային անարգանքի և ծեծի կ'ենթարկուին ու խելքի կուգան. «Գաղտնի Կոմիտէ»ն կարմիր կնիքով մահուան վճռագիրը կը դրկէ բոլոր անոնց, որոնք ապստամբին չահերուն հակառակ գործելու փորձեր կընեն: Սակայն շատ քիչ, նոյնիսկ աննշան թիւ կը կազմէին մատնիչներն ու լրտեսները. Անդին Հայ ժողովուրդի ամենամեծ մասը քաջալերեց և հերոսական ընթացքը ցոյց տուաւ դաժան ոստիկանութեան և հայակեր պաշտօնեաներու վայրագութեանց հանդէպ.

Հայոց Հայրիկի ժխտական պատասխանն ու յանդուգն խօսքերը Նակաշիձէէն, գանձարանի բռնի կողոպուտը, էջմիածնի դէպքերը և ամեն տեղ կրկնուող ցոյցերը յեղափոխական կորով և նոր ոգի ներշնչեցին Հայ ժողովուրդին. Երբ Հոկտեմբերի 6-ին Իշխան Նակաշիձէն, «Ընդունող Յանձնախումբ»ի հետ մտաւ Ալէքսանդրապոլ, ինչ տեսաւ, խանութներն ու արհեստանոցները փակ. փողոցներու մէջ կը ծածանէին սև դրօշակներ, ժողովուրդը խըռնուած էր եկեղեցիներու շուրջ և պատրաստ էր կրակ բանալ գօրքի և ոստիկաններու վրայ. Առաջն. Փոխանորդ Սահակ Վարդպ. Բաղդասարեանը հրաւիրուեցաւ Նակաշիձէի մօտ. Սարսափած Իշխանը խնդրեց, որ փոխանորդը հպատակուի բարձրագոյն հրամանին և կալուածները յանձնէ. Վարդապետը քաջութեամբ պատասխանեց. —«Կաթողիկոսը հրամայել է մեզ, որ կալուածները չը յանձնենք, և ես չեմ յանձներ». Եւ վրացի հայակեր Իշխանն ու իր շքախումբը ամօթահար հեռացան Ալէքսանդրապոլէն, ուր ցուցարար ժողովուրդը՝ «Ամօթ է կոդոպտել», «Ամօթ և նախատինք կառավարութեան» մակագրութիւններով սև դրօշակներ տնկած էր ոստիկանատան և քաղաքային տան վրայ.

Ցէրօրի, տէրոբիստներու աչն ու սարսափը. Ցասումն ու գնդակը ամէն տեղ մատն և ներքին մատնիչներն ու ցեցերը մաքրուեցան,

վախկոտներն ու կասկածամիտները սիրտ առին և բարոյական յաղթանակի ներշնչումը դարձաւ ժողովրդական հոծ զանգուածներու սեփականութիւնը. Ակնէ յետոյ էր, որ յեղափոխական մարմիններն ու «Գազտնի Կոմիտէ»ները որոշեցին տէրորը տանել «դէպի աւելի հեռուն, դէպի այն դժուարամատչելի զօրաւորները, որոնք աղբիւրն էին ժողովրդական վշտի, պատասխանատու հեղինակները ամօթալի հալածանքի»։

«—Ահա նա..., Գոչեց հայկական աշխարհը, եւ ամէնքի աչքերը դարձան դէպի Գոլիցին. Հանրային իղձն էր այդ, քաղաքական մի քուէարկութիւն, կատարուած ոչ թէ քուէատուփերով, այլ մարդկային սրտերի մէջ» կը գրէ է. Ակնունին։

Եւ ահա երեք հնչակեաններ՝ «երեք քաջեր, վշտակիրները ձնող ծողովրդի, յանձն առան այդ վճռի գործադրման պատիւն ու տանջանքը և առաջ նետուեցին»։

Աշնանային հաճելի օր մըն էր, Հոկտեմբերի 14-ին, Փոխարքայ Գոլիցինն իր տիկնոջ հետ, ժամի 4-ին կառքով պտոյտի գնաց Թիֆլիսի Բուսաբանական այգիի բլուրներու վրայ. Ժամ մը յետոյ երբ կը վերադառնար, Կօշօրի ճամբու մօտէն կառքը պիտի մտնէր քաղաքի սահմանը, յանկարծ երեք քաջերը խոյացան դէպի կառքը, և հազիւ կրցան սուրի երկու հարուած հասցնել Գոլիցինի երեսին ու գլխին։ Կառապան քշեց կառքը իսկ տէրորիստները փախան դէպի ձոր, ուր քիչ յետոյ պաշարուեցաւ ձիաւոր կոզակներով։ Անհաւասար կռուի մէջ, գնդակներու տարափներու տակ, ընկան երեք քաջերը, որոնց մահն ու Գոլիցինի ողջ մնալը հաւասարապէս խոր վիշտ պատճառեցին Հայութեան։

Գոլիցինը կենդանի է... որքան սիրտեր մղկտացին և հառաչեցին, թէ ինչու չը մեռաւ վիրաւոր գազանը, որ սակայն քուն ու հանգիստ չ'ունէր, հոգեկան տառապանքի տակ դարձած էր կիսախելագար, գլխի վրայ իջած սուրի հարուածը խախտած էր անոր ուղեղի հաւասարակշռութիւնը. Եւ ահա դիշեր մը, վիրաւոր գազանը անկողնէն ցատկելով, իրարանցում ձգեց պալատին մէջ թէ Հայ դաւադիրները «պալատի տակ ականներ են փորում», որ գան և քրեն սպաննեն։ Ըետոյ պարզուեցաւ, որ կիսախելագար փոխարքան պալատին մօտիկ գործող տպարաններու մեքենաներու ձայ-

Ներն ու գիշերային թխկոցները նմանցուցեր էր ական փորելու և քլունկի ձայներուն։ Եւ ժողովուրդը լիասիրտ ծիծաղեցաւ ու հեգնեց.— «Առիւծ էինք կարծում դուրս եկաւ նապաստակ»։ Ի վերջոյ Գոլիցինը գնաց Պետերբուրգ և այդ սարսափի ազդեցութեան տակն ապրելով մեռաւ, պատմութեան թողնելով իւր անարդ յիշատակն ու գարշելի անունը։

Հ. Ց. Դաշնակցութեան ահաբեկիչներու գնդակներով արիւնթաւալ ընկան՝ Դանձակի փոխ-նահանգապետը՝ հայատեաց և ոճրագործ Անդրէեվ, Սուրմալուի՝ բուն Արարատեան Դաշտի հայակեր, դաժան և կաշառակեր գաւառապետ Բօգուսլավսկին, Օլթիի շրջանի սահմանապահ զօրաց ոճրագործ հրամանատար Բրկօվը, կարսեցի լրտես Թուրք Շէրիֆ-բէյ, հրեայ, դուս, Թուրք. և հայ լրտեսներն ու մատնիչները։ Սպանութեան փորձեր կատարուեցան Էջմիածնի գաւառապետի, Կարսի ոստիկանապետի և այլ վայրերու ոստիկանական պաշտօնեաներու դէմ։ Էջմիածնի Սինօդի պրոկուրոր Կանչելին ևս մահուան դատապարտուած էր, բայց իմացաւ և սարսափի մատնուած ծպտեալ փախաւ մինչև Թիֆլիս։

Եւ վերջապէս Սոցիալիստ Յեղափոխականներու ահաբեկիչի ձեռքով Պետերբուրգի մէջ արիւնթաւալ ընկաւ Ռուսաստանի Ներքին Գործոց Նախարարը՝ նոյն ինքն Պլեվէն, իսկ հետագային ալ Հ. Ց. Դաշնակցութեան քաջարի տէրորիստը (Դ-ն), Բագուի փոդոցներէն մէկուն մէջ, ռումբի հարուածով ոչնչացուց Իշխան Նակաշիձէի մարմինը (11/24 Մայիս 1905)։

Այսպէս ահա, ամէն անոնք—փոխարքայ, նախարար, նահանգապետ, ոստիկանապետ, գաւառապետ, սպայ, ոստիկան, զինուոր, պաշտօնեայ, տանուտէր, երեցփոխ, տէրտէր և այլն—որոնք Հայ ազգային եկեղեցական կալուածներու բռնագրաւման մէջ ունէ սև դեր խաղցին և կամ Հայութեան թշնամի դաթձան, անոնք բոլորն ալ յեղափոխական մարմիններու կողմէ մահուան դատապարտուեցան անխնայ։

Ժողովրդանուէր Կաթողիկոս Հայոց Հայրիկը 1903-ի Դեկտ. 12-ին պաշտօնական խնդրագիր մըն ալ գրեց Նիկոլայ Բ. Ցարին, ցոյց տալով ռուսաց պետութեան «այն անարդար և շարունակական հարուածները, որ կառավարութիւնը վերջին տարիներս ուղ-

ղել է Հայ ժողովրդին և հայկական եկեղեցու վարչութեան» և ապա խնդրեց, որ առանձին ժողովի մը մէջ (որուն պիտի մասնակցէր նաև Կաթողիկոսը), քննութեան առնուի Յունիսի 12-ի օրէնքը, որու մասին Կաթողիկոսը բացատրութիւններ պիտի տար հաստատելով, որ այդ օրէնքը ոչ միայն չի համապատասխաներ Հայ եկեղեցւոյ վիճակին և աւանդութեանց, այլ և վնաս է պետութեան արմատական շահերուն։

Ներուն ազարդ Կաթողիկոսի այս վերջին խնդիրքն ալ մերժուեցաւ։ Վերջացաւ 1903 թուականը, որուն վեց ամիսները (Յուլիս—Դեկտ.) կը կազմեն Հայ ազատագրական պատմութեան և յեղափոխական, ըմբոստ շարժումներու մէկ մէկ լուսաւոր էջերը, որոնց մէջ կը պատկերանայ Հայոց Հայրիկի պայծառ ու հոյակապ դէմքը, Վասպուրականի Արծուի Մեծ Սիրտը, որ դարձաւ բողոքի ամրոց և «Նուագող Վշտից Հայրենեաց Հայոց»...։

## Թ.

## ՆՈՐ ԴԷՊՔԵՐՆ ՈՒ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԻԿԸ

Ռուս-Ճապոնական պատերազմը պայթեցաւ 1904-ի Փետրուարին. Ռուսական բանակները հետզհետէ խայտառակ պարտութեան մատնուեցան։ Այսպիսով ցարի արքունիքի, նախարարաց Խորհուրդի և զինուորական գերագոյն հրամանատարութեան բարոյական սնանկութիւնն ի յայտ եկաւ։

Այդ օրերուն յանկարծ ժողովրդական զրոյց մը բերնէ բերան շրջան ըրաւ՝ Պետերբուրգէն մինչև Արարատեան Աշխարհը.— «Ռուսաստանի պատերազմը Հայոց Կաթողիկոսի արձակած անէծքն էր...»։ Ու միլիոնաւոր մարդիկ համոզուած էին, որ Հայոց Հայրիկը էջմիածնի Տաճարի կամարներուն տակ, ծնկաչոք աղօթած ժամանակ, Լուռ Անէծք տուած էր Ռուսաց կայսրութեան։ Մինչև անգամ կայսրն ու Թագուհին հաշուի առին այդ լուռ անէծքը, որ տանջուած ազգի մը վշտահար Հայրապետի սրտէն թռչելով հասած էր մինչև ամենազօր ցարի պալատը։

«Անկարելի է մոռնալ այն դատաստանը, զոր, ռուս-ճարտնական պատերազմի վատ օրերուն, Մոսկուայի կրօնական վարժարանի մը ռուս տնօրէնը կ'ընէր հրապարակախօսութեան մը միջոցին, թարգման կանգնելով հասարակաց զգացման։

«—Այս բոլոր ձախորդութիւնները հետևանքն են այն անարդարութեան՝ զոր քանի մը տարիներ առաջ Թոյլ տուինք, որ մեր Տէրութիւնը գործէ, հալածելով իր կրօնքին համար մարտիրոսացած Ազգի մը եկեղեցին։ Մեր գլխուն դեռ պիտի իջնան շանթերը այն անէծքին, զոր այն Սուրբ Մարդը արձակեց մեզի դէմ, այն դառն օրերուն։

«Ռուսերու հանրային զգացման մէջ, այդ Սուրբ Մարդը Խրիմեանն էր». (Թ. Ե. Գ. «Խրիմեան Հայրիկ». էջ՝ 202)։

Պատերազմի պարտութեան ծանր հարուածը մոռցնել տուաւ Հայոց ազգապատկան կալուածներու գրաւման հարցը։ «Ընդունող ծանձնախումբ»ները հեռացան, լուծուեցան և ամէն ինչ մոռացութեան մատնուեցաւ։

Այս տեսնն էր, 1904-ի գարնան, երբ յանկարծ Սասունի լեռները թնդացին Հ. Յ. Դաշնակցութեան կազմակերպած ինքնապաշտպանութեան և հերոսամարտի կռիւներով՝ ընդդէմ Սուլթան Համիդի աբիւնոտ բռնապետութեան։ Անդրանիկի, Գէորգ Չաւուշի, Հրայրի, Վահանի և նման հայրենանուէր հերոսներու հայդուկային և մարտական խումբերը Սասունի առիւծասիրտ լեռնականներուն միանալով՝ ծառացան տաճկական բանակներու և քրդական հրոսակախումբերու դէմ։

Ազատագրութեան ոգին նորէն սաւառնեցաւ Հայոց Աշխարհի ամէն կողմերը և Հայրենիքի ազատութեան ձայնը հնչեց Սասնոյ լեռներէն. Օգնե՛ցէք Սասունին կը կանչէին հարիւր հազարաւոր բերանները, օգնենք, վասնզի՝

«Դարձեալ փայլեց Սասնոյ գլխին ազատութեան դրօշակ...»։

Տաճկահայաստանէն և Կովկասէն զինական և հայդուկային խումբերը ճամբայ ելան ու հասան Սասուն՝ օգնելու Անդրանիկին, Գէորգ Չաւուշին, Հրայրին և ընկերներուն, որոնք հերոսամարտի կերտողներն ու ղեկավարներն էին։

Անհաւասար և օրհասական կռիւ էր։ Թէև ամբողջ Սասունը

պաշարուած էր հարիւր հազարաւոր թշնամի ուժերով, բայց լեռներու կատարներուն և լանջերուն վրայ թառած հերոսներն ու քաջարի լեռնականները հոգով սրտով իրար կապուած՝ սքանչելի անձնուիրութեամբ կը կռուէին։

Անգլիան, Ֆրանսան և ապա Ռուսիան միջամտեցին միայն այն ժամանակ, երբ մարտնչող Սասունն ընկաւ ու հազարաւոր հայերը տաճիկ ու քիւրդ մարդակերներու եաթաղաններով ջարդուեցան։

Սասունի կոտորածները խոր վիշտ պատճառեցին Հայոց Հայրիկին, որուն սիրտը սակայն նորէն ծփաց Եւրոպայի միջամտութեան յոյսով. Ու նա՝ քանիցս յուսախաբուած Խրիմեանը, միամտութիւն ունեցաւ աւելորդ անգամ մը ևս դիմելու դիւանագիտական «խաղաղ միջամտութեան»։ Եւ ահա Հայոց Կաթողիկոսը, յատուկ կոնդակներով պաշտօն յանձնեց՝ Պարսկա-Հնդկաստանի, Եւրոպայի և Ամերիկայի Հայոց առաջնորդներուն՝ Սահակ Այվատեան, Գէորգ Իւթիւճեան և Յովսէփ Սաքաճեան եպիսկոպոսներուն, որ յանուն իրեն՝ դիմեն Եւրոպայի և Ամերիկայի պետական շրջանակներուն խնդրելով, որ վերջացնեն Բերլինի վեհաժողովի 61-րդ յօդուածի գործադրութիւնը։

Սակայն որքան մեծ եղաւ յուսախաբութիւնը այս պատուիրակութեանն ալ, որ ամէն տեղ միայն պղտոնական խօսքեր և խոստումներ լսելէ յետոյ, ձեռնունայն հեռացաւ և Հայրիկն ու Հայութիւնը աւելորդ անգամ մը ևս հիասթափութեան մատնուեցան։

Կալուածներու գրաւման ամիսներու ընթացքին՝ ամբողջ տարի մը, Հայրիկը փակուեցաւ Էջմիածնի մէջ, մինչև որ 1904-ի Յուլիսի 25-ին ձիով գնաց Արագածի լանջերը պտտելու։ Մտաւ Թօշ և Աղաւնատուն գիւղերը, գեղջուկներու հետ զրոյց ունեցաւ, յետոյ անցաւ Թալիշ գիւղը, որուն պատմական բայց կիսաւերակ տաճարին մէջ հաւաքուած բազմութիւնը մեծ ցոյցերով ընդառաջ ելաւ Հայրիկին և լսեց անոր պարզ քարոզը։ Ապա գնաց Ոշնաւուղ և Գրամփա գիւղեր ու վերադարձաւ Էջմիածին։

Սեպտ. 24-ին մեծաշուք հանդէսով տօնուեցաւ Գէորգեան ճեմարանի հիմնարկութեան 30-ամեակը, իսկ Սեպտ. 25-ին ալ՝ Խրիմեանի կաթողիկոսական օծման 11-րդ տարեդարձը։ Այս առ-

թիւ Էջմիածնի մէջ կատարուեցան ժողովրդական ցոյցեր և հանդէսներ, որոնց իտես Հայրիկն ըսած է—«Ցաւիջուած՝ բայց ճգor ազգ...»։

Դեկտ. 3-ին Հայրիկը գնաց Ալէքսանդրապոլ և ապա Թիֆլիս, ոտքի ցաւը բժշկել տալու համար։ Անոր կ՚ուղեկցէին Կիւրեղ Վարդապետն ու Յորէն Խրիմեանը։ Թիֆլիսէն վերադարձաւ Էջմիածին, ուր սակայն ոտքի ցաւին չը տոկալով 1905-ի Յունուարին նորէն Թիֆլիս գնաց և 29-ին եկաւ Մայր Աթոռը։

* * *

Ռուսաց բռնապետութեան Կովկասի հայակեր պաշտօնեանները—Գոլիցին, Նակաշիձէն և իրենց աբրանեակները—տեսնելով, որ Հայոց ազգապատկան կալուածներու գրաւումը գլուխ չը գնաց և Հայութիւնը բարոյապէս մնաց հպարտ ու յաղթական, այս անգամ անոնք ոճրածին ծրագրով մը կազմակերպել տուին Կովկասի Հայ-թրքական ընդհարումները, նպատակ ունենալով ազգամիջեան ատելութիւնն ու թշնամութիւնը խորացնել և թուրք-թաթարներու ձեռքով բնաջնջել Հայութիւնը՝ Կովկասի մէջ։ Այս հրէշային ծրագիրն ի կատար ածելու համար Կովկասի հայակեր պաշտօնեաները՝ փոխարքայէն սկսեալ մինչև ոստիկանը, գործի լծուեցան և ամէն տեղ թուրք-թաթար խուժանի և անոր ղեկավարներու ախորժակները սրեցին Հայ դիակներու և արիւնի համ ու հոտով։

Եւ կատարուեցաւ անխուսափելին։ Բագուի մէջ 1905-ի Փետրուարի 7, 8 և 9-ին թուրքերը յարձակեցան հայերու վրայ և սարսափելի ոճիրներ գործեցին։ Հայ դիակներն ընկան արիւնթաթախ, կոյսերը բռնաբարուեցան, թալան, կողոպուտ և առևանգում անարգել շարունակուեցան երեք օր, մինչ Բագուի նահանգապետ Նակաշիձէն և ոստիկանութիւնը հաճոյքով կը դիտէին այս բոլոր ոճիրները, առանց միջամտելու։

Վշտալի Հայոց Հայրիկը, Փետր.ի 11-ին Բագուի Հայութեան ուղղեց մխիթարական եւ սրտառուչ կոնդակ մը, որմէ կը քաղեմ այս տողերը.

«Հարազատ և տառապեալ հօտին իմոյ սիրեցելոյ որ կայք այժմ վիրաւոր և անմխիթար, ո՛ վշտակիր ժողովուրդ Բագու քա-

ղաքի, Ձեզ կարօտաւորացող նուիրեմք ողջոյն Հայրական, ցաւակցութիւն Հայրապետական. Մխիթարութեան մըմունջ ի շրթունս, զձեռս ի վեր և զաչս ի յերկինս ի հիւանդութեան մահճէս գուժեաց ինձ ձայն ի Ծփխնաց եթէ ողբումն և լալումն և աշխարհումն յոյժ ի Բագու քաղաքի ի մէջ հայազանց։ Գալարեցան ադիք իմ և սառեցան արիւն իմ յիս ընդ լուր աղէտիդ, սիրեցեալ զաւակք իմ և ես տառապեալս և ցամաքեալս որպէս մխիթարեցից զքեզ։ Վշտալի հօտ իմ՝ պատուական. մխիթարեա՛ց, մխիթարեա՛ց։ Ցուշ լիցին քեզ, ժողովուրդ Հայոց, յուշ լիցին քեզ անցք աղէտալի անցից եղբարց քոց և արենակցաց, որ ընդ տիրապետութեամբ Օսմանեան պետութեան, յիշեա՛, զինչ անցք անցին ընդ նոսա և նոքա կան մնան անդրդուելի ի հաւատս իւրեանց, աննըկուն ի գործս, յուսով ապագայ բարութեան»։

Հայոց Հայրիկը տեսնելով, որ պետութիւնը ականատես է այս ահիքներուն և լուռ կը մնայ, Փետրուարի 11-ին էջմիածնէն ճամբայ ելաւ դէպի Թիֆլիս, Բագու երթալու համար՝ յոյս ունենալով, որ իւր ներկայութիւնն ու միջամտութիւնը վերջ պիտի տան ազգամիջեան կռիւներուն. Սակայն ճարպագործ Գոլիցինը թոյլ չէր տուաւ, որ Խրիմեանն երթար Բագու,... Այս տեսնելէ էր ահա, որ Խրիմեանը խնդրեց Փոխարքայէն պատգամաւորութիւն մ՚ուղարկել Բագու և վերջ տալ ազգամիջեան կռիւներուն։ Գոլիցինը պաշտօնական պատասխանատուութեան չ՚ենթարկուելու համար, որոշեց Բագու ղրկել պատգամաւորութիւն մը, որուն անդամներն էին՝ «Կովկասի յայտնի հերոս» Գեներալ Ատիւտանդ Իշխան Ամիլախվարին և Կաթողիկոսի ներկայացուցիչներ՝ Յուսիկ Եպիս. Մովսիսեանն ու Մխիթար Վարդապետը։ Պատգամաւորները գացին Բագու, երբ արդէն կռիւները վերջացեր էին և Հայութիւնը, հակառակ իւր հերոսական ինքնապաշտպանութեան, մարդկային և նիւթական ծանր կորուստներ ունեցած էր։

Հայրիկը Թիֆլիսի Վանքի եկեղեցւոյ բակին մէջ, Բագուի նահատակներու յիշատակին, իւր իսկ նախագահութեամբ հոգեհանգիստ կատարել տուաւ. Հազարաւոր ժողովուրդ արցունքը աչքերուն և գլխաբաց խոնարհեցաւ Հայ նահատակներու յիշատակին ու թարմ արիւնի առջեւ.

Հայոց Կաթողիկոսը կասկածելով, որ Կովկասի թաթար-թուրքերու հայաջինջ ծրագիրն ու ազգամիջեան կռիւները արձագանգ պիտի գտնեն նաև Պարսկաստանի մէջ, ուստի Պարսից Շահին հետեւեալը.

«Թեհրան. Նորին Արքայական Մեծութեան Մուզաֆֆեր-էդդին Շահինշահին Իրանի. — Ցաւ ի սիրտ չունեցի, որ բազմահպարեան հանդիպումիդ՝ Բագուի Հայ եւ Մուսուլման ազգաբնակութիւնը ընդհարուել է եւ երեք օրուայ ընթացքում տուել է սահմեղ մարդկանց բազմաթիւ կորուստ, որից սաստկում է մարդկային սիրտն ու զգացմունքը։ Այս մասին յայտնելով Ձերդ Արքայական Մեծութեան, աղաչում եմ սիրելի եւ խնամել Ձեր Արքայական հզօր գայիսոնի հովանու ներքեւ գտնուած խոնարհ եւ հպատակ Հայ ժողովուրդս։ ՄԿՐՏԻՉ Կաթողիկոս Ամենայն Հայոց»։

Հայութեան դարաւոր բարեկամ եւ հիւրընկալ ու հովանաւոր Պարսկաստանի Շահնշահը պատասխանեց.

«Նորին Սրբութեան Կաթողիկոսին Ամենայն Հայոց.— Ես իմ քոյր շատ վշտացած Բագուի դէպքերից, երջանիկ եմ հանդիպումիցս որ Պարսկահայերը օրհնապարհ հպատակներ են, որոնց հետեր կարող եմ վստահացնել Ձեզ եւ պահել իմ բարեացակամութիւնը եւ իմ բարձր հովանաւորութիւնը։ ՄՈՒՋԱՖՖԷՐ-ԷԴԴԻՆ»։

Պատգամաւորութիւնը հազիւ յաջողեցաւ Բագուի մէջ հաշտութիւն կայացնել, երբ յանկարծ Փետրուարի 20-ին Հայ-Թրքական ընդհարումները ծայր առին Երեւանի մէջ և տեւեցին երեք օր։ Հայերիկը ճամբայ ելաւ դէպի Երեւան և կրցաւ իր ներկայութեամբ հաշտեցնել կողմերը և կռիւները վերջ գտան.

Այս օրերուն էր ահա, որ Հայ ժողովուրդի մարտական կուսակցութիւնը՝ Հ. Յ. Դաշնակցութիւնը նորէն հրապարակ իջաւ և ստանձնեց ժողովրդական ինքնապաշտպանութեան գործերուն ընդհանուր ղեկավարութիւնը՝ Բագուէն մինչև Արարատեան Աշխարհը։ Հայկական միւս կուսակցութիւններն ալ իրենց համեստ մասնակցութիւնը ցոյց տուին ժողովրդական ինքնապաշտպանութեան գործերուն։ Դաշնակցութեան ռազմիկ հերոսներն ու հայդուկային խումբերը սլացան ամէն տեղ, ուր որ Հայ ժողովուրդին կատրած և արիւն կը սպառնար։ Թուման, Գոմս (Վահան Փափազեան),

Արմէն-Գարօ, Սարգիս Բաբսեղեան, Կայծակ Առաքել, Քեռին, Սեպուհ, Համազասպ, Դրօն, Սմբատ, Կորիւն, Սեբաստացի Մուրադ, Ռաշիդ, Խէչօն, Սեբաստացի Սաքօն, և շատ նման քաջարի մարտիկները դարձան ժողովրդական ինքնապաշտպանութեան կուիներու ոգին ու դեկավարները, որոնց մասին ժողովուրդը երգեր ու գովքեր բանահիւսեց։ Հայ-թրքական ընդհարումները ծնունդ առին Կովկասի հայաբնակ բոլոր վայրերու մէջ։ Թուրք-թաթար խուժանը յաճախ խայտառակ պարտութեան մատնուելով փախաւ։ Սիւնեաց և Արարատեան Աշխարհներու Հայութիւնն այս անգամ ևս ոտքի ելաւ և զէն ի ձեռին պաշտպանեց իւր պատիւն ու կեանքը։ Հայ-թրքական ընդհարումներու ամբողջ տևողութեան ընթացքին, Հ. Յ. Դաշնակցութիւնը, իւր մարմիններով ու գործիչներով, ժողովրդական պաշտամունքի առարկայ դարձաւ և խոհեմութեամբ ու քաջութեամբ կրցաւ վարել Կովկասի Հայութեան ինքնապաշտպանութեան գործը, փրկելով մեր ժողովուրդը ռուսական և թաթար-թրքական պատառող ժանիքներէն և արիւնոտ ճանկերէն. Բագուի, Գանձակի*), Թիֆլիսի, Կարսի, Երևանի, Սուրմալուի, Հին-Նախիջևանի, Օրդուբադի, Ագուլիսի, Զանգեզուրի**), Շուշիի***) Ասկերանի, Վարանդայի, Խոյէնի և այլ բազմաթիւ վայրերու մէջ թէև թուրք-թաթար խուժանը, ռուսաց ոստիկանութեան գաղտնի թելադրանքով,

---

*) Գանձակի Հայ ժողովրդական կուիներուն կը մասնակցէր Հայոց Հայրիկի երբեմնի դիւանապետ Կորիւն Վարդպ. Սահակեանը, որ յետոյ այդ պատճառով աքսորուեցաւ Սիբիր, ուր 10 տարի աքսորականի դառն կեանք վարելէ յետոյ, 1917-ի Ապրիլին եկաւ էջմիածին, երբ արդէն ռուսաց բռնապետութիւնը տապալուած էր։ Անոր ծածկանունը Շղթայակիր էր։

**) Ցաթեի վանահայր Ներսէս Վարդպ. Մելիք-Թանգեանը Զանգեզուրի ժողովրդական կուիներու ընթացքին մեծ աշխատանք կատարած է։ Նա՝ կռուողներ, պարէն և ռազմամթերք հաւաքելով օգնած է Սեբաստացի Մուրադին, որ կրցաւ այդ շրջանի 30 հայկական գիւղերը պաշտպանել կոտորածներէն։ Մելիք-Թանգեանն ալ այս պատճառով աքսորուեցաւ Խրիմի Ս. Խաչ վանքը։

***) Սիւնեաց Թեմի առաջնորդ Աշոտ Վարդպ. Ջախեանը յանդուգն ու համարձակ գործունէութեամբ պաշտպանեց ժողովուրդի շահերը և բողոքեց կատարուած վայրագութեանց դէմ։

Գարեգին Յովսէփեան և Գիւբեղ Գիւբեղեան վարդապետները գնացին գաւառներ ժողովուրդը մխիթարելու և խաղաղութիւն բարոզելու համար։

ծանր հարուած հասցուց Հայութեան, բայց ստացաւ նաև նոյնքան ծանր հակահարուածը, որ ահ ու սարսափ սփռեց ամէն կողմ: Կովկասի Հայ-Թրքական ընդհարումները պարբերաբար շարունակուեցան և գրեթէ տևեցին մէկ ու կէս տարի:

Հայ-Թրքական ընդհարումներու լուրը Պետերբուրգ հասնելուն պէս Կովկասի դաժան փոխարքան, հայակեր Գոլիցինը պաշտօնանկ հռչակուեցաւ: Այս ալ դիւանագիտական գաղտնի խաղ մըն էր: Նոր փոխարքայ նշանակուեցաւ Կոմս Իլարիոն Իվաճովիչ Վարանցով Դաշկով:

Երբ Հայրիկին յայտնեցին, որ Վարանցով Դաշկովը նշանակուած է Կովկասի փոխարքայ՝ հարցուց—«Այդ Դաշկով քսածնիդ այժմ քանի տարեկան կ'ըլլայ»: Պատասխանեցին՝—«Մօտ վաթսուն տարեկան»:—«Հա..., ուրեմն այդ մարդն այժմ ցթռած ծերուկ մըն է, անոր գլխուն մէջ հարկ եղածին չափ ուղեղ մնացեր է, որ ի վիճակի ըլլայ բազմացեղ Կովկասը կառավարելու», կ'ըսէ Հայրիկը, սրտանց կը խնդայ և կարծես պահ մը կը մոռանայ, որ ինքը 86 տարեկան ծերունի մըն էր:

Հայոց Կաթողիկոսը առաջին պահիւ իսկ հեռագրով շնորհաւորեց Վարանցով Դաշկովի փոխարքայութիւնը աւելցնելով, որ՝ «Խորապէս հաւատում, որ Ձեր՝ դէպի Կովկասի ազգաբնակութիւնն ունեցած բարեացակամութեամբ, որպէս ներկայացուցիչ Կովկասի հին տրադիցիաների, կը կարողանաք լուծել Կովկաս խաղաղացնելու և անդորրութիւն վերահաստատելու խնդիրը»:

Փոխարքան հեռագրով շնորհակալութիւն յայտնեց, խոստանալով «խաղաղեցնելու ազգաբնակութիւնը և հաստատուն դարձնելու ջերմապէս սիրածս Կովկասի խաղաղ զարգացումը»:

Վարանցով Դաշկովի այս դիւանագիտական խօսքերուն տակ ծածկուած էին ռուսաց բռնակալութեան նենգամիտ, դաւադիր քաղաքականութեան գործերը, որոնց շարունակողն եղաւ Կովկասի նոր փոխարքան: Սա ոչ միայն չը կրցաւ, աւելի ճիշտ չ'ուզեց Կովկասի մէջ խաղաղութիւն հաստատել, այլ տարի մ'ամբողջ իրազեկ և ականատես ըլլալէ յետոյ Հայ-Թրքական ընդհարումներուն, 1906-ին միայն «Պատժիչ զօրամասեր» ղրկեց կռուի վայրեր յանցաւորները—Հայ թէ Թուրք—պատժելու համար, իսկ

ինքն ալ Թիֆլիսի մէջ գումարել տուաւ Հայ և Թուրք պատգամաւորներու խառն նիստերը «խաղաղութիւն ամրապնդելու միջոցներ ձեռք առնելու համար»։

«Պատժիչ զօրամասեր»ու ռուս կոզակներն ու իրենց հրամանատարները ոչ մէկ պատիժ և նեղութիւն չը տուին Թուրքերուն։ Այդ քրիստոնեայ ոճրագործները զարհուրելի ոճիրներ և վայրագութիւններ գործեցին Հայ գիւղերու մէջ և Թաթարներու Թողած պակասը լրացուցին։

Սիւնեաց Աշխարհի Խաչէն և Վարանդա գաւառներու արիւնաքամ Հայութիւնը յաւիտենապէս չը պիտի մոռնայ այն բարբարոսութիւնները, որոնք գործուեցան ռուսաց կոզակներու ձեռքով՝ ղեկավարութեամբ գնդապետ Վիվէրնի, գաւառապետ Ֆրէյլիխի և հաշտարար դատաւոր Երմօլաևի։ Այս ռուս բարբարոսները հայկական գիւղերը մտնելով թալանեցին և հրդեհեցին բազմաթիւ տուներ, գիւղացիներէն բռնութեամբ գանձեցին տուգանքներ և այլն։ Դեռ աւելին. Բաւական է միայն յիշել Վարանդայի Տեղ, Ազոխ և Սօս հայկական գիւղերու մէջ կատարուած ռուսական զուլումները՝ բառիս ամենալայն առումով. Այս երեք գիւղերու մէջ ռուս կոզակները՝ գնդապետ Վիվէրնի, գաւառապետ Ֆրէյլիխի և դատաւոր Երմօլաևի ղեկավարութեամբ կատարեցին այնպիսի ոճիրներ և վայրագութիւններ, որոնք հաւասարեցան Թուրքերու և քիւրդերու արարքներուն։ Ահա քանի մը զարհուրելի փաստեր։ Սօս գիւղին մէջ ռուս կոզակները բռնաբարեցին Նորաթ Մուսայեան անունով 12 տարեկան կաթուածահար աղջիկ մը, որուն 70 տարեկան Մուսա պապը երբ լալով վրայ հասաւ հիւանդ Թոռան պատիւը փրկելու, անասնական կրքերով կատղած կոզակները յարձակեցան պապի վրայ, գետին տապալեցին և այնքան ծեծեցին, որ նա ծանր հիւանդացաւ և ապա մեռաւ։ Նոյն գիւղացի պառաւ մը, 75 տարեկան Նորաթ Գրիգորեանը բռնաբարուեցաւ 5 կոզակներու կողմէ։ Այս երեք գիւղերուն մէջ 37 Հայ օրիորդներ և կանայք՝ 12—75 տարեկան, բռնաբարուեցան ռուս կոզակներու կողմէ։ Այրի և խեղճ կանանց բռնաբարելէ յետոյ կոզակները կողոպտեցին անոնց տուները։ Ազոխ գիւղին մէջ այրի Դաստա Թիւնեանցը իր 3 և 9 տարեկան զաւակներու աչքին առջև բռնաբարուեցաւ 4 կոզակներու

կողմէ. Այս երեք գլուխերուն մէջ այնպիսի վայրագութիւններ գործուեցան, որ մարդկային լեզուն ու գրիչն անզօր են ներկայացնել. Եւ այս բոլոր ոճիրները կատարուեցան նոր փոխարքայ Կոմս Վարանցով Դաշկովի Կովկաս ժամանումէն մէկ տարի յետոյ. «Պատժիչ զօրամասերը» պատճառ դարձան, որ Սիւնիքի մէջ նորէն բռնկուեցան Հայ-Թրքական ընդհարումները.

Ռուսական «Русскія Вѣдомости» լրագրի Թղթակից Նանդը, որ Կովկասի Հայ-Թրքական ընդհարումներուն ականատես եղած էր, կը գրէ, թէ—«Վարչութիւնն ամբողջ մի տարի լուռ ու մունջ նայում էր իւր առաջ խաղացուող ողբերգութեանը, յանկարծ, երբ ամէն ինչ հանգստանալու վրայ էր, նա սկսեց կարգը վերականգնել.... Ազգաբնակչութիւնը յոգնած էր ընդհարումներից և միայն տեղ տեղ երևում էին Թրքական շայկաներ. Այն ժամանակ „արշաւախմբեր“ իրանք գործի կանգնեցին...». Բնական է, որ Թուրք բէկերն ու խաներն ալ իրենց կարգին շփացան, քաջալերուեցան և իրենց արբանեակներով միացան ռուս կոզակներուն՝ Հայ գիւղերը կողոպտելու, կանայք բռնաբարելու և նորանոր ոճիրներ գործելու համար. Այս բոլոր փաստերն արձանագրուած են փոխարքայի կողմէ ուղարկուած «Քննիչ Յանձնաժողովի» (նախագահ Վայդէնբաում) զեկուցագրին մէջ, որ Վարանցով Դաշկովը կարդաց, բայց նախամեծաք համարեց լռել, իսկ բուն յանցաւորներ ու ոճրագործներն ալ անպատիժ թողնել.

Ահա այս էր նաև Գոլիցինի յաջորդի՝ Վարանցով Դաշկովի քաղաքականութիւնը, որ եկաւ ոչ թէ «խաղաղեցնելու ազգաբնակութիւնը և հաստատուն դարձնելու Կովկասի խաղաղ զարգացումը»; այլ ընդհակառակն աւելի լարեց ազգամիջեան թշնամութիւնը և քաջալերեց Հայ-Թրքական ընդհարումները. Եթէ Գոլիցինը յանդուգն ու պատասխող վագր մըն էր, Վարանցով Դաշկովն ալ խորամանկ աղուէս մը, որ դաւերով, խորագիտութեամբ ու մեծ զգուշութեամբ վարեց հայահալած քաղաքականութիւնը ամբողջ 10ու կէս տարի*).

*) Վարանցով Դաշկովը Կովկաս եկաւ 1905ի Փետր.ին և ետ կանչուեցաւ 1915ի Օգոստ.ին. Անոր յաջորդեց ցարի հօրեղբայրը Նիկոլայ Նիկոլայեվիչը, որ Կովկասի վերջին փոխարքան եղաւ և շարունակեց իր նախորդներու հակահայ քաղաքականութիւնը:

Կովկասի թաթար-թուրքերու կրօնապետը (Շէյխ-իւլ-Իսլամ) և Երևանի խաները ու բէկերը միացած՝ Յունիսի 3-ին Էջմիածին եկան և Հայոց Կաթողիկոսին ներկայանալով ներողութիւն խնդրեցին «կատարուած վայրագութեանց համար» շեշտեցին, որ իրենք մեղաւոր են և ապա խնդրեցին միջոցները խորհիլ Հայ-Թրքական ընդհարումներուն վերջ տալու համար։ Վեհարանի մէջ խմբագրուեցաւ շրջաբերական հեռագիր մը, որ Հայոց Կաթողիկոսի և Շէյխ-իւլ-Իսլամի ստորագրութեամբ հաղորդուեցաւ Կովկասի հայերուն և թուրքերուն, յորդորելով՝ «Միանգամ ընդ միշտ վերջ տալ այդ կործանիչ և աննպատակ թշնամութեան» և ապրիլ խաղաղ իբր եղբայր ժողովուրդներ։ Այս յորդորը ժամանակաւորապէս թէև ազդեցութիւն ըրաւ, բայց ընդհարումները նորէն կրկնուեցան։

Հայոց Հայրիկը Յունիսի 22-ին, մեծ շքախումբով մը Էջմիածնէն ճամբայ ելաւ դէպի Թիֆլիս, վարանցով Դաշկովին բարի գալուստ մաղթելու և խնդրելու անոր միջամտութիւնը՝ ազգապատկան կալուածները վերադարձնելու և դպրոցներու վերաբացումը յաջողցնելու համար։ Յունիսի 25-ին, որոշեալ ժամին, փոխարքայի կողմէ ուղարկուած ձիաւոր կոզակներու պատուոյ պահակախումբը կանդնեցաւ Թիֆլիսի Հայոց Առաջնորդարանի դրան առջև։ Հայրիկը ուղեկցութեամբ Գարեգին Սաթունեան ու Նահապետ Նահապետեան եպիսկոպոսներու և դիւանապետ Յուսիկ Վարդպ. Զօհրաբեանի, ուղևորուեցաւ դէպի պալատը։ Կաթողիկոսի կառքին առջևէն կ'երթային երեք դրօշակակիր կոզակներ։ Այս հանդիսաւոր թափորը հասաւ պալատին առջև։ Փոխարքան մեծ պատիւներ և արժանավայել ընդունելութիւն ցոյց տուաւ Հայոց Կաթողիկոսին, որուն թարգմանն էր Աւագ Դրաքննիչ Աղէքսանդր Փիշմիշեանը։ Հայրիկը բարի գալուստի և օրհնութեան խօսքերէն յետոյ խնդրեց, որ փոխարքան միջնորդէ կայսրի մօտ, փութացնել տալու համար Հայոց ազգապատկան կալուածներու և դպրոցական հարցերու դրական լուծումը։ Փոխարքան հաստատ և վստահ ձայնով մը պատասխանեց —«Շատ ուրախ եմ հաղորդելու Ձեզ, որ ի նկատի առնելով Ձեր խնդիրքը և յարգելով իմ միջնորդութիւնը, Թագաւոր Կայսրը բարեհաճեց նպաստաւոր մտքով վճռել Հայոց եկեղեցական կալուածներուն վերադարձման և դպրոցներուն վերա-



ՀՐԱՏ· ՀԱՑԿ ԱՃԷՄԵԱՆԻ· ԹՍԻՐԻՋ 1927 ՄԽԻԹԱՐԵԱՆ ՏՊԱՐԱՆ – ՎԵՆԵՏԻԿ

*ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԴԱՇՏԻ ՄԷՋ, ԳԱՒՌՈՒԿՆԵՐՈՒ ՄՕՏ*

(*Աչխարհահռչակ հայազգի նկարիչ Յովհ. Այվազովսկիի իւղաներկ նկարչէն լուսանկարուած, որ լոյս կը տեսնէ առաջին անգամ*)



բացման հարցը։ Թագաւորը կայսրը հաստատել է այդ մասին իմ զեկուցումը»։ («Մշակ» 1905, Օգոստ. 3)։

Այս խօսքերը լսելէ յետոյ, Հայրիկը յուզուեցաւ, օրհնութեան խօսքեր ուղղեց Թագաւորին և փոխարքային, ապա տեսակցութիւն ունեցաւ նաև Վարանցով Դաշկովի տիկնոջ հետ և հեռացաւ պալատէն, նոյն հանդիսաւոր թափօրով։

Օգոստոսի 2-ին Հայրիկը պալատը գնաց և հրաժեշտի այցելութիւն տուաւ փոխարքային, որ յայտնեց թէ—«Հայոց ազգապատկան կալուածներն ու գոյքերը վերադարձնելու և դպրոցների վերաբացման մասին Թագաւոր կայսրը բարեհաճեր է յատուկ հրովարտակ շնորհել»։ Ներկայացուցիչը պալատէն հեռանալէ յետոյ եկաւ Առաջնորդարան և էջմիածնի Սինոդին հեռագրեց հետևեալը։

«Այսօր հրաժեշտի այցելութեան ժամանակ Նորին Պայծառափայլութիւն Տէր Փոխարքան յայտնեց ինձ, որ իւր զեկուցումը կայսրածներ վերադարձնելու մասին Բարձրագոյն հաւանութիւն է գտել եւ հրամանը ստորագրուել։ Դպրոցները կը բացուին։

ՄԿՐՏԻՉ կաթողիկոս Ամենայն Հայոց»։

Նիկոլայ Բ. ցարը, 1905-ի Օգոստոս 1-ին, Պետերհոֆի մէջ (Պետերբուրգ) «սեփական ձեռքով» ստորագրեց հրաման-հրովարտակը, որմէ կը քաղեմ այս մասերը։

«Վերականգնելով Մեր փոխարքայութիւնը Կովկասում, Մենք Կովկասը կառավարելու համար Մեր վստահութեամբ ընտրուած անձի վրայ դրեցինք այդ բարերար երկրում հասարակական կեանքի խանգարուած ընթացքը վերականգնելու հոգացողութիւնները։ Ներկայումս փոխարքան, իրեն յանձնուած երկրի պայմաններին ծանօթանալուց յետոյ, ներկայացրել է Մեզ իւր ենթադրութիւնները փոփոխելու համար մի քանի որոշումներ, որոնք վերաբերում են բնակչութեան ճայկական մասին և դժուարացնում են նրա զարգացման կանոնաւոր ու հանգիստ ընթացքը։ Բարւօք համարելով հաստատել Մեր փոխարքայի առաջնորդութիւնը, Մենք ընդարձակ կրթական միջոցներ ենք շնորհում հայադաւան հոգևորականութեանը ժողովրդի օգտին գործելու համար։ Հրամայելով, ընդ սմին, ներքև յիշուած հիմունքներով վերադարձնել

հայ եկեղեցական հաստատութիւններից առնուած գոյքերը. ...որպէս զի ապագայում այլևս տեղի չունենան այն թիւրիմացութիւնները, որ ծագում էին գոյութիւն ունեցող օրէնսդրութեան թերութիւնից, փոխարքան պէտք է դիտողութեան առնէ կառավարչական իշխանութեան դէպի հայոց եկեղեցական հաստատութիւնները ունենալիք յարաբերութիւնները ճշտիւ որոշելու խնդիրը։ Համաձայն սրան, հրամայում ենք ի վերացումն 1903 թուի յունիսի 12-ի բարձրագոյն հրամանի, հայադաւան եկեղեցու պատշաճաւոր հաստատութիւնների իրաւասութեանն ու կառավարութեանը յանձնել հայադաւան եկեղեցիներին, վանքերին, հոգևոր հաստատութիւններին և հոգևոր դպրոցներին պատկանող բոլոր անշարժ կալուածները ու դրամագլուխները իրենց բոլոր եկամուտներով, որ ստացուել են արքունական կառավարութեան ժամանակ, բացի դոյն կալուածները պահպանելու համար տրուած ծախսերից, նմանպէս և այն գումարներից զատ, որ ծախսուել են այդ կալուածները յարքունիս գրաւելու համար։ ...Թողնել Մեր փոխարքային, մինչև որ նոր կանոնադրութիւն մշակուի հայոց եկեղեցական դպրոցների մասին, թոյլ տալ Կովկասեան փոխարքայութեան սահմաններում եկեղեցիներին և վանքերին կից բանալու եկեղեցական-ծխական դպրոցներ, 1874 թուի յուլիսի 19-ի Բարձրագոյնս հաստատուած կանոնների հիման վրայ»։ («Նոր-Դար». 1905, № 2, Թիֆլիս)։

Հայոց Հայրիկը Օգոստ. 7-ին Թիֆլիսի մէջ ստորագրեց և Հայութեան ուղղեց «Շրջաբերական կոնդակ եկեղեցական կալուածները վերադարձնելու և դպրոցներ բանալու մասին»։

Այդ կոնդակը Մեծ Հայրենասէրի, Ժողովրդանուէր Կաթողիկոսի յուզումնալի ուրախութեան և սրտալի ողջոյնի մրմունջն ու ձայնն էր, որ մղուած պայքարէն յետոյ բառոյական յաղթանակի աւետիսը կուտար Հայ Ժողովուրդին։

Ներունազարդ Հայոց Հայրիկն է խօսողը.

«...Ողջոյն Քեզ, եկեղեցի Հայոց, նորոգեալ և զարդարեալ, քանզի ի Քեզ ծագեաց վերստին շողն աստուածային և վերացաւ ի Քէն քօղն սգոյն։ Ողջոյն Քեզ, տառապեալ ժողովուրդ Հայոց, որ տօնես այսօր զտօն նաւակատեաց և ցնծութեան Մօրն Քո եկեղեց-

ւոյ՝ ի շնորհս Մեծի Հովանաւորին Քո և Ամենաբարեպաշտ Կայսերն ամենայն Ռուսաց Նիկողայոսի Բ.-ի. ...Ձեռ տառապանաց վերջին ամաց փառազարդեցաւ եկեղեցին և մխիթարեցաւ դու լիապէս, ժողովուրդ Հայոց։ Եւ ես Նորոգեալ Ծերութեամբ իմով՝ խնդակից փառաց իմոյ եկեղեցւոյ և ուրախակից հարազատիցդ իմոց սիրելեաց, ողջունեմ քեզ և շնորհաւորեմ զտօն ցնծութեան։ ...Տառապանք քո և նեղութիւնք, զոր կրեցեր յանձին առ ի պաշտպանութիւն սեփական իրաւանց եկեղեցւոյ քո սրբոյ, ընդունելի եղեն յաչս Ամենակալ Տեառն զօրութեանց։ ...Ցրուշ լիցին քեզ աւուրք սգոյ քո, և դու ուխտեա՛ առաջի Աստուծոյ սիրել յաւէտ և պաշտել զհարազատ Մայրն քո զսուրբ եկեղեցին Հայաստանեայց, ուխտեա՛ սիրել զեղբայրն քո, զհարազատն և զհամազգին. կալ մնալ սիրով խաղաղութեամբ և համերաշխութեամբ ընդ միմեանս» («Արարատ». 1905 Սեպտ. էջ՝ 774—5)։

Հայոց Կաթողիկոսը, այս կոնդակէն առաջ, շնորհակալութեան ընդարձակ հեռագիր մը տուաւ ցարին, յայտնելով Հայ ժողովուրդի «երախտագիտական ուրախութիւնը» և բարեմաղթելով, որ Ռուսաստանը վայելէ «արտաքին հաստատուն խաղաղութիւն և ներքին անդորրութիւն ամբողջ ժողովրդի երջանկութեան համար»։

Թագաւորը հեռագրով պատասխանեց.

«Թիֆլիս. Ամենայն Հայոց Կաթողիկոսին.—Անկեղծ շնորհակալութիւն Ձերդ Վեհափառութեան արտայայտած զգացմունքների համար։ Աստուած խնամատարացնի Հայ հօտը արդարացնելու իմ վրան ցոյց տուած վստահութիւնը։ ՆԻԿՈԼԱՅ»։

Այդ օրերուն Կաթողիկոսը երախտագիտական օրհնութեան զգացումներով լի հեռագիր մըն ալ տուաւ փոխարքային (որ գացեր էր Կիսլավոդսկի) աւելցնելով—«Ճանկանալով Ձեզ այժ՝ իրագործելու Ձեր խնամքին յանձնած երկրի համար մշակած բարի ծրագիրները»։

Հայոց Հայրիկը յատուկ հեռագիր տուաւ Կիլիկիոյ Կաթողիկոսին, Ղ. Պոլսոյ և Երուսաղէմի պատրիարքներուն, Ռուսաստանի և արտասահմանի թեմական առաջնորդներուն և գաղութներու ազգային մարմիններուն աւետելով ազգապատկան կալուածներու վերադարձման լուրը, որուն ի պատասխան ստացաւ շնոր-

հաւատական և երախտագիտական զգացումներով զեղուն հարիւրաւոր հեռագիրներ։

Թիֆլիսի Վանքի եկեղեցւոյ բակին մէջ, Օգոստոս 7-ին, Հայրիկի նախագահութեամբ կատարուեցաւ կայսերական հանդիսաւոր մաղթանքը, որուն ներկայ էր մօտ 20,000 ժողովուրդ։ Երբ Հայրիկը հանդիսավարը ժամանեց ժողովուրդը ծափերով և «Կեցցէ՛ Հայրիկ», «Կեցցէ՛ Թագաւոր» աղաղակներով խանդավառ ցոյցեր ըրաւ։ Մաղթանքի ժամանակ կարդացուեցաւ Կաթողիկոսի կոնդակը, եղան յաւուր պատշաճի ճառախօսութիւններ ու ժողովուրդը գոհ և ուրախ հեռացաւ «օրհնելով Կայսեր կեանքը և այդ մարդասիրական ակտի պատճառ եղողներին, որոնք վերացրին հայ եկեղեցու սուգը և ժողովրդի վերաբերութեամբ բիւրօկրատների ստեղծած մեղադրանքն ու անվստահութիւնը», կը գրէ Էջմիածնի «Արարատ» ամսաթերթը (1905, Սեպտ. էջ՝ 800)։

Այդ նոյն օրը, Կաթողիկոսի հրամանով, կայսերական մաղթանք կատարուեցաւ Էջմիածնի մէջ, ուր եղիշէ Տ. Վարդպ. Մուրադեանը «բացադրից ժողովրդին այն բացասական ընթացքը, որ մտաւ ռուս կառավարութեան մէջ ութսունական թուականներից յետոյ և պատճառ դարձաւ ամբողջ երկրի յետամնացութեան։ Այսպիսի սխալ ընթացքի և գործունէութեան ժամանակ անմասն չը մնաց նաև հայ ժողովուրդը և եկեղեցին բազմաթիւ զրկանքներից և իրաւանց սահմանափակումներից»։ Մաղթանքէն յետոյ, Տաճարի դրան առջև ժողովուրդը լսեց արքայական հրովարտակի ընթերցումը, մինչ օդը կը թնդար «Կեցցէ՛ Հայրիկ», «Կեցցէ՛ Թագաւոր» աղաղակներով։ Ապա «հոգեհանգիստ կատարուեցաւ օրերի ժամանակուայ (1903 և 1905) զոհերի համար»։

Օգոստոսի 8-ին հայոց Հայրիկը Թիֆլիսէն ճամբայ ելաւ դէպի Էջմիածին։ Այս ճամբորդութիւնը ազգապատկան կալուածներու գրաւման, ժողովրդական պայքարի և ըմբոստ ցոյցերու պատմութեան վերջին՝ բայց շքեղ ու յուզիչ դրուագն է, որ կ՛արձանացնէ հայ ժողովուրդի բարոյական յաղթանակի ճոյնական էջերը։ Թիֆլիսէն մինչև Էջմիածին հայ ժողովուրդը խնդութեան աղաղակներով և պաշտամունքի ցոյցերով ընդառաջեց Վասպուրականի ծերունազարդ Արծուին՝ հայոց Հայրիկին, որուն սիրտը կը ծփար իւր պաշտած ժողովուրդին սիրովը։

Հայոց Հայրիկը հասաւ Ղարաքիլիսէի կայարանը, ուր հազարաւոր ժողովուրդ «Կեցցէ՛ Հայրիկ», «Կեցցէ՛ Հայ ժողովուրդ», «Կեցցէ՛ Հ. Յ. Դաշնակցութիւն» սրտագին աղաղակներով ընդառաջ ելաւ Կաթողիկոսին։ Խանութները փակ էին, քաղաքը դրօշազարդուած էր։ Հայրիկը ժողովրդական թափօրով առաջնորդուեցաւ Արուեանենց տունը։ Այստեղ հանգստացաւ և գիշերեց։

Օգոստ.ի 10-ի կէսօրին Հայրիկը պիտի ժամանէր Ալէքսանդրապոլ, ուր ժողովրդական ընդունելութեան գործերը ստանձնած էին խումբ մը եռանդուն երիտասարդներ։ Քաղաքը տօնական կերպարանք ունէր. ամէն տան և խանութի վրայ կը ծածանէին դրօշակները։ Պատշգամբներէն և դռդռներու վրայ կախուած էին Հայրիկի մեծադիր նկարները՝ ծաղկեպսակներով շրջապատուած։ Առաւօտէն սկսեալ տասնեակ հազարաւոր ժողովուրդ փողոցներն ու կայարանը խռնուած՝ Հայրիկի ժամանման կը սպասէր։ «Մարդ, կին, երեխայ ամենքը դուրս էին եկել դիմաւորելու Հայոց Հայրիկին, իրանց ուրախութիւնը յայտնելու այն մեծ յաջողութեան համար, որ ոչ միայն եկեղեցական կալուածները յետ ստացաւ, այլ շնորհիւ նրա՝ լոյն բացուեցան փակ դպրոցների դռները, որին այնքան անձկանօք սպասում էր Ալէքսանդրապօլ բազմահայ քաղաքը» («Արարատ». 1905. Սեպտ. էջ՝ 805)։

Այն փողոցներու մէջ, ուրկից պիտի անցնէր Հայրիկի կառքը, հինգ տեղ կապուած էին յաղթական կամարներ, որոնց ամէն մէկի ճակատէն կախուած էր Հայրիկի մեծադիր նկարը։ Եկեղեցական դասն ալ կը սպասէր առաջնորդարանի դրան առաջ։ Ժամը 11.40ին հայրապետական գնացքը հասաւ Ալէքսանդրապոլի կայարանը, որ թնդաց ծովածաւալ ժողովուրդի «Կեցցէ՛ Հայրիկ», և «Կեցցէ՛ ժողովրդական յաղթանակ» աղաղակներով, մինչ ռուսաց զինուորական նուագախումբը մարտագոռ եղանակով մը կը հրահրէր յուզուած սիրտերը։ Կաթողիկոսին կ՚ուղեկցէին Թիֆլիսի Առաջնորդ Գաբրիէլ Արքեպ. Սաֆրաստեան, Դիւանապետ Յուսիկ Վարդպ., Ալէքսանդրապոլի և Կարսի առաջն. փոխանորդները՝ Գիւրեղ և Մամբրէ վարդապետները, գաւառապետն ու քաղաքագլուխը։ Կայարան եկած էին Էջմիածնի մհրաբանութեան պատուիրակները Գրիգորիս Եպիս. Գառնակերեան և Սիմեոն անդամ Մատթէոս

Վարդպ.ը (այժմ Արքեպ.), Կամիտաս Վարդպ.ը և տեղական զօրքի հրամանատարական կազմը։ Այժմ խօսքը տանք ականատեսին.

«...Անհամաքայ բազմութեան կեցցէներէն և զինուորական երաժշտական խմբի նուագածուածեան ուղեկցութեամբ Նորին Սրբութիւնը բազմեց իրեն համար յատուկ պատրաստած Խալաթեաններէն կառքը։ Դեռ մի քանի քայլ չէր շարժուել գնացքը, երբ կանգ առաւ. բանից դուրս եկաւ, որ դպրոցական աշակերտ պատանիները ձերունի Հայրապետին առաւել պատուած լինելու համար բաց էին արել ձիերը և իրանք էին քաշում։ Վեհափառը այս նկատելով՝ սաստիկ զայրացած ցած իջաւ կառքից և ուրիշ կառք նստելով շարունակեց ճանապարհը։ Տասնեակ հազարաւոր բազմութեան մէջ կարգ պահպանելն անհնարին դարձաւ։ Ուղիղ կէս ժամ տևեց կայարանից մինչև յայորդարան հասնելը։ Մուտքի առաջ երգում էր օրիորդներից բաղկացած երաժշտական խումբը, որը Հայրիկի վեր բարձրանալու ժամանակ երգեց Հայրիկ, Հայրիկ, fո հայրենիք... երգը։ Երեկոյեան հրավառութիւն կար. նուագում էր զինուորական երաժշտական խումբը և տեղական զուռնան։ Ժողովրդի ոգևորութիւնը անցել էր ամեն չափ ու սահման» (X. «Արարատ». 1905. Սեպտ. էջ 806).

Շիրակի գիւղերէն հազարաւոր գեղչուկներ քաղաքը եկած էին այս հանդէսներուն մասնակցելու համար։ Ամէն կողմ քէֆ ու հրճուանք կար, պար ու երգ, դհոլ-զուռնա, աշուղները կ'երգէին Հայրիկին ձօնուած երգերը և աշակերտուհիները թափօրներ կազմած ազգային երգեր հնչեցնելով կ'երթեւեկէը փողոցներուն մէջ։ Օգոստ. 11-ին Ալէքսանդրապոլի և շրջակայ գիւղերու ժողովրդական պատգամաւորները Հայրիկին ներկայանալով շնորհաւորեցին, իսկ Թուրքերու ներկայացուցիչներն ալ բերի գալուստ մաղթելէ յետոյ «իրենց ցաւակցութիւնը յայտնեցին հայերի և Թուրքերի մէջ տեղի ունեցող թշնամական գործողութիւնների առթիւ». Կաթողիկոսը շնորհակալութիւն յայտնելէ յետոյ, յորդորեց «հաշտ ապրել հայերի հետ և շեշտեց, որ միևնոյն երկրի մէջ գարերով ապրողների եղբայրական համերաշխութիւնից կախուած է նրանց բարեկեցութիւնը»։

Օգոստ. 16-ի առաւօտեան Հայրիկը իւր շքախումբով ճամբայ

եւս դէպի Էջմիածին։ Վաղարշապատէն և շրջակայ գուղերէն 780 ձիաւոր երիտասարդներ, բազմաթիւ կառքերով երևանցիներ, հազարաւոր ժողովուրդ և մխթարանութեան պատգամաւորները մինչև Էջմիածնի կայարան ընդառաջեցին Հայրիկին, որը կառք նստելով ուղղուեցաւ դէպի Վաղարշապատ։ Այս հանդիսաւոր թափօրը ժամի 4-ին հասաւ Վաղարշապատ։ Գատերն ու պատշգամբները զարդարուած էին դրօշակներով, գորգերով ու Հայրիկի նկարներով։ Այն փողոցները, որոնցմէ պիտի անցնէր Հայրիկի կառքը, գետինը ծածկուած էր կանանչ տերևներով և ծաղիկներով։ Յանեակ հազարաւոր խուռն բազմութիւնը որոտընդոստ ծափերով և «Կեցցէ՛ Հայրիկ» աղաղակներով ողջունեց Հայրիկի մուտքն ի Վաղարշապատ, մինչ Էջմիածնի զանգերը կը զօղանջէին բարձր ու հնչուն։ Վանքի միաբանութիւնը զգեստաւորուած կը սպասէր Ծրդատի դրան առջև։ Դրօշակակիր ձիաւորներով ու կանաչազարդ կառքերով շրջապատուած հայրապետական կառքը մօտեցաւ, մինչ կեցցէներն ու ծափերը անընդհատ կը շարունակուէին։ Հայրիկն իջաւ կառքէն և Լուսաբարապետի մատուցած խաչն ու գաւազանը ընդունելէ յետոյ մտաւ ամպահովանիի տակ։ Նկեղեցական թափօրը «Հրաշափառ» շարական երգելով շարժուեցաւ դէպի Մայր Տաճարը։ Հայրիկը լուռ էր, յուզուած, աչքերը լեցուած էին արցունքով, շրթունքները կը դողային. նա աջ ու ձախ կը նայէր, կը խաչակընքէր և կը դիտէր ժողովրդական այդ արտագին և յուզիչ ցոյցը, յիշելով կալուածներու գրաւման օրերն ու դէպքերը...։ Կաթողիկոսը մտաւ Տաճար, աղօթեց և բարձրացաւ Վեհարան, առանձնացաւ ու կարծես հանգիստ շունչ քաշեց։

Դհոլ-զուռնայի, երգերու, պարոդներու, աշուղներու, ժողովրդական քէֆերու և խրախճանքներու ձայները շարունակուեցան մինչև կէս գիշեր։ Վանքի և Ճեմարանի բակերուն մէջ տեղի ունեցաւ հրավառութիւն։

Ութսունհինգամեայ պատկառելի Մերուն, նոյն ինքն Հայ ժողովրդի պաշտելի Հայրիկը, իւր պաշտած ժողովրդի երգերով ու չերմ զգացումներով առյուն, հոգով սրտով ուրախ ու գոհ, իւր ծանր ու նուիրական պարտականութիւնը յաջողութեամբ կատարած և ժողովրդական բարոյական յաղթանակով հպարտ ու հզօր՝

կանգնեցաւ Արարատեան Աշխարհին մէջ, աչքերն ուղղեց Ձիւնապատ և Վեհափառ Մասիսի գագաթին, տեսնելու համար Հայաստանի Ազատութեան շիջելափառ արշալոյսը, որ պիտի ծագէր իր մահէն ճիշտ տասը տարի յետոյ։

Մաղթանքներ, ցոյցեր և հանդէսներ կատարուեցան Կովկասի և Ռուսաստանի բոլոր հայաբնակ վայրերու մէջ։ Նոր-Նախիջեւանի, Ատրպատականի, Բագուի, Գանձակի, Թիֆլիսի, Բաթումի, Ախալքալաքի, Ախալցխայի, Կարսի, Կաղզուանի, Իգդիրի, Երեւանի, Նոր-Բայազէդի, Հին-Նախիջեւանի, Ագուլիսի, Դորիսի, Շուշիի և բազմաթիւ գաւառական կեդրոններու, մինչև անգամ գիւղերու մէջ տեղի ունեցան հանդէսներ։ Հայ ժողովուրդը ամէն կողմէ շնորհակալութեան և երախտագիտութեան զգացումներով լեցուն հեռագիրներ և գրութիւններ ուղղեց իր պաշտած Հայրիկին, որ ժողովրդական աննկուն կամքին և յեղափոխական հզօր բազուկին ապաւինելով կրցաւ կերտել բարօյական յաղթանակի հոյակապ յուշարձանը։

Այս բոլորէն յետոյ Հայրիկը ծայր դրաւ իր սովորական ճամբորդութեանց։ Տնաց Օշական, Աշտարակ, Բիւրական, Արագածի լանջերը և վերադարձաւ Էջմիածին։ Սեպտ. 16-ին անցաւ Երեան և այցելեց նոր հահանգապետ Իշխան Նապոլէոնին*)։

Հոկտեմբերին գնաց վանքեր, մտաւ բազմաթիւ գիւղեր, ծանօթացաւ ժողովուրդի կեանքին և անցաւ Ալէքսանդրապոլ ու Թիֆլիս, ուր շաբաթ մը մնալէ յետոյ վերադարձաւ Էջմիածին։ Դեկտ.ի վերջերը, Հայրիկը կարգ մը կարևոր գործերով նորէն գնաց Թիֆլիս և մնաց մինչև Յունուարի (1906) վերջերը։ Նոր տարուայ

*) Մեծն Նապոլէոնի եղբօր թոռն էր Երևանի նահանգապետը, այս Իշխան Նապոլէոնը, որ Հայ-Թրքական ընդհարումներու քննութեամբ զբաղուելու համար չրջեցաւ Երևանի հայաբնակ գաւառները։ Իշխան Նապոլէոնը խղճամիտ քննութեամբ հաստատեց, որ ազգամիջեան կռիւներու հեղինակը բուն իսկ տեղական իշխանութիւնն է, իսկ ոճիրներու, կոտորածներու և աւերածութեանց հեղինակները թաթար-թուրքերն են։ Նա պարզեց, որ հայերն անմեղ են և ծանր կորուստներ ունեցած են ընդհարումներու ընթացքին։ Այս բոլորի մասին Իշխան Նապոլէոնն ընդարձակ հեռագիր մը առաւ Պետերբուրգ։ Զանգեզուրի քննութեանց ժամանակ Իշխանին կ'ուղեկցէր Յաթեւի Վանահայր Ներսէս Վարդապետ Մելիք-Թանգեանը։

առթիւ Հայոց Կաթողիկոսին այցելեցին Կոմսուհի Վարանցով Դաշկովնան և բարձրաստիճան պաշտօնեաներ։ Փետր. 3ին Հայրիկը ճամբայ ելաւ դէպի Էջմիածին։

Դարնանային երեկոյ էր, 1906-ի Մայիսի 6-ին, մասնաւոր խօսակցութեան մը ժամանակ, Հայոց Հայրիկը յայտնեց, որ— «Գանի մ'օրէն ուրախալի կոնդակ մը պիտի տամ ժողովուրդին»։ Եւ ահա Մայիսի 10-ին լոյս տեսաւ թիւ 649 հայրապետական աշխարհաբար կոնդակը, որով ծերունազարդ Կաթողիկոսը կ'աւետէր.

«...Քեզ ևնք տալիս. ժողովո՛ւրդ Հայոց, թեմական առաջնորդնեերի, յաչորդնեերի, գործակալնեերի եւ հոգևոր վարչական հաստատութեանց պաշտօնեաներուն ընտրութեան իրաւունքը»։

Հայ ժողովուրդը սիրով, սրտով ընդունեց այս իրաւունքը, որ մինչև այժմ ալ կը գործադրուի ամէն տեղ։ Երբ կոնդակը լոյս տեսաւ, Մայիսի 11-ին Էջմիածնի մէջ կատարուեցան ժողովրդական ցոյցեր եւ ուրախութիւններ։

Հայոց Հայրիկը ուրիշ կոնդակով մըն ալ հրահանգեց, որ 1906-ի Օգոստ. 15-ին Էջմիածնի մէջ գումարուի «Ռուսիայի տահմաններում ապրող Հայ ժողովուրդի Ընտրեալ Պատգամաւորների ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ», որ պիտի քննէր ու լուծէր «անյետաձգելի կարևորութիւն ունեցող խնդիրներ՝ դպրոցական՝ տնտեսական գործերը և թեմական ժողովները*) կարգաւորելու հարցերը»։

Ռուսահայութեան ձայնով ընտրուած 57 թեմական պատգամաւորները հետզհետէ հասան Էջմիածին, ուր Օգոստ. 17-ին, Ճեմարանի հիւանդանոցի սրահին մէջ (որ այն տեղն աթոռակուրդի պատճառով ազատ էր) բացուեցաւ Ազգային Կեդրոնական ժողովը։ Հայոց Հայրիկը մտաւ սրահը, ժողովը բացուած յայտարարեց և խօսքը ժողովականներուն ուղղելով ըսաւ.

—Հիւանդ ազգիս, հիւանդ զաւակներս, հաւաքուած էք հոս, հիւանդանոցի այս սրահին մէջ, ազգին ցաւերը բժշկելու համար.

---

*) Էրիմեան Հայրիկը 1903-ի Փետր. 9-ին հայրապետական կոնդակով (թիւ՝ 198) հաստատեց Ամրողջական Հայութեան «Ժխական Կանոնագրութիւնը», որ տեղական «եկեղեցական վարչական գործոց» առաջնորդը կը հանդիսանայ։ Այս կանոնագրութիւնը լոյս տեսաւ Թաւրիզի մէջ 1903-ին։ (Ամրող. Հայոց Թեմական Տպարան. էջ 66)։

էհ, կ'օրհնեմ ձեր աշխատանքը, կը մաղթեմ ձեզ յաջողութիւն, համերաշխութիւն, որ սիրով ու խաղաղութեամբ գործէք լծուէք և կատարէք ձեր վրայ դրուած սրբազան պարտքը. Հայրիկը ծերացած է, ան չը պիտի կրնայ ձեր ժողովներուն մասնակցիլ. օրհնեալ էք և օրհնեալ ըլլաք»:

Ողոքնգոստ ծափերու և կեցցէներու մէջէն հեռացաւ Հայրիկը. Միաձայնութեամբ ժողովին նախագահ ընտրուեցաւ ամէնքէն յարգուած ու սիրուած Սիմոն Զաւարեանը. ժողովը զբաղեցաւ ուսահայոց կրօնական, ազգային, դպրոցական, տնտեսական և այլ կարևոր հարցերով. Մայր առին սուր վիճաբանութիւններ և հակառակ կարծիքներ. Ամենախիստ քննադատութեան ենթարկուեցաւ Հայ հոգեորականութիւնը և նոյնիսկ ծայրայեղ կարծիքներ ի յայտ եկան Հայ եկեղեցւոյ դէմ. Ազգ. կեդր. ժողովի պատգամաւորներն ու քննութեան ենթակայ հարցերը ուսաց պետութեան ուշադրութիւնը գրաւեցին, որը «քաղաքական նպատակներէն» և «տղոցմայ վտանգէն» կասկածելով հրամայեց, որ ժողովը փակուի*): Էջմիածնի գաւառապետ Լեմերմանի կարգադրութեամբ Օգոստ. 30-ին ժողովը փակուեցաւ և պատգամաւորները հեռացան Էջմիածնէն:

Հայոց Հայրիկը ժողովուրդի ընտրական ձայնին աւելի լայն արտօնութիւններ տալու համար կարգադրեց, որ կազմուի «Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ ծխական կանոնադրութիւնը»: Այս ծրագիրը մշակելու համար կազմուեցաւ հմուտ և մասնագէտ անձերէ բաղկացեալ ճանձնաժողով մը, որուն կ'անդամակցէին՝ Բագրատ Վարդպ. Վարդազարեան, Ներսէս Վարդպ. Մելիք-Թանգեան, Գալուստ Տէր Մկրտիչեան (Մխաբան), Մկրտիչ Տիգրանեան, Ստեփան Կանայեան և Գրոֆ. Յակոբ Մանանդեան. Ճանձնաժողովը գործի անցաւ և ժամանակի ու ժողովուրդի պահանջներուն համա-

*) Սխալ է Թորգոմ Ալբեպ. Դուշակեանի այն կարծիքը, թէ Հայոց Հայրիկը «բոլոր այժմու ծառայու անոնց (յեղափոխականներու—ժողովականներու Հ. Ա.) դէմ, որուն ժողովը», սակայն ճիշտ է, որ անոնք «պարզեցին իրենց ծայրայեղական տեսութիւնները նկեղեցական կոչմէ՝ կրօնական զգացման և ընտանեկան կեանքի վերաբերութեամբ», («Ժրքիմեան Հայրիկ», էջ՝ 213): Ժողովը ցրուեցաւ ոչ թէ Հայրիկի այլ՝ պետութեան հրամանով:

ձայն մշակեց 93 յօդուածներէ կազմուած «Մխակաև Կանոնադրութիւնը», որ լոյս տեսաւ Էջմիածնի «Արարատ» ամսաթերթի մէջ (1906, Դեկտեմբերին)։ Այս կանոնադրութեամբ կանայքն ալ ընտրելու և ընտրուելու ձայն և իրաւունք ունեցան։

Խրիմեանը 1906-ի Դեկտեմբերին յատուկ կոնդակով (թիւ՝ 40) պատուիրեց Սինօդին «ի կիր արկանել զկանոնադրութիւն ծխական Հայաստաննայց ս. եկեղեցւոյ»։

Էջմիածնի Սինօդի նոր պրօկուրորը՝ ծագումով հրեայ Ձրէնդէլը, որ հայատեաց և գարշելի տիպ մըն էր, անմիջապէս ռուսերէնի թարգմանել տուաւ «Մխակաև Կանոնադրութիւնը» և փոխարքայ Վարանցով Դաշկովին ղրկելով զեկուցագրեց, թէ—«Մխական կանոնադրութիւնը Հ. Յ. Դաշնակցութեան ծրագրի շարունակութիւնն է, այդ անունով լոյս տեսած, որ կաթողիկոսի Դիւանապետ Ներսէս Վարդպ. Մելիք-Թանդեանը կը հանդիսանայ շարունակողը Դաշնակցութեան ծրագրի գործադրման» և այլն*)։

Իրանի Մուզաֆֆէր-էդդին Շահնշահը մեռաւ 1906-ի Դեկտ.ին։ Հայոց կաթողիկոսը հեռագրով ցաւակցութիւն յայտնեց Հայ ժողովուրդի մշտական բարեկամ Պարսից պետութեան ու ժողովուրդին և կարգադրեց, որ Կովկասի Հայերը հոգեհանգիստներով ու սգահանդէսներով յարգեն հանգուցեալ Շահնշահի յիշատակը, վասն զի «գահ բարձրանալու օրից նա առանձին խնամք է ցոյց տուել Հայոց ազգի այն մնացորդին, որ նորա բարձր հովանաւորութեան տակն է եղել։ Բացալերել է Հայոց դպրոցները, խրախուսել է ամէն մի յառաջադիմութեան քայլ թատրոն, բարեգործական ընկերութիւն, եկեղեցի նրա հովանաւորութիւնն են վայելել» («Արարատ». 1907. Յունուար. էջ՝ 55)։

---

*) Այս ամբաստանութեանց վրայ, Վարանցով Դաշկովի հրամանով Էջմիածնէն Խրիմի Ս. Խաչ վանքն աքսորուեցաւ Ներսէս Վարդպ. Մելիք-Թանդեանը (1907, Յունիս)։ Աքսորուեցան նաև Մխիթար Տէր Մկրտիչեան և Խոսրով Տէր Մկրտչեան վարդապետները, որոնք Էջմիածնի ապարանի կառավարիչներն ըլլալով, իրը թէ Հ. Յ. Դաշնակցութեան ծրագիրը ապագրած էին «Մխական Կանոնադրութիւն» անուան տակ։ Յարկան գործակալ և ախբարհուշակ Ձրէնդէլը, 1907-ի Մայիսին, Էջմիածին—Երևան ճամբու վրայ Հ. Յեղ. Դաշնակցութեան կոմէ թէև մահափորձի ենթարկուեցաւ, բայց ողջ մնաց և փախաւ Էջմիածնէն։

Կովկասի փոխարքայ Վարանցով Դաշկովը և իր կին Ելիզաւետա Անդրէեւնան 1906-ի Դեկտ. 23-ին իրենց շքախումբով եկան Էջմիածին և պաշտօնապէս այցելեցին Հայոց Հայրիկին. Ընդունելութիւնը կատարուեցաւ մեծաշուք հանդէսով. Փոխարքան շատ գոհ մնաց և Թիֆլիս վերադառնալէ յետոյ շնորհակալութեան նամակ մը գրեց Կաթողիկոսին յայտնելով, որ—«Ս. Էջմիածին այցելելը մեզ մեծ բաւականութիւն պատճառեց». Հայոց Կաթողիկոսն ալ 1907-ի Յունուարի վերջերը գնաց Թիֆլիս և փոխ այցելութիւն տուաւ փոխարքային.

Հայրիկի ծննդեան 87-րդ տարեդարձն (1820—1907) հանդիսաւորութեամբ տօնուեցաւ Էջմիածնի մէջ 1907-ի Ապրիլի 4-ին.

Վարագայ վանքի Հոգաբարձութիւնը կ'որոշէ համահայկական և ժողովրդական մասնակցութեամբ տօնել «Ժառանգաւորաց Վարժարան»ի հիմնարկութեան յիսնամեայ յոբելեանը (1857—1907). Սակայն այս մասին պէտք էր առնել Վարժարանի հիմնադրի՝ նոյն ինքն Հայր Արծիւ Խրիմեանի կամքն ու հաւանութիւնը.

Հոգաբարձութիւնը 1907-ի Մարտի 12-ին յատուկ գրութեամբ (թիւ՝ 189) կը դիմէ Հայոց Հայրիկին, խնդրելով հաւանութիւն և կոնդակ. Զայնը կուգար Մայր Հայրենիքէն, Վարագայ Արծուաբոյնէն, Վասպուրական մը աշխարհէն, որուն մօտաւոր անցեալն ու յուշ-յիշատակները այնքան յուզեցին ծերունազարդ Հայր Արծուի զգայուն սիրտը. Դողդոջ մատներով վերցուց գրիչը և արցունքն աչքերուն գրեց (1907 Ապրիլ 25) այս սրտառուչ կոնդակը.

«ՄԿՐՏԻՉ Տառայ Քրիստոսի եւ Կաթողիկոս Ամենայն Հայոց...

«Արժանապատիւ Տ. Մեսրոպայ Եպիսկոպի Ճանիկեան, Նախագահի Հոգաբարձութեան Վարագայ վանուց եւ պատուարժան անդամոց նորին հոգաբարձութեան եւ ամենայն դասուց ժողովրդեան եկեղեցականաց եւ աշխարհականաց, տղաց եւ կանանց մեծաց եւ փոքուց որդւոց մերոց սիրեցելոց եւ հարազատաց Մայր Աթոռոյս բնակելոց ի Վասպուրական երկրի.

«Ողջոյն եւ Հայրապետական օրհնութիւն.

«...Խնդութեամբ լցան սիրտ մեր յորժամ հասաւստի նոքա, եթէ արք բարեկամք եւ սիրողք բարգաւաճման վանուդ հասին միտք եւ համախորհուրդք ընդ Հոգաբարձութեան դորին փափաքին

տօնել զտօն յիսնամեայ յոբելեանի վերջնոյ շրջանի ժառայութեան վանուցն յօրէ բացմանն Ժառանգաւորաց Վարժարանին անդ ի ձեռն մեր։

«Ո՛ր ուրախութիւն առաւել որդեակք իմ քան զմշակին որ յետ բազում ջանից տեսանէ զպտուղ քրտանց իւրոց։ Ծառաջազոյն յիսուն ամօք բորբոքեալ վառեցաւ սիրտ մեր ի սէր եղբարց մերոց հարազատաց, եւ մեք զորեն մշակի արիւք զհիմն յուսոյ տաճարիդ այդորիկ սերմանել անդ զսերմանս բարւոյ եւ ճշմարտութեան, զորոյ եւ զպտուղսն տեսանք աչօք իսկ մերովք։ Ցիսուն ամք անցին յայնմ օրէ հետէ որդեակք իմ, եւ ո՛րպիսի անցք եկեալ տեղացին ի գլուխ մեր, որդւոցս միոյ Հայրենեաց, տուք եւ սրաժուժիւնք եւ որ ի կարգէ տոցին, որոց հնարեցաք անհանգստանալ։ Այլ եւ ոչ մի ինչ յաղետից յայսցանէ կարաց կասեցուցանել զընթացս բարգաւաճմանն յուսոյ Տանս. քանզի կեանդանի էր անդ հոգին ճշմարտութեան եւ Տէր պահէր զդա ի խնամս իւր ընդդէմ որոգայթից մարդկան։ Իսկ զնոսին ժամանակաց եկն հոգաբարձութիւն եւ յաւուրջ մատոյց զնոյն գործ մեր ի սէր մատուցանելոյ մանկտւոյն մերոյ յայնմ ժամանակի ընծայելով Մեր ապաստարան արդոյ եկեղեցւոյ եւ միաբան հայրենի դպրութեան, իսկ յայսմ ժամանակի ընձեռելով դուռն տեղի ապաստանի եւ կրթութեան մանկանց որբացելոց, որոց ոչ ունէին կայր յոյս փրկութեան։

«Եւ արդ խնդակից զոլով Մեր ձեզ ամենեցուն տօնողացդ զտօն յիսնամեայ յոբելենի վերջնոյ շրջանի կրթական գործունէութեան դորին՝ օրհնեմք զվաստակս ջանից պատուարժան Հոգաբարձութեանն եւ որոց աշակից եւ սատար եղեն նմա եթէ խորհրդով եւ ջանիւ եւ եթէ նիւթական զոհաբերութեամբ։ Տացէ տէր ամենեցուն կար եւ եռանդն եւ պահպանումն յուսոյ բարեաց եւ զտածարդ լուսոյ իմաստութեան զսիրելին եւ զպատուականն մեր զվարագ պահեսցէ յաւիտեան ի պայծառութեան ի մխիթարութիւն Ձեր եւ համայն ազգիս»։

Հայրիկը Ապրիլի 27-ին էջմիածնէն ճամբայ ելաւ դէպի Թիֆլիս և 30-ին իւր վերջին այցելութիւնը տուաւ փոխաթըթային, որ նոյն օրն իսկ իւր տիկնոջ հետ փոխ այցելութեան եկաւ։ Ամիս մը ամբողջ Թիֆլիսի մէջ ապրելէ յետոյ, Մայիսի 26-ին վերադարձաւ էջմիածին, ուր ընդունուեցաւ ժողովրդական խանդավառ ցոյցերով։

Ցունիս և Ցուլիս ամիսներուն, հակառակ տիրող տօթին և իւր ցանկութեան, Հայրիկը չը կրցաւ երկար ճամբորդութիւններ կատարել՝ դէպի վանքեր, գիւղեր և կամ զով գաւառները։ Երբեմն միայն գնաց Արագածի լանջին վրայ գտնուած կաթողիկոսական ամառանոց Բիւրական գիւղը և վերադարձաւ Էջմիածին, ուր հիւանդկախ վիճակի մէջ հոգով մարմնով կը տառապէր։

Լահէյի մէջ 1907-ի ամրան գումարուեցաւ «Խաղաղութեան Վեհաժողովը»։ Հայոց Հայրիկը նորէն դիմեց «դիւանագիտական խաղաղ միջամտութեան» և կրկին ու կրկին անգամ Եւրոպայի անխիղճ մեծերէն*) Հայկական Դատի պաշտպանութիւնը խնդրեց։ Հայ ժողովուրդի ազատութեան ու բարօրութեան սիրով տանջուած կաթողիկոսի պատգամաւորները—Գէորգ Եպիս. Իւթիւճեան, Ռուբէն Ահարոնեան և Ցովհ. Շահնազար—իրենց թափած ջանքերուն և եռանդին հակառակ ձեռնունայն վերադարձան և իրենց աշխատանքներու մասին տեղեկագիր մը կազմելով ղրկեցին Կաթողիկոսին։ Սեպտ.ի 12-ին Հայրիկը առաց այդ տեղեկագիրը, կարդաց, վշտացաւ, բայց նորէն չը յուսահատեցաւ։ Ազգի ու Հայրենիքի ազատութեան գաղափարը այնքան վառ ու պայծառ կերպով կը պատկերանար անոր աչքին առջև, որ նա իւր հսկայ կեանքի վերջալոյսի օրերուն անգամ, յուսալից աչքերով կը նայէր Արարատի բարձունքին, Մասիսի սիզապատած գագաթին՝ տեսնելու համար Հայաստանի Ազատութեան ծածանուող դրօշակը, որ կ'ուզէր համբուրել, օրհնել, արցունքով օծել և ապա մեռնիլ...։

Եւ այդ նուիրական, ցանկալի դրօշակը տեսնելու կարօտով մրկած Հայրիկը նորէն լաթեց իւր սրտի քնարին լարերը՝ Հայրենեաց Վիշտը նուագելու համար։ Այս անգամ իւր ձայնը հասցուց Անգլիոյ Էդուարդ Թագաւորին, որմէ շատ բան կը յուսար.

---

*) Հայոց Հայրիկը 1905-ի Ցունուարի 10-ին կոնդակ մը գրեց Ամերիկայի Միացեալ Նահանգներու Նախագահ Թէոդոր Ռուզվելտին՝ «յաղագս պատեպատուութեան դաւիճ Տաճկահայոց», սակայն Նախագահը կաթողիկոսի զոյգ պատգամաւորներուն պատասխանեց, որ հակառակ իր ցանկութեան, չը պիտի կրնայ միջնորդել «վասնզի Բերլինի Վեհաժողովէն Տաճկահայոց արուած 61-րդ յօդուածին ասկ Ամերիկեան պետութեան ստորագրութիւնը չը կայ»։

*«...Պիտի լսե՞ս արդեօք, Ծէր Արքայ, նուաղկոտ ձայնը մարտիրոս ժողովուրդի մը Ծերունի Հովուապետին, որուն մէկ ոտքը գերեզմանն է, եւ որ անմահութեան սեմէն կը խօսի Քեզի, իբրեւ աշխարհի իշխաններու ամէնէն արդարասէրին։ Նա չունի ո՛չ զէնք, ո՛չ զրահ, չունի ո՛չ դիւանագիտութեան փաստ, որով կը համոզեն մարդիկ գիրար, եւ ո՛չ կուռ գիտութեան մը հմտութիւնը: Նորա մէկ ձեռքը խաչ մը կայ, միւս քնար մը. կրօնքին խորհուրդը եւ քիչ մը բանաստեղծութիւն. ահա ամբողջ իր ունեցածը. պիտի ուզե՞ս լսել այսպիսի մարդու մը ձայնը...»:*

**Ու քաղաքակիրթ, հզօր աշխարհը չը լսեց այդ ձայնը, Մեծ Հայրենասէրի հառաչանաց այդ ձայնը, որ նա վերջին անգամ արձակեց ի խորոց սրտի և յաւիտենապէս փակեց իւր աչքերը։**

## Ժ.

## ՀԱՑՈՑ ՀԱՅՐԻԿԻ ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԸ ԵՒ ՄԱՀՆ ՈՒ ԹԱՂՈՒՄԸ

**Սառնաշունչ և տխուր աշունն իջած էր Արաբատեան Աշխարհի վրայ։ Լեռնապատ Մասիսի բարձունքներէն և քառագագաթ Արագածի լանջերէն կը փչէին սառն հովեր ու սաստիկ քամիներ։ Աշնան տերեւաթափը սկսած էր և ամպոտ, մալուլ երկինքէն յաճախ անձրև կը մաղուէր:**

**Էջմիածնի պարիսպներէն ներս, Վեհարանի դահլիճներուն մէջ՝ Հայոց Հայրիկը իւր հսկայ, պատմական կեանքի վերջալոյսի օրերը կ՛ապրէր։ Հիւանդկախ ու տխուր էր նա։ Երբ կը տեսնէր անձրևոտ եղանակն ու ցրտաշունչ քամիները՝ կը սրտնեղէր, կը ձանձրանար և ծխելով կ՛երթևեկէր։ Դիշերները յաճախ անքուն կը մնար ու կը տառապէր ոտքի ցաւէն։ Երեկոներ կամ կէս գիշերին, մահճակալի մէջ նստած, մոմի աղօտ լոյսին տակ Նարեկ կը կարդար. «Ի խորոց սրտի խօսիմ ընդ Աստուծոյ.... Ձայն հառաչանաց եւ ծնօթեան սրտի ողբոց աղաղակի եւ վերընծայեմ...»։ Ապա բերանացի կ՛արտասանէր Պատմահայր Խորենացիի ողբը.—«Ողբամ զեզ Հայոց Աշխարհ...»։ Նեբսէս Շնորհալիի հոգեբուխ շարականները Հայրիկի գիշերային ժամերգութեան թագն ու պսակը կը կազմէին։ Երբ լուսաստղն կը պլպլար և լուս-աղօթքանը կը մօտենար՝ Հայրիկը կ՛ոգևորուէր և հիմացումով ու արցունքով «Զարթիմ»ը կ՛երգէր։**

«Զարթի՛ֆ փառ իմ, զարթի՛ֆ եւ ես զարթեայց առաւօսուց...»։ Ո՛վ գիտէ, թերեւս նա իւր բազմատանջ ազգի և զարկուած հայրենիքի ազատութեան զարթօնքը կ՚երազէր ու կ՚երգէր. Իսկ երբ աշնան արեւը կը ծագէր Մեծ Ծերունին քաղցր ու մեղմանուշ ձայնով մը կ՚երգէր.

«Առաւօս լուսոյ, արեգակն արդար, առ իս յոյս ծագեա...»։ Ճաճախ բերանացի կ՚արտասանէր Եղիշէ և Ղազար Փարպեցի պատմագիրներու գեղահիւս տողերը. Միջնադարեան աշուղներու և տաղասացներու երգերը գոց գիտէր ու կ՚երգէր. Խորին հիացմունք ունէր մանաւանդ ժողովրդական երգերու հանդէպ և հաճոյքով կ՚երգէր. «Աւարայրի Բլբուլ»ի՝ Հայր Ալիշանի հայրենասիրական երգերն ու ոտանաւորները Վասպուրականի Հայր Արծուի սիրտն ու հոգին կը լեցնէին անուշ զգացումներով. Հայրիկը Հայր Ալիշանի խօսքերով կ՚ողջունէր լուսաբացը.

«Առաւօսուն դունակն է բաց, ե՛լ, ե՛լ, արեւդ Հայաստաճեայց»։ Արեւին շողերը կ՚ողողէին Հայոց Աշխարհը, որուն ի տես՝ Հայոց Հայրիկը սրտի խորին կարօտով ու սիրով կը բացականչէր.

«Ծեր Նահապետիդ տուր կակուղ ճողիկ,
Որ գեզ պինդ սիրեց Հայո՛ց Աշխարճիկ...»։

Հայրիկը Հայոց Աշխարհի «կակուղ հողիկ»ին կարօտը կը քաշէր և անյոյս նախազգացումով մը լեցուած կը ցանկար քնել «հողին քով»...,

Հազիւ հաց կը կարդար, դողդոջ մատներով կը բռնէր գրիչը և դժուարութեամբ կը ստորագրէր կոնդակները. Աղմուկ և բարձր խօսակցութիւն վատ կ՚ազդէին վրան. Շուտ կը ձանձրանար, կը սրտնեղէր, սակաւակեր էր, քիչ մը մածուն, թանապուր և պատառ մը հացով կը կշտանար. Առաւօտներ բաժակ մը թէյ կը խմէր և ծխելով կը շրջէր գահլիճներուն մէջ. Ծոգնած ատեն ծալապատիկ կը նստէր թախթի վրայ և կռնակը Մայր Հայաստանի նկարով մետաքսագործ գօրգին տալով համրիչ կը քաշէր ու կը խորհրդածէր, մինչ ծխախոտի կապոյտ ծուխի քուլաները յաճախ կը պատէին անոր դէմքն ու գլուխը. Հնադարեան մշտավառ հնոցի մը կը նմանէր անոր բերանը. Երթուընքներուն մօտիկ բեխերն ու մօրուքին մազերը ծխախոտի ծուխէն դեղներ էին և նկարչական գեղեցկութիւն մը տուած էին անոր արդէն խոկ գեղեցիկ տեսքին.

Աչքերը դեռ կը պահէին իրենց հմայքն ու թովիչ հայեացքը, պարթև հասակը կ'երեւար և կարծես թէ հսկայ կաղնիի մը նման իր տապալման նախօրեակը կ'ապրէր։ Հազիւ ոտքի վրայ կը կենար ու շատ Ժխելու պատճառով յաճախ գլխու պտոյտ և սրտխառնուք կ'ունենար։ Այս հիւանդագին և փակուած վիճակին մէջ ժողովրդասէր Հայրիկը Հայ ժողովուրդին կարօտը կը քաշէր։ «Մեծ է ժողովուրդ ասածդ, մեծ սիրտ ունի ան» ըսած էր Մեծ Մեբունին Աւ. Իսահակեանին։

Հայ ժողովուրդի այդ Մեծ Զաւակը, իւր կեանքի վերջին օրերուն անգամ, ժողովրդական բան ու բառի, երգ ու խօսքի կարօտը կը քաշէր։ Եւ այս էր պատճառը, որ նա իւր հայրենիքի՝ Վան-Վասպուրականի համն ու հոտը առնելու և ժողովրդական յուշ-յիշատակներով ապրելու համար, յաճախ իր մօտ կանչել կուտար վանքի վաններէ հօտաղ-մշակներն ու մանաւանդ հացապան Աւետիսը և խօսքն անոնց ուղղելով, քաղցր ժպիտով կ'ըսէր։

—Ծօ, ապուշներ, դէհ, Վանայ բարբառով զրուցէք Հայրիկին հետ, որ սիրտս բացուի։ Նստեցէք և սկսեցէք խօսիլ։

Հացապան Աւետիսը կը պատմէր ինձ, որ—«Իրար կողքի շարուելով ծնկաչոք կը նստէինք դահլիճի պատին տակ, Հայրիկն ալ հեռուն թախթի վրայ ծալապատիկ նստած կը ծխէր, համրիչ կը քաշէր, Վանի բարբառով հարցեր կուտար մեզ՝ մենք ալ կը պատասխանէինք։ Կը պատմէինք տեղական սովորոյթներ, գիւղական կեանքի պատկերներ, մշակ-հօտաղներու քէֆեր, ուխտագնացութիւններ և զուարճալի դէպքեր։ Յաճախ ինքն ալ կը մասնակցէր, կը պատմէր, կը սրախօսէր, ամէնքիս մէկ մէկ անուն կը դնէր, սրտանց կը ծիծաղէր և ապա յանկարծ կը կանչէր։—Հայդէ՛ գացէք, այսօր բաւէ ինչ մըն ալ բողուցի վաղուան։ Մենք բոլորս ալ շփոթուելով ոտքի կ'ելլէինք ու զապուած ծիծաղով կը հեռանայինք»։

Հոկտեմբերի (1907) վերջերը անձրևոտ և մռայլ եղանակ էր։ Հայրիկը կը սրտնեղէր ու կը ձանձրանար։ Օր մըն ալ Վեհարանի պարտէզի ծառերուն տերեւաթափը տեսնելով իւր մօտ գտնուած մարդոց վշտալի ձայնով մը կ'ըսէ։

—Ծօ, ապուշներ, կը տեսնէք այս տերեւաթափը, իմ ալ կեանքիս տերեւաթափը հասեր է, է՛հ, օր մըն ալ տեսաք, որ կեանքի քամին կամացուկ մը ինձ հողին տակ կ'իջեցնէ։ Արդէն կը զգամ

այդ բոլորը, անքնութիւն կը տանչէ զիս, հոգիս միշտ խռովայոյզ է...։

Այդ օրերուն իւր եղբօրորդին՝ Խոչէն Խրիմեանը Թիֆլիս գացեր էր։ Հայրիկը անոր կարօտը կը քաշէր և ամեն օր անհանգիստ և վրդովուած կերպով կը հարցնէր.

—Ինչու՞ Խոչէնը չեկաւ, ինչ է եղեր, ինչու այսքան ուշացաւ։

—Կը գայ, Վեհափառ Հայրիկ, շուտով կը գայ, հեռագրել ենք արդէն, երևի քանի օրէց այստեղ կը լինի, կը պատասխանէ Վահան Խրիմեանը*)։

—Ծօ, ապուշներ, գիտէք, որ Հայրիկը մինչև քանի օր կեանք կ'ունենայ. Հայրիկի մահուան օրահասն է. պիտի մեռնիմ առանց տեսնելու Խոչէնը։

Հայրիկը կամաց կամաց կը հիւծուէր և հազիւ կրնար ոտքի վրայ կենալ, բայց այնուամենայնիւ չէր պառկեր։ Դիշերը չէր սիրեր, մթնելուն պէս կը սրտնեղէր, շարունակ թէյ կը պահանջէր, կը բերէին, կը սառեցնէր, չէր խմեր։ Երբ Շաթիր Ծարուխիւնը (սպասաւոր) կուգար սառած թէյը ետ տանելու, զանգը կուտար և նորէն թէյ կ'ուզէր, երբ ուշացնէին մանկան մը նման բէն կ'ընէր։ Հակառակ իւր թուլութեան կը յամառէր անկողին մտնել, կ'երթևեկէր, կը յոգնէր և շնչասպառ կուգար թախտին վրայ կը նստէր։ Դիշերներն անհանգիստ էր և լուրջ մտահոգութիւն կը պատճառէր զինք խնամողներուն։ Վահան Խրիմեանը կը պատմէր, որ— «Հոկտ. 26-ի երեկոյեան դահլիճին մէջ պտտած ատեն յանկարծ գլխապտոյտ ունեցաւ և երբ պիտի իյնար, թևերը բռնեցի, երկու հոգով գրկեցինք և տարանք ննջարանը, ուր սակայն նստած մնաց մահճակալին վրայ և հակառակ մեր պնդումներուն չը պառկեցաւ։ Լուր գրկեցինք և իսկոյն եկաւ վանքի և Հայրիկի անձնական

---

*) Հայոց Հայրիկի վերջին օրերու և մահուան րոպէներու մանրամասնութիւնները ու խօսքերը գրի առած եմ 1917-ի աշնան, Էջմիածնի մէջ՝ Հայրիկի եղբօր թոռան՝ Վահան Խրիմեանէն (այժմ Ծերունազարդ), որ ապրումն աչքերուն կը պատմէր և յուզումով կը պատկերացնէր Մեծ Հայրենասէրի վերջին ապրումները։ Այդ մանրամասնութիւնները քանիցս օտուգած եմ նաև Հայրիկին մօտիկ անձերէն, որոնց հաղորդած լրացուցիչ տեղեկութիւններն ալ օգտագործեր եմ։

բժիշկը՝ Կարապետ Տէր Խաչատուրեանը, տեսնելով հիւանդի մտահոգիչ վիճակը մեղմութեամբ ըսաւ.

«—Վեհափառ Հայրիկ, լաւ կը լինի, որ հանգստանալու համար պառկած մնաք, ոտքի վրայ լաւ չէք զգում ձեզ։

«—Պարոն բժիշկ, ես շատ լաւ եմ զգում ինձ—ըսաւ Հայրիկը—եթէ պառկիմ շուտով պիտի մեռնիմ։ Դեռ Հայոց ազատութիւնը չը տեսած ինչպէս մեռնի Խրիմեանը։ Ինձի բան մըն ալ ըսեմ, պարոն բժիշկ, իմ պառկելէն ինձի խէր չկայ, նայելու համար գիտես, որ դրամ չը պիտի ստանաս, աւելի նեղութիւն պիտի ըլլայ քեզի համար, երթաս ու գաս, առողջանալ չ'ունիմ, պիտի ձանձրանաս և ըսես, էհ եր՝ պիտի մեռնի Խրիմեանը, որ ազատիմ։

«Այս խօսքերուն վրայ բժիշկը թէև շփոթեցաւ, բայց կատակ համարեց ու խնդաց։ Հայրիկն ալ ժպտաց»։

Հոկտեմբերի 27-ի երեկոյեան Հայրիկը շատ անհանգիստ էր և այլևս անզօր էր ոտքի կենալու։ Վահան Խրիմեանն ու Շաթիրը ցաւութիւնը թեթևցնէն բռնելով կը տանին ննջարան և հագուստները հանելով կը պառկեցնեն անկողնոյ մէջ։ Դիւանապետ Յուսիկ Վարդապետը*) նկատելով, որ հիւանդին դէմքը շատ գունատ է և շնչարգելութիւնը երթալով կը շատնայ, անմիջապէս կանչել կուտայ Բժ. Տէր Խաչատուրեանը։ Բժիշկը կը յայտնէ, որ հիւանդին վիճակը լուրջ է, մինչև անգամ վտանգաւոր, սրտի գործողութիւնը շատ թոյլ է, ուստի և պէտք է խնամողները զգոյշ ըլլան, որ հիւանդը տեղէն վեր չը կենայ և անհանգիստ շարժումներ չ'ընէ։

---

*) Հայոց Հայրիկը իւր կաթողիկոսութեան 15 տարիներու ընթացքին (1893—1907) ունեցաւ եօթը դիւանապետները, որոնք հայրապետական դիւանատան գրագրութեանց, պաշտօնական յարաբերութեանց և նման գործերու վարիչները կը հանդիսանային։ Խրիմեանին դիւանապետ եղած են՝ 1) Խորէն Նալիս. Սահիմանէ (1893), 2) Նահապետ Վարդպ. Նահապետեան (1895), 3) Կորիւն Վարդպ. Սահակեան (1898), 4) Յուսիկ Վարդպ. Զօհրաբեան (1905), 5) Տաճատ Վարդապետ (1906 Յուլիս, Դիւանապետի պաշտօնակատար, ապա կարգաթող։ Յարմէն անունով դաշնակցական յայտնի գործիչը, որ սպանուեցաւ ի Մուշ 1915ին), 6) Ներսէս Վարդպ. Մելիք-Թանգեան (1906 Նոյեմբ.), 7) Մեսրոպ Վարդպ. Մաքսուդեան (1907 Յունիս), որմէ յետոյ նորէն Յուսիկ Վարդպ. Զօհրաբեանը, որ Խրիմեանի վերջին դիւանապետը եղաւ (1907 Յուլիս—Հոկտեմբեր)։

Սակայն ամբողջ գիշեր Հայրիկը չը կրցաւ հանգստանալ, անվերջ շուռ եկաւ մէջքի և կողքի վրայ, ահ քաշեց, հառաչեց և տանջուեցաւ մինչև լոյս։

Հոկտեմբերի 28-ին երեկոյեան էջմիածին հասաւ Բժ. Արամ Տէր Աւետիքեանը, որ հիւանդին վիճակը քննելէ յետոյ, յայտնեց թէ— «Հայոց Հայրիկը իւր վերջին ժամերն է ապրում. նրա մեծ ու սքանչելի սիրտը կամաց կամաց դադարում է գործելուց»։

«—Երբ այս խօսքերը լսեցի—կը պատմէր Վահան Թիմմեանը—հազիւ կրցայ արցունքներս զսպել, կարօտալի նայուածք մ'ուղղեցի անոր խնկագոյն դէմքին և հեռուն կանգնեցայ, մինչ նա աչ կողքի վրայ պառկած ծանր ու վշտալի ձայնով մը ահ, ահ կը կը հառաչէր։ Ծօսակցութեան ձայները լսելով, Հայրիկը գլուխը շուռ տուաւ և Բժ. Տէր Աւետիքեանին նայելով ըսաւ.

«—Ա՛խ... ծօ բժիշկ, ճանապարհները ինչպէս են, վաղը կ'ուզեմ Սևանայ վանքը երթալ....

«—Վեհափառ Հայրիկ, ճանապարհը շատ լաւ են...»։

Հայրիկի հիւանդութեան և վիճակի մասին կատարուած բժշկական քննութեան արդիւնքը լսելու համար Վեհարան հրաւիրուեցան վանքի միաբաններէն և Սինոդի անդամներէն՝ Օւքիաս Գարղեան, Գէորգ Օւրբէնեան, Արիստակէս Դաւթեան, Յովհաննէս Շիրակունի և Ղևոնդ եպիսկոպոսները, Կարապետ Տէր Մկրտչեան և Յուսիկ Զօհրաբեան վարդապետները, ինչպէս նաև Ճեմարանի տեսուչ Մինաս Բէրբէրեանը։ Բժիշկները յայտնեցին որ— «Նորին Օրբութեան հիւանդութիւնը շատ լուրջ է, սիրտ չափազանց անկանոն է գործում, որ հետևանք է ծերութեան և այդ իսկ պատճառով յառաջացած է ոտքերի ուռոյցք մինչև ծնկները (արիւն լճացած է)։ Իւրաքանչիւր վայրկեան կարելի է սպասել, որ սիրտը բոլորովին կանգ առնէ. բայց և կարող է պատահիլ, որ դրութիւնը կրկին դէպի լաւը փոխուի։ Իսկ գիտակցութիւնը յամենայն դէպս բոլորովին տեղն է»։

Այս եզրակացութիւնը լսելէ յետոյ, երեկոյեան ժամի 6-ին (28 Հոկտ. Պիրակի), ժողովականները կազմեցին արձանագրութիւն, ստորագրեցին և որոշեցին յաջորդ օրը (29 Հոկտ.) էջմիածնի մէջ գումարել բժշկական խորհուրդ մը, որուն պիտի մասնակցէին բժիշկ-

ներ՝ Յովհ. Յովհաննիսեան, Արամ Տէր-Ալեքսեան, Կարապետ Տէր-Խաչատուրեան և Պարչինսկին (ռուս)։

Կայծակի արագութեամբ լուրը տարածուեցաւ Վաղարշապատի մէջ, թէ Հայրիկը մահամերձ հիւանդ է։ Ժողովուրդը խորին կսկիծով համակուած վանքի բակը թափուեցաւ։ Շատերը ցանկացան Վեհարանը բարձրանալ Հայոց Հայրիկի սուրբ Աջը վերջին անգամ համբուրելու համար, բայց բժիշկը թոյլ չը տուաւ։ Ժողովուրդը հեռացաւ արցունքն աչքերուն։

Հոկտեմբերի 28-ի գիշերն է։ Ցուրտ է և սաստիկ քամին կ'ոռնայ ամէն կողմ։ Անձրևախառն ձիւնը կը տեղայ և ծառերը ճիւղակոտոր կ'ըլլան։ Մութ, խորհրդաւոր և ծանր գիշեր է։ Կսկիծն ու թախիծը պատեր են էջմիածին։ Վեհարանի ննջարանի մէկ անկիւնը, մահճակալին վրայ պառկած է Հայոց Հայրիկը՝ լուռ և անշարժ։ Պլպլացող մեղրամոմի աղօտ շողերն ընկած են անոր վեհափառ դէմքին վրայ։ Կը շնչէ դժուար ու ծանր, երբեմն կը բանայ աչքերը և անորոշ նայուածքներ կ'ուղղէ այս ու այն կողմ։ Աչքերը նուաղկոտ են, շնչառութիւնը շատ թոյլ, ճակատը պատուած է սառն քրտինքով, ձեռները բնազդաբար և խաչաձև դրած է կուրծքին վրայ և հազիւ լսելի ձայնով կը հևայ։ Ո՛չ մէկ ձայն ու շարժում։ Միայն քամին կը սուլէ և ձիւնը կը տեղայ անընդհատ։

Բժ. Տէր Խաչատուրեանն այդ գիշերը հոն է և ուշի ուշով կը հետեւի հիւանդի վիճակին։ Ննջարանի մէկ անկիւնը լուռ ու տխուր կանգնած են Սահակ Վարդպ. Աստուածատուրեան (միաբան Երուսաղէմի Հայոց Մայրավանքին, այժմ ողջ), Վահան Խրիմեան և Շաթիր Յարութիւնը, որոնք բժիշկի հրահանգներուն համաձայն կը խնամեն հիւանդը։

Ննջարանի ծանր ու խորհրդաւոր լռութիւնը յանկարծ կ'ընդհատուի Հայրիկի թոյլ ու նուաղկոտ ձայնով։

—Է՛յ... ծօ տղա... Յարութիւն... ան Սևանի իշխան ձուկէն պատառ մը բեր ուտեմ...։

Ձուկը կը բերեն։ Հայրիկը պատառ մը ախորժակով կը ծամէ, բայց չի կրնար կուլ տալ, եա կուտայ։ Ապա կը ձայնէ։

—Ասիկա չ'եղաւ...Է՛յ...տղա...ծ'իսախոտ տուր սիկար մը փաթթեմ։

Ծխատուփը կուտան, պառկած տեղէն կը փորձէ սիկարը փաթ-

թել բայց ձեռները կը դողան. Յուսահատ ու տխուր՝ գլուխը շուռ կուտայ և մեղմիկ հառաչանք մը կ՚արձակէ.

Բժիշկը տեսնելով, որ ննջարանը ցուրտ է կ՚ըսէ.

—Յարութիւն, վառարանը վառիր, ցուրտ է.

Հայրիկը այս ձայնէն կը սթափուի և աչքերը կը բանայ.

—Ծօ, մինակ եմ ննջարանի վառարանը մի վառէք, այլ Վեհարանի բոլոր վառարանները վառեցէք, որ Հայրիկը չը մրսի, իսկ դուք բոլորդ ալ գացէք հանգստացէք և ինձ թողէք, որ մինակ մնամ, բաւ է, շատ յոգնեցաք հիւանդ Հայրիկը խնամելով, կ՚ըսէ հիւանդը և գլուխը բարձրացնելով կը փորձէ նստիլ. Այս տեսն բժիշկը կը ձայնէ.

—Վեհափառ Հայրիկ, պէտք է պառկած մնաք, չը նստէք:

—Ի՞նչ բռնութիւն է այդ Հայոց Կաթողիկոսի վրայ... ես բռնութիւն չեմ ուզեր... Հայրիկը ազատութիւն կը սիրէ..., բարկացած շեշտով կ՚ըսէ հիւանդը և գլուխը դէպի պատ շուռ տալով կը լռէ.

Սահակ Վարդապետը և Վահան Խրիմեանն ու բժիշկը կը հեռանան ննջարանէն, իսկ Յաթիր Յարութիւնը դրան առն, աթոռի վրայ նստելով, հեռուանց կը հսկէ.

Գիշերուայ ժամի 3-ն է, երբ ննջարանի խորին լռութիւնը կ՚ընդհատուի մահամերձ Հայրիկին թոյլ ձայնովը.

—Է՛յ... ծօ տղա... Յարութիւն... ինծի սիկար մը փաթթէ, շուտ....

—Այստեղ եմ Վեհափառ Տէր, այս րոպէիս, կ՚ըսէ Յարութիւնը և մահճակալին մօտ փութալով, սիկարը կը փաթթէ, կ՚ամրացնէ ծխամորճին վրայ, կը վառէ և կուտայ Հայրիկին ձեռքը, որ կը դողայ չէ կրնար ծխամորճը պահել ու սիկարը վար կ՚իյնայ. Յարութիւնը կը վերցնէ սիկարը և կանգնած կը մնայ մահիճին մօտ, մինչ Հայրիկը կարօտագին ու նուաղկոտ նայուածք մը կ՚ուղղէ սիկարի քուլայ քուլայ բարձրացող ծուխերուն, տխուր ու յուսահատ կը փակէ աչքերը, ի խորոց սրտի կը հառաչէ և ապա կը ձայնէ.

—Ծօ ապուշ... Յարութիւն... ան դուն ծխէ Հայրիկին թուխտունը, առ ծխէ, որ սիրտս հովանայ, ծխէ և գնա խաղաղութեամբ հանգստացիր.

Յարութիւնը կ՚երթայ դրան առևը և հոն կը սպասէ*).

*) Վահան Խրիմեանը կը պատմէր որ—«Հայրիկի վերջին խօսքերուն ունկնդիր եղած ենք ես և Զաթիր Յարութիւնը, որ մահճակալին մօտն էր միշտ, իսկ ես պատին տակ կծկուած լուիկ կարտասուէի»։

Գիշերուայ ժամի 4-ն է։ Հայրիկը կը շարժուի, կը հևայ, անորոշ, անլսելի բառեր մը կ'արտասանէ և յետոյ շատ մեղմ ու թոյլ ձայնով կը հառաչէ։

—Ա՜խ... շուտով կը մեռնի Հայոց Հայրիկը... ինչ պիտի ըլլայ Հայոց աղբատներուն վիճակը...։

Ապա կը զառանցէ, անորոշ անուններ կուտայ, յետոյ կը շեշտէ մէկ քանի նշանաւոր քիւրդ աւազակներու անունները և պարզ ու լսելի ձայնով կը'սէ։

—Ան քիւրդերը կը կողոպտեն Հայոց կալուածները, կը յափշտակեն մեր ինչքը, ախ, ախ...։

Շաթիր Ցարուխիւնը կը մօտենայ և մեղմութեամբ կը ձայնէ։

—Վեհափառ Հայրիկ, հանգստացէք։

—Այդ դուն ես, ծօ՛ ապուշ..., ձայն կուտայ Հայրիկը։

—Այո՛ ես եմ, Վեհափառ Տէր, կը պատասխանէ Շաթիրը *)։

—Տղա՛ զգոյշ եղիր, որ այդ քիւրդը չը յափշտակէ, չը կողոպտէ մեր կալուածները...։

Ապա մահամերձ Հայրիկը կը բանայ աչքերը, կարծես մարդ կամ ուրուական կը տեսնէ, (թերևս Հայութեան շինամինները...) կը բարկանայ, բարձր ձայնով կը կուտի անոնց հետ..., յետոյ ծանր շունչ կ'առնէ, կը տնքայ և աւելի ուժեղ ձայնով կը շարունակէ խօսիլ։

—Տղա՛, այդ Նիկոլայ Ցարն ալ քիւրդին պէս ուզեց յափշտակել մեր կալուածները, բայց չը տուինք... (ծանր շունչ կ'առնէ, կը տնքայ և յետոյ) դուն վկայ ես, չէ՞, Ցարուխիւն...։

—Այո՛, Վեհափառ Տէր, վկայ եմ..., կը պատասխանէ Շաթիրը։

Լռութիւն։ Հիւանդը ծանր կը շնչէ, կը հևայ ու կը հառաչէ։ Գիշերուայ ժամի 5-ն է, Մօտէ լուսաբացը (29 Հոկտ. Երկուշաբթի)։

Մահամերձ Հայրիկը կը բանայ աչքերը և դէպի պատուհանները նայելով Շաթիր Ցարուխիւնին հարց կուտայ։

—Ծո տղա՛... դեռ լոյսը չի բացուեր...։

---

*) Հայ թերթերու թղթակիցներն ալ, էջմիածնի մէջ, Շաթիր Ցարուխիւնի պատմածներուն համաձայն արձանագրած են Հայրիկի վերջին խօսքերը։ (Տես՝ «Մշակ» օրաթերթ, Թիֆլիս. 1907. Նոյեմբ. 6. № 150, թղթակից Լևոն Դանիէլեան։ «Հայրենիք» շաբաթաթերթ, Պոսթըն, 1907 Դեկտ. 14, թիւ՝ 50, թղթակից Ա. Վռամեան)։

—Արդէն լուսացել է, Վեհափառ Տէր, ժամի 6-ն է։

—Հիմա կանչէ Խորէնն ու Վահանը և Վեհարանի բոլոր ծառաները, որպէսզի Հայրիկի օրհնութիւնն առնեն...

—Խորէն էֆէնտին այստեղ չէ, Վեհափառ Տէր, նա Թիֆլիսից այսօր կը գայ, կ'ըսէ Շաթիրը։

—Է՛յ... ալ ինչ ընեմ անոր գալը, երբ պիտի գայ ու ինձ մեռած գտնէ, երբ Հայրիկը առանց տեսնելու զԽորէն պիտի մեռնի....

Խորին կսկիծով հառաչելէ յետոյ կրկին կը հարցնէ.

—Ցարութիւն... դեռ լոյսը չի բացուեր....

—Լոյսը բացուել է, Վեհափառ Հայրիկ, կըսէ Ցարութիւնը և կը բանայ պատուհանի վարագոյրները։ Արշալոյս է։ Ննջարանը կ'ողողուի լոյսով։

Հայրիկը գլուխը շուռ կուտայ դէպի պատուհանները և կը դիտէ բացուող արշալոյսը։ Անուշ ժպիտ մը կը փայլի իւր գեղեցիկ դէմքին վրայ և ապա կարօտագին ձայնով մը կը հառաչէ.

—Օ՛՛՛խ . . . . . .

Ցետոյ աչքերը լայն բացած կը դիտէ առաստութեամբ մաղուող ձիւնը, որուն ծանրութենէն Վեհարանի պարտէզին ծառերը ճիւղակոտոր եղած էին և արցունքն աչքերուն, յուզուած ու նուաղկոտ ձայնով մը կը յարէ.

—Էյ՛... Արծիւ Հայրիկին թևերն ալ այս ճիւղերուն պէս փըշրուեր են... ես այժմ թեւակոտոր եմ և մերձ ի մահ....

Լուռթիւն։ Ինչ յետոյ նորէն կը բանայ աչքերը և հայեացքը կ'ուղղէ դէպի լոյսը։ Դէմքը կը ծածկուի տխուր ժպիտով մը և Մեծ Հայրենասէր Հայոց Հայրիկը քանի մը րոպէ լոյսը դիտելէ յետոյ կ'արտասանէ իւր վերջին խօսքը.

—Լ Ո՛ Ց Ո . . . . . .

Հիւանդը հոգեւարքի մէջ է թէև, բայց միտքն ու գիտակցութիւնը դեռ կը գործեն։ Ինք շրջապատողները—Սահակ Վարդապետ, Վահան Խրիմեանն ու Շաթիր Ցարութիւնը—կուլան, իսկ Բժ. Տէր Թաշատուրեանը լարուած ուշադրութեամբ կ'աւնկնդրէ հիւանդին շնչառութիւնը։

Առաւօտեան ժամի 8½-ին բժիշկը կը նկատէ, որ րոպէ առ րոպէ շնչառութիւնը կը թուլնայ և մահն անխուսափելի է։ Բժիշկը

իսկոյն լուր կը ղրկէ Օինօդի անդամներուն, որ գան Վեհարանը Կաթողիկոսի վերջին րոպէներուն և մահուան ականատես ըլլալու համար. Օինօդի անդամներն ու պրօկուրորի պաշտօնակատար Յովհաննէս Յովհաննիսեանը (բանաստեղծ) կուգան Վեհարան և ննջեցեալը մտնելով կը շրջապատեն մահամերձ Հայրիկին մահճակալը.

Մահուան ժպիտն իջած է Հայոց Հայրիկի դէմքին վրայ, ճակատը պատուած է սառն քրտինքով. Նա վերջին անգամ կը բանայ աչքերը, որոնցմէ կաթիլ կաթիլ արցունքը կը ցօղայ նախ այտերուն և ապա գլխաբարձին վրայ. Ջղաձգի՝ բայց անուշ նայուածք մը կ'ուղղէ իւր շրջապատի մարդոց, կը փորձէ խօսիլ, բայց չի կրնար.... Աչքերն ու բերանը կը փակէ, ձեռները կը մնան կուրծքին վրայ. Ո՛չ մի ձայն, ո՛չ մի շարժում, կը լսուի միայն վերջին և շատ մեղմիկ հառաչանք մը, կը դադրի շնչառութիւնը և մահուան ժպիտը դէմքին՝ խաղաղ ու հանգիստ կ'աւանդէ հոգին....

Հայոց Հայրիկը մեռաւ *1907* թուի Հոկտեմբերի *29*-ին, (նոր տոմար՝ *11* Նոյեմբ.) Երկուշաբթի առաւօտեան ժամի *9*-ին՝ ապրելով *87* տարի, *6* ամիս եւ *25* օր.

Օինօդի անդամներն ու ներկաները պատկառանքով կը խոնարհին նոր հանգած ննջեցեալի յիշատակին առջև. Պահ մը կը տիրէ խորին լռութիւն, ապա սրտաճմլիկ յուզում, կսկիծ և յետոյ տեղն ու տեղ կը գրուի հետեւեալը.

*«Արձանագրութիւն.—Մեք, ի ներքոյ սորին ստորագրողք, հրաւիրեալք այսօր, յեօթներորդում ժամու առաւօտեան, ի Վեհարան ի պատճառս մահուամերձ հիւանդութեան Վեհափառ ԿաթուղիկոսիԱմենայն Հայոց Մկրտչի Ա. այսու վկայեմք, զի Նորին Սրբութիւնն ի ներկայութեան մերում խաղաղ հանգեաւ ի Տէր յիսն ժամու առաւօտեան: Բժիշկ Մայր Աթոռոյ Տէր Խաչատրեանցն ներկայ գտեալ է ատ Նորին Սրբութեան յոթներորդ ժամէ երեկոյեան աւուր անցելոյ մինչ ցմահն. ի 29 Հոկտեմբերի 1907 ամի. ի Ս. Էջմիածին.*

*«Գեորգ Արքեպ., Արիստակես Արքեպ., Յովհաննէս Արքեպ.*
*Յուսիկ Վարդապետ, Բժ. Տէր Խաչատրեանց.*
*Ներկայ եմ Պ. Կ. Պրօկուրորի՝ Ե. Յովհաննիսեան»:*

Վաղարշապատի ահագին ժողովուրդը խռնուած է Վեհարանի դրան առջեւը. Բոլորն ալ տխուր են և գլխահակ, շատերը կուլան. Կանայք խումբ խումբ կանգնած կը մղկտան, մինչ թեթեւ ձիւնը կը մաղուի մալուլ-մռայլ երկինքէն.

Արձանագրութիւնը կազմուելէ յետոյ, անմիջապէս Էջմիածնի Դայիանէի, Շողակաթի և Հռիփսիմէի վանքերու զանգակները ծանր ու տխուր ղօղանջիւններով գուժեցին Հայոց Հայրիկին մահը. Սինօդականները կնքեցին Վեհարանի սենեակները ու Սինօդը երթալով Հայոց Կաթողիկոսի մահուան մասին նոյն օրն իսկ (ժամի 11-ին) հեռագրեցին Պետերբուրգ՝ Ներքին Գործոց Նախարարին, Թիֆլիս՝ Կովկասի Փոխարքային. Սիս՝ Կիլիկիոյ Սահակ Կաթողիկոսին, Կ. Պոլիս՝ Մաղաքիա և Երուսաղէմ՝ Յարութիւն Պատրիարքներուն, Ռուսահայոց թեմական առաջնորդներուն, յայտնելով նաև, որ թաղումը կը կատարուի Նոյեմբերի 6-ին, երկքշաբթի օրը. Օրէնքի հաժառանգն, Սինօդի աւագագոյն անդամ Գէորգ Արքեպ. (այժմ Կաթողիկոս) Օուրէնեանը կարգուեցաւ Կաթողիկոսական Տեղակալ.

Ի սփիւռս աշխարհի ցրուած Հայութիւնը խորին վշտով համակուած ծունկի իջաւ Մեծ Հայրենասէրի յիշատակին առջեւ. Եգիպտոսէն մինչեւ Սիբիր և Ամերիկայէն մինչեւ Հնդկաստան, ուր որ Հայ գաղութ ու համայնք կար, ամենուրեք պատրաստութիւն տեսնուեցաւ Հայոց Հայրիկի յիշատակին՝ հոգեհանգիստ, սգահանդէս և երեկոյթ կազմակերպելու համար. Համահայկական վիշտն ու յարգանքը միացան ժողովրդական երախտագիտութեան և պաշտամունքի ջերմ զգացումներուն, որոնց մէջ՝ Էջմիածնի կամարներուն տակ, դեռ հողը չ'իջած՝ կը հանգչէր հայրենանուէրը և ժողովրդասէրը ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿԻ անշունչ մարմինը.

***

Վանի Այգեստանի Արարք թաղամասի Ս. Թարգմանչաց ծխական դպրոցի աշակերտներէն մէկն ալ ես էի (9—10 տարեկան) 1907-ի աշնան. Հոկտեմբերի 31-ին առաւօտ դասագրքերս առի ու վազեցի դպրոցը, ուր հաւաքուած աշակերտները ուրախ և անհոգ կը խաղային զբօսավայրերուն մէջ. Ուսուցիչները Ծաղկոցին դրան առջեւը խմբուած կը խօսէին. Անոնց դէմքերը ծածկուած էին թախիծով և մեր մանուկ հոգիներն անզօր էին հասկնալու, թէ ինչու մեր ուսուցիչներն այսօր տխուր էին. Պահ մը գուշակեցինք, որ

թերևս քաղաքին մէջ կատարուած են ձերբակալութիւններ և խուզարկութիւններ, ինչ որ յաճախակի էին Վանի մէջ։

—Զրըր՜նգ... զրըր՜նգ... զրըր՜նգ... յանկարծ ղօղանջեցին մեր դպրոցին կից Մայր Եկեղեցւոյ զանգակները, որոնց ծանր ու տխուր ղօղանջները, այնքան խոր ու վշտալի տպաւորութիւն ձգեցին աշակերտներուս վրայ, որ վազվզող, խաղացող, աղմկող մանուկներն անգամ տեղն ու տեղ կանգնեցան և պահ մը լուռ թիւն տիրեց, մինչ զանգերու հատիկ հատիկ ու ծանր, մելամաղձիկ հընչիւնները վշտի զգացումներով լեցուցին մեր մանուկ սիրտերը։

Վերակացու ուսուցիչ Կարապետ Ծանթօեանը զանգը տուաւ, աշակերտները անսովոր լուռ թեամբ բարձրացան դպրոցը և մտան դասարանները։ Ինչ յետոյ եկան դաստիարակները և յայտնեցին, որ —«Դասագրքերը հաւաքեցէք և գնացէք, սրահը»։ Այդպէս ալ ըրինք։ Դասարան առ դասարան շարուեցանք սրահին մէջ։ Բոլորիս սիրտերը կ՛ելևէջէին, անհամբեր էինք գիտնալու թէ ինչ կար, ինչու կը հնչէին մեռելական զանգերը, ով էր մեռնողը և այլն։ Ուսուցչանոցէն դուրս գալով դէպի սրահին կեդրոնը եկան Տէր Մեսրոպ Աւ. Քահանայ Ճանիկեանն ու մեր տեսուչը։

Տէր հայրը տխուր էր, աչքերը կարմրած և արցունքոտ։ Բոլորս ալ անհամբեր կը սպասէինք թէ ինչ պիտի ըսէր։ Նա տխուր նայուածք մ՛ուղղեց ամբողջ աշակերտութեան և ապա թոյլ ու վշտալի ձայնով մ՛ըսաւ.

«Սիրելի աշակերտներս, սրտի խորին կսկիծով կը յայտնեմ ձեզ, որ այս գիշերը Պատրիարքարանէն ստացանք հեռագիր մը, որ կը գուժէ Հայութեան պաշտելի Հայոց Հայրիկին մահը։ Վան—Վասպուրականի Մեծ Զաւակին՝ հայրենասէր Թրիմեան Հայրիկին յիշատակը յարգելու համար Առաջնորդարանը որոշած է, որ դպրոցները փակ մնան, իսկ Նոյեմբերի 6-ին ալ, թաղման օրը, Ծանկոյսների Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ պիտի կատարուի հոգեհանգիստ։ Աւա՜ղ, մեռաւ Հայրիկն Հայրենեաց՝ դեռ Հայաստանի Ազատութիւնը չը տեսած...»։

Ըսաւ քահանան, ձայնը դողաց, արցունքները կաթիլ կաթիլ իջան, գլուխը ծռեց ու լռեց։ Մեր դպրոցի երդեցողութեան դա-

սատուն՝ (իմ տաքաբախտ հայրս) Արշաւիր Աճէմեանը իւր անուշ ու բարձր ձայնով երգեց.

Հայրի՛կ, Հայրի՛կ, fo հայրենիք — Վարդի փոխան fեզ փուշ բերաւ,
Վասպուրական մեր ափսարհ, — Ցաւերդ դառան բիւր հազար....

Շատերը լացին, ընդհանուր վշտի տարսուռ մ'անցաւ մօտ 800 աշակերտներու վրայէն և բոլորս ալ տխուր ու գլխահակ հեռացանք դպրոցէն. Կը յիշեմ՝ Արարուց հրապարակէն անցնելու ժամանակ, Հայ խանութպանները խումբ խումբ կանգնած Հայրիկի մահուան մասին կը խօսէին. Փողոցներու մէջ, տուներուն առջև խմբուած կանայք կուլային և իրենց գոգնոցներու փէշերով կը սրբէին արցունքները. Երբ մեր տունը մտայ, իմ բարի ու խեղճ մայրս տանտունին մէկ անկիւնը կծկուած կուլար, ինչպէս մէկը կ'ողբայ իւր հարազատին մահը։

Վանի Քաղաքամէջի և Այգեստանի 12 եկեղեցիներուն զանգերը տխրաձայն կը զօղանջէին: Համաժողովրդական վիշտն ու կսկիծը այնքան մեծ էր, որ անկարող եմ պատկերացնել. Վասպուրականի ամէն կողմեր, ուր Հայ վանք ու եկեղեցի կար, Վանէն մինչև գաւառական կեդրոնները ու գիւղերը, զանգերը ծանր ու տխուր կը հնչէին՝ գուժելով մահը Վասպուրականի սիգապանծ Արծուին, որ թեւակոտոր ընկած էր Էջմիածնի կամարներուն տակ: Արծուաբոյն Վարագայ վանքն ու «Ժառանգաւորաց Վարժարան»ը խոր սուգի մէջ ընկղմուած են. Ծանր ու տխուր կը զօղանջեն Արծրունեաց պատմական մենաստանին զանգակները, որոնց մեղմանուշ արձագանգները կ'երթան մարելու Վարագայ երկգագաթ լերանց խոր ձորերուն և ջրառատ հովիտներուն մէջ, մինչ Վարագայ Պարոն Պետրոսը սև պաստառով կը պատէ դպրոցի դուռն ու «Արծուի Վասպուրականի» երբեմնի տպարանի ճակատը։

Վանի Առաջնորդարանի, եկեղեցիներու, դպրոցներու և Թրիմեանենց տան դռներու ճակատները սև պաստառներով ծածկուեցան. Վան-Վասպուրականի Հայութիւնը կը պատրաստուէր սիրոյ և պաշտամունքի արժանավայել ցոյցով մը խոնարհիլ իր Մեծ Զաւակի յիշատակին առջև, միացնելով իւր վիշտը համայն Հայութեան վշտին, իսկ ձայնը՝ անսահման յարգանքի, երախտադիտութեան և համաժողովրդական համակրանքի ձայներուն, որոնք ի յայտ եկան Հայոց Հայրիկի թաղման օրը, ոչ միայն Էջմիածնի, այլև Ռուսաստանի, Ճաճկաստանի և ամբողջ Հայ գաղութներու մէջ։

* * *

Էջմիածնի Վեհարանի արտաքին դահլիճին մէջ, փայտեայ մահճակալին վրայ կը հանգչէր Հայոց Հայրիկը մարմինը՝ սպիտակ սաւանով ծածկուած։ Իւր սիրած, սովորական սև թաւշեայ ֆէսը գլխին, հիւանդութեան հագուստները դեռ հագին՝ կը հանգչէր նա մահուան մահիճին մէջ։ Ձեռքերը կուրծքին, աչքերն ու բերանը փակ, և ժպիտը դէմքին սառած՝ յաւիտենապէս կը ննջէ Մեծ Հայրենասէրը, մինչ ձիւնը կը տեղայ մեղմիկ, ծառերն անդատաբ ճիւղակոտոր կ'ըլլան*), ժողովուրդը վանքին բակը խռնուած արցունք կը թափէ, իսկ Էջմիածնի զանգակները ծանր ու տխուր կը զօդանջեն։ «Մշակ»ի թղթակից Լևոն Դանիէլեանը կը գրէ որ.

«Ձառամեալ դէմքը պահպանել է աչքի զարնող իր գծերը. խոշոր արծուէ քիթը դարձեալ հոյակապ կերպով գերիշխում է կմախք դարձած երեսի վրայ. միայն գրաւիչ աչքերը փակուած են յաւիտենական քնով, միայն յաղթանդամ մարմինն է կորցրել իր վեհ վիթխարիութիւնը, չափազանց նիհարացել ու փոքրացել»։

Հոկտ. 31-ին Թիֆլիսէն Էջմիածին հասաւ Մխիթարեան Գեղարուեստական Ճեմարանն աւարտած ալէքսանդրապոլցի ուս արձանագործ Սերգէյ Դ. Մերկուրովը, որ դիպսով հանեց Հայրիկի յաղող և հարազատ դիմակադագաթը արձան պատրաստելու համար։ Գեղամ Արմէնը կը գրէ.—«...Ը նայելով որ հանգուցեալ միայն 36 ժամ յետոյ է կարողանում դիմել իւր գործին, սակայն աջողութիւն սմեն տարակոյսից ազատ է հանդիսանում. Խրիմեանի դիմակադագաթը մատեմատիքական ճշտութեամբ է կերտուած—այս արդէն անվիճելի է։ Պէտք է միայն հաշուի առնել մահուան 36 ժամի կատարածը մարմնի փոփոխութեան վերաբերմամբ։ Ինչ անդրիին է վերաբերում, այդտեղ արդէն մենք տեսնում ենք արուեստագէտի անկասկածելի տաղանդը՝ ցայտուն արժանիքով հանդիսադրած։ Մինչդեռ դիմակադագաթն ուշը է գրաւում Հանգուցեալի յատուկ ժպիտով, որ չէ մարել բոմանտիկի կեանքի հետ,—անդրին

*) Արարատեան Դաշտի Հայ ժողովուրդը հիացմունքով կը պատմէ, որ այն օրը և այն ժամին, երբ Էջմիածնի մէջ մեռաւ Հայոց Հայրիկը, այդ նոյն ժամին Օշականի վանապատկան այգիի մեծ ծառն ալ ճիւղակոտոր եղաւ Կռնակ կռնակի առած երկու դարաւոր կաղնիները (տես նկար էջ՝ 718) միևնոյն օրին ու ժամին տապալեցան։ Այս սիրուն զրոյցը ժամանակին հրատարակուած է նաև քանի մը Հայ թերթերու մէջ։

վերակենդանացրել է և՛ աչքերը գահակալող իդէալիստի, որ կարծես վերջին ժամին էլ չէ դադարել իւր միամիտ՝ բայց մարուր՝ յոյսերի պատկումը ժպտով ու խինդով երազելուց». («Գեղարուեստ». Թիֆլիս. 1908, № 1, էջ՝ 99).

Հոկտեմբերի 29, 30 և 31-ի երեկոյեան Վահրամեան դահլիճին մէջ կատարուեցան հոգեհանգիստներ Մեռելական շարականներու տխուր եղանակները, ծխացող խունկի քուլաներն ու մեղրամոմերու պլպլացող լոյսերը իրար խառնուած՝ դահլիճը լեցուցիր էին հոգեկան անուշ ու յուզիչ զգացումներով, որոնց մէջ կը հանգչէր Մեծ Հայուն մարմինը.

Էջմիածնի Սինոդի և միաբանութեան որոշումով Հայոց Հայրիկը պիտի թաղուէր Մակար Կաթողիկոսի կողքին, Մայր Տաճարի զանգակատան հարաւակողմը. Նոյեմբերի 1-ին, լուսարարապետ Ղևոնդ Եպիս.ը կատարեց գերեզման փորելու կարգը. Ծանկարծ ժողովրդական յուզում և պոռթկում մը յառաջացաւ. Հազարաւոր ամբոխը խռնուեցաւ վանքին բակը. ամէն կողմ աղմուկ. սպառնական բառնցքները բարձրացան և օդը թնդաց անզուսպ աղաղակներով. —«Մակարը քանդեց Հայոց տունը», «Մեր ազիզ Հայրիկը չը պէտք թաղուի նրա կողքին...», «Ներսէս Աշտարակեցու կողքին թաղել Հայրիկին...», «Նա ցանկացել է իր շինել տուած հանգստարանում*) թաղուել», իսկ վանեցի գաղթականները կը կանչէին.— «եթէ չէք ուզում, Հայրիկին կը տանենք Վարագը կը թաղենք». Այս մասին «Մշակ»ի թղթակիցը գրեց—«ժողովուրդը այսօր (1 Նոյեմբ.) առաւօտեանից մինչև կէսօր խռնուած է Էջմիածնի վանքի բակում և չէ ուզում թոյլ տալ, որ գերեզմանը փորեն Մակարի կողքին».

Ծուցարար և յուզուած ամբոխը ծածկեց Մակարի կողքին փորուած գերեզմանը և յաջորդ օրը տասնեակ մը հուժկու բազուկներ նոր գերեզման փորեցին Ներսէս Աշտարակեցիի կողքին. Հայ ժողովուրդը կը ցանկար, որ Հայրիկն Հայրենեաց Խրիմեանը թաղուէր Պատպան Հայրենեաց Ներսէսի կողքին։ Այսպէս ալ եղաւ։

*) Խրիմեանը Էջմիածնի բակին մէջ, Տաճարի աջակողմը, շինել տուած էր բեմանման բարձրութիւն մը—հանգստարան՝ ուր պիտի թաղուէին կաթողիկոսները։ Սակայն անոր մահէն յետոյ, այդ հանգստարանն ու ձախակողմի Հանդիսարանը անյարմար և աւելորդ նկատուելով՝ քանդուեցան։

Նոյեմբերի 3-ին, Շաբաթ, կատարուեցաւ Հայրիկի մարմնի լուացման կարգը, իսկ ժամի 3-ին յուղարկաւորութեան յուղիչ հանդէսը՝ Վեհարանէն դէպի Տաճարը. Թիֆլիսէն բերուած նիգելազօծ դագաղին մէջ դրին Հայրիկի մարմինը՝ զգեստաւորուած հայրապետական հանդերձներով. Թագը գլխին, մատանին աջ ձեռքին, դէմքը ծածկուած կաթողիկոսական օծման թափանցիկ քողով. Հանդիսապետն էր Մեսրոպ Արքեպ. Օհրատեանը. Թափօրը Վեհարանէն շարժուեցաւ դէպի Մայր Տաճարը. Դագաղը վերցուցին չորս հոգևորականներ. Հայրապետական սնաւաքօղ խաչն ու գաւազանը կը տանէին դագաղին առջևէն. Խաչ-խաչվառներ, լապտերներ, կերոններ, միաբանները կարգով. յետոյ երգեցիկ խումբը, Ճեմարանի աշակերտները երկկարգ և ապա հազարաւոր ժողովուրդը. Զանգերը յալաձայն կը զօդանջէին. Թափօրը հասաւ Տրդատի դռան հանդէպ, եօթը տեղ կարգ կատարուեցաւ և ապա ուղղուեցաւ դէպի Տաճարը, ուր Իջման սեղանի և արևմտ. դրան մէջտեղ դրուած թաւշապատ պատուանդանի վրայ դրին դագաղը. Երեկոյեան կողմ ժողովուրդը խռնուեցաւ Տաճարը և արցունքոտ աչքերով վերջին անգամ համբուրեց Հայրիկի աչն ու ճակատը. Շատերը բարձրաձայն կուլային. «Հայրի՛կ ջա՛ն, Հայրի՛կ ջա՛ն» սրտաճմլիկ, կսկծալի ձայներով լեցուած էր Տաճարը. Նոյեմբ. 4-ին, Կիրակի, պատարագին ահագին բազմութիւն կար. Կոմիտաս Վարդապետի ղեկավարութեամբ Ճեմարանի քառաձայն երգեցիկ խումբը կը մասնակցէր պատարագին.

Մինչև Նոյեմբ. 6-ը արդէն Ռուսաստանի և Կովկասի ամէն կողմերէն հարիւրաւոր պատգամաւորներ Էջմիածին եկած էին թաղմանը ներկայ ըլլալու համար. Արտասահմանի գաղութներու ազգային մարմինները հեռագիրներով նշանակեցին պատգամաւորներ. Էջմիածնի Սինօդն ու Տեղակալը ստացան հազարաւոր ցաւակցական հեռագիրներ, որոնք կը յայտնէին նաև Հայրիկի յիշատակը յաւերժացնելու համար եղած ձեռնարկները. Հայ թերթերն իրենց կարգին հրատարակեցին հարիւրներով հեռագիրներ, յօդուածներ, ազահանդէսներու նկարագրութիւններ, ժողովրդական սիրոյ և յարգանքի լուրեր, Հայրիկի յիշատակը յաւերժացնող ձեռնարկներու և ֆօնդի մանրամասնութիւններ կային. Ռուսաստանի և

Կովկասի քաղաքներու և գաւառական կեդրոններուն մէջ հայերն ի նշան սուգի և յարգանքի փակեցին ազգային հիմնարկութիւնները ու խանութները. Ամենուրեք կատարուեցան հոգեհանգիստներ և սգահանդէսներ, ընտրուեցան թաղման մասնակցող պատգամաւորները, պատրաստուեցան պսակներ, «Հայրիկեան Ֆօնդ»-ի համար հանգանակուեցան գումարներ և այլն։ Բագուի Հայոց եկեղեցւոյ մէջ նշանակուած հոգեհանգիստին ներկայ եղան ռուս, վրացի, պարսիկ, թաթար, հրեայ պաշտօնական անձեր և աւելի քան 20,000 ժողովուրդ։ Բագուի, Թիֆլիսի, Երևանի և այլ վայրերու մէջ, թաթար-թուրքերը մզկիթներու մէջ հոգեհանգիստներ կատարեցին Հայոց Հայրիկի յիշատակին։ Մոլլաները դրուատեցին Հայոց Կաթողիկոսի արժանիքները շեշտելով, որ նա մարդասիրութեան գաղափարի վսեմ մարմնացումն էր։ Ռուսաց ու վրաց եկեղեցիներու և հրէից աղօթավայրերու մէջն ալ հոգեհանգիստներ կատարուեցան և ամէն տեղ ճառախօսները հիացմունքի խօսքերով արտայայտուեցան Խրիմեանի մասին։ Թիֆլիսի և Բագուի մէջ Հայ գործաւորներն ի յարգանս Հայրիկի մէկ – երկու անգամ գործադուլ յայտարարեցին։

Թաղման «կարգադիր ծանձնախումբ»ի ջանքերով պաշտօնական և ժողովրդական պատգամաւորները տեղաւորուեցան «Հայրիկապատ»ի, ճեմարանի և վանքի սենեակներուն մէջ։ Նոյեմբերի 4-ի երեկոյեան Վեհարանի մէջ կատարուեցաւ պատգամաւորներու ժողովը խորհրդակցելու թաղման հանդէսներու ծրագրի և կարգապահութեան մասին։ Նոյեմբ. 5-ին, Բշ. երեկոյեան ժամի 7-ին, Էջմիածնի միաբաններէն, սինօդականներէն ոմանք, կարգ մը պահպանողականներ և Համբ. Առաքելեանի համակիրները մասնակի ժողով մը գումարելով, կ'որոշեն Հայրիկի դագաղին վրայ դամբանականներ չը խօսիլ, առարկելով, որ «մեծ մարդոց վրայ դամբանական չեն խօսիր»։ և նոյն իսկ կասկած կը յայտնեն, թէ կրնայ պատահիլ, որ դամբանախօսներէն մէկն ալ Հայրիկի անուան և յիշատակին անվայել ու նախատական խօսքեր ըսէ և այլն։

Այս մասնակի և յետին նպատակներով գումարուած ժողովին չը հրաւիրուած յեղափոխական և ժողովրդական հարիւրաւոր պատգամաւորները երբ կը լսեն յիշեալ որոշումը, նոյն գիշերն իսկ,



Ա. Տերյանը Վենետիկում, 1907 թ. մայիսի 6/19-ին, Ղազարյան վարժարանի առաջ



Ա. Տերյանը Վենետիկում, 1907 թ. մայիսի 6/19-ին, Ղազարյան վարժարանի առաջ

(Տե՛ս առաջին էջի վերջը)

Ա. Տերյանը Վենետիկում, 1907 թ. մայիսի 6/19-ին, Ղազարյան վարժարանի առաջ

Հայտնի է, որ 1888 թ. մայիսի 6-ին Վենետիկում Ղազարյան վարժարանի հոգաբարձուները Ղ. Ալիշանի առաջարկով հրավիրեցին Մուրատյան վարժարանի ուսուցիչ Մանուկ Աբեղյանին՝ Ղազարյան վարժարանի հայոց լեզվի և գրականության ուսուցիչ։ Ա. Տերյանը Մ. Աբեղյանի աշակերտն էր Մուրատյան վարժարանում։ Ուսուցչի հետ նա եկավ Վենետիկ և ընդունվեց Ղազարյան վարժարանի 4-րդ դասարանը։ Ա. Տերյանը Ղազարյան վարժարանում սովորել է 1888–1891 թթ.։ Այդ տարիներին նա ապրել է Մ. Աբեղյանի ընտանիքում։ Ա. Տերյանի հետ Վենետիկում ապրել է նաև նրա մայրը՝ Ալեքսանդրա Տերյանը։ Ա. Տերյանը Վենետիկում ապրել է մինչև 1891 թ. հոկտեմբերը։ Այդ տարի նա տեղափոխվել է Մոսկվա։

ժամի 10 և կէսին կը գումարեն պատգամաւորներու ընդհանուր ժողովը։ Հ. Ց. Դաշնակցութեան պատգամաւորները խիստ կերպով բողոքեցին տրուած որոշման դէմ և պահանջեցին, որ դամբանականները խօսուին։ Ամերիկայի «Հայրենիք» և Բուլկարիոյ «Ռազմիկ» թերթերու պատգամաւորը Ա. Վռամեանը խօսեցաւ կրակոտ ճառ մը.

«...Հայրիկը պարզ կրօնապետ մը չէ, այլ Հայ ժողովուրդի ինքնագիտակցութեան և ազգային ազատագրումի մեծ ախոյեաններէն մէկն է Մեծ Ծերունին, որ հակեցիին պատկանելէ առաջ կը պատկանի ամէն մէկ հայուն։ ...Անոր դագաղին շուրջը խըռնուած Հայ ժողովուրդի բոլոր խաւերը պէտք է որ գիտնան, ինչու՞ սիրեցինք և ինչու՞ կը յարգենք Հայրիկը։ Ժողովուրդը գիտենալու է թէ հասարակ կաթողիկոս մը չէ, որ կը թաղենք վաղը... այլ Մեծ Հայրենասէր, Ժողովրդասէր և Առաջին Յեղափոխական Խրիմեան Հայրիկը...»։

Հայկական տառապանքի երգիչ Ա. Ահարոնեանը իւր ճառը վերջացուց այս խօսքերով—«եթէ մենք լռենք Հայոց Հայրիկի դագաղին առջև, էջմիածնի քարերը կ'աղաղակեն...»։ Սիմոն Զաւարեան, Յովսէփ Արղուեթեան և Ն. Օաթունեան և ուրիշ բազմաթիւ ճառախօսները պահանջեցին, որ դամբանականները խօսուին, բայց խօսողներու թիւը նախապէս որոշուի։ Ճառախօսները կտրուկ կերպով յայտարարեցին, որ—«Պատգամաւորներն այստեղ եկել են ոչ թէ կրօնական հանդիսաւոր արարողութիւնը տեսնելու, այլ ժողովրդի զգացումները արտայայտելու, նրանց թարգմանը լինելու համար»։ Ի վերջոյ ժողովը որոշեց սահմանափակել խօսողներու թիւը և «Կարգադրիչ Յանձնախումբ»ը կազմեց դամբանախօսներու ցանկը։

* * *

ՀԱՑՈՑ ՀԱՑՐԻԿԻ ԹԱՂՄԱՆ ՕՐՆ Է. Երեքշաբթի, 6/19 Նոյեմ. 1907.

Երկինքն ամպոտ ու մռայլ է, թեթև անձրև կը մաղուի. Ամպածրար են Մասիսն ու Արագածը։ Արարատեան Աշխարհը տխուր տեսք մ'ունի. Մայր Աքաքսը իւր լալահառաչ ջրաձայներով վշտակից է Հայ ժողովուրդի մեծ սուգին. Արարատեան Դաշտի ամէն կողմերէն հազարաւոր Հայ գեղջուկները տխուր ու գլխահակ՝ էջմիածինը կ'երթան Հայոց Հայրիկի թաղմանը ներկայ ըլլալու։

Ծանր ու տխուր կը զօդանչեն էջմիածնի զանգակները. Հայ

և օտար մօտ 300 պատգամաւորները Վեհարանը հաւաքուած, պակները ձեռքերնին կը սպասեն. ժամի 10-ին հնչեցին պատարագի զանգերը. Պատգամաւորներու թափօրը Վեհարանէն շարժուեցաւ դէպի տաճարը. Այակոմեան դասին մէջ կանգնեցան օտարազգի պատգամաւորները – Կովկասի փոխարքայ Վարանցով Դաշկովի կողմէ՝ խորհրդական Հակկել և գնդապետ Լազարեանը, Երևանի նահանգապետներ՝ Եացկևիչ և Կոմս Տիզենհաուզէն, Պարսից պետութեան կողմէ՝ Երևանի պարսկական հիւպատոս Աբաս Կուլի Խան, Փանահ Խան Մակինսկի, Թիֆլիսի քաղաքագլուխ՝ Իշխան Չէրքէզով, Թիֆլիսի ազնուականութեան կողմէ՝ Իշխան Գ. Թումանով, Կարսի ոստիկանապետ՝ Գրիգորևիչ, Էջմիածնի գաւառապետ՝ Լեմերման, Թիֆլիսի Քաղաքային Վարչութեան կողմէ՝ Գեներալ Օստրոգորսկի, Վրաց ժողովուրդին կողմէ՝ Կիպշիձէ, Կովկասի մահմեդականութեան կողմէ՝ բարձրաստիճան մոլլա մը, Թիֆլիսի պարսկահպատակներուն կողմէ՝ Միրզա Զալալ Եուսուֆ, Կարսի Յոյն ժողովուրդին կողմէ՝ Բամփօպուլօ Աբրլլէս և դեռ բազմաթիւ ուրիշ, վրացի, մահմեդական և յոյն պաշտօնական պատգամաւորներ՝ զանազան մարմիններու և հիմնարկութեանց կողմէ.

Թուրքիոյ, Ռուսաստանի, Պարսկա-Հնդկաստանի, Ամերիկայի, Եւրոպայի և այլ վայրերու Հայութեան կողմէ աւելի քան 200 պաշտօնական պատգամաւորները (որոնցմէ 22 կին) տեղաւորուեցան տաճարին ձախակողմը. Հայ և օտարազգի պատգամաւորները բերած էին՝ 11 արծաթեայ, 15 մետաղեայ և 7 թարմ ծաղկեայ՝ ընդամէնը 33 պսակներ.

Կովկասի Փոխարքան, Վրաց ժողովուրդը, Երևանի, Թիֆլիսի, Ախալքալաքի և Ասլրախանի Հայութիւնը ղրկած էին արծաթեայ պսակներ. Թիֆլիսի կայարանի Հայ մշակներ, Հայ և վրացի գինեվաճառներ, ակնավաճառներ, պարսկահպատակ Թուրքեր, Հաբէշիստանի Հայեր, Էջմիածնի տաճկահայ գաղթականներ, Գէորգեան Ճեմարան և այլ հայկական դպրոցներն ու մարմինները ղրկած էին մետաղեայ և ծաղկեայ պսակներ. Այս բոլոր պսակներուն մէջ ամենէն աւելի խորհրդաւորն ու բնորոշը Հայ Ցեղ. Դաշնակցութեան երկաթեայ վիթխարի պսակն էր. Հ. Ց. Դաշնակցութիւնը, որ պաշտօնապէս կը մասնակցէր Հայոց Հայրիկի թաղման, Թիֆլիսի մէջ

շինել տուած էր այդ պսակը, որ սրտաձև հարթ երկաթեայ տախտակի մը վրայ հաստատուած է. Պսակի մէկ թևի երկաթաշէն դավինները կը միանան միւս թևի փուշերուն՝ խորհրդանշելու համար այն միտքը, որ Խրիմեան Հայրիկի ճակատը պատուեցաւ և՛ դափնեայ և՛ փուշէ պսակներով.... Պսակի հարթ տաբածութեան վրայ հաստատուած է Հ. Ը. Դաշնակցութեան երկաթեայ զինանշանը, որուն վերը, կարմրաւուն մետաղեայ տախտակի մը վրայ մակագրուած է.—«ԱՌԱՋԻՆ ԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԵՒ ՄԵԾ ԴԵՄՈԿՐԱՏ ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿԻՆ», իսկ վարը՝ Հ. Ը. Դաշնակցութիւն, որուն բոլորտիքը, բազմաթիւ մանր քառանկիւնի մետաղներու վրայ յիշատակուած են Թիֆլիսի, Բագուի, Երևանի և այլ վայրերու՝ «Դաշնակցականներից», Ուշադրութեան արժանի է նաև սև ու կարմիր կտորներէն պատրաստուած այն պսակը, որուն իւրաքանչիւր թերթիկին վրայ մակագրուած է այս ու այն արհեստակցական միութեան անունը, իսկ ընդհանուր մակագրութիւնն է—«ԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՀԱՅՐԻԿԻՆ՝ Թիֆլիսի Դաշնակցական արհեստաւորներից», (64 միութեանց անունով)։

Հայոց Հայրիկի դագաղը դրուած էր Իչման Սեղանին առաջը, շրջապատուած զգեստաւորուած 10 եպիսկոպոսներով և բազմաթիւ հոգևորականներով։ Պատարագիչն էր Հայրիկի կաթողիկոսական օծման մասնակցող Մեսրոպ Արքեպ. Սմբատեանը, որ կատարեց վերջին օծման կարգը։ Այս յուզիչ արարողութիւնը շատերու աչքերէն արցունք քամեց։ Յատնեակ հազարաւոր ժողովուրդ խռնուած էր վանքի բակին մէջ, շրջակայ կտուրներու և մինչև անգամ ծառերու վրայ։ Ժողովուրդի մուտքն ի տաճար սրգեցուած էր, վասն զի տեղ չը կար։ Հոգևորականութիւն, երգեցիկ խումբ և պատգամաւորները հազիւ տեղաւորուած էին տաճարին մէջ։ Խումբ մը գաղթականներ յանկարծ բռնութեամբ մտան տաճարը,

*) Այս պսակին լուսանկարն ունիմ և պիտի հրատարակեմ գրքիս երկրորդ հատորին մէջ։ Այս ինչպէս նաև միւս բոլոր մետաղեայ պսակները իրենց մակագրուած ժապաւէններով մէկտեղ կը պահուին Էջմիածնի Թանգարանին մէջ, ուր 1919-ին մէկ առ մէկ արտագրած եմ ժապաւէններու մակագրութիւնները։ Էջմիածնի մէջ արտագրած եմ նաև Հայրիկի մահուան առիթի ստացուած հարիւրաւոր հեռագիրները։

առարկելով որ—«Հայրիկը Հայ գիւղացիներու, գաղթականներու, աղքատներու և որբերու Հայրիկն էր, Հայրիկը մերն էր, ինչու մեզ զրկած էք տաճարը մտնելու իրաւունքէն...»։ Պատարագը վերջանալէ յետոյ կազմուեցաւ հսկայ թափօրը։ Հոգևորականներ, օտարազգի հիւրեր, պատգամաւորներ, պսակակիրներ և երգիչները երկկարգ կանգնեցան։ Դագաղը վերցուցին նախ հոգևորականներ, պատգամաւորներ և ապա ժողովրդական ներկայացուցիչները։ Երբ թափօրը տաճարէն դուրս եկաւ հազարաւոր ժողովուրդը գլխարաց և խորին պատկառանքով խոնարհեցաւ դագաղին մէջ յաւիտենապէս հանգչող Հայրիկի յիշատակին առջև։ Զանգակներու տխուր ղօղանջը, մեռելական շարականները և ժողովուրդի լացն ու հառաչանքը իրաք խառնուած յուզիչ պատկեր մը ստեղծեր էին։ «Կարգադրիչ Ծանձնախումբ»ը և մէկ վաշտ զինուորներ (անզէն) կը հսկէին կարգապահութեան, ինչ որ մինչև վերջ պատկառանքով պահուեցաւ։ Մայր Տաճարին բոլորտիքը չորս անգամ կատարուեցաւ հանգստեան կարգը և ի վերջոյ թափօրը կանգ առաւ զանգակատան հարաւակողմը, ուր Ներքէս Ե. Աշտարակեցի կաթողիկոսի շիրիմին կից փորուած էր Հայոց Հայրիկի գերեզմանը։ Այն րոպէին, երբ Մեծ Հայրենասէրին դագաղը գերեզման իջեցուցին և Արարատեան Աշխարհի հողը լեցուցին վրան, ժողովրդական յուզումն ու կսկիծը աննկարագրելի դարձաւ....

Հայ ժողովուրդը արցունքն աչքերուն և ցաւ ի սիրտ ծունկի իջաւ, յարգելու համար յիշատակն անոր՝ Հայոց Հայրիկին, որ ամբողջ 60 տարի իր կեանքն ու գործը և Մեծ Սիրտը նուիրեց Մայր Հայրենիքի ազատութեան գաղափարին և իր երազուն ու յուսալից աչքերը Մասիսի գագաթին յառած՝ կը ցանկար տեսնել Ազատ, Անկախ եւ Միացեալ Հայաստանի դրօշակը...։

Թաղման կարգը*) վերջացաւ ժամի 2-ին։ Ապա ծայր առին դամբանականները։ Խօսեցան Սիմոն Զաւարեան, Ա. Վռամեան, Սարգիս Կուկունեան, Համբ. Առաքելեան, Վրաց ժողովուրդի պատ-

*) Հայրիկի թաղման հանդէսները շարժանկարի (սինեմա) ընկերութեան մը կողմէ լուսանկարուած են։ Կովկասի մէջ ցուցադրուած է այդ գեղեցիկ ու պատմական ժապաւէնը (ֆիլմ), որ 1909-ին բերին Վան և ցոյց առին։

դամաւոր պիպշիձէն, Կովկասի մահմեդականութեան ներկայացուցիչ մոլլան, կանանց, բանուորներու, գիւղացիներու, գաղթականներու, արհեստաւորներու, աշակերտներու ևայլ պատգամաւորները։

Բազուաբնակ վասպուրականցիներու պատգամաւոր Տնովք Տէր Արիստակէսեանը յուզիչ դամբանականով մը ցուցադրեց Վասպուրականի Հայը Արծուի մեծ կեանքն ու գործը և յանուն Վան-Վասպուրականի Հայութեան յայտնեց իր ցաւն ու վիշտը։ Բոլոր պատգամաւորները հիացման և գնահատութեան խօսքերով ներկայացուցին Հայոց Հայրիկի ազգանուէր գործունէութիւնն ու ժողովրդական մեծութիւնը։ Էջմիածնի ճեմարանի աշակերտներէն Դաւնիկ Շահինեանը (յետոյ բանաստեղծ) յուզումով և զգացումով կարդաց Հայոց Հայրիկի յիշատակին ձօնած իր այս ոտանաւորը.

Լացող վաթանի կարօտը սրտիդ,
Անտէրունչ թողած մեր Մայր Հայրենիք,
Եւ դեռ չը տեսած շողքն ազատութեան,
Ինչո՞ւ ես թուչում մեր ազիզ Հայրիկ։

Էլի անքնում են հայրենի լեռները,
Էլի գեղջուկը արիւն է լալիս,
Մեր ողբ ու կոծին, նահատակութեան,
Էլի լուռ վկայ՝ վեհապանծ Մասիս։

Երազներիդ պէս մենք միշտ տարագիր,
Փախչում ենք թողած նախնեաց շիրիմներ.
Վիշտը մեզ ընկեր, ցաւը անկողին,
Մեր կեանքը զուլում, սրբտներս աւեր։

Բոկոտն ու նօթի երբ զուլում երկրից,
Անտուն որբերդ հևիհև կը գան
Քո թևերիդ տակ հանգիստ առնելու,
Եւ կարօտագին «Հայրի՛կ» ձայն կը տան։

Եւ հայ գիւղացին արդար վաստակից,
Ցուցնած ու դաղրած, իւր ցաւերը ծով,
Կորացած մէջքով քո սուրբ շիրիմին
Ցուշիկ կը պատմի մունջ մրմնջալով։

Դուն, որ ապրել ես նրանց ցաւերով,
Միշտ հպարտ կանգնած նրանց թիկունքին,
Տէս վերջին ժամին ինչ մօտ են եկել,
Սուրբ երգ են ուզում քեզանից կըրկին։

Վասպուրականից Արծուի թևերով,
Էլ ո՛վ կ՝ուղարկի ողջոյն մեզ համար,
Էլ ո՛վ կը լսի մեր վիշտը անտակ,
Բաց, ովկեան սրտով ծերունի Վեհափառ։

Մենք ուխտ ենք անում դագաղիդ առաջ,
Որ միշտ կը սիրենք մեր Մեծ Հայրենիք,
Եւ մուրթ վաթանում քո ջահը վառած՝
Միշտ վեհակըպահենք, անմոռաց Հայրիկ։

Հայոց Հայրիկի թաղման հանդէսը տևեց գրեթէ 6 ժամ (10—4)։ Բազմահազար ժողովուրդը խռնուեցաւ Մեծ Հայրենասէրի գերեզմանին առջև, ծնկաչոք համբուրեց թարմ ու թաց հողը և հեռացաւ։ Ժամի 4-ին Էջմիածնի սեղանատունը հաւաքուեցան միաբաններ, Հայ և օտարազգի պատգամաւորներ և բազմաթիւ

հրաւիրեալները, աւելի քան 300 հոգի։ Կաթողիկոսական Տեղապահ Գէորգ Արքեպ.ը կարգադրեց, որ սեղանաճառները չը խօսուին, միայն ինքը բաժակն առաջարկեց Հայոց Կաթողիկոսի անմահ յիշատակին։ Սեղանակիցները յոտնկայս խմեցին բաժակը։ Գէորգ Արքեպ.ը պատգամաւորներու ուշադրութիւնը հրաւիրեց էջմիածնի և Ճեմարանի բարեկարգութեան վրայ. ապա շնորհակալութիւն յայտնեց ռուսաց ու պարսից պետական ներկայացուցիչներուն և օտարազգի պատգամաւորներուն, որոնք ցաւակից եղան Հայ ժողովուրդի մեծ վշտին։

Ճաշէն յետոյ Վեհարանի մէջ կայացաւ պատգամաւորական ժողովը, որուն կը մասնակցէին Հայ պատգամաւորներէն անոնք, որ դեռ մեկնած չէին էջմիածնէն։ Գէորգ Արքեպ.ը դեղեցիկ ճառով մը բացաւ ժողովը և խնդրեց, որ պատգամաւորները և ազգը անտարբեր չը մնան էջմիածնի և Ճեմարանի բարեկարգութեան հանդէպ։ Ժողովին նախագահ ընտրուեցաւ Աւ. Ահարոնեանը, որ բացատրեց խորհրդակցութեանց նպատակը և յայտնեց, որ—«Այս ժողովը գրաւուելու է նաև Հայոց Հայրիկի անունով Ֆոնդ հիմնելու հարցով»։ Սիմոն Զաւարեանը կ'առաջարկէ Հայրիկի անունով հիմնել կրթական Ֆոնդ մը։—«Կարելի է բաց անել—կ'ըսէ Զաւարեանը—Հայրիկի անունով երկու ուսուցչանոց Հայաստանի երկու հատուածներում՝ մէկը Կովկասում, իսկ միւսը Տաճկահայաստանում—Վասպուրականում կամ Տարօնում»։ Գարեգին Վարդպ.ը, Համբ. Առաքելեան, Մինաս Բերբերեան, Բժ. Ա. Բարայեան, Լեոն Գեանջեցեան և Լէօն կ'առաջարկեն «Հայրիկեան Ֆոնդը յատկացնել էջմիածնի Ճեմարանի բարեկարգութեան։ Եովսէփ Արղութեանը կ'առաջարկէ—«Հիմնել մի որ և է դպրոց, մեծ թէ փոքր, Հայրիկի անունով Վասպուրականում»։ Ա. Զաւարեանը կը պնդէ, որ «Հայրիկեան Ֆոնդը յատկացուի գիւղական դպրոցներու համար ուսուցիչներ պատրաստելու գործին։ Ազգապրոպէտ Երուանդ Լալայեանը յարմար կը գտնէ, որ Ֆոնդը յատկացուի «Հայրիկեան Թանգարան»-ի բարեզարդութեան և ճոխացման։ Բարդէն Վարդպ.ը կ'առաջարկէ, որ Տաճկահայաստանի մէջ գիւղատնտեսական դպրոց մը հիմնուի։ Սամսոն Ծարուխիւնեանը կը ծրագրէ «Հայրիկեան Ֆոնդը յատկացնել ստորին, միջնակարգ և մասնագիտական դպրոցները

հիմնելու գործին. Ճակտրդ օրը, Նոյեմբ. 7-ին, կայացաւ 44 պատգամաւորներու ժողովը, որ միաձայն ընդունեց Սիմոն Զաւարեանի առաջարկը—Հիմնել երկու ուսուցչանոց մէկը Կովկասի, իսկ միւսը Տաճկահայաստանի մէջ.

Այս բոլոր առաջարկներու մէջ «Հայրիկեան Ֆոնդ»ը հիմնելու սկզբունքն ի յայտ եկաւ և միաձայն ընդունուեցաւ. Վիճելի մնաց միայն գործադրութեան եղանակը և ժողովը վերջնական եզրակացութեան չ'եկած՝ վերջացաւ, իսկ պատգամաւորներն ալ հեռացան Էջմիածնէն.

«Հայրիկեան Ֆոնդ»ի հանգանակութիւնը լայն և չափ ժողովրդականութեամբ կատարուեցաւ Կովկասի, Ռուսաստանի, արտասահմանի հայ գաղութներու և մանաւանդ Ամերիկայի մէջ*).

Հայրիկի մահէն տարիներ յետոյ անգամ, հանգանակուած մեծաքանակ գումարները չէր գործադրուեցան իրենց բուն նպատակին, մինչև որընդհանուր պատերազմն ու հետագայ դէպքերը վրայ եկան և «Հայրիկեան Ֆոնդ»ը գրեթէ աչնչացաւ.

* * *

Այն օրը, 1907-ի Նոյեմբ.ի 6-ին, երբ Էջմիածնի մէջ Հայոց Հայրիկի թաղումը տեղի կ'ունենար, այդ նոյն օրը Վանի մէջ, Վասպուրականի Հայութիւնը Հայր Արծուի յիշատակին կազմակերպեց ժողովրդական մեծ սգահանդէս մը. Այսօրուայ պէս կը յիշեմ այդ պատմական օրը. Պաշտօնական մարմիններ, աշակերտութիւն և հազարաւոր ժողովուրդը խռնուած էր Խրիմեանենց տան առջևը. Որոշեալ ժամին, հակայական թափօրը շարժուեցաւ դէպի Ծանկոյեանների եկեղեցին, ուր պիտի կատարուէր սգահանդէսը. Եկեղեցւոյ մէջտեղը դրուած էր սև թաւշապատ գագաթը՝ զարդարուած հայրապետական հանդերձներով. Աւազանը, ուր մկրտուած էր Խրիմեանը, պատուած էր սև շղարշով. Օտար հիւպատոսներ, տաճկ բարձրաստիճան պաշտօնեաներ, Ամերիկեան և Կաթոլիկ միսիոնարներ և ազգային ամէն տեսակ մարմինները գրաւած էին իրենց

*) Ամերիկահայութեան մէջ հանգանակուած գումարը կարծեմ 15,000 դոլլար էր, որ իբր ասնդ 20 տարի (1907—1927) պահուեցաւ վաճառական Կարապետ Փուչմանի մօտ. Այդ գումարէն 5000 դոլլար 1927-ին ուղարկուեցաւ Խարբերդի Հայաստանի կառավարութեան, գիւղատնտեսական դպրոց մը հիմնելու համար:

յատուկ տեղերը, եկեղեցին լեցուած էր երկսեռ, խուռն բազմութեամբ: Հայերէն և տաճկերէն ճառեր խօսողները (անունները չեմ յիշեր) դրուատեցին Երիմեանի մեծութիւնն ու ժողովրդականութիւնը, երգուեցաւ «Հայրիկ, Հայրիկ» երգը, որ շատերու աչքերէն արցունք քամեց: Այդ նոյն օրը Արծուաբոյն Վարագն ալ կատարեց Հայր Արծուի հոգեհանդիստն ու սգահանդէսը: Վանի Ամերիկեան միսիոնարութիւնն ալ Աւետարանական ընդարձակ եկեղեցին մէջ կատարեց վայելուչ սգահանդէս մը: Երիմեանի իւղանկարկ, մեծադիր նկարը շրջապատուած էր ծաղիկներով և սև շղարշով: Գատուելի Ռէյնոլտսը բեմը բարձրանալով պատմեց իր յիշողութիւնները Երիմեանի մասին և ցոյց տուաւ անոր ազգասիրութիւնն ու մարդասիրութիւնը: Գատուիկ գրող Խաչիկ Լեոնեանը ներկայացուց Երիմեանի մանրամասն կենսագրութիւնը. Ապա բեմ եկան երկու աղջիկները, մէկը սևազգեստ իբր սուգ, իսկ միւսը սպիտակազգեստ իբր մխիթարութիւն: Ասոնք փոխն ի փոխ արտասանեցին Խաչիկ Լեոնեանի գրած մէկ ոտանաւորը, որ կը պատկերացնէր Երիմեան Հայրիկի կեանքն ու ազգանուէր գործունէութիւնը. Այդ ոտանաւորէն (որը 1914-ին անձամբ ստացայ Լեոնեանէն) կը մէջբերեմ միայն առաջին տունը, որ սևազգեստ աղջիկն արտասանեց.

*Սեւ գոյժ մը հնչեց, ո՜հ, Արարատէն,*
*Արիւն հոսեցուց ամէն Հայ սրտէն,*
*Հայրիկն է մեռած—յոյս Հայաստանի,*
*Վերջացաւ պարծանք Վասպուրականի:*
*Ա՛րդ, լացէ՛ք, հայեր, Հայրիկն է մեռած*
*Եւ մեր յոյսին հետ լոյսն ալ է մարած...:*

Վերջին խօսքը սպիտակազգեստ աղջկանն էր, որ կը մխիթարէր Հայ ժողովուրդին թէ, թէև Հայրիկը մեռաւ, բայց անոր գաղափարներն աջդէն ծլեր, ուռճացեր են և վաղ կամ ուշ՝ պիտի ծագի Հայաստանի Ազատութեան Արեւոյսը եւ Հայոց Հայրիկի հոգին՝ Արծուի թեւերով պիտի սլանայ Ազատ Հայրենիքի ամէն կողմերը....

* * *

Երիմեանին յաջորդեց Մատթէոս Իզմիրլեանն՝ իբր Ամենայն Հայոց Կաթողիկոս (ընտրուած՝ 1 Նոյեմբ. 1908, օծուած՝ 13 Սեպտ. 1909, վախճանուած՝ 11 Դեկտ. 1910): Իզմիրլեանն էջմիածին հասնելէ յետոյ նուիրական պարտք համարեց օրհնել գերեզմանը Հայոց Հայրիկին, որը կը հանգչէր անտապան և անարձան հողաթումբին տակ.



ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ

# ՄԿՐՏԻՉ Ա.

ՎԱՆԵՑԻ

# ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ

ՆՈՒԱԳՈՂ ՎՇՏԻՑ ՀԱՅՐԵՆԵԱՑ ՀԱՅՈՑ

ԾՆեալ

ի 4 Ապրիլի 1820 ամի

Վախճանեալ

ի 29 Հոկտեմբերի 1907 ամի

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԻԿԻ տապանաքարի բացումը կատարուեցաւ 1910ի Յունիսի 6ին, (Կիրակի) Էջմիածնի մէջ։ Գատարագէն յետոյ, եկեղեցական թափօրը, Մատթէոս Բ. Կաթողիկոս Իզմիրլեանի գլխաւորութեամբ, կանգ առաւ զանգակատան հարաւակողմը, շրջապատելով Հայրիկի գերեզմանը, որ ծածկուած էր գեղահիւս դիպաստրդով վրան դրուած հայրապետական խոյր, աւետարան, խաչ այլ զարդեր և պատկերներ։

Հոգեհանգիստին ներկայ էին Երևանի նահանգապետ, բազմաթիւ պաշտօնական անձեր և խուռներամ ժողովուրդը՝ Երևանէն և Էջմիածնի շրջակայ գիւղերէն եկած։ Հոգեհանգիստէն յետոյ, ժողովուրդէն շատերը—մանաւանդ գեղջուկները—մօտեցան և ծնկաչոք համբուրեցին Հայ ժողովուրդին սիրելի Հայրիկի տապանաքարը։ Էջմիածնի Սինօդի յանձնարարութեամբ Թիֆլիսի առաջնորդ Գաբրիէլին Արքեպ. Սաթունեանը Թիֆլիսի մէջ պատրաստել տուաւ Հայրիկի սպիտակ, մաքուր մարմարեայ տապանաքարը, որ հաստատուած է կապոյտ կարծրաքար (գրանիտ) պատուանդանի վրայ, մօտ երկու մեթր երկարութեամբ։ Մարմար շիրմաքարի չորս կողմերը, շրջանակաձև քանդակուած են նուրբ և սիրուն ծաղիկներ։ Գլխավերևը հայրապետական Թագը և զոյգ գաւազաններն ու զարդերը՝ բարձրաքանդակ և ուռուցիկ։ Բարձրաքանդակ և շատ սիրուն տառերով փորուած է տապանագիրը, որ գրած է Իզմիրլեան կաթողիկոսը։ Այս էջին վրայ տպուած պատկերը պրեթէ նմանութիւնն է Հայոց Հայրիկի տապանաքարին։

* * *

Ազգասէրն Վարդապետ «Ժառանգաւորաց Վարժարանի հիմնադրութեան յիսնամեայ յոբելեանը (1857—1907) պիտի տօնուէր 1907-ի աշնան։ Նոյն թուին Վանի քաղաքական դէպքերն ու Հայրիկի մահը արգելք եղան այդ ձեռնարկին։ Տիրահաչակ Դաւթ դառնանութենէն ալ, 1908-ի սկիզբէն Վան-Վասպուրականի մէջ յառաջացան քաղաքական ծանր գլուխը, իսկ նոյն թուի ամրան հաչակուեցաւ Օսմանեան Սահմանադրութիւնը, որ ծնունդ տուաւ նոր, ազատ և զգայացունց կեանքի մը։ Կիլիկիոյ Հայութեան կոտորածն ալ (Ապրիլ 1909) համազգային կսկիծի և քաղաքական մահոգութեան նոր գուռ մը բացաւ։ Այս դէպքերուն պատճառով յետաձգուեցաւ Վարդապետ յոբելեանը, որ մեծաչուք հանդէսներով տօնուեցաւ 1910-ի Յունիսի 20-ին (Կիրակի) Վարդապետ մէջ։ Ժողովրդական խրախճանքն ու գեղչկական ուրախութիւնները տևեցին ամբողջ շաբաթ մը։ Վասպուրականի ամէն կողմերէն—Վանէն և գաւառներէն—աւելի քան 25,000 ժողովուրդ կը մասնակցէր հանդէսներուն։ Ի սիրուս աշխարհի ցրուած Հայութիւնը իւր հարիւրաւոր պատգամաւորներով և բարոյական ու նիւթական աջակցութեամբ համազգային մասնակցութիւն ցոյց տուաւ այդ յոբելեանին։

Հայոց Հայրիկի սիրելի անունն ու Մեծ Դարձը հիացմունքի և ջերմ պաշտամունքի զգացումներով նորէն լեցուցին սիրտն ու հոգին Հայ ժողովուրդին, որուն գրամական նուիրատուութեամբ յոբելեանէն յետոյ, Վարդապետ վանքին մէջ, «Ժառանգաւորաց Վարժարանի կողքին հիմնուեցաւ „ՀԱՑՐԻԿՆԱՆ ԴԻՊԼՈՑՆԵՑՍԱԿԱՆ ԴՊՐՈՑ“-ը։

* * *

Ա՛յժմ... Արարատեան Աշխարհին մէջ, Մասիսի սառոյտէն և Արաքսի ափերէն քիչ հեռու, էջմիածնի զանգակատան կամարներուն տակ, մեւ մեւ կը ննջէ ՀԱՑՈՑ ՀԱՑՐԻԿԸ։ Արարածի հովերը կը շոյեն անոր չիքիմը, որուն վրայ գիններ հայրենի լերան բանաստեղծ Ալ. Խահակեանի խօսքերով հիւսուած այս ծաղկեպսակը և ապա փակենք այս հատորը.

«Արարատեան երկրի հողը ծածկեց նրա աչքերը, և նա քնեց .հողին քնով՝ գարնէ գարնէ, յաւիտեան...։ Բայց հայ ժողովուրդը նրան չի մոռանայ։ Գանի հնանայ նա, այնքան աւելի մեծ մարդու պատկով չղաղարգուած՝ կը նայէ դարերի միջից հայ ժողովրդին և կը խօսի նրա հետ, իր՝ ժողովրդի նուիրական իղձերից, հարազատ լեզուով։ Ժողովուրդը նրան չի մոռանայ, որովհետև նա նրա արիւնից էր եկել և դեպի նրա սիրտն էր գնում...»։

## ՎԵՐՋ ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐԻ

# ՀԱՅԿ ԱՃԷՄԵԱՆԻ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

## — ՏՊԱՒԱԾ —

1. *Սգապատկ Իշխանի.* Պատկերազարդ. Թիֆլիս. Տպ. Ն. Ագանեանցի. 1916։

2. *Նոյնը Բ.* Տպագրութիւն. Անգ. 1916. (սպառած)։

3. *Ծաղկաքաղ Վասպուրականի Հայ Ժողովրդական Բանահիւսութեան.* Առաջին փունջ. Հրատարակութիւն Ցէր Վրթանէս Ծ. Վրդպ. Ցակոբեանի. Էջմիածին. Տպարան Մայր Աթոռոյ. 1917. (սպառած)։

4. *Հայրենի Ճիշատակներ.* Դէպի Նարեկ. Էջմիածին. Տպարան Մայր Աթոռոյ. 1918. (սպառած)։

5. *Թիւրքահայ Աղէտը.* Պատմական փաստաթուղթեր. Էջմիածին. Տպարան Մայր Աթոռոյ. 1919. (սպառած)։

6. *Խրիմեան Հայրիկ.* Ծննդեան հարիւրամեակի տուրիւ. 1820—1920. Պատկերազարդ. Էջմիածին. Տպարան Մայր Աթոռոյ. 1920. (սպառած)։

7. «*Բազին*» *Օրացոյց* (պատի). 1923 թ. Վ. ճ-ի հետ. Հրատարակութիւն Ամերիկայի Հայոց Թեմական Տպարանի. Թաւրիզ. Նոյն տպարան։

8. «*Բազին*» *Օրացոյց* (գրպանի). 1923 թ. Վ. ճ-ի հետ. ընդարձակ և բազմազրուանդակ յաւելուածով. Թաւրիզ. Ամերիկ. Հայոց. Թեմ. Տպարան։

9. *Ղեւոնդ Քահանայ Ցէր Ամետիսեան.* Կեանքն ու գործունէութիւնը. Տարոն-Տուրուբերանի մեսուռ եւ խաղաղական վերածնունդը ԺԲ-րդ դարուն: Հրատարակութիւն Տարօն-Տուրուբերանի Հայրենակցական Միութեան. Թաւրիզ. Ամերիկ. Հայոց Թեմ. Տպարան. 1924. (գին՝ 40 ոչնիր կամ 8 ֆրանք)։

10. *Բժիշկ Պետրոս Ասլանեան.* Հիմնադիր Թաւրիզի Հայոց Աղքատախնամ Ընկերութեան։ Հրատարակութիւն Ամերիկայի Հայոց Թեմական Առաջնորդարանի. Թաւրիզ. Ամերիկ. Հայոց Թեմ. Տպարան. 1925. (սպառած):

11. *Ցէր Ներսէս Արքեպիսկոպոս-Մելիք-Թանգեան.* Իւր Ազգային եւ հասարակական գործունէութեան հարուստ յօբելեանի տուրիւ. 1886—1926։ Հրատարակութիւն «Ծաղկեանական Կենտրոնական Ընտանեկան Միութեան»: Պատկերազարդ։ Վենետիկ. Մխիթարեան Տպարան. 1926. (սպառած)։

12—17. «*Մասիս*» *Օրացոյց* (պատի). 1924—1929 թ. Բազմազան բովանդակութեամբ. Թաւրիզ. Ամերիկ. Հայոց Թեմ. Տպարան։

18. *Հայոց Հայրիկ.* „Նուագող Վշտից Հայրենեաց Հայոց". Ա. Հատոր։ Պետագրութիւն. Բազմաթիւ պատկերներով: Հրատարակութիւն Մարզար Ցակոբեանի. Թաւրիզ. Ամերիկ. Հայոց Թեմ. Տպարան. 1929։ Մեծ հատոր էջ՝ 856. Դին՝ 2 դոլար կամ 50 ֆրանք։ Հասցէ՝ Haïk Adjémian, Tauris (Perse).

## — ԱՆՏԻՊ —

1. *Հայոց Հայրիկ.* Ազգային և գրական գործունէութեան վերլուծումը։ Խրիմեանն իբր ազգանուէր, ժողովրդատէր, յեղափոխական, բարոյախօս, պատրաստարան և երգիծող։ Մօտ 250 մանրավէպեր (անեկտոտ) և բնոյթագծեր Հայրիկի կեանքէն։ Անտիպ նամակներ և լուսանկարներ։

2. *Վասպուրականի Գրական Մշակները.* Ե—Ի դար (450—1925). Գրական գէմքերու կենսագրութիւններ, անտիպ էջեր, նամակներ, լուսանկարներ, մատենագիտական տեղեկութիւններ եւայլն։ Այս աշխատութեան համար 1916էն սկսեալ նիւթեր հաւաքած եմ։

3. *Վասպուրականը ԺԹ-րդ Դարու Ընթացքին.* Տասնոր զարթօնքի և ազգային, գրական, ազատագրական շարժումներու մանրամասն պատմութիւնը՝ փաստաթուղթերով և բազմաթիւ լուսանկարներով։

4. *Ցեղափոխական Շարժումները եւ Հ. Ց. Դաշնակցութեան Գործունէութիւնը Վասպուրականում.* 1890—1918. Դէպքեր և գէմքեր, լուսանկարներով։

5. *Պատմագիտական Ուսումնասիրութիւնները ու պեղումները Վասպուրականում.* 1800—1917. Ըստ՝ Հայ և օտար գիտնականներու, ուղեորներու և յայտնի գէմքերու։

6. *Հայրենի Ծիշատակները.* Վասպուրականի տեղագրութիւն, ժողովրգական զրոյցներ, աւանդութիւններ, ազգագրական տեսորյթներ, ուղեորի և ուխտաւորի յուշ-յիշատակներ և այլն՝ բնաշխարհիկ տեսարաններու և տիպերու լուսանկարներով։

7. *Ներսէս Քուչակ.* Կեանքն ու գրական ստեղծագործութիւնը։ Նոր երգեր, աւանդութիւններ, ժողովրդական զրոյցներ և այլն։

8. *Ծաղկաքաղ Վասպուրականի Հայ Ժողովրդական Բանահիւսութեան.* Բ. և Գ. Փունջեր. Ժողովրդական անտիպ երգեր և այլն։

9. *Մարինոս.* Վասպուրականի ժողովրդական աւանդավէպ՝ Հայ վանականներու կեանքէն։

10. *Աղթամար.* Պատմա-գրական մանրամասն ուսումնասիրութիւն։

11. *Անի քաղաքը.* Պատմական անցեալը. Պրոֆ. Ն. Մառի գիտական պեղումներն ու աշխատանքները. Ուղեորի յուշեր և տպաւորութիւններ։

12. *Պատմական Դէպքերը Էջմիածնի Գաւառին մէջ.* 1920 Մայիս—1921 Մայիս. Ականատեսի վկայութիւնները՝ օրը օրին արձանագրուած։

13. *Ցուցակ Հայերէն Հին Ձեռագրաց Թաւրիզի.* Կազմուած Հայր Ճակոբոս Տաշեանի ծրագրով։

14. *Քիւրդեր.* Ազգաբանական, ցեղագրական և պատմական ուսումնասիրութիւն։

15. *Րաֆֆի.* Ցակոբ Մելիք-Ցակոբեան. Ընդարձակ կենսագրութիւն, նոր և անտիպ նիւթեր, բազմաթիւ անտիպ նամակներ և լուսանկարներ։


16. *Պրոֆ. Հրաչեայ Աճառեան.* Կեզուաբան, բանասէր եւ դաստիարակ. Կեանքն ու գործունէութիւնը.

17. *Նիկոլ Աղբալեան.* Ազգային գործիչ եւ գրագէտ. Կեանքն ու գործը։

18. *«Բժշկարան ծիոյ եւ առնասարակ գրաստնոյ».* Կիլիկիոյ Սմբատ Թագաւորի (1295—1299) հրամանով արաբերէնէ թարգմանուած հայերէնի, ձեռամբ Կիլիկեցի Թորոս Քահանայի։ Մատենագրական ուսումնասիրութիւն յիշեալ ձեռագրի մասին, 10 լուսանկարներով։

ՀԱՅԿ ԳԱՍՊԱՐՅԱՆԻ ԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ

12n.154.




ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0026145



ЦЕНА
II
А 3934